



Հարգելի՝ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ

ՆԱՌ-ԴՈՍ

ԵՐԿԵՐ

«ԱՊՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»  
ՀՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ-1977

Ն 20304(22)  
201(01)26 28-77-•82

### ԽՄ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դնվել եմ 1867 թ. մարտի 1-ին. Թիֆլիսում: Հայրս բրդավաճառ էր, բուն թիֆլիսեցի, Զաքար անունով: Շատ բարի մարդ էր և անուսում. գիտեր միայն վրացերեն կարդալ-գրել այնքան, որ պահում էր հաշիվները: Մայրս նույնպես թիֆլիսեցի էր, նույնպես շատ բարի կին և անուսում. գիտեր նույնպես միայն վրացերեն կարդալ-գրել: Խոսակցական լեզուն մեր տանը հայերենն էր՝ բուն թիֆլիսեցու և բուն հավլաբարցու բարբառով խառն:

Սկզբնական ուսումս ստացել եմ Հավլաբարի ս. Կարապետ եկեղեցու ծխական դպրոցում:

Մի ինքնատիպ դպրոց էր սա 70-ական թվականներին իր առավել ևս ինքնատիպ վարժապետով— աղքանունը Վասիլ Մելիքսեդեկյան: Սա մոտ 50 տարեկան հիվանդու մի մարդ էր՝ ենթակա հարատես գլխացավի, որի պատճառով և միշտ մոռայլ տրամադրության մեջ էր: Թիֆլիսեցի և, կարծեմ, գիմնազավարտ, այս մարդը ուսուցչության հետ միաժամանակ դպրություն էր անում ս. Կարապետ եկեղեցում. ուրարակիր էր: Կարծես Երուսաղեմ էր եղել, որովհետև ձեռքի դաստակը դաշած էր: Մոլեռանդ ժամաներ էր և ազոթասեր. ինչքան էլ հիվանդ լիներ, երեք ժամից ետ չէր ընկնիւ և մեզ՝ աշակերտներիս էլ ստիպում էր նույնն անել: Աշակերտներս շատ էինք վախենում նրանից, որովհետև անխիղճ կերպով պատժել գիտեր, սկսած անկյունում շոքեցնելուց մինչև հաստ քանոնով մատոների ժայրերին զարկելը: Ապրում էր մեն-մենակ, դպրոցի շենքում, դասարանին կից՝ աախտակամածով զատված բաժան-մատքում: Աշակերտներիս ժառայիցնում էր իր անձնական և գրպ-

բացի կարիքների համար.— տրակտիրից կամ դպրոցին մոտիկ ապրող որևէ աշակերտի տնից թեյի համար տաք ջուր էր թերել տալիս, զրկում էր հացի, կերակրի, նավթի, գինու և այլն, ձմեռը ձյունից մաքրել էր տալիս դպրոցի կտուրը, աղբը թափել էր տալիս և այլն:

Դպրոցում սովորում էին 6—7 տարեկան երեխաներից սկսած համարյա մոտ 20 տարեկան պատանիներ, որոնք բոլորն էլ նըստած էին եղած մի հատիկ դասարանում, մեծերը՝ առջկի նստարանների, փոքրերը՝ հետին նստարանների վրա։ Աշակերտների թվում կային և մի երկու վրացիներ, որոնց հետ վարժապետը վրացերեն էր պարապում։ Ուսումը տևում էր տարին չորս բոլոր ամառվա արձակուրդ ասած բանը գոյություն չուներ, ընդհակառակը, ամառվա ամիսներին դպրոց էին հաճախում օրական երկու անգամ. առավոտը և երեկոյան երեկոյան դասին վարժվում էինք բացառապես փոխասացությամբ՝ ժամում փոխեր ասելու համար։ Ես այն աստիճան վարժվել էի ժամասացությանը, որ տանը «պատարագ կանգնեցնելը» իմ երեխայական խաղերից մեկն էր դարձել։

Գեմ հիշում քանի տարի մնացի այս դպրոցում, երբ մի օր մայրս տարավ ինձ ներսիսյան դպրոց։ Բակը զժվժում էր աշակերտներով, դուրսը պատշգամբում աթոռի վրա նստած էր մի մարդ կարտուզով և «չեքմակալոշ»-ով։ (Չատ տարիներ հետո միայն իմացա, որ սա հանրածանոթ պարուն Գրիգորն էր)։ Մոտ կանչեց և հարցրեց. «Ասա տեսնեմ, կոշիկդ ինչ՝ կաշուցն է»։ Զիմացա։ Այս էր իմ հարցաքննությունը, որից հետո ես այլևս հայոց դպրոցի երես չտեսա։

Այս անհաջողությունից հետո մայրս տարավ ինձ քաղաքային Սիկոլակյան երկդասյան դպրոցը, որի տեսուլը Պողոս Քաթանյանն էր՝ այն ժամանակվա դպրոցական աշխարհում բավական ժամոր մի դեմք։ Այս դպրոցում ընդունվեցի։

Նիկոլակյան դպրոցն ավարտելուց հետո Պողոս Քաթանյանը նորավարտներից մոտ 8—10 հոգի, որոնց թվում և ինձ, հավաքեց, տարավ եռնի (Քութայիսի նահանգ) տեղական ուսուցչական սեմինարիան տալու համար։ Այս սեմինարիայում 8—10 հոգուց միայն ես և մի վրացի հաշող քննություն տվինք և ընդունվեցի։ Սակայն հենց առաջին իսկ ամսում ես ստիպված եղա թողնել եռնին և վերագանակ թիֆլիս, որովհետեւ հայրս, մեծ (խորթ) եղբու

ըստ դրդմամբ, որից վախենում էր նա, չէր կամեցել ընդամենը մի 100 ոռութի ուղարկել, իբրև մի տարվա թոշակադրամ, որ պահանձել էր սեմինարիան, խոստանալով երկրորդ տարուց ինձ պահել պետական հաշվին։

Թիֆլիս վերադառնալուց հետո փորձեցի մտնել տեղական երկաթուղային դպրոցը, որը նույնպես շհաջողվեց, դարձյալ փողի պատճառով։

Մի տարի թափառեցի պարապ-սարապ. ծնողներս՝ տգետ, շրջապատս՝ տգետ. հոգացող, ուղի ցուց տվող շոնեի։ Մտածում էի մի տեղ խանութի աշակերտ մտնել, բայց հետո ավելի լավ համարեցի արհեստ սովորել և գնացի մտա Սիքայելյան արհեստագիտական դպրոցը (Թիֆլիսում), մանավանդ որ այստեղ ուսումը ձրի էր։

Նույն տարի այս դպրոցը մտավ Ալեքսանդր Շատուրյանը, որը նոր էր եկել հայրենիքից՝ Զաքաթալայից։ Սա էլ, անտեր-անտիրական, ինձ պես շատ էր աշխատել այս կամ այն միջնակարգ դպրոցը ձգել իրեն և ինձ պես չէր հաջողել ու ճարահատված եկել էր արհեստ սովորելու, մանավանդ որ Միքայելյան արհեստագիտական դպրոցում կերակրում էին ձրի։ Հենց առաջին ժանոթությունից ես ու Շատուրյանը այնքան մտերմացանք իրար, որ շարունակ իրար հետ էինք. դասարանում նստած էինք իրար կողքի, արհեստանոցում բանում էինք իրար կողքի, սեղանատանը ճաշում էինք իրար կողքի, դպրոցից դուրս, ուր էլ լիներ՝ իրար հետ էինք միշտ երկուս էլ ընաւ։ Է էինք փականագործությունը, բայց ոչ ես, ոչ Շատուրյանը բնավ հակում չունեինք դեպի արհեստը, մեր ամբողջ ուշքն ու միտքը, մեր ամբողջ ձգտումը դեպի գրականությունն էր, հատկապես դեպի բանաստեղծությունն ու վիպասանությունը և մեկ է՝ դեպի թատրոնը։

Այս բանի վրա առանձին ուշադրություն դարձրեց մեր հայոց լեզվի դասաւու Արսեն ավագ քահանա Բագրատունին— ինքը մասմբ բանաստեղծ (գրում էր Ընծայացի ստորագրությամբ) և գրականության սիրահար, բայց առավել ևս մի հազվագյուտ մանկավարժ, որ կատաղի թշնամի էր դասագրերի ու շոր ու ցամաք դասաւության։ Նրա ամեն մի դասը մի հետաքրքրական դասախոսություն, մի հաճեկի ժամանց, մի կենդանի գրուցատրություն էր աշակերտների հետ լեզվի, գրականության և բարոյախոսության մասին։ Նա ձգտում էր ի հայտ բերել աշակերտների մեջ նրանցից

ամեն մեկի անհատական ունակությունն ու ձիրքը և զարկ տալ, սովորաբար տալ այդ ունակությանն ու ձիրքին եվ եթե ես ու Սատուրյանը վերջը «մի բան» դարձանք, դրա համար մեծապես պարտական ենք հայր Բագրատունուն, որի խրախուսանքները գեռես գպրոցական նստարանից մի անգամ առ միշտ որոշեցին մեր վիճակը, նետելով մեզ երկուսիս էլ գրականության գիրկը:

Մի բան, որ ոչ ես, ոչ էլ Սատուրյանը հակում չունեինք գեպի արհեստը, բնականարար չէինք էլ կարող և չուզեցինք շարունակել ուսումը՝ Արհեստագիտական դպրոցում, ուստի երկուսս էլ մի տարուց հետո թողինք այդ դպրոցը և մեզ տվինք բախտի բերմունքին:

Բախտը Սատուրյանին տարավ ձեց նախ նիժնի-Նովգորոդ, հետո՝ Մոսկվա, ինձ գամեց Թիֆլիսում և նետեց լրագրական ասպարեզ, ուր մինչև օրս էլ ես մնում եմ ցանցված, կատարելով շարունակ քարտուղարի ծայրաստիճանի ձանձրալի, հոգնատանշ պաշտոնը:

Այդ պաշտոնում մարտիրոսագրությունս սկսվեց 1890 թվականի հունիսի 1-ից «Նոր-Դար»-ում, որը կլանեց պատանեկության և երիտասարդության ամենալավ, ամենաբեղմնավոր տարիները, փախարենը տալով այնքան չնշին նյութական վարձատրություն, որ այժմ կարող է պարզապես մի առասպել թվականը. օրինակ՝ պաշտոնի մտած օրիցս՝ 1890 թվի հունիսի 1-ից մինչև տարվա վերջը, այսինքն՝ 7 ամսվա ծառայության համար ստացել եմ ընդամենը 70 ռուբրի. 1891 թվի ամբողջ տարվա համար՝ ընդամենը 136 ռուբրի, և այսպես շարունակ, ամեն տարի, մի թիվ ավելի կամ պակաս:

«Նոր-Դար»-ի հետ կապվեցի բոլորովին պատահական կերպով:

Բանն ալսպես էր.

Ընկերներից մեկը, որի հետ աշակերտել էի գեռես ո. Կարապետի դպրոցում, մի անգամ ձեռքից առավ պատանեկան գրվածքներից մեկը՝ «Ճշմարիտ բարեկամը», ասելով, որ կտա «Մեղու-ին տպելու նա «մեղղական» էր, որովհետև «Մեղու-ի խրմագրատան փողոցում նրա եղբայրները մանրավաճառի խանութ ունեին, ուր ծառայում էր ինքը և որտեղից առևտուր էր անում Պետրոս Սիմոնյանը: Այս բանը, կարծեմ, 1884 թվականին էր, երբ «Մեղուն լրագիրը Սպանդարյանի հեռանալուց հետո հոգեվարքի մեջ էր, լույս էր տեսնում անկանոն կերպով, շարաթը երկու թե երեք անգամ: Պետրոս Սիմոնյանը՝ գրվածքս պահել էր ծնցում ամբողջ

ամիսներ և վերջն այնպես էլ վերադարձրեց առանց կարգալու: Եաւ դայրացա այդ անուշադրությունից և ընկերոջս խնդրեցի, որ գրվածքս տանի տա «Մշակ»-ին (ինքս մի տեսակ վախ էի զգում առհասարակ խմբագիրներից՝ անձամբ խմբագրատուն մտնելու համար): Գրիգոր Արծրունին իսկույն կարդացել էր գրվածքս և, երբ ընկերս գնացել էր տեղեկանալու՝ կտպվի թե ոչ, խնդրել էր, որ հեղինակին, այսինքն ինձ, տանի իր մոտ, որովհետև ինքը մի քանի ցուցումներ ունի, որոնց համաձայն փոփոխություններ մտցնելուց հետո կտպվի: Ես ընկերոջս առերես ցուց տվի, թե վիրավորված եմ զգում «Հեղինակիս ինքնասիրությունը», որ ուրիշների ցուցումով պիտի բան գրեմ, բայց ճշմարտությունն այն է, որ ևս պարզապես սարսափեցի իմ շնչին տեղովս Գրիգոր Արծրունու պես մի մեծ մարդու ներկայանալուց: Ու զնացի: Ես խնդրեցի ընկերոջս, որ գրվածքս առնի տանի տա «Նոր-Դար»-ին: Ընկերս այդպես էլ արագ, և ահա պատանեկան անդրանիկ արձակ գրվածքներիցս մեկը՝ «Ճշմարիտ բարեկամը» առաջին անգամ լույս տեսավ «Նոր-Դար»-ի մեջ 1886 թվին «Միմո-Ծան» (Միքայել Հովհաննիսյան) ստորագրությամբ:

Դրանից հետո նույն ընկերոջս ձեռքով «Նոր-Դար»-ին ուղարկեցի երկրորդ արձակ գրվածքս «Նույն» վերնագրով, որը սակայն իմ ամենաառաջին վիպական երկն է՝ գրված «Ճշմարիտ բարեկամից» առաջ: «Նույն» ևս տպվեց «Նոր-Դար»-ում նույն 1886 թվին. այս անգամ արդեն նար-Դոս ստորագրությամբ, թեև այդ գրվածքս ուղարկել էի իմ իսկական ստորագրությամբ և մտադիր էի այդպես էլ շարունակել:

Նար-Դոս կեղծանվան ծագումը հետևյալ պատմությունն ունի: Սպանդարյանը «Նույն» ստանալուց հետո խնդրել էր ընկերոջս, որ ինձ տանի խմբագրատուն՝ ինձ հետ անձամբ ժամութանալու երախաւաված այն բանից, որ մի գրվածքս արդեն տպվել էր, այս անգամ սիրո առա ու գնացի: Ընդունելությունը սիրալիր էր և շատ խրախություն էր մի անգամ, որ ոտք դրի խմբագրատուն, այնուհետև ամեն օր խմբագրատան անխուսափելի այցելուն էի: «Նոր-Դար»-ի քարտուղարը և խմբագրության միակ անդամը այն ժամանակ Մելքոն Դանապյողյանն էր (Վերջը՝ Մուշե վարդապետ): «Նույն» տպելուց առաջ սա դիմեց ինձ. թե՝ արի մի լավ կեղծանըն ընտրենք, քանի որ մեր գրողները բոլորն էլ կեղծանունով են դրում: Չհակառակնեցի: Հենց այդտեղ ևեթ վերցրեց առձեռն բառ-

դիրքը և սկսեց ընտրելու ծրկար թերթում էր ու կարդում այս կամ այն բառը: Վերջիվերջո կանգ առավ Նար-Դու բառի վրա (ծաղկի անուն): «Էավ է, չէ», — ասաց, — մեջտեղն էլ գծիկով կրաժանենք ու շատ բարեհնչուն մի անուն դուրս կդա»: Համաձայնեցի և այդ օրվանից Նար-Դու կեղծանունը մնաց ու մնաց:

• • \*

1890 թ. հունիսի 1-ից Մելքոն Դանագյույանը գրաքննական կոմիտեի պահանջմամբ հարկադրված եղավ թողնել «Նոր-Դար»-ի քարտուղարի պաշտոնը (գրաքննիչ Կարախանյանի հետ ընդհարվելով, վիրավորել էր նրան), և այդ օրվանից քարտուղարի պաշտոնին հրավիրվեցի ևս ու վարեցի այդ պաշտոնը անընդհատ, մինչև այդ լրագրի վերջնական դադարումը: Այդ պաշտոնը խլում էր իմ ամբողջ ժամանակը, սկսած առավոտից մինչև գիշերվա ժամը երեսն 1-ը և 2-ը, որ ես անց էի կացնում տպարանում ցենզուրականի սպասին և հսկում էի թերթի երեսները կապելուն: Եվ այդպես ամեն օր, ամբողջ տարիները, իմ սեփական գրական աշխատանքներիս համար մնում էին միայն գիշերային ժամերը, և այդ ժամերին եմ գրել ես գրական երկերս մեծ մասմամբ: Այստեղից պարզ պիտի լինի, թե ինչու ես այնքան քիչ բան եմ գրել համեմատաբար:

«Նոր-Դար»-ի ժամանակավոր դադարման ժամանակ (1904 թ.), որը հետևանք էր խմբագիր Սպանդարյանի աքսորման, Տիգրան Նազարյանի կողմից հրավիրվեցի վարելու «Աղբյուր-Տարագ»-ի քարտուղարի և սրբագրիչի պաշտոնը:

Այնուհետև «Նոր-Դար»-ի վերջնական դադարումից հետո, սկսվեցին իմ թափառումները զանազան թերթերի խմբագրատներ՝ քարտուղարի պաշտոնով: Սակայն այդ բոլոր թերթերի խմբագրատներումն էլ իմ գործավարությունը կրել է միայն ժամանակավոր և կարճատե բնույթ, այն շափով, ինչ շափով այդ թերթերը գոյություն են ունեցել, բացի մի թերթից, ուր քարտուղարի պաշտոնի հրավիրվեցի 1913 թվից (մայիսի 1-ից) և վարեցի այդ պաշտոնը համարյա ամբողջ 6 տարի, մինչև այդ թերթի դադարումը՝ 1918 թվի վերջը:

Գրել սկսել եմ համարյա մանկական հասակից, ամենաառաջին երկու, որ գրել եմ այդ հասակում, եղել է մի պիես՝ Թիֆլիսի

բարրառով: Թղթերիս մեջ չի պահպանվել այդ գրվածքն, բայց վերնագիրը հիշում եմ — «Մայիսի գանգատը», Բովանդակությունը մի արբեցողի ընտանեկան կյանքն էր: Թե ինչու Թիֆլիսի բարբառով էի գրել, — պատճառն այն էր, որ այդ միջոցին կարդացել էի Սունդուկյանի «Պեպո»-ն և նրա կենդանի լուսանկարչական հարազատությամբ դուրս բերած տիպերն ու լեզուն շատ էի հավանել: Այս էլ ասեմ, որ այդ միջոցին ես թատրոն, ներկայացում ասած բանը չէի տեսել և ոչ մի գաղափար չունեի թատրոնական երկերի մասին, այն աստիճան, որ «Պեպո»-ն կարդալիս ամեն մի կործողության վերը գրված «վարագույր» բառը չէի հասկանում, թե ինչ է նշանակում:

Այնուհետև պատանեկան հասակումս ես գրել եմ մի բանք պիեսներ, որոնցից թղթերիս մեջ պահպանվել են միայն երկուսը — մեկը՝ «Մեզը ու ճանձեր» վերնագրով մի կոմեդիա (գրված 1886 թվին) և մյուսը՝ «Եղբայր» վերնագրով մի դրամա (1887 թ.), որը կիսատ է մնացել և գրել եմ ուսանավորով, կերմոնտովի «Դիմակահանդեսի» տպագորության տակ:

Սատուրյանի հետ ընկերանալուս եմ վերագրում այն հանդամանքը, որ որոշ տարիներ (1883—1887) ես էլ ոգերոված էի ուսանավորներ գրելով և թարգմանելով: Ամենաառաջին ուսանավորս, «Գարուն» վերնագրով, գրել եմ Պետքակթալյանի հանրածանոթ համանուն բանաստեղծության նմանողությամբ, Արհեստագիտական դպրոցում աշակերտածս ժամանակ Բագրատունու թելադրանքով (նույնպիսի մի ուսանավոր գրել էր և Սատուրյանը): Այդ ուսանավորներից տպված են մի երկուսը Գուլամիրյանի «Արաք» հանդեսում («Մենաստան» և «Ես սիրում եմ»), կարծեմ 1888 թվին, մեկը՝ Տեր-Գրիգորյան քահանայի «Սովորում» (շեմ հիշում վերնագիրը և թվականը), 1887 թվից հետո միանգամայն դպրակցի ուսանավորներ գրել, որովհետև համոզվեցի, որ չափածու բանաստեղծությունը իմ բանը չէ:

Ընթերցասիրությունն իմ մեջ զարթնել է շատ վաղ, «Խենթ»-ը և «Դավիթ Բեկ»-ը կարդացել եմ դեռևս «Մշակ»-ում տպագրվելիս: Անշափ սիրում էի Մաֆֆիի գրվածքները, ընդհակառակը, Մերենցը և Պողոյանը միշտ ճանձրությով եմ կարդացել: Արովյանի «Վերք»-ը մինչև վերշացրի՝ հոգիս դուրս եկավ: Կարդում էի ամեն բան, ինչ որ ձեռքս ընկներ, միայն թե ձեռքս ընկներ, իսկ հայերեն գիրք շատ քիչ եղար: Կարդացել եմ «Հյուսիսափայլ»-ի, «Կողմնկ»-ի, «Փորձ»-ի

Համարյա բոլոր գրքերը և նույնինք Ստ. Նազարյանի «Հանդես Հայախոսության»-ի երկու ստվար հատորները և Շահագիզի «Հրապարականություն»-ը՝ Պատմական գրքեր չեն սիրում:

Історія багато відмінна, але її не можна назвати історією. Історія — це писані факти, а не мітливі та погано обґрунтовані твердження про те, що відбулося в минулому. Історія — це писані факти, а не мітливі та погано обґрунтовані твердження про те, що відбулося в минулому.

Ամենամեծ հաճույքի կարդացել եմ Շիլլերը:

Զնայելով, որ Մաֆֆին կարդացել եմ ազահորեն, բայց և այնպես նա ինձ վրա ոչ մի ազգեցություն չի թողել և առհասարակ հայ Ծեղինակների մեջ ես ուսանելի ոչինչ շեմ գտել: Ինձ վրա շատ ուժեղ ազգեցություն են գործել սուս Ծեղինակները, առանձնապես Գոնչարովը և մանավանդ Տուրքեննը:

**Սկզբի** շրջանում գրածս երկերից շատ բաներ, իհարկե, ահաս գրի արդյունք են, ապագրության անարժան, դրանց թվում ե այն երկերից շատերը, որոնք արդեն ապագրված են «Նոր-Դարսում»։ Այդ է պատճառը, որ վերջիններից շատերը առանձին գրքերով առագրության չեն հանձնվել։



# ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ



## ՄԵՐ ԹԱՂՆ

ԻՆՉՊԵՍ ԲԺՇԿԵՑԻՆ

Ա եծ ու փարթամ քաղաքի ծայրամասերից մեկի թաղը։ Հավիտենական աղբով ծածկված ծուռտիկ-մուռտիկ փողոցներ, որոնք նեղիկ անցքերով գնում խաչաձեռում են իրար կամ դեմ առնում մի պատի՝ կույր մուրացկանի պես։ Իրար վրա թափված, իրարու հենված տնակներ, որոնց խարխով լաբիարները թվում է թե ամեն րոպէ պատրաստ են թափվելու անցորդի գլխին։ Փոքրիկ պատուհաններ՝ կեսը ապակի, կեսը թղթած, փտած դռներ, հողածածկ տափակ կտուրներ, որոնք ձմեռը տնքում են ձյունի ծանրության տակ, գարնանը ծածկվում փարթամ կանաչով և անձրևների ժամանակ կաթում, կաթում, կաթում, ստիպելով խեղճ ու թշվառնակիշներին պատսպարվել ծալքերում, դռների և պատուհանների խոռոշներում, չուկ ու փալասների տակ։

Սյսպիսի տնակներից մեկն էր և ջուլհակ թորոսի խրճիթը։ Սակայն այս խրճիթը մյուս տնակներից տարբերվում էր միայն նրանով, որ սրա պատերի կեսն ալիքից էր (կավի և հարդի շաղախից) և կտրանը երդիկ ուներ, որի զլուխը ծածկված էր կոտրած կարասի վերին մասով։ Այդ երդիկի տակ էր ջուլհակի դազգահը, և այդ տեղից էր նա ձմեռը լույս ստանում կտավ գործելիս, որովհետև միակ պատուհանը շատ փոքր էր և դազգահը հեռու։

Ջուլհակ թորոսը, որ մի ժամանակ շատ ժիր արհեստավոր էր, նստում էր իր նահապետական դազգահի առջե, ոտները կախում հորի մեջ, մաքոքը հինածի միջով աշ ձեռքից ձախն էր զցում, ձախից աջը, և վաղ առավոտից մինչև ուշ գիշեր խրճիթի խոր լոռության մեջ լսվում էր ճախարակների միազար ճռճռոցը։ Այժմ

ծերացել էր, շատ էր ծերացել. մեզքը կորացել, կուզ էր դարձել, մորուքը սպիտակափառ փուզել էր կրծքին, սպիտակ թավ հոնքերը կախվել էին հանգած աշքերի վրա, ձեռքերը դողդողում էին և առանց ձեռնափայտի չէր կարողանում ման գալի Ու չէր հիշում, թե երբանից էր, որ դազգահը, կարծես խոր քուն մտած, կանգնած էր երդիկի տակ իր ցից-ցից սյուներով, առանց հինածի, որպես մի կմալսը. չէր հիշում, թե երբանից էր, որ ջահրան իր ծոված անիվով ընկած էր անկյունում անզործ, չէր հիշում, թե երբանից էր, որ մասրաները փոշեթաթախ ընկած էին մութ պատի տակ՝ թիթեղյա այն փոքրիկ լամպի հետ, որ գիշերները մխում էր դազգահի մոտ:

Այն էլ չէր հիշում, թե երբ էր մեռել կինը, թողնելով իր միքանի զավակներից միայն մի աղջիկ, որն այժմ մոտ երեսուն տարեկան էր և իր միակ հույսն ու ապավենը այդ խորին ծերության հասակում: Մարթան էր նրան կերակրում, հագցնում իր ձեռքի աշխատանքով և չէր ամուսնացել միայն նրա համար, որ ծերունի հայրն անտեր-անտիրական շմնա: Նրա, ինչպես և համարյա ամբողջ թաղի կանանց, սովորական աշխատանքը հինած գործելն էր, որ նա վերցնում էր ասիական դերձակներից: Ամբողջ օրն աշխատում էր, աշխատում առանց դադար առնելու: Նրան միշտ կարելի էր տեսնել կամ գուլուր հարեան կանանց պես տան պատի տակ վիլալարը ձեռքին հինած հինելիս, կամ թել կծկելիս, կամ գուլուրայի վրա թել ետ տալիս և կամ թե տանը. Թախտի վրա, դազգահի առջև նստած, գուլուրան և թուրը ձեռքին, հինած գործելիս:

Տարօրինակ աղջիկ էր Մարթան: Միծաղ, ուրախ տրամադրություն ասած բանը կարծես բնավ ժանոթ չէր նրան. ծանրաբարո, սակավախոս, միշտ զգաստ, միշտ լուրջ, միշտ կենտրոնացած իր ներքին աշխարհի մեջ, ուր կարծես շարունակ պրատում էր ինչոր ու չէր գտնում: Դեռևս մոր կենդանության ժամանակ, որ զարմանալի աստվածավախ կին էր, տարված ամեն տեսակ նախապաշարումներով, նա սովորել էր հավատալ սրբերին, որոնք այժմ մի-մի պաշտամունքի առարկա էին դարձել նրա համար: Նրա ամենապաշտելի սուրբը ո. Գևորգն էր, ուր ամառ-ձմեռ համարյա ամեն շաբաթ երեկո գնում էր համբուրելու, իսկ ամեն տարի աշխանը, այդ սրբի տոնի շաբթին ծով էր պահում— ամբողջ վեց օր ոչ հաց էր առնում բերանը, ոչ ջուր, իսկ յոթերորդ օրը հաղորդվում էր: Նույնիսկ մի անգամ ծոմապահությունից այնպես հիվան-

դացավ, որ քիչ մնաց մեռներ, բայց և այնպես շարունակում էր իրենք: Մեծ պանր պահում էր ամենայն սրբությամբ, իսկ զատկից մինչև համբարձումը երկուշաբթի օրերը չէր աշխատում, որ հարինք ցավը շտարածվի, և արտերը կարկտահար վիհնեն: Միշտ այդպես էին արել հայրն ու մայրը, այդպես էլ շարունակում էր այժմ ինքը:

Նա հավատում էր դմերի և սատանաների, ալքերի և քաջքերի գոյության, թալիսամանների և ծողովրդական աղոթքների ղորության: Երազի մեջ տեսած ամեն մի կենդանի կամ առարկա նրա համար որոշ, տիսուր կամ ուրախ, պատահարի գուշակ էր, հոգ չէ, թե այդ երազները բնավ չկատարվեին:

Դեռևս մանուկ հասակում մորից լսել էր, որ ամեն մարդու աջուսի վրա հրեշտակ կա նստած, ձախ ուսի վրա— սատանա. Նրանք շարունակ կովում են իրար հետ. հրեշտակը մարդուն դեպի բարին է մղում, սատանան— դեպի շարը, ուստի քնելիս պետք է միշտ ձախ ուսի վրա պառկել, որ սատանան տակը մնա շարդպի: Ու Մարթան այդպես էլ անում էր միշտ և հաստատ հավատացած էր, որ գիշերները ձախ ուսի վրա պառկելով սատանային տակն է զցում շարդում և դրանով ուրախացնում բարի հրեշտակին:

Գարնան վերջին օրերից մեկում մեռավ թորոսենց հեռու-մոտիկ ազգականներից մեկի թոքախտավոր տղան՝ Դարշու անունով: Մարթային եկան տարան, որ օգնի սեեր կարելու սգավորների համար: Երեք օր ու գիշեր մնաց Մարթան մեռելատանը և ստու դարձավ թաղման օրը, արդեն մութն ընկած ժամանակ, երբ ամենքն արդեն ցրվել էին: Հայրը նրանից շատ առաջ էր վերադարձել և խրճիթի շեմքին նստած՝ սպասում էր նրան:

Մարթան մտավ, որ ճրագ վառի և մտնելուն պես այնպիսի մի ճիշ արձակեց, որ կարծես օձ խայթեց:

Այդ ճիշն այնքան սարսափելի էր, որ ծերունի հայրը համարյա թե երիտասարդական կորովով վեր թռավ տեղից և ներս ընկավ: Ու ներս ընկնելուն պես իրեն գտավ աղջկա գրկի մեջ:

Վայ, հայրիկ չան, շները, կատվանիքը,— կանչեց Մար-

թան սարսափահար, պինդ սեղմելով նրան իր գրկի մեջ պաշտպանություն որոնողի պես:

Հայրը, հազիվ կարողանալով պահել իրեն նրա ծանրության տակ, շոշափեց նրա գլուխը և հարցրեց ծայրաստիճան զարմացած.

— Մարթա ջան, ի՞նչ ես ասում:

— Ծները, կատվանիքը, — կրկնեց Մարթան, և հայրը զգաց, որ նա ամբողջ մարմնով դողում էր:

— Ի՞նչ շում, ի՞նչ կատու, որդի ջան:

— Հրեն... միսը քրքրում են...

— Ի՞նչ միս, որտե՞ղ:

— Հրեն թախտի տակը, թախտի տակը...

Ծերունին մի կերպ ազատեց իրեն աղջկա ցնցողաբար սեղմող ձեռքերից, մթության մեջ խարխափելով մոտեցավ սեղանին, որ ճրագ վասի, բայց թե՛ ձեռքերն էին դողում և թե՛ իրենից պոկ չեկող սարսափահար աղջկը շեր թողնում, որ ազատ շարժումներ գործի. Վերջապես, սեղանի վրա երկար տապատպելուց հետո, գտավ լուցկու տուփը և մի կերպ վառեց լամպը: Ու երբ լույսի վրա նայեց աղջկան, զարմանքից քարացավ: Մարթայի դեմքը սարսափից ծռմովել, այլանդակվել էր, աշքերը կարծես ուզում էին դուրս պրճնել խոռոշներից, հայացքն անմիտ էր, երեսին գույն չկար, և ինքն ամբողջովին դողում էր տերեկի պես:

— Մարթա ջան, էդ ի՞նչ ա հալդ, — ակամա բացականչեց ծերունին իր թուլ, դողդոչուն ձայնով, — ինչի՞ ես դողում:

— Ծները, հայրիկ ջան, կատվանիքը... ախր միսը քրքրում են... թախտի տակը, — սարսափած կրկնում էր Մարթան, ձեռքով ցմւյց տալով թախտը:

— Հիսունին ու Քրիստոսին, որդի ջան, շում ու կատու չկարստեղ, աշքիդ ա էրևում, — խաշակնքեց ծերունին:

Բայց Մարթան շարունակ կրկնում էր իր ասածը և, հորը պինդ կպած, սարսափահար աշքերը շեր հեռացնում թախտից:

Ծերունին մի կերպ ազատվեց նրանից, դողդոչուն ձեռքով վերցրեց լամպը, մոտեցավ թախտին, դրեց գետնին, կապերտի փեշը բարձրացրեց և աշք ածեց թախտի տակը:

— Դե զու էլ տես, ըստեղ ո՞ւր ա շուն ու կատու, — ասաց նա, դառնալով աղջկան:

Մարթան, առանց տեղից շարժվելու, ձեռքերը դրած ծնկներին, խոնարհվեց և չուած աշքերով հեռվից նայեց թախտի տակը, ուր բացի կավե կրակարանից, որ նրանք ձմեռը քուրսու տակ էին բանեցնում, փայտ կոտրելու կացնից և ավելից, ուրիշ բան չկար: — Չկա՞ — հարցրեց նա կամացուկ ծոր տալով:

— Բա կա՞: Որ ասում եմ աշքիդ ա էրևացել...

Ծերունին կապերտի փեշն իշեցրեց, լամպը վերցրեց և տարավ դրավ սեղանի վրա:

— Նստի, բալա ջան, նստի: Մի քիչ սառը ջուր խմի, վախեցած ես:

Նա վերցրեց ջրի թասը, մոտեցավ պատի տակ կիսով շափ գետնի մեջ խրված կարասին, զուր հանեց և բերավ դրավ աղջկա առջև:

Բայց Մարթան ձեռ էլ չտվավ: Այժմ հանգստացել էր և նըստած էր աշքերը մի կետի հառած, գլուխը ձեռքերի մեջ առած; կարծես աշխատելով մտքերը հավաքել:

— Մեր թախտի տակը չէ, — շշնչաց նա երկար լուսիունից հետո, — նրանց թախտի տակը... Խալխը որ քաշվեց, Դարչոյի մերն ասաց ինձ, որ մոզու միս հանեմ թախտի տակիցը, տանեմ գանցինումը պահեմ: Կուցա, որ հանեմ, տեսնեմ շներն ու կատվանիքը վրա են թափվել քրքրում... Ընե՞նց վախեցա, որ... ընե՞նց վախեցա...

— Ի՞նչ մոզու միս, — հարցրեց ծերունին:

— Դարչոյինք որ պահում ին... էն մատաղացուն, էլի, որ պըտի տանեին թողնըսի ս. Գորգում մորթեին, որ Դարչոն լավանարու:

— Էն էին մորթել քելեխի՞ն:

— Բա՛:

— Վա՛յ, վա՛յ, — ասաց ծերունին գլուխը շարժելով: — Ետո գրաւատ շուն ու կատվանիք ի՞ն:

— Եսի՞մ... վախից սիրտա գնացել էր... Ասին, թե ոչինչ չկա, աշքիս ա էրևացել...

— Աշքիդ ա էրևացել, բա աշքիդ, ոնց որ հըմի, — վրա բերեց ծերունին: — Վե կաց, բալա ջան, վե կաց, կողենքը գցի, բնենք: Իրեք օր ա շըրջարվել ես, շատ կըլես բեզարած: Հրես իմ բունն էլ ա տանում:

Եվ ծերունին, բոլորովին հանգստացած, հորանքեց:

**Մի քանի օր Մարթայի վարմունքի մեջ մի առանձին տարօրինակ բան չէր նկատվում։ Սովորականի պես առավոտները վաղ վեր էր կենում, փոքրիկ ինքնաեռը զցում, անկողինը հավաքում, թախտն ու հատակն ավլում, ամեն բան իր տեղը դնում ու նստում հինած գործելու մինչև ինքնաեռի եռ զալը։ Հետո հոր հետ սուս ու փուս թել էր խմում ցամաք հացով և նորից գործի նստում մինչև ճաշ և մինչև երեկո։ Բայց այնուհետև հայրը նկատեց, որ նա մենակ գործի նստած ժամանակ խոսում է ինքն իրեն, դեմքով ինչ-որ ծամառություններ է անում, երբեմն ծիծաղում առանց որևէ առիթի, երբեմն էլ սգվորի պես մղկտալով մրմռում, լաց լինում։ Մի օր Էլ ծերունին դրսից ներս զալով տեսավ թախտը մի կողմն է քաշել ու կացնով քանդում է գետինք։**

— Մարթա՛, էղ ի՞նչ ես անում, — բացականչեց նա զարմացած և զախեցած։

— Հանում եմ... հանում եմ, — ասաց Մարթան, կացինն ուժգին թափով զարկելով հողե հատակին։

— Ի՞նչը։

— Մողին...։

— Ի՞նչ մողի։

— Մատաղացու մողին... մատաղացու մողին... ս. Գևորգի մողին... քանի վախտ ա մզզում ա... բա մեղքը չի՞... բա մեղքը չի՞... բա թողանք, որ շներն ու կատվանիքը գզզզե՞ն...։

Ասում էր ու հեալով քանդում գետինք շարունակ, հողը ցարոցիկ տելով շուրջը։

Սերունին, տեղն ու տեղը քարացած, նայեց, նայեց, հետո մի «վայ» արագ և երկու ձեռքով թակելով զլուխը՝ շտապեց դեպի գուրս, հարեաններին օգնության կանչելու։

Զանցավ մի քանի բոպի, և արգեն ամբողջ թաղը դրնգում էր, թե «Թորոսանց Մարթան գծվել ա»։ Էլ մեծ, էլ փոքր, էլ կին, էլ աղցիկ — ով ասես, բան ու գործ թողած, շտապում էր թամաշի։ Թորոսենց խրճիթի ներսն ու գուրսն ասեղ զցելու տեղ շկար։ իրար ճխլելով, իրար հրելով, իրար ոտ կոխ տալով ներս էին խցկվում, հա՛ խցկվում խրճիթի նեզ դոնից։ Զայների ժխորը բռնել էր ամբողջ փաղոցը։

**Մարթան նստած էր իր փորած գետնի վրա և, կացինը ձեռին, խելագարի անմիտ հայացքով նայում էր ներսը ճխտված կանանց և երեխանների ամբոխին։ Շրթունքները շարունակ կրծում էր և դերիայի փեշը փաթաթում մատների վրա, ետ անում ու նորից փաթաթում։ Նստած էր լուս, բոլորովին ձայն չէր հանում, մինչև իսկ այն ժամանակ, երբ փորձում էին խոսնենել։ Մի քանի սրտուններ փորձեցին կացինն առնել նրա ձեռից և վեր կացնել, բայց նա կացինը շեքը կոխեց, ամբողջ մարմնով կոացավ նրա վրա և սկսեց լաց լինել երեխայի պիս, երբ նրա ձեռքից ուզում են խլել իր խաղալիքը։**

**Տեղահան արած թախտի ծայրին կծկվել, կուշ էր եկել ծերունի հայրը, կուզը ցցել, սպիտակ մորուքը թաղել ծնկների արանքին և մղկտում դառնագին։**

Ներսը հավաքված կանայք նայում էին ծերունուն և նրա աղջկան խղճահարությամբ, կարեկցությամբ և մի տեսակ վախի զգացումով, որ ակամա պատում է մարդուն խելագարի հանգեցի։ Եղ թեպես ոչ ոք տեղից չէր շարժվում, բայց ամեն մեկի մեջ այդ վախի զգացումն այն աստիճան ուժեղ էր, որ բավական էր Մարթան հանկարծ վեր թռչեր տեղից և վրա պրծներ, իսկույն ամենքը գլխապատառ դուրս կփախչեին ճիշ ու ծկլթոցով։

Իսկ այն կանանց մեջ, որոնք ամբոխվել էին դուրս՝ ներսը տեղ լինելու պատճառով, տեղի էին ունենում հետեւյալ խոսակցությունները։

— Ազդի նատո, տեսնես ինչի՞ցն ա խելքից ըլել։ Էփոն ասում ա, թե Դարչոյի հոգեառ հրեշտակն ա խփել, յանի զորթ ա։

— Դե եսիմ մ. որն էղ ա ասում, որն էլ ասում ա, թե Բոլնիսի ս. Գևորգն ա բռնել։

— Ի, մեռնեմ նրա զորութենին. յանի էղ խեղճին բռնում ա ի՞նչ անի։ Հանդիպիսի կըլի եկած։

— Ասում են, թե Դարչոյենց թախտի տակը շներ ու կատվանիք են էրևացել աշքին։

— Դրուստ ա, դրուստ, — խոսակցությանը խառնվեց մի ուրիշը, որը ամենից անտարբեր, եկել էր ամենից ուշ և գուլպա էր գործում։ Օղորմածիկ Դարչոյի էն շաշ մերը Բոլնիսի ս. Գևորգի համար ետ դրած մողին վեր ա ունում քելեխին մորթիլ տալի, մատաղացուն խաշլամի տեղ ուտացնում։ Բա խելքը գլխին կծիկար-

մատն ըտենց բան կանի՞։ Որ շաշ ա, շաշ, է՛լի՛ Թելեխին էղ մո-  
գու խաչլամիցը ո՛րն ուտում են՝ ուտում, մնացածն էլ զնում թախ-  
տի տակը, պահում էննա, իրիկնապահին, խալխը որ թաշվում ա,  
Դարչոյի մերը Մարթին ասում ա, որ միսը թախտի տակից հանի,  
զնի գանջինումը։ Մարթեն հենց կուանում ա, որ հանի, տեսնում ա  
շներ ու կատվանիք են թոփ ըլել մսի վրեն, քրքրում։ Հա՛, ըստեղ  
սիրտը գնում ա վախից։ Վրա են թափվում, ջուր ածում քրքրում,  
զջլտում, զոռով ետ բերում։ Այ ըսենց ա ըլել բանը, թե որ դրուստն  
ուզում եք իմանաւ։

- Բա շուն ու կատու չի ըլե՞լ։
- Ի՞, շուն ու կատու, չէ մի ոտներ։ Աշքին ա էրեացեր։

\* \* \*

Թաղի կանանց այցը վերջանալուց հետո հավաքվեցին Թո-  
րոսի հեռու-մոտիկ բարեկամ կանայք և սկսեցին խելք-խելքի տալ,  
թե ի՞նչ դարման անեն։ Խորհրդակցությանը նախագահում էր հա-  
րկան խարազ Պետոյի այրի կինը— Օսանը, որը հայտնի էր իր  
լեզվագարությամբ և առանց որի գործոն մասնակցության թաղում  
ուշինչ չէր կատարվում։ Օսանի առաջարկով որոշեցին դիմել տեր-  
տերի փեսա գրքաց և հեքիմ Դրիգորին, որը մեծ հռչակ էր վայե-  
լում նախապաշարված ժողովրդի շրջանում։ Բերնե-բերան լեզենդ-  
ներ էին պատմում նրա անվրեպ գուշակությունների և բժշկու-  
թյունների մասին, այնպես որ տարվա բոլոր եղանակներին և շա-  
բաթվա բոլոր օրերին նրա ընդունարանը լիքն էր լինում ամեն ազ-  
գի, ամեն հասակի ու սեռի, գլխավորապես կին այցելուներով,  
որոնք ժամերով հերթի էին սպասում։ Այդպիսի պայմաններում  
հեշտ չէր նրան տանից գուրս բերել առանց խոշոր և կանխիկ  
վարձատրության։ Թորոսը մի քանի գրոշներ ուներ հոգեպահուստ,  
մնացածը լրացրին սրտացավ բարեկամներից ոմանք, մի կլորիկ  
գումար կազմեցին, տվին Օսանի ձեռքը և զրկեցին գրքաց Գրիգորի  
մոտ։

Գրքաց Գրիգորը սկզբում շեմուզում արեց, փողը քիչ համա-  
րեց, ասաց, թե ժամանակ շունի, վերջը, անսալով Օսանի ճարտար  
լեզվին, համաձայնեց և խոստացավ հետեւյալ օրը ճաշից հետո  
այցելել հիվանդին։

Մոտ քառասուն տարեկան մասեղ մարդ էր Նա, պստիկ ծրապ-  
տուն աշխերով, կլորիկ, մաքուր սափրած կարմիր դեմքով, բաճ-  
կոնի տակ հագած դեղին շեսունչի արխալուզով, ոսկեզօծ նեղ քա-  
մարով և ձեռքին շարունակ մի կարճ համրիչ դեղին հատիկներով,  
որ նա ավելի շուտ ափից ափ էր նետում, քան հատիկները զցում։

Հետեւյալ օրը ճաշից հետո նա կատարեց իր խոստումը և եկավ  
Օսանի առաջնորդությամբ։ Նրա ճարպոտ դեմքից, մի քիչ ծուռ  
դրած գդակից և սովորականից ավելի ժպտուն աշխերից երևում էր,  
որ լավ կերել-խմել էր։

Եկավ, ու թաղը նորից դրնգաց։ Այս անգամ հետաքրքրու-  
թյունն ավելի մեծ էր, քան նախորդ օրը, երբ նոր էր տարածվել  
Մարթայի խելագարության լուրը։ Թաղի կանայք, իրար ձեն տա-  
լով, վազում էին, որը ծծկեր երեխային խտտած, որը ոտարարիկ,  
որը շտապելուց չուստի մեկը մոռացած, մյուսը քարշ տալով ոտին,  
որը գիշի աղլուսի ծալրերը շտապ կապելով, որը կուրծքը կոճկե-  
լով։ Ու ամենից առաջ, թաղի անթիվ երեխաները, համարյա թե  
տկլոր ու ոտարարիկ, թոշկոտալով ու ծկլթալով։

Դեռ նախորդ օրվանից, թախտը տեղահան անելուց և գետի-  
նը քանդելուց հետո, Մարթան բոլորովին հանգստացել էր, լեզուն  
փորք գցել և իր համար կար սուս ու փուս Այժմ էլ, երբ գրքաց  
Գրիգորը մտավ, նա հանգիստ նստած էր թախտի վրա, արմունկը  
հենել ծնկանը, գլուխը դրել ափին և անթարթ նայում էր պատու-  
հանից դուրս, կարծես խոր մտածմունքի մեջ ընկղմված։

Գրքաց Գրիգորին հարգանքով և պատկառանքով առաջարկե-  
ցին խրճիթում գտնված երկու հատիկ հնածկ աթոռներից մեկը։  
Նստեց և սկսեց մանրամասն հարցուփորձ անել։ Սկսեցին իրար  
կտրելով, իրար ուղղելով, որը սկզբից, որը վերջից, որը միջից  
պատմել ամբողջ եղելությունը։

Գրիգորը նստած էր գդակը ետ գցած հակատից, աթոռի մեջ-  
քին ետ ընկած, ձեռքերը դրած կրծքին, համրիչի հատիկները մեկ-  
մեկ գցելով, և լսում էր նայելով մերթ Մարթային, որը նստած էր  
անշարժ նույն դիրքում, և մերթ դռան կողմը, որտեղից մեկը մյու-  
սի հետեւյալ կամացուկ, իրար հրելով ու փափսալով ներս էին մըտ-  
նում թաղի կանայք և տապ անում իրար քամակի։

Եղելության պատմությունը լսելուց հետո Գրիգորը վեր կա-  
ցավ, աթոռն առաջ և գնաց նստեց ուղղակի Մարթայի առջև։

Մարթան վերջապես շարժվեց, նստեց ուղիղ և սկսեց խոր դիտել նրան հռնքերը կիտած. Հետո հանկարծ հոնքերը վեր նետեց լեզուն հանեց, ծափ տվավ և սկսեց ծիծաղել:

Խելագարի այդ վարմունքի վրա մի փոթկոց բարձրացավ թամաշալի կանանց մեջ:

Գրիգորը սակայն ոչ մի սաշադրություն չդարձրեց խելագարի այդ վարմունքի վրա, համրիչը հանգիստ կերպով գցեց արխալուզի գրպանը, մյուս գրպանից հանեց մետաքսի թաշկինակի մեջ խնամքով փաթաթած ինչ-որ մի բան և սկսեց կամաց-կամաց բաց անել, հնությունից և շատ գործածելուց մաշված ու կեղտակալած կաշեկազմ մի փոքրիկ ու հաստ գրբույկ. Էր, որ նա անվանում էր «Սողոմոնի գիրք»: Երկար ժամանակ ծանր ու բարակ թերթելուց հետո վերջապես կանգ առավ մի երեսի վրա. և սկսեց կարդալ կամացուկ:

Խրճիթում բոլոր շշուկները դադարեցին, և ամենքը լարված լսողություն դարձան:

Մարթան նույնպես առաջվա պես սուս էր արել, հոնքերը կիտել և անմիտ հայացքը հառել Գրիգորի շրթունքներին: Բայց շանցավ մի քանի բռպես, երբ հանկարծ նա երկու ձեռքով պինդ զարկեց ծնկներին, վեր թռավ տեղից, իրեն ներքն զցեց և ուզեց գորոս փախչել:

Խելագար աղջկա այդ նոր վարմունքի վրա խրճիթում տիրող հանդիսավոր օպատողական դրությունը մեկն սոսկալի ժիարի փոխվեց: Մարտափահար ամբոխը, ճիշ ու աղաղակով զցեց իրեն դեպի գուրու, բայց գուրոն այնքան փոքր էր և ամենքն այնքան ճիտված էին իրար, որ համարյա ոչ օք. չկարողացավ իսկույն տեղից շարժվել, բացի դուն մոտ կանգնածներից, որոնք գուրս փախան գլխապատռու: Մինչև որ մյուսների համար էլ ճանապարհ կրացվեր դուրս փախչելու, Օսանը և մի քանի ուրիշ սրտոտներ բռնեցին խելագարին, որ փորձում էր կծել նրանց ձեռքերը, տարան նորից նստեցրին թախտի վրա և գրբացի հրամանով թոկով կապեցին նրա ձեռքերը հետևից:

Խրճիթը դատարկվեց, թամաշալի կանանցից և երեխաներից: — Դուռը կողակեցեք, ել օչ ովի շթողաք մտնի, — հրամայեց գրքաց: Գրիգորը, որ այժմ լուրջ և մտագրադ կերպարանք էր սուել: — Ի՞նչ ա. մայմուն խո չե՞ն խաղացնում ըստեղ:

Դուռը փակվեց: Խրճիթում մնացին, բացի իրեն՝ Գրիգորից, խելագարից և նրա ծերունի հորից, Օսանը և այն մի քանի սրտոտները, որոնք բռնել էին Մարթային:

\* \* \*

Գրքաց Գրիգորը նստեց իր առաջվա տեղը, Մարթայի առջև, և նորից սկսեց թերթել «Սողոմոնի գիրքը»: Խելագարն այժմ նըստած էր առաջվա պես հանգիստ, առանց նույնիսկ բողոքելու, որ ձեռքերը կապել են: Խրճիթում առժամանակ կատարյալ լուսաթյուն էր տիրում: Այնինչ դրսից լսվում էր կանանց ամբոխի դժվագը, երեխանց կանչն ու աղմուկը: Փոքրիկ պատուհանը ծեփվել էր դրսից ներս նայող հետաքրքիր գեմքերով ու պսպղոն աշքերով, այնպես որ առանց այն էլ կիսախավար խրճիթը համարյա թե մըթնել էր:

Ու նոր էր սկսել գրքաց Գրիգորը համապատասխան աղոթքը քթի տակ փնթինթալ, երբ Մարթան նորից գծության նշաններ ցուց տվավ: Սկզբում ձեռքերը ձիգ ու միգ արավ, որ կապանթից ազատի, հետո տեսնելով, որ չի կարողանում, սկսեց ոտները բալդի-բալդի անել, ոլոր-մոլոր գալ և բղավել ու անիծել:

Գրիգորը գլուխը երերեց, գիրքը ծածկեց և վեր կացավ:

— Տե՛ս, տե՛ս, ինչ են անում նղովածները, — ասաց նա խորհրդավոր կերպով, դիտելով Մարթայի խելագար շարժումները: — Ետ արեք ձեռքերը, բալքի հանգստանաւ:

Մարթայի ձեռքերը ետ արին, և իսկապես որ նա հանգստացավ և այժմ սկսեց միայն լաց լինել:

— Բա ես գրքաց Գրիգորը չեմ ըլի, թե որ թողեմ էս խեղճին ըտենց շարչարեք, — ասաց Գրիգորը նույն խորհրդավոր եղանակով՝ հայտնի չէ ում հասցեին, և հրամայեց, որ մի թաս չուր բերեն:

Թասով ջուրը բերին: Գրիգորն առավ և դրեց թախտի վրա, Մարթայի առջև:

— Մի պստիկ ըրեխա չկա՞, կանչեցեք գա:

Օսանը գուրու բաց արեց, դրսից ներս կանչեց թաղի երեխաներից մեկին, որի հագին բացի մի կեզտուտ շապիկից ուղիշ քան

-23-

լիար, և շտապեց դուռը նորից փակել մի քանի կանանց երեսին, սրոնք օգովելով այդ հանգամանքից, ուզում էին ներս պրծնել:

Գրիգորը երեխայի ձեռքից բռնեց, տարավ նստեցրեց թախտի վրա և թասով ջուրը քաշեց նրա առջև:

— Խստակ մում չունե՞ք, բերեք մի ջումա:

Թորոսը դողդոցուն ձեռքերով թարեքից հանեց երկու հատ դեղին լղարիկ մեղրամոմ, որից նա ամեն կիրակշեքին վառում էր իր դազգահի վրա, և տվավ գորացին:

Գրիգորը մոմերը կացրեց թասի պոնկին իրար դիմաց և դարձավ ներկաներին՝ դեմքի անսովոր խորհրդավոր արտահայտությամբ:

— Բա ասիլ շեք, էս խեղճի փորը սատանեք են մտել...

— Ո՞նց թե սատանեք, — դուրս թռավ ամենքի բերանից:

— Սատանեքը ո՞նց կըլեն. պոզավոր ու պոշավոր, իսկական սատանեք եմ ասում, հանաք շկարծեք:

Զարհուրանքը տիրեց ներկաներին. մի քանիսը նույնիսկ երեսները խաշակնքեցին: Սերունի թորոսը խո տեղն ու տեղը քարացավ. նա միայն անտամ բերանը բաց արավ և երկայն մորուքը տմբտմբացնելով, առանց այն էլ ծերությունից առաջ ընկած վկուխն ավելի առաջ տարավ դեպի գրբաց Գրիգորը և հարցրեց.

— Ետո...

— Ետո ի՞նչ: Ետո էն, որ իրեք հատ են ու շատ էլ շար: Ետ տեսաք, երկու հետ, հենց որ սկսեցի աղոթքը կարդալ, ոնց գըժվացրին: Ուզում են էս խեղճին տանեն ջուրը զցեն:

Գրբաց Գրիգորի այդ խոսքերի վրա խեղճ ծերունու գլուխը սկսեց ավելի շարժվել:

— Ա՛ քե մատաղ, — բացականչեց նա լալագին ձայնով, — ախր սատանեքը սրա փորն են մտնում, ի՞նչ անեն:

— Բա ս. Գեորգի հմար ետ դրած մատաղացուն մեռելի քելիսին մորթելը հանաք բան եք կարծո՞ւմ. բա սուրբն անպատիծ կթողնի՞ էդ տեսակ բանը:

— Լավ, մեռնեմ իրան, սա էր մորթիլ տվե՞լ, որ սրան ապատիել:

— Դու գիտում չես, բիձա զան, սուրբն արդարին աքռածած, որ մեղավորները խելքի գան, իրան ընդգեմ բան շանեն: Համա դու դարդ մի՛ անի, — ավելացրեց Գրիգորը խրախուսի ժամանով խփելով ծերունու ուսին, — ես էս ա, լավացնելու եմ: Ինձ գրբաց

Գրիգոր կասեն. սատանեք չէ, Սագայելն էլ գա, իմ ձեռքից պըրծնիլ չի: Կե, հըմի սկսենք:

Նա հրամայեց, որ երկու հոգի նստեն Մարթայի աջ ու ձախ կողմը, որպեսզի, եթե նրա փորի մեջ նստած սատանաները, ո՞վ գիտե, նորից վեր թոցնեն նրան, որ տանեն ջուրը գցեն, բռնեն նրան, շթողնեն փախչի:

Օսանը և մի ուրիշը նստեցին Մարթայի այս ու այն կողմը: Թորոսը տեղավորվեց թախտի ծայրին: Էսկ ինքը Մարթան նըստած էր հանգիստ, միանգամայն անտարբեր, թե ինչ են ասում և անում իր շուրջը:

Գրիգորը մոմերը վառեց, նստեց իր առաջվա տեղը, աթոռի վրա, նորից բաց արավ «Սողոմոնի գիրքը» և ասաց.

— Հըմի ես աղոթքը վրա իրեք անգամ կկարդամ, սատանեքը մեկ-մեկ դուրս կգան, կընկնեն էս թասի ջուրը: Համա մենք տեսնիլ շենք, մենակ էս ըրեխեն կտեսնի, շունքի անմեղ ա: Պըստիկ, — դարձավ նա թասի առջև ծալապատիկ նստած երեխային, — մտիկ արա էս զրին. աշքդ հեռացնես ոչ, հենց որ տենաս սատանեքը մեջն են ընկնում, իմաց արա ինձ: Իմացա՞ր:

Երեխան տմբտմբացրեց զլուխը և աշքերը շորս շինած՝ հառեց թասի ջրին:

Գրիգորն սկսեց կիսաձայն կարդալ, նայելով մերթ գրքին, մերթ Մարթային և մերթ երեխային: Ներկաներին տիրել էր նախապաշարվածներին և սնոտիապաշտներին հատուկ այն սրբազան երկյուղածությունը, որով նրանք սպասում են հրաշքի. այդ տրամադրությունը սակայն ավելի նման էր ներքին սարսափի, որովհետև գործը վերաբերում էր սատանաներին: Սպասողական դրության մեջ նրանք ևս իրենց կողմից նայում էին մերթ գրբացի շրթունքներին, մերթ Մարթային և մերթ երեխայի առջև դրած թանին, երկի մտածելով, թե գուցե իրենք էլ տեսնեն սատանաներին, բայց անշուշտ ոչ ոքի մտքով չէր անցնում, թե ինչքան փոքր պիտի լինեն այդ սատանաները, որ տեղավորվեն և խեղդվեն թասի շրի մեջ:

Էսկ Մարթան նստած էր լուռ ու անշարժ և այնքան լուրջ, որ ոչ չէր կարծի, թե խելագար է: Նա աշքերը հառել էր վառած մոմերին, որոնք, ըստ երեւութին, նրա խանգարված ուղեղի մեջ մութ հիշողություններ էին հարուցանում իր առողջ ժամանակվա

նախապաշտպահ-բարեպաշտական կյանքից, խաչերից ու սըրբերից:

Այնինչ կանանց ամրութիւնը շարունակվում էր դուրսը, միանգամայն հակապատկերը ներկայացնելով խրճիթում տիրող հանդիսավոր-սպասողական լուսիթյան, որը խանգարվում էր միայն զրբացի կիսածայն ընթերցումով։ Պատուհանի ապակիները ավելի էին ծեփվել հետաքրքիր գեմքերով, ըստ երևոյթին դուրսն էլ զգացնել էին, որ ներսն ինչ-որ խորհրդավոր բան է կատարվում։

— Հը, մեջը լընկա՞ն, — երկար ժամանակից հետո հարցրեց զրբացը երեխային, ընթերցումն ընդհատելով։

Երեխան առանց աչքերը հեռացնելու թասի ջրից՝ գլուխը բացասական կերպով շարժեց։

— Ղայիմ են նստած, է, — ասաց Գրիգորը և շարունակեց ընթերցումը։

Անցավ դարձյալ մի հինգ րոպե։

— Հը, էի՞ լընկա՞ն։

— Զէ, — պատասխանեց երեխան։

Երբորդ անգամ կրկնվեց նույն հարց ու պատասխանը. անպիտան չար սատանաները ոչ մի պայմանով չէին ուզում դուրս գալ Մարթայի փորից և թասի ջրի մեջ խեղդվել։

Թորոսը, Օսանը և մյուսները մի տեսակ հարցական հայացքով, կարծես խոսքը մեկ արած, լուս նայեցին իրար երեսի. պարզ էր, որ կասկածի ու թերահավատության առաջին շողն էր այդ, որ վայրկենապես լուսավորեց նրանց խավար միտքը։

Գրիգորն իսկույն զգաց այդ ու մինչդեռ ներքին շփոթմունքը զսպած՝ չէր իմանում ինչ անի, որ դուրս գա իր անհաճող դրությունից, Մարթան հանկարծ շանչ արավ նրա վրա, փշեց հանգցրեց մոմերը և սկսեց բարձրածայն ծիծաղել իր խելագար ծիծաղով։

Գրիգորը ճարպկորեն օգտվեց այդ հանգամանքից։

— Տեսա՞ք, — ասաց նա դառն ծպիտով. — Էս ինքը չէր, է. Էտ էն նզովյաներն էին, որ հանգցրին — մթամ թե բանի տեղ չենք գնում քո աղոթքը։ Դե որ ըտենց ա, հըմի ես գիտամ...»

Նա պատվիրեց, որ թասը վերցնեն, «Սպողունի գիրքը» փաթաթեց թաշկինակի մեջ, զրպանը կոխեց և վեր կացավ։

— Կարա՞ք մի լախտի կամ մաթրախ ճարեք։

Այդ տարօրինակ պահանջը մի նոր զարմանքի առիթ տվավ կերկաներին։

— Լախտի... մաթրա՞խ, — հարցրին այս ու այն կողմից։

— Հա՛, հա՛, լախտի կամ մաթրախ, որն ուզում ա ըլի՝ մեկ ա։

— Ընչի՞ հմար, — հարցրեց Թորոսը ինչ-որ վատ բան գուշակելով։

— Դե հըմի ես նստեմ ձեզ մին-մին պատմեմ, թե ընչի համար, — հանկարծ բղավեց Գրիգորը գրգոված ավելի իր անհաջողությունից, քան թե այդ հարցութիւնից։ Ասում եմ ճարեցեք՝ ճարեցեք, թե չէ, էսա, կթողնեմ կգնամ։

Ու մինչդեռ, նրա բարկությունից վախեցած, Օսանն ու մյուսները փսփսալով խորհրդակցում էին իրար հետ, թե ո՞րտեղից ճարեն լախտին կամ մաթրախը, նա նորից գոռաց անհամբեր։

— Դե շուտ. ես խո կարալ շեմ ըստեղ տասը սհաթ նստի. Հրես որտեղ որ ա, կմթնի։

Օսանը, կիսատ թողնելով խորհրդակցությունը, շտապեց դուրս՝ ասելով. «Էսա, գնում եմ ճարեմ», բայց բավական ժամանակ անցավ, մինչև որ վերադարձավ մի մաթրախ ձեռքին։

Գրիգորը մաթրախն առավ և հրամայեց, որ ամենքը դուրս գնան։

Այս բանն ավելի մեծ կասկած զարթեցրեց, բայց ոչ ոք չհամարձակվեց ձայն-ձպտուն հանել, որովհետև Գրիգորն այն աստիճան դաժան կերպարանք էր առել, որ կարծես այն բաղցրախոն և ժպտերես մարդը չէր այլևս։ Միայն Թորոսն էր, որ համարձակորեն հարցրեց։

— Ես է՞լ։

— Ամենքդ, ամենքդ։ Դու էլ, այ լակոտ, — դարձավ Գրիգորը երեխային, որ համարձակ ցցվել էր նրա առջեկ, ըստ երևոյթին սպասելով, թե մի նոր պաշտոն պիտի հանձնեն իրեն։

Ամենից առաջ դուրս թռավ երեխան։ Այնուհետև սուս ու փուս մեկը մյուսի հետեւց դուրս գնացին Թորոսը, Օսանը և մյուսները։

— Էդ խալխին էլ քշեցեք ակոշկի մոտից, օչ ովի թղթնեք ոչ մտիկ անի, — գոռաց նրանց հետեւց Գրիգորը և դուրը փակեց։

\* \* \*

Թորոսը մեծ անհանգստությամբ և մութ կասկածները սրբում նստեց հենց այնտեղ, դռան մնան գետնի մեջ խորված սալ քարի վրա, երկայն մորուքը կախելով չորիկ-մորիկ ծնկների արան-

բում, իսկ Օսանը մտազրաղ դեմքով սկսեց հեռացնել կանանց ամբոխը պատուհանի մոտից, միևնույն ժամանակ կցկտուր պատասխաններ տալով շորս կողմից իրեն ուղղված անհամբեր հարցուփորձերին: Նույն հարցուփորձերով շշապատել էին երեխային և մյուսներին, որոնք ներկա էին եղել խրճիթում կատարվածին: Սատանաների անունն իր ազդեցությունը գործեց, ոմանք երեսները խաչակնքեցին, ոմանք աճ ու գողով բռնված՝ կարկամեցին, ոմանք էլ թերահավատներից՝ քթերը վեր քաշեցին, ասելով՝ «սատանեք, չէ մի, ոտներոց»: Բայց ընդհանուր ժխորն այժմ միանգամից դադարեց: Հետաքրքրությունն իր գագաթնակետին էր հասել. այժմ անհամբեր սպասում էին, թե ի՞նչ պիտի կատարվի ներսը, խըրճիթում:

Իսկ խրճիթն առժամանակ խորհրդավոր լուսավուն էր պահապանում:

Մեկ էլ հանկարծ ներսից մի սարսափելի ճիշ լսվեց, որին հետեցին սրտամաշ աղաղակներ:

Փողոցը մի րոպե քարացավ: Հետո սաստիկ իրարանցում ընկալվ:

Օսանը, որ մեջքը պատուհանի կողմն արած՝ ոչ ոքի մոտ չէր թաղնում, արագ շուր եկավ և ձեռքերն այտերի մոտ բռնած՝ ներս նայեց ապակուց:

Ամբոխը վրա վագեց դեպի պատուհանը:

Ներսից աղաղակները լսվում էին միալար և քանի գնում՝ սաստկանում էին: Մեջ ընդ մեջ լսվում էին ինչ-որ բութ բանի գիպչող հարվածներ, կարծես ճիպոտով կապերտ էին թափ տալիս և ամեն մի հարվածին հետևում էր գրբացի հատու ձայնը, որ առում էր. «ասա՛ սատանեքի անունը, ասա՛ սատանեքի անունը...»

— Վո՞ւ, քոռանամ ես, աղջի, ծեծում ա մաթրախով, ծեծում, — ճկաց Օսանը և երեսն ավելի պինդ կացրեց ապակուն:

— Հա, էլի՛, հա, էլի՛, աղջի, — ասաց մի ուրիշ կին, որ նույնակես աշքերը շուած՝ նայում էր պատուհանից ներս: — Վո՞ւ, վո՞ւ, ո՞նց ա թակում, ձեզ մեռնեմ... Թա՛, թա՛, թա՛, ձեռներն ու սուներն էլ կապել ա թոկով... Վո՞ւ, վո՞ւ, վո՞ւ, ո՞նց ա թեփոխնթեփոխն գալիս, ձեզ մատաղ...

Ու, այլևս չկարողանալով դիմանալ, նա սկսեց ծեծել պատուհանը, հետո դարձավ դեպի ամբոխը և աղաղակեց.

— Աղջի, ի՞նչ եք ըստեղ փետացել, գնացեք բաց անիլ տվեք դուռը, սպանեց, է՛, սպանեց էն խեղճ աղջկան...

Բայց մինչ զարմանքից քարացած ամբոխը տեղից կշարժվեր, Օսանն ամենից՝ առաջ վազեց դեպի դուռը և սկսեց ծեծել: Նրան հետևեցին ուրիշները: Եվ քազմաթիվ ձեռքերի կատաղի հարվածներ էին, որ իշնում էին հնությունից փայտոզիլներով ծածկված խարիսուլ դռան տախտակներին: Այդ հարվածների ձայնը, ներսից լսվող Մարթայի աղեկտուր աղաղակները, դուրսն ամբոխված կանանց և երեխաների դժվարոցը մի կատարյալ Սողոմ-Գոմոր էին դարձրել փողոցը:

Թորոսը վեր էր կացել նստած տեղից և իր երերուն ոտների վրա հազիվ կանգնած, ծեր գլուխը հազիվ տմբաժմացնելով, ապուշի պես նայում էր մեկ սրան, մեկ նրան և հարցնում:

— Ի՞նչ ա, ի՞նչ ա...

\* \* \*

Այդ միջոցին այրի Օսանի պսակած տղան, որին թարախ մանածող թական էին ասում (նա շրջիկ մրգավաճառ էր), տուն դարձավ դատարկ թարախը գլխին, կշեռք ուսին, շիբուխը բերնին: Նա մի րոպե կանգ առավ իրենց դռան առջև, անտարբեր նայեց փողոցը աղմկող կանանց ամբոխին, կարծելով, թե կանացի սովորական մի կոիվ է, որպիսին համարյա թե ամեն օր պատահում էր թաղում, բայց տեսնելով, որ դա սովորական դալմաղալներից չէ, այլ ինչ-որ մի արտակարգ բան է կատարվում, թարախը դրեց գետնին, կշեռքը հանեց ուսից, թասակի հետ զցեց թարախի մեջ և, շիբուխը հանելով բերնից, հարցրեց մոտ վազող կնոջը.

— Էս ի՞նչ խարար ա:

Կինը, շափազանց հուզված, կցկտուր խոսքերով պատմեց նրան եղելությունը:

— Էն Մարթեն ա բղավո՞ւմ, — հարցրեց թականը ուշադիր լսելոց հետո:

— Հա բա՛, հա բա՛, — պատասխանեց կինը լացակումած: Սպանեց էն խեղճին, սպանեց ծեծելով: Դուռն էլ, տեսնում ես, քանի վախտ ա, չի բաց անում...

Թականը հանգած շիբուխը թափ տվեց կռան վրա և, խրելով

մեղքի կաշու գոտկի մեջ, առանց շտապելու, սակայն լայն քայլերով դիմեց դեպի Թորոսինց խրճիթի գուոը, որը գեռնս ծեծում էին կատաղի թափով:

— Պեսը մի, տեսնամ, — ասաց եաւ:

Նրան իսկույն ճանապարհ տվին:

իր ֆիզիկական ուժի վրա վստահ մարդու հանգստությասը առ  
մատեցավ, մի ձեռքը գցեց դռան տակը, ուր տախտակներից մեկի  
ծալըն անձրևներից փակլ ընկել էր, մյուսով բռնեց երկաթի փա-  
կանքից, բարձրացրեց և միանգամից դուռը կրնկահան ներօ-  
ջարտեց խրճիթը:

Նա մտավ և նրա հետևից ներս թափվեց ամբոխը:

Նրա աչքի առջև բացվեց հետեւյալ տեսարանը. Սարիքան ձեռքու  
ու ստքը կապած կողքի վրա ընկած էր թախտի վրա. սպիտակ  
ապուխն ընկել էր գլխից և դեմքը ծածկվել ցաքուցրիվ մազերի  
մեջ. այժմ այլևս չէր ճշում, չէր շարժվում, այլ միայն նվում էր  
ֆիզիկական ցավերից հոգնած: Նրա մոտ կանգնած էր գրքաց Գրի-  
գորը՝ մաթրախը ձեռին, քրտնքակոխ և հեալով: Դուան կրնկահան  
ընկնելը, և խրճիթն ամբոխով լցվելն, ըստ երևույթին, այնքան  
անսպասելի էր նրա համար, որ նա մի անգամից գունատվեց և  
տեղն ու տեղը մնաց քարացած:

Թորոսը հազիվ ոտները շարժելով մոտեցավ թախտին և, բա-  
կարէվելով աղջկա վրա, շշնչաց աղեկտուր ձայնով.

— Բալա զան, որդի զան...

Օսանը և մի քանի ուրիշ կանայք, սիրտ առած Ցականի սեր-  
կայությունից, վրա թափվեցին և սկսեցին արձակել Մարթայի կա-  
պանքները, ասելով՝

— Վա, քո սիրտը շմեռնի, էս ոնց ա կալուկապ արել...

Յականն իր երկայն ու մեկ հասակով ցցվեց վախից և շփոթ-  
մունքից տեղն ու տեղը ցամաքած Գրիգորի առջև։ Նրա աշխերը  
վառպում էին ներքին զսպված վրդովմունքից։

— Էս ի՞նչ ես արիլ, — ասաց նա, ցույց տալով Մարթային,  
որի ձայնը քանի գնում նվազում էր: — Հսկնց ես լավացնում դու  
հիվանդներին:

— Բա որ աղոթքը կտրում չէր, — Թոթովից Գրիգորը:

— Ην, ωηνθρός

— Սատաներին քշելու ազոթը:

— ի՞ն, ստուաներ, ո՞ո՞ ևս էլ խո կնիրկարմատ չեմ, որ ուզում

Ես խարիւ Խո չե՞ս ուզում էս սրհաթին բռորդդ գղեմ։ Հսենց անպատճ քան կըլի՞՝, որ դու ես արեք։

— Բա գժին լավացնելը ո՞նց ես ուզում:

— Հըմի, քո խելքով, սա գիծ առ ու դու խելք, է՛լի՛: Տո, քո  
խելքը հրես էս չի՞։ Էնքան ծեծել ես, որ քիչ առ մնում մեռնի՛:  
Աղոթք ու սատանեք ասում այ Տո անտեր-մոռղոպիկ, բա մի մար-  
դավարի փեշակ լկա՞ր, որ գնացել չաղուբազ կնկա փեշակ ես  
բռնե՞լ: Բա էլ ի՞նչ ես գոյակ գնում զիսիդ, գնա լաշակ ծածկի, է՛լի՛:  
Փո՛ւ, ես քո մարդ ասողին ինչ ասեմ: Որտեղից էլ մոկոնել ա, թե  
սատանեք են մտել փորը: Մի հարցնող ըլի— ի՞նչ ա սատանեն,  
ո՞րտեղից ա մտիլ, ընչի՞ ա մտել Տո, թե սատանա ես ուղում,  
հրեդ տեղն ու տեղդ սատանա ես, էլի, որ սուտ-սուտ բաներով  
խալխին խարսմ ես, փողերը ցնցլում, փորդ տողացնում:

— Սուտ-սուտ բաներով, բա ի՞նչ,— վրա բերին մի քանի կանայք, սրտապնդված ջականի համարձակ խոսքերից:

— Ինչքա՞ն ես առել, դրուստ ասա, — շարունակեց Յականը. — Եղ մաթրախը հյա մի դեսր տու...»

Ու առանց սպասելու, որ գրքաց Գրիգորը ինքը տա, մաթրախը խլեց նրա ձեռքից և կրկնեց.

= Ասա, ինչքա՞ն ես տախու

— Քսան մանեթ, Ցական զան, քսան մանեթ,— կանչեցին  
ձաւնեու:

— Հլա ասում էր քիչ ա,— ավելացրեց Դսանը, որ մյուս կանանք հետ ռեխիս բռապված էր Մասթառի:

— Հա քիչ ա, հը! — աշբերը ոլորելով Գրիգորի վրա, գլուխը երերեց Յականը: — Թսան մանեթ... Տո, ես սադ օրը թու եմ դայի բռւկերը, օրը մի ջուխտ չուստ եմ մաշում, շատ բղավելուց բողազս ցավում ա, թաքախից շինքս փետացել ա, քիչ ա մնում կոտրվի, ու մի քսան շայի անշաղ եմ դատում, որ օղլուզաղս պահեմ, — դու բու սուտ աղոթքի ու գրի հմար քսան մանեթ ես առնո՞ւմ, էս էլ ո՞մից (Յականը բռնեց Թորոսի թեփ և առաջ քաշեց), — որանի՞ց, էս նաշար հալկորի՞ց: Բա շամաշեցի՞ր սրա սպիտակ միրքիցը, ուս սուրբ միրուքը խոռով չկենա՞ քու գլխին: Կու լավացրածն էլ էս լի՞ (Յականը դարձյալ մատնացուց արագ թախտի վրա կիսամեռ ընկած Մարթային), ձենը անշաղ ա դուտ գալի, հնքան ես ժեծել, իսկապես Մարթան այնքան նմառեւ: Եռ որ Թուս հարաւանակ:

Հետ հագիվ էին լսվում նրա բերնից դուրս թռչող խոսքերը. «Վայ, մեռա... վայ, մեռա...»

— Հանի էս սըհաթին քսան սաստը, բա չը, ու  
մաթրախը, կոթն էլ հետը կկոտրեմ վրեդ: Հը, ի՞նչ ես փետացել,  
հանի, քեզ ասում եմ, — գոռաց Ցականը աշքերը կրակ կտրած:  
Հանի, ի՞նչ ես սըհաթին քսան սաստը, բա չը, ու

— Ախապեր, ի՞նչ ես ուզում ինձամբց, — բայց չէր  
գործաց Գրիգորը, շուտելով այդպես շուտ անձնատուր լինել, առանց  
իրեն արդարացնելու: — Ես իսո զոռով չեկա, չէին ուզում՝ չէին  
կանչի. փողն էլ իսո զոռով շառա, չէին ուզում՝ չէին տա. Այ հարց-  
րու, է՛լի. ես գալիս ի՞, հազար ու մի աղաշանք-պաղատանքով  
շերի՞ն:

— Հըմի շես ուզում տա, էլի, — հասդիստ լսուոց վա  
թականը շարագուշակ ձայնով և մաթրախը բարձրացրեց։

— Տո, դե՞նը գնա հայ, — ասաց Ցականս արշասալիւթեաքաւ,  
թեզ խելքով կնոջ ձեռքից: — Կանիծի... Ես մեկ սրա աղոթքին եմ  
հավատում, մեկ էլ անեծքից վախենում: Սուտ խո չի ասում. էս  
դիմ ձեր բաներն ա: Կնիկարմատներ չե՞ք հավի խելքով: Դուք  
որ ըլեք, էս շաղութազները ո՞րտեղից կրւեն... Հը, ի՞նչ ես  
ասում, — դարձավ նա գրբաց Գրիգորին, — տալիս ե՞ս, թե չէ:

Գրքաց Գրիգորը դեռևս տատանվում էր. երկուս չը, որ շատ դժվար էր նրա համար բասն ոռութուց զրկվելը, բայց մի կողմից Ցականի բռնած սպառնական դիրքը, մյուս կողմից այն վախը, որ բռնել էր նրան, տեսնելով իր «բժշկության» հետևանքը, ստիպեցին նրան հնագանդվել:

— Որ զոսի ես կանգնել, կտամ, ճարս ի ոչ, — ասաց ձեռքը կոխելով բաճկոնի ծոցի գորպանը։ Այստեղից հանեց կաշվե մի հաստ թղթապանակ, համրեց քսան ոռութին և, տալով Ցականին, ավելացրեց։ — տալիս եմ, համա իմաց կաց, որ արածդ մարդին, ավելացրեց։ Ափսոս իմ ժամանակը, էսքան վախտ, որ իմ տաղավարութին չի։ Ափսոս իմ ժամանակը, էսքան վախտ, որ իմ տաղավարութին չի...

Փաստ-փուսեղ քաշի գնա:

Գրբաց Գրիգորը զդակը քաշեց աշքերին և, ամոթից ու ասկոր կատաղությունից գունատ, կանանց ժաղրական ժպիտների տակ դիմեց զեպի դուռը:

— Համա շկարծես, թե էդ ա, պրծար,— կանչեց նրա հետեւից թականը.— Թող մի էս աղջիկը շավանա քու դամդեքից... իմ մարդ դավարութինը դու էն վախտը կտեսնես...

Մարթան թեև շուտով լավացավ մաթրախի խարաններից, բայց մի քանի ամսից հետո մեռավ նույն խելագար դրության մեջ։ Նրան շուտով հետևեց և ծերունի հայրը։

Իսկ գրբաց Գրիգորը մինչև օրս էլ շարունակում է իր արհեստը՝ առաջվա պիս ժպտուն աշխերով և կարմիր այտերով։

1889

ՍԱՔՈՒԻՆ ՈՒԽՏ ԳՆԱՅ

**Պուրգար Սաքուլը կամաց բաց արեց դուռը և ներս մտավ:**  
Նրա կինը՝ նատոն, թերը մինչև արմոնները քշտած՝ պըպ-  
զած էր հատակի վրա և լվացք էր անում կոծկած թարախում: Բու-  
խարու մեջ կասկարայի վրա դրած կաթսայի տակ մի քանի բարակ  
փայտ էր ծխում: Հողի հատակի վրա բավական ցեխ էր գոյացել և  
լվացքի սապնոտ ջուրը տեղ-տեղ գուբ էր կապել: Մենյակի օդը  
հագեցած էր խոնավության, սապնաջրի և ծխի գարշ հոտով: Թախ-  
տի վրա դրած օրորոցի մեջ քնած էր ծծի երեխան:

Կինը նայեց մարդու հիվանդու, թախծալի երեսին, և նրա սիրտը ճմլվեց: «Էլի լավ չի»,— մտածեց նա և վշտահար մնաց նայելիս մարդու երեսին:

— Մի բան գցի վրես,— ասաց նա թույլ ձայնով և ոտները կուչ ածեց:

Նատոն սապնոտ ձեռները սրբեց, վեր կացավ, բարձրացավ  
թափառ, ցեխոտ շուստերը թողնելով գետնին, ծալքից հանեց բա-  
վական մեծ ու հաստ մի վերմակ և ծածկեց մարդուն:

— Լավ ծածկի, զանս սրբարթում աւ, — ասաց Սաքովը, վերակրության գլուխին քաշելով:

Նատոն վերմակի ծայրերը ներս կոխաց կողքուրց, որ բարեղեր լմնան:

— Ուղո՞ւմ ես, մի լըհեք էլ ժամկես, — ասաց:

— Սածկի:

Նատոն բերեց մի ուրիշ վերմակ էլ զցեց սրա Վրա և Մոլդա  
Կողքերը տապտպեց: Այժմ Սաքուլը ոտով-գլխով կորած էր վեր-  
մակների տակ: Նատոն լվացքը մոռացած՝ առժամանակ նստած  
ների ծայրերը ետ քաշեց մարդու երեսից և շշնչաց.

## — Սաքուլ:

Սաբուլն աշքերը բաց արեց և նայեց սրաս հարցակառ ։

— Բա յգնացի՞ր հիվանդանոց։

— ፩፻፭፻፭፡

— ի՞նչ, ասացի՞ն:

— Տասդ շախ են ուզում:

Բա ասում են, ով շունի՝ չեն ուզում:

Ապահով առաջ կամ տերտերիցը թուղթ քեր, որ չունես

— Ըստ պատմութեան՝

संक्षिप्त

Հետապնդություն կանաչից:

— Ի՞ս տարածություն կը մեջ  
—Տերաբերի հերն էլ ընտեղ անիժեմ: Նոր չէ՞ր, որ տեսա մեջ-  
դանումը փորը ցցած: Տասը շային ի՞նչ ա, ասում ա, զահել մարդ-  
կան մի օր որ բանեմ, ասում ա, տասը շայի չէ, իրեք մանեթ և  
ես, մի օր որ բանեմ, ասում ա, զանս չի գալիս: Լավ,  
կվեկալնեա: Ախր, տեր հայր, ասում եմ, զանս չի գալիս: Լավ,  
ասում ա, հանագ կմ անում. կիրակի օրը ժամ արի, ասում ա, կր-  
տամ:

— ԱՌ, նրա ջանք դուրս գա, — սրտով բացականչեց Նա-  
տոն, — էղ հալով մինչև կիրակի ո՞նց մուշափ տաս: Քելեխ ըստ,  
ձեռաց ո՞նց վազ կտաք:

Ու լրեց դաղված սրտով: Եվ երկար ժամանակ անասելի վըշ-  
տով նայում էր մարդու մազված, գեղնած դեմքին, որի վրա հի-  
վանդությունը մեռելացին անպայտման էր գրողմել: Երեք ամ-  
բողջ տարի է, որ այդ անհամեկանալի հիվանդավթաւոք օք-օքի վրա

Հալում, մաշում է Սաքուլինը ել դեղ շմաց, որ փորը շածեց, ել հերիմ շմաց, որին շփիմեց: Օրեր ու շտբաթներ խաչերի գռանն անցկացրին, մատողներ մորթեցին, կարմիր ու սպիտակ հագորին, բայց և այնպես ոչի՞նչ, ոչի՞նչ շօդնեց: Ընդհակառակը՝ Սաքուլն օր-օրի վրա վատացավ, հիվանդությունն ավելի խոր բնակալեց: Սկզբներում էլի քիչ ու միշ կարողանում էր բանել, բայց վերջին ժամանակներն ուրագը մի քանի անգամ վրա անհկուց հետո շունչը կտրվում էր և սիրտն այնպես արագ բաբախում, որ կարծում էր, թե դուրս պիտի պրծնի բերնից: Այդ երեք տարվա ընթացքում նրանք քանդվեցին, քարը բավկացին. տանն էլ ոսկեղեն ու արծաթեղեն շմաց՝ գրավ դրին, ժամանակին չկարողացան թափել—կորցրին, ավելորդ բաները ծախեցին-ծախծինեցին, հետո պարտքերի մեջ թաղվեցին և այսօր, երբ երթեւեկ հիվանդների քաղաքային բուժարանում կանոնավոր դեղ ու դարման անելու համար «տասը շայի» են ուղում, — չկա:

Նատոն մի ծանր թառանց քաշեց:

— Աաքո՞ւր, — շնորհաց նորից

### Սաքուն այքերր բագ աբեց

— Սոված յե՞ս

$$= g_{t_1}$$

— Ախր ոչ երեկ, ոչ էսօթ զադ չես առել բերանդ, մի բան էլ ա կե, որ ուժ ունենաս։ Հեղնարանք մատադ են բերել, քեզ հմար հմ պահել, վեր՝ կաց, կե։ Ազին էլ հրես փոնիցը հացերը կըերի։

— Օր շեմ ուզում, ի՞նչ ուտես

— Հաջաթ չի, զոռով կե: Թե չէ, բերանդ ըտենց հուպ տված  
խո յիս հայից կրնկնես: Վեր կաց:

- 558 -

Նորից փակեց։  
Նատոն կրկին հառաջեց և կարճ ժամանակ նստած էր լուս ու  
վշտահար մտածմունքի մեջ։

— Հա՛, Սաքուլ ջան,— Հանկարծ ասաց նա, ըստ երեսութին,  
մի բան հիշելով:— Առավտոտ ուղում էի պատմեմ քեզ, վեր կենամ  
տեսնեմ գնացել ես: Գիշերս ախր մի զարմանալի էրազ տեսա:  
Մթամ թե դու ըտենց թախտի վրա պառկած ես, մեկ էլ տեսնեմ մի  
կարմիր ձիավոր թուրք ձեռին նի ընկավ ու վրա պրծավ քեզ: «Ի՞նչ  
ես պառկել, ասում ա, ընչի՞ շես գալի: Ես սրհաթիս թրովս կտամ,  
ասում ա, կես կանեմ, թե չես էկելո»: Ու թուրք դորթ, որ վրա չի-

ըե՞ց: Հա՛, ըստեղ ևս զարթեցի: Սիրտս ընկնց լքվոցն էր ընկել, որ կարծում էի՝ զորթ էր: Հըմի, Սաքով ջան, ասում եմ, ազին որ գա, բացանողի մոտ դրկենք: Ես ի՞նչ գիտամ, բալի էլի խաշիցն ևս, ու անմեղ տեղը քեզ պտի փշացնես դեղերով:

— Տո, էլի խաշ, — վրա բերեց Սաքովը դառն հանդիմանությամբ:

— Վո՛ւ, ըտենց մի՛ ասի, Սաքով ջան, խաշը կնեղանա, — ասաց նատոն վախեցած: — Ղորթ ա, խաշերի դուռը շատ ենք ման եկել, համա ի՞նչ կա որ, էս մեկն էլ փորձենք: Ախր չես իմանում, է, իմ օրումս ըսենց ափաշքարա տեսած շեմ. կասես էս նըմուտին էլ կանգնած ա աշքիս առաջը ձիուն նստած, թուրը հանած: Հը՛, Սաքով ջան, ազին որ գա, դրկե՞նք:

Սաքովն արդեն ծածկել էր աշքերը ձանձրացած:

— Է՛հ, արեք, ինչ ուզում եք, — ասաց նա խորին անտարբերությամբ:

— Հա՛, Սաքով ջան, դրկենք, դրկենք:

Օրորոցի երեխան լաց եղավ:

Նատոն վեր կացավ, գնաց շոքեց օրորոցի մոտ, նախ սկսեց օրորել, հետո որ տեսավ ձայնը չի կտրում, ծիծը բերանը դրեց և, մի ձեռքով օրորոցը գրկած, մտախոհության մեջ ընկավ աշքերը մի կետի հառած:

\* \* \*

Դուռը բացվեց: Կապույտ սուփրի մեջ հացերը շալակին, տնքտնքալով մտավ ազին — Սաքովի մայրը, կարճահասակ, շորացած պառավ մի կին, վշտահար, խորշոմած բարի դեմքով: Հետեից մտավ նրա թոռը — շորս-հինգ տարեկան վտիտ մի աղջկէ, ձեռներով երկու հաց իրար վրա պինդ սեղմած կրծքին: Հացերից մեկը, տակինը, սահել էր ներքեւ և սպառնում էր ընկնել: Նա վագեց հասավ թախտին, բարձրացավ ոտների ծայրերի վրա և հացերն անլնաս դրեց թախտի ծայրին:

— Ըհը, հըլա չէր պառկել, — տխուր քրթմնջաց պառավը, տեսնելով որդուն թախտին: — Ասա, որ կարում չես, էլ խի՞ ես ծեքքալի դուրս գնում:

Հալակի հացը դրեց թախտի վրա և կամաց դարձավ հարսին.

— Աղջի, քնած ա՞:

— Գիտում չեմ, նոր զարթուն էր, — պատասխանեց նատոն: Պառավը մոտեցավ որդուն և խոնարհվեց նրա վրա:

— Սաքով ջա՞ն:

— Հը՛:

— Քնած շե՞ս:

— Զէ:

— Ո՞նց ես:

— Է՛հ, եսի՞մ ո՞նց եմ:

— Տաք-տաք հաց եմ բերել, վե կաց կե:

— Օ՛հ, զահլա տարաք, էլի, — զղայնոտությամբ արտասանեց Սաքովը վերմակների տակից և շուր եկավ մյուս կողքին:

Պառավը, խորին վշտով համակված, մի կարճ ժամանակ խոնարհված մնաց որդու վրա, հետո մի ծանր թառանշ քաշեց, գնաց բաց արեց կապոցը և սկսեց թեծ-թեծ հացերը փոել թախտի վրա, որ սառչեն: Այժմ սենյակի մեջ տարածվեց տաք-տաք հացերի ախորժալի հոտը:

— Աղջի, բա հիվանդանոց չի գնացե՞լ, — կամաց հարցրեց հարսին, որ ծիծ տալը վերջացնելով, սկսել էր օրորել երեխային:

Նատոն պատմեց, որ հիվանդանոցում առանց շքավորության վկայականի շեն ընդունել ձրի: Պատմեց և այն, որ տերտերն ասել էր, թե վկայականը կիրակի օրը կտա:

— Այ, տափր դնեմ նրա գլուխը, — վրդովված բացականչեց բարի պառավը: — Բա նա հոգի ունի՞: Էս հալին ո՞նց մնա մինչեւ կիրակի, աղջի. ըսօր երկուշաբթի ա ախր, հը՛:

— Դե ես ի՞նչ գիտամ, — տխուր ու հուսահատ պատասխանեց հարսը և օրորոցը մի կողմ քաշեց, որովհետև թախտի մի տախտակը խիստ ճռճում էր նրա տակ: — Աղջի, արի մի օրորի, է՛, լվացքս մնաց, — դարձավ նա աղջկան, որը թաժա հացից մի կտոր կտրած ախորժակով կծոտում էր:

Փոքրիկ աղջիկը բարձրացավ թախտը, ծալապատիկ նստեց օրորոցի մոտ և մի ձեռքով սկսեց օրորել երեխային, իսկ մյուսով շարունակում էր կծոտել հացը:

Նատոն իշավ թախտից, մերկ ոտներին հագավ շուտերը, բայց լվացքին դիմելուց առաջ նստեց սկեսոր մոտ և փսփսաց նրա ականչին:

— Ազի ջան, արի մի ձեռաց գնա բացանողի մոտ, տենանք

ի՞նչ կասի էն իմ էրազի հմա, առավոտը որ քեզ պատմեցի: Այս կտեսնես, թե ու Գևորգը ըլլի էն ձիավորը:

— Դե ես ի՞նչ գիտամ, որդի, — վշտահար արտասանեց պատմութիւնը: Ս. Գևորգն էլ էն էր, որ գնացինք, մատաղն էլ էն էր, որ մորթեցինք, ճար ըլլավ ու, — մեռնեմ նրա ոտին:

Եվ պառավը երկյուղածությամբ բռնված, ծանր հառաշեց:

— Չէ, ազի շան, ազի, ոգուդ մեռնեմ, վե կաց հենց հիմիս կմեթ գնա, — աղաշեց հարսը: Այ, մի արասի ունեմ, տամ:

Նատոն դերիայի գրապանից շտապով հանեց թաշկինակը, ետարեց ժայրին կապած մի քանի պատկերը: Պատապը ժայրին կապած մի քանի պատկերը: Պատապը ժայրին կապած մի քանի պատկերը: Պատապը ժայրին կապած մի քանի պատկերը:

\* \* \*

Անցավ մոտ երեք ժամ: Նատոն պարզացրել էր լվացքը և փռում էր փողոցում կապած թոկի վրա, որ վերադարձավ սկեսուրը:

— Վեր կացա՞վ, աղջի, — հարցրեց պառավը:

— Չէ, ընենց լավ քնած ա որ, — պատասխանեց Նատոն և իր կողմից հարցրեց: — ընչի՞ էսքան ուշացար:

Պառավը վրայից վերցրեց շալը և նստեց գուան մոտ գետնին ամրացրած նստարանի վրա:

— Ըսկի ճար ու ճամփա կա՞ր որ, — ասաց նա: — Ինչքա՞ն ժողոտարի ունի քոռացածը, տունը զմփում էր:

— Ցանի լավ իմացա՞վ, աղի շան, — հարցրեց հարսը:

— Ընենց մին-մին ետ ասեց, ոնց որ մեր տանը նստած ըլեր:

— Ի ...

— Քու արել:

Նատոն արագ նստեց սկեսոր կողքին:

— Ի՞նչ ասեց, — հարցրեց նա շափազանց հետաքրքրված:

— Որ ասեմ, ասում ա, կորուստ ա՝ կորուստ շի: որ ասեմ, ասում ա: Ճամփորդ ա՝ ճամփորդ շի: էս ով-որ որ ա, ոչ ըրեխայա, ոչ ծերս էս ի՞նչ ա, ասում ա, առաջն ընկած ուրագ ա, թե ի՞նչ-չեմ գիտում, համա ի՞նչ արած, ասում ա, որ խեղճը ձեռումը զվաթ շունի վե կաղնի:

— Ի, զո՞րթ, ազի շան, — բացականչեց նատոն զարմանքից տարված:

— Էն աստոծը: Ավասուս, ասում ա, ըժում ի՞նչ լավ աղամորդի ա է: էս ե՞րբ ա, ասում ա, հիվանդացել, որ ըսենց թել ա կտրվել: Հրես պարզ ըրկում ա, էլի՛, ասում ա, ունեցած-չունեցածը գեղ ու դարմանի ա տվել, համա զադ չի դառե: էս ովքե՞ր են, ասում ա, էրկուսը պատիկ են, մեկը — մենձ: էս մենձը քիրն ա, ասում ա, թե կնիկը, շատ ա դարդ անում: Հրես մեկն էլ կա, ասում ա, պառավ ա. սա էլ ա, ասում ա, շատ տարակուսած: Դե էս էլ գու ես, էլի, ասում ա, ի՞նչ ես շատ զահլա տանում:

— Վույ, զո՞րթ, ազի շան, — բացականչեց նատոն, որի աշբերը վառվում էին ծայրահեղ զարմանքով և հիասքանչումով:

— Ղորթս ո՞րն ա, աղջի: Ասում ա, էլի, ընենց մին-մին ետ ասեց քոռացածը, ոնց որ մեր տանը նստած ըլի:

— Ըժում...

— Ըժում... էս ի՞նչ ա, ասում ա, ձիավոր ա՞, թե թևակոր, համա հողեղին չի: Հրես-հրես, ասում ա, պոնկներից կրակ ա թափվում, կասես թոնիր ըլի: Դե խաչ ա, էլի, ասում ա. ես խո իմաստուն շեմ, ասում ա, որ ամեն բան գրուստ իմանամ: Ում համբուրող ա, ասում ա, ս. Սարգսի՞, թե ս. Գևորգի, ուխտ պտի գնա: Դե ուրիշ ի՞նչ ասեմ, ասում ա, էս ա, էլի:

— Վույ, մեռնեմ ս. Սարգսի էլ, ս. Գևորգի էլ օղորմութենին, — արտասանեց նատոն և, աշքերը երկինք զցած, ցերմեռանդությամբ խաչակնքեց երեսը: — Տեսա՞ր, էրազ զորթ զուրս էկավ: Քոռանամ ես, անցկացած տարին դոխտուրների հետեւից ընկանք, չգնացինք թելեթ ու հըմի տեսնում ե՞ս...

— Հա՛, էս էլ ասեց, — ընդհատեց նրան պառավը, մտաբերելով բացանողի պատվերը, — իրեք օր ու գիշեր, ասում ա, պտի պառկած մնա խաչի տակը. օճորքը երկինքը պտի ըլի, ասում ա, կողինքը՝ գետինքը, շունքի, ասում ա, հրեղեն-թևակոր ձիավորը թոշում ա երկնքի ու գետնքի մեջտեղը:

Նատոն նորից ու ավելի շերմեռանդությամբ խաչակնքեց երեսը և ասաց վճռական կերպով:

— Ես էս ա, մում եմ ետ զնում թելեթի ս. Գևորգի հմար, մեռնեմ նրա սուրբ գորութենին:

Նա վեր կացավ, շտապելով փոեց լվացքի վերջին կաորները և ներս գնաց սենյակը: Սկեսուրը հետեւեց նրան:

Նատոն շուստերը թողեց ցեխոտ հատակին, բարձրացավ թախար, պառափ մեջ. գտնված պահարանից հանեց երկու դեղին մեղքամոմ, զգուշորեն, որպեսզի թախտի տախտակները չճոճուն ոտիտակ, մուսեցավ քնած ամուսնուն, մոմերը պտույտ տվեց նրա զըլի վերեր, հետո նույն զգուշ քայլերով իջավ, հագավ շուստերը և մոմերը տարավ դրեց բուժարու գլխին, ուր երեսում էին ամեն շաբաթ գիշեր վառվող մոմերի սեացած հետքերը:

\* \* \*

Հիվանդը տնքաց և շարժվեց վերմակների տակ:  
Պառավը մոտեցավ նրան.

— Սաքո՞ւլ:  
— Հը:  
— Զարթուն ե՞ս:  
— Հա:  
— Գնացի ախր բացանողի մոտ:

Սաքով վերմակների ծայրերը ետ քաշեց երեսից և հետաքրքրությամբ նայեց մոր աշքերին.

— Հա-ա-։ Ի՞նչ ասեց:

Նրա կարմրատակած թաց երեսից և տենդոտ, պլալող աշքերից երեսում էր, որ քնի մեզ կազդուրի քրտինք էր եկել:

— Վո՞յ, էղ ի՞նչ լավ ա ըլել, Սաքով զան, հրեղ քրտինք ա էկել, — մոտ վազելով բացականեց նատոն ուրախացած և, իսկույն իր գլխի սպիտակ աղլուխն առնելով, սրբեց ամուսնու երեսի քրտինքը: — Թաց շըլես, Սաքով զան, թաց շըլես, — ավելացրեց նա և սկսեց տապտպել վերմակների ծայրերը նրա շուրջը: — Ընենց լավ իմացել ա, Սաքով զան, որ արմացք: Ազի զան, մի պատմի, է:

Պառավը ծալապատիկ նստեց որդու մոտ և սկսեց ավելի մանրամասնորեն պատմել բացանողի գուշակությունները:

Նատոն նստել էր մարդու ուների մոտ և շարունակ նայում էր նրա դեմքին, կարծես ստուգելու համար, թե բացանողի ճիշտ գուշակությունն արդյոք նրան ևս նույն զարմանքն ու հիացքն է պատճառում, ինչ որ իրեն:

Սաքովը լսում էր լուռ և, ըստ երեսույթին, անտարբեր, միայն շորացած շրթունքներն էր լսատում:

Փոքրիկ աղջիկը մի ոտով օրորում էր օրորոցը և տիկնիկ էր խաղում: Այդ տիկնիկն ինքն էր շինել. մի տափակ կոճակի վրա սպիտակ փալաս էր փաթաթել, կոճակը կարի սկ թելով կապկպել էր մի փոքրիկ փայտի ծայրին, փայտին հաղցրել էր դերիայի պես իր ձեռքով կարած մի փոքրիկ տոպարակ, և տիկնիկը կազմ ու պատրաստ խաղում էր նրա ձեռքին: Նրա տիկնախաղն էլ պարզ էր, ինչպես իր տիկնիկը. շրթունքներով ճղճղացնում էր պարերգի պես մի բան և ձեռքերով պար էր ածում տիկնիկը թախտի վրա:

— Հըմի ի՞նչ ես ասում, որդի զան, գնում ե՞նք թելեթ, թե չե՞— Հարցրեց պառավը պատմությունը վերջացնելուց հետո:

— Ընչո՞վ գնանք, է՛, — ասաց Սաքովը: — Տասը շայի շունեմ, որ հիվանդանոցումը տամ, թելեթ ո՞նց գնանք: Էլի քիշ-քիշ մի դեղին թուման հերիք չի:

— Ի՛, Սաքով զան, ըտենց մի՛ ասի, խաչը կնեղանաւ, էրկու թումանն ի՞նչ ա, որ չես կարա միկից ճարի: Կգնաս, աստծու օղորմութենով կլավանաս, կզաս կբանես, պարտիդ էրկու շարթումը կտաս:

Սաքովը երկար ժամանակ չէր համաձայնում նոր պարտք անելու, քանի որ արդեն բավական հին պարտքեր ուներ վճարելու Բացի դրանից, նրա վիճակը տեսնելով ո՞վ էր գժվել պարտք տալու նրան:

— Տունդ գրավ դի, գլուխը բարը, տոննը շանիցդ. Խո լավ չի՞— ասաց նատոն:

— Դու էլ բան ասացիր,— նկատեց Սաքովը զղայնացած:

— Բալքի լավացաց, մեռա, ընչո՞վ եք թափելու: Հաց շատ կճարեք, ա՛յ, ուտելու, որ տան քրեհ էլ քաշեք: Էս մի քնձուտ տունն ա էլի՞, թողեք էս էլ ա մնա ձեզ, որ քուչումը շմնաք:

— Է՛հ, ընշե՞ր ես ասում, Սաքով զան, որդի զան,— բացականշեց պառավը մեղմ կշտամբանքով: — Էղ ի՞նչ ասելու բաներ են, որ ասում ես: Մի քիշ էլ մեզ ինեղմ արի, է՛, սիրտներս կրակ ես գցում, փթոթում:

Եվ պառավի բարի, վշտահար աշքերը թաց եղան: — Դա պատկան աստվածածին ունի՞ որ,— բեկրեկ ձայնով արտասահեց նատոն և գլխի աղլուխի ծայրը սեղմեց աշքերին:

Մի բոպե սենյակում ճնշող լոռություն տիրեց: Լոել էր նույն-

իսկ փոքրիկ աղջիկը և, տիկնիկը գողին դրած, երեխայական հետաքրքրությամբ նայում էր տատին, մորը, հորը...

— Լավ, էս մեկն էլ թող ձեր ասածն ըլի, — վերջապես համաձայնեց Սաքուլը, որ ինքն ևս զգացել էր իր վերջին խոսքերի ժամանությունը:

\* \* \*

Երեկոյան դեմ նա գնաց իրեն լավ ժանոթ մի պատառուի մոտ, որն ամբողջ քաղաքի հյուսների, որմնադիրների և մշակների շրջանում հայտնի էր Սերգեյ Ստեփանիչ, համ պարզապես աղա Սերգո անունով:

Սերգեյ Ստեփանիչը, — խոշոր արտաքինով, խոշոր բեղերով, մոտ հիսուն տարեկան մի տղամարդ, սև ատլասի արխալուղով, որի վրա հուրհատին էր տալիս ժամացույցի ոսկի հաստ շղթան, — նստած էր մի նոր հսկայական շինության բակում իրար վրա դարսած հաստ տախտակների վրա, արխալուղի վրայից հագած ամառվա վերարկուի փեշերը գոզին հավաքած, և «տերողորմյան» ձեռքին՝ դիտում էր օրվա վերջին աշխատանքները: Տասնյակ վարպետներ և մշակներ դժվարում էին կիսաշեն պատերի գլխին, տախտակամածների վրա, բայի մեջ, ցեմենտի տակառների, ավազի, հողի, ցիխի, գաշի ու կրի կուլտերի և բուրգեր կազմած աղյուսների շուրջը: Մի շատ բարձր պատի գլխին որմնադիրներից մեկը — մի պարսիկ — փափախը դիմին, մայր մտնող արեկի կարմիր ճամանչներով ողողված, համ շարում էր պատը, համ կլկացնում մի բայաթի շատ ախորժալուր տենորով:

- Ուստա Սաքուլ, — բացականչեց Սերգեյ Ստեփանիչը:
- Տո, էլ ի՞նչ ա հալդ. էլի հիվանդ ե՞ս:
- Հա, աղա զան:
- Տեսշեն, բա ո՞նց դավացար մինչեւ հրմի լակի գեղ-մեղ անում ե՞ս:
- Ընշոր ունեի, դիմ դեզի ու համի տվի ու, ես ի՞նչ դիտամ: Էս անտեր ցավը մտել ա շանս, դուրս չի գալիս:
- Բա ըսկի չե՞ս բանում:
- Թե որ լավ եմ ըրաւ, ընկի՞ չէ, մին-մին բանում եմ, հա-

մա դե մին-մին բանելով ի՞նչ կը լի: Մի տուն օղլուշաղ պահելը գժար ա, աղա:

— Այ, թե ուզում ես, բան շատ ունեմ, ըստեղ էլ, ուրիշ տեղ էլ, արի բանի:

— Ուզում եմ, ո՞նց շեմ ուզում, աղա. այ, սրանց որ տեսնում եմ (Սաքուլը ձեռքով ցույց տվավ շուրջը), զանս կրակ ա ընկնում, համա որ էս անտեր ձեռներում հարաբաթ չկա:

— Բա ընչի՞ ես եկել:

— Եկել եմ, որ... — կմկմաց Սաքուլն աշքերը վայր թողնելով և վերջացրեց:

— Որ էլի փող ուզես, չէ՞:

— Հա, աղա զան, — արտասանեց Սաքուլը խեղճ-խեղճ նայելով նրան:

— Բա էն առաջվա տապ մանեթը:

— Դե էն առաջվա տապ մանեթն էլ... դե, իհարկե, — նորից կմկմաց Սաքուլը և ավելացրեց, — թե որ...

— Ի՞նչ թե որ:

— Թե որ... ես ի՞նչ գիտամ, գրավ կուզես...

— Ի՞նչ գրավ:

— Դե գիտաս էլի, աղա զան, մի տուն ունեմ...

— Տո՛ւն էլ ասում ա: — Սերգեյ Ստեփանիչն անկեղծ զվարճությամբ ծիծաղեց, կայտառ պատանու պես վեր թուավ տեղից և ձեռքով թափ տվավ քամակր: — Տո, տանդ որ մի քացի տամ, շուրջ կզա: Բան ունես, բան ասս:

— Դե, ի՞նչ ասեմ, աղա, էղ ա, ինչ որ ունեմ: Ուզում եմ առ, չես ուզում՝ ասս գնա Քուն ընկի: Ուրիշ ճար շունեմ, աղա:

Սերգեյ Ստեփանիչը նորից ծիծաղեց:

— Վայ, ինչ զճ իմ Սաքուլ, ի՞նչ լավ մարդ ես, — ասաց բարեսրությամբ խփելով նրա ուսին: — Դու ինձ էս ասս, էլի ինչ-քա՞ն ես ուզում:

— Էլի որ մի քան մանեթ տաս, աղա...

— Քսան մանեթ: Տո, քսան մանեթն ի՞նչ ա. քսան մանեթին մեկ գշեցի, հանգավ, — շարունակեց ծիծաղելով Սերգեյ Ստեփանիչը:

— Դե, հա քսան մանեթ էլ հերիք ա, աղա, — նրա խոսքերից սրտապնդված առաջ Սաքուլը, — ու թե որ վերց...

Սերգեյ Ստեփանիչը հանկարծ դուրք գելթ ընդունեց:

— Է՛, էղ լրավ, էղ լուավ, ուստա Սաքով,— շտապեց ընդհատել նրան: — Քսան մանեթն էլ որ տալիս եմ, Սաքով զան, հոգուս խաթեր եմ տալիս, չունքի լավ մարդ ես, լավ ուստա ես, ինձ հմար շատ ես բանել, համ էլ խմող չես:

— Աստված քեզ երկար կյանք տա, աղա զան: Ես էլ քու հացը շատ եմ կերել, շնորհակալ եմ. դե ի՞նչ ասեմ, աղա զան, թե որ լավացա, չմեռա, չն ես գիտամ էլի:

— Դե, հըմի մի քիչ սպասի, հրես շաբաշ կանեն, կգնանք ինձ մոտ մի վեքսիլ կգրենք յառուն մանեթի, — չն առաջվա տասը մանեթն էլ հետն եմ ասում, — ու վերջը, երբ որ կլավանաս, կամ փողը կտաս, կամ փողի տեղ կբանես: Հը, լավ շեմ ասո՞ւմ, — հարցրեց Սերգեյ Ստեփանիլը, տեսնելով, որ Սաքովը, վեքսիլի անունը լսելով, մի քիչ մտատանջության մեջ ընկավ:

— Դե ոնց որ ուզում ես, աղա զան, — ասաց Սաքովն ականջի հետեւ բորելով:

— Զէ, դո՞ւ ոնց ես ուզում: Վեքսիլ նրա հմար եմ ասում, որ տան գրավը զալմաղալ բան ա — էլ նատարիուս, էլ կուպչի, էլ պոշլինի, — օրեր կբաշի, համ էլ անմեղ տեղը ծախսեր կգնաւ:

— Լավ, թող վեքսիլ ըլի, — համաձայնեց Սաքովը:

\* \* \*

— Հետեւալ օրն ԱԵԹ Նատոն մի քանի արշին սպիտակ միտկալ գնեց, շապիկ կարեց և հազցրեց Սաքովին արխալուղի վրայից, իսկ մի քանի օրից հետո «Թելեժկեն» բարձած, իրենք էլ երեխաներով վրեն նստած՝ առավոտյան վաղ բռնեցին Թելեթի ճանապարհը: «Թելեժկի» հետեւ ոտներից պինդ կապկապած՝ պառկած էր մատաղացու ոշխարը և գլուխը դրած՝ «Թելեժկի» ճոճուացող տախտակներին իր ոշխարամիտ հայացքով նայում էր հետեւ երկար ու մեկ ձգվող արեակեզ փոշոտ խճուղուն:

Երկար քարքարու ճանապարհը, «Թելեժկի» տատանումը, տոթեղանակը բոլորովին ուժասպան արին Սաքովին, այնպէս որ, երբ ճաշի դեմ Թելեթ հասան, մոր և կնոջ օգնությամբ հազիվ կարողացավ իշնել «Թելեժկից» և ոտները բարշ տալով, գնաց նստեց հսկայական ընկուզենու տակ երկայն նստարանի ծայրին:

Նույն ընկուզենու ընդարձակ հովանու տակ քառակուսի տախ-

ուակամածի վրա հավաքված էին զուգված-զարդարված մի խումբ տիկիններ, օրիորդներ և դպրոցական տղաներ ու աղջիկներ թիֆլուսեցի հարուստ բազազների, բախկալների ու դինեվաճառների ընտանիքներից, որոնք ծառաներով ու աղախիններով եկել բռնել էին վանքի ամենալավ սենյակները ոչ այնքան իրեն ուխտավոր, որքան իրեն ամառողի Նույն տեղը առանձնակի նստած էին իրար կողքի գյուղի երկու քահանաներ, ամեն մեկի ձեռքին մի հովանոց, և աշքերը քաղցած գայլերի պես տնկել էին ղեպի ուխտավորների բնակարանների երկայն պատշգամբը, որտեղ աղախինները և ծառաները սուրճի պատրաստություններ էին տեսնում սպիտակ սիրոցներով ծածկված սեղանների վրա:

Վանահայրը — խոզ կորած մի վարդապետ, կապայով և թասակը գլխին — իր բնակարանի պատշգամբում, զանգակատան տակ, նարդի էր խաղում ուխտավոր ընտանիքներից մեկին պատկանող մի երիտասարդի հետ:

— Դուք գնացեք համբուրեցեք, մինչեւ ես տեղաշորը կցցեմ ու բարգն էլ տուն կածեմ, — ասաց Նատոն սկեսորն ու ամուսնուն:

Պառավն առավ Սաքովի թեր, մտան եկեղեցի, մոմ վառեցին և համբուրեցին, ծունը դրին, աղոթք արին, դարձալ համբուրեցին, «պահպանիչ» ասել տվին քահանաներից մեկին, որը շտապել էր ներս մտնել եկեղեցի նրանց հետեւից: Այդ բոլորը տեսայնքան երկար, որ երբ դուրս եկան, նատոն, բացանողի պատվերի համաձայն, արդեն անկողին էր պատրաստել եկեղեցու տագ, հետեւ կողմը և հետները բերած իրեղենները թափիլ էր դատարի սենյակներից մեկում: Ծծի երեխան լաց էր լինում փոքրիկ աղջկագոգին: որը օրորելով և «սը-սը» անելով ապարդյուն աշխատում էր լուեցնել նրան:

Եկեղեցուց դուրս գալուն պես Սաքովը պառկեց անկողնում: Սայրը թողեց նրան և գնաց հարսին օգնելու, որ սենյակը կարգի դնեն: Սենյակը խոնավ և աղտոտ էր:

Այդ և հետեւալ օրը գիշեր-ցերեկ Սաքովը պառկած էր անկողնում եկեղեցու պատի տակ: Գիշերները նրա մոտ նստած հըսկում էր մայրը համարյա անցուն: Բարեբախտաբար այդ երկու օրը եղանակը լավ էր, և Սաքովը բավական լավ էր զգում իրեն: Երկրորդ օրը առավոտյան մատաղը մորթեցին: Ամենալավ կտորները և մորթին տարան վանահորը, տերտերները, տիրագուն և ժամկոշը, մնացածից շատը բաժանեցին հարեան ուխտավորնե-

րին, իսկ մսազուրը տարան գյուղի բոկոտն երեխաները և կանայք, որ հավաքվել էին հազար ու մի տեսակ ամաններ ձեռքներին:

Օրը տոթ էր, շունչ քաշել շեր լինում: Երեկոյան դեմ երկինքը թխպեց, արագորեն սեացավ, հրեղեն կայծակներն սկսեցին պատռել ամպերի կուրծքը նախ հեռավոր ու խոզ, հետո ավելի ու ավելի մոտեցող և ուժգին որոտումներով. օդը սկսեց շարժվել և ցըրտել. հետո հանկարծ այնպիսի մի ուժգին փոթորիկ բարձրացավ շրմկոցվ ու թրմկոցվ, որ երկինք ու երկիր խառնվեցին իրար փոշով ու աղբով: Մի ինչ-որ ցուրտ բան, կլորիկ ու պատիկ, հրացանի կոտորակի պիս թրմկաց Սաքուլի երեսին, որ վերմակի տակ պառկած դիտում էր մոլեզնած բնության այդ արհավիրքը: Մի կոտորակին հետևեց երկրորդը, երրորդը... ավելի ու ավելի հաճախ ու խոշոր: Սաքուլը շտապեց շուռ գալ կողքի և գլուխը ծածկեց վերմակի տակ: Նույն րոպեին զգաց, որ կարկտախառն անձրեւ թակում է վերմակը: Նատոն ձեռաց վազացրեց մի մեծ կապերտ և ձգեց նրա վրա: Պառավն էլ մի երկու տոպրակ բերեց և ձգեց կապերտի վրա:

Սաքուլը կուշ էր եկել այդ ծանրության տակ, ճնշվելով օդի պակասությունից, և ականջ էր դնում, թե ինչպես կարկտախառն հորդառատ անձրեւ շշիկոցվ թակում էր տոպրակներն ու կապերտը, թե ինչպես երկինքը գոռզոռում էր ահեղագոշ որոտումներով համարյա թե անընդհատ, թե ինչպես հառաջում ու շառաջում էին ընկուղենին ու մյուս ծառերը փոթորկի ուժգին թափահարումներից: Նա զգաց, թե ինչպես անձրեւ շրից գոյացած մի առվակ ծլլալեն ներս խուժեց բարձի վրայով, անախորժ սառնությամբ սուզաց ականջի մոտով և սկսեց գուր կապել տակը, ծծկելով ներքնակի մեջ: Առվակներ էին, որ վազում էին անկողնի կողքերից:

Կին ու մայրը, հորդահոս անձրեւ տակ թրչվելով, շփոթված, չին իմանում ինչ անեն: Բացանողը պատվիրի էր, որ հիվանդը երեք օր ու գիշեր պետք է պառկած մնա խաչի տակ բացօթյա, մինչդեռ երեք օր ու գիշեր դեռ չի լրացել, իսկ հիվանդին այդ հորդահոս անձրեւ տակ թողնել անկարելի էր:

- Աղջի, վեր առնենք տուն տանենք,— ասում էր պառավը:
- Բա որ իրեք օրը չի թամամել,— առարկում էո նատոն:
- Աղջի, բա էս անձրեւ շես տեսնո՞ւմ:
- Դե ասում եմ որտեղ որ ա՝ կկտրի:
- Ո՞րդիան կկտրի, աղջի, տես, է՛, ոնց ա հուրհրատում:

Հիրավի, անձրեւ կարծես միտք չուներ կտրվելու: Այժմ կարկուտն էլ անձրեւ էր փոխվել և զրերը թափվում էին այնքան հորդ ու առատ, որ նրանց թանձրության մեջ երկնքի փայլատակումները հազիվ էին լուսավորում մթագնած երկիրը: Երկնքի համարյա անընդհատ որոտի ձայները, անձրեւ շշիկոցը, մոտակա ձորակի միջով վազող ջրերի քշքոցը և ծառերի շառալը միախանվելով՝ այնպիսի մի ժխոր էին բարձրացրել, որ իրար մոտ կանգնած հարս ու սկսուր հազիվ էին լուս իրար ձայնը:

Սաքուլը, անկողնու մեջ կուշ եկած, զգում էր, թե ինչպես այս ու այն կողմից ներս ծորացող առվակները շատանում են, և վերմակն անձրեւ ջրերից թրչված տոպրակներից ու կապերտից հետրզեստե խոնավանալով ճնշում էր իր վտիտ մարմինը: Օդ չկար, որ շնչեր և շնչածն էլ բաղնիքի տաք գոլորշու պես մի բան էր, որից քիչ էր մնում խեղդվեր: Տեսնելով, որ այլևս չի կարողանում դիմանալ, վրայի ծանրությունը մի կողմ շպրտեց և նստեց անկողնում: Այժմ անձրեւ սկսեց թակել ուղղակի նրա գլուխն ու մեջքը:

— Տո, բա դուք ասաված շունե՞ք. ինձ խոր սպանեցիք բատեղ,— կանչեց նա:

Կինն ու մայրը շառապեցին նրան վեր կացնել և հորդահոս անձրեւ տակ մի վերաց տեղափոխեցին սենյակ:

\* \* \*

Երեք օրվա ուսմտն արդեն կատարված էր, թե Սաքուլը երրորդ օրվա գիշերը շեր անցկացրել բաց երկնքի տակ: Չորրորդ օրը «Թելեծկեն» քաղաքից եկավ, որ մեր ուսմտավորներին տուն տանի: Սաքուլին պառկեցրին «Թելեծկեն» մեջ ուժից բոլորովին լրնկած: Ճանապարհին մի գոտի բզագում էր կողերի մեջ զգացած անտանելիք ծակոցներից. դագարամ էր բզագելուց այն ժամանակ միան, երբ հազը բռնում էր: Հազում էր չոր ու թուլ, որի ժամանակ ձայնը կարծես հորից էր գուրա գալիս: Երբեմն պարզապես շընչասպառ էր լինում: Մայրը ու կինը ճստած էին կողքին և հետները վերցրած գինու շշից երեսին շուր էին ցրցամ տալիս, որ շունչը ես քերի:

Թախտի վրա, անկողնու մեջ պառկած է Սաքովը, գլուխը կապած սպիտակ փաթաթանով, որի տակից դուրս են պրծել երկարացած մազերը և, քրտնքից ու կեղտից թաղիք դարձած, կպել ուկրացած քունքերին: Դեմքին մնացել է միայն քիթը խոշոր ու սուր, և աշքերը, ահագին ու պապղուն ապակու պես, նայում են բաց և աշքերը, ահագին ու պապղուն ապակու պես, նայում են բաց դեպի դուրս: Այնտեղ ամառվա միջօրեի արեց հրաշեկ ճառնով դեպի դուրս: Կիզում է դիմացի տան պատը և այն աստիճան շողջողում, որ ուղիղ նայելիս մարդու աշքերը ցավում են: Ուղաշողան առջև, ստվերի մեջ նստած է փողոցի պառավ շունը և, կի դուն առջև, ստվերի մեջ նստած է տապից: Սաքովը բարձն ի վեր կարմիր լեզուն հանած, հեթեթում է տապից: Սաքովը բարձն ի վեր կիսանստած, անթարթ նայում է դուրս բթացած հայացքով և ծանըր շունչ քաշում: Երկու օր է, որ կողերի մեջ այլևս ծակծկոցներ չեն գումար, հաղն ևս չքացել է. բայց այնտեղ, ներսը, ինչ-որ տարօրինակ դատարկություն է զգում. կարծես թոքը, սիրտը և ամբողջ փորոտիքը հանել դուրս են թափել:

Անհուն վիշտը ցամաքած դեմքին՝ մայրը նստած է մեռնող որդու կողքին և թաշկինակով քշում է ճանճերը նրա դեմքից: Նատոն օրորոցի մոտ շոքած՝ ծիծ է տալիս երեխային և հուսահատ հայացքով անթարթ նայում սենյակի պումախին, որտեղ աններկ գան առատողին ծծել է գետնի խոնավությունը և տեղ-տեղ թափվել: Նրա հայացքը ցույց է տալիս, որ նա առաջուց արդեն հաշովել է անխուսափելի թշվառության հետ: Թախտի վրա, լուսամուտի առջև շոքած է փորբեկ աղջիկը և աշխատում է բռնել ապակիների վրա բզզացող ճանճերը:

Մանր ու չարագուշակ լուսիթյուն է տիրում սենյակում և դուրս: Այդ լուսիթյունը խանգարում է խառ թութ ծախող մի կինտո, որը թարախը գլխին և կշեռքն ուսին՝ անցնում է դուն մոտով և իր առողջ թոքերի ամբողջ թափով աղաղակում: «Թութա՛, թութա՛, ախառի՛ թութա»: Նա մի րոպե կանգ է առնում բաց դուն առջև, նայում է ներս, իր թավ ձայնով հարցնում՝ «իմասը թութ չեք ուղում» և, տեսնելով, որ պատասխան չի ստանում, շարունակում է ճանապարհը կշեռքը շրիկացնելով և փողոցն աղմկելով իր հուժկու կանչով: Ու կյանքի առօրյան հիշեցնող այդ կանչը, մի րոպե վանելով մահվան ուրվականը, լսկում է միառժամանակ ևս, մին-

չե որ հետզհետե խլանալով լոռում է վերջապես, և մահվան ուրվականը նորից գալիս է իր փսփսութը տարածելու մեռնողի սենյակում առաջվանից ավելի ծանր ու չարագուշակ լուսիթյան մեջ:

Հիվանդն այժմ պառկած է աշքերը փակ, և եթե ծանր հեքը շինի, տեսնողը կկարծի, թե մեռած է: Պառավ մայրն անհանգըստացած՝ աշքը չի հեռացնում նրա դեմքից: Նրա գլուխը սաստիկ շարժվում է. ըստ երևույթին, ուզում է ինչ-որ ասել, բայց չի համարձակվում: Վերջապես դադարում է ճանճերը քշելուց և, խոնարհվելով որդու դեմքի վրա, շշնչում է անհամարձակորեն:

— Սաքով ջա՞ն...

Սաքովը կամաց բաց է անում աշքերը և նայում նրան,

— Ի՞նչ կը լի, որ տերտերին իմաց տանք:

— Տո, էլի տերտե՞ր,— բացականչեց Սաքովը զայրույթի այնպիսի հանկարծական բռնկումով, որ մայրն էլ, կինն էլ ապշեցին, թե ո՞րտեղից նա, որի ձայնը մինչև այժմ հավիկ էր լսվում, հանկարծ այդպիսի մի ուժ հավաքեց իր մեջ:— Տո ձեր տերտերն ու խալը չէ՞ր, որ ինձ էստեղը հասցրին... էլ ի՞նչ եք ուզում ինձանից... թողեք, էլի, հանգիստ հոգիս տամ...

Նրա ձայնը հանկարծ կտրվեց, աշքերը լցվեցին արտասուբով, և նա այլևս ոչինչ չկարողացավ արտասանել:

— Դե ես ի՞նչ գիտամ, որդի ջան, ասում եմ բալի...— արտասանեց մայրը կսկծալից և առանց խոսքը վերջացնելու լոեց, որպեսզի այլևս չգրգոի որդուն:

Ու առժամանակ խանգարված շարագուշակ ծանր լուսիթյունը գալիս է նորից թագավորելու մեռնողի սենյակում:

Սաքովը կամաց-կամաց հանգստանում է և մտառու հայացքը տնկում դիմացի տան արեակեզ պատին: Երկար լուսիթյունից հետո նրա շրթունքները շարժվում են. ինչ-որ բան է ասում, բայց դժվար է լինում որոշել արտասանածը:

— Ի՞նչ, Սաքով ջան, — հարցնում է մայրը, խոնարհվելով նրա դեմքին:

Նատոն, որ գեռևս չարունակում է ծիծ տալ երեխային, դեմքը դարձնում է դեպի նա և ականջի սրում:

— Ասում եմ, փոթրադշիկ Սերգոն, — շշնչում է մեռնողը, ամեն մի խոսքի վրա հազիկ շունչը ետ բերելով, — էն, որ իրեք թուման եմ պարտ... փիս մարդ չի... կը լի, որ չուզի... Համա թե

ուզի... յարազս տվեք... թե հերիք չանի... քամարս ծախեցեք... Հոգին չեանրացնեք...

Խեղճ պառավ մայրը միանգամայն կարկամում է և չի իմանում ինչ ասի:

Խառան զգում է, թե ինչպես ամուր մի բան բռնում է բուկը: Դրափար դնում է օրորոցի վրա, դեմքը ծածկում կռների մեջ և ամեն կերպ աշխատում է զսպել խեղճաղ հեծկլտանքը:

Խսկ փոքրիկ աղջիկը շարռնակում է մատները շարժել լուսամուտի ապակիների վրա, որ բռնի ճանճերը, և նմաննելով կինույի կանչին, մեքենայաբար կանչում է կամացուկ՝ «Թութա՛, թութա՛, ախառի՛ թութա»:

## ՀՐԳՈՒՆ ՎՐԱ ՀԱՍՏՎ

**Ճ**մեռնամուտ օրերից մեկն էր: Մութը գեռ բոլորովին չէր կոխել երկիրը: Երկինքը պատոր էր զարնան զրի պես: Կատաղի բամին վժժալով ներս էր պրծնամ փողոցի մի բերանից, թոցնում էր առաջին պատահած մարդու գդակը, լիզում էր գետնից աղբն ու փոշին, ծեծում էր դռներն ու պատուհանները, բարձրացնում, պատովն էր տալիս մանրավաճառի խանութի ճակատից կախված ցուցանակն ու կորչում փողոցի մյուս բերանից: Լապտերավավոր, սանդուղքն ուսին, փոքրիկ լապտերը ձեռքին, վազում էր լապտերները վառելու: Փողոցի անկյունում արդեն վառված լապտերը, հողմածեծ, ծոել էր գլուխը և նայում էր շուրջը կեղտուտ պակիների միջից՝ մարդու ցավագար ճպոտ աշքերի պես: Ամայի փողոցում մի փոքրիկ շուն կուշ էր եկել մի փակ դռան առջև, սրբորթում էր ամբողջ մարմնով և կաղկանձում:

Խախչար Գավիթը գնում էր սուն, մատների ծայրերը կապույտ արխալուղի գրպանները կոխած: Քամին փոփռացնում էր նրան մաշված շոփայի գիծերը և կարմիր ազգումբ, որ մի ծայրով պնդացրած էր կողքին կաշու գոտիփոք վամբողջ հադաստը, սկսած գոտիփոք մինչև սունամանները, ծածկված էր ամեն գույնի ներկերի գծերով, որոնց մեջ առանձնապես աշքի էին լնկնում սպիտակ-ները: Նա մանգամում էր անհույս ու անսպատակ մարդու անորոշ

քայլերով և քթի տակ մրթմրթում էր տրտոնչի և հայհոյանցի պիս մի բան: Ցուրտ քամին ծեծում էր նրա մազակալ երեսը, փոշով ծածկում մորուքը, բեղերն ու թավ հոնքերը, ստիպում ծածկել աշքերը, սպառնում խել գդակը, որ նա քաշել էր մինչև ականջները, և երբեմն-երբեմն գրո՞ տալիս նրա վրա այնքան ուժգին, որ նա ակամա կանգ էր առնում և ամբողջ մարմնով առաջ թեքում, որ ետ-ետ չգնա: Բայց նա ոչինչ չէր զգում: զգում էր միայն մի բան-սիրուհու շափ տենչալի և մահվան շափ անդիմադրելի: զգում էր ծարավ, ոգելից խմիշքի անհուն ծարավ, որից լեզուն ցամաքել էր բերանում, որկորը քերվում էր, աղիքները գալարվում էին փորում և ամբողջ մարմինը կարծես զրկվել էր սովորական շերմությունից:

Ամբողջ երեք շաբաթ էր, որ պարապ էր, գործ չկար, չէր ճարվում: Զմեռնամուտ էր: տուն շինողը շինել պրծել էր: վերանորոգողը՝ վերանորոգել պրծել, այլևս ոչ նոր տուն չէր շինում, ոչ ոք հատակները, պատշգամբները, տանիքները ներկել չէր տալիս, պատերին նոր պատառներ կացնել չէր տալիս: նախշքարների բանի օրերը անցել գնացել էին:

Ամառվա և աշնան աշխատանքի փողն օրը գալիս էր, օրը գնում: Այժմ— ոչ մի սև զրոշ գրպանում, որ աշքը կոխեր: Խսկ այսօր առաջին անգամն էր, որ բերանը մի կաթիլ անգամ չէր առել ոչ արաղից, ոչ գինուց: Մի ամբո՞զ օր... և ենթանալու բան էր այդ, և նա անկեղծ կերպով զարմանում էր, որ մինչև այժմ դեռ խելքը չէր կորցրել կամ չէր մեռել: Այնինչ մինչև այսօր, մինչև այս տաժանելի մի օրը, ամբողջ ամսվա ընթացքում և հետո, երբ գրպանում միշտ փող կար, պատահել էր մի օր, գեթ մի հատիկ օր, որ բանի ժամանակ ձեռաց շվազեր մոտակա «պադվալը», բերանը մի թիւ թաց անելու կամ բանից հետո ամբողջ ժամերով շնոտեր գինետանը իր ընկերների հետ և լավ «թրջված» տուն շգառնար կեսգիշերին բայաթի երգելով: Խսկ այժմ... Գոնք ապառիկ տալին մի կես թունգի կամ մի «տրիցատկա» արագ.— չէ, չէին տալիս անխիղենները, այսինքն՝ տվել էին, բայց էլ չէին տալիս, աեսնելով, որ արդեն հավաքված պարտքը վճարել չի կարողանում, մինչդեռ այդ ապերախտների մոռ էր թողել իր վաստակած գրեթե բոլոր փողերը: Գոնք ընկերներից մեկն ու մեկը հրավիրեր:— չէ, չէին հրավիրում: ամենքն էլ իր պես պարապ էին, ամենքի գրպանումն էլ մըկներ էին խաղում: Անտեր տանն էլ չկար այնպիսի մի բան— արծաթի գդալ, ոսկե մատանի, ականջի օղ կամ զորդ, թեկուզ կնո-

շից ժածուկ տաներ գրավ դներ կամ ծախեր.— տունը սրբած, կինն ու երեխաները՝ տկոր, ինքը՝ դառ ու դատարկ:

Այսօր գինեվաճառը, որի մոտ նա թողել էր իր ամառվա գրեթե ամբողջ վաստակը, բաց արեց նրա առջև դավթարը և ասաց.

— Այ, տատա Դավիթ, տասը մանեթ հինգ շայի նիստա կա վրեդ. բե տու, ախպեր, ու էլի ինչքան ուզում ես՝ նստի խմի, քեզ անուշ ըլի:

Ու, չնայելով Դավիթի աղալանք-պաղատանքին, մեռավ-կտըր-վեց՝ մի բաժակ օղի շտկեց, որ ցամաքած բերանը թաց աներ ու մի քիչ տաքանար այս անպիտան ցուրտ եղանակին:

Այժմ նա տուն էր գառնում հույսը բոլորովին կտրած և խիստ շարացած ամենքի և ամենի բանի վրա: Ու որ մտածում էր, թե վաղն էլ, մյուս օրն էլ, երրորդ օրն էլ— ո՞վ գիտե դարձյալ քանի՞ օրեր— նույն անհաջողությունը պիտի ունենար, ինչ որ այսօր, քիչ էր մնում իսկապես խենթանար: Մատներով անդադար պըր-պտում էր արխալուղի գրպանները, հուսալով թե մի գուցե տասը կամ տասնհինգ կոպեկանոց մի դրամ խցկված լինի կարկատան-ների արանքը, ինչպես շատ անգամ էր պատահել փող ունեցած ժամանակ, բայց մատների ծայրերը միայն շոշափում էին զրդ-զրդված գրպանների մաղանման մճճված կեղտը:

Քամու դեմ կովելով, նա մտավ իրենց նեղ ու ծուռ փողոցը, որի երկայնքով այս ու այն կողմը իրար հենված էին, կարծես շր-թաղվելու համար, խղճուկ տնակներ ցածր, հողածածկ կտուրնե-րով, ծուռտիկ-մուռտիկ պատուհաններով, փտած դռներով, ո՞րը գետնի մեջ խրված, ո՞րը գետնից բարձր:

Դավիթը կանգ առավ այդ դռներից մեկի առջև, որի ծակոտի-ներից և ճեղքերից ճրագի լույս էր երկում: Փոխանակ ծեծելու, նա ոտք բարձրացրեց և մի պինդ հարված տվեց դռանը: Դուռը ճրո-ճրուաց, քիչ մնաց տեղահան լիներ, բայց շրացվեց. ներսից փակ էր: Այդ բանն ավելի կատաղեցրեց Դավիթին, և նա կրկնեց հար-վածն առաջվանից ավելի պինդ:

— Մեռել ե՞ք, սատկել ե՞ք,— գոռաց նա սարսափելի հայ-հոյանքներ թափելով:

Ներսից լսվեց դռան փականքի շրխկոցը: Ոտարորիկ, պատա-ռոտուն հագուստով, խճճված մազերով մի փոքրիկ աղջիկ դուռը բաց արավ և, ցրտից սարսալով, մի կողմ քաշվեց, որ հայրը ներս մտեմ:

Դավիթը մտավ արյուն կտրած աշքերով:

Աղջիկը սովալուկ հայացքով աշքի տակից նայից հոր դա-տարկ ձեռներին, և այն միջոցին, երբ փակում էր դուռը, մի ծանր հարված զգաց գլխին: Նա ձայն չհանեց, այլ ձեռքերը դրեց գա-գաթին և տեղն ու տեղը պաղեց տապ-տապ արած հավի պիս: Ըստ երկույթին սպասում էր, թե հարվածը պիտի կրկնվի և իր մանկա-կան սովալուկ մարմնի ֆիզիկական ամբողջ ուժը ուկրացած ձեռ-քերի մեջ հավաքած՝ աշխատում էր պաշտպանել գլուխը՝ շեքերի մեջ կոխած:

Սակայն հայրը բավականացավ մի հարվածով միայն և ան-միջապես դարձավ կնողը, որ թախտի վրա նստած կար էր անում լամպի լուսով:

— Հա՞մ, մեռել ե՞ք, սատկել ե՞ք: Տո, դուռն էսքան կոտրա-տում եմ, չեք իմանո՞ւմ: Այ խլանաք դուք, խլանաք: Պինդ էլ կող-պել եք, թե ի՞նչ: Գիտամ, էնքան բան-ման ունես անտեր տանդ, որ վախենում ես նի շթափվեն, շթալանեն: Վայ ձեր ծնունդը շո-րանա, ձեր ծնունդը: Դուք խո ինձ հմար կնիկ ու որդիք չեք, ցավ ու կրակ եք ինձ հմար, ցավ ու կրակ գա ձեր գլխին: Էլ զըրումս բարաբաթ չմնաց, ինչ դու է դու կոտրած ոտղ տուն դրիր ըստեղ...

Դավիթի արտասանած ամեն մի պարբերությունը համեմված էր ամենաընտիր և երբեմն շատ ինքնուրույն հայհոյանքներով:

Կինն ամենկին ձայն չհանեց, նույնիսկ գլուխը շբարձրացրեց կարի վրայից: Ամուսնու գոռգոռոցն ու հայհոյանքն այնքան սո-վորական բան էին դարձել նրա համար, որ միանգամայն կորցրել էին իրենց բոլոր նշանակությունն ու ազդեցությունը, և վաղուց էր արդեն, որ Մային այլես չեր պատասխանում, մի անգամ առ միշտ համոզվելով, որ այդ ոչ միայն անօգուտ, այլ նույնիսկ վտանգա-վոր է, որովհետեւ խոսքը խոսք էր բերում, և Դավիթը վերջիվերջո խոսքից անցնում էր «գործի»: Կնոշ միակ պատասխանը լուսիցունն ու անտարբերությունն էր լինում: Շոնը հաշեր, թե Դավիթը — այդ միենանուն էր նրա համար: Պատահում էր, որ Դավիթն ամբողջ ժա-մերով գոռում-գոռգոռում, հայհոյում էր ամենազգվելի ածական-ներով, բայց Մային գլուխը կախ՝ մնում էր իր բանին, քարի պես լուս ու անտարբեր:

Մանր, շատ ծանր էին խեղճ կնոշ քաշած օրերն արբեցող ամուսնու ձեռքին: Ինչ Մային ոտ էր դեր ամուսնու տունը, ոչ մի լավ օր չէր տեսել, միշտ ծեծ ու հայհոյանք, միշտ հայհոյանքու-

ծեծ, Մեծն ու Հայհոյանքն էլի վնաս շունի,— այդ բանին այսպես թե այնպես գեռ կարելի էր դիմանալ,— բայց գոնե տան և երեխաների հոգսը քաշեր. այդ էլ չկար, ինչ վաստակում էր, իր փորն էր ածում, Ուրեմն էլ ինչացո՞ւ էր. ավելի լավ չէ՞ր լինի, որ իսկի Աիներ. խեղճ կինը գոնե հանգիստ իր բանին կկենար, գոնե զիշերները չէր սպասի ահ ու դողով, թե ահա որտեղ որ է՝ պիտի գա իր դաշիճը արբած-տրաքած, երեխաներին լեղաճաք անի, ամբողջ թաղը հավաքի գլխին. Տունը ինքն էր պահում, երեխաներին ինքն էր հագցնում, կերակրում իր ձեռքի աշխատանքով, ուրեմն էլ ինչացո՞ւ էր այդ միշտ արբած մարդը, էլ ի՞նչ սրտով էր բղավում, Հայհոյում, ծեծում, ինչո՞ւ և ի՞նչ իրավունքով:

Մային աշխատում էր, գիշեր-ցերեկ աշխատում— կար էր անում, լվացք էր անում, հաց էր թխում, թոկ էր զգում, բարդաներ էր կարում, հինած էր հինում, պարսիկ վաճառականների հայմար նուշ, ընկույզ, տախիլ էր կոտրում. կարիքը ստիպել էր նրան վարժվելու ամեն տեսակ աշխատանքի, և ոչ մի օր նրա ձեռքը դադար չէր առնում: Հարատես աշխատանքը, զրկանքներն ու հոգսերը և ամուսնու պատճառած ֆիզիկական ու բարոյական տանջանքները հալումաշ էին արել խեղճին: Նրա կյանքը դարձել էր մի տեսակ անասնական. չէր իմանում ի՞նչ օր է լուսանում, ի՞նչ օր մթնում. մի բան էր միայն իմանում— երեխաները քաղցած են՝ պետք է աշխատել, երեխաները տկլոր են՝ պետք է աշխատել, տանտերը պահանջում է վարձ՝ պետք է աշխատել:

Ահա այս գիշեր էլ, չնայելով շաբաթ գիշեր է, կիրակշաբեք է, երբ ամեն աշխատանք դադար է առնում, նա գարճայլ աշխատում է. կարում է ամբողջ օրը՝ վաղ առավոտից նստած, որպեսզի վերցացնի, տանի տա տիրողը, մի քանի կոպեկ փող ստանա, գեթ վազը մի քիլ հաց առնելու Առանց այն էլ երեխաները այսօր ամբողջ օրը սովից վնասում էին: Փոքրն արգեն շատ վնասություց հոգնել, քնել է, մեծն էլ, աղջրիկ՝ շեմ իմանում ինչի է սպասում: Նրա մատերը փետացել են, ասեղը հազիվ են բռնում. մեջքը կորացել, շորացել է, որ շակում է, կարծում է, թե օգնաշարն ուզում է կոռպրիկ:

Երկար, շատ երկար գոռաց, գոռագոռաց Դավիթը, Հայհոյեց, էլ մեռել ու իննդան շթռղեց, հետեւ պանկեց թախսի վրա, ձեռները դրեց գլխի տակ և սկսեց նայել առաստաղի կաթիւթից բազմապան գույներ ստացած, ճաքճաք գերաներին:

Փոքրիկ աղջիկը, որ հոր ահից հենց այնպես էլ մնացել էր դուան մոտ պայտած, ուր դուան ճեղքերից փլող սառը քամին մրսեցնութ էր նրա վտիտ մարմինը, կամաց վեր կացավ, կատվի քայլերով գնաց բարձրացավ թախտը և նստեց մոր մոտ, մերկ սրունքները ծածկելով շթի դերիայի կարճ փեշերի տակ: Շուտով նրա աշքերի կոպերը ծանրացան, և նա նստած տեղը սկսեց նիրհել:

Մայրն ատամներով կտրեց կարի թելը, որի ժամանակ աշքնընկավ նիրհի մեջ զլուխը բարձր ու ցածր անող աղջկա վրա:

— Աղջի, քունդ տանում ա, գնա բնի:

Աղջիկը բաց արեց շաղված աշքերը, մի րոպե ապուշ-ապուշ նայեց մորը, հետո սուր-սուր եղունգներով սկսեց քորել զլուխը և կամացուկ վնասուաց.

— Հաց եմ ուզում:

— Ես էլ եմ ուզում,— արձագանք տվավ թախտի ծայրից փոքրիկը, որ հոր գոռգոռոցի վրա զարթնել էր և, մինչև այժմ լուս, մթելի տակից պլղած աշքերով նայում էր ճրագին:

— Էզուց, էզուց, բալա ջան, հմի քնեցեք,— ասաց մայրը:

Բայց փոքրիկը և նրանից սիրտ առած մեծը սկսեցին ավելի ու ավելի վնասուալ:

— Սուս, շան լակոտներ, թե չէ, էս ա վեր կացա, — Հանկարծ գոռաց Դավիթը, արագորեն շուր գալով պառկած տեղը և բռունցքը ուժգին զարկելով թախտին:

Փոքրիկն իսկույն սուս արավ և մթելը գլխին քաշեց: Աղջիկը նույնպես լոեց, շոքելով գնաց դեպի անկողինը, պառկելուց առաջ քորումոր եկավ ամբողջ մարմնով, հետո մթելի մի ծայրը բարձրացրեց, մտավ տակը, զլուխը դրեց եղբոր գլխի մոտ, կուշ եկավ սրթսրթալով և համարյա թե նույն րոպեին էլ քնեց:

Քամին շվշվացնում էր դուրսը, բզզում էր բուխարու մեջ, ծեծում էր դուրսը ու պատուաննը. իսկ ներսը լոռության մեջ լսվում էր քնած երեխաների շնչառությունը և երբեմն-երբեմն Դավիթի մըռմուցը: Այնինչ Մային, զլուխը միշտ կախ, կարում էր հա՛ կարում, և սպիտակ քաթանը նրա հոգնած աշքերի առաջ երբեմն-երբեմն շերտավորվում էր կարմիր, կանաչ, գեղին զլերով:

Պառկած տեղն էլ հանգիստ չէր կարողանում մնալ Դավիթը, տեղնով բռնված մարդու պես դես էր շուր գալիս, դեն էր շուր գալիս, մոխում էր, փոխում, ոգելից խմիշքի ծարավն ավելի ու ավելի էր նեղում նրան: Նրան թվում էր, թե այդ գիշեր չի լուսաց-

Նի. կամ կմեռնի, կամ կգծվի։ Առհասարակ ամբողջ օրը հիվանդ էր զգում իրեն. գլուխը ծանր էր քարի պես, աշքերից ջուր էր գնում, ձեռները դողում էին, ծնկների մեջ ինչ-որ մղմիղ էր զգում, իսկ ստամքսի մեջ կարծում էր, թե մժեղներ են դժվարում. շնայելով, որ ոչինչ չէր կերել, այնուամենայնիվ քաղց չէր զգում և ուսելու մասին չէր էլ մտածում։ Զգում էր միայն, որ մի բանի բաժակ ողին բավական էր այդ հիվանդագին բոլոր երեւլիթները ձեռաց վանելու համար։

— Օ՛, ես ձեր...— մի ծանր բռունցք իջեցնելով թախտի վրա, պորագոր հայհոյանք ուղղեց նա հայտնի չէ ում հասցեին, նստեց, ոտները կախեց թախտից, խոնարհվեց և գլուխն առավ ձեռքերի մեջ։ Գոնե բունը գար, որ թերեւս առժամանակ մոռանար այդ անտանելի պապակը։ Ոգելից խմիչքի ծարավը չէր այնքան, որ տանջում էր նրան, այլ ավելի երեսկայությունը, որ այնքան հրապուրիչ ու գայթակղիչ մտապատկերներ էր ստեղծում օղու և գինու շուրջը ընկերական շրջանում, դուզուկի և արգանի ծայների տակ, գինետան մեջ, որի բացախած օղը նրա համար ավելի ախորժելի էր, բան բուրավետ վարդն ու ծաղիկը։

Նա վեր կացավ և սկսեց քայլել սենյակի երկայնքով։ Մտածում էր՝ ի՞նչ աներ այդ սոսկալի դրությունից ելնելու համար։ Մտածում էր կյանքի և մահվան առեղջվածի առջև կանգնած մարդու մտատանջանքով։ Ամեն անգամ, որ մոտենում էր սենյակի անկյանը, նրա աշբովն էր ընկնում զրի կուլան։ Սկզբում ուշադրություն չէր դարձնում, հետո կանգ առավ կուլայի առաջ և երկար ժամանակ չէր կարողանում հաղթահարել իր մեջ մի տարօրինակ զգվանք, որ, իբրև արբեցող, տարածում էր դեպի ջուրը։ Բայց ոգելից խմիչքի ծարավը սպանում էր նրան, թուքը ցամաքել էր, որկորը խանձվել, պետք էր բերանը մի բանով թաց անել։ Եվ Դավիթը կամա-ակամա խոնարհվեց դեպի զրի կուլան։

Բայց այդ միջոցին հանկարծ մի միտք ծագեց նրա գլխում, և նրա դաժան դեմքը մի բոպե կարծես թե պայծառացավ։

Նա արագորեն մոտեցավ պատի մեջ գտնված պահանին, բաց արեց։ Հանեց օղու դատարկ շիշը, կուլայից մի գավաթի շափ ջուր ածեց մեջը և սկսեց ողողել։ Ողողեց, ողողեց օղու շիշը, հետո գլխին բաշեց և սկսեց ծծել։ Ծծում էր աշքերը փակ և շրթունքները պինդ սեղմած շշի պոնկին։ Այդ միջոցին նրա դեմքը գարշանքի

այնպիսի արտահայտություն էր ստացել, որ կարծես լուծողական էր ընդունում։

Կինն առաջին անգամ բարձրացրեց գլուխը, նայեց նրան, հետեւ մի շանչ արավ և նորից շարունակեց կարը։

Դավիթը շտեսավ այդ շանչը, բայց նրան թվաց, թե կինն իր հաւացեին ինչ-որ փնթփնթաց քիթ տակ։

— Հը, ի՞նչ ես փնթփնթում, — կամաց դարձավ նա կնոջ կողմը, շիշը հեռացնելով շրթունքներից։ Հրացայտ աշքերով երկար ժամանակ լուր ու անշարժ խեթում էր կնոջը, հետո ավելացրեց ծանր ու սպառնալից, — շանդ խո քոր շի գալիս, թե քոր ա գալիս, քորեմ...»

Կինը ձայն ծպուտ շնանեց։

Դավիթը շիշը տեղը դրեց, պահարանի դուռը շրխկացնելով փակեց և գնաց նորից պառկեց թախտի վրա, շմոռանալով հայհոյանքի մի նոր փոնջ հրամցնելու կնոջը։ Զուրը թեև մի քիչ օղու համ էր ստացել, բայց, իհարկե, այն չէր, ինչ որ քիթից ծուխ հանող, աշքերից արտասուր բամող օղին, որ խմելուն պես բարասանի նման տարածվում է մարդու երակների մեջ, և այդ բանն էր, որ ավելի զղայնում էր դարձել Դավիթն, ավելի ես գրգռելով նրա ոգելից խմիչքի պապակը։ Նա սաստիկ ցանկանում էր, որ կինը ձայն հաներ, բան ասեր, որպեսզի իսկույն վեր թռչեր և մի լավ տրորեր նրան, սրտի բոլոր մաղդը նրա վրա թափելով։ Բայց Մային ձկան պես լուր, իր բանին էր։

Դուռը դրսից ծեծեցին։

Դավիթը գլուխը բարձրացրեց, նայեց դռանը և նորից պառկեց։ Այդ անշուշտ Ակորն էր — անդրանիկ որդին՝ ութ տարեկան, որ նոր էր վերադառնում խանութից։ Չորրորդ ամիսն էր, որ նրան աշշակերտ էր տվել մի պղնձագործի՝ մի տարի անվարձ ծառայելու, մինչև որ արհեստ սովորեր։

Որովհետեւ դուռն իսկույն բացող շեղավ, նորից ծեծեցին։

Դավիթը վեր թռավ, նստեց և դարձավ կնոջը կատաղած։

— Տո, իմացել ե՞ս, շես իմանո՞ւմ: Էս էլ խո ես շեմ, վե կաց բաց արա, էլի: Այ չորանաս էդ ճրագի տակը, հը, ընենց կպչես էդ թախտիցը, որ էլ պոկ չգաս։ Մի հարցնող ըլի, օգուտդ ի՞նչ ա, է՛, էդ անտեր-մունդորիկ կարիցը։ Նավթն էլ մինչեւ լիս էրում ես։

Մային կարը մի կողմ դրեց, մեջքը հազիվ շտկեց, վեր կացավ իշավ թախտից և ամուսնու անհատնում հայոց յանքների ուղելցությամբ գնաց դուռը բանալու:

Մտավ Ակորը զգգոված հագուստով, մրից սեացած դեմքով, ձեռքերով և մինչև սրունքները մերկ ոտներով: Ցրտից սրթսրթում էր ամբող մարմնով և ատամները նկատելի կերպով զարնում իրար. բայց աշքերն իրենց տարօրինակ սպիտակուցներով սեղացած դեմքի վրա փայլում էին մանկական ինչ-որ անհուն բերկրանքով:

— Մայիլո չա՞ն,— մտնելուն պես բացականշեց նա,— բայր մեկն եկավ, պղինձներ առավ, տարա տուն, մի աբասի փող բաշ-խեց: Ա՞յ:

Դավիթը փողի անունը լսելուն պես ծտի նման թուավ տեղից և մի սուտյունով հասավ դուռն մոտ.

— Աբա՛, աբա՛...

Թե բաղցած գայլի պես վրա ընկավ երեխային:

Մայրն ընկավ որդու և նրա մեջտեղ:

— Չտաս, չտաս, Ակոր ջան, հաց չունենք. հաց կառ...

Խոռքը չվերջացավ կնող բերանում. Դավիթն երկու ձեռքով բըռնեց նրա ուսկրացած ուսերից և այնպիսի ուժով ետ շպրտեց նրան, որ նա փովեց գետնին մեջքի վրա:

— Ինձ առու, — բդակեց և այնպես պինդ հուպ տվեց որգու բուռնցքը, որ նա ցավից ճշաց և խսկույն փողը վայր գցեց ձեռքից:

Դավիթը փողը թոցրեց գետնից և խելագարի պես դուրս թուավ...

Երբ Մային ուշքի եկավ և աշքերը կամաց բաց արեց, կարծես երափի մեջ տեսավ, որ Ակորը պատին կպած՝ լաց է լինում երեխայական ուժին հեծկլտանքով, և ցուրտ քամին փշում է բաց դոնից, բլբլացնելով լամաի լուսը թախտի վրա. Մեծ դժվարությամբ նստեց, երկու ձեռքով բռնեց ծոծրակը, աշքերը փակեց ինչ-որ սուր ցավից և մի երկար ու ձիգ թառանշ բաշեց:

— Դուռը կողպի, Ակոր ջան, դուռը կողպի, ցուրտ ա, — հագիվ կարողացավ արտասանել նա:

**Զ**ինագործ Ասատուրը, — հնամաշ արխալուղով, կաշե գոտիով, արքեցողությունից ուռած-կարմրած դեմքով մոտ քառասուն տարեկան մի մարդ, որ ամբողջ թագում և բազարում հայտնի էր Հոպուած մականունով, — երեկոյան իր հալաբնի շափ փոքրիկ խանութը փակելուց հետո տուն էր զնում: Մի ձեռքին բռնած էր կեսթունգանոց մի գավ, որի պատերը տարիների ընթացքում սևացել էին կարմիր գինուց, մյուս ձեռքին կարմիր աղլուխի մի կապոց, որի մեջ կար մի քիչ «դուկ» (ձուկ), մի քիչ կանաչի, մի կապոց կարմիր բռնկ և երկու սպիտակ «շոթի» (վրացական երկայն ու նեղ հաց), որոնց սուր ծայրերը երկար ականջների պես դուրս էին ցըշված աղլուխի կապի արանքներից:

Արեւ նոր էր մայր մտել. ամառային անտանելի տոթ եղանակը փոքր-ինչ կոտրվել էր, բայց և այնպես անշարժ գոզ հագեցած էր արևից կիզմած փոշու ծանր հոտով: Թաղի կանայք երկարատև օրվա շարքաշ աշխատանքից հետո խումբ-խումբ նստուած էին իրենց դռների առջև մերկ ուսներով մերկ գետնին, գլխների փաթաթաների կապն արձակած կիսաբաց կրծքներին և զբագված էին իրենց սովորական խոսք ու զրուցով, որոնք բաժանանքներից գենը չէին անցնում: Բոկոտն, գլխաբաց, գեղուուա երևխաները հանճերի պես իրար խառնված՝ վազվում էին փաղոցներում ականջ խացնելու շափ ճիշ ու ծերտոցով:

— Հո՞պու, — հանկարծ կանչեց երեխաներից մեկը:

Հոպոպն ամեններն ուշադրություն շղարձրեց այդ կանչին, որը, ինչպես երեսում էր, մի շատ սովորական քան էր գրածել նրա համար, և անտարբեր շարունակում էր իր հանապարհը Քրտինքը ծարում էր նրա գդակի տակից ականջների հետեւ և պուտ-պատ կաթում խունացած ուսերին:

— Հո՞պուս... Հո՞պոպ... — Ժկիթաց երկրորդը, երրորդը... և վերջին՝ այդ հատուկենտ ժկիթացները միախառնվեցին և դարձան ընդհանուր մի արտադի այնքան առաջ ու համար, որ ամենաբացած զղերն անդամ կարող էին գրավվել:

Հոպոպը երկար չկարողացավ համբերել. առանց ետ նայերու և շարունակելով ճանապարհը, սկսեց սարսաթեթի հայոց յանքներ թափել հետեւից աղաղակող երեխաների հատութիւն

Երեխանները, ըստ երևույթին, այդ բանին էին սպասում, և նրանց աղաղակը դարձավ ավելի միահամուռ, ավելի սուր ու համառ, համեմված երեխայական անհոգ քրքիջով և մեծերից լսած փոխադարձ հայհոյանքով: Նրանցից մի քանիսը սկսեցին նույնիսկ քարեր շպրտել Հոպոպի հետեւց:

Սակայն Հոպոպը գնում էր իր համար, առանց նույնիսկ մտածելու, որ պաշտպանվի, թե տեսնում էր, թե ինչպես քարերը հետեւց գալով՝ թոշում էին իրեն այս ու այն կողմից և գետնին ընկնելով՝ փոշի էին բարձրացնում: Նա միայն շարունակում էր իր հատընտիր հայհոյանքները: Ըստ երևույթին, այդպես էլ կշարունակեր ճանապարհը մինչև տուն, եթե քարերից մեկը շղիպչեր նրա ոտին: Երկի ոտը խիստ ցավեց, որովհետև հանկարծ կանգ առավ, մի ակնթարթում գինու գավն ու ալլուխի կապոցը դրեց գետնին, մի մեծ քար վերցրեց և արյունով լցված աշքերով պատրաստվեց շպրտելու երեխանների վրա: Բայց մինչ այդ երեխանները ծկլթացին, շուր եկան ու ցանուցիր եղան շեղակի նեղ փողոցներում:

— Այ ես ձեր... (երկար հայհոյանքներ): Թե մի կկանգնեիք, թե մի կկանգնեիք... Քարով եք ուզում կովի, դե կովեք, էլի, ո՞ւր եք փախչում, ձեր... (հայհոյանք): Փիե՛, անց կենալ չի ըլում, էլի: Վրա են թափվում, կասես գեղի շներ ըլեն: Տո՛, ասա ես ձեզ բան եմ անո՞ւմ. թողեք, էլի, գնամ ինձ համար վեր ընկնեմ իմ տանը, ես ձեր... (հայհոյանք):

Նա քարը վայր գցեց, ցուցամատով սրբեց ճակատի վրա տված քրտինքը, մատը թափ տվեց, կոացավ և, շարունակելով հայհոյանքները, սկսեց ձեռքով տրորել ոտի այն տեղը, ուր դիպել էր քարը:

— Հը՛, ուստա Ասատո՞ւր, էղ ի՞նչ ես ըտենց տաքացել,— ասաց այդ րոպեին նրա մոտով անցնող մի ծանոթ մարդ առանց կանգ առնելու:

Հոպոպը նայեց նրան, գավն ու կապոցը վերցրեց գետնից և, շարունակելով ճանապարհը նրա հետեւց, սկսեց գանգատվել.

— Տո, ըսենց էլ բան կըլի՞: Մի հետ շրլավ, որ էղ շան լակուները թողան արխալին զնամ իմ ճամփով: Հոպոպ հա՛ Հոպոպ: Տո, Հոպոպ... (հայհոյանք երեխանների հասցեին): Հոպոպը ձեր թայն ա՞:

— Է՛ս, երեխեք են, էլի, ուստա Ասատուր, ի՞նչ ես անգաջնում, — ասաց ծանոթը շտապ քայլելով նրա առջեկից:

— Տո, ո՞վ ա անգաջ գնում, ես դրանց... (հայհոյանք): Տեսնում են թե չէ, ոնց որ գեղի շները վրա տան: Քարեր էլ են զցում, քարեր:

Բայց ծանոթն այլևս չէր լսում նրան, նա ծովեց մյուս փողովը և անցավ գնաց:

Իսկ Հոպոպը, բարձրածայն շարունակելով հայհոյանքներով՝ համեմված իր բանակոփիվը բացակա երեխանների հետ, մտավ իրենց փողոցը: Դռներին նստոտած կանանց խմբերի մոտով անցնելիս մի շահել կին կանչեց նրա հետեւց:

— Հո՛ պոպ:

Ու իսկույն ծիծաղելով գեմքը ծածկեց մոտը նստած ընկերունու մեջքի հետեւը: Մյուս կանայք ուրախ հոհուցին, բացի մի պառավ կնոջից, որը մեղմորեն հանդիմանեց բացականչողին:

Հոպոպը ետ չնայեց, բայց, իհարկե, առանց հարմարավոր հայհոյանքի լիովից իր հետեւց կանչող կնոջը և անցավ գնաց: Այդ հայհոյանքն այնքան անհամեստ էր, որ պառավը նկատեց կանչողին:

— Հը՛, էղ իր ուղո՞ւմ...

Իսկ մյուս կանայք, մանավանդ կանչողը, ամոթից ծածկեցին բերանները և, իրար կողք բգելով, աշխատում էին զսպել ավելի սաստկացող հոհուցը:

Այնուհետև մինչև տուն հասնելը Հոպոպի միանույն հայհոյանքը զանազան վարիանտներով ուղղված էր միայն իր հետեւ կանչող կնոջ հասցեին:

\* \* \*

Ամբողջ թաղը Հոպոպ մականուով էր կնքել զինագործ Ասատուրին, ժողովրդական այն առածի հիման վրա, որ ասում է, թե «Հոպոպը ինքը հոտած էր, կարծում էր, թե բույնն է հոտած»: Եվ իսկապես, շատ հոտած, այսինքն կովարար մարդ էր զինագործ Ասատուրը: Պատճառը թերևս իրենք թաղեցիներն էին, որովհետև, ինչպես ինքն էլ շարունակ գանգատվում էր, ոչ մի օր չէին թողնում, որ մարդը հանգիստ տուն գնա: Հոպոպին կատաղեցնելը մի կատարյալ զվարճություն էր նրանց համար: Նույնիսկ այն ժամանակ, երբ նա տանը նստած, սուփերն առաջին, գինու գալը կող-

քին, թուրքերեն բայարի էր երգում իր ճաթած ձայնով, թաղի կարին, թուրքերեն բայարի էր երգում իր ճաթած ձայնով, թաղի կարին, որոնց մի առանձին հաճույք էին պատճառում նրա անզուգական հայրոյանքները, դրում էին մի որևէ շարածճի երեխայի, որ դատ լարացնի Հոպոպին: Երեխան իսկույն վազ էր տալիս, գլուխը զգուշորեն ներս կոխում դռնից, կանչում «Հո՛պոպ» ու ծըլ-կում արտգավաղ նապաստակի պիս: Եվ այդ մի հատիկ բառը բավական էր լինում, որ Հոպոպի քիջը հարամ լիներ. նա իսկույն վազակն էր լինում, որ Հոպոպի քիջը հարամ լիներ. նա իսկույն վազակն էր բայարին, դուրս գալիս դուրը և ամբողջ թաղը հավաքում դիմին:

Այլ ոքի հետ չէր հաշտվում Հոպոպը: Բազարում թե թաղում ոչ մի հարեան շուներ, որի հետ կոված և մի լավ ծեծ կերած չլիներ: Կնոջ հետ խո ամեն օր տուրուղմփոցի մեջ էր. ինքը կնոշն էր ծեծում, կինը նրան. թակում էին իրար այնքան ժամանակ, մինչև որ կամ հոգնում էին, կամ հարեանները միջամտում, բաժանում նրանց իրարից: Այլ ոքից չէր վախենում, բացի ոստիկանությունից, որ շատ անգամ կոխել էր նրան մեծ-մեծ մկներով լի մութ նկուղը և մի քանի անգամ էլ նույնիսկ պրիստավը իր սեփական ձեռքով արյունվիկ էր արել նրա քիթն ու պոռնկը:

Հոպոպն արբեցող էր, ճիշտ է, բայց միայն գինի էր խմում, այն էլ միայն կարմիր և լավ գինի. արագ չէր սիրում և խմելուց հետո էլ դեմքին այնպիսի արտահայտություն էր տալիս, որ թվում էր իր պիտի թափի: Կերակուրների մեջ էլ խիստ խտրություն էր գնում. ջրալի կերակուրներ չէր սիրում, պասվա կերակուրներն ատելով ատում էր, մանավանդ լորին, նրա սովորական ուտելիքն էր՝ յուղալի դոշը, խավիարը, խորովածը, թարմ կանաչին, կարմիր բողքը և սպիտակ հացը: Խսկ այդ համեմատաբար թանկ ուտելիքները գնելու համար փող ճիշտ ուներ, որովհետեւ իր արհեստի մեջ լավ վարպետ էր և այնքան ճարպիկ, որ կարողանում էր մի որոշանոց ժանդրություն ունենալ կամ հրացան հարյուր տարվա հնության տեղ ծախել ելքոպացի տուրիստների վրա շատ լավ գներով:

Գինու գալը, որ տհսանք նրա ձեռքին, բանեցնում էր տառնը հինգ տարուց ավելի. առավոտները կատարկ հետը տանում էր խանութը, երեկոները լիքը տուն բերում: Այնքան էր սիրում, որ շարաթ գիշերները, դատարկելուց հետո, մոմ էր վառում վրեն. «Բարաքես սրա մեջն ա, — ասում էր. ինչ էս գալով գինի եմ խմում, բանս լավ ա գնիմ»: Մի անգամ նրա մեծ տղան, վեց

թվան, ոտող դիպավ գալին. գավը գլուրվեց և քիչ էր մնում թախտից ընկներ կոտրվեր: Հոպոպը վրա ընկավ երեխին և սկսեց ծեծել նրան այնքան սաստիկ, որ կսպաներ, եթե կինը չխեց որդուն կատաղած հոր ձեռքից: Բարեբախտաբար, գավն արդեն դատարկված էր, թե չէ, ծեծից նրան էլ բաժին կհասներ:

\* \* \*

Կինը տանը չէր, որ Հոպոպը տուն հասավ: Դուքսը պատի տակ տղան տուն էր շինում տաշեղներից: Բացի կարճ, կեղտոտ շապիկից, ուրիշ բան չկար նրա հագին:

— Ո՞ւր ա մերդ, — հարցրեց հայրը:

Տղան վեր կացավ, աշքերը տնկեց հոր ձեռքի աղլուխին և պատասխանեց.

— Բազրատանց տուն գնաց:

Հոպոպի աշքերը կրակ կտրվեցին:

— Էլի... վայ ես նրա... — Հայույնց նա, շտապով ներս մըտավ, գավն ու աղլուխի կապոցը դրեց թախտի վրա և նորից դարձավ որդուն: — Գնա էս սըհաթիս կանչի: Դե, հը:

Տղան, որ հոր հետեւից ներս էր մտել և աշքը չէր հեռացնում աղլուխից, հանկարծ շուռ եկավ և դուրս թռավ:

— Բազրատանց տուն... Լավ, շատ լավ, — սկսեց բարձրածայն խոսել ինքնիրեն Հոպոպը: — Դե հըմի կզաս, կտեսնանք, էլի... ես քեզ Բազրատանց տուն շանց կտամ... Հայ գիղի հա՛, Ասատուրը մեռել ա, էլի, էլ շկա, էլ գետնի երեսին ման չի գամի, էլի, որ նրա կնկա հետ ուրիշներն են սիլի-բիլի անում... Հոպոպ որ գառանք, նամուս էլ կորցրի՞նք... Այ, գետինը շմտնի՞ էս գդակը:

Եվ նա գդակը պոկելով գլխից ուժգին թափով խփեց գետնին: Հետո շարունակելով հայույնքներով համեմված սպառնակիները կնոյ հասցեին, գոտիկը ետ արեց, հանեց արխալուզը, ոտնամանները, հոտած գուղպանները, շալվարը և գուան շեմքին կանգնելով, սփենց լիթի կարճ շապկի փեշով հով անել բրտինքից չուր կտրած երեսին ու փորին:

Անհամբեր սպառում էր կնոշը. բայց մինչև որ կինը կգաք, շպրած սրտով մոտեցավ գավին, գլխին քաշեց, ծծեց ագահորեն

և, ծարավը հագեցնելուց հետո, դավը տեղը դրեց: Հետո, առանց աղութիսի կապոցը բանալու, կտրեց շրթիներից մեկի սուր ու չոր ժայրը, բերանց դցեց և սկսեց ժամելի:

Մոր հետիւ գնացած երեխան ներս ընկավ գնդակի նման: — Ասեց զայիս եմ, — ասաց նա և այս անգամ աշքերը տրակեց հոր բերանին: — Հըմ, — մոնշաց Հոպոպը, հացը ժամելով, և ձեռքը նոր/ յտարավ դեպի գավը:

Այսպիսով գավը մի քանի անգամ մոտեցրել էր նա շրթունքին և պղղել թախտին, երբ վերջապես դուռ շեմքին երևաց կիւնը, — բավական սիրունաւու ու գիրուկ, մաշված դեղին շուտերը մերկ ոտներին և ծծի մանուկը գրկին:

— Բէը՛, էս էլ եկա, ի՞նչ ես ուզում, — ասաց նա համարձակորեն, ըստ երեւոյթին շատ լավ իմանալով, որ էրկնվելու է ամենօրյա տեսարաններից մեկը:

— Ինչ եմ ուզո՞ւմ, — ասաց Հոպոպը, որ հենց նոր գավը նորից գլուխն էր քաշել. գավը դրեց թախտի վրա, շապկի թևով սրբեց շրթունքը, մոտեցավ բռնեց կնոշ ձեռքից, ներս քաշեց և ըսպառնական դիրք բռնեց նրա առջև: — Ո՞րտեղ իր:

— Բագրատանց տանը, — նույն համարձակությամբ պատասխանեց կինը:

— Ի՞նչ իր շինում ընտեղ:

— Ի՞նչ պտի շինեի: Լվացք ունեն անելու, կանչել ին, որ էգուց գնամ լվանամ:

— Լվա՞ցք... լվա՞ցք... Տո՛, ես քու... (հայհոյանք)... անտերմոնդի՞կ ես մնացել, քաղցած-տնկո՞ր ես մնացել, որ ուրիշների հմար լվացք ես անում: Հաա՞: Բա ես չկա՞մ, բա իմ գլուխը շներն ու գելերն են կերե՞լ: Հաա՞: Տո՛, իմ կնիկն ընչի՞ պտի ուրիշի լվացքն անի, հը՞: Տո՛, Բագրատն ո՞ւմ շուն ա, որ իմ կնիկը գնա նրա հմար լվացք անի, հը՞: Տո՛, Բագրատի պես հարուրին կառնեմ-կծախիմ, ու իմ կնիկը պտի գնա նրա հմար լվացք անի՞: Ի՞նչ անենք, թե գդակին կակարդ ունի ցցած, ես նրա... (հայհոյանք Բագրատի հասցեին): Տո՛, ի՞նչ լվացք, ի՞նչ դես, ի՞նչ դեն, ո՞ւմ ես ուղում խարի, հազիր ասես... Դեսն արի հլա, դեսը... (Հոպոպը քարշ տվավ նրան դեպի ավելի ներս, ձայնը ցածրացրեց, գլուխն առաջ տարավ և ֆշաց սեղմած ատամների միջից).

Հազիր ասես գնացել իր նրա հետ շնութին անելո՞ւ... Հը՛, սուտ ա՞... էլի կասե՞ս սուտ ա...

Կինը ձեռքը խլեց նրա ձեռքի միջից և շանչեց նրան: — Ի՛, հողեմ գիծ գլուխդ, — ասաց նա արհամարհանքով և դարձավ, որ գուրս գնա:

Բայց մարդը շանչեց նրա թեկից և թույլ շտվավ, որ տեղից շարժվի:

— Կա՞ց, — գոռաց նա, — ո՞ւր ես գնում, որ գնում ես, հենց գիտես ձեռիցս կպրծնե՞ս: Գիթը հըմի կտեսնաս, թե ոնց գիծ եմ: Էնչկի հոգիդ շնանեմ, կթողա՞մ: Բա ես մեռե՞լ եմ, որ էն շոն շան որդու հետ ես շնութին անո՞ւմ: Հը՛, մեռել ե՞մ... մեռել ե՞մ... մեռել ե՞մ...

Եվ ամեն մի «մեռել եմ» խոսքի հետ բռունքքի մի ծանր հարված էր իշնում կնոջ մարմնին, ո՞ւր որ պատահեր— գլխին, ուսին, մեղքին... Կինը մի ձեռքով մանուկը գրկած՝ գլուխը կախել էր, որ հարվածները երեսին շղիպչեն, մյուս ձեռքով աշխատում էր բռնել մարդու ձեռքը, և եթե երբեմն աջողվում էր այդ, Հոպոպն ավելի էր կատաղում և հետագա հարվածներն ավելի անխնա էին լինում:

— Տո՛, գիծ Հոպոպ, ի՞նչ ես ուզում ինձնից, — կանչում էր կինը լաց լինելով:

Ծծի մանուկը ծվում էր նրա խտափին, իսկ մյուս երեխան մի կողմ քաշված՝ դիտում էր այդ շատ սովորական տեսարանը լուս ու անտարբեր:

— Ես քեզ հլա փե՞տով պտի ծեծեմ, փե՞տով, — ասաց Հոպոպը շնչառապո և, թողնելով կնողը, սկսեց խենթի պես դես-դեն ընկնել սենյակում, որ փայտ գտնի: Փայտ շգտնելով, նրա աշքովն ընկան իր ոտնամանները: Ու վեր թոցրեց այդ ոտնամաններից մեկը, որի կրնկին հաստ նալ էր խփած գոգավոր մեխերով:

Մինչ այդ՝ կինը ծծի մանուկը դրեց թախտի վրա, շտկեց իրեն և վերցրեց գինու գավը:

— Աբա՛ խփի, աբա խփի, տե՛ս էս գավի գլուխը ո՞րտեղ եմ ուտում, — կանչեց նա անվախ և սպառնագին:

— Կա՞յ ես քու... — բղավեց Հոպոպը և, ոտնամանը ձգելով ձեռքից, վրա վազեց, որ գավը խլի:

Բայց կինը ժամանակ շտվավ նրան, որ իրեն հասնի. ոտները հանեց շուտերից և դուրս փախավ գավը ձեռին:

ԹԵ Ի'ՆՉ ԵՂԱՎ ՀԵՏՈ,  
ԵՐԲ ՀԱՔԱՐՄԱՆԻՑ  
ԵՐԿՈՒ ԿՏՈՐ  
ՀԱՔԱՐ ՊԱԿԱՍԵՅ

### Մարդու ընկալ ներած հետեկց:

Ու փողոցում, ուր թաղի կանայք և երեխաներն արդեն հազարվել էին նրանց աղմուկի վրա՝ սովորական տեսարանը դիտելու, մարդ ու կին վազում էին— կինը առջնից գավը ձեռին, մարդը հետեկց գլխաբաց, ոտաբորիկ և ներքնաշորով:

Փողոցում մի անասելի ժխոր էր բարձրացել. կանայք հըպէսում էին, երեխաները սուր ծկլթոցներով «Հոպոպ» էին աղազակում և սուրում, իսկ թաղի մանրավաճառի խասութի առջև հածուն տղերքը ծիծաղելով բղավում էին. «Հասի հա՛, Հոպոպ, հասի հա՛»:

Այդ սարավիելի ժխորի մեջ Հոպոպը վազում էր հա՛ վազում կնոջ հետեկց, կարճ շապկի փեշը փոփոացնելով օդի մեջ և աշքը տնկած կնոջ ձեռքի գավին, որի մեջ գինին լըխկլխսկում էր և թափվում բերանից:

Քանի գնում, այնքան փոքրանում էր տարածությունը մարդ ու կնոջ միջև, որովհետև գավը խանգարում էր կնոջն ավելի արագ վազելու Վերջապես, մի քանի քայլ էր մնում, որ մարդը հասներ կնոշը, երբ հանկարծ կինը, առանց կանգ առնելու, ձեռքը բարձրացրեց և գավը ուժգին թափով գետնովը տվեց. Գավը բիսկաց և ալ վարդի պես բացվեց. Տակի հաստ մասը քրեղանի պես մնաց ընկած տեղը, իսկ բարակ պատերի թաց փշուրները թռան այս ու այն կողմ. կարմիր գինին ներկեց գետինը լերդացած արյան սև գույնով և իսկույն ծծվեց արևակեղ գետնի մեջ:

Հոպոպը ցնցվեց և կանգ առավ հանկարծ: Նրան թվաց, թե իրեն տվին գետնովը: Աշքերը մթնեցին: Էլ չիմանալով, թե ինչ է անում, արագորեն կուցավ, մի մեծ քար թոցրեց գետնից և ծայրահեղ կատաղի թափով շպրտեց փախչող կնոջ հետեկց:

Քարը շեշտակի գնաց դիպավ կնոջ մեջքին: Կինը սաստիկ ճշաց, իներցիայով առաջ գավեց մի քանի քայլ էլ և փողեց գետնին երեսի վրա:

Հոճոացող փողոցը հանկարծ լոեց և քարացավ:

Հոճոացող փողոցը հանկարծ լոեց և քարացավ: Հոճոացող փողոցը հանկարծ լոեց և քարացավ: Հոճոացող փողոցը հանկարծ լոեց և քարացավ: Հոճոացող փողոցը հանկարծ լոեց և քարացավ: Հոճոացող փողոցը հանկարծ լոեց և քարացավ:

Մի ընդարձակ ամայի բակում հետին կողմը կանգնած էր դրոգապան Յագորի հնօրյա տնակը, բաղկացած ընդամենը մի մեծ սենյակից, որի գուրը բացվում էր ուղղակի դեպի բակը: Տնակի մի կողքին կպած էր տախտակամած խոհանոցը, իսկ խոհանոցի կողքին՝ մի ընդարձակ ծածկոց, որի տակ Յագորը գիշերները կապում էր իր ծանրաշարժ դրոգի աժդահա ձին: Բակը փողոցից բաժանված էր տախտակի ցանկապատով, որի տակ մի անկյունում կիտված էր ձիու ամիսներով հավաքված աղբը: Մինչդեռ բակի մնացած մասում մի ծեղ անգամ չէր կարելի գտնել— այնքան մաքուր էր, որովհետև Յագորի կինը— Անանը, օրը լուսանար թե չէ, ամենից առաջ ձիու աղբն էր հավաքում և բակն ավլում:

Զարմանալի մաքրություն էր տիրում նաև ներսը, սենյակում, Հնամաշ, տեղ-տեղ թելերը գուրս թափված կապերտը ցածրիկ թախտի վրա միշտ ավլած էր: Հողե հատակն անդադար ջրվելուց խոնացել, պնդացել, գորշ գույն էր ստացել և այնքան մաքուր էր, որ, ինչպես ասում են, յուղ թափեր՝ կհավաքվեր: Թախտի, երկու փոքրիկ պատուհանների, ծալքի և թարեքի սպիտակ միտկալի վարագույնները և շորս հատ հնաձև աթոռների սպիտակ երեսները փայլում էին ձյունի մաքրությամբ: Մինչեւ անգամ պատի տակ դրված, տակը ջրակալած և ամբողջապես ջուր լացող կարմիր խելադան ամեն անգամ ջրով լցվելիս ինամքով ողողվում, մաքրվում էր: Ծանծ ասված բանը գոյություն շուներ այդ սենյակում, ուր ներքնատան մի տեսակ ծանր զովություն էր տիրում: Հաճախ կարելի էր տեսնել միայն մի որևէ հոթիս, որ դուրս գալով հայտնի չէ որտեղից՝ լույսից վախեցած վազում էր թախտի տակը մտնելու, կամ մի նամաճիճու, որ տրիկալով ցած էր ընկնում առաստաղից մեջքի վրա և սպիտակ փորը վերև արած երկար ժամանակ ոտները բալդի-բալդի էր անում, մինչեւ որ աջողում էր շուր գալ, և ծանր ու բարակ, կարծես խոր մտածմունքի մեջ, սկսում էր ուր-որ գնալ:

Ամառվա տոթ երեկո էր: Օդն այնքան անշարժ էր, որ պատուհանների վար թողած վարագույրներն ամեննեին չէին շարժվում: Անանը նստած էր հատակին մի մի վրա և երեխային վեր էր կացնում օրորոցից: Նա դեռևս շատ ջահել կին էր, հազիվ բասն տարեկան, լիթ հնամաշ դերիայով և գլխին մաքուր, սպիտակ աղլուի փաթաթած: Կազմվածքն այնքան նիհար էր, որ պարզուու էին թիակների սուր ծայրերը, որոնք դուրս էին ցցվել բարակ դերիայի տակից և մեջքի վրա, վերեկից ներքեւ, տաշտանման մի փոս էին գոյացրել: Մի տեսակ սարսափի արտահայտություն կար նրա տեղ-տեղ կարմրատակած, տեղ-տեղ կապտած և տեղ-տեղ ուուած դեմքի վրա, մանավանդ տարօրինակ կերպով շռած-քարացած աշքերի մեջ, որոնք կարծես ծայրահեղ ապուշ տարակուսանքով հարցնում էին շարունակ «ինչո՞ւ, ինչո՞ւ...» ու ոչ մի տեղից պատահան չէին ստանում:

Լուս ու մունջ առավ երեխային, դրեց զոգը և սկսեց հագցընել: Երեխան ծիծաղկոտ աշքերով նայում էր նրա քարացած դեմքին և, ինչ-որ թոթովելով, կարծես քնքշանք էր խնդրում մորից, բայց մայրը կարծես չփուեր, թե ինչ է քնքշանքը: Սակայն, երբ երեխան փամփլիկ ձեռքը մեկնեց և սուր եղունգներով բըռնեց նրա քթից, նրա դեմքի վրա ժպիտի նման մի բան երեաց. Նախ համրութեց երեխայի ձեռքը, գլխի մի թեթև շարժումով քիթն ազատեց նրա ձեռքից, հետո խոնարհվեց և շրթունքը ամուր ու կաթողին սեղմեց նրա թիւլիկ այտին: Բայց և այնպես սարսափը քարացած էր նրա դեմքի վրա և աշքերի մեջ:

Ներս մտավ մի կին միջին տարիքով, սև հագուստով, կարմիր, քրտնած դեմքով, մի սև շալ ձեռքին: Ամբողջ թաղում և թաղի սահմաններից էլ դուրս նա հայտնի էր գիծ-Հոռոմսիմ անունով: Եվ իդուր չէր, որ վաստակել էր այդ անունը: Կիսախելազարի մեկն էր, վերին աստիճանի շար և կովարար. օր չէր անցնի, որ մեկի հետ չկովեր— ով ուզում է լիներ այդ մեկը՝ հարազատ, հարեւան թե անծանոթ: Տարին տասներկու ամիս անեծքներ էին միայն, որ թափվում էին նրա բերանից: Անիծելիս շատ անգամ կատարյալ բանաստեղծ էր զառնում. այնպիսի հզոր ու ազդու, երբեմն և կոնչ բերանին անսազ անեծքներ ու հայնոյանքներ հորինում, որ ոչ ոչ մի տեղ չէր լսել: Եվ ամբողջ թաղը սարսափում էր նրա բերանից: Թաղական ոստիկանն անգամ, երբ հա-

ցնանները գնում էին գիծ-Հոռոմսիմից գանգատվելու, ձեռքը թափ էր տալիս և հեռանում:

Թաղում դեռ կային ուրիշ մի քանի հայտնի կովարար կանայք ևս, բայց գիծ-Հոռոմսիմը վաղուց արդեն տվել անցել էր ամենքից, թե՛ իր ճարտար լեզվով, թե՛ անեծք-հայնոյանքով և թե՛ նույնիսկ ֆիզիկական ուժով, որին շատ անգամ դիմում էր թերանացի կովից հետո:

Ցածրահասակ, լղար, ծայր աստիճան արագաշարժ՝ տեղն ու տեղը կրակ էր գիծ-Հոռոմսիմը: Պստիկ, պլազան աշքերը զղային անհանգատությամբ այս ու այն կողմն էին դառնում շարունակ ծտի գլխի պես,— կարծես շարունակ կովի առիթ էր որոնում: Կովելիս նախ երկար ժամանակ լեզվակոխ ու անեծքակոխ էր անում համարձակ հակառակորդին, սկզբում հանգիստ, հետո արագորեն տաքանալով, վերջը հանկարծ կատվի պես վրա էր ընկնում նրան և եթե ազողում էր բռնել նրա մազերից, ձիգ էր տալիս բոլոր ուժով, իսկ եթե ոչ, սկսում էր կմշտել և ոլորել նրա մարմինը իր երկայն, չոր մատների սուր եղունգներով, որոնց գծած ստորակետներն արնակալում, ուուզում-կապտում էին և երկար ժամանակ չէին ջնջվում:

Գիծ-Հոռոմսիմը Անանի սկեսուրն էր:

\* \* \*

— Ը-ը, տափը դնեմ քեզ, տափը, ոնց որ փետացել ես էդ տափին,— մրթմրթաց նա մտնելուն պես, պստիկ, շար աշքերը ոլորելով հարսի վրա:

Անան այն աստիճան սովորել էր այդպիսի անառիթ անեծքների, որ մինչև անգամ չնայեց սկեսոր կողմը, այլ անտարբեր ու դանդաղ՝ շարունակում էր հագցնել երեխային:

Գիծ-Հոռոմսիմը շալը շպրտեց թախտի վրա, որի ժամանակ նրա արագաշարժ աշքերը հանկարծ մի վայրկյան կանգ առան պատուհանների վար թողած վարագույրների վրա:

— Աղջի, բա էդ քոռացած աշքերովդ տեսնում չե՞ս արեց մեր ա մտել— ասաց նա:— Ա՛յ, ոչ ունենամ քեզ պես հարսը, ոյ-չորանաս կպչես էդ տափից, ոնց որ շորացել կպել ես:

Ու անեծքները շարունակելով գիծ-Հոռոմսիմը բարձրացակ

թախնք, պատուհանների վարագույրները գցեց բաց փեղկերի գլխին, հետո ուզում էր իշնել, բայց մի բան մտաբերելով՝ արագ մոտեցավ թարեթին, ետ քաշեց վարագույրը և սկսեց մեկ-մեկ համարել թիթեղյա մատուցարանի վրա թիջի պարագաների կողքին դրված շաքարամանի միջի շաքարի կտորները Առավոտյան տնից դուրս գալիս շաքարամանի մեջ ճիշտ տասը կտոր շաքար էր թողել նա, բայց այժմ, համարելուց հետո, տեսավ երկու կտոր պակաս է: Ու ծտի նման ցած թուավ թախտից:

— Այ քեզ... այ, այ, այ...

Այս խոսքերով նախ երկու ձեռքով պինդ խփեց հարսի գըլթին, հետո ծայրահեղ կատաղությամբ ատամները սեղմած՝ ըսկըսեց սուր-սուր եղունգներով կմշտել նրա դեմքը, ձեռքերը, կողերը— ուր որ պատահեր. ընդամին, ամեն մի կմշտոցի հետ եղունգների մեջ բոնած կաշին ողորում էր և ձիգ տալիս:

— Ըը...— ցավից մղկտաց Անանը և, երկու ձեռքով ամուր գրկելով երեխային, խոնարհվեց նրա վրա:

— Առանց ինձ շայ ես խմում, հա՞... Այ քեզ... տասը կտոր շաքարից ութն ես թողել, ութ կտոր դառնաս դու... այ քեզ, այ, այ... շատ էժան ենք առնում, հա՞, որ քոռ ու փուէ ես անում, քոռանաս ու փճանաս դու... այ քեզ, այ, այ...

Ու սուր եղունգները դանակի պես ակոսում էին Անանի վտիտ մարմինը:

— Վըի՛, վըի՛...— մղկտում էր Անանը ցավերից գալարվելով, և նրա ձեռքերը մեքենայաբար ավելի ու ավելի էին սեղմում երեխային, և նա ավելի ու ավելի էր խոնարհվում երեխայի վրա: Իսկ երեխան սաստիկ ճշում էր նրա գրկին:

Գիծ-Հոռոմսիմի կատաղությունը գնալով սաստկանում էր երկու ձեռքերի սուր եղունգները կարծես անզոր էին նրա բոլոր բարկությունը թափելու նրան կատաղեցնում էր առանձնապես այն հանգամանքը, որ Անանը համարյա թե ծայն չէր հանում. Կարծում էր, թե ուրեմն հարսը բոլորը ցավ չի գում, մինչդեռ սիրտը հովացնելու համար ուզում էր, որ Անանը ճշար, աղաղակեր, լաց լիներ, օգնություն կանչեր, ուստի աշխատում էր փփել կամ կմշտել նրա մարմնի այնպիսի մի նրբագգաց տեղ, որ հարսը ստիպված լիներ վերջապես թարձրածայն արտահայտել իր ցավը: Բայց չէ, Անանը համառունեն ձախը փորն էր գցել և, նրա անջև խննարհված, գնակած հառաջանքներ էր միայն արձակում,

որ գիծ-Հոռոմսիմը հազիվ թե լսում էր իր կատաղած ծկլթոցների և երեխայի լացի մեջ:

Տեսնելով, որ խփելով և կմշտելով ոչինչ չի լինում, գիծ-Հոռոմսիմը պոկեց հարսի գլխից սպիտակ աղուխը, բռնեց նրա ցանցառ մազերի երկու հյուսերից մեկի ծայրից և ձեռքի ուժին թափով ձիգ տվեց հանկարծ:

— Ասա...— երկար ու սուր ճշաց Անանը և, սաստիկ ցավից աշքերը փակելով, ետ ընկավ մեջքի վրա: Նրա թուլացած ձեռքերը բաց թողին երեխային: Երեխան նրա դոգից գլորվեց ընկավ գետին և սկսեց ավելի ճշալ:

Հարսի սուր ճիշը, վերջապես, փոքր-ինչ հովացրեց գիծ-Հոռոմսիմի սիրտը. նա թողեց հարսի մազերը, վերցրեց երեխային և, շարունակելով անեծքներ թափել, հոգնած նստեց թախտի վրա ու սկսեց ձեռքերի մեջ օրորել երեխային, որ սուս կացնի: Նրա պստիկ, շար աշքերը դեռևս պլազում էին խելադարի կատաղությամբ, քրտինքը վրա էր տվել նեղ ճակատին. նա հեռում էր՝ երկար տեղ վազած մարդու նման:

Իսկ Անանը, աշքերը փակ, ընկած էր հատակին մեջքի վրա և նվում էր միալար, հազիվ լսելի ծայսով:

\* \* \*

Ամառվա երկարատև, անտանելի տոթ օրը նոր էր մթնել: Պառավ Հեղնարը և նրա երկու փոքրիկ թռոները — մեկը տղա, մյուսն աղջիկ — ծալապատիկ նստած էին թախտի վրա և հայտնի չէ՝ ճաշ թե ընթրիք էին ստում, որովհետև իրենք էլ զգիտեին ո՞րն է իրենց ճաշը և ո՞րը ընթրիքը: Կապույտ սուփրի վրա պլազում էր մի փոքրիկ լամպ, որ շնաբրած ապակու միջից պղտոր լույս էր սփռում նրանց հոգնատանց, քրտնած երեխներին: Նրանց կերածը փոան սկ հաց էր և կիսախակ մի ձմբրուկ, որի գույնը դժվար էր որոշել՝ սպիտակ էր, թե դեղին: Լամպի լույսն իր շուրջը հավաքել էր ահագին թվով մասը մժեղներ, որոնք պտույտ էին անում տաք ապակու շուրջը, շատերն այրվում թափվում էին ներքև, շատերն էլ կպչում թաց ձմերուկից:

Պառավ Հեղնարը ցամաքած, կոչ եկած մի կին էր դիմքի անհարմար խորշումներով: Հարատե շքավորությունն ու բախտի

ժանր՝ հարվածները ծովել էին. նրա մեջքը և իրենց անշնչնի կնիքը դրոշմել նրա գեմքին և թախծալի աշքերի մեջ։ Թոռները—քույրուն եղբայր—որբ էին և մնացել էին պառավ տատի խնամքի տակ։ Այդ երկու փոքրիկ երեխաներն էին, որ պառավ Հեղնարինառան եռանդ էին ներշնչում ապրելու և աշխատելու։ Բայց պառավ Հեղնարը մի ավելի մեծ վիշտ ուներ. այդ՝ երկու որբերի մեծ քուզ—Անանի վիճակն էր իր կիսախելազար սկսոր և նրանից ոչ պահաս վայրագ ամուսնու ձեռքից։

Պառավի մշտական պարապմունքը լվացարարությունն էր և հաց թխելը։ Շատ լվացք անելուց և թոնրի մեջ հաց կող տալուց նրա գեմքի և ձեռքերի կաշին եռացրած զրի և թոնրի կրակի մեջ մրկվել, չորացել, ճաքճել, մազաղաթ էր դարձել։ Լվացք անելիս փոքրիկ թոռներն օգնում էին տատին։ Մեկը փայտն ու տաշեղները խտտած, մյուսը կաթսան ուսած և լվացքի թարախը քարշ տալով առաջնորդում էին լվացքի ժամը կապոցը շալակած տատին դեպի գետափ։ Եվ այնուհետև, երբ տատը կիզիչ արևի տակ թարախի մոտ պազգած՝ ճմուռ էր լվացքը, նրանք ծակ տոլլով շուր էին մատակարարում մերթ կաթսայից թարախին, մերթ գետից, կաթսային։ Խսկ երբ պարապ էին մնում, աղջիկը դերիայի փեղերը շեքը հավաքած, տղան վարտիքը մինչև ազդրերը վեր բաշած՝ մտնում էին գետի վճիռ շուրը և լարծուն սալ քարերից ու խճից թումբեր կազմում։

Այդ երեկո էլ, ամբողջ օրը կիզիչ արևի տակ գետափին անցկացնելուց և լվացքը, կաթսան ու թարախը տիրոջը հանձնելուց հետո, նոր էին վերադարձել տուն և հոգնած ու քաղցած՝ հաց էին ուսում, որ շուտով քնեն և առավոտը վաղ-վաղ դարձյալ գործի գնան։

— Նանի, որ ուտես՝ կորիզն ինձ տու, — ասում էր թոռներից մեկը, ձմերուկի կորիզները հավաքելով իր առջև։

— Սուտ ա ասում, նանի շան, ինձ տու, — ասում էր մյուսը, նույնպես կորիզները հավաքելով իր առջև։

— Հրեղ, դու քիչ ունե՞ս, — ասում էր առաջինը։

— Թու ավելի շատ չչնե՞ս, — առարկում էր երեկորդը։

— Ո՞ւր ա, հը, ո՞ւր ա. շատ ըլի՛ քանն, էլի՛։

— Քսանն էլ կըլի, հըլա հարուրն էլ։

— Հա, ո՞նց չէ. հարուրը հրեղ քունը կըլի ու...

— Կե քիչ բասերաս մտեք, գլուխս ցավում ա, — բարկացավ տատն իրեն հատուկ բարեսրտությամբ։ Ցանի ի՞նչ եք անեն է կորիզի մեջ, որ ամեն հետ իրար միս եք կրծում։ Կեսը մեկից կտամ, կեսը մեկելիդ։

Պառավ Հեղնարը կորիզը երկու թոռների մեջ բաժանելու վրա էր, երբ հանկարծ ներս մտավ Անանը երեխան խտտին։ Մտավ շտապով, հուսահատ, վճռական քայլերով։

— Նանի, ախր իմ մեղքը ո՞նց ընկար, որ տարար ինձ էն դժոխքը գցեցիր, — բացականչեց նա լացակումած, երեխան գրեթե զցելավ թախտի վրա։ Քա՞մ եմ, երկա՞թ եմ, որ դիմանամ։ Աստոծ ինձ էլ մարդ ա ստեղծե՞լ, թի շուն...

Նա նստեց թախտի վրա և, սրտի փղձուկը չկարողանալով բռնել, սկսեց սաստիկ, ցնցողաբար հեկեկալ, գեմքը ձեռքերով ծածկած։

Նանն իր երկու պստիկ թոռներով կորիզն էլ մոռացավ, ամեն ըան էլ։ Սկզբում, երբ Անանը ներս մտավ այնքան անսովոր կերպով, պառավ Հեղնարը խիստ վախեցավ, բայց երբ Անանի խոսքերից իմացավ բանը, մնաց նստած տեղը ցամաքած, լուռ ու գշտահար։

— Էլ ի՞նչ արեց, աղջի, — հարցրեց նա։

— Չես գիտի՞ ինչ կանի, — արտասանեց Անանը հեծկլտանքի միջից։ Զանիս վրա էլ տեղ շմնաց, որ արինլիկ շարեց, էլ գլխիս վրա մազ շմնաց, որ շպոկեց, էլ գլխումս զուղ շմնաց, էնքան թակեց... մինչև ե՞րբ... Մի հոգի ունեմ, գե էն ա, մի անգամ հանի, պրծնեմ, էլի... թե չէ, էլ հալ կա՞մ, որ դիմանամ...։

— Այ, ոչ էր ըլել էն օրը, սկ օր էր մթնել էն օրն իմ գլխին, որ գու մտար էղ քարուքանդ տունը, — հառաչեց Հեղնարը։ Քու սարար ըլողի շանը կրակ ընկնի, ոնց որ կրակ ա ընկել իմ շանը։ Ախր էն գիծ սրտամեռն ի՞նչ ա ուզում քեզանից, որ լսենց կրծում ա միսդ, շունը կրծի նրա միսը։

— Ի՞նչ ա ուզում, — դառնությամբ արտասանեց Անանը, գըլիկ աղջուխի ծայրով սրբելով աշքերը։ էն ա ուզում, որ ասում

ա՞մի՛ ուտի, մի՛ խմի, մի՛ հազնի, մի՛ մաշի, հենց իմանաս մա-  
նանա ա թափվաւ ինձ հմար երկնքից:

— Հսօր էլի գծվե՞ց:

— Գծվեց թե ընենց... Առավոտը վեր կացավ, կորավ զնաց  
մեռելի թաղման, Չունքի ինքը չէր խմելու, շթողեց որ սամավար  
գցեմ: Յագորն էլ խո առավոտը լիսանում ա թե չէ, դրոգը լծում  
զնում ա, առանց շայ խմելու: Դե իմ գլուխը շհանդամը, շայի  
հմար սիրտս շատ էլ չի գնում, էս էրեխեն էր լաց ըլում, սոված  
էր: Չուտելուց ծիծս չորացել, կպել ա դոշիս: Դնացել, հարևանից  
մի շայնիկ ջուր եմ բրել, էրկու կտոր շաքար եմ գցել, հաց ըըր-  
դել, ուտեցրել, որ անջախ ձենը կտրել ա: Սաղ օրը կորած էր:  
Իրիկնապահին քելեխը զահրումար արած, հարրած-տրաքված  
տուն էկավ ու էկած-չէկած՝ հըլա մի լավ անըժքակոխ արավ, են-  
նա վրա ընկավ թարեքին: Տեսավ էրկու կտոր շաքար պակաս ա,  
խո գիտաս, շաքարն էլ ու ամեն բան էլ համբարած ունի տանը,  
ո՞նց թե, ասում ա, էրկու կտոր շաքար ես բանացրել առանց ինձ.  
ոնց որ մի կատաղած շուն՝ վրա պրծավ ու շանիս վրա մի սաղ  
տեղ շթողաց— խփեց, գգգեց, ծակծկեց... Զանս, որ բաց անեմ,  
շես կարա մտիկ անի, կասես կեծացրած շամփուրներով ղաղղղել  
են....

Փղծուկը նորից բռնեց Անանին, բայց նա կարողացավ զըս-  
պել իրեն:

— Մրանից ետք, որ սպանես էլ, նանի, ես էլ ընտեղ զնա-  
ցողը շեմ,— ավելացրեց դողդող, բայց վճռական ձայնով: — Կը-  
զնամ Թուոը կընգնեմ, կիսեղդվեմ, հոգիս սատանի փայ կանեմ  
ու ընտեղ շեմ զնա: Հերիք ա հոգիս հրես էկել, դեմ ա առել բը-  
կիս: Իմ մատաղ օրերը սև ու մութ ա արել: Մի օր ուրախութին  
շեմ տեսել: Սաղ իրեք տարի, ոնց որ շամփորի վրա զնես խորո-  
վես, ընենց խրովել ա ինձ, ինքը շոկ, տղեն շոկ: Ինքը ծեծել  
շարդել, մսերս գգգել ա, հերիք չի, տղեն էլ հարրած, տրաքված  
էկել ա, պակասը թամամացրել: Ընչի՞, ի՞նչ եմ արել: Մի անլեզու  
հայվանի պես ընկած եմ ինձ հմար. տալիս են՝ ուտում եմ, շեն  
տալիս՝ ձեն շեմ հանում: Սաղ օրը հոգիս դուրս ա զալի Քորից  
ջուր կրելով, ձիու թրիքը հավաքելով, բակն ավելիով, տունը աե-  
զափորելով. նրանց կարկատաններն անելով, էլ ի՞նչ են ուզում:  
Շունը, որ շուն ա, շանե էլ էն շարշարանքը շեն տա, ընչ որ ինձ,  
բա մի շան զդար էլ շկա՞մ: Հրես էս ըրեխի հմար հոգի են տա:

լիս, բա սրա հմար էլ ա ինայեն, է՛, ինձ, Վո՛յ, աստոծ քան-  
թացականչեց Անանը,— արտասվալից աշքերը գցելով առաստա-  
ղին,— ի՞նչ կըլի, հոգիս առնես, պրծնեմ...

Նրա ձայնը բոլորովին դողդողաց և հանկարծ կտրվեց, գլու-  
խը ընկավ տախտակի պես հարթ կրծքի վրա և ուժգին հեկեկան-  
քը նորից սկսեց ցնցել նրա ուկրացած ուսերն ու մեջքը:

Փոքրիկ բույրն ու եղբայրը սուս արած նայում ու լսում էին  
նրան մանկական լուրջ հետաքրքրությամբ. մանուկը շոշ անելով  
մոտեցել էր սուփիրին, վերցրել ձմերուկի մի կլեպ և աշխատում էր  
կրծել իր նոր դուրս եկած պստիկ ատամներով: Խսկ պառավ Հեղ-  
նարը մնացել էր տեղն ու տեղը ցամաքած, շիմանալով ինչ ասի,  
որ գոնե մի քիչ միտիթարած լինի սկեսոր ու մարդու ձեռին այր-  
ված դաղված թոռանը: Վշտից և կարեկցությունից նրա պառավ  
գլուխն օրորվում էր սաստիկ և բարի աշքերը լցվել էին արժա-  
սութով:

— Աղջի, բտենց որ խոսում ես, սաղ զնաս կրակ ա ընկ-  
նում ախր,— ասաց նա լացակումած:— Ասում ես, թե էլ շես զնա-  
ընտեղ, եննա դրանով կպրծնե՞ս էն կապելու գժերի ձեռիցը:

— Զեմ պրծնի՝ ավելի լավ,— պատասխանեց Անանը, շա-  
րունակելով հեծկլտալ:— Սրանից ավելի ի՞նչ պտի անեն: Սպա-  
նե՞ն, թող սպանեն: Զանս էլ ա կդնշանա: Էլ խո ամեն օր դաղ-  
դղորիկ շեն ածի: Գիշերները շեմ կարում քնի՝ մղկտոցից,— ա-  
վելացրեց նա և արտասուրք նորից սկսեց գլուխով թափվել նրա  
աշքերից:

Պառավ Հեղնարն ալլես շկարողացավ դիմանալ: Նրա գլու-  
խը դադարեց օրորվելուց, հանգած աշքերը վառվեցին հուսահ-  
տական վճռականության կրակով և պառավ մարմինն սկսեց դող-  
դղորալ ներքին բուռն զայրությոց:

— Լա՛վ, մնա՛: Էլ շգնաս, էլ շգնաս էն կապելու գժերի տուն,—  
բացականչեց նա:— Ես նրանց աղջիկ շեմ տվել, որ համ քոծի պես  
բանեցնեն, համ էլ տակները գնեն, զարդեն: Մումի պես հալել մա-  
շել են, հալվի ու մաշվի նրանց զանը: Անտեր շես, ես հըլա շեմ  
մեռելի կաց, էլ շգնաս: Հալբաթ մի կտոր հաց էլ քեզ հմար կճա-  
րենք, որ...

Խոսքը չվերջացավ պառավի բերանում, գժված գոմշի պես  
ներս ընկավ մի ահագին մարդ, այնքան ահագին, որ ներս ընկ-  
նեցման պես կասես լցրեց իրենով այդ փոքրիկ խրճիթը: Անանի

Յարդն էր, դրեգապան Յագորը, իր դրոգի պես կուպիտ ու անտաշ, իր հսկա ձիու պես խոշոր ու զլապինդ: Գլխին գդակ չուներ, արևառ երեսն այնքան թավամազ էր, որ մորուքն ու բեղերը կասես խառնվել էին իրար: Կուրծքը բաց էր, կապույտ արխալուղով և աջնքան լայն շալվարով, որ եթե տոտերը հաներ անկրունկ երկարաձիտ լափշների միջից, կկարծեիր, թե կանացի շրջազգեստ ունի հագին: Կատաղությունից փայլում էին նրա ահագին աշքերը թավամազ, ու հոնքերի տակ, մեծ քթի պնչերը փռնչում էին հոգեած ձիու ուռնգների պես լայնացած:

Կինը նրան տեսնելուն պես վայրկենաբար դադարեց լալուց, վեր թռավ տեղից և վազեց կպավ պատին մեռելի պես գունատված:

— Ես քու...— գոռգոռաց մի սարսափելի հայհոյանք և Յագորը սպառնագին մի քանի քայլ արավ դեպի նա:

Պառավ Հեղնարը վեր թռավ տեղից և ուզեց կտրել նրա ճանապարհը, բայց նա ձեռքի մի թեթև շարժումով նետեց նրան նորից դեպի թախտը և իր հսկա հասակով գնաց կանգնեց վախից տերեկի պես թպրտացող կնոջ առջեւ:

— Վո՞ւ, շխիես, Յագոր զան... հոգուդ մեռնեմ, շխիես, զանը ցավում ա,— աղաշեց Անանը գլուխը երկարացրած և երկու ձեռքով պինդ գրկած իր ոսկրացած ուսերը:

— Չիփե՞մ, շխիե՞մ,— որոտաց Յագորը կատաղի աշքերը փայլեցնելով նրա վրա:— Բա ի՞նչ անեմ: Աշքերդ պաշե՞մ, որ էն պառավը քնած՝ թաքոն վեր ես կացել, էկել, տունն անտեր թողելի Փախել ես, հա՞մ, տանից: Զառը-շանդամը, թե՝ փախել ես.— շատ էլ դարդ շեմ անի քեզ հմար, էս էրեխի՞ն ուր ես բերել: Հը՞ հո շե՞ս ուզում էս սհաթին ճիվը ճիկից հանեմ, ճիճվի պես ճըխիմ ոտիս տակը: Հը՞ ինձ շես ճնանշո՞ւմ: Ըըը, ես քու...

Եվ մի ահագին բոռնցք, կարծես երկաթից ձուլված, ծանր ու դանդաղ, հորիզոնական ձևով գնաց ու եկավ դիպավ կնոջ կողքին:

Անանը մինչեւ անգամ շճաց, այլ միայն հանկարծ բերանը բաց արեց, ներս ծծեց օղը մի տարօրինակ հեռով, այնպես, ինչպես զրից հանած ձուկը, հետո օրորվեց և կամաց, փալասի պես, վար ընկավ գետին:

— Ա՛, քու սիրար շմեռնի, էդ ի՞նչ արիր,— ճշաց Հեղնարը սարսափած և վազեց օգնության:

Յագորը մի րոպե թավամազ հոնքերի տակից նայեց իր ոտքերի առջև թավալվող կնոջ շոած աշքերին, հետո, շարունակելով հայհոյանքները, մոտեցավ երեխային, որը շարունակում էր կըրձիկի ձմերուկի կլեպը, վերցրեց և առանց շտապելու դուրս գնաց:

Պառավ նանը խոնարհվեց Անանի վրա և սարսափից քարցավ:

Անանն ընկած էր գետնին՝ որկորը տարօրինակ կերպով վեր ցցած. շոած աշքերը նայում էին առաստաղին ապակու բութ փայլով. բաց բերանից արյուն էր հոսում. հերթ կարծես քարացել էր այնտեղ:

Կնոջն սպանելու համար մեղադրվող դրոգապան Յագորը նախնական քննության ժամանակ դատական քննչի հարցումորձին պատասխանելով՝ ասաց.

— Մի մուշտի տվի, է՛լի, ուրիշ բան խո չե՞մ արել:

1890

## ՍԵՎ ՓՈՂԵՐԻ ՏՈԿՈՍԸ

Սոր էր մթնել, որ պառավ Մարանը պատրաստվեց քնելու, թեկ գիտեր, որ մինչեւ կեսգիշեր շուռումուտ պիտի զար անկողնում լվաներից և պառավական անքնությունից: Դեռ բավական լույս էր, որ գցել էր տեղաշորը: Միշտ այդպես էր անում, որ գիշերվա մթան մեջ նեղություն շտա իրեն: Նավթ շուներ, որ վառեր:

Պառկելուց առաջ մոտեցավ խրճիթի պուճախին, ձեռքով շոշափեց և տեսավ, որ հավերը նստած են թառին, թեկ շատ լավ գիտեր, որ նրանք ամբողջ օրը հարեան հավերի և աքլորների հետ ամբողջ թաղը տակնուվրա անելուց հետո երեկոյան, սովորական ժամին, եկել թառել էին իրենց տեղը: Երբեք չէր կարող հանգիստ տեղաշոր մտնել, մինչեւ որ շատուգեր հավերի ներկայությունը, որովհետև նրա ապրուստի համարյա միակ աղբյուրն ու հույսը այդ երկու հատիկ հավն էր, որոնց սիրում և խնամում էր իր աշքի

լուսի պես Հավերը ծու էին աժում, պառավ Մարանն այդ ձվերը տանում էր թաղի մանրավաճառի մոտ և փոխում հացի կամ կուտի հետ: Այդպիսով հավերը համ իրենց էին պահում, համ պառավ Մարանին:

Հավերը նրա ձեռքի շոշափումից շարժվեցին և կոկոց արձակեցին: Այնուհետև պառավը կատարեց իր սովորական աղոթքը: Երեսն անկանոն կերպով խաչակնքելով՝ երեք անգամ ծունք դրեց խրճիթի խորդուրորդ հատակի վրա: Ինչ-որ մումուլով քիթ տակ, հետո հանգեց և պառկեց: Խոնավ անկողինը մի անախորդ սարսուու ազդեց նրա ցամաքած մարմնին: Նա կուշ եկավ և վերմակը բաշեց գլխին: Ու մտածունքները՝ տիսուր ու անմխիթարական, նորից պաշարեցին նրան:

Մենակ, մեն-մենակ էր ապրում պառավ Մարանն այդ կիսախարխուկ խրճիթում, որ մարդուց մնացած միակ հարստությունն էր: Վաղուց, շատ վաղուց էր մեռել մարդը, որ մի հարքեցող խարսակ էր Մեռել էր շատ հիմար կերպով: մի անգամ գիշերով լավ կոնծած, բայաթի երգելով տուն գալիս ընկել էր փողոցում գլխի ծածկը գլած արտաքնօցի հորը և մինչև հանելը խեղդամահ եղել գագերից: Զնայելով, որ կինը շատ քիչ լավ օր էր տեսել նրա ձեռքին, բայց և այնպիս երկար ժամանակ սուտ էր անում նրա համար և այժմ էլ առանց խոր հոգոց հանելու շէր կարողանում հիշել նրան: ախր ինչ է որ լիներ, էլի այն ժամանակ մի կենդանի շունչ կար մոտը, թեև ծեծ ու հայնոյանքով— բայց պահող-պահպանող ուներ:

Ճիշտ է, այժմ ուներ մի որդի, բայց նա էլ փուճ-փճանալու մեկն էր, գոյ ու ջիրգիր, որ օրերով ու շաբաթներով տան երես շէր տեսնում, մորը շէր նայում, այնպիս որ եղած-շեղած՝ մեկ էր:

Որդու փճությունը թունավորել էր պառավ Մարանի առանց այն էլ թշվառ կյանքը: Թանի-քանի անգամ արցունքն աշքերին փորձ էր արել խրատելու Արտեմին, որ հեռանա վատ ճանապարհից, մի գործի կպչի, պսակվի, օրինավոր տուն ու տեղ դնի, օրինակ էր բերում հարեան Օսանի տղա՛ թարախ ման ածող Յականին, որ նրա հասակակիցն էր և կարգին ընտանիք էր պահում, բայց հենց առաջին խոսքի վրա Արտեմն այնպիս շոել էր նրա վրա իր աշարկո: աշքերը, այնպիս բղավել նրա վրա, որ խեղճ պառափն իսկույն ճայնը փորէ էր գցել:

«Ա՞ն, որդի, որդի...— հառաջեց պառավ Մարանը և շուռ

եկավ մյուս կողքի վրա:— Էս հավերն էլ շունենամ, յարաք ի՞նչ կլի իմ շարեն»:

Օրամեջ կամ երկու օրը մի անգամ վերցնում էր հավերի ածած ծուն և գնում թաղի մանրավաճառի մոտ, որը զանազան մանրութիւն և մրգեղենի հետ հաց էլ էր ծախում, օգտվելով այն հանգամանքից, որ թաղում հացիթուն չկար:

— Բաղդո ջան, էրկու ձվի հաց տա՞ս,— ասում էր նա խընդրական եղանակով:

Մանրավաճառը ձվերը մեկ-մեկ շարժում էր ականջի մոտ:

— Էս մեկը լակ ա, Մարան նանի, — ասում էր նա կատակով:

— Վո՞ւ, չէ, Բաղդո ջան, ըսօր են ածել: Ես ըսկի լակ ձու կունենա՞մ:

— Մարան նանի, ի՞նչ կանես, որ հավերիդ ձվամանը չորանա, — շարունակում էր կատակ անել մանրավաճառը, մի ֆունտ հաց կշռելով:

— Վո՞ւ, մի՛ ասի, Բաղդո ջան: Աստոծ ոչ անի. Էլ իմ պահողն ո՞վ կըլի:

— Բա տղեդ:

— Տղիս էրեսը սեանա, ըսկի տեսնում ե՞մ, որ:

Սակայն, իհարկե, տարին տասներկու ամիս երկու հավի ձվով ապրել շէր կարելի: Աշխարհը շէր չորացել: կային բարի հարևաններ, որոնք երբեմն-երբեմն շէին խնայում իրենց տաք կերակրից նրան էլ բաժին հանելու, կամ ուրիշ բանով օգնելու: Խնքն էլ, որքան ներում էին ուժերը, բուրդ էր մանում, առավոտից մինչև երեկո ածխավաճառի խանութում նստած՝ ածուխի մրոտ, ծակծկած տոպրակներ կարկատում:

Հավերից մեկը շարժվեց և բնաթաթախ մի խուզ կոկոց արձակեց:

— Ձա՞ն, ջա՞ն, մատաղ, ջա՞ն,— արտասանեց պառավ Մարանը և հորանչեց:

Կեսպիշերից բավական անցել էր:

Երկար տանչզգելուց հետո Մարանը նոր էր խոր քնի մեզ-ընկել, երբ հանկարծ ինչ-որ դրույթն գոյց արթնացրեց նրան: Վախենած բարձրացրեց գլուխը և նայեց մթության մեջ:

Գուըր ծեծում էին, ըստ երևութին, բռունցքով ու ոտով, և այնպիս պինդ, որ դռան հետ խրճիթն էլ ամբողջ շարժվում էր տեղից:

— Ո՞վ ա,— կանչեց պառավը լեղապատռու:

— Զահրումար ու չոռ ա, բաց արա, էլի՛,— լսվեց տղամարդու մի հուժկու ձայն, և խրճիթը նորից դրնգաց դռանն իշեցրած ոտի մի կատաղի հարվածից:

— Արտեմ... Ա՛յ քու սիրտը շմեռնի, լեղիս ճաքեց,— ասաց պառավը, վեր կացավ, մթության մեջ խարխափելով մոտեցավ դռանը և, հազիվ գտնելով սողնակը, բաց արավի:

Գարնանային պարզ գիշեր էր Դռան առջև կանգնած էր մի պարթե երիտասարդ, գդակը ձեռին:

— Էսքան թրիկիթրիկացնում եմ, չես իմանո՞ւմ,— գոռաց նա մոր վրա:

— Քնով ի անցել, Արտեմ զան,— խեղճ-խեղճ պատասխանեց մայրը:

— Ա՛յ, ընենց քնով անցնես, որ էլ վեր չկենաս,— ասաց Արտեմը և, լայն շեք տալով, ներս մտավ:— Ճրագ վառի,— հրամայեց նա:

— Նավթ շունենք, Արտեմ զան:

— Բա մթնում ես նստո՞ւմ:

— Բա ի՞նչ:

— Գիծ ա անտեր մունդոիկը: Տո, էրկու գրոշի նավթն ի՞նչ ա, որ չես առնում:

— Էրկու գրոշի տվողն էլ դու ես, որ չես տալի, ո՞րդիան առնեմ,— վրա բերեց պառավը մի քիչ վրդովված:

— Հավերդ սատկել ե՞ն, էլ ձու չեն ածո՞ւմ:

Պառավը հանկարծ վառվեց:

— Եքա տեղդ ըստեղ սարի պես կանգնած, անխոս թոշունքին ես ասո՞ւմ,— կանչեց նա զայրագին:— Մերդ եմ, հալից-շանից ընկած, տարի ա անց կենում, էրեսիս մտիկ չես տալի, էի մենձ սրտով դու ե՞ս: Ամոթ էլ ա քաշի, է: Հավերս ինձ հաց են տալի, դո՞ւ ինչ ես տալի, որ հըլա սատկացնում էլ ես:

— Դե, շատ մի ճղճղա, թե չէ, հը՛,— սպառնաց Արտեմը և մոտեցավ նրան:

Որդին հասակով բարձր էր մորից գրեթե կրկնակի: Պառավն իր գլխի վերն տեսավ մթության մեջ փայլող երկու ահարկու աշ-

քեր և օդի մեջ քարացած մի բռունցք: Միւլնույն ժամանակ նրա քթովը դիպավ գինու ծանր հոտը:

— Դե, ի՞նչ անեմ, Արտեմ զան,— ասաց նա նորից խեղճացած:— Սիրտս մղկտաց, որ...

— Սահսր,— գոռաց նորից Արտեմը:— Գնա տեղաշորս գցի:

Պառավը սուս ու փուս շտապեց նրա հրամանը կատարելու Մթության մեջ խարխափելով և տնքտնքալով մի կերպ գցեց Արտեմի անկողինը:

Արտեմը ձեռաց հանվեց և պառկեց: Պառկելաւն պես սկսեց խոմքացնել:

— Էլ՛, ես էլ կասեմ որդի ունեմ ու ապրում եմ, էլի, աշխարթի երեսին: Վայ իմ օրին, վայ՝,— հառաշեց Մարանը և նորից մտավ անկողին:

Ծեգը հեռու չէր: Փոքրիկ պատուհանի մութ ապակիները ըսկըսեցին որոշակի երևալ, խրճիթը սկսեց քիչ-քիչ լուսավորվել:

Հավերը շարժվեցին թառի վրա, թափահարեցին թեերը, սկսեցին կտուցներով քորել թեերի և կրծքի տակ, հետո զղներն երկարացրին դեպի ներքն, նայեցին դեսուդեն, ցնցելով մսեղ, կարմիր կատարները, և հանկարծ ահագին կոկողով ցած թուան, օդի տեղ ցանելով իրենց թափվող փետուրները:

Պառավը, որ լուսադեմին նորից քնով էր անցել, աշքերը բաց արեց, տնքտնքալով վեր կացավ և հագավ իր սկ լաթերը:

Հավերը մոտեցան նրան և սկսեցին ավելի բարձր կոկուալ:

— Հա՛, հա՛, ձեր աշքն էլ կարեմ, էս ա, տալիս եմ,— փընթփընթաց պառավը և ուզում էր մոտենալ կուտի տոպրակին, բայց հանկարծ կողմնակի մի հայացք ձգելով քնած որդու վրա, տեսավ վերմակը մի կողմ է ընկել և նրա մազոտ կուրճքը բաց էր մնացել: Մոտեցավ և զգուշորեն վերմակի ծայրը քաշեց նրա կրծքին:

Գնայելով հավերի բարձրածայն կոկողին, Արտեմը խոր քնած էր:

Մի քանի րոպեից հետո հավերը, կուտն արդեն կերած, ջուր խմած: ուզում էին դուրս գալ: Պառավը մեկ-մեկ տապ-տապ արեց, ճկուցրեց և վերցրեց տեսնելու՝ ձու ունե՞ն թե ոչ: Այնուհետեւ գուող բաց արեց և դուրս թողեց նրանց:

Օրն արդեն ճաշ էր դառել, որ Արտեմը զարթնեց: Անկողնի մեջ նստած՝ նա դեռ ճմլկոտաց, ճրթճրթացնելով թիկունքի և մեշքի ոսկորները, մատների խաղերը կոտրատեց, հետո ոտները կախեց թախտից և սկսեց ծանր ու բարակ հագնվել, անդադար հորանջելով:

— Չայ չունե՞նք,— հարցրեց մորը, որը դուրսը դռան շեմքին նստած, ի՞նչ-որ լաթ էր կարկատում:

— Հա, ոնց չէ,— հեզնեց պառավը, — Ճրեղ սամավարը քըլթքըլթում ա, չայ-շաքար էլ որ դրկել էիր, հրեն փտում ա թարեթում:

### Արտեմը ծիծաղեց:

— Բա որ ըտենց ա, նանի, ես, էս ա, գնում եմ մի գրվանքաշայ առնեմ, մի գլուխ էլ շաքար, թե գործի էլ չունես, մի բեռ էլ գործի:

— Տնազը քու գլխին զցի, քու,— պատասխանեց պառավը:

— Առավոտը հրեն Մարգարանք ին կանչել, որ մի թաս չայ խմեմ: Որ ամոթ շես քաշում, ի՞նչ ասեմ:

Արտեմը հռնքերը կիտեց, վեր կացավ, նախ մի, հետո մյուս ոտը դրեց թախտի վրա, խնամքով դարսեց երկարաճիտ չուստերի ժալերը, հետո վերցրեց խելազան և սկսեց երեսը լվանալ ուղղակի հատակի վրա, ոտներն իրարից հեռու դարսած: Երեսը գըրպանի աղլուկով սրբելուց հետո, զրպանից հանեց մի կոտրած սանրը, սանրեց մազերը, առանձին խնամքով ոլորեց ճակատի վրա թողած երկար խոպոպիկը, հետո առավ գդակը, թափ տվեց ձեռքով, ծուռ դրեց ծոծրակին և դիմեց դեպի դուռը: Դուան մոտ կանգ առավ հանկարծ և նայեց կարկատանի վրա կուցած մոր մեցքին: Ունորից տրամադրվեց կատակ անելու:

— Լավ, նանի, չայ խո շտվի՞ր, — ասաց:

— Գնա հրեն տրախահրը՝ չայ էլ կիմես, արադ էլ, — պատասխանեց պառավը, առանց գլուխը կարկատանից բարձրացնելու:

— Վա՛յ, նանի, նանի, գրողը քեզ տանի, — կանչեց Արտեմը ծիծաղելով, լայն շեք տվեց մոր վրայով և դուրս գնաց: — Հը, ի՞նչ

նս քիթ ու մոռւթի հավաքել, — ասաց, հանկարծ կանգնելով մոր առջեն, — ուզո՞ւմ ես, լոթիանա փող բաշխեմ:

— Փող ունես, տար արգանով քեփ արա, ինձ խի՞ կտաս, — քրթմնչաց պառավը միշտ գլուխը կախ կարկատանի վրա:

— Հայ գիդի, նանի, աշքդ ոնց վախեցել ա: Այ թե չեմ տա: — Արտեմը ձեռքը կոխեց սև սատինի արխալուղի գրպանը և սկսեց դրամները շխկչխացնել գրպանի մեջ, պառավի ախորժակը գըրգուելու համար: — Հը, տա՞մ:

Դրամների շխկչխոցը, հիրավի, իր մոգական աղդեցությունն ունեցավ պառավի վրա: Նա կարկատանը մի կողմ դրեց և ձեռքերն աղերսագին մեկնեց դեպի որդին:

— Վույ, տու, տու, Արտեմ ջան, քեզ մատաղ ըլի նանք:

Արտեմը մի բուռ սև ու սպիտակ դրամներ հանեց գրպանից և այս անգամ սկսեց շխկչխացնել բուռն մեջ:

— Տա՞մ, ասում ես:

Պառավը մի քիչ բարձրացավ նստած տեղից՝ ձեռքերը միշտ պարզած դեպի որդին:

— Արտեմ ջան, արկիդ մեռնի նանը. Հենց իմանաս ժամի դուռնը նստած մի աղքատ եմ:

— Լավ, որ տամ, ի՞նչ կանես:

Պառավը շտապով վեր կացավ:

— Այ ինչ կանեմ, Արտեմ ջան: Առաջ մի քիչ բուրդ կառնեմ, թել կմանեմ, գուլպա կգործեմ քեզ հմար էլ, ինձ հմար էլ եննա սապուն կառնեմ. կլվանամ քու փոխնորդն էլ, իմն էլ: Եննա նազի կառնեմ, որ գիշերը գաս՝ վառեմ: Եննա չայ-շաքար կառնեմ, մի քիչ էլ գործի, որ առավոտը վեր կենաս, չայ խմացնեմ: Եննա...

— Վա՛-վա՛, է, չհատա՞վ, — բացականչեց Արտեմը:

— Ո՞նց հատնի, Արտեմ ջան, քիչ պակասություն ունե՞նք. — ասաց պառավը: — Հըլա հավերի կուտը չասեցի: Բա պանիրը. բանի վախտ ասրտով պանիր եմ ուզում:

— Պանիր չէ, հա՛, բիշկեթ-կատլետ չես ուզի՞, — ասաց Արտեմն այս անգամ արդեն առանց կատակի: — Անտեր մունդոիկ, զորթ խո փող չեմ կտրում: Դե, փեշդ բաց արա ու ընչ որ կտամ, ձեռ չհանես, թե չէ...

Պառավը մի բայլ մոտեցավ որդուն և փեշը գեմ արեց՝ աշքիրն անհամբեր տնկած նրա ձեռորին:

Արտեմը բաց արեց բուռը, մեկ-մեկ չոկեց սպիտակ դրամ։ ները, գրաբանն ածեց և մնացած սև փողերը թափեց մոր փեշը։

— Հը՛, էլ շասես, թե փիս տղա ունես։

— Վո՛ւ, չէ՛, չէ՛, լավն ես, լավը, Արտեմ ջան, Վո՛ւ, արեղ ապրի, Արտեմ ջան։ Վույ, խնդաս ու մխիթարվես, Արտեմ ջան։

Պառավը նորից նստեց դռան շեմքին, գոզը բաց արեց և սկսեց համբել դրամները։ Ուրախությունից ձեռքերը դողում էին։

Արտեմն ինքն ուրախացել էր նրա ուրախության վրա, նա պպեց մոր առջև և ժպտերես նայեց նրա դեմքին։

— Հը՛, տվի՞, թե չէ՛, — հարցրեց։

— Տվիր, տվիր, Արտեմ ջան։ Վո՛ւ, դու շատ ուրախանաս, ոնց որ ինձ ուրախացրիր։

Արտեմը ծիծաղեց, թեթևակի խփեց մոր ծնկանը, վեր թռավ պպած տեղից և հեռացավ լայն ու շափավոր քայլերով, որի ժամանակ նրա շալի շուխայի ծանր փեշերը ծափ էին տալիս երկարաճիտ շուստերին։

\* \* \*

Անցավ մոտ երկու շաբաթ։

Պառավ Մարանն ապրում էր էլի այնպես, ինչպես առաջ։ Արտեմի տված փողերն ինչքան էլ որ ինայողաբար էր ծախսել, էլի շատ շուտ էին հատել։ Պառավը զարմանում էր, որ այդ փողերով ոչ մի փոփոխություն չէր կատարվել իր կենցաղի մեջ։ Նրա ստացած միակ շոշափելի օգուտն այն էր, որ այդ ժամանակամիջոցում տասը-տասնհինգ ծու էր ետ գցել թուխս նստեցնելու համար։

Մի օր Արտեմը կրկին եկավ։ Սովորաբար, երբ տունը միտն էր գցում, գալիս էր կեսգիշերից անց, շատ անգամ լուսադեմին, բայց այս անգամ այնքան վաղ եկավ, որ պառավ Մարանը դեռ անկողին չէր մտել։ Այդ բանը խիստ զարմացրեց պառավին։

— Արտեմ ջան, հիվանդ խո շե՞ս, — հարցրեց նա անհանգստացած։

Արտեմը շպատախանեց։

Մարանը խրճիթի կիսախավարի մեջ աշխատեց լավ դիտել որդու դեմքը, բայց ոչինչ չկարողացավ տեսնել, բացի այդ դեմքի խավար ուրվագծից։ Շտապեց լամպը վառել։ Հետո մոտեցավ որդուն։

— Արտեմն երեսնիվեր պառակել էր թափետի վրա, ձեռները գլխի տակ դրած։

Պառավը խոսարհվեց նրա դեմքի վրա և վախեցավ։ Արտեմի դեմքը սաստիկ մոռայլ էր, աշքերը պլազում էին. երեսում էր, որ խիստ վատ տրամադրության մեջ էր։

— Արտեմ ջան, — շնչաց մայրը։

— Հը՛, — հանկարծ մոնշաց Արտեմն իր հուժկու ձայնով և աշքերը ոլորեց մոր վրա։

— Ընչի՞ ես ըտենց, — հարցրեց պառավը երկյուղով։

— Մի՛ խոսացնի, թե չէ՛ էս շգրած սրտովս մի քացի կտամ, որ տեղն ու տեղդ բանհոգի կըլես, — արտասանեց Արտեմը հանդարտ, բայց սարսափ ազդող ձայնով և նույնիսկ բարձրացրեց ոտքը։

Մայրը կծկվեց և սուս ու փուս հեռացավ։

Տիրեց երկարատև լուսություն։

Ճրագի լուսից և խոսացության ձայներից հավերը զարթնել էին. Թառի վրա նստած, պլզել էին իրենց կլորիկ աշքերը և ըստ երեսութին, հետաքրքրված ճրագի անսովոր լուսից, զեսուդեն էին նայում։

Պառավը, թախտի ծայրին կուշ եկած, մտածում էր, թե ի՞նչ էր պատահել Արտեմին։ Հիշեց անցյալից մի դեպք, երբ որդին նույն տրամադրությամբ տուն էր եկել. բայց այն ժամանակ պատճառը չծածկեց. ասաց, որ զումար խաղալիս շատ փող էր տարվել։ Երկի հիմա էլ այդպիսի մի բան կար, — մտածեց պառավը և ուզեց մխիթարել որդուն։

— Արտեմ ջան, նավթը քու բաշխած փողովն եմ առել, ա՛յ, — ասաց նա, տեսնելով, որ որդին մտածմունքի մեջ խորասուզված, մոռայլ հայացքով անթարթ նայում է լամպին։

Արտեմը ձայն շնչանց։

— Քանի՞ վախտ ա առել եմ, հա՛. քեզ հմար էի պահում, որ գաս՝ վառեմ, — ավելացրեց պառավը։

Արտեմը դարձյալ լուռ մնաց։

— Քիչ շայ-շաքար եմ առել, առավոտը շայ կիսմացնեմ, — նորից խոսեց պառավը։

Արտեմն անշարժ պառկած էր միշտ միկնույն դրության մեջ։ Կարծես չէր էլ լսում մորը։

Պառավի սրտին դիպավ, որ որդին ոչ մի ուշադրություն չի դարձնում իր խոսքերին։

— 85 —

— թե քունդ տանում ա, ասա տեղաշորդ գցեմ,— ասաց նա նեղացած, երկար լոռվիժյունից հետո:

Արտեմը պատասխանելու տեղ մութաքան քաշեց գլխի տակ, կուռք գցեց երեսի վրա, և մի քանի րոպեից հետո լսվեց նրա խը-ռմմագոցը:

Արաբանը հին, կեղտոտ մթելով ծածկեց նրան զգուշորեն, որ քունը չխանգարի, լամպը հանգցրեց, կատարեց իր սովորական աղոթքը և անկողին մտավ:

«էղ ա, փողերն էլի տանուկ ա տվել», — վճռեց նա մտքումը դարդակալած: Այնինչ՝ հուզ ուներ, թե որդին առավոտյան նախորդ անգամվա պես փող կտա իրեն:

Սեզը նոր էր բացվում, փողքիկ պատուհանի մութ ապակիները նոր-նոր սկսել էին պարզվել, երբ հավերի օտարութի կոկոռը հանկարծ զարթեցրեց պառավին: Նա գլուխն արագ բարձրացրեց և նայեց թառի կողմը. այնտեղ մթնշաղի մեջ նրա քնաթաթախ աշ-քերին հազիվհազ նշմարելի եղավ մարդու մի սկ ուրագիծ:

— էկ ո՞վ ես,— աղաղակեց պառավը սաստիկ վախեցած և մերենաբար նստեց անկողնում:

Մարդու ուրվագիծը շարժվեց դեպի դուռը: Լսվեց սողնակի շրինկոցը: Դուռը բացվեց: Մարդու ուրվագիծը մի վայրկյան երե-վաց վաղորդյան դալուկ լույսի մեջ և շրացավ: Դուռը բաց մնաց: Հավերի կակոռը լսվեց դրսից և հանկարծ լուց:

Պառագին թվաց, թե երազի մեջ է: Նա վրա ընկավ և դողով ձեռքերով սկսեց շոշափել Արտեմի պառկած տեղը թախտի վրա: Տեղը դատարկ էր: Խելագարի պես թռավ թախտից և վագեց դեպի թառը: Թառը նույնպես դատարկ էր:

— Վա՞յ, քու սիրու շմեռնի, Արտեմ, էս ի՞նչ արիր, — ճշաց պառավը և, շտապով գերիան գցելով գլխին, դուրս ընկավ:

Ու հեալով, անդադար սայթաքելով սկսեց վագել ամայի փո-ղոցի երկարությամբ, առանց զգալու, որ սուր-սուր խճաքարերը ծակում են իր շորիկ-մորիկ մերկ ոտները: Հետո, այլևս չկարո-ղանալով շունչը ետ բերել, կանգ առավ, նստեց հենց այստեղ, փողոցի մեջտեղը, և սկսեց թակել ծնկներն ու լալ առանց արտա-սուրների:

Արտեմը շքացել էր:

**Ծուշանը** — մի պստիկ, լզար կին — կուշ էր եկել իրենց տան անկյունում: Այդ տուն կոչվածը մի բավական մեծ խրճիթ էր, որ երբեմն տիրոջ կթան կովերի համար գոմի տեղ էր ծառայում: Պատերն այնքան խոնավ էին, որ քիչ էր մնում զուր կաթեր: Գետ-նից բավական բարձր գտնված մի հատիկ լուսամուտի շորս ապա-կիներից երկուար կոտրված էին և տեղը թղթեր էին կպցրած: Ներսն այնքան մութն էր, որ ցերեկվա լույսից մտնողը պետք է մի քանի րոպե սպասեր, մինչև որ բան տեսներ: Սակայն դրսից լույ-սը մտնելուն քիչ չէին օգնում և հին փտած դռան տախտակները, որոնք ժամանակի ընթացքում շորանալով՝ մի-մի մատ հեռացել էին իրարից և իրենց արանքներից լույսի զուգահեռական գծեր էին շպրտում մինչև հանդեպի պատր:

Աշուն էր: Ցուրտ քամին շրինշրիսացնելով շարժում էր դուռը և սվավալով ներս մտնում տախտակների արանքներից: Լուսամու-տի երկու կոտրված ապակու տեղ կպցրած թղթերն ուղղում փրկում էին դեպի ներս, դողում էին և ապա հանկարծ դեպի դուրս փըխըլ-վում շառաչյունով:

Ծուշանն ամբողջ մարմնով դողալով կուշ էր եկել հնամաշ լաթերի վրա և վերմակի նմանություն ունեցող մի ինչ-որ բան էլ վրան էր առել: Նա տնքում էր և քամու կատաղի ոռնոցի ու դռան շրինշրիսոցի մեջ հազիվ էր լսվում նրա տնքոցի ձայնը. երբեմն էլ շղածգաբար կծկվում էր, ատամները պինդ հուպ տալիս իրար ու հանկարծ բերանը լայն բանալով՝ երկարատե սուր ճիշ արձա-կում:

Նա երկունքի մեջ էր: Հազիվ երեսուն տարեկան, արդեն շորս որդի ուներ և մեկն էլ շուտով լույս աշխարհ պիտի գար: Մամ հա-մար, ինչի՞ համար: Ի՞նչ օրումն էին արդեն եղածները, որ մեկն էլ պիտի ավելանար:

Տավար քշող էր Ծուշանի մարդը: Հասաբները Սազում տա-վար ու ոշխար էին առնում, տալիս էին Կարապետին, և նա քշում էր դեպի սպանդանոց, որտեղից այնուհետև մորթած մսերը ֆուր-դոնի մեջ ածած, ինքն էլ վրեն բազմած՝ բերում հանձնում էր տերերին: Կամ թե հավատացյալ մարդիկ մատաղացու էին առ-

նում ու տալիս նրան, որ տանի մորթի կամ մատաղ անողի տանը, կամ որևէ սրբի դռանը: Օրերով և շաբաթներով տան երեսը չէր տեսնում Կարապետը, այնպես որ ընտանիքի ամբողջ հոգու Ծուշանի վրա էր մնում: Նա թել էր մանում, հինած գործում, տոպարակներ կարում, պարսիկ վաճառականի խանութում նուշ ու ընդուզ կույզ կոտրում: Բայց և այնպես նրա վաստակածն այնքան քիշ էր, որ հազիվազ բավականանում էր տան վարձը տալու և ցամաք հաց առնելու:

Կարապետի ընտանիքը դառն օրեր էր քաշում մանավանդ ձմեռը, երբ գործ հազիվ էր ճարվում, երբ հարկավոր էր տաք հագուստ, վառելիք, մի քիչ լավ սնունդ: Զմեռն այնպես անցնում էր, որ նրանց քուրսին գրեթե երբեք չէր տաքանում: Ինքը Կարապետը մի հին քուրք ուներ և կողովում էր մեջը, բայց կնոջ ունեցածը լիի մի դերիա էր հազար տեղ կարկատան գցած և մեկ էլ մի ցեցակեր շալ, իսկ երեխաները տկոր, շփլախ վնգվնգում էին ցրտից կապտած: Նրանց կերակուրն էլ երբեմն սպանդանոցից Կարապետի բերած տավարի մսազերծ ոսկորներն էին լինում, որ նրանք խաշում և խպշում էին շուրբ:

Չորս երեխաներից ամենամեծը տղան էր, մոտ տասը տարեկան: Հայրը սկզբում նրան մանրավաճառի մոտ աշակերտ տպեց: շաբաթը բերում էր 20 կոպեկ, բայց շատ չկացավ, փախավ և սկսեց պարապ-սարապ թրե գալ իր նման փոքրիկ փողոցային տղաների հետ: Հոր ծեծը շազդեց նրան, տնից էլ փախավ, և ծնողները չին իմանում ո՞րտեղ է նա օրը մթնացնում և գիշերը լուսացնում: Վերջապես հայրը մի անգամ տեսավ, որ մի ոստիկան նրա թիւից բռնած տանում էր ոստիկանատուն: Նրան բռնել էին գոզության համար:

Սեղրակը (այդպիս էր Կարապետի որդու անունը) սփրթնել, թուքը ցամաքել էր, բայց ոստիկանի հետ գնում էր համարձակ քայլերով, տղամարդու պես: Նա տեսավ հորը, բայց ձայն-ծպտուն չհանեց:

— Հախտ ա, շան որդի, — ասաց հայրը և անցավ գնաց:

Այդ րոպեին նա, մի կարծ ճիպու ձեռքին, մի քանի ոշխար էր քշում:

Աշնան քամին ոռնում էր դուրսը: Շուշանը տնքում էր ներսը: Երեխաներից երկուսը, — մեկը՝ երեք, մյուսը շորս տարեկան, — ծալապատիկ նստած էին խոնավ գետնին փոած մի հնամաշ խալիչի: Վրա և ոտով-գլխով ծածկվել էին հաղար ու մի ծակուծուկ ունեցող մի հին, դեղնած յափնջու տակ: Այդ յափնջին թուխս նստած հավի գեր էր կատարում, իսկ նրա տակ ցրտից պատսպարված երեխաները ճուտերի էին նման: Տեղը տաք էր, և նրանք խաղում էին իրար հետ: յափնջու տակից լսվում էին անհոգ քչփշոցի և երբեմն ծիծաղի ձայները: Քամու կատաղի ժամանակ, երբ դուռը սովորականից ավելի էր շխչխկում, նրանք հանկարծ գլխներից ետ էին քաշում յափնջու ծայրը, նայում էին դուանն այնպիսի հայացքով, որ կարծես մարդու էին սպասում և տեսնելով, որ մտնող չկա, ցրտից սարսուլով յափնջին նորից գլխներին էին քաշում և շարունակում իրենց մանկական քչփչոցը:

Դուռը բացվեց և շտապով ներս մտավ ոտարորիկ, զիսարաց, զզզզված մազերով 7—8 տարեկան մի աղջիկ: Մառը քամին խանձել էր նրա դեմքը, ձեռքերը և մերկ ոտները կապտել էին: Շալակին մի տոպրակ ուներ: Մի ոտը գետնին դիմհար տալով, ցրտից սառած ձեռքով հազիվ կարողացավ քամու ուժգին հոսանքի զեմ ետ զնել դուռը և ներսի սողնակը ցցել:

Ցափնջին նորից շարժվեց, և փոքրիկներն ուրախական ծղըրտոցով ողջունեցին իրենց քրոշ գալուստը: Նույն րոպեին յափնջին մի կողմ թռավ, և արդեն ոտի վրա էին երկու գրեթե մերկ երեխաները ուրախ, երշանիկ դեմքով: Ցուրտը մոռացան նրանք, որովհետև հացի հոտ առան:

— Վայ, շանս-մանս, Սոնեն հաց ա բերել, — ուրախությունից պար եկավ մեծը:

— Վայ, ձանս-մանս, Սոնեն հաց ա բերել, — կապիկ պես կրկնեց փոքրիկը:

Սոնեն դուռը փակելուց հետո շտապով մոտեցավ մորը և տոպրակը շալակից վար բերեց:

— Այ, հաց էլ տվին, պանիր էլ, — ասաց նա այնպիսի ուրախությամբ, որ կարծես շալակով ոսկի էր բերել:

Բայց և այնպես նրա ատամները ցրտից զարկվում էին իրար

Մայրը տանջալից հայացքով նայեց նրան:

— Տուր էղ լակոտներին՝ ուտեն, — ասաց նա և նույն բռպեկին սոսկալի ցավերից կուշ ու հուպ եկավ, հազիվ զսպելով իրեն, որ շնչաւ:

Բայց Սոնեն կամեցավ նախ տաքացնել սառած ձեռները: Եվ մինչդեռ նա մղկտացող տասը մատների ծայրերը կպցրել էր շըրթունքներին և բերնի գոլորշին արտաշնչում էր նրանց վրա, երկու ուակոտները հափշտակեցին նրա ոտների առջև դրված տոպրակը և հավաքական ուժով քարշ տվին դեպի յափնչին: Քույրը կատվի մի թոփչքով հասավ նրանց հետևից և պինդ փամփաշեց նրանց գլխին: Փոքրիկն սկսեց բարձրածայն լաց լինել, իսկ մեծը պոռշ արեց, բայց զսպեց իրեն:

— Այ, կտորվեք դուք, կտորվեք, — ուժասպառ, հազիվ լսելի ձայնով անիծեց մայրը: — Աղջի, ի՞նչ ես ուզում էղ լակոտներից:

— Բա իի՞ շեն մուշափ տալի, — հանգիստ նկատեց Սոնեն, տոպրակը դրեց խալիչ վրա, ծալապատիկ նստեց առջեւ և բերանը բաց արեց: Տոպրակը կիսով շափ լիքն էր հացի կծմծած շոր կտորտանքով և երեսին պանրի դեղնած, շորացած փշրանք էր թափված: Փոքրիկը լոեց և մյուսի հետ գնաց նստեց տոպրակի առջեւ:

— Զեր շտաք, թե չէ, կսպանեմ, — սպառնաց քույրը և վեր կացավ, որ թարեքից մի քրեղան վերցնի պանրի փշրանքը մեջն ածելու:

Բայց քաղցած երեխաները շվախեցան այդ սպառնալիքից. հազիվ քույրը մի երկու քայլ էր արել, որ նրանք ձեռները կոխեցին տոպրակը և յուրաքանչյուրը թոցրեց հացի առաշին պատահած կտորը: Սոնեն այս անգամ էլ կամեցավ վրա հասնել, բայց արդեն ուշ էր. երեխաներից մեկը մի անկյուն թուավ, մյուսը՝ մյուս և ամեն մեկն արդեն ազահարար կրծում էր իր հափշտակած որսոր, երբ քույրը նախ մեկին սկսեց թակել, հետո մյուսին: Երեխաները կուշ էին եկել մեկը մի, մյուսը մյուս անկյունում, հափշտակած հացի կտորները պինդ շեքերն էին կոխել, որ քույրը շնչի, և թեև քրոշ անխնա հարգածները բավական ցավ էին պատճառում նրանց տկլոր մարմնին, ձայնները փորն էին զցել, լաց շէին լինում, — երեկի գգում էին, որ հանցավոր են քրոշ նախազգուշացումը լսելու համար և իրենց արժանի պատիճն են կրում: Սակայն վերջ ի վերջո Սոնին աշողվեց երկուսի ձեռքից էլ խլել հափշտա-

կած հացի կտորները: Այս անգամ արդեն այնպիսի ճիշ ու ծղրրտոց ընկավ խրճիթում, որ այլևս չէր լսվում քամու կատաղի ձայնը:

— Բա՛, ձեզ շասացի՞ ձեռ շտաք, — խրատական տոնով նկատեց քույրը:

— Տո՛, տափը մտած, ի՞նչ ես ուզում էղ լակոտներից, — տանջված ձայնով աղաղակեց մայրն աղջկա վրա: — Տո՛ւր զահրումար անեն, էլի՞: Ես իմ ցավերի հետ ըլե՞մ, թե ձեզ հետ: Ա՛, կը տորվեք դուք, կտորվեք:

— Բա՛, խի՞ շեն մուշափ տալի, — հանգիստ կրկնեց Սոնեն և գնաց, որ քրեղանը վեր բերի թարեքից:

Մոր պաշտպանությունն առիթ տվեց երեխաներին ավելի ևս բարձրացներու իրենց ձայնը. ճնդղում էին խոզի ճուտերի պես:

Մայրը իր զգացած ցավերից և այդ միալար ճղճղոցից ծայր աստիճան ջղայնացած՝ վեր թռավ տեղից, վազեց դեպի աղջկելը և այնպես պինդ ձիգ տվեց նրա մազերից, որ նա ձեռքից բաց թողեց երեխաներից խլած հացի կտորները և մի սոսկալի ճիշ արձակելով՝ փուփեց գետին: Դրանից հետո Շուշանը անլուր անեծքներ թափելով քարշ եկավ նորից դեպի իր լաթերը և նորից կոլուվեց նրանց մեջ: Այժմ երեխաները միանգամից լոեցին, և նրանց քույրն էր միայն, որ գետին ընկած՝ լաց էր լինում:

— Զենդ կտրի, թե չէ, էս ա, էլի վեր կացա:

Մոր այդ սպառնալիքն ազդեց միայն այնքան, որ Սոնեն ձայնը մի քիչ ցածրացրեց, հետո կամաց-կամաց լոեց, վեր կացավ, հավաքեց գետին թափված հացի կտորտանքը և ուռած-փրված շպրտեց երեխանց առաջը, ասելով:

— Ըսը, չո՛ արեք:

Երեխաներն իսկույն վրա թափվեցին քաղցած գայլերի պես:

Սոնեն թարեքից վերցրեց մի քրեղան, գնաց նստեց հացի տոպրակի առջև և սկսեց պանրի փշուրները չոկել և քրեղանն ածել: Երեխաները վախվսելով մոտեցան նրան և սկսեցին վնաստալ պանրի էին ուզում:

— Ըսը, չո՛ արեք, — կրկնեց քույրն առաջվա պես ուռած-փրված, պանրի մի-մի փշուր թափելով նրանց վրա:

Երեխաներն ազահարար վրա ընկան՝ գետին թափված պանրի փշրանքները հավաքելու:

Սոնեն պանրի փշրանքը հացի կտորտանքից չոկում և քրեղանն էր ածում մեծ գործ կատարող մարդու լրջությամբ: Նա մի

առանձին հպարտություն էր զգում, որ այդքան հաց ու պանիր էր բերել իրենց ծանօթ մի հարուստ ընտանիքից, ուր հաճախ ինքը կամ մայրը մի փոր հացի համար գնում էին ամբողջ օրով կամավոր աղախնի գեր կատարելու— սամավար սրբելու, կերակրի կաթսաներ մոխրելու, բակն ավելու, հավաքված աղբը թափելու, օրոք բոցի երեխայի աղտոտած պարուրները լվանալու և այլն։ Պանիրը հացից զոկելիս Սոնեն, իհարկե, շմոռացավ իրեն, թեև ճանապարհին իր բաժինն արդեն կերել էր. նա զոկեց հացի համեմատարար մի փափուկ կտոր ու պանիր մի մեծ փշուր և սկսեց ուտել: Երեխաներն իրենց բաժինը ձեռաց վերջացրին, նստեցին հացի տոպարակի մոտ և սկսեցին նորից վնասուալ: Քույրն այս անգամ այնքան բարեհաճ գտնվեց, որ առանց ծեծ ու կովի մի-մի կտոր հաց ու պանիր էլ շպրտեց նրանց գոգր: Այդ օրը մի տոն էր նրանց համար, — հացի հետ պանիր էլ էին ուտում: Այդպիսի երջանկություն շատ քիչ էր պատահում նրանց:

Երբ նրանք կշտացրին իրենց բաղցած փորը, նորից մտան յափնջու տակ, այս անգամ հյուրասիրելով և քրոջը, որ արդեն հաշավել էր նրանց հետ: Երեքն էլ գոհ էին իրենց վիճակից. փորները կուշտ էր, յափնջին տաք, էլ ի՞նչ էր հարկավոր, — ոչինչ: Եվ նրանք՝ յափնջու տակ ուրախ-զպարթ քշիչում-ճլվում էին թխսկան հավի թների տակ պատսպարված ձագուների պես:

Այնինչ աշնանային կարճատե օրն արագորեն մթնում էր և առանց այն էլ մութ խրճիթ թաղկում էր մթության մեջ: Դուան տախտակների արանքից ներս թափանցող լուսի շերտերն այժմ հազիկ էին նշմարվում: Օրը տարածամելու հետ քամին կարծես պակելի էր սաստկանում և սպառնում լուսամուտի թղթերը պատռելով ներս խուժել ամբողջ թափով:

— Աղջի՛, — կանչեց նուշանը:

Սոնեն գլուխը հանեց յափնջու տակից:

— Կեր կաց էն անտեր ճրագը վառի:

Ցրտից սարսուալով Սոնեն դուրս սողաց իր տաք տեղից, վառեց թարեփի վրա դրված լամպը և վազելով նորից մտավ յափնջու տակ: Լամպն այնքան լուս չէր արձակում, որքան ծուխ, որովհետեւ ապակին կիսով շափ կոտրված էր. ծուխը հաստ շերտերով լիզել էր սպակու պատերը և այժմ այդ շերտերի վրա նոր շերտեր էր պակելացնում:

Յափնջու տակ քշիչոցի ձայները շարունակվում էին. ամենից

շատ լսվում էր քրոջ ձայնը. ինչպիս երեսում էր, գերիաթ էր պատմում: Սակայն այդ քշիչոցի ձայները շուտով տեղի տվին հորանջումների: Սոնեն նորից դուրս սողաց յափնջու տակից, հայտնի չէ որտեղից, քարշ տվեց մի ներքնակ ու վերմակ, անկողին պատրաստեց, որի վրա պառկեցրեց երկու փոքրիկներին. վերմակն ու յափնջին խամբով ձածկեց, ինքն էլ մտավ նրանց կողքին, ու գրեթե նույն րոպեին քննեցին երեքն էլ:

\* \* \*

Այնինչ նրանց մայրը իր լաթերի վրա կուշ ու հուա գալով շարունակում էր տնքալ զսպված ձայնով, ցավերը գնալով սաստկանում էին: Մենակ էր, ոչ ոք չուներ, որ օգներ: Երկու երեխա այդպես, առանց «տատմոր» օգնության էր բերել, որովհետեւ աղքատ էր: Նույն այդ աղքատությունն էր պատճառը, որ մինչև այժմ ծնած բալոր երեխաներն ամիսներով «հարամ» էին մնացել. — մարդ չէր ճարգում, որ «հալալեր» — կնքահայր դառնար: Եվ այդպես էլ «հարամ» կմեծանային նրանք, եթե լինեն այն ընտանիքը, որ այդ օրը մի տոպարակ հացի կտորներ և պանիր փշրանքներ էր ուղարկել. այդ ընտանիքի հայրն էր, որ «հոգու խաթեր»: Իր որդուն ուղարկում էր Կարապետի երեխաներին կնքահայր դառնալու, մի քանի ոուրիշ ծախսելով: Շուշանը երախտագիտությամբ էր հիշում այդ ընտանիքի անունը, որը հացի կծմծած, բորբոսնած կըտորները, կերակրի մնացորդը, երեխմն էլ գործածությունից ելած հնամաշ լաթերը տալիս էր նրան իր երեխաների համար: Բայց Շուշանն ամոթխած կին էր. երեսը չէր բռնում ամեն կարիք եղած ժամանակ դիմելու այդ ընտանիքին, ուստի մեծ մասամբ սոսկալի աղքատություն էր քաշում: Մեծ որդուց հույսը բոլորովին կարել էր. այդ որդին անդարձ «պաժառնի» էր դարձել և, չնայելով փոքր հասակին, մի քանի անգամ բանտ էր նստել: Մարդը մեծ մասամբ պարապ էր, վերջերն էլ սկսել էր իրեն գինու տալ, այնպես որ գործ եղած ժամանակ էլ հազիկ մի-մի անգամ մի քանի ֆունտ ցամաք հաց կամ ոչխարի գլուխ ու ոտներ էր բերում տուն: Պատահում էր, որ Կարապետը օրերով, նույնիսկ շաբաթներով տան երես չէր տեսնում, որովհետեւ ոչխար կամ տավար էին հանձնում նրան հեռու տեղ քշելու: Այժմ էլ բացակա էր. մի ամբողջ հոտ

—93—

մատաղացու ոչխար էր քշել Թոլնիսի և Գեորգ ուստատեղին, որի տոնն էր այդ շաբաթ, և ո՞վ գիտե՞ Արք կվերադառնար:

Այսպիսով Շուշանը երկունքի ծանր օրերին մնացել էր մենակ, իր երեք երեխաների հետ, դուռն երեսին ետ գրած, քաղցած, ակլոր: Ցուրտն էլ մյուս կողմից էր նեղում: Աշնան և ձմռան ամիսներին քաղցն այնքան զգալի չէր այդ աղքատ ընտանիքի համար, որքան ցուրտը: Հաց այսպես թե այնպես միշտ կարելի էր ճարել, բայց ածուխ, բայց փայտ, բայց տաք հագուստ ո՞վ կտար:

Մի ամբողջ շաբաթ է, որ ցուրտ քամին չի դադարում, վիզում մարդու երես և խանձում, մտնում է խրճիթի հազար ու մի ծակուծուկերից։ Լաթերն այնքան ուժ չունեն, որ տաքացնեն Շուշանի կմախքացած մարմինը։ Կարելույն շափ աշխատում է կծկվել բայց և այնպես ոտները սառույց են կտրվել, թեև երբեմն-երբեմն ցավերի ուժքնության ժամանակ, նրա պարանոցը կզակի տակ և ճակատը ժածկվում են քրտինքով։

Բայց ցուրտն ինքնըստինքյան: Երկունքի ցավերն են, որ գնալով սոսկալի տանջանքներ են պատճառում: Նա այլևս չի կարողանում զսպել իրեն, կուշ ու հուպ է գալիս, աղաղակում: Խըրճիթում լսվում է երեք քնած երեխաների հավասար շնչառությունը. թնդանոթ անգամ արձակես՝ չեն զարթնի: Թարեքին դրված լամպի կոտրված ապակին արդեն բոլորովին սևացել է. վառած թոնրի նման սկ ծուխ և ալ-կարմիր բոց է արձակում: Խրճիթը հետպհետն լցվում է թանձր ծխով, որի հետ խառն օդի մեջ անհամար ճանճերի պես պառուտ-պատույտ են անում սկ մրի փաթիլները: Եվ ծխի ու մրի այդ թանձրության մեջ անշուշտ կիսեղդվեն երեխաներն իրենց մոր հետ, եթե քամին խրճիթի անհամար ճեղքերից շմաքրի օգոր:

Իսկ քամին գնալով ավելի ու ավելի սաստկանում է և շվաց-  
տում խրճիթի հայտնի չէ ո՞ր ծակից։ Դուռը դրնզալով ու շրխկա-  
լով շարժվում է տեղից։ լուսամուտին կացրած թղթերը բրբում են  
արդեն միջից կես եղած։ Իսկ Շուշանն իր լաթերի վրա անտանելի  
տանջանքով մերթ պաղում, մերթ թափալգոր է գալիս վիրավոր-  
ված անասունի ակս...

Աղամամութին, երբ Հարեանի բակում աքաղաղն սկսեց կանչել իր ծուզրուզուն, Սոնեն աշքերը բաց արեց և գլուխը Հանեց

վերմակի ու յափնջու տակից: Առաջին բանը, որ տարօրինակ թվաց  
նրան, այդ այն էր, որ թարեքին դեռևս վառվում էր լամպը ծխի  
ու մրի մեջ կորած: Հետո նրա ականջին դիպավ մի անսովոր  
ձայն,— կարծես կատվի ձագ էր մլավում: Նա նստեց անկողնում  
աջքնազդմամբ նայեց մոր կողմը: Ու ծխից գոյացած մշուշի մեջ  
հազիվ նշմարեց մոր ուրվագիծը, որ լաթերի վրա պազած ինչ-որ  
տարօրինակ շարժողության մեջ էր, կարծես լվացք էր անում: Մշա-  
վոցի ձայնն էլ այնտեղից էր գալիս: Նա կամաց վեր կացավ  
և ցրտից սարսուալով մոտեցավ մորը: Մոր ծնկների արանքին  
մի պստիկ, շատ պստիկ մանուկ տեսսավ, մերկ, կարմիր: Մայրը  
ամբողջ մարմնով խոնարհված նրա վրա, ատամները պինդ սեղ-  
մել էր իրար և ձեռքերով հուաւ էր տալիս մանկան կոկորդը, շա-  
րունակ կրկնելով սեղմած ատամների միջից: «Ի՞նչ եմ անում...  
ի՞նչ եմ անում... քիչ ունե՞մ... քե՞զ ոնց պահեմ... քե՞զ ոնց պա-  
հեմ...» Մանուկը գլուխը ետ էր գցել, աշքերը փակ, տարօրինակ  
կերպով շարժում էր պստիկ կարմիր ոտներն ու ձեռքերը: Զայնը  
այլևս չէր լսվում:

Սոնեն Հանկարծ ճշաց, ինքն էլ չէր իմանում— ուրախությունից, որ մայրը երեխա էր բերել, թե՞ սարսափած այն բանից, ինչ որ անում էր մայրը իր նորածին մանկանը...

1898

# ՀԱՆՇԱԾՆ ՊԱՏՄԱԾՔՆԵՐ

ԵՍ ԵՎ ՆԱ

(Մի կորած մարդու հիշատակարանից)

Այս հիշատակարանն իմ ձեռքն ընկավ պատահական կերպով, թե ինչպես՝ հետաքրքրական չէ: Սա մի մեծ տետր էր, որի մեջ «կորած մարդը», ինչպես ինքն էր ենթավերնագրել իր հիշատակարանը, երկար տարիներ, համարյա թե օրը-օրին գրի է անցրել իր անհատական կյանքի անցուղարձը:

Բոլոր կողմնակին, անհետաքրքրականը բաց թողնելով, ես ընտրեցի և մի ամբողջական պատմվածքի վերածեցի միայն այն գրանցումները, որոնք հիշատակարանի ուղնուծուծն են կազմում և պարզում «կորած մարդու» տրագեդիան:

Այս էլ ասեմ. «կորած մարդը» իր հիշատակարանի այն մասը, որ վերաբերում է իր անկման տրագեդիային, վերնագրել է «Ես և նա»: Այդ վերնագրով էլ տալիս եմ տպագրության:

Նար-Գոս

ԵՍ

Ես սիրում էի նրան:

Կրկնե՞մ արդյոք սիրո այն խոսքերը, որոնք այնքան ծիծաղելի ու տաղտկալի են թվում կյանքի հմայքը կորցրած սկեպտիկներին, բայց որոնք մի-մի հայտնություններ են նորաբողբոշ սիրող սըր՝ տերի համար:

Ամեն անգամ, որ նայում էի նրա զարմանալի պայծառ աշքերին, որոնց մեջ կարծես արևն էր վառվում, ամեն անգամ, որ

լառմ էի նրա կենսաթրթիո ծիծաղը, որի մեջ կարծես զարնանային չարաճի վտակ էր քշքում, ամեն անգամ, որ առնում էի նրան գիրկս և ականջիս մոտ լսում նրա կուսական կրծքի հեքք, այտերիս վրա զգում նրա թավիշ-մազերի էլեկտրականացնող շփումը,— ինձ տիրում էր այնպիսի մի խննթ զգացում, որի ազդեցության տակ պատրաստ էի գո, ծել և ամենամեծ առաքինությունը, և ամենամեծ ոճիրը— միայն թե նա հրամայեր:

Սիրում էր նա ինձ նույնպես,— այդ ես այժմ չգիտեմ, բայց այն ժամանակ լիովին հավատում էի, որ չի կեղծում, երբ հավատացնում էր, թե սիրում է, և երդվում էր, թե մահն անգամ չի կարող անշատել մեզ իրարից:

Այն ժամանակ վերջին կուրսի ուսանող էի և շուտով պիտի ավարտեի իրավագիտական ֆակուլտետը: Վստահ երիտասարդական թարմ ուժերիս և մանավանդ հասարակական լայն գործունեության բուռն տենչանքիս վրա՝ լցված էի փառավոր ապագայի վառ հույսերով: Ոգերոված այդ ապագայով և խրախուսված երշանիկ սիրով, բուռն եռանդով, առանց հանգիստ առնելու, պատրաստում էի ավարտական դիսերտացիա, որը ապագա մեծության ու փառքիս հաստատուն հիմնաքարը պիտի հանդիսանար:

Բայց...

Օ՛՛, այդ «բայց»-ը...

Այժմ էլ, երբ ամեն ինչ կորած է, ամեն ինչ խորտակված վերջնականապես ու անդարձ, այժմ էլ, երբ հիշում եմ այդ մոմենտները, քիչ է մնում ճշամ հոգեկան կարեվեր մի ցավից— այն աստիճան այդ մոմենտները զեռևս չեն կորցրել ինձ համար իրենց սրությունը:

Սակայն շարունակեմ պատմությունս:

Մի անգամ, երբ հեռու հյուսիսում ուսանողական մենակյաց մենյակումս փակված, դիսերտացիայիս վերջին գլուխներն էի գրում, մի նամակ ստացա, որի մեջ ապշեցուցիլ անողոք անկեղծությամբ գրում էր նա, որ իր սիրո նախկին հավաստիացումներն ընդունեմ իրեն ցավալի թյուրիմացություն և աշխատեմ մոռանալ իրեն, որովհետև ինքն ուրիշի կինն է լինելու շուտով: «Գիտեմ, այս բանը շատ էլ հաճելի չպիտի լինի քեզ համար, բայց ի՞նչ արած, աշխարհիս մեջ ամեն բան պատահում է և ամեն բան կարող է պատահել»— ալսպիտի հեգնակա՞ն ասեմ, թե՞ դիվական անխիղճ խոսքերով էր վերջացնում իր նամակը:

Սկզբում կարեռություն շտվի այդ նամակին. կարծում էի, թե մի կատակ է այդ, որով շարաձճին ուզում է զվարճալի մի խաղ խաղալ ինձ հետ կամ փորձել իմ սերը. Բայց հետագայում որքան նեղավ նախ զարմանքս, հետո զայրույթս և, ի վերջո, հուսահատությունս, երբ իրար հետեւից գրած նամակներիս և հեռագրերիս և ո՞չ մեկի պատասխանը շտացա: Ու երբ այս խենթացնող լուրջունից հետո, կատարյալ հուսահատության միջ, ինչ անելիքս չգիտեի, անսպասելի կերպով ստացա մի լակոնական հեռագիր— «Ամուսնացա»: Մի բառ միայն և ուրիշ ոչինչ: Այս հեռագիրը տվել էր, երեխ, նրա համար, որ այլևս չծանծրացնեմ իրեն նոր նամակներով ու հեռագրով:

Սկզբում այդ հեռագիրն ինձ այնքան էլ շագեց, ըրովհետեւ արդեն նախապատրաստված էի, բայց հետո նկատեցի, որ ինչ-որ քարացում, հոգեկան ապատիա է եկել վրաս. իսկ երբեմն էլ, մասնավանդ գիշերները, երբ բնել չէի կարողանում և ուղեղս գործում էր հիվանդագին հուզման մեջ, ինձ թվում էր, թե խելագարվում եմ: Առաջ, երբ բնավ չէի կասկածում նրա սիրովն և լիովին հավատացած էի, որ նա իմս է և իմս է լինելու, իմս անբաժան ու հավիտյան; ինձ թվում էր, թե այնպիս ուժգին չէի սիրում նրան, ինչպիս այժմ, երբ նա զավաճանել էր ինձ, և ես արդեն կորցրել էի նրան առմիշտ ու անդարձ: Այդպիս է լինում միշտ. սիրույդ առարկան կրկնակի սիրելի է թվում նրան կորցնելուց հետո:

Այլևս չէի հասկանում, թե ինչ է պատահում ինձ. այնպիսի մի զատարկության էի զգում շուրջս ու ներսս, որ կարծես ուղեղս հանել էին դանդիցս և ինձ նետել մի անապատ՝ թափառելու սոսկալի ամայության մեջ, աննպատակ ու անղեկ, առանց ձգտումների, առանց իդեալների, առանց փրկության որեւ հույսի: Մի բառ միայն զգում էի շատ պարզ ու շատ որոշակի. զա վրեժի թույնն էր, որ կաթիլ առ կաթիլ կուտակվում էր սրտիս մեջ և սպառնում պայթելու այն աղջկա գիսին, որ այնքան անխղճորեն անարդել էր ոչ միայն իմ ամենանվիրական զգացումները, այլև ինձ իբրև մարդու, և սպառսպուր զախցախել բոլոր հույսերս, իմ ամբողջ ապահան: Քանի նա շեր դաշտանելի ինձ, ևս մի արծիվ էի հոգով ու մտքով բարձունքներում սպառնող, այժմ զարձել էի թեերը կտրած ողորմելի մի ճնշուկ՝ գետենի վրա ցատկուող: Կարո՞ղ էի ես այդ ներել նրան: Ու վճուեցի անողոք լինել դեպի նա նույնքան, որքան անողոք եղավ նա դեպի ինձ:

«Ես չկամ, թող ինձ հետ նա էլ չլինի», — ասացի ու մի օր վեր կացա, թողի համալսարանն էլ, դիսերտացիաս էլ, ամեն բան և եկա վճիռս իրագործելու Բայց այստեղ ինձ այնպիսի մի հուսահատություն էր սպասում, որի մասին բնավ չէի մտածել. — դավաճան աղջիկը մեկնել էր արտասահման իր, ինչպես իմացա, շատ հարուստ ամուսնու հետ:

Հուսալքումը նորից եկավ տիրեց ինձ նոր թափով և այնքան ուժեղ, որքան վրեժի զգացումս մնացել էր անհագուրդ: Այն գիտակցությունը, որ ես կատարելապես զինաթափ եմ եղած պարզապես խելագարեցնում էր ինձ: Ու եղավ մի րոպե որ քիչ մնաց ձեռք բարձրացնելի ինքս իրած վրա՝ հոգեկան անտանելի տառապանքներիս միանգամից վերջ տալու համար, Բայց հետո մտածեցի, որ այդ արդեն չափազանց փոքրոգություն կլիներ և, բացի այդ, հույս ունեի, որ վաղ թե ուշ կհանդիպեի նրան, ինձ հասցրած անարգանքի փոխանցումը տալու:

Հոգեկան այդ դրությանը նորից հաջորդեց ծայր աստիճան անտարբերություն ու անզգայություն գեպի ամեն ինչ: Ուժեղ ցընցումներ էին պետք՝ ինձ այդ անտարբերությունից և անզգայությունից հանելու համար, և այդ ցնցումները ես ուրիշ բանի մեջ շգտա, բայց եթե միայն ծախու կանանց և գիշերները լուսացնող ընկերներիս շրջանում: Կյանքի ճահճը կամաց-կամաց ծծում էր ինձ, և ես չէի նկատում այդ: Ու, երբ նկատեցի, շատ ուշ էր. ես կորած մարդ էի արդեն:

Երբեմնի իրավագիտության վերջին կուրսի ուսանող, փառավոր ապագայի հույսերով լեցուն, հասարակական լայն գործունեության երազանքներով թեավորված, — այժմ զարձել էի զատարանների կողմանցների կեղտոտ սեղանների վրա զանազան խնդրագրեր ու կլյաւուզներ գրող, զանազան մութ զորձեր պաշտպանող, միշտ արբած և միշտ քնատ մի արլակատ՝ այդ զգելի տիպի բոլոր բացասական հատկանիշներով: Եվ իմ ամբողջ տրագեդիան այն էր, որ ես լիովին զցում ու գիտակցում էի այդ սոսկալի անկումը, բայց եկել այդ տիպմից անզոր էի. ճահճն արդեն շատ էր ինձ ծծել իր խորքը: Եվ մի անգամ, որ խաչ էի բաշել ինձ վրա, հարություն առնելու այլևս անկարող էի զգում ինձ:

Մի անգամ, — այդ մեր հարաբերությունների խզման հինգերորդ արումն էր, — փողոցում բոլորովին պատահական կերպով, երես առ երես հանդիպեցի նրան— իմ սիրո նախկին տառերկային:

Այդ հանդիպումն այնքան անսպասելի էր ինձ համար, որ կարծես կայծակնահար զամվեցի տեղուուելու նրա առջև և ամշությունից ծափ զարկեցի ակամա: Ըստ երեսլիթին, նա սաստիկ վախեցավ այդ անակնկալից և, ինչպես նկատեցի, սկզբում բնավ շճանաշեց ինձ: Եվ չէր էլ կարող ճանաշել, որովհետև իր ճանաշած նախկին ինձ: Եվ չէր էլ կարող ճանաշել, որովհետև իր ճանաշած նախկին ինձ: Եվ չէր էլ կարող ճանաշել, որովհետև իր ճանաշած նախկին ինձ: Եվ չէր էլ կարող ճանաշել, որովհետև իր ճանաշած նախկին ինձ: Եվ չէր էլ կարող ճանաշել, որովհետև իր ճանաշած նախկին ինձ: Եվ չէր էլ կարող ճանաշել, որովհետև իր ճանաշած նախկին ինձ: Եվ չէր էլ կարող ճանաշել, որովհետև իր ճանաշած նախկին ինձ: Եվ չէր էլ կարող ճանաշել, որովհետև իր ճանաշած նախկին ինձ: Եվ չէր էլ կարող ճանաշել, որովհետև իր ճանաշած նախկին ինձ: Եվ չէր էլ կարող ճանաշել, որովհետև իր ճանաշած նախկին ինձ: Եվ չէր էլ կարող ճանաշել, որովհետև իր ճանաշած նախկին ինձ: Եվ չէր էլ կարող ճանաշել, որովհետև իր ճանաշած նախկին ինձ: Եվ չէր էլ կարող ճանաշել, որովհետև իր ճանաշած նախկին ինձ: Եվ չէր էլ կարող ճանաշել, որովհետև իր ճանաշած նախկին ինձ:

Ապշությանս հետ միասին ինձ տիրեց ակամա մի վարանում ու պատկառանք նրա այդ հաղթական շքեղության առջև, և ինքս ինձ երբեք այնքան չնշին, ողորմելի ու զգվելի չէի թվացել, ինչպես այդ միջոցին: Մի րոպե աշխատեցի հոգուս խորքում պրատել վրեժի այն զգացումը, որ մի ժամանակ լափում էր ինձ և որի ազգեցության տակ այնքան հպարտ, այնքան անխոցելի ու արդարացի էի զգում ինձ, ու ոչինչ չէր խնայում նրա հառ նար նա ընկել էր մի մարդու ձեռք, որը ոչինչ չէր խնայում նրա հառ մարդ:

Ու, երբ շփոթված և կակազելով, ներողություն հայցող ձայնով փորձեցի հիշեցնել նրան, թե ով եմ ես, նա սկզբում կարծես թե զարմացավ, շփոթվեց, հետո հանկարծ թոռեց ինձ առանց մի վուսք անգամ արտասանելու, կառք նստեց և հեռացավ, ըստ երեխուսք անգամ արտասանելու, կառք նստեց և հեռացավ, ըստ երեխուսք վութին վախեցած, որ ես կարող եմ հետապնդել իրեն:

Այդ օրը ես անցկացրի գինետանք, որտեղից ինձ դուրս բերիցս բռնած:

Այնուհետև, այս հանդիպումից հետո, այն սակավ ժամերին,

երբ խնած չէի լինում և կարողանում էի քիչ թե շատ խորանալ մտքերիս մեջ, ինձ շատ էր մտատանջում այն հանգամանքը, թե ի՞նչ էր բուն պատճառը, որ ես այս աստիճան ընկել էի: Խսկապես որ, խո չէր կարելի այդ պատճառը դժբախտ սերը համարել — մի բան, որը շատ-շատ կարող էր միայն ժամանակավորապես ընկճել, բայց ոչ առմիջտ կործանել մարդու: Դա անհեթեթություն կլիներ:

Բուն պատճառը պետք է որ ուրիշ տեղ լիներ: Ու սկսեցի այդ պատճառը որոնել սիրածս աղջկա դավաճանությունից դուրս, որոնել իմ էռության մեջ, որովհետև անկարելի էր, որ ես այս աստիճան ընկնեի, եթե անկմանս սաղմերը չկրեի ինքս իմ մեջ: Բայց որո՞նք էին այդ սաղմերը, որտեղից էին ընկել իմ մեջ, ի՞նչ էր նրանց արմատը, — այս ուղղությամբ կատարած պրատումներս գեռ երկար ժամանակ մտատանջում էին ինձ առանց որևէ եղրակացության հանգիւու, մինչև որ, վերջապես, միանգամայն պատահական կերպով գտա բուն արմատը մի պատմվածքի ընթերցումից հետո, որը հանկարծ լուսավորեց իմ մինչ այդ մութ ներքին աշխարհը:

Այդ պատմվածքն իտալական մի սիրավեպ էր «Վրեժ» վերնագրով:

Այստեղ բառացի թարգմանությամբ առաջ եմ բերում այդ սիրավեպը, որի վերնագիրը, սակայն, գնում եմ «Նա», պատմվածքի հերոսին ինձ հակադրելու համար:

Ա

1

Վենեցիայում, դոժերի, ջրանցքների և գեղարվեստների այդ հրաշակերտ քաղաքում, մի հին ազնվական ընտանիքի մեջ ապրում էր այդ ընտանիքի միակ զավակը — գեղեցիկ Զովեստան: Այնքան էր գեղեցիկ նա, որ թվում էր, թե հողեղեն չէ, այլ մի հավերժանարս, որ դուրս է եկել ծովի փրփուրներից: Աչքերը կապույտ էին, ինչպես Խալիխայի ջինջ երկինքը, հայացքը զվարթ ու անհուն, ինչպես Աղրիատիկի հորիզոնները: Ոսկեգույն ժամերը սքանչելի զանգուրներով պսակում էին նրա փոքրիկ, սիրունիկ

գլուխը: Երբ ժպտում էր (բայց ե՞րբ չէր ժպտում), նրա շքնաղ այտերի վրա մատնեհարներ էին գոյանում և փոքրիկ բերանի մեջ վարդագուն շրթունքների տակ շողողում էին փղոսկրի պես սպիտակ ու ամուր մանրիկ ատամները: Միշտ զվարթ էր գարնան արենի պես, միշտ թրթռուն՝ թիթեռնիկի պես, միշտ շարաճճի՝ կայտառ երիխայի պես: Երկու գույն էր սիրում— կարմիր ու սպիտակ, և նրա արդուզարդի ու կրծքի վրա միշտ անպակաս էին այդ երկու գույնի ծաղկները— մեխակը և շուշանը: Նա ինքը թարմ ու հոտավետ ծաղիկ էր՝ կարմիր կամ սպիտակ, նայելով թե ինչ գույնի հագուստ էր հագնում— մեխակի պես կարմիր, թե՝ շուշանի պես սպիտակ:

## 2

Մի անգամ, գարնածային մի սքանչելի երեկո, որպիսին միայն Աղրիատիկի ափերումն էր լինում, երբ Զուկետտան իր հոր պալացցոյի վերին հարկի իր փոքրիկ սենյակում զբաղված էր իր սպիտակ հագուստով և կրծքին մեխակի կարմիր ծաղիկն էր ամրացնում, որ զրուանքի դուրս գա Պոնտե-Ռիալտոյի տակ Մեծ ջրանցքի վրա, ըրսից ինչ-որ նվազածության ձայն լսեց: Մի հմուտ ձեռք սփրենադ էր նվազում զութակի վրա: Զուկետտան վագեց զեպի բաց պատուհանը և ցած նայեց զեպի փողոց:

Նվազողը մի պատանի էր իտալական լայնեզր գլխարկով: Այնքան մեղանուշ, այնքան դյութիշ էր նվազած եղանակը, որ Զուկետտան կարծում էր, թե իր սրտի լարերի վրա են նվազում: Նա մեքենայաբար կիսով շափ դուրս հանվեց պատուհանից և լսում էր ամենայն ուշադրությամբ: Իր ամբողջ էությամբ լսողություն դարձած, ազահորեն կլանում էր մարմինը փշաքաղող այն դյութիշ ձայները, որ պատանի երաժիշտը հնչեցնում էր զութակի լարերից, ինչպես աղբյուրի ակոնքը դուրս է հոսեցնում իր քչքան ականակիտ շուրջը անբռնազրութիկ ու սահուն: Շունչը պահել էր, որ ոչ մի հնչյուն չթոցնի: Սքանչաթման արցունքը գոհարի պես խաղում էր նրա աշբերի մեջ:

Վերջապես լսեցին զութակի հնչյուները, և այդ հնչյունների հետ կարծեն ամեն ինչ լուց բնության մեջ:

— Ո՞վ ես դու, նայիր վերև, պատանի մահստրո, — կանչեց բարձրից Զուկետտան:

Պատանի երաժիշտը նայեց վերև:

— Հանիր գլխարկդ, երեսդ լավ չեմ տեսնում:

Պատանի արտիստը վերցրեց լայնեզր գլխարկը, երկայն մազերը զիփի մի շարժունով ետ զցեց ճակատից և նայեց վերև: Ի՞նչ հրաշալի աշքեր, բայց լուրջ ու խոհուն և թախծալի, ինչպես այն հրաշալի, որ մի քիչ առաջ նվազում էր նա: Ի՞նչ գրավիչ դեմք, բայց գունատ ու տիսուր, ինչպես մարմարի մի անդրի: Ի՞նչ բարձր հպարտ ճակատ, որի վրա փայլում էր ոչ-երկրային մի վեհություն:

— Ի՞նչ է անումդ,— կանչեց Զուկետտան:

— Անտոնիո:

— Անտոնիո, նվազիր ինձ համար դարձյալ մի բան:

Ու նորից հնչեցին լարերն առաջվանից ավելի փաղաքուշ ու դյութիշ, և Զուկետտան, պատուհանին գամված, չէր հագենում լսելուց, մինչև որ լարերն իրենց վերջին սիրակեզ հառաշանքն արձակեցին ու մարեցին:

— Անտոնիո, ասա ինձ, ո՞վ ես դու:

— Ես որբ եմ:

— Ո՞վ էր հայրդ:

— Մի բանվոր, որը մեքենայի տակ զարդվեց և մեռավ:

— Մայրս գնաց հորս հետեւից:

— Քույր շունե՞ս:

— Ո՞չ մի հարազատ:

— Կուզե՞ս ես քո քույրը լինեմ, դու իմ եղբայրը: Ես կիսնդրեմ հորս, որ դու մեր տանն ապրես ու ինձ համար միշտ այդպիսի եղանակներ նվազես: Հայրս բարի է, շատ է սիրում ինձ և միշտ կատարում է խնդիրքս: Դու այլևս ստիպված շես լինի փողոցեփողոց թափառել մի կտոր հացի համար: Մենք շատ հարաւտ ենք:

— Ես շատ հպարտ եմ, սենյորինա:

— Իմ անունը Զուկետտա:

— Ես հպարտ եմ, սիրուն Զուկետտա:

— Մենք չենք խիլ քո հպարտությունը, Անտոնիո:

— Կիսեթ, երբ ինձ մի կտոր հաց տաք:

Զուկետտան մի դրամ նետեց նրա ոտքերի առջև և բարկացած հեռացավ պատուհանից: Բայց իսկույն էլ նորից մոտեցավ պատուհանին:

— Անտոնիո, — կանչեց նա:

Պատանի երաժիշտը, որ վեցրել էր դրամը և ուզում էր հւանալ, կանգ առավ և նայեց վերև:

— Համաձայնիր գոնե, որ ամեն երեկո, ճիշտ այս ժամին, կդաս կնվագես պատուհանիս տակ:

— Կդամ, Բայց ոչ նորից սրա համար, — ասաց Անտոնիոն թույլ տալով ձեռքի դրամը:

— Ա՞յլ:

— Գեղեցկության համար:

Եյս անգամ պատանի երաժշտի ոտների առջև ընկավ գեղեցիկ աղջկա կրծքի կարմիր մեխակը:

3

Ու գալիս էր:

Ամեն երեկո, երբ արևի վերջին ճառագայթները էլեկտրական լույսեր էին վառում պալացցոների պատուհաններին, Զուկետտայի լսողությունը փաղաքշում էին միշտ նոր, միշտ դյութիշ հնչյունները:

— Անտոնիո, մի՞թե այնքան հպարտ ես, որ չես համաձայնի բարձրանալ ինձ մոտ, իմ սենյակում նվազելու:

Անտոնիոն լուր բարձրացավ Զուկետտայի սենյակը:

— Անտոնիո, մի՞թե այնքան հպարտ ես, որ չես համաձայնի ինձ հետ մի զբոսանք կատարելու ծովի վրա:

Լուսնի կաթնագույն լույսի տակ, ծովի հանդարտ զրերի վրա մեղմիկ սահում էր մակուցկը և գիշերային անհուն խաղաղության մեջ տարածվում էին դյութական հնչյունները: Ամբողջ բնությունը, կարծես լսողություն դարձած, ականջ էր դնում այդ հնչյուններին, որոնք թևատարած, սահուն ու թեթև, թոշում տարածվում էին շորս բոլորը և մարում ծովի խաղաղ զրերի մեջ, պարզ ու թափանցիկ օդի մեջ:

— Անտոնիո, մի՞թե այնքան հպարտ ես, որ թույլ չես տա զլուխս դնկանդ վրա:

— Օ... — Հառաջում է միայն պատանի արտիստը վառված աշքերով և նրա կնտնտոցի տակ զութակի հնչյունները նոր թափ են առնում նոր, մինչ այդ լսված նյուաններով:

Զուկետտայի ոսկեգանգուր գլուխը հանգչում է Անտոնիոյի

ծնկան վրա և թավաշ աշքերը հիացքով, սիրով ու երջանկությամբ վարից վեր նայում են պատանի երաժշտի վերասլաց դեմքին: Մակուցի մեջ, լուսնի կաթնագույն լույսի տակ, ինչպես ձյում, փայլում էր նրա սպիտակ թեթև հանդերձը, որով նա նմանվում էր իսկական հավերժահարսի՝ ընկղմված ծովի փրփուրների մեջ:

Պատանի արտիստը վերից վար նայում էր իր ծնկան վրա հանգող երազական գեղեցկությանը և ինքը ևս զարմանում էր, թե այն ի՞նչ նոր հնչյուններ են, որ իր ձեռքի շարժումից գեղում է զութակն այնքան տիրականորեն:

— Անտոնիո, մի՞թե այնքան հպարտ ես, որ մի համբույր շես տա ինձ:

Զութակը լուս է: Պատանի արտիստը կամաց խոնարհվում է հավերժահարսի դեմքի վրա, նրանց մազերը գրկախանվում են և թրթուն շրթունքները միանում մի բոցոտ համբույրի մեջ:

— Անտոնիո, Անտոնիո...

— Զուկետտա, Զուկետտա...

4

Մի երեկո էլ, սովորական ժամին, պատանի երաժիշտը գոթական ապարանքի բարձր պատուհանի տակ կանգնած՝ իգուր աշխատում էր իր դյութական հնչյուններով դուրս կանչել հավերժահարսին:

Պատուհանը փակ էր:

Պատանի արտիստը, սակայն, չէր հուսահատվում. զութակը մերթ կանչում էր հրամայողաբար, մերթ խնդրում աղերսագին, մերթ խոսում լալագին, մերթ հառաշում ու լալիս հուսահատորեն:

Պատուհանը միշտ փակ էր:

Այնուհետև, երբ զութակն իր վերջին հուսահատական ճիշերն էր արձակում, պատուհանի մի փեղկը կիսով շափ բացվեց, նախ մի գրամ զրնգաց գետնին և ապա թղթի մի կտոր, օդի մեջ պտըտվելով, ցած ընկավ պատանի երաժշտի ոտների առջև:

Թուղթը վերցրեց և կարդաց.

«Հայրս ասաց, որ իմ և տո միջև անանց անդունդ կա: Մենք վերեն ենք, զուներելք: Էլ մի՛ զա: Մոռացիր ինձ»:

Կարդաց, առժամանակ շանթահար մնաց տեղնուտեղը արձանացած, հետո ցնցվեց բւժգնորեն, մի կայծակնացայտ հայացք նետեց դեպի ազնվական ապարանքի բարձունքը, թուղթը, ցանումը լի, ուզեց պատառ-պատառ անել, բայց զսպեց փրեն, ինչամքով ծալեց, ծոցը գրեց, ոտով դեն շպրտեց գետնին ընկած գրամը և, զութակը պինդ սեղմելով վիրավոր կրծքին, հեռացավ անարդանքի կոկիծը հպարտ սրտի մեջ պարուրած:

Այդ օրվանից Վենեցիայի փողոցներում էլ ո՛չ ոք շտեսավ հանրածանոթ պատանի զութակահարին:

## 5

### Անցան տարիներ:

#### Նորից Վենեցիան:

Քաղաքի ամբողջ մամուլն ավետեց հոչակավոր զութակահար Անտոնիո Բոնվինիի գալուստը, որ իր միակ կոնցերտը պիտի տար մեծ թատրոնում: Վերջին ժամանակները ոչ միայն իտալական, այլև եվրոպական ու ամերիկյան ամբողջ մամուլը խոսում էր այդ նոր փայլուն աստղի մասին. որ երեացել էր երաժշտական հորիզոնի վրա:

Կոնցերտի գիշերը թատրոնում ասեղ գցելու տեղ չկար: Այնտեղ էր քաղաքի ամբողջ բարձր դասակարգը:

Անտոնիո Բոնվինի... Ամենքն անհամբեր սպասում էին նրա ելույթին:

Եվ ահա, վերջապես, դուրս եկավ նա բեմ:

Ու ամբողջ գահին գրեթե միաբերան հառաչց:

Մի՞թե սա այն Անտոնիոն չէ, որին ճանաչում էր ամեն մի վենեցիացի, այն պատանի զութակահարը, որ միշնադարյան տրուբադուրի նման շրջում էր քաղաքից քաղաք, փողոցից փողոց, պատուհանների տակ նվազում էր սերենադներ:

Այո՛, այո՛, նա է, նա ինքը, որովհետեւ— ահա՝ նույն հնչյունները, բայց այս անգամ արդեն առնականորեն հասուն, ինքնավատահ, ինքնամփոփ, երբեմն վերասլաց, երբեմն մարտակոչի խիզախ ավյունով լիցուն:

Ու որքան այդ հնչյունները դյութիլ էին, այնքան գեղեցիկ ու հմայիչ էր ինքը՝ Անտոնիո Բոնվինին, բարեկազմ հասակը, հրայայտ աշքերը, գառված դեմքը, հանճարեղ ճարիստը, ափանշերի-

մուտ ցրված երկար փայլուն մազերը, բոլորը, բոլորը մի սքանչելի ներդաշնակություն էին կազմում նրա զութակի մոգական հնչյունների հետ:

Երբ վերջին հնչյունները թրթուալով մարեցին գերեզմանային լուսական մեջ և արտիստը հեռացավ բեմից, ամբողջ դահլիճը դեռևս պահ մի նստած էր լուս ու անշարժ, կարծես անհունորեն բաղդր մի երազանքի մեջ կախարդված: Ու հետո հանկարծ, որպես մի գերեզմանոց մեկն հարություն առնի, ամբողջ դահլիճը շարժվեց ու թնդաց որոտագին:

— Բոնվինի... Անտոնիո Բոնվինի... Անտոնիո... Հանհա՛ր... Նոր Ստրադիվարիուս...

Եվ ամեն ոք շտապում էր դեպի կուլիս՝ անձամբ սեղմելու երիտասարդ հանճարի ձեռքը և իր հիացքն ու շնորհակալությունը հայտնելու նրան:

Երիտասարդ մահատրոն հոգնած էր: Փակվեց իր սենյակում և հայտնեց, որ այլևս ոչ ոքի չի կարող ընդունել:

Բայց ահա մտնում են և հայտնում, որ մի կին ուղում է նրան տեսնել:

— Անկարող եմ ընդունել:

— Թախանձում է սաստիկ. շատ նշանավոր անձի ամուսինն է:

Ու տալիս են ազնվազարմ տոհմի մի բարձրաստիճան մարդու անունը, որից կախված է հազարավոր մարդկանց բախտը:

— Թող մտնի:

Գեղեցիկ՝ ինչպես Ռաֆայելի Մադոննան, հագնված ինչպես մի թագուհի, շտապով մտավ մի նորատի կին և ուղակի ընկավ երիտասարդ հանճարի ոտների առջև:

— Անտոնիո, ես քո Զուլետտան եմ, ես սիրում եմ քեզ...

Երիտասարդ մահատրոն այլայլված՝ բարձրացրեց գեղեցիկություն: Նրա աշքերը վառվում էին ինչ-որ տարօրինակ փայլով, նման այն հրացայտ հայացքին, որ նա, դեռևս պատանի մի խեղճ երաժիշտ, նետեց իր ստորին ծագումն ու հպարտությունն այնքան մեծամտորեն արհամարհող պալացցոյի բարձունքն ի վեր:

Առանց մի խոսք արտասանելու՝ ձեռքը ծոցը կոխեց, հանեց հուշատերից՝ խնամքով պահած թղթի մի կտոր և մեկնեց Զուլետտային:

Զուլետտան առավ, նայեց և հանկարծ կաս-կարմիր կտրեց:

Կարդացեք, սինյորա, կարդացեք,— ասած Անտոնիոն,  
աւեսնելով, որ ևայր աստիճան շփոթված, չի համարձակվում  
աչքերը վեր բարձրացնել:

Ու հազիկ լսելի ձայնով ջուլետան կարդաց իր նամակը.

«Հայրս Խաչը, որ իմ և ու միջև անանց անդունի կա:  
Մենք վերև ենք, դու ներքեք: Էլ մի՛ գա: Մոռացիր ինձ»:

Անտոնիոն նամակը ետ առավ նրա թուլացած ձեռքից և, նորից խնամքով պահելով հուշատետրի մեջ, ասաց.

— Ավա՛ղ, սինյորա, ներեցեք ինձ, որ ես լսեցի ձեզ և թեսպետ այլևս չեկա ձեզ մոտ, բայց շմոռացած ձեզ, այլապես ձեր այս պատ այսպես խնամքով չէի պահի ինձ մոտ: Սա մի անգնահատելի գանձ է, որ դուք պարզեցիք ինձ, և այս գանձն աշքիս լույսի պես կպահեմ մինչև մահս: որովհետև եթե ձեր այս նամակը վիներ, ես թերևս այն վինեի, ինչ որ եմ այժմ: Ես շմոռացած ձեզ, այո՛: բայց, ինչպես երևում է, դուք մոռացել եք այն անդունղը, որ մեզ բաժանում էր իրարից: Դուք վերևն էիք— ես ներքեք, և այդ ձեզ իրավունք էր տալիս արհամարհանքով նայելու դեպի ներքն: Բայց դուք հաշվի չէիք առել, որ ներքն գտնվողները երբեմն թերեւ են առնում, թոշում վերև, և, վրիժառության զգացումով լեցուն: Այն օրը, որ դուք ձեր բարձունքից արհամարհանքով մերժեցիք ինձ— ներքն գտնվողիս, ես երդվեցի վրեժ առնել և, դրա համար ուրիշ միջոց շգտա, բայց եթե միայն բարձրանալ, միշտ բարձրանալ, անդադար բարձրանալ, մինչև որ իր ձեռակերտ ապարանքի բարձունքից ինձ վրա նայող քմահանույքն ինքը գար իմ անձեռակերտ բարձունքի առջև ծնրադրելու Այսօր ես հասա իմ նպատակին: Բայց նորից սիրել նրան, ով խաղում է ուրիշի նվիրական զգացումների հետ, ով տարբերություն է զնում վերեն և ներքնի միջև, ավա՛ղ, սինյորա, ես չեմ կարող:

Այսպես էր վերջանում իտալական սիրավեպը:

Մի սիրավեպ՝ հար և նման իմ սիրավեպին, մի սուր հակադրությամբ միայն. այստեղ ես էի— իմ բուրդուական միջավայրի հարազատ ծնունդը, տարբուկ ապրելու սովոր, կամազուրկ, վափիկամարմին մի ինտելիգենտ, որ առաջին իսկ հարվածից ընկնամ

է այլևս չելնելու համար, իսկ այնտեղ նա— աշխատավոր ժողովրդի ծոցից ելած անապատան, թափառական մի պատանի իր միջավայրի երկաթակուռ կամքով, որով զինված, ոչ թե ընկճվում է ինձ պես առաջին իսկ հարվածից, այլ ընդհակառակը, ով գիտե ինչ գդալարություններ հաղթահարելով, հետզհետե բարձրանում է մինչև գլխապտույտ բարձունքները, որպեսզի այնտեղից իր վրիժառության թույնը թափի իր մարդկային արժանապատվությունն արհամարհողների, իրեն նվաստացնողների գլխին:

Բարձրանալ, միշտ բարձրանալ, անդադար բարձրանալ... Օ՛, ինչ հրաշալի վրիժառություն, որի համար, սակայն, ես անընդունակ եղա:

Եվ այնուհետև ինչպես չհավատամ իմ դասակարգի ճակատագրին, որին բնական մի անհեծքով դատապարտված նա հետզհետե այլասերվելով, պիտի դառնա ինձ պես իբրև փտած ծառի կոճղին բասծ մի մգլած մակաբույծ և շքանա անհետ, տեղի տալով նըրանց, որոնք ներքնից բարձրանում են վերև...

1889

## ՆՈՐ ՀԱՎ

Այո՛, օրիորդներ և պահարզանի խնդիրն այսօր մեղանում մի նոր, կենսական խնդիր է ներկայացնում, որ մենք նոր պիտի լուծենք, այնինչ լուսավոր եվրոպայում դա վազուց արդեն յուր լուծումն ստացած վերջացած է և նույնիսկ, այո՛, անախրոնիզմ է դարձած: Եվրոպան, որ ամեն հնության, անշարժության և մոլորության թշնամի է եղել և միւնույն ժամանակ ստեղծող բոլոր վեհ և առաջադեմ գաղափարների, առաջինն էր, որ հասկացավ, թե պետք է, վերջապես, մարդկային կյանքից բառնալ կրոնի բռնության լուծը և դրա ավերակների վրա պարզել խղճի և մտքի ազատության դրոշակը: Իրավ, օրիորդներ և պահոններ, սոսկալի է, երբ մտածում ես, թե ի՞նչ զարհուրելի բռնու-

թյուն է գործ դեռում կրոնը մարդու խղճի և մտքի ազատության գրաւ Ժխուր մտածմունքներն և դառն իրականությունն ինձ թելագրում են ասելու, որ մենք՝ տասնիններորդ դարու զավակներս դեռևս շատ հեռու չենք գնացել հին և միջին դարերից, երբ մարդկանց վրա տիրապետող տարրը՝ բառիս բուն նշանակությամբ՝ կրոնն էր կազմում և ամեն ինչ կրոնի անունով էր Մարդկային քաղաքացիական, բարոյական և սոցիալական կյանքի պայմաններն ու երեսությները ենթարկվում էին կրոնական խիստ կոնտրոլի, որն անխուսափելի էր և որից մի մազի շափ շեղվելու համար անգամ մարդկի իրենց կյանքն էին հատուցանում։ Արդ, ինքներդ խոստովանեցեք, օրիորդներ և պարոններ, արդյոք մենք ևս նույն դրության մեջ չե՞նք այժմ, մենք, որ ապրում ենք նոր, լուսավորյալ կոչված դարում։ արդյոք մեզանից յուրաքանչյուրն յուր խղճի և մտքի ազատության վրա չի՞ զգում էր հին և միջին դարերում յուրաքանչյուր մարդ... Օրիորդներ և պարոններ, բավական է, որքան իբրև կրոնական ազգ ապրեցինք, ապրենք այժմ էլ իբրև քաղաքան ազգ։ ամաշենք, վերջապես, լուսավոր եվրոպայից։ մենք ամեն բան ընդունել ենք նրանից, բայց որն ամենակենսականը և ամենաանհրաժեշտն է մեր խղճի և մտքի ազատության համար, դրանից խոսափում ենք, կարծեն վախենում ենք դրանից։ Դատապարտելի է միանգամայն այն ազգը, որ դիտմամբ իրեն կրոնի տրամադրության տակ է դեռում։ Ո՞ր ազգն է կրոնով առաջացել, որ մենք առաջանանք։ — ո՞չ մի ազգ։ Կրոնը մարդկանց համար է ստեղծված և ո՞չ թե մարդիկ կրոնի համար։ Ես վերջացնում եմ իմ խոսքս օրիորդներ և պարոններ, և հարցնում եմ։ որ երանելի չի լինի արդյոք այն մարդը մեղանում, որ առաջին անգամ քայություն կունենա բառնալու կրոնի բռնությունն ամուսնական հարցում, որովհետեւ, կրկնում եմ, մեր բոլոր կենսական խնդիրների շարքում այսօք ամուսնական խնդիրն է, որ գայթակության բար է դարձել և որը պահանջում է յուր շուտափույթ լուծումը...

Մասխարյանցը վերջացրեց յուր ոգերդված ճառը։ Փոքրիկ սենյակում հավաքված առաջադեմ գաղափարներով տոգորգած, թարմ մտքերի սիրահար օրիորդներն ու պարոնները, հիացած ծափահարեցին ճառախոսին, որ կես ժամի շափ շարունակ խոսում էր

և խոսում էր ինչպիսի՞ ոգերդությամբ, ինչպիսի՞ ճարտասանությամբ։

— Բրա՛վո... կեցցե՛ս... լա՛վ խոսեց, — ծափահարության միշտց լսվում էին բացականչություններ։

Մասխարյանցն առնվազն էի մի երկու, երեք բոպե շարունակ գլուխ էր տալիս սրան ու նրան և միանգամայն չէր իմանում, թե ինչպես արտահայտե յուր շնորհակալությունը։

Վերջապես ծափահարություններն ու բացականչությունները դադարեցին, և որովհետև արդեն գիշերվա ժամը տասներկուսն էր, այդ պատճառով ամենքն էլ վեր կացան, սեղմեցին տան տիրոջ ձեռքը, դուրս եկան, հագան իրենց վերարկուները, գլխարկները և քաշվեցին իրենց տները։

## 2

Մասխարյանցը վերարկուի բոլոր կոճակները գցեց, ձեռնոցները հագավ և շտապ քայլերով հեռացավ։ Ճանապարհին նրան միտքն ամբողջապես զբաղված էր յուր խոսած ճառով, այն ազգեցությամբ, որ գործել էր այդ ճառն ունկնդիրների վրա և հիացման այն ծափահարությամբ ու բացականչություններով, որոնցով վարձատրեցին նրան յուր նոր գաղափարները վարդապետելու համար։ Նա երջանիկ էր համարում իրեն, որ թեև հասարակության «մասսան», ժողովրդի մեծ ակոնտինգենտն» անտարբեր է յուր քարոզած նոր գաղափարներին, որովհետև տակավին անընդունակ է դրանց հասկանալու, բայց կան արդեն, թեև փոքր թվով, լուսամիտ, դեպի քաղաքականությունը ձգտող օրիորդներ և երիտասարդներ — թարմ ուժեր, որոնք ի սրտե համակրում, ոգերդվում և հետևում են իրեն։

Նա մտադիր էր յուր՝ բերանացի քարոզած նոր գաղափարները քարոզել և գրավոր կերպով — վիպական կամ պուրիցիստական գրվածքի ձեռվ, թեև նա համոզված էր, որ «հետազեմների», «խավարամիտների» և «որուտինականների» սագերն իսկույն սոսկալի աղմուկ պիտի բարձրացնեին և ինքն ամեն կերպ զարհուրելի հալածանքի պիտի ենթարկվեր։ Սակայն այդ նրան բոլորովին երկյուղ չէր պատճառում։ ընդհակառակն, այն գիտակցությունը, որ նա պիտի «զոհվեր» յուր սրբազն կոչումին, նրան ավելի եռանդ, ավելի ուժ էր ներշնչում յուր ընտրած փշյա ճա-

հապարհովն սուաք շնթանալու, որովհետեւ պատմովյունը նրան շատ օրինակներ էր տալիս, որ բոլոր գարերի և բոլոր ազգերի մեջ առհասարակ նոր մտքի, նոր գաղափարի «ինիցիատորը» միշտ հալածանքի է ենթարկվել, նույնիսկ մահվան. օրինակ՝ Գալիլեյը, Հուսը, Լութերը և այլն, և այլն:

Այլապես անկարելի է, քանի որ հասարակությունը, որի մեջ բնականաբար խոր արմատներ են ունենում հին սովորությունները, միանգամից անընդունակ է նոր գաղափարները հասկանալու ըմբռնելու, ուրեմն և դրանց յուրացնելու, ուստի նա միշտ ընդդիմանում և չարաշար պատերազմ է մղում նոր գաղափարների դեմ, որոնք նրա անսովոր աշքերին ու մտքին հրեշավոր, այլանդակ րաներ են թվում: Մասխարյանցը շատ լավ գիտեր, որ այդ հոգերանական մի ճշմարտություն էր, որ անթիվ անգամ ապացուցված էր մարդկային առաջադիմության պատմության ամբողջ շնթացքում:

Ուրեմն թող անշարժ, փտած, նեխած հասարակությունն ինչ հալածանքի ուզում է ենթարկե իրեն, թո՛ղ ճշմարտության և լուցսի համար նահատակվածների թվում մեկն էլ ինքը լինի, — Մասխարյանցն այդ ուրախությամբ կտանե և կտանե այն քաղցր, այն երշանիկ հուսով, որ, վերջապես, կգա ժամանակ, երբ ապագա սերունդը կհասկանա նրան, կդատապարտե յուր նախորդների հրեշավոր արարքն և — ինչո՞ւ չէ — յուր մինչեւ այն ժամանակ անխնամ թողած շիրիմի վրա փառքի արձան կկանգնեցնե...

### 3

Մասխարյանցն այն աստիճան հափշտակված էր այդ մտքերով, որ բոլորովին շիմացավ, թե ինչպես անցավ ճանապարհը և հասավ հյուրանոց, ուր ամեն գիշեր սովորություն ուներ գնալու նա բարձրացավ սանդուղքով, անցավ երկար միշտանցքով և բաց անելով սենյակներից մինի գուոք, որը փակ չէր, ներս մտալի:

Սենյակում, սեղանի վրա լամպարը վառ էր: Մահճակալի վրա շորերը հագին, ձեռքերը գլխի տակ դրած, գանգուր, շեկ մազերով երեսն ի վեր պառկած էր մի գեղեցիկ, նորատի կին:

Նա քնած էր:

Մասխարյանցը դուռը կամաց գոցեց, ոտների մատների վրա

զգուշությամբ մոտեցավ նրան և խոնարհվելով՝ համբուրեց նրա ըրթունքները:

Կինը հանկարծ արթնացավ և վեր թռավ տեղից:

Մասխարյանցը ծիծաղեց:

— Գրիշա, — կանչեց կինը:

— Մաշա, — կատակով պատասխանեց նրան Մասխարյանցը:

— Կածեցի թե ուրիշն է, վախեցաւ:

— Ինչո՞ւ անպատճառ ուրիշն և ոչ ե՞ս:

— Որովհետև դու այնքան ուշացար, որ կարծեցի, թե այս գիշեր այլևս չես գալ ինձ մոտ: Սպասելով քունս տարել էր:

— Ինչո՞ւ, ուրիշ ժամանակ էլ այսպես ուզ չե՞մ եկել քեզ մոտ:

— Եկել ես, բայց... նու, ինձ թվում էր, թե այս գիշեր այլևս չես գալ: Որտե՞ղ էիր:

— Մի տեղ ժողով կար, այնտեղ էիս:

— Միշտ ժողով և ժողով... շա՛տ թունդ ազգասերն ես: Գայստա՞ն, Գայաստա՞ն... հա՞:

Եղ Մաշան մի տեսակ լիրը, ծաղրական ժպիտով նայեցավ Մասխարյանցին:

— Ե՞ս, Մաշա, մի՛թե դու էլ ինձ այն հիմարների հետ ես համեմատում, — պատասխանեց Մասխարյանցը լուրջ, բայց թեթև հանդիմանությամբ:

— Ե՞ս, դե՛մ, ինձանից մի՛ ամաշիր...

— Յօտ եղել ինչո՞ւ պետք է քեզանից ամաշեմ:

— Հա՛, հա՛, հա՛... — յուր սուր ձայնով բարձրածայն ծիծաղեցավ Մաշան և Մասխարյանցի գեղեցիկ գլուխն առնելով յուր երկու ձեռքերի մեջ, մի քանի անգամ սաստիկ ամուր համբուրեց նրան:

Մասխարյանցը, որ արդեն հանել էր ձեռնոցներն ու վերաբերուն, նստեց աթոռի վրա:

— Դե՛, Մաշա, ի՞նչ ենք անում, — ասաց նա, — ես սաստիկ քաղցած եմ:

— Զանգահարե՞մ:

— Զանգահարիր:

Մաշան մի քայլ արեց գեպի զանգակը, բայց հանկարծ կանգ առավ և շուր եկավ դեպի Մասխարյանցը:

— Գրիշա, — ասաց նա լրջությամբ, — ձեռաց ինձ մի տասը ոռվրի փող պետք է տաս:

— Ի՞նչ ես անում:

— Զմեռվա նոր ձեր գլխարկ է եկել, պետք է առնեմ. իմ գրլիարկից այլես ոչ ոք չէ ժածկում:

— Լավ, կտամ: Շուտ զանգահարիր, ես դեռ քաղցած եմ:

Մաշան կանգնած տեղը թուավ ուրախությունից, վազեց գեղի զանգակը, բայց հանկարծ կանգ առնելով, արագությամբ շուտ եկավ, մի օդային համբուլուտ տվավ Մասիսարյանցին և նորից վազեց գեղի զանգակը: Նա ամուր սեղմեց էլեկտրական զանգի զրուպանակը:

Սպասավորը ներս մտավ:

— Ես պատվիրե՞մ, թե՞ դու, — դիմեց Մաշան Մասիսարյանցին:

— Պատվիրիր, ինչ ուզում ես, միայն թե շուտ լինի:

Մաշան սպասավորին մի փառավոր ընթրիք պատվիրեց:

Սպասավորը դուրս գնաց:

Կես ժամից հետո Մասիսարյանցն ու Մաշան սեղանի առաջ նստած՝ ընթրում էին: Սեղանի վրա փայլում էր մի շիշ կախեթու գլուխ գինի և մի շիշ էլ շամպանիա: Առաջինը Մասիսարյանցի համար էր, վերջինը Մաշայի համար:

4

Գիշերվա ժամը երեքն էր, երբ Մասիսարյանցը կառք նստած՝ գնաց իրենց տռեն: Կախեթու գլուխ գինին թեև բավական կպել էր նրան, բայց նրա ռոշքն ու միտքը կատարելաւակն զիմին էր: Անհաստատ քայլերով բարձրանալով երկար պաշշպամբը, նա կանգ առավ յուր բռնած բնակարանի սենյակներից մեկի դռան առաջ և ամուր բախեց:

Գիշերվա հագուստով ցրտից կուշ եկած նրա կինը՝ թամարը, գույքը բաց արավի:

Մասիսարյանցը, առանց նրա դեմքին նայելու անգամ, ներս մտավ:

Կինը նորից փակեց դուռը:

— Ինչո՞ւ այսքան ուշացար, Գրիգոր, — անհամարձակությամբ հարցրեց նա:

Մասիսարյանցը, որ ուզում էր գնալ յուր սենյակը, հանկարծ կանգ առավ և վառվող աշխարով շուտ եկավ դեպի թամարը:

— Քեզ ի՞նչ, — գոռաց նա, — ես քեզնից հաշիվ պահանջո՞ւմ եմ քո գործերի համար, որ դու ինձանից պահանջում ես... ես քեզ հազար և հարյուր հազար անգամ ասել եմ, որ մենք միմյանց անհազականության վերաբերությամբ ոչինչ գործ չունենանք... ասե՞լ եմ, թե ոչ... հա՞յ, ասե՞լ եմ:

Խեղճ կինը՝ թե՛ ցրտից և թե՛ երկյուղից դողղողալով՝ մնացել էր կուշ եկած դռան մոտ: Նա մինչև անգամ չէր համարձակվում գլուխը բարձրացնել և նայել ամուսնու դեմքին:

— Ամուսիններ ենք, պետք է ասես, — շարունակեց Մասիսարյանցը, — ինչ որ քեզ է վերաբերում, ես պետք է գիտենամ, ինչ որ ինձ է վերաբերում, դու պետք է գիտենաս: Այսպես չէ՛: Բայց գիտե՞ս այդպես ով է անում: — այդպես անում են միայն խարազ Գեոն և փինաչի Մաթոսն իրենց հույփի-մուտիներով, իսկ փոքր ի շատե կրթված, ինտելիգենտ մարդու համար այդ վաղուց արդեն անախրոնիզմ է դարձել: Քաղաքակոթությունն այժմ պահանջում է ամուսինների մեջ կատարյալ ազատություն: մարդք պարտավոր չէ կնոջը հաշիվ տալու իր գործերի: Համար, կինը՝ մարդուն, եթե այդ չեն ցանկանում, կուսավոր ծվրուպայում վահանցում է արդեն խորտակված է այն անիծված շղթան, որով մարդ ու կին կապված էին լինում միմյանց հետ իրենց կյանքի ամբողջ ընթացքում, թեկուց այդ կյանքը թույն լիներ և, ոչ ոք, բացի մահից, իրավունք չուներ այդ շղթան խորտակելու: Մեզանում գեռաւ գոյություն ունի այդ շղթան, այդ զարհութելի շղթան, մեր տգիտության, մեր խավարամտության, մեր հետադիմության շնորհիվ, և այդ շղթան ո՞վ է կռում, — զարհութելի է: — Կրոնը, եկեղեցին... Բայց ես առաջինը կլինեմ մեզանում, որ կփշրեմ այդ շղթան և ցույց կտամ խավարի մեջ նեխած մեր կրոնականներին, որ կրոնը, եկեղեցին ոչինչ են, և որ մարդու, պատ մարդու համար կա միայն մի ինչ և այդ մի ինչը խղճի և մտքի ազատությունն է...

Նա գնաց յուր սենյակը, բայց նույն բոպեին դարձյալ ներս մտավ:

— Վերջին անգամն եմ ասում, — գոռաց նա, — այսուհետեւ այլևս չհամարձակվես ինձ մի որևէ հարց առաջարկելու, թե ինչո՞ւ ուշացար, որտե՞ղ էի և ալլն: Այս վերջին տարումս դու իմ հոգու ուշացար:

գին այստեղ հասցրիր (նա ցույց տվավ յուր կոկորդը): Բավականէ է, որքան ես քեզ հետ խարազ գնոյություն ու փինաշի մաթոսություն արեցի. այլևս չեմ կարող... ես չեմ կարող ձնշել իմ լեզ (նա ձայնը ավելի բարձրացրեց) խղճի և մտքի ազատությունը, հասկանո՞ւմ ես, թե ոչ, չեմ կարող. այդ մի սոսկալի սրբապղծություն է, որ հակառակ է իմ դատողությանս, իմ գաղափարներիս, իմ հոգուս:

Նա մի քայլ առաջ դրեց դեպի կինը և ձայնը ցածրացնելով, շարունակեց.

— Ես այլևս չեմ կարող քեզ հետ կենակցել, հասկանո՞ւմ ես, թե ոչ: Կենակիցները պետք է միմյանց հասկանան, բայց երբ չեն հասկանում, ինչո՞ւ են միասին ապրում: Ասա՛ ինդրեմ, մինչև ե՞րբ պետք է քեզ հետ կերակրի, լվացքի, երեխայի հագուստի և այլ այսպիսի հիմար բանների մասին խոսեմ. քաղաքակիրթ և քաղաքան աշխարհում հազար ու մի ինդիրներ, դեպքեր, մտքեր են հուզում, տնտեսական, քաղաքական և սոցիալական նորանոր հարցեր են արժարում, իմ ուղեղս էլ պահանջում է դրանց մասնակից լինել, բայց ուղ կարո՞ղ ես ինձ հետ մտածել, խորհել, լոգիկապես դատել, դու, որ իմ կյանքի ընկերն ես, ինձ հետ միասին ապրում ես... Վերջապես, ի՞նչ ես ուզում ինձանից. ինչո՞ւ չես գնում մի այնպիսի մարդու մոտ, որ քեզ հհասկանար և որին ուռ կհասկանայիր: Գնա՛, ես քեզ ազատություն եմ տալիս, միայն թե ինձ էլ ազատ թող... Ես խո չեմ կարող իմ ամրող կյանքս թունավորել միայն նրա համար, որ եկեղեցումը քաշանային ասել եմ, թե՝ «տեր եմ...» Այդպես միայն վերին աստիճանի հիմարները կանեն Նրանք, որոնք չգիտեն, թե ինչ է նշանակում խղճի և մտքի ազատություն,— իսկ ես, ներողություն, այդպիսիներիցը չեմ, այո՛, չե՞մ, չե՞մ...

Նա լոեց, գնաց դեպի յուր սենյակը, բայց հանկարծ կանգ առավ և շուռ եկավ:

— Վաղն այլևս չտեսնեմ քեզ այստեղ,— ասաց նա կտրուկ, խիստ ձայնով: — Գնա՛, ուր ուզում ես, միայն թե՝ ես այլևս չեմ կարող քեզ հետ ապրել: Լսո՞ւմ ես, վա՛զը:

Կինը ցնցվեց և առաջին անգամ աղերսագին նայեց նրան:

— Գրիգո՛ր... — շշնչաց նա և նրա ձայնը դողաց:

— Ես այլևս չեմ ճանաշում քեզ. մենք այսուհետեւ միմյանց համար օտար ենք:

Եվ Մասիսարյանցը բռնեց յուր սենյակի դռան փականքից:

— Գրիգո՛ր, — կրկնեց կինը. — ախր ինչո՞ւ...

— Ինչո՞ւ, — գոռաց Մասիսարյանցը: — Որովհետև տգետ ես:

այ ինչու:

— Սովորեցրու ինձ, ինչ որ ուզում ես, միայն թե... մի գուրեանիր ինձ...

— Սովորեցրու... ե՞ս սովորեցնեմ... ինձ հարկավոր չէ այնպիսի կին, որ նոր պետք է սովորի:

— Բայս առաջ չգիտեհի՞ր, որ ես տգետ եմ, ինչո՞ւ այն ժամանակ ինձ հետ ամուսնացար:

Կնոջ այդ աստիճան համարձակությունն ավելի բորբոքեց Մասիսարյանցին:

— Այն ժամանակ ուրիշ ժամանակ էր, հիմա ուրիշ ժամանակ, — գոռաց նա: — Այն ժամանակ իմ հայացքներս ամուսնության վերաբերությամբ ուրիշ տեսակ էին, հիմա ուրիշ տեսակ: Նոր կյանքը միշտ նոր պահանջներ է զնում մարդու վրա, իսկ ես հետույթմներից և անշարժականներից չեմ, որ միշտ հնի զուռնայով լար գամ... Վա՛զը, վերջին անգամն եմ ասում, վա՛զը... Կարող ես որդուդ էլ հետդ տանել, եթե ուզում ես:

— Գրիգո՛ր, Գրիգո՛ր... — աղերսագին կանչեց կինը մի քանի քայլ առաջ դնելով, բայց Մասիսարյանցը դուրս գնալով յուր սենյակը, դուռն ամուր շրխկացրեց յուր հետեւից:

Թամարն ընկավ դռան մոտ ծնկների վրա, դեմքը ծածկեց ձեռքերով և սաստիկ, զսպած հեկեկանքը խեղդեց նրա կոկորդը:

Փոքրիկ, երեք տարեկան աղջիկը, որ հոր գոռոում-գուշունների վրա արթնացել, նստել էր մահճակալի վրա և, ոչինչ հասկանալով, լուս վկա էր սենյակում հոր և մոր միջին պատահած անցքին, այժմ լսելով մոր հեկեկանքը, ինքն էլ սկսեց լաց լինել:

Հետեւյալ օրը գիշերը երկաթուղու երրորդ կարգի վագոններից մինում նստարանի անկյունում շալի մեջ փաթաթված, կուշ եկած նստած էր Թամարը, իսկ գլուխը նրա ծնկանը դրած, փոքրիկ վերմակի տակ, պառկած քնած էր նրա աղջիկը: Նրա զիսի վերևը — փոքրիկ դարակի վրա ուրիշների ճամպրուկների, կապոցների, արկղիկների հետ սպիտակին էր տալիս և նրա մի ոչ այնքան մեծ

կապոցը, որի մեջ էր այն բոլորը, ինչ որ նա տանում էր յուր հետ ամուսնու տնից:

Նա գնում էր Շ... յուր հորանց տուն:

Նրա աշքերը շատ լաց լինելուց կարմրել, ուսել էին, սիրոց լցված էր. ամեն մի բռպե պատրաստ էր հեկեկալու Ախր ի՞նչ էր արել ինքը, ի՞նչ... ի՞նչ մեղք էր գործել, որ ամուսինն այդպես խայտառակ կերպով վոնդում էր յուր մոտից... Նա այնքան էր սիրում Գրիգորին, այնքան նվիրված էր յոր տուն ու տեղին, ուրեմն ուրիշ էլ ի՞նչ էր ուզում Գրիգորը նրանից...

«Ի՞ւարկե, նա սիրում է ուրիշին և ինձ զուրս է անում», մտածում էր Թամարը և որքան նա աշխատում էր ուրիշ կերպ բացատրել յուր ամուսնու վարմունքը, դարձյալ և դարձյալ պատճառն այն էր զուրս գտլիս, ինչ որ միանգամից տպավորվել էր նրա ուղեղում:

1889

## ԱՂՅ ՄԱՐՏԻՒՄ ՊԱՐԻԿԸ

Աղյա Մարտինը, երբ դեռ ազա չէր, այլ հասարակ մշակ և անունն էլ Մարտիրոս, ամառ-ձմեռ և գիշեր-ցերեկ գդակը գլխից չէր վերցնում, որովհետև քուը տեղ-տեղ կերել էր նրա միանգամայն լերկ գանգի մաշկը, զզկելի սպիներ թողնելով այնտեղ, որի համար և քաշալ Մարտիրոս էին անվանում նրան: Խսկ հետո, որ իր աշքաբացության շնորհիվ կոպեկ-կոպեկ դիզելով կապալառու և աղա դառավ, էլ ոչ ոքից չէր ամաշում գդակը գլխից վերցնելու, որովհետև հիմա պարիկ (կեղծամ) էր դնում երկայն կարմրավուն փափուկ մարդերով, որոնք մեշտեղից կիսված կիսարոլոր ծածկում էին նրա լերկ գանգը մի ականջի քամակից սկսած մինչև մյուս ականջի քամակը, բաց թողնելով միայն ճակատը:

Մի գարմանալի գուգադիպությամբ նրա կինն էլ քաշաւ էր: Աղյա Մարտինն այդ բանը հետո էր իմացել, երբ արդեն ամուսնա-

ցել էր, որովհետև նշանառություն ժամանեալ Անանիին ցույց էին տվել, վրացական հագուստով—թշերի այս ու այն կողմը կախված կալիքներով, գլխին դրած թասակրավով և այսն:

Թերեւս այդ զուգագիպությունն էր պատճառը, որ մարդ ու կին վիխաղարձաբար ոչ մի հակաբանք չէին տածում գեպի իրենց այդ ֆիզիկական պակասությունը և, ընդհակառակը, շատ հաշտ ու սիրով էին ապրում իրար հետ: Տարին մեկ կամ երկու անգամ գուցես, երբ որևէ պատճառով նրանք դիպշում էին իրար և կինը լեզուն իրեն չէր պահում, մարդը հանկարծ դուրս էր գալիս համբերությունից և գոռում:

— Սուս կաց, թե չէ էդ քաշալ գլուխդ կկոտրեմ:

Կինն էլ, շատ լավ գիտենալով, որ նա ոչ քաշալ, ոչ էլ մի այլ տեսակ գլուխ կոտրելու շնորհը չունի, պատասխանում էր արհամարհանքով:

— Ի՞ հողեմ քաշալ գլուխդ

Ու հեռանում կովի դաշտից:

Մրանով էլ վերջանում էր ընտանեկան տրագեդիան առանց որևէ աղետալի հետևանքի, որից հետո մարդ ու կին էլի առաջվացիս շան էին ասում, շան լսում:

Աղա Մարտինը և տիկին Անանին վաղուց հաշտվել էին իրենց մազաղուրկ և սպիներով այլանդակված գանգերի հետ, այնպես որ, մինչև անգամ կարծում էին, թե մարդկային գանգերն առհասարակ այդպես էլ պիտք է լինեն, ուրիշ կերպ լինել շեն կարող: Բատի շատ էին զարմացել, որ իրենց մինումար աղջիկը և մինումար տղան լույս աշխարհ էին եկել բոլորովին այլ տեսակ գանգերով— փառաւուկ, փայլուն գանգուր մազերով ծածկված, այնպես որ տեսնողը կասեր.— Երանի ձեր տիրոջը, ի՞նչ լավիկներն եք:

Եզ իսկապես, շատ լավիկն էր թե՛ աղջիկը, որին կիզոչկա էին անվանում, և թե՛ տղան, որի անունը Վանիչկա էր: Դեռ փոքր հասակից ծնողները թողել էին նրանց իրենց ազատ կամքին, երբ ուղեին՝ դպրոց կզնացին, երբ չէ չէին զնա: Նրանց կամքը հրաման էր ծնողների համար: Դեռ քսան տարեկան գիմնազիստ էր Վանիչկան, որը կյանքի բոլոր հաճույքները վայելել էր, սկսած գիշերային ուսուուրաններից, ազգիներից մինչև կանանց ննջարանները: Ուզ է, էլի, էշը դատի, ձին ուտի», — ասում էր հայրը, երբ նա գանգը դնում էր հոր քիկին, թե ուզես չուզես, պիտի փող տաս: Ու երբ գիտնադիազից նրան վունդեցին իր լավ վարքի և գերազանց

ընդունակությունների համար, նա այնպիսի մի անպատում թեթե-վություն զգաց, որպես թե մի կարևոր ժանր բեռ ցած զցեց մեջ-քից: Այժմ արդեն բոլորովին ազատ էր ինչպես ծիրա և իր նման ուրիշ ծտերի հետ քեզ էր անում ո՞րտեղ և ի՞նչպես որ ուզում էր սիրտը:

Աղա Մարտինը տեսավ տղայի սանձն արդեն շատ է բաց թո-զել և ուզեց մի քիչ քաշել: Բայց քյոհնան ձիու պիս արշավող Վա-նիշկան այդպիսի բաների սովոր չէր և փրփուրը բերանին, աշքերից կրակ թափելով, ծառս ելավ.

— Ասում եմ տո՞ւր, պապա:

— Չեմ տա:

— Տո՞ւր, ասում եմ, պապա:

— Ել չեմ տա, մինչև խելքի շգաս:

— Ելի եմ ասում, պապա, տո՞ւր:

— Ուզում ես հազար անգամ ասա: Հերիք է, ինչքան փողերս տարար քամու տվիր:

— Տուր, պապա, թե չէ կիոշմանես:

— Դուռ՞թ:

Եվ աղա Մարտինը մի կուշտ ծիծաղեց:

— Պապա, դու ծիծաղում ես, բայց իմ ծիծաղը չի գալիս. ես լուրջ բան եմ ասում, կիոշմանես:

— Դե կո՞րի հա, շան լակոտ,— հանկարծ պայթեց պապան:— Սատկես էլ, էլ մի սկ գրոշ չեմ տա, որ աշքդ կոխես: Հերիք է, ասում եմ, դասը քրտինքով դատած փողերս տանես քեզ պիս ավա-րեից հետ քոռուփուչ անես: Կո՞րի աշքիցս, թե չէ, շեմ գիտի ի՞նչ կանեմ:

Վանիշկան մի րոպե լուռ ու անսասան նայեց հոր շառագու-նած դեմքին, հետո մի բառ միայն արտասանեց, որքան խորհր-դավոր, նույնքան և սպառնալից մի բառ.

— Լա՛վ...

Ասաց ու գնաց: Գնաց ու կորավ: Չերկաց ոչ այդ օրը, ոչ էլ ամբողջ գիշերը: Այդ բանը շատ էլ շանհանգստացրեց ծնողներին, որքին կանիշկան շատ համախ ամբողջ օրով ու գիշերով կոր-չում էր և լուսաղեմին էր միայն տուն գալիս քնելու: Բայց հետե-յալ օրը լուսացավ, ճաշ դառավ, գիշերը վրա հասավ, էլի լուսա-ցավ, Վանիշկան շար ու լկար: Այս անգամ արդեն լուրջ անհան-դրստություն տիրեց ծնողներին: Մարդիկ դրկեցին, իրենք ընկան-

դես-դին, մինչև անգամ աղջկան էլ դրկեցին ծանոթ-բարեկամնե-րի մոտ հարցուփորձ անելու: Վանիշկան ոտքով-գլխով կորել էր:

Երբ որոնումները միանգամայն ապարդյուն անցան և հույսնե-րը բոլորովին կտրեցին, նոր միայն տիկին Անանին սկսեց վայ տալ որդու կորուստը.

— Վա՛յ, բոռանամ ես, անպատճառ գլխին մի բան է բերել: անպատճառ իրան Քուռն է գցել՝ խեղդվել: Վա՛յ, կուրանան քու մոր աշքերը, որդի ջան, էս ինչ սկը օրի կանգնեցրիր ինձ:

Ասում էր ու մեկ՝ գլխին, մեկ ծնկներին տալիս: Հետո վրա պրծավ մարդուն.

— Ա՛խ, այս մարդ, ինչ ասեմ քեզ, որ սիրտս հովանա: Հա-վիտենական կրակ գցեցիր սիրտս, հավիտենական կրակով էրվես դուս Անտեր անեմ քու էտ փողերը. պահում էիր, որ քելեխ անես: Ուզեց՝ կտայիր, էլի, ի՞նչդ կպակսեր, ե՞րբ չեր տվել, որ հիմի շտվիր և նա էլ գնաց Քուռը գցեց իրան: Դե երբ որ որդուս մահվան պատճառը դառար, էլ քե՞զ ինչ եմ անում, էլ զո՞ւ ինչիս ես պետք, էլ ի՞նչ սրտով նայեմ քեզ, կարոտել ե՞մ էտ քաշալ գլխիդ...

Եղա Մարտինը սրտի խորքում, իհարկե, զգում էր, որ որդու կորստյան պատճառը ինքն է, ուստի կնոջ հանդիմանություններն ու անհծները սկզբում լսում էր առանց ձայն-ծպտուն հանելու իբ-րև արժանի հատուցում, բայց հետո, երբ կինը արդեն շափից ան-ցավ և թվում էր, թե անվերջ պիտի շարունակեր, մանավանդ որ այդպիսի դեպքերի համար պահած «քաշալ» բառն էլ մեջտեղ նե-տեց, էլ համբերեց և մեկնես պայթեց ամպի գոռոցի պես.

— Դե հերիք է ճղճղաս, այս կնիկ, թե չէ, մեկ էլ տեսար տվի երկու կես արի էտ քաշալ գլուխդ: Իմ դարդը հերիք չի, զու էլ մյուս կողմից ես կատաղած շան պես վրա պրծնում:

Հետո տեսնելով, որ ինքն էլ շափից անցնում է, տոնը մեղ-մացրեց և մասամբ էլ կնոջը սիրտ տալու համար, ավելացրեց.

— Մի՛ վախենա, նա էն պտուղը չի, որ գնա Քուռը գցի իրան: Ով գիտի ո՞ր ավարեից հետ է օր ու գիշեր լուսացնում: Խո լսել ես անառակ որդու պատճությունը. երբ որ կսկսի քաղցած զկւտալ, ինքն իրա ոտովը կգա:

Եվ իսկապես, աղա Մարտինի անառակ որդին հենց այդ օրը եկավ, բայց ոչ թե իր նախատիպի պես զղալով, այլ քիթ ու մոռ-թը կախ և ամենքի հետ խոռվ: Ու երբ սկսեցին հարցուփորձ անել, թե ո՞րտեղ էր, ինչո՞ւ, տուն չէր գալիս, ձայն-ծպուտ չէր հանում:

նստած էր հնդուհավի պես փթագած: Ճաշին ինչքան կանչեցին, դուրս շղնաց ճաշելու: Մայրը ստիպված եղավ ինքն իր ձեռքով բերելու նրա բաժինը: Որդին կատաղեց:

— Տա՛ր, թե չէ դուքս կշպտեմ:

— Շաշ-շաշ մի՞ խոսի, կեր,— ասաց մայրը, հանգիստ կերպով և դուրս գնաց: Հետո, որ մտավ տեսնելու կերե՞լ է, թե իսկապես դուրս չպրտել, տեսավ, որ ոչ միայն կերել է, այլև ամանները լպստել:

2

Այսպես, Վանիչկան մի քանի օր խոռվ էր պահում իրեն, տանը ոչ ոքի հետ չէր խոսում, մանավանդ հոր հետ։ Հայրն էլ նրա մոտ այնպես էր ցուց տալիս, թե նրա երկու օրվա անհայտացումը ոչ մի անհանգստություն չի պատճառել իրեն. ուզում է՝ կարող է գնալ կորչել թեկուզ հավիտյան, բայց որ հույս ունենա, թե այդպիսի սպառնալիքներով կարող է փող կորզել իրենից, շատ կսխալվի։ Այսպես էր ցուց տալիս որդու մոտ, բայց համարյա ամեն օր մի գումար էր տալիս կնոջը, որ տանի «իրան սեցնի»։ Կինն էլ տանում տալիս էր իբր թե մարդուց ծածուկ, հետն էլ խրատում, որ գժություններ շանի։

Այսպես, Վանիշկայի բանը ինչպես կոնֆլիկտից առաջ, այնպես էլ հետո, շատ լավ էր գնում, այնքան լավ, որ հոր հետ հաշտվեց և այժմ փողերն ընդունում էր ոչ թե մոր, այլ իրեն իսկ հորձեռքով, ինչպես առաջ:

Բայց եղավ մի ժամանակ, որ աղա Մարտինի գործերը լավ շգնացին: Ամենից առաջ՝ աղջիկն իր համար փեսացու էր ճարել և առանց հորը հարցնելու, այլ միայն մոր համաձայնությամբ, փեսացուի հետ պայմանավորվել, որ իր հետ տասը հազար օժիտ կտանի: Փեսացուն մի շահել, սիրուն պոդպորուչիկ էր: Մայր ու աղջիկ աղա Մարտինին դրել էին արդեն վճռված խնդրի առջև, և որովհետև այդ միջոցին աղա Մարտինը մի մեծ կապալ էր վերցրել, որից մեծ օգուտ էր սպասում, այդ բանի դեմ շառարկեց և իր կողմից հանդիսավոր խոստում տվեց փեսացուին: Բայց կապալը աղա Մարտինի հույսը շարդարացրեց— մեծ օգուտի աեղ սպառնում էր մեծ վնաս տալ նրան, և նա շէր իմանում ի՞նչպես տակից դուրս գա: Տրամադրությունը փշացել էր, հանգստությունը կորց-

բել: Օր ու գիշեր նստած իր առանձնասենյակում, դավթարներն էր թերթում և համրիչը շխկացնում:

Հոր գործերի հենց այլ խառը ժամանակ Վանիչկան մի շաբաթ երեկո ընկերների հետ պայմանավորվել էր, որ վաղը՝ կիրակի առավոտվանից, իրենց «դամոչկաներով» գնան քաղաքից դուրս այգիներում մի լավ քեֆ անելու: Այդ երեկո նա սովորականից վաղ տուն եկավ, որ, նախ, հորից փող ուզի և ապա մի լավ քնի հանդըստանա, թարմ ուժերով վաղվան դիմավորելու համար:

Երբ մտավ հոր առանձնասենյակը, աղա Սարտիսը գրասազա-  
նի առջև նստած՝ մեկ նայում էր անճոռնի տառերով խլբղած իր  
դավթարներին, մեկ համրիշը շխկացնում։ Դավթարների վրա հակ-  
ված նրա գլխին կարուրագույն պարիկը պլազլում էր լամպի լուսի  
տակ։— Որդին որ մտավ, հայրը գլուխն անգամ շբարձրացրեց.  
Հազիկ թե իմացավ էլ, թե մարդ մտավ — այնքան էր զբաղված Կ  
մտահոգ։

Վանիկան սպասեց, սպասեց և տեսնելով, որ հայրն ըստ ուրեութին միտք չունի գլուխը բարձրացնելու դավթարների վրայից, ձայն տվավ.

— ७८५ —

Հայրը նորից ոչ գլուխը բարձրացրեց, ոչ էլ ձայն հասեց, այլ միայն ձեռքի ջղալին շարժումով ավելի պինդ շրինկացրեց համբիլը:

— Պապա, — կրկնեց Վանիշկան մի քիչ ավելի բարձր, կայծելով, թէ:

Աղա Մարտինը էլի զլուխը շաբարցրեց, բայց սրա տօնդացին շնչառությունից երևում էր, որ հետզհետեւ լցվում է կատապությամբ և որտեղ որ է, պիտի պայթի:

— Պապա, ի՞ն...

Ուզում էր ասել «փող եմ ուզում», բայց խոսքի կեսը կիսատ մնաց խեղճ Վանիչկայի բերանում, որովհետև աղա Մարտինը հանկարծ վեր թռավ այնպիսի կատաղի շարժումով, որ տակի առողջութեան մասին շատ առաջ էր առաջ գտնվեց հատակի վրա:

— Ու, շուն շանորդի, — բղավեց նա ոչ մարդկայիս այլ  
նով, — էլի եկար գլխիս կանգնեցի՞ր: Էս րոպեին կորիր աշքից,  
թե չէ, կտամ երկու կես կանեմ գլուխդ: Մեկ իմ հալս էլ հարցրու,  
է՛, փո՛ւծ փճանալու: Ժամանակ ես գտե՞լ փող ուզելու, տո անա-  
ռակ, տո ավարա շանորդի: Դե շո՛ւտ, կո՛րիր էս րոպեին աշքից,

թե չէ, ոտներիս տակ կցցեմ և էնքան կտամ, որ ասես թե հա՞...  
Լսո՞ւմ ես, թե չէ: Կորի՛ր ասում եմ:

Խեղճ Վանիշկան լսում էր, բայց չէր կորչում, որովհետև այնքան էր ապշել, որ մինչև անգամ կորցրել էր վախի զգացումը: Հետո, տեսնելով, որ հայրն իսկապես կատակ չի անում, փաստական բաշեց և դուրս գնաց:

Գնաց մոտ և իր զարմանքը հայտնեց հոր վարմունքի վրա:

— Վո՞ւ, քոռանամ ես,— ասաց մայրը,— քրոջդ բաժինքը դեռ չեմ թամամացրել, չեմ համարձակվում բերանս բաց անեմ՝ փող ուզեմ, որ պակաս-մակասն առնեմ, դու գնում ես փող ուզում, որ քեֆ անե՞ս:

— Ինչո՞ւ, է՛, ի՞նչ է պատահել որ:

— Ո՞նց թե ինչ է պատահել. բաս դու չգիտե՞ս, որ հայրդ փողրաթից ահագին վնաս է կրո՞ւմ:

— Ես ի՞նչ գիտեմ: Նա ինձ իր գործերին ե՞րբ է խառնում որ:

— Իհարկե, որովհետև շատ լավ որդի ես: Դու միայն նրա փողերը խժուել գիտես, ուրիշ ոշինչ:

Վանիշկան նեղացավ:

— Լա՞վ, հրմի էլ դո՞ւ մի գելի ավետարան կարդա գլխիս: Ես ոշինչ չգիտեմ: Ինձ փող է հարկավոր, պետք է տաս:

— Այ որդի, ո՞րտեղից տամ: Ես փող եմ կտրո՞ւմ:

— Փող ես կտրում, թե չէ, պետք է տաս: Ես չե՞մ խայտառակվելու ընկերներիս մոտ:

— Այ հողեմ ընկերներիդ գլուխը, որ քեզ խելքից հանել են, առանց էն էլ խո խելք չունես, որ քու լավն ու վատը չոկես: Գնաց, գնա քնի ու ոչ հորդ, ոչ էլ ինձ մոտ փողի մասին բերանդ բաց շանես:

Մոր մոտ անհաջողություն կրելուց հետո Վանիշկան գնաց քրոջ մոտ:

Քույրը միայն ծիծաղեց:

— Փող ունենամ,— ասաց,— մի լավ գլխարկ եմ տեսել, կը գնամ կառնեմ, կծածկեմ:

Քրոջ այդ ծիծաղն էլ բավական էր, որ Վանիշկան նրանից էլ հույսը կտրեր: Նա բաշվեց իր սենյակը և, չնայելով արդեն բավական ուշ էր, քնելու մասին չէր էլ մտածում. միտքը գործում էր բոլորովին այլ ուղղությամբ, գործում էր լարված մեքենայի պես:

Հետեւյալ օրը առավոտյան փեսացու պողպորուշիկն անակընկալ կերպով եկավ, ասաց, թե տնից հեռագիր է ստացել, հայրը ծանր հիվանդ է, շտապ կանչում են իրեն, արդեն արձակուրդ է վերցրել և այդ օրվա տասնմեկի գնացքով մեկնելու է, ուստի եկել է մնաք բարով ասելու:

Աղա Մարտինը իր հաշիվների վրա երկար շարշարվելուց հետո գիշերը շատ ուշ էր պառկել և, ըստ երևույթին, դեռ քնած էր: Կինը շտապեց նրան զարթնեցնելու: Բայց ննջարանի դուռը րանալուն պես ակամա կանգ առավ շեմքին:

— Է՞ս ինչ է,— ասաց ծայր աստիճան ապշած:

Նրա աշբերին ներկայացավ հետեւյալ տեսարանը:

Թարձերն ընկած էին մահճակալի մի կողմը, վերմակը և շավանը հատակի վրա, ներքնակը կիսով շափ կախ էր ընկած մահճակալից, աղա Մարտինի հագուստը, կոշիկները, հողաթափերը և գուլպաները թափթփած էին ցաքուցրիվ, սեղանը, աթոռներն անկարգ շարժված էին դեսուլեն, իսկ ինքը աղա Մարտինը չէր երեվում: Հետո միայն տիկին Անանին տեսավ, որ ինչ-որ ահագին սպիտակ բան շարժվում է մահճակալի տակ: Դա ինքը աղա Մարտինը էր ներքնաշորերով, մերկ ոտներով ու գանգով: Կարծես հըսկայական մի գորտ ոտները տարածած փորսող է տալիս մահճակալի տակ: Տեսարանն այնքան տարօրինակ էր, որ առաջին րոպեներին կինը կարծեց, թե մարդը կապալի անհաջողությունից խելագարվել է, և ուզում էր սարսափահար դուրս վագել օգնություն կանչելու: Բայց այդ միջոցին աղա Մարտինը տնքտնքալով, ամբողջովին կաս-կարմիր կտրած, դուրս սողաց մահճակալի տակից և երկու ձեռքի վրա հենվելով հաղիփչազ կարողացավ իր ահագին մարմինը բարձրացնել ոտների վրա:

— Այ մա՞րդ, ի՞նչ էիր շինում մահճակալի տակ,— հարցրեց կինը:

— Աստված ո՞չ գիտի սատանի գլուխն ու արկը,— ասաց աղա Մարտինը ծանր հեռալով, որից նրա սարի պես ցցված փորը բարձր ու ցածր էր անում շապկի տակ: Ասաց և արյունով լցված աշբերն սկսեց ման ածել հատակի վրա, ըստ երևույթին ինչ-որ որոնելով:

— Ախր ի՞նչ է պատահել, է.— այլս չկարողանալով համբերել, բացականչեց կինը:

— Զահրումար ու աստծու կրակ է պատահել, — սրտանց պատասխանեց աղա Մարտինը, — պարիկս կորել է:

Կինը ապշած նայեց նրա մազագործի, այլանդակ գանգին, ինչպես թե կորել է, ի՞նչ ես ասում:

— Կորչելն ինչպես կինի, պողավոր խո չի լինի: Կորել է, էլի ման եմ գալիս, չեմ գտնում:

— Ուր պետք է կորչի, այ մարդ, թե լինի, էստեղ կլինի, էլի:

— Դե որ էղպես է, գտիր, տեսնեմ ոնց ես գտնում, — ասաց աղա Մարտինը և սաստիկ հոգնած նստեց աթոռի վրա:

— Ամբողջ սենյակը շուռումուռ տվի, չգտա, հիմի դու ասում ես՝ էստեղ կլինի: Դե գտիր, էլի, ի՞նչ ես աշքերդ շորս շինել, ինձ նայում:

Կինն սկսեց որոնել, նորից ամեն բան տակնուվրա արավ, նայեց մահճակալի տակ, էլ անկյուն ու պահարան լթողեց, նույնիսկ ձեռքերը կոխեց ամուսնու կոշիկների մեջ, — պարիկը չկար ու չկար:

Նրա զիգրը շատ եկավ, որ չկարողացավ գտնել:

— Ով գիտե ո՞րտեղ ես դրել, ո՞րտեղ չէ, մոռացել ես, — ասաց նեղացած: — Եղ անտեր փողրաթը խո խելք չի թողել գլխիդ:

— Այ, կնիկ, փողրաթն ի՞նչ մեղք ունի: Էն անտերը քնելիս էստեղ էի դրել, այ, էստեղ, — պատասխանեց աղա Մարտինը ձեռքը զարկելով փողրիկ կլոր սեղանի երեսին:

— Բաս խո սատանեքը շտարան:

— Սատանեքը տարան թե շտարան, տեսար՝ չկա:

— Բաս հիմի ի՞նչ անենք, որ փեսեն հրեն եկել, քեզ է սպասում:

Աղա Մարտինը վեր թռավ տեղից:

— Ի՞նչ ես ասում, այ կնիկ:

— Մի ժամ է՝ եկել է: Ռնց պետք է դուրս գաս:

— Աստված ոչ գիտի իմ գլուխն ու արեք, — ասաց աղա Մարտինը երկու ձեռքով խփելով իր լերկ գանգին: — Նրան էլ ո՞ր սատանան բերեց հենց էսօր: Ինչո՞ւ է եկել էսպես վաղ-վաղ:

Կինը պատմեց փեսայի գալու պատճառը:

— Եկել է մնաք բարով ասելու, ո՞նց կլինի, որ դուրս շգամ:

— Այ կնիկ, իսկի մտածում ե՞ս ինչ ես ասում: Էս գլխով ո՞նց գուրս գամ:

— Թղաքդ ծածերի, ասա՝ մրաել եմ:

— Բա զգակի տակից չի երեա: Բան ասա, բանի նման լինի Մարդ ու կին առժամանակ մնացին ծայր աստիճան տարա- կուսանքի մեջ, չիմանալով ի՞նչ հնարեն:

Հանկարծ կնոջ դիմքը պայծառացավ:

— Գիտե՞ս ինչ անենք, Մարտին չան, — ասաց նա շտապե- լով, — արի զլուխով կապի աղլուխով, պառկի անկողնում: Կգնամ կասեմ տաքություն ունի, չի կարող դուրս գալ, թե կուզի, թող զա էստեղ մնան բարով ասի: Հը:

Աղա Մարտինը մի քիչ մտածեց, ձևառ տեսնելով, որ ուրիշ հնար չկա, հավանություն տվավ կնոջ հնարամտությանը:

— Դե դրստիր անկողինը, — ասաց նա: Կինը սկսեց արագ- արագ կարգի դնել մահճակալը և սենյակը: Ժամանակ չկար, շտա- պում էր:

Խսկ աղա Մարտինը զբաղված էր զլուխը կապելով և միւճույն ժամանակ խորասուզված էր ինչ-որ մտաժմունքի մեջ:

— Տո... — Հանկարծ զոռաց աղա Մարտինը, վեր թռավ ան- չից և այնպես, ինչպես որ կար — ներքնաշորով և բորիկ ոտնե- րով — դուրս վազեց խելագարի պես:

Նրա հանկարծական գոռոցից կինը ցնցվեց և մարդու խելա- գար վազքը տեսնելով՝ կարծեց, թե կամ երկրաշարժ եղավ, կամ տանձը քոնվել է Հրդեհի բոցերով, ուստի ինքն էլ գլխապատճ- ողուրս նետվեց մարդու հետակից կնողանական սարսափով բռնված:

Աղա Մարտինը գնդակի պես ներս ընկավ որդու սենյակը:

Վանդշկան հանգիստ նստած էր հայելու առջև և զբաղված էր երեսը սափրեկով: Նա այնքան էլ չվախեցավ, երբ հայրը կրակ կարած ցցվեց իր առջե. կարծես թե սպասում էր նրան:

— Շան որպի, — բղավեց աղա Մարտինը, — էս րոպեին պա- րիկս տուր, թե չէ, էղ ածելին կառնեմ վիզդ կկտրեմ:

— Ի՞նչ պարիկ, պապա:

— Իմ պարիկը:

— Քո պարիկը ինչի՞ս է պետք, պապա:

— Բաս զու չես գողացե՞լ:

— Ինչո՞ւ պիտի գողանայի, պապա:

Նրա Մարտինը մի րայե լուս ու փոքրով հայացքով նայեց որդու խած աշքերին, որոնց մեջ վախի կամ շփոթմունքի նշույլ անգամ չկար:

— Մտիկ արա, Վանո, — սպանաց նա շարագուշակ հան-

գիստ ձայնով,— թե որ գողացել ու թաքցրել ես, էլ ինձնից չես պրֆնի, աստված վկա:

Որդին շպատասխանեց: Կանգնած էր անկոտրում երեխայի պես լուս:

— Վանիչկա, տե՛ս, դու սուս ես անում,— այս անգամ մեջ մտավ մայրը,— էղ գող աշքերիցդ տեսնում եմ, որ դու ես վերցրել էս րոպեին հանիր տուր:

— Բաս որ փող եմ ուզում, ինչո՞ւ չի տալիս,— պատասխանեց Վանիչկան հանդուգն կերպով:— Էս րոպեին ինձ տասը թուման է հարկավոր:

— Վայ քո ծնունդը չորանա, շանից ելած,— բղավեց աղա Մարտինը և ատամները կատաղությունից կրծտացնելով վրա ընկավ, որ որդուն խեղդի, բայց կինը պինդ բռնեց նրա թերթից:

— Վո՞ւ, քոռանամ ես,— ասաց նա երեսը ճանկոելով.— Վո՞ւ, քոռանաս դու, Վանիչկա, էս ի՞նչ խայտառակություն ես բերում մեր գլխին: Բաս դու չգիտե՞ս, որ փեսեն էստեղ նստած՝ մեզ է սպասո՞ւմ: Էս մարդը ո՞նց դուրս գնա նրա մոտ առանց պարիկի: Հանիր էս րոպեին, տուր, ասում եմ:

— Տասը թումանը տա՞ տամ,— անվրդով պատասխանեց Վանիչկան, պինդ կանգնած իր խոսքի վրա:

Աղա Մարտինը կանգնած էր կատաղությունից ինքն իրեն ուտելով: Էլ խոսք չէր գտնում արտասանելու: Որդու հանգիստ համառողթյունը միանգամայն դիսաթափ էր արել նրան:

— Այ մարդ, դու էլ ի՞նչ ես սատանի ձին նստել,— դիմեց նրան կինը,— գնա թեր, իրան սեցրու, էլի՛, որ տա:

— Օ՛հ, ասում եմ, էլի՛, քու ծնունդը չորանա, քու ծնունդը,— կրկնեց աղա Մարտինը ծանր հառաջանքով և շտապելով դուրս գնաց: Մի-երկու րոպեից վերադարձավ և մի հարյուրանոց թղթադրամ շպրտեց որդու երեսին:

Վանիչկան նախ փողը վերցրեց, պահեց ծոցում, հետո մոտեցավ պատի վառարանին, բաց արեց ծխնելույզի անցքի դռնակը, այստեղից հանեց հոր պարիկը թղթի մեջ խնամքով փաթաթած և տվավ հորը:

Պարիկը ծխնելույզի անցքի մեջ էր պահել, որ եթե սենյակը խուզարկեն, չգտնեն:

**Ք**րիստոսի ծննդյան ճրագալույց երեկոյին ա. Հովհաննես եկեղեցու ծերունի ժամկոչն անսովոր ուրախ տրամադրության մեջ էր. այդ այն սակավ օրերից մեկն էր, երբ գմբեթը փլած և տանիքը տախտակով ծածկված փոքրիկ եկեղեցին լցվում էր աղոթողներով, երբ երեկոյի կիսախավարից և խունկի թանձր ծխից առաջացած աղջամուղչի մեջ եկեղեցու խոնավ, մոայլ պատերի վրա ճըրք-ճըրքալով վառվում էին իրար կողքերը լիզելով և իրար վրա թերվելով բազմաթիվ թռքախտավոր մոմեր, ծիծաղկոտ փայլ տալով մորուքավոր և անմորուս սրբոց պատկերների սկացած և տեղ-տեղ այրված ոսկեզօծ շրջանակներին:

Երեսուն տարի կիխներ, որ ծերունի ժամկոչը ծառայում էր այդ խղճով եկեղեցուն և այնպես էր կապված նրա հետ, ինչպես զառամյալ շունը իր հինավորց տիրոջ հետ: Այդ եկեղեցու պատի տակ էր անցկացրել իր դառն կյանքի կեսը, այդտեղ էլ ուզում էր մեռնել: Հավատարիմ ծառայի սրտացավությամբ տեսնում էր, թե ի՞նչպես «աստծու տուն» կոչված այդ շենքը ժողովրդի աղքատությունից և անտարբերությունից տարեցտարի անշքանում, խարխլվում է, և թվում էր թե՝ եթե մի օր ձյունի ծանրությունից կամ գարնան անձրեններից վերջնականապես փլվեր, ուրախությամբ կնետեր իրեն նրա փլատակների տակ, որպեսզի ավանդեր իր ծեր հոգին նրա հետ միասին:

Ծերունին միայն ժամկոչի դեր չէր կատարում, այլև տիրացություն էր անում: Եկեղեցին ուներ մի շիլ տերտեր և մեկ էլ այդ ծեր ժամկոշ-տիրացուն:

Կեսգիշերին, երբ զեռ մութ արևելքում աստղերը հուրհատում էին ահագին շողակների պայծառ երանգներով, երբ աքաղաղները դեռևս վաղաժամ էին համարում կանչելու իրենց վաղորդյան ծուլություն, ծերունի ժամկոչը քնաթաթախ դուրս էր գալիս եկեղեցու բակում գտնված իր տնակից, ուր ապրում էր իր փոքրիկ բոռան հետ, երկու անգամ ծլնգացնում էր «հիվանդների զանգը»:

\* Հայկական եկեղեցու մեջ մի հնավանդ սովորություն կար, որի համաձայն կեսգիշերին երկու անգամ զանգահարում էին, որպեսզի ծանր հիվանդներն ուրախանան, կարծելով թե լուսադեմը մոտ է: Այդ զանգահարումը կոչվում է «հիվանդների զանգ»:

Հետո Կորից մտնում էր տնակը, նորից քնում և ապա, երբ լույսը նոր-նոր սկսում էր բացվել, դարձյալ դուրս էր գալիս և ծխզացնում ժերորդը առանց, սակայն, մտածելու, թե դրանով որեւ մարդ պիտի զարթնի ժամ գալու համար: Այնուհետև դանդաղորեն բաց էր անում եկեղեցու ծանր դռները, մի կիսայրված մոմ էր վառում և Հովհաննու պատկերի առջև, քառասուն անգամ ծունը էր դնում, ովզորական աղոթքը մրմնչալով, հետո մեկ-մեկ դուրս էր բերում ցեցակեր կապերտները, թափ տալիս՝ փոշու ահագին ամշպեր բարձրացնելով, և սկսում սրբել սպասների վրա նստած փոշին: Մինչև որ այս բոլորը վերջացներ, օրն արդեն լուսացած էր լինում: Այնուհետև ածում էր «Հասարակը», փոխնիփոխ ծխզացնելով շոխտակ զանգակները, և սպասում քահանային: Շատ ժամանակ էր անցնում, գալիս էր շիլ տերտերը: Սերունի ժամկոչն առանց շտապելու շուրջառը գցում էր նրա ուսերին, և սկսվում էր ժամասացությունը: Եկեղեցու շորս պատերի մեջ խոլ արձագանք տալով լսվում էին քահանայի նժամկոչի անճոռնի ձայները մեքենական միալար և միանման հնչյուններով, կարծես նրանք ոչ թե ժամ էին ասում, այլ իրարից նեղացած, վիճում էին իրար հետ անտարեր և հանգիստ դգործությամբ: Եկեղեցում սովորաբար մարդ շէր լինում: Երբեմն միայն ժոտիկ ապրող մի որեւ պառավ կին թառամած, կուլ եկած, շուտերը քամսելով հատակի ճաքճած աղյուսներին, ներս էր մտնում, անկանոն կերպով խաչակնքում երեսը, կանգնում ժամկոչի սեղանի առջև և ձեռքը գրպանը կոխած երկար ժամանակ մատների ծայրերով պրատում բռնոթու տուփի, թաշկինակի, թելի կծիկի և ո՞վ գիտե ուրիշ ինչ բաների արանքում կորած կոպեկանոցը: Ժամկոչը, անգիր սերտած փոխերը շրի նման իրար վրա տալով, գալիս մոմ էր տալիս նրան, նրա տված կոպեկանոցը ծխզալի ցած էր գցում սեղանի վրա բացված ժակից և, փոխասացությունը շարունակելով, գնում կանգնում նորից բեմի առջև: Ասենք՝ նրա պաշտոնն այնպես էր, որ ժամ ասելիս շարունակ ճանապարհորդություն էր կատարում եկեղեցում: Նայելով օրվան և ժամավորների քանակության, փոխեր ասելիս կամ մոմ էր ժամիում, կամ սրբապատկերի առջև կիսայրված մոմը պնկում ու հանգնում, կամ առասապահ կախված զահը վառում երկայն եղեգնափայտի ժայրին վառած մոմով, կամ այդ զահի վրա կիսայրված մոմերը հանգնում նույն ծղենափայտի ժակից փշե-

լով, կամ բուրվառի մեջ մանղալից կրակ գցում, կամ փոխասացությունն ընդհատելով՝ տերտերի հետ փսփսում:

Այս երեկո, ծննդյան ճրագալույցին, շատ կոպեկներ էին ցած ընկել մոմի սեղանի ժակից: Այլև կոպեկներ էին, որ հազարից մի անգամ, այդպիսի տոն օրերին, ժամ մտնող աղքատ ժողովուրդը ձգում էր զանձանակի թարախը: Ուրախ էր ծերունի ժամկոչը, որ այդ երեկո թերես մի մանեթ բաժին կհասներ իրեն: Բացի գրանից, նա, ըստ իր հին սովորության, «ավետիս» պիտի ման գար իր թռուան հետ, որը այդ երեկո պատարագին օգնում էր նրան ժամաշապիկ հագած: Գրանից էլ բացի, վաղը, խալը ջուրը գցելուց հետո և հետեւյալ օրերը տերտերի շուրջառը թեկին գցած և բուրվառը ձեռքին, իր ծեր ոտներով պիտի քարշ գար նրա հետեւյալ անօրհների: Իսկ «ավետիսն» ու տնօրհները, մեկ էլ հարսանիքն ու մեռելաթաղը եկամուտի ամենալավ աղյուրներն էին տերտերի հետ միասին ժերունի ժամկոչի համար ևս:

Պատարագը վերջացավ: Աղոթողները, համբուրելով եկեղեցու խաչերն ու դուռը և իրար ավետելով Քրիստոսի ծնունդը, կամաց կամաց ցրվեցին իրենց տները շաբաթվա պասը և օրվա ծոմը բաց անելու: Տերտերը շշի մեջ մնացած կարմիր գինին դատարկեց պատարագի ժամանակ արդեն մաքրազարդած սկիհի մեջ, զլիին քաշեց, ներքին շրթունքով բերանը հավաքեց բեղի կարմրած ծայրերը, ծծեց, զգեստը հանեց, հաշվեց իր զանձանակը և, գումարից դժողոհ, գրպանն ածեց ու քաշվեց իր տուն: Սերունի ժամկոչը մոմերը հանգըրեց, բուրվառի կրակը թափեց մանղալի մեջ, կողպեց եկեղեցու դռները և, ժամաշապիկները թոռանը տալով, նրա հետ գնաց «ավետիս» ման գալու:

\* \* \*

Գիշերը շատ ցուրտ էր, երկինքը պարզ: Զյունը բարացել կան էր գետնին և ստների տակ արորված հողի զույն էր ստացել: Անսովոր թափանցիկ օդի մեջ երկինքը մուգ փիրուզի գույնի էր խփում: Աստղերը սովորականից մեծ էին երեսում և, կարծես սառնամանիքից մրսելով, կապտել էին:

Փողոցներում անցուղարձը գրեթե դադարել էր, շնայելով, որ գեռ շատ վազ էր: Տների պատուհանները պայծառ լուսավորված՝

ծիծաղում էին կարծես, Օդի մեջ կանգնած էր խունկի, փլավի և ձկան հոտ:

Սերունի ժամկոչը փոքրիկ թռոան հետ, սպիտակ ժամաշապիկը հագած, աշագին ոտնամանները սառած գետնին քրթքրթացնելով, մտնում էր բակերը, տնեւ-տուն, փողոցե-փողոց և իր ճաթած ձայնով ավետում հավատացյալներին Քրիստոսի ծնունդն իր պատանի ընկերոց ձայնակցությամբ: Եվ ամեն մի տուն մտած ժամանակ նրա գրանը ծանրաբեռնվում էր նորանոր սև ու սպիտակ դրամներով:

Ահա նա կանգ առավ մի դռան առջև և ծեծեց: Ներսից լսվում էր տղամարդկանց, կանանց և մանավանդ երեխաների խառն ձայների մի կատարյալ ժխոր, որի շնորհիվ ներսը երկի լւսեցին, թե դուռը ծեծում են: Ժամկոչը մի քիչ սպասեց և նորից ծեծեց:

Դուռը բաց արեց մի երիտասարդ՝ արխալուզով և արծաթե զոտիվ: Դեռ ներս շմտած՝ ժամկոչի և նրա թռոան երեսին ներսից տաք օդի այնպիսի մի խոնավ հոսանք խփեց, որ կարծես բաղնիսի դուռ բաց արին նրանց առջև:

Ժամկոչը թռոանն առաջ գցեց և ինքն էլ մտավ նրա հետեւից:

Հին նահապետական մեծ սենյակ էր մեկ պատից մինչև մյուս պատը կապած երկայն ու լայն թախտով: Թախտի վրա ձգված էր մի ծայրից մինչև մյուսը կապույտ սփոռց, որի վրա ներկարարը թափել էր իր արհեստի բոլոր հմտությունը:— Սփոռցի կապույտ ֆոնի վրա սպիտակ ճամուկով նկարահանել էր ճաշին վայել բոլոր պարագաները— դանակ, պատառաքաղ, գդալ, աղաման, ձուկ և այլն. բայց հայտնի չէ, թե ինչու այդ բոլոր սպական բաների մեջ իր ճյուղավոր պողերն էր ցցել և եղջերուն: Սփոռցի վրա կար մի-միայն ձկնեղեն, իսկ մսեղեն՝ ոչ. նավակատիկ էր: Կերակուրների պսակը կազմում էր փլավը, որի բարձրացրած ախորժահոտ գոլորշին բռնել էր ամրող սենյակը: Սփոռցի զլիին նստած էր ընտանիքի հայրն ու պապը— մի աշխույժ, ուրախ ծերունի, թրաշած երեսով և գեռնս սև մազերով: Նրա ազ ու ձախ կողմը շարված էին հինգ-վեց երեխա, տղա և աղջիկ: Սփոռցի մի ծայրին նստած էր մեծ մայրը, մյուս ծայրին՝ երկու հարս, որոնցից մեկը համ ժիծ էր տալիս օրորոցի մեջ պառկած երեխային, համ հաց էր ուտում: Այնուհետև թախտի երկայնքով մի երկայն նստարանի վրա իրաբ կողքի նստոտած էին շորս եղացր՝ մեկը մյուսից թիկնավետ, կարմրաթուշ, ուտող-խմող, քեֆ սիրող: Ամեն մեկի առջև մի-մի ափ-

սե փլավ կար դրած գլուխիր սարի պես վեր ցցած, իսկ տակը յուղը գուր էր կապել:

«Ավետիս» ասողների մտնելուն պես սենյակում տիրող ժխորը մեկեն դադարեց: Երիտասարդները շտապով կոնծեցին իրենց գինու բաժակները և բերանները սրբելով ոտի կանգնեցին սպասողական դրության մեջ: Մյուսները դադարեցին ծամելուց:

Սերունի ժամկոչն ու թոռը դռան մոտ կանգնած՝ մի-մի մոմ վառեցին, գլխարկները վերցրին և սկսեցին երգել:

Այսօր տոն է ծննդյան, ավետիս,  
Տյառն մերո և հայտնության, ավետիս...

Երգում էին առանց շտապելու, առանձին հանդիսավորությամբ, ժամկոչն իր ճաթած ձայնով, պատանի տիրացուն իր զիլ ձայնով, և այդ երկու ներհակ ձայների հնչյունները ոչ մի կերպ չէին ներդաշնակվում, չէին հյուսվում իրար հետ:

Վերջացավ «ավետիսը», վերջացավ և «Խորհուրդ մեծը», որը երգվեց ավելի արագ տեմպերով, քան առաջինը:

— Շնորհավոր ծնունդ և հայտնություն,— ասաց ծերունի ժամկոչը և հանգցրեց ծեռքի մոմը:

— Շնորհավոր կենաս, մղղսի ջան,— կանչեց տան նահապետը:— Դե՛հ, տղերք, — դարձավ նա երիտասարդներին՝ ծեռքը արխալուղի գրանը կոխելով, — հանեցեք մի-մի արասի տվեք մեր մղղսուն: Ըհը՛, էս էլ իմ արասին:

Եվ հինգ արասին մեկը մյուսի հետեւից մտավ ծեր ժամկոչի բուռը:

— Ա՛ կնիկ, վեր կաց էն ըրեխին կողինախ տուր, կոնֆետ տուր, — դիմեց կնոջը տան նահապետը:— Մղղսի ջան, բա որ եկար մեզ հմար «ավետիս» ասացիր, արի մի թաս գինի խմի: Ածա, այտղա, տուր օխնի:

Սերունի ժամկոչը մի թաս գինին շպրտեց երկար ու բարակ օրհնանքներից հետո:

— Փլավից-զատից անուշ արա, մղղսի ջան: Բեր էդ ըրեխին դեսը, թող դա էլ ուտի: Տղերք, տեղ տվեք՝ նստեն:

Փլավը և ձկնեղենն ուտելու ժամանակ նույն երկար ու բարակ օրհնանքներով ժամկոչը ծրծովեց երկրորդ թաս գինին: Հետո երրորդը, հետո չորրորդը, բայց հինգերորդից վճռապես հրաժարվեց,

ասելով, որ գեղ շատ տներ ունի մաս գալու, և նորանոր օրհնանք ներով դուրս գնաց թոռան հետ:

— Պապի, լավ խալիս էին, չէ՞ — ասաց թոռը ստացած կոնֆետներից մեկը բերանը գցելով:

— Շատ լավ, — պատասխանեց պապը, որի գլուխը տաքացել էր խմած գինուց: — Մեր լավ ծխերից են: Էգուց, որ գանք տունը օրհնելու, տերտերին մի մանեթ կտան, ինձ էլ տասը շահի: Լավ խալիս են, շատ լավ:

— Տունն էլ ինչքան տա՞ք էր, — ասաց թոռը, կոնֆետը կը տացնելով:

— Հա, շատ տաք էր. ջաններս տեղն ընկավ:

— Բա վլավը, պապի. մեկ էլ որ տային, է՞ էլի կուտեի, էնքան քաղցած էի և համով էր:

— Հա, շատ համով էր... Չուկն էլ: Ես էլ էի քաղցած, — ասաց պապը:

Իրենց շրջագայած տների մեջ այս միակ տունն էր, որ իր սիրալիք ընդունելությամբ այսպիսի բարձր տրամադրություն էր առաջ բերել ծերունի ժամկշի և նրա թոռան մեջ: Շատ տներ նրանց ընդունում էին նկատելի դժգությամբ և, մի քանի կոպեկներ դնելով ծերունու բուրը, ճամփու զնում: Խակ մի դուռ ամենին շրացվեց նրանց առջև, ինչքան էլ թակեցին: Մի դուռ էլ թեև բացվեց, բայց բացողը նրանց սպիտակ ժամաշապիկներից տեսնելով, թե ովքեր են, իսկույն էլ ետ դրեց դուռը սրտալի հայրոյանքով:

— Զեր հերն անիծած, չպրծանք, զահլա տարան, էլի:

Ծերունին բնավ չնեղացավ այդ անհյուրընկալ ընդունելությունից, որովհետև գիտեր, որ քաղաքում ինչքան որ ժամ կար, բոլորի տիրացուներն էլ, մեծ թե փոքր, այդ երեկո փողոցներն ընկած՝ զույգ-զույգ «այսօր տոն է» էին ման գալի և իսկապես որ զահլա պիտի լինեին տարած ամեն մի տուն մի քանի զույգ մըտնելով:

Վերջը պապ ու թոռ կանգ առան երկնարկանի: մի լավ տան բակի գտան առջև: Մտածում էին՝ մտնե՞ն, թե շմտնեն, վճռեցին մտնել և դրանով վերջ տալ իրենց շրջագայությանը, որովհետև արդեն ուշ էր: Մտան:

Բակի մեջտեղը, բերած ձյունի շեղակույտերով շրջապատված սյունի վրա վառվում էր լանջերը, որը պղտոր ապակիների միջից

այնքան լույս չէր տարածում, որքան շեշտում էր զուրջը տիրող խավարը:

Ծերունին գիտեր, որ ներքին հարկում բնակվում էին հրեա ընտանիքներ, իսկ վերին հարկը բռնած էր ինքը տանտերը, որը հառուստ հայ չինովնիկ էր: «Մի մանեթ չէ, երեք մանեթ էլ չի խնայի», — մտածեց նա և թոռան հետ սանդուղքով բարձրացավ դեպի ընդարձակ պատշաճմբը: Զնայելով, որ այստեղ շորս դուռ կար և մի շարք պատուհաններ, բայց ոչ մի տեղից ոչ լույս էր երևում և ոչ որևէ ձայն լսվում:

Ծերունին թոռան հետ անհամարձակորեն կանգ առավ սանդուղքի գլխին, շիմանալով ո՞ր դուռը ժեծի:

Այդ երերման մեջ էր, որ դռներից մեկը բացվեց և դուրս եկավ մի կին՝ ուսերին մի հաստ շալ գցած: Կինը դուրս եկավ ցրտից սարսուալով և ուզում էր ուր-որ զնալ շտապով: Թայց մի քանի քայլ շարած՝ հենց որ մթության մեջ տեսավ երկու սպիտակ ժամաշապիկներ, կանգ առավ սոսկումով. նրան թվաց, թե երկու մեռել, մեկը մեծ, մյուսը փոքր, եկել են գերեզմաններից իրենց պատանքներով և եկել են ցից կանգնել սանդուղքի գլխին: Ու հանկարծ մի սարսափելի ծիչ արձակելով ներս ընկավ լեղաճաբ:

Ներսից լսվեց ինչ-որ ոտների դմդմբոց և տղամարդի մի ձայն, որ հարցնում էր վախիցած:

— Ի՞նչ է... Ի՞նչ պատահեց...

Դրան հետեւց կնոջ ձայնը. նրա արտասանած խոսքերն անորոշ էին. ըստ երեսութին, լեզուն զլղացնում էր:

Նորից ինչ-որ ոտների դմդմբոց և ուրիշ խառն ձայներ, որից հետո աղմուկով բացվեց նույն դուռը և դուրս թռավ մի պարոն՝ ճաղատ գլխով, սրածայր բեղերով և խալաթով: Դուրս թռավ, բայց հանկարծ սպիտակ ժամաշապիկները որ տեսավ, տեղնուտեղը բարցավ:

— Ո՞վ եք, — բղավեց նա այնպիսի մի տարօրինակ ձայնով, որի մեջ ավելի շատ վախի հնչյուններ կային, քան թե բարձրանան:

— Ավետիս, աղա՝, — ասաց ծերունի ժամկոչը, ինքը ևս վախիցած այդ անսպասելի դիպվածքից:

— Ի՞նչ, — հարցրեց ճաղատ պարոնը:

— Ավետիս, — կրկնեց ժամկոչը:

— Ի՞նչ Ավետիս... ո՞վ է Ավետիսը:

— Ավետիս ասելու ենք եկել, աղա:

Ճաղատ պարոնը նոր հասկացավ բանը: Եվ նրա վախը տեղի տվեց կատաղի զայրութի, Ու այնպիսի հայհոյանքներով, որպիսին չէր կարելի սպասել այդպիսի մի աղա մարդուց, վազ տվեց դեպի սպիտակ ժամաշապիկները: Մինչև նա կհասներ իրենց, փոքրիկ տիրացուն իր արագավազ ճարպիկ ոտներով ներքեւ վազեց: Բայց դեռ բակը շհասած՝ լսեց ինչ-որ ծանր թրիսկոց: Հետո, որ կանգ առավ և նայեց վերև, տեսավ մի բան, մեծ ու սպիտակ, գլորվում է սանդուղքով վերևից ներքեւ, տարօրինակ խուզ դղըր-դյունով:

Մինույն ժամանակ ճաղատ պարոնը, սանդուղքի գլխին կանգնած, ճաքում էր բղավելուց:

— Սիմոն... Սիմոն...

Բղավում էր այնպիս, կարծես մորթում էին իրեն:

Բակի հայտնի չէ ո՞ր անկյունից՝ գլխապատառ դուրս թռավ Սիմոն կոշվածը: Դոնապանն էր:

— Ո՞ր շհաննամն ես կորել, շո՛ւն շան որդի,— բղավեց նրա վրա ճաղատ պարոնը:— Էղակս էս պահում, հա՞՛, տունը: Որ գան թալանեն, մեզ էլ մորթեն, խո չե՞ս իմանալ: Ինչո՞ւ ես դուռը բաց թողել, որ էդ գողերն ու ավագաները ազատ-համարձակ մտել են: Էս բոպես բռնիր դրանց և տար պալիցիա: Թող էնտեղ տեսնեն, թե ո՞րտեղ է Ավետիսը:

Մինչ այդ ծերունի ժամկոչը թոռան օգնությամբ վեր էր կացել և տնքալով շտկում էր ջարդված կողերը:

Դոնապանը հանել տվեց նրանց ժամաշապիկները, մի ձեռքով առավ ծերունու թեր, մյուսով նրա թոռան ձեռքը և դուրս տարավ բակից: Փողոցում նրանց հանձնեց զարադավոյի ձեռքը, որը ցըրտից սառած մարմինը մի քիչ տաքացնելու համար ձեռաց մտել էր մոտակա պադվալը, մի երկու բաժակ օղի կոնծել և հենց նոր դուրս էր գալիս այնտեղից ինչ-որ ծամելով:

Սակայն զարադավոյը այնքան բարի մարդ էր, որ նրանց շրջացրեց ոստիկանատուն, այլ կիսաճանապարհից բաց թողեց, խորհուրդ տալով, որ այլևս «ավետիս» ման չգան, որովհետև «стРОГО ВОСПРЕЩЕНО»:

Բայց այս բարի խորհուրդը տալուց առաջ շմոռացավ ծերունու գրանցանը մի քիչ թեթևացնել այդ երեկոյի վաստակից:

**Պ**ատրիկյանը մի հայացք ձգեց իր հնացած հագուստին, նայեց կոշիկների ծոմոված ծայրերին, դուրս եկավ սենյակից, դուռը փակեց կախովի կողպեքով, բանալին գրպանը կոխեց, անցավ բակի երկայնքով և բարձրացավ տանտիրոջ բնակարանի ընդարձակ պատշգամբը, որը մաքուր ու կարմրավուն, պլազում էր հայելու պես, առավոտվա արևի պայծառ ճառագայթներով ողողված: Նրան թվում էր, թե անասունները, երբ նրանց սպանդանոց են տանում, ճիշտ նույնը պիտի լինեն գգալիս, ինչ որ գգում էր ինքն այդ րոպեին: Նա մի վտիտ երիտասարդ էր խիստ բարի աշքերով և անվատահ շարժումներով: Խոհանոցից դուրս եկող իմերել ծառային խնդրեց կամացուկ, որ տանտիրոջն իմաց տա, թե ուզում է տեսնել նրան: Սառան, մոխրագույն բրդե չուխայի ետ ծալած երկայն ու լայն թերեր ցած թողնելով, գնաց նրա խնդիրքը կատարելու Պատրիկյանը հետեւից նայեց նրա երկարածիտ փափուկ անկրունկ կոշիկներին, որոնք քայլելիս ոչ մի ձայն չէին հանում: Հետո աշքը գցեց խոհանոցի բաց պատուհանից ներս, որտեղ խոհարարը, ամբողջապես սպիտակազգեստ, ձյունի պես սպիտակ ու մաքուր արախչին գլխին, վարժ ձեռքերով վետրահան էր անում նոր մորթած վառիկներ և բերանով ինչ-որ պարերգ էր շվշվացնում: Սառան դուրս եկավ և դուն մոտից ձեռքով արավ նրան: Պատրիկյանը զգուշորեն անցավ պատշգամբով, դուն մոտ սրբեց ոտները, ծառայի առաջնորդությամբ մտավ ճաշասենյակը, այնտեղից՝ ընդարձակ ու խիստ բարձր զահինքը, որը կորած էր հսկայական ծաղկամանների, աթոռների, բազկաթոռների, սեղանների, գահավորակների, բազմոցների մեջ և կանգ առավ տանտիրոջ առանձնասենյակի դռան առցև: Սառան դուրս բաց արեց, ներս հրավիրեց նրան, իսկ ինքը հեռացավ:

Գուցե ամենամոլեռանդ աստվածապաշտը այնպիսի երկյուղածությամբ շմտներ սուրբ խորանը, ինչպիս մտավ Պատրիկյանը տանտիրոջ առանձնասենյակը: Տանտերը, որի ազգանունը փողոցի շքադրան պղնձե տախտակի վրա փորագրված էր Դավիթ Ֆոմիչ Աղամիրով, մոտ 40—45 տարեկան տղամարդ էր խիստ ազգութ, կարծես բրոնզից ձուլված դեմքով, սպիտակախառն կոշտ մազերով

և սրածայր կարճ մորուքով: Նա նստած էր թղթերով, թղթապաշտակներով, գրքերով և անթիվ մանր-մունր բաներով ժանրաբեռնված ահազին գրասեղանի առջև և գրում էր:

— Ներեցեք, ես՝ իսկույն,— ասաց նա, մի վայրկյան նայելով այցելուին պեսնեի վերևից, և շարունակեց գրել:

Պատրիկյանը մնաց կանգնած:

— Խնդրեմ նստեք,— ասաց տանտերը, շարունակելով գրել:

Պատրիկյանը կամաց նստեց, գլխարկը ծնկների վրա բռնած, և նայեց շուրջը: Սենյակը զարդարված էր, դահլիճի պես, փարթամորեն: Կահավորանքի մեջ աշքի էր ընկնում ոչ այնքան ճաշակը, որքան փափկակեցության թուլությունը: Պատրիկյանը ուր նայում էր, տեսնում էր գորդ ու թափշյա բարձիկներ: Կար և գրքերի մի շատ երկար պահարան ապակյա դռներով, որի բոլոր դարակները լիքն էին ոսկեկազմ գրքերով՝ զորքի պես խիստ կանոնավոր կողքեղքի շարված: Այդ պահարանն էլ, անշուշտ, սենյակի անհրաժեշտ ճանաշված կահավորանքից և զարդարանքներից մեկն էր կազմում: այլապիս Պատրիկյանը չէր կարծում, թե Դավիթ Ֆոմիլը ժամանակ ունենար այդ ստվարահատոր գրքերից որևէ մեկը ձեռքն առնելու, որովհետև շափազանց զրադված էր իր մասնավոր և հասարակական գործերով: Նա գործարանատեր էր, քաղաքային դումայի իրավասու, քաղաքային մի քանի հանձնաժողովների անդամ, բանկի վարչության անդամ, կլուրի ավագ, դրաբոցի հոգաբարձու, եկեղեցու երեցինու և ո՞վ գիտե ուրիշ էլ ի՞նչ:

Օգուտ քաղելով այն հանգամանքից, որ տանտերը գլուխը կախ՝ շարունակում էր գրել, Պատրիկյանն ուզեց վեր կենալ պահարանի գրքերն աշքի անցնելու, բայց չհամարձակվեց տեղից շարժվել: Հայացքը դարձրեց տանտիրոջ վրա և տեսավ, որ նա գրում է ձեռքի համարձակ շարժումով և անդադար կրծում է վերին շրթունքի ձախ կողմը:

— Նո՛ւ, ի՞նչ հՀրամայեք,— ասաց Դավիթ Ֆոմիլը գրությունը վերջացնելուց հետո՝ և մարմարի ծանր ծծողականը թըրթիկ-թըրթիկացնելով գրած թղթի վրա:

— Ես... ներեցեք,— կամաց արտասանեց Պատրիկյանը իր ասելիքը նախապատրաստած մարդու շփոթմունքով:— Երեկ գիշեր դուք նորից հիշեցրել էիք սենյակիս վարձը... Ես եկել եմ խնդրելու, որ, եթե կարելի է, մի քանի օր էլ սպասեի:

Տանաերը վերցրեց պեսներով կոճիք գրասեղանին և նայեց նրան իր լուրջ, եռանդուն աշխերով:

— Եղբայր պատվական,— ասաց նա, — Ես, կարծեմ, յոթն օր է սպասում եմ, չէ:

Պատրիկյանը աշքերը վար թողեց:

— Այո, բայց... ինգրում եմ, գարձյալ մի քանի օր... եթե կարելի է:

— Բանը մի քանի օրվա մեջ չէ, — վրա բերեց Դավիթ Ֆոմիլը:— Մի քանի օր, ինչո՞ւ չէ, կարելի է սպասել, և տեսնում եք, որ սպասում եմ: Բայց ցավն այն է, որ մի քանի օրից հետո, երբ գարձյալ ինքս ստիպված կլինեմ հիշեցնելու ձեր պարտքը, դուք կզաք ինձ մոտ, ինչպես հիմա եք եկել, և դարձյալ կինդրեք այդպես, որ էիք մի քանի օր սպասեմ: Ես այդ փորձով գիտեմ և այդքանի վերջը շեմ տեսնում: Ուստի մի անգամ առմիշտ կանոն եմ դարձրել ինձ համար, որովհետեւ ինքս շատ ճշտապահ մարդ եմ, որ երբ կենողներից որևէ մեկը կանոնավորապես և ժամանակին չի վճարում բնակարանի վարձը, առաջարկում եմ անմիշապես դատարկել բնակարանը: Չեզ էլ ասում եմ — եթե չեք կարող վճարել, դատարկեցեք սենյակը: Ես ինքս ամեն ամիս վճարելիքներ ունեմ, և իմ պարտատերը, բանկը, չի սպասում, որ ես սպասեմ անվերջ:

Դավիթ Ֆոմիլը խոսում էր վճառկան տոնով և սուր-սուր նայում Պատրիկյանի խեղճ ու կրակ գեմքին:

— Ես հասկանում եմ ձեր դրությունը, — թոթովեց Պատրիկյանը, թեև ամենեկին չէր հասկանում, թե ի՞նչպես կարող էր իր վճարելիք ամսական մի քանի ոռութիւն որևէ նշանակություն ունենալ այդ հարուստ մարդու համար:— Բայց դուք էլ, ինդրում եմ, մտեք իմ դրությունը: Ես ուսուցիչ էի գավառում, ինչպես գիտեք, կառավարությունը փակեց մեր դպրոցները. այժմ ես անգործ եմ: Ուզում էի գնալ արտասահման ուսումն շարունակելու, դիմեցի մի քանի բարերարների, մերժում ստացա: Հետո մտա մի գաճառականի մոտ իրեւ գործակատար. Հույս ունեի, թե ինայողությամբ այնքան հՀավաքեմ, որ կարող կլինեմ ձգտում իրագործել: բայց հիմնայացա և խնայած բոլոր փողերս ժամփակեցի: Հիմա ես ոչինչ չունեմ. օրեր են պատահում, որ քաղցած եմ մն...

— Ի՞նչ հարկավոր է, որ այդ քաները պատմում եք ինձ, — շտապեց ընդհատել Պատրիկյանին Դավիթ Ֆոմիլը, և նրա բրոնզյա դեմքի վրա երեացին արգահատանքի և դժողովության պարզ

հշաններու— Դուք կրթված երիտասարդ եք, և ձեր անձնամիրուշ թլունը չպետք է թույլ տա, որ ուրիշի պատմեք ձեր մասնավոր կյանքը: Ես էլ հազար ու մի ցավ ու դարդեր ունեմ, նստեմ պատմեմ ձեզ: Լավ չէ, այդ լավ չէ: Ասում եք՝ մի քանի օր— համեցեք, մի քանի օր էլ կսպասեմ: Միայն ես չեմ հասկանում, թե ո՞րտեղից պիտի կարողանաք վճարել, քանի որ ասում եք ոչինչ չունեք և անգործ եք:

Պատրիկյանը աշքերը խոնարհեց և սկսեց գլխարկը մեքենայբար շուռումուռ տալ ծնկան վրա:

— Ես... գիտե՞ք... ես... երկու գիրք ունեմ տպագրված,— ասաց նա շփոթված, կարծես ամաչելով, որ այդպիսի բան ունի արած,— երկար ժամանակ է՝ չեմ մտել գրախանութ, այսօր կը մտնեմ. երեկի ժախած կլինեն, որ...

— Դուք գրո՞ղ եք,— հարցրեց տանտերը, զարմացած նայելով նրա շփոթված աշքերին:

— Չի կարելի ասել գրող, բայց... գրում եմ:

— Ի՞նչ եք գրում:

Պատրիկյանը գլուխը բարձրացրեց և նայեց նրան ամոթխածության ժպիտով:

— Ո՞վ գիտե... գրում եմ, է՛լի...

— Դե զուք գիտեք,— ասաց տանտերը և վեր կացավ: Նրան հետեց և Պատրիկյանը,— Զեր կողքի կենողը, այն հրեա կինը, որ դանակներ և կողպեքներ է ծախում բակի դռան մոտ, տասը տարի է կենում է, և չեմ հիշում մի ամիս, որ ամենայն ճշտությամբ վճարած շլինի բնակարանի և սեղանի վարձը, չնայելով, որ մենմենակ այնքան էլ ահագին ընտանիք է պահում: Ասելս այն է, որ...

Նա խոսքը շվերջացրեց, ըստ երեսութիւն հանկարծ ինչ-որ բան հիշելով, և սկսեց շուռումուռ տալ գրասեղանի վրա թափված թըղթերու:

— Ինչեիցե, ցտեսություն,— ասաց առանց այլևս ուշադրություն դարձնելու Պատրիկյանի վրա:— Մի քանի օր էլ կսպասեմ:

Պատրիկյանը դուրս եկավ: Ճաշասենյակով անցնելիս տեսավ տանտիրոջ կնոջը,— շատ բարձր և շատ լուսար մի կին անհրապույր դեմքով, որը սեղանի ծայրին դրած արծաթյա հեշտաենի մոտ կանգնած՝ թեյի բաժակներն էր լվանում: Մոտը կանգնած էր նրա փոքրիկ տղան և սպիտակ հացի վրա կարագ ու մեղք քսելով՝ ազահարար կուլումով էր տալիս:

— Սենյակի վարձը բերի՞ք,— կանչեց Պատրիկյանի հետեւց տանտիկինը, երբ նա սուս ու փուս դիմում էր դեպի պատշգամբի դուռը:

Պատրիկյանը կանգ առավ:

— Ոչ, տիկին:

— Ինչո՞ւ:

— Փարոնին խնդրեցի, և նա համաձայնեց մի քանի օր էլ սպասել:

— Մի քանի օր էլ, մի քանի օր էլ,— բավական կոպիտ կերպով վրա բերեց տանտիկինը, թեյ լցնելով տղայի համար:— Զենք իմանում, ե՛ր պիտի վերջանա ձեր մի քանի օրը: Եվ զուք օգուտ եք քաղում նրա բարությունից: Այդպիս չի կարելի: Կամ պետք է ժամանակին վճարեք, կամ, եթե չեք կարող, դատարկեք սենյակը:

— Տիկին,— ուզեց արդարանալ Պատրիկյանը, բայց տիկինը ավելի ևս կոպտությամբ կտրեց նրա խոսքը.

— Լսել անգամ չեմ ուզում:

Ու զայրացած շուռ եկավ դեպի բուփետը:

Պատրիկյանը շրթունքները սեղմեց ատամների մէջ և դուրս գնաց:

Պատշգամբում նրա դեմ ելավ տանտիրոջ աղջիկը, որը գեմքով շատ նման էր մորը, և նրա ֆրանսուհի դաստիարակչուհին, որոնք թեանցուկ զրոսնում էին աշնանային արեկի ախորժելի շերմ ճառագայթների տակ և ջարդում էին ֆրանսերեն՝ կանանց հատուկ անդադրում շատախոսությամբ և խոսքերը խելելով իրար բերանից: Երկայն պատշգամբով անցնելիս աշխատում էր քայլել այնպիս, որ նրանք շտեսնեն անդրավարտիքի մաշված, տեղ-տեղ պատրոված տոտերը: Խոհանոցին որ մոտեցավ, լսեց մի փշոց և թշոց և նրա քթովը դիպավ այնքան ախորժելի մի հոտ, որ նրա անոթի փորում բոլոր աղիքները ոլոր-մոլոր եկան: Ինչպիս երեսում էր, վառիկներն արդեն տապակվում էին՝ թեյի հետ վայելելու համար:

Պատրիկյանը իշավ բակը և դեպի փողոց տանող լայն միշանցքի մեջ, բակի դռան մոտ, տեսավ հարևան գիրուկ ու կլորիկ հրեա կնոջը՝ նստած տարութեատի վրա, երկայն ու նեղ սեղանի ծայրին, որի վրա որոշ կանոնավորությամբ դարսված էին ամեն տեսակ դանակներ, մերատներ, կողպեքներ, աքցաններ, մուրճեր,

բգեր, պորտմոնեներ և այլ մանուրքներ: «Երջանի՛կ կին. Համ ինքն է ապրում իր ահագին ընտանիքով, Համ էլ սենյակի վարձն է տաշլիս ամենայն ճշտությամբ ու չի վայելում տանտերերի թուփն ու մուրը», — մտածեց Պատրիկյանը, և հրեուհու մոտով անցնելիս բարեկց նրան:

— Զաշեմ շեղողնյա նե բղալի գաղյաշեյ վաղը (ինչո՞ւ այսօր տաք զուր չվերցրիք), — կանչեց նրա հետեից կինը ոռուերեն, հրեաներին հատուկ առողանությամբ ս-ն շ և բ-ն դ հնչելով:

Պատրիկյանը կանգ առավ և նայեց նրա բարի գիրուկ դեմքին:

— Որովհետև շաբարս հատել է, — պատասխանեց նա մի տեսակ անհոգությամբ:

Հրեուհին զարմանքից մինչեւ անգամ վեր կացավ տարութեցի:

— Այ քեզ բան, — բացականչեց նա: — Շաբար էլ կտայինք, ի՞նչ կա որ:

— Զէ, առանց այն էլ ես շատ եմ պարտական ձեզ:

— Ի՞նչ պարտական: Ամեն օր մի քանի բաժակ տաք զուր տալով մեծ բան ենք արել, ի՞նչ է: Շաբար շունեիք, կասեիք. մի երկու կտոր շաբարն ի՞նչ բան է որ:

— Բան շկա, մի օր թեյ շխմելով շենք մեռնի, — ասաց Պատրիկյանը, ծիծաղեց նույն անհոգությամբ և շտապեց դուրս գնալ փողոց:

Այդ փողոցն իսկապես քաղաքի վաճառաշահ շուկաներից մեկըն էր՝ լի աղաղակով և ժխորով: Ժամը տասին մոտ էր: Արեք նոր սկսել էր հալի գիշերը կտուլների վրա նստած եղյամը, որին այժմ զուր դառած՝ կտկտալով թափվում էր երկայն շրախողովակներով ներքե և փոքրիկ գրեր կապում մայթերի վրա: Պատրիկյանը զգաց, որ ստվերի մեջ օդը բավական ցուրտ է ու խոնավ, և ձեռքերը անդրավարտիքի գրպանները կոխած, աշխատում էր գնալ այն տեղերով, ուր արեք մաքուր երկնքից թափում էր իր ճառագայթները: Սակայն արեկի տակ էլ նրա մարմինը սարսում էր: Նրան թվում էր, թե դրա պատճառը ոչ թե ձմեռնամուտ աշեանային եղանակն է ոչ թե այն, որ ինքը տաք չի հագնված, այլ այն, որ այդ առավոտ ոչ թեյ է խմել և ոչ որեէ բան կերել: Մըրսում էին առավելապես ձեռքերը, որոնց ինչքան էլ աշխատում էր

խորը կոխել գրանների մեջ, այնուամենայնիվ երկարամյա մերթուկի կարձ թեւերը բաց էին թողնում նրա դաստակները:

Պատրիկյանի առաջին գործն այն եղավ, որ մտավ գրախանութիւ: Հույս ուներ, թե այնքան կստանար, որ սենյակի վարձը հանելուց հետո մի բան էլ կմնար իրեւ ապրուստի փող: Սակայն գրախանութիւն նրան ասացին, թե վերցին երեք ամսվա ընթացքում նրա երկու գրքույզներից մեկն ամենեկին չի ծախվել, իսկ մյուսից ծախվել է հինգ օրինակ միայն և, կոմիսիայի տոկոսը հանելուց հետո, նրան հանձնեցին 1 ռ. 20 կ.: Պատրիկյանը, հիմասթափության ժպիտը դեմքին, փողը դրապանն ածեց և դուրս եկավ գրախանութիւ՝ ճնշված այնպիսի մի զգացման տակ, որպիսին ունենում են անսովոր մուրացիկները՝ ողորմություն ստանալուց հետո: Ամոթի և նվաստացման կարմիրն երեսին մի բեկե կանգ առավ գրախանութիւ ցուցափեղի առջև, որի թեթև քրտնած լայն ապակու միջից մի հայացք ձգեց ցուցանակի վրա նկատելի տեղում հպարտորեն շարված ոռուերեն փարթամ գրքերին, ապա մի անկյունում ամոթխածությամբ իրար կողքի կպած հայերեն վարտ գրքույզներին, որոնց մեջ տիսավ և իր երկու լուսիկ գրքույզը, հետո երեսը շուր տվեց և հեռացավ՝ դառն մտածմունքների մեջ խորասուզված: Մոռացել էր թեյի փափազն էլ, քաղցն էլ, և, որովհետև ուրիշ տեղ շուներ գնալու և մրսում էր, քայլերն ուղղեց դեպի իմբագրատուն:

Խմբագրատանը, ինչպես միշտ, այս անգամ էլ նստած էր մենակ քարտուզարը՝ շրիկ-մորիկ մի երիտասարդ՝ պարզ ակնոցով և աշ ձեռքի ճկույթի վրա կեսվերշոկաշափ աճեցրած սրածայր եղունդով, — և արագ գրում էր երկայն ու նեղ թղթերի վրա, ճկույթը խիստ որոշակի առանձնացրած հարեան մատից:

Պատրիկյանը, իբրև պարապ մարդ և ձրի աշխատակից, խըմբագրատան ամենօրյա այցելուն էր, այնպես որ քարտուզարն ու նա, որոնք մտերիմ ընկերներ էին, այլև չէին բարեկում իրար տեսնելիս: Այս անգամ էլ Պատրիկյանը քարտուզարի սենյակը մտավ սուս ու փուս, նստեց նրա գրասեղանի ժայրին, վերցրեց տեղական ոռու թերթերից մեկը, որոնցից քարտուզարը լուրեր էր քաղում, և սկսեց աշքի անցկացնել: Տեղական լուրերից մեկը կարգալուց հետո հարցրեց:

— Ինչո՞ւ այս լուրը չես նշանակել:

— Ո՞ր լուրը, — հարցրեց քարտուզարը շարունակելով գրել:

— Ինչոր նոր հոշակավոր երգիլ է եկել, ժամանովը: Գաստ-  
րովի է հրավիրված օպերային թատրոնում երգելու:

— Հերն անիծեմ, — սրտանց արտասանեց քարտուղարը, առանց գլուխը բարձրացնելու թղթի վրայից: — Մե՞զ ինչ: Բոլոր թերթերին հայտարարություններ են տալիս, սեղոնային ձրի տոմս սակներ են տալիս, իսկ մեզ շան տեղ էլ չեն դնում: Եվ մենք պետք է վեր կենանք նրանց համար ուկլամնե՞ր տպենք: — Տես, թե ուրիշ բան աշքից թոցրել եմ, ասա:

Ներս մտավ տպարանական փոքրիկ աշակերտը մրու երեսով ու ձեռքերով և ամառվա բարակ կապույտ բլուզով, որի մեջ ցրտից սրթարթում էր նրա վտիտ մարմինը:

— Նութ, — ասաց նա լուն ու հնչելով:

— Սպասիր մի քիչ, — ասաց քարտուղարը, և գրիշը նրա ձեռքին սկսեց շարժվել ավելի արագ: Գրեց վերջացրեց թուղթը և մյուս թղթերի հետ ծալեց տվեց աշակերտին: — Ահա տար, որ էլի գալու լինես, Հարցրու էլի քանի Կոլոն Հարկավոր կլինի:

Աշակերտը դուրս գնաց, գլխարկը փողոցում ծածկելով:

— Դե՛հ, Պատրիկ, պարապ մի՛ նստի, — ասաց քարտուղարն ակնոցն ուղղելով և նոր գործի պատրաստվելով: — Նյութ չունենք, ժի՞ բան գրիր ձեռաց:

— Տրամադրություն շունեմ, — ասաց Պատրիկյանը մելամազ-ձորին:

— Ես հետիկ է, որ խեղդ  
— Դու մեռենա ես ուսոձեմ

— Եատ մի՞ խոսիր, զրիր, հոգիս դուրս է գալիս մենակ։ Գիշերն էլ մինչև ժամը երկուսը տպարանումն եմ անցկացրել, որովհետև սրբագրիլը հիվանդացել է։ Ես վախենում եմ վաղը չէ մյուս օրը ցրիչ դեր էլ կատարեմ։

— Ո՞ւր է խմբագիրը, ինչո՞ւ չի օգնում:

— Գնացել է փող ճարելու, որովհետև տպարանատերը սպառնացել է, որ եթե այսօր փող չստանա, Համարը բաց չի թողնի Գրաշարներն էլ մյուս կողմից են փող պահանջում։ Հետո՝ փոստը, Հեռագիրը, տանտերը — ո՞ր մեկն ասեմ։ Էգուց-էլօր բաժանորդագրություն ենք բանալու, թերթը պետք է կանոնավոր հրատարակենք, որ բաժանորդները շխրտնեն, և հանկարծ — այսպիսի խայտառակություն... Գրիր, գրիր, խոսելու ժամանակ, է։

$= \hbar^2 u$ ,  $a \pi b v$ ,

— Ի՞նչ ուզում ես: Ուզում ես՝ լուսնի մասին, ուզում ես՝ աստղերի, միայն թե թերթը լցնենք:

Պատրիկյանը դանդաղորեն մի քանի թերթ թուղթ քաշեց առաջը, գրիչը թաթախեց թանաքամանի մեջ, կարճ ժամանակ մտածեց և գրեց վերնագիրը. «Երեք ամիս, և հինգ օրինակ մի այլն», տակն էլ զիծ քաշեց. Այստեղ կանգ առավ, ճակատը շփեց և, երկար մտածելուց հետո, սկսեց.

«Այս օրերս պատահեցի մեր սկսնակ գրողներից մեկին, որի համար կրիտիկան կամ այն, ինչ որ մեզնում կրիտիկա է անվանվում, միաբերան վկայել է, որ ձիրքից զուրկ չէ, նա գանգատվեց ինձ, թե ահազին նեղություններով հրատարակած իր մի գրքից երեք ամսվա ընթացքում վաճառվել է հինգ (Հարյուր շկարժեք) հատ միայն, իսկ մյուսից՝ ոչ մի օրինակ։ Այս տիսուր իրողությունը շատ լավ ծանրաշափ կարող է լինել, ցույց տալու համար մեր հասարակության ընթերցասիրության շափը և, միևնույն ժամանակ, շատ դառն մտածմունքների առիթ է տալիս մեր գրականության ապագայի մասին։ Մեր հասարակությունը...»

Պատրիկյանը նորից կանգ առավ, մտածեց, մտածեց, հետո պետք վար դրեց և ասաց.

— Այստեղ ոչինչ չի կարելի գրել. մատներիս ծայրերը փետառան:

— *Sп'*, գրի է՛, — բղավեց քարտուզարը, որի գրիչը շարունակում էր արագ շարժվել թղթի վրա: — Վաղուց է՛ այդքան քնքշացել ես: Կարծես թե քո հավաբռնը սրանից տաք լինի, անունն էլ սենակ ես ոռեւ: Գրի՞՛ս:

Պատրիկյանը սառած ձեռքերը շփեց իրար, բերնի գոլորշիով տաքացրեց մատների ծայրերը, նորից առավ գրիլը, զիծ քաշեց միեւ հաւառախոթուն» ուսուի վրա և շարունակեց:

«Ճիշտ է, չի կարելի պնդել, թե մեր հասարակությունն ընթառապես չէ. ուստի»

*Խորտկա և մշտիկ առաջին աշխարհական պատերազմունքում մասնակցություն ունենալու համար առաջ է գալիք առաջին աշխարհական պատերազմունքում մասնակցություն ունենալու համար առաջ է գալիք*

Պատրիկյանը և քարտուղարը միաժամանակ բարձրացրին գլուխները և նայեցին դեպի նախասենյակի դուռը: Այնտեղ կանգնած էր մի թիկնավետ երիտասարդ, բեղերն ու մորոքը սափրած, թանկագին մուշտակով և պլաչան ցիլինդրով:

— Խնդրեմ, — մեքենայաբար արտասանեց քարտուղարը:

Ալթելուն մտավ խիստ անձնավստահ քայլերով, ցիլինդրը վերցրեց և ներկայացրեց իրեն.

— Կայսերական թատրոնների երգիշ ջափինյան, Երևի գիտեք, որ ես գաստրոլով հրավիրված եմ այստեղի արքունական թատրոնում երգելու:

— Այս, ինչպես չէ,— արտասանեց քարտուղարը, մեքենայաբար վեր կենալով տեղից և ակամա հարգանքով սեղմելով երգչի ձեռքը:— Խնդրեմ նստեք:

Ջափինյանը նախքան նստելը ետ արեց մուշտակի կոճակները, կուրծքը բաց արեց, ասելով՝ «Ուժ, շատ շոգ է», ցիլինդրը զիմիկայր դրեց գրասեղանի վրա, կաշու թանկագին ձեռնոցը ձգեց ցիլինդրի մեջ և ապա թե նստեց քարտուղարի մոտ բերած աթոռի վրա: Հետո տեսնելով, որ գրասեղանը ծածկված է փոշով, ցիլինդրի տակ մի լրագիր դրեց:

— Խմբագիրն այստեղ չէ,— հարցրեց թաշկինակով սրբելով ճակատը:

— Դժբախտաբար ոչ,— պատասխանեց քարտուղարը ստըրկական-հարգական ժպիտով և ակամա ուշադրություն դարձրեց երգչի կարմիր ատլասի փողկապի վրա հուրհրատին տվող աղամանդին: Նստեց նորից և չէր իմանում ինչպես անի, որ այցելուի աշքից ծածկի իր կեղտոտ, ճմրթված մանժետները:

— Իբրև հայ երգիշ, իմ բարոյական պարտքս համարեցի այցելի ձեր խմբագրատուն:— ասաց Ջափինյանը:— Երևի գիտեք, որ ես ձայնս մշակել եմ Խտալիայում, որտեղից, սրանից վեց տարի առաջ, ինձ հրավիրեցին Օդեսա: Երկրորդ տարին երգեցի երկուտսկում, հետո մի-մի սեղոն երգել եմ Խարկով, Կիե, Մոսկվա, իմակ անցյալ սեղոնին երգում էի Պետերբուրգում: Այժմ ինձ հրավիրել են Թիֆլիս: Թիֆլիսը երաժշտական քաղաք է և, կարծում եմ, կզնահատի ինձ ինչպես հարկն է: Ներեցեք, դուք ստանո՞ւմ եք մայրաքաղաքի թերթերը:

— Ինչպես չէ:

— Ուրեմն անշուշտ կարդացած կլինեք իմ մասին գրած ուեցնիաները: Ամենքը միաբերան հիացած են: Մի քանի օտարատյաց թերթեր միայն, ինչպես «Հովու արքայ»-ն և «Սվետ»-ը աշխատում էին ինձ զլորել, որովհետո իմացել էին, որ հայ եմ, բայց շաշողվեց: Ի՞նչ նշանակություն ունի ես հայ եմ, թե ուսւա-

ն միայն երգիշ եմ. կարող եմ այսօր հայերեն երգել, վաղը ուսերեն, մյուս օրը իտալերեն: Այդպես չէ:

— Իհարկե:

— Ճիշտ է, ափիշների վրա Ժապինյանը եմ գրվում, բայց այդ ոչ թե նրա համար, որ ուզում եմ ինձ ուսւացուց տալ, այլապես կգրվեի իվանով կամ Սիզորով, այլ նրա համար միայն, որ Ջափինյան ազգանունը, ինչպես գրես— ուսւերեն— Ջափինյանը ուսւերեն ոչ չկա, ոչ փ: Թե չէ, հայերեն միշտ Ջափինյան եմ գրվում և երրեք էլ շեմ ծածկում, որ հայ եմ: Ես ձեզ մի ուրիշ բան ասեմ,— շարունակեց շատախոս երգիշը:— Օդեսայի անտրպենյորս փորձեց ինձ նոր հրավիրած ժամանակ ափիշի վրա ազգանուն գրել Ժապինյանի, բայց ես շատ քաղաքավարի կերպով հասանակ չեմ ծածկություն գրել Ժապինյանի թույլ շեմ տա իտալացի մկրրկացը նրան, որ ոչ մի պայմանով թույլ շեմ տա իտալացի մկրրտելու ինձ, չնայելով, որ իտալացի երգիշների անունն առհասարակ շատ հարգի է Ռուսաստանում: Թե չէ, որ ուզենայի դավաճանել ազգիս և հավատիս, ավելի լավ կանեի և ավելի շահավետ կլիներ գրվեի Ժապինյանի բանինի, քան թե Ժապինյանի վրա ափինյանի պատճեն առաջարկությունը:

— Իհարկե:— նորից համաձայնեց քարտուղարը:

Երգիշը խոսում էր դեռ շատ երկար և բացառապես իր մասին: Նրա ձայնը հնչում էր շատ առողջ և ինքնավստահ: «Ե՞րբ պիտի վերջացնի ու կորչի»,— մտածում էր քարտուղարը, սակայն առանց դժբահության որեւէ նշան ցույց տալու: Ընդհակառակը, շարունակում էր լուր լսել նրան նույն ստրկական-հարգական ժպիտը ղեմքին:

— Ինչպից,— վերջապես վերջ տվեց իր չշատախոսությանը երգիշը և վեր կացավ:— Ես ձեզ շխանգարեմ: Իմ խոնարհ հարգանքներս պարոն խմբագրին:— Այս խոսքերի հետ երգիշը ծոցից հանեց իր այցետոմսը և դրեց քարտուղարի առջև:— Հույս ունեմ, որ նա, ինչպես և դուք, շնորհ կրերեք լսելու ինձ: Իմ առաջին դերությը լինելու է ամսույս տասին: Երգելու եմ Օնեգինի պարտիան: Հետո դուրս կգամ «Մազեպա»-ի, «Կնյազ Իգոր»-ի, «Ժիզն զա ցարյա»-ի, «Հաշնիկով»-ի «Ցարսկայա նեվեստա»-ի, «Ժիզն զա ցարյա»-ի, «Ռուսական և լյուդիլա»-ի, «Ռուսական և ուրիշ օպերաների մեջ: Յատեսություն:

Ջափինյանն ամուր և երկար սեղմեց քարտուղարի ձեռքը, թերեկակի գլուխ տվեց մինչև այժմ գրասեղանի ծայրին սուս ու փուս կուլ եկած Պատրիկյանին, ցիլինդրը ծածկեց և դուրս զնաց նույն

պիսի քայլերով, ինչպես որ մտավ հատակը թրխկթրխկացնելով իր պլան կոշիկների կանացի բարձր ու բարակ կրունկներով:

Քարտուղարը մինչև դուռը ճանապարհ դրեց նրան և, երբ վերադարձավ, ձեռքերի ափերը խփեց իրար և բացականչեց ծայր աստիճան ապշած.

— Փա՛՛... տեսա՞ր, Պատրիկ! Գիտե՞ս ով էր: Երեկ-մեկել օրվա քելեխ ուտող տիրացուն էր, է... նո՞ր հիշեցի, Պատրիկ ջա՞ն, նոր: Խմբագիրը պատմում է, թե երեսփոխանական ընտրությունների մասին որ հայտարարություն էր բերում, չէր համարձակվում դուն շեմքից առաջ գալ, իսկ հիմա... իր բարոյական պարտքն է համարել այցելություն տալու խմբագրությանը: Ցիլինդրի տակ լրագիր դրեց, որ շփոշութվի: Տեսա՞ր նրա փողկապի աղամանդը, մուշտակը: Մենք այստեղ ցրտից կաղկանձում ենք, իսկ նա քրտինքն էր սրբում... Գնացել վարժապետ և գրող ես դառել, վա՞յ, գրողը տանի քեզ, Պատրիկ ջան, գրո՞ղը... ինձ էլ քեզ հետ,— ավելացրեց քարտուղարը և գնաց նստեց իր տեղը:

— Դու ինձ այս ասա, հիմա լուրը կգրես, չէ,— հարցրեց Պատրիկյանը հեգնորեն ժպտալով:

Քարտուղարը պատասխանի տեղ ձեռքերը տարածեց խաշելության պես, ուսերը վեր քաշեց կոմիկական տարակուսանքով, կարճ ժամանակ մտախոհության մեջ ընկավ, հետո հանկարծ նայեց ծոցի ժամացույցին և բացականշեց ոչ այնքան զայրացած, որքան զարմացած.

— Ինչքան էլ ժամանակ խլեց անհծածը... իսկ տպարանում նյութ չկա: Գրիր, գրիր, Պատրիկ ջան, մինչև որ տեսնենք ինչ դուրս գալիս այս էշի մարտիրոսությունից:

— «Մանի՛ր, մանի՛ր, ի՛մ ճախարակ...»,— արտասանեց Պատրիկյանը, առավ գրիշը և պատրաստվեց շարունակել սկսած հոդվածն անսիրտ և դառնացած, ինքն էլ շիմանալով ում և ինչի դեմ:

Իսկ այդ միջոցին քարտուղարն արդեն գրում էր իր մանր ու փութկով գրերով. «Մեր հայրենակից երգիշ Զափինյանը (քեմական ազգանունը ժապինով) գաստրոլով հրավիրված է երգելու Թիֆլիսի արքունական օպերային թատրոնում: Խտալիայում իր արվեստը կատարելագործելուց հետո, նա վերջին վեց տարվա ընթացքում երգել է Ռուսաստանի զանազան քաղաքներում, ի միջի այլոց՝ Մոսկվայում և Պետերբուրգում, ուր, տեղական թերթերի վկա-

յությամբ, մեծ հաջողություն է ունեցել: Թիֆլիսում նա առաջին անգամ բեմ է ելնելու ամսույս 10-ին Զայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայի մեջ, Օնեգինի դերում»:

Նա ուզում էր մի քանի խոսք էլ ավելացնել, հասարակության ուշադրությունը հրավիրելով հայ տաղանդի վրա, բայց հիշելով, թե անցյալում ի՞նչ է եղել նա, վախեցավ, որ նրան ճանաչող ընթերցողները ծաղրի ենթարկեն թերթը, ուստի բավական համարեց գրածը և մի կողմ դրեց: Հետո նայեց Պատրիկյանին և տեսնելով, որ նա գրում է շատ զանդաղ և անդադար գլուխը քրոբելով, ասաց.

— Պատրիկ ջան, շուտ արա, թե չէ, հրես որտեղ որ է՝ կապստիկ հոգեառու և նյութ կպահանջի:

Մտավ էքսպեդիտորը՝ պոստից բերած մի կույտ լրագրեր և նամակներ ձեռքին: Քարտուղարն ամենից առաջ վրա ընկավ նամակներին և սկսեց աշքի անցկացնել: Այնքան վարժվել էր, որ մի քանի տող սկզբից, մի քանի տող մեջտեղից և մի քանի տող վերջից կարդալուց հետո հասկանում էր ամբողջ նամակի բովանդակությունը և իսկույն էլ վճռում՝ կարելի՞ էր տպել, թե ոչ:

— Վայ, այս անիծածները կարծես խոսքը մեկ են արել, որ գրեն քահանաների, տիրացուների և հոգաբարձուների մասին,— բացականչեց նա մի քանի նամակներ աշքի անցկացնելուց հետո: Քահանա և տիրացու, տիրացու և հոգաբարձու, հոգաբարձու և տիրացու... Կարծես թե էլ ուրիշ բան չկա գրելու, ես ձեր...

Եվ զայրացած քարտուղարի բերանից ակամա դուրս թռան ինտելիգենտ մարդուն անվայել մի քանի հայհոյական խոսքեր քահանաներից, տիրացուներից և հոգաբարձուներից դուրս ուրիշ նյութ չգտնող գավառական թղթակիցների հասցեին: Նա վերցրեց այդ նամակները և ուզում էր մեկեն պատռել ու ձգել գրասեղանի տակ գրած զամբյուղը, բայց հիշելով, որ տպարանում նյութ չկա, մի կողմ դրեց: Նույն կարգով շարունակեց աշքի անցկացնել մնացած նամակները և, ինչպես երևում էր, այդ նամակներն էլ բանի պետք չէին, որովհետև նա իր երկայն ու չոր մատներով ջղայնորեն ոլորում ու փետրում էր ցանցառ բեղի ծայրերը: Այնուհետև, երբ բոլոր նամակներն աշքի անցկացրեց պրժավ, խոնարհվեց գրասեղանի վրա և սկսեց ուղղել ամենից առաջ այն նամակները, որոնք քիչ թե շատ հասարակական նշանակություն ունեին: Անխնայորեն չնշում էր ահագին պարբերություններ, երբեմն ամբողջ երեսները և տեղը գրում մի քանի տող միայն. զնշում, փոխում կամ ավել-

լացնում էր այս կամ այն բառը կամ տառը, պեղանտի նախանձախնդրությամբ և համառությամբ պահպանելով լրագրի ուղղագրությունը, որի ստեղծողն ինքն էր:

Մինչդեռ Պատրիկյանը, սուս ու փուս նստած գրասեղանի ծայրին, շարունակում էր գրել իր հոդվածը, այլևս ուշադրություն շդարձնելով սենյակում տիրող ցրտին: Մի ժամից հոդվածն արդեն պատրաստ էր: Նա գրած թերթերը դարսեց իրար վրա ըստ թվահամարների, գրեց քարտուղարի առջև և վեր կացավ:

— Ի՞նչ, որ գնո՞ւմ ես,— հարցրեց քարտուղարը, գլուխը բարձրացնելով և նայելով նրան պլայան ակնոցի միջից:

— Հա, Ես բոլորովին սաեցի այստեղի Գնամ տեսնեմ ի՞նչ եմ անում: Այսօր բան չեմ առել բերանս, թեյ էլ չեմ խմել: Տես այդ հոդվածը,— անսիրտ եմ գրել,— թե բանի նման է՝ տպիր, թե չէ՝ զամբյուղ գցիր: Ցտեսություն:

Եվ Պատրիկյանը դիմեց դեպի դուռը, մի րոպե կանգ առավ նախասենյակում ինչ-որ անվճռականության մեջ, մեքենայաբար թափ տալով ձեռքին բռնած գլխարկը, հետո կամաց ետ դարձավ և ասաց պվելի ևս կամաց, կարծես վախենալով, որ մի ուրիշը կարգ է լսել:

— Չե՞ս կարող ինձ մի հինգ ոռութի փոխ տալ:

— Հինգ ոռութի,— բացականչեց քարտուղարը գլուխն արագորեն բարձրացնելով:

— Հա, խնդրում եմ: Սենյակիս վարձը պետք է տամ: Թե չտամ, դուրս են անում:

— Այս բռպեխս, հինգ ոռութին ի՞նչ է որ,— ասաց քարտուղարը, շտապով հանեց իր մաշված-ջարդված պորտմանեն, բաց արեց, միջի բոլոր փոզը— սև ու սպիտակ դրամները— թափեց սեղանի վրա ու կսեց համբել, գրամները մեկմեկ բաշելով մէ կողմ, — 10, 20, 35, 50, 58, 60, 62 կոպեկ: Ահա՛ իմ ունեցած ամբողջ կապիտալը: Թե որ սրանից 5 ոռութի դուրս կգա, վերցրու տար տանտիրօջդ աշըք կոխիր: Հինգ ամիս է՝ ոռճիկ չեմ ստացել, կհավատա՞ս, թե լէ:

Մի բռպե Պատրիկյանը լուս նայում էր քարտուղարի աշքերին:

— Բայ, ինչո՞ք ես ապրում, — հարցրեց:

— Դո՞ւ ինչպա՞ ես ապրում, — եղագ քարտուղարի պատասխանը:

Պատրիկյանը ձեռքով հուսահատական մի շարժում արագ գլխարկը ու թե ծածկեց, այլ ծածկելիս ուղղակի խփեց գլխին և դուրս գնաց:

1904

## ԽՄԲԱԳԻՐԸ

Ժամը 3-ից անց էր, որ Հայրումյանը վերջացրեց աշխատանքը, ծածկեց գլխարկը, հագավ ամառվա հնամաշ վերարկուն, որը հազիկ էր պաշտպանում նրա վտիտ մարմինը աշնանային խոնավ ու ցուրտ եղանակից, և դիմեց դեպի տուն:

Սաստիկ հոգնած և քաղցած էր, բայց մոռացել էր թե՛ մեկը և թե՛ մյուսը, որովհետեւ այդ առավոտ խմբագրատանը տեղի ունեցած մի արտասովոր հանգամանք միանգամայն մոայլել էր նրա հոգին:

Բանն այն էր, որ այդ առավոտ խմբագրատուն գնալիս իր վերջին կոպեկներն էր տվել կնոջը՝ ծախսելու, և հույս ուներ, թե որովհետեւ օրը շաբաթ է և ամսի 1-ը, գեթ մի քանի ուրիշի կստանա իր վաղուց արդեն հարյուրներն անցած ապառիկ ուռնիկի հաշվին վաղվան և մյուս օրերի ծախսերի համար. բայց խմբագրատանը նոր էր նստել աշխատանքի և խմբագրը քնից նոր ելած (նա ապրում էր խմբագրատանը կից) դեռ փսխում էր իր ինյակում, երբ նախասենյակում ինչ-որ արտասովոր քայլերի և խոսակցության ձայներ լսեց:

Ներս մտավ բարձրահասակ սեազգեստ մի կին, շրթունքի վերը շատ նկատելի սև բեղերով, և ցածրահասակ, կոկարդավոր մի պարոն՝ մի շատ հասարակ պորտֆել ձախ թեփ տակ:

Հայրումյանը գիտեր, որ սեազգեստ կինը այն տանտիրուհին է, ուր գտնվում էր խմբագրատունը, իսկ կոկարդավոր պարոնի համազգեստից իմացավ, որ դատական պրիստավ է, և այդ երկուսի միասին մտնելը լավ բան գուշակել չտվեց նրան:

Տանտիրուհին մտնելուն պես մի խուզարկու հայացք ձգեց գրեթե դատարկ ընդարձակ սենյակի մեջ, որտեղ սև կալենկորով ծածկված մի մեծ գրասեղանից, մի ծոված գրադարակից և մի քանի աթոռներից զատ ուրիշ բան չկար, և ինչ-որ փնթինթաց քիչ

տակ, ըստ երևույթին, վերին աստիճանի դժգոհ։ Իսկ դատական պրիստավը առանց այլ կայլության գնաց նստեց գրասեղանի մոտ, Հայրումյանի դիմաց, առանց նույնիսկ նայելու նրան, պորտֆելը դրեց գրասեղանի վրա, բաց արավ և մեջը ինչ-որ թղթեր որոնելով հարցրեց։

— Кто здесь хозяин?

— Человек прапорщикъ на вахте,— спросил Гарегин Гарյопумянъ:

— Ну да! хозяина, хозяина,— аսад պրիստավը մեղմ քաղաքավարի եղանակով, որի մեջ, սակայն, օրենքի ներկայացուցի տիրական-հրամայական շեշտը զգացնել տվեց իրեն շատ որոշակի։

Հայրումյանը վեր կացավ, դուրս գնաց նախասենյակ և մատով թրիկորիկացրեց խմբագրի սենյակի դուռը։

— Ось я, бывший, — изложил он Гарյопумянъ նոր ելած խմբագրի խոպոտ ձայնը։

— Ты же, — спросил Гарյопумянъ, — асад Гарյопумянъ շրթունքները դուռը գույն արանքին մոռագրած։

— Задача, — изложил он Гарյопумянъ խմբագրի հայտնի չեղամացական, թե՝ ինքնահեգնական ձայնը, հետո քիչ ուժեղ փսխոց և ոտների շարժումը, և ապա թե խմբագրիը կանչեց ներսից հաստատում ձայնով, — асад իսկուն գալիս եմ։

— Используй квадраты, — асад Гарյопумянъ, — и спаси Гарյопумянъ շեշտը կամաց անսարքեր մնալ, ուզեց շարունակել ընդհատված աշխատանքը, տեսավ՝ չի կարողանում մտքերն ամփոփել։ Նրա ուղեղին և զգացմունքներին տիրել էր այն կաշկանդումը, որ սովորաբար ազդում է իշխանության ներկայությունը վախկու մարդկանց։ Իսկ սիրտը տկտկում էր ծոցի ժամացույցի պես։

Դատական պրիստավը, — խունացած համազգեստով և գոհհկական դեմքով մի շեկ մարդ, — շարունակում էր իր որոնումը մաշված, տեղ-տեղ կեղտից դեղնած սկ պորտֆելի մեջ։ Իսկ ժամանակում էր իր կայլության մոտ շիփ-շիտակ նստած, տիրական-քրննական հայացքով դիտում էր սենյակի հատակը, առաստաղը, պատերը, անկյունները, պատուհանները, դռները։

Հայրումյանը գիտեր, որ նա այրի էր և իշխանութիւն, սակայն նրա արտաքինի մեջ ոչ միայն իշխանազնական, այլև կանացի

ոչինչ չկար, բացի միայն հագուստից, որը նույնպես նույնքան անձունի էր, որքան և նրա արտաքինը։ Հայրումյանին թվում էր մինչև անգամ, թե նա մի շատ տգեղ տղամարդ է կանացի շոր հագած, — այն աստիճան կոպիտ էր նրա ձայնը և այն աստիճան տգեղ տղամարդու դեմք էին հիշեցնում նրա վերին շրթունքների վրա բուսած ցանցառ սկ մազերը, արտասովոր խիտ և հոնքերը, չորացած, ոսկրոտ երեսի ծալ-ծալ կնծիռները և մանավանդ հայցքը՝ այնքան դաժան, որ կարելի էր կարծել, թե երբեք չի ժբադում։ Նայելով նրան, Հայրումյանը մտածում էր, որ եթե ինքը նկարի լիներ, անպատճառ կնկարեր նրան՝ վհուկի իսկական մի տիպ ներկայացնելու համար։

Մի րոպե իշխանուհու դաժան, թափառող հայացքը կանգ առավ գրասեղանի մոտ հատակի վրա, ուր սկ թանաք էր թափած և տեղը, — մի բավական մեծ տեղ, — սկացել էր, ըստ երևույթին, հավիտենապես նա վեր կացավ, ոտքը քսեց սկացած տեղին և դարձավ Հայրումյանին։

— Используй квадраты, — спросил Гарյопумянъ, — асад իսկուն գալիս եմ։ Ինչ երես իշխանները որ ձերը չեղամացական անսարքեր մնալ, ուզեց շարունակել ընդհատված աշխատանքը, տեսավ՝ չի կարողանում մտքերն ամփոփել։ Նրա ուղեղին և զգացմունքներին տիրել էր այն կաշկանդումը, որ սովորաբար ազդում է իշխանության ներկայությունը վախկու մարդկանց։ Իսկ սիրտը տկտկում էր ծոցի ժամացույցի պես։

Ներս մտավ խմբագրիը, — մի կարճիկ և հաստիկ մարդ, ժիշտը կոճկելով ուսուցիկ փորի վրա։ Երեսում էր, որ լվացվել և հագնվել էր ձեռաց։ Նրա փայլուն սկ մազերը, զրից գեռես թաց, կպել էին քունքերին, իսկ սկ, խոշոր աչքերը գեռես պղտոր էին, ինչպես քնից նոր ելած և գեռես անոթի մարդու աչքերը։ Նա լուս, գլխի հազիկ նկատելի շարժումով բարեկեց անկոլ հյուրերին, մի տեսակ լարված-սպասողական հայացքով փոխնիփոխ նայելով տանտիրուհուն և դատական պրիստավին։

Դատական պրիստավը վեր կացավ և նույն քաղաքավարի տոնով, որի մեջ, սակայն, օրենքի ներկայացուցչի ինքնավատահության նույն առանձնահատուկ ազդում շեշտն էր զգացվում, հարցրեց։

— Вы хозяин?

Խմբագրիր, պատասխանելու տեղ, զլխով դրական շարժում արավ մեքենայաբար։

Դատական պրիստավը նրա առջևը դրեց կատարողական թերթը և ասաց, որ եթե նա հենց այժմ լվճարի բնակարանի շրու ամսվա վարձագինը, ապա ինքը պարտավորություն ունի ցուցակագրելու խմբագրատան կահ-կարասիքը՝ աճուրդի հանելու համար։

Խմբագիրը շփեց ձեռքերը, կարծես լվանում էր, ժպտաց և նայելով տանտիրուհուն, բայց պատասխանելով դատական պրիստավին, ասաց։

— Ես կիսնդրեի իշխանուհուն, որ մի երկու օր սպասեր, մինչեւ որ...

— Ո՞ւ, — բռնկվեց հանկարծ տանտիրուհին, կարծես օդով լի մի պարկ տրաքեց։ — Եվ ո՞ւ մի բռպես Բավական է՝ որքան խարեցիք։ Այս բնակարանը քաղաքի կենտրոնումն է և ոչ թե մի որևէ Հավլաբարում։ Երեսուն տարի է վարձու եմ տալիս և առաջին անգամն է, որ հանդիպում եմ ձեզ պես անպարտաճանաշ և անբարեխիղճ կենողի։ Չորս օր չէ, շորս շաբաթ չէ, չորս ամիս է, ամբողջ չորս ամիս խաղացնում եք ինձ՝ էսօր-էզուց գցելով։ Լակեյին եմ ուզարկում, դատարկ եք ճամփու գցում, ինքս եմ գալիս իմ ուսով, — տանն եք, ասում եք տանը չեք կամ հետին դռնովն եք փախչում։ Ամոթ չէ։

Իշխանուհին իր դաժան հայացքով շեշտակի նայում էր խըմբագրի աշքերին թեև խոսում էր զապված զայրույթով։ Խոսում էր առանց շտապելու, և խոսքերը նրա բերանից դուրս էին թռչում առանձին շեշտերով՝ մուրճի Հարվածների պես ծանր ու հատու, կարծես մի վարժ ձեռք մուրճով մեխ էր ցցում փայտի մեջ, առանց Հարվածները նպատակից շեղելու։

Խմբագիրը սկզբում, ինքնավստահացման ժպիտը դեմքին, մատներով ուրում էր երկայն փարթամ բեղի ծայրը։ Հետո ձեռքերը դրեց անդրավարտիքի գրպանները և սկսեց խաղացնել ծընկերը։ Շուտով ծնկների այդ խաղը դարձավ ինքնարերաբար-ջղայնական, որից սկսեց ցնցվել նրա ամբողջ լիքն իրանը կարճ ոտների վրա։ Սակայն, իր հերթին նայելով տանտիրուհու աշքերին և համբերությամբ լսելով նրա շպրտած դառն խոսքերը, դեռևս շարունակում էր ժպտալ, և այդ ժպիտը կարծես ասում էր. «Կուլ տուր, կուլ տուր, հայոց ազգի խմբագիր (այդպես էր անվանել նրա մոլեռանդ երկրպագու և նրա թերթի մշտական բաժանորդներից մեկը — կիսով շափ խելքից ցնդած գավառացի մի ազգասեր, — և այդպես էլ նա անվանում էր իրեն իր բարեկամների շրջանում»

արտաքուստ հեգնորեն, բայց ներքուստ խորին համողմունքով։ Կուլ տուր և ուզես-շուզես՝ մարսիր։ Հայոց ազգը կվարձատրի թեզ, երբ որ մեռնես։

Կրթված մարդ եք իրը թե, խմբագիր, հրապարակախոս, թերթեք հրատարակում և թուլ կը տալիս ձեզ... — շարունակեց տանտիրուհին իր ծանր մուրճի հարվածները, բայց խոսքը կիսատմնաց բերանում, որովհետև խմբագրի այն ոտքը, որ ցնցվում էր ջղայնորեն, բարձրացավ և հանկարծ հջավ հատակի վրա այնպիսի ուժգին զարկով, որ դատական պրիստավն ու Հայրումյանը վեր թռան տեղներից վախեցած, կարծելով, թե մի բան պայթեց։

Բավական է, — գոշեց խմբագիրը կատաղության հանկարձական բռնկումի զիլ հնչյուններով։ — Ես ձեր ու սեռին և ոչ տիտղոսին կնայեմ և դուրս կշպրտեմ ձեզ պատուհանից, եթե շարունակեք ինձ վիրավորել...»

Եվ որովհետև նա կատաղի աշքերով սպառնագին մի երկու հուժկու բայլ դրեց դեպի տանտիրուհին, դատական պրիստավը և Հայրումյանն ակամա առաջ ընկան, որ բռնեն նրան։

Խմբագիրը, սակայն, կանգ առավ ինքն իրեն զապած, նրա ամբողջ զապինդ մարմինը դողում էր զսպված կատաղությունից և սե, խոշոր աշքերից կարծես կայծեր էին դուրս ցայտում։

Այս ի՞նչ վայրենի տեսարան է, այս ի՞նչ վայրենի տեսարան է, — շշնչաց իշխանուհին, ետ ու ետ բաշվելով, ըստ երեկութին, բավական վախեցած և զարմացած։ — Նամ պարտքը Մշկներել, համ էլ... Ես ոչինչ չեմ հասկանում, պարոններ, — ծայրահեղորեն ապշած դիմեց նա դատական պրիստավին և Հայրումյանին, որոնք արդեն կանգնել էին նրա և խմբագրի մեջտեղը։

— Գեք հասկանում, համ... իսկ երբ որ ձեր քիթ ու պոռունկը ցարդեմ, այն ժամանակ կհասկանաք, — աղաղակեց խմբագիրը բռունցքները ցնցելով օդի մեջ։

— Да что это такое! ... — անորոշ արտասանեց դատական պրիստավին, կարծես նրանից էր կախված իր պատվիր պաշտպանությունը։

— Ну, господа, это... կմկմաց դատական պրիստավը շփոթված ըստ երեւութին, նա ամենեին չէր սպասում, թե մի կովուրուրական մարդու և խմբագրի բերանից այդպիսի կոպիտ։ Խոսքեր կարող էին գուրս թռչել մի կնոջ հասցեին։

Խմբագիրը, ըստ երեւութին, ինքն էլ հասկացավ, որ իր խոս-

քերը շափազանց կոպիտ էին և անվայել, որ դրանով իշխանուհուն վիրավորելուց առաջ իր վարկը գցեց, և այդ գիտակցության տակ նրա ցասումը անմիջապես իշավ:

— Ասացեք, խնդրեմ,— դարձավ նա դատական պրիստավին ինքն իրեն արդարացնողի տոնով,— դուք օրենքի ներկայացուցիչ եք, օրենքը թույլ է տալիս, որ պարտատերը վիրավորի պարտապանի մարդկային արժանապատվությունը: Ես ինքս իրավագետ եմ և գիտեմ, որ աշխարհին երեսին այդպիսի օրենք գոյություն չունի: Ես շեմ վճարել իշխանուհուն բնակարանի վարձը, որովհետեւ շեմ կարողացել գնացել գանգատ է արել, կատարողական թերթ է վերցրել և ձեզ բերել է, որ իրեղեններս ցուցակագրեք և աճուրդի հանեք: Շատ լավ, այդ իր իրավունքն է, և ես ոչինչ չունեմ դրա գեմ: Ես շեմ փախել...

— Միշտ փախչում էիք,— վրա բերեց իշխանուհին:

Խմբագիրը պատասխանելու տեղ ալքերը ոլորեց նրա վրա և, նորից դառնալով դատական պրիստավին, շարունակեց.

— ... Ոչինչ շեմ թաքցրել...

— Դեռ հարց է, չե՞ք թաքցրել,— նորից մեջ ընկավ իշխանուհին, — որովհետև ի՞նչ կա այստեղ:

Խմբագիրն այս անգամ ոչ մի ուշադրություն չդարձեց նրա վրա:

— ...Ահավասիկ,— շարունակեց նա ձեռքերը տարածելով համարյա դատարկ սենյակի մեջ, — ամեն բան, իմ բոլոր ունեցած չունեցածը ձեր տրամադրության տակ է, ցուցակագրեցեք՝ ինչ որ կուզի և գնահատեցեք՝ ինչքան որ իր բարի կամքը կթելադրի: Բայց վեր կենալ և շոշափել իմ անձնական պատիվը, իմ մարդկային արժանապատվությունը, արհամարհանքով խոսել իրեն խմբագրի և հրապարակախոսի կոչման մասին, ներեցեք, ես այդ թույլ շեմ տա ո՛չ որի: Այս րոպեին ես նրա համար ոչ խմբագիր եմ, ոչ հրապարակախոս և ոչ ուրիշ որևէ բան. ես սոսկ պարտապան եմ նրա համար և թող իր պարտապանի հետ էլ իր հաշիվը տեսնի: Ճիշտ չե՞մ ասում:

— Да, действительно...— անորոշ արտասանեց դատական պրիստավը:

Խմբագիրն արդեն բոլորովին տիրապետել էր իրեն և խոսում էր վիրավորված մարդու հպարտությամբ: Լսելով նրա արժանա-

պատվությամբ լի խոսքերը, Հայրումյանին թվում էր, թե նա մի գիշ ավելի է օգտվում, ըստ երեսութին, սահմանափակ ուղեղի տեր տանտիրուհու անտակա վարմունքից և սրտի խորքում ուրախ էր, որ այդ վարմունքն առիթ չէր տվել իրեն դուրս գալու իր նվաստացածի անհարմար դրությունից և պաշտպանողական դիրքից անցնելու հարձակողականի: Եվ Հայրումյանը շուտով տեսավ, որ չի սխալվել այդպես կարծելով: — դատական պրիստավը, որ ըսկը գրգռում խմբագրի վրա նայում էր իր իշխանության վրա վստահ պաշտոնյայի բարձրությունից, այժմ նկատելի հարգանքով էր լսում նրան և, ըստ երեսութին, ձնշվում էր նրա ազգու արտաքինի և ուժեղ խոսքերի ազդեցության տակ: Իսկ իշխանուհին սուս էր արել, արձանացել էր կանգնած տեղը և ապուշի պես նայում էր խմբագրի վառվուն աշքերին իր սե և խիտ հոնքերի տակից: Երեկի շատ էր զարմացել և մտածում էր, թե այդ ինչպես եղավ, որ մեղադրողի դիրքից հանկարծ մեղադրյալի վիճակի մեջ է ընկել ինքը:

— Կարծես հանկարծ հիշելով իր դիրքն ու դերը, ասաց դատական պրիստավը պաշտոնական շորությամբ, — այդ բոլորն ինձ չի վերաբերում և թույլ տվեք, խնդրեմ, պարտավորությունս կատարեմ: Ուրեմն ասում եք, որ չեք կարող վճարել, — դիմեց նա խմբագրին:

Խմբագիրը ժպտաց և ուսերը վեր քաշեց:

— Ավա՞գ, այս վայրկյանին, որ ոտներիցս կախեք, մի բոռ կոպեկ չի ընկնի գրպանիցս, — ասաց նա մի տեսակ կոմիկական ինքնահեղնանքով:

— Դո՞ւք ինչ կհրամայեք, — դիմեց տանտիրուհուն դատական պրիստավը: — Ցուցակագրե՞մ:

— Այո, իհարկե, — պատասխանեց իշխանուհին այնպիսի մի եղանակով, որ կարծես ուրիշ բան չէր կարող և չպետք է լիներ:

Ահա այդ բոպեկից էր, որ տեղի ունեցավ այն, ինչ-որ այնպես մոռայլել էր Հայրումյանի հոգին և մոռացնել տվել հոգնածությունն էլ, քաղցն էլ: — դատական պրիստավը, առանց հոգնելու և ձանձրանալու, պաշտոնական մեթոդիկ ճշտապահությամբ սկսեց ցուցակագրել խմբագրատան մեջ գտնված բոլոր կարասիքը, գրքերն ու իրեղենները:

Իշխանուհին նորից մտել էր անողոք պահանջատիրոջ դերի մեջ, և նրա այրական դաժան դեմքի վրա մեղմության և գիշողության չգույլ անգամ չէր երեւում: Նա ինքն էր առաջնորդում դա-

տական պրիստավին, ինքն էր գնահատում իրեղենները և պահանջում էր, որ անպատճառ իր գնահատումներով ցուցակագրվեն:

Խմբագիրն սկզբում չէր խառնվում և, մի կողմ քաշված, մատների ծայրերով վերուվեր էր քաշում իր առատամազ և լա Վիլհելմ սանրած բեղի փնջած ծայրերը: Շարունակ ժպտալով դիտում էր իշխանուհուն, որի թե՛ արտաքինը և թե՛ մանավանդ հնդկահավի պես ուսած-փրկված դիրքն ու քայլվածքը, ըստ երկույթին, անկեղծ զվարձություն էին պատճառում նրան: Վերջն այնքան զվարժացավ, որ սկսեց նույնիսկ ինքն առաջնորդել իշխանուհուն և դատական պրիստավին խմբագրատան բոլոր սենյակներն ու ծակուծուկերը, շարունակ կատակներ անելով:

— Ի՞նչ եք ասում, ձերդ պայծառափայլություն,— բացականշեց նա, երբ իշխանուհին խմբագրական զամբյուղը 10 կոպեկ գնահատեց:— Գիտե՞ք, թե այս զամբյուղը ի՞նչպիսի երկելի մըտքեր է պարունակել իր մեջ: Երբ մեր զավառական թղթակիցներից մեկին պատասխանել էինք, թե իր հողվածը զամբյուղն ենք գրցել, — այ, հենց այս զամբյուղը մեր գլխին դնենք, որպեսզի մի քիչ սովորենք, որովհետեւ, ասում էր, սրա մեջ ավելի խելք կա, քան մեր գլխում: Եվ դուք շե՞ք խղճահարվում 10 կոպեկ գնահատել երկելի մտքերի այս շտեմարանը:

Բայց իշխանուհին ոչ նայում էր խմբագրին, ոչ էլ պատասխանում նրա կատակներին, և նրա կիտած հոնքերն ամենեին չէին բացվում:

— Այ, այս իսկապես որ մի անարժեք քան է, — ասաց խըմբագիրն իր գրասենյակից վերցնելով և բաց անելով մի երկայն թափշապատ տուփ, որի մեջ մի ոսկե գրիշ կար սպիտակ մետաքսի դագաղի մեջ պառկած:— Մինչև օրս չգիտեի ինչ անեմ, որովհետեւ սովորաբար ես շատ հասարակ գրով եմ գրում: Վերջապես, այսօր քանի պետք եկավ: Կարող եք 10 կոպեկից էլ պակաս գնահատել, ոչ մի պրետենզիա չեմ հայտնի:

Երբ տանտիրուհին պահանջեց ցուցակագրել, ի միշի այլոց, նաև լրագրի ահագին կույտերով մնացած հին համարները, խըմբագիրը բացականչեց.

— Վերջապես կարող եմ պարծենալ և պարծանքով հայտարարել, որ թերթիս բոլոր համարները սպառված են, ինչ որ չեն կարող պարծենալ իմ հակառակորդները: Ի դեպ, գիտե՞ք ինչ միտք

ծագեց գլխումս, — ավելացրեց նա, — վատ չի լինի առհասարակ, որ խմբագրատները, բացի խուզարկությունից, տարեկան գեթ մեկ անգամ էլ աճրդախոսության ենթարկվեն պարտքերի գիմաց. դա մի բարիք կլինի, որովհետեւ կազմավենք, վերջապես, թղթերի այս սոսկալի կույտերից, որոնց մեջ խեղդվում ենք ուղղակի: Ահա թե ինչու ես այժմ իմ պարտքն եմ համարում իմ առանձին շնորհակալությունը հայտնելու իշխանուհուն, որ ազատում է մեզ այս թղթերից:

Թողոր իրեղենները ցուցակագրելուց և մինչև աճրդախոսությունը իրեն՝ խմբագրին պահ տալուց հետո, դատական պրիստավը տանտիրուհու կողմից, որ համառոր շարունակում էր ոչ խոսել խմբագրի հետ և ոչ էլ նայել նրա երեսին, պահանջ ներկայացրեց, որով խմբագիրը պարտավորվում էր երեք օրվա ընթացքում դատարկել բնակարանը:

— Միթե առանց ինձ էլ չեն դատարկելու, — Հարցրեց խըմբագիրը կոմիկական հանգստությամբ:

— Այո, բայց... տանտիրուհին չի կամենում, որ դուք այլևս մնաք այս բնակարանում:

— Նույնիսկ այն ժամանակ, երբ այս երեք օրվա ընթացքում վճարե՞մ պարտքս, — դիմեց խմբագիրը ավելի տանտիրուհուն, քան դատական պրիստավին:

— Այո, նույնիսկ այդ ժամանակ, — շեշտեց իշխանուհին, առանց նրան նայելու և դիմեց դեպի դուռը:

Խմբագիրն ուզում էր ինչ-որ ասել, բայց նա ետ չնայեց և գուրս գնաց:

Դատական պրիստավը լուռ գլուխ տվագ խմբագրին և հետեւ տանտիրուհուն:

Նրանց դուրս գնալուց հետո խմբագիրը մոտեցավ պատուհանին և, ձեռքերը գրասենյակը դրած, սկսեց մտախոհ նայել գեպի դուրս, որտեղ աշնանային հանգիստ, կապարագույն օդի մեջ փոքր հենման անձրև էր մաղում: Թաց անելով փողոցի սալահատակը, հանդեպի մայթը: Այժմ նրա դեմքին խաղում էր մի շատ հանգիստ քմծիծաղ, որի մեջ սակայն, արտահայտվում էր հոգեկան մի խոր զառնություն:

Բայց այդ բոլորը մի քանի բռպե միայն տեսց. նա թափահարեց խոշոշոր գլուխը, կարծես դառն մտքերն իրենից վահելու

Համար և արագորեն մոտեցավ Հայումյանին, որը նորից նստել էր աշխատելու

— Ի՞նչ ունեք այսօր, — Հարցրեց: — Նյութը, երեխ, կպակասի, — պատասխանեց Հայրումյառ, — Խնդրեմ՝ փոստը շուտով բերել տվեք: — Այս բոպիկին, — ասաց խմբագիրն և իրեն հատուկ աշխատված քայլերով դուրս գնաց:

Թեև Հայրումյանը նստել էր աշխատելու, բայց երկար ժամանակ ոչինչ չէր կարողանում անել: Հակառակ իր կամքին ու զանգերին, պատահած դեպքից հետո մի տարօրինակ կաշկանդում էր տիրել նրան, և նա չէր կարողանում միտքը կենտրոնացնել անելիք գործի վրա: Պատահած դեպքը շափազանց տարօրինակ էր և, նրա կարծիքով, անպատճեր այն լրագրի համար, որին նա ծառացել էր երկար տարիներ գրեթե միշտ քաղցած փորով և որի հետ կապված էր շան հավատարմությամբ: Այդ գիտակցությունն էր, որ դառնացրել էր նրա հոգին և կաշկանդել միտքը, և նա առաջուց զգում էր, որ պատահած դեպքը երբեք շպիտի ջնջվի իր հիշողությունից:

Ու մինչդեռ նա վերին աստիճանի ճնշված դրույթյան սաջ սաքենայի նման շարժում էր գրիչը, առանց կենտրոնանալ կարողանալու, խմբագիրն, ընդհակառակը, սովորականի նման աշխույժ ու տենդուտ, կատարում էր իր առօրյա աշխատանքը, — կարգադրություններ էր անում էքսպեդիտորին ու ցրիչներին, աշքի էր անցկացնում տեղական և մայրաքաղաքի թերթերը, գունավոր մատիտով նշան էր զնում թարգմանելիք լուրերի վրա, կարդում էր նոր ստացված թղթակցությունները, երկար ու բարակ զրույց անում այցելու բարեկամների հետ, — կարծես ոչինչ չէր պատահել կամ պատահածը նրան չէր վերաբերվում:

Այժմ էլ, երբ Հայրումյանը, մի կերպ վերջացնելով իր աշխատանքը և վերջին նյութերը տպարան ուղարկելով, մռայլ հոգգով վերադառնում էր տուն, առանց այլևս մտքովն անզամ անկացնելու, որ պատհած դեպքից հետո խմբագրից փող ուզի, խմբագրից նստել էր առաջնորդող գրելու:

«Այս տեսակ էլ մարդ...»— մտածում էր նա ապշած:

Եմ զնուրեցածին

**Տ**ս ստացա հետեւյալ նամակը և նամակի հետ առանձին տետրակի մեջ մի զրություն, որը հրատարակության եմ տալիս ստորև:

### Հնկեր Նար-Դու.

Ես ձեր «նեղ օրերից մեկը» պատմվածքի հերոսն եմ — Պատրիկյանը. Թեև իսկական ազգանունս Պատրիկյան չէ, բայց այդ միևնույն է. թող ձեզ և ընթերցողների համար Պատրիկյան էլ մնամ. իսկական ազգանունս հայտնելով չի փոխվելու չությունը, որի գեմ առարկելիք չունեմ:

«Նեղ օրերից մեկը» լույս տեսնելուց հետո անցել է մոտ երեսուն տարի, և դեռ զգիտեմ երբեքց հետաքրքրվել եք իմանալու, թե հետագայում ինչ եղան, ինչ վիճակ ունեցան ձեր այդ պատմովածքի գլխավոր պերսոնաժները, այսինքն— ես, տանտերս, խրմագործիքյան քարտուղարը և արքունական թատրոնների երգիչ Զափիհնյանը կամ Ժապինովը, ինչպես անվանվում էր այն ժամանակ աֆիշների մեջ: Եթե հետաքրքրվել եք և չեք իմացել, ես կարող եմ պատմել:

### **Կակսեմ ինձնից:**

Մի երկու լզարիկ գրքովյկ Հրատարակելուց հետո, որի վրա գույք տեղը ծախսել էի ուսուցչությանս ժամանակ խնայած կոպեկներս, ես մի անգամ առմիշտ թողի գրող լինելու մարմազը, այրեցի հետագա բոլոր գրվածքներս և շալիցինյան ոեժմից հետո, երբ վերատին բացվեցին մեր դպրոցները, նորից մտա ուսուցչական ասպարեզ: Այն խոնավ ու մութ սենյակը, որի վարձը նեղ օրերիս հազիվ էի կարողանում վճարել, թողի և անցա նույն տան բակում ազատված երկու լուսավոր սենյակի, ամուսնացա, օրինավոր տուն ու տեղ դրի, շորս զավակներ ունեցա, — երեք տղա, մի աղջիկ: Ֆղաներիցս ամենամեծը թունդ բոլցկիկ զուրու եկավ և զոհվեց մայիսյան ապստամբության ժամանակ: Նրանից փոքրը նույնպես բոցեկ-կոմացնիստ է և ներկայումս հրահանգիլ է գավառում: Այ-

նուհետեւ՝ աղջիկս ուսուցչունի է, իսկ փոքր տղաս սովորում է բան-ֆակում և խոստանում է ավելի թունդ բոլշևիկ լինել, քան իր ավագ եղբայրները։ Ներկայումս ես արդեն մոտ վաթուն տարեկան ծերունի եմ։ Թողել եմ ուսուցչությունը։ Ստանում եմ կենսաթոշակ։ Անցյալ տարվանից կնոշս հետ մշտապես տեղափոխվել եմ իմ հայրենի գյուղաքաղաքը, ուր պաշտոնավարում է աղջիկս, և ապրում եմ նրա մոտ հանգիստ ու ապահով, միանգամայն մոռանալով իմ նեղ օրերը, որոնցից մեկը նկարագրել եք դուք ձեր պատմվածքի մեջ։

#### Խմբագրության քարտուղարը։

Սրա կյանքն արդեն մի կատարյալ էշի մարտիրոսություն էր։ Ֆանատիկոսի մոլեռանդությամբ նվիրված լինելով թերթին, տարեցտարի և օրին օրին մեն-մենակ լցնելով թերթը։ ցերեկը խմբագրատանը և գիշերները տպարանում անցկացնելով, այնքան չեր ստանում, որ զոնե մի տաք կերակուր ուտեր և ձմեռը տաք հագնեվիր։ Վերջը թքեց թերթի վրա էլ, ամեն բանի վրա էլ, գնաց էշմիածին, կուսակրոն ձեռնադրվեց, վարդապետ դառավ, հետո ծայրագույն վարդապետ, գրում էր «Արարատ»-ում, քիչ մնաց եպիսկոպոս ու թեմակալ դառնար, փորը մի քիչ հաստացրեց և մեռավ անհայտ ու անպատուղ։

#### Երգիշ Զափինյանը։

Արդշը բանից երեաց, որ սա փքուռուց հոչակի տեր և անտաղանդ մեկն է եղել, զորք նույնիսկ լսողությունից։ Ինչպես որ արագ բարձրացել էր արքունական թատրոնների բեմերը իր հիրավի որ հուժկու ձայնի շնորհիվ, այնպես էլ և էլ ավելի արագ ցած գլորվեց։ Զափինյանը շի մոռացել իր նախկին տիրացությունը և երրեմն-երրեմն իր բարեկամ այս կամ այն հանգուցյալի թաղման ժամանակ իր գոմշի ձայնով վեր է բաշում և՛ վերին երուսաղեմ»-ը ի պատիվ հանգուցյալի հարազատների, որոնք այդ բանից զգացված սկսում են էլ ավելի մեծ թափով, ճիշ ու ծղբրտոցով (կանայք, իհարկե) վայ տալ իրենց թանկագին կորուսը։ Ցիլինդրը, կարմիր փողկապը իր խոշոր աղամանդով և բարձր կրունկներով փայլուն վաղուց, շատ վաղուց հրաժեշտ են տվել նրան։ Բայց, շնայելով իր մոտ վաթունհինգամյա հասագին, դեռևս շատ ժիր է, և այժմ դուք կտեսնեք նրան շոփերական մի կետի սափրած գլխին, մի շատ հասարակ բլուզ հագին, կար-

կատած կոշիկներով այս կամ այն կոռպերատիվ խանութը վազելիս, որ մի քանի կիլո կարտոֆիլ տանի տուն քաթանե տոպրակով, որը շարունակ ման է ածում հետք համենայն դեպս։ Ապրում է, կարծեմ, երգեցողության մասնավոր դասերով։

#### Տանտեղ։

Գրությանս նպատակն իսկապես սա է։ Ես ուզում եմ առանձնապես ծանրանալ սրա վրա և ձեր ուշադրությունն էլ հատկապես սրա վրա եմ ուզում հրավիրել։ Սա նախանցյալ տարի մեռավ։ Արդեն մոտ յոթանասուն տարեկան ծերունի էր։ Սրա մահով գերեզման իջավ մեր փառազուրկ բուրժուազիայի վերջին տիպիկ ներկայացուցիչներից մեկը։ Սրա կյանքի թուուցիկ նկարագիրը հեղափոխությունից առաջ և հետո՝ թերեւս մի նոր պատմվածքի կամ վեպի նյութ տա ձեզ։ Այդ սիստեմատիկ նկարագիրը դուք կգտնեք նամակիս հետ ձեզ ուղարկված տետրակիս մեջ։

#### Ձեր Պատրիկյան

#### ԱՂԱՄԻՐՈՎ ԴԱՎԻԹ ՏՈՄԻՔ

#### (Պատրիկյանի տետրակիր)

Միջահասակ, պնդակազմ, շատ ժիր տղամարդ էր, միշտ լավ հագնված, մոխրագույն շապոն մի քիչ ծուռ դրած, մատները լի մատանիներով, որոնցից մեկն առանձնապես հուրհրատին էր տալիս իր խոշոր աղամանդով։ Կոշիկների վրայից հագնում էր սպիտակ գամաշներ՝ կողքից կոճկած։ Ամառ-ձմեռ մոխրագույն ձեռնոցներ էր կրում, հագնում էր միայն ձախ ձեռքինը, իսկ այլ տունց հագնելու պահում էր ձեռքին։ Երեխ խանգարում էին մաշտանիները։ Ման էր գալիս արագ, հաստատուն քայլերով, կեռագուիս ձեռնափայտը թեկության կախած։ Դեմքը կարծես բրոնզից էր ձուլված իր գեղնավուն գույնով և ծանր կնճիռներով, որոնք ծալ-ծալ նստած էին աշքերի տակ և բերանի այս ու այն կողմը։ Իր այդ բրոնզյա դեմքով և մանավանդ աշքերի շատ սուր ու լուրջ համարով կորովի կամքի և համառ բնավորության տեր մարդու տպագություն էր թաղնում։ Զգիտեմ ինչու, երբ պատահում էր, որ մի գուցողանում սենյակիս վարձը ժամանակին վճարել և այդ բրով համար նա կամ ինքն էր իշնում ինձ մոտ, կամ ինձ էր կան-

չում իր մոտ, ևս պարզապես վախենում էր նրա այդ դեմքից և հայացքից, չնայելով, որ երբեք դուրս չէր գալիս քաղաքավարության սահմանից, թեև խոսում էր խիստ ու կտրուկ:

Քաղաքում հայտնի էր իր սապոնի գործարանով: Ուներ, և մի քանի խոշոր տուն՝ խանութներով: Տներից մեկը մի ամբողջ հյուրանոց էր: Գործոն անդամ էր մի քանի խոշոր ակցիոներական ընդուռանոց էր: Գործոն անդամ էր մի քանի խոշոր ակցիոներական ընդուռանոց էր: Գործոն անդամ էր մի քանի խոշոր ակցիոներական ընդուռանոց էր: Մի այդպիսի ընկերություն էլ ինքն էր հիմնել՝ կերպությունների: Մի այդպիսի ընկերություն էլ ինքն էր համար: Քաֆում նավթարեր հողերի պեղումներ կատարելու համար:

Իր հարստության և անվան շնորհիվ հասարակական բոլոր ընտրությունների ժամանակ առաջին թեկնածուներից մեկն էր և հարում էր կաղետական կուսակցության: Այսպիսով միաժամանակ քաղաքային դումայի իրավասու էր, համ բանկի դիրեկտոր, համ կուրի ավագ, համ թարեգործական ընկերության վարչության անդամ, համ պարողի հոգաբարձու, համ երեցփոխ, համ... զգիտեմ էլ ինչ: Եվ զարմանալին այն էր, որ համարյա ամեն տեղ էլ հասնում էր իր տոկուն եռանդի շնորհիվ:

Այն տունը, ուր ապրում էր Դավիթ Ֆոմիշը, բաղկացած էր երկու հարկից և գտնվում էր քաղաքի ամենաբանուկ, վաճառաշահողության գողոցում: Ամբողջ վերին հարկը ծառաների սենյակներով, խոհանոցով, բաղնիքով, պահեստներով գտնվում էր տանտիրոջ ձեռքին, իսկ ներքին հարկը, փողոցում, մի շարք լայն ու բարձր խանութներ էին, որոնց վարձակալներն ապրում էին նույն տան ընդուռանությամբ բակում: Դրանք բոլորն էլ հարուստ վաճառականներ էին— մի ակնավաճառ, մի կոնդիտեր, մի օստիկ, մի դեղավաճառ և ամենաընտիր մրգեր ծախող մի բախկալ: Ամենախեղճ կենողներս այդ բակում ես էի, մի մանկաբարձուհի իր պառավ մոր հետ և բազմաթիվ երեխաների տեր մի հրեա կին, որը բակի դարպասում սեղանի վրա զանազան երկաթեղեն էր ծախում— կողպերներ, մկրատներ, դանակներ, մատոնցներ և այլն: Այս երեք կենողներից ամենավատ սենյակն իմն էր— խոնավ, մութ, խեղճ կենողներից ամենավատ սենյակն իմն էր այդ սենյակ անվանել: Ակզրում դա եղել էր տանտիրոջ հավաքունը, ուր նա բարձարիվ հավեր էր եղել պահելիս իր տան գործածության համար (ստամբսի ինչ-որ հիվանդություն ունենալու պատճառով թժկների արգելած են եղել նրան թշունի մսից ուրիշ որևէ կենդանու միս ուտել): Բայց որովհետև հավերի աղտոտությունից հոտելիս է եղել բակը և կենողները շարունակ բոլորներ շարունակ այդ բանի:

Դավիթ Ֆոմիշը հավերը տեղափոխել էր տան կտուրը, ուր նրանց համար հաստուկ հավաքոն էր շինել տվել պատշաճ սարքավորումով, իսկ նախկին հավաքոնը մի քիչ կարգի դնելով, սենյականման մի բանի էր վերածել, ուր և վիճակվել էր ինձ ապրելի իմ նեղ օրերին:

Դավիթ Ֆոմիշի ընտանիքը մեծ լէր. ինքն էր, կինը, մի հատիկ տղան և աղջիկը: Տղային և աղջկան տնային կրթության էր տալիս ակսած երածշտությունից մինչև գիմնազիական դասընթացը: Ֆրանսուհի դաստիարակչուհին էլ հո զոկ: Մի անգամ նույնիսկ փորձեց, որ նրանք հայերեն դասեր էլ առնեն, և դրա համար հրավիրեց ինձ, բայց տղան էլ, աղջիկն էլ հենց սկզբից բացեիրաց հրաժարվեցին, ասելով, որ հայերենը շատ դժվար լեզու է և ինչի՞ է պետք այդ ռկոյի լեզուն» (տան մեջ նրանց գործածական լեզուն ուսաերենն էր և ֆրանսերենը):

Աղջիկը բավական տգեղ արարած էր, հոր պես դեղնավուն և, ըստ երեւութին, հիվանդուստ. բժիշկը շաբաթը երկու անգամ կանոնավորապես այցելում էր նրան: Ծնողների առանձին հոգացողության տակ էր նրա լսելիքը. եթե պատահում էր, որ փողոցային որևէ թափառական մի երաժշտ իր արգանով կամ հարմոնով, զութակով կամ շվիռվ մտնում էր տան բակը մի քանի կոպեկ հավաքելու համար, իսկույն ծառաների միջոցով դուրս էին քշում նրան, որ աղջկա երածշտական լսելիքը շփշանա այդ «վայրենի» ձայներից:

Տղան, մի շատ գեղեցի! ոշխույժ ու չարաճճի պատանի, բոլորովին նման չէր ոչ հորեւ մորը և ոչ էլ մանավանդ քրոջը և, երեխ այդ պատճառով, նրանց առանձին սիրո և գուրգուրանքի առարկան էր: Նրան շատ էին երես տվել և նա տան մեջ ինչ օինքագություններ ասես չէր անում: Դեռևս քսան տարեկան շեղած, գիմնազիական դասընթացն արդեն ավարտած էր համարում իրեն և այլս չէր ուզում սովորել: Գրանցն միշտ լիքն էր լինում փողով, և նա ծախսում էր քեֆն ուզածին պես: Մի քանի անգամ բոնվել էր խոշոր սկանդալների մեջ և միշտ էլ անպատիժ մնացել հոր շնորհիվ: Ման էր գալիս գլխարկը ծոծրակին դրած և մազերի գեղեցիկ փայլուն գանգուրները ճակատին ցրիվ տված:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ Դավիթ Ֆոմիշը, իբրև հարուստ մարդ, ապրում էր, ինչպես ասում են, լեն ու բոլ Ամեն ամառ ընտանիքով բոշում էր արտասահման և ամեն անգամ վե-

բաղարձին այնտեղից բերում էր այնպիսի զարմանահրաշ բաներ, որ տեսնողը մնում էր բերանը բաց։ Դրանք մեծ մասամբ ոչինչ բաներ էին— սեղանի վրա կամ բույսարու գլխին դնելիք զարդարանքներ, տարօրինակ ձևի կոնստրուկցիայի ժամացույցներ, ալբոմներ, ծաղկամաններ և այլն։ Մի անգամ էլ բերեց մի շատ գեղեցիկ թեթև ավտոմոբիլ՝ հատկապես իր և ընտանիքի անդամների զրուանքի համար։ Բայց ամենից լացուցիչը լյուդովիկոս շգիտեմ ո՞րերորդի ոճով պատրաստված կահավորանքն էր, որ ապսպել էր Փարիզից իր գահին համար։ Պարծանքով էր պատմում, որ մի-միայն սեղանը, զահավորակը և երկու բազկաթոռը իր վրա նստել էր տասը հազար ոուրիշ։ Շատ էր սիրում իր բարեկամների շըրջանում պատմել հետեւյալ դեպքն իրենց փարիզյան այցելություններից։

— Մի երեկո նստած ենք թուլոնյան անտառում։ Դե, հայտնի է, թե ինչ հասարակություն է զրուանքի ենում այդ անտառը։ Ամրող շիք ու հրաշալիք։ Կինս նայեց, նայեց, մի խոր հոգոց մեջ և ասաց։ «Է՛ս, մենք էլ կասենք ապրում ենք, սրանք էլք։ Քաշեց և ասաց։ «Է՛ս, մենք էլ կասենք ապրում ենք, սրանք էլք։

Եկավ աշխարհասասան պատերազմը, և միակ վնասը, որ հասցրեց Դավիթ Ֆոմիշին, այդ այն էր, որ զինվորական վարչությունը գրավեց նրա ավտոմոբիլ իր պետքերի համար։ Այդ բանը մեծ ցավ պատճառեց նրան, բայց ի՞նչ կարող էր անել։ Վախ կար, որ որդուն կարող էին զինվոր տանել և քշել դեպի սպանդանոց, բայց դեմք կարողացավ առնել։ շտապեց որդուն յունկերական դպրոցը տալ և բանն այնպես սարքեց, որ նա մինչև պատերազմի վերջն էլ մնաց թիկոնքում։ Խսկ ինքը, իրք և անվանի հասարակական գործիչն, մի ինչ-որ կարևոր պաշտոնով մտավ Թաղաթների միության մեջ և իրեն միայն հայտնի միջոցներով ձեռքերը լավ տաքացրեց։ Բայց երբ թուրքերը Սարիհամիշ-Արդահանի ճակատը ճեղքելով սպառնում էին բռնել Թիֆլիսի ճանապարհը, Դավիթ Ֆոմիշին առաջիններուց մեկն էր, որ նիկոլայ Ա-ի հետեւյալ իր ընտանիքով փախավ դեպի հյուսիս, որտեղից վերադարձ այն ժամանակ, երբ թուրքերը ետ շպրտվեցին դեպի էրզրում և Կովկասյան ճակատը միանգամայն ապահովվեց։

Թուրքերի պարտությունը այնքան էր ոգևորել Դավիթ Ֆոմիշին, որ նա սկսեց եռանդուն մասնակցություն ցույց տալ հայկական կամավորական խմբեր կազմակերպելուն և «Մի հայ— մի կամ կամավորական խմբեր կազմակերպելուն և «Մի հայ— մի կամ կամավորական գործին» եկ երբ հայերին միանուի» ֆոնդի հանգանակության գործին։ Եկ երբ հայերին միանուի» ֆոնդի հանգանակության գործին։

գամայն հիմարացնելու համար Անդրանիկին գեներալ-մայորի աստիճան շնորհվեց, Դավիթ Ֆոմիշը մի փառավոր ընթրիք պատրաստեց իր տանը նրա պատվին։

Կովկասյան ճակատում ոուսական բանակի իրար հետեւյալ տարած հաղթություններն առհասարակ Դավիթ Ֆոմիշը վերագրում էր հայ կամավորական խմբերին, բռնվել էր թունդ ազգասիրությամբ և ման էր գալիս այնպես ուուած-փեղած, որ ամեն անգամ, քանի նայում էի նրան, միտու էին գալիս Կովկավի վարից վերադարձն եղան պողին նստած ճանճի պարծենկոտ խոսքերը՝ «Մենք էլ վարեցինք»։

Այնուհետև եկավ փետրվարյան հեղափոխությունը և թեև մի քիչ սառը ջուր մաղեց նրա գլխին, բայց և այնպես մի մազ անգամ լցակասեցրեց Դավիթ Ֆոմիշը գլխից։ Այն ժամանակ, երբ մենք սիմբնորի կամ կորեկի հաց անգամ հազիվ էինք ձեռք գցում, Դավիթ Ֆոմիշի ընտանիքը ֆրանսիական բուլիններ էր անուշ անում։

Բայց ահա լսվեց Հոկտեմբերի ահազանգը Պետրոգրադից, և Դավիթ Ֆոմիշին առաջին անգամ բնազդական սարսուռ զգաց ահարկու գալիքի հանդեպ։ Այդ գալիքի նախադուռը Հանդիսացավ կովկասյան ճակատի մերկացումը և թուրքերի առաջիւաղացումը։ Դավիթ Ֆոմիշը ահ ու սարսափով բռնված՝ իր ընտանիքի հետ նորից փախավ Հյուսիսային Կովկաս։ Այնտեղից վերադարձ այն ժամանակ, երբ անգիտացինները քշել էին թուրքերին ու գերմանացիններին, պինդ նստել Անդրկովկասում իրենց անվարտիք շոտլանդացիններով, հնգական խորմայով և ահագին ջորիններով, և ըլքբաղվում էին «բաժանիր, որ տիրես» քաղաքականությամբ։ Անգլիացինների տիրապետության ժամանակ էլ Դավիթ Ֆոմիշը վատ չէր զգում իրեն։ Նույնիսկ բարեկամացել էր նրանցից մի քանի բարձրաստիճան զինվորականների հետ, որոնց շուտ-շուտ հյուրասիրում էր իր տանը։

Կար մի մոմենտ, որ նա հույս ուներ, թե շուտով կհրավիրվի դաշնակցական Հայաստան՝ ֆինանսների մինիստրի պաշտոնով, երբ զարմանքով իմացավ, որ Հոկտեմբերը հյուսիսից գալով՝ եկել նստել է Բաքու։ Հետո լուր եկավ, թե նա երկանումն է և շուտով գալու է Թիֆլիս։ Եկ ալս բոլորը կատարվեց այնքան անսպասելի կերպով և այնպիսի գլխապտույտ արագությամբ, որ Դավիթ Ֆոմիշը ժամանակ շունեցավ իր ի՞նչ անելիքը որոշելու։ Կարողացավ

միայն կնոքը, աղջկան և տղային անգիտացիների հետ ճամփել արտառաւաճախան, իսկ ինքը մնաց, որպեսզի կարգադրի իր գործերը և հարմար րոպեին ժղի նրանց հետևից:

Այդ հարմար րոպեն պետք է լիներ բոլշևիկների թիֆլիս մըտնելու նախորդ օրը: Խնչպես հետո ինքը Դավիթ Ֆոմիշն էր պատմում ինձ, իր բարեկամ անգիտացիներից մեկը, որ մնացել էր իրը մենշևիկների խորհրդատու, խոստացել էր այդ օրը վերցնելու նըրան իր հետ, բայց խումապի մատնված կամ մոռացել էր նրան, կամ ժամանակ չէր ունեցել նրան իմաց տալու և մենշևիկների հետ փախել էր խոստացած օրվանից երկու օր առաջ, որովհետև նրա հաշիվները բոլշևիկների թիֆլիս մտնելու օրվա մասին միալ էին գուրս եկել:

Այսպիսով Դավիթ Ֆոմիշը, հուզը անգիտացու վրա դրած, գիշերը հանգիստ քնելուց հետո, փետրվարյան մի ցուրտ առավոտ վեր կացավ տեսավ Հոկտեմբերն արդեն եկել նստել է թիֆլիսում և ոչ անգիտացի կա, ոչ մենշևիկ: Այժմ նա նմանվում էր ականատ ընկած մկան, որ շատ դես-դեն ընկնելուց և դունչը երկաթալար ցանցերին արնոտելուց հետո տեսնելով, որ ազատվելու հնար շկա, տապ է անում և աշքերը պլզած սպասում իր անխուսափելի վախճանին:

Իսկ այդ վախճանը մոտենում էր, սկզբում թեև դանդաղ ու երերուն, բայց հետզհետե ավելի ու ավելի արագ և հաստատուն քայլերով:

Ամենից առաջ քաղաքային դուման, բանկը, կլուբը, ակցիոներական ընկերությունները — այդ բոլորը հօդս ցնդեցին, ինչպես երազներ, և Դավիթ Ֆոմիշը զգաց իրեն ինչպես ջրից ցամաք նետված ձուկը: Հետո աստիճանաբար եկան հօդս ցնդելու նրա անձնական սեփականությունները. նախ ազգայնացվեց սապոնի գործարանը, հետո հյուրանոցը, հետո մի տունը, հետո երկրորդը, երրորդ տունը և ամենից վերը հերթը հասավ այն տանը; ուր ապրում էր ինքը և մենք — բակի կենողներս:

Այս տան վրա նա պետք է որ ամենից ավելի դողալիս լիներ, որովհետև այստեղ իր բնակարանի միմիայն կահավորանքը մի ահագին հարստություն էր, որի գոնե մի մասը չէր կարողացել կամ չէր ուզեցել որևէ տեղ պարտկել: Սենյակներից մեկի պատի մեջ պարտկել էր միայն տան մեջ ունեցած ամենաթանկագին մանր-մունք իրեղենները — ոսկեղենը և արծաթեղենը, որը ինչ-ինչ

պատճառներով չէր կարողացել ընտանիքի հետ համփել արտասահման: Այս բանը բացից նրա մահից հետո տան մեջ կատարված վերանորոգման ժամանակ:

Սապոնի գործարանը, հյուրանոցը, մյուս տները ազգայնացվելուց հետո ուզեց փրկել գեթ այս վերջին տունը և ուրիշ ճարշգույն դիմեց գլուխը հողի մեջ թաղող ջայլամի «խորամանկության». դրա համար ամենից առաջ պոկեց իր շքադրան վրա փակցրած երկաթի տախտակը, որի վրա ոսկե տառերով փորագրված էր՝ իր անուն-ազգանունը. հետո բանդեց այդ դռան էլեկտրական զանգի կոճակը, գուռն էլ պինդ փակեց և ներս ու դուրս էր անում բակի դռնից: Դեպի փողոց նայող բոլոր պատուհանների տախտակե փեղկերը գիշեր-ցերեկ փակ էր պահում: Արձակել էր տան բոլոր ծառայողներին: Ցերեկը երբեք տանը չէր մնում. առավոտյան վաղ գուրս էր զալիս, գնում հայտնի չէ ուր և վերադառնում ուշ գիշերին: Առանց այն էլ բրոնզի գույն ունենալով, նրա դեմքը միանգամայն դեղնել էր, կնճիռները փափկել կախ էին ընկել, շապոն այլևս ծուռ չէր դնում, այլ աշքերի վրա վար թողած, իսկ մատանիները շքացել էին մատներից, բայց ձեռնոցները և ձեռնափայտը կրում էր առաջավագես: Առաջ էլի պատահում էր, որ բակի կենողների կամ ծանոթների հետ հանդիպած ժամանակ կանգնում խոսում էր, բայց այժմ հաղիվ միայն լուր բարեկում էր և անցնում գնում:

Վերջ ի վերջո այդ տունն էլ ազգայնացվեց ընդհանուր կարգով, և Դավիթ Ֆոմիշի ընդարձակ բնակարանում եկավ տեղավորվեց մի ինչ-որ հիմնարկություն: Գրագիրեց բնակարանի ամբողջ կահավորանքը, այդ թվում նաև լուրջիկոսյան սեղանն ու գահավորակները: Հետագայում, երբ Դավիթ Ֆոմիշն արդեն հաշտվել էր իր դրության հետ և իր նախակին հարստությունից ու պատվից զրկված՝ բարեկամացել ինձ հետ, դասնությամբ գանգատվելով ասում էր, թե ճիշտ է, սկզբում շատ էր մտահոգվում իր բնակարանի համար, բայց չէր կարծում, թե բնակարանի հետ կահավորանքն էլ կգրավեն:

— Այլապես,— ավելացնում էր նա,— որ գիտենայի, թե կահավորանքն էլ պիտի գրավեն, հերները կանիծեի, մի մազ անգամ չէի թողնի, որ աշխները կոխեն: Ազգատ ազգականներ շատ ունեմ, բաժան-բաժան կաներ, ամեն մեկին մի բան կտայի, ձեզ կտայի, գոնապանիս կտայի, մի խոսքով շուն ու գելի կտայի, բայց չէր

թողնի, որ նրանք գան տիրանան իմ ընտանեկան պետքերի համար իմ հատուկ ճաշակով պատրաստել տված իրեղներին:

Դավիթ Ֆոմիշին թույլ տվին իր պետքերի համար վերցնել ամենանհրաժեշտ իրեղներն ու հագուստեղենը և հատկացրին նրան խոհանոցին կից գտնված մի սենյակ, ուր առաջ գիշերում էին նրա խոհարարն ու ծառաները:

Ազգում Դավիթ Ֆոմիշն այս հարվածը տարավ զարմանալի տոկունությամբ ու մինչև սրտի խորքը վիրավորված մարդու լուս հպարտությամբ: Առաջվա պես ամեն առավոտ գնում էր ուր-որ և վերադառնում ուշ գիշերին: Ոչ ոքի հետ ոչ խոսում էր, ոչ էլ բարեւում: Նրա սենյակին կից խոհանոցում տեղավորված էին հիմնարկության սպասավորներից երկու հոգի՝ կույրերը և սրա կինը, որը մաքրում էր սենյակները և հիմնարկության ծառայողների համար թեյ պատրաստում: Երեսում էր, որ Դավիթ Ֆոմիշը տանել չէր կարողանում նրանց հարեանությունը և ավելի այդ հարեանությունից էր, որ փախչում էր:

Այնուհետև մինչև այս նախավերջին տարին շատ փոփոխություններ կատարվեցին այդ տան մեջ. մի հիմնարկության տեղ եկավ մի ուրիշը, սա էլ զնաց, տունը վերջնականապես դարձավ ժակտ, ներքին խանութիներում տեղավորվեց բանկոպը, մասնավոր վաճառականները հեռացվեցին իրենց բնակարաններից, նըրանց տեղ եկան բանվորներ, ի միջի այլոց և իրեն՝ Դավիթ Ֆոմիշի նախկին սապոնի գործարանի մի բանի բանվորներ իրենց ընտանիքներով, վերեք բնակություն հաստատեցին խորհրդային պատասխանատու պաշտոնյաներ, իսկ իրեն՝ Դավիթ Ֆոմիշին վերեկց քշեցին և բերին տեղավորեցին իմ նախկին սենյակում կամ, ուրիշ խոսքով ասած, իրեն իսկ նախկին հավաքնում, որտեղից ես ամուսնանալու պատճառով վաղուց դուրս էի եկել և բնակվում էի նույն բակում դատարկված մի ավելի հարմար բնակարանում:

Այս հարվածն արդեն շկարողացավ տանել Դավիթը: Ինչպես որ գազով լի շահ խցանը հանես և գազը ֆշալով ու թըշշալով դուրս պրծնի հանկարծ, այնպես էլ Դավիթ Ֆոմիշի գոռող սրտի մեջ մինչև այդ հավաքված վիրավորանքի և նվաստացման թույնը արտավիժեց միանգամից: Մայր աստիճան կատալած, փրփուրը բերանին, արնակալ աշքերը շուտումուռ տալով, սկսեց ոտները գետնովը տալ, սպառնալ, թե ցույց կտա նրանց, կանա կգանգատվի ուր պետք է, բայց նրա սպառնալիքների վրա

միայն ծիծաղեցին և հասկացրին նրան, որ հիմա ոչ պրիստավ կա, ոչ գուրենատոր, և ուր էլ որ գնա գանգատվելու, ամեն տեղ էլ իր գիմաց կտեսնի իրենց նման բանվորների, որոնք նույնպես կըծիծաղեն իր վրա. ավելի լավ է սուս անի և հանգիստ նստի իր տեղը, թե որ չի ուզում այդ սենյակից էլ գրկվել:

Այդ խրատից հետո Դավիթը թեև սուս արավ, բայց հանգիստ չնստեց իր տեղը: Մի քանի օր կորած էր, ոչ ցերեկն էր երեսմ, ոչ գիշերը: Արտեղ էր լինում, ի՞նչ էր անում — հայտնի չէ: Միայն մի առավոտ տեսնեմ եկել փսխում է իր նախկին հավաքանում: Իմ հարցին, թե ի՞նչ է անում այնտեղ Դավիթ Ֆոմիշը, դոնապան Պողոսը ծիծաղելով պատասխանեց.

— Ի՞նչ պըտի անի, տեղավորում ա իր հափուռ-շփուռք Ասած ա՛ կակղի—կուտի:

Այժմ նա, ինչպես ասում են, միանգամից կոտրվել էր, ծերացել, մեջքից կորացել: Սանձն արդեն շատ էին պինդ քաշել, և նա այլս չէր կարողանում առաջվա պես գլուխը բարձր պահել: Դեղնավոն դեմքը հետզհետե սեանում էր, միշտ մաքուր սափրած երեսը ծածկում էր սկը սպիտակի հետ խառն մազի փշերով, առաջվա միշտ անբիծ: Միշտ արդուկած հագուստը ճմրթվում էր, ծալծլվում և ծածկում վրան թափված կերակրի փոշակալ բծերով: գեղեցիկ շապոյին հրաժեշտ էր տվել և շատ հասարակ գդակ էր դնում գլխին:

Երբեմն գիշերները նրա պատուհանի մոտով անցնելիս տեսնում էի նրան սեղանի մոտ ակնոցը թթին ինչ-որ գրելիս, երկի նամակներ էր գրում արտասահման իր ընտանիքին: Իսկ շատ հաճախ նրան տեսնում էի հասարակաց այգու մի խուզ անկյունում իր պես խունացած նախկին մարդկանց հետ նստած խաղաղ գրուց անելիս: Այգու այդ անկյունը նրանց հավաքատեղին էր, ուր նրանք ամեն օր միննույն ժամերին գալիս նստում էին միշտ միննույն նստարանների վրա իրար դիմաց՝ իսուսելու անցած-գնացած օրերի և գուշակություններ անելու եկած ու գալիք օրերի մասին: Նրանց մեջ կային մի նախկին գեներալ իր երբեմնի կարմրաստառ շինելով՝ առանց ուսադիրների, մի գնդապես քաղաքացիական էժանագին վերարկուով, մի շինովնիկ իր շինովնիկական հնամյա գլխարկով առանց կոկարդի, որի տեղը մի ծակի շուրջը մի սպիտակ շրջան խունացած մահուցի կապույտ ֆոնի վրա: Այնուհետև այդ անտիկների շրջանը կազմում էին նախկին առևտրական խո-

զոր տան մի ներկայացուցիչ, մի նոտարիուս, մի դատավոր, բորսային մի մակլեր և նույնիսկ երթեմն-երթեմն էլ նախկին հարուստ ծիսերի տեր մի տերտեր, որ ֆարազան հանել՝ վերարկու էր հագել, բայց շարունակում էր կրել իր տերտերական մորուքը և ամեն գերեզմանաօրհնեքին վազում էր գերեզմանատուն գերեզմաններ օրհնելու, պահանջված դեպքումն էլ, որ շատ քիչ էր պատահում, մեռել թաղելու:

Մի անգամ Դավիթ Ֆոմիշը դռնապան Պողոսի բերանով թել ու ասեղ էր խնդրել կոչողիցու երր Պողոսին հարցրի, թե Դավիթ Ֆոմիշը ինչ էր անում թել ու ասեղը, պատասխանեց, թե ուզում է վարտիքի կոճակը կարել:

— Ես թելեցի ասեղը,— ասաց նա,— աշքերը կտրում չեն կափ գնացել ա ծեռքից: Հային ա,— ավելացրեց Պողոսը սրբառանց,— խի՞ էր օղլուշալը զագրանիցա ճամփում. բալշկիկնին հու ուտելու չէի՞ն նրանց. որտեղ ինքը, ընտեղ էլ նրանք չըմի լավ ա՞, որ մին կոճակ կարող էլ չունի, բայցուշի պես մենակ նըստած ա մնացել տանը: Փիս մարդ էր, փիս էլ վերջացնում ա իր օրերը: Քսան տարի իր դուն չունն էր արել ինձ, տվածը մի զադ չէր, ինչքան խնդրում ի, որ մին օթախ տա, օղլուշալս հանեմ պադվալից՝ մեջը կենան, արեկ լիս տեսնան, տվավ ոչ, թե՛ քու ըրեխանց ղալմաղալի գլուխ չունեմ: Հըմի լավ իրան հանեցին բերին մկան ծակուը կոխեցին: Դե թող հըմի գնա մեզպեսների զադրը իմանաւ: Համա ի՞նչ, անցածը անցած ա. հըմի որ տեսնում եմ նրան էն հավաբնում կու եկած, խեղճս զալիս ա: Մին-մին վախտ հաց ա ուզում, տալիս եմ: Հացի կնիժկա չունի:

— Մի՞թե մինչեւ անգամ հացի փող չունի,— զարմացա ես

— Ե, ի՞նչ ես ասում, վարժապետ զան. ունի, ո՞ւմց կարա չուռ նենաւ: Ասած ա՞ ուզուը ինչքան էլ սատկի, կաշին էլի մի իշաբեռ դուրս կգա:

— Բա էդ ո՞նց է, որ հացը քեզնից է ուզում:

— Որ ասի, թե տեսեք, բալշկիկնին ինչ օրի են հասցրել խեղճ հալկորիս: Շատ զալում քավթառ ա, որ ասիլ չի ուզի:

Դավիթ Ֆոմիշը կամաց-կամաց նշաններ էր ցույց տալիս ինձ մոտենալու, այն Դավիթ Ֆոմիշը, որ առաջ հազիվ էր լայեղ անում բարի տալ աղքատ վարժապետիս: Սկզբում, առավելապես ցուրտ և անձրևային եղանակներին, երբ տեղ չուներ գնալու, երեկոները մտնում էր ինձ մոտ տաքանալու և ժամանակ անցկացնելու հա-

մար: Մնում էր ժամերով, զանգատվում էր, թե տանջվում է անքնությունից, հարցնում էր, թե արտասահմանի հետ առհասարակ փոստային ազատ հաղորդակցություն կա՞ թե ոչ: Կինս շատ էր խղճում նրան և չէր խնայում թեյով կամ տանը գտնված որեւէ բանով հյուրասիրելու ի մեծ դժգոհություն կոմերիտ տղայիս, որը տանել չէր կարողանում նրա ներկայությունը: Ասենք՝ տղաս նրա եկած ժամանակ մեծ մասամբ տանը չէր լինում, որովհետև բանքակում դասերը տեղի էին ունենում երեկոները:

Այնուհետև Դավիթ Ֆոմիշն իր այցելությունները ձանձրացնելու շափ սովորություն դարձրեց և համարյա ամեն օր մեր հյուրն էր, այնպես որ կինս արդեն սկսել էր քրթմնչալ: «Ճավ դառավ՝ մեր գլխին», — ասում էր նա, բայց և այնպես էլի շարունակում էր հյուրասիրել:

Դավիթ Ֆոմիշը մեր տանը շատ զգուշաբար էր խոսում բոլշկիկների մասին, որովհետև գիտեր, որ մեծ որդիս հենց իր բոլշկիկ լինելու պատճառով էր զոնվել մայիսյան ապստամբության ժամանակ, մյուս որդիս նույնպես բոլշկիկ և կուսակցական հրահանգիչ էր զավառում, իսկ փոքր տղաս — կոմերիտ, թեև սրան բանի տեղ չէր գնում և երեխա էր համարում: Բայց հենց որ հին ցավերը նորոգվում էին, էլ չէր կարողանում զսպել իրեն, սկսում էր հայհոյել բոլշկիկներին էլ, խորհրդային իշխանությանն էլ և սրանց հայհոյելիս առանձին կատաղությամբ գերեզմաններից հանում շների բերանն էր գցում բոլոր ցարերին և առանձնապես նիկոլայ Ա-ին, որը չէր լսել կաղետների խորհուրդը, ժամանակին ելքուպական պառակմենտական կարգեր և պատասխանատու մինիստրություն չէր մտցրել, ցրել էր պետական դուման և այլն:

— Եթե նա ժամանակին կատարեր կադետների պահանջը, — ասում էր Դավիթ Ֆոմիշը, — ոչ հեղափոխություն կլիներ, ոչ մենշենցիկ ու բոլշկիկ, ոչ սավետ ու մավետ, ոչ ժակտ ու մակտ, ինքն էլ շամսատակ չէր լինի:

Ժակտ անունը մանավանդ սոսկալի ատելությամբ էր արտասանում Դավիթ Ֆոմիշը: Նրա համարյա ամենօրյա գանգատը ժակտից «իր» տան համար էր. ասում էր, թե տունը օրը օրին քայլքավում է, կտուրը կաթում է, անձրևի խողովակները ժանգից ժակտկվել են, մի թանիսը թափվել, զրերը պատերի վրայից անցնելով ժափում են ծեփերը և պատերը խոնավացնում: կենողներն անկարգ, բիրտ մարդիկ են, զարդում են պատուհանների ապակինե-

բը, թիթեղի վառարաններ են դրել սենյակներում, ծխնելույզներց  
գուրս են հանել պատուհաններից, պատի կառնիզները սեացրել՝  
ծխի ծեփով ծածկել և այլն, և այլն, և այս բոլորի վրա ժակոր ոչ  
մի ուշադրություն չի դարձնում:

— կավ, ձե՞զ ինչ, Դավիթ Ֆոմիլ, — ասացի ևս մի անգամ,  
երբ նորից սկսել էր գանգատվել այս մասին, — տունը խոն ձերը չէ  
այլևս:

Նայեց ինձ աշքերի այնպիսի մի ցոլքով, որպիսին տեսել էի  
նրա աշքերի մեջ անցյալներում իր լավ ժամանակ, երբ որևէ բանի  
վրա կատաղած էր լինում:

— Տունը ի՞մս էր և ի՞մս էլ կլինի, — ասաց նա ծանր-ծանր,  
հատկապես շեշտելով «իմս» բառը և ամեն մի «իմս»-ի հետ բը-  
ռունցքը խփելով սեղանին:

— Այդ ինչպես, Դավիթ Ֆոմիչ:

— Այդ ե՞ս գիտեմ, թե ինչպես; — նորից շեշտեց և այս բառը  
մի առանձին խորհրդավորությամբ:

— Եվ ե՞րբ, Դավիթ Ֆոմիշ, — շարունակեցի հարցուփորձաւ ինձ արդեն զվարճություն էին պատճառում նրա անվերապահ պըսդումները:

— Երբ որ երբը կգա, — պատասխանեց նույն ինորհրդավուարությամբ:

— Ե՞րբ կգա այդ երբեւ  
— Ծուտով, շուտով։ Որովհետև մի նրկիր չի կարելի երկար  
ժամանակ կառավարել ավագակներով։

Այս անգամ ռավագակները բարը շեշտեց մի առանձին կըրքուությամբ և, ըստ երկույթին, ուզում էր շարունակել, եթե հանկարծ հարեւան սենյակիս դուռը բացվեց արտասովոր շրխկացով և ոչ թե մտավ, այլ մի տեխնակ ներս նետվեց կոմերիտ տղամաս հենց պես երկում էր, նա տանն էր եղել, որ ես չգիտեի, և հարեւան սենյակից լսելիս էր եղել մեր խոսակցությունը։ Մտնելու ձևը որ տեսա և նայեցի աշքերին, իսկույն հասկացա, որ նրան վառել էր Գամիթ Ֆոմիկի արտասանած «ավագակներ» բառը։

**ԵՎ ՀԱԽԱՎՈՒՑԻՒ:**

Նա ուղղակի գնաց կանգնեց Դավիթ Ֆոմիշի առջև և հարցրեց.

— Ո՞վքեր են այդ «ավագակները»:

Նրա ձայնի մեջ զսպված վրդովմունքի և սպառնալից մարտահայ շեշտեր պրնապացին:

Դավիթ Ֆոմիլը հոնքերի տակից մի սաստող հայացք ձեռք  
նրա վրա և ասաց հանգիստ ձայնով.

— Քեզ հետ չեն խոսում. դու դեռ երեխա ես

Տղաս տեղնուտեղը կրակ կտրեց մեկին։ Ես մինչև անգամ վախեցա, թե կարող է խփել ծերունուն։

— Աշխատանքան ձայնի զիլ հնչյուններով: — Նստել հորս հետ եթ խոսում, որը քիչ է մնում համաձայնի ձեզ հետ: Ինձ հետ, մե՛զ հետ խոսեցեք, մեզ հետ, որովհետև մե՞նք ենք, մե՛նք, ձեր կարծածերեւ անենք, որ հաշիվ ենք պահանջում ենզինց և մե՞նք ենք, որ պատճում ենք ձեզ ու պիտի շարունակենք պատճել այնքան, մինչև որ միանգամայն սրբենք ձեր սերունդն ու դասակարգը երկրի երեսից: Ավագաներ ասում եք: Չեզոնից ավելի մեծ ավագակներ, որ դարեր շարունակ թամում, ծծում էիր բանվորների արյուն-քրտինքի վաստակը, ձեզ համար պալատներ շինում, շուալլ ու ցոփի կյանք վարում և անպետք ու անառակ մի սերունդ արտադրում, որ շարունակի ձեր գարշելի գործը:

Մի կողմից ես, մյուս կողմից կինս, որ ներս էր վազել նրա աղաղակների վրա, իզուր աշխատում էինք նրան հանգստացնել և դուրս տանել. Նա թեերով դես-դեն էր հրում մեզ և, զայրույթից ու վրդովմունքից ծայր աստիճան տաքացած, շարունակում էր իր ֆիլիպիկները կոմերիտական անվախ խիզախությամբ ծանր մորճ հարգածների. պես թրիսկացնել բուրժուազիայի զլիին՝ հանձին Դամիթ Ֆոմիշի:

Վերջապես կնոցս մի կերպ հազորվեց համարյա զոռով նրա  
թեհ բռնած՝ քարշ տալով տանել նրան մյուս սենյակը և դուր  
մակել:

Ես նայեցի Դավիթ Ֆոմիշին։ Աչքերը, անմիտ բացած, հառել էր դեմքիս։ գլուխը երերվում էր սաստիկ, մարմինը վեր ու վար էր ցնցվում և հանկարծ ցած ընկնում, քարանում։ Մանր լոռովյան մեջ մի քանի րոպե այդպես մնալուց հետո ուզեց վեր կենալ, չկարողացավ միանգամից։ Հետո երկու ձեռքով հենվեց սեղանին, ծանրացած մարմինը հազիվ վեր բարձրացրեց և պառավական երերուն քայլերով դուրս գնաց, առանց մի խոսք արտասանելու

Այն գնալն էր, որ գնաց. Էլ երթիք ոտք չդրեց մեր տունը:

Օրբ որդուս հանդիմանեցի իր վարմութիւն համար, ասելով  
որ քնակածին շեն ծեծում, նա երեսովս տպավ, թե ես հաշտվողա-

կան եմ, թե այդպիսիներին ոչ միայն պիտի ծեծել, այլև անխճառի տակ տրորել, ճիւղել միանգամայն, որ ընկած տեղից այլև երբեք վեր չկենան:

— Այլապես, թե որ վեր կացան, հայրիկ, վայ քեզ ու մեզ և նրանց, որոնք հազիվ են ազատվել նրանց ճիրաններից, — ավելացրեց նա:

Այս դեպքից հետո անցել էր մի քանի ամիս: Այս մի քանի ամսվա ընթացքում շատ քիչ էր պատահում, որ նույնիսկ բակում հանդիպեի Դավիթ Ֆոմիշին: Հանդիպելիս էլ շտեսնելուն էր տալիս և անցնում գնում: Շատ թունդ էր խոռվել:

Մի օր, երբ ճաշին տուն դարձա, կինս ասաց, թե մի քանի ժամ առաջ Դավիթ Ֆոմիշին հանկարծ կաթված էր խփել և հենց նոր նրան հիվանդանոց են տարել շտապ օգնության կատքով:

Պատճառն անշուշտ եղել էր այդ օրվա թերթերում տպված գործակալության մի հեռագիրը Մոսկվայից, որ ես կարդացել էի դեռևս այդ առավոտ: Հեռագիրը վերաբերում էր Պետքազգարշության ձեռքն ընկած տեռորիստական-լրտեսական մի խմբի դատավարության: Այդ խմբի մարդիկ, որոնք զանազան ժամանակներում կեղծ անցագրերով անցած են եղել սահմանը, ուղարկված են եղել արտասահմանյան ոռւս մոնարխիստական մի կազմակերպության կողմից՝ տեռորներ կատարելու և լրտեսելու համար: Դատվելուց հետո նրանք դատապարտվել էին սոցիալական պաշտպանության գերագույն միջոցի՝ գնդակահարության: Հեռագրի մեջ մեկ առ մեկ հիշված էին գնդակահարվածների անուն-ազգանունները և ով լինելը:

Դրանց թվումն էր և Դավիթ Ֆոմիշին նախկին յունկեր տղան: Այդ հեռագիրը պարունակող լրագրի համարը գտել էին Դավիթ Ֆոմիշի ձեռքին կաթված ստացած միջոցին:

Ճաշին մեր խոսակցության առարկան այդ դեպքն էր.

— Տեսա՞ր, հայրիկ, ո՞ւմ էիր դու պաշտպանում, — նորից երեսովս տվավ կոմերիտ տղաս:

Ես ծիծաղեցի: Զգիտեմ, ո՞րտեղից էր նրա գլխում ցցվել այդ մեխը, թե ես պաշտպանում էի Դավիթ Ֆոմիշին և նրա նմաններին իրենց իժի ծնունդներով:

Հետաքրքրությունից մի օր վեր կացա և գնացի հիվանդանոց՝ Դավիթ Ֆոմիշին տեսնելու:

Կաթվածը տարել էր նրա մարմնի ամբողջ կեսը, գլխի ձախ

մասից, բռնած մինչև ձախ ոտը: Գեմքն այնպես էր ծռմռպել, որ հազիվ ճանաշեցի: Ազ աշքը փոքրացել, կուշ էր ծեղել, իսկ ծախճ այնքան էր մեծացել ու այլանդակվել, որ ակամա զարզանդուզացի: Այդ աշքը դուրս էր պրծել կոպերից մի աճագին անփայլ սպիտակուց, որը կարծես պինդ խաշած ձվի սպիտակուց լինելու: Քուրուցին չէր շարժվում: Բերնի կեսը վերև էր թռել, կեսն իշել և կողդից լորձումք էր ծորում: Խոսել չէր կարողանում: բառերը դուրս էին գալիս կիսատ և աղավաղված, այնպես որ հասկանալ չէր լինում: Երբ հարցրի, թե ի՞նչ է ուզում, հազիվ կարողացավ արտասնել:

— Մըր-մե... մըր-մե...

Եվ որպեսզի հասկացնի, թե ինչ է ուզում ասել, ազ աշքը փակեց և ձեռքը վերև բարձրացրեց: Գլխի ընկա, որ ուզում էր ասել՝ «մեռնել-մեռնել»: Կարծ լուրջյունից հետո թոթովեց.

— Վըր-ո... մըր-ե... մըր-տե... թըր-ա...

Երկար ժամանակ չէի հասկանում այս թոթովանքը, և նա ահագին շանք թափելուց հետո զանազան նշաններով կարողացավ հասկացնել, թե ուզում է ասել. «որ մեռնեմ, տերտերով թաղեցք»:

— Դավիթ Ֆոմիշ, — ասացի, — որքան գիտեմ, դուք պատահիտ մարդ էիք, տերտեր-մերտեր չէիք ճանաշում, թեև երեցփոխ էիք, այդ ի՞նչպես է, որ տերտերով եք ուզում թաղվել, այն էլ հիմա, երբ տերտերով, ժամ-պատարագով էլ ոչ ոք չի թաղվում:

Նրա կուշ եկած ազ աշքը հանկարծ բացվեց, մեջը կաթվածահար լեզուն անսպասելի կերպով արագ-արագ վրա տվեց.

— Թըրը զըգը, թըրը զըգը... — Այս կցկտոր բառերն էլ հասկացրեց, ուզում էր ասել՝ «բոլշեվիկների զգուր, բոլշեվիկների զգուր»:

Ինչո՞ւ էր կարծում, թե տերտերով որ թաղվի, բոլշեվիկներից համած կլինի իր շիգոր, այդ էլ իր գաղտնիքը մնաց:

Այդ առաջին այցելությունից հետո շտեսա Դավիթ Ֆոմիշին: Թե քանի՞ օր ապրեց, ե՞րբ մեռավ, ի՞նչպես և ո՞րտեղ թաղվեց — ոչ շիմացավ:

Միայն մի օր ինչ-որ ժառանգներ հայտնվեցին, — երեկի այն աղքատ ազգականները, որոնց Դավիթ Ֆոմիշը չէր կարողացել կամ, ավելի շուտ, չէր կամեցել բաժան-բաժան անել իր բնակարանի կահավորանքը, — եկան բաց անել տվին նրա սենյակի կըն-

քած դուռը և ունեցած-լունեցածը տարան։ Այդ ունեցած չունեցածի մեջ էր և մի ահագին սնդուկ, մեջը արտասահմանից բերած ամենաշնտիր կոստյումներ, որոնցից մի քանիսը դեռ ամենևին չէր էլ հագել։

Մրգան ճիշտ է, չզիտեմ, միայն ասում էին և պնդում, թե այդ միանույն սնդուկի մի առանձին ժածուկ անկյունում գտնվել էին կլորիկ ոսկիներ— տասնոցներ։

Ծնթաղրգում է, որ այդ «Մի հայ —մի ոսկի» ֆոնդի «ավել-ցուկը» պիտի լիներ, որ Դավիթ Ֆոմիշը պահել էր «սկ օրվա» համար։

Այսպես ապրեց և այսպես մեռավ մեկը հին աշխարհի այն վերջին մոհիկաններից, որոնք, նոր կյանքի ասպարեզից դուրս նետված, ամեն օր միանույն ժամերին հավաքվում էին հասարակաց այգու խուզ անկյունում՝ խոսելու անցած-գնացած օրերի և գուշակություններ անելու եկած ու գալիք օրերի մասին։

1930



# ՎԻՊԱԿՆԵՐ ՎԵՊԵՐ



## ՏԵՆՏԻՐՈՅՍ ԱՂՋԻԿԸ

Ես հայ ուսուցիչ եմ:

Կարծեմ սրանով շատ բան ասացի, — ասացի այն ամենը, ինչ  
որ հազար անգամ գրված է մեր լրագրերում հայ ուսուցիչ մար-  
տիրոսության մասին:

Մի չոր գլուխ էի Ներսիսյանի և ճեմարանի ավարտական  
վկայականները ծոցիս, ամբողջ հինգ տարի թափառեցի գավառ-  
ները, մի տարի էլ պաշտոնավարեցի Պարսկաստանում և, մի քա-  
նի հարյուրներ թողնելով այս ու այն հոգաբարձության ձեռքին,  
վերջապես կարողացա ոտս Թիֆլիս գցել, — մի բան, որ վաղուց-  
վա տենչանքս էր:

Այն ժամանակ արդեն մոտ երեսուն տարեկան էի  
Օգոստոսի վերջն էր, ուսումնական տարվա սկզբի եռուզեռի  
օրերը: Առայժմ գլխավոր հոգս այն էր, որ մի հարմար բնակա-  
րան գտնեի: Ընդունելության քննություններից հետո թրե էի գա-  
լիս այս ու այն փողոցը, աշխա տնկած տների դռներին ու պատու-  
հաններին, որ գտնեմ վարձու սենյակ տալը հայտարարող թղթի  
փոքրիկ կտորներ: Ուզում էի, որ բնակարանս մոտիկ լիներ ու-  
սումնարանից, խաղաղ տեղ լիներ և թեյ ու ճաշ տային: Բայց հա-  
կառակի պես եկա բռնեցի այնպիսի մի սենյակ, որ համ հեռու էր  
ուսումնարանից, համ սարսափելի աղմկալի տեղ (բակը լիքն էր  
երեխաններով), համ էլ ոչ թեյ և ոչ ճաշ խոստացան: Բավականա-  
ցան միայն հարկավոր «կահավորանքով»: Այդ կահավորանքն էլ  
ինչ էր — փայտօջիններով լի մի կուշետկա, որի ոտները ծոմովել  
և շարժվում էին տեղահան եղած փտած ատամների պես, մի սե-  
ղան, որի երեսի տախտակները տեղ-տեղ այրվել, սևացել և փռ-

էին ընկել, բայտ երևուցմբն, ծակ ասմովարից թափված կրակներից, և երեք հատ վիեննական աթոռ, որոնցից մեկի ծղոտից գործած նստատեղն այնքան թուլացել և փոս էր ընկել, որ նստելիս կարծում էի, թե «գարշոկի» վրա եմ նստում: Չմոռանամ գլխավորն էլ հիշել.— սենյակիս վարձն այնքան թանկ էր, որ հետո, երբ արդեն ուշ էր, տեսա, որ բոլորովին շի բռնում բյուզեիս: Մտածեցի առաջին ամիսը յոլա տանեմ, իսկ հետո երեխ ավելի հարմար և ձեռնտու պայմաններով սենյակ կարող էի ճարել: Մասամբ գոհ էի, որ ազատվել էի հյուրանոցում քաղաքավարի կողոպտվելուց:

Տանտերս հայ էր— թիֆլիսեցի հայ: Թիֆլիսեցի հայ ասելով ուզում եմ ասել թիֆլիսում ծնված ու սնված այն հայի տիպարը, որին,— օրինակի համար եմ ասում, — եթե Ամերիկայում անգամ հարցնեին թե որտեղացի է, կասեր՝ «քաղցի», միանգամայն համոզված լինելով, որ ամերիկացին «քաղցի» բառը «թիֆլիսեցի» կհասկանար: Չար լեզուները պատմում էին, որ բազակ Սերգոն կամ,— ինչպես անվանում էին նրան ոմանք, — Սերգեյ Ավետիշը մեկ թի երկու անգամ հկուտը էր ընկել» (անանկացել), բայց և այնպես (թե՞ հենց այդ պատճառով) բավական լավ էր ապրում կող անվանք փոխագրած իր տան մեջ, որը լիքն էր կենողներով:

Կարճահասաակ, տռուկ մարդ էր, ծայրերը սանրի տակ կարճ խուզած թիսերով և խստ կանոնավոր կորիկ գլխով, որի վրա մազերը, շնայելով հազիկ հիսուն տարիքին, բոլորովին սպիտակել էին: «Քաղցուա կապա էր հագնում երկար թևերով, որոնցից ձախը միշտ ծափ էր տալիս ծնկանը, իսկ աշը հանգում էր ուսի վրա: Սև ատլասի արխալուզի վրա աշքի էին ընկնում ոսկեզօծ արծաթյան նեղ գոտին և ծոցի գրպանի մեջ հանգող ոսկի հաստ շղթան, որը սկսվում էր կղատակից և գոտոց էլ ներք էր իշնում:

Այդ պարուն առհասարակ աղա մարդու տպավորություն էր թողնում ինձ վրա թե՛ այն պատճառով, որ հագուտը շատ էր սազում, և թե նրա համար, որ մարդկանց հետ վարմել գիտեր և հարգանք ազդող դիրքի մեջ էր պահում իրեն: Առավոտներն առանց «բարի լուս» և երեկոներն առանց «բարիգուն» ասելու շէր անցնում մոտովս, եթե հանդիպում էինք իրար: Երբեմն էլ, երեկոները, հրավիրում էր ինձ պատշգամբում միասին թեյ «անուշ անելու» և նարդի գցելու կամ «աշխարի» բաներից» մասլահաթ անելու: Շատ էր սիրում խոսել քաղաքականությունից և երբեմն ինձ գարմացնում էր նրա անսիսալ ծանոթությունը քաղաքական անց-

քերին և անձերին: Լեզուն թիֆլիսի բարբառն էր, բայց ոչ զուտ թիֆլիսի բարբառը, որն արդեն մեռնելու վրա է, այլ խառն գրական բազմաթիվ բառերով,— հետեանք՝ մեր մտավոր-հասարակական կյանքի մեջ վերջին քսանամյակում կատարված զգալի փոփոխության: Բայց և այնպես թիֆլիսի բարբառին հատուկ արտասանությունը գրական բառերն էլ ներկել էր իր որոշ գույնով: Դեռևս այն ժամանակ, երբ ներսիսյան դպրոցում որդեգիր աշակերտ էի, ճանաշում էի վանքի ավագ եկեղեցու թիֆլիսեցի մի զառամյալ ավագերեցի, որը ժամասացությունը թիֆլիսի բարբառով էր կատարում:

Ընտանիքի մեջ գործածական լեզուն վրացերենն էր,— թիֆլիսեցի հայոց յուրահատուկ վրացերենը՝ աղճատված և ամեն ազգի բառերով խճողված: Պատճառն անշուշտ կինն էր, որը վիրախոս էր:

Որքան տանտերս ակամա հարգանք էր աղդում ինձ իր ծանրաբարո և լրջամիտ բնավորությամբ, այնքան նրա կինը հենց ըսկըցից վանող տպավորություն գործեց ինձ վրա: Անհամակրելի կին էր, կովարար և թունդ էլ անեծքներ գիտեր: Իզուր չէր, որ նրան գիծ-կեկել էին անվանում ետեից: Համարյա օր չէր պատահում, որ նա վերեկց, իրենց պատշգամբից դեպի բակը խոնարհված, ամբողջ ժամերով շկովեր այնտեղ, ներքենում ապրող կենող կանանց հետ և անեծքակոխ շաներ նրանց երեխաներին, որոնք խաղալիս ըստ երեխայական սովորության մի որեւէ բան քանդում, փլացնում էին. ներքեկց, իհարկե, անպատասխան չէին թողնում նրան, և ահա ամբողջ բակը սկսում էր զրնգալ կանանց ձայների այնպիսի մի երածշտությամբ, որ ես ստիպված էի լինում դուսու ու պատուհանս փակել կամ թե պարզապես փախչել տանից՝ պարապունքս կիսատ թողած: Վախենում էի միջամտել, որովհետեւ գիծ-կեկելն այդպիսի դեպքերում այն աստիճան գազազած էր լինում, որ ոչ միայն չէր լսի ինձ, այլև կարող էր վիրավորանք հասցնել միջամտությանս համար: Իսկ ինձ շղերը քայլայող հինգվեց ժամվա դպրոցական աշխատանքից հետո հանգիստ էր պետք Ռւատի, համբերությունս որ հատավ, վճռեցի էլ չսպասեմ ամիսը վերջանալուն և գնամ ուրիշ մի խաղաղ տեղ բնակարան փնտրեմ ինձ համար:

Բայց...

**Սեպտեմբերի վերջերին,** երբ դեռ ժամանակ չէի գտնել որոշումս իրագործելու, մի հիմնալի երեկո տանտերս հրավիրել էր ինձ իր հետ թեյ և անուշ անելու։ Դեպի բակը նայող պատշաճարում նստած, նոր էինք վերջացրել թեյը և շարունակում էինք մեր սովորական մասլահամբը քաղաքականությունից, մեկ էլ տեսնեմ տանտիրոջս երեխաները գլխապատառ ներս վազեցին բակը, ներքից դիմելով հորը՝ ինչ-որ ծվծվոց բարձրացրին ու նորից դուրս թռան փողոց։

Նույն րոպեին փողոցում կանգ առավ մի կառու և քիչ հետո բակի դոնից արագ ներս մտավ մի օրիորդ, ձեռքին ինչ-որ թղթի արկղեր, և սկսեց վերև վազել պատշգամբի սանդուղքով, նրա փեշերից բռնելով և նրա հետ վազում էին երեխաները նույն ուրախական ճիշ ու ծղրատոցով։ Նրա ետևից բակը, մտավ մի երիտասարդ, ամեն մի ձեռքին մի-մի ճամպրուկ։

Այդ միջոցին տանից դուրս վազեց տանտիրոջս կինը կավիքները ծափ տալով ծնոտներին և ամուսնու հետ ընդառաջ գնաց նորեկներին։ Բարեներ, համբույրներ, երեխանց՝ ականջ խլացնող ուրախական ծղրատոց, վազվոց— մի խոսքով մի կատարյալ Սոդոմ-Գոմոր։ Տանտերս ուրախությունից, ըստ երեւոյթին, մոռացավ ինձ, իսկ նորեկները բավականացան միայն մի թուուցիկ հարցական հայացք ճգելով ինձ վրա, իբրև օտար և անծանոթ մի անձի վրա, որին նոր էին տեսնում իրենց տանը։ Ընտանեկան ուրախության այդ ժխորի մեջ փասափուսն հավաքեցի և քաշվեցի սենյակս, որը տանտիրոջս բնակարանին կից ամենավերջին սենյակն էր, պատշգամբի ծայրին, այնտեղ՝ ուր բարձրանում էր սանդուղք։

Նորեկներից երիտասարդը, ինչպես հետո իմացա, տանտիրոջս մեծ տղան էր, իսկ օրիորդը — աղջիկը։ Այդ ամառ նրանք Կովկասյան հանքային շրերն էին եղել գնացած և այդ երեկո այնտեղից էին վերադառնում։

Տանտիրոջս այդ մեծ տղան, չնայելով իր դեռնամ շատ շատ շատ հասակին (հազիվ 23—24 տարեկան), արդեն ավարտել էր բժիշկական ֆակուլտետը և եկել էր-տանը պատրաստվելու պետական քննությունների համար։ Նիհար տղա էր, դեղնավուն, հիվանդություն, իր տարիքին անհամապատասխան լուրջ հագեմքով և խոհուն, իր տարիքին անհամապատասխան լուրջ

յացքով, հանգիստ շարժումներով, բայց, ըստ երևոյթին, բավական զղային և հանկարծ բորբոքվող, որի մասին վկայում էր նրա երրեմն-երրեմն ցնցվող գլուխուր։

Ծննդակառակն, նրա քույրը տեղն ու տեղը կրակ էր, — կրակ շարժումների մեջ, կրակ քայլվածքի մեջ, կրակ խոսակցության մեջ։ Ուրախ ժամանակ ծիծաղում էր անդադար, ծիծաղում սրտանց, հազը բռնելու շափ, իսկ լուրջ ժամանակ ժպիտը անպակաս էր նրա դեմքից, մի ժպիտ, որը հիմնալի մատնեհարներ էր գոյացնում էրա թշերի վրա։ Միրում էի սենյակիցս ականջ զնել նրա թթուուն, վարակիլ ծիծաղի եկէջներին, նրա կրծքաչին ձայնին։ Տանյոթ կամ տասնութ տարեկան էր, միշակից մի քիչ բարձր հասակով, փոքր-ինչ անկանոն կազմվածքով և, ըստ երևոյթին, միանգամայն անտարբեր զեպի կանացի արդուզարդն ու պճնանքը։ Արևելյան գեղեցկության մի ուրույն տիպար էր պինդ դեղձի նման թուիս ու թավուտ դեմքով և վերին շրթունքի վրա փայլուն սկ աղվամազով։ Զարմանալի սկ ու փայլուն էին մազերը և այնքան առատ ու երկայն, որ երբ հյուսում էր մի գիսակի մեջ, գիսակի ծայրը համարյա մինչև կրունկներն էր հասնում։ Մի տարի էր, որ ավարտել էր գիմնազիոնի հինգերորդ դասարանը և, ինչպես իմացա, մայրն այլևս չէր թողել, որ շարունակի ուսումը, ասելով, որ աղջկան այդքան էլ բավական է և այժմ պետք է «մարդու գնալ»։ Գործածական լեզուն եղբոր հետ— վրացերենը։ Ուզում էի, որ անունը, կրակոտ աշեքերի համար, Հրաշյա լիներ, բայց բանից դուրս եկավ, որ Քալի էր (վրացերեն քալի նշանակում է աղջիկ)։ Տան մեջ այդ անունն աշխատում էին ամեն կերպ նվազական ու բարեհնչյուն դարձնել։ Քալին դառնում էր մերթ Քալո, մերթ Քալինկա, մերթ Քալյա, բայց և այնպես ես այդ բարեփոխած անուններից էլ ոչ մեկի հետ չէի հաշտվում և շարունակում էի մտքում նրան Հրաշյա անվանել։

Ի զեպ, երևելի էր տանտիրոջս բժշկացու տղայի անունը. քույրը նրան կոչում էր Սաշա, մայրը— Ալեքսանդր, հայրը— Սանդրո, մի պառավ կին, որ երեխ «մամիդա», կամ «զիդիեղա», կամ «զեղիգա» կիններ և որը ամիսը մի քանի անգամ հյուր էր գալիս նրանց տուն, Ալեքսի էր անվանում, իսկ հաճախ նրան այցելող իր ուսանող ընկերներից մեկն էլ Ալյոշա էր կոչում։

Քալին իսկական «տանու աղջիկ» էր, ինչպես ասում են թիֆ-

լիսեցիք. առավոտից մինչև երեկո նրա ձեռքերն ու ոտները հանգիստ չեն. ավլում էր, թափ տախս, կարում, լվանում, արդուկում, պահում մոր ծծկեր երեխային (տանտերս, շնայելով իր մուտ հրսուն տարիքին, այդպիսին էլ ուներ) և այդ բոլորը հարատես ծիծաղով ու աղմուկով: Իսկ երբ գործերից ազատ էր լինում, նրան տեսնում էի բակի կենողներից սրա կամ նրա գուանը եռանդով զրույց անելիս կամ իր բազմաթիվ ընկերուհիների հետ, որոնք գրեթե ամեն օր այցելում էին նրան և, ինչպես երևում էր, շատ էին սիրում: Հասկանում էի, թե նրա ինչն էր գրավում ամենքին. գրավում էր, ամենից առաջ, նրա մշտածիծաղ, վերին աստիճանի համակրելի դեմքը, նրա ուրախ բնավորությունը, բաց, բարի սիրտը, անհանգիստ շատախոսությունը և, մանավանդ, պարզությունը, որ շատ անգամ ուղղակի երեխայական միամտության էր հասնում: Զարմանում էի, թե մի՞թե նա իր կովարար մոր աղջիկն է:

Որ ասեմ՝ թե նա ինձ վրա մի առանձին ուշագրություն էր զարձնում — ամենակին. այնպես, կնայեր կանցներ: Բայց ես ոչ միայն, ակամա, ուշագրություն էի զարձնում նրա վրա, այլև հետեւում էի նրա ամեն մի քայլափոխին այնպիսի համառությամբ, որ կարծես լրտես էին կարգել ինձ նրա վրա: — գիտեի ո՛ր ժամին, ո՛ր րոպեին որտեղ է, ինչ է շինում, ուր է գնում, դասերից հետո, որ տուն էի գալիս, բակի դռնից դեռ ներս շմտած, ականչներս սրում էի, որ լսեմ նրա ձայնը: Մանավանդ շատ էի սիրում լուսամուտիս միջից գողոնի կերպով նայել նրան, երբ նա, պատրշգամրում կանչնած, սովորաբար երկու ձեռքով կախ էր ընկնում պատշգամբի սյուներից միշտ կապված լվացքի թուկից, և ետ ու առաջ ճոճքելով ծիծեռնակի: պես, ճողովում էր՝ ընկերուհիների հետ ուրախ զրույցի բռնված:

Ես երեխա չէի, իհարկե, շատ լավ հասկանում էի, թե ինչ էր նշանակում իմ այս համառ գողունի: Հետամտությունը, ու որքան էլ այդ մի տեսակ անվայել բան էի համարում, այնուամենանիվ խռհեմությունս միշտ տեղի էր տախս մի, առայժմ անորոշ, զգացնեմի, որք, հակառակ կամքիս, օրը օրին պաշարում էր ինձ: Այդ զգացնումի աղղեցության առակ բնակարանս փոխելու որշմանս իրագործումն էլ հետին գծի վրա էր քաշվել:

Իմ ու Թալիի ծանոթությանը սկիզբ դրվեց հետեւյալ պարագաներում:

Մի երեկո տանտիրոջս ծառան մտավ ինձ մոտ և ասաց, որ ուանտերս խնդրում է իր մոտ գնամ:

Գնացի:

Հյուրասենյակի դուռն ահագին աղմուկով բաց արեց Թալին:

— Պոյալոյնե, — ասաց մշտական ժպիտը զեմքին և, ներս բողնելով ինձ, իսկույն թուավ զեպի հարևան սենյակի դուռը: — Պապա, մովիդա (հայրիկ, եկավ):

Ներս մտավ տանտերս իր մշտական սկ ատլասի արխալուղով և քահրուբարի ահագին հատիկներով տեր-ողորմյան ձեռքին: Նստեցինք:

Քալին նստեց մեզնից հեռու և սկսեց նայել ինձ այնպիսի հետաքրքրությամբ, որ կարծես առաջին անգամն էր տեսնում: Հայացքն այնքան համառ էր, որ չէի համարձակվում նայել նրա կողմը, բայց շատ հանգիստ էր պահում ինձ և ուշադիր լսում, թե ինչ է ասում տանտերս:

Իմացա, որ ուզում էր իր հինգ եե վեց զավակներից մեկին տերտեր շինի և ինձ կանչել էր, որ այդ սպազա տերտերին պատրաստեմ «Վանքի շկոլը» մտցնելու: Շատ գործնական մարդ էր Սերգեյ Ավետիչը: — տղաներից մեկին «զոխտուր» էր շինել, մյուսին ուզում էր «ինչիներ» շինել, երրորդին — տերտեր, չորրորդին անպատճառ — «աղվակատ», հինգերորդին — զգիտիմ ինչ, բայց ոչ մեկին — վարժապետ: Եվ շատ էլ լավ կաներ, մնշ՝ էր պետք քաղցած վարժապետ:

«Ամենայն սիրով» հանձն առա պարապելու տերտերացուի հետ: Քույրը մոր ուղեկցությամբ ներս բերեց տղային ինձ ցուց տալու: Բան շասացին, թե որքան կվճարեն, ես էլ ամաշեցի: այդ մասին խոսք բաց անեմ: Ուրախացած մտածում էի: չեթե այնպես լինի, որ սենյակիս համար վարձ շառնեն և ամսական մի քանի ուրբալի տան...»

Հետեւյալ օրվանից սկսեցի պարապմունքը: Հաստագլուխ եմ ասում է, իսկը տերտերացու շայերեն որ ասես բան չէր իմանում, ուստերենին համեմատաբար վարժ էր, բայց և այնպես

վոնդել էին գիմնազիոնի առաջին դասարանից, որովհետև մնացել էր երկրորդ տարին:

Եատ շուտով տեսա, որ գլուխս քարովն էի տվել, հանձն առնելով այդ բթամիտ տղայի հետ պարապելու տաժանակիր աշխատանքը: Բայց կարո՞ղ էի մերժել...

Հայերենը քիչ էր մնում այրութենից սկսելի: Հոգիս դուրս էր գալիս և չէի կարողանում բառի վերջն ը արտասանել տալ. ասում էի՝ ասա Ը, ասում էր. ասում էի՝ ասա «գիրքը բեր», ասում էր «գիրք բեր»: Երբեմն այնպես զղայնանում էի, որ քիչ էր մնում գիրքը զիխովը տամ:

Մի երեկո, երբ պարապում էի աշակերտիս հետ, սենյակիս դուռը բացվեց և ներս մտավ Քալին:

— Ներեցեք,— ասաց ոուսերեն, իր հրաշալի ժամփը դեմքին,— Թո՞ւյլ կտաք ներկա լինեմ ձեր պարապմունքներին:

— Խոդրեմ,— ասացի այդ անակնկալից մի քիչ շփոթված և, վեր կենալով, աթոռս առաջարկեցի նրան:

Նստեց. նստեց այնպիսի արագությամբ, որ, կարծես, աթոռը նախքան նստելը դուրս պիտի քաշեին տակից: Զարմանալի կենսունակ, շարժուն աղջիկ էր:

— Ես շատ եմ հետաքրքրվում, թե ինչպես է պարապում եղբայրս: Անշուշտ շատ է տանջում ձեզ, չէ:

Ես միայն ժպտացի և գիխով դրական շարժում արի:  
— Ես այդպես էլ գիտեի: Այս անպիտանը... Ա՛խ, դուք կանգնա՞ծ մնացիք,— Հանկարծ բացականչեց նա, վեր թուավ և սկսեց աշքը ման ածել սենյակի շորս կողմը:

Ես շտապեցի դեպի նստատեղը փոս ընկած աթոռը, որը ձգել էի մի անկյուն և չէի գործածում իր անպետքության պատճառով, մոտ բերի, բայց չնստեցի, վախենալով ծիծաղելի դրության մեջ ընկնեմ:

Այդ նկատեց նա:  
— Ո՞վ է տվել ձեզ այդ աթոռը,— ասաց:— Այդ ի՞նչ խայտառակություն է: Տվեք տանեմ փոխեմ:

Իր աթոռն ինձ տվեց, անպետքը դուրս տարավ և, երկու րոպե չանցած, ներս բերեց մի նորը, որի վրա կարելի էր համարձակ նստել:

— Այժմ կարող եք շարունակել, — ասաց:— Ես Ճ չեմ խանգարի:

Ու զարմանալի սուսուփուս նստեց:  
Դասի կեսը պատմել վերջացրել էի նրա յանելուց առաջ և այժմ, փոխանակ շարունակելու, զգիտեմ ինչու, սկսեցի սկզբից թայց այդ սկիզբն սկսել էի անվտան կերպով, բառերն արտասանելիս դանդաղում էի, լեզուս, կարծես, կապ էր ընկնում. կարծես այդ անպիտան աղջիկն եկել նստել էր դիմացս ոչ թե նրա համար, որ տեսնի, թե ինչպես է սովորում եղբայրը, այլ նրա համար, որ ստուգի, թե ինչպես եմ պարապում, ի՞նչ գիտեմ ես: Բայց հետո, մի քիչ որ վարժվեցի նրա ներկայությանը, կամաց-կամաց սիրտ առա և հետզհետե ոգեսորվեցի ոգի ու շունչ տվող այն քաղցր ու քննուց զգացման ազդեցության տակ, որ ներշնչել էր ինձ այդ աղջիկն հենց սկզբից և որն այժմ սկսեց ուժգին թափով ջերմացնել սիրտս նրա մոտիկության շնորհիվ:

Դասախոսությանս ժամանակ առերևույթս եղբոր հետ էի, բայց ամբողջ ուշքս ու միտքս քրոջ կողմն էր: Թեև չէի նայում նրան, բայց զգում էի, որ նա մոռացել է, թե ինչի համար է եկել, և լսում է ինձ իբրև չանասեր, հետաքրքրվող աշակերտուհի: Այդ հայտնագործությունը թեև շատ էլ անսպասելի չէր ինձ համար, բայց և այնպես ես ավելի ոգեսորվեցի դրանից: Մեր դերերը փոխվել էին. նա ընկճել էր ինձ (այդպես էի կարծում), ես անձնավոտան էի զարձել: Ոգեսորությանս մեջ կարծեմ, այնպիսի մանրամասնությունների մեջ մտա, որ խելզ տերտերացու աշակերտս իհարկե ոշինչ չէր կարող հասկանալ: Հոգս էլ չէր. այդ րոպեին ոչ թե նրա համար էի դասախոսում, այլ քրոջ համար, որը իր կրակ թափող համար հայացքով, իր ամբողջ էությամբ մարմնացած հետաքրքրություն էր զարձած: Դասախոսությանս ժամանակ շկարողացա դիմանալ և մի քանի անգամ նայեցի նրան: Գրո՞ղը տանի,— ի՞նչ հրաշալի, ի՞նչ պաշտելի աշքեր... ի՞նչպես կուգեի վրա ընկնել, համբուլըներով ծածկել այդ աշքերը և կլանել նրանց արձակած կայծերը՝ այդ կայծերից վառվելու համար...

— Ինչքան լավ պատմեցիք,— երեխայական պարզամտությամբ բացականչեց նա, երբ վերջացրի:— Գիտե՞ք,— ավելացրեց իսկույն մի տեսակ տիրությամբ,— ես հայերեն լավ զգիտեմ, որովհետև մեր տանը հայերեն ոչ ոք չի խոսում, հորս խոսածն էլ ի՞նչ հայերեն է: Գրա համար եմ ձեզ հետ ռուսերեն խոսում: Բայց հավատացնում եմ ձեզ, բոլորը հասկացա՛ ինչ որ պատմեցիք, որովհետ Շնորհին ինձ ժանոթ է, թեև շատ բան մոռացել եմ:

— իսկ ձեր մեծ եղբայրը հայերեն գիտե՞,— հետաքրքրվիցի ես:

— խոսե՞լ, թե կարդալ:

— խոսել էլ, կարդալ էլ:

— խոսել— ինձնից լավ է խոսում, բայց կարդալ— երկի բոլորովին մոռացած կլինի: Հարցնե՞մ:

— Զէ, ի՞նչ հարկ կա հարցնելու,— ծիծաղեցի ես նրա միամտության վրա,— ես հարցրի հենց այնպես: Բայց հետաքրքրական է, դո՞ւք ինչպես եք կարդում հայերեն: Կարդալ գիտեք, չէ՞:

— Ինչպես չէ: Ուզում եք կարդամ:

— Խնդրեմ:

Վերցրի եղբոր հայերեն դասագիրքը, բաց արի առաջին պատահած հատվածը և դրի առջելը:

Գլուխը ցածր խոնարհեց գրքի վրա կարճատեսի նման և սկսեց կարդալ: Մի րոպե ուշադրությունս գրավեցին նրա սևաթույր առատ մազերը, որոնք գլխի մեխն մի շարժումի հետ պեծին-պեծին էին տալիս ճրագի լույսի տակ:

Որքան էլ որ թերահավատ էի նրա հայերենագիտության մասին, այնուամենայնիվ նրա կարդալը միանգամայն հիասթափեցրեց ինձ. կարդում էր մատը տողերի վրա շարժելով, հեգելով, վանկ-վանկ, արտասանությունը ոռուսերեն էր, բառի վերջը ը շկար, շկար ու զար: Հազիկ մի հինգ-վեց տող կարդացած, գլուխը բարձրացրեց և նայեց ինձ այնպիսի մի խոճալի հայացքով, որից երեսը կում էր, թե ինքն ևս հիասթափված էր իր կարդալու կարողությունից:

— Վատ կարդացի, չէ?— Հարցրեց մի տեսակ ամաչկոտ հուսահատությամբ:

Եղբայրը, որ նրա կարդալու միջոցին, ինձնից քաշվելով, հազիկ էր զսպում ծիծաղը, այժմ հանկարծ փոթկացրեց:

Քույրը հանկարծական զայրութով գիրքը թոցրեց սեղանից և խփեց նրա գլխին:

— Ի՞նչ ես ծիծաղում, զզվելի: Ինձնից լա՞վ ես կարդում:

— Իհարկե լավ եմ կարդում,— զգրացրեց նրան եղբայրը, շարունակելով ծիծաղել:

— Լոի՞ր, անպիտան: Ես գիտեմ, որ դու դասդ ե՞ք՝ ոչ ուսումնականիք, որ սովորեիր, չեխն գուրս անի գիմնազիոնիք:

Եղբայրն, իմ լուսթյունից ուրած, ուզում էր հակածառել, բայց բույրը չթողեց բերանը բաց անի.

— Լոի՞ր, լոի՞ր, գեռ ուզում ես խոսե՞լ: Դու միշտ բթամիտ ես եղել, բթամիտ էլ կմնաս:

— Բայց և այնպես, հայերեն քեզնից լավ եմ կարդում,— շարունակեց զգրացնել եղբայրը:

Քույրը զայրացած դիմեց ինձ.

— Սա ի՞նչ հանդգնություն է, պարոն: Մի՞թե այս զզվելին խկապես լավ է կարդում ինձնից:

— Դուք երկուսդ էլ վատ եք կարդում,— ծիծաղեցի ես: Ձեր կարդացածը հայերեն չէ, այլ աստված գիտե ինչերեն: Ես զարմանում եմ, ինչո՞ւ չեք կարողանում ը արտասանել բառի վերը, մի՞թե այդքան դժվար է:

— Որովհետև ը ոչ վրացերենում կա, ոչ էլ ոռւսերենում,— նկատեց քույրը:

— Լավ, ի՞նչ անենք, որ չկա, բայց արտասանել խո կարելի է, Պետք է միայն վարժվել:

— Ի՞նչպես վարժվեմ:

— Խոսելով: Փետք է շարունակ խոսեք հայերեն:

— Որ ամաշում ե՞մ:

— Այ քեզ բան, մարդ խոսելուց էլ ամաշի՞: Այ, ես ձեզնից լավ չգիտեմ ոռուսերեն, բայց խոսում եմ, և գիտեմ, որ սխալներ եմ անում, բայց չեմ ամաշում:

— Ես ախր գրել էլ չգիտեմ հայերեն, այսինքն համարյա թե չգիտեմ:

Հանկարծ զիխումս մի միտք ծագեց ինքնաբերաբար:

— Ուզո՞ւմ եք,— ասացի,— ձեզ հետ պարապեմ հայերեն: Մի րոպե տարակուսանքով նայեց աշերեիս:

— Հետո, այդ դժվար չի՞ լինի ձեզ համար, համ ինձ հետ, համ եղբորս...

— Դժվար կլինի թե հեշտ,— այդ թողեք ես գիտենամ, դուք միայն ասացեք, ուզո՞ւմ եք:

— Ուզո՞ւմ եմ... ինչպես թե ուզում եմ... իհարկե ուզում եմ,— բացանանչեց նա ուրախությունից վառված աշքերով:— Ես այդ ինքը ու ուզում խոնդրել ձեզ, որովհետև խկապես ամօթ է, որ ես հայ թեն ոչ կարգին խոսել գիտեմ, ոչ կարդալ և ոչ գրել:

— Ետա բարի, մենք հենց վաղվանից կսկսենք,— ասացի են

արտաքին հանգստության տակ ծածկելով ներքին բուռն ուրա-  
խությունս, որ այսուհետև ամեն օր տեսնելու հմ նրան իմ սենյա-  
կում, զգալու հմ նրա ներկայությունը ինձ մոտ:

IV

Բայց հետեւյալ օրը ահա թե ինչ պատահեց:

Դպրոցում պարապմունքներս վերջացնելուց հետո, ճաշարակում ճաշել և նոր էի վերապատճել տուն, որ մի քիչ հանգստանամ և երեկոյան տիրամաս պահպանությունը մասնաւոր հետ։ Պառկած տեղս քնով էի անցել։ Մեկ էլ հանկարծ զարթնեցի ինչ-որ տարօրինակ աղմուկից։ Դուրս գնացի պատշգամբ։ Աղմուկը բակումն էր։ Բոլոր կենողները դուրս էին թափվել։ Տղամարդ չկար մեջներ։ բոլորը կանայք, աղջիկներ և երեխաներ։ Ամենքը խոսում, բղավում էին միանգամից։ Ոչինչ չէր հասկացվում այդ ժխորի մեջ։ Դիմացի բակում գտնվող ամենավերջին սենյակի լուսամուտի առջև մի խումբ երեխաներ և կանայք իրար գլխի թափված էին նայում։ Այդ սենյակից լսվում էին երեխաների ծվց ու ծղրտոցներ, որոնք միախառնվելով դրսի կանանց ու երեխաների աղմուկի հետ, փշաքաղում էին մարդու մազերն իրենց ահարկու առարինակությամբ։ Զհամբերեցի՝ գոռացի։

— Ի՞նչ է պատահել:

Հուսամուտի առջև խոնված կանանց և երեխաների սրջրթ սա-  
կր դուրս թռավ և, դիմելով ինձ, առաջ վագեց, Քալին էր:

— ի սեր աստծու, օգնեցիք, — աղաղա սպահահար, աղերսալի աշքերով նայելով ինձ:

Ներքեւ վազեցի:

= ի՞նչ, և պատահել, — նորից հարցը:

— Սպանեց, շուտ, — ասաց միայն սարսափից հնալով և տարավ ցույց տվեց այն սենյակի դռութ, որտեղից լսվում էին երեխանների ծփոցներն ու ծղրտոցները:

Բոնեցի դռան փականքից և հրեցի, բաց շեղավ. փակված էր  
ներսից: Սկսեցի շարժել, որ տեղահան անեմ, դարձյալ անօգուտ:  
Այն ժամանակ ձեռքբերիս և ոտներիս մկաններն չհանք իրենց  
լարվեցին այնպիսի մի կատաղի ուժով, որ մի րա զ ինչ-որ  
ճայթեց, դուռը մեկեն բացվեց շրխկալով ու ուժիս իններցիան ներս  
նետեց ինձ սենյակը:

Այդ կիսամութ սենյակում աշբերիս առջև ներկայացավ Հետեւալ տեսարանը: Թրդութ երեսով և կարմիր, ուռած քթով մի տղամարդ մի կնոջ (ինչպես հետո իմացա, իր կնոջ) մազերից բռնած՝ խելագարի կատաղությամբ քարշ էր տալիս այս պատից այն պատը, այս անկյունից այն անկյունը: Կինը երկու ձեռքով պինդ բռնել էր իր մազերից և իր կողմն էր քաշում, որ մարդու ձեռքերի թափը թուլացնի, բայց չէր հաջողում, և ծալվող ծընկներով, համարյա լուս մղկտալով վազում էր, նայելով թե զազանացած մարդը ո՞ր կողմն էր քարշ տալիս նրան մազերից բռնած: Երեք մանրիկ երեխա բարձրացել էին թախտը, գալլ տեսած գառների նման կուշ էին եկել իրար մոտ պատին կպած և ծվում էին: Կինը չկարողացավ դիմանալ ոտի վրա և երեսն ի վայր փուզեց գետնին: Մարդն այժմ թողեց նրա մազերը և սկսեց աքացի տալ պատահած տեղը: Այդ գաղանը գրեթե ձայն չէր հանում, միայն ծանր շնչում և փնչացնում էր կատաղած գոմշի նման, երկի հոգնելուց:

Արյունն աշքերս առավ: Առաջ վազեցի, ետևից բռնեցի նրա սյուրտուկի կեղտից սևացած պլպլացող օձիքից, և բոլոր ուժովս ետ հրեցի: Զեմ իմանում ինչպես պատահեց, մեկ էլ տեսնեմ այդ ահազին մարդը երեսն ի վեր փոված է հատակին, կնոջ կողքին, Այժմ ես սկսեցի քացի տալ նրան: Պետք է որ շատ մազալու տեսարան լիներ: Սկզբում, երեկի հանկարծակի եկած, չէր շարժվում տեղից, ոչ մի դիմադրություն ցուց չէր տալիս, չէր աշխատում տեղից վեր կենալ, կարծես չէր էլ զգում աքացիներիս հարցածները, որ, պետք է ասած, բավական անողորմաբար էի տալիս: Նա միայն, իր ահազին մարմնով հատակի վրա երկարումնեկ ձրգված, նայում էր ինձ զարմանք արտահայտող ուսած-կարմրած աշքերով, կարծես հարցնում էր. «Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում»: Բայց հանկարծ, կարծես նոր ուշքի գալով, մի ուժգին շարժում գործեց և նստեց, որ վեր թռչի: Ու մինչ ահազին մարմինը կշարժեր տեղից, ես վրա ընկա, նորից պառկեցրի, շոքեցի կրծքին և բռնեցի կոկորդից: Երեկի շատ պինդ էի հուպ տալիս, որ նա բերանը բաց էր արել, ցուց տալով իր դեղնած փառած ատամները, աշքերը չուել էր, արյունով լցված զզվելի սպիտակուցները դեմքիս հառած, և մարմինն էլ չի տեսակ խլպլտում էր տակս:

Այժմ՝ մութ կերպով հիշում եմ, որ սենյակը լցվել էր մարդկանց գոտով. դրանք, երկի, բակի կանայք ու երեխաներն և փողոցով

անցող պատահական մարդիկ էին, որոնք ներս էին թափվել «Թամաշա» անելու Չորս կողմու դժոխային զժվնոց էր ընկել:

Ուշքի եկա այն ժամանակ, երբ մեկը վրա ընկավ, բռնեց երկու ձեռքից և բոլոր ուժով քաշելով վեր կացրեց ինձ այդ թշրիվառականի վրայից: Տանտերս էր:

— Գժվի լիս, ինչ է, էղ խո խեղդեցիր,— ասաց:

Բան շկարողացա արտասանել. սաստիկ հոգնել և դժվարությամբ էի շունչ քաշում:

Այդ րոպեին հոր կողքին տեսա Քալիին լուս, գունատ, սարսափահար ինձ նայելիս:

Տանտերս բռնեց թիցս ու դուրս տարավ:

Բայց հազիվ ոտս դուրս էի դրել շեմքից, մեկ էլ հանկարծ ներսը հավաքված ամբոխի մեջ կանանց ու երեխանց մի սոսկալի ծզրտոց բարձրացավ և գրեթե նույն րոպեին ինչ-որ մի տրաքոց զգացի ծոծրակիս վրա: Ականջներիս մեջ մի սուր ծվոց լսեցի, կարծես մոտս թնդանոթ արձակեցին, աշքերս նախ պեծին-պեծին տվին, հետո հանկարծ մթնեցին, գետինը թռավ ոտներիս տակից և... այնուհետև թե ինչ պատահեց— շիմացա:

Ուշքի որ եկա, տեսա պառկած եմ սենյակումս, մահճակալիս վրա: Մոտս աթոռի վրա նստած էր տանտիրոցս բժշկացու տղան՝ սառը, լուրջ զեմքով: Շատ զարմացա, նա երբեք սենյակս չէր մտել. այնպես առանձնացած էր պահում իրեն, որ նույնիսկ չէինք ծանոթացել իրար հետ: Նրա մոտ անհանգստություն արտահայտող զեմքերով կանգնած էին տանտերս և նրա կինը: Աշքերս բանալուն պես մի թույլ, ուրախական ճիշ լսեցի գլխիս վերել: Բժըշկացուն սաստող աշքերով արագ նայեց վերև և ասաց «ԿТО ՏՅ!». իսկապես այդ ճիշն էր, որ ինձ ուշքի բերեց: Աշքերս զցեցի գըլխավերես, որ տեսնեմ, ով էր, ոչ ոքի շտեսա: Հետո փոխեփոխ նայեցի բժշկացուի, նրա հոր, նրա մոր աշքերին և հարցրի:

— Ի՞նչ է պատահել:

— Ոչինչ,— ասաց բժշկացուն շատ հանգիստ կերպով: — Խնդրեմ հանգիստ մնացեք, շշարժվեք և մի խոսեք:

— Ինչո՞ւ:

— Գլխիդ ցավ շե՞ք զգում, ծոծրակի վրա:

Սոծրակ որ ասաց, իսկույն ամեն բան հիշեցի և խիստ վախեցա: Նոր զգացի, որ ծոծրակս սաստիկ ցավում է: Հետո տեսա զլուխս պինդ փաթաթել են մարդիով, այնպես պինդ, որ ճակա-

տիս մաշկը չէի կարողանում շարժել, Ցողաֆորմի հոտը բռնել էր սենյակս: Փորձեցի վեր կինամ դրությունս ստուգելու համար, բայց որ զլուխս մի քիչ բարձրացրի, իսկույն էլ ցած զցեցի— այնքան ծանր էր և անտանելի ցավեր զգացի: Կարծես գանգս դատարկել էին և մեջն արձին լցրել:

— Տեսնում եք, ասացի շշարժվեք,— ասաց բժշկացուն իր մշտական հանգիստ ձայնով: — Զեղանից շատ արյուն է գնացել, դուք թույլ եք, ձեզ անպայման հանգիստ է պետք:

Բայց ես խիստ հետաքրքրվում էի իմանամ— ո՞վ խիմից ինձ և ինչպես եղավ, որ ուշաթափվեցի: Այդ մասին ինձ համառոտակի պատմեց տանտերս: Երբ թիցս բռնած՝ նա դուրս էր տանում ինձ այդ զազան մարդու սենյակից, վերջինս հանկարծ վեր էր թռել տեղից, հայտնի չէ որտեղից մի հաստագլուխ փայտ էր առել, վագել ետևիցս ու թրըխկ— զլուխս ճղել:

— Օ՛, Սաշա, որ տեսնեիր ինչքան սարսափելի էր նա այդ րոպեին,— լսեցի պլխավերես Քալիի ձայնը:

Նոր իմացա, որ աշքերս բացած րոպեին նա էր ուրախական ճիշ արձակողը: Ուրեմն նա էլ էր ինձ մոտ... Բայց ես դարձալ չէի տեսնում նրան:

Խսկ ուշաթափվել էի նրա համար, որ— զիխին հասցրած դագանակի այնպիսի հարվածից մարդ կարող է մինչև անգամ տեղն ու տեղը մեռնել,— հոր պատմածին ավելացրեց նրա բժշկացու որդին:

Այստեղ տան ոիրոցս կինն ինչ-որ ասաց մարդուն իր վրացերենով: Մարդն, ըստ երևույթին, հավանություն ավեց նրա ասածին և գարձակ ինձ:

— Հա քա՞ն. զու լավնաս, մատաղ պիտիս անի, թե չէ հանաք բան չգիտենաս: Ասենք, էն պիտիս էլ հեշտ շի պրծնի, — ավելացրեց նա:

Ինչ վերաբերում է այդ պայտանիցին», նրան իսկույն ոստիկանատուն էին քարշ տվել:

Մրպեսպի շհոգնեցնեն ինձ, բժշկացուն հորը, մորն ու քրոջը պատվիրեց, որ դուրս գնան, ինքն էլ շուտով հետևեց նրանց, նախապես պատվիրելով, որ կարելույն շափ շշարժվեմ և աշխատիմ քնել:

Սոծրակիս ցավը հետաքետե սաստիկանում էր: Ցավն երբեմն այնպես էր շամփրում, որ շրմունքներս կփոռում էի՝ զոռալու

Համար: Պառկած էի շորերով. մինչև անգամ կոշիկներս հագիս էր Ռուզում էի վեր կենամ հանվելու, բայց թժկացուի պատվերը հիշելով վախինում էի տեղից շարժվեմ: Բարեբախտաբար թժկացուն նորից մտավ այս անգամ իրենց ծառայի հետ և նրա օգնությամբ հանեց կոշիկներս ու շորերս, գրեթե առանց տեղից վեր կացնելու: Անհուն երախտագիտությամբ սեղմեցի այդ բարի երիտասարդի ձեռքը:

Հինգ րոպեից դարձյալ մենակ էի սենյակիս մեջ, Գրասեղանիս վրա, ուղղակի աշքերիս դիմաց, վառվում էր լամպը: Զգիտեմ ով էր վառել, միայն ինձ թվում էր, թե պատրույգն այնքան շատ էին բարձրացրել, որ սենյակ լցվել էր խեղդող ծխով: բացի դրանց, լամպի լույսը տարօրինակ կերպով ծակում էր աշքերս, մինչև անգամ այն ժամանակ, երբ փակում էի աշքերս:

Սոծրակիս ցավը տանջում էր անողորմաբար, երբեմն ցավը շգիտեմ մեղմանում էր, թե ընդհակառակն, իր ծայրահեղ սաստկությամբ բթացնում զգացողությունս, միայն այդ րոպեներին համեմատաբար հանգիստ էի զգում ինձ և շգիտեմ քունս էր տանում, թե մի տեսակ թմբիր էր գալիս վրաս:

Շատ թունդ տենդ էր պատել ինձ, և այդ տենդի մեջ կամաց կամաց ինքնամոռացության մեջ էի ընկել:

Դիշերվա մի ժամին աշքս բաց արի և, կարծես երազիս մեջ, տեսա մահճակալիս մոտ ով-որ նստած է,— ով էր, հաշիվ շտվի ինձ, այսքանս միայն տեսա, որ կին էր,— ի՞նչ կին, շիմացա, շաշխատեցի էլ իմանամ:

— Զուր, — շշնչացի:

Վեր կացավ, գես-դեն նայեց սենյակիս մեջ, հետո անլսելի բայլերով դուրս գնաց և մի քանի րոպեից կրկին ներս մտավ շրով լի մի շիշ և մի բաժակ ձեռքին: Հիշում եմ, ուզում էի գլուխս բարձրացնեմ, շկարողացաւ: Զեռքը ներս կոխաց բարձիս տակը, բարձի հետ բարձրացրեց գլուխս և մլուս ձեռքով բաժակը մոտեցրեց շրթունքներիս: Մարավից պապակում էի և ազահարար ծծեցի սառը ջուրը: Դրանից հետո գրեթե իսկույն շգիտեմ քնեցի, թե նորից ինքնամոռացության մեջ ընկաւ:

Երկու օր շարունակ համարյա ուշագնաց էի: Աշքերս բաց արի երրորդ օրը: Առավոտ էր: Աշնանային դժգույն արկը ողողել էր սենյակս: Մահճակալիս մոտ տեսա թժկիս և նրա բրոշը: Հետո մտավ տանտերս իր կնոջ հետ: Նրանց նայելով, զգացվեցի, աշքե-

րըս արտասվակալեցին: Ինձ թվաց թե մեռնելու եմ և այդ համարի մարդիկ կարեկցում են ինձ: Թժիշկս նայեց զարկերակս, շափեց տաքությանս աստիճանը, սկսեց ինչ-որ տարօրինակ հարցումներ տալ, որոնցից գլխի ընկա, որ կասկածում էր, թե մի գուցե ուղեղից ցնում լինեի ստացած: Վերջն ասաց, որ ճգնաժամն անցել է, որ այլևս ոչ մի վտանգ չկա, անպատճառ կլավանամ: Նկատեցի, թե ինչպես թժկի այդ հուսադրական խոսքերից հետո տանտիրոջս, նրա կնոջ և աղջկա գեմքերին մինչ այդ եղած վախի և տիխուս թյան արտահայտությունը միանգամից ուրախական արտահայտության փոխվեց, և նրանք, որ մինչ այդ լուս դիտում էին ինձ, սկսեցին միաժամանակ խոսել: Նրանց այդ ուրախության ազդեցության տակ ինքս կենդանացաւ: Բայց մի բան, որ ավելի և կենդանություն տվեց ինձ, այդ Քալիի բուն ուրախությունն էր, որը չէր իմանում ինչպես արտահայտեր: Առանց ժնողներին հարցնելու այդ ընկերին համար նամար:

Ա՛խ, այդ աղջիկը... ինչպես կուզեի համբուրել նրա ձեռքերը և լաց լինել այդ րոպեին ինձ համակած մի ծայր աստիճան քաղցր, քնքացնող զգացումից, որի մեջ հալվում էր ամբողջ էությունս: Արդյոք նա չէ՞ր (հանկարծ միտս եկավ այդ րոպեին) առաջին գիշերը, գուցե և հետեւյալ գիշերները, մահճակալիս մոտ ինձ հսկողը, ինձ ջուր տվողը...

## V

Թժիշկը, տանտերս, նրա կինն ու աղջիկը նոր էին հեռացել սենյակիցս, մեկ էլ տեսնեմ դուրս կամացուկ բացվեց և ներս մտավ մի կին: Մի րոպե կանգնած մնաց դռան մոտ և, ըստ երևույթին, այնքան շփոթվեց, որ ինձ թվաց, թե սխալմամբ է մտել իմ սենյակը: Բայց ո՛րքան եղավ զարմանքս, երբ այնուհետև մոտեցավ ինձ և հարցրեց:

— Այժմ ինչպես եք:

— Լավ եմ, — արտասանեցի մեքենայաբար, զարմացած ինքս ինձ հարց տալով, թե ո՛վ է:

— Փառք աստուծո, — կամաց հառաջեց նա և, կարճ լուս թյունից հետո, ասաց: — շատ էի վախենում. դուք շատ վատ դրության մեջ էիք:

Ապշեցի:

— Դուք ի՞նչ գիտեք:

— Զէ՞ որ այս երեք գիշեր ես էի ձեզ նայում:

— Դո՞ւք... Դո՞ւք էիք ինձ ջուր տվողը:

— Ես էի:

Դեռևս ապուշ կտրած՝ նայում էի նրան.

— Ներողություն, դուք ո՞վ եք:

Սկզբում, ըստ երեւլյթին զարմացավ, որ շեմ ճանաչում իրեն:

— Մի՞թե ինձ երեք շեք տեսել այս բակում... Ասենք, հազիվ թե տեսած լինեք, որովհետև ես մեծ մասամբ հիվանդ եմ և... ամաշում էլ եմ դուրս գալ տնից... Բայց այն օրը, տեսաք, չէ՞ իսկույն կռահեցի:

— Դուք այն... ներողություն, գազանի կի՞նն եք:

— Այո, — աշքերը վայր թողնելով, շշնչաց նա:

Խնդրեցի, որ նստի: Նստեց:

Հետաքրքրությամբ դիտում էի նրան: Կլիներ մոտ երեսուն տարեկան, այնքան նիհար էր, որ հասարակ շրի հագուստը լայն առարակի պես կախ էր ընկած սոր ուսերից: Նիհարությունից գեմքի և ձեռքերի վրա միս չէր մնացել, իսկ աշքերը տարօրինակ մեծ էին երեսուն և անսփոփ տիրությամբ լի: Առհասարակ նրա ամբողջ արտաքինի մեջ սիրտ ճմլող տրագիկական մի գիծ կար, որն իսկույն գրավում էր նայողի ուշադրությունը: Խոհուն զեմքից և խոսակցական լեզվից նկատում էի, որ բայց թե շատ կրթված կին է:

Նստելուց հետո, ըստ երեւլյթին, ուզում էր խոսել, բայց ամաշում էր. նրա շփոթմունքը տեսնելով, ինքս էլ քաշվում էի հարցուփորձ անեմ:

Սակայն, կարճ լուրջունից հետո, աշքերը վայր թողած, հազիվ լսելի ձայնով ասաց.

— Ինչո՞ւ միջամտեցիք, ինչո՞ւ ձեր կյանքը վտանգի մատնեցիք:

— Նա ախր ձեզ սպանում էր:

Հանկարծ նայեց ինձ. նրա հանգած աշքերը վառվեցին տարօրինակ փայլով:

— Թո՛ղ սպաներ, թո՛ղ սպաներ, թո՛ղ սպաներ,— վրա տվեց արտանց:— Ավելի լավ չէր լինի, միանգամբ կարծնեի... իմ մահը երջանկություն կլիներ ինձ համար, իսկ ձեզ... ի՞նչ ասաց բժիշկը. վերքը խո վտանգավոր չէ:—

— Զէ:

— Փառք աստուծո, — դարձյալ հառաշեց նա:— Ա՞յս, որ յատածում եմ իմ պատճառով եք այդ դրության մեջ ընկել... Չնայելով, որ ինքս հիվանդ էի, — հիմա էլ լավ չեմ, — ամբողջ մարմինս մղկտում էր, բայց և այնպես, որ իմացա, թե այն հրեշն ինչ օրի է գցել ձեզ, մոռացա իմ ցավերսէլ, ամեն բան էլ և եկա մտիկ: անեմ ձե՛զ: Զէ՞ որ դուք մենակ եք, նայող շունեք:

— Աւրեմն քվիթ, — նկատեցի ժպտալով:

Նկղացավ:

— Մի՞թե կարծում եք, որ ես քվիթ լինելու համար...

Թույլ շտվի վերջացնի, ասացի, որ կատակ արի, ներողություն խնդրեցի, շնորհակալություն հայտնեցի իր բարեսրտության համար և հարցրի, թե իր ամուսնուն դեռ չե՞ն թողել:

— Ոչ, — կցկտուր պատասխանեց և լոեց: Հետո, կարծես ինքնիրեն, — նրան բռնեցին տարան; բայց ի՞նչ օդուառ ժամե սպասում եմ, որ կթողնեն, և ես նորից...

Ասելիքը շվերջացրեց և իր դժբախտ վիճակի հետ վաղուց հաշտված մարդու հանգիստ հուսահատությամբ գլուխը կախեց կրծքի վրա:

Սիրտս ճմլվեց: Զգացի, որ եթե նորից հարկ լինի իմ միջամտության, դարձյալ չեմ խնայի իմ օգնությունը՝ թեկուզ նույնպիսի հետևանքով ինձ համար:

Ինձ սկսել էր հետաքրքրել այդ դժբախտ կնոց վիճակը:

— Ներեցք, տիկին, անհամեստ հարցումիս համար. ինչո՞ւ է նա ձեզ... ինչո՞ւ է ձեզ հետ այդպես վարվում:

— Այդպես է վարվում, — կարձ պատասխանեց, առանց նայելու ինձ:

— Մի առիթ, մի պատճառ պիտի լինի՞ թե ոչ:

Այս անգամ նայեց ինձ. կարծես զարմացավ, որ առիթ, պատճառ էի հարցնում:

— Առիթը, պատճառ այն է, որ խմում է, — պատասխանեց շատ հասարակ կերպով:

— Ի՞նչ գործի է:

— Գատարանում գրագիր է:

— Շուտ-շո՞ւտ է խմում:

— Կմեռնի, որ մի օր շխմի:

— Եվ ամեն օր էլ... այդպե՞ս է վարվում:

- Ոչ ամեն օր:
- Ա՞լ:
- Երբ որ քիչ է լինում խմած:
- Ի՞նչպես թե...
- Շատ խմած ժամանակ գալիս է, սուսուփուս վեր ընկնում քնում, բայց որ փող չի ունենում լավ թրջվելու, գալիս է մաղձն ինձ վրա թափում, ինչպես որ տեսաք անցյալ օրը: Եվ այս մի տարի չէ, — ամուսնանալու օրից սկսած:
- Լավ, որ այդպես է, էլ ի՞նչպես եք կարողանում ապրել նրա հետ: Գուցե ինքներդ չե՞ք աշխատում, չե՞ք կարողանում աշխատել:
- Ինչպես չէ, կար եմ անում և իմ աշխատանքով եմ պահում զավակներիս:
- Այդ ավելի լավ, ուրեմն դուք հեշտությամբ կարող եք բաժանվել նրանից:
- Նայեց ինձ այնպիսի մի ժպիտով, կարծես շատ միամիտ բան ասացի:
- Բաժանվեմ... ի՞նչ հեշտ եք ասում...
- Ինչո՞ւ երեկ սիրում եք նրան:
- Այս անգամ ծիծաղեց: Եթե այդ րոպեին դեմքին նայելիս շինեի՝ կկարծեի լաց է լինում — այնքան տարօրինակ էին նրա ծիծաղի հնչունները:
- Հանկարծ դադարեց ծիծաղելուց և ընդունեց իր սովորական լուրջ, թափծալի դեմքը:
- Կսեցեք, պարոն. ես ձեզ իմ եղբայրն եմ համարում, թե չէ սիրու չեմ բանա ձեր առջև... ես ոչ ոքի չեմ պատմել դրությունս, ոչ ոքի չեմ գանգատվել... Եվ կարեկցո՞ղն ով է, կարեկցեն էլ — ի՞նչ օգուտ... Ասում եք բաժանվեմ: Մի անգամ այնպես էլ ուզում էի անեմ, բայց ինձ ասացին, որ երեխաններիս ինձ շեն տա, հայրը կարող է նրանց օրենքի զորությամբ խլել ինձնից: Այդպես էլ սպառնաց ինձ ամուսինս: Իսկ ես կարո՞ղ եմ, առանց իմ երեխանների, գեթ մի օր, մի ժամ ապրել, ո՞ւմ համար եմ ապրում ես, ո՞ւմ համար կարող եմ ապրել: Երեխանների համար չէ, որ ապրում եմ և տանում այս տանջանքները... Իսկ երբ որ երեխաններս ինձ մոտ չեն լինելու, շատ հարկավո՞ր է ինձ հանգիստ կյանքը:

լոեցի, էլ բան չկարողացաւ ասեմ:

Այսպիս, սիրտը դատարկելուց հետո, դժբախտ կինը վեր կացավ, առողջություն մաղթեց ինձ և դուրս գնաց:

«Պիանիցին» թողեցին մի շաբաթից հետո: Մինչև այդ՝ նրա կինն ամեն օր մտնում էր ինձ մոտ, հարցնում առողջությունս, հավաքում սենյակս, երբեմն ճաշ բերում (տանտերս էլ էր ուղարկում), բայց էլ չէր խոսում, հարցումներիս խուսափողական պատասխաններ էր տալիս, կարծես զզում էր, որ արդեն շատ բան էր պատմել: Խույս էր տալիս տանտիրոջս ընտանիքի ալս կամ այն անդամի հետ ինձ մոտ հանդիպելուց և գոնից ետ էր զառնում, երբ նրանց տեսնում էր ինձ մոտ: Երբ մի անգամ հարցրի, թե ինչո՞ւ է խուսափում նրանցից, ասաց թե ամաշում չ և կվիրավորվի, եթե սկսեն հարցուփորձ անել: Տեսա, որ որքան դժբախտ էր, այնքան և իր ընտանիքի պատվին նախանձախնդիր, հպարտ կին:

Ամուսնու երեսալու օրից նա լքացավ:

Այդ օրվանից ականջս շարունակ ձենի էր, բայց նրանց բնակարանից այսևս աղմուկի ձայն չէր գալիս: Ինչպես երևում էր, տվածս զար և «կուտուզկայում» նստելն ապարզուն չէին անցել, կամ զուցե, մտածում էի, ամեն բան շարունակվում է առաջվա պես, և խեղճ կինը «Ճայնը փորն է զցում», ինչպես մի անգամ ինքը խոստովանեց: Տանտերս ուզում էր գուրս անել նրանց իր տնից, մանավանդ որ երկար ժամանակ բնակարանի վարձը չէին տվել, բայց աղջիկն իմ ներկայությամբ խնդրեց նրան, որ այդպիսի բան չանի, առարկելով, որ «պիանիցը» ուրիշ տեղ ուղղակի կսպանի խեղճ կնողը, իսկ իրենց տան մեջ ալևս չի համարձակվի ձեռք բարձրացնել նրա վրա: Եվ Քալին իր հրաշալի աշքերով նայեց ինձ՝ այդ ասելիս:

Գոր զը տանի, այդ աշքերը չէին պատճառը, որ կյանքս վտանգի մատնեցի: Այժմ էլ, որ հիշում եմ նրա արտասվախառն, սարսափահար հայացքը, որով բակից աղերսում էր ինձ, որ օգնության հասնեմ, այժմ էլ երբեմն զարթնում է իմ մեջ այն խիզախ ոգին, որով այն ժամանակ մի ակնթարթում համակված ներքեւ վագեցի և կոտրեցի «պիանիցի» գուրը: Եվ միայն այդ կանեփ այն ժամանակ այդ աշքերի համար...

Երբ գլխիս վերքն այնքան լավացավ, որ այլևս կարիք չունեի պառկելու, բայց զգուշության համար դեռևս ուսումնարան չէի գնում, վերսկսեցի պարապմունքներն տերտերացու աշակերտին հետ և միաժամանակ սկսեցի Թալիի հետ պարագել հայոց լեզվից:

Տանտերս աղջկա ինձ աշակերտելու վրա հաշտ աշքով էր նայում, նույնիսկ խրախուսում էր նրան. Կինը, ընդհակառակը, որքան կրահում էի նրա ձեթու դեմքից, դժոռն էր և զարմանում էր, որ աղջկը գիմնազիոնի հինգերորդ դասարանն ավարտելուց հետո էլ, դեռ կարիք ունի ուսանելու հակ թե եղբայրը՝ բժիշկը, ինչպես էր նայում բրոշ այդ կապրիզի վրա. շիմացա, որովհետև առողջանալու հետո երեսն այլն չէի տեսնում, շնացելով; որ արդեն ազատ մուտք ունեի նրանց տան մեջ. նա կամ բոլորավին առանձնացած էր լինում իր սենյակում, երեք պատրաստվում էր պետական քննությունների համար, կամ տանը չէր լինում: Բայց կարծեմ, նա անտարբեր էր:

Հարկ չկա պատմելու, թե ինչպիսի հաճույքով էի պարապում Թալիի հետ: Ուսումնարանից վերադառնում էի հոգնած և շատ անգամ հուզված էի լինում հոգաբարձությունների վարմունքից կամ պաշտոնակիցներիս ինձ դեմ լարած խարդապահներից, որոնցից, ինչպես հայտնի է, ոչ մի ուսուցիչ ազատ չէ: Բայց երբ Թալին մայրենի լեզվի դասագիրքը և հայոց գրության տեսրակը ձեռքին փոքրիկ երեխայի պես աղմկալի կերպով ներս էր վազում ինձ մոտ, հոգնածությունս էլ էի մոռանում, հուզում էլ, և կառծում էի, թե հանկարծ մի կենարար հեղուկ սրսնեցին երակներին մեց: Ոչինչ այնքան չէի սիրում նրա մեջ, որքան նրա այդ շարժունությունը և մանավանդ մանկական պարզաբանությունը: Երբեմն հանկարծ այնպիսի մի անմեղ հարց կտար, որ չէի կարողանում ծիծաղ գսպել: Այդպիսի դեպքերում նախ, կարծես, ապշում էր, թե ինչ կար ծիծաղելու, հետո ինքն էլ էր սկսում ծիծաղել, կարծեւ նոր գլխի ընկնելով, որ տված հարցն իսկապես ծիծաղելի էր:

Սկզբում խոսում էր ոռւսերեն և խնդրել էր, որ ես միշտ հայերեն պատասխանեմ. հետո կամաց-կամաց-սկսեց հայերեն խոսել, մեջեմեջ ոռւսերեն բառերով, որոնց հայերենը իսկույն հարց-

նում էր ինձնից: Պատահում էր, և շատ հաճախ, որ դասի ժամանակ մենք սկսում էինք զրուց անել կողմնակի բաների մասին, և այդպիսի դեպքերում նա միշտ աշխատում էր խոսակցությունը լուրջ բաների վրա դարձնել, որ ավելի շատ բան իմանա և շատ բառեր սովորի:

Ցավ ի սիրտ տեսնում էի, որ ոչ մի գաղափար չունի մեր ոչ անցյալից, ոչ ներկայից, ոչ կուտուրական, ոչ հասարակական կյանքից, ուստի իմ զրուցը պատվում էր մեծ մասամբ այդ խընդիրների շուրջը:

Մեր պարապմունքները տեղի էին ունենում, տերտերացու աշակերտից ջոկ, երեկոները, երբ Քալին ազատ էր լինում տնային գործերից: Ասենք, նրա համար առավոտ-երեկո չկար. նրա համար գործը միշտ անպակաս էր լինում պանը: Պարապմունքի ամենաթունդ ժամանակ, մեկ էլ կտեսների, մայրը կկանչեր նրան: Այդպիսի դեպքերում Քալին զժոռությամբ, շատ անգամ զսպված զայրացկոտությամբ, գիրքը կամ մատիթը շպրտում էր սեղանի վրա և դուրս գնում՝ մոր պատվերը կատարելու, բայց շատ չէր ուշանում էր, ինչպես միշտ, ժպիտը դեմքին: Զարմանալի բարեսիրտ և հնազանդ աղջիկ էր. կդժոռներ, կզայրանար, շատ անգամ բարկացած կաղաղակեր, կկատաղեր, բայց չէր անցնի մի րոպե և կտեսների նորից ժպտում է, կարծես իսկի էլ բան չի պատահել:

Երկու ամսից հետո արդեն հայերեն գրքեր էի տալիս կարդալու, որ վարժվի: Գիրքը կարդում վերջացնում էր շատ շուտով, այնպես որ մինչև անգամ կասկածում էի, թի առանց կարդալու է վերադառնում, բայց ո՛րքան էր լինում զարմանքս, երբ սկսում էր մի առ մի պատմել բովանդակությունը: Հարցնում էի, տան այնքան գործ ունենալով, ե՞րբ է ժամանակ գտնում կարդալու, այն էլ այդպիս շուտ: Պատասխանում էր. «Գիշերներն եմ կարդում»:

Ինձ մոտ գտնվում էր «Վերք Հայաստանիշ-ի հին հրատարակության մի օրինակը փալաս դարձած կարտոնի կազմակ, հնացած, դեղնած. թերթերով: Նոր տարին մոտենում էր. չեմ իմանում ինչպես, իսելքիս վկեց այդ գիրքը նվիրեմ Թալիին: Եվ առանց երկարու բարակ մտածելու գիրքը վերցրի տարա կազմարարի մոտ, պատվիրեցի, որ փալաս դարձած կազմը պոկի և մի փառավոր ուսկեզօծ կազմ շինի: Նոր տարվա նախօրը ստացա հնամյա Արովյանը պճնված, զարդարված նորահարսի պես, շապկի վրա ամեն-

նայն խնամքով գրեցի Թալիի անունը, աղքանունը, հետո իմը, իսկ տակը՝ օրը և տարեթիվը, և նոր տարու առավոտը, երբ Թալին, ուրախ, զվարի մտավ սենյակս նոր տարին շնորհավորելու գիրքը լուր մեկնեցի իրեն:

— Կարդա՞մ, — Հարցրեց:

— Կարդացեք և պահեցեք ձեզ մոտ:

Ըստ երևութին, իսկույն գլխի շընկավ, թե ինչ էի ուզում ասել, հետո շփոթվեց, կարմրեց:

— Այս նվե՞ր է ինձ, — Հարցրեց կամաց, աշքերը վայր թուած:

— Ուրիշը ձեզ այսօրվան օրը կոնֆետ կնվիրեր, բայց ես ավելի լավ համարեցի այդ գիրքը նվիրել:

Միծաղեց, շնորհակալություն հայտնեց և դուրս փախավ:

Հետեւալ օրը, երբ ըստ սովորականին պարապում էի նրա հետ, հանկարծ խոսքս կտրեց և հարցրեց:

— Դուք թաշկինակ ունե՞ք:

Զարմացա:

— Ինչո՞ւ եք Հարցնում:

— Պատասխանեցեք, ունե՞ք թաշկինակ:

— Ունեմ:

— Տեսնեմ:

Գրպանիցս հանեցի հասարակ միտկալի թաշկինակս և տվի իրեն:

— Է՛ս, — դեն շպրտեց: — Ուրիշ չունե՞ք:

— Ունեմ:

— Տվեք տեսնեմ:

Սնդուկիցս հանեցի տվի երկրորդ թաշկինակս, որը միենույն կտորից էր:

Նայեց և նորից ետ տվավ:

— Լա՛վն եմ ասում, լա՛վք:

— Դե այս րոպեիս դրանից լավ ո՞րտեղ ճարեմ, — ասացի. — Իմ ունեցածս այդ է:

— Լավ, թողնենք այս, շարունակենք:

Շարունակեցի ընդհատված դասախոսությունս, բայց այս անգամ ինքս ընդհատեցի և հարցրի:

— Լավ, ինչների՞դ է պետք իմ թաշկինակը:

— Քիթս պետք է սրբեմ, — վրա բերեց բարձրածայն ծիծա- զելով:

Այդ թաշկինակը ցավ դառավ ինձ համար. ինչքան էլ զլուխս կոտրում, մտածում էի, որ իմանամ ինչին էր պետք թաշկինակս, բան չէի հասկանում. ինչքան ինդրեցի, որ ասի, շասաց, ամեն հարցնելիս ծիծաղում էր միայն, մինչև որ մի օր էլ, ոչ սովորա- կան պարապմունքի ժամին մտավ ինձ մոտ, անսովոր հանգըս- տությամբ, առանց ձայն ծպտուն հանելու, սեղանիս վրա դրեց բարակ թղթի մեջ փաթաթած ինչ-որ փոքրիկ մի բան և նույն լուս- թյամբ դիմեց դեպի դուռը: Դուան մոտ շուռ եկավ, նայեց ինձ և ասաց.

— Այսօր ձեր անվանակոչության օրն է, և ամոթ ձեզ, որ ոչինչ չեք պատրաստել ինձ հյուրասիրելու համար:

Ասաց և ծիծաղելով դուրս փախավ:

Այ քեզ բան. իսկապես որ անվանակոչությանս օրն էր, և ես ոչինչ չգիտեի:

Ապշած վերցրի բաց արի թղթի մեջ փաթաթված իրը. թաշկի- նակ էր, ութածալ, մետաքսի և այնքան բարակ, որ բուն մեջ կա- րելի էր հավաքել: Մայրերից մեկի վրա զարմանալի նրբությամբ ասեղնագործված էին անվանս և ազգանվանս սկզբնատառերը հայերեն նշանագրերով: Ահա թե ինչի համար էր ինձնից թաշկի- նակ պահանջում: Անհուն երջանկությամբ նրա փոխադարձ նվերը մոտեցրի շրթունքներիս և համբուրեցի այն տեղը, ուր նրա մատ- ներն իմ անվան և ազգանվան սկզբնատառերն էին ասեղնագոր- ծել ո՛վ գիտե ինչ մտածումներով և զգացումներով:

Զգիտեմ, շատ տարօրինա՞կ, թե շատ սովորական էր մեր սե- րը (եթե միայն այդ սեր էր), բայց մեր միջն երբեք ոչ սիրո խոստովանություն եղավ, ոչ էլ սիրո մասին որևէ ակնարկ: Գա- րուն, լուսին, վարդ, սոխակ, ախ ու վիշ և այլ այդպիսի բաներ շկային. ինչպես երևում է, այդ ակնեսուրներով սիրում են միայն բանաստեղծները, իսկ մենք շատ պրոզայիկ մարդիկ էինք: Ճիշտ է, մեր փոխադարձ նվերներն, ըստ երևույթին, մի քիչ բանաստեղ- ծական էին, բայց նա իմ նվիրած Աբովյանից կիմանար, թե Հա- յաստանի վերքը ո՛րն էր, որից ամենին գաղափար շուներ, իսկ նրա նվիրած մետաքս թաշկինակն էլ ես կարող էի գործածել ա- մեն անգամ, երբ միտկալի թաշկինակներս կեղտոտվեին: Մեր սի- րո լեզուն այս էր. — ծիծաղում էինք իրար վրա, ծաղում էինք

Երաժշգուացնում, նա ինձ ոքնձուտ վարժապետ» էր անվանում, ևս նրան— «Քալո խաբարդիանու (այդ բառերով սկսվող վրացերեն մի հին երգ էի լսել Թիֆլիսում)». մի քիչ էլ որ առաջ գնացինք, կամացուկ խորում էինք իրար ձեռքի, երբեմն նա բռնում էր քթից, ևս ձիգ էի տալիս նրա զիսակը, մի խոսքով՝ օրինավոր սիրահարվածներին անվայել այսպիսի երեխայական շարաճճիություններ: Որից հետո,— այս էլ ասեմ,— մենք բաժանվում էինք իրարից իրեւ միակ ամենաերշանիկ մարդիկ աշխարհիս երեսից: Գոնե ինձ համար ես այդ կարող եմ ասել:

Բայց այս կատակները լինում էին, իհարկե, ի միջի այլոց, իսկ դասերը շարունակվում էին իրենց կարգին, առաջվա պիստինգ-վեց ամսից նա արդեն այնպես վարժ էր կարդում հայերեն և այնքան լավ էր հասկանում կարդացածը, որ այլևս շատ քիչ բառերի թարգմանության կարիք էր զգում: Իսկ մեր փոխադարձ հարաբերության մեջ քաղաքավարի «դուք»-ը ինքնըստինքյան վազուց վերացել էր և փոխվել մտերմական «դու»-ի:

Բայց... «վերջն է գովելի»:

## VII

Քալին հանկարծ շքացավ. մի օր, երկու օր, չորս օր, մի շաբաթ իզուր սպասում էի— Քալի շկար ու շկար. ոչ միայն այլն չեր գալիս զաս առնելու, այլև ստվերն անգամ չեի տեսնում պատրշգամբում: Սկզբում կարծում էի հիփանդ է, ուզում էի հարցնեմ տերտերացու աշակերտիս, որն անխափան գալիս էր զասի, բայց գեռ բերանս լքացած, հանկարծ, ինչպես ասում են, ռհոգիս ծվաց: Այնի՞ թե— ասացի ինքս ինձ— ծնողները հոտն առել են և... Սառը քրտինքը պատեց ճակատս: Էլ սուս արի, ձայն ծրպտուն չհանեցի:

Կասկածս արդարացավ շատ շուտով:

Մի օր տանտերս մտավ ինձ մոտ, քեփս, հալս հարցրեց. սկսեց սար ու ձորից, զերջը, մի քիչ սուս անելուց հետո, ասաց.

— Մի բան որ ասիմ, խոմ շի՞ն նեղանա:

— Հրամայեցեք,— ասացի (շատ սառն էի պահում ինձ):

— Վուշ թե հրամայի, այլ պիտի խնդրի: Հայս ասծու, յիս շատ բավական իմ քիզմեն, բայց... գիդիս ինչ կա— օթախս պիտիս դարդի:

Ճիշտն ասած, ես ամեն բան սպասում էի, բայց այդ յիշով ոչ: Ուզում էի հարցնեմ, հենց այնպես, ձևականորեն, «ինչո՞ւ» քեզուս զզորեց:

— Գիդիս էլի,— շարունակեց տանտերս, — ինչքան նիղվածքովյուն ինք քաշում: Էս իմ աղա դոկտորը կանգնիլ է թե՝ ինձ չուկ օթախս պիտիս տաք, սուրյողնի պարապմունքներ ունիմ. կօսե, էրեխեքը խանգարում ին:

Խոսք տվի, որ հենց վաղն ևեթ կաշխատեմ բնակարան ճարել ինձ համար: Այդ բանն ասացի այնպես հանգիստ, որ ինքս ինձ վրա զարմացա: Բայց այդ արտաքին հանդստություն էր, ոինչեւ ներքուստ այնքան շփոթված էի, որ երբ տանտերս ներողություն խնդրելով դուրս գնաց, դեռևս երկար ժամանակ չէի կարողանում ուշքի գալ այդ անակնկալից:

Շատ պոլիտիկոս մարդ էր տանտերս. առանց կովի ու ղալմաղալի, համով ու քաղցրությամբ, «աղա դոկտորի սուրյողնի պարապմունքների» պատրվակի տակ վոնդում էր ինձ տնից, որպես զի միանգամ առմիշտ հույսս կտրեմ իր աղջկանից:

Շատ բարի,— ասացի ինքս ինձ, երբ մի քիչ ուշքի եկա, և ինքնասիրությունս թունավոր օծի պես սկսեց կամաց-կամաց զուխը բարձրացնել իմ մեջ: Շատ բարի,— կարծես սպասում էի, ինչո՞վ և ո՞ւմ— չգիտեմ:

Ու հետեւյալ օրը, հենց որ դպրոցում դասերս վերջացրի՝ գնացի սոր բնակարան որոնելու: Վարձեցի առաջին պատահած սենյակը, ամենեւին ուշագրություն շլարձնելով ոչ հարմարության և ոչ գնի վրա, և վճռեցի նույն օրն ևեթ տեղափախվել: Ինձ թվում էր, որ եթե մի օր անգամ ուշացնեի, լիովին գոհացում տված չէի լինի ինքնասիրությանս:

Այն միջոցին, երբ ունեցած շլունեցածս հավաքում էի, որ մշակի շալակը տամ, տանտերս կանգնեց գլխիս:

— Վա՞, էսենց շո՞ւտ, — զարմացավ: — Գեթաղվա: Խոմ շի՞ս նիղացի:

— Ինչո՞ւ պիտի նեղանամ:

— Ցիս ինչ գիտիմ, էսենց մե բաշ... Գիտիս, էլի, ինչքան սիրեցի քեզ, բայց էս իմ աղա դոկտորը... Մախլաս: Օթախս վո՞ւրդի է, լավ տիղ է՝, զո՞ւնց իս բոնի:

Պատախանում էի հանգիստ. սառը: Նույն սառնությամբ գրաժեշտ տվի նրան, կնոջը, երեխաներին: Քալին չէր երևում: «Ա-

ղա գոկտորը» տանը չեր Քալիի բացակայության մասին ոչ մի խոսք շթռցրի բերանից, կարծես բնավ գոյություն չուներ: Զհիշեցին նրա մասին և ծնողները: Փոխադարձարար հասկանում էինք մտքինը և համառությամբ լուսմ Քալիի մասին: Ռոպեն անհրար մտքինը և համառությամբ լուսմ Քալիի մասին: Ռոպեն անհամ էր: Տանտիրոցս ձեռքը վերջին անգամ սեղմելու ժամանակ տվի նրան սենյակիս վերջին ամսականը: Ի դեպ հիշեմ, որ տերտերացուի հետ ամբողջ լոթ ամիս պարապելուս համար ոչ մի կոպեկ չէի ստացել, իսկ սենյակիս վարձը կանոնավորապես վճարում էի, և տանտերս ընդունում էր առանց որևէ առարկության, ինչպես ընդունեց և այս անգամ:

— Հավ, էս վուր գոյում ես, բաս միր Կոլյայի բանը վունց պիտինք անի, — ասաց նա:

— Ուզում եք, կշարունակեմ պարապել:

— Վա՛, վո՞ւնց թե ուզում ենք, բաս խոմ կիսատ շի՞նք թողնի:

— Շատ բարի, կզամ պարապելու, — ասացի առանց մտածելու և իսկույն էլ զջացի, որովհետև տանտերս նույնիսկ նկատելի հանգստությամբ վրա բերեց.

— Զէ, չէ, ինչի՞ զու նիդութին քաշիս գաս. Հազիվ էրեխսն ինքը գուբա, զու մենակ ասա վուրդի իս բոնի օթախը:

Տվի նոր բնակարանիս հասցեն և գնացի:

Սկզբի օրերում վիրավորանքս ինքնասիրությանս աղդեցության տակ այնքան սաստիկ էր, որ գրեթե չէի զգում Քալիից անշատվելու: Բայց հետո կամաց-կամաց այնպիսի մի թախիծ, այնպիսի մի կարոտ տիրեց ինձ, որ երբեմն սարսափահար մտածում էի, մի գուցե խելազարվեմ: Ախորդակս կապվել էր, գիշերները քուն չունեի, դպրոցում դասերս պարապում էի մեքենայարար, նոր բնակարանում — մի խոնավ, կեղտոտ, անպիտան բնակարան — սիրտս վեր չէր գալիս, պարապ ժամանակս թափառում էի շգիտեմ որտեղ: Մի խոսքով՝ տաժանելի դրություն, որը, հանկարծ, անսպասելի կերպով, հակառակ կամքիս, եկել կաշկանդել էր ինձ ամուր... Քալիի պատկերը գիշեր-ցերեկ աշքիս առշեն էր: Երբեմն հուսահատությունից լաց էի լինում երեխայի նման: Այնքան հպարտ ինքնասիրությունս, ավա՛ղ, առմիշտ մնաս բարով էր ասել ինձ: Նոր էի զգում, որ սիրում եմ այդ հրաշալի, այդ գարմանալի աղջկան և առանց նրան շեմ կարող: Այնքան ընտելացել էի նախկին բնակարանիս և այդ բնակարանի մեջ ամեն օր նրան տեսնելու, նրա ձայնին, ծիծաղին, որ այժմ նոր բնակա-

րանս, Քալիից զրկված լինելս մի խիստ տարօրինակ և անտանելի բան էր թվում ինձ, — կարծես իմ հայրենի աշխարհից հանկարծ պոկել շպրտել էին ինձ մի օտար աշխարհ: Կարուու սպանում էր ինձ: Կարուում էի ոչ միայն Քալիին: ուրախությամբ կցանկանայի տեսնել նաև նրա հորը, նրա բժիշկ եղբորը, մյուս փոքրիկներին, նույնիսկ նրա կովարար մորը, որը մեր անջատման գործում անշուշտ քիչ դեր շպիտի լիներ խաղացած, — մի խոսքով՝ այն ամենքին և այն ամենը, որոնց հետ կապ ուներ Քալիին և որոնք հիշեցնեին ինձ Քալիին: Այդպիսի հուսահատական դրության մեջ մի կատարյալ սփոփանք էր ինձ համար Քալիի ինձ նվիրած թաշկինակը — միակ առարկան, որին նայելով, որը համբուրելով թե՛ կարուս էր ավելի վառվում և թե, միենույն ժամանակ, սիրտս հովանում:

Վերին աստիճանի հետաքրքրում էր ինձ այն միտքը, թե Քալին արդյոք նույնպես քաշում է իմ կարոտը, ինչպես ես իրենը: Բայց արդյոք սիրո՞ւմ էր նա ինձ... Այս հարցը հանկարծ ծագեց զիխումս, և ամեն հանգամանք կշրադատելով, ավելի շուտ տրամադիր էի կարծելու, որ չէ, չէր սիրում: Այլապես, անկարելի բան էի համարում, որ հրաժեշտի ժամանակ կամ, եթե ծնողներից վախենում էր, դրանից առաջ կամ հետո չաշխատեր մի կերպ, ծնողներից ծածուկ, ինձ հետ տեսնվել, օ՛, իհարկե, թաշկինակ նվիրելն ավելի հեշտ է, քան սիրտ նվիրելը:

Տեսականորեն ես միշտ, եթե ոչ անկարելի, գեթ աննորմալ, հիվանդագին երեւութ եմ համարել սիրել առանց փոխադառնության: Այդպիսիներին ես միշտ իրենց հարգը շճանաշող, կամքից և ինքնասիրությունից զուրկ ողորմելի արարածներ եմ համարել — ուղղակի փալաս: Սակայն անձնական փորձս ցույց էր տալիս, որ ուրիշ է տեսականը, ուրիշ՝ գործնականը: — գրեթե համոզված էի, որ Քալին չէր սիրում ինձ, այնուամենայնիվ մեռնում էի նրա համար, չնայելով որ, ամենայն վստահությամբ կարող եմ ասել, ես ամեն բան եմ և եղել եմ միշտ, բայց ոչ երբեք փալաս:

Այսպես թե այնպես, կասկածս մի անգամ առմիշտ փարատելու և անելիքս որոշելու համար կարիք ունեի ստուգելու, ուզում էի ստուգել Քալիի գեպի ինձ տածած զգացումը: Բայց ի՞նչպես ստուգեի, ոչ մի տեղ չէի հանդիպում նրան: գնայի՛ նրանց տուն, նամա՞կ գրեի: ինձ այնտեղից վոնդելուց հետո այդ մասին մտածելն անգամ ավելորդ էի համարում: Մնում էր միայն մի հանա-

պարհ, այն է մի կերպ խոսք դուրս քաշել Կոլյայից, որը դասերը շաբանակելու համար պետք է ամեն օր գար ինձ մոտ: Բայց արդեն անցել էր մի ամբողջ շաբաթ, որ տեղափոխվել էի նոր բնականս, և Կոլյան չկար, չէր գալիս: Չէի հասկանում, արդյոք ի՞նքը չէր ուզում գալ ծովությունից, թե հայրն էր փոշմանել և, հակառակ իր խոստման, այլև չէր ուզում ուղարկել նրան, որպես զի իսպառ կտրի մեր միջն եղած բոլոր հարաբերությունները:

Մի շաբաթը դարձավ երկու շաբաթ, և ահա մի օր տեսնեմ Կոլյան, գրերի պայուսակը ձեռքին, եկավ հարցնելով ներս մտավ ինձ մոտ: Այնպես ուրախացա, որ կարծես հարազատ եղբորս տես:

— Ո՞րտեղ էիր մինչեւ հիմա, ինչո՞ւ չէիր գալիս, հիվանդ խոչի՞ր,— սկսեցի հարցուիփորձ անել:

— Ոչ, հիվանդ չէի, մամաս չէր թողնում գամ:

— Մամա՞ց ինչո՞ւ

— Զգիտեմ:

— Բայց հրեղ եկել ես:

— Պապա ուղարկեց:

— Ուրեմն պապադ ուզում էր, որ գա՞ս

— Այո: Մենակ մամաս չէր ուզում: Այսօր մինչեւ անգամ կովեցին:

— Կովեցի՞ն...

— Այո: Մամաս այնպես շարացած էր, որ գրերս խլեց ձեռքս և բակը շպրտեց: Տեսեք, ալս գրքի կազմը կոտրվել է» իսկ սրանից երեք թերթ պատռվել:

— Իսկ քո՞ւյրդ:

— Քույրս լաց էր լինում:

— Ինչո՞ւ

— Զգիտեմ: Մամաս սաստիկ տնիծում էր նրան:

— Ի՞նչ էր ասում:

— Ես ի՞նչ գիտեմ:

— Իսկ պապա՞ց:

— Պապաս չէ: Վերջը պապաս այնպես բղավեց մամայիս վրա, որ մամաս սուս կացավ և գնաց Վանիշկին ծիծ տալու: Հետո պապան հրամայեց ինձ, որ գրերս հավաքեմ և գամ ձեզ մոտ:

Ինձ համար միանգամայն անսպասելի այդ բաները լսելուց հետո ակամա մտախության մեջ ընկաւ: Խոսք չկա, որ այդ բո-

լորն իմ պատճառով էր,— Քայի մայրը հակառակ էր ինձ, հայրն իմ կողմն էր: Վերջին հանգամանքն անսպասելի նորություն էր ինձ համար:

Այդ օրը իբր թե պարապեցի Կոլյայի հետ. դասի միջոցին հարթերը տալիս էի մեթենայաբար, պատասխանները խոսմ անուշադիր:

«Քույրիկս լաց էր լինում»,— այս խոսքերը դրոշմվել էին ուղեղում և չէին հեռանում այնտեղից: Ու շգիտեմ, երեխայական միամտությամբ արտասանած այդ խոսքերը ցնծությո՞ւն էին պատճառում ինձ, թե խորին թախիծով համակում սիրտս. գիտեմ միայն, որ դեպի Քային տածած կարուտս իր գագաթնակետին հասավ: Կոլյայի ասածներից պարզ էր ինձ համար, որ մայրն իրեն հատուկ լեզվի զորավոր արտահայտություններով հանդիմանություն էր հայտնում աղջկան իմ պատճառով, և աղջիկը լաց էր լինում— արդյոք ինձ սիրելո՞ւց և նրա՞ համար, որ չէր կարող մորը դիմադրել, թե՞ այն պատճառով, որ մոր հանդիմանություններն անարդար էր համարում, որովհետև ինքը չէր սիրում ինձ: Այդ բանը դարձյալ հանելուկ մնաց ինձ համար և նոր մտատանջությունների առիթ դարձավ:

Հետևյալ օրը Կոլյայի հետ պարապելիս, երբ մտածում էի, թե ինչպես անեմ, որ նոր խոսք գործ քաշեմ նրանից Քայի մտական, հանկարծ նա դասն ընդհատեց: և դարձակ ինձ:

— Գիտե՞ք, պարոն, քույրս շատ է դարդ անում:

— Ինչի՞ համար:

— Զեզ համար:

— Վա՛հ...

Այդ բացականչությունն ակամա գուրս թռավ բերանիցս ոչ այնքան նրա համար, որ այդ հայտնությունն անակնկալ աղջեցություն գործեց ինձ վրա, որքան նրա՞ համար, որ իմ կարծած բթամիտ տերտերացու աշակերտս այդ բանը նկատել էր և հարկ համարեց հայտնել ինձ, անշոշտ հետաքրքրված լինելով իմ ու իր բրոշ հարաբերությամբ, որը այնքան աղմուկի առարկա էր դարձել իրենց տանը: Ուզեցի բուռն հետաքրքրությամբ հարցուիրու անել, բայց հանկարծ գույշացա այդ «պարաբրդան» տղայից, որը կարող էր իմ հարցուիրու հասցնել ծնողների ականջը, որոնք առանց այն էլ, ինչպես երեսում էր, զագ օրիշին հասցրել իրենց աղջկան իմ պատճառով: Ուստի սուս-արի, բան-շարթի, կարծես

Քույրը գոյություն չուներ ինձ համար, մինչդեռ իսկապես այդ ցոպեից Քալին գոյություն ունեցավ ինձ համար:

Ուրեմն այլևս կասկած չկար. Քալին սիրում էր ինձ, նա լաց էր լինում, նա դարդ էր անում ինձ համար... Հարկավո՞ր է ասեմ, թե ինչ ահագին երջանկություն էր այդ գիտակցությունն ինձ համար:

## VIII

Կոլյան դարձավ իմ «Կոռունկը» («իշխամ եք— «Կոռունկ, հայոց աշխարհեն խապրիկ մը չունի՞ս»): Այլևս մոռացել էի զգուշանալ այդ «խաբարբզանից» և ամեն օր, նրա դասի եկած ժամանակ, սկսում էի հարցուփորձ անել Քալիի մասին, հարկավ սկսելով հորից, մորից, «գոխտուրից», երեխաներից, «ափանիցի» ընտանիքից, շատ անգամ էլ բոլորովին կողմնակի բաներից: Հարցուփորձ անում էի արտաքին անտարերությամբ, իսկ պատասխանները լսում ներքին լափող հետաքրքրությամբ: Քալիին վերաբերող ամեն մի մանրամասնություն ահագին գյուտի արժեք ուներ ինձ համար:

Կոլյան հազիվ մի ամիս կանոնավորապես գալիս էր դասի, հետո մեկեն դադարեց: Խիստ անհանգստացա. շինի՞ «խաբարբզան» արդեն կատարել էր իր դերը և ծնողներն արգելել էին նրան այլևս գալ ինձ մոտ: Բայց հինգ օրից հետո նրանց ծառան եկավ և ասաց, որ Կոլյան հիվանդ է և դրա համար չի գալիս:

Խոստովանում եմ, այդ բանը ոչ թե տիրեցրեց, այլ ուրախացրեց ինձ, որովհետև այդ գեպքը մի շատ հարմար առիթ էր, որ գնայի նրանց տուն և հիվանդ աշակերտիս այցելելու պատըրվակով վերջապես տեսնեի Քալիին, որի կարոտը սպանում էր ինձ:

Ու նույն օրն եթե երեկոյան գնացի:

Դեռ Քալիինց տանը շմոտեցած՝ նրանց բակից ինչ-որ ճղճոցի և բղավոցի ձայներ լսեցի: Եվ երբ ներս մտա բակը, ակամա կանգ առա ապշած:

Բոլոր կենողները գուրս էին թափվել տներից: Վերևը, պատըրամբում, կանգնած էր Քալիի մայրը, գիծ-կեկելը, և ականջ ծակող ձայնով, վերին աստիճանի արագահոս բառերով ինչ-որ ճղճում էր վրացերեն. ներքելը, բակում, կապայի թերն ուսերին զցած, գլխարկը ճակատից ետ բաշած, կանգնած էր Քալիի հաւ-

րը, Սերգեյ Ավետիչը, և նույնպես ինչ-որ բղավում էր: Երեսում էր, որ մի քիչ «խմած» էր: Մարդ ու կին երկուսն էլ կովում էին միաժամանակ, և նրանց ձայները— մեկինը բարիտոն, մյուսինը կոնտրալտո— խառնվում էին իրար ուժեղ դիապազոնով. կովում էին ո՛ւմ հետ— հայտնի չեր: Սկզբում կարծեցի, թե կովում են բոլոր կենողների հետ, բայց երբ տեսա, որ կենողները հանդիսաւում էին անուն, հասկացա, որ նրանք հանդիսատեսներ էին, «թամաշա» էին անում միայն:

Հետաքրքրված, մոտեցա Սերգեյ Ավետիչին, բարեկեցի և հարցրի ինչ էր պատահել:

— Էլ ինչ ինչ է պատահիլ,— շարունակեց նա բղավել առանց բարես առնելու և ընդունելով ինձ այնպես, որ կարծես թե ամեն օր հանդիպում էինք իրար: — Էս շան վուրթիքն ուզում ին սաղք կոտորի: Սեկին էրեք թաղեցին, երկուսն էլ ասում ին, էսօր ին հոգեվարք դրած: Ախապեր, շիմ ուզում, թող դուս գան էլի: Տունը իմս չէ՞ վահ: Առանց էն էլ հառամ ըլի, քրի՞զ խոմ շին տալի, դուս գնան էլի: Ուզում ին պոլիցով դուս անհիմ: Էս բագումը էսքան երեխեր կան, բաս մեխիկը չի՞ն: Իմ Կոլիս խոր հիվանդացրիք, տո անաստուծներ, ուզում իք սաղ քուրիքիս կոտորի՞ք:

Որովհետև Սերգեյ Ավետիչն իր վերջին խոսքերն ուղղեց այն սենյակի հասցեին, ուր ապրում էր «պիանիցը», ուստի վերջապես հասկացա, որ նրա և կնոջ կոփէն այդ սենյակում ապրողների հետ էր: «Պիանիցի» տան դուռը փակ էր, միակ լուսամուտի վարագույն իշեցրած և այնտեղից ոչ մի պատասխան չէր լսվում, այնպես որ կարելի էր կարծել, թե տանը ոչ ոք չկա:

Մինչդեռ մարդ ու կնոջ բղավոց-ճղճավոցը չէր դադարում: Եվարած կանգնած էի մնացել, չէի իմանում ինչ անեմ: Դրությունս բավական անհամ էր. եկել էի հիվանդ աշակերտիս այցելության, վրաս ուշադրություն դարձնող չկար: Աշքերովս որոնում էի Քալիին, չէր երեսում: Այսպիսի աղմուկի մեջ նրա բացակայությունն ինձ զարմանալի էր թվում:

Զգիտեմ ինչով պիտի վերջանար այդ տարօրինակ տեսարանը, եթե այդ ժամանակ բակի դոնից շմտներ տանտիրոջս բժիշկ որդին: Երբեք ինտելիգենտ մարդ, նա, ըստ երեսյթին, վիրավորվեց այդ գոեհկական ճիշ ու աղաղակներից: Մեղմ նախատական եղանակով մի քանի հորդորներ կարդաց հորը, հանգստացրեց նրան, հետո բարեկեց ինձ— ինչպես թվաց ինձ— բավական սառն կեր-

պով, և նրեքս միասին բարձրացանք պատշգամբ։ Որովհետեւ մայրը պատշգամբում գեռնա շարունակում էր ճղճղոցը, այդ պատճառով որդին ջղայնացած համարյա թե գոռաց նրա վրա, թե ի՞նչ է ամրող բակը գլխին հավաքել։

Գիծ-կեկելն իսկույն լոեց, սակայն— ինձ այդպես թվաց— ոչ թե որդու նկատողության վրա, այլ ինձ անսպասելի կերպով տեսնելուց։ Այնքան գազագած էր, որ, երեք, բակում չէր նկատել ինձ և Հանկարծ տեսնում էր միայն այժմ, երբ իր ամուսնու և որդու հետ կանգնած էի իր առջեւ։ Նայեց գեմքիս այնպիսի մի հայցքով, որով կարծես հարցնում էր։ «սա՞ որտեղից լույս ընկավ»։

Թե՛ այդ կոփին ու դալմաղալը և թե՛ մանավանդ այդ անբարեհած ընդունելությունը տեսնելով, ես արդեն զղացել էի այցելությանս համար. բայց մեկ որ եկել էի, էլ ի՞նչ կարող էի անել։

— Են եկել եմ Կոլյալին տեսնելու, կարելի՞ է, — երեսս պրնդացնելով, վերջապես միշոց ունեցա հայտնելու այցելությանս նըպատակը։

Զգիտեմ ձայնիս վրա, թե ինչ, սենյակներից մեկի դուռը քացվեց և շեմքում երեաց Քալին լացակումած աշխերով։

— Այդ գո՞ւք եք, — ասաց դիմելով ինձ։ — Ա՛խ, Կոլյան շատ հիվանդ է...

Հետո անմիջապես դիմեց եղբորը.

— Սաշա, գեղը բերի՞ր։

Ապա դառնալով ծնողներին, Հանդիմանությամբ նկատեց։

— Դուք էլ հիմա եք ժամանակ գտել կովելու...

Մի բոպեից ամենքս Կոլյալի սենյակումն էինք։ Դիմութերիտ ուներ և, իրեկ վարակիչ հիվանդի, բժիշկը բոլորովին առանձնացրել էր նրան։ Նրեխան պառկած էր սարսափելի տաքության մեջ։ Երեսը կարմիր վարդ էր կտրել և կարծես փքվել, բորբոքված աշքերով, անմիտ հայցքով նայում էր մերթ սրան, մերթ նրան և շաղված կաթի գույն ստացած լեզվի ծայրով լպսում էր շրթունքներ։ Փորձեցի խոսել հետը. խիստ խլացած ձայնով ինչ-որ պատասխաններ տվեց, որոնցից բան չհասկացաւ թժիշկն իմ և հօր օգնությամբ լյապիսով այրեց նրա կոկորդը։ Այդ օպերացիայի ժամանակ մայրը տարօրինակ քաջություն ցույց տվեց, մինչդեռ քույրը, այն ժամանակ երբ ես ձեռքերիս մեջ էի առել հիվանդ երեխայի գլուխը, իսկ հայրը պահում էր ձեռքերը, այնպես էր լալիս, մղկտում, որ կարծես մորթում էին եղբորը։

Խոսք չկա, որ այսպիսի պարագաներում իմ ու Քաղիի տեսակցությունը մի շատ անհամ բան դուրս եկավ։ Նա տարօրինակ կերպով ցրված էր, արտասուրք չէր ցամաքում աշքերից։ Մի ժամից ավելի էր, որ նստած էի նրա հետ հիվանդ եղբոր սենյակում, և այդ բոլոր ժամանակ նա հազիվ մի-երկու անգամ ուշադրություն դարձրեց ինձ, ամբողջովին զբաղված լինելով հիվանդ երեխայի հոգացողությամբ։ Ճիշտ է, եղբոր հիվանդությունը շատ վատանգագործ էր, իսկ Քալին սաստիկ սիրում էր. իր բոլոր եղբայրներին ու քույրերին, բայց մի՛թե... — մտածում էի ես և ավելորդ էի համարում միտք վերջացնեմ, որովհետեւ պարզ տեսնում էի, որ մինչև այժմ ինձ սնել եմ ապարդյուն հուսերով ու սպասելիքներով։

Հիասթափված ու հուսաբեկ դուրս եկա ու մտածում էի՝ ինչ-քան լավ կլիներ շաբաշ. և շաբանակելի ապրել իմ քաղցր երազակներով։

Բայց երկրորդ օրը շղիմացա և դարձյալ գնացի նույն պատրովակով։ Ուզում էի լավ դիտել, լավ ուսումնասիրել Քալիի վարմունքը, որպեսզի վերջնական եղրակացության գամ և բատ այնմ էլ մի անգամ առմիշտ որոշեմ դիրքս։

Այս անգամ Քալին ինձ ընդունեց այնպիսի ոգևորությամբ և այնքան ուրախ, որ սիրու թունդ եկավ. «Ահա՛ վերջապես», ասացի ինքս ինձ։ Բայց... բանից դուրս եկավ, որ նրա այդ ոգերությունն էլ, ուրախությունն էլ ինձ համար չէր, այլ որովհետեւ հիվանդ եղբայրն այդ օրը լավ էր, կրիպիսն անցել էր։

— Երեկակյացեց, որ մեր կենողի երեխաներն էլ լավ են այսօր, — ավելացրեց նա։ — Ճեր գնալուց հետո Սաշան (թժիշկ եղբայրը) գնաց նրանց էլ նայեց։ Գիտեք, նա որ սկսի պրակտիկայով զբաղվել, հրաշքներ կգործի։ Ակսոս, որ ուշ իմացանք, թե չէ նա այն մեկ երեխային էլ չէր թողնի, որ մեռնի։ Ամենից փոքրն էր և այնքան լավի՛կը... եկեք, եկեք Կոլյայի մոտ։

Ու ձեռքից բռնած ներս տարավ հիվանդ աշակերտիս սենյակը, առանց բաշվելու նույնիսկ մոր ներկայությունից, որից այնքան թուր ու մուր էր կրել իմ պատճառով։ Այդ հանգամանքը բավական զարմացրեց ինձ։ Քիչ չզարմացան նաև այն բանից, որ մայրն այս անգամ թթու գեմք ցույց շտվավ ինձ, ինչպես նախորդ երեկոյան, և նույնիսկ սկսեց քաղցր զրոյց։ անել ինձ հետ։ Ի՞նչ էր այդ անսպասելի փոփոխության պատճառը երեկի ա՛յն, — մտա-

ծովականում իր աղջկան և իր աղջիկն էլ շատ էլ խելքահան չի լինում ինձ համար:

Եվ, իսկապես, թե՛ այդ օրը և թե՛ հետագա օրերը, մինչև Կոլյայի լիովին առողջանալը, երբ ես այցելում էի նրանց տուն, Քալիի դեպի ինձ ունեցած վերաբերմունքի մեջ չէի նկատում այնպիսի մի բան, որից կարողանայի եզրակացնել, թե սիրում է ինձ. ինձ հետ նստում, ասում-խոսում էր, ծիծաղում, կատակներ անում ինչպես լավ բարեկամի հետ և միայն այդքան, այնպես որ ամեն անգամ էլ ես հեռանում էի ծանր երկմտանքի և հուսալքում տակ ճնշված:

Հոգեկան այս անտանելի վիճակից դուրս գալու համար առիթներ էի որոնում մի անգամ երես առ երես խոսելու Քալիի հետ, ստուգելու կասկածներս ու ենթադրություններս, բայց ոչ մի կերպ չէր հաջողվում ինձ մենակ մնալ նրա հետ. կամ մայրը, կամ հայրը, կամ բժիշկ-եղբայրը, կամ երեխաները միշտ մեզ մոտ էին լինում:

Այսպես շարունակվեց մինչև այն ժամանակ, երբ Կոլյան լիովին առողջանալուց հետո նորից սկսեց գալ ինձ մոտ դասերի, և ես այլևս առիթ չունեի գնալու նրանց տուն:

Բայց օրվաս դեռ բոլորովին չէի կտրել և մութ կերպով ինչ-որ բանի սպասում էի, մինչև որ ահա թե ինչով վերջացավ այս տրագի-կոմեդիան:

## IX

Մայիսը վերջացել էր: Սկսվել էին ամառային արձակուրդները: Անսովոր տոթ օրեր էին: Մի երեկո գնացել էի Մուշտայիդ մի քիչ զով օդ շնչելու: Այգու հրապարակում շատ քիչ մարդ կար, որովհետեւ օրը հասարակ օր էր և այդ երեկո էլ նվազածուների խումբ չկար: Հրապարակի բոլորքը ծառերի տակ նստարանների վրա նըստած էին կենա ու կունտ կանայք, որոնց առջև խաղում էին նրանց երեխաներն իրենց հատուկ ճիշ ու ծղրտոցով:

Այն միջոցին, երբ ուզում էի անցնել դեպի գետափ, աշքս ընկավ ուստոնդի բաժինը, ուր ինձ համար միանգամայն անսպասելի կերպով տեսա Քալիին իր բժիշկ եղբոր հետ սեղաններից մեկի մոտ նստած: Քալին նկատեց ինձ և հեռվից գլխով բարե արագ:

Մոտեցա, բարեկացի: Հրավիրեցին որ նստեմ: Նկատեցի, որ բժիշկը շատ էլ հաճությամբ ըլնդունեց ինձ. երկի տան մեջ իմ մասին ունեցած խոսակցությունը որոշ աղջեցություն էր գործել այդ կրթված երիտասարդի վրա:

— Էլ չեք գալիս մեզ մոտ, անպատճառ հիվանդ պիտի ունենանք, որ գաք, — ասաց Քալին ծիծաղելով:

Ոչինչ չպատասխանեցի: Ի՞նձ էր միամիտ կարծում, թե իրեն էր միամիտ ձեացնում: Սակայն, ըստ երեսութին, իսկույն գլխի ընկավ, որ իր հարցումն անտեղի էր, մի քիչ շփոթվեց և սկսեց հարցուփորձ անել. ամառս ո՞ւր եմ գնալու, ինչպես է սովորում Կոլյան, կարո՞ղ է քննություն րոնել և այլն:

Մեզանից բավական հեռու մի սեղանի շուրջ բոլորած էին մի խումբ երիտասարդներ, որոնք, ինչպես երեսում էր նրանց կապույտ բլուզներից և կապույտ երիզավոր գլխարկներից, ուսանողներ էին: Նրանք ինչ-որ տաք-տաք վիճաբանության մեջ էին, և նրանց ձայները պարզորոշ լսվում էին հեռվից: Նրանցից մեկը հանկարծ վեր կացավ, արագ քայլերով մոտեցավ մեզ և, դառնալով բժշկին ասաց.

— Սաշա, մի րոպե. մենք այնտեղ լուրջ վիճաբանության մեջ ենք, քո կարծիքն անհրաժեշտ է:

Ու բժշկին վեր կացնելով տեղից, թևանցուկ տարավ իր հետ, նախապես ներողություն խնդրելով մեզնից:

Ես ու Քալին մնացինք մենակ:

Իոպեն հարմար համարելով, վճռեցի հենց այդտեղ ևեթ ստուգել նրա դեպի ինձ տածած զգացումը և մի անգամ առմիշտ վերց տաւ երկմտանքիս: Ու առանց երկար ու բարակ մտածելու, մանավանդ որ վախենում էի, թե եղբայրը կարող է շուտով վերադառնալ և խանգարել, ուղղակի դիմեցի գործին:

— Օրիո՞րդ, ի՞նչ եք կարծում, — ասացի, — ինչո՞ւ չպատասխանեցի ձեր հարցումին, թե ինչու էլ չեմ գալիս ձեր տուն:

Հստ երեսութին, զգաց, թե խոսքս ուր էր տանելու:

— Զգիտեմ, — ասաց նկատելի կերպով շփոթվելով:

— Ի՞նչ եք կարծում, — շարունակեցի ես, — որ գիտենաք, թե մի տեղ անկու և անցանկալի հյուր եք, կշարունակե՞ք գնալ այնտեղ:

Քալին զարմացած նայեց աշքերիս:

— Ո՞վ ասաց ձեզ, թե դուք անկոչ և անցանկալի հյուր եք մեր  
տանը:

— Ամենից առաջ ձեր հայրը:

— Ե՞րբ:

— Երբ որ քաղաքավարի կերպով առաջարկեց ինձ դատար-  
կել իմ սենյակը:

— Եբ սենյակը եղբայրս էր ուզում, որ իր համար հանգիստ  
տեղ ունենալով:

— Շատ բարի, թող այդպես լինի, — ասացի ժպտալով. —  
իսկ ինչո՞ւ ձեր մայրը չէր ուզում, որ Կոլյան գա ինձ մոտ դա-  
սերի և... անիծում էր ձեզ:

Քային կաս-կարմիր կտրեց և աշքերը վայր թռղեց:

— Ո՞վ ասաց ձեզ այդ, — շնչաց նա:

— Դուք այն ասացեք, ճիշտ է այդ թե ոչ:

Ոչինչ շպատասխանեց, միայն գլուխն այնքան խոնարհեց, որ  
գեմքն այլևս չէր երեսում լայնեցր գլխարկի տակից:

— Թող ապահով լինեն ձեր ծնողները, — կարճ լուսվյունից  
հետո ավելացրի ևս շատ հանգիստ կերպով, — երբեք ինձ ու ոքի  
վզովը չեմ փաթթել և երբեք էլ չեմ փաթթել. այդ կողմից ես  
ինքնասիրություն ունեմ և, գուցե, ավելի՝ քան հարկավոր է:  
Ճիշտ է, ես ձեզ... սիրում եմ... Այս առաջին անգամն է, որ պարզ  
կերպով ասում եմ ձեզ... Բայց ինչ նշանակություն ունի միա-  
կողմանի սերը, երբ... չես իմանում փոխադարձը կա՞, թե ոչ...

Լոեցի և իզուր սպասում էի նրա պատասխանին. նստած էր  
ծայրաստիճան շփոթված և չէր իմանում ինչպես անի, որ ես  
չնկատեմ այդ:

— Լսեցեք, օրիորդ, ինչ եմ ասում, — շարունակեցի ևս շատ  
հասարակ տոնով, որպիսզի սիրտ տամ նրան: — Այստեղ քաշվելու,  
շփոթվելու ոչինչ շկա: Դուք նոր չեք ճանաշում ինձ, ինչպես և ես  
ձեզ: Խոսենք առաջի պես մտերմորեն, ընկերաբար: Ես պարզ  
կերպով ասացի ձեզ այն, ինչ որ գուցե համարձակվեի ասել, եթե  
շնչանչեի ձեզ: Ինչպես ուզում եք հասկացեք, իմ բախտը ձեր  
ձեռքին է: Այսքան ժամանակ ես մեկ հուսադրվել եմ, մեկ հուսա-  
հատվել ձեր դեպի ինձ ցույց տված այս կամ այն, իհարկե, ոչ  
դիտավորյալ վերաբերունքից ու միշտ էլ տատանման մեջ եմ  
եղել՝ սիրո՞ւմ եք ինձ, թե ոչ: Կրկնուածեմ — իմ բախտը ձեր ձեռքին  
է և դուք այժմ, հենց այս բայցին այս կամ այն ինուր սրբաւոք է

որոշեք իմ վիճակը, պետք է մի անգամ առմիշտ ասեք ձեր վրձ-  
ուական խոսքը. ասում եմ այժմ, հենց այս բայցին, որովհետև ձեր  
ծնողների շնորհիվ մեր միջև այնպիսի դրություն է ստեղծվել, որ  
մի ուրիշ անգամ հազիվ թե մենք կարողանանք հանդիպել իրար և  
խոսել այս մասին: Լսո՞ւմ եք, օրիորդ, ինչ եմ ասում, — ավելացրի  
ես, տեսնելով, որ նա ձայն ծպուտ չի հանում, այլ միայն, աշքե-  
րը շարունակ վայր թռղած, մերթ կարմրում է, մերթ գույնը գցում  
և սեղանի սփոռոցի ձայրը մեքենայարար փաթթում է մատին ու  
բաց թռղնում:

Ռոպեն ծանր էր. անշուշտ, որքան նրա, նույնքան և ինձ հա-  
մար: Որքան աշխատում էի ինձ հանգիստ պահեմ, այնուամենայ-  
նիվ սիրտս լքվոց էր ընկել: Շտապում էի: Աշխատում էի կարե-  
լուսն շափ շուտով խոսք դուրս քաշել նրանից, քանի եղբայրը չէր  
վերադարձել, այլապես այդ հարմար բռպեն բաց կընկներ ձեռ-  
քից և ես կմնայի նույն անտանելի անորոշ դրության մեջ:

— Օրիորդ, ես սպասում եմ ձեր պատասխանին, — ասացի ես  
թախանձագին: — Խնդրում եմ, աղջում եմ, մի՛ լոեք, մի բան  
ասացեք:

— Ես ի՞նչ կարող եմ ասել, — ասաց վերջապես կամաց, շա-  
րունակ աշքերը խոնարհած:

— Մի խոսք, միայն մի խոսք. սիրո՞ւմ եք ինձ, թե ոչ. այս  
թե ոչ:

Հակառակ սպասածիս, նա իմ այս կտրուկ պահանջի հանդեպ  
ավելի հանգիստ գտնվեց, քան թե առաջ և ասաց հազիվ լսելի  
ձայնով:

— Դուք ինքներդ ասացիք, որ մայրս անիծում էր ինձ...

— Այո՞ւ, և դուք էլ լաց էիք լինում. այդպես չէ՞:

— Այո՞ւ:

— Բայց այդ ես բացատրել եմ նրանով, որ դուք զրպարտու-  
թյուն եք համարել ձեր մոր հանդիմանությունները, որ դուք բոլո-  
րովին այն զգացումը չեք տածում դեպի ինձ, ինչ որ նա է կարծել:  
Այդպես չէ՞:

— Ոչ, բոլորովին այդպես չէ, — եռանդով վրա բերեց նա,  
առաջին անգամ նայելով ինձ համարձակ: — Ես լաց էի լինում նրա՝  
համար, որ մայրս շատ վատ լեզու էր բանեցնում ձեր մասին: Իսկ  
ես... ես չէի կարող այդ սառնասրտությամբ լսել...

— Որովհետև դուք շատ բարի եք, որովհետև դուք առհասա-

բակ ոչ մի վատ խոսք չեք կարող սառնասրտությամբ լսել, լինի  
այդ վատ խոսքն իմ մասին, թե...

Քալին մինչև անգամ զայրացած ոտք խփեց գետնին:

— Ո՞չ, — ասաց, — որովհետեւ... վերջապես ինչ եք ուզում ինձ-  
նից... որ ես է՞լ խոստովանեմ, թե...

Խոսքը շվերջացրեց և արագ դարձավ իր աթոռի վրա, որ գեմ-  
քը ծածկի ինձնից, իսկ այդ դեմքն ամբողջովին կաս-կարմիր  
կտրեց:

Բայց հարկ էլ չկար, որ վերջացներ ասելիքը. ինձ համար այն  
էլ բավական էր, որ ասաց. և խելացնոր ուրախությունից քիչ էր  
մնում շնչառապ լինելի: Վեր թուա, ուզում էի առնեմ ձեռքը և  
ծածկեմ խենթ համբուլներով, բայց հանկարծ հիշելով, թե որ-  
տեղ եմ, նորից նստեցի և այս անգամ գողի վախկոտությամբ նա-  
յեցի շուրջս, առավելապես այն կողմը, ուր նստած էր Քալիի եղ-  
բայրը իր ուսանող ընկերների հետ, ըստ երեսութիւն տաք վիճա-  
քանության բռնված:

Բավական երկար ժամանակ լուս էինք, ես էլ, Քալին էլ Աշ-  
քերս անուշաղիր և աննպատակ հածում էի շուրջս, առանց որևէ  
բան տեսնելու և չէի վստահանում նայել Քալիին. զգում էի, որ  
եթե նայեմ, չեմ կարող տիրապետել ինձ և այնպիսի մի խելա-  
ցնոր բան կանեմ, որ թուլատրելի չի կարող լինել:

Այնուհետև, մի փոքր որ ինքս ինձ հավաքեցի, հարցրի կա-  
մաց, կարծես թաքուն.

— «Վերք Հայաստանի»-ն կարդում եք:

— Վերջացրի, — նույնպես կամաց պատասխանեց նա և կարճ  
լորությունից հետո հարցրեց ժպտալով. — իսկ իմ թաշկինա՞կը...  
Պատասխանելու տեղ, նույնպես ժպտալով, ծոցից հանեցի նրա  
նվիրած թաշկինակը, որ պահում էի մաքուր թղթի մեջ փաթաթած,  
առանց բանեցնելու, ցույց տվի և դարձյալ ծոցս դրի:

— Մեր տանը ոչ ոք չգիտե. — ասաց, — գիշերներն եմ կարել,  
երբ որ ամենքը քնած էին:

— Վախենո՞ւմ էիք:

— Մայրս շատ խիստ կին է. որ իմանար ձեզ համար եմ կա-  
րում, կսպաներ ինձ:

Թեև այդ բանը նորություն չէր ինձ համար, բայց այդ բո-  
պեին, հոգեկան այն վերասլաց արամագրության մեջ, որի ժամա-  
պեին ամեն ինչ մոռացել էի, Քալիի միամտորեն արած այդ խոս-  
նակ ամեն ինչ մոռացել էի,

տովանությունն եկավ սուր ասեղի պես ծակելու սիրտս: Ու անձ-  
նասիրությունն պոշը ոտնակոխ եղած թունավոր օձի պես նորից  
ծառս ելավ իմ մեջ:

— Ես գիտեմ, որ ձեր մայրը և վերջերը ձեր հայրն էլ լավ  
աշքով չէին նայում ինձ, — կարճ լորությունից հետո ասացի ես  
կարելուն շափ հանգիստ. — բայց թե ո՞ր մեղքիս համար, այդ ես  
մինչև այժմ էլ չեմ կարողանում հասկանալ: Գուցե գուք կարո-  
ղանաք բացատրել:

— Ես էլ չեմ հասկանում, — ասաց նա կամաց, նորից գլուխը  
կախելով և, ըստ երեսութիւն, զզալով, որ միամտորեն այդպիսի  
խոստովանություն արավ, որովհետև տեսավ, որ տրամադրու-  
թյունս հանկարծ փոխվեց իր վերջին խոսքերից հետո:

— Ես միայն մի բան եմ ենթադրում և կարծում եմ, որ չեմ  
ախալզում, — շարունակեցի ես: — Զեր ծնողներն, իհարկե, տես-  
նում էին, որ մենք շատ էինք մոտեցել իրար և երեխ կարծում են  
եղել, թե այդպես որ շարունակվի, մի օր վեր կկենանք և կփախ-  
շենք իրար հետ, առանց իրենց կամքը հարցնելու հհարկե, եթե  
ես մի խեղն ու կրակ, մի անտուն-անտեր վարժապետ լինեի, այլ  
մի հարուստ օջախի որդի, մի ասենք, փաստաբան, մի թժիշկ, մի  
ինժեներ, տեխնիկ, կամ հենց թեկուզ մի տերտերացու, որը վաղը  
կարող է հարուստ ծուխերի տեր դառնալ, նրանք երկու ձեռքով  
կրոնեին փեշիցու, բայց որովհետև ես, ինչպես ասացի, մի խեղն  
վարժապետից ավելի բան չեմ, ուստի արժանի չէի լինի իրենց  
փեսա լինելու: Դուք ի՞նչ եք կարծում, այդպես չէ:

Քալին ոչինչ շպատասխանեց. գլուխը կախ, մատներով շա-  
րունակ ոլորում էր սփոռոցի մայրը և բաց թողնում:

— Բայց թողնենք ձեր ծնողներին, — շարունակեցի ես, —  
նրանք տգետ մարդիկ են, ուրիշ կարծիք չեն կարող ունենալ մի  
վարժապետի մասին, և ես ամենակին չեմ նեղանում նրանցից: Թող  
ինչ ուզում են՝ կարծեն, նրանց կարծիքը ոչ մի նշանակություն  
չունի ինձ համար: Ինձ հետաքրքրողն այս խնդրում ձեր կարծիքն  
է, վճառկան դեղ է պատկանում և դուք, իբրև կրթված աղ-  
ջիկ, պետք է անկախ դիրք բռնեք, նույնիսկ հակառակ ձեր ծնող-  
ների կամքին, որովհետև այստեղ խնդիրը որքան ինձ, նույնքան  
և ձեզ, ձեր ամբողջ ապագա կյանքին է վերաբերում: Ասելս այն  
է, որ... օրիորդ, խնդիրն ես զնում եմ պարզ և շեշտակի, ասացեք,  
կուզե՞ք իմ կինս լինել, թե ոչ:

Հարցումս, ըստ երկույթին, այնքան անսպասելի էր նրա համար, որ մի րոպե ծայրաստիճան ապշանքով նայում էր ինձ պառանց պատասխանելու։ Հետո, երբ հարցումս կրկնեցի, նա տանցանքով դեմքը ըրջեց ինձնից։

— Խաղողում եմ, — ասաց Հազիկը լսելի ձայնով, — ինձեմց  
ոչինչ մի պահանջեք:

— Ապա ումի՞ց պահանջեմ, — Հարցրի:

ՄԱՍՆԻԿԻ ՀԱՅ

Առաջնային հասավ տպշանքով նայելու նրան:

— Այժմ չսրբը իսու աշակը է և անհաջող է առաջ գալ ամամայի մեր  
— Բայց դուք խո գիտե՞ք, որ նրանք չեն համաձայնի մեր  
ամուսնությանը։ Հը՞, օրիորդ, լսո՞ւմ եք ինչ եմ ասում, — Համա-  
ռորեն կրկնեցի ես, տեսնելով, որ գլուխը կախ։ Չի ուզում պա-  
տասխանել։ — Խո գիտեք, որ նրանք չեն համաձայնի. այն ժամա-  
նակ ի՞նչ կանեք։

— Դե ես ի՞նչ կարող եմ անել, — Համարյա լացագին ՀՀը պատճենաբառ է:

— Դուք փալաս եք ուրեմն, — զուրս թռավ բերասից և զայրույթի հանկարծական բռնկումով, ինչու ինձ կորցրած, բռունքը այնպես պինդ զարկեցի սեղանին, որ վրան դարսած շիշն ու բաժակները խաղացին զրնգգրն գալուվ:

Քաղաքացին կամ պատճենահանում է առաջ այս գործությունը: Այս գործությունը կամ պատճենահանում է առաջ այս գործությունը:

Հղղացր, բայց արդեւ ոչ է, ու ուշագրի կատարելապես շէի ուշաբերվել, անհնեմ Քալիի  
Ու երբ զեռ կատարելապես շէի ուշաբերվել, անհնեմ Քալիի  
նղրայր իր ընկերների հետ կանգնած է մեզ մոտ, շեմ իմանում  
զարմացած թէ վախեցած, փոխն ի փոխ նայում է մեզ և ինչ-որ  
բան է հարցնում մերթ քրոջը, մերթ ինձ զիմելով, իսկ ես կանգ-  
նած եմ նրա առջև հանցավոր երեխայի պես միանգամայն ամո-  
ֆահառ և նժամատացած ու խոսք շեմ գտնում պատասխանելու:

Այդ դրությամբ էլ թողի ու հեռացա: Կարծես մի շղարը էր իշել աշխերիս կամ շուրջս մի թանձր մշուշ էր պատել, որի միջով անցնում էի ու ոչինչ չէի տեսնում: Գնում էի ու չէի խմանում — ուրի Անզուսպ, խելացնոր զարմանքին պիտակցությունը րոպի առ րոպի, զարցրկան առ վայրիյան շիկացած երգաթի պիս շամփունը էր

սղեղս, և այդ միջոցին ի՞նչ չէի տա, միայն թե այդ գիտակցությունը շունենայ:

Այդ գիշեր՝ իմ քունը քուն չէր, այլ մի կատարյալ մղձավանց, ուր անդեմ ու մշուշապատ ուրվականների պես խառնվում էին իրար այդու մեջ Քալին, նրա եղբայրը, սրա ընկերները, սեղանների մոտ հառու-մոտիկ նստած մարդիկ, սրանք բոլորը միշասին, իսկ ես մեն-մենակ սրանց բոլորի մեջտեղը իմ ծայրաստիճան արգահատելի դիրքով, բոլորի հետաքրքրության և զարմանքի առարկան...

Հետեւալ օրը ես ուրիշ ավելի լավ բան չգտա անելու, եթե ոչ  
այն, որ հետեւալ նամակը գրեցի Քալիին ուղարկելու.

«ՕՐԻՆԱԴ»

Ես երբեք չպիտի հանգստանամ, մինչև որ իմանամ, թե դուք ներում եք իմ երեկվա խելացնոր վարմունքը («խելացնոր» բառը ինչ զորավոր, ինչ վիրավորական բառով ուղղում եք փոխարինեցք, ես այդ ընդունում եմ): Խակ եթե շներեք, շեմ իմանում, ճրշմարիտ, ինչ կապտահի ինձ: Ես տանջվում եմ, ես հուսահատված եմ: Երեկվա վարմունքիս գիտակցությունը խենթացնում է ինձ: Զեր հրեշտակային ներողամտությունը միայն հանգստություն կրերի տանջված ուղեղիս և հոգու: Անհամբեր սպասում եմ ձեր պատասխանին»:

Այս նամակը մտադիր էի ուղարկել Կողյայի ձեռքով Քրոջը հանձնելու համար։ Երկյուղ չունեի, որ նամակս կարող էր ընկնծել Քալիի ծնողների ձեռքը, որոնցից անշուշտ ծածուկ մնացած չ'այդ- տի լիներ Մուշտայիդում պատահած միջադեպը, քանի որ այդ միջադեպին ներկա և վկա էր նրա եղբայրը. թեև այս էլ էի կար- ծում, որ «աղա դոկտորը», իբրև ինտելիգենց մարդ, իր տպետ ծնողներին կարող էր ոչինչ հայտնած լինել. իսկ քույրը խո այն- քան հիմար չեր, որ ծնողներին պատմած լիներ, թե ինչ խայտա- ռակ գրության մեջ էի գրել ևս իրեն հասարակական այգում։ Բայց նամակս Քալիի ծնողների ձեռքն ընկնելոց ևս չեի վախենում գոլ- խավորապես այն պատճառով, որ նրա մեջ, իմ կարժիքով, այն- պիսի բան չէի գրել, որ նրանց տեսակետից դատապարտելի լի- ներ. բացի այդ, Քալիի ներողամտությունը ստանալուց հետո, որի համար ոչ մի տարակույս չունեի, հաստատապես վճռել էի երեսս պնդացննմ, գնամ ուղղակի նրա ծնողների մոտ և խնդրեմ նրանց աղջկա ձեռքը, թեև յեր հարաբերությունների ամբողջ ընթացքից

շատ պարզ էր ինձ համար, որ ոչ մի հաջողություն չպիտի ունեցաւ նամ: Վճիռս խեղդվող մարդու հուսահատական վճիռ էր. կամ այս, կամ այն, դրանով գոնե միանգամից կորոշվեր իմ մշտատե երերուն վիճակը և անելիքը:

Նամակս գրել ծրաբել էի և սպասում էի Կոլյային, բայց նա այդ օրը ոչ սովորական ժամին և ոչ հետեւալ ժամերին շերեւաց:

Այդ արդեն առաջին վատ նշանն էր, և ես խիստ տատանման մեջ ընկա— նամակս ուղարկեի՞ թե ոչ: «Է՛ս, ինչ ուղում է պատահի,— ասացի ինքս ինձ,— եղածից խո ավելի վատ բան չի՝ պատահի», և նամակս ուղարկեցի քաղաքային փոստով:

Բայց պատահեց եղածից ոչ միայն ավելի և շատ ավելի վատ բան, այլև այնպիսի մի բան, որ այն ժամանակվա իմ անտանելի դրության մեջ բնավ չէի նախատեսել: Այդ բանն այժմ ինձ մի շատ զվարճալի տրագի-կոմեդիա է թվում, բայց այն ժամանակ քիչ մնաց ինձ խելագարության հասցներ:

Կարճ խոսքերով պատմեմ իրողությունը:

Նամակս ուղարկելուց հետո հետեւալ օրը տանից դուրս չելաց րոպե առ րոպե սպասում էի, թե ահա որտեղ որ է, կմտնի կամ Կոլյան, կամ փոստային ցրիւը և կրերի Քալիի պատասխանը: Բայց որքան եղավ զարմանքս, երբ Կոլյայի կամ փոստային ցրիւը տեղ ահագին աղմուկով սենյակս մտավ, ոչ, գնդակի պես ներս նետվեց Քալիի մայրը— «գիծ-կեկելը» այնպես գազազած, որ վախից տեղն ու տեղս քարացաւ: Հեռում էր. քրտինքը կոխել էր երեսը. երեռում էր, որ վազելով էր եկել: Ու սկսեց իսկույն, սկսեց ոտը շեմքին դրած հենց առաջին վայրկյանից: Առաջարան չկար, սկսեց ուղղակի վերջարանից, նախ նամակս շպրտեց երեսիս, հետո մի խիստ երկարատես ու փրփրալից ճառ արտասանեց, համեմված իր կովարար լեզվին հատուկ բավական զորավոր ածականներով և սպառնալիքներով իմ հասցեին: Դա ճառ չէր, սովորական խոսակցական լեզու չէր, այլ իրար վրա կուտակված, խելագար վագրով իրար գլխից թռչող բառերի մի անվերջ և անընդմեջ շարահյուսություն՝ առանց ստորակետների և վերջակետների: Չնայելով ողբակի դրությանս, զարմանում էի, թե ո՞րտեղից էր բխում այդ տիպիկ քաղքենի կնոջ մեջ այդ հարուստ բառապաշարը:

Որքան կարողացա հասկանալ, նրա ցամանալից ճառն այն մասին էր, թե ի՞նչպես ես, քննուու «ուշիտելս», համարձակվում էի աշք ունենալ իրենց աղջկա վրա, Մուշտայիդում սկանդալ սարքել

նրա գլխին և այդ բանից հետո դեռ պիրահարական նամակ էլ գրել նրան: Եվ այս ամեն մի մեղադրականին անմիջապես կցում էր՝ «շե քեցիանո, շե կոռ մամաձաղլու» (սղու քոսուտ, դու կոռ շանորդի):

Այսպես, զորս դու պատվիրեցար, մի լավ ներկեց ինձ, առանց թողնելու, որ մի բառ անգամ արտասանեմ, վերջը ինչ-որ սպառնալիքներ կարդաց ու թողեց հեռացավ, գլխի աղլուխն ուղղելով:

Այստեղ ես կարող էի վերջակետ դնել, եթե ինձ վիճակված վիճեր հետագայում նորից հանդիպելու Քալիին այնպիսի պարագայում, որ այն ժամանակ ինձ ուղղակի խենթացրեց, բայց որի հետ այժմ վաղուց հաշտվել եմ, ինչպես մարդ ժամանակի ընթացքում կհաշտվի իրեն շատ սիրելի հարազատի բնական մահվան հետ:

Անհրաժեշտ եմ համարում այդ հանդիպման մասին գրել պատմությունս լրացնելու համար:

## X

Վեց տարի էր անցել:

Այդ վեց տարվա ընթացքում հայ ուսուցչի անհաստատ վիճակը թիֆլիսից ինձ դարձյալ գավառներն էր նետել:

Ամառվա արձակուրդներին եկել էի Թիֆլիս, թեմական տեսչի մոտ՝ իմ և հոգաբարձության միջև ոռնկիս վերաբերմամբ ծագած մի վեճի համար:

Մի անգամ փողոցով անցնելիս հանդիպեցի Քալիենց բակում ապրող այն կնոջը, որին ազատել էի իր արբեցող մարդու գազանային ճիրաններից, բայց որի պատճառով ինքս էլ դագանակի հարված էի ստացել ծոծրակիս, նույն այդ գազան մարդու ծեռքով: Այդ վեց տարվա ընթացքում այնքան էր փոխվել, որ հազիվ ճանաչեցի և եթե ինքը չկանգներ չբարեն, կթողների կանցնեի. ավելի կմախքացած, ավելի կորացած, այժմ ուղղակի պառավի էր նմանվում իր սե, հնամաշ հագուստի մեջ:

— Այդ դո՞ւք եք, տիկին: Ինչքա՞ն փոխվել եք:

— Ե՛ս, եղբայր, — հառաջեց նա, — ինչ որ ես կրեցի իմ մարդու ծեռքից ամբողջ տասնհինգ տարի...:

— Հիմա խելոքացե՞լ է, էլ չի՞ խմում, չի՞ ծեծում: Նորից հառաջեց:

- Կա՞, որ խմի, ծեծի...
- Խնչպե՞ս թե...
- Մեռավ:
- Մեռա՞վ... ի՞նչ եք ասում: Ե՞րբ:
- Այս երկրորդ տարին է:

Զայնը դողաց. առանց շտափելու գրանից հանեց թաշկինակը և սեղմեց ալքերին:

Ապշեցի: Մի՞թե այն գազանի համար էր արտասվում:

— Մի զարմանաք,— ասաց կերկերուն ձայնով, կարծես մտքինս գուշակելով: — Նա այնքան էլ վատ մարդ չէր, բայց անտեր մնա գինին... Եթե շատ էլ որ վատ մարդ լիներ, ինչ ուզում է լինի, էլի իմ ամուսինն էր, իմ թագն ու պատկը...

Ինձ մնում էր միայն սւսերս թոթվել տարակուսանքով այդ նահատակ հայ կնոջ առասպելական անհիշարության վրա:

Հետագա հարցուփորձից իմացա, որ «պիանիցը» մեռել էր սպիտակ տենդից:

— Էլի այն տա՞նն եք ապրում, — շարունակեցի հարցուփորձը, որպեսզի կողմնակի կերպով մի խոսք դուրս քաշեմ թալիի մասին:

— Ոչ: Ամուսնում մահից հետո դուրս արին, որովհետեւ սենյակի վարձը չէի կարողանում վճարել. Դե ևս հիվանդ եմ, ինչքան էլ շարշարվում եմ, սրա-նրա համար լվացք եմ անում, թոկ եմ գզում, տոպրակներ կարում, էլի հազիվ եմ կարողանում կես կուշտ, կես տկլոր պահել երեխաներիս, ո՞ւր մնաց թե կարողանայի ամսական տասը ուուրի սենյակի վարձ տալ: Շատ, շատ վատ մարդ էր մեր տան տերը, իսկ նրա կինը խո... գիտեք էլի, ամեն օր կոիվ ու զալմաղալ էր մեր բակում նրա պատճառով, երբեմն այնքան դատարկ բանի համար, որ մարդ զարմանում էր:

— Իսկ նրանց աղջի՞կը, — շկարողացա դիմանալ և հարցրի ես:

— Թալի՞ն: Վայ, ես նրա հոգուն մեռնեմ. նա աղջիկ չէ, նա հրեշտակ է: Եվ ես զարմանում եմ, մի՞թե կարող էր այնպիսի մի հոր ու մորից այդպիսի մի հրեշտակ ծնվել: Նա որ լիներ, մեզ վաղուց էին դուրս շպրտել այն տանից իմ մարդու պատճառով, նա էր, որ ինձ մխիթարում էր և օգնում ինչով որ կարողանում էր, ծնողներից ծածուկ:

Ուզում էի հարցնեմ ամուսնացա՞ծ է, — լեզու չէր զորում:

Վախենում էի դրական պատասխան տարւ. Բայց նա, կարժես մըտքին գուշակելով, ասաց.

— Ափսո՞ս, հազար ափսոս, որ իրեն արժանի մարդու շտվին. բոլորովին տգետ, պառավ, համարյա իր հոր տարիքի այրի մարդ է, այնպիս որ մի կին արդեն թաղել է: Բայց ասում են, շատ հարուստ է, Կախեթում ահագին այգիներ ունի, գինու վաճառքով է զրադկում:

Առժամանակ կանգնած էի շանթահար. ականջներիս չէի հավատում. ամեն բան կսպասեի թալիից, բայց այդպիսի բան...

— Եվ թալին համաձայնե՞ց այդպիսի մարդու կինը լինել, — բացականչեցի ես:

— Ի՞նչ կարող էր անել խեղճ աղջիկն այնպիսի հոր ու մոր ձեռքին: Նշանված ժամանակ քանի՛ անգամ եմ տեսել նրան տիսուր, արտասուրն աշքերին...

Էլ բան շնարցրի, թողի ու փախա. սարսափում էի ուրիշ մանրամասնություններ լսեմ: Արդեն այն էլ, ինչ որ իմացա, քիչ էր մնում ինձ խելքահան աներ:

Տգետ, պառավ, գինեվաճառ... այդ բառերը եկան մեկը մյուսի ետևից շիկացած շամփուրների պես ցցվելու ուղեղիս մեջ, որպեսզի այլևս չհեռանան այնտեղից: Գինեվաճառի այդ տիպը ինձ շտալավ ծանոթ էր Թիֆլիսի Շիրաշխանա կոչված այն զառիվայր փողոցից, ուր կենարոնացած են Կախեթի գինու խանութներն ու պահեստները՝ լիքը գինու հսկայական տակառներով և ոսմբերով: Վեց տարի առաջ Հավլարարի դպրոցից դասերս ավարտելուց հետո տուն դառնալիս ես համարյա թե ամեն օր տեսնում էի այդ տիպը: Իր ոսմբի պես ուսուցիկ փորով, որի վրա արծաթի գոտին շտեղավորվելու պատճառով թուել էր դեպի կուրծքը, մեկի տեղ եռածալ կզակով, զուռնաշու պես փքած կարմիր թշերով և գոմշի վզով, որի մսերը ծալ-ծալ նստել էին ուսերին ու վզին, նա նստած էր լինում իր խանութի առջև քահրուբարի տեր-ողորմյան ձեռքին և ճարպակալ աշքերով նայում էր իր այդ օրվա ճաշին: Այդ ճաշը պատրաստվում էր հենց այդտեղ, խանութի առջև, փողոցում. դա ոչխարի ամենաընտիր, ամենաճարպոտ մսի խորվածն է, որի շամփուրները մանզալի առջև պատճ շուռ ու մուռ էր տալիս նրա գործակատարը և որի ճարպահուտն ու ծովիր բռնել էր ամբողջ փողոցը:

Եվ թալին այդպիսի մարդու կի՞նն էր զառել...

Որ ասեմ թե դեռևս սիրում էի Քալիին— չէ. սերս կամաց-կամաց սառել էր այն օրից, երբ հույսս միանգամայն կտրեցի նրանից: Այդ՝ ինձ համար պատմական այն օրն էր, երբ նրա մայրը նկավ ինձ մոտ և քիչ մնաց ծվիկ-ծվիկ աներ ինձ, որ համարձակվել էի աշք բռնել իրենց աղջկա վրա: Ուրեմն նրա ամուսնության լուրն առնելիս ինձ այդպես սաստիկ ազդողն այն չէր, որ այժմ Քալին արդեն հաստատապես և վերջնականապես կորած էր ինձ համար, այլ այն, որ ես միանգամից թափանցեցի իրերի դրությունը: Իսկ իրերի այդ դրությունը հետեւյալ կերպով էր ներկայանում ինձ.— Քալին, լավ թե վատ, միջնակարգ կրթություն ըստացած, կուլտուրայի շավլի վրա դրված ինտելիգենտ աղջիկ էր: Քիչ թե շատ հետաքրքրվում էր կամ գոնե սկսել էր հետաքրքրվել գրականությամբ, հասարակական խնդիրներով: Եվ հանկարծ այդպիսի մի աղջիկ կին էր զարձել մի պառավ, տգետ գինեվաճառի, որի ուշքն ու միտքն անշուշտ իր տողած փորից և փողի սնդուկից դենք չի տարածվում: Ի՞նչ զարհուրելի կենակցություն պիտի լիներ նորատի, կենսուրախ, թուլուն մի աղջկա և կյանքի ամրող հմայքը կորցրած, բայց անշուշտ վավաշոտ մի ծերունու միջնեւ հնչի՞ մասին պիտի խոսեին նրանք իրար հետ, ինչպես պիտի համակերպին իրենց հասկացողությունները, իրենց հայացքները, իրենց զգացումները, ճաշակը, հակումները... Կարելի բա՞ն էր միթե միացնել երկու հակառակ բեկոնները: Կարելի բա՞ն էր միթե նորաբողոք ծաղիկը տնկել հոտած, մգլած ճաճճի մեջ...

Որ այդ ամուսնության մեջ մեղավոր էին Քալիի ծնողները, որ նրա կամքի և զգացումների վրա ամենաանխիղն, ամենաբիրտ բռնություն էր կատարված ծնողների կողմից, այդ լույսի պես պարզ էր ինձ համար: բայց ինձ վերին աստիճանի զարմացնում էր այն հանգամանքը, թե մի՞թե Քալիի մեջ չկար ինքնուրույնուաթյան, ազատասիրության մի կայծ անգամ, որ դիմադրեր իր տգետ՝ անհասկացող ծնողների ստիպմունքին: Հապա էլ ի՞նչ բանի էր պետք նրա ստացած կրթությունը, ուսումը: Իսկ չէ՞ որ ուսման, կրթության ուժն ու զորությունը հենց այն է, որ մարդուն գիտակից է դարձնում, նրա մեջ ինքնուրույնություն է զարթեցնում, բարոյապես ինքն իբր տերն է քարձնուամ: Եթան: Նա կամքի այնքան ուժ շունեցավ, որ դիմադրեր ծնողներին իմ վերաբերմամբ, թեև անտարբեր չէր դեպի ինձ, գուցե մասամբ և վախեցավ այն բանից, որ մի թափառական շքավոր ուսուցչի կին լինելը շատ էլ վարդա-

գույն հեռանկարներ չէր բանալու իր առջև: բայց մի՞թե կամքի այնքան ուժ էլ շունեցավ, որ բացեիրաց մերժեր հենց թեկուզ միմիայն տարիքով իրեն միանգամայն անհամապատասխան մարդու ձեռքը, ինչան էլ որ այդ մարդը հարուստ լիներ: Դրա համար խո կախաղաց չէի՞ն հանի նրան:

Ուրեմն ճիշտ էր նրա երեսին շպրտած իմ խոսքը:— Նա փալաս էր, կամքից, անհատականության, ազատասիրության զգացումից զուրկ մի արարած, մի խոսքով— քաղքենի հայ ընտանիքի մեջ մեծացած տիպիկ մի աղջիկ, որի մեջ ուսումը, կրթությունն ամեն բան փոխում է, բացի ստրկական ոգուց: Եթե այդ ստրկական ատելի ոգին մոր կաթի հետ չէր ծծվել և արմատացել նրա մեջ, հապա էլ ո՞ր դեպքում պիտի արտահայտվեր, եթե ոչ ամուսնության խնդրում,— մի խնդիր, որը ոչ միայն իրեն՝ ամուսնացողի, այլև իր ամրող հետագա սերնդի բախտի հիմքն է զնում: Խո չէ՞ր կարելի ընդունել, թե Քալին այդ չէր հասկանում իր ձեռքը տգետ, պառավ գինեվաճառին տալիս:

Եթե անգամ նա չէր հասկանում, եթե չէին հասկանում նրա ծնողները, գոնե նրա բարձրագույն կրթության տերն էսկուզապեղբայրը պիտի հասկանար և քրոջ սիրույն ետ կասեցներ ծնողներին իրենց կործանարար քայլից: Կամ գուցե քաղքենության ծոցից ելած այդ համալսարանական ինտելիգենտի մեջ ևս հավիտենական մի անեծքով պինդ նստած էր քաղքենին՝ աշքը տընկած իր հարուստ փեսայի քսակին...

Ո՞վ գիտե՞ս: Սրանք միայն ենթադրություննե՞ր ասեմ, թե տրամաբանական հետեւություններ էին, որ անում էի ես կատարված փաստից:

Այժմ ես արհամարձում էի Քալիին էլ, նրա եղբորն էլ: Նրանց ծնողների մասին խո էլ չեմ խոսում: Եթե դեպի Քալին տածած նախկին սիրույս ավերակներից մի-մի բեկոր դեռևս մնացել էին սրտիս խորքում թաղված, երբեմն-երբեմն միայն մխալով, դրանք էլ միանգամից փշրվեցին փոշի դարձան:

Բայց ինչպես երեսում էր, հիասթափությունս միայն սրանով շպիտի վերջանար: Ինձ վիճակված էր անձամբ ականատես լինելու բնական երեսովի տրամաբանական հետեւությանը:

Ահա թե ինչպես:

Թիֆլիսում այդ ամառ ես իշել էի իմ մի լավ բարեկամի մոտ Հավլաբարում։

Հավլաբարն ընդհանրապես Թիֆլիսի կեղտուտ քաղաքամասներից մեկն է, իսկ բարեկամս այդ քաղաքամասի ամենաետ ընկած և ամենակեղտուտ փողոցներից մեկումն էր ապրում։ Հունիս ամիսն էր, եղանակը տոթ. երեկոյան դեմ նստած էինք գետի փողոց նայող պատշգամբում, թեյ էինք անուշ անում և վայելում ամեն կողմից իշող գարշահոտությունը։ Ներքն՝ կիսախարիսուլ, տափակ կտուրով մի տան առջև, փողոցի համարյա թե մեշտեղում, զանազան աղտադություններով ծածկված մերկ գետնի վրա, մի-մի սեպ քար տակներն առած, նստուած էին մի խումբ պառավ և շահել կանայք, ոմանք ուղղակի բորիկ ոտներով և գլխների փաթթանների ծայրերը ետ արած, որ մի քիչ հով փշի բրտնակոխ երեսներին։ Տոթը դուրս էր քշել նրանց իրենց խոնավ ու մութ տնակներից և նրանք եկել հավաքվել էին մեկտեղ իրենց առօրյա դարդերից խոսելու և բամբասանքների տոպրակը բանալու։ Նրանց շուրջը ականջ խլացնող ճիշ ու ծզրտոցով վազվզում էին բազմաթիվ երեխաններ, ոմանց հագին միայն մի շապիկ և ոմանց հագին միայն մի վարտիք։ Ինչպես երեսում էր, այդ երեխանները շատ էին խանգարում կանանց՝ իրենց բամբասանքները հանգիստ շարունակելու և նրանք անեծքակոխ անելով շարունակ քշում էին իրենց մատից այդ շարաձնիներին։ Զարաձնիները մի րոպե կորչում էին փողոցի այս կամ այն ծայրը և նորից ճիշ ու ծզրտոցով գալիս էին իրենց աղմկալի խաղը շարունակելու նրանց շուրջը։ Կանանցից մեկը, որ, ինչպես երեսում էր, ամենից շղայինը և անհամբերատարն էր, հանկարծ վեր թռավ տեղից, վագեց բռնեց երեխաններից ամենաշարաձնին և սկսեց տուր թե կտաս նրա մերկ հետուքին՝ այնքան կատաղի կերպով, որ շրմփոցի ձայնը մեզ էր հասնում։ Երեխան երկար ժամանակ խլպտում էր նրա ձեռքին, մինչեւ որ կարսպավ դուրս պրծնել և լաց լինելով փախավ։ Կինը, սիրած հոգացած, եկավ նստեց իր տեղը, շարունակելով իր անեծքները երեխանների և ետ գցողներից հացեին։ Սեծված երեխայի ընկերներն ու ընկերուհիները հենց սկզբից ցրիվ էին եկել, անհետացել։

Փողոցը հազիվ մի քիչ հանգստացել էր շարաձնիների ճիշ ու ծզրտոցից, մեկ էլ տեսնեմ որտեղից որտեղ հանդես նկավ մի նոր կին, ինչպես երեսում էր, ծեծված երեխայի մայրը։ Նրա ձայնը գեռաւ և հեռվից էր լսվում։ Գալիս էր կրակ կտրած աշխերով։ Ծկավ ու սկսեց։

Բանավիճը կամ, ավելի լավ է ասեմ, բառուվեճը սկզբում ծեծված երեխայի մոր և նրա երեխային ծեծող կնոջ միջև էր Ասենց դա ավելի շուտ կտաղի մրցություն էր ամենաընտիր և մեծ տաղանդով շարահյուսված անեծքների, որոնց մեջ նույնիսկ հազվագեց չէին տղամարդկանց բերնից ելնող և նրանց միայն սազական անհամեստ հայհոյանքների։ Հետո մրցությանը սկսեցին մասնակցել և ուրիշները։ Մեկը մյուսի ետեկից հանդես էին գալիս ընտանիքների այնպիսի կենսագրականներ, ուր «բողը», «գողը», «կինտոն», «զումարբազը», «լաթուքեսանը», «շիրգիրը», «պիհանիցը» և այլն, և այլն իրենց պատվավոր տեղն էին բռնել։

Բայց դա միայն նախերգանքն էր։ Շուտով սկսվեց և բուն գործողությունը մի շատ փառավոր ապաթյոզով։ Երկուսի մենամարտը դարձավ ընդհանուր պատերազմ, որի մեջ չէր երեսում ով էր հարձակվում և ով պաշտպանվում։ Ձեռքեր էին, որ բարձրանում էին և իշնում շրմփոցով, քիթ ու պոռնկ էր, որ շարդպում էր։ Սուր-սուր եղունգներ էին, որ ցցվում էին մարմինների մեջ, շորեր էին, որ ծվիկ-ծվիկ էին լինում, գլխի փաթթաններ էին, որ տրորվում էին ոտների տակ, մազեր էին, որ փունջ-փունջ պոկվում էին գլխներից և ցրիվ գալիս գետնին...»

Թեկ այս տեսարանը ինձ շատ լավ ծանոթ էր դեռևս վեց տարի առաջ՝ իմ նախկին տանտիրոջ բակից, նրա կնոջ՝ գիծ-կեկելի շնորհիվ, բայց սա մի գրանդիոզ բան էր իմ նախկին տեսածների հանդեպ։ Ու մինչեն ես, կատարելապես ապուշ կտրած, դիտում էի կանացի այս պատերազմը, բարեկամս ծիծաղից փորք բռնած էր։

Էլ շդիմացա, վեր թռավ տեղիցս, որ գնամ ամաշեցնեմ այդ խելագար կանանց և բամբանեմ իրարից, բայց բարեկամս վրա ընկավ թռիս և նստեցրեց տեղս։

— Կաց, — ասաց, — թե չէ քեզ էլ այն օրը կգցեն, որ հատուվ կփախչես։ Մրանք այնպիսի ազագիլ արարածներ են, որ կատաղած ժամանակ մարդ կուտեն։ Դու չես ճանաշում սրանց։

— Միալվում ես,— վրա բերի ես,— ես ոչ միայն ճանաշում եմ սրանց, այլև սրանց կարգին պատկանող ամենաազգիներից մեկի շորջոփն եմ կրել անձամբ:

— Հա-ա', — ծիծաղեց բարեկամս, — շատ հետաքրքրական է:

— Ես քեզ կպատմեմ: Բայց առայժմ պետք է վերջ տա՞լ այս խայտառակությանը, թե ոչ:

— Դու հանգիստ նստիր քո տեղը և հուզվելու տեղ զվարճացիր, իրենք իրենց վերջ կտան: Սրանց համար դա պարապ վախտգա խաղաղիք է, իրենց առօրյա զբաղմունքներից մեկը: Ծուտով հաշտություն կնքեն, կողմերը կգնան իրենց կորուստները հաշվեցու, վերքերին դարման դնելու և վաղը չէ, մյուս օրը կտեսնես նրանց նորից մեկտեղ հավաքված առաջվա պես խաղաղ՝ զրույց անելիս: Ես սրանց մշտական հարեանն եմ, գիտեմ սրանց բնավորությունը:

Ճիշտ է, հաշտությունը կնքվեց, բայց ոչ շուտով: Տուրուղրման փողը վերջացավ, բայց փոխադարձ անեծքներով ու հայցոյանքներով համեմված, կանանց ճիշտ ու ծղրտոցները դեռ երկար ժամանակ շարունակվում էին, մինչև որ մութը կամաց-կամաց կոխեց և ամեն մեկը քաշվեց իր տունը:

Ես ու բարեկամս համարյա մինչեւ կեսդիշեր նստած էինք պատշգամբում: Օդը զովացել էր: Փողոցը ննջում էր հանգիստ: Կանանց ճիշտ ու ծղրտոցի տեղ այժմ ծղրիդների քուն բերող անդրում ճոխնչն էր լսվում:

Նստած էինք, և ես ամենայն մանրամասնությամբ պատմում էի բարեկամիս իմ սիրո պատմությունը: Զնայելով վեց տարվա վաղեմությանը, իմ մեջ նորոգվել էր այն բոլոր մաղձը, որ կուտակվել էր սրտիս խորքում դեպի իմ տանտերը, դեպի նրա կինը, դեպի նրա էսկոլապ որդին և մանավանդ Քալին, որ իմ բոլոր հույսերս խորտակեց իր «փալաս» լինելու շնորհիվ ել պատմությանս ընթացքում ոչ մի զորավոր բառ չէի խնայում մաղձս թափելու համար:

Բարեկամս, որ շատ զվարճասեր մարդ էր, փոխանակ կարեկցությամբ լսելու պատմությունս, շարունակ ծիծաղում էր: Խսկերը հասա դեպքերի ֆինալին, այսինքն այն կտին, երբ գիծ-կեկելը ներս պրծավ սենյակս, նամակս շպրտեց երեսիս «շեն բեցիանո», «շեն կոռ մամածաղո» (դու քոսոտ, դու կոռ շանորդի) խոսքերով, նրա ծիծաղը հանկարծ այնպես բռնեց, որ գնդակի պես

վեր թռավ տեղից և սկսեց պատույտ-պատույտ գալ, ուժները զարկելով հատակին: Հետո մի փոքր որ հանգստացավ, նորից նստեց իր տեղը և, անզուսպ ծիծաղից շրակալած աշքերը սրբելով, ասաց:

— Բավական է, էլ շարունակես, էլ փիիսոփայությունների պետք չկա: Միանգամից ասա՝ քննուոտ վարժապետ էի և աղջկը շտվին ինձ: Թե չէ՝ էլ ինչ բաղքենիություն ու մաղքնիություն, ինչ ուսում ու մուսում: Դրանք դատարկ խոսքեր են: Քո պատմությունը, — շարունակեց բարեկամս այս անգամ լրջորեն, — ընդհանուր երկույթի հազարավոր վարիանտներից մեկն է, և այդ երկույթը կշարունակվի այնքան ժամանակ, մինչև որ մի նոր ջրհեղեղ գա և սրբի տանի մեր գիծ-կեկելների սերունդը իրենց բարքերով և այն տեսարաններով, որոնցից մեկին մենք հանդիսատես եղանք այս երեկոս:

Հետևյալ օրը ես ականատես եղա մի ուրիշ երկույթի:

Առավատայան ես ու բարեկամս դուրս եկանք, որ գնանք ես իմ, նա իր գործին: Փողոցի ծայրին իմ ուշադրությունը գրավեց կանանց մի խումբ, որ հավաքված էր մի տան նեղիկի բակում: Երեվում էր, որ նրանք այդ աղքատ թաղից չէին, որովհետև շատ լավ էին հագնված:

— Ո՞վքեր են, ինչո՞ւ են հավաքվել, — հարցրի բարեկամիս:

— Հերթի են սպասում:

— Ինչ հերթի:

— Որ իմանան, թե իրենց հավը ո՞վ է զողացել, որ իմանան, թե գիշերը տեսած իրենց երազը ի բարին կատարվի, թե ի շարքը որ իմանան, թե եթե շբերքեն, ինչ աետք է անեն, որ բերքատու դառնան և ավելացնեն իրենց պես հիմարների թիվը կամ ընդհակուակն:

— Ուրեմն այստեղ գրբա՞ց է ապրում և սրանք...

— Ինչ գրբաց: մի ֆենոմեն կին ասա, որ Սողոմոն իմաստունին ծարագ ջուրը կտանի ու կբերի, և աշխարհիս այն ո՞ր հըռշակավոր գինեկուզ-պրոֆեսորն է, որ իր հմտությամբ կարողանա նրա պես բժշկել կանանց ամեն տեսակ հիվանդություններից— ժառանգական թե ամուսնական, և Աբրահամի գոգն ուղարկել շատերին...

Այն, ինչ որ ասում էր բարեկամս իրեն հաւառկ հեղնանքով, ինտերիկ նորություն չէր ինձ համար. նորությունը, և միանգա-

մայն անսպասելի նորությունը, — գեր սկզբի բոպեներին, — աշաք ինչն էր:

Դեռ չէինք ծովել մյուս փողոցը, որ այնտեղից գուրս եկան երեք կին և զալիս էին մեր կողմը: Մեկը շատ պառավ էր երկու-տակված մեջքով և հազիվ էր քայլում ձեռնափայտը ձեռփին: Մյուսը միջին տարիքի կին էր, իսկ երրորդը շատ զահել, թխաղեմ, ժպտուն, կրակոտ աչքերով: Երեքն էլ հագնված էին վրացնակ, անխուսափելի շիխութիկոպիվ և թշերի վրա կախված կավիրներով: Երեսում էր, որ հարուստ ընտանիքից էին: Զահել կինը մի քիչ առաջ էր ընկել, միջին տարիքի կինը հետեւում էր նրան, իսկ պառավը տնտքնալով քարշ էր գալիս նրանց ետևից և անստամ բերանով ինչ-որ քրթմնջում:

Մոտներով անցնելիս հազիվ մի րոպե աչք գցեցի նրանց վրա, և դեռ մի քանի քայլ չհեռացած նրանցից, հանկարծ կանգ առաջանահար ու ետ նայեցի:

— Հը, երազ խո շտեսա՞ր: — զարմացած հարցրեց բարեկամս:

Զպատասիանեցի: Նայում էի կանանց ետևից աչքերս շտր շինած:

Երեք կանայք գնացին, մի րոպե կանգ առան այն տան բակի առջե, որ հերթի էին սպասում գրբացի կլիինտները և ներս մտան:

— Հը, խոսիր է, — կանչեց բարեկամս անհամբեր:

— Խոսեմ, ի՞նչ խոսեմ, — ասացի ես, — զարմանքից, ապշտությունից, անսպասելիությունից լեզու մնացե՞լ է բներանումս, որ խոսեմ: Գիտե՞ս ով էր այն զահել կինը: Քալին էր, տանտիրոջս ազդիկը:

— Հա-ա, Սպասիր մեկ, ձեռքս դնեմ կրծքիդ, — ասաց բարեկամս կոմիկական լրջությամբ և իսկապես ձեռքը դրեց կըրծքիս: — Ոչինչ, լավ է տկտկում:

Ու ծիծաղեց:

— Եվ դեռ ասում էիր, թե վաղուց թաղել մոռացել էիր նրան: Հը, բարեկամ, բռնվեցի՞ր:

— Սկզբում ախր շճանաշեցի նրան, — ասացի ես առանց ուշադրություն դարձնելու բարեկամիս սովորական ծաղրանքին, — որովհետև մեջտեղով վեց տարի է անցել և, հետո, ի՞նչ կկարծեի, թե լաշակով կտեսեն նրան: Մորից ճանաշեցի, որ նա է, այն սոսկալի կնոշ երեան նայելուք հետո միայն: Այն մեկն էլ ախր

նրա մայրն էք: Իսկ այն պառավն անշուշտ սկեսուրը կլիներւ եկ տեսա՞ր ուր մտան:

— Տեսա:

— Եվ ի՞նչ ես կարծում՝ լաշա՞կ կգներ գլխին և գրբացների դռնե՞րը ման կգար:

— Ճիշտ է, լաշակ չէր դնի գլխին, իմ սիրելի հայկական Զացկի, բայց դեռ հարց է՝ գրբացների դռները չէ՞ր ման գա արդյոք: Որովհետև ինչքան էլ որ քո զաղափարները հալեցնեիր նրա գլխում, այնուամենայնիվ, քո գավառական քաղաքում հեռու-մուտիկ ազգական կամ հարեւան այաններ ու արլաններ կունենաս, որոնք կարիք եղած դեպում կփսփսային նրա ականչին քեզնից ծածուկ և կտանեին իրենց ճամփում:

— Եվ մինչև ե՞րբ պիտի շարումակվի այս սոսկալի երեւույթը:

— Մինչև ե՞րբ: Մինչև որ, ինչպես երեկ էլ ասացի, մի նոր զրհեղեղ գա և սրբի տանի քո գիծ-կեկելների, քո այանների ու արլանների ամրող սերունդը իր բարեկամով, սովորություններով, նախապաշարումներով, իր աղոթքներով ու անեծքներով և այն տեսարաններով, որոնցից մեկին ես ու դու հանդիսատես եղանք երեկ երեկո հենց այս փողոցում և այժմ՝ գրբացի բակում:

— Իսկ մինչ ա՞յդ:

— Իսկ մինչ այդ ես ու դու իզուր կնստենք շանա թակելու Աշխարհասասան մի կատաստրոֆ, որ քար քարի վրա շթողնի, — ահա թե ինչ է հարկավոր:

Ինձ ուրիշ բան չէր մնում ասելու, եթե ոչ համաձայնելու բարեկամիս եզրակացությանը:

## ԱՆՆԱ ՍԵՐՈՅԵՆ

Ա.

Թիֆլիս, 6 սեպտեմբերի 1880

Իմ սիրելի՝ Հոփփուիմե, իմ անգին քույրիկ,

Անսպասելի նամակդ ինձ շատ տիրեցրեց և միենույն ժամանակ շատ բարկացրեց: Միթե կարծում ես, որ ես երբեցից կարող կլինեմ— մինչև անգամ եթե այդ կամենամ էլ— մոռանալ նրան, որ մանկությանն ժամանակից ի վեր իմ ամենասիրելի, իմ ամենասրտակից ընկերուհին է եղել, որին ամեն ժամանակ և ամեն դեպքում համարձակ հայտնել եմ սրտիս բոլոր գաղտնիքները և որ կիսել է տիրությունս, կրկնապատկել է ուրախությունս: «Դու ինձ մոռացար, Աննա, զու ինձ մոռացար», դառնությամբ բացականշում ես նամակիդ մեջ: Չեմ հասկանում, թե այդ ինչ կասկած է (թեև հավատ կարող էի անվանել այն զգացմունքը, որով գրել ես այդ բառերը), որ ծնել է քո մեջ մեր անջատումն ու երկարատև լուսավորունք: Գուցե այդ ընկերական անհուն, կույր սիրո հանկարծ բռնկվող անմեղ բարկության արգասիք է: Եթե այդպես է (որ ամենահավանականն եմ գտնում), ապա ես կրկնապատիկ ուժով սիրում եմ այն մաքոր սիրտը, որ տրամադիր է այդպիսի արդար բարկությունների: Իհարկե, անպատճառ չպիտի երդիկն, սիրելի քույրիկս, հավատացնելու համար, որ չնայելով այսքան ժամանակ քեզ նամակ չէի գրում, բայց ամեն օր և միշտ հիշում էի քեզ: Իսկ երբեմն— և այն շատ հաճախ— մի այնպիսի անհուն կարոտություն էի զգում դեպի քեզ, այնպես ցանկանում էի քո ներկայությունը, որ... միթե բառեր կան այդ զգացումներն արտահայտելու: «Բայց ինչո՞ւ նամակ չէի գրում», անպատճառ կհարցնես ինձ:

— Ինչո՞ւ նամակ չէի գրում քեզ, — հարցնում եմ. և ինքս ինձ: Պատասխանի համար պետք է դիմել այն անհասկանալի զորությանը, որ՝ մարդկային կամքին հակառակ՝ միայն ինքն է զգացմունքների ղեկավարը: Մարդկային սիրուն երբեմն այնպես լըցվում է (սակայն այդ շատ գերին է պատահում, իսկ ինձ՝ շատ հաճախ, մանավանդ վերջին ժամանակներս), նորանոր զանազան զգացմունքները՝ միմյանց խառնվելով՝ այնպիսի ուժով գործում են մեր մեջ, որ նրանց կարելի չէ լինում արտահայտել ոչ բառերով, և ո՛չ, մինչև անգամ, գրով: Չորեղ զգացմունքներից ալեկոծվող սիրտն էլ ունի իր կապրիզները, ինչպես օվկիանոսն ահեղ փոթորկի ժամանակի: Առանց զուրս գալու սրտի պատերից, այդ զգացմունքները, ինչպես լավան երկրի ներսը, բորբոքվում են, եռում այնքան, մինչև որ իրենք իրենց դարձյալ հանգստանում են, խաղաղվում: Սակայն որքան քաղցր ու թեթև, բայց և, միննույն ժամանակ, որքան զառն ու ծանր է զգացմունքների այդ ալեկոծվությունը սրտի մեջ: Ուզում ես աղոթել և անժետել, ուզում ես ապրել և մեռնել: Երանին, բայց վայց նրան, ում սրտին հատուկ են այդպիսի ալեկոծվություններ... Եվ ո՞վ գիտե, մինչև ե՛ր ես այսպես շարունակելի պահպանել դեպի քեզ ունեցած լուսավորությունս, սիրելի քույրիկ, եթե նամակդ հանկարծ շքանար սրտիս դռները քո առաջ... Բայց այստեղ գրիշ այլևս առաջ չի գնում... Տարակուսում եմ... Ի՞նչպես արտահայտեմ այն, ինչ որ այժմ զգում եմ... Ամբողջ քառորդ ժամ անցավ. գրիշը ձեռքիս կանգ է առնում. զլուխս խոնարհվել է թղթի վրա. սիրտս սաստիկ բարախում է... Հազարավոր զգացումներ ու մտքեր ալեկոծում են ինձ. ուզում եմ, ամեն ցանք գործ եմ դնում՝ արտահայտելու այդ զգացումներն ու մտքերը նամակիս մեջ, բայց... Կես ժամ էլ անցավ... Ո՛չ, չեմ կարողանում: Մնաս բարյավ, անգին քույրիկ: Մյուս անգամ:

Քուն կարոտով սեղմում եմ քեզ կրծքիս և համբուրում:

Քո Աննա Սարոյան

**Սիրելի՝ Հորիսիմի,**

Դու զարմանում ես, թե ինչպիսի եղանակով էի գրել նամակը։ «Կարծես մեջամաղձություն է եկել վրադր, գրում ես դու հրավունք ունիս զարմանալու և այդպիս կարծելու, քանի որ այդ եղանակով գրած նամակ ինձնից դեռ երբեք չես ստացել, «Ի՞նչ է պատահել քեզ», հարցնում ես— Ոչինչ, բոլորովին ոչինչ չի պատահել ինձ։ ես ուղարկն եմ, ինչպիս վերջին անգամ տեսել ես ինձ։ ապրում եմ նույն լիության մեջ, ծնողներս, եղբայրներս բոլորը ողյ և առողջ են և մենք առաջվա նման հաշտ ու սիրով ենք ապրում։ Հաս երեսութին, պետք է որ երջանիկ լինեմ, տրտնջալու ոչինչ տեղից չպիտի ունենամ, այնպիս չէ։ սիրելի քույրիկ։ Բայց արի տես, որ այդ այդպիս չէ։— ընդհակառակն, այս վերջին ժամանակներս ես ինձ թշվառ եմ զգում՝ առանց մի որեցից ակնհայտ պատճառի։ Էլ չես տեսնի ինձ առաջվա նման ամեն մի շնչին բանի վրա ուրախ քրքալիս կամ շարամճիություններ անելիս, որոնց համար դու ինձ միշտ նախատում էիր և խրատում, որ ես գոնե փոքր ինչ լրջմիտ կենամ։ Էլ չես տեսնի ինձ առաջվա նման ցանցառմիտ երիտասարդների հետ ընկած, որի համար քանի նախատինքն առիջի սաստիկ էր ինում, և երբ չէ լսում քեզ, ուղղակի խոռոչում էիր ինձնից, մինչեւ անգամ երկար ժամանակով։ (Բայց եթե այժմ տեսնես թե որքան ես առում եմ այդպիսի երիտասարդներին և որքան զգում եմ նրանցից... Դուցք այժմ ե՛ւ նախառեմ քեզ։ Ե խռովիք քեզնից, եթե ինձ լուսես)։ Առաջվա անմիտ երեխայտկան։ արարքներից էլ ոչ մի նշույզ չեւ տեսնի իմ մեջ։ կարծես, երիտասարդության վաղուց արդեն հրաժեշտ եմ տվել, սիրու կարծես միանգամից։ Ժածկվել է և էլ հնար չկա բանալու Այն, ինչ որ առաջ հոգով չափ սիրում էի, այժմ սաստիկ առում եմ։ Կլոր բոլորովին շեմ գնում, պարահանդեսներ— Համարյա երբեք, իսկ թատրոն— շատ քիչ անգամ։ Ամեն տեղ և ամեն բանից շատ շուտ եմ ծանրանում, ես այժմ սիրում եմ միայն առանձնություն և շատ եմ զղայնանում, երբ ինձ անհանգստացնում են։ Առանձնության ժամանակ մտածմունքներն ակամա պաշարում են ինձ։ Եատ անգամ այնպիս խորապուղում եմ մտածմունքների մեջ, որ ամեն բան կատարելապիս մոռանում եմ։ Բայց թե ինչ եմ

մտածում,— այդ ես ինքս էլ շգիտեմ։ միայն այս գիտեմ, որ, ինչ որ մտածում եմ, բոլորը դառն է լինում։ Երբեմն՝ մտածմունքներիս անձնատուր լինելուց հետո՝ երբ սթափվում եմ, զգում եմ, որ աշքերս լցվել են արտասուրով և քիչ է մնում հեկեկամ։ Լինում է և ժամանակ, որ սաստիկ ծովանում եմ,— թեև, ինչպիս գիտես, բացի կարգակուց և դաշնամուր նվազելուց, ես ուրիշ ոչ մի զրադմունք չունիմ, և այնպան ծովանում եմ, որ առավոտները ոչ ուզում եմ անկողնից վեր կենալ և ոչ տնից դուրս գալ. ուզում եմ միշտ մնալ այնպիս, ինչպիս կամ։ Բայց երբեմն էլ այնպիսի մի անզուսպ շարժունության պետք եմ զգում, որ միանգամից ուզում եմ և այս անել, և այն, և վազել, վազվել, և պարել, անդադար պարել, դաշնամուր աժել, կոտրել, վիթել, ծեծել, մի խոսքով՝ անել այն ամենը, ինչ որ կամենում եմ, և ինչ որ ձեռքից կգա։ Հենց երեկ ճիշտ այդ դրության մեջ էի. երեկոյան թեյը խմելուց հետո՝ բաժակն այնպիս շպրեցի սեղանի վրա, որ գլորվեց, ընկավ հատակի վրա և փշրվեց։ Վերցրի գիրքը կարդալու, բայց մի քանի տող հազիվ կարդացած՝ հսկույն ծածկեցի և շպրեցի հատակի վրա։ Նստեցի դաշնամուրի առաջ և այնպիս կատաղի կերպով խիմեցի մի քանի ակնորդներ, որ ստեղունքներից մեկի զըսպանակը կոտրվեց։ Էլ չեմ հիշում, թե ինչեր արեցի։ Մեր տանը բոլորը զարմացած են մնացելի ես էլ պակաս շեմ զարմացել, հավատացիր։ Ի՞նչու եմ այնպիս անում, ինչո՞ւ։ Խելագարվում եմ, ի՞նչ է, թե՝ այս էլ մի տեսակ հիվանդություն է, որ ակամա գալիս է մարդու վրա։— ոչինչ շեմ հասկանում։ Բայց մի բան ես շատ լավ հասկանում եմ ու զգում։— սիրու ձգտում է, ուժգին թափով ձգտում ինչ-որ մի անհայտ, կարծես երբեք գոյություն չունեցող բանի, ձգտում է և, կարծես, հույս չունի, թե երբեկց կհասնի։ Ես այժմ ամեն կերպ աշխատում եմ այդ հիմար գրությունից դուրս գալու և հույս ունիմ, որ զանազան զգացմունքներով ինձ այդ կըհաջողվի։ Սկսել եմ շատ կարգալ և համարյա ամրող օրն ընթերցանությամբ եմ անցկացնում։

Սիրելիս, նամակ շուտ-շուտ գրիր, ես էլ շուտ-շուտ կգրեմ. ի նկատի ունեցիր, որ սիրու արդեն բաց է եղել քո առջև և ես այլևս շեմ կարող ծածկել քեզնից իմ զգացմունքները։ Ուզում եմ նամակներով քեզ հետ ամեն ինչ բաժանել. զգում եմ, որ այդ ինձ թենություն կպատճառի։ Առայժմ, սիրելիս, ցնոր գրություն։

Գո Աննա Սարոյան

## Սիրելի Հոհիսահմե,

Դու աշխատում ես բացատրել հոգեկան օտարությունս և գտնում ես, որ այդ պարապությունից, անգործ լինելուցս է։ Գուցե մասսամբ ճիշտ է այդ, բայց այս էլ կա, որ ես դեպի ոչ մի գործ ձգտում չեմ զգում։ Եվ ի՞նչ գործ կհրամայեիր, որ կատարեի, ի՞նչ անեի, ինչո՞վ զբաղվեի, քանի որ մի հասարակ գործվածք անգամ մինչեւ վերջը համբերություն չունիմ տանելու և ամեն բան, ինչ ձեռքս եմ առնում, ձգում եմ կիսատ... Ոչ, ես կարծում եմ, որ զիսավոր պատճառը մենակությունս է։ Գուցե զարմանաս, բայց այդ այդպես է. ես մենակ եմ այժմ, և այդ ոչ թե այն պատճառով, որ առաջաւ նման այլքս ընկերուհիներ չունիմ, որոնց հետ կարողանամ անցընել ժամանակս՝ տաղտկությունից խուսափելու համար— ոչ, այլ այն պատճառով, որ ես ինքս եմ հեռացել նրանցից, որովհետեւ նրանք բոլորն ինձ այժմ շատ հիմար և դատարկ արարածներ են երեւում... Այ, ուրիշ բան կլիներ, եթե դու լինեիր մոտս. այն ժամանակ երբեք չէի ձանձրանալ. երբեք տաղտկություն չէի զգա, ինչպես առաջ, երբ դու այստեղ էիր, թեև այն ժամանակ քո շափից դուրս լուրջ դատողություններն ու խրատներն երբեմն շառում էին ծիծաղս... Ա՛խ, որքան թեթևամիտ էի այն ժամանակ... Եվ այժմ զարմանում եմ, ճշմարիտ, թե ի՞նչպես քո առողջ խելքով, քո լրջությամբ կարողանում էիր ինձ, թեթևողիկիս հետ որեւէ հարաբերություն ունենալ, թեև շքավորությանդ հետ ունեիր և սաստիկ ինքնասիրություն, որպեսզի իսկույննեթ հեռանայիր ինձնից, երբ տեսնեիր, որ քո դեպի ինձ ունեցած սերտ բարեկամության մեջ զանազան նախանձախնդիրներ լոկ ստոր հաշիվներ են տեսնում քո կողմից։ Ի՞նչպես չէիր ձանձրանում իմ ամենահիմար խոսակցությունից, որ միշտ այն մասին էր լինում, թե զիշերը պարահանդեսում ո՞ւմ հետ պարեցի, ո՞ւմ հետ ծանոթացա, ով ինչպիսի նոր հագուստ ուներ, թե թատրոնում ի՞նչ օպերա էին ներկայացնում, ով ինչպես էր երգում, ով կար այնտեղ աշքի ընկնող, թե ի՞նչ մոդա է եկել, ի՞նչ նոր հագուստ պիտի կարել տայի ինձ համար, թե այսինչ օրը ո՞րտեղ եմ հրավիրված...— Անշուշտ դրա համար ես պարտական

եմ քո զիշող, սիրող բնավորությանը և խղճահարությանը, որով կամենում էիր ինձ գոնե փոքր-ինչ խելքի բերել...

Ախ, անզին քույրիկս, որքան սիրում եմ քեզ։ Որքան շատ եմ մտածում մեր բարեկամության մասին, այնքան սիրաւ ավելի ու ավելի է կապվում քեզ հետ, որովհետեւ գնահատությունդ նոր եմ հասկանում։ Ուզում եմ, որ այդ անցյալը գոնե մի բոպե վերադառնա, և ես առատարուիս զերմ զգացմունքներով հատուցանեմ քեզ դեպի ինձ տածած բարեկամության փոխարենը։ Զես կարող երևակայել, թե որքան կարուտում եմ քեզ այժմ։ Եվ ի՞նչպես չկարուտեմ, քանի որ ամբողջ երկու տարի է անցել այն օրից, երբ դու վերջին անգամ եկար մեր տուն հրաժեշտիդ ողջունը տալու մեզ։ Այդ օրը հիշում եմ, ինչպես երեկու ի՞նչ սքանչելի օր էր այդ— Շարաթ երեկո էր։ Տան բոլոր գոներն ու լուսամուտները բաց էին դեպի պատշգամբ։ Մայիսյան թարմ, զովարա օդը, որ ես միշտ համեմատել եմ քնած քնքիկ մանկան անլսելի շնչառության հետ։ ամենայն առատությամբ ներս էր մտնում սենյակները։ Արևի ճառագայթները՝ բեկվելով լուսամուտների ապակիների մեջ՝ անդրադառնում էին հանդեպի պատերի վրա աղոտ և անշերմ լուսով։ Պատշգամբում շարաճճի ծտերն իրենց ուրախ ծլվլոցով ահազին աղմուկ էին հանում։ Նրանց ծլվլոցի ձայնը պարզ օդում արձագանք էր տալիս։ Որքան սիրելի է գարունը, երբ երգում են թոշունները։ Ի՞նչ կլիներ գարունը, եթե թոշուններ չլինեին։— նա անշուշտ կկորցներ իր հրապույրի կեսը, ինչպես ուրախ, հանդիսավոր տոնախմբությունն՝ առանց երգի ու նվազի։ Ես նստած էի դաշլիճում դաշնամուրիս առաջ և նվագում էի Շումանի սերենազը (շատ լավ հիշում եմ, որ հենց այդ էի նվագում)։ Հարևան սենյակում պարապում էին եղբայրներս։ Մեծը— Արշակը նստած էր սեղանի վերջին լուսամուտի մոտ՝ իր գրասեղանի առաջ և կանցելլարիայից բերած մի ահագին կույտ ինչ-որ թղթեր էր քրքրում, սենյակի մյուս վերջին լուսամուտի մոտ՝ իր գրասեղանի առաջ նստած էր մյուս եղբայրս— Գրիգորը և կարդում էր «Դոն Կարլոսը» (այդ հիշում եմ նրանից, որ նա ներս մտավ և, ինդրելով որ լսեմ, կարդաց ինձ մոտ մի գեղեցիկ կտոր Մարկիզ Պոզայի մի մենախոսությունից, որից հիացել էր։ Նա առհասարակ շափից դուրս սիրում է Շիլլերը. խո զիտես, որ նա թունդ ոռմանտիկ է)։ Խսկ փոքր եղբայրս— Գարեգինը նստած էր մեծաեղի լուսամուտներից մեկի առաջ և սովորում էր դասը։ Հա-

թեան սենյակում հայրս և մայրս «նարդի» էին խաղում. այդ նրանց սիրելի զբաղմունքն էր, և է, երեկոներին: Ա՛ն, ինչքան ուրախ, ինչքան երշանիկ էի ես այդ ժամանակ: Ինչպիսի անհուն սեր էի զգում ես դեպի մեր այդ խաղաղ, սիրող, հաշտ ընտանիքը: Սրբակիս մեջ դրախտ էր բացված և այդ դրախտն ես ուզում էի արտահայտել Շումանի սքանչելի սերենադի մեջ...

Հանկարծ հարեան սենյակում լսեցի քո ձայնը:

— Եկել եմ ձեզ մնաք բարեւ ասելու. վազն առավոտման գում եմ, — ասում էիր ծնողներիս:

Թողի դաշնամուրը, վեր թռա և վազեցի քեզ մոտ:

— Սիրելիս, մի՞թե իրավ, վաղն առավոտյան, — բացականչեցի՝ բռնելով ձեռքերիցու:

— Այո:

«Այո... Անգոն, ի՞ն. էի արել քեզ, որ երջանկությանս բարձրությունից ինձ այնպես հանկարծ ցած գլորեցիր:

— Սիրելիս, Հոփիսիկս, հետաձգիր, — փարեցի վզովդ:

— Ոչ, — կարծես երդվել ես դու:

— Սիրելիս, մնա մի քանի օր էլ:

— Անկարող եմ:

Մի՞թե սիրան այնքան կարող է քարանալ: Դու մնաք բարեւ ես ասում ծնողներիս, մնաք բարն ես ասում եղբայրներիս, սեղմում ես ամենքի ձեռքն էլ: Ես շտապով ժամկում եմ փեղույս, դուրս եմ զալիս քեզ հետ: Գնում ենք: Մ'ւր: Մ'վ գիտե: Երկուսս էլ խոսում ենք, սակայն ավելի լուս ենք, քան թե խոսում: Ինչո՞ւ Զգիտեմ: Թեեն զգում էինք, որ շատ բան ունինք ասելու, բայց շատ քիշ բան էինք կարողանաւ ասել: Ինչ հիմար դրություն էր:

Հետեւալ օրն ես քեզ հրաժեշտ տվի երկաթուղու կայարանում: Վերջին շերմ համբուլները դրոշմեցինք միմյանց շրթունքներին: Ինչպիս էինք լալիս... Սքանչելի արցունք... Շոգեկառքը սովոց և սկսեց դեռ կամաց, հետո քիշ-քիշ արագ փախցնել քեզ: Վերջին անգամ լուսամուտից շարժեցիր թաշկինակդ, ես — իմը, և այլնս շտեսա քեզ:

«Բայց ինչո՞ւ ես զրում ինձ արդեն հայտնի այդ եղելությունը, ինչո՞ւ այդ բոլորը հիշեցնուած ես ինձ» — գուցե հարցնես դու, եթե միայն այլևս նույնը չես, ինչպես ես քեզ ճանաշում էի այն ժամանակ, որովհետեւ եթե դու նույնը լինես, ապա այդ հիշողությունը քեզ համար նույնքան սիրելի պիտի լինի, որքան և ինձ

համար այժմ, շնայելով, որ այն ժամանակից անցել է ամբողջ երկու տարին Կարծեմ Գյոթեն է ասում — պետք չէ բրբել անցյալը. նա միշտ դառն է լինում ներկայի համար: — Ճիշտ է արդյոք այդ Զգում եմ, որ այս և զգում եմ, որ ոչ ինչո՞ւ: Բացատրել չեմ կարող, բայց ես այդպես եմ զգում: Անցյալի հիշողությունը սրբան դառն, նույնքան և քաղցր է, և այդ պատճառով սիրելի է, որպես անունը սրտիդ մոտ այն էակի, որին տարիներ առաջ հողին ես հանձնել: Այդ հիշողության մեջ կա մի տեսակ ուրույն, եթե կարելի է արդպես ասել, հոգեկան պոեզիա, ինչպես երկու հակադիր զգացումների զուգորդության մեջ: Մի՛ ծիծաղիր փիլիսոփայության վրա:

Կարծեմ այս անգամ այսքանը բավական է. մյուս անգամ մեր ընտանիքից տեղեկություն կտամ քեզ, որ խնդրում ես ինձնից: Խսկ այժմ ընդունիր համբուցը և մնաս բարեւ:

## Թռ Աննա Սարոյան

Դ.

Թիֆլիս, 11 հոկտեմբերի 1880

Սիրելի Հոփիսիմե,

Նախորդ նամակովս խոստացել էի քեզ տեղեկություն առաջ մեր ընտանիքից և ահա կատարում եմ խոստումս:

Նախ պիտի ասեմ, որ Գրիգորը հիվանդ է: Հազում է: Այս հինգերորդ օրն է, որ գիմնազիոն չի գնում. բժիշկները խորհուրդ են տալիս առժամանակ ձեռք վերցնելու պարապմունքներից: Ես սաստիկ երկյուղ եմ կրում, որ նրա հիվանդությունը թաքախտ լինի, մանավանդ որ նա կազմվածքով շատ թույլ է և նիհար: Դու գիտես, թե որքան եմ սիրում եղբայրներիս, առավելապես Գրիգորին, որը այս վերջին ժամանակներս մանավանդ ինձ համար թե՛ եղբայր է բառիս բուն նշանակությամբ և թե ամենամտերիմ խորհրդակից: Ես սարսափում եմ, որ լառում եմ նրա խուզ հազի ձայնը, մանավանդ գիշերները, եթե քնած է լինում: Նա շատ է պարապում, չափից դուրս պարապում է. այդ վատ է ազգում նրա հիվանդությանը:

Բայց Գրիգորի Հիվանդությունից զատ մի ուրիշ հանգամանք էլ կա, որ պակաս մտահոգություն չի պատճառում մեզ։ Գու գիտես, թե Հայրս ինձախսի զվարճասեր և կատակասեր մարդէ, բայց վերջին ժամանակներս մեծ փոփոխություն է նկատվում նրա մեջ. օրինակ՝ երեկոները վերադառնում է տուն միշտ մի տեսակ տիտուր ու մտախոհ և գլխարկն աշքերի վրա վայր թողած, այնինչ առաջ՝ նա գլխարկը միշտ ետ գցած էր ունենում ճակատի վրա և միշտ մրմնում էր մի որեկց ուրախ երգ։ Խոսելիս էլ ամենքի հետ բարկացած է խոսում, կարծես ամենքն էլ նրան որեկց անախորժություն են պատճառել, կարծես ամենքն էլ նրա առաջ մեղավոր են։ Մի անգամ Հարցրի պատճառը։ Խոտոռած դեմքով նախ լուր նայեց ուղղակի աշքերիս, հետո հանկարծ մի վայրկյան միայն ժպտաց, աշքերը վայր թողեց, ներքին շրթունքը կախեց և գեմքին տվեց մի այնպիսի ճիշտ և միենույն ժամանակ ծիծաղելի արտահայտություն, որպիսին ունենում է երեխան այն ժամանակ, երբ նրան բոլորովին իզուր մեղադրում են շարություն անելու համար։

— Ես ի՞նչ մեղավոր եմ, օրիորդ, — արտասանեց նա բարակ, իրու թե երեխայական ձայնով։ — Կիրակոսյանը շարություն է անում, դուք ի՞նձ եք մեղադրում։ Ուզում եք Մարտիրոսյանին հարցրեք։

Զկարողացած ծիծաղս զսպել և գրկեցի նրան։

— Հայրի՛կ, մի՛թե տիտուր ժամանակդ էլ կարողանում ես կատակներ անել, — բացականեցի ուրախացած։

— Ուզում եք Մարտիրոսյանին հարցրեք, — երկնեց նույն բարակ ձայնով։

Դարձյալ ծիծաղեցի և ավելի ամուր գրկեցի նրան։

Նա կամաց ազատվեց գրկիցս, ժպտաց՝ նայելով աշքերիս և քնքորեն համբուրելով ճակատս, դուրս գնաց իր առանձնասենյակը։

Մտախոհությամբ նայեցի նրա ետևից։ Ինչպես շուտ և հեշտությամբ կարողացավ ազատվել բացարությունից։ Այնուհետև ամեն անգամ նկատում եմ, որ նա ամեն կերպ աշխատում է խույս տալ ինձնից, իսկ երբ այդ չի հաջողվում, դարձյալ սկսում է կատակ անել և, զարմանալի է, շնայելով որ այդ կատակներն ակամա է անում (ես այդ շատ լավ եմ նկատում), բայց նրանք երբեք անհամ չեն դուրս գալիս և միշտ ունենում են իրենց ազ-

դեցությունը, գոնե ով այդ ժամանակ նայում է նրան (մինչև անգամ ես), չի կարողանում զսպել ծիծաղը։ Սակայն իզուր է աշխատում ծածկել ինձնից իր վիշտը. և որ մի վիշտ — և այն էլ ծանր վիշտ — կրծում է նրա սիրտը և մեծ մտատանշություն է պատճառում նրան, — այդ ես գիտեմ, այդ ես պարզ տեսնում եմ։ Չեմ կարծում, թե նրա վիշտը Գրիգորի համար լինի, որովհետեւ Գրիգորն այնքան էլ հիվանդ չէ, որի համար կարող լիներ այնքան մտատանշվել։ Ուրիշ բան կա անշուշտ, որ մենք չգիտենք։ Մայրս խիստ անհանգիստ է. ասում է, որ գիշերները նա հանգստություն չունի, իսկ երբեմն՝ քնած ժամանակ, ասում է, կարծես վախեցած, հանկարծ բղավում է և վեր թռչում, երբեմն էլ երազում, ասում է, ուղղակի լաց է լինում...

Քռ Աննա Սարոյան

�.

Թիֆլիս, 11 Հոկտեմբերի 1880

Սիրելի Հոփիսիմե,

Այս անգամ դարձյալ հորս մասին պետք է գրեմ, որովհետեւ բոլոր մտածությանս առարկան նրա տարօրինակ դրությունն է, որից մինչև այժմ ոչինչ չեմ հասկանում։

Անցյալ կիրակի մեր տուն եկավ Թոմաս Գասպարիչը։ Դու ճանաչում ես նրան — այն անտամ, ժամանակից շատ վաղ ծերացած, անտերությունից սրա-նրա դուանն ապրող, իր ասելով՝ «օտաստավնոյ տիտուլարնի սովետնիկը», որ ոչ մի օր եկեղեցուց ետ չի ընկնում և ինչպես ավետարանն ու սաղմոսը, նույնպես և եկեղեցական բոլոր արարողությունները շատ լսելուց ու կարդալուց անգիր գիտե։ Նա նույնն է մնացել, ինչպես տեսել ես նրան երկու տարի առաջ. ծերության ժամանակ մարդկանց մեջ փոփոխությունը շատ աննկատելի է կատարվում։ Հագուստն էլ նույնն է. նույն խունացած գլխարկը կարմիր կանտերով, նույն խունացած նշանազգեստը՝ հնությունից սեացած երկաթե կոճակներով և նույն ձեռնափայտը, որից նստած ժամանակն անգամ չի բաժանվում։ Եղանակը, չնայելով աշուն էր, շատ տաք էր։ Ես նստած էի սենյակում՝ բաց լուսամուտի առաջ և կարդում էի Տուրքեներ։ Եղայրներս տանը չէին, մայրս իոնհանոցումն էր, իսկ հայրս գուրսը

պատշգամբում։ Նա նստած էր շտամպուտից հեռու՝ մեղքը գեղի ինձ արած և մտախոհ նայում էր քաղաքին։ Երկի զգիտեր, թե ես տանն եմ և նայում եմ իրեն, ապա թե ոչ աշքերիս առաջ անձնատուր չէր լինի իր տխուր մտաժմունքներին։ Բայց նա այն աստիճան խորասուզված էր մտաժմունքների մեջ, որ չնկատեց, թե ինչպես Թոմաս Գասպարիչն իր դանդաղ, երերուն քայլերով մռտեցավ նրան։

— Շատ խորն ես մտաժում, աղա՝ Գեորգ, — կարճ ժամանակ նրա մոտ լուր կանգնելուց հետո, ասաց Թոմաս Գասպարիչը, իր քութ հայացքով կողքից շարունակ նայելով նրան։

Հայրս հանկարծ սթափվեց և նայեց նրան։ Առաջին նվագ, կարծես չկարողացավ ճանաչել նրան, որովհետեւ նախ մի րոպե, ըստ երեւլյթին զարմացած և լուր, նայեց նրա դեմքին, հետո հանկարծ բացականչեց։

— Ա՛, Թոմաս Գասպարի՛շ, այդ դո՞ւն ես... Բարեկ (ու մեկնեց նրան ձեռքը)։ Ի՞նչպես ես։ Քեֆդ լա՞վ է։ Համեցիր, նստիր։ (Նա կանչեց ծառային, որ մի աթոռ բերի)։ Նոր լուր կունենաս, ասա տեսնենք։ Անպատճառ եկեղեցուցն ես գալի։

— Բաս ո՞րտեղից պետք է զամ, — մրթմրթաց Թոմաս Գասպարիչը, կարծես նեղացած, որ այդ բանի համար դարձյալ հարցնում են իրեն։

— Իհարկե, ինձ համար էլ կաղոթեիր։

— Անպատճառ։ Քեզ համար էլ որ չաղոթնմ, աղա Գեորգ, բաս էլ ո՞ւմ համար պետք է աղոթնմ։

— Քեզ համար։

— Է, ամեն մարդ որ մենակ իր գլխի մասին մտածի, այդ ո՞ւր կգնա։

— Իր գրպանն ու փորք... Բայց ասա տեսնենք՝ աղոթքիդ մեջ ի՞նչ էիր խնդրում ինձ համար։

— Ի՞նչ... Այ ինչ, — ասաց Թոմաս Գասպարիչը, նստելով ծառայի բերած աթոռի վրա։ — Նախ և առաջ խնդրում էի, որ ամենակարողն աստված քեզ և ընտանիքիդ երկար կյանք տա... «Կյանքն խնդրաց ի քնն, և ետուր նմա ընդերկայն ավուրս՝ համբացան հագիտենից»։ Երկար կյանքն, իհարկե, ամեն բանից լավ է, աշքպիս չէ», աղա Գեորգ։

— Իհարկե... շարունակիր։

— Հա, նախ և առաջ խնդրում էի, որ ամենակարողն աստված քեզ...

— Ճեր օրհնած, այդ խս ասացիր, — անհամբերությամբ և մի քիչ ըղայնացած ընդհատեց հայրս։ — Շարունակի՛ր։

Թոմաս Գասպարիչը տարակաւանքով և գարմացած նայեց նրան, առաջին անգամն էր, որ հայրս նրա հետ այդպես էր խռուում։

— Հետո խնդրում էի, — շարունակեց նա այս անգամ փոքր ինչ անվստահ եղանակով, — որ ամենակարողն աստված քեզ և ընտանիքիդ...։

— Էլի՞՝, — նորից ընդհատեց հայրս նրան անհամբերությամբ։

— Զէ, աղա Գեորգ, շարունակում եմ, — շտապեց պատասխանել ինեղն Թոմաս Գասպարիչը, — ... որ ամենակարողն աստված քեզ և ընտանիքիդ երկար կյանքի հետ առողջություն տա... երկար կյանքն առանց առողջության, իհարկե, մի կոպեկ շարժե. այդպես չէ, աղա Գեորգ։

— Այդպես է, այդպես... շարունակիր, — մեքենայարար կրկնեց հայրս, առաջվա նման մտախոհությամբ նայելով քաղաքին։ Նա կարծես այլևս չըր լսում Թոմաս Գասպարիչին։

— Հետո խնդրում էի, — շարունակեց Թոմաս Գասպարիչը, — որ ամենակարողն աստված գործիդ հաջողություն տա, սրտիդ բարի ցանկություններին կատարումն տա, ուրախություն, երջանկություն տա, որդոցդ բարի միտք և սիրտ տա, որ քեզ սիրեն, հարգեն և պատվեն... Խնդրում էի, որ քեզ և բոլոր ընտանիքիդ ամեն շարից հեռու պահի, սատանայի փորձությունից աղատ պահի, թշնամու սրտով չանե. «Քիրկյա զիս ի ձեռաց թշնամյաց և ի հաւածձաց իմոց»։ Խնդրում էի, որ իր սուրբ ողորմությունը միշտ անպակաս անի քեզնից և քո ընտանիքից. «ողորմություն քո, տեր, զհետ իմ եկեսցե զամենալին ավուրս կենաց իմոց»..

Նա լուց և կարծես նոր տեսավ, որ հայրս ոչ նայում էր և ոչ լսում նրան։ Նա գլուխը փոքր ինչ թեքելով, առաջ տարավ, որպեսզի լսվ նայի հորս դեմքին, որ ամբողջապես դեպի քաղաքն էր դարձած։

— Հը, ի՞նչ է... պրծա՞ր, — մտախոհությունից սթափվելով և դեմքը դեպի նա գարձնելով, հարցրեց հայրս։

— Ես պրժա, աղա Գևորգ, բայց դու ինձ չէիր լտում։ կարծես։

— Կարծե՞ս, — հարեց Հայրս ծաղրական եղանակով։ — Ընդհակառակն, իմ պատվելի տիտուլյարնի սովետնիկ, ես քո պատմածն ավելի լավ էի լսում, քան թե դու ինքդ... Բայց այդ թողնենք, ուրիշ բան խոսենք... Ի՞նչ նոր լուր ունես, ասա տեսնենք։

— Է՞հ, աղա Գևորգ, ես ի՞նչ նոր լուր պետք է գիտենամ։ բացի եկեղեցուց, ո՞ւր եմ գնում, որ ինչ լուր լսեմ... Լրագիրը գուրեք ստանում, նոր լուրերը դու կլինես կարդացած։

— Այս քանի ժամանակ է ինչ ձեռքս լրագիր շեմ առել... Ապա գնա տես, սեղանի վրա կլինի լրագիրը, բեր կարդա մոտա... Սովորի, լավ, դու նեղություն մի՛ կրիր, ժառան կրերի։

Նա դարձյալ կանչեց ծառային և հրամայեց, որ լրագիրը քերի։  
Ես լուսամուտից տվեցի ծառային լրագրի համարը։ Ծառան տարավ տվեց Թոմաս Գասպարիչին։

Թոմաս Գասպարիչը նախ հանեց ակնոցը, որ պահում է, ինչպես գիտես, առանձին պատյանի մեջ, դրեց աշբերին և սկսեց կարդալ։ Կարդաց մի քանի լուր, թե ինչպես մի երիտասարդ անհայտ պատճառներից այսինչ տեղն և այսինչ ժամանակ անձնապահություն է գործել («սիրահարված կլիներ» — այստեղ նկատեց Հայրս), թե ինչպես մի կին միանգամմից երեք երեխա է ծնել, երեքն էլ կենդանի, թե ինչպես այսինչ տեղ ավազակները ճանապարհին կողոպտել և սպանել են ճանապարհորդներին, թե ի՞նչպես այսինչ հայտնի վաճառականը սնանկացել է, նրա բոլոր կայքը գրավել, աճուրդով վաճառել են...»

Հայրս սկզբում, ըստ երեսութին, հետաքրքրությամբ էր լսում Թոմաս Գասպարիչին, բայց վերջինս այնքան զանգաղ և անվարժ էր կարդում, որ նա շատ շուտով ձանձրացավ և գեմքը դարձյալ շրջեց գեպի քաղաքը։ Սակայն, ինչպես նկատում էի, այնուամենայնիվ լսում էր և լսում ինքն իրեն ստիպելով։ Կարծես չէր ուզում անձնատուր լինել մտախոհությանը, որ ինչպես երեսում էր, ակամապաշարում էր նրան։ Վերջ ի վերջո դարձյալ սկսեց հետաքրքրությամբ լսել, և զարմանալի է, նրա հետաքրքրությունն այն աստիճանի հասավ, որ մինչև անգամ դարձավ Թոմաս Գասպարիչի կազմը, արմունկով կորինց ծնկան վրա և սկսեց շեշտակի նաշել նրա շրթունքներին։ Այս անգամ տեսնում էի նրա դիմքը և երբեք շեմ կարող մոռանալ այն հայտնի գործություն չունեցած մեջ, որպեսզի հանեն նրանից մի ժաղական պատկեր։ Հորս բարձրածայն ծիծաղից նա հանկարծ սթափվեց և ժպտալով դարձավ ինձ։

Մանակ, այդ հայացքի մեջ կար և մեծ հետաքրքրություն, և մեծ երկյուղ, և մի տեսակ բան, որ ոչ կատաղություն էր, ոչ ստրանք և ոչ հուսահատություն։ Վերջին լուրը լսելով, հանկարծ այնպիսի ուժով դուրս խլեց լրագիրը Թոմաս Գասպարիչի ձեռքից, գոռալով — «Ինչ վա՛տ ես կարդում» — այնպես նղեց և ձեռքում ճրմւելով, շպրտեց պատշգամբից ներքեւ, որ կարծեցի, թե ինչլազարվեց։ Ինքս էլ շիմացա, թե ինչպես այդ ժամանակ գլուխս հանեցի լուսամուտից գեպի դուրս և նայեցի նրա կողմբ։ Նա հանկարծ տեսավ ինձ, և ես մինչև հիմա էլ զարմացած եմ մնացել, թե ինչպես այնպես արագ կարողացավ փոխել գեմքի արտահայտությունը, ձեռքերը վայր թողած՝ կանգնեց հանդարտ, աշքերը խոնարհեցրեց, ներքին շրթունքը կախեց (ինչպես այդ արագ մի անգամ, երբ Հարցրի նրա մտահոգության պատճառը), և ասաց բարակ, իբրև թե մանկական ձայնով։

— Ես ինչ մեղավոր եմ, օրիորդ... բաս ինչո՞ւ Թոմաս Գասպարիչը այնպես վատ է կարդում...»

Բայց այս անգամ ծիծաղեցի, ինչպես առաջ, արդյոք նրա համար, որ արդեն հասկանում էի, թե ինչ են նշանակում նրա այդպիսի կատակները, թե՝ նրա համար, որ այս անգամ նրա կատակը բավական անհամ դուրս եկավ, — շգիտեմ։ Այդ, կարծես ինքն էլ զգաց և, մի րոպե շփոթվելով իմ անթարթ, լուրջ հայացքից, հանկարծ նայեց Թոմաս Գասպարիչին և բարձրածայն ծիծաղեց։

— Աննա, — բացականչեց նա, առանց իմ կողմբ նայելու, — թե աստվածդ կսիրես, մեկ նայիր մեր տիտուլյարնի սովետնիկին։

Նայեցի Թոմաս Գասպարիչին, բայց դարձյալ ծիծաղեցի, թեև այդ րոպեին նա շատ ծիծաղելի էր։ — Նստած էր անշարժ՝ ակնոցն աշքերին և կատարյալ ապուշի նման բերանը բաց՝ նայում էր հորսը։ Նրա ձեռքերը մնացել էին այնպես, ինչպես որ բռնած ուներ լրագիրը կարդալիս։ Կարծես նրան դիտմամբ նստեցրել էին այդ դրության մեջ, որպեսզի հանեն նրանից մի ժաղական պատկեր։ Հորս բարձրածայն ծիծաղից նա հանկարծ սթափվեց և ժպտալով դարձավ ինձ։

— Տեսնո՞ւմ ես, Աննա, ինչ շարաձճի մարդ է եղել հայրդ, — ասաց գլուխը շարժելով։ — Լրագիրը ձեռքից խլեց, ճղեց, ճիւկեց, պատշգամբից ներքեւ գցեց. ասա ինչո՞ւ...»

— Նրա համապ, իմ պատվելի տիտույարնի սովետնիկ, որ... ճաշին մեզ մոտ կցինես, — ասաց հայրս և գնաց գեղի իր առանձնասինքակը:

Դիտմամբ այս անցքն այսպես մանրամասն նկարագրեցի նամակիս մեջ սիրելի Հոփիսիմե, որպեսզի ցուց տամ, թե որքան մեծ է այն գաղտնի վիշտը, որ այնքան մտատանջություն պատճառելով, այսպիսի դրության մեջ է ձգել հորս:

Ինչպես վախենում եմ, թե մի՞ գուցե խելագարվի... Սարսափը, անասելի վիշտն ու հուսահատությունը պաշարում են ինձ, որ մտածում եմ, թե կարող է այդպիսի դժբախտություն պատահել... Բայց ինչ անեմ, ի՞նչ... Ինչո՞ւ կարելի է այդ դժբախտության առաջն առնել...

Սրտիս վատ նախազգացումներից ես ավելի եմ սարսափում...

Ընդունիր ջերմ համբույրներս:

## Գո Աննա Սարոյան

### Զ.

Թիֆլիս, 23 նոյեմբերի 1880

Անգին քույրիկ,

Գուշակություն ճիշտ դուրս եկավ.— դժբախտությունը— և այն էլ ի՞նչպիսի դժբախտություն— առաջին անգամ բաց արագ մեր տան դուռն և ներս մտավ՝ այնտեղից այլևս երբեք չհեռանալու համար:— Մենք համարյա միանգամմից զրկվեցինք մեր բոլոր կարողությունից, մեր բոլոր հարստությունից. հայրս աշ ձեռքով անդամալույթ եղավ և խելագարվեց:— Ահա թե ինչ եղավ նրա բոլոր մտատանջությունների, նրա գաղտնի վշտի, նրա օտարութի գրաւթյան հետևանքը: Խսկ պատճառը հորս պարտքերն են եղել, որոնց գոյության մասին մենք նույնքան տեղեկություն ունեինք, որքան տեղեկություն ունեինք, թե մեր գլխին մի այսպիսի սարսափելի փորձանք պետք է գար... Բայց մինչև հիմա էլ զարմանքից շեմ կարողանալու ուշքի գալ, թե հայրս այնքան պարտք ե՞րբ է արել, և ի՞նչ բանի համար... Մայրս ասում է, որ նա մոլի խազացող էր. այդ ես ինքս էլ գիտեի, բայց մի՞թե. խազացով այդքան

պարտքեր են անում, այդքան տանուզ են տալիս... Ո՛չ, ո՛չ, ես այդքանին ոչ մի կերպ չեմ ուզում հավատալ և երբեք էլ չեմ հավատալ... Գուցե, այո, ուրիշ մարդիկ այդպես անեն, բայց իմ հայրը... դու խո քիչ թե շատ ճանաչում ես հորս, դու խո գիտես, բե որքան ազնիվ, պատվասեր և հեռատես մարդ էր նա. մի՞թե այդպիսի գեղեցիկ հատկություններ ունենալով, նա կարող էր չհականալ, թե ապագայում ինչ սարսափելի հետևանքներ կարող էր ունենալ խաղալու սերը: Ի՞նչ, մե՞ծ է այդ սիրո, այդ մոլության գորությունը, մարդկային բոլոր գեղեցիկ հատկությունները կորցնո՞ւմ են իրենց ուժը դրա առաջ. այո՞, ճի՞շտ է այդ, հավատալո՞ւ է այդ... Ով ուզում է թող այդ ճիշտ համարի, ով ուզում է թող հավատա դրան, բայց ես չեմ հավատում. շեմ հավատում որովհետեւ այդ անկարելի եմ համարում գոնեն հորս վերաբերմամբ... Այս, մի՞ կարծիր, թե որդիական անհուն սիրոց կուրացած միայն՝ ես այսպես պաշտպանում եմ հորս. ո՛չ, ամենքն էլ, ով ճանաչում է նրան, կասեն, որ հայրս այդպես թեթևամտությամբ շէր կարող վերաբերվել զեկուի իր և իր ընտանիքի երջանկությունն ու պատիվը, որքան էլ նրա մեջ բուռն ցանկությամբ գործեր խաղալու սերը, մոլությունը:

Ես ճանաշում եմ հորս, ինչքն ինքս ինձ. նրա բնավորւթյան բոլոր կողմերը, նրա հոգին բաց էր իմ առաջ, որպես մի պատկեր իր պարզ ու որոշ գեերով, և ես համարձակ, առանց կողմնապահության պետք է ասեմ, որ նրա պես ընտանիքը պաշտող և նրա պատվի համար գլուխը ետ դրած մարդ ճրագով պիտի որոնել: Ամենավաղ մանկությունիցս, գիտակցությանս բացցելու օրից սկսած մինչև այժմ դեռ շեմ հիշում գեթ մի օր, որ նա մի վատ խոսք ասած լիներ մորս, կամ մեզ— իր զավակների վրա ձեռք լիներ բարձրացրած. նա մեզ պահել է միշտ սիրո և խաղաղության մեջ, ազատ ընտանեկան ամեն տեսակ տարածայնություններից և երկպառակություններից. նա մեր ամենաշնչին կապրիզներն անգամ անտրունչ բավարարել է և ընտանիքի երջանկության ու պատվի նախանձախնդիր նրա սրտի մեջ մենք միշտ հովանի կյանք ենք գտել: Եվ այդ բոլորից հետո, ասա՞՛, սիրելիս, մի՞թե ես իրավունք ունեմ թեկուզ ենթադրելու, որ այդ մինենույն հայրս, որ միշտ անփոփոխ է մնացել իմ աշքում (և ես կերպվեմ, որ շեմ խարվել), իր ընտանիքի երջանկությունը, պատիվը, ապագան, ամեն ինչ, որոնց համար կյանքը ետ ուներ

դրած, այդպիս թեթևամտորեն տանու տար կանաչ սեղանի վրա...  
Այի սուսան ծանր է, ո՞րքան ծանր է, սիրելի՝ քույրիկ...  
Այսքան ժամանակ ոչ մի ծանր վիշտ տեսած շինելով մեր ընտանիքի մեջ, այժմ այս սոսկալի դժբախտության առաջ զգում եմ, որ հոգիս շատ հեշտությամբ է ընկճվում... Եվ կարե՞լի է միթե անվեհերությամբ դեմ գնալ ճակատագրի մի այսպիսի հարվածի: Ո՞վ է ուշագրություն դարձնում, թե զրկվեցինք մեր բոլոր կարողությունից. դրա մասին չեմ էլ մտածում կամ գեթ ափսոսում, այլ հայրս, հայրս, ես տանջվում եմ հորս համար: Ես և մեր բոլոր ընտանիքը կորցրինք մի այնպիսի հայր, որպիսին կարող չէ տալ աշխարհն իր բոլոր գանձերով: Եվ դեռ փառք աստծու, — այս, փառք աստծու, — որ կաթվածն այնքան էլ սաստիկ չէր, ապա թե ոչ, նա կարող էր բոլորովին անդամալույծ դառնալ կամ իսկույն մեռնել:

Բայց ամենից ավելի ինձ տանջում, հուսահատեցնում է այն հանգամանքը, որ նրա խելքն այլևս զլիխին չէ: Արդյոք հասկանում ես, երևակայո՞ւմ ես, սիրելի քույրիկ, թե ինչ է նշանակում խելագարված լինելու: — Այդ նշանակում է լինել մեծ մարդ և միենույն ժամանակ— երեխա: Այդ նշանակում է անել այն, ինչ որ շուրջը ոչ ոք չի անում, և չի անի այն, ինչ որ շուրջը ամենքն են անում: Այդ նշանակում է հիմարների ծաղրի և խելոքների խնձահարության թշվառագույն առարկա լինել: Այդ նշանակում է բնությունից անարգված լինել, մարդկային իրավունքներից զրկված լինել, ապրողների ցանկից դեռ կենդանության ժամանակ չնշված լինել: Այդ նշանակում է հազարավոր ապրողների մեջ ապրել իբրև առանձին մարդ, ինչպես մի ամայի անապատի մեջ, որտեղ շըրջապատ դեպի քեզ լուռ է և խուզ և որտեղ դու ինքող շըրջապատիդ համար լուռ ես և խուզ: Այդ նշանակում է տեսնել և չճանաչել, լսել և շիմանալ, ապրել և չզգալ: Այդ նշանակում է կրքեր շունենալ— կյանքի խորհրդի այդ բանալիները: Սոսկալի՝ է, սոսկալի...

Ների՛ր, սիրելի Հոփիսիմե, նամակս երկար չեմ կարող շարունակել: — ամբողջ հոգեկան աշխարհս փշրված է:

Քո Անա Սարոյան

Թիֆլիս, 7 գեկտեմբերի 1886

Իմ քաղցրիկ ընկերուհի,

Ծնորհակալ եմ ցավակցությանդ համար: Այո՛, լավ կլիներ, շատ լավ, եթե մոտս լինեիր. զգում եմ, թե ո՞րքան կթեթևանար սիրու այդ ժամանակ: բայց այդտեղից հեռանալու անկարելի ես համարում: Ինքս էլ գիտեմ, որ այդ անկարելի է, որ այդ քեզնից չի կախված, և այդ պատճառով երբեք չէի կամենալ, որ մի այդպիսի մեծ զոհաբերություն անեիր ինձ համար: Վնաս չունի: Այն էլ բավական է, որ մեր սրտերը կապում ենք իրար հետ նամակագրությամբ:

Մեր նախկին բնակարանից տեղափոխվեցինք. նա այլևս մեզ չի պատկանում: Այնտեղից մեզ վլոնդեցին,— գուցե այդ վերջին բառը քեզ շատ կոպիտ երևա, բայց այդ պայման է,— մեզ վլոնդեցին քաղաքավարի կերպով, և մեզ համար այդ առավել ևս զգալի էր... Երանի նրան, ով չի զգացել, թե ինչ է նշանակում իր նախկին մշտական բնակարանից վերջնականապես տեղափոխվել և այն էլ ինչպես, — ստիպված, ակամա: Խսկույն զգում ես, որ սըրտիցդ մի բան կտրվում է, ինչպես այն ժամանակ, երբ սրտակից բարեկամիդ հավիտյան մնաս բարե ես անում: Տան պատուհանները, գոները, պատերը, յուրաքանչյուր աղյուսը, այնտեղ ընկած յուրաքանչյուր մի ծեղ զգում ես, որ անգին է քեզ համար և դու ոչ մի կերպ չես ուզում բաժանվել, անջատվել նրանցից ընդմիշտ: Այո՛, շատ դժվար է, ծանր է, դառն է հավիտյան թողնել և առավել ևս վլոնդված լինել այնտեղից, որտեղ ծնվել և անց ես կացրել մանկությանդ ոսկի ժամերը և որտեղի հետ կապված են կյանքիդ ամենաքաղցր հիշողությունները:

Այժմ մենք բնակվում ենք մեր հին տանը, որ մի կերպ կարողացանք աղատել պարտապանների ճանկերից: Դու տեսել ես այդ տունը՝ ետ ընկած փողոցում, խոնավ, մոռյալ պատերով, որոնք կարծես վիշտ լաց են լինում: Ամեն անգամ, որ մտնում եմ այս տան սենյակները, մի տեսակ անբացատրելի, ծանր, սամափեկ ծանր թախիծ պատում է սիրտս. հուսահատությունն ու կատաղությունը միաժամանակ պաշարում են ինձ և դառն արտասուրքը ակամա խեղդում է կոկորդս...

Այս, Հոփիսիմե, անգին բուլրիկս, որքան դառն, որքան անտանելի է կյանքը... Գոնե նա այնքան չնշին լիներ, գոնե նա ունենար մի մեծ նշանակություն, մի մեծ նպատակ, որի համար արժենար կրել նրա տված այսքան դառնությունները... Ոչնչի համար լարաշար տանջվել,— մի՞թե մարդու դրա համար է միայն ծնված... Մի՞թե մարդու կյանքը, որ վերջանում է ոչնչով, նրա խորհուրդը պետք է լինի նույնպես ոչինչ... մի՞թե... Ի՞նչպիսի մոայ մտքեր են պաշարում ինձ... Մտածության թելը խճճվում է հանկարծ կտրվում... Ոչնչություն, ոչնչություն... Ես սարսափում եմ...

#### Ծ գեկտեմբերի

Երեկ ամբողջ մտավոր և հոգեկան աշխարհս այնպիսի մի հուզմունքի մեջ ընկավ, սիրելի Հոփիսիմե, որ նամակս կարողացաց շարունակել, գրիշ վայր ձգեցի, դուրս գնացի և, ինքս էլ չգիտեմ որտեղ և որքան ժամանակ, սկսեցի թափառել կերչին ժամանակներս այդպիսի օտարութի հուզմունքներ ինձ շատ հաճախ են պատահում: Չնայելով, որ ես ոչ մի կերպ չեմ ուզում նրանց անձնատուր լինել, բայց նրանք ակամա հափշտակում են ինձ: Եվ, գարմանալի է, չնայելով, որ այդ հուզմունքները ծանր, շատ ծանր են լինում, բայց այնուամենայնիվ մի տեսակ անբացատրելի թեթևություն են տալիս:— ուրիշ կերպ ի՞նչպես բացատրեմ հոգեկան այն դրությունը, որ օտանում եմ այդպիսի հուզմունքների ժամանակ:— Մտքերի մեջ խորասուզված՝ նայում եմ շուրջս— երկնքին, երկրին, ամբողջ բնությանը, նայում եմ մարդկանց, կենացինքին, թոշուններին, միջատներին, նայում եմ, նայում և հանդիսանալու մեջ, որ մի տեսակ հեգնական ժամանակամատ զգում եմ, որ մի տեսակ հագնական ժամանակը ժամանակամատում է դեմքս: Ոչնչություն, ոչնչություն, — արտասանում եմ ինքս ինձ և զգում եմ, որ սրտիս մեջ այլևս ոչ մի վիշտ, ոչ մի դառնություն չկա. մարդկային զգացողական բուրքը կարողություններս, կարծես, միանգամից դադարում են գործելուց կամ ոչ մի կարիք չեն ունենաւ գործելու Հավատը, հույսը և սերը, որոնք մարդկային կյանքի հիմունքն են համար գում, կարծես փշրգում, շքանում են իմ մեջ և այնուհետև ամեն բանի, մինչև անգամ մեր թշվառության վրա սկսում եմ բուրքին սույն սարքին սահմանարությամբ, նույնիսկ արհամարհանային խորին սահմանարությամբ,

բռվ... Սակայն բարեբախտաբար թե դժբախտաբար, այդ երկար չի տեսում, սակավ առ սակավ այդ տարօրինակ դրությունից դուրս եմ գալիս, որի միջոցին երբեմնակի սարսափի նման մի տեսակ անբացատրելի սարսուռ ցնցում է ողջ մարմինս, կարծես մի ինչ-որ ոճքագործություն լինեմ կատարած... ի վերջո, առաջվավագիշտն ու գառնությունը նորից պաշարում են ինձ, հոգիս նորից ընկճվում է, նորից սկսում եմ տանջվել... Որքան զարմանալի! մարդկային հոգեկան աշխարհը, որքան մութ, որքան անբացատրելի և անիմանալի խորշեր ունի նա:

Հորս դրությունը նույնն է, ինչ որ առաջ նա բոլորովին խելացարված է, բայց նրա խելացարությունը շատ հանգարտ է, որի պատճառը, կարծում եմ, անդամալուծությունը պիտի լինի. Մի կարողանում ազատ շարժումներ գործել կամ ազատ խոսել: Սակայն վերջին օրերս ձեռախախտի կամ իմ և մորս օգնությամբ կարողանում է կամաց ման գալ տանը, հազիվ շարժելով ոտները, նա ոչ ոքի չի կարողանում ճանաշել. պատահում է երբեմն, որ մայրս կամ եղբայրներս մտնում են նրա մոտ, սկսում են խոսել նրա հետ, հարցնում են՝ ճանաշո՞ւմ է իրենց. նա անթարթ, կարծես ամենայն մտառությամբ նայում է նրանց դեմքին, առողջ ձեռքում միշտ խաղացնելով թաշկինակը, գեմքը շրջում է նրանցից և չի պատասխանում: Ինձ էլ չի ճանաշում, բայց ինձ հետ սիրով և քնքությամբ է խոսում: Երբ մտնում եմ նրա մոտ, ինչպես նկատում եմ, ուրախանում է, բայց եթե ամբողջ օրերով շերեամ էլ աշքին, շի հիշի: Խոսակցությունը անմիտ է և անկապ, հարցերին պատասխանում է, բայց ոչ այն, ինչ որ սոզզակի այդ հարցերին է վերաբերում, այլ բոլորովին ուրիշ բան: Ինձ միշտ սիրուն ազգիկ է անվանում. անոնմ մոռացել է և, չնայելով, որ ամեն անգամ հիշեցնում եմ անոնմ, ասում է և իսկույն էլ մոռանում: Մի անգամ միայն, — այն էլ հազիվ երկու րոպե, — ճանաշեց ինձ և լաց եղավ: Սակայն վերջին օրերումս, ինչպիս նկատում եմ, ուշքը քիշ-քիշ սկսում է պիտին գալ, անցյալից մի բան հիշում է և նույն բուպեին էլ մոռանում, իսկ առաջ բուրությին ոչինչ չիշում: Այդ ինձ հույս է տալիս, որ վերջի վերջո գուցե առողջանար թժիշկն էլ հույս է տալիս, բայց ասում է, որ կառողջանա ոչ բոլորովին: Թո՞ղ, թո՞ղ ինչպես կուզե՞ առողջանա, միայն թե ներկա գրության մեջ մինչև վերջը շտեսնեմ նրան: Դու չես կարող երեակայիլ, անգին բույրիկ, թե ի՞նչ սոսկալի տանջանք եմ

կրում ես, երբ ամեն անգամ, մտնելով նրա մոտ, հանդիպում եմ նրա միջտ անմտորեն ժապաղը հայացքին և լսում եմ նրա նույնքան անմիտ թթովանքը...

Անցյալ օրն էր, ինչպես միշտ, նույնպես և այդ առավոտ մտա նրա սենյակը։ Մորս և ծառայի օգնությամբ արդեն հագնվել և լվացվել էր (առավոտները նա միշտ վաղ է զարթնում. առհասարակ շատ քիչ է քնում), երբ ներս մտա, նստած էր մահճակալի վրա և թաշկինակն՝ իր սովորության համեմատ՝ խաղացնում էր ձեռքին։ Ինձ տեսնելուն պես դեմքը խոժոռեց (այդ առաջին անգամն էր, որ ինձ այդպես էր հանդիպում) և հետո, երեկի ճանաշելով, ժպտաց և, բարեկերու փոխարեն, թաշկինակը քնքորեն իմ կողմը գցեց։ Խսկույն բռնեցի թաշկինակը, նախքան գետին կընկներ, և նստեցի նրա մահճակալի վրա։

— Հայրիկ, ի՞նչպես ես այսօր, — հարցրի թաշկինակը տալով նրան։

— Լավ եմ, — պատասխանեց իր մշտական, բայց այս անգամ, կարծես, ամոթխած ժպիտով և թաշկինակը նորից սկսեց խաղացնել ձեռքին։

Հարցիս տված ուղղակի պատասխանը ինձ շատ ուրախացրեց։

— Բայց ի՞նչդ է ցավում, հայրիկ, — հարցրի, այս անգամ կամաց գրկելով նրա մեջքը։

Նայեց դեմքիս Այլևս չէր ժպտում։

— Ի՞նչ, — հարցրեց, կարծես, խորին մտառությամբ։

— Ասում եմ՝ ի՞նչդ է ցավում, ո՞րտեղդ է ցավում։

Եոր հառաջեց և հայացքը դարձրեց դեպի լուսամուտը։

— Շատ վատ, շատ վատ, — արտասանեց կամաց, բայց այնքան սրտառու ձայնով, որ աշխերս լցվեցին արտասուրով։ Ես ավելի ամուր գրկեցի նրա մեջքը և երկար ժամանակ ոչինչ շկարողացա արտասանել։ Նա թաշկինակն այլևս չէր խաղացնում ձեռքին և՝ կարծես տխուր մտածմունքների մեջ ընկղմված՝ շարունակ նայում էր դեպի լուսամուտը։

— Հայրիկ, ինձ շե՞ս ճանաչում, — հարցրի վերջապես։

Եորից նայեց ինձ, կարծես, աշխատելով մտարերելու, թե ո՞վ եմ։

— Ոչ, — պատասխանեց միայն։

— Ես Աննան եմ, հայրիկ, ես քո աղջիկն եմ, — բացականչեցի։

— Ես աղջիկ չունեմ, — անտարբերությամբ արտասանեց և դեմքը նորից դեպի լուսամուտը դարձրեց։

— Ունես, ունես, ունես, հայրիկ։ Ի՞նչպես չէ, ունես աղջիկ, այդ ես եմ, ես քո Աննան եմ, մի՞թե ինձ չես հիշում։

Նա նույն անտարբերությամբ զլուսը շարժեց միայն և ոչինչ չուստասխանեց։ Հուսահատությունից, վշտից և անզորությունից պատրաստ էի ազիողորմ լաջ լինելու, բայց կարողացա զսպել ինձ։

Երկար ժամանակ մենք լուս էինք։ Առաջվա անորոշ մտախունությամբ շարունակ նայում էր դեպի լուսամուտը, իսկ ես անթարթ՝ նրա դեմքին։ Որքան բաղցր բան էր հիշեցնում ինձ այդ դեմքը, այդ գրավիշ, այդ սիրուն, այդ փափուկ, բաղցր, միշտ ժպտող դեմքը, որ առողջ ժամանակ (հիմա էլ) նայողին, կարծես, գգվում, փայխայում էր և ակամա բարշում դեպի ինքը, սիրեցնել տալիս իրեն։ Երեկայությանս մեջ կենդանի կերպով և զիծ առ զիծ ներկայանում էին նրա այնքան ծիծաղելի ժամածոռությունները, որ նա տալիս էր իր դեմքին կատակ անելիս։ Որքան սպառում էին նրան այդ ժամածոռությունները, որքան շնորհը էր անում նա իր կատակները և որքան սիրում էի այդ... Ճենց որ սկսում էր իր կատակները, ես սկսում էի ծիծաղել։ ծիծաղում էի անդադար, մինչև որ մարմինս թուլանում էր, սիրու ցավում և աշքերս ցրակալում էին։ Մի անգամ նստած էի դաշնամուրիս առաջ և նվագում էի, երբ հանկարծ, կիտած հոնքերով շտապով ներս մտավ և մոտեցավ ինձ։

— Աննա, թե՞ս խարար է, — ասաց, իբրև թե մի անախորժը բանից նեղացած։ — Թե արեգ կարես, վեր կաց, ուզում եմ «Բեթիս» հանդի սենատն» ածել։

«Բեթիս» սոնատը բառերի գիտությամբ այդ աղավաղված արտասանությունը լսելով, թողի դաշնամուրի ստեղունքները և ծիծաղից թուլացաւ։ Նա սկսեց ծաղրել ինձ՝ իմ ծիծաղիս նմանելով։ Դրանից ծիծաղս ավելի սաստկացավ։ Նա նույնպես սաստկացրեց իր նմանողական ծիծաղը։ Ես շկարողացա դիմանալ, վեր թռաւ և կուրծքը բռնած՝ դուրս փախս սենյակից։

Ա՞խ, ինչքան լավ ժամանակ էր այդ. ինչքան երջանիկ էր նա, ինչքան երջանիկ էի ես, ինչքան երջանիկ էինք մենք ամեն-

քրու... Դսկ ա՞յժմ... ա՞յժմ... Երջանիկ, բայց անդառնալի անցյալի և թշվառ ներկայի դառն գիտակցությունը հանկարծ այնպիսի սաստկությամբ ճմբեց սիրտս, այնպես ճմլեց; որ չեմ հասկանում, թե ինչպես կարողացա դիմանալ այդ անասելի տանջանքին: Երկար շկարողացա մնալ նրա մոտ. արտասուրքն արդէն խեղդում էր ինձ. դուրս ելա և ինչպի՞սի դառնությամբ ողբացի մեր երջանիկ, անդառնալի անցյալը...

Ընդունիր ողջունս, իմ անգին քույրիկ:

Ք ո Ա ն ն ա Ս ա ր ո յ ա ն

Է.

Թիֆլիս, 14 դեկտեմբերի 1880

Սիրելի Հախիսիմե,

Հորս ցավալի գրությունն այն աստիճան զբաղեցնում էր ինձ, որ մեր ընտանիքի մյուս անդառների մասին վերջին անգամներս ոչինչ չէի գրում քեզ: Բայց նախ պետք է ասեմ, որ հորս գրության մեջ ոչ մի փոփոխություն չի կատարվել զեպի լավը: Նա դարձյալ ոչ ոքի չի ճանաչում: Մայրս, որ սկզբներում աստիք վշտանում էր և համարյա թե միշտ զաց էր լինում, այժմ, կարծես, հաշտվել է իր գրության հետ, և այլևս ոչ մի տրտունչ չեմ լսում նրա բերանից:— Նա, կարծես, տեղին ու տեղը սառել է: Ամեն օր վաղ առավոտյան մտնում է հորս մոտ, հագնում է, լվացվել է տալիս նրան, թեյ է խմեցնում, ձեռքից բռնած՝ սենյակում մի քանի անգամ անցուղարձ անել է տալիս, կեսօրին իր ձեռքով ճաշ է ուտեցնում և գրեկոյան դարձյալ թեյ, գիշերը հանում պառկեցնում է քնելու, և այդ բռնորը կատարում է լուռ, երթեմն միայն խոր հառաշում է: Շատ անգամ գիշերները լուսացնում է հիմնդի մոտ՝ աթոռի վրա, շնայելով թախանձանքիս, որ այդ պաշտոնի կատարումը ինձ թողնի: Ամեն անգամ, քանի նայում եմ նրա գունատ, նիհարած դեմքին և անկենդան աշքերին, վշտից և կարեկցությունից սիրտս ճմքվում է: Երևակայում եմ, թե ո՞րքան մեծ պիտի լինի այն լուռ վիշտը, որ բույն է դրել նրա սրտում:

Սակայն միայն հորս գրությունը չէ, որ նրան արդպես տանցում է: Գրիգորի գրությունն էլ պակաս մտատանջության առարկա չէ նրա համար: Նամակներից մեկի ժեղ, կարծես, դրել էր

քեզ, որ Գրիգորը հազում է և թիվուների խորհրդով առժամանակ դադարել է գիմնազիոն համախելուց: Խսկ այժմ պիտի ասեմ, որ նրա գրությունն էլ վատացել է: Սկզբներում նրա հազը թեև բոլորովին կտրվեց: Բայց երկու շաբաթից հետո նորից լույս ընկավ և մինչև այժմ էլ շարունակվում է, օր-օրի վրա սաստկանալով, այնպես որ, ոչ գիշերը քուն ունի, ոչ ցերեկը հանգիստ: Աւսումը շարունակելու մասին առայժմ կարելի չէ մտածել անգամ: Հորս գրության հետ ևս համարյա հաշտվել եմ, բայց այժմ սկսել է մտատանչել ինձ Գրիգորի գրությունը, և այդ տանջանքը պակաս տանջանք չէ: Եթե տեսնես, թե որքան նա փոխվել է, և լսես նրա հազը...

Երեկ առավոտյան ժամը տասն և մեկն էր, բայց նա դեռ չէր վեր կացել անկողնից: Չնայելով, որ ցուրտն ու խոնավությունը ստիպում են նրան տանից դուրս չգնալ, բայց առավոտները նա միշտ իր ժամանակին էր վեր կենում և օրվա ընթացքում համարյա երբեք չէր պառկում անկողնում, որքան էլ իրեն թույլ զգար. բայց այդ օրը, ինչպես ասացի, մինչև այդ ժամանակ զեռ չէր վեր կացել անկողնից: Փոքր ինչ վախեցած՝ ներս մտա նրա սենյակը: Շա պառկած էր հանգիստ՝ երեսը զեպի պատն արած: Կարծեցի թե քնած է, այդ պատճառով, որպեսզի շանհանգստացնես նրան, զգուշությամբ մոտեցա նրա մահճակալին: Բայց նա քնած չէր. նրա աշքերը բաց էին և, ինչպես երեսում էր, անձնատուր էր եղել մտածության: Կամաց խոնարհվեցի նրա դեմքի վրա: Նա տեսագինն էնձ, բայց մնաց նույն գրության մեջ:

— Գրիգոր, ինչպես ես,— հարցրի կամաց:

— Լավ եմ, քույրիկ,— պատասխանեց շատ հանդարտ ձարձով:

— Բայց ինչո՞ւ մինչև հիմա պառկած ես:

— Վեր կացա, բայց շատ ցուրտ է, նորից պառկեցի:

Ես մնացի խոնարհված նրա դեմքի վրա: Նա այնքան հանգիստ էր, որ կարծես չէր շնչում:

— Գրիգոր, ի՞նչ ես մտածում,— հարցրի երկար լռությունից հետո:

Իր հայացքն ինձ դարձրեց:

— Ե՞ս:

— Այսու:

— Ես ունին չեմ մտաժում:

Եուու եկավ մեջքի վրա և ուղղակի նայեց աշքերիս:

— Ինչո՞ւ աշքերդ միշտ այդպես կարմիր են, — հարցրեց:

— Աշքերս կարմիր չեն. — փոքր ինչ շփոթված, բայց որքան կարելի էր հանդիսատ ձայնով պատասխանեցի ես և վերմակով ծածկեցի նրա բաց կուրծքը:

Նրա գեմքը դժողովության արտահայտություն ստացավ:

— Է՞-է՞ս, Աննա, դու քեզ ամենակին չես խղճում, — արտասանեց տիկուր ու մեղմ հանդիմանությամբ, և նույն բոպեին սաստիկ չոր հազը կարծես պատոեց նրա կուրծքը: Եուու եկավ պատի կողմը, գլուխը քիչ բարձրացրեց բարձի վրայից, հազաց, հազաց, և անկողնի տակից հանելով թաշկինակը, թեց վրան: Մարսափեցի. թաշկինակի վրա արյուն տեսա, որ առաջ երբեք չել տեսել:

— Դրիգո՞ր, այդ ի՞նչ է, — բացականշեցի ակամա:

— Ի՞նչ է, — հարցրեց հազիկ հանգստացած, բայց սաստիկ թուլացած ընկավ բարձի վրա:

— Արյո՞ւն ես թքում:

— Է՞ս, հիմար բան է, — պատասխանեց, իբրև թե, արհամարհանքով. — արժե՞ ուշադրություն դարձնել:

— Վաղո՞ւց է, որ արյուն ես թքում:

— Վաղուց է:

Անհուն սիրով և միկնույն ժամանակ սարսափած՝ մի ձեռքով կամաց գրկեցի նրան. զգում էի, թե ինչպես սիրու մարում է: Ոչինչ չկարողացա արտասանել: Նա կարծես հասկացավ, թե այդ բոպեին ինչ անցավ մտքովս և ինչ էր կատարվում իմ մեջ: Նա շատ տիկուր ու մեղմորեն ժպտաց, և ես կյանքումս չեմ մոռանալ այն հայացքը, որ նա այդ ժպտի հետ ձգեց իմ գեմքին. բայց նա ոչինչ շարտասանեց, միայն ձեռքը հանեց վերմակի տակից և կամաց, քնքորեն ուղղեց ճակատիս վրա թափված մազերը:

— Այսօր հայրիկի մոտ եղե՞լ ես, — հարցրեց երկար լուսաթյունից հետո:

— Եղել եմ:

— Ի՞նչպես է:

— Ինչպես առաջ:

— Քեզ դարձյա՞լ լճանաշեց:

— Ոչ:

— Մեղանից ոչ ոքի անունը գոնե չի՞ տալիս:

— Ոչ,

— Մայրիկին է՞լ չի ճանաչում:

— Ոչ ոքի:

— Ի՞նչ է խոսում:

— Համարյա ոչինչ, միշտ լուսւմ է:

— Երեկ չի կարողանում խոսել:

— Երեկ:

Երկուս էլ լուցինք:

— Ինչո՞ւ ես ինձ այդպես նայում, քույրիկ, — հարցրեց նա, լուսաթյունը խղելով:

Հանկարծ զգացի, որ արտասուբը խեղում է ինձ: Արագությամբ համբուրեցի նրա ճակատը. թողի և ուղղվեցի գեպի դուռը:

— Աննա, — կանչեց ետևիցս: Կանգ առա, առանց նրա կողմը նայելու: — Մայրիկին ոչինչ չասես:

Հասկացա, որ խոսքն արյան մասին էր:

— Չեմ ասի, — պատասխանեցի որքան կարող էի հանդիսաւ ժայնով, որ, սակայն, չհաջողվեց ինձ, և շտապով դուրս գնացի: Եվ այդ ժամանակ թե ո՛քան և ինչպես լաց եղա, սիրելի քույրիկ, զրա մասին լուսւմ եմ: Միանգամից սրտիս մեջ փշրվեց բոլո՞ր, բո՞լոր հույսս...

Ք ո Ա ն ն ա Ս ա ր ո յ ա ն

Բ.

Եիթիս 21 դեկտեմբերի 1880

Իմ սիրելի Հոփիսիմե,

Չեմ հիշում ո՞ր բանաստեղծն է ասում — «թշվառությունը մենակ չէ զալիս», և այդ ճիշտ է: Մեր անկումը որքա՞ն թշվառություններ բերեց իբ ետևից և ո՞վ ճիտե, զեռ էի որքա՞ն է բերելու: — Հայրս անդամալույծ եղավ և խելագարվեց. Գրիգորի գրությունն օր-օրէ վրա սկսեց վատթարանալ, մայրս ոտի վրա հալցում է, իսկ այժմ ճերթք հասել է մյուս երկու եղբայրներիս: — Ճեծին, Արշակին, ահա ճերորդ շաբաթն է զնում, ինչ հեռացրել են ուշտոնից արբեցողության համար, իսկ փոքրին — Գարեղինին գոնդել են ուսումնարանից ծովության համար: Դրանք էլ սակաս թշվառություններ չեն մեր ներկա դրության մեջ, մանավանդ առա-

— 261 —

շինը՝ մեծ եղբորս անպաշտոն մնալը, որովհետև մեր ամբողջ ընտանիքի միակ հույսը նա էր։ Մեր նախկին հարստությունից գեռ էլի մի բան մնացել է մեզ և մենք գեռ բոլորովին նեզը չենք բնկել, բայց երբ այդ «մի բանն» էլ կհատնի և շքավորությունը («վ ոհտե, գուցե և ծայրահեղ աղքատությունը») ներս մտնի մեր տուն, այն ժամանակ ի՞նչ պիտի անենք, ինչո՞վ պիտի ապրենք, ինչո՞վ պիտի կերակրվենք... Այժմից արյունս պաղում է, զառն, անտանելի զառն մտածմունքներ ճնշում են հոգիս, երեակայում եմ, թե մոտիկ ժամանակներում ի՞նչ սոսկալի զիճակ է սպասում մեզ— Աղքատություն... Անգին քույրիկ. արդյոք հասկանո՞ւմ ես, թե ինչ է նշանակում այդ բանը մեզ համար։— Աղքատությունը միշտ երեակայում եմ որպես հազար գլխանի մի հրեշ, որ մեզ իր սառը գրկի մեջ առած՝ իր սարսափելի ժանիքներով դժոխային անհագ բավականությամբ կամաց-կամաց պիտի քաղի մեր հոգին։ ՄՀ, հազար անդամ ավելի լավ է, որ մարդ առաջուց մեռնի, քան մի օր անգամ զգա իրեն այդ սոսկալի հրեշի գրկի մեջ, ապա թե ոչ մարդու ամբողջապես երկաթից պիտի լինի կազմված, որպեսզի կարողանա տանել դրա բարոյական և ֆիզիկական բոլոր հալածանքները։ Գուցե խոսքերս քեզ շափազանցություն թվան, սիրելի քույրիկ, գուցե աղքատությունն իսկապես այնքան էլ սարսափելի չէ ինչպես ես եմ նկարագրում, բայց ես ուրիշ կերպ շեմ կարող երեակայել։ Ի նկատի ունեցիր, թե մինչև այժմ ի՞նչպես եմ մեծացել, կենսական ի՞նչպիսի պայմաններում և այսուհետև ինձ ի՞նչ է սպասում, ի՞նչպիսի կյանք։ Մանկական հասակիցս ես շրջապատված եմ եղել դայակներով և աղախիններով. ես երբեք շեմ իմացել, թե ինչ է նշանակում չոր կամ սև հաց. կերակուրս միշտ թարմ է եղել և ամենահամեղ խորտիկները։ Երբ հագուստիս վրա մի աննշան յուղ է կաթել կամ ծայրը փոքր ինչ պատովել, այլև շեմ հագել այն Երբ մագագինների առաջով անցնելիս նրանց ցուցանակների վրա դարսուած իրեղեններից մի որևէից բան հավանել եմ, նույն օրը գա իմս է եղել։ Երբ մի որևէ ինձ պես հարուստ օրիորդի հագին տեսել եմ մի որևէ նորածն շրջազգեստ, պիսարի կամ մի ուրիշ բան և հավանել, մի բանի օրից հետո ես էլ ունեցել եմ այնպիսին։ Մի խոսքով՝ ես միշտ ապրել եմ լիովիտն և փափկակեցության մեջ։ Բայց հանկարծ այդ բոլորից հետո— ծայրահեղ թշվառություն, ծայրահեղ աղքատություն, սև, չոր հաց— և այն ոչ միշտ, — մութ սենյակ, անվերջ աշխատանք, մեր-

իություն, ցուրտ, հիվանդություն, անվերջ պրկանքներ, վիշտ, տառապանք, լաց, ողբ, հալածանք, արհամարհանք, սառը կարեկցություն, վիրավորանք, ամոթ, անպատճություն, անզոր բարկություն, անպաշտուանություն, տանջանք, անվերջ տանջանք... Ո՛հ, ըավական է. երեակայելով անգամ կարելի է խելագարվել...

U. U.

Թիֆլիս, 2 հունվարի 1881

## Սիրելի Հռիփսիմե,

Ահա և նոր տարին: Եկավ և յուրաքանչյուրի համար նվեր  
բերեց այն, ինչ որ նա առաջ էլ ուներ: — Երջանիկներին՝ նոր եր-  
ջանկություն, ուրախացողներին՝ նոր ուրախություն, ժպտողներին՝  
նոր ժպտներ, իսկ թշվառներին՝ նոր թշվառություն, տանջվողնե-  
րին՝ նոր տանջանքներ, արտասպողներին՝ նոր արտասուրք... Յու-  
րաքանչյուրին յուրը: — Աշխարհի սկզբից մինչև այժմ բոլոր նոր  
տարիներն այդպես եկել են, այդպես էլ կդնան: Անխոնչ ժամա-  
նակն յուր հավիտենական ընթացքի այդ որոշ շրջանառություննե-  
րի սկզբնավորության մեջ միայն հաստատում է այն, ինչ որ ցա-  
նել են այն անշեղ, անիմանալի օրենքները, որոնք ընդհանուր  
անունով կոչվում են բախտ: Եվ դեռ մարզիկ նախապաշտումնե-  
րով են նայում նոր տարո: Վրա, ագահ երջանիկները նոր ուսկի  
ժամեր են երազում, կարոտ թշվառները: — Մի քիչ պայծառ ոռպե-  
ներ: Երջանիկներ, դուք ստանում եք ձերը, բայց Թշվառներ,  
ինչո՞ւ դուք ստանում եք դարձյալ այն, ինչ որ արդեն ունեք: —  
Յուրաքանչյուրին յուրը, — հանդիսավոր կերպով աղաղակով է  
անտարբեր ճակատագիրը՝ անհոգ նոր տարու հետ զուգընթաց շլո-  
հալով աշխարհի մի ծայրից մյուսը:

Մենք էլ ստացանք մերը, այսինքն՝ նոր թշվառություն, նոր արտասուզ, նոր տանչանքներ... Ահ, եթե կարողանայի գոռալ սրտով և խորին արհամարհանքով նայել անամոթ նոր տարու զգեստի ժամաներին. Եթե՝ կարողանայի արգելել նրա մուտքը գիտակցությանս մեջ.— Ես վիրավորված հպարտությամբ կնայեի նրա լիքը. երեսին, անտարբերությամբ կշրջեի նրանից գեմքը և

սիրելով տանջանքներս՝ կփայփայեի նրանց սրտիս մեջ և հերոսաբար կտանեի նրանց, թայց մարդկային հոգեկան կազմը կամքին երեք շի հպատակում. նա գործում է այնպես, ինչպէս թելադրում են նրան բնության անկախ օրենքննրը:

Ո՞հ, թշվա՛ռ մարդ, ի՞նչ մեղք ես գործել...

Երեկ, նոր տարու առաջին օրը, առավոտվանից փակվեցի սենյակումս և ողջ օրը մտադիր չէի դուրս գալու այնտեղից: Նոր տարին կատաղության և ատելության մի այնպիսի զգացմունք էր ներշնչել ինձ, որ ես այդ օրը կատարելապես ոչ ոքի չէի ուզում տեսնել, — ո՛չ հորս, ո՛չ մորս, ո՛չ եղբայրներիս, ո՛չ ոքի. ես ուզում էի կենտրոնանալ միայն իմ մեջ, ես ուզում էի մոռանալ ամենքին և ամեն ինչ... Ի՞նչ է ուզում ինձանից նոր տարին, — ասում էի ինքս ինձ, — երբ ես հրանից ոչինչ չեմ ուզում: — Եվ, իրավ, եթե հաստատապես գիտենայի — և այդ հնարավոր լիներ, — որ նոր տարին այդ օրը պիտի վերադարձներ ինձ վաղաթոիչ ոսկի անցյալս, ես կմերժեի և ներկա թշվառությանս մեջ ինձ երշանիկ կհամարեի, եթե այսօր նա անցներ մոտովս և ուշք չդարձներ վրաս, իբր թե աշխարհիս երեսին այդ օրվա հազարավոր մեռածներից մեկն էլ եմ: Եվ կհավատա՞ս արդյոք, քույրիկ՝ այդ ժամանակ ես ինձ բնավ թշվառ չէի զգում: Մրդյոք այդ նրանից՝ որ ես շափից դուրս արդեն թշվառ էի, թե՝ նրանից՝ որ նոր տարու դեմ սաստիկ կատաղության զգացմունք էր զարթնել իմ մեջ, — չգիտեմ, միայն այս ճշմարիտ է, որ ես այդ ժամանակ առաջվա պես չէի տանջվում: Մի տեսակ կաշկանդումն էր տիրել ինձ, ես ինձ վեհանձն, սառնասիրտ էի զգում. կարծես մեկն ինձ սաստիկ վիրավորել էր և երբեք չէի կարող նրան ներել: Ես հպատանում էի գրությունովս, և այժմ էլ զգում եմ, թե ինչպիսի արհամարհանքով էի նայում անգամ ինձ շրջապատող առարկաներին:

Օրը շատ տիսուր էր. երկինքը պատած էր այն ծանր, միակերպ մոխրագույն մառախուղով, որ նայողի վրա ծովություն և քուն էր բերում: Զյունը գալիս էր սաստկությամբ. նրա փաթիլներն՝ անթիվ համատարած ճանճերի նման օդի մեջ միմյանց խառնվելով և կարծես գոհ իրենց վիճակից՝ թեթե կերպով թափվում էին գետին: Քամու թեթե շունչն ընդհանուր հոսանքից երթեմն շեղում էր մի քանի փաթիլներ և հազիվ լսելի ձայնով խփում էր լուսամուտիս ապակիներին: Սենյակումս ցուրտ էր. վառարան վառում ենք

միայն հորս և Գրիգորի սենյակում: Շալի մեջ փաթաթվելով, վերցրի Դոստուկսին և սկսեցի կարդալ, թեև կարդալու ամեննեին ցանկություն չունեի: Ես ուզում էի մի կերպ սպանել այդ անտանելի օրը և դրա համար պատրաստ էի ամեն բան անել: Դոստուկսին ես երեք շեմ սիրել. առաջ մի բանի անգամ փորձել էի կարդալ և ամեն անգամ էլ հենց առաջին երեսների վրա ձանձրացել ու շպրտել էի մի կողմ, թայց այս անգամ — չգիտեմ ինչո՞ւ նա գրավեց ինձ: Թեև սկզբում կարդում էի մեքենայաբար և կարդացածից համարյա ոչինչ չէի հասկանում, թայց հետզհետե մտառությունս լարելով՝ այնպիսի հետաքրքրությամբ սկսեցի կարդալ, որ ի վերջո բոլորովին անձնատուր եղա ընթերցանությանս: Չգիտեմ որքան ժամանակ էր, որ կարդում էի, երբ սենյակիս գուան բացվելն ուշագրությունս իր կողմը գրավեց: Ներս մտավ մայրու: Նա նույնն էր, ինչպես տեսնում էի նրան ամեն օր. — Նույն անգամ բայլվածքը, նույն մեքենայական շարժումները, դեմքի նույն մեռած արտահայտությունը. միայն այս անգամ նրա աշբերն ավելի մեծացած էին, զեմքն ավելի գունատ էր: Ամեն տարի կաղանդի օրը միշտ, ինչպես հարկն է, առաջին անգամ ես եմ մտել մորս մոտ՝ շնորհավորելու նրա նոր տարին, թայց այս անգամ, երկի հասկանալով դրությունս և տեսնելով, որ ես երկար ժամանակ սովորությանս համեմատ շեմ մտնում իր մոտ, նա առաջինն ինքն էր գալիք ինձ մոտ: Նրա դեմքին նայելով, իսկույն հասկացա, որ այդ այդպես է: Նա մոտեցավ ինձ:

— Ծնորհավոր նոր տարի, աղջիկս, — արտասանեց դողդոցուն ձայնով, գրկեց ինձ և համբուրեց ճակատու:

Այդ րոպեին հանկարծ չգիտեմ ինձ ինչ պատահեց, միայն քիչ հետո զգացի, որ ամուր, ամուր սեղմում եմ նրա մեջքը ձեռքովս, դեմքս ծածկել եմ նրա կրծքի մեջ և զառն, անտանելի դառն արտասուբները խեղդում են ինձ: Ո՞ւր շբացավ արդյոք առաջվա սառնասրտությունս, անտարբերությունս, կատաղության և ատելության զգացմունքներս, — այդպիսի բան այլևս չէի զգում. զգում էի միայն առաջվա ինձ ծանոթ վիշտը, որ այս անգամ կրկնապատիկ սաստկությամբ էր ճալում սիրտս:

Մայրս իմ գլուխն առել էր իր ճեռքերի մեջ, և ես զգում էի, որ նա նույնպես արտասվում է: և քնքշորեն համբուրում մազերս: Վերցապես զսպեցի ինձ, թողի նրա մեջքը և նայեցի դեմքին: Նա նույնպես թողեց ինձ:

— Ինչո՞ւ հանգստացած սիրտս նորից վրդովեցիր, — ասավ ակամա զժկամությամբ, և զգացի, որ ձայնս այնպես չի հընշում, ինչպես ամեն օր խոսում էի նրա հետ:

Նա, ըստ երկութիւն, հասկացավ, թե դրանով ինչ էի ուզում ասել, կամաց, շատ կամաց հառաջեց և, երեւ ծանր բռպեն ավելի շծանրացնելու համար, ոչինչ շպատասխանեց. այլ միայն հարցրեց.

— Ինչո՞ւ ես այս ցուրտ սենյակում նստել. խո կմրսես:

— Ես զնուել իմ այսօր այս սենյակից բռլորովին դուրս շըգալ, — ինքս էլ շիմանալով, թե ինչ բանի համար՝ բարկացած պատասխանեցի. և Դոստուսկին նորից ձեռքս առաւ:

— Ես քեզ ի՞նչ եմ արել, որ ինձ վրա բարկանում ես, Աննա, — կարճ լուսթյունից հետո ասաց մի այնպիսի անմեղ և տխուր եղանակով, որ կարծեցի, թե սիրտու հազար կտոր արին:

— Իսկ ե՞ս քեզ ինչ եմ արել, որ ինձ այդպես տանջում ես, — աղաղակեցի, գիրքը շպրտելով հատակի վրա և, դիմքս ծածկելով ձեռքերիս մեջ, սաստիկ ցնցողարար լաց եղաւ:

— Երբ որ այդպես է, դուրս կդնամ, — կարծես ներազություն խնդրելով, ասաց և ուզգվեց դեպի դուռը:

— Դու ինձ չես հասկանում, մայրիկ, — բացականչեցի ես խնդահարված և անտանելի տանջանքով! — Ես բարկանում եմ ոչ թե քեզ վրա, — դու ինձ ի՞նչ ես արել, իմ խեղճ, իմ քաղցրիկ մայրիկ, — այլ բարկանում եմ... ինձ վրա... միայն ի՞նձ վրա... չիմարությանս վրա, բնափորությանս վրա, մտածմունքներիս վրա, տանջանքներիս վրա...

— Աննա, սիրելիս, — իր մեղմ, տիտուր, փաղաքող ձայնով արտասանեց նա, — եթե քեզ չես խնդում, գոնե ինձ խոճա: Ներկա դրությունս մի՞թե բավական է, որ ողում ես նոր հոգսեր և տանջանքներ էլ պատճառել ինձ, Տեսնո՞ւմ ես ինչ եմ դառել այս մի բանի ամսվա մեջ...

— Այլս չեմ անի, անգին մայրիկ, ների՛ ինձ, — բացականչեցի և անհուն սիրով փաթաթվեցի նրա վզով:

Այդ բռպերին ի՞նչ չէի անի, ի՞նչ զո՞հաբերություններ. միայն թէ նրան հավատացրած լինեի, որ նրա յուրաքանչյուր տանջանքն ինձ համար հազարավոր տանջանքներ արժեն:

Նա ձեռքով կամաց փաղաքեց գլուխս և ասաց.

— Աննա շան, մտածմունքների անձնատուր մի՛ լինիր և

խուսափիր մենակությունից: Ինչո՞ւ այսօր փակվել ես այստեղ և չես ուզում դուրս գալ... Ավելի լավ չի լինի, որ գնաս Գրիգորի մոտ և խոսես նրա հետ կամ թե՛ եթե ուզում ես կարդալ, կարդաս նրա մոտ, որպեսողի նա էլ զրադվի. խեղճը պառկած է մենակ:

— Դու գնա, մայրիկ, ես էլ իսկույն գալիս եմ, — շտապով ասացի՝ թողնելով նրան: — Իսկույն գալիս եմ, գնա:

Նա դուրս գնաց:

Անմիջապես լվացի աշքերս և նստեցի, որպեսզի սիրտս խաղաղի: Չէի ուզում, որ Գրիգորն իմանար, թե հուզվել և լաց եմ եղել. այդպիսի դեպքերում նա ինձ միշտ հանդիմանում էր: Երբ բավական հանգստացա, գնացի նրա մոտ: Բոլորովին հազնված՝ նա նստած էր անկողնի վրա՝ և գլուխը ձեռքին հենած՝ թիկն էր տվել բարձին. բայց իմ մտնելուն պես՝ նստեց ուզիդ և խոր նայեց աշքերիս: Ինձ թվաց, որ իսկույն հասկացավ թե ինչ էր կատարվում իմ մեջ, և շնայելով, որ այս անգամ ոչինչ շասաց ինձ, բայց նրա հայացքն էլ բավական էր, որ ես շփոթվեի, ինչպես նրա հանդիմանությունների ժամանակ: Բարեկեցի և նստեցի նրա մոտ՝ աթոռի վրա:

— Ծնորհավոր նո՞ր տարի, քույրիկ, — առանց բարկիս պատասխանելու, ասաց նա մի այնպիսի եղանակով, որից իսկույն իմացա, որ գրանով ուզում էր ինձ հասկացնել, թե բարեկից առաջ ա՛յդ պետք էր ասել և թե այդ ասելն առաջ ինձ էր պատկանում:

— Ա՞խ, դու է՞լ, — բացականչեցի դառնությամբ, — ի՞նչ եք տեսել այդ անհծյալ նոր տարու մեջ, որ ամենքդ էլ շնորհավորում եք ինձ:

— Ծնորհավոր նո՞ր տարի, քույրիկ, — կրկնեց նա առաջվանից ավելի հաստատ ձայնով և ծպտալով մեկնեց ինձ իր ձեռքի:

Ես լուր տվի նրան իմը: Սեղմեց, հետո համբուրեց և նորից թիկն տվեց բարձին:

— Նոր տարին քեզ ի՞նչ է արել, Աննա, որ նրան այդպես ատում ես, — կարճ լուսթյունից հետո հարցրեց նա, անթարթ նայելով աշքերիս:

Շփոթվեցի, չիմացա ինչ պատասխանեմ: Իրավ, ինչո՞ւ նոր տարին ատում էի, ինքս էլ զգիտեի:

— Որովհետեւ նախապաշարմունք է, — հանկարծ և մեքենայաբար պատասխանեցի բերանիս եկածը:

— Ի՞նչը, նոր տարի՞ն, թե շնորհավորելը:

— Շնորհավորելու

Նա ժպտաց և նրա ժպիտը, կարծես, ասում էր — ինչո՞ւ ևս ասում այն, ինչ որ չես ուզում ասելու

— Մի՞թե նախապաշտունք չէ այն, — նկատեց նա, — որ այդ բարեցիր ինձ, ի՞նչ զանազանություն կա առօրյա բարեկ և նոր տարին շնորհավորելու մեջ:

— Ես ոչինչ չպատասխանեցի և աշքերս վայր թողի: Զգում էի, որ այդ միջոցին մի առանձին հայացքով նա անթարթ նախում է դեմքիս:

— Շիտե՞ս ինչ կա, Աննա, — վերջապես խոսեց Գրիգորը շատ խորհրդավոր ձայնով, որ ես առաջին անգամն էի լսում նրանից ինձ հետ ունեցած խոսակցության ժամանակ: — Այս վերջին ժամանակներս նկատում եմ, որ դու այլևս այն չես, ինչ որ առաջ:

Հետաքրքրությամբ և միկնույն ժամանակ մի տեսակ անբացառաբերի երկյուղով նայեցի նրան: «Ի՞նչ է ուզում ասել» ակամա հարցրի ինքս ինձ: Նա ուղղակի և շատ լրջորեն, մինչև անգամ խստորեն նայում էր աշքերիս:

— Այո, նկատում եմ, որ դու այլևս այն չես, ինչ որ առաջ, — կրկնեց առաջին նման, — և այդ պատճառով ուզում եմ քեզ հետ այդ մասին խոսել լրջորեն. Առաջ դու միշտ ուրախ էիր, միշտ անհոգ միշտ ժամանում կամ ծիծաղում էիր, ոչ մի ժամանակ չէի տեսել որ տիսուր լինեիր կամ որկիցտ բանի մասին լուրջ մտածեիր, թեև մեր շուրջը, առօրյա կյանքի մեջ միշտ եղել են թեկուզ մեր անձնականությանն ուղղակի շվերաբերող այնպիսի երեսույթներ, որոնց մասին արժեր և արժե. որ ամեն մեկը տիսուր և լուրջ ժտածեր: Մի խոսքով զու առաջ քեզ կատարելապես երջանիկ էիր զգում... իսկ այժմ միշտ տիսուր ես, միշտ լաց ես լինում, միշտ մտածում ես. մի թեթև ժպիտ անգամ այլևս չեմ նկատում դեմքիդ... Այդ բոլորն իհարկե, այդպես էլ պիտի լինի և ուրիշ կերպ չի կարող լինել որովհետեւ գրա համար ունես առիթներ, որոնք բնականաբար քեզ պետք է այդպես փոխեին: Եվ ես չեմ ուզում ասել, — և հիմարություն կլիներ, եթև ասելիքը այդ լիներ միայն, — թե ինչո՞ւ առաջ այնպես էիր, իսկ այժմ — այսպես, ոչ: այլ ուզում եմ ասել և շեշտել, Աննա, որ այս վերջին ժամանակներս, ինչպես այդ պարզ նկատում եմ, զու շատ ես և ածում:

— Ի՞նչ, — մի տեսակ անոռող երկյուղով մեքենայաբար հարցի ես և աշքերւ նորից վայր թող՝

— Այն, — պատասխանեց նա յուրաքանչյուր բառն առանձին շեշտելով, — որին մարդուս խելքը ոչ հասել է և ոչ կհասնի երբեք...

Ամբողջ մարմնովս ցնցվեցի. կարծես մի սարսափելի ոճիր լինեի կատարած և այդ ոճիրը հայտնի եղավ: Նա, ինչպես ինձ թվաց, նկատեց այդ, նստեց ուղիղ, թեքվեց դեպի ինձ և կամաց, կարծես զդուշությամբ, առավ ձեռքս:

— Անդին քույրիկս, — արտասանեց նա հանդիսավոր շշնչունով, որի մեջ լսվում էր և մի տեսակ պաղատանք, — թող կասկածը բնության արարության, և մարդկային կյանքը զեկավարող օրենքների մասին երրեք շմոտենա մանուկ ուղեղիդ: Ոչ մի, կատարելապես ոչ մի բավարար եղրակացության շհասնելով, նա ծնում է լոկ հանցանք: Թող անմեղ սրտիդ մեջ հավատը միշտ մաքուր, միշտ հաստատ մնա, որպես զինջ լույսը: Հավատը հուսու է, իսկ հույսը — կյանք: Եվ գիտե՞ս արդյոք, թե ո՞րքան զահել լսու և այդ հասակում ո՞րքան անմեղ պետք է լինի հոգիդ... Աղոյք անո՞ւմ ես, — հանեարծ հարցրեց, գլուխն ավելի մոտեցնելով դեմքիս և ձայնը բոլորովին ցածրացնելով:

— Ոչ, — ակամա դուրս թռավ բերանիցս:

Նա գլուխը տիսուր և հանդիմանորեն շարժեց և կարճ լուսաթյունից հետո սկսեց բացատրել ինձ, թե ինչ է աղոյթքը և ինչպիսի փրկարար զենք է նա հոգեկան և բարոյական խաղաղության համար: Եվ այնպիսի համոզիչ այնպիսի հանգիստ պերճախոսությամբ էր նա բացատրում, որ ես՝ ագահությամբ լսելով հանդերձ՝ մնացել էի բոլորովին զարմացած, թե ինչպես նրա տակավին երիտասարդ ուղեղին մատչելի էին այդպիսի վերացական գաղափարները: Բայց նա կարողացավ ինձ համոզել, և երեկվանից դես զգում եմ, թե մի ծանր բեռ ընկել է վրայիցս:

Ք ո Ա ն ն ա Ս ա ր ո յ ա ն

ԺԱ.

Թիֆլիս, 10 փետրվարի 1881

Սիրելի Հռիփսիմե,

Դու էլ ես մեղադրում ու հանդիմանում ինձ այն բանի համար, ինչ բանի համար որ մեղադրում և հանդիմանում էր Գրի-

գործ. Նրա ասելով, ես «շատ եմ մտածում»: Սակայն դու նրանից տվերի խիստ ես դատաքննում իմ այդ վարմունքը, ասելով, թե՝ ես ուղղակի «աթեխտություն» եմ անում, ոտնակոխ եմ անում ամբողջ մարդկության ամենասրբազնան, անմերձենալի հավատալիքն ի այդտեղ բերում ես Գյոթեի նշանավոր խոսքերը, թե՝ «մտածող մարդու ամենամեծ երջանկությունն այն է, որ քննելին քննած ունենա, իսկ անքննելին խաղաղ հոգով պաշտե»: Երևակայում եմ, թե ինչ կլիներ դրությունս, եթե ապրելիս լինեի միջին դարերում անշուշտ Հուսի նման ինձ էլ խարույկ կրարձրացնեին Թա՛վ լիցի, սիրելի բույրիկ: Հուն ուղար մի՛ շիներ: Մի՛թե գլխումս խելք է մնացել, որ արարքներիս համար ինքս ինձ հաշիվ տամ: Ինչո՞ւ չես մտնում դրությունս և ապա թե դատաքննում արարքներս: Ամբողջ բարոյական աշխարհ: Տակատագրից ծանր հարված է ստացել. նա վիրավորված և կատաղած է, որպես մի անզոր գաղան, որին խաղաղ դրության ժամանակ սաստիկ անհանգստացրել են: Հիասթափությունս մեծ է. ես դիմ առ դիմ կանգնած եմ դառն իրականաթյան առաջ, որի մասին կյանքիս մեջ երթեք գաղափար անգամ չեմ ունեցել: Շատ վատ խաղ է խաղացել ինձ հետ ճակատագիրք: Հանկարծակի և անպատրաստ, նա շպրտել է ինձ այդ դառն, այդ ոսկալի իրականության առաջ և ասում է՝ հաստատուն մնա:— Այս, թշվառականս, ինչ եմ ստացել, որ ինչ տամ...»

Մեր վիճակն օր-օրի վրա վատթարանում է: Մի երկու խոսքով ներագրեմ թեղ մեր կենցաղավարությունը, մեր ապրուստը, և դու ամեն բան կհասկանաս: Եթե այժմ մտնես մեր տունը, շրջես մեր սենյակները և քեզ ասեն, թե՝ այստեղ Սարոյաններն են ապրում, ոչ աշքերդի կուգես հավատալ, ոչ ականջներիդ. այն բոլորը, ինչ որ կտեսնես, շատ ծիծաղելի— չեմ ասում դառն— կատակ կիշվա քեզ:— Տան մոայլ շինությունն և անհարմարությունները մի կողմ թողնելով (այդ մասին կարծեմ, գրել եմ քեզ), մեր սենյակների նախկին շուայլ, փառավոր զարդարանքների և կահավորման հետքն անգամ չես կարող գտնել այժմ, դաշնամուրից, իմ սիրելի դաշնամուրից սկսած մինչև վերջին բազկաթոռը, մինչև լուսամուրի վերջին վարագույրը— բոլորը վաճառեցին աճուրդով: Խոհարի, աղախնի և ծառաների մասին, իհարկե, ավելորդ է անզամ խոսել: Հունենք գոնե մի հատիկ ծառա, որին փողոց ուղարկենք: Առեն բանի մեջ— ուտելում, խմելում, հագնելում— սաստիկ խնադանիթյուն ենք անում, անում ենք ճարահատյալ, ել չեմ գրում, թե

այդ բոլորը ո՞րքան զդալի է մեզ համար, այդ ինքող էլ կարող ես երեկայել... Տանը գտնված ավելորդ ոսկեղենը և արծաթեղենը արդեն սկսել ենք վաճառել: Առավելապես մեզ քանդում են բժիշկների վարձն ու գեղորացքը. գոնե դրանից մի զդալի օգուտ լի՛ եր հորս կամ եղբորս: Ահա ամբողջ շորս ամիս է, որ այդ բժիշկները զանասիրությամբ հաճախում են մեր տուն և շնայելով դրան, հորս դրությունն այժմ էլ համարյա նույնն է, ինչ որ առաջ, իսկ Գրիգորի առողջությունն, ընդհակառակն, օր-օրի վրա ես ու ետ է գնում...»

Հա, բժիշկներ ասացի, միտս եկավ: Ահցալ անգամները (այդ մասին, կարծեմ, քեզ շեմ գրել) հորս բժիշկը— (դու պետք է որ ճանաշում լինես այդ պարոնին) գառնում է. մեզ և ասում է ծածուկ, թե հորս այլևս ոչինչ չի օգնիլ և իզուր համ նա: է շարշարվում (ասա խեղճն ինչ է շարշարվում), համ մենք. «Եթե ուզում եք, ասում է, այնպիսի գեղ կտամ, որ վերջնականապէս կորոշի նրա վիճակը»: Հասկանո՞ւմ ես, սիրելի բույրիկ, թե դրանով ինչ դուզում ասել, ուզում էր ասել՝— ձեր կյանքն իմ ձեռքին է: Ուզո՞ւմ եք, ես նրան կսպանեմ... Զարմանքից, սարսափից և կատաղությունից զգիտեք ինչ պատասխանեմ: Սառնասրությունս կատարելապես կորցնելով, պատրաստ էի մի ապտակ տալ նրա գեր երեսին և կտայի, եթե նա, նայելով, թե բանն ինչումն է, իսկույն շնեռանար: Ես աղաղակեցի նրա ետևից, որ նրա ուղևոր այն այլևս Ալինի մեր տանը: Եղր նա գնաց, ես լաց եղա, որ վճառու որդիական ամենասուրբ, ամենաքնքուց զգացմունքներս անասելի կերպով վիրավորված էին: Հարազատ հոր աննպատակ սպանման գործի մեջ ուզում էին որ հարազատ աղջիկը խորհրդակից և մասնակից լիներ... Այս մասին մտածելիս անգամ, մազերս փշաքաղվում են և ամեն անգամ սոսկում եմ, որպես մի զարհուրելի սճրագործ... Տեր աստված, մի՛թե բժիշկներն այգպես հեշտ կարող են խաղալ իրենց հիվանդների կյանքի հետ. մի՛թե ասանց զարհարանքի նրանք կարող են նույնիսկ մտածել այգպիսի բաներ... Նրանք, որոնց ուղղակի կոշումն և հոժարակամ պարտականությունն է հիվանդներին կյանք տալ, ընդհակառակների առաջարկում են ունեցած կյանքն էլ խլեք, և այդ ինչո՞ւ— որովհետեւ իրենց գործից ոչինչ չեն հասկանում և, խոստովանելով այդ բանը, չեն ուզում հրաժարիել, բժշկելուց, որպեսզի լիսայտաւ:

ռակվեն իրենք... Ավազակ մարդասպաններն ավելի խիղճ ունեն  
թերեւս:

Մյուս երկու եղբայրներս— Արշակն ու Գարեգինը— ըալա-  
կան չէ, որ անգործ են, այլև մի ծանր բեռ են դարձել մեր վկին:  
Երկուսն էլ ամբողջ օրն ընկած են տանը և ձրի ուտում են, խմում:  
Արշակին այլևս ոչ մի տեղ չեն պահում իր արբեցողության հա-  
մար, իսկ Գարեգինն ինքը չի ուղում ոչ մի տեղ կանգնել: Չնայե-  
լով մեր հորդորանքներին, թախանձանքներին և հանդիմանու-  
թյուններին, ոչ Արշակն է ուղում ձեռք վերցնել իր արբեցողու-  
թյուններից, ոչ Գարեգինն— իր ծովությունից: Ա՛խ, Հայր, Հայր,  
որքան տառապանքներ բերիր մեր գլխին... Նրա առողջության ժա-  
մանակ, ամենքս սիրում էինք նրան և վախենում նրանից: Թողնե-  
լով իր զգարճություններն ու կատակները, Հարկավոր դեպքում  
գիտեր լուրջ խոսել, լուրջ խրատել: Մենք աշխատում էինք այնպի-  
սի անգործեկան բան շանել, որի համար նա հանդիմաներ մեղ. իսկ  
այդպիսի գեղքերում նրա հանդիմանությունները շատ խիստ էին  
լինում: Կարո՞ղ էինք Գրիգորը, ես կամ Գարեգինը գեթ մի օր  
առանց մի որևից Հարգելի պատճառի ուսումնարանից ետ ըն-  
կընել, կարո՞ղ էր Արշակը՝ նրա հետ միասին ճաշի նստած ժամա-  
նակ՝ մի բաժակ ավելի խմել: Իսկ ա՞յժմ: Այլևս չկա հայր, հա-  
վիտյան լուցին նրա հանդիմանությունները, նրա խրատները,  
այս, հավիտյան, որովհետեւ այն, ինչ որ կար, էլ չի լինելու  
անցյալն էլ չի դառնալու Վայ նրան, ով տեր չունի:

Երկու եղբայրներիս անգործ մնալը՝ մեր այս թշվառության  
ժամանակ՝ սաստիկ մտատանջություն է պատճառում մանավանդ  
Գրիգորին: Էլ ոչ մի հանդիմանություն, ոչ մի նախատինք չի  
լինում, որ շթափի նրանց գլխին, բայց նրանք ուշադրություն չեն  
զարձնում ոչ նրա և ոչ ինձ ու մորս վրա, երբ մենք նույնպես  
սկսում ենք հանդիմանել, հորդորել, խնդրել, որ նրանք թողնեն  
հունց պակասությունները և մի գործի կանգնեն:

Երեկ մտա Գրիգորի սենյակը: Նա այնտեղ չէր, բայց Հարեան  
սենյակից լսեցի նրա ձայնը. խոսում էր Արշակի և Գարեգինի հետ.

— ... մի՞թե գոնեւ ամոթ, պատկառանք չունեք, — ասում էր  
նա: — Այս մինչև ե՞րբ պիտի այդպես ման գաք... Տեսնում եք,  
էլի, թե հետզհետեւ մեր վիճակն ինչ է դառնում, օր կգա, որ դուք  
այստեղ հացի կտոր անգամ չեք գտնիլ, որ ուտեք: Գոնե ձեզ հա-

մար, ձեր փորի համար աշխատեցեք... Եվ ի՞նչ հուսով եք այդպես  
անում:

— Մի վախի, աշխարհիս երեսին ոչ ոք քաղցած չի մեռնի,  
լսեցի մեծ եղբորս ձայնը, որին հետեւց երկար հորանջում:

— Եվ առանց ամոթի, — նկատեց Գրիգորը: — Եվ դու ըն-  
դունակ կինես ծանոթներիդ, բարեկամներիդ, թեկուզ հնց բոլո-  
րովին անհւանոթ մարդկանց պարզել ձեռքդ՝ ողորմություն խընդ-  
բելո՞ւ... Հւի՞:

— Դեմ, շատ պետք է զահլա տանե՞ս, — բարկացած գոռաց  
Արշակը: Ե՞րե սիրու շատ է այրվում ծնողներիդ և քրոջդ համար,  
կարող ես ինքը աշխատել:

Դեռ կարճ ժամանակ լուսություն տիրեց, հետո լսվեց Գրիգո-  
րի շոր հազը:

— Դու այնքան չես մտածում, որ եթե ես— չեմ ասում քեզ  
պես, փոքր ինչ առողջ լինեի, թանն երբեք այնտեղ չէի հասցնի,  
որ իմ այդ պարտականությունը դու ինձ հիշեցնեիր, — հանդարտ  
ձայնով պատասխանեց նա, երբ հազը կտրեց: — Բայց դժբախ-  
տաբար, այս, դժբախտաբար, ես ստիպված եմ լսելու քեզնից  
այդպիսի խոսքեր, որքան էլ այդ ծանր լինի ինձ համար:

— Թող քույրդ աշխատի...

— Եվ դու ուտե՞ս, — աղաղակեց Գրիգորը մի այնպիսի եղա-  
նակով, որից երկում էր, որ նա երբեք չէր սպասում, թե Արշակից  
մի այդպիսի բան կարող է լսել:

Կարճ լուսությունից հետո լսեցի, թե ինչպես նա սաստիկ զայ-  
րացած մոտեցավ դուն շնմքին: Նա ներս մտավ և դուռը ամուր  
շրմկացնելով փակեց ետքից: Ես արձանացած կանգնած էի սեն-  
շրմկացնելով գիտելի ինչ էր կատրվում իմ մեջ. այսքանը մի-  
այն գիտելի, որ մեծ եղբորս արտասանած վերջին խոսքերը, «Թող  
քույր աշխատի»— ինձ սաստիկ ազդել էին...

— Աննա՞—, — զարմացած և փոքրինչ վախեցած արտասանեց  
նա հանկարծ տեսնելով ինձ:

Երեսում էր, որ չէր սպասում, թե ես այնտեղ կինեի: Ես չկա-  
րողացա ձայն հանել և ոչ էլ շարժվել տեղիցս:

Նա կամաց մոտեցավ ինձ, կամաց առավ ձեռքերս և, սաս-  
տիկ կարեցությամբ, նայելով աշքերիս, արտասանեց դողդոցուն  
ձայնով:

— Սիրելի՝ քոչըրիկս, տեսնո՞ւմ ես, տեսնո՞ւմ ես, որքան անգութ են նրանք...

— ჩ' ԱՀ, ես կաշխատեմ, — սառնությամբ պատաժւանեցի ես:

Նրա դեմքի վրա երևաց սաստիկ տանջանք:

— Աննա, սիրելիս, շնչաց նա, և նրա ձայնը կարծես «Հանգավի» Նրա աշքերը լցվեցին արտասուրի փայլուն կաթիլներով. Նու խոնարհվեց և սկսեց համբուրել ձեռքերս: Ես համարյա ոչինչ չէի դպում և շարունակ կանգնած էի նույն դրության մեջ:

Հանկարծ թողեց ձեռքս և գնաց դեպի իր մահճակալը:

— Ա՞յս, ինչո՞ւ ես հիվանդ եմ, — աղաղակեց և ընկնելով անկողնի վրա, գեմքը թաքքրեց բարձի մեջ:

Այն աստիճան աղեկտուր էր նրա ձայնը, որ ցնցվեցի, և սիրտս կարծես սաստի՝կ, սաստի՝կ ճմլեցին։ Ծտապեցի դեպի նա: Նա ցնցողաբար հեկեկում էր և ցնցվելուց նրա ամբողջ մարմինը վեր ու վեր էր թռշում։ Առաջին անգամն էր, որ տեսնում էր նրան այդպես հուսահատված և լաց լինելիս։ Խսկ առաջ նրա դեմքի վրա երբեք չէի տեսել հուսահատության ոչ մի գիծ, ալքերի մեջ արտասուրքի ոչ մի կաթիլ։ Նա միշտ խրախուսում էր մեզ, հանդիմանում, երբ տեսնում էր, որ մենք այնպես շուտ ընկնում ենք հոգով, և ամեն անգամ կարողանում էր մեզ վրա ներգործություն ունենալի խսկ ա՞յլժմ, ա՞յլժմ։

Նրա աղաղակն ու հեկեկանքն ամեն բանից էլ լավ էր բացատրում, թե որքան փշրզած էր նրա ուժեղ կամքն արտաքին ծանր հանգամանքներից... «Ախ, ինչո՞ւ ես հիվանդ եմ», — աղաղակում էր նա այն ժամանակ, երբ ես նրան ասում եմ, թե պատրաստ եմ աշխատելու: Այդ խոսքերն երբեք չեմ մոռանալ. դրանք արտասանված էին այնպիսի տանջանքով և այնպիսի անկեղծ սրբով, որից երկում էր, թե որքան անկեղծ և անհուն էր նրա եղբայրական սերը դեպի ինձ...»

Ամեն կերպ աշխատեցի հանգստացնել նրան, բայց նա այն աստիճան հուզվել էր, որ այլևս չկարողացավ խռովել ինձ հետ։ Ավելի լավ համարեցի երան մենակ թողնել և դուրս եկա շատ ծանր տրամադրությամբ։ «Թող քաւորդ աշխատի» խռացերը բնավ մտքից շշին հեռանում... Բայց ամենից ավելի ինձ մտատանջում էր այն հանգամանքը, որ Գրիգորի հուզմունքը անվնաս էր կարող

անցնել նրա առողջության համար։ Եվ, զդբախտաբար, այդպես էլ եղավ.— այսօր նրա գրությունը շատ վատ է։

Դեպի քեզ ունեցած սաստիկ կարոտս է, սիրելի Հռիփսիմե,  
որ այսքան երկար նամակներ եմ գրում քեզ.— այդ միենույն է,  
թե խոսում եմ քեզ հետ։ Սիրտս սաստիկ լցված է։ Վշտերս ուղում  
եմ բաժանել մեկի հետ և բացի քեզնից էլ ո՞վ ունեմ... Ախ, եթե  
այժմ մոտս լինեիր, միակ կարեկիցս, ինչպես զերմագին կսեղմեի  
քեզ վշտահար կրծքիս...

## ՔԱՆԱԿ ԱՄՐԻԿԱ

ΦΡ

## Անգին քույրիկ,

— Եղբայրս — Գրիգորը մեռավ... Արտասուզը խեղդում է  
ինձ. Էլ ուժ չունեմ գրելու...

४

Բիթլիս, 30 ապրիլի 1881

Ստացա անկեղծ ցավակցությանդ նամակը։ Անշախի շնորհակալ եմ և խրախուսանքիդ համար։ Առավել քան այժմ ես կարոտ եմ ալգախսի խրախուսանքների, որովհետեւ զգում եմ, թե ինչպես վերջին հարգածը հիմն ի վեր տապալել է ամբողջ բարոյական աշխարհս։ Ես ընկած եմ, որպես մի մարդ, որ անթիվ ծանր վերքեր ստանալուց հետո՝ ստանում է և վերջին ամենասարսափելի վերքն ուղիղ կրծքին։ Սակայն ես չեմ տրտնջում։ Փա՛ռք և գոհություն նրան, ով տնօրինում է մարդկացին բախտը։ Երբ տեսնում ես, երբ զգում ես, որ տկար են ուժերդ, պետք է հպատակվես տիրապետող բարձր, անիմանալի օրենքներին, որոնց սահմանել է ինքը նախախնամողը։ Եվ ես հպատակվում եմ։ Մինչև այժմ հուսահատ պատերազմ էի մղում։ Մոլորության անդունդն բացէր արել իմ առաջ իր ահարկու բերանը, և թիշ էր մնում, որ կուրորեն ընկնեի նրա մեջ։ Բայց ի՞նչ շահեցի դրանից։ — ա՛յն, որ տանջանքներս կրնապատկվեցին, ա՛յն, որ մեղք գործեցի և ի վերջո ընկա հաղթված։ Այս, ես ալժմ ընկած եմ։ Հպարտ գլուխ այլևս չի հանդգնում վերև նայել։ Նա խոնարհված է և միշտ խոսաբան։ Թող այսուհետեւ ինչ կուզե լինի, — ես հաշտվել եմ

ամեն բանի հետ: Եվ դու շես կարող երևակայել, սիրելի Հոփիսիժե: Թե որքան հանգիստ եմ այժմ: Եթե կուրծքս ճղեն և հանեն սիրտս, նրան սառած կդոնեն: Կարծես ես այլես չեմ ապրում: Եվ այդ պատճառով, առանց գեթ մի փոքր հուզվելու, այժմ հայտաձակ կարող եմ նկարագրել քեզ եղբորս վերջին ժամերն ու յահն իրենց բոլոր մանրամասնություններով: Եվ պետք է նկարագրեմ: Թող քո աշքերից էլ փոքր ինչ արտասուր թափվի:— Նա արժանի է դրան:

Նա մեռավ սրանից ուղիղ երկու շաբաթ առաջ, նույն ամսի 16-ին, երեկոյան մոտ 5 ժամին: Այդ նշանավոր օրը շատ լավ հիշում եմ: Գարունն այստեղ շատ վաղ եկած լինելով, եղանակը հիանալի էր և այնքան ուաք, որ մինչև անգամ լուսամուտները բաց էինք արել: Մեր տեղափոխվելուց հետո, առաջին անգամն էր, որ մենք այս տանը պարզ օդ էինք ծծում: Գրիգորը պառկած էր լուսամուտի առաջ. երկու օր առաջ նա խնդրել էր, որ մահճակալն այնտեղ տեղափոխենք: Վերջին անգամ ուզում էր տեսնել գարնան պայծառ արել, նայել կապույտ երկնքին և տեսնել, թե ինչպես ուրախ ծիծեռնակները զալիս նստում են բակում կապած թռկի վրա, օրորվելով ճլվլում են և նորից թռչում գնում: Այդ հինգերորդ օրն էր, որ այլես չեր կարողանում վեր կենալ անկողնից: Մենք բոլորովին չենք կարծում, թե այդ օրը կմեռներ, որովհետև մեռնելուց մի քանի ժամ առաջ նրա դրությունը նույն էր, ինչ որ մի քանի օր առաջ, մինչև անգամ լավ էր: Բայց երեխ ինքն այդ իմանում էր, որովհետև նույն օրն առավոտյան հատուկ խնդրեց ինձ, որ հեռանամ մոտից: Այդ օրը սովորականից ավելի քնքուց էր թե՛ գեպի ինձ և թե՛ գեպի մայրս, որի մի ոտը հորս սենյակումն էր, մյուսը նրա մոտ: Այդ օրը սովորականից շատ էլ էր խոսում ինձ հետ: Իսկ երբեմն մերթ ուրախ էր լինում, մերթ հանկարծ տիրում և մտածության մեջ ընկնում: Մի անգամ էլ ուրախ խոսելուց հետո, հանկարծ լոնց, զլուխը դարձրեց գեպի լուսամուտը և դուրս նայելով, ընկղմվեց մտածմունքների մեջ: Զուզեցի խանգարել նրան, և փոքր ինչ կունալով գեպի նա, սկսեցի նայել գեմքին: Աստված իմ, որքան փոխված էր այդ գեմքը, իմ ճանաշած սիրուն, կանացի գեմքը:— Նիհար, շոր, գունատ, կարծես մի կաթիլ արյուն անգամ չկար նրա երակների մեջ: Փոքրիկ, կանոնավոր քիթը, որ միշտ ներդաշնակ գեղեցկություն էր ավել նրա գեմքին, կարծես սպատիկ մեծացած, դուրս էր ցցվել

սեղմլած պնչերով: Աշքերը խոր էին ընկել և մեծացել, իսկ պարզ, լայն ճակատը կարծես ավելի լայնացել էր: Չգիտեմ ինչ էր պատճառը, բայց ինձ թվում էր, թե առաջին անգամն եմ տեսնում նրան այդքան փոխված: Երկար ժամանակ նա անշարժ կար նույն դրության մեջ: Մի ինչ-որ անորոշ զգացմունք, կարծես, չէր թողնում ինձ, որ խանգարեմ նրա մտածմունքները: իսկ ինձ թվում էր, թե այդ մտածմունքները թանկ արժեն նրա համար: Լուս և խորին վշտով նայում էի նրա գեմքին: Երբ հանկարծ նրա շրթունքները բացվեցին և նա կամաց, շատ կամաց, կարծես ինքնիրեն շշնջաց.

— Ի՞նչ սիրուն բան է գարունը... Ակամա սիրում ես կյանքը, ինչքան էլ որ լի լիներ ձախորդություններով... ակամա ուզում ես ապրել, սիրել և...

Լուս և գեմքը կամաց դեպի ինձ դարձրեց.

— Ուղիղ ասա, քույրիկ,— առաջվա նման դարձյա՞լ մտածում ես...

— Ոչ, Գրիգոր, ես աղոթում եմ,— պատասխանեցի զերմեռնդ զգացմունքով:

Տեսա, թե ինչպես նրա գեմքը պայծառացավ: Նա առավ ձեռքս և սեղմեց:

— Աղոթի՛ր, սիրելի՛ քույրիկ,— պատասխանեց, կարծես ուժ ստացած:— Աղոթի՛ր, միայն աղոթքը կարող է փրկել քեզ կյանքի ծանր բոցեներում... Հավատա ինձ, որ երբեք չես զղա: Եթե շմոռանաս իմ այս անկեղծ խորհուրդը: Ճշմարիտ է, թեև կյանքի ձախորդություններն երբեմն շատ մոլորությունների պատճառ են դառնում, բայց մարդս այդպիսի գեպերում միշտ աշքի առաջ պիտի ունենա, թե ո՞վ և ինչ է ինքը, երբեք շպիտի մեռցնե իր մեջ հավատը, հուզը, երբեք լափիտի մոռանա աղոթել, կարծելով թե այդպիսով ինքը վրեժինդիր է լինում:— Այդ շափից դուրս անմտություն կլիներ մարդու կողմից... Հավատա ինձ, որ ձախորդություններն ու թշվառությունն էլ ունեն հոգեկան իրենց վսեմ քաղցրությունը, ինչպես առողջությունն ու երջանկությունը, միայն թե մարդ բնավ չկորցներ հավատը, հուզը, բնավ շմոռանար աղոթել... Այդ սովորեցրել է ինձ ինքը կյանքը, և դու առաջ կասկածելու հավատա ինձ:

Ես լսում էի նրան խորին երկյուղածությամբ: Լսում էի ո՞չ թե իբրև մի քսան տարեկան անփոր երիտասարդի: այլ որպես մի

պատկառելի, փորձության բովից անցած ծերունու, մի երկնառաք մարգարեի, որ տարածում է աստծո խոսքը... Բայց հանկարծ նրան լսելիս՝ մի ինչ-որ անորոշ երկյուղ պաշարեց ինձ: «Այս ինչպես է խոսում սա այսօր»— այդ հարցն ակամա ծագեց ցլխումս: Եւկ նա խոսում էր մի ուրիշ տեսակ, ոչ այնպես, ինչպես ամեն անգամ խոսում էր այդպիսի բաների մասին. նրա ձայնը հնչում էր տխուր, բայց մի ինչ-որ վեճ, սրբազն ոգեռորությամբ: Նա նայում էլ էր ուրիշ տեսակ: Նրա հայացքը վառվում էր. դրանով կարծես ուզում էր ուժ տալ իր խոսքերի ազդեցությանը...

— Գրիգոր, ինչո՞ւ այսօր այսպես ես խոսում,— վարողանալով դիմանալ, հարցրի կարճ լուսթյունից հետո:

— Ինչո՞ւ,— արտասանեց բնբշորեն, նայեց աշքերիս և մի տեսակ օտարութի կերպով ժպտաց:— Որովհետև պետք է... մեռնեմ,— ավելացրեց հանդարտ ձայնով, բայց վերջին բառն արտասանեց այնքան կամաց, որ հազիվ լսեցի:

Զգիտեմ այդ րոպեին ինչ պատահեց ինձ, միայն ամուր գըրեցի նրան. կարծեցի, թե նույն րոպեին հավիտյան պիտի անհետանար աշքիս առաջից:

— Գրիգոր, իհարկե, կատակ ես անում,— շշնչացի, ինքս իմ ձայնից վախենալով:

Դարձյալ նայեց աշքերիս, և տեսա, թե ինչպես ժպիտը հանկարծ անհետացավ նրա դեմքից և այդ դեմքն ընդունեց տխուր, զշտալից արտահայտություն: Նա ոչինչ չպատասխանեց, միայն երկար նայեց աշքերիս և դեմքը շրջեց դեպի լուսամուտը: Այժմ նայում էի նրան համարյա սարսափով. համ ուզում էի փախչել նրանից, համ գրկից բաց շիողնել...

Զգիտեմ որքան ժամանակ այդպես անցավ, երբ նա, շարունակ դուրս նայելով, առաջվա նման, բայց այս անգամ շատ տխուր ձայնով շշնչաց.

— Հիշո՞ւմ ես, քույրիկ,— այն ժամանակ մենք գեռ շատ փոքր էինք. ես տասը տարեկան էի, դու՛ յոթ,— գնացել էինք տետրակներ առնելու և ետ էինք գալիս: Ճանապարհին մեզ մի կատաղած եղ պատահեց: Ամենքն երկյուղից մի կողմն էին փախուում և թաքնվում առաջին պատահած տեղը: Մենք շատ վաս տեղովն էինք անցնում. այնտեղ ոչ խանութ կար, ոչ բակ, որտեղ մենք էի կարող լինեինք թաքնվել: Ճարահատյալ կանգնեցինք այնտեղ գտնված մի տան պատի տակ: Եզր մոտենում էր: Գունա-

թափ և սաստիկ երկյուղով դու սեղմվեցիր ինձ. Ես կանգնեցի առաջդ, որպեսզի եզանը դիմադրեմ և պաշտպանեմ քեզ նրա հարվածից: Արյուն կտրած աշքերով՝ եզն ուղղակի ինձ վրա եկավ և կանգնեց մեր առաջ: Ես սարսափից ոչ կարողացա աղաղակել, ոչ շարժվել, միայն բնազմամբ մի կողմ սեղմվեցի և ետևիցս երկու շեղով ամուր բռնեցի քեզ: Եզր կանգնեց, կանգնեց, նայեց. նայեց մեզ, հանկարծ փոնշացրեց, շուր եկավ և, պոշը տատանելով, վաղեց միենույն ուղղությամբ: Մենք ազատվեցինք: Ես նայեցի դեմքի՝ և կարծես, այժմ էլ տեսնում եմ այդ դեմքը. սաստիկ գունաթափ, սարսափից շուր, անմիտ աշքերով, դու ամբողջ մարմնով դողում էիր, առանց թողնելու ինձ շարունակ նայում էիր եզան ետևից, կարծես նա դարձյալ շուր պիտի զար մեր կողմը և առաջվա նման պիտի մոտենար մեզ այս անգամ հարու տալու դիտավորությամբ: Բայց եզր շուր եկավ մի ուրիշ փողոց և շքացավ մեր աշքերից: Տեսա, թե ինչպիս դու ազատ շունչ քաշեցիր, լուր նայեցիր ինձ, մի տեսակ օտարութի, բայց շատ անշնորհք կերպով ժպտացիր, կամ ավելի ճիշտ է ասել՝ ժամածուցիր դեմքը և հանկարծ լուց եղար: Թեև, իհարկե, ես շփրկեցի քեզ եզան հարվածից: Բայց այդ րոպեին պատրաստ էի զոհ գնալու եզանը, միայն թե քեզ ազատած լինեի, չնայելով, որ սարսափն ինձ էլ էր կաշկանդել: Այնուհետև ինչպիսի՝ հպարտությամբ և հրճվանքով հիշում էի այդ անցքը. մտքումս միանգամից տպավորվել էր, որ քեզ ազատողն ես էի...

Նա լոեց և մնաց անշարժ, անթարթ դեպի դուրս նայելով: Երեսում էր, որ մանկական այդ հիշողությունն այդ րոպեին էլ նրա համար, և նա չէր ուզում հեռացնել այդ հիշությունն իր գլխից: Ես էլ չէի համարձակվում խանգարել, նրա այդ քաղցր հիշողությունը: Իրավ, ինչ սքանչելի ժամանակներ էին այդ...

Մանկության օրեր, երազի նման  
Անցաք, գնացիք, այլ չեք դառնալու...

— շշնչաց նա, կամաց հոգոց հանեց և նայեց ինձ,

— Գրիգոր, — ինչո՞ւ հիշեցրիր ինձ այդ անցքը, — հարցրի:

— Ինչո՞ւ, — արտասանեց նա հուսահատ ձայնով: — Նրա համար, որ ես այժմ այլևս ոչ մի բանից չեմ կարող քեզ ազատել...

Զգացի, թե ինչպես սիրուս, նաստիկ ցավ տալով. Թրթռաց, զուլսու ակամա խոնարհվեց նրա կրծքի վրա, և հուսահատության հեկեկանքը սկսեց խեղդել ինձ։ Այդ ռոպեին արդեն՝ աներկրա զգում էի, թե ինչպես մի աներկությ զորություն սկսում էր կամաց-կամաց բաժանել նրան ինձնից հավիտյան...

Ճաշին, բացի կես բաժակ կաթից, ոչինչ շառավ բերանը, նկատում էի, թե ինչպես կամաց-կամաց թուլանում էր նա, բայց ուշքը մինչև վերջին շունչը վրան էր։ Մեռնելուց մի ժամ առաջ ուղեց տեսնել հորը։ Մայրս, որ, ըստ երեւութիւն, արդեն սկսել էր հասկանալ, թե բանն ինչումն է, կատարեց նրա խնդիրքը։ Շուտով հորս՝ թեից բռնած՝ զգուշությամբ ներս բերեց և զգուշությամբ նստեցրեց հիվանդի յահճակալի առաջ՝ աթոռի վրա։ Հայր և որդի նայեցին իմայանց։ Հորս հայացքը նույն անմիտ, նույն անզգա հայացքն ու ակայն այս անգամ այդ հայացքի մեջ նկատվում էր փոքր ինչ հետաքրքրություն, իսկ եղբորս հայացքը... ինչքա՞ն սեր, կարեկցություն, վիշտ և հուսահատություն կար այդ հայացքի մեջ, հորը հավիտյան մնաս բարյավ ասող այդ լուս վերջին հայացքի մեջ... Առավ հոր ձեռքը, ուզեց բան ասել, բայց ոչ մի ձայն դուրս շեկավ բերանից։ Միայն խոնարհվեց և շրթունքը կպցրեց նրա ձեռքին։

— Այս ո՞վ է, — կամաց հարցրեց հայրս, նայելով մորս։

— Գրիգորն է... Զե՞ս ճանաշում, — հազիկ կարողացավ արտասանել խեղճ մայրս, որովհետև արտասույքը խեղդում էր նրան։

— Ու, շեմ ճանաշում, — պատասխանեց հայրս և, փոքր ինչ լուելուց հետո, հարցրեց։ — Հիվա՞նդ է։

— Կյու։

— Ես էլ եմ հիվանդ, խեղճ տղա, ես էլ եմ հիվանդ, — արտասանեց հայրս, կարծես, սաստիկ կարեկցությամբ և, ձեռքը հեռացնելով Գրիգորի շրթունքից, սկսեց շոյել նրա գլուխքը։

Այլևս չկարողացա դիմանալ — սիրոս պատովում էր — և շտապով դուրս գնացի, որպեսզի այլևս ոչինչ շտեսնեմ. ոչինչ Ասեմ...

Երբ բառորդ ժամից հետո դարձյալ ներս մտա, մայրս հորս արդեն դուրս էր տարել։ Գրիգորը պառկած էր երեսն ի վեր և ձեռքով ծածկել էր զեմքը, երբ մոտեցա նրան, ձեռքը հեռացրեց դեմքից, ինչքա՞ն վիշտ տեսա այդ զեմքի վրա... Աղերսող հայացքով նայեց ինձ և առավ ձեռք։

— Աննա՛, — արտասանեց դողոզուն ձայնով, — դու զիտես, թե ինչպես կնայես հայրիկին ու մայրիկին։ Բացի քեզնից, նրանք ո՞շ ոք չունեն. օգնիր նրանց, ինչպես կարող ես։

Ապա սեղմեց ձեռքս, թողեց և պատասխան շպահանջեց. շպահանջեց արդյոք նրա՞ համար, որ հասկանում էր, թե որպիսի ծանր սարտականություն էր գնում ինձ վրա, թե՞ նրա համար, որ հույս ուներ ինձնից, — ՀՀիւեմ, միայն այդ մտախն այլևս ոչինչ շխոսեց։

Նրա մահվան ներկա էինք միայն ես, մայրս և թոմաս Գասպարիչը, որ հենց նոր էր եկել և, իմանալով թե բանն ինչումն է, սաստիկ տխուր նստած էր մի կողմբ։ (Եղայրներս՝ եղանակը լավ լինելու պատճառով՝ այդ օրը զուրս էին գնացել և զեռ տուն չէին եկել, ո՞վ գիտե որտեղ էին թափառում)։ Նա խնդրեց, որ բահանա կանչենք։ Թոմաս Գասպարիչը գնաց քահանայի ետևից։ Քահանան եկավ, ինչպիսի սրբազն զերմեռանդությամբ ընդունեց հաղորդությունը... Մեռնելուց առաջ համբուրեց մորս ձեռքը, հետո՝ իմը, իսկ ամենից վերջը՝ թոմաս Գասպարիչինը, որն, այլևս չկարողանալով դիմանալ, սկսեց երեխայի նման լաց լինել։ Այնուհետև կերպին հայացքը — վշտալից, աղերսող հայացքը — ձգեց ինձ վրա և համարյա նույն րոպեին էլ հոգին ալվանդեց... Ոչ, հոգին շավանդեց, — հոգին ավանդելիս, ասում են, մարդ սարսափելի է լինում. բայց այդպիսի բան ես բոլորովին շնկատեցի նրա մեջ, — այլ աշքերը փակեց և քնեց, քնեց, որպեսզի այլևս երբեք շարթնանա... երբ աշքերը փակեց, ես բոլորովին չէի կարծում, թե մեռավ, բայց մայրս այդ իսկուն հասկացավ։ Նա նախ մի տեսակ բութ, անմիտ հայացքով մեքենայաբար նայեց ինձ, հետո թուզ, շատ թուզ ձայնով, կարծես ուժասպառ ճշաց և, գլուխ դնելով մեռած որդու զլիի մոտ՝ բարձի վլա, մի ձեռքով գրկեց նրա կուրծքը։ Սաստիկ մի դող ցնցեց ողջ մարմինս. ես հասկացա, որ եղայրս մեռավ։ Աշքերս մթնեցին, ծնկներս թուլացան և այնուհետև այլևս ոչինչ շզգացի։ Երբ ուշքի եկա, տեսա, որ պառկած եմ սենյակում՝ մահճակալի վրա, մայրս նստած է կողքիս՝ սառը, զունատ, չոր դեմքով, իսկ թոմաս Գասպարիչը՝ դիմացը՝ աթոռի վրա, վշտից սառած ու կուշ եկած։ Սկզբում կարծեցի, թե առավոտ է և նոր եմ զարթնաւմ, բայց երբ նայեցի մորս, նայեցի թոմաս Գասպարիչին, նայեցի շուրջս, դարձյալ մորս, դարձյալ թոմաս Գասպարիչին, — արդին եղելությունը պարզվեց ինձ համար։

Եվ մինչև հիմա էլ զարմանում եմ, թե այդ ժամանակ՝ ի՞նչպես կարողացաւ այնքան հանգիստ լինել. — ո՛չ մի հառաջանք, ո՛չ մի արտասուլիքի կաթիլ, ո՛չ մի զառնություն, ո՛չ մի վիշտ. կարծես մեռած էի և զգում էի, որ մեռած եմ: Ասում էին Կեր՝ ուսում էի, խմիր՝ խմում էի, հագիր՝ հագնում էի, բեր այսինչը՝ բերում էի, տար այսինչը՝ տանում էի, արի՝ գալիս էի, գնա՝ գնում էի, մի խոսքով՝ անում էի, ինչ որ ասում էին, և արածս ոչ հասկանում էի, ոչ զգում: Եվ եթե այժմ հարցնես ինձ, թե ինչպես թաղղցինք եղրորս, ով կար հուզարկավորությանը և այլն, — ոչինչ չեմ կարող ասել: Այսքանը միայն մութ կերպով երազի նման հիշում եմ, որ ինձ սկսեր հագցրին, ձեռքս մի թաշկինակ դրին, թեև թաշկինակի կարիք չունեի, ձեռքից բռնեցին, տարան եկեղեցի, և զարձյալ ետ բերին: Այս էլ հիշում եմ, որ եկեղեցում համբուրեցի նրա ճակատը, զարձյալ համբուրեցի, զարձյալ... էլ ոչինչ չեմ հիշում: Իսկ այժմ, երբ այդ ժամանակից անցել է մի ամբողջ երկու շաբաթ, երբ ամեն օր մտնում եմ նրա սենյակի և ամբողջ ժամերում՝ ձեռքերս խաչած՝ նստում եմ նրա դատարկ մահճակալի վրա, — ի՞նչ եմ զգում ես... Փառք և գոհություն նրան, ով տնօրինում է մարդկային բախտը: «Աղոթքը, միայն աղոթքը կարող է փրկել քեզ կյանքիդ ծանր բռպեկներում» — ասաց նա: Օրհնյալ լինի քո հիշատակու, իմ սիրելի՛, իմ անդի՛ն եղբայր:

## **Філії Університету**

૧૮

Թիֆլիս, 27 հունիսի 1881

Սիրելի Հոգիսիմե,  
Նամակ ես պահանջում. ի՞նչ գրեմ, ի՞նչ ունեմ գրելու, ի՞նչ  
կարող եմ գրել. երբ շուրջը և ներսս կատարյալ դատարկություն  
է տիրում. Ոչինչ չկա, ոչ մի հիմնավոր բան, որից կարողանայի  
ամուռ կպչել՝ շանհետանալու համար, որի վրա կարողանայի  
վերջնականապես կենտրոնացնել թափառող մտքիս ընթացքը՝  
շմզորովելու համար. Երևակայիր. Մի անհուն անտակ խորիսորատ-  
անավերչ տարածության մեջ, որտեղ ընկել է մարդ. նա տարածում  
է ձեռքերն այս ու այն կողմքը, արպեսզի մի բան գտնի, որից կա-

բողանա բռնել՝ ավելի խորը շընկնելու համար, բայց միշտ հանդիպում է զատարկ տարածության, և նա շարունակ ընկնում է ցած, ընկնում է անվերջ, մինչև անգամ ոտների տակ հատակ շգտնելով.— ես այդ դրության մեջ եմ: Ծշմարիտ է, կա իմ մեջ մի զգացմունք, որի համար պարտական եմ մեռած եղբորս, և թէ ես այդ զգացմունքը շատ անգամ բարերար ներգործություն է ունեցել տանջված հոգու վրա, բայց... անգին քույրիկ, հասկանո՞ւմ ես, թէ որքան երիտասարդ եմ ես դեռ և թէ սիրտս, հոգիս բնականաբար դեպի ինչը պիտի ձգտեն: Ես... Ա՛խ, բավակա՞ն է. թողնենք այն, այլևս սիրտ չկա:

Եղբորս մահն, իշարկե, անհետեանք չէր կարող անցնել ոչ  
ինձ և ոչ մորս համար՝ մանավանդ մեր այս թշվառության ժա-  
մանակ: Մայրս անմիջապես ընկավ անկողին և մոտ մի ամիս  
շարունակ պառկած էր: Նրա և հորս միակ խնամատարն ես էի,  
թեև ես էլ պակաս հիվանդ չէր զգում ինձ: Նրա անկողնից վեր  
կենալն ու իմ պառկելը մեկ եղավ: Կարծես դիտմամբ իրար խոսք  
էինք տվել այդպես անելու: Ես նրանից ավելի կարճ ժամանակ էի  
պառկած և ահա մի շաբաթ է ինչ վեր եմ կացել: Այժմ ինձ սաս-  
տիկ թույլ եմ զգում: Երկար շեմ կարողանում ման գալ կամ որե-  
վից բան շինել, շուտով հոգնում եմ, ուզում եմ նստել կամ թիկն  
տալ: Գրիշն էլ այժմ դժվարությամբ եմ շարժում ձեռքիս: Անցյալ  
օրը նայեցի հայելում, և ինքս ինձնից սարսափեցի: Ակամա  
վերցորի անցյալ տարվա լուսանկարս և համեմատեցի: — ինչքան  
փոփոխություն... չէի ուզում հավատալ, թե այդքան փոխվել եմ:  
«Կամ այս իմ լուսանկարս չէ, կամ թե հայելին է ինձ խարում»—  
ասում էի ինքս ինձ: Լուսանկարը ներկայացնում է մի գեղեցիկ,  
մի կայտառ օրինորդ, որի աշքերն երջանկությամբ և շարաճճի կեր-  
պով ժպտում են, իսկ հայելու մեջ տեսնում էի սաստիկ նիշար,  
սասարիկ գունատ, կարծես ծերացած մի աղջիկ, որի անկենդան,  
մեքենայական հայացքը, կարծես, ասում չ... ի՞նչ է ասում: —  
որոշ ոչինչ, բայց մի բան ասում է, որ ոչ ինքն է հասկանում, և  
ոչ ուրիշը կարող է հասկանալ... Դառնացած գեն շպրտեցի լուսա-  
նկարս և հեռացա հայելուց...

Այստեղ սաստիկ շոգեր են: Ամառանցի սովոր լինելով, շատ դժվարությամբ եմ կարողանում դիմանալ: Համարյա ողջ օրը սեն-լակից դուրս չեմ գալիս: Միայն գիշերներն են առավոտյան կարո-

զանում եմ ազատ ող շնչել Ների՛ո, սիրելիս, սաստիկ հոգնեցի.  
Եւ շինչ շեմ կարող գրել

Ընդունիր Կարոտալիր համբույրներս.

Քո Աննա Սարոյան

Փե.

Թիֆլիս, 25 Հունիսի 1881

Սիրելի Հոփիսիմե,

Այժմ փառք ասուուրու, բավական լավ եմ զգում ինձ, միայն  
շուրջերն են սաստիկ նեղացնում, Երբեմն երեկոները, լավ եղանակ-  
ներին, դուրս եմ գնում փոքր ինչ զբունելու և շուտով էլ վերա-  
դառնում եմ: Հարցում են՝ մի՞թե եղբայրներս դարձյալ պարապ  
են: Ոչ, մեր նախկին հարուստ «բարեկամներից» մեկը վերջապես  
«խճաց» մեզ և երկուսին էլ ընդունեց իր մագաղինը, բայց այն  
պայմանով, որ նրանք իրենց լավ պահեն են այժմ, փառք ասուու-  
ծո, նրանք տակապին իրենց լավ են պահում, և եթե բանը միշտ  
այդպես գնա, մենք գոհ կլինենք: Այդ շատ լավ եղավ. եթե եղ-  
բայրներս դարձյալ պարապ մնային, հավատա. որ քաղցած կը-  
մեռնեինք: Մորս հիվանդության միջոցին մեր վերջին կուպեկները  
ձեռքներից գնացին, և մենք մնացեմ: Էինք տարակուսած՝ թե ինչ  
պիտի անենք: Այժմ եղբայրներին գործի կանգնելով, կարող ենք  
փոքր ի շատե տանելի կյանք ունենալ:

Ես արդեն վերջնականապես հաշովել եմ գրությանս հետ,  
ներկան ինձ այնպես սարսափելի չի թվում, ինչպես երեակա-  
յում էի առաջ: Միայն եղբորս վաղահաւ մահը սրտին մեջ թողել  
է մի այնպիսի խոց, որ երբեք և ոչ մի բանով չի կարող բուժվել:  
Ամեն օր, ամեն ժամ նա կարծեն կենդանի կանգնած է աշխիս  
առաջ, իսկ երազումս համարյա ամեն գիշեր տեսնում եմ նրան:  
Նրա մեռնելուց հետո առանց տանջվելու չէի կարողանում մոտե-  
նալ նրա գրքերին և տետրակներին: Ամեն անգամ ու ու տեսնում էի  
այդ գրքերն ու տետրակները պահարանում շարուած, իսկույն մի  
տեսակ սաստիկ-սաստիկ ճալվում չը սիրտ և անցյալի հիշողու-  
թյունները մեկը մյուսի ետքեց ակամա զարթնում էին իւ մեջ:  
Բայց երեկ— չգիտեմ ինչո՞ւ սիրտ ձգտում էր գեպի այս լըր-  
քերն ու տետրակները. ուզում էի ըրբել նրանց: ուզում էր թեր-

թել, ուզում էի ծայրեծայր կարդալ տետրակները. և ինձ թվում է,  
թե այդպիսով նա ինքը՝ կենդանի կանգնած իմ առաջ՝ խոսելիս  
կլինի ինձ հետ: Այդ պատճառով մոտեցա պահարանին և բաց  
արի դուռը: Գրքերն ու տետրակները դարսված էին իրենց կարգով,  
այնպես, ինչպես նա վերջին անգամ ինքն իր ձեռքով դարսել էր:  
Կարգապահությունն ու մաքրությունն առհասարակ նա սաստիկ  
սիրում էր, և ես երբեք չէի տեսել, որ նրա գրքերը կամ տետրակ-  
ները խառնիխուն թափված լինեին. ամեն ինչ իր տեղը, ամեն ինչ  
մաքրություն թափված լինեին. ամեն ինչ իր տեղը, ամեն ինչ  
փոշի էր նստել: «Իսկ նրա վրա ահագին շերտ հող էր նստած»—  
մտածեցի ես, գողողուն ձեռքով մի առ մի վերցրի գրքերն և սկսե-  
ցի փոշին սրբել: Այդ վերջացնելուց հետո, վերցրի բոլոր տետրակ-  
ները, ցած բերի և, նախապես նրանց վրայից էլ փոշին սրբելով,  
սկսեցի մի առ մի թերթել: Այդ բոլորն ուսանողական տետրակներ  
էին, որոնց մեջ իրեն հատուկ մաքրություն ու գեղեցիկ գրերով գրել էր  
դասերը: Այդ տետրակների մեջ գտա և նրա հիշատակարանը:  
Ինչպես մի անգին գյուտի վրա, վրա ընկա այդ տետրակին և ահա-  
գին հետաքրքրությամբ սկսեցի թերթել լին, ինչպես ս արոփում  
էր սիրտս, ինչպիսի տանջանքով և սիրով սեղմում էի այն և թրջում  
արտասուրով... Մի անգամ, երբ կգաս այստեղ, սիրելի Հոփիսիմե,  
այդ տետրակը կկարդամ քեզ մոտ, և կտեսնես, թե ինչպիսի տղա  
էր նա. այդ տետրակի մեջ նա թափել էր իր բոլոր միտքն ու հո-  
գին: Բայց այժմ ես այնտեղից կարտագրեմ նրա բանաստեղծու-  
թյուններից մեկը (հիշատակարանի մեջ բավական թվով բանաս-  
տեղծություններ էլ ունի գրած), որ, ինչպես ամսաթիվը ցույց է  
տալիս, նրա վերջին գրածն է և գրել է մահից մի շաբաթ առաջ:  
Այդ բանաստեղծությունը մի ամփոփ գաղափար կտա քեզ նրա  
հոգեկան աշխարհից:

Ճասել է ժամը: Եռառով նորարաց.

Մանուկ արևո պիտի խավարի.

Դեռ կյանք շտեսած, դեռ շվաստակած.

Մարմին հողը պիտի ավերի.

Ախ, ինչպես ինչպես ուզում եմ ապրել,

Ապրել և գործել, գործել և տոկալ.

Ինչպես շերմագին ուզում եմ սիրել.

Ամենքի համար աղոթել և լալ...

Խեղճ, անրա խոր եղբայր... ինչպիսի կյանքի ժարավ, ինչ-քան ածկեղծ, խոր զգացմունք, ինչքան տանջանք... Մերթե այդ-պիսի հղորը երբեք կարելի է մոռանալ, իմ անգին քույրիկ երեկանից գեւ անընդհատ մտածում եմ նրա մասին և որքան շատ եմ մտածում, այնքան ավելի եմ զգում, թե որքան մեծ և ան-փոխարինելի է իմ կորուսոր. Դիշերս բոլորովին չկարողացա քնել-ակամա արտասուրը հանդարտ հոսում էր աշքերից և թրջում էր զեմքս. անկողինս— և ես դողոյուն ձեռքերս սաստիկ հուսահա-տությամբ ու տանջանքով տարածում էի օդի մեջ՝ գոնե նրա ուր-զականը գրկելու համար... Այս, նրա հիշատակարանն ամեն ինչ տակնուվար արեց իմ մեջ. Դարձյալ սկսում եմ առաջիւ նման... Ոյ, այս ոչինչ շեմ գրի այս մասին. միշտ միւնուցն երգը... Գուցե արդին ձանձրացը եմ քեզ:

Մնամ բարյագ, իմ որդեմի քույրիկ, ցնոր գրություն:

### Չո Աննա Սարոյան

ԺԶ.

Թիֆլս, 15 օգոստոսի 1881

Սիրելի Հոփիսիմե,

Խորհուրդ ես տալիս, որ շատ շնուրվեմ, և խնդրում ես, որ եղբորս հիշատակարանն ուղարկեմ քեզ, որպեսզի այլևս տեղի չ լունեւամ հուզվելու և էի եմ հասկանում, որ շատ հուզվելը ներ-կա դրսեթյան մեց ինձ վնասակար է, բայց մի՛ վախենա. հիշա-տակարանը լունելուս առաջին օրն էր, որ այնպես հուզվում էի, այժմ զապում եմ: Աւքեմն, սիրելիս, հիշատակարանը կմնա ինձ մոտ. ողջ կյանքում շեմ բաժանվի նրանից, շեմ բաժանվի այն պատճառով միայն, որ նա ինձ համար անգին է և միշտ էլ անգին կմնա:

Դարձյալ բանք թարսվեց և մեծ հղբայրս իր հին աստվածը միտք բերեց: Մեր «բարեկամն» էլ վոնգեց նրան, և իրավունք ուներ, որովհետեւ հղբայրս դարձյալ սկսել էր խմել. ստացած ունիկից էլ ոչ մի կոպեկ տուն շէր բերում: Է՞ս աշդաբւ էլ կար-ծում էի. արդիցողությունն այնպես չէ բույն գեել նրա մեջ, որ նա-երբեք կարողանա դեռք վերջնել: Դրա համար կամք է

Հարկավոր և փոքր ինչ՝ ժութկալություն, իսկ եղբայրս զուրկ է թե՛ մեկից, թե՛ մյուսից. անգործ մնալն ու խմելը նրա համար ամեն բանից քաղցր է: Իսկ փոքր եղբայրս դարձյալ այնտեղ է և, պիտի ասած, կարողացել է ծովությանը հաղթել և աշխատում է: Բայց նրա ստացած ոռնիկն ի՞նչ պիտի անի մեր այնքան, թեկուզ սաստիկ շափակորած, կարիքներին: Մայրահեղ աղքատությունը սպառնում է թակելու մեր դուռը... Մայրս ուղում է տունը ծախել, բայց ես չեմ թողնում, դրանից ստացած փողն էլ շուտով կհատնի (մանավանդ, որ տունն անհամեմատ պակաս են զնահատում), այնուհետև ի՞նչ պիտի անենք, ինչո՞վ պիտի վճարենք բնակարա-նի վարձը... Ոչ, անմտություն կլիներ հոգսերի վրա նոր հոգսեր ավելացնել: Երեակայում եմ, թե որքան դժվար է մի անից մյուսը տեղափոխվել, թե որքան անտանելի է տանտիրոջից միշտ անարգ-ված լինել տան վարձը՝ ծամանակին շվճարելու համար... Ոչ, հա-զարապատիկ ավելի լավ է մեռնել թեկուզ քաղցած, բայց ականջը հանգիստ՝ սեփական տան հարկի տակ: Սեփական տանը, սեփա-կան տանը... ուրիշ տեղ կյանքը կրնապատիկ, քառապատիկ դառը կլինի: Ես այս զգում եմ: Մայրս ուղում է մի որեւ գործ վերցնել: Տեսնենք ինչ կլինի:

Չո Աննա Սարոյան

ԺԵ.

Թիֆլս, 24 օգոստոսի 1881.

Սաստրկ հուզված եմ զրում քեզ այս տողերը, սիրելի Հոփի-սիմե: Ես այժմ կատարելապես ոչնչացած եմ:— Մայրս կար էր վերցրել կարելու, ես էլ օգնում էի նրան, բայց... ոչինչ շկարո-ղացա կարել, այսինքն ոչ թե ոչինչ շկարողացա կարել, այլ— կարել շգիտեի, կարը փշացրի: Կար բաժանող կինը տեսավ կարս և հանդիմանեց նախ մորս, որ ինձ թողել էր կարելու, հետո ինձ— որ կարը փշացրել էի: «Ահազին աղջիկ ես և ամենահասարակ կար անզամ շգիտես, ամոթ չէ՞», — ասաց: Ամոթ չէ՞... Այնքան ամոթ էր, որ հազար երանի կլիներ, եթե նույն բութինը գետինը պատովել, և կլաներ ինձ հավիտյան...: Մինչև անգամ մատղրվեցի ինքնա-պունկություն գործել և կզործեի, աստված է վկա, կզործեի, ել՛ու...

Ամեն տեսակ դժբախտություն, ամեն տեսակ բախտի հալածանք կտանեի— և տանում եմ— բայց հասարակ կնոջ այդ հասարակ բանի համար տված հանդիմանությունը ոչ մի կերպ չէի տանի և չ' մ կարող տանել: Այդ հանդիմանությունը մտքից մի վայրկյան անգամ չի հեռանում, և որքան շատ եմ մտածում այդ մասին, այնքան... սիրոս անտանելի՝ ծանրանում է... Կարծում եմ, թե ամբողջ մարդկությունն աշխարհին ամեն ծայրերից, մինչեւ անգամ տան շորս պատերը, որոնցից այլևս գուրս չեմ գալիս, ծաղրելով մատնացուց են անում ինձ և ասում՝ տեսե՛ք, այս ահագին աղջիկը հասարակ կար անել զգիտե... Ի՞նչ մեծ համարում ունի ինձ վրա. կարծում էի, թե բավական է, որ մի բան անել կամենամ— և վերջացած է, ամեն բան կանեմ. բայց իրողությունը, փորձը ցուց տվեց, որ ո՛չ թե ոշինչ չեմ կարող անել, այլև... որ ես ինքս ոչի՞նչ եմ, ոչի՞նչ, ոչի՞նչ... Եվ դեռ մի անգամ մեռած եղբօրս հպարտությամբ պատասխանեցի. «Ի՞նչ, ես կաշխատեմ»... խեղճ, խեղճ Աննա... Եվ եղբայրս էլ հույս ուներ ինձնից, թե կարող եմ աշխատել... Ո՞հ, որքա՞ն անտանելի է դրությունս... Ինքս ինձնից սարսափում եմ: Գոնե շունենալի սրտիս մեջ՝ գեռ մանկությանս հասակից սերմանված՝ հպարտությունը, այս գոռողությունը, գոնե կարողանայի տանել ինձ տված արգարացի հանդիմանությունները, գոնե սիրոս կարողանար հաշտվել ուղեղիս հետ,— այն ժամանակ... իսկ այժմ... կատարելապես իրավունք ունեմ ասելու, որ ես իսկապես թշվառ եմ... Ա՛խ, անգի՞ն քույրիկ... սրտիս և ուղեղիս մեջ դժոխք կա...»

Թո Ա. Ս.

ԺԷ

Թիֆլիս 15 սեպտեմբերի 1881

Սիրելի Հոհիսիմե,

Աղքատ տեղովդ ինձ բան ռուբլի ես ուղարկել: Ինչո՞ւ... յնո՞ւ ես ուղարկել... և գեռ ներողություն էլ ես խնդրում, որ ուշ ես ուղարկում, որովհետև ոռնիկի նոր ես ստացել... Բայց քեզ ո՞վ ասաց, որ ուղարկես... նպատակդ ի՞նչ էր, որ ուղարկել ես... ինձ ծաղրե՞լ, ինձ հանդիմանե՞լ... Այո՞... Կարծես թե

—288—

ինքս ինձ քիչ եմ ծաղրում, կարծես թե ինքս ինձ քիչ եմ հանդիմանում... Եվ գրում ես, որ շնորհակալություն չգրեմ քեզ: Մի՞թէ կարծում էիր, որ շնորհակալություն կդրեմ: Ի՞նչ բանի համար.— որ տանջանքս կրկնապատկեցի՞ր... որ ինքս ինձ ավելի ատել տվեցի՞ր... որ միանգամից ցույց տվիր, թե որքան չնշին և անպե՞տք եմ ես՝ քեզ հետ համեմատած... Երբ բաց արի ծրարը, հանեցի միջից ուղարկածդ թղթագրամները և կարդացի նամակդ— արյունս գլխիս խփեց: Կատաղությունից, ամոթից ու անզորությունից լաց եղա... Աստված իմ, այս ինչ արտասուք էր... Կյանքի մեջ զեռ այնպես լաց չէի եղել. արտասուքին լուրաբանչուոր կաթիլը, կարծես, թույն էր, որ բաղկում էր ուղղակի սրտիցս... Անգի՞ն բույրիկ, այս ի՞նչ է պատահում ինձ...

Թո Աննա Սարոյան

Հ. Գ. Նամակիս հետ եւ նմ ուղարկում ուղարկածդ քսան ուրբին: Անշուշտ հասկանում ես ինձ և չես նեղանաւ, որ այդ փողերը չեմ ընդունում:

Ա. Ս.

ԺԹ.

Թիֆլիս, 15 սեպտեմբերի 1881

Դարձյալ, դարձյալ ուղարկել ես և հետն էլ մի երկար հանդիմանություն: Այո՛, այո՛, սիրելի Հոփիսիմե. համաձայն եմ քեզ հետ, որ ես շատ հպարտ եմ, շատ փոքրովի և շատ հիմար, բայց... հպատակ, որ ավելի մեծ բարերարություն արած կլինեիր ինձ, եթե ալդ փողերը սկզբից չուղարկեիր: Զես կարող երևակայել, թե ինչպես տանցվում եմ ես, երբ նայում եմ այդ փողերին... Այնուամենայնիվ, ընդունում եմ, բայց այն պայմանով,— ուշագրություն դարձու,— այն պայմանով, որ այդ իմ պարտք ոլինի և ես՝ այսօր թե էգուց, բայց մի ժամանակ՝ անպատճառ զերա ադամ է մ քեզ: Գրիր, որ այդ պայմանին համաձայն ես, ապա թե ոչ, դարձյալ ետ կուղարկեմ: Մինչեւ գրելդ այդ փողերից մի կոպեկ անգամ չեմ ծախսու:

Թո Աննա Սարոյան

—289—

Ի.

Թիֆլիս, 19 սեպտեմբերի 1881

Սիրելի Հռիփսիմե,  
Շնորհակալ եմ:

Քո Աննա Սարոյան

ԻԱ.

Թիֆլիս, 4 հոկտեմբերի 1881

Սիրելի Հռիփսիմե,  
Ինչ ես ուզում, որ գոեմ: Թե ի՞նչպես եմ անցկացնում օրս:  
Կզակս ափիս հենած՝ առավոտից մինչև երեկո նստած եմ լուսա-  
մուտի առաջ և եթե երեմն պատահում է, որ մի որեէ ճանձ՝  
ցրտից անզորացած՝ ման է գալիս ապակիների վրա, բռնում կամ  
գլուխն եմ կտրում դեն գցում, կամ թերեն ու ոտները կտրատում  
ու թողնում, որ թավալգլոր գա այդպես անդամահատված, մինչև  
որ սատկի... Սրանից էլ լա՞վ զբաղմունք: Ժամանակ չէ՝, թող  
անցնի, ուրիշ կերպ շանցնի, թող այսպես անցնի, ի՞նչ վնաս  
կերզը խո մահ է...

Քո Ա. Ս.

ԻՅ.

Թիֆլիս, 18 հոկտեմբերի 1881

Սիրելիս,

Իզուր ես ինձ երկար ու բարակ խրատներ կարդում. Իզուր  
ես աշխատում ապացուցել ինձ, որ իմ այս խելքով, հասկա-  
ցողությամբ ես չեմ կարող և չպետք է այսպես լինեմ, որ ես  
զոռով եմ այսպես անում և անարդարացի կերպով շարախոսում  
ինքո ինձ վրա: Ես ինքս էլ այդպես եմ կարծում, բայց արի տես,  
որ անիծյալ իրականությունը խելք և հասկացողություն չի պահան-  
ջում, այլ կյանքի համար պատրաստ առ առ առ առ թյուն. իսկ հենց  
այդ բանն է, որ ես չունեմ, բայց թե ինչո՞ւ չունեմ, այդ ինքդ  
էլ շատ լավ կարող ես հասկանալ, եթե քրքրես անցյալս և դաս-

տիարակությունս... Միանգամից համոզվեր, որ ես կյանքի հա-  
մար մի կոպեկ, մի գրոշ շարժեմ: Կրկնում եմ՝ ես անպատրաստ  
եմ, անպատրաստ, — այս երեք մի մոռանար: Իսկ նոր պատ-  
րաստվել այժմ անհնարին է, ուշ է: Ինչպես սկզբից հիմքը գցվել  
է, այնպես էլ պետք է գնա մինչև վերջը: Եվ թող գնա: Ես հրաշք-  
ներ չեմ սպասում և ոչ էլ ինքս կարող եմ հրաշքներ գործել: Ես մի  
ալլանդակ արարած եմ, որի բերանը հացը ծամած պիտի դնել...  
Որքա՞ն ատում եմ ինքս ինձ, որքան զգվում եմ ինքս ինձնից...  
Եթե հնար լիներ սոսկալի մեղապարտությունից խուսափելու...

Քո Աննա Սարոյան

ԻԳ.

Թիֆլիս, 31 հոկտեմբերի 1881

Իմ անգին Հռիփսիմե,

Այս տոգերը գրելիս արդեն թույն եմ խմել, իսկ երբ կար-  
դալիս կլինես, անշուշտ այլևս կենդանի չեմ լինի: Մնաս բար-  
յավ... հավիտյան... Էլ ինձ չես տեսնի: Անիծիր ինձ, բայց լաց  
եղիր. արաւասուբդ գուցե թեթևացնի մեղապարտ հոգիս... Ի՞նչ սոս-  
կալի է թույնը... Բայց կյանքն ավելի սոսկալի է, ինքարկե, ինձ  
համար, իսկ քեզ և ուրիշների համար — ոչ: Հա, կարծեմ արդեն  
ստացած պետք է լինես մի քանի օր առաջ իմ քեզ ուղարկած քան  
ռուբլին, որ պարտք էի քեզ: Ների՛ր, հպարտությունն հաղթեց:  
Այս նույն հպարտությունն է, որ ինձ գերեզման է տանում: Արդ-  
յուք կներլ՛ ինձ աստված, կների՛ Գրիգորի Հոգին... Բայց ապրելի  
ինձ համար անհնարին էր: Դարձյալ մնաս բարյավ, աննման քայ-  
րիկ. աղոթք արա մեղապարտ հոգուս համար:

Քո Աննա Սարոյան

1898

Ա Պ Ա Տ Վ Ո Ժ  
Ա Ր Ա Վ Վ Ե Ւ Ի Ւ

୫୮

ԱՌԱՋԻՆ ՄԱՆ

I

**Գ**իշերվա ժամը շ-ին մոտ էր Ուզեզս արդեն թմրել էր։ Գրիշս վայր դրի. վեր կացա և պատրաստվում էի, որ քննեմ, երբ հանկարծ դռանս զանգակը հնչեց։ Սկզբում ինձ թվաց թե ականչի պատրանք է— գիշերային խորին լուսիթյան արդյունք, բայց չ— զանգակը նորից հնչեց և այս անգամ ավելի ուժեղ, ավելի երկարաժեկ։

Ուշադրություն դարձե՞լ եք, թե գիշերվա ուզ ժամին, երբ հանգիստ նստած եք ձեր տանը, երբ դուրս ու ներսը լոել են բոլոր ձայները, որքան խորհրդավոր է լինում զանգակի ձայնը՝ լի ինչ-որ գոտիկան հնչյուններով, որոնք անորոշ վախ են գցում ձեր սիրտը։ Այդպիսի մի վախ պաշարեց ինձ ակամա, որովհետև այդ ժամին ոչ ոքի չէի սպասում։ Տանտիրոջս ծառան, որը միկնույն ժամանակ ծառայում էր և ինձ, վաղուց արդեն բնած էր անշուշտ և այնքան քնուկ էր, որ զանգակ չէ, զուռնա էլ փշեիր ականջի տակ՝ չէր զարթնի։ Ուստի ստիպված էի ինքս գնալ դուրը բանալու և, մինչդեռ իջնում էի մութ նախասենյակի սանդուխով, զանգակը երրորդ անգամ հնչեց։

ხელ ფიცილ მაგ არჩ, ფიცილის, ფიცი ათვა ათვად ჭარჩ  
შე ასახულ ასახულ ასახულ ასახულ ასახულ ასახულ ასახულ ასახულ

— Գարեգին... այդ դու ես, — բացառանչեցի ակամա շատ ռապմառած նրա ալո տարածամ այցի վրա:

- Ես եմ։
  - Ի՞նչ է պատահել։
  - Ոչինչ։
  - Բայ ինչո՞ւ ես եկել։
  - Հենց այնպես։
  - Ի՞նչպես թե հենց այնպես։
  - Գիտեմ, որ ուշ ես պառկում, դրա համար եկա։
  - Ինչո՞ւ, է։

Հարցիս պատասխանելու տեղ ծիծաղեց մեղմ, տարօրինակ նով։ Առհասարակ ձայնից նկատում էի, որ շափազանց ուրախ ամագրության մեջ էր գիշերն այնքան մութ էր, որ դեմքի արհայտությունը չէի տեսնում։

  - Գիտե՞ս ժամը քանիսն է։— Հարցրի։
  - Счастливые часы не наблюдают,— վրա բերեց նա

Զգիտեմ ինչու, հանկարծ ինձ թվաց, թե ցնորվել է, մանաւանդ որ նրան ճանաշում էի առհասարակ իրրև տարօրինակ ուղեղի տեր Երիտասարդի: Եվ այդ կասկածն այնքան ազդեց ինձ վրա, որ մի րոպե մնացի կարկամած:

— ჭანანე ქსერს, ხი ფხე მწ გათ კარისო სირისტების თანხ  
ჭალის დებლი, — ასავ სა ს, კამავ ხთ მქელი ქნა, სხრა მთავს:

Ինձ ուրիշ բան չէր մնում անելու, եթե ոչ առաջնորդել նրան իմ սենյակը։ Հետաքրքրությունս շափազանց լարվել էր։

Նստեց գրասեղանիս մոտ և նայում էր ինձ այնպիսի մի հայցքով, որով կարծես հարցնում էր. «Հապա իմացիր՝ ինչ նորություն պիտի հաղորդեմ»:

Իսկ ես զարմացած դիտում էի նրան։ Սյուլտուկ էր, որ գրեթե երբեք չէր գործածում, սպիտակ, շատ մաքուր ժիշտով, և բոլոր բազին նոր, թանկագին փողկապով։ Իսկ դեմքը նույն ֆիզիկապես առողջ, կլորիկ, լեցուն դեմքն էր, առանց, սակայն, առնական որևէ արտահայտության։ Միայն մշտածպիս աշքերը, որոնք նրա առասպելական թույլ կամքի և հեղահամբույր բնավորության արտահայտիչն էին, փայլում էին ինչ-որ անմիտ, անհուն իդիոտական երջանկությամբ։ Սակայն այդ աշքերը փոքր ինչ շաղված էին, և մի վայրկյան ինձ թվաց, թե գինու հոտ առա նրա բերանից։

— Դուք հարբած ես, — ասացի, շեշտակի նայելով նրա աշ-  
քերին:

— Այո, մի քիչ ինչպես ասում են. բեֆով հմ,— խոստովա-  
նեց նա, կամաց ծիծաղելով:

— Տեսնում եմ, որ հյուր ես եղել: Ո՞րտեղ էիր:

— Որտե՞ղ... Որ ասեմ, չես հավատա:

— Մի գախենա, այնպիսի դրության մեջ եմ տեսնում քեզ,  
որ ինչ էլ ասես՝ հնավատամ:

Կարճ ժամանակ ևայում էր ինձ ժպտալով: Բատ երկույթին  
տատանվում էր՝ ասի, թե թողնի, որ ես գուշակեմ: Հետո հան-  
կարծ վեր թռավ, ամուր գրկեց ինձ և փսփսաց ականջումս.

— Այս գիշեր նշանվեցի:

Ու, պինդ համբուրելով ականջիս տակ, հեռացավ և, շարու-  
նակ ժպտալով, սկսեց դիտել ինձ, կարծես ստուգելու համար, թե  
ինչ տպագորություն գործեց ինձ վրա իր հայտնած նորությունը:

Խսկ իմ ստացած տպագորությունն ապշեցուցիլ էր, որովհե-  
տե նրա հայտնած նորությունը միանգամայն անակնկալ էր ինձ  
համար: Եվ, որովհետե այդ տպագորության տակ ես բան շգտա-  
ասելու և զարմացած նայում էի նրան, նա դեմ արավ ինձ իր աջ  
ձեռքի անանուն մատք, որի վրա ոսկե մի պարզ մատանի կար, և  
ասաց մի տեսակ պարժանքով.

— Այ, թե չես հավատում:

— Ուրեմն հիմա այնտեղից ես գալիս:

— Այո, զալիս եմ ուղղակի նշանածիս տանից:

— Որ հայտնես ինձ այդ նորությունը այս կես-գիշերին.

Կարծես թե վաղը շէիր կարող:

— Վաղը... Այդքան համբերություն կա՞ որ: Եվ ո՞ւր գնայի:  
Տո՞ւն, որտեղ մի կենդանի հարազատ շունչ չկա, որին հայտնեի  
ուրախությունս: Եվ ի՞նչ անեի մինչեւ վաղը: Քնեի՞: Քունս փախել  
է: Ախր, որ գիտենաս ինչ է կատարվում իմ մեջ... Սրտումս վարդ  
է բացվել, հոգիս երգում է. ուզում եմ ասել, խոսել, պարել. ուսե-  
րիս կարծես թեմք են բուսել, և թվում է թե՝ որ թափահարեմ, կը-  
թաշեմ, ինչպես... ինչպես...

Եվ իսկապես մի ոստյունով թռավ ձեռքերը տարածած, պինդ  
գրկեց գլուխս և, չնայելով դիմադրությանս, սկսեց իսելագարի պես  
համբուրել դեմքիս ինչ տեղ որ հանդիպեր:

Ծիծաղելի ինելով հանդերձ, այն աստիճան սրտագրավ էին  
նրա սրտի զեղումները, որ ակամա ավագ-եղբայրական մի քընք-  
շանք զարթնեց հոգուս խորքում դեպի այդ մեծ երեխան, որին

միշտ սիրել էի իր առասպելական պարզամտության և անմեղ-  
նրեխայական բնավորության համար:

Մի կերպ հանգստացրի, նստեցրի և սկսեցի հարցուփորձ  
անել:

— Թեև ես իրավունք ունեմ,— ասացի,— քեզնից նեղանալու,  
որ այդպիսի մի խոշոր քայլ ես արել առանց իմ գիտության, բայց  
և այնպես ներում եմ, որովհետեւ, ինչպես տեսնում եմ, թաքուն  
սիրահարված ես եղել և ուզել ես թաքուն էլ վերջացնել բանը, երկի-  
լարձելով, թե ես արգելք կարող եմ լինել: Այդպես չէ:

— Ամենեին ոչ:

— Հաւայա՞:

— Ես ոչ միայն սիրահարված չեմ եղել, այլև այլ երեկո սոա-  
չին անդամն էր, որ տեսա նրան:

— Ո՞ւմ, աղջկա՞ն:

— Այո:

— Որի հետ նշանվեցի՞ր:

— Այս:

Զարմանքը տարավ ինձ: Որ շճանաշեի նրան, կկարծեի կա-  
տա՞լ է անում:

— Լսիր, Գարեգին: Մի քիչ առաջ, այնտեղ, դուն մռա, քո  
այս տարածած այցը մի բուք կամկած զարթեցրեց իմ մեջ: Թե  
ո՞ո չես ցնորվել: Հիմա պարզորեն հարցնում եմ քեզ՝ իսկապես  
ուղեղղ տե՞ղն է:

— Ինչպես:

— Ուրաչհետեւ հասկանո՞ւմ ես՝ ինչ ես ասում: Կարելի բա՞ն է  
առաջին անդւմ տեսնել աղջկեր և հենց առաջին անգամից էլ  
նշան տալ:

— Ինչո՞ւ չի կարելի, քանի որ հավանեցի: Ես քեզ մի ուրիշ  
լուն կասեմ: Հայրս ասում էր, թե իր հայրը նշանվել էր առանց իր  
լապագա կեռջը տեսնելու:

— Այդ ե՞րբ: Սրանից հարյուր հիսուն տարի՞ առաջ: Եվ դո-  
շամ մտածում, թե որ ժամանակներո՞ւմն ես ապրում: և դու, որ  
իրթված, ինտենիգինտ մարդ ես, քեզ համեմատում ես քո խա-  
վար, տգետ պապի՞ հետ:

— Այդ սուս բան է, Միքայել, շհավատաս:— ասաց նա դոգ-  
մատիկ հանգստությամբ:— Ամուսնությունը բախտի բան է: Ման-  
տք

րամասնությունները որ պատմեմ, կտեսնես, որ իսկապես բախտի բան է: Հետո, սերը ինտելիգենտ և տգետ չի հարցնում:

— Մինչ անգամ սիրահարվել ես արդեն:

— Եվ ի՞նչպես...

— Մի գիշերում, մի բանի ժամվա ընթացքում:

— Տեսնելու պես ես մի տեղ կարդացել եմ, որ սիրահարվում են առաջին իսկ վայրկյանից, առաջին իսկ հայացքից:

— Եվ այդ հիման վրա՝ ես կարծում, թե սիրահարվել ես:

— Իւ թե կարծում, այլ իսկապես սիրահարվել եմ: Աստված

է վկա:

— Դե որ երդվում ես, ի՞նչ կարող եմ ասել: Իսկ նա՞:

— Ո՞վ, Սառա՞ն:

— Անունը Սառա է:

— Այսու:

— Դու որ հավանեցիր ու մինչ անգամ սիրահարվեցիր, նա էլ հավանեց քեզ:

— Հը, — արտասանեց Գարեգինը և ապշած նայեց ինձ:

Ըստ երկույթին, հարցս այնքան անակնալ էր նրա համար, որ հանկարծակի եկած՝ շիմացավ ինչ պատասխան տար: Այդ բոպելին այնքան զվարճալի արտահայտություն էր ստացել նրա դեմքը, որ ծիծաղս շկարողացա զսպել: Բայց նրա շփոթմունքը երկար շտեց, և նա պատասխանեց առաջվա երեխայական պարզամտությամբ:

— Իհարկե. Եթե նշանս ընդունեց, կնշանակե հավանել էր:

— Վնաս շունի. թե սիրահարված ես, բայց լոգիկայով ես խոսում: Բայց ինձ ասա տեսնեմ. ի՞նչպիսի աղջիկ է:

— Խելոք, լուրջ, ծանրաբարո, վեհանձն, թագուհու պես վեհանձն և... այնքան գեղեցիկ, այնքան գեղեցիկ, որ... Դե, իհարկե, սա բախտի բան է, թե չէ՞ ո՞վ կարծանացներ ինձ այդպիսի մի գեղեցկուհու, — ավելացրեց նա հուզված և, վեր կենալով սկսեց անցուղարձ անել սենյակում:

— Դու միայն ընդհանուր բառեր ասացիր, նկատեցի ես, — Նկարագրիր օրինավոր կերպով նրա արտաքինը, որպեսզի կարողանամ որոշ գաղափար կազմել նրա գեղեցկության մասին:

— Միւնույն է, ոչ մի գաղափար չես կարող կազմել:

— Ինչո՞ւ

— Որովհետեւ... — Գարեգինը հանկարծ կանգ առաջ առ-

չես: — Դու կարդացն ես Ստերնի ինքնակենսագրությունը:

— Զէ:

— Նա սիրահարված է լինում մի աղջկա վրա և ուզում է այդ աղջկա նկարագիրը տալ ընթերցողին. բայց դրա փոխարեն տալիս է իր գրքի մեջ մի դատարկ երես այսպիսի մի ծանոթագրությամբ մոտավորապես. «Թող այս երեսի վրա ընթերցողն իր առաջին սիրո առարկայի արտաքինը նկարագրի: Ես վախենում եմ, որ ընթերցողներն չհավանեն իմ նկարագրած աղջկան, որին սիրեցի: Թե ասեմ՝ իմ սիրած աղջիկը շեկ մազեր ուներ, նա, ով սկ մազեր է սիրուժ, կասի՝ «լավ», ի՞նչ մի գեղեցիկ քան է շեկ մազերը»: Թե ասեմ՝ նրա մազերը սկ էին սաթի պես, քիները վեր կը աղջեին ոսկեգույն մազերի սիրահարները: Դրեք քայտեղ ձեր սիրած աղջկա նկարագիրը: Այդպես էր և իժ սիրած աղջիկը: Ուրեմն կարող եք երեկակայել, թե որքան գեղեցիկ էր նա»:

— Ստերնը, կարծեմ, անզիլացի է և հումորիստ, — նկատեցի ես, — և այդ տողերը գրել է, անշուշտ, իր ընթերցողներին ծիծաղեցնելու համար: Բայց ես որ դեռ ոչ մի աղջիկ շեմ սիրել, ի՞նչպես երեկակայեմ, թի որքան գեղեցիկ է քո սիրածը:

— Դե որ շես սիրել, շես էլ հասկանա — հազար նկարագրեմ:

— Լավ, որ այդպես է, այդ թողնենք, մինչ որ երեկի բախտ կունենամ նրան անձամբ տեսնելու: Այժմ պատմիր ինձ՝ ինչպես պատահեց այդ բանը:

— Ի՞նչը:

— Այսինքն ի՞նչպես եղաւ, որ հանկարծ սիրահարվեցիր և նշանվեցիր:

— Իսկապես որ հանկարծ, — ծիծաղեց Գարեգինը և նստեց իր առաջվա տեղը: — Այ, ինչպես պատահեց: Անցյալ շաբաթ, երեկոյան, փողոցում հանդիպեց ինձ մեր հին բարեկամներից մեկը, մաքսատան մի հին ծառայող՝ Բաղիրյան ազգանունվ, որին փոքր ժամանակ շատ էի սիրում, որովհետեւ բանի մեր տուն գար, միշտ կոնֆետ կրերեր ինձ համար: Հորս մահից, առհասարակ մեր ընտանիքը քայբայլելուց հետո համարյա ոչ մի անգամ չէինք պատահել իրար: Ես իսկույն ճանաշեցի նրան. բայց նա չճանաշեց: Հետո, որ իմացավ ով եմ, այնքան ուրախացավ, որ կարծես կորած որդի ուներ ու հանկարծ գտավ: Մի առ մի հարցրեց հանգամանքներս և որ իմացավ ամուսնացած շեմ, կպավ թե սքեզ պետք է ինձ փեսա դարձնեմ: Ու ոռովզ քարշ տվեց ինձ

իրենց տաւե, որ աղջիկը ցույց տաւ ծիշտն ասած, շատ էլ չփիմակեցի, որովհետև մտածում էի մի բան, որ ամուսնանալու միտք չունեմ, զոռով Հո չի կապելու զգիս, թեկուզ ոսկի աղջիկ էլ ունենաւ: Բայց բարեբախտաբար թե դժբախտաբար, աղջիկը տանը էր կամ, գուցե տանը էր և չերևաց— չկարողացա իմանալ,— այնպես որ այդ երեկո շտեսա նրան: Կարծում էի, թե բանը դրանով էլ վերջացավ: Բայց չէ: Տեսնեմ այս երեկո եկավ ինձ մոտ, թե՝ ովեր կաց գնանք աղջկաս ասել եմ տանը մնա, պետք է ծանոթացնեմ քեզ նրա հետ»: Դու գիտես էլի, ինչքան փափուկ երես ունեմ, ոչ մի կերպ դիմադրել չկարողացա: Էլի զոռով քարշ տվեց: Ճանապարհին ներս տարակ իր ծանոթ ակնավաճառի մի խանութ, վերցրեց այս մատանին և սրա էլ մի համր, զոռով գրպանս կոխեց, թե՝ «կհավանես աղջկաս— կտաս, շես հավանի— կրերես ետ կտաս», լավի վեր կացանք դնացինք: Գնացինք ու...

Գարեգինն սկսեց ծիծաղել...

— Դե էլ ի՞նչ շարունակեմ,— ավելացրեց նա, — նշանը տվի, էլի: Տվի, ու սիրու այնպես կպավ, որ հիմա մնացել եմ ապշած, թե այս ի՞նչ բան էր,— հրաշք, կախարդա՞նք... ոչինչ չեմ հասկանում:

— Ուրեմն աղջկան տեսար ու հավանեցիր:

— Տո՛, աղջիկ մի ասի, հրաշալի՞ք ասա, — բացագանձեց Գարեգինն իրեն հատուկ զեղուն հիմաքանչումով: — Որ մտավ ու նայեցի... Էհ, չէ. պետք է իմ դրության մեջ լինես և տեսած լինես նրան, որ հասկանաս ինձ, թե չէ խոսքերով ի՞նչ կարող եմ հասկացնել քեզ:

— Ինձ խոսքեր հարկավոր էլ չեն, որովհետև տեսնում եմ, որ արդեն խելքը կորցրել ես, — նկատեցի ես ակամա ժպտալով նրա խանդավառության վրա: — Դու միայն, եթե կարող ես հանգիստ կերպով, պատմիր ինձ լոկ իրողությունը:

— Լոկ իրողությունը, հանգիստ կերպով: Շատ բարիր Ամենից առաջ ասեմ, որ մեզ ու մեզ էինք, այսինքն՝ ես էի, աղջիկը և հայրն ու մայրը: Ասենք, հայրն ու մայրը նրա ծնողները չեն:

— Ուզում ես ասել Սառան, — այդպես ասացիր, չէ, նրա պեսնը, — նրանց որդեգրուհին է:

— Աչ, նրանց աղջիկը է, բայց ոչ հարազատ աղջիկը: Այս ինչպես: Մասան աներոշ խորթ զավակն է: Այսինքն՝ աներս իր կնշպես: Այժման կնորդ առաջ ամուսնացած է եղել մի այրի հնոց հետ,

որի ձեռքին եղել է Սառան մոտ տասը տարեկան հասակում: Հնորդ այդ կինը, այսինքն Սառայի հարազատ մայրը մեռել է, և աներս ամուսնացել է իր այժմյան կնոց հետ: Այսպիսով Սառան դառնում է երկուսի էլ խորթ զավակը: Հասկանալի՞ է:

— Հասկանալի է: Հիմա շարունակիր քո պատմությունը. այսինքն ի՞նչպես նշանվեցիր:

— Դե ի՞նչպես են նշանվում: Աղջիկը տեսա, հավանեցի ու նշանը տվի: Եկի, տեսի, հաղթեցի, — վրա բերեց Գարեգինը ծիծաղելով: — Հետո նստեցինք, կերանք, խմեցինք, քո կենացն էլ անուշ արինք, իբրև իմ ապագա խալեղբոր: Լավ է, չէ:

— Շատ շնորհակալ եմ այդ պատվի համար: Բայց դու էլի այն չես ասում, ինչ որ ինձ է հետաքրքրում:

— Հարցրու, հարցրու, ես քեզ բոլորը կպատմեմ:

— Դու ինձ այս ասա, թե ի՞նչպես ծանոթացար աղջկա հետ, ի՞նչ խոսեցիք, ի՞նչպես հանկարծ սիրահարվեցիր, վերջապես՝ ի՞նչպես հայտնեցիր սերդ և...

— Ես նրան սեր չեմ հայտնել:

— Հապա՞:

— Հապա չկա: Ասած միայն այս էր. «Օրիորդ, ես ձեզ հավանում եմ. եթե դուք էլ ինձ եք հավանում, խնդրեմ ընդունեցեք այս մատանինս:

— Հենց այդպես:

— Հենց այսպես. ոչ մի բառ ավել, կամ պակաս:

— Եվ նա էլ ընդունեց:

— Ընդունեց և գրեց սեղանի վրա:

— Ինչպես թե սեղանի վրա:

— Սեղանի վրա, էլի:

— Եվ ոչ մա՞տը:

— Զարմանալի է, ես, կարծեմ, կարողանում եմ գանազանել սեղանն ու մատը:

— Եվ այդ դառավ նշան տա՞լ:

— Դե ես ի՞նչ գիտեմ ինչ դառավ, — խնդաց Գարեգինը, — այսքանս միայն գիտեմ, որ դրանից հետո հայրն ու մայրը շնորհացություն, համբուրեցին, օրհնեցին մեզ, և ես այնքան ուրախ էի, որ ծափ տային, պար կգայի: Խսկապես, օրենքով որ գնանք, — ավելացրեց նա, — եթե չեմ սիսալում, ես ինքս իմ ձեռքով պետք է մատանին դնեի մատը, բայց որովհետև շփոթմունքից այդ բա-

նր մոռացա անել, երեխ նա էլ ամաչեց և մատը շղիեց:

=  $t_1 \sin^2$ :

— 26 —

— Ի՞նչ ասարիք։ Ի՞նչ խռովցիք։

— լավ, որ հետդ չի խոսել, բայ ո՞րտեղից գիտես, թե խելոք, կրթված աղջկկ է:

— Հայացքից: Շատ ուրիշ հայացք ունի. կարծես ուղղակի թափանցում է հոգուդ խորքը և պրատում, թե ինչ կա այնտեղ: Իսկ երբ չի նայում քեզ, այլ աշքերն ուղղում անորոշ տարածության մեջ կամ անշարժ հառում մի կետի, այդ հայացքն այնքան մտածկուտ է, այնքան լուրջ և, միենույն ժամանակ, այնքան ինչպես ասեմ,— լացող,— այո՛, ուղղակի լացող,— որ կարծես հոգիդ առնում է բոան մեջ և սեղմում: Ահա ա՛յդ հայացքն էր, որ տեսնելուս պես զերեց ինձ: Քանի անգամ այս երեկո, երբ նա չէր նայում ինձ, ես դիտում էի նրան և, զարմանալի է, ամեն անգամ կարծես մի բան պոկվում էր սրտից և գալիս թկիս գեմ առնում: Ահա այս բոպեին էլ, որ մտաքերում եմ նրա այդ հայացքը, ակամա մի անորոշ տիրություն է պատում ինձ:

— Գուցե մի վիշտ ունի, — Հարցրի հետաքրքրված

— Զեմ կարծում. այդ պետք է որ նրա հայացքի հատկանիշը լինի, Առհասարակ ես երբեմն տեսել եմ կանայք, որոնց աչքերը կարծես լաց են լինում, և այդ աշքերն են առավելապես, որ նրանց գեղեցկությունը ու գրավչությունը են տալիս: Ասենք, ես դեռ լավ չեմ ճանաչում նրան, որովհետև միջոց շեղափ նրա հետ առանձնանա-լու և, բացի այդ, ինքս էլ մի քիլ քաշվում էի: Ընթրիքի ժամանակ, երբ, ինչպես ասում են, կատարս մի քիլ տաքացել էր և բավական համարձակություն էի ստացել, կարող էի շուտ ճոտենալ, բայց, զժքախտաբար, նա շմասնակցեց ընթրիքին:

— Ի՞նչպես թե շմասնակցեց:

— Ներողություն խնդրեց, որ մի քիչ տկար է զգում իրեն և  
չհապահէ:

— էւ տեսաբ նյան:

96

Ա համար Թաթուկիսի ուսերս և վեր կացաւ:

— Τέλος έμεινε η πρώτη σταύρωση της Αγίας Κυριακής στην Αθήνα, η οποία γίνεται στην Εκκλησία της Αγίας Κυριακής στην Πλάκα, με την παρουσία της Αρχιερατικής Στέφανης και της Επισκοπής.

— *Bpp aquatis*

Պայմանավորվեցինք. որ չենց առաջիկա շաբաթ երեկոյան,  
Երբ եւ բոլորովին աղատ էի, նա կգա ինձ մոտ և միասին կղնանք:  
Ու գրեթե զոռով դուրս արի նրան:

11

Ծարաթ երեկոյան, ճիշտ նշանակված ժամին, Գարեգինը  
Նկավ ինձ մոտ նույն սյուրտուկով, սպիտակ ժիլետով, այս անզամ  
ուրիշ կաս-կարմիր փողկապով, նոր սափրած դեմքով, անսովոր  
առուցք ու կենսուրախ:

Բայց նախ մի երկու խոսք այդ տարօրինակ երիտասարդի մասին:

Գարեգին Սիսակյանը քիչ բե շատ ունեռ ծնողների զավակ էր: Թեմականի դասընթացն ակարտելուց հետո պատրաստվում էր գիմնազիական քննություն տալու, որ համալսարան մտնի, բայց որովհետև արդեն 21 տարեկան էր և չէր ուզում հասարակ ոինվոր գնալ, մտավ յունկերական դպրոցը, որ վերջը սպա դառնաւ: (Այն ժամանակ մեռած էին նրա ծնողները, և նա զրկվել էր, իրեն իր ծնողների միակ զավակը, զինվորագրությունից ազատվելու արտոնությունից): Բայց շուտով տեսավ, որ զինվորական դիսցիպլինան և շարքաշ կյանքը չեն համապատասխանում իր խառնվածքին, թողեց սևա դառնալու մետադրությունը և հակառակ ծայրն ընկավ— ուզեց կուռակրոն դառնալ: Այդ բանի համար գնաց էջմիածին, բայց երեք ամիս հետո վերադարձավ կատարելապես հիսամթափված կուսակրոնների անբարոյական կյանքից: (Էջմիածնում նա իշել էր իր հոր հին ծանոթ մի եպիսկոպոսի մոտ, որի սենյակից մի գիշեր գուրս էր փախել ներքնաշորով): Այնուհետև մի տարի անգործ մնալով չէր իմանում, ինչ անի, վերջը մտավ պետական կալվածքների տեղական վարչությունը իրեն հասառակ պաշտոնյա շնչին ռոճիկով: Նա կարոտ չէր, իհարկե, այլ ու ան, բանի որ, միակ զավակը լինելով, հոր ամբողջ կարու էր առանձին բանկում պահ տրված զուտ դրամով, իրեն էր մնարք ժողովական գունդություն: Իսկ այդ կարողությունն այնքան շահ

Եթ բերում, որ նա կարող էր առանց կողմնակի նկամուտի էլ լավ ապրել, մանավանդ, որ շատ համեստ, կարելի է ասել՝ ճգնավորի կյանք էր վարում, և այդ ու թե նրա համար, որ ժլատ էր,— ընդ-հակառակն, շատ ընկերներ դիմում էին նրա օգնությանը, և նա մերժում էր մերժում,— այլ այն պատճառով, որ պարզապես չգիտեր, թե ինչ բանի վրա կարելի էր փող ծախսել Ուզում էր պաշտոն ունենալ, զբաղված լինել որևէ գործով,— միննոյն է թե ի՞նչ, որովհետեւ, ասում էր, «պարապությունը մելամաղձուտ զարձնում»:

Հիշում եմ նրա ծնողներին: Հայրը խստաբարո և կրոնասեր մարդ էր, թեև տերտերներին ատելով ատում էր, համարելով նրանց իրենց կողմանն անարժան մարդիկ, բայց միշտ ժամ էր գնում, կանգնած տեղից ձայնակցում ժամասացներին և բոլոր հինգ նավակատիքներին պաս պահում ու հաղորդվում: Վերջը հարեց բողոքականության, բայց մահից առաջ զղաց, խոստովանեց իր բոլոր մեղքերը և հաղորդություն առավ իր նախկին ծխատեր քահանաց, որին մի քանի անգամ դուրս էր արել իր տնից:

Գարեգինի մայրը շատ գեղեցիկ և կենսաթրթիռ մի կին էր, ամուսնուց առնվազն մի քառա տարով փոքր: Բայց շուտով թառամեծեց, խելագարվեց և մեռավ Հոգեկան հիվանդների ապաստարանում: Եվ առում էին, թե ուստանան ամուսինն էր: Բայն այն է, որ նա կնոջը սիրում էր մի տեսակ հիվանդութ, կատաղի սիրով է, որ որոշեած ձեր էր, կասկածում էր նրա հավատարմության վրա, ուստի տնից զուրս չեր թաղողում, շատ անգամ ծեծում էր: Վերը նրա կասկածամտաթիշուն այն աստիճանի հասավ, որ կարել ավեց իր տարն ընկածի փողոց նայող պատշաճամբը և շարիլ տվեց բալոր պատուհանները, որպեսզի կինք հնարավորություն շունենա դեպի դուրս նայելու և աշբ-ունքով խոսելու դիմացի տան վերին հարկում ապրող մի գեղեցիկ երիտասարդի հետ, դեպի որը ամենա

Նից ավելի կասկածամիտ էր խելքոց ցորեած սպառությունը:  
Ընտանեկան այսպիսի պայմաններումն էր ծնվել Գարեգինը,  
որը իր հարու մոր առաջին և վերջին զավակն էր:

Այսպէս, ուրեմն, շաբաթ երեկոյան, ժամը 8-ին, երբ սպանի  
մութ էր, Գարեգինը եկավ ինձ մոտ, որ տանի ծանութեանին էր  
հարսնացուի հետ:

- Արդեն հայտնեց եմ նրան, որ խաչեղբորս, արսինքն քեզ  
այս երեկո պիտի ներկայացնեմ իրեն, — ասաց նա:

— Եվ ի՞նչ ասաց:

— Ասաց. «Ճատ ուրախ կլինեմ»:

— Եվ պինդ-պինդ շնալե՞ց աշբերիդ, — ծիծաղեցի ես:

— Հա՛, վրա բերեց Գարեգինը մի տեսակ մտահոգու-  
թյամբ, — զգիտեմ, իմ մեջ որևէ բա՞ն է տեսել, թե այդ առա-  
սարակ նրա սովորությունն է, — որ նայում է, շատ պինդ է նա-  
յում և հետո — շատ քիչ է խոսում: Եվ, զիտե՞ս, որ ինձ այդպիս  
նայում է, ես չեմ նայում նրան:

— Ինչո՞ւ:

— Գեմ կարողանում: Նրա հայացքի մեջ, երբ նայում է այդ-  
պես: Այդ տեսակ բան կա, մի անքացատրելի բան, որ ակամա  
ճնշում է ինձ:

— Հապա այն գիշեր այնքան հիացմունքով էիր խոսում նրա  
հայացքի մասին և ասում էիր, թե այդ հայացքն է գերել քեզ:

— Նա երկու տեսակ հայացք ունի. մեկը՝ խիստ ու պրատող,  
երբ նայում է քեզ շեշտակի, և մյուսը՝ մտածկոտ ու մելամաղ-  
ձիկ, երբ չի նայում քեզ և, կարծեա, մոռանում է, որ դու ներկա  
ես: Ահա ա՛յօ հայացքն է, որ ես սիրել եմ և կուզեի նրան միշտ  
այդպիս տեսնել:

Զեռաց հագնվեցի, և դուրս եկանք:

Գարեգինը եկել էր կառքով, որը և սպասում էր դռանը:  
Կառքի մեջ, ետքի կողմը, թղթի մեջ փաթաթված ինչ-որ բան կար,  
որ նա վերցրեց և ծնկների վրա դրեց:

— Անուշեղեն է, — բացատրեց: — Գրպանումս մի ուրիշ բան  
էլ ունեմ — ականջի օղեր: Խսկ մատանին արդեն մատն էր դրեր:

Ինձ ականջի օղերից ու մատանուց ավելի նրա հարսնացուն  
էր հետաշրջում, ուստի ասացի:

— Այն գիշեր մոռացա հարցնեմ — քանի՞ տարեկան է:

— Ո՞վ, Սառա՞ն: Գեմ հարցրել, բայց փոքր չի երկում: Եթե  
քսանհինդ շլինի, քսաներկու տարեկան անպատճառ կլինի: Խսկ  
պինդ-պինդ որ նայում է, ավելի մեծ է երեսւմ:

— Բայց ասում ես, որ նրա պինդ-պինդ նայելիս դու չես նտյում անքորեմն ո՞րտեղից գիտես, թե այդ ժամանակ նու ավելի

Հղում եմ. Դու չե՞ս փորձել. շատ բան մարդ տեսնում է  
— 303 —

զգալով։ Օրինակ, պատը որ փուլ է գալիս, դու, չնայելով որ աշքերդ բնազդաբար փակում ես, բայց և այնպես ամենայն մանրամասնությամբ տեսնում ես, թե ինչպես դղրդյունով գալիս տակովն է անում քեզ։

— Դու այդ փորձե՞լ ես, — ծիծաղեցի ես:

— Զէ, բայց պետք է որ այդպիս լինի, Հոգեբանութեն ուրիշ կերպ չի կարող լինել:

Զգիտեմ ինչու, ակամա փորձող հայացքով նայեցի նրա աշքերին:

— Հսիր, Գարեգին,— ասացի, եկ խոստվանիր, որ թես  
նշանվել ես և այն գիշերն էլ հիացմունքով էիր խոսում նրա մա-  
սին, բայց... վախենում ես նրանից:

— Ի՞նչպես թե վախենում, — Հարցրեց մեքենաբար, բայց  
նկատեցի, որ շփոթվեց:

— Վախենում, է՛լի, ուղղակի վախենում, ինչպես հարցաքըն նության ժամանակ աշակերտը կվախենա ուսուցչից Եվ այդ պատճառը, որ նա պինդ-պինդ նայելիս գու չես կարողանում նայել նրան:

— Այս, մի տեսակ ճնշվում ես:

—Եվ դարձյալ դրա համար է, որ նա ավելի մեծ է երևուս  
և որ պինդ-պինդ նայում է քեզ:

— Այո, զարմանալի է, կարծես,— շատ ճիշտ նկատեցիր, — դասը շիմացող աշակերտ լինեմ ուսուցչի առաջ կանգնած։ Մի տեսակ կույ եմ քայլս ոչ միայն մարմնով, այլև հոգով։

— Այդպես! Որովհետև զցում ես, որ նա բարոյապես մեծ է բարձր է քեզնից, չէ՞:

— Ինչպես թե բարոյակեաւ:

— Այսինքն իր ներքին ուժով — կամքով, բնավորությամբ  
խելքով:

— Անցյալ զիշեր Հո ինքս ասացի, որ շատ խելոք աղջկիկ է

— Այսինքն զգում ես, որ խելթը աղջրիկ է, որութեաւ, ու ծում եմ, նրա խելթը դեռ չես շափել:

— Ծիշտ է: Եա շատ քիչ է խոսուս, և մրա լուսական է ավելի շատ բան եմ զգում, բան եթե շարունակ խոսի:

Գարեգինի այդ խոսքը զվա հապալու մը կատարութիւնը ծառաց է առաջ գույն ծագեց գիշումս, և նրա խորհրդավոր հարսնացու զվարճակի գույնով ներկայացավ ինձ:

— Պատ, մեր տղա, — բացագանձեցի ծիծաղելով — կարող է ե  
թոլորովին հակառակը լինել:

Գարեգինը նայեց ինձ զարմացած, երևի, այն բասի վրա, որ  
լուրջ խոսակցությունը ես հանկարծ ծիծաղի փոխեցի:

= *Ukluhunpu*, — *Kwengreng*

— Այսինքն այն, որ նա կարող է տգետի և հիմարի մեջը լինել, ինչպես սովորաբար լինում են մեր նահապետական ընտանիքների մարդու տալու աղջիկները:

— Ի՞նչ ես ասում, — բացազնչեց Գարեգինը եռանդուս կարպով և այնպիսի մի եղանակով, որ կարծես մի ծանր վիրավորանք լինելի հասցրած իր անձին: — Նա ավարտել է միշնակարգ դպրոց և պատրաստվում է եղել մանկավարժական դասընթացներուց մտնելու, որ վարժուհի դառնա, բայց ընտանեկան դժբախտ հանգամանքների պատճառով, — այդպես ասաց Հայրը, — չի կարուղացել իրագործել այդ մտադրությունը, մանավանդ որ մի տարուց էլ ավելի ծանր հիվանդ է եղել: Նա միշնեւ անգամ կարդացել բուց և գրադարձները և շատ լավ է ճանաշում քեզ:

— Մինչև անգամ: Ա՛յ այդ հավանեցի, — շարութագործ

— զէ, հավատացնում եմ քեզ, Միքայել, նա շատ կրրկած պողին է։ Այս կը գնանք, ինքդ կտեսնես։

— Կտեսնեմ, ի՞հարկե, բայց ասելու այն է, որ ես ճանաչում  
եմ շատ այդպիսի կրթված հայ աղջիկների, որոնց գլխից երկո-  
կոպեկի խելք հազիվ կարելի է քամել: Դու հոգիս, որ չեն խո-  
ռում պոլուները դատարկ լինելուց:

— Համաձայն շեմ՝ թողորովին համաձայն շեմ,— զրա բարս  
գարեգինը լրջորեն;— Լոռողները միշտ խելոք են լինում: Մինչ  
անգամ այն հիմարը, որ լոռում է, խելոք է. կնշանակի՝ այնքա  
խելք ունի, որ հասկանում է, թե հիմար է, ուստի լոռում է, որ ցույ  
շտա, թե հիմար է:

Գարեգինն առհասարակ սիրում էր զերացական գամավածը թյուններ և երբեմն շատ խելոք մտքերի հնտ այնպիսի անհերթե բաններ էլ էր ասում, որ չէի կարողանում ծիծաղս զսպել եկ սիրում էի նրա այդ դատողություններն իրենց պարզամտության համար:

Դառքի կանգ առավ մի նեղ ու յութ փողոցում մի տան բակի բաց դռան առջև Այն միջոցին, երբ իջնում էինք կառքից, սակէ դռան շեմքում կանգնած մի կին շտապով անհետացավ կիսախավար բակի մեջ:

Կառքը ճամփու զնելով, յտանք բակը և մի կողմի վրա թեքած ճռճռան սանդուխքով բարձրացանք մի շատ նեղ պատըշշամբ, որ աղոտ կերպով լուսավորվում էր պատից կախած լապտերով: Մի շարք պատուանների առջևով, որոնց սպիտակ վարագույրների ետևից լույս էր երեսում, Գարեգինն առաջնորդեց ինձ դեպի մի դուռ, որն և առանց նախապես ծեծելու բաց արեց ուղղակի, իբրև տանու մարդ, և հրավիրեց, որ մտնեմ:

Այն սենյակը, ուր մտանք, ըստ երկույթին, հյուրասենյակն էր: Այդտեղ ոչ ոք չկար, բայց հին ձեմ զահավորակի առջև, կլոր սեղանի վրա վառվող լամպը ցույց էր տալիս, որ մենք անսպասելի հյուրեր չեինք:

Գարեգինը անուշեղենի փաթեթը դրեց պատի երկայնքով զինվորների պես շարված աթոռներից մեկի վրա, վերարկուն ու գրլխարկը հանեց դրեց հարկան աթոռի վրա, մեքենայաբար շտկեց մազերն ու փողկապը և հրավիրեց ինձ, որ հետեւմ իր օրինակին:

Սուսուփուս նստեցինք և սպասում էինք:

Սենյակի կահավորանքը ցույց էր տալիս, որ տանտերերն ուներ մարդիկ չեին, բայց ըստ կարելույն աշխատում էին ծածկել իրենց շքավորությունը: Բացի հին, շատ հին ձեմ զահավորակից, որի կարմիր պաստառի խավը նստելու և մեջքը դեմ տալու տեղերում իշել, գորշ գույն էր ստացել, և նրա առջեր դրված բավական մեծ կլոր սեղանից, որի ծաղկանքար սփոռոցի ծայրերը հազիվ էին ծածկում ներքեր երեք ճյուղի բաժանված մի հատիկ ոտը, — սենյակում կային զահավորակի այս ու այն կողմը դրված երկու բազկաթոռ, որոնցից մեկի բազուկը կոտրված էր, մի դյուժինի շափ աթոռ, երեք հայելի՝ մեկը հորիզոնական ձևով զահավորակի գլխին պատից թեք կախած, մյուս երկուսն իրաբ դեմուղեմ պատն ի վեր ցից կանցնած, ինչպես վարսավիրանոցում: Վերջիններիս տակ դրված էր թղթախաղի ծարովի մի-մի սեղան, որոնցից յուրաքանչյուրի վրա բաղմած էին մհ-մի զույդ:

ԲԲոնզե ժանգու շամդան լվառված մոմերով և ապակյա ցոլուն գինդերով, իսկ հատակի վրա, այդ բոլոր կահավորանքի տակ, պատից պատ փոված էր մի շատ ընդարձակ գորգ՝ հնությունից խավը մաշված և տեղ-տեղ թելերը դուրս թափված: Պատերից մեկի մեջ նկատեցի երկու պահարան, որոնց գոյությունը ծածկելու համար դռներին կպցրած էր միանույն պաստառը, ինչ որ պատերին: Կլոր սեղանի վրա դրված էր մի ալբոմ և մի գիրք սև կաշեպատ կաղմով:

Գարեգինը վերցրեց գիրքը, բաց արևց և իսկույն մեկնեց ինձ ասելով:

— Աչա՛, որ ասում էի:

Գիրքն առա և նայեցի:

— Ենչ էիր ասում:

— Ար շատ կրթված աղջիկ է:

Գիրքը Ժյուլ Սիմոնի «Բանվոր կլնը Եվրոպայում» գրվածքի ուսուերեն թաղմանությունն էր:

— Ինչ ես կարօնմ, — ասացի, — մոռացմա՞մբ է դրեւ այս տեղ, թե դիւմամբ:

— Ինչո՞ւ դիւմամբ:

— Ար ցույց առ, թե՝ մենսեք ինչպիսի գրքեր եմ կարգում:

— Ո՞վ գիւտե:

Ու նորից սուս արինց:

Ես դիտում էի բարեկամիս: Անհանգիստ դրության մեջ էր և մի քիչ էլ շփոթված, եթէի այն սպառնառով, որ ինձ հյուր բերեմ քիչ ոչ շեր դիմավորնել և ոչ ոք ներս չէր գալիս: Խոսում էր կամաց և հանդարտ, կես անհամբեր, կես վախկուս հաչացք էր բայում շեպի հաբեկան սենյակի դուռը, որը ավելի փոքր ու ցածր էր, քան այն, որտեղով մտանք:

— Գուցեց չեն իմանում, որ եկել ենք, — ասացի:

— Սըսս, — շնչաց Գարեգինը, ձեռքը շրթունքներին դնելով և, աշքերը շոած, ականջները խլշեց:

Հարեւան սենյակից նախ ինչ-որ հուզված քշիչոցի ձայներ լսվեցին, հատու հանկարծ — կանացի մի զային ծղրտոց, և ապա ամեն ինչ լսեց առաջգա պես:

Գարեգինը, զույնը նւուած, վեր կացավ և կանգնած տեղը քարեցավ, ականջը դմափի հարեւան սենյակի շուտք լարած:

— Այս ինչ էր, — հարցրի զարմացած:

— Այս նրա ձայնն էր,— շշնջաց Գարեգինը մեքենայաբար:

— Ո՞ւմ հետ էր:

— Երեխ մոր հետ:

Կարճ ժամանակ մնաց նույն քարացած դրության մեջ. Հետո կամաց նստեց և դարձավ ինձ խորհրդավոր շշունչով.

— Գիտե՞ս, ես նկատել եմ, որ մոր հետ չունի...

— Ինչո՞ւ:

— Զգիտեմ:

— Լավ, ժամանակ էին գտել կովելու,— հարցրի կարճ լոռությունից հետո:

Գարեգինը զպատասխանեց:

Դարձյալ սուս արինք և դարձյալ սպասում էինք, այս անգամ շատ անախորժ դրության մեջ, և Գարեգինը— առավել քան ես:

Վերջապես հարեւան սենյակի դուռը բացվեց, և ներս մտավ վրացնակ հագնված մի գիրուկ, ցածրահասակ կին՝ դեռևս բավական ջահել և սիրունատես:

Գարեգինը շտապեց ընդառաջել նրան, համբուրեց նրա ձեռքը և մեղ ներկայացրեց իրար:

Դա հարսնացուի մայրն էր:

Շրթունքները կուզ ու հուպ ածած՝ նա անվտահորեն դարձավ ինձ և կես Թիֆլիսի բարբառով, կես գրական լեզվով ներողություն խնդրեց, որ այսքան սպասեցրեց: Ու սկսեց մի ինչ-որ պատմություն, թե իր բրոջ երեխան հանկարծ վատ էր դառել, թե եկել կանչել էին իրեն, թե երեխան հիմա, փառք աստծո, լավ է, և ինքը հենց նոր է վերադառնում այնտեղից: Պարզ տեսնում էի, որ սուտ էր ասում. ուզում էր մի կերպ արդարացնել իրենց տարօրինակ հյուրընկալությունը և ծածկել այն անախորժությունը, որ պատահել էր հարկան սենյակում:

Բայց այդ անախորժության տպավորությունը դեռևս այնքան թարմ էր, որ՝ երբ նստեցինք, ոչ մեկս չկարողացանք որևէ խոսք արտասանել: Դրությունը շափազանց անհամ էր, լոռությունը խստ ճնշող:

— Ո՞րտեղ է Սառան,— վերջապես առաջինը խոսեց Գարեգինն այնքան կամաց, որ կարծես հարեւան սենյակում հիվանդ կար պառկած:

— Սառան իսկույն գուբա, — պատասխանեց զոքանը, ոլո-

րելով գիրուկ թշերին կախ ընկած շագանակագույն հաստ կապիք-ները:

— Իսկ հայրի՞կը:

Գարեգինը իր ապագա աներուն արդեն հայրիկ էր անվանու:

— Շաբաթ գիշերները նա մի փոքր ուշ է տուն գալի, — կարճ պատասխանեց զոքանը:

Խոսակցությունն այդ եղանակով շաբունակվեց մի կարճ ժամանակ, մեջ ընդ մեջ ընդհատումով: Նկատում էի մի ընդհանուր տրամադրություն: — ամենքս էլ սպասում էինք Սառային, և ես՝ ամենից անհամբեր:

Վերջապես մտավ և նա:

#### IV

Եթե նախապատրաստված չլինեի Գարեգինի պատմածով, կկարծեի, թե մտնողը ոչ թե մի օրիորդ է, այլ հասում մի կին՝ միջահասակ ու բարեկազմ, և բարակ, ճկուն իրանին անհամաշափ փարթամ, սննդատու կրծքով: Եվ առաջին իսկ հայացքից լիովին ըմբոնեցի, թե ինչու Գարեգինը սիրահարվել էր նրա վրա «տեսնելուն պես», թեև այդ երեկո ապարդյուն անցավ իմ աշխատանքը՝ գտնելու համար նրա աշքերի մեջ այն «լացող հայացքը», որ այնպես գերել էր բարեկամիս: Այդ հայացքն, ընդհակառակն, շատ լուրջ էր, կասկածոտ ու թափանցող և նրա նուրբ գծված, մաշատ լուրջ էր, կասկածոտ ու թափանցող և նրա առուր գծված, մաշատ գեմքին մի տեսակ խստաբար արտահայտություն էր տալիս: Գեմք կարող ասել, թե իմ ստացած առաջին տպավորությունը նպաստավոր էր նրա համար, գլխավորապես նրա այդ անբարեհամբույր հայացքի պատճառով, թեև իմ առջև տեսա մի ուրույն գեղեցկուհի, որն իր արտաքինով կարող էր հրապուրել բարեկամից շատ ավելի նուրբ ճաշակ ունեցող մարդկանց:

Սառան մտավ զղային արագ քայլվածքով, կարծես հուսահատական վճռականության մի ուժգին մղումով, և մտնելիս գլխի մի շարժումով ոնքի մեջքը գցեց ուսի վրա ընկած մի հատիկ հաստ գիսակը, որը ամենենին չէր սազում նրա ոչ-օրիորդական արտագիսակը: Երեւում էր, որ նա տնային սովորական հագուստով էր— թիֆլիս: Երեւում էր, որ նա տնային սովորական հագուստով էր— շատ պարզ, բայց ճաշակով կարված և շատ մաքուր: Թե՛ այդ և ինը այն հանգամանքը, որ մազերը չէր շինել, ենթադրել էր տալիս, թե քնավ չէր նախապատրաստվել մեղ ընդունելու կամ կարեորու-

թյուն չեր ազնի մեր այցելությանը նվ մի բռպի ինձ թվաց, թե դրանով պիտի բացատրվեր նրա և մոր միջև տեղի ունեցած կափվը հարեւան սենյակում:

Նրա մտնելուն պես Գարեգինը վեր թառվ տեղից, վագեց դեպի նա, ուզեց ձեռքն առնել, բայց սրավճեան Սառան ուշադրություն շդարձեց նրա վրա և իր հայացքն ինձ էր ուղղել, ձեռքը ետ բաշեց և շնչաց.

— Այս... մեր խաչեղբայրն է:

Ես շտապեցի առաջ և ներկայացաւ: Սառան ոչ մի խոսք շարտասանեց, միայն զիմով մի թեթև շարժում գործեց և սեղմեց ձեռքս, շարունակ նայելով աշքերիս «պինդ-պինդ», ինչպես ասում էր Գարեգինը: Այնուհետև պաշտոնական շոր ու ցամաք ձայնով խնդրեց, որ նստեմ, և, շարունակելով ոչ մի ուշադրություն շդարձնել փեսացուի վրա, նստեց մեկուսի, շիփ-շիտակ, զլուխը բարձր ու հպարտ, և հայացքը, համարձակ ու թափանցող, չէր հեռացնում ինձնից, որով կարծեմ ասում էր. «Դուք եկել եք ինձ տեսնելո՞ւ և դիտելո՞ւ: Համեցեք, ինչքան ուզում եք նայեցեք և գիտեցեք. ես ձեզնից ոչ վախենում եմ, ոչ էլ ձեր կարծիքին որևէ նշանակության տալիս. ես ձեզ ամենքիդ էլ արհամարհում եմ և մոռացնել կատամ ձեզ ամուսնացող աղջկա վրա իբրև ծախու ձիու վրա նայելու ձեր գարշելի սովորությունը»:

Այս էր ասում արդյոք նրա հայացքը, թե՝ այդ հայացքի ազդեցության տակ ես էի նրա փոխարեն այդպիս մտածում, — շգիտեմ, միայն ակամա շփոթված հեռացրի նրանից իմ զիտողի հայացքը, զգալով, որ առջևս նստած է ռծախու ձիերից» հազարից հազիվ մեկը, որ ծայր աստիճան նախանձախնդիր է իր մարդկային արժանապատվության և զիտե, թե ինչպես պետք է հակաւարված տալ իր այդ արժանապատվությունը նվաստացնողներին:

Աղջկա ներս մտնելուց մի կարճ ժամանակ հետո մայրը վեր կացավ, ինչ-որ փսխսաց նրա ականջին և, ներողություն խնդրելով մեզնից, դուրս գնաց: Սառան նրան ճանապարհ դրեց մի երկար, անհաջող հայացքով: Պարզ երեսում էր, որ ատում էր մորը և ամենաին չէր ծածկում այդ բանը:

Գարեգինը, կարծես հանկարծ հիշելով, վեր թառվ, դրապահից հանեց ականջի օղերի տուփի, բաց արեց և բռնեց ճրագի զիմաց այնպիսի մի ձևով, որ կարծես ուզում էր մեկուսի և բավական

հեռու նստած հարսնացուին հրապուրելով մոտեցնել: Ագամանդ-ներն օղերի մեջ ճրագի լուսի տակ պապղացին խոշոր աստղերի բալոր ցոլուն երանգներով:

— Այս մեր խաչեղբայր նվերն է, — ասաց Գարեգինը և, նայելով ինձ, շգիտեմ՝ հիմարաբա՞ր թե խորամանկորեն՝ ժպտաց:

Ապշած նայեցի նրան. կատակ էր անում, շատ հիմար կատակ էր, իմ լուրջ և հանդիմանական հայացքի ազդեցության տակ հասկացավ իր հիմարությունը և կարմրեց, բայց շարունակում էր ժպտաց:

— Բարեկամս կատակ է անում, օրիորդ, — ասացի, դառնալով Սառային, — այդ ինքն է նվեր բերել ձեղ համար:

— Որ դու հիմարություն անվանեցիր, — շգիտեմ որտեղից և ինչու համար հնարելով, վրա բերեց Գարեգինը և այս անգամ խնդրաց:

Սառան փոխնիփոխ նայում էր մերթ ինձ, մերթ Գարեգինին: Ըստ երեսութին, շատ զարմացած էր և չէր հասկանում, թե ինչ նստում մենք: Նա ոչ միայն շմոտեցավ, այլև բնավ ուշադրություն շդարձեց շարաբատիկ օղերին:

— Լավ, օղերը որ ես եմ նվեր բերել, հապա այս ով է բերել, — ասաց Գարեգինը, գնաց աթոռի վրայից վերցրեց անուշերենի փաթեթը, բաց արեց և բերեց դրեց օղերի տուփի կողքին: — Այս հո դու ես նվեր բերել:

Ռու այս անգամ քրքչաց պարզապես մի իդիոտական բրդչով:

Արդեն համը տարավ, և ես սկսեցի այլևս շնեղանու նրանից, որովհետև պարզ տեսնում էի, որ ուրախությունից հիմարացել էր և չէր նկատում, որ իր վարքունքով ու խոսքերով ավելի ու ավելի էր աղջկանում հարսնացուին:

Գիտելով Սառային, որը շարունակում էր ապշած նայել մերթ ինձ, մերթ իր փեսացուին, ինձ զարմացնում էր մի բանթեք թե ինչպես էր եղել, որ այդ անշուշտ խելացի ու լուրջ աղջկեց հենց նշանտուփի գիշերը, երբ իր փեսացուն այդպիս հիմարաւթյուններ շատ պիտի լիներ արած. չէր ճանաչել նրան և համաձայնել էր նրա կինը լինել: Բայց որ Սառան ամենակին չէր համաձայնել իր փեսացուին և նրա վրա բարձրից էր նայում, այդ պարզ տեսնում էի նրա արհամարհական վերաբերմունքից:

Սակայն ես ավելի իմ մասին էի հոգում, թանն այն է, որ

վախենում էի, թե ընկերս էր հիմար վարժունքով միգուցե ինձ էլ վարկաբեկի Սառայի առջև որը, զարմանալի է, միայն այն բանով, որ լեր խոսում և շարունակ դիտում էր մեզ զարմացած, ին տեսակ երկյուղ էր ազգում ինձ և ստիպում զգույշ լինելու Սոյ պատճառով շտապեցի վերջ տալ Գարեգինի հիմարություններին և, օգուտ քաղելով այն հանգամանքից, որ Ժյուլ Սիմոնի գիրքը ձեռքում էր, հարցրի.

- Այդ գո՞ւթ եք կարդում, օրիորդի;
- Ոչ, — պատասխանեց նա կտրուկ;
- Հապա ինչո՞ւ էր այստեղ դրված.— մեջ ընկավ Գարեգինը:

Սառան, նրան պատասխանելու տեղ, ինձ դիմեց.  
— Մի բնկերուհի ունեմ, նա էր տարել կարդալու. այս երեկո վերադարձեց.  
— Ուրեմն քո՞նն է,— հարցրեց Գարեգինը և, վեր կենալով գնաց նստեց նրա մոտ:

Այդ եզակի դիմումը, ըստ երեսութին, բավականին անհաճողաց Սառային: Նա հոնքերը կիտեց և, թերթերունքների տակից նայելով դեպի ցած, պատասխանեց ոչ-իսկույն:

- Այու,
- Իսկ դու կարդացե՞լ ես,— հարցրեց Գարեգինը, ըստ երեսութին, ուրախացած, որ առիթ ունի զրուց անելու հարսնացուի հետ, և ամենակի շնկատելով, որ այդ հարցուփորձը և մանավանդ իր մերձափորությունը անախորժություն է պատճառում նրան, ինչպես ես էի եզրակացնում Սառայի դեմքի արտահայտությունից:
- Սառան հանկարծ վեր կացավ և արագ քայլերով դիմեց դեպի ինձ.
- Ներեցեք, տվեք այդ գիրքը պահեմ:

Ու նախքան եւ Ժյուլ Սիմոնը կմեկնեի, նա գիրքն առավ ձեռքից այնպիսի մէ ձեռք, որ ինձ թվաց թե խլեց, և տարավ զցեց պատի մոտ. հայելու տակ դրված սեղանի վրա: Զսպած ներքին զայրութից նրա դիմքին թեթև շառագույն էր պատել, աշբերշ շար արտահայտություն էրն ստացել:

Հարսնացուի այդ,— կոպիտ որ շասեմ,— խիստ տարօրինակ վարմունքը շատ կոտրեց ինեղ փեսացուի սիրտը: Սկզբում Գարեգինը տեղն ու տեղը սառեց, հետո, երբ Սառան վերադարձավ և

Հոնքերը կիտած նստեց իր տեղը, նա մինչև անգամ վախկոտությամբ իր աթոռը մի քիչ հեռու քաշեց:

- Դու վիրավորվեցի՞ր,— հարցրեց վարանքով:
- Ես առհասարակ չեմ սիրում, որ ինձ հարցաքննում են,— պատասխանեց Սառան խստորեն, առանց նրան նայելու:
- Հետո ես քեզ ե՞րբ հարցաքննեցի,— թոթովեց խեղճ բարեկամս:

— Դուք (Սառան առանձնապես շեշտեց այս «դուք»-ը) այս րոպեիս հարցրիք՝ կարդացե՞լ եմ ես այս գիրքը: Ասացեք խնդրեմ, ինչո՞ւ շպետք է կարդացած լինելի:

- Գարեգինը բոլորովին կուշ եկավ:
- Ես... Ներողություն... ես չէի կարծում... Հարցրի այնպես... Որ գիտենայի... Դու իգուր...

— Խնդրեմ ինձ հետ դու-ով շխոսեք,— հանկարծ ընդատեց նրան Սառան այնպիսի մի եղանակով, որ ինձ թվաց, թե այդ խոսքերի տեղ եթե ապտակ տար, տպավորությունը միենունը կլիներ:

Խեղճ բարեկամս գույնը նետեց և պապանձեց: Այդ րոպեին այնքան արգահատելի տեսք ուներ նա, և այդ տեսարանն ընդհանրապես այնքան ճնշող էր ինձ համար, որ ինչ չէի տալ, միայն թիւ ներկա լլինելի:

Եվ ասու՛ած գիտե, թե ինչով պիտի վերջանար այս տարօրինակ ընդհարումը նոր նշանված գույզի միջև (Հոգիս պարզապես մի շատ վատ սկանդալ էր գուշակում), եթե, բարեբախտաբար, շմտներ այդ րոպեին Սառայի հայրը:

Խեղճ բարեկամս այնքան էր շփոթված, որ բոլորովին մոռացավ ինձ ներկայացնելու իր աներոշը: Ուստի ներկայացա ինքս անձամբ:

## V

Բարձրահասակ, բայց մեզքից կորացած մի ժիր ծերունի էր Բաղրայանը, արծաթի պես սպիտակ մազերով և կենսուրախ հայցքով: Նայելով նրա խորամանկ, ծիծակուտ աշբերին, թվում էր, թե երբեք ոչ տիսրել է, ոչ էլ բարկացել: Ինձ ընդունեց վերին աստիճանի սիրալիր կերպով և առաջին իսկ խոսքերից այնպիսի մի

արամադրություն ստեղծեց իմ մեջ, որ կարծես շատ հին բարեկամներ էինք:

Երբ, առաջին ժանոթության սովորական խոսքերը փոխանակելուց հետո, տանտիրոջ հրավերով նորից նստեցի, տեսա Սառան այլևս չկա սենյակում:

— Օհո՛, սուվենի՛ր,— բացագանչեց Բաղրյանը, տեսնելով սեղանի վրա, բաց տուփի թավշյա բարձիկի մեջ խրված ոսկե օղերը և մի քննական հայացք գցեց նախ ինձ, հետո փեսայի վրա, կարծես կամենալով առանց մեր թելադրության իմանալ, թե ո՞ւ ընծան էր: Հետո մի «ընըմ» արավ, ժիլետի գրպանից հանեց ակնոցը, դրեց թթին, վերցրեց տուփը, մոտեցրեց լույսին և սկսեց դիտել ակնոցի մերթ միջից: Մերթ վերսկից և մերթ տակից, որի ժամանակ շատ զվարճալի կերպով բարձր ու ցածր էր անում զլուխըն ու հոնքերը: Օղերը դիտելուց հետո բաց արեց անուշեղենի արկղիկը և դարձավ Գարեգինին.

— Այս ո՞վ է սովորեցրել քեզ, թե նշանածի համար պետք է այսպիսի բաներ բերել: Իսկ ես կարծում էի, թե գառան պես միշտ ես: Այս դու ժուլիկ, ժուլիկ:

Ու մի ձեռքը զնելով Գարեգինի կրծքին, մյուսը մեջքին խաղողեց նրան խնդալով:

Բայց Գարեգինի շփոթմունքը դեռ չէր անցել. վերին աստիճանի խղճալի գրության մեջ, նստած տեղում մնացել էր կաշու, նդպած: Աներոջ հայրական բարեսիրտ խոսքերին այտասախանելու համար, ըստ երեսութին, ուզեց մի բան ասել, բայց ոչինչ չկարողացավ արտասանել, միայն դիմքի վրա լացախառն մի ժամկետ երևաց:

Բաղրյանը կարծես նոր նկատեց, որ ինչ-որ բան է պատահած նրան, մի կարճ ժամանակ նայեց նրա աշքերին քննական հայացքով ուղղակի ակնոցի միջից, հետո նստեց նրա մոտ և հարցրեց լուրջ դեմք առած:

— Ի՞նչ է պատահել: Նեղացրել են քեզ:

Լացախառն ժպիտը ծամաժուեց Գարեգինի դեմքը, և նա պատասխանեց ոչ իսկույն:

— Աչ! Ես նեղացրի:

Բաղրյանը գլուխը վերձգեց և նայեց ակնոցի միջից:

— Ո՞ւմ:

— Նառային:

Բաղրյանը գլուխը ցածրացրեց և հայեց ակնոցի վերսկից:

— Ի՞նչպես:

— Զգիտեմ.— Կմկմաց Գարեգինը պատժված երեխայի սես աշքերը վայր թողած:— Կարծեց, թե ուզում եմ հարցաքննել իրեն, մինչդեռ այդպիսի միտք ամենափառ չեմ ունեցել: Ներողություն խնդրեցի... չերեց և... դուրս գնաց:

Ու ողորմելին թիշ մնաց լաց լինի: «Վա՛յ խեղճ մեծ երեխա» արտասանեցի մտքումս ակամա ժպտալով:

— Այդ միայն,— հարցրեց Բաղրյանը:

— Հետո... նեղացավ, որ դու-ով էի խոսում հետք:

Բաղրյանը հանկարծ այնպես պինդ ծիծաղեց, որ ակնոցն ընկավ թթից և կախ ընկավ զզովն անցկացրած զայթանից:

— Վա՛յ, վայ, — բացագանչեց նա, — տեսա՞ք ինչ է պատահել: Էդ համեն բան բանդվեց, կործանվեց, վերջացա՞վ, պըրծա՞վ, գնա՞ց մո՞ւթ, խավա՞ր, տարտարո՞ւս: Հիմի հ՞նչ անենք:

Ու սկսեց նայել մերթ ինձ, մերթ Գարեգինին այնպիսի մի կոմիկական տարակուսանքով, որ ծիծաղս չկարողացաց զսպել:

Բայց որովհետև Գարեգինը, ըստ երեսութին, տրամադրություն շուներ ոչ ծիծաղելու և ոչ նույնիսկ ժպտալու, Բաղրյանը հանկարծ լուրջ դեմք առավ, զայթանից կախ ընկած ակնոցը ժիշտի գրպանը կոխեց, մի ձեռքով կես գրկեց փեսացուին և սկսեց մխիթարել:

— Բան չկա, բալիկս, բան չկա, սիրտդ մի կոտրի: Այդպիսի դատարկ բաներին որ ուշադրություն դարձնես, ուր կերթահա՛մ, Գուք դեռ չեղ ճանաշել իրար: Երեկ մեկ, էսօր երկու Թանի զնաք, այնքան կճանաշեք, կհասկանաք և կսիրեք իրար: Այս էլ ասեմ, որ սկզբում կովելը լավ նշան է: այդ նշանակում է, որ վերջը իրար արեով կերպվեք: Ծիշտ է, թաքցնելու ի՞նչ կա, նա մի թիշ ուրիշ տեսակ աղջիկ է, զղային է, բայց դու նրա լեզվին մի նայիր, սիրտն ուղղակի աղավնու սիրտ է: Լուցկու պես ձեռաց կվառվի և խսկույն էլ կհանգչի: Այդպես է նրա գրգումունքը: Այ շուտով, աստվածած տա, կպսակվեք, կապրեք միասին, և կտեսնե՞ ճիշտ եմ ասո՞ւմ թե ոչ:

Նկատեցի, որ Գարեգինն աներոջ այդ պերճախոսությունից բավականին հանցանացավ և սկսեց ժպտալ գուրգուրված երեխայի պես:

— Ախր ընծայիս էլ ուշադրություն շդարձրեց, — գանգատվեց նա:

— Այս հրաշալի օղերին: Հըմ, բաս դու իսկապէս որ շատ միամիտ մարդ ես եղել և ամեններն չեն ճանաչում կանանց, Ասա, խնդրեմ, ի՞նչպես կարող է կին արարածը այսպիսի բաների վրա ուշադրություն շդարձնելու Հըմ, պարոն Մարգարյան, այսպիսի բան կարելի՞ է, — դիմեց ինձ Բաղերյանը և ինքն էլ պատասխանեց իրեն. — Իհարկե ոչի Հա՛, այս մեկը ճիշտ է, որ Սառան ուրիշների պես հիմար չէ, — ավելացրեց նա. Նորից դառնալով Գարեգինին, — և իսկույն վրա շէր ընկնի ուրախացած. Նա ծանրաբարո, խելացի, ինտելիգենտ աղջիկ է, որի համար այսպիսի զիզիպիզի բաները կարող են այնքան էլ նշանակություն չունենալ: Բայց և այնպես, էլի եմ ասում, նա կին է, հասկա՞՞ւմ ես, էին. և մեկ անգամ որ բերել ես այս ընծան, արդեն գիտե, որ սա իրենն է, իր սեփականը և մենակ մնացած ժամանակ էլ շատ լավ կարող է տնտղել, անցկացնել ականջներին. շուռումուտ գալ հայելու առջև և ուրախանալ: Հըմ, ճիշտ չե՞մ ասում, պարոն Մարգարյան:

Քաղաքավարությունը ստիպում էր ինձ հավանություն տալ այդ շատախոս ծերունու խոսքերին, մանավանդ որ, — այդ բանը տեսնում էի նրա ինձ վրա նետած խորհրդավոր հայացքներից և խոռակցության եղանակից, — նա ուզում էր, որ ես օգնեմ իրեն փեսացորի կոտրված սիրութ տեղը գցելու:

Մտավ Բաղերյանի կինը. կավիքները ոլորելով: Օղերի տեսներն պես նրա աշքերը փայցիեցին, չգիտեմ՝ հիաշմունքի՞ց թե նախանձից: (Սպիտակահեր ամուսնու մոտ այդ կինը ավելի և շահել երևաց ի՞շ աշքի՞ւ):

Գարեգինի մրամադրությունը բոլորովին բացվեց, և ես նորից շուտով. խանգարող դարձաւ իր հարսնացուն էր:

Սկսվել էր մի ընդհանուր կենդանի խոռակցություն, երբ մտավ Սառան մատուցարանը ձեռքին. որով թեյ էր բերում:

Գարեգինը. որ, ոտի կանգնած, իրեն հատուկ պարզամտությամբ ինչ-որ փիլիսոփայություններ էր գուրու տալիս, հարսնացուին տեսնելուն պես, լուց ինչպես հանկարծ լուսմ է շարուցուին անող աշակերտն ուսուցչին տեսնելիս, և նստեց, մի վախ-կոտ հայացք գցելով նրա վրա:

Մի անհարմար լուսթյուն տիրեց սենյակում: Եվ այդ ընդհանուր լուսթյան մեջ Սառան սկսեց բաժանել բաժաները կենտրոնացած հայացքով, առանց ոչ ոքի նայելու հնձ թվաց, թե ամենից ավելի նա պետք է ճնշվեր այդ լուսթյունից, բանի որ պատճառն ինքն էր, և ամենքի հայացքը նրան էր ուղղված, որ պատճառն ինչպես ընդհակառակն, շատ հանգիստ էր երկում: Երբ մոտերաց ընդհակառակնը, շատ հանգիստ էր երկում: Երբ մոտերաց գավականը, բաղերյանը. բարեսիրտ-հեզական ժպիտով ներքեւից նայելով նրա վայր թողած աշքերին, նկատեց:

— Լսիր, ինչո՞ւ ես նեղացրել մեր այս սիրելի պարոնին: Սառան ոչինչ շպատասխանեց:

— Ինձ նայիր:

Սառան. մի շարագուշակ հանգստությամբ աշքերը միշտ վայր թողած, կանգնած էր հոր առջեւ, մատուցարանը ձեռքին, սպասում էր, որ նա վերցնի իր բաժակը:

— Քեզ հետ չե՞մ, ինձ նայիր, — կրկնեց հայրը:

Սառան դարձյալ կանգնած էր լուս և արձանացած: Նկատեցի, որ մատուցարանը սկսեց թեթևակի դողալ նրա ձեռքին:

— Տե՛ս, ինչ սիրուն բան է բերել քեզ համար, — ասաց հայրը և օղերի տուիր վերցնելով՝ ուզեց կամացուկ խփել նրա կզակին:

Բայց Սառան զղային հանկարծական մի ցնցումով գլուխը ետքեց, մատուցարանը պահեց մի ձեռքում, մյուսով վերցրեց վերշին բաժակը, դրեց հոր առաջ և դիմեց գեպի դուռը նրա դեմքն այնպիսի մի զսպված զայրույթ էր արտահայտում, որ ես ուղղակի արսափով սպասում էի, թե ահա՛, որտեղ որ է, մի սկանդալ կհանի:

— Դե, այդ արդեն բանի նման չէ, — կես-կատակով, կես-լուսուն կանչեց նրա և ետեկի հայրը: — Դու յեզ բոլորովին խաղը ու խայտառակ ես անում:

Սառան հանկարծ կանգ առավ դռան մոտ, մի շատ սուր հայացք նետեց հոր վրա և նկատեց շափազանց լրջորեն:

— Հայրիկ, ճշմարիտ, ես շեմ հասկանում, թե այդ ինչ վարմունք է: Երեխա՞ եմ, ինչ է, որ...

Նա չփերջացրեց խոսքը, դարձավ և դուրս գնաց, գուրը շրբնացնելով իր ետեկից:

— Քա՛, — արտասանեց Բաղիրյանի կին ամոթահար և ձեռքը բռունցը շինած՝ դրեց շրթունքին ի նշան ապշության:

Բաղիրյանը սկզբում բավական շփոթեց, բայց շուտով հագաքեց իրեն և դարձավ ինձ այնպիսի վարանոտ հայացքով, որով կարծես ներողություն էր խնդրում պատահած անախորժության համար.

— Ասացի, չէ՞ ջղային է, և արամադրությունն էլ այսօր, ինչպես երկում է, լավ չէ: Ասենք, մեղավորը ես եմ: Չէ՞ սիրելի փիսիկս, դարձավ նա Գարեգինին, յտերմորեն գրկելով նրա ուսուր: Լսո՞ւմ ես, փիսիկս եմ ասում և ոչ թե վեսիկս: Մեղավորը միշտ մենք ենք— ես ու զու, զու և ես:

Եվ Բաղիրյանը քահ-քահ ծիծաղեց, ինչպես ինձ թվաց՝ ավելի նրա համար, որ ցրի աղջկա ավելի քան տարօրինակ վարմունքի թողած ընդհանուր անախորժ տպավորությունը:

Բայց այս տպավորությունն այնքան ծանր էր ինձ համար, որ ես հազիվ կարողացա մի կեղծ ժպիտ խաղացնել դեմքին, լնդառաջելու համար բարի ճերունու ցանկությանը: Ես ուղղակի ամաշելով էի սայում նրան, որ նա իր և կնոջ ամոթը պարտկելու համար ստիպված էր դրությանը շսագող կատակների դիմել: Լարծեն ես— մի կողմնակի և օտար անձնավորություն— մեղացոր էի, որ ներկա էի նրանց այդ ընտանեկան անախորժության: Ել եթե գիտենայի, որ անչաղաքավարի բան արած շեմ լինի և ավելի խորացրած նրանց ամոթահար դրությունը, իսկույն վեր կ'ինալի և կգնայի: Ուստի ստիլված և ավայելելու թեյի երկրորդ բաժանունը էլ, որ այս անհամ հրամցրեց տիկին Բաղիրյանը, ու սվճենու Սառան այլս չերեաց: Այնուհետև մի քիչ մրգեղեն «անոլ արինք», դարձյալ առանց Սառայի ներկայության: Բաղիրյանը, մի քանի անգամ դուրս ու տուն անելուց հետո, փորձեց դարձյալ կատակների դիմել՝ աղջկա բացակայությունը բացատրելու և արւարցնելու համար: Բայց այդ էլ չոգնեց: Ոչ միայն մեր, այլ իր տրամադրությունը, ինչպես նկատում էի, անդարձ փշացել էր այդ երեկո:

Ես վեր կացա և, շնորհակալությամբ Հրաժարքերով Բաղիրյան ամուսինների, իհարկե, յոկ բաղաքավարության համար՝ առաջընկած ընթրիքից, հրաժեշտ տվի:

Գարեգինը, բայց եթեույթին, ուզում էր մնալ, բայց առեն-

լով, որ ես գնում եմ, ինքն էլ վեր կացավ Զոքանշն ու աները, թերեւս իմ պատճառով, շատ էլ շթախանձեցին նրան որ մնա: Ու զուրս եկանք միասին:

## VI

Երկար տեղ գնում էինք լուս: Գարեգինը հոգեկան շտփաշանց ճնշված դրության մեջ էր:

— Ա՞յդ է բո շատ խելոք, շատ կրթված և ես ինչ գիտեմ ուրիշ ինչ տեսակ աղջիկը, — վերջապես խոսեցի ես:

Գարեգինը ձայն չհանեց: Ճգում էի, որ ավելի շատ այն բանից էր ճնշված, որ իր հարսնացուն իմ ներկայությամբ ոչ միայն չէր արդարացրել իր գովասանքները նրա մասին, այլև բնակորության այնպիսի գծեր էր գրանորել, որոնք իր համար էլ անսպասելի էին: Եվ մեղքս զալիս էր ասելու նրան այն, ինչ որ անհրաժեշտ էի համարում սսել իրեն բարեկամ: Բայց նրան ժամանակին զգուշացնելն էլ հանցանք կլիներ իմ կողմից: Ուստի ասացի ուղղակի:

— Ես կարծում եմ, ինքդ էլ զգում ես, որ քո այս այցը պետք է վերջինը լինի, եթե, իհարկե, զու փոքր ի շատե պատվո զգացում բանես:

— Ինչպես թե վերջինը, — մեքենայաբար հարցրեց Գարեգինը:

— Այնպես, որ անմիջապես պետք է ձեռք վերցնես այդ աղջկանից: Դուք չեք կարող իրար մարդ ու կին լինել:

Գարեգինն իսկույն չպատասխանեց: Բայց այն բանից, ինչ որ շասց, տեսա, որ նա նույն տարակուսանքի մեջ է և նույնն է մտածում, ինչ որ ես:

— Հետո կարո՞ղ եմ, — ասաց կամաց և այնպիսի եղանակով, որ կարծես ինձ չէր պատասխանում, այլ իր մտածունքներին:

Ու ձայնից նկատեցի, որ թուքը կուլ տվեց: Ակամա կանգ առա և զարմացած նայեցի նրա երեսին: Մի՞թե, իսկապես, ույնքան սիրտահարված ես, որ չես կարող: Այս, չեմ կարող... ուղղակի չեմ կարող, — ասաց լացագին, առանց ինձ նայելու:

— Բայց քո սերը բանի՞ գրոշ արժի նրա համար: Մի՞թե շես տեսնում, որ չի հավանում քեզ: Եվ ոչ միայն չի հավանում, այլև տեսնել անգամ չի տպում:

— Ինչ անեմ, ես սիրում եմ,— կրկնեց Գառեգինը քմահան երեխայի բութ համառությամբ:

— Լսիր, Գառեգին, ինչ եմ ասում,— ասացի ես համոզիչ եղանակով և, նրա թեև առնելով, առաջ տարա: — Դու երեխա շետ, տղամարդ ես՝ փոքր ի շատե դատելու ընդունակ, և, ես կարծում եմ, սերը գեռս այնքան էլ չի կուրացրել քեզ. որ իրերը շտեսնես իրենց իսկական գույնով, Մի՞թե այդ աղջկա թե՛ դեպի քեզ և թե՛ դեպի ծնողները ցուց տված վարմութից պարս չէ քեզ համար, որ նրան զոռով են կպցրել քեզ, և նա վերջ ի վերջո պիտի մերժի քեզ: Մի՞թե քեզ հաճեցի կլիներ այդ խայտառակությունը:

— Այդպիսի բան չի կարող պատահել,— վրա բերեք Գառեգինը եռանդով:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ, նախ՝ նա որևէ մի տգիտ աղջիկ չէ, որ ծնողների կամքով շարժվի և ում տան՝ գնա, և երկրորդ՝ ես առիթ շեմ տա, որ դժո՞ն մնա ի՞նձնից:

— Ծատ բարի. Համաձայն եմ, որ նա ծնողների քմահաճույքով շարժվող աղջիկներից չէ: — այդ ես տեսա այս երեկո: — Բայց դու ի՞նչ դիտես. թե ներքին ընտանեկան, ինձնից ու քեզնից ժամանակ կամ կամքին ու ցանկությանը: Այս մեկու երկրորդ՝ ասում ես. թե առիթ շես տա, որ դժո՞ն մնա քեզնից: Ծատ բարի. Հիմա առիթ տվի՞ր, որ այն օյինները խաղաց գրեթիդ:

— Տվի, իհարկե, տվի: Ի՞նչ է նշանակում՝ «կարդացե՞լ ես այս գիրքը»: Իհարկե, հարցաքննություն: Եվ, իսկապես, ինչո՞ւ շպետք է կարդացած լիներ: Հետո, երեկ չէ, յեկէլ օրը բոլորովին անձանոթ էինք իրար, իսկ այսօր վեր եմ կենում և «դուռով եմ խռում» հետո: Ի՞նչ անեմ, թե նշանված ենք, քաղաքավարական պայմանները մի որոշ ժամանակ պետք է պահպանե՞լ թե ոչ:

— Բայց նրա ապտակներն ուտելուց հետո քիթդ լավ կախեցիր:

— Ոչ թե քիթս կախեցի, այլ տեսա, որ արժանի էի:

— Լավ, հայրը, զո երեկ-մեկէլ օրվա ժանոթը չէր, ինչո՞ւ նրա հետ էլ այնպես վարվեց:

— Հայրն արդեն զլխովին մեղավոր էր: Որովհետեւ, ճիշտ որ, ի՞նչպես կարելի է մի ահազին օրիորդի հետ օտար հյուրի ներկայությամբ վարվել ինչպես մի երեխայի հետ: Ծառ էլ որ հայրն է:

— Իսկ մայրը: Ճիշտում ես ծկլթոցը հարեան սենյակում:

— Երկի նա էլ մի բանով նեղացրել էր: Եվ, վերջապես, հալսեցի՞ր, որ հայրն ասաց, թե զդային է:

— Եվ դու պիտի կարողանա՞ս ապրել այդպիսի մի ջղային աղջկա հետ:

— Ինչո՞ւ չէ, քանի որ ոչ մի առիթ շեմ տա նրան գրգռվելու:

— Դու արդեն ինքդ ոտով գլխով մի մեծ առիթ ես, ուրիշ էլ ի՞նչ առիթ: Եվ ես հիմար եմ, որ քեզ պես մի անհասկացողի աշխատում եմ համոզել, — ասացի ես ակամա գրգռված նրա համառությունից և, նրա թեկ թողնելով, առաջ անցա վճռական բայլերով:

Կարծ ժամանակ Գառեգինը լուր հետեւում էր ինձ, հետո հանկարծ բայլերն արագացրեց և եկավ հավասարվեց ինձ:

— Լավ, ի՞նչ ես ուզում անեմ, — ասաց մի տեսակ գրգիռով:

— Էլ ես ոչինչ շեմ ուզում, ինչ ուզում ես — արա:

— Չէ, սպասիր, — նա կանգ առավ և զոռով պահեց ինձ, — ուզում ես թողնեմ, չէ՞ լավի: Բայց, ասա տեսնեմ, ինչի՞ համար:

— Էլ ասե՞մ ինչի համար:

— Չի հավանում ինձ, չէ՞ զոռով են ինձ կպցրել, չէ՞ Բայց ես շեմ հասկանում, թե ի՞նչպես կարելի է մի կրթված, հասկացող աղջկա զոռով կպցնել մի տղամարդի, որին չի հավանում: Հետո, ասում ես, ընտանեկան ինչ-որ հանգամանքներ: Ի՞նչ հանգամանքներ: Դու այդ զգիտես, ես էլ չգիտեմ, ուրեմն այդ արգումենտն էլ շրվում է: Մնում է, որ ասես, թե ինձ չէր ճանաչում, նշանտութիւն գիշերը սիսալմամբ է ընդունել նշանս: Լավի: Բայց նրանից հետո այս շորրորդ անգամն է, որ գնում եմ նրանց տուն, հիմա հո ճանաչե՞ց:

— Պետք է ենթադրել, որ ճանաչեց, որովհետեւ ոչ տարած թանկագին ընծայիդ վրա ուզեց թքել և ոչ էլ... — ուզում էի ասե՞լ՝ «քեզ վրա» — և քիշ մնաց, որ գիրքն էլ գլխովդ տար:

— Ընդունում եմ, ճիշտ է, այդ բոլորը ճիշտ է. և այդ բանը

սրտիս շատ դիպավէ, Բայց դու ինձ ասա, մատանին հո մատին  
էք: Հը՞, հո մատի՞ն է:

- Ասենք, թե մատին էք:
- Ինչպես թէ՝ ասենք: Չտեսա՞ր, որ մատին էք:
- Լավ, մատին էք, հետո՞:

— Հետո ա՛յն, որ... ի՞նչ է նշանակում այդ. ինձ շի հավանում և միենույն ժամանակ տվածս մատանին մատն է զրել ինչո՞ւ շհանեց, շվերադարձեց ու շասաց. «Պարոն, ահա ձեր մատանին, որ ես շնանաշելով ձեզ, սխալմամբ եմ ընդունել» Այժմ, որ ճանաչեցի ձեզ, ինդրեմ ետ առեք, ես ձեր կինը շեմ կարող լինելու:

Ակամա ծիծաղս եկավ ոչ թէ այդ խոսքերի, այլ այն պարզամիտ լրջության վրա, որով արտասանեց այդ խոսքերը:

— Բայց նա այդպիսի բան շարավ,— շարունակեց Գարեգինը նույն գրգիռով, առանց ուշադրություն դարձնելու ծիծաղիս: Ինչո՞ւ շարավ: Հը... քեզ եմ հարցնում:

— Երեկի վախեցավ, թե մի անգամ սխալված լինելով՝ միգուցե այս անգամ էլ սխալված լինի, — նկատեցի ես, շարունակելով ծիծաղել:

— Զէ, մի՛ հեզնիր ինդրեմ: Այնպիսի բաներ անելուց հետո, այդ էլ որ աներ, ի՞նչ զարմանալու բան կլիներ: Բայց շարավ: Ինչո՞ւ: Որովհետեւ... Այստե՞ղ է, ահա, որ ոչ ես եմ ճանաշում նրան, ոչ գու և ոչ, այո՛, նույնիսկ ծնողները գուցե, և դու իզուր ես շտապում քո դատավճիռը կարդալու:

— Ուրե՞մն:

— Ուրեմն ա՛յն, որ ես նրանից ձեռք շեմ վերցնի և նրա կողմից մերժվելու խայտառակությունից էլ շեմ վախենում, իմացա՞ր:

— Իմացա:

— Դե որ իմացար, էլ բան շունեմ ասելու և... բարի գիշեր:

Եվ նա ինձ համար բոլորովին անակնկալ կերպով թողեց ինձ ու հեռացավ արագ քայլերով, երեկի վախենալով, որ ես իմ հոռետեսությամբ կարող եմ նորից փոխել իր տրամադրությունը իրավատես ապագայի հեռանկարների նկատմամբ:

Ես մնացի նրա ետևից նայեիսու ինձ պարզապես ապշեցրել էք նրա տարօրինակ գրգիռը և մանավանդ համառությունն ու վրձուականությունը, որովհետև մինչև այժմ ես նրան ճանաշել էի իրերն շատ հանդիսաւ, կամազուրկ և կրավորական բնավորության տեր: Տի երիտասարդի, որ միշտ լսում էր ինձ:

## VII

Անցավ մոտ մի ամիս: Այգ բոլոր ժամանակամիջոցում Գարեգինը ոչ մի անգամ չերեաց: Ես արդեն այն համոզմանն էի եկել, որ նա թունդ խոռվել է ինձնից և վճռել է առանց ինձ պսակվել կամ արդեն իսկ պսակվել է, եթե միայն մերժում չի ստացել Սառալից, ինչպես ես էի ենթադրում: Բայց ահա մի երեկո եկավ ինձ մոտ աշխույժ ու կենդանի և, այն արտասովոր խանդավառ տրամադրության մեջ, որ համակել էր նրան նշանվելու օրից:

- Ո՞ւր էիր շքացել, — հարցրի:
- Ոչ մի տեղ:
- Բայ էլ չերեացիր:
- Ո՞րտեղից երեայի, քանի որ շունչ քաշելու ժամանակ էլ չունեի: Ամբողջ օրը փողոցներն ընկած՝ նոր բնակարան էի որոնում: Հետո՝ օրինավոր տուն-տեղ պիտի զնեին, թե ոչ Այժմ, որ ամեն բան պատրաստ է, եկել եմ հայտնելու, որ այս կիրակի պսակվում ենք:
- Արդե՞ն: Իսկ ես կարծում էի...
- Դու շատ բան ես կարծում, — ընդհատեց ինձ Գարեգինը:
- Դու այն էլ էիր կարծում, թե այս բանը գլուխ չի գա, կը քանդվի: Քո զիգրու ոչ ես ձեռք վերցրի նրանից, ոչ էլ նա մերժեց ինձ: Այժմ այնպես մտերմացել է հետո, որ կարծես մանկությունից իրար հետ ենք մեծացել:
- Իսկ «դու»-ի և «դուք»-ի խնդիրն ի՞նչպես լուծվեց:
- Իհարկե, «դու»-ի օգտին: Հա՛, մի անգամ հարցրի նրան, թե ի՞նչ էր նշանակում այն գիշերվա օյինները, ասաց. որ լավ է այդ մասին ոչինչ շհարցնեմ, որովհետև ինքը շատ է զղում և ամաշում իր արարքից, մանավանդ որ այդ բանը թույլ էր տվել իրեն քո ներկայությամբ: «Ինչ անեմ, — ասաց, շատ զղային եմ և այն գիշերն, — ասաց, — շատ վատ արամադրության մեջ էի», Բայց գիտե՞՞ւ ինչ ինչ է զարմացնում: Հո տեսար՝ ինչքան խոհուն, լուրջ աղջիկ է, բայց երբեմն այնպիսի բաներ է անում, որ կարծես երեխա լինի:

- Ի՞նչ, այդ էլ նո՞՞ր բան է, — հարցրի:
- Օրինակ, երեկ շոկոլադ էի տարել, նստած՝ միասին էինք զւտում: Երկու հատ ինքն իր ձեռքով դրեց բերանս: Հետո, մի հատ էլ որ ես էի ուզում զնել նրա բերանը, մատս կծեց և ծիծաղեց:

Սիծաղելիս էլ ուրիշ տեսակ է ծիծաղում. ծիծաղում է հանկարծ և հանկարծ է, լուրջ դեմք առնում: Իսկ անցյալ օրը Մուշտայիդ էինք գնացել զբոսնելու հջանք գետափի: Սկսեց քարեր շպրտել գետ՝ մեջ կոկուացող գորտերի վրա: Հետո մի քար էլ վերցրեց. պատրաստվեց նետելու և ասաց. «Ձեռքիս նայիր»: Նայեցի: «Ո՞ր ձեռքով եմ զցում», — հարցրեց: — Աչ! — ասացի: Թարն ուժգին թափով նետեց այս անդամ գետի կողմբ: Ու նետելուց հետո հարցրեց. «Ոչինչ չնկատեցի՞ր»: — Ի՞նչ, — հարցրի: «Չնկատեցի՞ր, — ասաց, — որ աշ ձեռքս շարծում եմ ձախլիկ մարդու պես»: Եվ որովհետև չհասկացա նրա խոսքերի իմաստը, այսպես բացատրեց. Կանայք առհասարակ ձեռքի ճարպիկ և ուժգին թափ լունեն. Նրանք աշ ձեռքով մի քան շպրտում են այնպես, ինչպես տղամարդը ձախ ձեռքով կշպրտի. Նրանց մականների ուժը բնությունից թե դաստիարակությունից ընդարձացած է, և դրա համար է, որ կանայք առհասարակ չեն կարողանում վրեժ լուծել իրենց վիրավորողից, ինչպես տղամարդը կլուծի:

— Լավ, քարեր նետելն ի՞նչ կապ ուներ այդ խոսքերի հետ, — հարցրի ես:

— Ես ի՞նչ գիտեմ, — ասաց Գարեգինն ուսերը թոթվելով և շարունակեց: — Հետո, գետափից որ բարձրացանք վերև. Նստեցինք մի նստարանի վրա, հովանոցի ծայրով մի քան գծագրեց հողի վրա և հարցրեց: «Այս ի՞նչ է», — Շուն է, — ասացի: «Բաս շունը ոտներ չի ունենա», — ասաց: — Նկարիր ու կունենա է՞լի, — ասացի ծիծաղելով: Գծագրածի վրա հանկարծ խաչ քաշեց բազմապատկության նշանի ձևով և ասաց. «Այս ոչ թե շուն է, այլ ատրճանակ»:

— Ի՞նչ!

— Ատրճանակ:

Զգիտեմ ինչու, այդ քանն ինձ ավելի հետաքրքրեց:

— Լավ ինչո՞ւ անպատճառ ատրճանակ էր գծագրել:

— Ես ի՞նչ գիտեմ, — եղագ նորից Գարեգինի կարծ, անփույթ պատասխանը:

— Գրացատրե՞ց:

— Գէ, Միայն հարցրեց. «Մարդ կարո՞ղ ես սպանել»:

— Ի՞նչպես թե մարդ... ինչե՞ր ես պատմում, — բացագանցեցի ևս պարզապես ապշած:

— Ես բառացի պատմում եմ այն, ինչ որ խոսել ենք Աստ-

իած է վկա, — երդվեց Գարեգինն իր սովորական պարզամտությամբ:

— Հետո ի՞նչ պատասխանեցիր:

— Ի՞նչ կարող էի պատասխանել: Ջարմացաւ: Ես երեակայել անգամ շեմ կարող, ասացի, թե ինչպիս կարելի է մարդ սպանել: Ջինվորական ծառայությունը թողի, ինչո՞ւ համար, — որովհետև տեսա, որ ինձ օրդո-օրին շարշարում են մի նպատակով միայն, մի սարսափելի նպատակով — որ սովորեցնեն մարդ սպանելու արհեստը, այն ինչ ես դեռ երեխա էի, փախչում էի, երբ իմ առջեն հավ էին մորթում: «Ուրեմն զու վախկոտ ես» ասաց: — Անձնաղոհությունը, կարծեմ, ավելի մեծ քաջություն է, — ասացի, — իսկ ես պատրաստ եմ ինձ կրակը նետել՝ ուրիշի կյանքը փրկելու համար, բայց ուրիշին կյանքից զրկել — այդ ոչ թե քաջություն է, այլ պարզապես հրեշտություն: «Բայց չէ՞ որ — ասաց, — ամեն մի սպանություն, խոսքս սովորական ավազակության մասին չէ, իհարկե, — իր զորավոր դրդապատճառն է ունենում»: — Ոչ մի պատճառ, — ասացի, — որքան էլ որ զորավոր լինի, չի կարող արդարացնել մարդասպանությունը, որովհետև մարդ էակը չէ՞ որ այդ ես եմ, այդ դու ես, այդ այս կենսաբուխ արյունն է, որ եռում է մեր երակների մեջ, այդ այս հրաշալի աշխարհն է, ուր մահից հետո դարձ չկա այլևս, այդ այս պայծառ արևն է, որի տակ կ'իրջին մրցյունն անգամ իրավունք ունի ապրելու, և մարդ սպանել — կնշանակի արեք հանգցնել: Ոգնորվել էի և, ճիշտն ասած, լավ էի խոսում, մանավանդ որ լսում էր մեծ ուշադրությամբ և աշքերը աշքերից չեր հեռացնում:

Գարեգինը պատմում էր այնքան կենդանի կերպով, որ ինձ թվում էր, թե ինքս ներկա էի նրանց տարօրինակ խոսակցությանը Մուշտայիդի այգում:

— Կսիր, — ասացի, — չգիտեմ, այդ մասին մտածել ես թե ոչ. բայց դու շատ խորհրդավոր բաներ պատմեցիր:

— Ի՞նչ խորհրդավոր բաներ, — հարցրեց Գարեգինը գարմացած, որից եղրակացրի: Որ բնագ չէր մտածել այդ մասին:

— Խորհրդավոր չթվացի՞ն քեզ նախ նրա այն խոսքերը, թե կանայք առհասարակ չեն կարողանում վրեժ լուծել իրենց վիրավորողից այնպես, ինչպես տղամարդը կլուծի, հետո այն, որ նադեռ ատրճանակ նկարեց, հետո հարցրեց՝ մարդ կարո՞ղ ես սպանել:

### Գարեգինը ծիծաղեց:

— Զարմանալի կասկածամիտ մարդ ես,— ասաց,— ամեն մի շնչին բանում ինչ-որ խորհրդավորություն ես նկատում: Ամեն մի խոսակցության ժամանակ մարդ կարող է հազար ու մի միտք հայտնել հենց այնպես, առանց որևէ հետին իմաստի: Ատրճանակն էլ... դե ծեռքի պատահական մի շարժում էր, փոխանակ շուն կամ կատու գծվելու, ատրճանակի նման մի բան դուրս եկավ, ու այդտեղից էլ, բնականաբար, բացվեց սպանության մասին եղած խոսակցությունը: Այստեղ ի՞նչ խորհրդավոր բան կարող էր լինել: Ինչպես տեսնում եմ, դու շատ լավ պրոկուրոր կլինես, — ավելացրեց նա նորից ծիծաղելով:

Թեև ինձ համար բնավ պարզ չէր այդ բացատրությունը, նկատի ունենալով Սառայի տարօրինակությունները, բայց և այնպես խոհեմություն համարեցի շշարունակել այդ խոսակցությունը, շուղելով այդ միամիտ երիտասարդի սիրտը թունավորել այն անորոշ կասկածով, որ նրա խորհրդավոր պատմուվորել էր իմ մեջ: Այնուամենայնիվ թիւ հետո էլի շդիմացա և ընկերական պարտքս համարեցի նորից նախազգուշացնելու նրան Սառայի հետ ամուսնանալուց, որովհետև մի ներքին ձայն շարունակ ասում էր ինձ, որ նա դժբախտ պիտի լինի՝ իր կյանքն այդ աղջկա հետ կապելով:

Գարեգինը կարճ ժամանակ նայում էր ինձ վերին աստիճանի խղճալի, նույնիսկ պաղատագին հայցքով, հետո քիչ մնաց լաց լինի:

— Խնդրում եմ, աղաշում եմ, Միքայել, մի կոտրիր սիրտը, — ասաց լացակումած ձայնով, և նրա աշքերի մեջ արտասուրի կաթիլներ ցոլացին: — Ես նրան սիրում եմ: Միրում եմ անսուրի կաթիլներ ցոլացին: — Ես նրան սիրում եմ նրան: Որ թույլ շափ: Սա իմ անդրանիկ սերն է, ես պաշտում եմ նրան: Որ թույլ տա, մոմ կապեմ նրա առջե, ծունկ կշորեմ և կհամրուրեմ այն գետինը, որի վրա ոտք է զնում: Մոտը եղած ժամանակ այնքան երջանիկ եմ զգում ինձ, որ նույնիսկ վախենում եմ, թե միզուցեմի ցնորք, մի տեսիլք լինի ու հանկարծ շքանակ: Նրա գլուխը... գիտե՞ս ի՞նչ բան է նրա գլուխը... աշխարհիս երեսին դեռ ոչ մի նկարիչ չի ստեղծել այդպիսի գլուխ, դեռ ոչ մի քանդակագործ չի կերտել այդպիսի մի հրաշալիք: Խենթանում եմ, որ երեակացում եմ, թե կարող եմ, թե իրավունք պիտի ունենամ գրեկելու այդ գլուխը, համբուրելու այդ ճակատը, այդ աշքերը, այդ շրթունքները,

դեմքս շկելու այդ հրաշալի մազերին: Չեռք քաշեմ նրանից: ավելի լավ չէ ասես՝ ձեռք քաշեմ իմ կյանքից, իսկ նրան սիրելուց հետո այնպես սիրում եմ կյանքը...

Նրա այս ծիծաղելի պաթետիկ խոսքերից հետո, որ, սակայն, նա արտասանում էր սրտի խորքից, ինձ ուրիշ բան չէր մնում, եթե ոչ հորդորներս ու խրատներս ծալել մի կողմը դնել և գեպքերը թողնել իրենց բնականոն ընթացքին: Այդպիս էլ արի, որովհետեւ տեսա, որ գործ ունեմ մի տիպիկ սիրահարվածի հետ, որի վրա ոչ մի բարի խորհուրդ ու հորդոր ազդել չի կարող: Վերջը նույնիսկ համաձայնություն հայտնեցի, որ նրա խաշեղբայրը կդինեմ: Անշափ ուրախացավ, վրա բնկավ, դրկեց և սկսեց խելազարի պես համբուրել ինձ:

### VIII

Մինչև վերջին րոպեն էլ չէի հավատում, թե ամուսնությունը դլուխ կգա, գլխավորապես այն ծայրաստիճան անքարենպատ տպագորության պատճառով, որ թողել էր ինձ վրա Սառան իժառաջին այցի ժամանակ իր բնավորության նկատմամբ:

Բայց այդ ամուսնությունը ոչ միայն գլուխ եկավ, այլև պսակի գիշերը Սառան իր պարկեշտությամբ, իր տխուր-մտախոն հեղությամբ կարող էր օրինակելի նորահարս լինել: Ապշած էի մնացել: — «Եր էր շքացել նրա դեմքի վանող արտահայտությունը, նրա այնքան զղային, անհրապուր վարմունքը: Ինձ թվում էր, թե կամ մի հրաշքով վերածնվել էր Սառան, կամ իմ առջի տեսնում էի մի բոլորովին այլ աղջիկ, որը ոչ մի բանով չէր հիշեցնած ինձ իմ տեսած Սառային:

Այդ գիշեր միայն տեսա, թե որքան սփանելի էր նրա գեղեցկությունը հարսանեկան սպիտակ զգեստի մեջ: Ռի հավերժանությանը հարսանեկան սպիտակ զգեստի մեջ անրա գլուխը... գիտե՞ս ի՞նչ բան է նրա գլուխը» — ակամա միտս եկան Գարեգինի խոսքերը, երբ ներս մտա պայծառ լուսավորված հյուրառանյակը և տեսա այդ խորհրդավոր աղջկա լայն, խոհուն, փըսկուրի սպիտակությամբ փայլող ճակատը՝ գագաթին հավաքած շքեղ սև մազերով, սպիտակ շղարշի փրփուրների մեջ: Մի հավերժանությանը էր, որի առջև իսկապես պետք էր ծովնկ խոնարհնել և սքանչացման, սրբազն երկուության ու պաշտամունքի խոսքը մրմնցար: Ու նոր հատկացա, և այս տեսամ բնավ ծիծաղելի

շթվաց ինձ, թե ինչու Գարեգինը սիրո էքստազի մեջ մոյ էր վառում նրա առջև, ծնրադրում ու համբուրում այն գետինը, որի վրա ոտք էր դնում նա:

Մայիսյան ծաղիկների մի շքեղ փունջ էի տարել, Սաւուցի: Ընդունելիս մեղմորեն ժպտաց և գլխի թեթև խոնարհումով շնորհակալություն հայտնեց:

Այդ գիշեր մի տարօրինակ վախկոտություն էի նկատում Գարեգինի մեջ. ման էր գալիս ոտների մատների վրա, շատ շեր խոսում, շուտ-շուտ կարմրում էր և քրտնում, երբ աները իրեն հատուկ բարեսրտությամբ որևէ նկատողություն էր անում կատակով: Բայց այդ բոլորի հետ միաժամանակ հարսնացուի վրա նայում էր մի տեսակ գողունի հիսաբանշումով: Ըստ երկույթին, Սառայի այդ գիշերովա հեգությունը և մանավանդ գեղեցկությունը նրա համար էլ անսպասելի մի նորություն էր, և նա ճնշվում էր այդ գիտակցության տակ, որ այդ գեղեցկությունը իրենն էր վերջնականապես, իր սեփականը, վախենալով միաժամանակ, թե միզուց զա, իսկապես, ինչպես ինքն էր ասում, մի ցնորք, մի տեսիլք լիներ ու հանկարծ շքանար: Ու ինձ թվում էր, թե իր հոգու խորքում իրեն արժանի շեր համարում այդ բախտավորությանը:

Հարսանիքը շատ համեստ էր, որովհետև Սառան այդպես էր կամեցել: Հյուրերի թվում ներկա էին նորահարսի ամենամերձավոր ազգականները, նրա ընկերուհիներից մի երկուսը, վերջինների թվում Ժյուլ Սիմոնը կարդացող ընկերուհին— մի շատ համարձակ և շատախոս աղջիկ, որը տեղի-անտեղի սրախոսում էր և բարձրածայն ծիծաղում: Իսկ փեսացուի կողմից հրավիրված էին նրա մի երկու ազգական կանայք և մի քանի պաշտոնակիցներ, նրա մի շատ ազգական կանայք և մի քանի պաշտոնակիցներ, այնպես որ բոլորս միասին առած՝ հաղիկ մի տաս-քսան հոգի լինեինք:

---

Պսակից մի երկու շաբաթ հետո ավելի շուտ հետաքրքրությունից, քան բաղաքավրական մի պարտք կատարելու համար, այցելեցի նորապասկ գուլգին (դրանից մի օր առաջ նրանք այցելել էին ինձ, բայց, դժբախտաբար, ևս տանը չէի եղել),

Գարեգինը թողել էր իր հայրական մոռալ տոննը, ուր ապրում էր ամուսնանալուց առաջ, և վարձել էր բաղաքի ամենալավ և խաղաղ թաղերից մեկում մի շատ սիրուն բնակարան մի մեծ տան վե-

րին հարկում, որտեղից հիանալի տեսարան էր բացվում ամբողջ քաղաքի վրա և գեպի լեռնային հորիզոնները:

Աղախինը նոր էր առաջնորդել ինձ գեպի ընդունարան, որ դրսից, երկաթե պատշգամբից, ներս վագեց Գարեգինը, շափաղանց ուրախ ու կայտառ, գրկեց, համբուրեց ինձ և ձեռքից բըռնած, անմիջապես տարավ գեպի պատշգամբը, ուր իմ կալուց առաջ նստած էր իր նորատի կնոջ հետ և երեկոյան թեյն էր վայելում:

Սառան, հալառակ սպասաժիս, ինձ ընդունեց բավական սառն կերպով: Խսկույն մտքովս անցավ, որ Գարեգինն իր անհեռատես պարզությամբ, անշուշտ պատմել էր նրան, թե ինչ կարծիք էի կազմում նրա մասին ամուսնությունից առաջ և ինչ խորհուրդ էր տալիս իրեն: Եվ այն ուրախ տրամադրությունը, որ հաղորդել էր ինձ Գարեգինն իր աղմկալի ընդունելությամբ, միանգամից կոտրվեց Սառայի այդ անբարեհամ ընդունելության հանդեպ: Զղջացի, թե ինչու այդ բանը չէի նախատեսել և Գարեգինին չէի նախազգուշացրել, որ ամուսնությունից առաջ Սառայի մասին մեր միջն եղած խոսակցությունը պահի իր համար: Բայց էլ ինչ կլիներ: Այժմ, քանի որ բանը բանից անցել էր, պետք է ամեն կերպ աշխատեի ցույց տալ Սառային, որ ես ոչ միայն փոխել եմ իմ կարծիքն իր մասին, այլև շափականց հարգում եմ իրեն և շատ ուրախ եմ, որ նրան իմ ընկերող ամուսինն եմ տեսնում: Բարեբախտաբար, այդ շատ էլ դժվար չեղավ. Գարեգինն իր սիրահարվածի և մեղրամիսը վայելող երշանիկ ամուսնու խանդավառ ոգեփորությամբ, որով ակամա վարակում էր դիմացինին, մի տեսակ հաշտեցնողի, մերձեցնողի կեր էր կատարում իմ ու Սառայի միջև:

— Հավանում ես, չէ՞ մեր այս բնակարանը և այս տեսարանը,— ասաց Գարեգինը ցույց տալով Կովկասյան լեռներն այնպիսի մի պարծենկոտությամբ, որ կարծես այդ բնակարանն է, այդ տեսարանն էլ իր ստեղծագործության արդյունքն էին: — Տես, որքան պարզ է հորիզոնը, ամպի նշույլ անգամ չկա, և ինչպես պսպղում են այն վիթխարի սարերն իրենց սպիտակափառ գագաթներով. ծյուն չէ, կարծես, այլ արժաթի մի հսկայական զանգված: Հենց նոր ես ու Սառան ծրագրում էինք այս ամառ մի ճանապարհորդություն կատարելու այդ կողմերով գեպի հյուսիս և գուցե այնտեղից էլ գեպի արտասահման: Դու անցել ես, չէ՞ մեզ մավրիրական ճանապարհով: Ի՞նչ հրաշք ու հրաշալիք, ի՞նչ սար-

սափ ու հիացք. այդ զահավեծ անդունդները, այդ ահավոր զագաթները, որոնք թռել էին երկինք և կորել ամպերի մեջ վերեր երկինք, ներքեր, անդունդների երախի մեջ գալարվող գոռ զետը, որ իր կատաղի վազքով թնդացնում է այդ անդունդները կատաղոթյան փրփորը բերանին իսկ մեջտեղը— դու քո փոշոտ խըճուղ, որ օձի պես զալարվելով գոտեռում է այդ անվերջ վերելքներն ու վայրէջքները:

— Դու բանաստեղծ ես եղել, — նկատեցի ես ծիծաղելով և նայեցի Սառային:

Սառան նստած էր լուռ և կենտրոնացած հայացքով նայում էր Կովկասյան լեռների կողմը, բայց նկատեցի, որ կատակով արած իմ նկատողության վրա հազիվ նշմարելի մի ժայռ անցավ նրա դեմքի վրայով:

— Բանաստեղծ, բացազնչեց Գարեգինը: — Մի՞թե դու կարծում ես, թե նա՛ է միայն բանաստեղծ, ով վարժվել է հանգերով ոտանակորներ գրել: Ամեն ոք, ով սիրում է, անպայման բանաստեղծ է: Ես առհասարակ բորիկ եմ գրականության պատմությունից, շատ քիչ եմ ծանոթ մեծ պոետների կենսագրություններին, բայց համոզված եմ, որ ամենալավ՝ պոետներն, անշուշտ, նրանք են, որոնք սիրել են, որովհետև սերը... զիտե՞ս ինչ բան է սերը, Սերը... Ասենք դու չես հասկանա, որովհետև... չնայելով, որ դու սիրո նկարագրություններ ունես քո գրածքների մեջ, բայց սիրո իսկական նկարագիրը տալու համար պետք է...

— Բանաստեղծ դառնամ քեզ պես, — վրա բերի ես ծիծաղելով և նորից նայեցի Սառային:

— Այս, պետք է սիրես ինձ պես. ինձ պես, — շեշտեց Գարեգինը և, խոնարհվելով դեպի նորատի կինը, քնքշորեն առավ նրա ձեռքն ու սկսեց կաթոգին համբուրել:

Սառան նայեց ինձ և ժապաց այնպիսի հայացքով, որով կարծես ասում էր՝ «տեսնո՞ւմ եք որքան մեծ երեխա է»: Այդ լուր դիմումի, այդ բարի ժափի մեջ ես հալված տեսա նրա դեպի ինձ ցույց տագած սառնությունը, որ սկզբում բավական կաշկանդում էր ինձ:

Ծուտով Սառայի տրամադրությունն այն աստիճան բացվեց, որ եա սկսեց ոչ միայն մասնակցել մեր խոսակցությանը, այն վերաբերքել դեպի ամուսինը ճիշտ այնպես. ինչպես ես էի վերաբերքում — կես-բրշտեն, կես-կատակով և դիջողաբար, որ ահ-

շուշտ սիրո նշան էր, այն անմեղ սիրո, որպիսին մեծերն են տածում զեպի փոքրիկները: Ասենք այդպիսի վերաբերմունքի բոն պատճառը պետք էր որոնել իրեն իսկ Գարեգինի մեջ, որի անսահման բարի սիրութ, կայտառ հոգին, ոգորված շատախոսությունը և պարզամիտ փիլիսոփայական հայացքները միշտ այդպիսի վերաբերմունք էին թելադրում փոքր ի շատե խելահաս խոսակցին, ինձ թվում էր, որ եթե Գարեգինը ներկա լիներ, ես ու Սառան երկու խոսք չենք գտնի իրար ասելու, մինչդեռ նրա ներկայությամբ մեր խոսակցությունն ինչ բանի վրա ասես չէր դառնում:

Գարեգինի խանդավառությանը թիշ չէր նպաստում, անշուշտ, իմ այցը, մայիսյան հրաշալի երեկոն և մանավանդ իր պաշտած նորատի կնոջ ներկայությունը, որի գեղեցկությամբ, ինչպես թվում էր ինձ, պարծենում էր իմ առջև իր հոգու խորքում:

Այդ երեկո ես նորից առիթ ունեցած համոզվելու, որ Սառան հիրավի մի կատարյալ գեղեցկունի էր, այն ուրույն գեղեցկունի ներից, որոնց գեմքի ինքնատիպ զծագրությունը մի անգամ տեսնելուց հետո խորապես դրոշմվում է մարդու հիշողության մեջ: Նա հագած ուներ յապոնական ձեկի տնային թեթև վերնազգեստ կարճ ու լայն թևերով, ծայրեղերված պերճ անկվածներով: Երբեմն, երբ ձեռքերը բարձրացնում էր հարուստ մազերն ուղղելու, լայն թևերը ետ ծալվելով մերկացնում էին նրա արմունկները սպիտակ ու ողորկ և ծածկված փայլուն աղվամազով՝ ոսկու փոշու մեջ:

Բայց ինձ ավելի հետաքրքրում էր նրա ներքինը, քան թե արտաքինը, նրա հոգին, քան թե գեղեցկությունը: Ու, զիտելով նրան, աշխատում էի նրա զեպի ամուսինը ցուց տված վերաբերմունքից կանխագուշակել, թե երկա՞ր կդիմանա արդյոք այդ մեծ երեխային ձեռքին: Թեև այդ նորատի կինը գեռես մի կատարյալ հանելուկ էր ինձ համար, բայց լավ ճանաշելով նրա ամուսնուն, եզրակացությունս տիրապիթ էր: Մի կին — լիներ նա Սառան թե մի ուրիշը — կարող էր խղճալ, գուրզուրել և սիրել Գարեգինին այնպես, ինչպես մեծ քույրը փոքր եղբորը, բայց կապել նրա հետ կանացի բոցուտ սիրով՝ անկարող էր, որովհետև Գարեգինն իր բոլոր պատվական առաքինություններով հանգերձ զուրկ էր կնոջ մեջ այդպիսի անվերապահ սեր հարուցանող բացասական առաքինությունից — արուի ամեն ինչ ընկճող, ամեն ինչ հպատակեցնող միահեծան կամքից, — մի բան, որ բոլոր դրական բարեմասնություններից ավելի սիրում է կինը տղամարդու մեջ:

Մինչդեռ ես, այս խոհերին անձնատուր դիմում էի արդ անհամապատասխան զուզը. Գարեգինը անհոգ ու երջանիկ խոսում էր, հայ խոսում, շրադացի շախախի պես անդնջում:

Ու շնկատեցի, թե ինչպես արեն արդեն հանգցրել էր իր վերջին ճաճանչները, և մութը սկսել էր բարձրանաւ երկրի կրծքից: Մի աներեւոյթ ձեռք կարծեն գորդագույն շղարչ էր փռում քաղաքի վրա, և այդ շղարշը քանի գնում, այնքան թանձրանում էր: Եվ ահա այստեղ ու այստեղ սկսեցին փայլիկ առաջին ճրագները սկզբում աղոտ, հետո քանի բարձրանում էր խավարը, ավելի ու ավելի պայծառ: Եվ մինչդեռ քաղաքն արագորեն սկսել էր հագնում կորցնելով իր գծագրությունը, երկինքը դեռ երկար ժամանակ լուսավորված էր վերջալույսի մեռնող փայլով:

Շատ էի ուզում գեթ մի քանի րոպե մենակ մնալ Գարեգինի հետ, որպեսզի հարցուի որդ անեի Սառայի մասին, բայց այդ շաշողվեց: Սառան շարունակ նստած էր մեզ մոտ, և եթե կարիք էր լինում հյուրասիրության վերաբերմամբ որևէ պատվեր տալու աղախնին, միշտ Գարեգինն էր գնում: Իսկ երբ, բավական ուշ, վեր կացա հրաժեշտ տալու: Սառան ևս եկավ մինչեւ դուռը ճանապարհ դնելու ինձ և ամուսնու հետ խնդրեց, որ շուտ-շուտ այցելեմ իրենց:

Բայց հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ ես, հակառակ ցանկությանս, այլևս հնար չունեցա այցելելու նրանց: Մի քանի օրից մի անակնկալ շտապ գործով հեռացա թիֆլիսից և ամբողջ ամառը, մոտ երեք ամիս բացակա էի: Այնուհետև երբ վերադարձա, առաջին գործու այն եղավ, որ տեսության գնացի բարեկամներիս: Բայց նրանց բնակարանը փակ գտա, և հարեաններն ինձ ասացին, որ նորապասկ զույգը գեռուս հունիսին մեկնել է քաղաքից հայտնի չեւ նոր հիշեցի, որ նրանք մտադիր էին ամառը մի ճանապարհորդություն կատարելու: Մի ամսվա ընթացքում նորից մի քանի անգամ գնացի Գարեգինի բնակարանը և միշտ էլ բացակա գտա նորապասկ զույգին: Գնացի պետական կալվածների տեղական վարչությունը, և այնտեղ ինձ ասացին, որ Գարեգինը պսակվելու օրից թողել է պաշտոնը և հայտնի չեւ ուր է զնացել: Կնացի Սառայի հորանց տուն, որ նրանցից տեղեկանամ, թե ո՛ւր է լքացել նորապասկ զույգը, և ե՛րբ կվերադառնա, բայց այնտեղ էլ այն միայն իմացա հարեաններից, որ Բաղիրյանը տնով-տեղով քոշել է թաթում, պաշտոնով փոխադրվելով այնտեղի մաքսատուն:

Վերջ ի վերջը ստիպված եղա դադարեցնել որոնումներս և նույնիսկ գրեթե մոռացել էի բարեկամներիս, երբ բախտը նորից դեմ հանդիման բերեց մեղ իրար, բայց այս անգամ այնքան անակնունելի այնքան տարապայման պարագաներում, որ այն, ինչ որ պատահեց, մինչեւ օրս էլ մղձավանչային մի ժանր երազ է թվում ինձ:

Սակայն առաջ լվազեմ և դեպքերը պատմեմ իրենց հաջորդականությամբ:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

I

Այսօր մի ցուրտ գիշեր, երբ, երեկոյան պաշտոնական աշխատանքս վերջացնելուց հետո, վերադարձա տուն և մտա ննջարանս՝ զրական գործով պարապելու (ննջարանս միշտ տաք էր, որի պատճառով այդտեղ էի փոխադրել գրասեղանս), ակամա կանգ առա զարմացած Գրասեղանին վրա վառվում էր լամպը. Մահմակալիս վրա երեսնիվեր պառկած էր մեկը և խորհանով քնած էր. Վերմակը, ինչպես երեսում էր, սկզբում ծածկել էր, բայց հետո, քնի մեջ, պատի կողմն էր գցել: Աչ ձեռքը կախ էր ընկել մահմակալից ներքև: Ժիշետի կոճակները բաց էին, և տակից երեսում էր սատինի կապույտ վերնաշապիկը, որի օձիքը կապվում էր կողքից: Բաձլոնը, մաշված աստառով, կախված էր մահմակալի գլխից: Դիխարկը, ուսանողական կապույտ երիզով, ընկած էր բաճկոնի տակ, հատակի վրա: Ծամփորդական երկարածիտ կոշիկներից մեկը հագին էր, մյուսը երկարումնեկ պառկած էր մահմակալի առջև: Աթոռի վրա ընկած էր ձմեռվա վերակուն մազի օձիքով, և մաշված աստառով: որի տակից տեղ-տեղ սպիտակին էր տալիս բամբակը: Սենյակի անկյունում դրված էր մի ահագին ճամփուկ՝ թոկով կապկած, չարդված ու ճնշված:

Զարմանքը տիրել էր ինձ: Մոտեցա, որ լավ դիտեմ, թե ով կարող էր լինել այդ անկող հյուրը, որ այդպես ազատ-համարձակ եկել տեղավորվել էր սենյակում: Կարճ խուզած, բայց շատ խիտ և շատ սև փայլուն մազերով, ժամանակին շսափրած լիքը դեմքով և առատամազ հոնքերով, արծվաբիթ մի երիտասարդ էր,— բոլորովին անծանօթ մի դեմք: Դուրս գնացի խոհանոց, զարթեցրի ծառային և սկսեցի հարցուվործ անել: Նրա քնաթաթախ կցկտուր խոսքերից այս միայն իմացա, որ անկող հյուրս եկել է կառքով:

Ճինշաղին, մի ուրիշ պարոնի հետ, այդ պարոնը հեռացել է նույն կառքով, իսկ հյուրս իր ճամփուկով ուղղակի մտել է, իմ անունս է տվել, ուտելու բան է պահանջել և, ոչինչ շստանալով, հանվել պառկել է անկողնումս, պատվիրելով, որ երբ գամ, զարթեցնի:

Վերադարձա ննջարանս և սկսեցի նորից դիտել քնած հյուրին դեմքը: Երկար ժամանակ հիշողությանս մեջ պրապտում էի ինձ ժանոթ հին, մոռացված դեմքեր, որպեսզի նմանություն գտնեի դրանցից որևէ մեկի և անկող հյուրիս միջև, բայց և այնպես քնածի դեմքը մնում էր բոլորովին անծանոթ:

Ու մինչդեռ կանգնած էի նրա առջև և ապարդյուն պրապտում-ներ էի անում հիշողությանս մեջ, նա բերանը բաց, շարունակում էր խոմփալ այնքան ուժգին, որ զարմանում էի, թե ինչպես էր, որ իր սեփական խոմփոցի ձայնը չէր զարթեցնում նրան: Երբեմն խոմփոցը կտրվում էր, և նրա բաց բերանից այնպիսի կերպերուն ձայներ էին դուրս գալիս, որ ինձ թվում էր, թե ինդդվում էր:

Ձեռքս կամաց տարա նրա ուսին ոչ այնքան նրան զարթեցնելու, որքան նրա անտանելի խոմփոցի ձայները կտրել տալու համար: Ձեռքիս շփումից նա հանկարծ մի կատաղի խոռոց արձակեց, լոեց, շարժվեց և աշբերը բանալով՝ ուղղակի տնկեց վրաս խոր քնից հանկարծ արթնացածի խելազար հայացքով, հետո աշքերը ման ածեց այս ու այն կողմը և նորից բերեց տնկեց վրաս:

— Մարգարյանն ես, չե՞— հարցրեց խոպտ ձայնով:

Ոչինչ շպատասխանեցի: Այժմ, որ նրա աշքերը, — խոշոր, սև աշքերը, — բաց էին, ինձ թվաց, թե այդ դեմքը ծանոթ է ինձ:

Ոտները ցած դրեց մահմակալից և սկսեց հետաքրքիր հայացքով նայել աշքերիս:

— Ես Միքայել Մարգարյանն ես, էլի, որ կաս, — ասաց դրական կերպով, կանգնեց, գրկեց ինձ և համբուրեց շրթունքներս: — Բայց այդ ինչ է, արդեն ծերանո՞ւմ ես. մազերդ սկսել են սպիտակել:

— Ներզողություն... ես... — թոթովեցի նրա անսպասելի մտերմական վարմունքից շփոթված, դեռևս լավ շկարողանալով մտաքերել, թե ով է:

— Պահ, շես ճանաշո՞ւմ, — բացազանչեց նա անկեղծ զարմանքով, — Թուսյանը չե՞մ, Ռուբեն Թուսյանը:

— Սա...

— Հա՛, հա՛. հենց ինքը Սատանի ճուտը. — իսկույն լրացրեց նա խոսքս:

Զեռքս խփեցի ճակատիս: Նոր հիշեցի, որ մի ժամանակ, շատ տարիներ առաջ, դասընկերներ ենք եղել, և նա մեր ընկերական շրջանում այդ մականունով էր հայտնի իր շատ շարաճճի բնավորության և արարքների պատճառով:

— Դե որ հիշեցիր, արի մեկ էլ պոռշտի անենք:

Ու, չնայելով խոււափումից, որովհետև բերանից ծխախոտի ծանր հոտ էր գիտեմ, նորից համբուրեց շրթունքներս և գնաց նորից նստեց մահճակալի վրա:

— Դու այնքան փոխվել ես... — ասացի՝ մի բան ասած լինելու համար:

— Տնաշեն, բա այսքան տարիների ընթացքում մարդ չի փոխվի՞... մանավանդ արենեցին, որ այսօր, տեսնում ես, մազ չկա երեսին, իսկ վաղն արդեն արջի պես մազակալել է: Դե ասա տեսնեմ ոնց ես, ոնց չես, ի՞նչ ես անում:

Ու առանց սպասելու, որ ասեմ, թե ո՞նց եմ, ոնց չեմ և ինչ եմ անում, հարցրեց.

— Ժամը քանի՞սն է:

Նայեցի ժամացույցիս. տասն և մեկն էր:

— Պահո՛, քեզ եմ է: Ծնորհակալ եմ, սենյակդ տաք էր: Ճանապարհին շան պես մրսում էի: Հազիկ զանս տեղն է եկել Վլադիկավկազից սկսած բեռնակիր ֆուրգոնով եմ եկել. ոսկրներս սաղ շարդուփուր արեց:

Հորանջեց, ձեռքերը տարավ վզի ետեր, մատները հյուսեց իրար մեջ և ամբողջ մարմնով ճմլկոտաց այնքան ուժգին, որ մատների խաղերը և վզի ոսկորները ճրթճրթացին:

— Այս անտեր մազողն էլ հո հոգիս հանում է, — ասաց և, կողիկն առնելով հատակից, սկսեց հագնել դեմքի ցավագին ծամածություններով ու տնքտնքոցով, հետո վեր կացավ և կուզեկավ կանգնեց առջևս:

— Ինչ եմ ասում, Մարգարյան: Գիտեմ, շատ էլ սրտովդ չի լինի, բայց ուզես-շուզես՝ քո հյուրն եմ: Շատ չէ, մի քանի օր մի-այն, մինչև որ տանից պատասխան գա: Փողս այնպես հատել է, որ ոտներից կախես, մի սկ գրոշ չի ընկնի գրպանիցս: Ոնց ուզում ես՝ հաշվիր — Պետերբուրգից մինչև Թիֆլիս երեք տեղ պարտք եմ արել, մի տեղ էլ ոսկե ժամացույցս եմ գրավ դրել:

Գնում եմ տուն: Հայրս մեռնում է, գրել էր, որ հոգուն վրա հասնեմ, ու փող չէր ուզարկել: Թե՞ որ Սարումյանը չպատահեր, — հիշում ես, ինչքան էի լացացնում նրան դպրոցում, — թե որ նա չպատահեր, ստիպված պիտի լինեի փողոցում գիշերելու Ասաց, թե տնփեսա է, հարմարություն շունի իր մոտ տանելու, մի խոսքով, զլիխից ուաղ արավ ու բերեց քեզ մոտ: Տեսնում ես, ես մեւավոր չեմ, թե նեղանալու ես, նրանից նեղացիր:

— Ինչո՞ւ պիտի նեղանամ:

— Դե ի՞ն գիտեմ: Մի քիչ աներես մարդ եմ, գիտես, էլի նոր հո շես ճանաշելու Սարումյանից փող ուզեցի, շտվեց. ասաց՝ շունի: Սուտ էր ասում սրիկան: Բայց ստիպված էր կառքիս փողը տալ:

Այս ասելով՝ մոտեցավ լվացարանին և սկսեց լվացվել: Երեսը սրբելիս եկավ նորից կանգնեց առջևս:

— Հիմա գիտե՞ս ինչ կա, Մարգարյան. ես շան պես քաղցած եմ, քունս հանել եմ: Մի քիչ որ բան տաս ուտեմ, հորդ հոգին արքայությունը կդնա:

Ասացի, որ սովորաբար չեմ ընթրում, ուստի ուտելու բան չունեմ տանը, այդ ժամին խանություններն էլ փակ են, որ ուտելու բան բերել տամ, և առաջարկեցի, որ եթե ուզում է, գնանք մոտակա ճաշարանը:

— Ես կլուր կուզեի, բայց վնաս չունի. կլուրը հեռու է, ժամանակն էլ ուշ է, երեկի դու կուզես շուտ քնել: Գնանք ճաշարան:

Երեսսրբիլը շպրտեց աթոռի վրա, արագորեն կոճկեց ժիլետը, բաճկոնը հագավ, ծոցի գրպանից հանեց սանը, մազերը, հոնքերը ու բեղերը սանրեց, աշքերով որոնեց, գտավ զլիարկը, թափ տվեց, ծածկեց, վերարկուն հագավ, ու դուրս եկանք:

## II

Ճանապարհին առաջ թես և խոսում էր այնպիսի մտերմությամբ, որ կարծես ինձնից ավելի սրտակամ շուներ ծիշտ է, մի ժամանակ դասընկեր էինք եղել, բայց այդ այնքան վաղուց էր, որ ես ոչ միայն իսպառ մոռացել էի նրան, այլև այժմ, որ նորից հանդիպել էինք իրար, ոչ մի կապ չէի զգում իմ ու նրա միջև: Եվ այդ էր պատճառը, որ նրա մտերմական վարմունքն սկզբում բավական տարօրինակ և նույնիսկ անախորժ էր

թվում ինձ Բայց հետո, երբ նրա բնավորությունն սկսեց կամաց-կամաց պարզվել ինձ համար, մի գիծ այդ բնավորության մեջ—թեև բացասական— կարծես թե գրավեց ինձ. այդ գիծն այն էր, որ նա ցինիկի պես անկեղծ էր, լրբի պես համարձակ և երեխայի պես անփուլք: Ինձ թվում էր, թե նա ընդունակ էր և ամենամեծ ցածրությունը գործել, և ամենամեծ առաքինությունը, և երկու դեպքումն էլ առանց իր արածի գիտակցությունն ունենալու, ինչ-պես մի մարդ, որ զործում է լոկ բոպեի աղդեցության տակ:

— Գլխարկիցդ տեսնում եմ, որ ուսանող ես. ո՞ր մասնացուղն ես ուսումնասիրում,— հարցրի:

— Բոլորը, այսինքն՝ էրոտիկականը, կոնժարանականը, կարտյոժնիկականը, թատերական-ցիրկային-կուլիսականը, բորսայականը, տոտալիզատորականը և ուրիշ ինչ նման ական ուզում ես,— շարեց իրար ետևից թուայնը, առանց բնավ ցույց տալու, թե կատակ է անում: Ասենք, կատակ անելիս էլ, լուրջ խոսելիս էլ նա միշտ միևնույն տոնով էր խոսում:— Այս գլխարկս էլ որ տեսնում ես,— ավելացրեց նա,— շատ վաղուց է հրաժարական տվել ինձ, բայց հիմա, որ տուն եմ գնում, առել գլխիս եմ դրել, որ հորս ցույց տամ, թե զեռ ուսանող եմ, թե չէ՝ էլ մի քոռ կոպեկ էլ չի ուղարկի, որ աշխա կոխեմ, եթե, իհարկե, արդեն հոգոցն հանգուցելոց եղած չի լինի:

— Հավ, էլ ինչո՞ւ ես նստել Պետերբուրգում,— շարունակեցի հարցուփորձաւ:

— Որովհետեւ հեշ միաբ շունեմ ճգնելու երբ որ կտեսնեմ մի ոտս արդեն զերեգմանումն է, նոր կգամ ձեր այս մեռելների աշխարհը հոգիս աստծու փայ անելու Ահավասիկ, նայիր շորս կողմըդ. դեռ կեսպիշեր էլ չկա, և փողոցն այնքան սուսուփուս է, որ կարծես ամեն մի տան մեջ մի մեռել կա: Եվ սա քո գովական կոլկասի մայրաքաղաքն է, հապա որ մեր գավառական օրհնյալ քաղաքը գաս տեսնես...

Հաշարանը, ուր մտանք, բոլորովին դատարկ էր: Բութետշիկը համրիչն առջեր, ինչ-որ հաշիվներ էր անում. սպասավորներից մեկը քնած էր գումար սեղանի վրա դրած. մի ուրիշը, ոտները խաշածն և անձեռոցիկն ուսին, մեջքը հենել էր պատին և բութ հայտքով նայում էր գուանը, ըստ երեւութին քունը հաղթահարելով:— Ահավասիկ քեզ մի ուրիշ ապացուց, որ ես ընկել եմ մեռելների աշխարհը,— ասաց թուայանն աշք աժելով ընդարձակ

դատարկ սրահում:— ռեստորան, գիշեր և տորիչելյան դատարկություն. ոչ մարդ, ոչ մյուսզիկ, ոչ ծխախոռի ծովի: Հրաշալի է:

Նստեցինք սեղաններից մեկի մոտ, և Թուայանն սկսեց ընթրիքի մասին պատվեր տալ ծովաբար մոտ եկող սպասավորին, անդադար դիմելով ինձ. «Ես բիֆշտեքս կուտեմ, դո՞ւ Կոնյակ շե՞ս խմի. ես մի բաժակ կկոնծեմ» և այլն: Կոնյակը կոնծեց մի ումապով: Մինչև բիֆշտեքս կրերեին, սառը մսեղենի վրա ընկավ քաղցած գայլի պես: Բիֆշտեքսն էլ շկտացրեց, և դարձյալ մսեղեն պահանջեց: Եվ այդ բոլորը շրեց մի շիշ կարմիր գինով: Հետո ծխախոռ պահանջեց և հրամցրեց, որ ես էլ ծխեմ: Հրաժարվեցի, որովհետև չէի ծխում:

— Ինչ տեսակ մարդ ես,— ասաց,— ոչ ծխում ես, ոչ խմում, ոչ էլ կարգին հաց ուառում, քեզ հետ քեֆ անել չի կարելի:

Դանակով ծեծեց գինու դատարկ շիշը և պատվիրեց, որ մի շիշ էլ բերեն:

— Կուզե՞ս ասեմ այս բոպեիս ինչ ես մտածում,— ասաց տեսնելով, որ ես սուսուփուս նստած, դիտում եմ իրեն:

— Ի՞նչ:

— Մտածում ես. «Էս հարամզադեն համ իմ հյուրն է, համ էլ ինքն է բաներ պահանջում, որ զահրումար անի»: Զէ՞:

Սիծաղեցի:

— Տեսնում ես, շխալվեցի,— վրա բերեց Թուայանը լուրջ:— Ինչ ուզում ես՝ ասա, անմիտ սովորություններով լի է մեր կյանքը! Այդպիսի սովորությունների կարգը պիտի դասել անշուշտ մի կողմից հյուր լինելու, մյուս կողմից հյուր պատվիլու ցերեմոնիաները: Մի կողմից՝ շեմ ուզում— զիբս դիր, մյուս կողմից, անուշ արա— քթովդ դուրս գա: Կեղծիք է, չէ: Խսկ կեղծիքն ինձնից ավելի կատաղի թշնամի չի կարող ունենալ: Մի բան, որով կարող եմ պարծենալ, այդ այն է, որ ոչ ոքից և ոչ մի բանից չեմ քաշվում, որովհետև քաղաքավարությունը, համեստությունը, ամոթը և այլ նման, այսպես կոշկած, առաքինությունները քողարկված կեղծավորություն եմ համարում, որ մարդիկ հնարել են իրենց վատ ներքինը ծածկելու համար, ինչպես աղբակուշը ծածկես թավցյա ծածկոցով: Տկլոր երեխան գլխիզլոր է գալիս, ցուցահանելով իր բոլոր հրաշալիքներն առանց ամաշելու ինչո՞ւ Որովհետեւ, կասիր դու, — նրա մեջ դեռ չի գարբնել ամոթի գգացումը: Իսկ ես

կասեմ՝ որովհետև նրա հոգին դեռևս չի ապականվել։ Ապականված հոգին է միայն, որ ամոթ է զգում։

— Դու այդ աֆորիզմները ո՞րտեղից ես վերցրել, — նկատեցի ես ժպտալով։

Մի ձեռքով գինու բաժակը մոտեցնելով շրթունքներին, մյուսով մատնանշեց իր ճակատը, ասել ուղելով, թե իր սեփական գլխից։

— Գիտե՞ս ինչ կա, Մարգարյան, — ասաց բաժակը դատարկելուց հետո մի կտոր հաց ու պանիր գցելով բերանը, — երբեմն լավ է, որ մարդ զոր է տալիս խելքին. շատ անդամ այնպիսի բաներ է գտնում այս անտերի մեջ, որ զարմանալի։ Հետո, դու նկատե՞լ ես, որ մարդիկ խմելիս միշտ փիլիսոփիա են դառնում։ Ես թեև շատ էլ շեմ սիրում փիլիսոփայությունն առօսարակ, իբրև «ոլորու մայություն»։ Ինչպես ասում է բանաստեղծը, բայց և այնպես ինքը մասամբ փիլիսոփա եմ, այսպես ասած՝ էպիկորյան կարգի փիլիսոփաներից։ Եվ իմ այդ կարգի փիլիսոփայական ուղեղով ես հսկայական հիմարներ եմ համարում առհասարակ այն մարդկանց, որոնք ներկան զոհում են ապագայի համար։ Մի ընկեր ունեի ուսանողներից՝ շափազանց զանասեր և իր կեղեկի մեջ պինդ փակված, ինչպես անպետք մի տխիլ, որ ատամով շի կոտրվում. գրպանում որ մի մանեթ ունենար, մորթեիր— մի կոպեկ չէր ծախսի. ասում էր՝ վաղը քաղցած կմնամ. բայց յուռանում էր. որ ալսօր քաղցած է մնում։ Իսկ ես ընդհակառակը. այսօր ինչքան փող ուզում ես դիր գրպանս, վաղը կտեսնես մի կոպեկ չկա։ Քերականության միշտ պետք է ջնջել ապառնի ժամանակը։ Ապագա չկա, որովհետև անհայտ է, իսկ ինչ որ անհայտ է, այդ մասին մտածելն ու հոգալը բնականաբար, հիմարություն է։ Վաղվան մասին մտածում են վախկոտները, այսինքն նրանք, որոնք վստահություն շունեն իրենց ուժերի վրա։

Նորից լցրեց իր բաժակը և, տեսնելով որ իմը դեռ լիբը դըրգած է առջևս, բացագանձեց։

— Տո՛, խմի, է՛. Զլինի՞ դու էլ իմ ասած վախկոտներիցն ես. վախենում ես հարբես և վաղն անպետք դառնաս գործի համար։

— Շատ ճիշտ գուշակեցիր, — նկատեցի ես ժպտալով։

Բաժակը, որ արդեն մոտեցրել էր շրթունքներին, նորից դրեց սեղանի վրա և դարձավ ինձ շատ լուրջ տոնով։

— Հսիր, Մարգարյան։ Թեև ինձնից քեզ խրամ չի հանի, բայց ն այնպես խորհուրդ կտամ— երբեք լմտածեւ վաղվան մասին։ Այլապես ամբողջ կյանքը կթունավորես, ի՞նչ է կյանքը։ Կամ, ավելի ճիշտ ձևակերպենք, ի՞նչ պետք է լինի կյանքը այն դժբախտ մահկանացուի համար, որի անունն է մարդ։ — բոպեական հաճույք և հաճոյական բոպեների մի շարահար շղթա, մինչև որ կգա անխուսափելի սահմանը, որից զենքն արդեն նիրվանայի թագավորությունն է, է՛ս, երբ որ ներկա բոպեի հաճույքը վանում ես քեզնից ինչ-որ անհայտ հաշիվներով, էլ ինչո՞ւ եւ ապրում։ Այդպիսով իբր թե խոհեմությամբ— այ մի բան, փայտի պես բութ ու անհամ, որ ատելով ատում եմ, — իբր թե խոհեմությամբ, բայց իսկապես վախկոտությամբ, միշտ էլ շես անի այն, ինչ որ թելադրում է սիրտդ, մարդկային բնույթը, միշտ կզապես քեզ ժլատ մարդու պես, իսկ հետո մեկ էլ տեսար շկաս, նիրվանա Այդպիսի կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի անվերջ մեծ պաս առանց զատկի։ Մահվան գաղափարը խելացի մարդու համար մեծ խթան պետք է լինի ամեն բան անելու, այսինքն այն ամենը, ինչ որ կարող է հաճույք պատճառել։ Այսօր թե վաղը պետք է մեռնեմ. չէ՞, է՛ս, երբ որ այդպես է, ինչո՞ւ չօգտվեմ կյանքից, ինչո՞ւ շանեմ այն, ինչ որ սիրտս ուզում է, և ինչ որ կարող եմ անել այս բոպեին, ես դեռ կանեմ, հետո հերն անիծեմ, ինչ ուզում է, թող լինի։ Սա անարխիա է, կասես. ոչ, սա ինքը կյանքի փիլիսոփայությունն է։ Հին փիլիսոփաների մեջ ամենից խելուքը, իմ կարծիքով, էպիկուրն էր։ — Խլի՛ր կյանքից այն ամենը, ինչ որ հաճույք կարող է պատճառել քեզ և ոչ մի բանի մասին մի մտածիր։ Այս էլ աստված լուսավորի նրա հոգին։

Եվ թույանը դատարկեց գինու բաժակը։

— Բայց դու մոլորության մեջ ես, — այլևս շկարողանալով համբերել, նկատեցի ես։ — Էպիկուրն այդպիսի բան չի քարոզել։ Դու միայն կրկնում ես տարածված ընդհանուր սխալ կարծիքը նրա վարդապետության մասին, մի կարծիք։ Որի ազրյուրը ստույիկների զրպարտությունն է։ Ինչպես հայտնի է, ստոյիկները էպիկուրի հակառակորդներն էին և ամեն տեսակ ափեղցիեղ բաներ էին տարածում նրա վարդապետության մասին, որպեսզի վարկաբեկնեն նրան։

— Ի՞նչպես, — զարմացավ թույանը։

— Այ ինչպես, եթե դու քի թե շատ հետաքրքրված լինեիր

փիլիսոփայության պատմությամբ, կտեսնեիր, որ քո հավանած այդ փիլիսոփան ճիշտ հակառակն էր քարոզում այն բանին, ինչ որ դու ես դավանում և անում: Ամենից առաջ պետք է իմանաս, որ էպիկուրը շատ սակավապետ մարդ էր, գործ էր ածում ամենահասարակ կերակուր և խմում էր միմիայն զուր: Այն այսու մուտքի վրա, ուր նա հավաքում էր իր բարեկամներին, այսպիսի մակագրություն կար. «Ուզո՞ւմ եք հաճելի ժամանց ունենալ—մտեք այստեղ, ուր կգտնեք գարու հաց և աղբյուրի մաքուր չուր»: Իսկ դու այնպիսի խորտիկներ ես ուտում և առհասարակ այնքան ես ուտում ու խմում, որ քիչ է մնում ինձ էլ կուլ տաս: Այդ մարմնական ֆիզիքականը: Իսկ հոգեկան-բարոյականը...

— Հոգուդ սատկեմ, Մարգարյան, սպասիր,— հանկարծ ամբողջ կրծքով առաջ նետվեց թուսյանը,— էքստրա քո կենացը խմեմ շատ տեղին նկատողությանդ համար: Ճիշտ է, թեև ուտել-նմելս մի քիչ թանկ կնսատի քեզ, բայց պետք է ներես հանուն մեր հին բարեկամության նորոգման:

Այս ասելով, բաժակը նորից լցրեց, խմեց մինչև վերջին կաթիլը, լեզուն ծլմիացրեց և, արմունկներով հենվելով սեղանին, աշքերը տնկեց աշքերիս:

— Այդ մարմնական-ֆիզիքականը, հետո:

— Ինչ վերաբերում է հոգեկան-բարոյականին, այսինքն նրա վարդապետության էականին,— շարունակեցի ես,— ճիշտ է, էպիկուրը ստոյիկներին հակառակ, պնդում էր, թե երջանկությունը հաճույքի մեջ է, բայց ամեն մի հաճույք ճաշակելուց առաջ ամենախիստ քննության էր ենթարկում հավանական հետևանքը, որովհետև, ասում էր, կան հաճույքներ, որոնց հետևանքը դառն է լինում: Այ, օրինակ, այս րոպեին, ինչպես տեսնում եմ, որ դու հաճույք ես զգում գինի խմելուց, բայց գիտեմ, որ էլ գիտես, որ վաղը ամբողջ օրը տրամադրությունդ շատ վատ պետք է լինի:

— Ի՞նչ, զիսի ցավ և ա՞լին: Անհոգ կաց, այդ կողմից ես ապահովագրված եմ, որովհետև վաղուց է, որ խմելը սովորություն եմ գարձրել:

— Այդ ավելի վատ: Եթե ամեն մի հաճույք սովորություն ես դարձրել, ուրեմն հաճույքները կորցրել են քեզ համար իրենց նպատակը՝ քաղցրությունը կամ, ինչպես էպիկուրն էր ասում, երջանկությունը: Հենց այդ նպատակը պահպանելու և ուժեղացնելու համար էր, որ էպիկուրը քարոզում էր ժուժկալու-

թյուն,— և ոչ թե անսահման սանձարձակություն. ինչպես գու ես հասկանում,— որովհետև հայտնի է, որ պահեցողությունից ե ինքնազապությունից հետո հաճույքի քաղցրությունն ավելի ուժեղ է լինում, Ավելի վաղը քան թե այսօր, ավելի ապագան, քան թե ներկա ռապեն,— ահա՝ էպիկուրի վարդապետության իսկական իմաստը, այսինքն քո դավանանքի ճիշտ հակառակը:

— Հե՞րն անիծեմ,— բացագանչեց Թուսյանը,— կարծում ես՝ կվիճե՞մ: Չեմ վիճի: Բայց և այնպես թույլ տուր ասե՞մ, որ ես շհավանեցի և շեմ կարող հավանել չո էպիկուրին. որովհետև որտեղ խոսք կա ժուժկալության, պահեցողության և ինքնազապության մասին, այնտեղ մղղսիության հոտ է փշում, իսկ մղղսին ու մղղսիությունն ինձնից ավելի մեծ թշնամի շեն կարող ունենալ: Ուրիշն, չնեղանաս, Մարգարյան, չնայելով բոլոր պերճախոռ բացատրություններիդ, ես մնում եմ դարձյալ իմ էպիկուրի հետ և նորից խմում եմ նրա ողորմաթասր:

Արդեն արբած էր, բայց շարունակում էր խմել, ըստ երեսությն, ոչ թե նրա համար, որ ուզում էր, այլ որովհետև, ինչպես ասաց, սովորություն էր դարձրել: Խմում էր ու ծխում, ծխում էր ու խմում և ոչ մի րոպե դադար չէր տալիս լեզվին: Համբերությամբ սպասեցի, մինչև որ մի շիշն էլ դատարկեց, հետո պատվիրեց, որ վճարեմ, և, վերջապես գուրս եկանք ճաշարանից:

— Հիմա գիտե՞ս ինչ, Մարգարյան,— ասաց թես առնելով և ոտներն ու լեզուն մի քիչ շաղելով:— Ես ախր սովոր եմ լուսացնելու. բայց դու, ինչպես տեսնում եմ, պուրիտանական բնագույնության տեր մարդ ես: Եթե այդպես շինեիր, կառաջարկեի, որ այսքան ուտել-խմելուց հետո մի, այսպես ասած, էքսկուրսիա կատարեինք դեպի...

Ես թույլ շտվի, որ խոսքը վերջացնի, և հանգիստ, բայց լուրջ ու կտրուկ եղանակով ասացի, որ մենք էքսկուրսիա ենք կատարում դեպի տուն, ուր նա այնքան ուտել-խմելուց հետո հանգիստ կպառկի կը թնի:

Տանը անկողին պատրաստեցի ընդունարանումս: Բայց նա դեռ երկար ժամանակ ինձ հանգիստ շտվեց իր արբածի անվերջ շատախոռությամբ:

III

Առավոտյան վեր կացավ բավական ուշ և երկար ժամանակ՝ լվացվում էր ու մաքրվում: Թեյից առաջ կոնյակ պահանջեց և նախաճաշում էր նախանձելի ախորժակով: Այն ինչ ես արդեն բավական ուշացել էի գործից և վեր կացա, որ գնամ: Հայտնեցի, թե երբ և որտեղ եմ ճաշում, և ասացի, թե կարող է գալ ինձ մոտ, միասին կճաշենք:

— Այդ իր կարգին, — ասաց: — Բայց այս բոպեին ինձ փող  
է հարկավոր: Նախ ուզում եմ հեռագիր տամ տուն, որ փող փո-  
խաղըն, թե չէ՝ Թիֆլիսից ոսս դուրս դնել շեմ կարող. Երկրորդ՝  
պետք է բաղանիք գնամ, որովհետև ճանապարհին շատ եմ փո-  
շոտվել, և երրորդ՝ պետք է արտաքինս մի քիչ կարգի գցեմ, թե  
չէ՝ սրանով մարդամեջ երևալ չի կարելի:

Եվ նա ցույց տվեց իր հագուստը, որը ցերեկվա լուսի տակ շատ խղճուկ տպավորություն էր գործում:

— Ասենք, ինձ շատ փող հարկավոր չէ, — ավելացրեց նա. — մի տաս-տասնհինգ ոութիւ որ տաս, բավական կլինի. պետք է մի կամ մի զույգ շապիկ և մի փողկապ առնեմ, ուրիշ ոչինչ, իսկ շեմոդանում մի թիլ օրինավոր հագուստ կա, մի վախենա:

Տվի պահանջած գումարը և դուրս եկա, թողնելով նրան վեր-  
ցացնելու իր նախաճաշը:

Ճաշին սպասում էի նրան ժամադրավայրում, բայց չերևաց և այդ օրը գիշերն էլ տուն չեկավ։ Մառան պատմեց, որ առավոտյան իմ զնալուց հետո նա էլ շուտով դուրս էր գնացել, հետո մի քանի ժամից վերադարձել, հագուստը փոխել ու նորից դուրս գնացել։ Երկրորդ օրն էլ չերևաց։ Երևաց միայն երրորդ գիշերը շատ ուշ, երբ ես տանս նստա՛ծ դե՛ռ պարապում էի։

Արտաքուստ բոլորպվին կերպարանափոխվել էր: Հագած էր շատ լավ կարած և բաճկոն շատ լավ կտորից, գունավոր փայլուն ժիշետ և փայլուն կոշիկներ սուր քթերով և կոճակներով: Շապիկը նոր էր, շատ բարձր, փղոսկրի պես փայլուն օձիքով և արյան պես կարմիր փողկապով, որի բարձիկի վրա շողջողում էր մի, ըստ երեսվածին, իսկական աղամանդ: Կարճ խուզած շափազանց և ու փայլուն մազերը բաժանված էին կողքից անգիտական ձևով, իսկ մաքուր սափրած մսեղ երեսի կաշին պլազում էր սոխի կճեպի պես:

**Ուսանողական խունացած գլխարկի տեղ ծածկել էր մոխրագույն մորթե զիխարկ՝ մեջտեղից ծալված, բայց վերարկուն նույնն էր:**

Իսկույն նկատեցի, որ խմած է:

— Ամենից առաջ հալցնեմ, — ասաց, վերաբեռն հանելով, — հեռագրիս պատասխանը չկա՞:

Վերցրի տվի պատասխանը, որ ստացվել էր դեռևս նախորդ

Բաց արեց, լուս կարդաց և հանգիստ դցեց զբասեղանի վրա:

— Աշքը լուսու, — ասաց, — Քայլս այլևս միտք չկամք ունեած, հետևապես կարիք չկա շտապեկու, իսկ փողը աստված կտա:

Մի ծխախոռ հանեց, վառեց լամպի վրա և նետեց դիմացս զրասեղանի մոտ:

— Այդ թող և ինձ ասա, ո՞րտեղ էիր երեկ և ո՞րտեղ զիշերեցիր, — Հարցորի:

— Սարումյանի տանը, այսինքն նրա կող տանը, որովհետև  
չէ որ նա տնիկն է: Ճաշին գնացի նրանց մոտ, հետո երեկոյան  
կլուր գնացինք, այնտեղ էլ ընթրեցինք և գիշերն արդեն ժամը եր-  
կուսն էր, որ զուրս եկանք: «Այս ժամին ո՞ւր գնամ,— ասում եմ.—  
Սարգարյանին շեմ ուզում անհանգստացնել. բեզ յուս պետք է  
տանես ինձ»: Ծատ էլ չէր ուզում, բայց ի՞նչ կարող էր անել:

— *Был в гостях у*

— Զգիտեմ, զախենում է կնողից, թե խասդուր է: Կառը  
տեսե՞լ ես: Մի քիչ ջահել չեմ, բայց վնաս չունի... ասող խոսող,  
կրակու: Ուրախությամբ համաձայնեց, որ գնամ իրենց յուտե

Ֆլիրտից-բանից կարող էր լինել, բայց դե մարդը շարունակ ցըց-ված էր մոտեներս: Այսօր էլ նրանց մոտ ճաշեցի: Խսկ հիմա գալիս եմ ուզդակի առանձին կարինետից...

Բայց դու փող չունեիր:

— Գիշերը խաղացի կլուբում և մի վաթսուն ուուրլու շափտարա:

— Առանց փողի:

— Ինչո՞ւ առանց փողի. քո տված տասնհինգ մանեթից դեռ մի քանի կոպեկ մնացել էր գրաբանում, — Հեզնեց Թուսյանը: — Մարդը նա է, Մարգարյան, ով քեֆ է քաշում առանց փողի, թե չէ փողով անգամալույժներն էլ պար կդան: Ես միշտ փող ունեցել եմ և միշտ էլ չեմ ունեցել, որովհետև ունեցած իսկույն ծախսել եմ կամ բաժանել կարիքավոր ընկերներիս: Չունեցած ժամանակ խաղացել եմ և համարյա միշտ էլ տարել: Կանանց վրա էլ ոչ մի կոպեկ չեմ ծախսել: Միայն այս գիշեր, որովհետև այստեղ օրինավոր ծանոթություններ չունեմ, տարածու վաթսուն ուուրլու մի մասը հալվեց առանձին կարինետում: Քամին բերեց, քամին էլ տարավւ Մեզ էլ քամին է բերել, քամին էլ կտանի: Մտածելու պետք չկա: Ու դարձյալ գալիս ենք էպիկուրյան վարդապետության... Ներողություն, ի՞նչ էպիկուրյան և ոչ բո: Համենայն դեպս, դու կարող ես միանգամայն հանգիստ լինել — քո տված տասնհինգ ուուրլին կորած տեղ չէ: Չտամ էլ, վնաս չունի:

Տեսա, որ տրամադիր է երկար խոսելու, ուստի առաջարկեցի, որ գնա քնի:

— Որ շխանգարեմ, զրես: Հնազանդվում եմ, — ասաց և վեր կացավ: Առաջնորդեցի նրան հարեան սենյակը անկողին պատրաստելու:

Առավոտյան ինձնից վաղ էր վեր կացել և տեղավորում էր ճամպրուկը:

Այսօր ուզում եմ գնալ — ասաց: Թեև հեռագիրն ստանալուց հետո ուզում էի վերադառնալ Պետերբուրգ, բայց յեկ էլ մտածեց: Ու շարժե կոնֆլիկտ ստեղծել: Շուն է, թե գել — հայրս է: Բացի, որ շարժե կոնֆլիկտ ստեղծել: Շուն է, թե գել — հայրս է: Բացի սրանից, քանի գրաբանում փող կա: պետք է օգտվել, թե չէ կարող եմ էլի առանց ճանապարհածախսի մնալ:

Ճամպրուկից դուրս էր թափել ինչ-որ գրքեր ու թղթեր, որ այժմ տեղավորում էր հագուստի հետ միասին: Թղթերի միջին չոկեց մի տետրակ և տվեց ինձ:

— Այս թողնում եմ քեզ մոտ, — ասաց: — կարգա, թե հավանես, տպիր լրագրումդ, թե չէ վելադարձիս ետ կտաս:

— Ինչ է այս, — հարցրի:

— Մի պատմվածք: Անցյալ տարի մտագրվել էինք մի ալմանախ հրատարակել ուսանողական ֆոնդի օգտին, վերցրի գրեցի այդ, բայց գործը գլուխ չեկավ, և գրվածքս այդպես էլ մնաց: Կարծեմ վատ չեմ գրել: որ կարդաս, կհավանես:

Տետրակը պահեցի մոտս, խոստանալով, որ կկարդամ, թեև առաջ վճռեցի, որ մի հիմար բան կլինի դրածը, ինչպես շատ դիւտանտների գրվածքներ:

Որովհետև մեկնելու էր մի-երկու ժամից, ուստի հրաժեշտ տվի հենց տանս և գնացի գործիս: Բայց ճաշից հետո որ տուն դարձա, տեսա չի գնացել, որովհետև ճամպրուկը, առանց իրեղենները տեղավորելու, հենց այնպես էլ թողել էր բաց: Մտածեցի, որ թերեւս որոշել էր գիշերվա գնացքով գնալ:

Թեև բնավ ցանկություն չունեի նրա գրվածքը կարդալու, բայց այժմ ստիպված էի կարդալ, որովհետև գիտեի, որ տուն գալուն պես՝ պիտի հարցներ՝ կարդացել եմ թե ոչ և, եթե կարդացած լինեի, պիտի ստիպեր, որ կարդայի, կամ ինքը՝ պիտի կարդար և ինձ էլ պիտի ստիպեր, որ լսեի: Ուստի այդ երեկո քանի շեր եկել, նստեցի և կարդացի:

Կարդացի և...

Այստեղ արտագրում եմ Թուսյանի տետրակը:

## IV

### ՍՊԱՆՎԱՐ ԱՂԱՎՆԻՆ

#### Պատմվածք

#### ՌՈՒԲԵՆ ԹՈՒՍՅԱՆԻ

Բարեկամս, որ ինքն էլ չգիտե, թե ինչ է ինքը — մի սրիկա՞ թե շատ սովորական մի մարդ, որոնցով լիքն է աշխարհս, — մի անգամ հետեւյալը պատմեց մեր ընկերական շրջանում իր կյանքից:

Սրանից մի քանի տարի առաջ, ամառը, օգոստիով արձակուրդից, հյուր էի գնացել Հորեղբորս մոտ ամառանոց: Հետո տարել էի հրացանս և շունչ: Որս անել շատ էի սիրում: Առավտները վաղ վեր էի կենում, զնում անտառը ամբողջ ժամերով թրկ գալիս և մի ժիտ անգամ չէի գտնում, որ սպանեմ: Դե ամառանոց, հազար ոտ էր ման գալի, բոլոր կենդանիները փախել էին: Հետո ասացին, որ մի հինգ-վեց վերստի վրա մի լիճ կա, որ վայրենի բարդ շատ են լինում: Այնուհետև զնում էի այդ լիճը որս անելու ձանապարհ անտառի միջովն էր:

Մի առավոտ, երբ անցնում էի այդ անտառով, եղանու մի հակայական ծառի վրա մի կտցահար նկատեցի: Հենց այնպես, որ պեսդի մի բան սպանած լինելի, հրացանս նշան դրի և արձակեցի: Գիմացա՝ զիավա՞վ թե ոչ, որովհետև հրացանիս տրաքոցն ու մի սարսափելի ճիշ բարձրանալը մեկ եղավ: Նույն վայրկյանին մեկը դուրս թռավ ծառի տակից: Մի աղջիկ էր, որին չէի նկատել ծառի հաստ բնի հտեւը: Գլխաբաց էր, բայց տաք վերարկու ուներ հագին, — օդը գեռես բավական ցուրտ էր: Գլխարկս վերցրի և ներություն խնդրեցի: Կանգնած էր անշարժ, ձեռքը կրծքին, ինձնից մի տասը քայլ հեռու: Դեմքը մեռելի գույն էր ստացել. նայում էր ինձ անթարթ ահագին աշքերով և ամբողջ մարմնով դողում: Նկարիչն ավելի լավ մողել չէր կարող գտնել կենդանի սարսափը նկարելու համար: Նորից ներողություն խնդրեցի: Ոչ մի խոսք շարտասանեց: Մոտեցավ ծառին, խոտի մեջ ինչ-որ որոնեց գտավ, — գիրք էր, — դրեց թեկ տակ, ձեռքով ետ քաշեց երեսին ընկած մազերի խորձը և հանգիստ քայլերով հեռացավ:

Հետեւյալ առավոտյան, երբ անցնում էի նույն տեղով, նըստած էր նույն ծառի տակ, գիրքը ձեռքին Բարեեցի: Զպատասիանեցի: Անցաւ: Հետո ետ դարձա և, հրացանս զիմհար տալով, կանգնեցի նրանից մի տասը քայլ հեռու, ուղղակի նրան դեմ առ դիմ: Շունս մոտ վագեց նրան և սկսեց հոտոտել նրա վերարկուն: Նա քշեց շանս, ընթերը կիտած, բայց ոչ բարկացած, նայեց ինձ և հարցրեց.

— Ի՞նչ եք ուզում:  
— Ուզում եմ, որ ներեք, — ասացի:  
— Ի՞նչ բանի համար?  
— Որ երեկ վախեցրի ձեզ  
— Բայց հո չգիտեիք, որ ես նստած եմ այստեղ:

— Ճիշտ է, բայց և այնպես... Շատ անհանգիստ էի. մտածում էի, որ վախեց կարող էիք հիվանդանալ:

— Հետո ձե՞զ ինչ:

— Ի՞նչպես թե ինձ ինչ: Զէ՞ որ պատճառը ես կլինեի:

Կարձ ժամանակ սայեց ինձ զարմացած, հետո ուսերը թոթվեց տարակուսանքով և ցուխը նորից կախեց գրքի վրա. առանց այլս ոչ մի խոսք արտասաւնելու ըստ երեսովին, ուզում էր հասկանել, որ հանգիստ թողնեմ իրեն և հեռանամ:

Բայց ես համառորեն կանգնած էի նրա առջև և ակամա հիանում էի, դիմելով նրա գեղեցիկ ցուխը շատ հարուստ փափուկ նորի աշգերով. որոնք նոր ծագած արևի թեք ճառագայթների տակ բաղմազան երանգներ էին ընդունում, ինչպես փոքրիկ երեխաների թափշա մազերը:

— Այստեղ նայեցեք, — ասացի, — տեսնելով, որ գուխը չի ուզում գրքի վրայից բարձրացնել:

Նայեց:

Ճակատս դրի հրացանիս փողի ծայրին, իսկ ոտու շնիկի վրա:

— Եթե չներեք, — ասացի, — այս բոպեին գանգս ցրիվ կածեմ:

Այս ասելս ու նրա տեղից վեր թռչելն մեկ եղավ:

— Գծվե՞լ եք, ինչ է, — աղաղակեց գունատվելով:

— Ներո՞ւմ եք, թե ոչ, — համառորեն պնդեցի ես:

— Ի ոք աստծո, զեն կորցրեք այդ հրացանը, ներում եմ, — արագ-արագ արտասանեց նա:

— Ընորհակալ եմ: Այժմ հանգիստ կթողնեմ ձեզ, — ասացի, շվացրի շանս ու հեռացա:

Բավական տեղ գնալուց հետո ետ նայեցի: Նա գեռես կանգնած էր նույն դրության մեջ՝ ողողված վաղորդյան արևի ոսկե-հուռ ճաճանչներով, որոնք ծառերի բների արանքից հազարավոր լուսեղեն ժապավեններ էին փոել դեպի անտառի խորքը, մեջ ընդ մեջ խառնված զուգահեռ ստվերներով: Ցողի կաթիլները թարմ դիմութիւն էին ուստատիկների պես. կարծես կախարդական մի ձեռք անփուլթ ու շուայլ անթիկ գուշարներ էր ցանել շորս կողմը:

Երրորդ առավոտյան նույն ծառի տակն էր: Այս անգամ բարեկս ընդունեց:

— Զեղ խորհուրդ չեմ ու առավոտյան այս ժամին նստեք խոտի վրա. տեսնում եք՝ որքան թաց է. — ասացի:

— Խոտի վրա հս չեմ նստած. ասաց. — տեսեք:

Ո, ցույց տվեց. թե ինչի վրա էր նստած. նստած էր հսկայական եղնուո. Տի հասս արմատի վրա. որք մի կեւ արշին բարձր էր մնացել գետնից.

— Այդ միենույն է, — ասացի, — խոնավությունը կարող է եր ոտներից անցնել:

Անփույթ կերպով թափ տվեց ուսերը, և առաջին անգամ նրա զերքի վրա մի թեթև ժայիտ նկատեցի:

— Դուք երեխ ամեն առավոտ որսի եք գնում, — ասաց, շուշելով շանս գլուխը. որ նորից մոտեցել և հոտոտում էր նրան:

— Այո,

— Ո՞րտեղ:

Ճեղն ասացի:

Գիրքը բաց ու խուփ արավ, ըստ երեսութին ուզեց բան ասել, սույց ոչինչ շասաց. թեթեակի կարմրեց ու գլուխը կախեց գրքի վրա, աշխատելով այնպես անել, որ գեմքը շտեսնեմ:

— Ցտեսություն, — ասացի:

— Ցտեսություն, — արձագանքեց նա, առանց գլուխը բարձրացնելու գրքի վրայից, և եւ հեռացա իմ ճանապարհով:

Եր: այս վերշին բարեհաճ ընդունելությունն ինձ այն համացմտն բերեց, որ ամեն առավոտ ես նրան կհանդիպեմ նույն տեղում. նվ շխալվեցի. շորրորդ առավոտյան նույն տեղումն էր: Այս տնգամ արդեն իրար հանդիպեցինք իբրև հին ժանոթներ:

— Գիտե՞ք, երեկ մի բան իի ուզում խնդրել ձեզ. բայց շհամարձակվեցի, — ասաց Ժպտալով և կարմրեց:

— Ի՞նչ:

— Ռեզում էի խնդրել, որ թույլ տաք ինձ գամ ձեզ հետ, տեսնելու, թե ինչպես եք որս անում:

— Դրա համար թույլտվություն հարկավոր չէ, այլ պետք է ուղղակի վեր կենալ և գալ, — ասացի:

— Ուրեմն կարելի՞ չ:

— Իհարեւ:

Ուրախացած վեր թոալ տեղից:

— Իթ միայն չեք վախենում հրացանի ձայնից, — հարկ համարեցի գլուխացնելու:

— Զէ, այն օրվանն ուրիշ էր, — ծիծաղեց նա, — խորասուզված կարդում էի, և հրացանի ձայնը հանկարծակի բերեց: Իսկ հիմա, որ տեսնեմ պիտի արձակեք, հեռու կփախչեմ, ականջներս կփակեմ, աշխերս կխփեմ ու շեմ վախենա, չէ՞ — հարցրեց երեխայի միամտությամբ:

— Տեսնենք, — կարճ պատասխանեցի ես Ժպտալով:

Այս անգամ հետը մի թեթև շալ էր վերցրել, որպիսին գործ են ածում կանաչը ամառանոցներում գլխարկի տեղ. գցեց գլխին ու գնացինք: Գնում էինք բաղցը զրուցով: Չիմացանք, թե ինչպես անտառը վերջացավ և զուրս եկանք ընդարձակ բաց դաշտը: Մեր գնացած ճանապարհը հազիվ մի երկու վերստ լիներ, բայց նկատեցի, որ ոտներն արդեն դանդաղ է շարժվում:

— Ո՞րտեղ է լիճը, — հարցրեց:

— Այն սարը տեսնո՞ւմ եք, — ասացի, ցույց տալով դիմացի բավական բարձր բլուրը. — այն սարը պիտի բարձրանանք, իշնենք, մի այնքան էլ գնանք, որ նոր հասնենք լճին:

— Ուհ, այդքան հեռու է, — ասաց ու կանգ առավ:

— Ի՞նչ է, հոգնեցի՞ք, — հարցրի:

Գլխով դրական շարժում արավ Ժպտալով:

— Հիմա ի՞նչ եք ուզում անենք, — հարցրի, — ճանապարհը շարունակե՞նք, թե...

— Ես ետ կդառնամ, — ասաց:

Ծովու բավական առաջ էր վազելու Շվացրի: Պոլը խաղացնելով և հաշելով ետ վազեցի:

— Դե դառնանք, — ասացի:

— Դուք է՞լ եք ետ դառնում, — զարմացավ ուղեկցուհիս:

— Բաս Հո մենակ չեմ թողնի ձեղ. անտառում կարող եք մոլորվել:

— Ոչ, չեմ մոլորվի, — ասաց. — այս անտառն ինձ լավ ժանք է:

— Այդ միենույն է, — ասացի, — իմ պարտքն է ձեզ ձեր տեղը հասցնել:

— Հետո՞ — հարցրեց:

— Ետ կդառնամ:

— Ետ կդառնա՞ք:

— Ուզում եք, ետ չեմ դառնա: Նկատելի կերպով կարմրեց:

— Ես այդ չեի ուզում առել, — ասաց, — այլ ուզում էի ասել, թւ... մի՞թե չեք հոգնի:

— Որսորդը որ հոգնելու մասին մտածի, երբեք որսի չի ելնի: Այսպես խոսելով սկսեցինք ետ դառնալ: Շատ էր հոգնել: Թևս առաջարկեցի: Ընդունեց: Շունս ամենալավ տրամադրության մեջ էր, առաջ էր ընկել, մերթ կորչում էր անտառի թփուտների մեջ, մերթ գուրս պրծնում, նայում մեզ ու նորից կորչում. անտառն աղմկում էր նրա հաշոցի ձայներից: Արկը բավական բարձրացել էր: Օդն անշարժ դրության մեջ էր: Անտառը կանգնած էր լուռ ու խորհրդավոր: Բացատներում, տեղ-տեղ դեղնած խոտերի մեջ սրվարփում էին մորեխները: Շուրջը մարդ չէր երևում:

Հանկարծ ուղեկցուհիս կանգ առավ, ձեռքը հանեց թեփս միշտ և մատն ուղղեց դեպի ծառերից մեկի կատարը.

— Տեսե՛ք, տեսե՛ք, — այն ի՞նչ թոշուն է:

Հրացանս հանեցի ուսիցս և շլացրի շանս: Ուղեկցուհիս փախավ մի բան քայլ հեռու, կուզ եկալ մի ծառի տակ, գիրքը թեկի տակ առավ, մատներով խցկեց ականչները, աշբերը փակեց և մնաց անշարժ: Նշան բռնեցի և արձակեցի: Մառի տերեները խշխացին, և թոշունը վայր ընկավ: Շունս թռավ մի բանի ոստյունով և ատամների մեջ բռնած՝ բերեց մատուցյ ինձ իմ որսը:

Ուղեկցուհիս մոտ վաղեց և բուռն հետաքրքրությամբ, որպիսին միայն երեխաների մեջ եմ տեսել, սկսեց դիտել սպանված թոշունը:

— Այս, աղավնի՝ է, — շշնչաց այնքան ցավագին, որ իմ մեղքն էլ եկավ:

Որսո տպի իրեն: Երկու մատով բռնեց մի ոտից և սկսեց լավ դիտել:

— Տեսե՛ք, տեսե՛ք, — ասաց, — կրծքին կարմիր պուտպուտ... արյուն է, չէ, տե՛ր իմ աստված, ինչքա՞ն էլ սպիտակ է, ինչքա՞ն գեղեցիկ...

Երկար ժամանակ դիտում էր հուզված, ինչպես արդեն գիտակցության եկած մեծ, բարի երեխաները դիտում են մի ցավալի բան, հետո հառաջեց և տվեց ինձ:

Առա և շպրտեցի թփուտների մեջ:

— Ինչո՞ւ դեն գցեցիք, — նկատեց հանդիմանությամբ և խըլ-հահարությամբ:

— Բաս ինչի՞ս էր պետք, — ասացի:

Ճաճապարհը շարունակեցինք այս անգամ բոլորովին այլ տրամադրության մեջ: Ուղեկցուհիս շատ էր տիրել և գրեթե այլնս չէր խոսում: Նորից թևս առաջարկեցի, — ընդունեց: Սովորական կատակներս այլևս ոչ մի ժամկետ չէին բերում նրա գեմքին: Քայլում էր լուսնոտի պես և մտախոհ հայացքը հառել էր անորոշ տարածության մեջ:

Հանկարծ կանգ առավ, նայեց ինձ և բացագանչեց լացագին:

— Գցեցե՛ք, գցեցե՛ք այդ հրացանը և խոսք տվեք, որ այլևս երբեք ոչ մի թոշուն չեք սպանի:

Զարմացած նայեցի նրա դեմքին: Այդ դեմքն արտահայտում էր միաժամանակ և զայրությ, և պաղատանք, և մի բան, որ անուն չունի և որը զրսերում է մարդու ամբողջ ներքինը — այն բոլոր լավը, որ կա մարդ էակի հոգու խորքում: Եվ ես, որ երբեք չեմ իմացել, թե ինչ բան է սենտիմենտալությունը, պահ մի այն աստիճան զգացվեցի, որ քիչ մնաց հրացանս առնեի և փշրեի հենց նրա աչքի առջև:

— Խո՞սք եք ուզում, ահավասիկ, — ասացի ամենայն անկեղծությամբ և ձեռքս վճռականորեն մեկնեցի նրան:

Նա վրա ընկավ և սեղմեց այնպիսի բուռն ուրախությամբ, որ աշքերի մեջ նույնիսկ արցունքներ փայլեցին:

Հիրավի, այդ օրվանից այլևս երբեք որսի չելա, բայց ոչ թե նրա համար, որ բոպեի ազդեցության տակ խոսք էի տվել, կամ երդմանը որեւէ կարենորություն եմ տալիս, այլ այն պատճառով միայն, որ այդ օրվանից սկսեցի մշակել ինձ համար մի նոր աշխարհացք. — աշխարհիս երեսին ամեն բան թույլատրելի է, բացի սպանությունից, որովհետև ամեն մի վատ արարք կամ այն, ինչ որ վատ է անվանվում, պայմանական է և ուղղելի, և սպանությունն է միայն, որ ոչ մի պայման չի վերցնում և անուղելի է: Թույլը ավելի, քան ուժեղը, իրավունք ունի ապրելու աշխարհիս երեսին հենց այն պատճառով, որ թույլ է և անպաշտպան:

Այսքանը, ինչ որ պատմեցի, ոռմանի, այսպես ասած, բանաստեղծական նախերգանքն է: Խսկ բուռն ուռմանը, ինչպես ամեն մի ոռման, այնքան սովորական և պրովայիկ մի բան է, որ շարժե մանրամասնությունների մեջ մտնել: Բավական է ասեմ, որ միերկու շաբաթից հետո անձնատուր եղավ ինձ հենց նույն անտառում և նույն աեղում, ուր սպանեցի աղավնին: Մինչև անձնատուր լինելը խրտնում էր այծի պես, խսկ անձնատուր լինելուց հետո

Կապվեց ինձ հետ շան պես, Կանայք առհասարակ այդպես են. զեռ  
կվախենան, շիմուլում կանեն, բայց մեկ որ սահմանն անցան, էլ  
պրծնում չկա նրանց ձեռքից: Օր չէր պատահի, որ երդում շառներ  
ինձնից, թե կամուսնանաք: Երդվում էի, իհարկե, բայց նկատում  
էի, որ որքան շատ էի երդվում, այնքան քիչ էր հավատում:  
Էլուս առաջ գալու համար առաջ գալու համար, ուստի առաջ գալու համար

Մեր տեսակցության տեղը միշտ անտառու էր և աշխատ էր ու այնպիսի խորքեր, ուր մարդու ոտ չէր գիպում: Հենց որ տեսնում էր ինձ, սաստիկ ուրախացած ընկնում էր վզովս: Բայց այդ ուրախությունը երկար չէր տևում. նրա գեմքը կամաց-կամաց ինչ-որ մտախոհ տիրության արտահայտություն էր ստանում, ինչպես այն ժամանակ, երբ սպանված աղավնին գեն շպրտեցի. Էլ չէր խոսում, չէր նայում ինձ, նույնիսկ հեռացնում էր ձեռքերս, երբ ուզում էի գրկել իրանը:

Սի անգամ տարավ ինձ անտառի այս տեղը, որ սպասեց  
աղավնին, և սկսեց թփուտների մեջ որոնել: Աղավնին ընկած էր  
այստեղ փետուրները թափված, սևացած, որդերով ծածկված:  
Նա մեջ և իսկույն ետքաշվեց փշափազված:

— ինչու սպանեցիր, ինչու, — դարձավ ինձ մեզ զատա-  
բանքով:

Բայց ես միայն ծիծաղը յրա այդ բայց եւ ուզամ էր

— Որովհետեւ ինքը ցուց տվիր, — առաջի, — և այս առեւնիկ, թե ինչպես եմ որս անում:

— Ախ, թե որ գիտենայի... — արտասանեց զօրվական ձև,  
և մի ակնթարթում նրա աշխերը լցվեցին արտասուրփի կաթիւ-  
նով: — Տես ի՞նչ է գտնել այն սպառակ, այն մաքուր, այն գե-  
ղեցիկ, անմեզ...

Փղծուկը թում շավեց, որ վերջացնի: Սստեց խռովը զյու, թաշկինակը պինդ հուապ տվեց աշքերին և սկսեց լալ Եվ լամփս էր այնքան ուժգին, որ ուսերը վեր էին թռչում:

Մնացել էի ապուշ կտրած: Պարզապես չէի հասպառու, թի ինչպես կարելի էր այդքան վշտանալ մի հասարակ թոշունի սպանության համար: Եվ այժմ եմ միայն կոռահում, որ նա ազավիու և իր միջն, թերևս անգիտակցաբար, մի նմանություն էր տեսնում և լայիս էր ոչ թե այն անմեղ թոշունի սպանությունը, այլ իր կուսության «սպանությունը»:

Այստեղ էլ պետք է վերջակիս զնեմ, որովհետև, շնորհը

ժանվեցինք և այլես շտեսանք իրար իմ և եկնելուց հետո սկզբում  
բավական երկար ժամանակ նամակագրություն ունեինք իրար  
հետ, բայց հետո, զդիտեմ ինչպես, այդ նամակագրությունը քանի  
ոնաց՝ նվազեց և վերջ ի վերջո դադարեց իսպառ Կյանքն առավ  
ինձ իր հորձանուտ ալիքների մեջ և ժամանակը բերեց անխուսա-  
փելին— մոռացումը:

1

Այդ գիշեր երկար սպասում էի Թուայնին, բայց նա չէր երեվում։ Արդեն հոգնել էի պարապելուց, և քունս տանում էր։ «Ավարամարդ է, կարող է զգալ»— վճռեցի ինքս ինձ և պատրաստվում էի պառկելու, եթի դուռն զանգը հնչեց։

Ինքս զնացի դուռը բանալու, որ քնած ծառային նեղություն շտամ: Բայց դուռը բանալուց հետո տեսա մարդ չկա: Դես նայեցի փողոցում, դեն նայեցի— ոչ ոք չէր երևում: «Կատակի ժամանակ» է գտել հիմարը»— մտածեցի ինքս ինձ, կարծելով թե իրեն հատուկ թեթևամտությամբ, զանգակը քաշելուց հետո: Թաքնվել է մեր տան կողքին գտնվող նրբափողոցում: Մի քանի րոպե սպասում էի այն ցրտին դռան շեմքին կանգնած— ոչ ոք չկար ու չկար: Հետո մտածեցի, որ կարող էր մի օտար մարդ լինել, որն սիալմամբ քաշել էր դռան զանգակը և, տեսնելով, որ սիալվել է, հեռացել էր. վերագրածա, հանվեցի և պառկեցի: Բայց շուտով փնել չկարողացա, որովհետև ականջս շարունակ ձենի էր: Շուտումուն էի գալիս անկողնումս, տանջվելով քնիս խանգարումից, և մըտքում հայշոյում թուայնին:

Զգիտեմ որքան ժամանակ էր անցել, և սպասողական դրության մեջ երեխ թե արդեն քուն էի մտել, երբ գիշերային լուսթյան մեջ մի թրիսկոց հանկարծ զարթեցրեց ինձ։ Աչքերս բաց արի. տեսնեմ՝ Թուսյանն է։ Լամպը, որ նրա համար վառ էի թռղել, վերցրեի և դուրս էր տանում։

— Քնիր, քնիր,— ասաց,— ես ինքս կպատրաստեմ ոճիք-  
դինս,

— Դուռն ո՞վ բաց արեց, — հարցրի

— Սառան: Տեսաշեններ, այդպես էլ խոր քնել կը իմբ։ Քիչ էր  
մնում դաւոր կատրատի։

— Հիմա ժամը քանի՞ւն է:

— Երեքից անց կլինի:

Զարմացաւ, կարծում էի, թե հինգ րոպէ էլ չկար, որ թնել չի, մինչդեռ քնած եւ եղել երկու ժամից ավելի:

— Ժամը յեկի յոտերքը չո չե՞ս եկել զանգակը թաշել, — Հարցրի:

— Ե՛րբ այս գիշե՞ր:

— Հա:

— Այդ երկի երազումդ ես տեսել, — ասաց և լամպը ձեռին դուրս գնաց հարսան սենյակը:

Երկար ժամանակ փափսում էր այնտեղ, և ետո արագ քայլերով ժտակ նորից կիսահանված և ոտարորիկ, լամպը դրեց որպես սեղանի վրա և հարցրեց հետաքրքրությամբ.

— Ասում ես ժամը յեկին եկել են զանգակը թաշե՞ւ

— Հա:

— Հետո՞ւ, ո՞վ էր:

— Կարծեցի դու ես, գնացի դուրս բաց արի, մարդ չկար:

— Ի՞նչպես թե մարդ չկար:

— Մարդ լինելը ի՞նչպես կլնի:

— Դուրս ինքո բաց արի՞ր:

— Ինք անձամբ:

— Եվ ոչ շկա՞ր:

— Ոչ, ոք:

Թուսյանը կարճ ժամանակ նայում էր աշքերիս փորձող հայցքով:

— Մարգարյան, եկ մի՛ խաղա ինձ հետ, — ասաց իրեն ոչ հատուկ լրջությամբ: — Ասա ուղղակի, որ մի կին էր և ինձ էր հարցնում:

Զարմանալու և հետաքրքրվելու հերթն ինձ հասավ.

— Ի՞նչ կին:

Թուսյանը շպատասխանեց. շարունակում էր նայել ինձ զարդացած:

— Լավ, այդ ի՞նչպիսի բան է, որ եկել զանգդ թաշել են և մինույն ժամանակ ոչ ոք չի եղել: Սատանա չո չէ՞ր կարող լինել, որ աներությանար, — ասաց, ըստ երեսլին, զեռևս շնավատալով, որ ես ճշմարտությունն եմ ասում:

— Երկի փողոցին անձանօթ շտար մարդ է եղել, — ասա-

ցի. — Վոխանակ հարկանի շանգը քաշելու, սխալմամբ իմ զանգն է թաշել:

— Այդպես հա՛: Իսկ ես կարծեցի...

Ինչոր մտածելով, ծալապատիկ նսաեց աթոռի վրա (բատերեութին, բարիկ ոտները մրսում էին մերկ հատակի վրա), հետո հանկարծ նայեց ինձ և ասաց.

— Բաս չես հարցնում՝ ինչոր այսօր չգնացի:

— Երկի մի պատճառ կար, որ մնացել ես:

— Մինչեւ անգամ երկու պատճառ,— վրա բերեց թուսյանը, — առաջինն այն, որ առավոտյան, երր իրարից բաժանվեցինք և ես հափուռ-շափուռ հավաքում էի, որ գնամ վազդալ, տեսնեմ գրանումս կոպեկ չկա: Մինչդեռ շատ լավ հիշում եմ, կլուրում տարած վաթսուն ոռութուց մի քսան-քսանհինգ ոռութի դրել էի ժիկետիս գրանը, և այդ փողը գնաց առանձին կարինետում, իսկ մնացածը դրել էի պինչակիս ծոցի գրանը, և այդ փողն էր, որ հանգել էր: Մտածել եմ — կամ այն բածն է հանել, որի հետ քեֆ էի անում, կամ պարզապես ընկել է գորանիցու: Այսպիսով առավոտվա գնացքով գնալս շհաջողվեց: Չուզեցի նորից քեզ զիմել և գնացի անմիջապես Սարումյանի մոտ ու մինչեւ մի քսան ոռութի շպոկեցի, հանգիստ շտվի: Գալիս էի տուն, որ շեմողանս առնեմ գնամ վազդալ, վրա հասավ երկրորդ պատճառը... Քնեցի՞ր, Մարգարյան:

— Զէ, քունս արդեն փախցրիր:

— Լսիր, լսիր, շատ հետաքրքրական բան եմ պատճելու նստեցի տրամվայ... Հա, ամենից առաջ հարցնեմ — գրվածքս կարդացի՞ր:

— Կարդացի:

— Եղրակացությունդ:

— Վատ չէ, կարելի է տպել:

— Ես այդ շեմ հարցնում: Ուզում եմ ասել՝ հասկացա՞ր, որ բարեկամս, որի անունից անում եմ պատմությունը, այդ ես ինքս եմ:

— Իհարկե, դա գրական մի որոշ ձեւ է:

— Էլի շհասկացար: Ուզում եմ ասել, որ պատմվածքիս հերոսը ես ինքս եմ, և ամբողջ պատմվածքն էլ զուտ իրողություն է:

— Այդ ես շգիտեի:

— Հապա, զուտ իրողություն իմ սեփական կյանքից։ Հիմա լսիր։ Նստել եմ տրամվայ, գալիս եմ։ Սկզբում ուշադրություն շեմ դարձնում, թե ով է նստած շուրջու։ Հետո պատահմունքով ետ եմ նախում և ի՞նչ տեսնում, ճիշտ իմ ետևի նստարանի վրա նստած է նա— անտառի սիրուհիս։ Հետաքրքրական է, չէ։

— Եթե միայն ֆանտազիա չէ կիսատ թողած պատմվածքը շարունակելու համար,— նկատեցի ես կեղծ անտարերությամբ։ բայց իսկապես շատ հետաքրքրված։

Թուսյանը սինչեա անգամ ցած թռավ նստած տեղից։

— Տո, Տիշտ եմ ասում, է՛, ինչ ֆանտազիա,— բացազանչեց եաւ։— Նա ինքը, իսկ և իսկ նա, սպանված աղավնին, ծանալեցի առաջին իսկ հայացքից, որովհետև մեջտեղով քանի՛ տարի է անցել, — ընդամենը շորս-հինգ տարի։ Ինչպես երևում էր, ինձնից առաջ էր նստել, և ինձ էր նայում։ Աշքս աշքին որ շդիպավ, շիմացա ինչ պատահեց ինձ։ Կարծես մի բար վերցրին և գլխովս տվին։ Այսպիսի բան երբեք չէր պատահել ինձ։ Դե հիմա երեակայիր դրությունս. չեմ իմանում ինչ անեմ— վեր կինամ փախչեմ, թե ուղղակի խոսակցություն սկսեմ։ Թե փախչում եմ— խայտառակություն է զուրս գալիս, որովհետև գիտեի, որ հետո խայտառակություն է զուրս գալիս, որովհետև գիտեի, որ հետո շպիտի ներեի ինձ այդ փոփրոգությունը. թե խոսակցություն եմ սկսում— վագոնը լիքն է, վախենում եմ ուրիշ բան զուրս գաւ եվ ի՞նչ պիտի ասեի, ի՞նչ կարող էի ասել։ Նստած եմ իշացածի պես և թեև ետ չեմ նայում, բայց զգում եմ, որ նրա հայացքը շեշտակի ուղղված է ինձ և կարծես այրում է ծոծրակս։ Այսպես բավական երկար տեղ գնալուց հետո շփոթմունքս մի քիշ անցավ, երեվակայիր, հանկարծ մի տեսակ ուրախություն պատեց ինձ։ Ասեմ ինչու։ Որովհետև այն ժամանակ, երբ նամակագրությունս դադարեցրի և նրանից էլ այլևս ոչ մի նամակ չէի ստանում, երբեմն մտածում էի, թե վինի որոնէ բան բերած լինի իր գլխին, և այժմ անսպասելի կերպով ողջ և առողջ էի տեսնում նրան։ Այդ ուրախության ազդեցության տակ նորից բյալագոզությունս բռնեց. վճռեցի, որ իշնի, ես էլ իշնեմ, և ինչ ուզում է՝ պատահի։ Այդպիս էլ արի։ Վագոնը որ կանգնեց, իշավ։ Ես էլ իշաւ։ Սկսեց արագ քայլերով հեռանալ։ Հասա ետևից։ Կանգ առավ և... դե ինչ երկարացնեմ. բազոքներ, մեղադրանքներ, հանդիմանություններ— այդ բոլորը, եղավ, իհարկե, բայց, փառք ալլահին, ոչ լեզու է պակաս, ոչ համարձակությունս, ոչ էլ փորձառությունս՝ կարողա-

ցա կամաց-կամաց մեղմել նրա վրդովմունքը, ասացի, թե ես մեղավոր չեմ, թե այդ բոլորը կատարվել է իմ կամքին հակառակ, թե ուսանողական անկարգություններին մասնակցելուս համար ինձ Սիրիր էին բշել, և ուրիշ այսպիսի ստեր։ Այս բոլորի հետ միասին երդում-կրակն ընկա, թե առաջվա պես սիրում եմ իրեն, ցավ հայտնեցի, որ ամուսնացել է (ինքն ասաց). բայց և այնպիս ասոցի, այդ չի խանգարում, որ մեր նախկին հարաբերությունները շարունակենք։

— Եվ ի՞նչ պատասխան ստացար։

— Այդ էլ թեզ եմ թողնում որ գուշակես,— ասաց Թուսյանը, լամպը վերցրեց և, բարի գիշեր մաղթելով, դուրս գնաց։

— Երեկի մի ֆառավոր ապտակ կերար,— կանչեցի նրա ետեր։

— Սխալվեցիր, թեև հոգերան ես,— բղավեց նա մյուս սենյակից։— Այդ ցույց է տալիս, որ դու կանանց հետ գործ չես ունեցել և կանանց չես ճանալում։ Ծրագը հանգցնեմ, թե մնա։

— Կարող ես հանգցնել։

Լուսի այն շերտը, որ ընկնում էր սենյակու հարևան սենյակի բաց դռնից, հանգավ։

— Ապտակը գիտե՞ս ինչ տեսակ կանայք են տալիս, Մարգարյան, — կանչեց Թուսյանը, բայց երեւյալին, արդեն անկողին մտած։— Ապտակն այն տեսակ կանայք են տալիս՝ որոնք ոչինչ չունեն կորցնելու։ Այ, օրինակ, փողոցում մոտենում ես մի հանրածանոթ թեթևաբարը կնոշ և առաջարկություն անում։ Թե որ քիթ դուր չեկավ, մեկ էլ տեսար տարավ ու բերեց— շրջիկ։ Դեռ գարադավոյ էլ կկանչի, որ ցույց տա թե տեսեք՝ որքան նամուսով կին եմ։ Եսկ իսկական նամուսով կանայք, ընդհակառակն, այգպիսի գեպքերում կարմրում են, կարկամում և ամոթից քիշ է մնում գետինն անցնեն, որ մարդ շտեսնի, շիմանա։ Գրող մարդ ես, պետք է որ այս բաներն իմանաս, — ավելացրեց նա հորանցելով։

— Բայց և այնպիս շտացիր, թե ինչ պատասխան ստացար,— նկատեցի ես։

— Համենայն գեպս ապտակ շտացա և չէի կարսղ ստանալ, որտեսան այսպիս թե այնպիս, իր անդրանիկ սիրու առարկան էի, իսկ անդրանիկ սիրը կնոշ սրտում անջնջելի է, ինչքան է որ այդ սիրու առարկան անառակի մեկը լինի ինձ պիս։

— Ինձ գիլիսովայություններ հարկավոր շեն, ինձ զերջն է հարկավոր, — կանչեցի ես անհամբերությամբ:

— Դե զերջն ինչ զերջն ա'յն, որ... Հարցրեց որտեղ եմ ապրում: Ես էլ տվի քո տան հասցեն:

— Թե ի՞նչ:

— Թե այն, երեխ, որ կամ ինքը գա, կամ նամակով, ռանդեռ նշանակի որեւէ տեղ: Ես այդ մտքով էլ հասկացա նրան և դրա համար էլ վճռեցի առժամանակ հետաձգել զնալու: Հիմա որ ասացիր եկել զանգդ բաշել են, մտածեցի, շինի: Նա է եղել և զերջին ոռպեին ամաշել փախել էլ: Բայց այս էլ եմ մտածում, թե ի՞նչպես կհամարձակվեր գալ կեսպիշերին:

— Ինչո՞ւ իր հասցեն չուզեցի՞ո:

— Զտվագ:

— Ինչո՞ւ

— Դե հասկանալի է, ամուսին, ընտանիք, ո՞վ գիտե...

Թուայանը նորից հորանցեց և երկար ժամանակ լուր էր:

— Բայց սիր ինչ եմ ասում, հանկարծ կանչեց նա: — Թե որ, ով գիտե, վաղը, մյուս օրը գա և դու տանը լինես, հույս ունեմ այնքան փափկանկատ կգտնվես: Որ մեզ մենակ կթողնես իւկ այժմ բարի գիշեր, ես արդեն քնեցի:

## VI

Զգիտեմ ինչ հիման վրա, Թուայանը համոզված էր, որ իր խարած աղջիկը չորս-հինգ տարվա լրումից հետո անպատճառ պիտի գա իր մոտ կամ նամակով տեսակցություն պիտի նշանակի: Այս պատճառով հետեւյալ օրը երեկոյան տուն էր եկել շատ վաղ և, երկար ապարայուն պասառումից ձանձրացած, պառկել քնել էր առանց հանվելու, պատվիրելով, որ եթե գա, վեր կացնեմ իրեն:

Նստած պարապում էի, ըստ սովորականին, երբ դարձյալ գրեթե նույն ժամին, ինչպես և նախորդ գիշերը, հնչեց դունս զանգակը: Գրեթե նույն ոռպեին և հանկարծ կտրվեց Թուայանի խոլոֆոցի ձայնը հարևան սենյակում: Այդ նշան էր, որ նա համարծ զարթնեց զանգակի ձայնի վրա:

— Հը! Մարգարյան: — Կանչեց նա, — այս նա է:

— Զէ մի, պողեր, — ասացի ես գրգոված, ջնայելով, որ ակամա սկսեցի հավատալ, թե կարող է նա լինել:

Թուայանը երևաց դռան շեմքում շտապով բաճկոնը հազնելով:

— Կաց, ես եմ բանալու, — ասաց և դուրս գնաց:

Անհամբեր սպասում էի նրա վերադարձին: Այդ արկածն սկսել էր խիստ հետաքրքրել ինձ:

Երկար սպասում էի: Թուայանը չէր վերադառնում: Ասացի երեխ դռանը խոսակցության են բռնվել և որտեղ որ է կմրածնեն: Ու չիմա, անհանգիստ, այն մասին էի մտածում, թե ինչ հիմար դրւելուն մեջ է զնելու ինձ իմ սեփական բնակարանում այդ անամոթ մարդը:

Մի քիչ էլ սպասեցի, տեսնեմ վերադարձավ մենակ և ձեռքերը տարածեց ծայր աստիճան տարակուսանքով:

— Սա ի՞նչ հանելուկ է, — ասաց, — ոչ ոք չկար:

## VII

Հանելուկը պարզվեց հետեւյալ առավոտյան, երբ ես նոր էի գնացել պաշտոնակալը և, առանձնասենյակումս նստած, ձեռնարկել էի օրվա աշխատանքս: Թեև պատվիրել էի, որ աշխատանքիս որոշ ժամերին ոչ ոք շանագարի ինձ, բայց և այնպես ծառան մտավ և ասաց, որ մի պարոն ուզում է տեսնել ինձ մի շնոր կարեռ գործի համար: Ստիպված էի պատվիրել, որ ներս հրավիրի:

Մտավ մեկը շատ զգույշ և անհամարձակ բայլերով: Երբ գլուխս բարձրացրի, որ տեսնեմ՝ ով էր, սկզբում զարմացած, հետո մեկեն վեր թուա ուրախական բացագանչությունով:

Գարեղին Սիսակյանն էր, որին ոտով-գլխով կորած էի համարում:

Ու մինչ ուզում էի ընդունել նրան, ըստ հին սովորությանս, մտերմական-հեղնական եղանակով, զարմանքով տեսա, որ ա'յն Գարեղինը չէ: Դեմքը գունատ էր, աշքերը թափառուն և հիմանդրու, անփայլ ցոլքով, քնատ մարդու աշքերի պես: Միշտ կենսուրախ, միշտ խանդակառ տրամադրության հետքն անդամ չէր երկում ոչ դեմքի, ոչ շարժումների մեջ: Ընդհակառակը, հոգեկան

ծանր վշտի տակ ճխլված մարդու տպավորություն էր թողնում իր ամբողջ արտաքինով:

Առանց բարեկելու և առանց երեսիս նայելու նստեց գրասեղանիս մոտ և տենդոտ, անհանգիստ հայացքն սկսեց ման աժել թափթփած թղթերի վրա:

Նստեցի իս տեղը, նրա դիմաց, և, ինքս ճնշված նրա արտասովոր հոգեկան վիճակի տպավորության տակ, սկզբում ոչինչ չկարողացա արտասանել և միայն ապշած գիտում էր նրան: Շատ պարզ էր, որ խորապես դժբախտ էր, և ոչ մի տարակույս չկար ինձ համար, որ նրա գժբախտությունը ծագում էր հենց այն բանից, որի զեմ ես նախազգուշացնում էի նրան ամուսնությունից առաջ: Եվ այդտեղից էլ սկսեցի հարցուփորձ:

— Չլինի՝ գուշակությունս ճիշտ դուրս եկավ,— ասացի, — և այդ ազդիկը վերջ ի վերջո դժբախտացրեց քեզ:

Նա հանկարծ մի վախեցած հայացք գցեց շորս կողմը, վեր կացավ և արագ ու զգույշ քայլերով մոտեցավ դուանք:

— Այս դուրս կարելի է փակել, չէ? — ասաց գրեթե շշնչալով:

— Կարող ես:

Շատ զգուշորեն երեկի նրա համար, որ շրիկոց շհանի, բանալին շուր տվեց փականքի մեջ և եկավ նստեց առաջվա տեղը: Այժմ միայն ուղիղ նայեց աշքերիս և ասաց:

— Սիսալվոմ ես, ես դժբախտ չեմ և չեմ եղել երբեք, և այս րոպեին էլ ինձնից ավելի երջանիկ մարդ չի կարող լինել, եթե... նա կամենա:

— Ո՞վ:

— Կիսա:

— Ի՞նչպես թե...

— Էսիր պատմեմ, — ընդհատեց ինձ Գարեգինը, նորից մի վախեկոտ: Հայացք գցելով շորս կողմը: Հետո գլուխը մոտեցրեց ինձ և հարցրեց շշնչունով ո՞վ է այն պարոնը, որ քեզ մոտ հուր է...

Այդ անակնկալ հարցմունքը և մանավանդ այդ շշնչունը, որ շատ խորհրդագոր կերպով հնչեց ականջիս, կայծակի ազգեցությունը ունեցավ ինձ վրա: Կարծես միենչ այդ վայրկյան նստած էի խոր մթության մեջ, և հանկարծ մի անակնկալ պայծառ լույս շողաց և լուսավորեց շրջապատս: Մի ակնթարթում մտքիս մեջ

եկան շաղկապվեցին իրար հետ երեք անձնավորություն— Ասուն, Թուսյանը և Գարեգինը,— և ինքս իմ մեջ վճռեցի, որ ևս արդեն ամեն բան գիտեմ:

Այս ինքնարուխ պարզամտությունն այնքան անակնկալ էր ինձ համար, որ Գարեգինի հարցմունքին իսկույն պատասխանել չկարողացա: Հետո, երբ անակնկալի առաջին շշնչող տպավորությունն անցավ, ինքս հարց տվի նրան:

— Դու ո՞րտեղից գիտես, թե ինձ մոտ հյուր կա:

— Գիտեմ... Եվ ես քեզ մոտ չեմ, որ գալիս էի, նրա մոտ էի զալիս:

— Ե՞րբ, ի՞նչ ես ասում:

— Այս և անցյալ գիշեր:

— Սպասիր, այն դո՞ւ էիր զանգակս քաշում,— բացագնչեցի ես:

— Ես էի:

— Հետո, ինչո՞ւ չէիր սպասում, որ դուքը բանայի:

— Ինչո՞ւ Ահա թե ինչու:

Ետքի գրպանից հանեց մի ատրճանակ: ցույց տվավ և նորից գրպանը կոխսեց շտապով:

Թեև զրաման գրեթե արդեն բոլորովին պարզ էր ինձ համար, բայց և այնպես զարմանքս այնքան մեծ էր, որ չկարողացա շհարցնել.

— Ինչո՞ւ ես առել գրպանդ:

— Թի սպանեմ:

— Մամ:

— Այն պարոնին, որ քեզ մոտ հյուր է:

— Նա ի՞նչ է արել քեզ:

Գարեգինը հանկարծ վեր կացավ, աթոռն առավ, եկավ նրա տեց ուղղակի կողքիս այնքան մոտիկ, որ մեր ծնկներն ու թերթ քսվում էին իրար, և կցիտուր բառերով, կարծես տենդի մեջ, շշնչաց ուղղակի ականչիս մոտ:

— Այդ պարոնը... Սառային... օրիորդ ժամանակ... Հասկանո՞ւմ ես... ևս ոչինչ չգիտեի, ինքն ասաց...

— Մով:

— Ինքը Սառան... երեկ չէ, մեկէլ օրը... Զգիտեմ որտեղ, հանդիպել էր այդ պարոնին և ասաց, որ քեզ մոտ է... Ես էլ ահա երկու գիշեր է, գալիս եմ զանգդ քաշում, բայց ձայնը որ դիպչում

Ե ականջիս փախչուր եւ սարսափահար, որովհետև ի՞նչ... Ի՞ս... հե մարդ սպանե՞մ... Ե՞ս, որ կյանքումս մի ճանճ անգամ լին սպանած....

— Լավ, էլ ինչո՞ւ եւ ատրճանակը գրպանդ առել և ինչո՞ւ ես գալիս:

— Նա՛ է տվել, նա՛, Սառան, և նա՛ է ստիպում, որ դամ սպանեմ, հասկանո՞ւմ ես: Թե չէ ես ի՞նչ գործ ունեմ ատրճանակի հետ ինչո՞ւ պետք է ամբողյ զիշերներ թափառել փողոցներում հակելագարի պես և վերջը, որ վերադառնամ, նորից վոնդվեմ տանից՝ նոր թափառումներ կատարելու համար:

— Սպասիր,— ասացի ես, հեռացնելով նրան ինձնից, որովհետեւ, շափազանց հուզված. ուղղակի ընկել էր վրաս, և նրա փսխոցն ականջիս մոտ ճանճի անախործ բզզոցի պես քայլայում էր զղերս:— Ես քեզ հարցումներ կտամ, և դու պատասխանից նիր ինձ հանգիստ կերպով, որովհետև քո այդ կցկտուր խոսքերից ես ոչինչ չեմ հասկանում:

Նա ետ քաշվեց և մի քիլ հանգստացավ: Ու ես սկսեցի հարցուփորձ:

— Ամենից առաջ հարցնեմ,— ո՞րտեղ էիք այս հինգ-վեց ամիսը:

— Արտասահման էինք զնացել:

— Ե՞րբ եք վերադարձել:

— Մի շաբաթ շկա:

— Ասում ես՝ օրիորդ ժամանակ հարաբերություն է ունեցել ի՞նձ մոտ հյուր եղող պարոնի հետ: Այդ էիր ուզում ասել, չէ՞ իս ի՞նձ մոտ խոսում:

— Այո:

— Ե՞րբ հայտնեց քեզ այդ բանը:

— Երեք շէ, մեկել օրը: Երբ հանդիպել էր այդ պարոնին:

— Մինչեւ այդ ժամանակ ոչինչ չէ՞ր ասել:

— Այտնին:

— Եզ դու ոչինչ չէի՞ր կասկածում:

— Բնավի:

— Այդքան ժամանակ ծածուկ պահելուց հետո ինչո՞ւ հայտնեց:— Որ վրեժինդիր լինեմ:

— Բայց չէ՞ր մտածում, որ դու կարող չիր վրեժինդիր լինել, ամենից առաջ իրենից, որ քեզ խարել է:

— Ո՞վ, ե՞ս... վրեժինդիր նրանի՞ց... Ուրեմն դու դեռ լավ լին ճանաշում ինձ, ուրեմն դու դեռ չգիտես, թե որքան եմ սիրում նրան...

— Խսկ նա քեզ սիրո՞ւմ է:

— Կարող եմ ասել, որ առանց ինձ մի օր էլ չի ապրի:

— Որ այդպես է, ինչո՞ւ է ուզում քեզ կործանել. չէ՞ որ մարդասպանության համար դու կորչես, խսկ դրանով ինքն էլ կործախտանա, եթե իսկապես այդ աստիճան սիրում է քեզ:

— Այդ բոլորն ասել եմ, կարծում ես՝ չեմ ասել. բայց նա ոչ մի պատճառաբանություն, ոչ մի առարկություն լսել անգամ չի, ուզում: Ամբողջովին վրեժ է կտրել և այդ վրեժը լուծելու համար պատրաստ է ինձ էլ, իրեն էլ, ամեն բան զոհելու: Հիշո՞ւմ ես, քեզ պատմել եմ, նշանած ժամանակ որ Մուշտայիդ էինք գնացել, գետնի վրա ատրճանակ նկարեց և հարցրեց՝ մարդ կարո՞ղ եմ սպանել: Դու մի ասի՝ շարունակ մտածելիս է եղել իր վրեժի մասին: Եզ ես նոր եմ գլխի ընկնում, որ նրա բոլոր տարօրինակությունների պատճառն իր խորտակված կյանքն է եղել:

— Լավ, ինչո՞ւ է ուզում, որ իր վրեժը անպատճառ սպանությամբ լուծվի:

— Որովհետեւ, ասում է, ուրիշ պատիժ շկա այդպիսիների համար. որովհետեւ, ասում է, նա սպանեց ինձ, ինչպես այն աղավնուն, որ իր համար հանգիստ նստած էր ծառի վրա և ոչի վնաս շեր տալիս: Ի՞նչ աղավնի է դա— ոչինչ չեմ հասկանում: Ինձ թվում է, թե սկսել է ցնորվել, և այս մասին՝ որ մտածում եմ, քիլ է մնում ինքս էլ խելագարվեմ: Տե՛ր իմ աստված, ինչո՞վ պիտի վերջանա այս բանը, ինչո՞վ...

Գարեգինը գլուխը բռնեց ձեռքերով և կարճ ժամանակ շըշմածի պես նայում էր մի կետի: Հետո հանկարծ ցնցվեց. ձեռքերը հեռացրեց գլխից և նայեց ինձ պարզապես խելակորույս աշքերպւ:

— Ես քեզ մի ուրիշ, ավելի սարսափելի բան պատմեմ,— ասաց նա ձայնը խիստ ցածրացնելով:— Նա զավակ էլ է ունեցել այդ պարոնից... և ինքն իր ձեռքով խեղդել սպանել է...

— Ի՞նչ ես ասում,— շշնջացի ես բնադրական սոսկումթվ:

— Այո, այո, այս էլ ինքը խոստովանեց:

- Հետու Ի՞նչ է արել սպանված մահուկը։
- Հայրը, աներս, աղջկա նամուսը պարտիկու և հանցանքը ժամկելու համար գիշերով վերցրել, տարել գետն է նետել կամըրդից։

## VIII

Մինչև մանկան սպանությունը Գարեգինի հայտնածը Սառա-  
յի և Թուսյանի հարաբերությունների ժամին ես համարում էի շատ  
սովորական պատմություն, գրեթե առօրյա մի երկույթ, որպիսին  
շատ է պատահում կյանքի մեջ։ Նույնիսկ լուրջ կարեռություն չէի  
տալիս այն բանին, որ Սառան ստիպում էր Գարեգինին սպանելու  
իր պատիվն անարգողին և իրեն լքողին։ այդ բանը համարում էի  
նրա սովորական տարօրինակություններից մեկը։ զղային ուժգին  
հուզմունքի մեջ նա անշուշտ չէր հասկանում, թե որքան անհեթեթ  
բան էր պահանջում իրեն սիրող ամուսնուց, որին անշուշտ շատ  
լավ էր ճանաշում։ Բայց այն հանգամաեքը, որ այդ պատմության  
մեջ խառն եղել է որդեսպանության գետ մի սոսկալի եղեռն, ժի-  
անգամայն կարկամեցրեց ինձ, և ես հարկադրված եղա շատ լըր-  
ջորեն նայելու այս գործին, որովհետեւ այն, ինչ որ սովորական  
պատմություն ու առօրյա երկույթ էի համարում, իսկապես մի  
տրագեղիք է եղել, որի վախճանը կարող էր շատ աղետաբեր լինել  
այն երեք գործող անձերի համար, որոնց ճակատագիրը բերել  
կցորդել էր իրար այդ տրագեղիալի մեջ Եվ որովհետեւ ես ևս բո-  
լորովին կողմնակի մի անձնագորություն— բախտի պատահական  
բիրումավ ընկել էի այդ տրագեղիալի շրջապատույթը, ուզեի շուզեի՝  
պիտի մասնակցեի իմ շեղոք լինելու պարագան արդեն ինքնին  
որոշում էր իմ դերը, որը ոչ այլ ինչ պիտի լիներ, եթե ոչ շան-  
թարգելի դեր գալիք աղետի հանդեպ։ բայց թե ինչ եղանակով պի-  
տի կատարեի ինձ վիճակված այդ դժբարին դերը, դեռևս պարզ  
չէր ինձ համար։ Ուստի, երբ անցավ սոսկալի հայտնության առա-  
շն ցեցող տպագործյունը, շարութակեցի հարցուփորձ։

— Հիմա ի՞նչ ես մտադիր անելու։

— Մտադիր, — գարմացավ Գարեգինը։ — խելք, միտք մնա-  
ցել է գլխում, որ մտադիր լինեմ որևէ բան անձու։ Եվ ի՞նչ  
կարող եմ անել իմ այս դժբախտ թույլ կամքով, իմ այս ողորմելի

անհիշալար, բարի սրտով։ Ուրիշ բան կլիներ, իհարկե, եթե ես էլ  
ուրիշների պես կարող լինեի վառվել, բորբոքվել։ Բայց մեղավո՞ր  
եմ, որ չեմ կարող, օրգանապես անընդունակ եմ։ Ահա այստեղ է  
իմ ամբողջ դժբախտության արմատը։ Եվ բանի՛ անզամ է նա  
երեսովս տվել, որ ես աղամարդ չեմ, կնիկ եմ, փալաս... Եվ դու  
կարծում ես, թե այս երկու օրը ես ապրո՞ւմ եմ, գիտե՞մ ինչ բան  
է հանգիստը, ե՞րբ է լուսանում, երբ մթնում... Ոչինչ չգիտեմ։ Ինձ  
գուրս են շպրտել սովորական և բնական կյանքի սահմաններից, և  
ես գլխիվայր ցած եմ գլորվում, ցած, շարունակ ցած— շգիտեմ  
ուր, բայց միշտ ցած, միշտ ցած, և ինձ թվում է, թե երբեք չախ-  
տի զադարի այս գլորումը, մինչև որ հոգիս փշեմ։ Ես արդեն շշմել  
եմ, հոգիս եկել բուկս է հասել, հազիվ եմ շնչում, որովհետեւ Սա-  
ռան հանգիստ շի տալիս ինձ, շի ուզում երեսս տեսնել, սպա-  
նում է, որ եթե չսպանեմ, կդադարի ինձ սիրելուց, կատի, կարհա-  
մարի, նույնիսկ անձնասպանություն կգործի։

Գարեգինն արմունկները դրեց գրասեղանի վրա և գլուխն  
առավ ձեռքերի մեջ։ Ծնչում էր ծանր ու հատու և այնքան ուժգին,  
որ ուսերը բարձրանում ցածրանում էին երկար տեղ վազած մար-  
դուն նման։ Հետո ձեռքերն ու գլուխը հանկարծ ընկան գրասեղանի  
վրա, մի ծանր զսպված հեծկլտոց բռնեց սենյակը։

Այդ բանն ինձ շատ ազդեց։ Առաջին անգամն էր, որ այդ  
միշտ խանգավառ, միշտ կենսուրախ, միշտ անհոգ երիտասար-  
դին տեսնում էի այնքան զառնորեն լալիս։ Եվ երբեք այնպես չէի  
խոճացել նրան, ինչպես այդ րոպեին, երբ նա նմանում էր բախ-  
տից հալածված ու անօգ ու որբացած մի երեխայի։ Զկարեկցել  
նրան անկարելի էր, և մինչեղու նա զսպված հեծկլտաներից հազիվ  
էր շունչը ետ բերում, ինձ համար կամաց-կամաց պարզվում էր  
այն եղանակը, որպէս թե ընկերական կարեկցությունից և թե  
բախտի բերումով պարտավոր էի զգում ինձ միշամտելու այս  
գործին։

Մրտապնդիչ խռոքերով Գարեգինին հանգստացնելուց հետո  
ասացի։

— Ինձ մոտ եկել ես անշուշտ նրա համար, որ օգնեմ, այն-  
պես չէ։

— Այս, — հազիվ արտասանեց լացակումած ձայնով, — դու  
միայն կարող ես օգնել, որովհետեւ այն պարոն...

— Հա՛վ, Այդ պարոնը ոլ թե միայն իմ տանը, տղիկիսում չի լինի հենց այսօր և թե,— ասացի ես վճռականորեն:

— Ճի՞շտ,— բացազանչեց նա, հանկարծ վրա լթկներով ձեռքերիս այնպիսի մի բուն ուրախությամբ, որ կարծես ինքը չէր մի քիչ առաջ այնպես հուսահատորեն լաց եղողը:

— Այդ կողմից կարող ես ապահով լինել, բայց հարցն այս է, թե բանը դրանով կվերջանա՞ արդյոք:

— Օ՛, գլխավորն ա՛յդ է, գլխավորն ա՛յդ է,— շշնչաց. Գարեգինը եռանդով:— Միայն թե դու այդ անես, միայն թե նա այստեղից հեռանա, մնացածը հեշտ է: Գիտե՞ս ինչ կա, — շարունակեց Գարեգինը ավելի ու ավելի ոգեսրվելով, — ես շգիտեի, թե դու այդքան ազդեցություն ունես այդ պարոնի վրա. բայց որ ասում ես, թե այդ կանես ես լիովին հավատում եմ և այս բոպեին այնպիսի մի թերեւություն եմ զգում, որ կարծես հանկարծ ազատվեցի մի սոսկալի ատամնաշագիք: Իսկ ես գիտե՞ս: Ինչի համար էի զալիս քեզ մոտ. զալիս էի խնդրեմ, որ գաս հանգստացնես Սառային: Եվ այդ էլ որ անես, ոլ թե միայն իմ, այլև նրա փրկիւը կդառնաս:

Եվ դու կարծում ես, թե այդ բանը հարմա՞ր է:

— Ոլ թե հարմար, այլ անհրաժեշտ է: Ես նրա վրա ոլ մի ազդեցություն չունեմ. պարզապես արհամարհում է ինձ, եթե արդեն չի ատում, իսկ քեզ, գիտեմ, հարգում է և չի կարող լսել քեզ: Ես շատ փորձեցի և տեսա, որ առանց կողմնակի ազդեցության անկարելի է նրան հանգստացնել: Իսկ հանգստացնել պետք է, անպատճառ պետք է, որովհետեւ... գիտե՞ս ինչից եմ ես ավելի վախենում. նա հղի է, և այդ հուզումները շատ վատ հետեանք կարող են ունենալ:

Թեև Սառային տեսնելու միտքը առանց Գարեգինի ասելու հղացել էի ես, բայց այդպիսի մի անձնական և ընտանեկան գործի միջամտելն էլ այնքան փափուկ խնդիր էր, որ չէի կարող իսկույն խոսք տալ, մանավանդ երբ հիշողությանս մեջ նորոգում էի Սառայի այնքան անբարեհամբուլը ու անմատչելի բնավորությունը: Այդ պատճառով պատասխանս խուսափողական եղավ:

— Լավ,— ասացի, — այդ մասին կմտածեմ:

— Աչ, խնդրում եմ, մտածել հարկավոր չէ, — վրա բերեց Գարեգինն աղերսագին:— Եվ, անպատճառ եկ, ապաշում եմ, և

որքան շուտ, այնքան լավ: Եկ հենց այսօր, երբ ազատ լինեա, որովհետև ամեն մի բոպեն թանկ է, Պետք է փրկել նրան. ես վախենում եմ, որ հետո ուշ լինի:

Երկար ժամանակ այդպիս թախանձագին ու համառորդն խնդրում էր, չէր ուզում լսել իմ ոլ մի պատճառաբանությունը, թե Սառան կարող էր ինձ շընդունել, կարող էր վիրավորել ինձ և պարզապես վոնդել անկող միջամտությանս համար, այնպես որ վերջ ի վերջո ստիպված եղա զիցել և խոսք տվի, որ այդ երեկո կգնամ:

Նա բաժանվեց ինձնից այնքան ուրախ և հանգստացած, որ կարծես այլես ոլ մի դժբախտություն գոյություն չունի նրա համար աշխարհին երեսին: Եվ հենց այդ միայն բավական էր, որ շղզայի իմ տված խոսքի համար և առաջուց վարձատրված շզգայի ինձ այն անախորժությունների համար, որ ես, լիովին հավատացած էի, պիտի կրեի այդ երեկո Սառայի հետ ունենալիք հանդիպման ժամանակ:

## IX

Աշխատանքս վերջացնելուց հետո առաջին գործս այն եղավ, որ գնացի փնտրելու թույանին, որպիսզի հենց այդ օրն եեթ ճանապարհի թիֆլիսից: Հանդիպեցի ամեն տեղ, ուր ենթադրում էի թե կգտնեմ նրան. գնացի, ի միջի այլոց, Սարումյանի մոտ, որի կնոջ վրա աշք էր բռնել, — ոլ մի տեղ շգտաւ: Իսկ աշնան կարճատե օրն արդեն մթնում էր, և ես վերջ ի վերջո ստիպված եղա որոնումներս դադարեցնել, որպիսզի գնայի Սառայի մոտ:

Չիմացա ինչպիս ճաշեցի, որովհետև ինձ շափաղանց անհանգստացնում և, մինույն ժամանակ, հետաքրքրում էր այն տեսակցությունը, որ պիտի ունենայի Սառայի հետ: Չգիտեի թե ինչ անուն պիտի տայի այդ տեսակցությանը, ինչով պիտի արդարացնեի միջամտությունս, ինչ պիտի ասեի, ինչպիս պիտի «հանգըստացնեի» Սառային, և որքան աշխատեցի պատճառաբանությունների մի նախագիծ կողմել ինձ համար, որպիսզի ըստ այնմ էլ շարժվեի, ոչինչ դուրս չեկավ: Վերջ ի վերջո հիշնցի, որ այդպիսի զեպքերում առհասարակ նախապատրաստումը միանգամայն ավելորդ է հանդիսանում, որովհետև երբեք չի արդարանում, և ամեն

բան պետք է գցել հանգամանքների թե դմունքին ու րոպեի թելա-  
դրանքին:

Այդպես էլ վճռեցի ու զնացի:

Փողոցի դուռը բաց արեց ինքը Գարեգինը, որին դուռն ապա-  
կու միջից տեսա վերևից մարմարի սանդուղքով արագործն իշ-  
նելիս:

— Ծնորհակալ եմ որ եկար. անհամբեր սպասում էի,—  
ասաց կամաց՝ ձեռքս պինդ սեղմելով:— Եկ զնանք: Բայց ոչ,  
սպասիր:

Զեռքս բռնած, պահեց ինձ, մի անհանգիստ հայացք կցեց  
վերև, զեպի սանդուղքի գույսը երրորդ հարկում, և նորից դառ-  
նալով ինձ՝ հարցրեց ավելի կամաց.

— Իսկ այն պարոնին արդեն ճանապարհ դրիր:

— Ծատ ման եկա, շգտաւ Բայց սովորաբար ինձ մոտ է գի-  
շերում. այս երեկո որ վաղ գա, կճանապարհեմ հենց այս գիշեր-  
վա զնացքով, հակառակ դեմքում բանը կմնա վաղվան:

— Այդ վնաս չունի, միայն թե աղաշում եմ. Սառային ասա,  
որ այլևս այստեղ չէ, զնացել է, որովհետև վախենում եմ, որ այս  
գիշեր էլ ստիպի, որ գամ սպանեմ: Եվ բացի դրանից, որ իմա-  
նա, թե նա այլևս այստեղ չէ, կհանգստանա:

— Դու կարծո՞ւմ ես:

— Անպատճառ:

Սկսեցինք բարձրանալ սանդուղքով: Բայց այս անգամ, իմ  
հերթին, ես կանգնեցրի նրան:

— Չլինի՞ թե Սառային հայտնել ես մեր այսօրվա տեսակ-  
ցությունը, — ասացի:

— Ո՛չ, ո՛չ, ի՞նչ ես ասում, — շշնջաց Գարեգինը, ըստ երե-  
վույթին, զարմացած, որ ես կարող էի այդպիսի կասկած տա-  
նել: — Այդ աստիճան հո դեռ չեմ կորցրել խելքս: Նա ինձ տեսնել  
էլ չի ուզում. փակվել է իր սենյակում և շի ուզում դուրս գալ:

Այս անգամ ես արդեն վճռականապես կանգ առա:

— Լավ, որ այդպես է, էլ ինչո՞ւ եմ եկել, — ասացի:

— Ո՛չ, ո՛չ, քեզ կը նդունի, կը նդունի: Այդ ի՞նձ է, որ շի ուզում  
տեսնել: Քեզ կը նդունի հենց միայն այն պատճառավ, որ այն պա-  
րանը քեզ մոտ հյուր է: Եկ, եկ զնանք:

Ու, ձեռքս բաց շբողնելով, գրեթե զոռավ տարավ ինձ վերև  
Մատնք հախասենյակը, որը լուսավորված էր էլեկտրական

ձքագով, Միեղբեռ ես հանում էի վերարկուս, Գարեգինը շատ  
զգուշորեն բաց արագ մութ հյուրասենյակի դուռը, ներս մտավ,  
դարձրեց էլեկտրական ջահի կոճակը, որից հյուրասենյակը հան-  
կարծ լուսավորվեց կապտավուն պայծառ լույսով, նույն զգուշու-  
թյամբ դուրս եկավ և դարձավ ինձ շշնչալով:

— Դու մտիր, իսկ ես իսկուց աղախնի բերնով կապրո-  
պրեմ Սառային, որ եկել ես իրեն տեսնելու:

— Իսկ դո՞ւ:

— Իսկ ես չեմ երեա, որպեսզի չգրգռվի, և հանգիստ խո-  
սեք:

Եվ Գարեգինը զգուց ու արագ շքացավ մի ուրիշ դռան ետևը,  
որ նույն նախասենյակից տանում էր զեպի ներքին սենյակները:

Մտա հյուրասենյակ և նստեցի: Այստեղ, բացի մուտքի և զե-  
պի ինձ ծանոթ պատշգամբը տանող դռներից, կար ուրիշ երկու  
դուռ: Փոխեփոխ նայում էր մերթ այս, մերթ այն դռանը, սրտին  
մեջ զգալով մի տարօրինակ վախ և րոպե առ րոպե սպասելով, թե  
ահա ո՞րտեղ որ է՝ կմտնի Սառան իր անհամբույր համար հա-  
յացքը տարակուսորեն աշքերիս հառած: Ու նոր զգացի, թե որքան  
մեծ անմտություն էր գործել հանձն առնելով մի առաքելություն,  
որ մի կատարյալ անհայտություն լինելով հանդերձ հղի էր ինք-  
նասիրության համար շատ անխարժություններով, և որի տակ  
այժմ ավելի, քան մինչև գալս, զգում էր թե պիտի ճխլվեմ:

Սակայն մի հանգամանք, որի մասին մինչեւ այժմ չէի մտա-  
ծել, հանկարծ քաջություն տվեց ինձ, և իմ այցը ոչ միայն ան-  
մտություն չհամարեցի, այլևս անհրաժեշտ կարիք նկատեցի նույն  
իմ ինքնասիրության, իմ բարի անվան համար:

Այդ հանգամանքը հետեւյալն էր:

Սառան Փույամանից իմանալով, որ նա ինձ մոտ է իջևա-  
նած, անշուշտ կարծում է, որ ինձ հայտնի է եղել նրա սրիկա-  
յական արարքը, և ես, այնուամենայնիվ, տեղ եմ տվել նրան իմ  
տան մեջ, ես, որ իր խաղեղրայր եմ և իր ամուսնու մտերիմ ըն-  
կերը: Այս պարագայում, պարզ է, թե որքան ես վարեկարեկված  
պիտի լինեմ նրա աշքում, և որքան խոր տակելությամբ պիտի հա-  
մակված լինի նա զեպի ինձը Այժմ ես պիտի հասկացնեմ և համո-  
զեմ նրան, որ Թույանը, նախ, հակառակ իմ ցանկության է եկել  
հյուր նստել տանս և երկրորդ, ամենագլխավորն է, ես միանգա-  
հյուր նստել տանս և երկրորդ, ամենագլխավորն է, ես միանգա-

մայն անտեղյակ եմ եղել, որ նրա սրիկայության զոհը ինքը Սառան է եղել:

Այժմ շատ ցավեցի, որ իզուր Գարեգինը ծածկել էր Սառայից մեր այսօրվա տեսակցությունը. Եթե այդ բանը պատմած լիներ կնոջը, Սառան անշուշտ իմացած կլիներ, որ իր անցյալը, հետեւ վարար և իր վերաբերմամբ Թուսյանի գործած սրիկայությունն ինձ իսկապես անհայտ է եղել:

Մինչև ես այս մտորումների մեջ էի և մտքում խոսքեր էի սրոնում Սառայի առջև ինքս ինձ արդարացնելու համար, տեսնեմ դռներից մեկը բացվեց, և դուրս եկավ Սառան ուսերին մի հաստ շալ գցած:

Մտավ, դուրս ետ դրեց. նախապես շրջազգեստի հտեւի փեշը քաշելով դեպի ինքը, որ դռան տակ շմնա, և նայեց ինձ մի շափազանց սառը հայացքով, որի մեջ կատարելապես արդարացած տեսա իմ բոլոր ամենավատ գուշակությունները և նախազգացումները:

Եվ այդ հայացքը բավական էր, որ չհամարձակվեի մոտենալ նրան. միայն մեքենայաբար վեր կացա և բարեկցի:

Զընդունեց բարես և շարունակում էր լուռ կանգնած մուալ դռան մոտ՝ իր սպանիլ սառն հայացքը դեմքին սեեռած:

Ու, ինչքան էլ որ շփոթված էի, շկարողացա չնկատել մի ահագին փոփոխություն, որ կատարվել էր նրա արտաքինի մեջ: Ամուսնական կյանքը, թե վերջին օրերի ջղային հուզումները միանգամայն ջնջել էին նրա նախկին գեղեցկությունը: Առանց այն էլ խոշոր աշքերը մեծացել էին անբնականորեն, շրթունքները կապտել ու հաստացել էին, գեմքը գունատ էր, նիհար և այնքան հիգանդոտ, որ կարծես անկողնից էր վեր կացել:

Երկար ժամանակ նայում էր ինձ իր ատելությամբ և սառն հայացքով, հետո, հանկարծ զնցվեց, արագորեն նստեց մոտը գտնված աթոռի վրա, փորը բռնեց ձեռքերով, կուչ եկավ ու բարացավ՝ դեմքը ծամածոված ֆիզիքական մի սուր ցավի արտահայտությամբ:

Նոր հիշեցի, որ Գարեգինն ասել էր, թե հղի է: Եվ կարեկցության ու հարգանքի մի խոր զգացում ակամա համակեց ինձ: Մինույն ժամանակ երեք այնպես, ինչպես այդ րոպեին, պարզուցի գիտակցել այն անխիղճ ցածությունը, որի շնորհիվ:

ըստ երեւլիթին, հավիտենապես խորտակվել էր այդ դժբախտ աղջկա կյանքը:

Դրությունս շափազանց անհարմար էր Մնացել էի տեղումս կաշկանդված, չիմանալով ինչ անեմ, ինչ ասեմ:

Իսկ Սառան, շրթունքները պինդ սեղմած իրար, ըստ երեւլիթին զսպելով ցավի ճիշերը, շարունակում էր մի խուզ նվզոցվ կուզ ու հուզ գալ, երբեմն-երբեմն բռնելով մեջքը, մինչև որ կամաց կամաց հանգստացավ, ետ ընկավ աթոռի մեջքին, ձեռքերը թուլացած գցեց ներքեւ, աշքերը փակեց և խոր շունչ բաշեց թեթևացած: Դիմքն այժմ ավելի գունատ էր, բան առաջ, և այնքան խաղաղ, որ թվում էր թե չի շնչում: Այսուհետեւ, երբ աշքերը բաց արագ և նայեց ինձ, ապշած մնացի, թե ուր էր չքացել այն անհաշտ ատելությունը, որի պարզորոշ արտահայտությունը տեսա մի քիչ առաջ նրա սպանիլ սառն հայացքի մեջ: Այժմ նայում էր ինձ և կարծես չէր տեսնում. նրա ամբողջ ներքին աշխարհը եկել կենտրոնացել էր այդ զարմանալի արտահայտիլ աշքերի մեջ, և ես կարծես խոշորացուցի մեջ տեսնում էի այդ աշխարհը՝ ի հոգեկան այնպիսի տառապանքով, որը դարմանելու համար թվում էր թե ոչ մի սպեղանի շկա:

Ու ինքս, իմ հերթին, նայում էի նրան արտասվելու շափացված և անհունապես փափագելով օգնել նրան, ինչով որ կարող էի, նրա այդ տառապանքը գեթ փոքր ինչ մեղմելու համար:

## X

— Ներեցեք, տիկին, կարծեմ շատ անհարմար ժամանակ եմ եկել, — ասացի վերջապես, լուռ դիտողի անախորժ դրությունից դուրս գալու համար: — Որ գիտենայի: Թե դուք հիվանդ եք...

— Ոչ, ոչ, — ընդհատեց ինձ Սառան թույլ ձայնով, ըստ երեւլիթին զեռնե ֆիզիքական ցավի տպավորության տակ ճընշված: — Ես ինքս ուզում էի ձեզ տեսնել, և լավ է, որ եկել եք: Ինդեմ նստեցեք:

Ծալն ուղղեց ուսերի վրա, ձեռքերը, ըստ երեւլիթին մրսելով, փաթաթեց ծայրերի մեջ, դրեց կրծքին, գլուխը կախեց և երբ ես նստեցի, ասաց նույն թույլ ձայնով:

— Գիտեմ ինչու եք եկել, և ես էլ հենց նույն բանի համար էի ուզում ձեզ տեսնել: Խոսեցեք, ես ձեզ լսում եմ:

— Դուք ինձ թո՞ւզը եք տալիս, տիկին:

Սառան մի դառն բմծիծաղով թոթվեց ցւսերը:

— Մի կնոջ ամենանվիրական սրբությունը անարգված և կոխկրտված է հրապարակի վրա, իբրև ցինիկության մի մեծ հաղթանակ, և այդ կինն այժմ խոսքերից պիտի վախճնա, — արտասանեց նա մի տեսակ շարագուշակ հանգստությամբ, նայելով ուղղակի աշքերիս: — Կարող եք ապահով լինել միանգամայն, ես ձեզ կլսեմ ամենայն օառնասրտությամբ:

— Ենթեցեք, տիկին, ես ձեզ չեմ հասկանում, — ասացի պարզապես ապշած նրա խոսքերի վրա: — Մի՞թե դուք կարծում եք, որ ես եկել եմ...

— Ենդրեմ, առանց առաջաբանի, — ընդհատեց ինձ Սառան խստորեն: — Թե ինչ եմ կարծում ես, այդ թողեք ես գիտենամ, իսկ դուք ասացեք ուղղակի ձեր ասելիքը:

Տեսա, որ արդեն զղայնանում է և, եթե իսկույն գործի շանցնեի, այլևս անկարող պիտի լինեի բան հասկացնել:

— Սպասեցեք, ամուսնուս կանչեմ, — հանկարծ վրա բերեց Սառան և, արագորեն վեր կենալով, դիմեց դեպի այն դուռը, որ տեղից մտավ:

— Ոչ, ոչ, — ակամա բացանշեցի ես նրա ետեմից: Կանգ առավ և զարմացած գարձավ ինձ.

— Ինչպես:

— Նա չպետք է ներկա լինի մեր խոսակցությանը:

— Ինչո՞ւ:

Շփոթվեցի, շիմացա ինչ պատասխանեմ, որովհետեւ չգիտեի իսկապես, թե ինչու Գարեգինը ներկա չպիտի լիներ մեր խոսակցությանը, բայց այստեղ հանկարծ օգնության հասավ ինձ րոպեի բելադրանքը, և ես պատասխանեցի.

— Որովհետեւ այն, ինչ որ պիտի ասեմ և ինչի համար որ եկել եմ ձեզ մոտ, նրան է վերաբերում:

— Եվ ոչ ի՞նձ:

— Ոչ, նրան, միմիայն նրան:

Մի կարճ ժամանակ Սառան զարմացած շարունակում էր նայել ինձ, հետո ուսերը թոթվեց տարակուսանքով և նորից նստեց:

— Հատ բարի, — ասաց նորից թախծալի կերպարանք առնելով և փաթաթվելով շալի մեջ: — Խոսեցեք, ես ձեզ լսում եմ:

Այժմ արդեն, ըստեի թելադրանքի տակ, ինձ համար միանգամայն պարզ էր, թե ինչ պիտի ասեի, ինչպես պիտի սկսեի և ինչպես վերջացնեի: Ու սկսեցի, աշխատելով կարելույն շափ խուսափել նրա սուր հայացքից, որը պարզապես շփոթեցնում էր ինձ:

— Դուք գիտեք, տիկին, որ ես ու Գարեգինը շատ մոտիկ բարեկամներ ենք իրարև ես նրան ճանաշում եմ դեռևս պատանեկությունից: Դուք էլ, անշուշտ, պետք է որ այս հինգ-վեց ամսում շատ ճանաշած լինեք նրան: Խոսք նրա առասպելական բարության մասին չէ, իմանալու համար բնավ կարիք էլ չկա նրա հետ կենակցելու: Խոսք նրա բնավորության մի քանի ուրիշ գծերի մասին է, որոնք, անշուշտ, խուսափած շպիտի լինեն ձեր դիտողությունից: Ինձ հայտնի են նրա կյանքից մի շարք շատ տարօրինակ վարմունքներ, որոնք երբեմն առիթ են տվել ինձ լրջորեն կասկածելու: Նրա... Հոգեկան վիճակի մասին: Ընդումին պետք է ասեմ, — եթե արդեն հայտնի չէ ձեզ, որ նրա մայրը մեռավ հոգեկան հիվանդների ապաստարանում, իսկ հայրը, թեև ոչ պարզապես խելագար, բայց անորմալ հակումների տեր մարդ էր: Այսպիսի ժառանգական պայմաններում ես միանգամայն հասկանալի եմ համարում Գարեգինի տարօրինակությունները. նա, անշուշտ, շատ բան է ժառանգել իր հիվանդուս ծնողներից: Բայց ես երբեք նրան հոգեկան այնպիսի աննորմալ վիճակի մեջ չէի տեսել, ինչ որ այսօր: Չեր ճանապարհորդությունից վերադառնալուց հետո այսօր առաջին անգամն էր, որ տեսնում էի նրան: Եկավ ինձ մոռշափացանց հոգված վիճակի մեջ, մի ատրճանակ գրանցում: Ասաց, թե՝ ատրճանակը դուք եք տվել և պատվիրել, որ գա սպանի ինձ մոտ հյուր եղող մի երիտասարդի, որին ամեննեին չի ճանաչում, որի հետ ոչ մի գործ չի ունեցել և որի երեսը նույնիսկ չէ տեսել: Երբ սկսեցի հարց ու փորձ անել, այնպիսի բաներ սկսեց պատմել, որոնք այլևս ոչ մի կասկած չըողին իմ մեջ, որ նրա հոգեկան վիճակը միանգամայն խանգարված է:

— Ի՞նչ բաներ, — հարցրեց Սառան, շարունակելով շեշտակի նայել աշքերիս:

— Ինչպես թույլ կտամ ինձ, տիկին, կրկնելու ձեր առաջ այն, ինչ որ պատմում էր մի...

— Ոչ, խնդրում եմ, առանց որևէ նրբանկատության, — ընդհատեց ինձ Սառան խստորեն: — Ես ձեզ թույլ եմ տալիքիս:

— Իսկ ես հատկապես խնդրում եմ, տիկին, ազատեցեք ինձ

այդ հարկադրանքից, որը շափազանց ծանր է ինձ համար,— ուղղակի աղերսեցի ես պարզապես վախեցած նրա ձայնի մեջ լսված ինչոր շարագուշակ շեշտից!— Եթե այժմ ես եկել եմ ձեզ մոտ, եկել եմ հատկապես այն նպատակով, որ ձեր լուրջ ուշադրությունը հրավիրեմ Գարեգինի գրության վրա: Թերևս կարելի լինի նրան փրկել, և ես պատրաստ եմ այդ բանում ամեն կերպ օգնելու ձեզ! Լոեցի և սպասում էի:

Լուս էր և Սառան կ այդ լուրջան ընթացքում, որից լավ բան չէի գուշակում, իր խուզարկու աշքերով շարունակ կարծես պյուր-պատում էր իմ մեջ այն, ինչ որ, — զգում և տեսնում էր անշուշտ, — աշխատում էի ծածկել նրանից:

— Ես շատ շնորհակալ եմ, պարոն, որ գուք այդքան հոգատար եք ձեր բարեկամի և իմ ամուսնու համար, — վերջապես խզեց նա իր շարագուշակ լուրջունը մի տեսակ շեշտած քաղաքավարի-հեգնական տոնով, որով, ըստ երկույթին, ուզում էր հասկացրած լինել ինձ, թե իմ պերճախոսության հետին իմաստը շատ լավ հասկանում է ինքը, և իգուր եմ ես այդքան միամիտ կարծում իրեն: — Բայց ձեզ հանգստացնելու համար կարող եմ ասել, որ գուք միանգամայն սխալվել եք ձեր եզրակացության մեջ. Գարեգինը շատ նորմալ վիճակի տեր մարդ է գորտի արյունով, բութ զգացումներով, անձնական պատվասիրության մասին ոչ հասկացողություն լունեցող և անդադար իր սեփական կաշվի մասին մտածող: Եվ եթե այսօր նա ներկայացել է ձեզ անսովոր հուզված դրության մեջ, այդ պետք է վերագրել այն բանին միայն, որ արտաքո կարգի մի հանգամանք, հակառակ իր կամքին ու հանկության, ստիպողաբար եկել է վրդովելու նրա շատ նորմալ հոգեկան վիճակը, նրա ճահճի պես անդորր կյանքը, որը ամեն բանից թանկ է նրա համար: Բավական է, որ ես մի փաղաքշական խոնք ասեմ, և նա ուրախությունից պար կգա, նույնիսկ կգա համբուրվելու ձեռ հյուրասիրությունը վայելող պարոնի հետ, առ ոչինչ համարելով, որ այդ պարոնն անլուր անարգանք է հասցրել իր կնոջը: Ահա այսշափ հոգեկան նորմալ վիճակի տեր մարդ է ձեր պատվական ընկերը և իմ ամուսինը, պարոն: Ուրեմն ոչ իմ կողմից մի առանձին ուշադրության, ոչ էլ ձեր կողմից այդ բանում ինձ օգնելու կարիք չկա ամեննեին: Խսկ որպեսնի գուք միանգամայն ապահով ու հանգիստ լինեք նրա համար, ես ահա ի՞մ բերանով հաստատում եմ, որ այն բոլորը, ինչ որ պատմել է նա ձեզ այսօր, զուտ

իրողություն է: Ատրճանակն էլ, այո՛, ես եմ ովել նրան և ե՞ս իմ ստիպում, որ զա և սպանի չեր հյուրասիրությունը չայելող պարունին: Հիմա՝ ինչ կասեթ պարոն:

Պատասխան զգտա տաշու: Մնացել էի կարկամած և դարմաշած այդ համարձակ խոստովանությունից, նրա անշփոթ, մեթոդիկ դատողությունից, որ կարծես շարահարել էր առաջուց ու սերտել, և մանավանդ նրա անողոք հայցքից, որի մեջ, ինչպես և նրա ամբողջ խոսակցության եղանակի մեջ, անվախ մարտակոչի շեշտեր էի զգում շարունակ: — Կարծես ես եկել էի ոչ թե իրեն զավակից բարեկամ այլ իբրև մի անհաշտ ախոյան, որի հետ պատրաստ էր մահացու մենամարտի բռնվելու:

— Ասացե՞ք, հիմա՝ ինչ կարող եք ասել: — Կրկնեց անողոք կերպով:

— Ես... ի՞նչ կարող եմ ասել, — թոթովեցի ես. պարզապես շփոթված նրա համար աղնդումից և խկապես շիմանալով, թե ինչ կարող եմ ասել:

Կամաց վեր կացավ, շեշտակի նայելով աշքերիս:

— Ինչպէս թե ինչ կարող եք ասել, — ասաց կարծես ծայրահեղորեն ապշտու: — Ես ձեզ այսպիսի բան եմ սում, և գուք ոչինչ չունե՞ք աւելու: Ես իմ ամուսնուն, որ ձեր ամենամոտիկ ընկերն է, ուղարկում եմ դեպի ոճքագործություն, զեպի մարդասպանություն, որից նա կարող է կորչել, և գուք ոչինչ չունե՞ք ասելու, և գուք այդքան անտարբե՞ր եք: Այդ անկարելի է: Դուք պե՞տք է որ բան ունենաք ասելու:

Արդեն տեսա, որ այլևս անկարելի էր խուսափել բուն խընդրից, զեպի որք համառորեն մզում էր ինձ ինքը Սառան: Ու, բռնի կերպով տիրապետելով ինձ և մի քիչ վիրավորված զգալով ինքնասիրությունս նրա վերջին խոսքերից, նկատեցի այլես առանց շփոթվելու:

— Տիկին, իղուր եք կարծում, թե ես անտարբեր եմ: Եվ եթե ոչինչ չեմ ասում, այդ միայն այն պատճառով, որ այս բոլորն ինձ հաշխազանց տարօրինակ է թվում, և ես պարզապես շեմ հասկանում ձեզ:

— Ահա՝ վերջապես... ես ձեզ բռնեցի՛: — աղաղակեց Սառան հաղթականորեն, և այդ աղաղակը կարծես մի խցան էր, որ հանկարծ գուրս պրծնելով՝ ազատություն տվավ նրան դուրս ժայթքեց-նելու իր հոգու խորքից այն բռլոր, որ տարիների ընթաց-

քում կուտակվել էր այնտեղի — Տարօրինակ՝ ասում եք, ինձ չեթ հասկանում՝ ասում եք ևսկ եր ամոթի կարմիրն երեսիս, վիրավորանքի թույնը կրծքիս, տանջանքի կափիծ հոգու մեջ, ռարոյապես լքված ու սմբած՝ կծկվեի, լոեի և տերեկի պես դողայի սմեն մի կասկածու հայացքի առջև, — այն ժամանակ այս տարօրինակ չէր թվածեզ, այն ժամանակ կհասկանայիք ինձ, այն ժամանակ այս շատ ժնական կլիներ ձեզ համար, այնպես չէ՝ քանի որ այդպես եք սովոր, քանի որ այդպես են անում սովորաբար ինձ պես անպատվածները, ինձ պես խարվածները, ինձ պես լքվածները, թայց քանի որ ես ուրիշ հազարների պես չեմ կծկվել, չեմ լոել, ամեն բան ինքս եմ հրապարակ հանել, փոխանակ ժամկելու, քանի որ համարձակ, անվախ ինքս եմ դուրս եկել ցույց տալու աշխարհին անպատվությունս, կսկիծս, տանջանքներս և վրեժ եմ պահանջում բողոքող հոգու ամբողջ թափով, — այս բոլորը շատ տարօրինակ է թվում ձեզ, և դուք չեք հասկանում ինձ, որովհետեւ, իսկապես, որ, այս տարօրինակի է ձեր հասկացողությամբ, որովհետեւ այսպես չեն անում սովորաբար, որովհետեւ այսպես չպետք է անեն, այնպես չէ՝ որովհետեւ դա ամեր է, սովորական մորալից դուրս մի բան է, այնպես չէ, պարոն:

— Ես բողոքում եմ ձեր այդ խոսքերի գեմ, տիկին, — նկատեցի ես եռանդով! — Դուք այնպիսի բացատրություն տվիք իմ խոսքերին, որ ես մտրովս անգամ չեմ անցկացրել, Եթե դուք բողոքում եք սովորական մորալի դեմ, ապա ուրեմն պետք է երկու ձեռքով կառչեք ձեր ամուսնուն, որովհետեւ ահա՝ իսկապես մի մարդ, որ բարձր է կանգնած սովորական մորալից հանուն իսկական սիրու Եթե ասացի որ չեմ հասկանում ձեզ, ասացի այն իմաստով միայն, որ Գարեգինը չէ որ սիրում է ձեզ և սիրում է այն աստիճան, որ պատրաստ է ամեն բան մոռանելու, աժեռք-բան ներելու:

— Ներելո՞ւ... ո՞ւմ, ի՞նչ, — արագ հարցրեց Սառան:

— Հենց ձեզ, — անզգուշաբար և որովհետեւ ժամանմք էլ գըրգըրված էի նրա ինձ վրա գործած հարձակումներից՝ դուրս թռավ բերնիցս:

Անզգուշաբար եմ ասում, որովհետեւ այն, ինչ որ ծագեց իմ այդ խոսքերից, ես երբեք չեմ կարող ներել ինձ։

Սառան ցնցվեց, կարծես օծից խայթված, և կարճ ժամանակ նայում էր ինձ ծայր աստիճան ապշած, հետո գլուխը հպարտու

րեն ետ գցեց, միշտ սկեռած պահելով ինձ վրա իր խոշոր աշքերը, որոնք կամաց-կամաց սկսեցին լցվել մի կատաղի ցասումով!

— Այդպես հա՛, — ձգեց նաւ: — Ներե՞լ... ի՞նձ... ի՞նձ... Այդ լա՛վ է, այդ հիանալի՛ է, այդ սքանչելի՛ է, այդ անման է... Ուրեմն ի՞նչ. ես նրան դատավոր եմ հրավիրել իմ գիտին: Ուրեմն նա, որ իմ ամուսինն է, և դատավո՞րն է իմ: Ուրեմն ես կարող էի և հանցավո՞ր նկատվել իմ ամուսնու, իմ տիրոջ կողմից: Ուրեմն, Եթե նա պատրաստ է ինձ ներելու, կարող է և իրավունք ունի պատժելո՞ւ, որովհետեւ չէ՝ որ ներում կամ պատժում են միայն հանցավորներին: Այդ լա՛վ դատողություն է, այդ հրաշալի՛ դատողություն է, եթ դուք համարձակվում եք այդ ասել ինձ, ի՞նձ, որ ոտից գլուխ անիրավության մի զոհ եմ և շուրջս համակ հանցավորներ եմ տեսնում: Ես հանցավո՞ր, ե՞ս և ոչ այն սրիկան, որ խորտակեց իմ ժատադ կյանքը, և ոչ դուք, այո՛, զո՞ւք, պարոն, որ օթևան եք տվել նրան ձեր հարկի տակ, և ոչ այն հասարակությունը, որ հանդուրժում է իր մեջ այդպիսի սրիկանների գոյությունը: Ես հանցավո՞ր, որովհետեւ աշխարհիս վրա, մարդկանց վրա մաքուր, պայծառ հայացք եմ ունեցել: Հանցավո՞ր, որովհետեւ կուսական անփորձությանս մեջ իմ անբիծ, անարատ սիրու հավատացել եմ մի մարդու, որ անխիղն կերպով խարեց ինձ, գործածեց սպիտակ ձեռնոցի պես և կեղտոտելուց հետո զեն շպրտեց իբրև այլևս անպետք մի իր, որպեսզի տարիներ անցնելուց հետո, երբ ես հազիվհազ հոգու անդորրություն էի ձեռք բերել, նորից գա ցինիկաբար անարգելու իմ կանացի առաքինությունը, պղծելու իմ ընտանեկան սրբությունը, ծաղրելու իմ մարդկային արժանապատվությունը, որպես թե ոչինչ չի պատահել, որպես թե ես էլ նույն տեսակ շուն եմ, ինչպես և ինքը... Օ՛, այս ի՞նչ անիրավ աշխարհ է, ի՞նչ անիրավ... Այս ի՞նչ անտարբերություն և անարդարություն է, որ տեսնում եմ շուրջս... Ո՞ր մեղքիս համար է, որ գցել են ինձ այսպես մենակ, անօգնական...

Վերջին խոսքերի հետ նրա մինչ այդ անզուսպ ցասումով վառվող աշքերը հանկարծ լցվեցին անզորության առատ արտասուբներով, նա ընկավ աթոռի վրա, զեմքը ծածկեց ձեռքերով, և մի խելագար հեկեկանք սկսեց վեր ու վար նեաել նրա մարմինը ջղային ուժգին ցնցումներով:

Սկզբում նրա կատաղի ցասումը, որ անշուշտ հետևանք էր իմ

անգույց խոսքերի, և ապս այդ հուսահատական հեկեկանքը, որ համակեց ինձ անհուն կարեցությամբ, այլ աստիճան ազդել էին ինձ որ ես կատարելապես սառեւ կարկամել էի շիմանալով ինչ ասեմ, ինչ անեմ, որ ուղղես սխալմունքս և հանգստացնեմ նրան։

Բարեբախտաբար այդ միջոցին ներւ վազեցին վախեցած մի կողմից Գարեգինը, մյուս կողմից աղախինը, բայց Սառան նրանց տեսնելուն պես վեր թռավ, ոտք կատաղի թափով խիեց հատակին և ծկլթաց։

— Կորե՞ք... կորե՞ք ամենքդ էլ... ո՛չ ոքի շտեսնեմ... անխիղնե՞ր, անսատվածնե՞ր...

Ու նորից ընկնելով աթոռի վրա, շարունակեց իր խելագար հեկեկանքը ավելի ուժին ցնցումներով։

Ինձ՝ ուրիշ բան չէր մնում, եթե՛ ոչ անմիջապես հեռանալ։

Ու դուրս եկա հոգեկան այնպիսի մի ծանր ճնշման տակ, որպիսին չէի զգացել կյանքում։ Կանխապես արդեն զգում էի, որ ակամայից մի մեծ գժբախտության պատճառ էի դարձել, և այդ գիտակցությունը շիկացած երկաթի պես շանթում էր ուղեղու։

## XI

Այդ երեկո պարապելու ոչ մի տրամադրություն չունեի, ուստի ինքս ինձ մի քիչ ցրելու համար ճանապարհին մտա թատրոն։ Բայց երկար դիմանալ չկարողացա և, հազիվհազ մինչեւ առաջին գործողության վերջը մնալուց հետո, վեր կացա, որ տուն զնամ հաշիվ տալու ինձ այդ օրվա տպավորություններիս մասին, որոնք քանի զնում՝ այնքան ավելի ու ավելի տիրապետում էին ինձ։

Դուրս գալով դահլիճից, քայլերս ուղղեցի դեպի հանդերձասրահը, տեսնեմ ֆոյեում խոնվող հասարակության մեջ դեմս ելավ։ Թուսյանը՝ երկու տիկնոց հետ, որոնք թեանցուկ բարձրածալն ծիծաղում էին նրա մի ինչ-որ, ըստ երևույթին, շատ զվարճալի, պատմության վրա։ Մեկը տիկին Սարումյանն էր՝ բարձրահասակ ու հաստիկ, կրկնակի կղակով և գեղձան մազերի մեջ հուրճատին տվող ծամկալներով։ Մյուսին չէի ճանաշում։ Երկուսն էլ պանզած, քսված և չափաղանց ուրախ տրամադրության մեջ Տիկին Սարումյանի հետ սովորական հարցութարեր փոխանակելուց և մյուս տիկնոց հետ ժանոթանալուց հետո ասացի։

— Կներե՞ք, որ ձեր հետաքրքրական կավալերին մի քանի բոպեռվ անջատեմ ձեզնից։

— Տարեք թեկուզ բոլորովին, — բացագանչեց տիկին Սարմանը բրդալուկ։ — ապանեց, այնքան ծիծաղեցրեց։

Առա Թուսյանի թեր և ի կողմ տարա։

— Այսօր քո ետևից շատ եմ ման եկել, — ասացի։ Հիմա տուն եմ գնում. դու էլ որ գաս, շատ լավ կանես։ Իկ միասին գնանք։

— Այս բոպեի՞ն։

— Հենց այս բոպեին։

— Ի՞նչ է պատահել որ։

— Մի շատ կարեռ բան։

— Հեռագիր Հռ շկա՞մ մեր տանից։

— Զէ, բայց կա այնպիսի մի բան, որի համար դու պետք է զնեց այս գիշեր հեռանաս այստեղից։

Թուսյանը կարճ ժամանակ նայում էր ինձ զարմացած։ Տեսնում էր, որ շատ լուրջ եմ խոսում, և նրա գեմքն էլ լուրջ ու մտառու արտահայտություն ստացավ։

— Դե, էլ ի՞նչ ես երկարացնում, ասա ու պրծի, էլի։ — բացագանչեց անհամբեր։

— Եկ զնանք, կասեմ. այստեղ հարմար չէ, ժամանակ էլ չկա. այնպիս անենք, որ գնացքին հասնես։

Թուսյանը շարունակում էր նայել ինձ զարմացած և, ըստ երեսույթին, մի քիչ էլ վախեցած, հետո ուսերը թոթվեց տարակուսանքով և ասաց։

— Լավ, դու զնա հազնվիր, ես էլ իսկուն գալիս եմ։

Ու վագեց երկու տիկինների ետևից, որոնք կորել էին խըռ-նըզող հասարակության մեջ։

Հանդերձասրահում վաղուց հազնվել և սպասում էի մուտքի դրան մոտ, երբ վերջապես երկաց Թուսյանը։ Ծտապով հազնվեց և միասին դուրս եկանք։

— Զգիտեմ՝ իմ բախտն է թարսվել, թե Սարումյանի բախտըն է բանում, — ասաց մի ծխախոտ-վառելով, — հազիվհազ հույսնեի այս գիշեր բանը դրսելու, և թարսի պես եկար մեջտեղ ցցվեցիր։ Դե ասա տեսնեմ։

— Մի քիչ շուտ-շուտ արի, որովհետեւ հիմա իննից անց է. և հաշիվ լի կարողանաս պատրաստվել, որ գնացքին հասնես, — ասացի և քայլերս տրագացրի։

— Հանաք չես անում, — հարցրեց Թուստանը, նույնպես արագացնելով՝ քայլեց:

— Այ հիմա կտեսնեմ՝ հանաք եմ անում, թե ոչ կարուի Դու գիտե՞ս, որ քո պատմվածքի հերոսուհին իմ ամենալավ բարեկամի կինն է:

Թուսյանը հանկարծակի կանգ առավ:

— Ինչպե՞ս թե...

Կանգ առա և ես ու նայեցի նրան: Փողոցի էեկտրական լուսավորությունը հնարավորություն էր տալիս ինձ տեսնելու նրա դիմագծերի փոփոխությունները: Նա նայում էր ինձ ծայրահեղորեն ապշած իմ անակնակ հայտնությունից:

— Հետո, դու գիտե՞ս, որ նա նոր է ամուսնացել, և ես նրա խաշեղբայրն եմ:

— Խաշեղբա՞յրը...

— Հետո դու գիտե՞ս՝ ով է եղել, որ այս երկու գիշեր գալիս քաշում էր զանգակը:

— Ո՞վ:

— Սառայի ամուսինը:

— Որ ի՞նչ:

— Որ քեզ սպանի:

Իմ այս հայտնությունը կարծեմ ամենից անակնակալն էր նրա համար, որովհետ նա հանկարծակի այնպես սփրթնեց, որ ակամա զղացի, թե ինչու այդքան սուր կերպով հայտնեցի այդ բանը: Կարծ ժամանակ նայում էր ինձ կատարյալ ապուշի պես, հետո ասաց:

— Ի՞նչ հեքիաթներ ես պատմում:

— Դժբախտաբար կյանքը հեքիաթ չէ, բարեկամ, — վրա բերի ես, — և այս տրագեդիան է, հենց այն բանի հետեանքն է, որ դու կյանքը զվարճակի հեքիաթի տեղ ես դրել:

— Լավ, որ զալիս էր ինչո՞ւ չէր մտնում ու սպանում, մասնավոր, որ երկրորդ գիշերը ես ինքս զնացի դուռը բաց արի: Ո՞ւր էր փախեր:

Ես մի քիչ շփոթվեցի նրա այս շատ տրամաբանական հարցումի վրա, բայց իսկույն մտածեցի, որ եթե ճշմարտությունը, հայտնեի, կնշանակեր, թե ամբողջ գործը պիտի փշացնեի: Աւտի պատասխանը խուսափողական եղավ:

— Ո՞վ գիտե, — ասացի, — զուցե վերջին բոպեին ժտածել էր, որ ինձ շատ անախորժ գրության մեջ պիտի դներ, եթե իր վրիժառության վայրը իմ տունը դարձներ: Բայց գիտեմ, — ավելացրի ես խոսքերին նրա վրա թողած տպավորությունը շթուկացնելու համար, — նա ման է զալիս, որ ուրիշ տեղ բռնի քեզ: Եվ ահա թե ինչու ես անհրաժեշտ եմ համարում, որ դու այս գիշեր եթե հեռանաս:

Ու, առնելով նրա թեր, առաջ տարա: Այլևս ձայն ծպուտ շանեց: Հետեւում էր ինձ հանցավոր երեխայի պես:

— Հա՛, մի բան էլ, — հանկարծ մտաբերեցի ես: Դու գիտե՞ս, որ քեզնից զավակ էլ է ունեցել:

— Գիտեմ, — ասաց նա կամաց, — իր վերջին նամակների մեջ գրում էր, որ հզի է:

— Հետո՞ւ:

— Հետո էլ շզիտեմ. նամակագրությունը գաղարեց:

— Ուրեմն շզիտեմ, որ իր նորածին մանուկը ինքն իր ձեռքով սպանել է:

— Ճի՞շտ, — զրեթե ճշաց թուսյանը և կանգ առավ հանկարծ: — Ո՞վ ասաց քեզ ալիք:

— Արի, արի, ես քեզ բոլորը կպատմեմ:

Ճանապարհին մինչև տուն հասնելը, մանրամասնորեն պատմեցի այդ օրվա Գարեգինի ինձ արած այցը, հետո իմ արած այցը Սառային և այն բոլոր խոսակցությունը, որ ունեցել էի նրանց հետ, իհարկե որոշ գունակցումով: Օգտվելով այն հանգամանքից, որ Թուսյանը բնավ չէր ճանաշում Գարեգինին և իր կյանքում չէր էլ տեսել նրան, Սառայի ամուսնուն ներկայացրի ոչ թե իրբն անհիշաշար, թույլ ու անկամ մի երիտասարդի, որ իր սիրած կնոջ անցյալին ոչ մի նշանակություն չէր տալիս, այլ իբրև մի կատաղի մարդու, որ վրիժառությամբ լցված, շարունակ կրկնում է, թե չի հանգստանա, մինչև որ իր ախոյանին շշանսատակ» շանի: Ես այցակ էլ ասացի և նկատեցի, որ Թուսյանի թուքը ցամաքեց: Այնպես որ երբ տուն հասանք, նա երկար ժամանակ նստած էր լուս ու կաշկանգված, ըստ երկույթին շիմանալով ինչ ասի, ինչ անի:

Սառային պատվիրեցի, որ վազի մի կառք կանչի, իսկ Թուսյանին ստիպեցի, որ շատով տեղավորի իր իրեղինները, որպես ցի շաշանա գնացքից:

Հուր վեր կացավ, դանդաղորեն, կարծես ակամա, հանեց հագի տոնական զգեստը, հագավ այն հնամաշ շորը, որով ջուրը էր եկել ինձ մոտ, և նույն դանդաղկոտությամբ սկսեց տեղավորել ճամպրուկի մեջ, շարունակ խորասուղված ինքն իր մեջ, կարծես տատանվելով՝ գնա՞մ, թե զնա՞մ երբ տեղավորեց պրծավ, ճամպրուկը փակեց, թոկով կապկակեց, վեր կացավ նստեց և շարունակում էր մտածել՝ կենտրոնացած հայացքը մի կետի հառած:

Բայց. ինչպես երկում էր, այդ միայն ժամանակավոր ընթարմացում էր, որ եկել տիրել էր նրան և բխում էր ոչ թե նրա խառնվածքից, որը բնավ վախկոտ չէր և օրգանապես անընդունակ տևականորեն խորանալու դրության մեջ. ինչքան էլ որ այդ դրությունը վտանգավոր լիներ,— այլ հետեւանք էր իմ հայտնած անսպասելի նորության և մանավանդ այն լուրջ եղանակի, որով խոսում էի նրա հետ.

Իվ ես շխալվեցի իմ այդ ենթադրության մեջ, որովհետև մեկ էլ նայեմ տեսնեմ՝ դեմքը պարզել է ենայում է ինձ ժպտալով:

— Թեոփի, — ասաց, — արի մի բան ասեմ, և դու էլ խոստովանիր, որ շեմ սիմալվել:

— Ի՞նչ:

— Տեսար տանդ խնամի եմ նստել, ինքո էլ հեղինակ, վառ երեակայության տեր, այդ բաները հեղինակեցիր, որ գլխիցդ ուադ անես: Զի՞:

Պատասխանս միայն ուսերիս արհամարհական շարժումը եղավ, և երկի, ես շկարողացա զսպել զզվանքիս արտահայտությունը, որովհետև նա նորից լուրջ կերպարանք առավ:

— Լավ, — ասաց, — բայց ի՞նչպես է, որ անցյալ օրը մեր առաջին հանդիպումին մի առանձին թշնամական վերաբերմունք շնկատեցի նրա մեջ դեպի ինձ: Կամ, գուցե, դա մի խորամանկություն էր և հասցես առավ նրա համար, որ... Ասենք, ե՞ս շեմ, որ պիտի վախենամ մահից, բայց չէ՞ որ մահն էլ որեւէ իմաստ, որեւէ արշարացում պիտի ունենա: Թե չէ— ահա՛ իմ ճակատը և ահա՛ քո գնդակը, տուր գլորիր, թե ի՞նչ:

— Ի՞նչ ես ուզում ասել դրանով, — հարցրի զարմացած:

— Այն եմ ուզում ասել, որ... մի՞թե, հիրավի, ես այնքան տեղավոր եմ, որ ուզում են ինձ շանսատակ անել: Զի՞ որ ես բռնի կերպով շտիրացա նրան, ինչպես անում են վերշին կինտոները: Նա այնքան ուզում էր ինձ, որքան և ես իրեն: Մեր հոգի-

ները և մեր մարմինները փոխադարձաբար չգտում էին իրար. և այդ փոխադարձության հետեւանքն ուրիշ բան չէր կարող լինել, քան այն, ինչ որ կատարվեց ծիշտ է, ամուսնանալու խոստում էի առվել, բայց ալդպիսի դեպքերում սեփական կյանքը զոհաբերելու խոստում էլ են տալիս. և ո՞վ է լուրջ նշանակություն տալիս այդ բանին, որովհետև մի խոստում, որ չի կատարվում իսկույն, վաղվան համար Հո մի կոտրած գրոշ էլ շարժեն: Խոկ ես հեռացա, հետո տարիներ անցան, և եթե այս պատահական հանդիպումը լիներ, ո՞ւմ մտքով կանցներ, թե մի ժամանակ անտառում ինչ եմ արել: Եվ ո՞ր մեկը հիշեմ. մեկն այստեղ, հարյուր մեկն այնտեղ— Ռուսաստանում: Եվ ինչո՞ւ պիտի հիշեմ: Մի բան, որ բնական է, պիտի կատարվի անցնի: Հո մենք շենք հիշում, թե օրը-օրին ինչ ենք ուտում. քաղցը ստիպում է ուտել, ուտում ենք և մոռանում: Հետո... զավակ՝ ասում ես: Խոստովանում եմ, այդ բանին էլ լուրջ նշանակություն շեմ տվել: Վերջին նամակների մեջ, որ գրում էր, թե հզի է, ինքու ինձ ասում էի՝ վնաս չունի, աբորտ կանի, կանցնի: Նրա պես քանիսներն են այդպես արել: Բայց որ ասում ես, թե ծնել է և... Այս, այստեղ ես բան շեմ հասկանում: Ի՞նչպես կարելի է այդ: Ինքն էր, չէ՞ որ ինձ մոռացնել տվեց սպանությունը: Մինչդեռ իմ սպանածը միայն մի աղավնի էր: Նա աղի արցունք էր թափում մի անպետք թոշունի համար և հանկարծ ինքն իր ձեռքով սպանում է իր սեփական արգանդից նոր ելած մանուկը: Դա ի՞նչ սոսկալի հակադրություն է:

— Այ լավ ասացիր, — վրա բերի ես: — Հենց այդ բանից էլ կարող ես եզրակացնել քո մեղավորության շափը: Որքա՞ն ալլանդակված պիտի լիներ քո վարմունքով նրա հոգին, որքա՞ն լրված ու հուսահատված պիտի զգար նա իրեն, որ ստիպված լիներ այդպիսի մի սոսկալի ոճիր գործել: Ես լիովին հասկանում եմ նրան և ամեննին շեմ զատապարտում, որովհետև ներկա հասարակության և ներկա հասարակարգի մեջ ո՞ւր գնար, ո՞ւմ ապավիներ, ո՞ւմ և ո՞ր օրենքի օգնությանը դիմեր մի անմեղ, անփորձ աղջիկ՝ ապօրինի մանուկը ձեռքին: Եվ դեռ հարցնում ես, թե մի՞թե այնքան մեղավոր ես:

Թուսյանը շառարկեց և լսում էր ինձ անկեղծ զարմանքով: Տեսնում էի, որ խոկապես լուրջ նշանակություն չէր տվել այդ բանին և հազիվ թե երեսէ մտածած լիներ առհասարակ այդպի-

ոի բաների մասին, և այժմ զարմանում էր, թե ի՞նչպես կարող էր մի ուրիշն այդքան գժրախտանալ իր պատճառով:

— Եվ այդ բոլորից հետո,— ավելացրի ես,— որ դեռ երես ես ունեցեմ, ոչ միայն մոտենալու նրան, այլև ինչ-որ զզվելի առաջարկ աւ-էլու, «շնական» առաջարկ, ինչպես ինքն ասաց: Եվ ոչինչ այնքան չի վիրավորել ու վրդովել նրան, որքան այդ հանդրգությունը: Որովհետեւ ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է, որ որ նրան էլ հսկամ արում ես այն կանանցից, որոնց հետ՝ Երբ կամենաս՝ կարող ես գործ ունենալ, ինչպես օրինակ, տիկին Սարումյանի հետ, և ամեննեին նկատի չես առել, որ նա ոչ միայն ամուսնացած է, այլև վաղը չէ մյուս օրը մայր պիտի լինի:

— Ի՞նչպես թե մայր...

— Զէ՛ որ նա հղի է...

— Փու ты черт! — բացագանչեց Թուսյանը, վեր կացավ և սկսեց անցուղարձ անել սենյակում: — Դա ի՞նչ գժրախտություն է, այն ժամանակ հղի, հիմա հղի...

— Եվ այս անգամ գուցե ավելի գժրախտաւ հետեանքով:

• Թուսյանը հանկարծ կանգ առավ և վախեցած նայեց երեսիւ: — Ի՞նչպես:

— Որովհետեւ քո վարմունքից այնքան է վրդովել, որ եթե ժամանակից առաջ չվիժի և կենդանի մնա, այդ ուղղակի հրաշք կլինի:

— Ի՞նչ ես ասում, — շշնաց Թուսյանը, գույնը նետելով:

— Ես քեզ բան եմ ասում, որովհետեւ աշքովս տեսա, թե ի՞նչպիսի սոսկալի ցավեր է դդում:

Թուսյանը շարունակ երեսիս նայելով, կարճ ժամանակ մնաց քարացած: Հետո նստեց և այլևս ձայն ծպուտ չհանեց: Միայն անսովոր լուրջ ու մտազբաղ, որ բնավ չէր սազում նշան, հայացը հառել էր մի կետի: Պարզ էր, որ իմ հայտնություններից և ոչ մեկն այնպես չէր ազդել նրան, որքան վերջին հայտնությունը Սառային սպառնացող վտանգի մասին:

Այդ միջոցին վերադարձավ ծառան և հայտնեց, որ կառքը բերել է: Թուսյանը բնավ ուշադրություն շղարձրեց, կարծես ինքը չէր գնացողը, և շարունակում էր անշարժ նստած մեալ նույնիսկ այն ժամանակ, երբ ժառան գուրս տարավ նրան ճամպարությունը:

— Դե վեր կազ, որ շուշանառ, — ասացի:

Մեքենայարար վեր կացավ, գլխարկը ծածկեց և սկսեց շատ դանդաղորեն, կարծես ակամա, հագնել վերարկում:

— Գուցե փող շոմես, — ասացի, կարծելով, թե նրա վարան-ման պատճառն այդ է:

Մեքենայարար շոշափեց գրպանները և ոչինչ շասաց:

• Համենայն դեպս հանեցի տվի գրպանումս եղած բոլոր փո-դր: Առաջ ձեռքի մեջ, առանց գրպանը դնելու, և դուրս գնաց:

Մինչև կապք ճանապարհ դրի:

Շարօնակ լուր էր և մտազբաղ: Եվ այդպես էլ բաժանվեց, նույնիսկ առանց մնաս բարե ասելու:

## XII

Թուսյանին ճանապարհ դնելուց հետո դարձա սենյակս: Սո-վոր լինելով ուզ քնիելու, շուտեցի այդպես վաղ հանգել ու պասկել, շնայելով որ թե փիզիկապես և թե հոգեպես շատ հոգնած և ճռն-ված էի զգում ինձ: Ռւստի առանց հանգելու թիկն տվի մահմակա-լիս վրա, որ մի քիչ հանգստանամ և կարգի դնեմ այդ օրվա տպա-կորություններս, մանավանդ այն տպավորությունը, որ ստացել էի վերջին րոպեին Թուսյանի մեջ նկատած անսպասելի և խորհր-դավոր փոփոխությունից: Օթև շվախենայի, որ նա կարող է ուշա-նալ գնացքից և այդ գիշերն էլ մնալ, — իսկ այդ գիշեր ո՛վ գիտե ինչ կարող էր պատահել, — անշուշտ մի քիչ ավելի երգար կպա-հեի նրան՝ իմանալու համար, թե ինչ է կատարվում նրա մեջ: Գուցե գդւում, գուցե իր յուրօրինակ էպիկուրյան մտահայացքի հեղաշրջում: Եմ մինչդեռ, զանազան ենթադրություններ անելով, ընկել էի մտքերին ծովը, չէր նկատել, թե ինչպես հոգնածությու-նից բունս տարել էր:

Աւ բնիս մեջ մի տարօրինակ երազ տեսա: Իբր թե մի մեծ դահլիճումն եմ: Մարգիկ և կանաք խոնվում են զուգմած-զար-դարձած, ինչպես պարահանդեսում: Բեմ կա: Բեմի վրա հետին ոտների վրա բարձրացած ցատկուում է մի սպիտակ այծ ահա-գին պողերով և երկար մորուքով: Ալժի երեսն իբր թե այժի չէ, ալլ մարդու երես՝ ցոլուն աշքերով: Հետո մեկ էլ տեսնեմ՝ ալծը ալժ չէ, ալլ կին, և ալդ կինն իբր թե Սառան է բալերինի նման սպիտակ փրփաւը հագուստով: Գլխին պղնձի մի սափոր ուներ, և ալդ սափորը նըշ ամեն մի ցատկամից վիրե էր թաշում ու նորից

նստում գլխին, Բայց Հանկարծ կանգ առավ, գլուխը թափահարեց, և սափորն ընկավ գետին ուժգին զրնգոցով:

Աշբերս բաց արի ականջում լսված մի սուր ձայնից: Սկըզբում ինձ թվաց, թե այդ սափորի զրնգոցն էր: Հետո, երբ կես քնած, կես արթուն նայում էի շորս կողմս և աշխատում սթափվել, ձայնը կրկնվեց: Այս անգամ արդեն պարզապես տեսա, որ դունս զանգակի ձայնն էր:

Վեր թու: «Մի՞թե դարձյալ նա է»— ասացի ինքս ինձ, կարծելով, թե Գարեգինն է, որ Սառայի դրդմամբ նորից եկել է Թուայնին «սպանելու». բայց մեկ էլ մտածեցի, թե դա կտրող էր և Թուայնը լինել, որ երկի ուշացել էր գնացքից և ետ դարձել:

Ու շտապեցի դուրը բանալու:

Բայց որքան եղավ զարմանքս, ու վախս նույնիսկ, երբ դուռը բանալով, առջևս տեսա ոչ թե Գարեգինին կամ Թուայնին, այլ Սառային:

— Տիկի՞ն,— ակամա դուրս թռավ բերնիցս, և մեքենայարար ետ քաշվեցի, որ տեղ տամ մտնի:

Այնուհետև ինչ որ պատահեց, մինչև օրս էլ ինձ թվում է, թե երազ էր կամ հենց նոր տեսած երազիս շարունակությունը նոր փոփոխությունով:

Սառան մի րոպե լուսնոտի պես անշարժ կանգնած էր դունս առջև գտնված մի հատիկ աստիճանի վրա: Լուսինը աշնանային պարզկա երկնքից՝ կողքից լուսավորում էր նրա կիսադեմը: Մեծ զարմանքով նկատեցի, որ այդ ցուրտ գիշերին գլխաբաց էր և նույն թիթե հագուստի մեջ, որով տեսել էի նրան այդ երեկո իրենց տանը, բայց տանը տաքուկ շալ ուներ ուսերին, իսկ այժմ այդ էլ շուները լուսնոտի պես անշարժ և անվրդով, շեշտակի նայում էր դեպի ներս, ոչ թե ինձ, այլ դեպի մութ նախասենյակը: Մի աշքից, այն աշքից, որ կողմից լուսինն էր լուսավորում, կարծես կայժեր էին դուրս ցայտում, և այդ աշքը հիշեցրեց ինձ երազիս մեջ տեսած պարունու ցոլուն աշքերը:

Ոչ մի ձայն հանեց, ձեռքը կամաց, կարծես երկաթի ծանրությամբ, բարձրացրեց և ուղղեց դեպի նախասենյակը: Ձեռքին լուսնի տակ ինչ-որ պլալաց պողպատի սպիտակ փայլով: Մեքենայաբար ետ ընկա դեպի նախասենյակի պատը և թաքնվեցի դունս ետեղը: Նույն վայրկյանին լսվեց մի տրաքոք կարծ ու Հա-

նուում, պողպատի բերանն ուղղակի դեմքիս առցե կրակի մի խուրձ արտավիժեց, և նախասենյակը լցվեց վառողի հոտով:

Առյունը սառավ երակներիս մեջ, մազերս փշաքաղղեցին, և ինձ թվաց, թե աշքերս հանկարծ դուրս պրծան խոռոշներից: Մի րոպե կարծեցի, թե վիրավորված եմ, և զարմանում էի, որ չեմ ընկնում: «Երկի նրա համար,— մեքենայաբար բացատրեցի ինքս ինձ,— որ վերքս նոր է, և ուս չեմ զգում»: Ու, մահվան սարսափի մեջ կաշկանդված, սպասում էի, թե ահա որտեղ որ է պիտի ընկնեմ ու մահանամ:

Զգիտեմ, որքան տեսեց այս սարսափինի դրությունը, որը երբեք չեմ մոռանա, բայց դեռևս կանգնած էի ոտքիս վրա, և ինձ թվում էր, թե տափակել կպել եմ պատին այնպես պինդ, որ անկարող եմ պոկվել:

Հանկարծ մի միտք լցրեց ամբողջ էությունս մի խելագարությամբ: «Կարող եմ և վիրավորված չլինել»,— մտածեցի և սկսեցի շոշափել դլուխս, կործքս, փորս, կողերս: Ոչ մի տեղ արյան տաքություն չզգացի ու կարծես մոգական մի գավաղանի զորությամբ վերակենդանացաւ:

Առաջին գործս այն եղավ, որ առանց համարձակվածութեապի դուրս նաշնէլ, դուռն արագորեն փակեցի և խելագարի պես վազեցի սենյակս:

Երբ արգեն, լիովին ապահով էի սենյակիս մեջ, նոր զգացի, որ ամբողջ մարմնովս դողում եմ: Նստեցի, ձեռքերս սեղմեցի ծնկներիս մեջ և ծնուռներս պինդ հուա տվի իրար, որ զսպեմ չղաձգումներս: Մի զիդ մանավանդ: Որ ոչ մի կերպ զսպել չէի կարողանում, ամբողջ մեջքս ի վեր մինչև շլինքս սեղմվում ու բացվում էր առաձգակուն ոետինի պես և ամեն սեղմվելիս դեպի ետ, դեպի ներքն էր բաշում գլուխս երբեմն այնքան ուժգին, որ թվում էր, թէ եթե փորձեմ դեպ առաջ խոնարհվել, շլինքս ու մեջքս պիտի կոտրվեն շոր փայտի պես: Աշխատում էի հավաքի: Խոհականությունս ու սառնասրտությունս, որպեսզի Հաշիվ տայի ինձ: Թէ ալդ ինչ էր, որ պատահեց, — ոչինչ հաջողվեց: Շարունակում էի մնա, կարծես հավիտեսական մղձավանշային մի դրության մեջ, որից, Հակառակ շանքերիս ելնել չէի կարողանում: Ինչ թվում էր, թէ այդ մի բանի րոպեի մեջ երբ ևս կրել էի մահվան բոլոր սարսափը, աշխարհը կործանվել էր: տարտարոսը դուրս էր վիժել իր բոլոր արհավիրքները, զարմանում էի, թե ինչ-

պես էր եղել, որ այդ տիտանական զարհուրանքի մեջ չէր զարթել ոչ ոք ամրող տան մեջ, իսկ դուրսը, փողոցում; այնպիսի անգորրություն էր տիրում: Ես բացեիքաց հրաժարվում էի հավատալ, թե այն օոլորը, ինչ որ տեսա և զգացի այդ մի քանի բուռակնիւմ, իրականություն էր, և, ինչպես երթեմն պատահում է սարսափելի երազի մեջ, ինքու ինձ սրտապնդում էի նրանով, որ ասում էի, թե այդ երազ է միայն, ուրեմն և շախճնալու ոչինչ չկա, ահա որտեղ որ է՝ կզարթնեմ և ամեն բան կանցնի:

Այդ դրության մեջ էի գեռնս, որ հանկարծ մի սուր ձայն ուստինի գնդակի պես վեր նետեց ինձ. Նորից փշաբաղելով ամրող մարմինս: Դուանս զանգակի ձայնն էր նորից և այնքան ահավոր. որ կարծես ինքը մահը ճշաց: Ու, ինչպես վիրավոր մի գազան, որ խելակորույս ինքն է վազում որսորդի գնդակի զեմ, ես գուրս նետվեցի: Եվ երբ դուռը բաց արի այն անգիտակցական վճռականությամբ, որ խելուն վրա ընկնեմ և ատրճանակը խեմ ձեռքից, ապշած, գրեթե զգաստացած տեսա, որ ոչ թե նառան է, ինչպես համոզված էի ես, այլ Գարեգինը ծանր հերնին, երեկի վագելուց:

— Ի սեր աստուծո, օգնի՛ր,— ասաց Հազիկ շունչը ետ բերելով: — Սառան չկա... բնած էի... դուրս է եկել... զգիտեմ ուր է գնացել... Պետք է օգնես... Ես խելքս կորցնում եմ... շեմ իմանում ինչ անեմ... ի սեր աստուծո, շուտ... արի գնանք...

— Ո՞ւրի

— Որոնելու:

— Ո՞րտեղ:

— Զգիտեմ... ես այլնս մտածելու ընդունակություն շունեմ...

Դու ասա, ո՞րտեղ կլինի:

— Նա այստեղ էր:

— Այստեղ... քեզ մո՞ւ, — աղաղակեց խեղճը և վրա ընկավ ձեռքերիս: — Հետո՞:

Ծնչասպան էր լինում, լափում էր ինձ հետաքրքրությունից և անհամբերությունից շոած աշքերով:

Մի քանի խոսքով պատմեցի եղելությունը:

Լսեց ինձ, լսեց, հետո մի «վայ» արագ, երկու ձեւքով. պինդ խոփեց զլիին և մնաց այդպէս քարացած: Հետո հանկարծ խեղճ վողի պես բռնեց ձեռքից և ձիգ տվեց, որ տանի իր ետելից:

— Գնանք... ի սեր աստուծո, զնանք շուտով... շուտով...

— Ո՞ւրի

— 890 —

— Զգիտեմ... Գետը... Հիմա եմ հիշում. սպառնում էր, որ ինքը կսպանի, եթե ես չսպանեմ, և հետո գետը կընկնի կիսեղգվի... Գնանք, մենք կազմատենք նրան...

Եվ խելագարի պես մի կատաղի ուժով շարունակում էր, ձեռքից պինդ բռնած քաշել իր կողմը: Որ տանի ինձ իր հետ:

Մեծ ուժ և սառնարտություն էր հարկավոր ինձ, որ պահեի նրան և համոզեի, թե դա դատարկ սպառնալիք է եղել նրան վախեցնելու համար, թե Սառան անշուշտ բռնված է եղել սպանելու մանիայով, և այն բանից հետո, երբ ատրճանակը պարպեց այստեղ, երեկի կարծել է, թե արդեն սպանեց, և հանգստացած վերադրձել է տուն:

— Դու կարծո՞ւմ ես, դու կարծո՞ւմ ես, — բացազնչեց Գարեգինն ուրախացած: — Ար այդպես է, տուն գնանք... Շուտ, աղազում եմ, շուտ:

Շտապով դարձա սենյակս, գլխարկս ծածկեցի. Վերաբկու հագա և, դուրս գալով, Գարեգինի հետ դիմեցի գեպի նրա ընակարանը: Այժմ ինձ առաջ էր մզում ավելի հետաքրքրությունը, քան օգնության կարիքը որովհետեւ ինձ համար ոչ մի տարակույս չկար, որ աղետն արդեն կատարված պիտի լիներ. թեն Գարեգինին հայտնած ենթադրությունս էլ անհավանական չէր թվում ինձ:

Գիշերը, ինչպես երեսում էր, շատ ուշ էր. փողոցներում ոչ մի կենդանի շունչ չէր երեսում. բացի գիշերապահներից, որոնք ահագին մուշտակների մեջ կոլոված դանդաղուն չափում էին խանութների շարքերը: Կես ճանապարհին Հազիկ մի կառք գտանք և նստեցինք: Երբ հասանք կառքը համենայն դեւու: պահեցի և բարձրացանք վերև: Գարեգինը երկայն սանդուղքի երկու աստիճանը մեկ էր անում:

Նրա բնակարանի դուռը բաց գտանք և ճրագները վառ: Գարեգինն ուղղակի վազեց գեպի ննջարանը: Ես հետևեցի նրան:

Սյստեղ մեր աշքերի առջև բացվեց հետեւալ տեսարանը:

Սառան խկապես տուն էր դարձել: Աղախինը հետո պատմում էր, որ նա շափականց ուրախ էր, ծիծաղում էր, ծափ տալիս: Թոշկոտում երեխայի պես, գրկում էր իրեն, համբուրում և շարունակ կրկնում: «Քիտե՞ս, նատաշա, ոպանեցի», սպանեցի, սպանեցի արդեն... Հետո սկսել էր զանգատվել, որ մրսում է, պակել էր առանց հանվելու և պատվիրել: Եր շատ բան ծածկի և

վառարանը վառի: Այնուհետև սկսվել էին անտանելի ցավեր, որոնց ժիշտ էր շարունակ և գալարվում: Աղախինը վախսցած վազել էր Գարեգինի սենյակը, որ զարթեցնի նրան, բայց նրան այնտեղ և ամբողջ ընակարանում ոչ մի տեղ չգտնելով, դիմել էր կողքին ապրող տանտիրուհու օգնության: Տանտիրուհին, մի ոռու գեներալի այրի կին, շատ բարի ու եռանդոտ, չէր զլացել անկողնուց վեր կենալու և, Սառայի վիճակը տեսնելուց հետո, իր կողմից դիմել էր տան ներքին հարկում ապրող բժշկի օգնության:

Մենք որ մտանք, բժիշկը նոր էր եկել: Հողաթափերը ոտներին, խալաթը հագին, քնաթաթախ աշքերով, քննում էր հիվանդի զարկերակը: Մոտը կանգնած էր տանտիրուհին՝ նույնպես ձեռաց հագնված, խճճված սպիտակ մազերը ծամկալներով ու կերպ ամրացրած: Դուն մոտ արձանացել էր աղախինը՝ վախից սառած, ցամաքած: Վառարանի մեջ ճրթճրթում էր կրակը:

Գարեգինը վազեց դեպի կնոջ մահճակալը, մի տեսակ անմարդկային, գրեթե անասնական ձայնով կանչեց «Մառա» և ըստ երկույթին, ուզում էր վրա ընկնել նրան, բայց բժիշկը, մի ձեռքով հիվանդի զարկերակը բռնած, մյուսով կամաց հեռացրեց նրան, և խեղճը տեղն ու տեղն արձանացավ, աշքերը սարսափահար գամելով կնոջ դեմքին:

Սառան պառկած էր անշարժ, դեմքն սպիտակել էր քաթանի պես. շրթունքներն ուուել կապտել էին, շրջապատված լայն սեավուն շրջանակներով. կիսարաց կոպերի տակից պլալում էին աշքերի սպիտակուցները ապակու անկենդան փայլով: Սկզբում ինձ թվաց, թե արդեն մեռած է, բայց հետո տեսա, որ կուրծքը վեր ու վար է անում, և կիսարաց շրթունքներից մի թեթև հեք է լսվում:

Հիվանդի զարկերակը քննելուց հետո բժիշկը ետ նայեց, մատով մոտ կանչեց աղախինին և, դառնալով մոտը կանգնած տանտիրուհուն, խնդրեց, որ հիվանդի հագուստը հանեն:

Այլևս անհարմար համարելով իմ ներկայությունը, ես դարձա և դուրս գնացի առաջին խսկ դրնով: Սկզբում լիմացա, բայց հետո տեսնեմ՝ մտի եմ հյուրասենյակը, ուր այդ նրեկո տեսակցություն ունեցա Սառայի հետ: Ահա այն աթոռը դռան մոտ, որի վրա նստած էր Սառան, և մի րոպե ինձ թվաց, թե ականջումն զեռ հնչում են նրա ցամանալից խոսքերը և ապա աղեկտուր հեծկրտանքը: Ինչ էր պատահել այնուհետև, երբ, այդ տեսակցությունիցին հարկում ապառահար գամելով կապտակալ էր աղախինը:

Թյունից հետո, ես թողի նրան ուժգին հիստերիկայի մեջ, այդ մասին ոչինչ չգիտեի, բայց ինձ համար միանգամայն պարզ էր, որ մեր շարարաստիկ խոսակցությունը ճակատադրական դեր էր խաղացել Սառայի հետագա վիճակի մեջ: Իսկ այդ վիճակի հետեւ վանքը ես այժմ տեսա աշքիս առջև: Թեև մի կողմից ինքս ինձ արդարացնում էի նրանով, որ մտածում էի, թե այդ բոլորը կատարվել էր և պիտի կատարվեր մի տեսակ տարերային ուժով և հակառակ իմ ցանկության, բայց և այնպես ուղեղիս մեջ գամվել էր այն միաքը, թե այդ բոլորի պատճառը միայն ես էի, և թերեւ ոչինչ չպատահեր, եթե Արեգինին և բնավ չմիջամտեի: Այս պատճառով նստած էի հոգեպես միանգամայն սպանված, իր գործած ոճիրի ծանրությունը գիտակցող մարդու պես, և ականջներս լարել էի դեպի հարեւան սենյակը, որտեղ լսվող ամեն շըրշյուն կլանում էի ամբողջ էությամբս: Չէի կարծում, թե սիրտս այնքան ուժգին ու խորապես արձագանքեր այդ շրջյուններին, եթե այնտեղ, հարեւան սենյակում մերձ ի մահ պառկած լիներ իմ սրբակից հարազատներից որեւէ մեկը:

### XIII

Գրեթե լուսադեմ էր, որ վերադարձա տուն և քնեցի կամ, ավելի ճիշտ կլինի ասեմ, ընկա ծայր աստիճան ծանր ու տանշալից մի թմրության մեջ՝ լի հազար ու մի անհեթեթ, անբովանքակ ու սարսափելի տեսիլներով:

Զարթեցի սենյակիս մեջ լսված ինչ-որ քայլերի ձայնից: Նայեմ տեսնեմ՝ թուսյանն է:

Սկզբում ոչինչ չէի հասկանում: Գլուխս այնքան ծանր էր, որ կարծես գանգս դատարկել և լցրել էին կապարով: Հետո հանկարծ մտարերելով գիշերվա եղելությունը, միանգամից սթափվեցի և վեր թուա: Նոր նկատեցի, որ պառկել եմ առանց հանվելու ռինչն եղավ Սառան— այս էր առաջին միտքը, որ ծագեց զիմումս, նորից տրորելով սիրտս ու հոգիս:

Սակայն առջևս կանգնած էր այդ ամբողջ անցուղարձի ինքը հեղինակը — Թուսյանը, որի անակնկալ վերադարձը պակաս չէ: Կատարեքրեց ինձ:

— Այդ ի՞նչ է, դու շե՞ս գնացել, — հարցրի զարմացած: — Ոչ, — պատասխանեց կտրուկ: — Ի՞շլո՞ւ:

Գպատասխանեց։ Նստեց պատուհանի առջե, մի ծխախոտ հանեց, վարեց և սկսեց ծխել անսովոր լուրջ և ինքն իր մեջ ամփոփված, ինչպես նախորդ գիշերը անջատման ժամին։ Չէր նայում ինձ։ Իսկ ես զարմացած դիտում էի նրան։ Ուսանողական խունացած բաճկոնն ու երկարաճիտ կոշիկները հանել էր և հագել էր նոր հագուստը, որի մեջ այնքան գեղեցիկ էր իր սափրած լիքը դեմքով և կարճ խուզած սև ու խիտ փայլուն մազերով, որոնք այժմ էլ ավելի փայլում էին պատուհանից ներս թափանցող առավոտյան արել ճաճանչների տակ։

- Զինի՛ ուշացար գնացքից, — շարունակեցի Հարցուփարձու
- Ոչ։
- Հապա։

Նորից շպատասխանեց։ Շարունակում էր ծխել և համառուին չէր նայում ինձ։ Հետո ասաց մի տեսակ շեշտով։

— Ես երբեք վախկոտ շիմ եղել և չեմ ուզում, որ որեւ մեկը կասկած տաներ, թե վախկոտ եմ, մանավանդ նա, ում հետ որ գործ ունեմ։

— Ես քեզ չեմ հասկանում. ի՞նչ վախկոտության մասին է խոսքդ։

— Այն բոլորից հետո, ինչ որ դու հայտնեցիր այս գիշեր, վեր կենաւ և հեռանալ՝ այդ նշանակում է պարզապես փախչել, իսկ փախչում են միայն վախկոտները։

— Ուրեմն դու ուզում ես ճակատդ գեմ անել գնդակին։

— Այո՛, — վրա թերեց Թուսյանը և իսկույն ավելացրեց. — Եթե միայն մեղավոր եմ։

— Աւրեմն դու շարունակում ես քեզ մեղավոր չհամարե՞լ։

Թուսյանը վեր կացավ հանկարծ, ծխախոտը դեմ շպրտեց և նայեց ինձ շեշտակի։

— Էսիր, Մարգարյան, — ասաց մի տեսակ շղայնացած առողջ, որպիսին ես ամենեին չէի սպասում նրանից։ — Ես հենց դրա համար էլ շգնացի իսկապես։ Պետք է պարզել վերջապես, մեղավոր եմ ես, թե ոչ եթե մեղալոր եմ, անշուշտ պետք է կրեմ իմ արթանի պատիճը, — թող այդ պատիճը գնդակը լինի, — ասացի, որ ես շեմ վախսենում դրանից։ — Իսկ եթե մեղավոր չեմ, ինչո՞ւ իդուր տարակուսանքի տակ մեծամ ինքս և ուրիշներին տարակուսանքի տակ թողնեմ։ Ինչ պահասություններ ուզե՞ւ կարող ես վերագրել ինձ, ես այդ ընդունում եմ. բայց որ ասես, թե կեղծել գի-

տեմ, այդ չես կարող, ծրբե՞ք ես կյանքիս մեջ վատ բան չեմ արել, երբեք, ես այդ ասում եմ և կպնդեմ, Եվ միշտ մինչև հոգու խորքը վրդովվել եմ, երբ որիշների կողմից վատ արարք եմ տեսել: Եվ իմ վատի կրիտերիումը եզել է ոչ թե ընդհանուր շաբլոնը, այլ իմ սեփական գիտակցությունը և խիզճը։ Մեր գավառական քաղաքներում մի վարժապետ կար, որ իրեն Գերմանիայում ուսած աստվածաբարն էր անվանում. բռնաբարել էր իր աշակերտուհիներից մեկին — տաս-տասերկու տարեկան մի որր աղջկա. բռնեցի այնպես ծեծեցի, որ քիչ մնաց ինձ բանտ նրա տեցնեին չամօս։ Մեր ընկեր-ուսանողներից մեկին — տաս-տասերկու տարեկան մի որր աղջկա. բայց ես այնպիսի օյին հանեցի նրա գլուխը, որ նա ստիպված եղավ տեղափոխվել ուրիշ համալսարան, թեև ինձ էլ դուրս շպրտեցին համալսարանից։ Այսպիսի դեպքեր ես շատ կարող եմ թվել իմ կյանքից։ Իսկ եթե ինքըս, ուրիշների կարծիքով, որեւ վատ բան եմ արել, այդ արել եմ ոչ թե այն պատճառով, որ ինքս վատ եմ կամ վատասեր, այլ նրա համար, որ արածն վատ բան չեմ համարել։ Հենց Սառայի օրինակը։ Ի՞նչ վատ ու դատապարտելի բան կա նրանում, որ արբունիքի հասած մի երիտասարդ և մի աղջիկ սրտերի փոխադարձ ձգտումով բնության գրկում և բնության հրավերով կատարում են կյանքի գերազույն խորհուրդը։

— Այդ շատ լավ, — ընդհատեցի ես նրա երկարաբանությունը. — այդ նս ընդունում եմ, և ոչ ոք չի դատապարտում քեզ այդ բանի համար։ Բայց հետո, հետո։ Ի՞նչ արիր դու «կյանքի գերազույն խորհուրդը» կատարելուց հետո։

— Ես էլ հենց այդտեղ եմ գալիս, իմ խոսքն էլ հենց այդ նետոյի մասին է, — վրա թերեց Թուսյանը. — Ուզում ես՝ Հավատա, ուզում ես՝ չէ, բայց ես քեզ ասում եմ, որ այն ժամանակ ես Սառային սիրում էի անկեղծ կերպով, — կարող եմ ասել նույնիսկ, որ դա իմ անդրանիկ սերն էր, — և ամուսնալու համար նրան տված խոստում էլ միանգամայն անկեղծ էր։ Հետո գնացի Ծկզբում կարոտում էի նրան և շատ էի կարոտում, պատասխանում էի նրա բոլոր նամակներին, նույնիսկ շատ անգամ ինքս էլ դրում անհամբեր, երբ այս կամ այն պատճառով ուշանում էին նրա նամակները. բայց հետո կամաց-կամաց... Դե՛ հո գիտես, ժամանակը և տարածությունը թշնամի են մարդկանց հարաբերու-

թյուններին։ Մանավանդ որ ես ներքին հոգեկան կյանքով ապրող մարդ չեմ և իմ այսօր է, և ոչ վաղը՝ իմ արտաքին աշխարհն է իր եռուցեռով։ իբ թուցիկ տպավորություններով։ Գոնե մինչև այժմ ես այդպէս եմ եղել, եթե այն ժամանակ մնայի կամ նա գար ինձ հետ, անշուշտ կպատկվեի, և այժմ մենք շատ սովորական բախտավոր կամ անբախտ ամուսիններ կլինեինք, թայց ես, ինչու՞ս ասացի, հեռացա և... մոռացա կամ ավելի ճիշտը, սառեցի։ Ասուցի ոչ թե այն պատճառով, որ այդպէս էի ուզում կամ նրանից ավելի լավերը գտա, այլ որովհետեւ այդպէս է կյանքը, այդպէս է մարդկային բնությունը։

— Այդ էլ թող այդպէս լինի, այդ էլ պատրաստ եմ ընդունելու, — նորից նկատեցի ես, — թայց չէ՞ որ ձեր միջն ամեն մի կապ կտրված էր արդեն և նա ինքն էլ, ճրկի, վաղուց սառել, մոռացել էր քեզ։ Հաշտվել իր դրության հետ, ամուսնացել, տուն ու տեղ գրել և պատրաստվում էր նորից մայր լինելու էլ հանուն ինչի, հանուն կյանքի ո՞ր գերազույն խորհրդի եկար վրդովելու նրա հանգիստ կյանքը բանալու նրա հին վերքը, ծաղրելու նրա անցյալ տառապանքները, վիրավորելու նրա կանացի առաքինությունը, կոխկրտելու նրա մարդկային արժանապատվությունը։ Այդ բոլորը ես նրա խոսքերն եմ կրկնում։ Սրա՞ն ինչ անուն կտաս։

— Պարզ թեթեամտություն։ Երես առածի հանդգնություն։ Նույնիսկ շնականություն, — ինչ անուն ուզում ես տուր, այդ բոլորը ես ընդունում եմ և չեմ արդարացնում ինձ։ Թայց այս շնչին բանն այդպէս փքել, ուտեցնել, մի պարզ ֆարս տրագեդիայի վերածէ։ Տի ստահակ վարմունք մահացու հանցանք համարել, — այդ ես ուզդակի չեմ հասկանում, անկեղծ եմ ասում՝ չեմ հասկանում։

Ինձ ուրիշ բան չէր մնում, եթե ոչ լոել, և միայն թափահարեցի ձեռքս, դրանով հասկացնել ուզելով, որ այլևս ավելորդ է շարունակել այդ խոսակցությունը։

Նկատելով այդ, Թուսյանը մոտեցավ, առավ ձեռքս և սաացադին։

— Ոչ, խնդրում եմ, Մարգարյան, մի կարծիր, թե ես դիտամք շնականալ եմ ձեացնում։ Ապացուցիր, համոզիր ինձ, որ ես այդակի մեղավոր եմ, որ ես մահացու հանցանք եմ գործել և կտեսնես, որ իմ դատաստանը ինքս իմ ձեռքով կկտրեմ։ Գուցե խսկապես ես մի հրեշ եմ, որին պետք է ոչ միայն սպանել, ամեն կտոր-կտոր անել և կտորները շան բերանը գցել

— Դե ես ի՞նչպես ապացուցեմ և համոզեմ քեզ, եռք դու այնպիսի հայացքի տեր մարդ ես, թե ամեն բան թույլատրելի է, երբ որ ինքը՝ բուրաքի հետեւանքը, որ իբրև կենդանի ապացուց կանգնան է առջեղ, չի համոզում քեզ, խոսքերն ինքնըստիւթյան ավելորդ են։

— Բայց իմ այդ աբարքն առաջինը և վերջինը չէ, և ինչո՞ւ այդպիսի աղետաբեր հետեւանք ունեցավ այնքանի մեջ միայն մեկի վերաբերմաբը։ Մի՞թե օրանից պարու չէ, որ աղետի պատճառը իմ կամքից և արարոի էությունից դուրս է։

— Եվ, երեկի գտնվում է այդ մեկի կամքի և էության մեջ Ա՞յս ես ուզում ասել

— Եթե ի՞մ ասածից այդ է հետեւում... — ասաց Թուսյանը և Արացրեց իր ասելիքը, խուսափելով իմ հայացքից։

Ես կարծ ժամանակ նայում էի նրան զարմացած։ այս անգամ անկոտրում մարդու տպակորություն էր թողնում։

— Քո դատողությունը գիտե՞ս ինչ անալոգիա է ստեղծում իմ առջև, — նկատեցի ես, — Խելազարի թե Հարբածի մեկը կանգնած է փողոցում և հրացան է պարպում։ Փողոցով շատ մարդիկ են անցնում, բայց գնդակը դիպչում է միայն մեկին և գետին գլորում։ Ուրեմն մեղավորն այդ մեկն էր, որ սպանվեց, և ոչ հրացան պարպողը, այլապէս բոլորն էլ կսպանվեին։ Ահա քո լոգիկան։

— Եվ երեակայիր, որ այս, այդ մեկն էր մեղավոր, — տարօրինակ համառությամբ պնդեց Թուսյանը։ — Կամ եթե մեղավոր չէր, այլ անմեղ պատահական մի զոհ, համենայն դեպու մեղավոր չէր նաև հրացան պարպողը, որովհետեւ նա, խելազար թե Հարբած, համենայն դեպու գործել է որոշ էմոցիայի ազդեցության տակ և գնդակը չի արձակել որևէ մեկի և հատկապես այդ մեկին սպանելու դիտավորությամբ։

Որովհետեւ ես լոել և լսում էի նրան ավելի ու ավելի զարմանալով, նա շարունակեց իրեն ոչ հատուի պեղանտային լըրջությամբ։

— Դու ասում ես՝ շնականություն, ես ասում եմ՝ կյանքի գերագույն խորհուրդ, այսինքն բնական տարերային մի ուժ, որի վրա մարդն իր բոլոր խոհականությամբ հանդերձ անկարող է իշխել։ Եւդ տարերային ուժն իմ միջոցով եկել անցել է իր հաղթական ճանապարհով, և ես մեղավոր չեմ, որ մեկն այդ ճանապարհին ընկել է նրա քայլերի տակ և ճխլվել, անկարող լինելով հար-

մարդկել նրա քմահաճույքին։ Սա պարզ է, Մարգարյան, շատ պարզ։

— Ար այդպես է, ինչո՞ւ ծեծեցիր իր աշակերտունուն Ակողձեր գավառական վարժապետին։

— Արովհետեւ նա բռնություն, կամ, ուրիշ խասքով ասեմ՝ շնորհյուն էր գործ դրել և այն էլ մի անշափահաս աղջկա վրա, — ահա թե ինչու իսկ բռնության շնորհյան և հոգիների ու մարմինների փոխադարձ ձգտման միջն սարեր ու ձորեր տարրերություն կա։ Սա պարզ է, կարծեմ։

— Այս, քեզ համար ամեն բան պարզ է, պարզից էլ պարզ, — նկատեցի ես, կամ ենալով վերջ տալ այս ապարդյուն խոսակցությանը։ — Եվ ես շեմ հասկանում, թե ինչո՞ւ շեմ գնացել, ինչու ես եկել և ինչու են այդ սովորականություններ։ Որ հոգես, թե մեղավոր չե՞ս Չես կարող ես միայն մի բանում համոզվեցի։ — Դու կամ հանցանքիդ գիտակցությունը շունես կամ այնքան խարն ես զգում հանցանքդ, որ խիդեք հանգստացնելու համար աշխատում ես մեղքը փաթաթել ինչ-որ կյանքի գերագույն խորհրդի, ինչ-որ բնական տարերային ուժի վրա, որ իրը թե ւյել անցել է քա միջով իր հաղթական երթը կատարելու համար։ Այդ հո քո աստվածարան վարժապետն էլ կարող էր սաել, ինչքան էլ որ նրա արարքը դու բռնություն համարես և սարերի ու ձորերի առարերություն տեսնես նրա ու քո արարքի միջն ինչո՞ւ մի բան, որ քեզ համար կյանքի գերագույն խորհուրդ է և բնական տարերային ուժ, նրա համար շնորհյուն պիտի լինի։ Ոչ այս, ոչ այն մի անգամ որ ինքդ քեզ ներշնչել ես այն համոզումը, թե կյանքը մի հարատել խնդույք է, և դու իրավունք ունես խլելու նրանից այն ամենը, ինչ որ հաճելի է քեզ, ուզում ես այդպես էլ շարունակել, բայց հիմա, որ դժուար կյանքը, իսկական կյանքը և ոչ քո կասկածը, եկել ցցվել է առցեղ և իր պահանջներն է անում քեզնից, դու շփոթվել ես, ինքդ քեզ կորցրել և շեմ իմանում ինչ անես։ Ահա քո ամբողջ հոգեբանությունը։ Ես այլևս ոչինչ շունեմ ասելու քննի։

Այս անգամ Թուայանը միանգամայն սուս էր արել և լսում էր ինձ, ինչպես նախորդ գիշերը, լուրջ ու կենարոնացած։ Ըստ երեսութիւն նրա մեջ շարունակուած էր նախորդ գիշերը հրաժեշտի ժամին նրա մեջ իմ նկատած հոգեկան հեղաշրջման պրոցեսը։ Բայց այս անգամ առաջվա պես բնդարմացած էր, այց նրա ամեն

մի դիմագիծը ցավագին ջղաձգումներով արձագանքում էր իմ խոսքերին։

Շատապով լվացվեցի և պատրաստվեցի, որ գնամ իմանալու Սառայի դրությունը, որ այդ բոլոր խոսակցության ժամանակ մի բոպե անգամ չէր հեռանում մտքից։ Եվ երբ բոլորովին պատրաստ էի, թուայանը, որ մինչև այդ շարունակ ինքնամփոփով լուս դիմում էր ինձ, հարցրեց։

— Ո՞ւր ես գնում։

— Գնում եմ իմանալու՝ ինչ դրաւիքյան մեջ է զոհը։

— Բավական է, Մարգարյան, — աղաշեց նա զայրությի հանկարծական բռնկումով և սկ, խոշոր աշքերը սպառնագին փայլեցրեց ինձ վրա։ Բայց այդ բռնկումը մի վայիշէյան միայն տեսցի նա զապեց իրեն, գլխարկն առավ և շատ հանգիստ կնրպով պատաց։ — Ես էլ եմ գալիս։

Ակամա նայեցի նրան զարմացած։

— Ենելագարվէլ ես, ինչ է։

— Խսկույն շպատախիանեց։ Կանգնած էր առջևս, գլխարկը ձեռքին և հանգիստ հայացքը, մոայլ վճռականությամբ լի, հառել էր հատակին։

— Զո՞՞հ ասում ես։ Ընկունում եմ, — աւաց մի առանձին հաստատուն շեշտով։ — Բայց զո՞հը հատուցում է պահանջում, և այդ հատուցումը ես պատրաստ եմ տալու եվ պիտի տամ։

— Ես քեզ շեմ հասկանում, — ասացի պարզապես ապշած նրա այդ հանկարծակի վճռականության վրա։ — Ի՞նչ հատուցում, ո՞ւմ, ի՞նչ ձեռվ, ինչի՞ համար։

— Ինչպիսի հասուցում ուզում ես, ում ուզում ես, ինչ ձեռվ ուզում ես, ինչի համար ուզում ես, — ինձ համար ողջը մեկ է, ես սպակարկել շգիտեմ։ Մի բան որ վճռեցի և ասացի կանեմ։ Եվ խնդրում եմ իմ այս խոսքերի վրա մի հայիր իրրեկ գատարկ բրագաղայի վրա։ Ճիշտ է; Եթ թեթևողիկ եմ, և շատ տրագիկական դեպքեր իմ կյանքում եկել անցել են թեկի մի թեթև հպումով, առանց որևէ խոր հետք թողնելու իմ մեջ, բայց այն, ինչ որ այժմ եմ զգում, չեմ զգացել երբեք։

— Ասա, ասա, ես քեզ լսում եմ, — ասացի ես շափականց հետաքրքրված նրա արտասովոր լուրջ տոնից և աշքերի արտահայտությունից տեսմանից, որ վերջապես պիտի պարզվի այն զըլ-

խավորը, ինչ որ տակավին մութ էր մնում ինձ համար այդ տարշօրինակ երիտասարդի մեջ:

— Երեկ գիշեր, որ դու պատմում էիր Սառայի մասին,— շարունակեց Թուայանը,— ես համարյա ոչինչ շզգացի. ես միայն շշմել էի— այնքան անակնկալ էր այդ բոլորն ինձ համար: Բայց հետո որ բաժանվեցի քեզնից և փոխանակ կայարան գնալու գնացի իջա հյուրանոց, կամաց-կամաց ինչ-որ անհանգստություն տիրեց ինձ և քանի գնաց՝ սաստկացավ: Որ ասեմ ամբողջ զիշերը շեմ քնել, չես հավատա: Արթուր պահապանի պես ման էի գալիս անդադար և շարունակ ծխում: Խի՞զ, խղճի խայլի, թեթևամտորեն գործած շարիքի գիտակցությո՞ւն... Կամ գուցե կարեկցությո՞ւն, սրտի հարազատությո՞ւն՝ հետևանք այն զգացումի, որ երբեմն տածել եմ դեպի նա... Կամ գուցե նույնիսկ նախկին սն՞րը, անդրանիկ սն՞րը, որի կայծերն սկսել են բորբոքվել նոր թափով տարիների շեղակույտի տակից և ավելի մաքուր, ավելի ուժգին, քան առաջ, նրա կրած տառապանքների ազդեցության տակ... Ես ոչինչ չգիտեմ, ոչինչ չեմ հասկանում: Միայն կրկնում եմ, այսպիսի բան երբեք չեմ զգացել, երբեք կյանքիս մեջ, եվ եթե մի քիչ առաջ ես,— շատ ճիշտ նկատեցիր,— զանազան սոփեստություններով աշխատում էի անարատ գուրս բերել ինձ, այդ ոչ թե նրա համար, որ իսկապես անմեղ էի համարում ինձ, այլ նրա համար, որ ուզում էի քո օգնությամբ գուրս գալ հոգեկան այս անտանելի քառոսային գրությունից: Կյանքի գերագույն խորհուրդ, բնական տարերային ուժ և ես ինչ գիտեմ ուրիշ ինչ, սրանք բոլորը, իհարկ լոկ ֆրազներ են, որոնք թերեւ նշանակություն ունենան տղամարդու և կնոջ հարաբերության մասին վերացական գատողության մեջ, բայց որոնք գրոշի արժեք չունեն կյանքի այնպիսի փաստերի հանդեպ, որպիսին իմ ու Սառայի հարաբերությունն է, եղեւ մինչդեռ ճշմարտությունն այն է, որ ես չկարողացա գնալ, որ գիշերն այնքան անհանգիստ անցրի, որ այժմ եկել եմ քեզ մոտ և ուզում եմ գալ քեզ հետ նրան տեսնելու:

— Այդպես. վերջապես խոստովանեցիր ճշմարտությունը,— նկատեցի ես:— Բայց նրան տեսնելը մտքիցդ հանի, որովհետև շփտես, թե այս գիշեր քո գնալուց հետո ինչ կատարվեց:

— Ի՞նչ:

Ես պատմեցի նրան գիշերվա ամբողջ մզձավանշային դեպքը, թե ինչպես Սառան խելագար գրության մեջ եկել էր իմ բնա-

խարանը ատրճանակը ձեռքին՝ անշուշտ նրան, Թուայանին սպանելու մանիայով բռնված, թե ինչպես ատրճանակը պարպել էր նախաւենյակումս ու փախել, թե ինչպես նրա ամուսինը վազել էր ինձ մոտ նրան որոնելու և թե, վերջապես, ինչ դրության մեջ գտանք նրան իրենց տանը:

Թուայանը լսում էր ինձ իր ահագին աշքերի լափող հետաքրքրությամբ և հետզհետե սփրինելով: Հետո, որ վերջացրի, գլուխն առավ ձեռքերի մեջ և մնաց բարացած:

— Այդ անկարելի է, — շնչաց նա:— Այդ սոսկալի է... եվ այդ բոլորի պատճառը...

— Է՛լ ավելորդ և անօգուտ է պատճառի կամ պատճառերի մասին մտածելը, — ասացի:— Եթե այժմ զղզում ես և ուզում ես ինչ-որ հատուցում տալ, ուշ է արդեն, շատ ուշ:

— Ուշ է... շատ ուշ, — կրկնեց արձագանքի պես, առանց հեռացնելու ինձնից որ լայն բացած աշքերը:

Ես այդպես էի թողի նրան ու դուրս եկս:

## XIV

Նոր էի թերվել գլխավոր փողոցը, տեսնեմ արագ քայլերով Ասսավ ետևիցու:

— Ո՞ւր ես գնում, — հարցրի:

— Գալիս եմ քեզ հետո:

— Ես Սառայի մոտ եմ գնում:

— Ես էլ:

— Որ ի՞նչ անես:

— Որ իմանամ ինչպես է:

Ու տեսնելով, որ ուզում էի առարկել, ավելացրեց իսկուն.

— Մի՛ վախենա, ներս չեմ մտնի. կսպասեմ դուրսը, մինչ դուրս կգասի:

Ճանապարհին այլևս ոչ մի խոսք չարտասանեց: Հստ երեւ վույթիւն շատ հանգիստ էր և ինքն իր մեջ խորասուզված: Որ հասանք, ես իսկապես մնաց դուրսը, իսկ ես մտա և վերև բարձրացա:

Ֆարեգինք քնակարանում յուրուց բաց արեց աղախինը՝ լացակումած կարմիր աշքերով: Նրա դեմքին նայելուն պես սիրտս կարծես պոկվեց հանկարծ և ցած ընկավէ:

— Ինչպե՞ս է տիկինը, — հարցրի:

Պատախանի տեղ աղախինը թաշկինակը սեղմեց աշքերին և հեկեկաց:

Հարցուփորձն այլևս ավելորդ էր, և ես շտապով ներս մտաւ:

Դեմս ելավ բարի տանտիրուհին, որ այնքան հողացողություն էր ցուց տվել գիշերը Սառայի հիվանդության ժամանակի, Կարճ խոսքերով պատմեց ամրող եղելությունը: Գիշերը, իմ գնալուց հետո, բժիշկը խորհուրդ էր տվել հիվանդին անմիջապես փոխագրել ծննդաբերական ապաստարան: Սառային ուշագնաց դրայան մեջ կառք էին դրել տարել, և նա մեռել էր վաղաժամ և անկանոն ծննդաբերությունից:

— Սենք նոր ենք վերադարձել, — ավելացրեց նա («մենք» ասելով ուզում էր ասել՝ ինքը և Գարեգինը) — Եկեք, եկեք մինթարեցեք ձեր խեղճ բարեկամին, իսկ ես կօնսում մի քիչ հանգստանալու:

Բարի պառավն առաջնորդեց ինձ դեպի ննջարանը, որտեղ գիշերը Սառային գտա հոգեվայր գրության մեջ, և ինքը հեռացավ:

Դուռը բաց արի և կամաց ներս մտաւ:

Գարեգինը նստած էր ինոչ դատարկ մահմակալի մուտ, ձեռները կրծքին խաշած և գլուխը կախ: Ինձ թվաց, թե քնած է, բայց որ մոտեցա, գլուխը կամաց բարձրացրեց և անցնությունից ուռած ու կարմրած աշքերը սեեռեց վրաս: Երկար ժամանակ նայում էր դեմքին անդրայացած մարդու անիմաստ հայացքով, կարծես շկարողանալով զլսի ընկնել, թե ով եմ, հետո ձեռքերը կամաց հեռացրեց կրծքից և ասաց շատ հանգիստ ձայնով:

— Հա, այդ դու ես... նստիր:

Ու, առանց տեղից վեր իենալու, առաջ քաշեց մոտը դրած մի աթոռ:

Լուս սեղմեցի նրա ձեռքը և նստեցի:

— Դու գիտե՞ս, որ Սառան այլևս չկա, — ասաց իր ցամաք անկենդան հայացքը սեռելով աշքերիս:

Ես կարողացա միայն գլուխ մի դրական շարժում անել, թե գիտեմ. փղձուկը բռնել էր կոկորդս, և շկարողացա որևէ խոսք արտասանել:

— Ներս տարան. Տորթեցին. ինչ արին — շգիտեմ, և գուրս բերին Ֆեռած, — շարունակեց Գարեգինն այնքան հանգիստ ձայնով. որ կարծես իրեն չվերաբերող մի հասարակ բան էր պատ-

մում: — Հետո, գիտե՞ս ինչ, այն բժշկին, որ մորթել էր նրան, անսա իր կարինետում կաթով թել խմելիս: Շատ զարմացա: Մեկ էլ ինչ զարմացրեց ինձ. տուն որ գալիս էի, տեսնեմ արեց լուսավորում է առաջվա պես, մարդիկ անցուդարձ են անում փողոցում, խանութիները բաց են սովորականի պես, մի խուզով ամեն բան — ինչպես ամեն օր, և ոչ մի փոփոխություն: Մինչդեռ ես կարծում էի, թե էլ ոչինչ չկա, վերջ, մութ, խավար... Ապշելու բան է, չէ:

— Գիտե՞ս ինչ, Գարեգին, — ասացի նու, գիտելով նրա անքնությունից ուստած, բորբոքված աշքերը և դեղնած դեմքը, — զու հոգնած ես և չես քնել, մի քիչ որ պառկես հանգստանաս, լավ կլինի:

— Հա՛, ես էլ հենց այդ պիտի ասեի, — վրա բերեց նաև — ինձ ավելի այն է զարմացնում, որ ես էլ, գիտեմ, առաջվա պես պիտի ուտեմ, ման գամ, քնիմ, հանգստանամ, էլի ուտեմ, ման գամ, քնիմ, հանգստանամ, որպես թե ոչինչ չի պատահել, որպես թե այս կես տարվա կյանքը մի քաղցր երազ էր, որ եկավ ու անշավ, որպես թե Սառան մի հրաշակի տեսիլք էր, որ մի վայրկյան երկաց աշքիս ու հանգավ անհետ...

Վերջին խոսքերի վրա նրա ձայնը դողաց, իլացավ և հանկարծ կտրվեց: Նա խոնարհվեց ծնկների վրա, և գլուխը ցած ընկավ թալացած: Երկար ժամանակ այդպես մնալուց հետո նորից շտկվեց և նայեց ինձ:

— Փարատիր, խնդրում եմ իմ մի տարակուսանքը, եթե կարող ես, — ասաց նաև: — Այս մասին էի մտածում, որ զու ձեկարու Ասա խնդրեմ, ո՞րն է ավելի կարևորը — մարդը, կենդանի արարածը, թե իրը. հոգին, թե նյութը:

— Ինչո՞ւ ես հարցնում այդ:

— Ինչո՞ւ...

Իր թափառուն հայացքը ման ածեց սենյակի մեջ, վեր կացավ և սկսեց մեկ-մեկ մատնանշել:

— Ահա այս մահմակալը, որի վրա պառկած էր նա, ահա այս հողաթափերը, որ հազնում էր առավոտները, երբ վեր էր կենում. ահա այս գլխարկը, այս սանրերը, այս ձամկալները, այս մատանիները, այս բոլոր լաթերն ու իբերը, որոնք պատկանում էին նրան, որոնց նմանը ինչքան ուզում ես՝ կարող ես ճարել, որոնք իրենց արժեքից ավելի բան չարժեն, — այս բոլորը կան ու կմնան, եթե պահես, իսկ նա, որ մեզ պես խռաւմ, մտա-

ժում, ման էր գալիս. որը մարդու ձեռքով շինված մի իր չէր, որը մի հատ էր ամբողջ մարդկության մեջ, որի նմանը չես գտնի աշխարհիս և ոչ մի տեղ. իսկ նա չկա այլևս և չի լինի երբեք: Ի՞նչ է նշանակում այս,— որ այս ժամկալն ավելի կարենոր է և անմա՞հ, քան թե նա, որ բնության տեղագործության անզուգական մի հրաշակերտ էր, քան թե այն իրտեր, որ բարախում էր նրա կըրծքում, քան թե այն հոգին, որ այնպես փոթորկվում էր նրա մեջ: Ի՞նչ է այս,— ծա՞ղր, թե այնպիսի Ֆի բան, որի առջև մարդու ուղեղն ուրիշ բան չունի անելու. եթե ոչ միայն քարանալ...

Դեռ երկար ժամանակ խոսում էր այդ մասին, մերթ հուզվելով, մերթ փիլիսոփայական հանգստությամբ, շարունակ դիմելով իրեն հատուկ մանկամիտ համեմատությունների, երբ վերջապես առա նրա թեր և, նորից հորդորելով, որ մի քիչ հանգստանա, տարա նրան իր առանձնասենյակը, որպեսզի հեռացրած լինեի կնոյ սենյակից, ուր ամեն ինչ հիշեցնում էր Սառային և այնքան հուզում նրան, Զհակառակեց, անձնատուր եղավ ինձ քունը տառող երեխայի պես, պառկեց և աշքերը ծածկեց:

Կարճ ժամանակից հետո լսեցի նրա թիվ փսխոսցը և կամաթուկ դուրս եկա, որ գնամ ցավալի իրողությունը հայտնեմ փողոցում ինձ սպասող թուայնին:

Դուն առջեն նա ետ ու առաջ էր քայլում և ծխում: Ինձ որ տեսավ, կանգ առավ:

Մի քանի խոսքով հայտնեցի Սառայի մահը:

Զայն ծպուտ Հանեց, դարձավ ու հեռացավ:

Իսկ ես վերադարձա, որ Սառայի ծնողներին հեռագիր տամաքան:

## XX

Երկու ամբողջ Յարեաց! Ուր էր, ինչ էր անում— չգիտեի, ժամարյա չէի էլ հետաքրքրվում, որովհետեւ այդ ամբողջ ժամանակ չէի հեռանում Գարեգինի յոտից, որը մի տեսակ իդիոտիզմի մեջ էր ընկեր Երրորդ օրը միայն, Սառայի թաղման ժամանակ, մի քանի րոպեով երեաց աշխիս հուղարկավորների բազմության մեջ, ու էլ չտեսաւ: Թաղումից հետո, երբ գերեզմանատնից վերադառնում էինք, ինչքան փնտրեցի— չգտաւ:

Այնուհետև նույն օրը ուշ երեկոյան, երբ Գարեգինի մոտից նոր էի վերադարձել տուն, տեսնեմ եկավ այնքան արբած, որ ոտի վրա հազիվ էր կանգնում:

Մտավ առանց բարե տալու, նստեց ուղղակի դեմս, գլխարկը ետ գցեց ծոծրակին, ձեռքերով կոթնեց ծնկներին և ծանր շնչելով, նայեց ինձ շաղված աշքերով:

— Խմած եմ, չէ՞—, հարցրեց:

Եվ, որովհետև ես ոչինչ շասացի, շարունակեց, որպես թե դրական պատասխան լինեի տված:

— Եվ ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ եվ ինչո՞ւ այս անգամ ավելի, քան ուրիշ անգամներ: Պատասխանիր, Պատասխանիր,— բարձրացրեց ձայնը հրամայողաբար, տեսնելով, որ ես շարունակում եմ լոել:

— Երեսի դարդդ մոռանալու համար,— ասացի ես վերջապես:

— Հեզնում ես, հա՞՛ Մի՛ հեզնիր: Սովորական արբեցողների այդ արդարացումը ես չեմ ընդունում. մերժում եմ, լսո՞ւմ ես— մերժում եմ:

— Կամ որպեսզի խիղճդ հանգստացնես:

— Իի՞ղծ, ի՞նչ խիղճ, ո՞ր խիղճը, այն, որ այստեղ կա՞—, խիեց կրծքին:— Կ չերտ եւ. Այդ հո Տոլստոյի մորալն է: Տոլստոյը մեծ գրող է, ճիշտ է, բայց... մղսի է: Դու էլ ես մղսի. Մարգարյան, — շնեղանաս: Բոլոր մորալիստները մղսի են: Անցյալ օրը ինձ էլ հո համարյա թե մղսի դարձրիր Ծ՝ ես այդ քեզ չեմ ների, երբե՞ք: Եվ քո զգուու է, որ այսպես խմել եմ, քո՞ զգուու, լսո՞ւմ ես, Մարգարյան: Սոլովյա բանյամ ու կօրմատ. ես միշտ խմում եմ, բայց այսօր սովորականից ավելի եմ խմել ոչ թե,— լավ լսիր, Մարգարյան,— ոչ թե դարդու մոռանալու կամ խիղճն հանգստացնելու համար, այլ որպեսզի թուլլ շտամ քեզ, որ թիցս բոնած շուր տաս ինձ անցյալ օրվա պես դեպի մղսիություն: Հասկաց՞ր:

— Բայց և այնպես, դու աշխատում ես դարձյալ արդարացնել քեզ, և այդ մի քան նշանակում է,— նկատեցի ես:

— Այս ոչինչ չի նշանակում, և դու շատ ես սխալվում, որ կարծում ես, թե ես դարձյալ ուզում եմ արդարացնել ինձ: Ի՞նչ, էլի հատուցո՞ւմ, մատուցո՞ւմ, ու ես ինչ գիտեմ, ուրիշ ինչ զահը բուզիկո՞ւմ: Ներողություն կանես: Այդ միայն անցյալ օրն էլու Անցավ: Վերջ, Մի անգամ հիմարանալուց հետո երկրորդ անգամ

Հիմարածեա, կատարյալ էշություն կլինի. Ավելի լավ է շուն շանորդի լինել, քան թե եշ ու ավանակ: Եվ որպեսզի դու մի անգամ առմիջա համոզվես, թե այս անգամ չեմ եկել քեզ մոտ ինչ-որ մեղալականով, ահավասիկ...

Նա զեր թռավ, բարձրացավ աթոռի վրա և այնպէս տատանվեց, որ անպատճառ վայր կընկներ, եթէ վրա չվագեի և շբռնեի:  
— Իշիր, իշիր,— ասացի, — կընկնես:

— Ո՞ւ, թող, չեմ ընկնի, — բզավեց նա վառված, համարյակատաղի աշբերով: — Հեռու կանգնիր և լսիր, ես պիտի հայտարարեմ: Եվ ահավասիկ հայտարարում եմ աշխարհին և ամենքին. — Ես մեղավոր չե՞մ ես մեղավոր չե՞մ, ես մեղավոր չե՞մ: Զե՞մ, չե՞մ, չե՞մ (ամեն մի «չեմ»-ի հետ բռունցքը պինդ զարկում էր կրծքին): Ես այս կրկնում եմ երեք անգամ և պատրաստ եմ կըրկնելու հազարերեքերորդ անգամ, որովհետեւ, — լավ լսիր, Մարգարյան, — աշխարհիս երեսին արդար ու մեղավոր չկա, չկա՛ քեզ ասում եմ, և մարդ ամեն բան, լավն էլ, վատն էլ անում է բնության թելագրանքով:

— Բավական է, մի անգամ ասացիր, իմացանք, իշիր ասում  
եմ, կընկնես,— ասացի ես և բռնեցի ձեռքից, որ իշեցնեմ, բայց  
նա ձեռքն այնպիսի կատաղի թափով ետ խլեց, որ այլևս չկարո-  
ղացավ պահպանել հավասարակշռությունը, և նախքան ես վրա  
կընկնեի, որ բռնեի, երեսն ի վեր թրմփաց հատակի վրա: Սոծ-  
րակին ետ գցած զլխարկը թռավ մի անկյուն:

Հազիվ բարձրացրի և նստեցրի: Գլուխը փալասի պես կախ ընկավ կրծքին: Լուս էր: Մեկ էլ տեսնեմ աշքերից արտասուբներ են կաթում: Երկար ժամանակ լալիս էր այդպես լուս: Հետո թաշկինակը հանեց, աշքերը սրբեց և, առանց գլուխից բարձրացնելու, ասաց կամաց:

— Մի քիչ ցուր տուր։  
Տվի, Խմեց և կարծես թե մի քիչ զգաստացավ։ Ու դարձյալ  
երկար ժամանակ նստած էր լուռ, գլուխը մերթ վեր բարձրաց-  
նելով, մերթ ցած զցելով թուլացած, կարծես ննջում էր։ Հետո,  
սկսեց ռծիքը քանդել և ձեռքով մոտ կանչեց ինձ։ Մոտեցաւ Գլու-  
խը ետ զցեց և մատով ցույց տվեց կոկորդը։ Կոկորդի վրա հազիգ  
կես վերշոկաշափ մի կարմիր բարակ սպիր կար, կարծես սուր դա-  
նակով կաշվի վրա մի թեթե գիծ էին քաշել առանց խորը կտրելու,

— Այդ ի՞նչը է, — հարցրի զարմացած:

Սոցի գրպանները բրդրեց, Հանեց մի ածելի պատյանի մեջ և  
տվեց ինձ:

— Առ պահիր, — ասաց, — Ել շտաս ինձ:

— Վա՛, թշպառակա՞ն, — ակամա դուրս թռավ բերանիցս:

— Այդ անցյալ օրն էր, որ դու այնտեղ, գուանը հայտնեցիր ինձ նրա մահը,— ասաց նույն հանգիստ ձայնով: — Իմ խելքով ուզեցի իբր թե հատուցում տալ, բայց հատուցումը դուրս եկավ այս ողորմելի գիծը, բրավադան էլ օդով ին մի փուշկի: Փուշկեց պատովեց, օդը դուրս եկավ միջից աւանց նույնիսկ մի սուտ տրա- քոց հանիլու ինչ է նշանակում այս, Մարգարյան, Հը՞— Հարց- րեց աշքերը տարակուսանքով սենեղելով ինձ վրա: — Այս ես ե՞մ, թե ես չեմ: Ես ամիր էլ չեմ ճանաշում ինձ: Ո՞րտեղից է մտքի այս տատանումը, հոգեկան այս շփոթությունը, այս զգվելի փոքրուու- թյունը: Ես Ռուբեն Թուսյանը լինեմ և նստիմ քեզ մոտ լա՞ց լի- նեմ, իբրև մի ճագա: Ես Ռուբեն Թուսյանը լինեմ, ուզենամ ինձ մորթել ու... վախենամ: Դե էլ ինչացո՞ւ եմ ես, ինչի՞ պետք եմ, բռնիր ոտներս ու քարշ տուր տար գետը զցիր էլի, իբրև մի սատ- կած շուն, ինչո՞ւ մեռավ նա, ինչո՞ւ Որ ինձ պատժի՞ն, որ վրեժ լուծի ինձնի՞ց...

Նրա չայնը երերաց, և ինձ թվաց, թե ուզում է նորից լաց  
լինել, բայց զսպեց իրեն և հանկարծ վեր թռավ կատաղի աշ-  
քերով:— Ո՞ւ, ևս թույլ չեմ տա, որ մեռելները քարշ տան ինձ  
իրենց ետևից, — զոռաց նա:— Ես կենդանի մարդ եմ, սիրում եմ  
կյանքը և հանուն այդ սիրո պիտի շարունակեմ զոհել ամեն ինչ  
և ամենքին, ով կհամարձակվի խոշընդոտ կանզնել իմ հաղթա-  
կան ճանապարհին: Առաջին անգամ կյանքիս մեջ անձնատուր  
եղա այս հիմարական կնիկարմատային զգացումներին և ահա  
եկա հասա ուր... ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ...

Ու ամեն մի «ինչու»-ի հետ սկսեց ձեռքով խփել հա խփել  
գլխին:

Մի կերպ հանգստացրի, առաջարկեցի, որ պառկի քնի, մինչև  
որ գինու ազդեցությունն անցնի:

— Ոչ, — ասաց, — այս երեկո արդեն գնում եմ: — Եկա, որ փող տաս հյուրանոցին վճարելու և տոմսակ առնելու Անցյալ օրը տված փողերդ մինչև վերջին կոպեկը զահրումար արի: Դնամք է լէ, բոլորը միանգամից կուղարկեմ: Հորս կասեմ, որ տաւ

Կտա— ւավ, շի տա— չե՛րը կանիծեմ, բոլոր դավթարներն ու  
մուրհակները կպատռեմ, փողի սնդուկը կվառեմ, իրեն էլ կրոնեմ  
կիսեղեմ, որ ինձ պես մի լակոտ է ցնկնել:

— Հետո՞:

— Հետո էլ շգիտեմ: Ես սովոր շեմ «հետո»-ի մասին մտա-  
ծելու: Տուր փողը: Գլխարկս էլ տուր:

Ուզած փողն էլ, գլխարկն էլ տվի:

Փողը գրապանը կոխեց: գլխարկը ծածկեց, ձեռքս սեղմեց և  
օրորվելով դուրս գնաց:

Էլ շահսա նրան:

Տարիներ հետո իմացա, որ տնից դուրս արած, թափառում է  
մայրաքաղաքի փողոցներում, իրրև պրոֆեսիոնալ ինտելիգենտ  
մուրացիկ և արբեցող:

1898

## Պ Ա Տ Ք Ը Ր

Վ Ե Պ

I

189\* Բվի մեծ պասի նախավերջին շաբաթն էր, օրն երկու-  
շաբթի, ապրիլ ամսի տաք, հիանալի մի օր: Փոքրիկ եկեղեցու  
սպիտակ ներկված պատի տակ, տախտակի նեղ նստարանի վրա,  
նստած էին յի պառավ և մի նորատի կին, նրանք սպասում էին  
ճաշի ժամերգությանը: Հագուստներից երեսում էր, որ պատկա-  
նում են հարուստ զասակարգի: Պառավը հագնված էր թիֆլիսեցի  
կնոջ տարագով, նորատին՝ եվրոպական: Նրանք հարս ու սկեսուր  
էին:

Պառավի գլուխը ծերությունից շարժվում էր անդադար կամ  
կերեցից ներքեւ: Կամ ձախից աջ, — կարծես «այո» կամ «ոչ» էր  
ասում, — և աշքերը շրակալում էին շարունակ, թեև արտաքուստ  
նա շատ էլ ծեր կնոյ տպավորություն չէր թողնում: Բարությունն  
ու միամտությունը կաթում էր նրա փափուկ դեմքի ամեն մի խոր-  
շոմից, և այդ դեմքը մի տեսակ բութ-պայծառ արտահայտություն  
ուներ:

Հարսը կլիներ մոտ քսան-քսաներկո, տարեկան: Ակեսրոջ  
կողքին նստած՝ ամբողջ դիմով և ուսով բարձր էր նրանից: Փետ-  
րազարդ և ծաղկազարդ փեղուցրի շրջապատն այնքան լայն էր առ-  
ջնից, որ արևի տակ ստվեր էր ձգում նրա նիհար գեմքի վրա, քթից  
վերև: Նա կատարյալ գեղեցկուհի էր, այն ուրուցն գեղեցկուհինե-  
րից, որոնց գեմքն առաջին իսկ անգամից խորապես տպավոր-  
վում է դիտողի հոգու մեջ և ինչ-որ քնած լարեր է շարժում այն-  
տեղ մաքուր ու մելամազդիկ, ինչպես տեսնքը սպավոր գեղեցկու-  
հու: Ահագին թերթերունքների տակ պատսպարված նրա սեորակ

աւքերը նայում էին կարծես անդունդից և այնպիսի մի թախիծով, որ կարծես նրա հետ ծնվել, նրա հետ էլ պիտի մեռնեին: Նա հագնված էր ինտելիգենտ կնոջ պարզությամբ ու ճաշակով և նստած էր շիտակ՝ նեղ նոտարանի ձայրին, ըստ երեսութին, զգուշանալով, որ եկեղեցու պատի սպիտակ ջրաներկը շկպչի մեջքին:

Երկինքը բարձր էր. շատ բարձր և իր բարձրությունից նայում էր ներքեւ բաց-փիրուղի անփայլ կապույտով: Արևի ճառագայթները հուրցատում էին եկեղեցու և զանգակատան կաթոլիկեների եռանկյունիները ծածկող արձաթագույն թիթեղների մեջ: Հարևան խարխուկ տան կտրան ձայրին, նորաբույս առատ կանաչի մեջ կանդնած էր հազիկ մի ամսական սպիտակ մի գառականջները սուր ցցած, նայում էր զեպի եկեղեցու բակը, մայում էր համառորեն, և նրա սուր ձայնը զի արձագանք էր տալիս գարնանային պարզ օդում: Մտերը խմբովին թիթերի ամբողջ թափով շեշտակի գալիս նստում էին բակի մեջ տնկված հակակի ժաւերի վրա, ճգնաժամ էին արևի ճաճանչների տակ պեծին-պեծին տպող մատաղ տերևների մեջ և հանկարծ կարծես մի ազդանշանով, պոկ էին գալիս բոլորը միասին ու կորչում օդի մեջ եկեղեցու գրայով կամ կողերով: Օդը շարժվում էր անդադար ինչ-որ անհանգիստ հունչով— մերթ սառն, մերթ տաք: Այդ ձմեռն էր, որ իր օրհասի վերջին շունչն էր փշում, և գարունն էր, որ իր տաք շընշառությամբ բնության վերածնությունն էր ավետում:

Եկեղեցին գտնվում էր բաղաքի աղմկալի կենտրոններից հեռու, և բակում հանգուցիշ անդորրություն էր տիրում: Բային երեք կողմից շրջափակված էր տներով, իսկ շորորդ կողմը, զանգակատան հետաւ, մի փոքրիկ ձոր կար, որը ծառայում էր աղքանոցի տեղ: Այդտեղ քչուչ էր անում ժամկոչի թիսկան հավաքից նոր ելած իր բազմաթիվ ճուտերով: Իսկ աքաղաղը, շափականց ծանրաշարժ ու բրդու: Ռաներով, կանգնած էր աղքանոցի ծայրին հպարտ ու հանդուն և իր առողջ թոքերի ամբողջ ուժով ծուլդուզու զու էր կանչում, արձագանք տալով հայտնի չէ որտեղից, բայց շատ հեռվից լսվող մի ուրիշ ծուլդուզի, որին նա ուշի-ուշով ականչ էր զնում իր ամեն մի կանչից առաջ:

Կամաց-կամաց հավաքվում էին ժամավորները— մեծ մասամբ կանայք և մեծ մասամբ պառավներ: Նրանք մտնում էին բակը հանգիստ քայլերով, երեսները խաչակնքում էին անկանոն, համբուրում էին եկեղեցու դուռը և որովհետեւ դեռ վաղ էր, ցըր-

վում էին արևի ախորժելի չերմ ճառագայթներով ոգողիմած բակում:

Թակը մտավ մի զառամյալ ծերունի՝ կողոված ձմեռվա խիստ խունացած վերարկուի մեջ, որի մաշված փեշերի ծայրերից տեղակեղ դուրս էր պրեծել դեղնած սպիտակ բամբակը: Մերությունից երկուտակված էր այն աստիճան, որ վերարկուի փեշերն առէնից զրեթե բսկում էին գետնին, իսկ հետեւի փեշը տարօրինսկ կերպով բարձրացել և երեան էր հանում նրա շորիկ-մորիկ ոտները, որոնցից մեկի վրա բարակ շալվարի պատառոտուն տոտը մտել էր կիսակողիկի հնությունից այնացած ճափ մեջ: Կարճ հեռնափայտին դիմհար տալով, նա մոտեցավ եկեղեցու դռանը, գլխարկը վերցրեց, երեսը խաչակնքեց երեք անգամ՝ երկարատև ընդհատումներով, հետո ծանրորեն նայեց այս ու այն կողմը իր սպիտակախառն թափ հոնքերի տակից, և նրա ցրված հայացքը կանգ առավ եկեղեցու պատի տակ նստած երկու կնոչ վրա:

— Զաքա՞ր,— կանչեց այդ կանանցից պառավը, իր ջրակալ ժպտուն աշբերով նայելով նրան և գլուխը շարժելով վերկից ներքեւ: Նրա ձայնը նմանվում էր կոտրված և կոծկված ամանի ձայնի:

Մերունին գլխարկը կամաց ծածկեց և մոտեցավ նրանց.

— Օսա՞ն... Մանե՞... Աշքս չի կտրում, շմանաչեցի: Բարի օր ձեզ:

Մանեն իր և սկեսուրի միջև տեղ բաց և հրավիրեց ծերանուն, որ նստի:

Մերունին նստեց:

— Ժամ եք մանգալի՞,— հարցրեց նա:

— Հա, ուզում եմ շաբաթ օրը հաղորդվիմ,— ասաց Օսանը:

— Ղազարոսի հարության օ՞րը: Լավ է: Բայց պատարագ է: Բաց պատարագին հաղորդվելը լավ է: Աստված ոնդունելի անի: Դու է՞լ, Մանե, — դիմեց ծերունին նորատի կողը:

— Ո՞չ, — պատասխանեց Մանեն մի քիչ շփոթվելով և իսկույն ավելացրեց: — բժիշկն ինձ արգելել է պաս պահել:

— Վնաս չունի, — նկատեց ծերունին մեղմորեն: — Պատուելը մեղք չէ, երբ որ ստամոքսը չի վերցնում, մեղք չէ: Մեղքը վատ գործն է, վատ խոսքն է:

Մերունին սկսեց հարցուփորձ անել իր բարեկամների առողջության մասին:

— Մենք լավ ենք.— ասաց Օսանը: — Դո՞ւ ոնց ես: Քանի ժամանակ է յեր կողմը շեն անցկենում:

— Ե՛, Օսան, ինձ էլ կասե՞ն ոնց ես,— արտասանեց Զայքարը ծերունիներին հատուկ անտարբեր դժգոհությամբ: — Քարշ եմ զալիս, էլի, սրա-նրա դուանը աղքատ Ղաղարոսի պես, մինչև որ տեսնենք՝ երբ է աստված Հոգին առնում: Բեզարել եմ, Օսան, շատ եմ բեզարել. ձեզ իսո բեզարացրել եմ ու բեզարացրել:

— Ի՞նչ բեզարացրել. ի՞նչ ես ասում:

— Զէ, Օսան, ես գիտեմ՝ ինչ որ ասում եմ: Հոգի ունեմ աստծուն տալու. ուղիղը պետք է ասեմ: Որդիդ՝ Գրիգոր Սերգեյիլը, շատ պատվական շատ աղա մարդ է, շատ նեղ օրերիս է վրա հասել. անշափ շնորհակալ եմ, բայց... մինչև ե՞րբ. ի՞նչ պարտական է...

— Էղ մի՛ ասի. Զաքար, էղ մի՛ ասի, — մեղմորեն կշտամբեց նրան Օսանը. և նրա անդադար շարժվող գլուխը մի րոպե կանգ առավ: — Ինձ ասեցիր, նրան շասես. շատ կնեղանաւ:

Սերունին նայեց կողքին նստած Մանեին:

— Եկե՞լ է Գրիգոր Սերգեյիլը, — հարցրեց նա:

— Ոչ, — պատասխանեց Մանեն:

Սերունու գլուխը կախ ընկավ ձեռնափայտի գլխին դրած ձեռքերի վրա: Կարճ ժամանակ լուս էր թախծալի մտախությամբ:

— Ասում ես՝ մի ասի, Օսան, — խոսեց նա, կարծես ինքն իրեն: — Ախր ո՞նց շասեմ ես էլ որ շասեմ, բայ ո՞վ ասի: Ես էլ որ շասեմ, բարեր կրղավեն, ոնց որ ասված է ավետարանի մեջ ես մի աղքատ, անտեր-անտիրական մարդ՝ ձեռից-ոտից ընկած... գիտե՞ս. թե նրա բարի հոգով տված մի քանի մանեթն ինչ արժի ինձ համար... Կար ժամանակ, — գիտես, էլի, — ես էլ շատ հազար-իւ էի խաղացնում ձեռում... առնում էի ծախում... փողը շրի պես էր գալիս ու գնում: Գդակն ծուռ դրած՝ ու ցավ ունեի, ոչ դարդ. կարծում էի թէ աշխարհն իմւ է... Բայց հիմի՛... ի՞նչ եմ: — մի աղքատ Ղաղարոս մտիկ եմ տալիս, թե որ հարստի սուփերն են թափ տալիս, որ գնամ շների հետ, — մեղա՛ բեզ, աստված, — փշրանքները հավաքեն ուտեմ: Փող էլ ունեի, տուն էլ ունեի կնիկ, որդիք... ամեն բան ունեի, ոչինչ պակաւ չէր, բայց... ամեն բան է, գնաց ձեռիցս, ամեն բան, ոչինչ չմնաց, ու մեջակ ես մնացի Հովք երանելու պես, որ ասեմ՝ փառք, հազար փառք,

տե՛ր, դու տվեցիր, դու էլ առար. երկի մի մեղք ունեի, որ ինձ պատժեցիր:

Սերունին աշքերը բարձրացրեց գեպի երկինք և կարճ ժամանակ մնաց այդպես լուս ու խորհրդավոր. նրա շրթունքները ցնցվում էին կամաց՝ լուս աղոթողի պես:

Մանեն կողքից նայում էր նրա կեռ քթին, աշքի վրա առյուծի ճանկի պես խոնարհված թավամազ հոնքին, հին մագաղաթի պես շրացած ու ճաքճաքած այտին և զգում էր, որ շափազանց խղճում է այդ թշվառ, անզոր ծերունուն:

— Բայց որդիդ, Օսան, Գրիգոր Սերգեյիլը, գնում է այն ճանապարհով, որ տերն ինքն է ցուց տվել, — շարունակեց ձերունին, ցուցամատը բարձրացնելով գեպի երկինք: — Աստված տալիս է նրան, և նա էլ ինձ պես խեղճերին է տալիս: Նա ուսում ունի և իր ուսումովը շատ առաջ գտնա: Ասենք հիմիկվա ուսումը... լավ է շինի, քան թե կա: Հրեն իմ եղբոր որդին, Աշոտը... նա էլ ուսում ունի, գրում է, բայց մեկ-մեկ որ ականջովս է դիպչում, թե ինչեր է գրում, մաղերս բիզ-բիզ են կանգնում. ասում եմ՝ փառք բեզ, աստված, ինչ որ չէինք իմացել, այն էլ ենք իմանում... Մի կտոր հաց էր տալիս, այն էլ կտրեց ու խսկի հարցնո՞ւմ է՝ կենդանի եմ, մեռել եմ, ինչով եմ ապրում, որտեղ եմ ապրում, — ո՞ր ասես էգուց էլ որ զուխս վեր դնեմ (մեռնեմ), իսկի էլ չի ամաշիլ, որ կրծքիս աման դնեն (ժողովարարությամբ թաղեն):

— Քա՛, ինչի՞ն, ի՞նչ ես ասում, — զարմացավ Օսանը:

— Զգիտեմ, Օսան զան, շգիտեմ... երկի այդ էլ իմ արած լավության փոխարենն է: Հինգ տարեկան երեխա էր, որ հայրն ու մայրը մեռան, վերցրի պահեցի, ուսումի տվի. հիմի որ մարդ է գառել, ինքն ունի, ես չունեմ, հիմի... Է՛ս, աստված բարի տանրան, աստված բարի տա: Ես այսօր կամ, էգուց չէ, բայց մարդ մարդու լավությունը չպետք է մոռանա, ուր մնաց հարազատ եղբոր որդին...

Մանեն ուշի-ուշով ականց էր զնում ծերունուն, և նրա հոնքերի միջև խստորեն գծված բնորոշ մի խորշոմ ցուց էր տալիս, որ ինչ-որ խիստ անխործ բան է զգում նա հոգեպես: Բայց նա ամենեին շէր խառնվում սկսերոց ու ծերունու խոսակցությանը և ցստ երևույթին, աշխատում էր ուշադրությունը կենտրոնացնել իր ստների տակ գետնի մեջ թաղված մի հին գերեզմանաքարի վրա,

որք մակերեսը հավասարեցրած էր գևտնին և կողքերից, այս ու այնտեղ, նոր սկսել էին ծիլեր արձակել խոտի հատ ու կենտ փրնչեր։ Գերեզմանաքարի վրա քանդակված էր եպիսկոպոսական խույր, զավագան կրենդելի պես ծոված երկճյուղ օձագլուխներով և ինչ-որ քառանկյունի մի բան— անշուշտ ավետարան, որի բաց երեսների վրա մեծ դժվարությամբ կարդացվում էին հետեւյալ խոպերը՝ «Եկայք առ իս ամենայն վաստակյալք և բեռնավորք, և ես հանգուցից զձեզ»։ Հնությունը, անձրևներն ու արեք և մարդկանց ուսներն իրենց անխուսափելի ավերածությունն էին տարածել այդ սրբաշան նկարների և ավետարանական խոսքերի վրա, իսկ բուն արձանագրությունն այն աստիճան մաշվել էր, որ բոլորվին անընթեռնելի էր դարձել։

Նորանոր ժամավորներ էին գալիս, և եկեղեցու խաղաղ բակը հետպհետեւ կենդանություն էր ստանում։ Զաքարն իր խարիսով ձայնով գեռ իր գանգաւոն էր անում եղբոր որդուց, Ըսանի ու Մանեկ մեջաեզր կացած, և Մանեն, ներքին անախորժությամբ լսելով նրան, դեռ դիտում էր եպիսկոպոսական գերեզմանաքարը, երբ նրանց առջև բանվեց պառավ, կմախքացած մի կին՝ հնամաշ, տեղ-տեղ կարկատած սկ հագուստով, խունացած սկ քիշմիրի մի շալ գլխին։

— Քա՛, Հոռոմսի՛մ, — բացագանձեց Օսանը։

Հոռոմսիմն ընդհանուր բարե տպեց և աշքերով տեղ որանեց նստարանի վրա, որ նստի։ Նստարանն այնքան կարճ էր, որ չորրորդ անձի համար տեղ չկար նստելու, ուստի Մանեն շտապեց վեր կենալ։

— Վո՞ւ, չէ, չէ։ Մանե շան, նստիր, — կանչեց Հոռոմսիմը և աշխատեց թույլ շտալ, որ նա վեր կենա։

Բայց և այնպես Մանեն վեր կացավ, իսկ Հոռոմսիմը չնըստեց, և երկուսն էլ մնացին ոտի վրա։

— Այս որտե՞ղ ես, մեծ պասն անցկացավ, քեզ ժամումը լսեսա, — ասաց Օսանը։

— Վա՛յ իմ խեղճ գլխին. ես այն օրումն եմ, Օսան շան, որ ժամ կամ պատարագ միտս գա, — պատասխանեց Հոռոմսիմը վերին աստիճանի խլճուկ ձայնով, որբ, սակայն, ամենափել չէր համապատասխանում նրա ահագին աշքերի անախորժ փայտին, ունիցած դիմքի անգաղար ձգձգվաղ միանունքներին. և վերին աս-

տիճանի եռանդալից շարժումներին, որոնք խիստ կովարար ենոց տպավորություն էին գործում։

— Ի՞նչ է պատահել։

— Էլ մի հարցնիլ, Օսան չան, էլ մի հարցնիլ. իմ որգու արարմունքն ինձ ողջ-ողջ գերեզման դրեց։

— Էլի դժություններ է անո՞ւ։

— Վույ, այնպես գժվի նրան գժվեցնողը, ոնց որ ես զիտմ, — բացագանձեց Հոռոմսիմն այնպիսի ահարկու մի եռանդով, որ կարծես թե այդ էր նրա սրտի միակ ամենամեծ բաղանքը։ Հետո նա լեռքեցը ծալեց կրծքին, աշքերն աղոթողի պես ձգեց եկեղեցու պատոն ի վեր և շարունակեց։ Խնդրել եմ մայր աստվածածնից, որ նա այրվի, այրվի, ոնց որ մենք ենք այրվում-փոթոթվում անկրակ նրա պատճառով։ Խնդրել եմ տեր առենակալից, որ նրա օրն ու կյանքն այնպես խավարի, ոնց որ մեր կյանքն է խավարել նրա պատճառով։ սկ ու մութ լուսանա նրա գլխին կարմիր չատիկը, ոնց որ սկ ու մութ է արել նա մեր օրերը…

— Ի՞չ, լավ մի դու էլ, — նկատեց Օսանը սնահավատի սարաւափով։ — Եկեղեցու պատի տակն էլ այդպես կանիծե՞ն։

— Լավ չի, Հոռոմսիմ, լավ չի, — նկատեց իր կողմից Զաքարը։ — Քրիստոսն ասել է..

— Ի՞նչ է ասել Քրիստոսը, — հանկարծ բղավեց Հոռոմսիմը ծերունու վրա այնպիսի կատաղությամբ, որ խեղճի խոսքը մնաց բերանում։ — Քրիստոսն ասել է՝ տուն-տեղ թող, մայր, կնիկ, որդիք մոռացիր, քաղցած-տկլոր պահիր նրանց ու ինչ որ աշխատես։ տար բողերի փորն ածած։ Քրիստոսն ասել է՝ զնա հարթիր, տրաքվիր, կես-զիշերներին տուն արի ու առանց պատճառի կնկանգ փայտի տակ զիր զարդի՛ր Հա՞՝, Քրիստոս այդ է ասե՞լ։ Բաս շանիծե՞մ նրան այգային գժվեցնողին։ Բաս շասե՞մ..

— Սպասիր, Հոռոմսիմ, — ընդհատեց Պրա խոսքերի տարափն Օսանը։ — Դու գիտե՞ս ով է որդուզ խեղճից հանել։

— Ինչո՞ւ, դու շգիտե՞ս, Մանեն շգիտե՞։ — ասաց Հոռոմսիմը և, որովհետև Օսանն ըստ երեւզին շգիտեր և զարմացած նայեց նրա զայրացկոտ աշքերին, ավելացրեց։ — այն չպնտած, այն անհամուս ակուշերկեն է, էլի... Հեղինե Սոլիկցանը, — կտրվի նրա անումց։

— Քա՛, — բացագանձեց Օսանը և ձեռքերը բունցք կազմած։

Դրեց շրթունքների վրա ի նշան առշատթյան՝ նա մեծ տարակուսանքով նայեց հարսի աշխարին, կարծես հարցնելով, թե մի՞թե նրան հայտնի էր այդ բանը:

Մանեն խուսափեց սկսրոջ այդ հայացքից և մեքենայաբարնայեց դեպի հարեան կտուրը, որտեղ գառը նորից սկսել էր մայել համառորեն:

— Սոլիկենց Ստեփանի աղջիկը... կճանաշեմ,— ասաց Զւարը, կարծես. ինքն իրեն:

— Ե՞ս, սև մահը ճանաշի նրան, գետինը գնեմ նրա անունը,— սրտանց վրա բերեց Հոռոմսիմը և արագորեն նստեց Օսանի կողքին:— Ես զարմանում եմ ձեզ վրա. Օսան,— ավելացրեց նա հանդիմանորեն:— ախր այն աննամուսին դուք ո՞նց եք տուն թողնում:

— Վույ, Հոռոմսիմ ջան. պարտական լինեմ, թե սրանից ավելի ես իմացած լինեմ նրա արարմունքը: Ասենք՝ այն գլխից ես չեմ հավանել նրան. ժամանակ-անժամանակ ներս կընկնի; շաշանակի պես կխոսի, լիրբ-լիրբ կծիծաղի, պապիրոս կքաշի, դուրս կտա ինչ-որ բերանը գա, ոչ մեծ կհարցնի, ոչ պստիկ: Բայց դեպի պստկուց հարսիս բնկերուհին է եղել, ուսումնարանում միասին են սովորել, գալիս է, դուռը խո ետ չեմ զնիլ երեսին:

— Որ դուռն երեսին ետ չես զնիլ, խո կարո՞ղ ես ասել, որ դա զահել աղջկա արարմունք չէ: Բա զահել աղջիկը, աղապ աղջիկն այդպես աննամուս բաներ կանի: Ախր այսպես բան չի լինիլ, Օսան ջան, Մանեն ջան: Այնպես գժվեցողել է այն տղին, այնպես գժվեցրել, որ էլ աշքով աշք շունի կնկա վրա: Շատ անգամ, կեսգիշերներին, տուն է գալիս հարբած-տրաքված, էլ ի՞նչ ուշունցներ ասես՝ չի տալիս այն մեղք ու կրակ աղջկան, թե որ այն խեղճը մի ձայն էլ հանում է, պրծավ. շունը կապիր, նրան բաց թող: Մինչև հիմի ծեծել չեր իմանում, հիմի այդ էլ է սովորել փուչիչանալուն: Վարժապետությունից ձեռք վեր առավ, մտավ հաշվապահ, երկու ամիս էլ չդիմացավ, կովեց դուրս եկավ. մի տարի պարապ-սարապ թրե եկավ, հետո մտավ բանկը, այնտեղ էլ չըպահեցին, դուրս արին. վերջը կնկա փողերը խարխրելով դուրս բերեց բանկից, գնաց Մոսկով, թե՝ ուսումն կիււատ է, պետք է լրացնեմ: Մոսկովում ինչ արավ, ինչ շարավ— չեմ իմանում. երեք տարուց հետո ետ եկավ, սկսեց գրել լրագրներումը: Ասում են լավ փող է վերցնում, բայց մի գրոշ, մի սև գրոշ ասես տուն բերում

է, որ աշքներս կոխենք Աստված է վկա, օր է պատահում, որ տանը մի կտոր հաց չի լինում երեխանց ձայնը կտրելու համար ողջ ձմեռը շան պես կոնկոռնալով ենք անցկացրել, տան բրձու հավաքվել, տանիցը դուրս են անում: Մինչև այս հասակս են վարձկան չեմ բանել ուրիշի դռանը, հիմի այդ էլ եմ անում,-- կտրվի նրա նամուսը:— այն խեղճ աղջիկն էլ, մի օր լավ, տասն օր հիվանդ, օր ու գիշեր մեկ արած՝ հալած մոմ է դարձել ասեղի ծայրին շատ մտիկ տալուց: Բայց դե մեր կերցրածն ի՞նչ պետք է լինի, որ հինգ փոր կշտացնի: Խսկ նա, փուչ-փշանալուա, ինչ որ աշխատում է բողերի փորն է ածում: Սա օրենք է: Հը, ձեզ եմ հարցնում, սա օրենք է:

— Է՛, ժամանակ, ժամանակ,— արտասանեց Զաքարը ծերունիներին հատուկ անտարբերությամբ և գլուխը շարժեց:

— Ասում եմ՝ այ որդի, ինչի՞ ես այդպես անում:— շարունակեց Հոռոմսիմը:— Ես, ասենք, պառավել գնացել եմ, բայց այս խեղճ ջահել աղջկա օրն ինչի՞ ես մթնացնում: Ի՞նչ է արել բեզ, որ համ տկլոր ու քաղցած ես պահում, համ էլ ծեծում ու ջարդում: «Թե որ չի ուզում, ասում է, տկլոր ու քաղցած մնա, թե որ դու ուզում, ասում է, ծեծվի ու ջարդվի, թող ասում է, ուր ուզում է՝ դնա. Ես դրան պահողը չեմա:

— Քա՞—, արտասանեց Օսանը և նորից ձեռքը բռունցք կազմած դրեց շրթունքի վրա:

Հոռոմսիմը ձեռքերը դինչ արծ ժնկներին և, իր եռանդալից աշխերով նայելով Օսանին, զարունակեց, կարծես Օսանի տեղ մոտը նստած լիներ իր որդին:

— Հիմի շես պահո՞ղը, ասում եմ, երբոր խեղճ աղջկա ուղն ու ծուծը քամեցիր: Հիմի շես պահո՞ղը, երբոր խեղճի բաժինքի փողերը դուրս բերիր տարար լակեցիր:— քթովդ դուրս գա: Թե որ պահողը չէիր, ասում եմ, բայ ինչի՞ ուղեցիր, ինչի՞ այդ խեղճ աղջկա մեղքն ընկար: Հը, «Այն ժամանակն, ասում է, զահել էի, աշխարհը չէի ուսենել, ինելքս բան չէր կտրում. հիմի ամեն բան տեսել եմ, խելքացել եմ»: Տո՛, դա խելք է, ասում եմ, որ մարդ տուն-տեղ մոռանա, երեխերին քաղցած-տկլոր պահի, կնկանը ծեծած-ջարդած ու ինքն աննամուս աղջկերքի հետեւ թրե գա: Հը, դա խելք է: Ասում եմ՝ բաս որ ժամումը տերտերը հարցրեց «տե՞ր ես» ու դու էլ լեղուդ լըորացավ, ասեցիր «տեր եմ», բաս չէիր իմանո՞ւմ, որ մինչ գերեզմանը տեր պետք է լինես ու ան-

տեր շթողնես Հը՝, բաս այլքանն էլ շէիր իմանո՞ւմ։ ՇԱյդքանն էլ որ իմանալի, ասում է, իսկի ժամ էլ շէի զնալ, ժամս ո՞րն է, ասում է, տերտերս ո՞րն է։ Վեքսել խոմ շեմ տվել, ասում է, որ պարտք բկիցս բռնած առնեն. մի խոսք է, էլի, ասել եմ, ասեցնել են աւել, ես էլ ասել եմ. ամենքն ասում են, ես էլ ասել եմ։ Դե արի ուրան ասա, Ի՞նչ ասեմ։ Հը՝, ձեզ եմ հացնում, ի՞նչ ասեմ։

Զաքարչ գլուխը բարձրացրեց և նայեց Հոռոմսիմի զայրացկոտ ու տարակուսալից դեմքին։

— Այն ասա, թե՝ որդի, աստծու ճանապարհիցը դուրս ես զալիս, հոգիդ սատանի փայ ես անում, — ասաց նա ծանր ու հանգուավոր ձայնով։ — Ասա նրան, թե վեքսելը, թղթի մի կտորը, ավելի մեծ գին ունի՞, թե աստծու սուրբ սեղանի առաջ, խալի ու աշխարհի վրա տված խոսքը։

— Ես, ասում է, աստված-մաստված, խաչ-մաշ շեմ ճանաշում, չէ, — աղաղակեց Հոռոմսիմն իր բարկացկոտ աշքերը փայլցնելով ծերունու վրա։

— Ծննում ե՞ս... բաս ասա թուրքացել է, էլի, — նկատեց Օսանը։

— Ականջ դիր, Օսան, ինչ եմ ասում, — ասաց Զաքարը, կամաց շոշափելով նրա թերը։ — Ամեն աստծու օր ես ժամ եմ գալիս, իսկ կիրակի օրերը ճաշին Վանքն եմ զնում, որովհետև պատարադին լավ ժամ են ասում, Վանքի բակը որ մտնում եմ, տեսնում եմ լիքն է մեր չահելներով։ Օտար մարդ որ մտիկ տա, կասի՞ ի՞նչ ժամասեր են այս հայ չահելները։ Բայց որ հարցնես՝ իսկի մեկը մտնում է՞ պատարագ տեսնելու, երեսը խաչակնքելու, մոմ մասելու, աղոթք անելու Բան շունե՞ս։ Մտնողն էլ այնպիս է պահում իրան առածու սուրբ տաճարի մեջ, որ կասես իրանց տանը լինի Երեսը խաչ հանել, մոմ վառել, ծունկ լոքել, աղոթել խոշ շկա ու շկա. որ շամաշէն, պապիրոս էլ կրաշեն։ Հիմի Հոռոմսիմի որդին էլ դրանցից է, էլի կարծում են, մենակ դա է՞։ Ու մենակ տղերքը շեն, Օսան. ուղղիերքն էլ Են այդուհու։

— Այ, հիմիկա աղջիկը իմաստուն էլ այնտեղ դետինը գնեմ, — սրտաց վրա բերեց Հոռոմսիմը։ — Դիմի դրանք չեն չահելներին գմւեցնողը։ Ի՞նչն էր իմ որդունը. առաջ ինչ նամաղուներ էլ որ աներ, էլի առան պատիվն էլ գիտեր, կնկա պատիվն էլ. իսկ իմ առաջ կհամարձակվե՞ր մի աշելորդ խոսք ասէ։ Իսկ հիմի, ինչ որ կապվել է այն աննամուսի հետ... Ծատ անգամ

այնպիս սրտի եմ գալի, Օսան զան, որ ասում եմ դուրս անեմ տանից, էլ մոտ շթողնեմ. հաննամը — ուր ուզում է՝ կորչի. առանց այն էլ չկա ու չկա, թող իսկի վինի. գոնե այն մեղքուկրակ աղջիկը կհանգստանա։ Մեկ էլ ասում եմ՝ չէ. մարդ մեջ զցեմ, ո՞վ գիշեցի կանգստանա։ Մեկ էլ ասում եմ՝ չէ. մարդ մեջ զցեմ, ո՞վ գիշեցի, չահել է, ինձնից չի քաշվում, գուցե ուրիշներից քաշվի, խելքի դա։ Օսան զան, մի որ տեսնես նրան, չես կարո՞ղ խրատի։

— Երատի՞ — բացաղանչեց Օսանը, և նրա գլուխն սկսեց ավելի շարժվել — Ես այն լավին ածեմ գլուխն, որ ասի թե հաւաքսոս, որ ես այդ բաները վաղ չեմ իմացել։ Հայ գիտի հաւաքսոս, բաս իմ որդին չահել չի եղել, էլի, որ այդ նամաղուները չի արել։ Վույ, աստված ոչ անի. այն օրը սկ մահ լիներ իմ գլուխն։

— Օսան զան, թե որ դու այդ բանը կանես, հենց իմանաս, թե մի գերի ես աղատել, — ասաց Հոռոմսիմը, և այս անգամ նրա կովարար ձայնը հնչում էր լացագին։ — Դու էլ, Մանե զան, այն... այն... լավ աղջկան ասա՝ ի՞նչ ես ուզում մեղանից, ինչի՞ ես մեր մեղքը վեր առնում։ Մանե զան, ամր չես իմանում. մի օր որ գաս տեսնես մեր հալը, լաց կլինես, աստված է վկա. քարն ի՞նչ է, քարն էլ լաց կլինի։

Արտասուրի կաթիլները մեկը մյուսի հնտեկից դուրս էին ցալում հարատն զրկանքներից ու վշտից կմախքացած այդ պառավ կնոջ աշքերից և արագորեն գլորվում նրա խորշոմածայտերի վրայով, աղամանքների պես շողշողալով արևի ճառագայթների տակ։

Մանեն կանգնած էր լուր ու անշարժ և նայում էր նրան տամուկ աշքերով, շրմունքները պինդ սեղմած իրար, ըստ երևութին զսպելով իրեն. որ ինքն ես լաց լինի այդ խեղճ պառավի աղեկտուր խոսքերը լսելիս և առատ արտասուրները տեսնելիս։

— Ծատ լավ, — ասաց նա հանկարծ. — Ես կտեսնեմ նրան... անպատճառ կտեսնեմ։

Արևն ավելի ու ավելի տաքացնում էր օդն ախորժելի շերմությամբ։ Վերեը, եկեղեցու տանիքի վրա, նստած էին երկու աղավնի ուռած-փքված և զունդունում էին իրենց քնարեր խոլ ձայնով։ Եկեղեցու պատի հնտեկից, բակի մյուս կողմը, լսվում էին ժամագոր կանանց բարձրաձայն խոսակցության և երբեմն ծիծաղի ձայները։

Վերջապես եկավ քահանան — նոր-նոր աղվամազը դուրս եկած մի նորընծա, մեջքին խիստ հուպ տված փալլուն փարազայով և

փափուկ կաստորի նոր գլխարկով։ Հետո եկավ տիրացուն— տերտերից շատ ավելի հասակով մի մարդ՝ խիստ մազակալած տգեղ դեմքով, արբեցողի պղտոր ու կարմիր աշքերով, ամառվա հնամաշ վերարկուով և տիրացուներից անբաժան հովանոցը ձեռքին Եկեղեցուց փութենու քայլերով գուրս եկավ ժամկոչը «հասարակ» տալու Դա գլուխ առաջ ընկած, կուրծքը ներս ընկած մի ժիր ծերունի էր ահագին սապատով և սև մահուղի այն աստիճան խունացած չուփակով, որ մեջքին՝ սապատի վրա, կարծես մամուռ էր բսել և արեկից խանձվել Փոքրիկ զանգակները— մեկը բարիտոն, մյուսը տենոր— հնչում էին շափաբերական շեշտերով՝ տամ-տիմտոմ, և նրանց ձայները զիլ ձկլթոցով կարծես պոկ էին գալիս ինչոր խեղդող մի բանից, ուրախական աղաղակով գուրս թոշում զանգակատան կաթուղիկեի նեղ կամարներից, բազմերանգ թելերի պես հյուսվում իրար հետ, սլանում ազատ օդի մեջ և շնչասպառ մարում արագորեն, կարծես, ողբալով. որ իրենց գոյությունն այդքան կարճատե է։

## II

Հոռոմսիմի որդու և Հեղինե Սոլիկյանի միջն եղած կապը թեև վաղուց հայտնի էր Մանեին, բայց նա իբրև կրթված կին՝ իրեն միանգամայն հեռու էր պահում նրանց անձնական գործերին միշտամտելուց և շտեսնելուն էր տալիս նրանց ավելի քան մերձաւոր հարաբերությունները; Նա շատ լավ ճանաչում էր թե Սեղրակ նասիբյանին և թե Հեղինե Սոլիկյանին, մանավանդ վերջինիս. զիտեր, որ երկուսն էլ ազատ, անկախ հայացքների տեր անձեր են, ամեն տեսակ նախապաշարումներից հեռու ե, ինչպես ասում էր Հեղինե Սոլիկյանը, «բուրժուական բարոյականությունը» ժխտող։ Բայց երբեք չէր կարծում, որ նրանք, այդպիսի անձեր լինելով հանդերձ, զուրկ կլինեն խղճահարության ամենատարրական զգացումից անգամ և ընդունակ կլինեն զոհ բերելու իրենց հանցավոր կրքին մի ամբողջ անմեղ ընտանիք։ Այս պատճառով Հոռոմսիմի պատմությունը այն աստիճան վրդովել էր նրա հոգին, որ նա վճռեց այդ օրն իսկ տեսնել ընկերուհուն և լրջորեն խոսել նրա հետ։ Այդ դիտավորությամբ երեկոյան գեւ գուրս եկավ տնից։

Հեղինե Սոլիկյանն ապրում էր երեք հնայակից բաղկացած վարձու մի բնակարանում, իր մեծ քրոջ՝ Սալոմեի հետ, որը խուլ ու համբ պառակած մի օրիորդ էր մոտ քառասուն տարե-

կան, ականջների մեջ շարունակ բամբակ խրած։ Հայր, մայր, եղբայր նա չուներ, ուներ միայն այդ մի հատիկ քույրը, որին սիրում էր ոչ այնքան նրա համար, որ իր քույրն էր, որքան նրա դժբախտության համար։ Իսկ Սալոմեն, աշխարհային բոլոր վայելքները մոռացած, նույնիսկ արտաքին աշխարհից միանգամայն կտրված, հոգով-մարմնով նվիրված էր փոքրիկ քրոջը, որին սիրում էր առանձին մի բնրշանքով և նայում էր նրա վրա մոր պես։ Թվում էր, թե նա ուրիշ ոչ մի հոգացողություն չունի, բացի միայն այն բանից, որ այն սակավաթիվ ժամերին, երբ Հեղինեն տանն էր լինում, ոչ մի բանի պակասություն չզգար, դժգոհության ոչ մի առիթ չունենար։ Սալոմեի ամբողջ աշխարհայացքը պարփակված էր տան շորս պատերի մեջ։ Տան գործերին նվիրված էր ֆանատիկոսի եռանդով և օրնիբուն զբաղված էր մաքրելով, լվանալով, եփելով, թեև ժառանգ ունենալով. մնացած ժամանակը զբաղվում էր կամ իր հնամաշ շորերը կարկատելով, կամ գուլպա գործելով, կամ իր անթիվ ժաղկամաններով, որոնցով լիքն էին բոլոր լուսամուտները և պատշաճամբը։

Այժմ էլ, երբ Սահմեն գնաց նրանց տուն, Սալոմեն ինչ-որ բան էր շինում խոհանոցում։ Կ Մանեն անցողակի տեսավ նրան՝ թեկերը քշտած և թաց զոգնոցով։ Երեխ իր այդ անկարգ դրությունից քաշվելով, Սալոմեն դուրս շեկավ հյուրի մոտ, բայց նրա փոխարեն սենյակից գնդակի պես դուրս նետվեց ինքը Հեղինեն— դեռևս շատ ջահել մի աղջիկ՝ ոսկե պենսներով, մինչեւ ուսերը խուզած գանգուր մազերով, առանց կորսեի, գիրուկ, կլորիկ, ցածրահասակ, տեղնուտեղը եռանդ, կրակ ու ծիծաղ։ Կարծես շարաձնի մի տղա լիներ աղջկա շոր հագած։

— Մանե ջան, այս ո՞ր քամին է քշել քեզ իմ կողմը, — կանչեց նա, իր փափլիկ կարճ մատներով առնելով նրա ձեռքիրը!— Ի՞նչ լավ է, որ եկել ես. ես մեռա մենակությունից, թեև նոր եմ վերադաշտել տուն և այնքան հոգնած եմ, որ քիչ էր մնում պառկեի քնեի։ Արի մի պոռշտի անենք։

Եվ նա բարձրացավ ոտների ծայրերի վրա, որ հասնի Սահմեի շրթունքներին։

— Դե՛, շամփուր խո չե՞ս կու տվել, մի քիչ կոացիր, է՛, որ հասնեմ, եղբորդ պես բարձրացել ես, կարծես թե ուզում ես... շլոր քաղել։

Մանեն ծիծաղեց ակամա և խոնարհվեց Հեղինեի դեմքի վրաւ

Հեղինեի այդ անկեղծ ուրախական ընդունելությունը մոռացնել տվեց նրան այն վրգովմունքը, որով եկել էր՝ կովելու ընկերունու հետո:

Մանեի շրթունքները մի քանի անգամ պինդ համբուրելուց հետո, Հեղինեն, մի ձեռքով բռնած նրա ձեռքից, մյուսով քթի վրա ուղղելով պեսնեն, ներս տարավ նրան ծաղկամանների երկայն շարանի միջով, նստեցրեց բազմոցի վրա և ինքն էլ արջի քոթոթի պես թրմփալով, տեղավորվեց նրա կողքին:

— Երեկ եղբորդ էի հարցնում, թե ի՞նչ է պատահել քեզ, հիվանդ խոր շե՞ս, որ չես գալիս ինձ մոտ:

— Եղբո՞րս, — զարմացավ Մանեն:

— Հա՛, Վահանին:

— Մի՞թե նա այստեղ է:

Հեղինեն ոկզբում ինքը զարմացավ Մանեի այդ հարցի վրա, հետո հանկարծ բարձրածայն ծիծաղեց: Ծիծաղելիս նրա փափլիկ այտերի և լիքը կավակի վրա մատնեհարներ էին գոյանում:

— Այ քեզ բա՞ն... Մի՞թե նա գեռ չի եկել քեզ մոտ:

— Զէտ, ես մինչեւ անգամ շգիտեի, թե այստեղ է:

— Ի՞նչ ես ասում, — բացագնչեց Հեղինեն, և նրա ծիծաղը սաստկացավ: — Իսկ նա ասում էր, թե բոլորովին ողջ և առողջ ես, թե արցեն սկսել ես զատկվա համար պասքաների պատրաստություններ տեսնել, թե ինձ համար ինչ-որ մի այուրպրիզ ես պատրաստում... մի խոսքով՝ խոսում էր այնպես, որ կարծես թե հենցնոր քեզ մոտ էր եղել: Եվ բոլորովին լրջորեն, գիտե՞ս: Հա՛, Հա՛, Հա՛... Ի՞նչ մաղալու մարդ է: Գտփազանց հավանում եմ նրա բնավորությունը: Սուտ կխոսի հենց միայն նրա համար, որ սուտ խոսած լինի և զվարձանա, թե ինչպես դիմացինը ճշմարտության տեղ է ընդունում իր սուտը: Դուրս է գալիս մի տեսակ «գեղարվեստը գեղարվեստի համար»: Այ, եթե գու ունենայիր նրա բնափորության գեթ մի հազարերորդ մասը, այսինքն՝ կյանքի և մարդկանց վրա նայեիր նրա պես հեգնորեն, այդպես... չէր լզարիլ, թեն խորհուրդ էլ չէի տալ, որ նրա պես շաղանայիր: Սոսկալի բան է դառել, որ տեսնես: Առաջը կանգնած՝ ուղղակի թզուկ էի երեսում իմ աշքում, թեն ես էլ մսի մի գունդ եմ: Իսկ բարձրությունը... Սիրտս ասում էր՝ թռչեմ նստեմ ուսին լավ տեսնելու համար— մա՞րդ է, թե մի այլ արարած աշղահաների ցեղից: Ա՛խ, ինչպես կուզեի, որ նա իմ եղբայրը լիներ: Նրա հայացքից, հետո

խօսակցության առնից այնպիսի մի բան ես զգում, որ կարծես թե խտղում են կոներիդ տակ. Համ ախորժելի է, համ անախորժ, համ ծիծաղում ես, համ զայրանում, բայց ընդհանրապես գժի պիս ուրախ ես զգում քեզ: Որ նրա մարմնի ահապնությունից շվախենամ, անպատճառ կսիրահարվեմ, արևս վկաս կատած ժամանակ մի քիչ որ պինդ հուպ տա, ճիմիլ-միմիլս կհանի: Նրա համար կատվի իսակ կլինի, ինձ համար մկան մահ:

Եվ, շատ սրամիտ համարելով իր այդ համեմատությունը, Հեղինեն շարունակեց ծիծաղել, բայց Մանեն շմպտաց անգամ: Առիթը շատ հարմար էր, որ Մանեն խոսր բանար իր այցելության նպատակի մասին, և Հեղինեի վերջին խոսքերն այն աստիճան ցինիկական թվացին նրան, որ քիչ մնաց ընկերունու երեսովը շպրտն՝ «մեկը բավական չէ», որ երկրորդն էլ ես ուզում ունենալու. բայց զապեց իրեն և ասաց:

— Սպասիր, մեկ գա ինձ մոտ. այնպե՞ս կովեմ որ...

— Իսկ ես, որ քո տեղը լինեմ, վրա կընկնեմ և այնքան կըսաւողչեմ, որ երեսի կաշին կպոկեմ: Ես եղբայր շոնիմ և չեմ ունեցել, բայց որ ունենամ, զգում եմ, որ զժի պես կսիրեմ:

Հեղինեն վեր կացավ, մի պապիրոս առավ սեղանի վրա դրած թղթի արկղիկից, վառեց և նորից նստեց Մանեի մոտ:

— Ուրիշ, ասա, է՛, ինչպե՞ս ես: Այսօր... Սպասիր, այս ի՞նչ ես քսել վզիգ: Երեսդ մի քիչ այն կողմն արա: Ա՛խ, երա՛կդ է: Իսկ ես կարծեցի թանաք ես քսել: Դե՛, մի՞թե կարիլի է այդքան լզարել Մարդդ գեռ չի՞ վերադարձել հանքերից:

— Ոչ:

— Գիտե՞ս, այսօր հիվանդանոցի լուսումուտից տեսա քեզ սկսուրիդ հետո: Ասսացի՝ փա՛ռք քեզ, աստված, ահա՛ մի օր, երբ իմ սիրուն թոշնիկը դուրս է թռել վանդակից ուարնան հրաշալի օղում ճախրելու Բայց մի բան հարցնեմ. ի՞նչ հաճույք ես զգում, որ առանց պառավի՛ տանից դուրս չես գալիս: Վախենո՞ւմ ես, ի՞նչ է, որ... Բադամյանը հանկարծ բռնի ու փախցնի...

Մանեն հոնքերը կիտեց և հայացքը ձղեց ծնկներին:

— Գու, երկի, մեղ տհսել ես այն ժամանակ, երբ մենք ժամ էինք գնում կամ ժամից գալիս, — ասաց նա բավական սառն կերպով:

— Ժա՞մ... ի՞նչ ես ասում: Ճաշին էր, որ ձեզ տեսա:

— Այո, մեծ պասին ճաշին էլ են ժամ ասում:

Հեղինեն հանկարծ իր փափլիկ ձեռքերը խփեց ավելի ևս փափլիկ թշին:

— Ի՞ս, ճիշտ որ... հիմա խո մե՛ծ պաս է, Հիշո՞ւմ ես, մեծ պասին որ տեղ, աշակերտուհիներիս, ժամ էին տանում հաղորդելու Տերտերը պազում էր սյունի տակ, իսկ տեղ թխսկան հավի պես հավաքում էր իր շուրջը և կրկնել տալիս «Մեղայի» խոսքերը. չորկրամությամբ և մասամբ նորին, ողջահոփությամբ և մասամբ նորին, գիճությամբ և մասամբ նորին, ոտնահարությամբ և մասամբ նորին...։ Հիշո՞ւմ ես, որ ես փոթկոցս շէի կարողանում պահել, իսկ դու կմշտում էիր կուռս թե՝ ուս կաց, Դու մինչն այժմը էլ մնացել ես նույնը, իսկ ես... Այ, ինչ է նշանակում մեծանալ և աստծու ճանապարհից հեռանալ: Բավական չէ, որ այլևս չեմ ապաշխարհում, այլև մոռացել եմ ապաշխարության օրերը: Վա՛յ, հազար վա՛յ իմ հոգուն. Սադայելը կպրի կարասր կիւնի ու կհանի: Այն ժամանակ հազար «վա՛յ, նանի ջան» կանչի, ո՞վ է օգնողը: Երանի քեզ, որ ժամ էլ ես գնում, պաս էլ ես պահում, հաղորդվում էլ ես: Քեզ համար պատրաստ է Աբրահամի գույք, իսկ ինձ համար սանդարձետը «Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ. զի անթիվ են հանցանք իմ, աններելի են մեղք իմ և... և... և...։ Դե՛, միտու գցիր է, տեսնում ես մոռացել եմ:

Եվ Հեղինեն շարաճճի կերպով խթեց Մանեի կողքը:

Մանեն խիստ սառնորեն վեր կացակ նրա մոտից և հեռացակ դեպի լուսամուտը: որի բաց փեղկի ապակիները բոցավառվում էին մայր մտնող արկի հրավառ ճաճանչներից: Նա զգում էր, որ ընկերուհու մասամբ անհոգ, մասամբ հւզնական, մասամբ ցինիկական և ընդհանրապես բավական անձնապաստան տոնը հետրդետե գրգռում է իրեն այն աստիճան: որ նրա սանձարձակ ծաղրական լեզուն նողկանքի պես մի բան է ազգում իրեն:

Հեղինեն նայեց նրա հետեւից, պապիրոսի ծուխը հանեց քթածակերից և ուրախ բրջաց: Նրա ծիծաղի մեջ լսվում էին անախորժ սուր ծկլթոցներ, շճյութված սոնու ծվոցի պես. և ծիծաղելիս նա բարձրացնում էր զեմքը, կարծես կամ ենալով պենսեն ամուր պահել քթի վրա, որ վայր շընկնի ծիծաղի պատճառած ցնցումներից:

— Զարմանալի է, ինչո՞ւ ես նեղանում, — բացականեց նա. — Մի՞թե ճիշտ չէ, որ դու արդար ես, իսկ ես մեղավոր. որ դու դրախտը կգնաս, իսկ ես դժոխքը:

Մանեն կամաց դարձավ և զատ լրջորեն նայեց շնկերունու պենսենեին, որի հետեւից լէին երկում նրա աշքերը, որովհետև պենսենի պարզ ապակիները պլազում էին լուսամուտի ապակիներից անդրադարձող արկի պայծառ լույսերի տակ:

— Ես զարմանում եմ թեզ վրա, ելեն, — ասաց նա: — Դու կրթված աղջիկ ես, նույնիսկ բարձր ուսում ես ստացել. միթե այնքան չես հասկանում, որ կան բաներ, որոնց եթե չես հավատում, գեթ պիտի գիտենաս հարգել և, համենայն դեպս, շաղրել:

— Այսի՞նքն:

— Միթե կարելի է ծաղրել մի բան, որ միլիոնավոր մարդկանց հոգեկան միակ ամենաբարձր միխթարությունն է կաղմում...

— Կրոնական զգացո՞ւմը՝ ուզում ես ասել:

— Այսո՛, կրոնական զգացումը, — շեշտեց Մանեն: — Այդպե՞ս են անում եվրոպայում, ուր գնացել ման ես եկել դու:

Հեղինեն պապիրոսն արագորեն դրեց մոխրամանի վրա և վեր կացակ: Մանեի խոսակցության լուրջ տոնը, ըստ երևոյթին, աղդեց նրան, և նա ինքը լուրջ դեմք առավ:

— Դու ի՞նչ գաղափար ունիս եվրոպայի մասին, — ասաց նա: — Չլինի՞ կարծում ես այնտեղ մզդակիներ շկան: Սխալվում ես, սիրելիս: Խսկական մզդսի ուզում ես, արի տանեմ քեզ եվրոպա: Թե չէ մերոնք ի՞նչ են. — անամոթ կեղծավորներ և անհավատներ: Ծլաղստոնի պես մի ազատամիտ մարդու գրասեղանի վրա հրեն: ասում են, հոմ-ռուլի կողքին աղոթագիրք է զըրված միշտ: Իսկ Տուստոյի գրվածքները խո ինքդ էլ ես կարդում. մի տող կգրի, որ մեջը աստված Ալինի:

— Եվ ի՞նչ է ապացուցանում այդ, — հարցրեց Մանեն:

— Այս այն է ապացուցանում, իմ սիրունիկ տիկին, որ երուսալեմում էլ են շներ հալում: Իսկ ինչ վերաբերում է այն բանին: որ դու ինձանից հարգանք ես պահանջում դեպի կրոնական զգացումը, ես մի օրինակ կպատմեմ քեզ իմ պրակտիկից: Մի անգամ ինձ կանչում են մի ծննդաբեր կնոջ մոտ՝ տգետ տատմոր փշացրածն ուղղելու համար: Մի խեղճ ու կրակ արհեատավոր կին էր: Գնում եմ և ի՞նչ տեսնում: ուշաթափ ծննդաբերի գլխին տղամարդի: ահապին մի փափախ և բարձի տակ սոխ շարած մի շամփուր, իսկ բուխարու վրա մի դյուժին վառած մոմ: Ի՞նչ ես կարծում, ի՞նչ էր թելադրում այս ծիծաղելի բաներն անելու:

— Պարզ նախապաշտումը և սնահավատությունը

— Եվ ոչ կրոնական զգացրմը, որ մայրն է բոլոր նախապաշտումների և սնահավատությունների: Չե՞ որ կրոնը, — ո՞րն ուզում ես վերցրու, — ինքնին արդեն հսկայական մի նախապաշտում և սնահավատություն է: Եվ ո՞ւր էր, թե նա բավականանար միայն պառավական միամիտ և անվնաս նախապաշտումներով: Մինչդեռ մենք գիտենք, որ նա անհաջիվ աղետներ է բերել մարդկության գլխին: Իո գիտես ինչ բան է կրոնական մոլեռնդությունը. մարդկի դուրս են գալիս հոգեկան նորմալ դրությունից, խելագարվում են, գաղանանում և կամ իրենց են շարշարում ու մորթում, կամ ուրիշ իրենց նման արարածների: Ոչ մի համաճարակ հիփանդություն. ոչ խոլերան, ոչ ժանտախտը և ոչ նույնիսկ ամենամեծ պատերազմներն այնքան զոհեր չեն տարել, որքան տարել և տանում է նույնիսկ մեր ժամանակում կրոնական մոլեռանդության համաճարակը: Հիշիր քրիստոնեության առաջին դարերը, ինչպիցիցիան, հիշիր իսլամականության կատաղի բորնկումները, կամ թեկուզ հնեց բուդդայականությունը, որը թեև ուրիշի մի մաղին անդամ չի դիպչում, չի գործում քրիստոնեության և մահմետականության պես հրով ու սրով, բայց դրա փոխարեն ուստում է ինքն իրեն, կամ աց-կամաց ծծում, մաշում և մահացնում իր իսկ օրյեկտին: Դեռևս ոչ մի կրոն աշխարհին երեսին ոչինչ չի վերածնել, ոչ մի բանի կյանք ու կենունություն չի ավել, այլ միայն կործանել է, կործանել է շարութակ և շարունակ մահ ու ավեր է տարածել իր շուրջը՝ ամենակուլ վիշապի պես...

Մանեն նորից դարձել էր դեպի լուսամուտը և նայում էր դուրս: Նրա առջև բացված էր ամբողջ արևմուտքը և քաղաքի մի մասը սարալանջին՝ իրար վրա կուտակված տներով, որոնց բազմերանդ տանիքները կարծես թե դարսված էին իրար վրա ձկան թեփի պես: Արևմուտքում, լեռան քամակին, մի ամբողջ ֆեյերվերկ էր վառված անշարժ ու հովհրատին: Նոր մայր մտած արեք հումկու թափով դուրս էր շպրտել լեռան հետևից իր բոցավառ ճամանչները հսկայական հովհարի պես: և այդ ճամանչները աղամանդյան երկայն ասեղների նման ցցվել էին երկնքի վրա անշարժ կանգնած նոսր ամպերի մեջ: Լեռը հսկայական մի ստվեր էր ձգել իր լանջին կուտակված տների վրա և խաղաղ, հետպէտե զովացող օդը կարծես թե լցված էր ուսկու փոշով:

Մանեն մոռայլ հայացքով նայում էր իր առջև բացված այդ

հրաշալի տեսարանին, սրտի մեջ զգալով ինչ-որ անորակելի հուզեր ու կրքեր, և հետևից լսում էր Հեղինեի ձայնը, որը ճորնշում էր ծղրիղի պես զղերը քայքայելու շափ երկար, հանդուզն ու համառու: Նա զգում էր, որ ընկերունու ասածների մեջ ճշմարտություններ շատ կան, բայց և, միևնույն ժամանակ, մի անորոշ բան նրա հոգու խորքում բողոքում և չէր ուղում հաշտվել այդ ճշշմարտությունների հետ:

Հանկարծ նա ցնցվեց իրանի վրա զգացած ինչ-որ անախործ մի բանի շփումից, — կարծես մեջքին օծ էր ուղում փաթաթվի, — և միևնույն ժամանակ ականջի մոտ լսեց Հեղինեի հեղնական ձայնը.

— Ճշմարիտ չե՞մ ասում արդյոք, իմ սիրուն տիկին:

— Զգիտեմ, — կամաց արտասանեց Մանեն և, արագորեն ազատելով իրանը նրա անախործ զրկախառնությունից, սկսեց անցուղարձ անել սենյակում զղային քայլերով:

— Զգիտե՞ս... ինչպես շգիտես, — բացագանցեց Հեղինեն: — Գիտե՞ս, բայց հին մտքերդ շարունակում են թշե՛լ թեզ իրենց հին ճանապարհով: Ես քեզ շատ լավ եմ հասկանում: Քո մեջ կատարվում է հին և նորի կորիվ: Բայց եթե լես ուղում ալով կովի զոհը դառնալ, պետք է միանգամից անցնես այդ երկու հակառակ և մեկը մյուսին ոշնչացնող տարրերից ամենազորավորի կողմը, որը նորն է, իհարկե: Այլապես կումպրոմիսները չեն օգնի: Այսինքն՝ այդ բանն այժմ շատ զժվար է քեզ համար, որովհետև մի անգամ արդեն այնպիսի մի հիմարություն ես արել, որ...

Մանեն կանգ առավ ակամա և զարմացած նայեց ընկերունու աշքերին:

— Ի՞նչ հիմարություն:

— Որ ամուսնացել ես: Ի՞նչ բան է ամուսնությունը կնոշ համար, — անխորտակելի մի շղթա, որ պինդ կապում է նրա ոչ թե միայն ձեռքն ու ոտքը, այլև սիրտը, հոգին, ուղեղը — ամեն բանը ի՞նչ բան: է ամուսնացած կինը: — ստրուկ, փալաս, տան զարդ, տղամարդու հեշտասիրության առարկան, նրա անկողնի ընկերը միայն, և ուրիշ ոչինչ, ոչինչ, ոչինչ...

— Դու զգելի գաղաքար ունիս ամուսնության մասին, — նկատեց Մանեն նողկանքով:

— Ոչ, սիրելիս, ես ճիշտ այն գաղաքարն ունիմ ամուսնության մասին, ինչ գաղաքար որ նա պարունակում է իր մեջ: Մնա-

ցածը կամ կեղծիք է, կամ անհասկացողություն, կամ ինքնախաբեություն:

— Ուրեմն ամուսնությունը դու... անբարոյականություն եւ համարում:

— Ես ավելի զորավոր բառով կարտահայտեմ այդ: Ամուսնությունն ես պոռնկություն եմ համարում...

— Էլե՞ն...

— Այո՛, պոռնկություն... սրբագործված պոռնկություն, ո՛ով ամուսնությունն ավելի ես զղվելի պիտի լինի հասկացողի համար,— բացագանձեց Հեղինեն և, ինչպես երկում էր նրա վառվող աշքերից, ամեննին կատակ չէր անում:— Ամուսնությունը՝ պոռնկություն չի լինէլ այն ժամանակ միայն, երբ կինը մարդկային իրավունքների տեսակետից համահավասար աստիճանի վրա կլինի կանգնած տղամարդու հետ՝ կյանքի բոլոր ասպարեզներում, և երբ կինը ծախու առարկա չի լինի, այլ տղամարդու պես ազատ ընտրող: Ցույց տուր ինձ խնդրեմ, մի կին, մի հատիկ կին, որ ամուսնության գործում ազատ ընտրող լինի հանդիսացած:

— Եթե խոսքը իմ մասին է, կարող եմ հավատացնել քեզ, որ «այո» ասելիս ոչ ոք չի բռնաբարել իմ կամքը:

Հեղինեն քրքչաց իր ձայնի անախորժ ծկլթոցներով:

— Եվ դու, այ միամիտ, կարծում ես, թե կարող էիր ասել «ոչ»,— բացագանձեց նա:— «Ոչ» չէիր կարող ասել, որովհետեւ նախ՝ այդ բառը վաղուց ջնջված է կնոջ բառարանի միջից և երկրորդ՝ եթե «ոչ» ասեիր, այդ միենույնը կիններ, թե ինքո քեզ սովորական դատապարտեիր: Մի՞թե այնքան շես հասկանում, որ սոցիալական արժման պայմաններում կինն ամուսնանում է նրա համար միայն, որ ինքն իրեն կերակրել չի կարող, որովհետեւ նրան շեն սովորեցրել և թուզ չեն ուղիս իր հալալ բրտինքով հաց ճարելու Ռաստի բոլոր, այսպես կոչված, օրինավոր ընտանիքների աղջիկները ստրաված են ամուսնանալ, այսինքն՝ ճարել մի տղամարդ, որ պահե իրենց այլապես նրանց կմնար կամ կուսանց մտնել, կամ անառականոց: Բայց որովհետեւ կուսանցի դռներն ավելի նեղ են, ուստի եղածացությունը պարզ է... Ահավասիկ, սիրելիս, այդ է եղել բուն պատճառը, որ դու ասել ես չայռ։ և ոչ թե այն, թե ոչ ոք չի բռնաբարել քո կամքը: Կամքի բռնաբարումն այն ձևով, ինչ ձևով որ հնումն էր կատարվում, մեր ժամանակում չկա, իհարկե, նույնիսկ զյուղերում, բայց դրա փոխարեն

կա այժմ այդ գերերջանիկ հնության հետևանքը, որ ավելի սարսափելի է: Այդ հետևանքը հոգու և մտքի մասամբ բռնի և մասամբ կամավոր այն շղթայումն է, որի մեջ կաշկանդված՝ կինը շի հասկանում իր դրությունը կամ, եթե հանկանում էլ է, չի իմանում ինչ անի, ինչպես դուրս գա այդ դրությունից, և կամա-ական մնում է միշտ նույն կամավորիկ, նույն ճնշված, նույն բռնաբարված ողորմելի ստրուկը տղամարդու, իր տիրոջ ձեռքին:

— Բայց խո դու դեմ չե՞ս ամուսնովյանը, — հարցրեց Մանեն զարմացած ոչ այնքան նրա խոսքերի, որքան այն լրջության վրա, որով պաշտպանում էր նա իր մտքերը:

— Ես դեմ իմ միայն ամուսնության այժմյան հարեմական կարգերին, որոնց մեջ կինը նկատվում է ոչ ավելի, քան ծախու արարած, առանց որևէ իրավունքի, բայց մեկի ստրուկն ու հարճը լինելու անպայման պարտականությամբ: Սա այնպիսի անբարոյականություն է, բարքերի այնպիսի այլասեռումն, որ այժմյան ամուսնության դեմ սովորական պոռնկությունը, հավատացնում եմ քեզ, շատ օրինավոր, շատ ազնիվ բան է հանդիսանում: Սովորական պոռնիկ կինը ծախում է իր մարմինը և փոխարենը փող է ստանում փորը կշացնելու համար. բայց նա աղատ է, նա անկախ է, ոչ մի պարտավորություն չի կաշկանդում նրան, նա վայելում է անհատի բոլոր իրավունքները և, երբ կամենա, կարող է վլողել իրեն գնողին: Իսկ ամուսնացող բարոյական կինը, իրեն ծախելով հանդերձ, ինքն է փող տալիս իրեն գնողին և դեռ խաչու ավետարանով էլ պարտավորվում է ցմահ հնագանդ լինելու նրան, այսինքն՝ նրա ստրուկը լինելու վերցնենք օրինակ քեզ...

— Էլե՞ն, այդ ինչե՞ր ես ասում, — շնչաց Մանեն այս անգամ պարզորեն ապշած նրա հանդինության վրա:— Ես խո նրա համար շե՞մ եկել քեզ մոտ, որ վիրավորես ինձ...

— Այ, ես այդպես էլ գիտեի, — բացագանձեց Հեղինեն ծիւաղելով:— Բուրժուական մորալն արդեն խոսեց քո մեջ: Բայց անհոգ կաց, սիրելիս. ես ամեննին միտք չունիմ քեզ վիրավորելու ես միայն ուզում եմ օգնել քեզ՝ դուրս գալու կախարդական այն դրությունից, որի մեջ գանգում ես դու Բազամյանի...

— Խնդրում եմ, այդ մասին ո՛չ մի խոսք, — խստորեն բնդհատեց նրան Մանեն գունատվելով:

Հեղինեն նորից ծիծաղեց:

— Մի՛ վախենալ, այդ մասին շեմ խոսելու, որովհետեւ գի-

տեմ, որ ինձ շես վստահանում, շնայելով որ ես քեզ անկեղծ սիրում եմ: Է՞ս, ի՞նչ արած: Այդ ավելի վատ քեզ համար,— դառնորեն և մի քիչ վիրավորված՝ ավելացրեց Հեղինեն:

Մանեն նորից մոտեցավ լուսամուտին:

Արևն այժմ խորեն էր մտել սարի հետեղ և արագորեն հանգցընում էր իր բոցավառ ճաճանչները: Հորիզոնի բազմերանգ գույները բանի հեռանում էին արեմուտքից, այնքան ավելի խունանում և աննկատելի կերպով միանում էին երկնքի լեղակադուն կապուտակի հետ: Հորիզոնից դեպի վեր, դեպի երկնակամարի խորքն էին լողում սպիտակ ամպի նուրբ բուլաներ— կարծես զաշտի մեջ արածելով հանգիստ դեպի իր գիշերային օթևանն էր գնում դառների ցրված մի հոտ:

Հեղինեն նստեց բաղմոցի վրա, ստբ ոտի վրա դրեց և շարունակեց.

— Քո վարմունքով զու միայն հաստատում ես, որ իմ ասածը ճշմարիտ է, այսինքն, որ քո հոգին ու միտքը շղթայված են և շղթայված այն աստիճան, որ չես ուզում թույլ տալ ոչ մի ազատ կրիտիկա: Եթե հոգիդ ու միտքը շղթայված լինեն, այդպես չէիր տանջիլ ինքը քեզ, չէիր աշխատիլ սպանել քո մեջ ազատ սիրո զգացումը, այդ բանը հանցանք համարելով: Հիշո՞ւմ ես, մի անգամ ասացիր ինձ, թե ամուսնացած կինը իրավունք չունի սիրելու ուրիշ տղամարդու եկրոպացի կինը կծիծաղեր,— եթե ավելին շասեմ,— քո ասիական կլասիկ այդ խոսքերի վրա: Դրանից ավելի զորավոր ապացույց չէիր կրող տալ, որ հոգիդ ու միտքը շղթայված են ստրկական կյանքի և բուրժուական մորալի մի որոշ—ուզո՞ւմ ես ասեմ— կրօնական սնահավատության մեջ, որից դուրս ամեն ինչ և ամենից ավելի ազատ սերը սոսկալի մի հանցանք, մահացու մի մեղք է թվում քեզ: Ի՞նչ հանցանք, սիրելիս, ի՞նչ մեղք: Ո՞չ է գրել այդ հանցանքի, այդ մեղքի կրիտերիումը: Մնջողաբեր կնոջ զլուխի տղամարդու փափախ և բարձի տակ սոխաշար շամփուր դնող մեր պառավնե՞րը: Ախր մեկ մտածիր, հոգիս. չէ՞ որ դրանք, այդ պառավները, առուակավն ամոթալի ավտորիտետներ են քեզ պես կրթված, իստելիքնենտ մի կնոջ համար: Մի քիչ կոչում արա քո առողջ դատողությանը, այն կրթությանը, որ ստացել ես, այն գրքերին, որ կարդում ես,— և կտեսնես: որ պառավական այդ ցնդարանությունները մի ժամանություն գրոշի արժեք անգամ շունին և ցնդարանությունները մի ժամանություն գրոշի արժեք անգամ շունին և ցնդարանությունները են միայն հոգեկան ապարդյուն տանօանքներ պատճա-

ռելու Զեմ տեսնում, ինչ է, որքան փոխել, մաշել և ջղային են դարձրել քեզ այդ հիմար տանչանքները: Ոչինչ ինձ վրա այնքան ծանր տպավորություն չի գործում, որքան այն, երբ ահսնում եմ, որ եղներն իրենք են իրենց ոտով գնում և վզները լծան տակ կոխում: Այդպիսի տպավորություն ես գործում գու ինձ վրա: Հավատա, սիրելիս, որ մարդ բնության ձայնից ավելի լավ զեկավագար չի կարող ճարել իր համար իսկ բնությունն ամենից առաջ սիրում է ազատություն, ազատություն ամեն բանի մեջ: Եվ բնության ձայնն է միայն, որ ընդունակ է ցուց տալու ուղիղ ճանապարհը տարակուսանքների մեջ չմուրցվելու համար, միայն թե մարդ ականջ ունենա լսիլու, հոգի ունենա լմբոնելու և խելք ունենա հասկանալու: Բնության ձայնով եմ ես առաջնորդվել միշտ, և տես՝ ինձնից էլ աղատ, անկախ, կենսուրախ և անհոգ արարած...

— Բնության ձայնը, — շշնչաց Մանկն, կարծես ինքն իրեն, մտառու հայացքը հեռու հորիզոնին հառած: — Դրանով խո անսուններն էլ են առաջնորդվում: Բայց մենք, որ մարդ ենք, աստծու պատկերը կրող էակ, բանական, իմացական արարած, հապա ինչո՞ւ է մեզ տրված ամենաբարձր այս շնորհը— այս բանականությունը, այս իմացականությունը: Ինչո՞ւ համար մեր զիսի մեջ գործում է այս ուղեղը, մեր կրծքի մեջ բարախում այս սիրտը, երբ մենք էլ, անասունների պես, պիտի ման գանք շորս ոտի վրա և կույր, կոպիտ, ստոր բնազդից զատ ուրիշ ավելի բարձր, ավելի վեհ, ավելի նվիրական ու կարող ձայնի զեկավարությունն չպիտի ճանաչենք: Օ՛, ուրեմն քանդենք այս տները, մարենք մեր օջախները, դաշնենք անենք հանձաբնիքն, կործանենք նրանց ստեղծած տաճարները, հաւածենք, ոչնչացնենք ամեն բան, ինչո՞ր բարձր է անասունականությունից, ինչ որ վեհ է և սուրբ, ինչ որ աստվածային կնիք է կրում իր վրա: Ուրեմն մոռանանք, մոռանանք իսպառ, որ աշխարհիս երեսին դա եղել է մեկը, որ իր սեփական արյունով հանել է մարդկությունն անասունականությունից, փրկել է նրան հեթանոսության կապաքներից, բարձրացրել է նրան մինչև երկնքի աստղերը, և նորից իշնենք դեպի թած, դեպի մեր նախնական վիճակը, զնանք ախոռների մեջ դարման ուտենք, դաշտերի մեջ խոտ արածենք, թավալ գլոր զանք ցեխի մեջ և քաղցած ժամանակ հոշոտենք իրար, որովհետև այս է պահանջում բնության ձայնը... Այս ես պահանջում, հա՞, ա՞յս է քո պահանձածը, — բացադանեց Մանեն, հանկարծ ամբողջ մարմնով դառ-

նալով դեպի Հեղինեն, և նրա աշբերը վառվում էին ներքին բուռն հուզումից:— Մինչդեռ ես կասեմ, որ այն, ինչ որ դու ես բարողում, սովորություն է, ստություն է, կեղծիք է, դիմակ է միայն: Իսկ ճշմարտությունն այն է, որ դուք սարսափելի եսասերներ եք, բանական արարածի պատկերը կորցնելու չափ եսասերներ: Զեզ անձանոթ է քրիստոնեական գթության, անձնվիրության, անձնազոհության, նույնիսկ պարզ խղճահարության զգացումը, որովհետև դուք միայն ձեր անձի մասին եք մտածում: Դուք գոհ և երջանիկ լինիք. թեկուղ ուրիշները դժոխային տանջանքներ եւ կրեն ձեր պատճառով,— այդ ձեր հոգը չէ: Ահա թե ինչ մարդիկ եք դուք:

Հունական շառագումից հետո Մանեկ դեմքը զգի և բունքերի վրա, նուրբ կաշու տակ, լցվել էին երակները. խոշոր աշքերը վառվում էին անկեղծ զայրույթով: Նա այնքան գեղեցիկ էր այդ բոպեին, որ շատ էլ քնքույզ զգացումներ չունեցող ընկերութին նայում էր նրան ուղղակի հրձվանքով և իր շարժուն գեմքի շարաճճի ծամածություններով կարծես աշխատում էր ավելի գրգռել նրան, որ նա ամենի գեղեցկանա:

ԵՐԲ Մանեն վերջացրեց, Հեղինեն զեր թռավ, վագեց դեպի նու և զրեթե բռնությամբ տիրապետեց նրա ձեռքերին:

— Դու պաթոսով խոսել էլ ես իմանում, ես այդ չգիտեի, —  
բացազանչեց նա ծիծաղելով: — Հիանալի՞ էր երդում եմ ազիդ  
արևովդ, հրճվանքով էի լսում և մանավանդ զիտում, որովհետև  
չես կարող երևակայել, թե որքա՞ն գեղեցկանում ես գրգռված  
խոսելիս: Երեակայում եմ, որ եթե գերասանուիհի լինիս և մի որևէ  
տրադիկական գեր լինիս կատարելիս, ո՞րպիսի ֆուրոր կհանես քո  
այդ գեղեցկությամբ, զայրույթի այդ անկեղծ ոգմորությամբ, կըրծ-  
քային ձայնիդ այդ հրաշալի ինտոնացիաներով... Դե, շատ մի  
խլալտալ, ձևոքերդ բաց շեմ թողնելու... Քո այդ սիրուն մոնուլոցից  
հետո ես միայն մի բան եմ ուզում հարցնել քեզ: արդյոք իմ  
հայտնած մտքե՞րն են քեզ այդպիս գրգռում, թե ուրիշ որևէ մի  
բանով եմ մեղանլել քո դեմ:

— Իմ գեմ չէ, որ մեղանչել ես բու, այլ մեղանշում ես աստծու դեմ:

— Ինչո՞վ։ Որ ժամ չեմ գնում, պաս չեմ պահում, չեմ հաղորդում և՛ս, սիրո՞ւմ եմ քեզ։

— Որ դու նասիբյանի կնոջն ու մորն այնպիսի աղետավոր

վիճակի մեջ ես դոել, — ահա՝ թե ինչով ես մեղանշել աստծու դեմ, — այլև չկարողանալով հանդուժել Հեղինեի հեգնություններին, ուղղակի շպրտեց նրա երեսին Մանեն:

— Ինչ ասացի՞ր, — արագ հարցրեց Հեղինեն, բաց թողմանով  
Մանեի ձեռքերը, և նրա ծիծաղկոտ դեմքը մի ակնթարթում լուրջ  
արտահայտություն ստացավ՝ լի հետաքրքրությամբ և զարման-  
քով: — Նասիբյանի կնոջն ու մո՞րն ասում ես... Ի՞նչ աղետալի  
վիճակ... Ի՞նչ կապ ունեն նրանք մեր խոսակցության հետ... Ես  
քեզ չեմ հասկանում:

Այն աստիճան անկեղծ էր Հեղինեի զարուանքը, որ Օսման զղաց, թե ինչու ինքն այդքան փոքրովի եղավ ընկերուհու հետ-նական նկատողությունների գեմ, և նրանից վրեմ լուծելու պախա-րակելի զգացումից զրդված, այդպես հանկարծ ու խստորեն ասաց այն, ինչ բանի համար որ եկել էր ընկերուհու մոտ և ինչ որ կա-րելի էր ասել նրան ավելի մեղմորեն։ Նրա զայրուցիթը մեղմացավ, և նա այս անգամ բարեկամական հանդիմանական տոնով պատ-մեց այն բոլորը, ինչ որ լսել էր այդօր եկեղեցու բակում Հռոմեական մից։ Պատմելիս աշխատում էր կարելույն շափ շարժել Հեղինեի կարեկցությունը գեպի նասիբյանի թշվառ ընտանիքը և ուրախու-թյամբ տեսնում էր, որ ընկերուհին լսում է մեծ ուշագրությամբ և հետօնեատե լցվում բարկությամբ։

— Ցած, ստո՞ր, գարշելի՞ մարդ,— բացականեց Հեղիսօն,  
այլևս չկարողանալով զսպել իրեն, և սաստիկ հուզված՝ սկսեց ան-  
ցուղարձ անել սենյակում՝ արագ, փոքրիկ, զղոտ քայլերով, որի  
ժամանակ նրա ոտների տակ ճռճռում էր հատակի մի տախտա-  
կը— Հավատում եմ... կարծում ես չե՞մ հավատում... բոլոր բա-  
ներին հավատում եմ, ինչ որ պատմել է այն խեղճ պառավը...  
Հավատում եմ, որովհետեւ այդ խողի ճուտը, այդ շորացած ապուխ-  
տըն ընդունակ է ամեն բանի... Ակնո՞ս միայն, որ ես այդ բանե-  
րը չեմ իմացել, թե չե...

— Մի՞թե դու ինձ վրա այն աստիճան վատ կարծիք ունե՞ս, որ չես հավատում ասածիս, — առաց նա, խիստ լրջորեն նայե՞լով ընկերուհու աշքերին: — Ի՞նչ անեմ, երդվե՞մ, որ հավատաւ Ես քեզ լրջորեն ասում եմ, որ առաջին անգամն եմ իմանում նրա

այդ ցածությունները, եվ որտեղի՞ց պիտի իմանայի. ինքը իսու չէ՞ր պատմելու թե չէ, որ իմանայի... Չես կարող երեակայել, թե որքա՞ն զգվում եմ ալժմ նրանից, որովհետեւ շգիտես, ախր, թե որքա՞ն աներես մարդ է, որքա՞ն հանդուզն, որքա՞ն լիրբ Այստեղս է հասցրել, այց (Հեղինեն աչ ձեռքի ցուցամատը կոխեց իր շազ կզակի տակ): Տիզ, կատարյալ տիզ, կպել, պոկ շի զալիս իսկ դու, ովք գիտե, ինձ ես մեղաբում: Շատ անդամ ուղղակի դուրս եմ անում, բայց նա, երեսը շան կաշի շինած, էլի շարունակում է թրե զալ հետեկցս, թե ինչ է մի անգամ զլուխս բարովն եմ տվել... Ախ, այս հիշողությունն ուղղակի գժվեցնում է ինձ: Որքա՞ն անփորձ, որքա՞ն հիմար եմ եղել առաջ... Տիզ, տես, այց, նա զալիս է: Որ ասո՞ւմ եմ: Որ ասո՞ւմ եմ,— կրկնեց Հեղինեն, կարծես ֆիզիկական մի յուր ցավից աղաղակելով:

Մանեն լուսամուտից նայեց դեպի փողոց և տեսավ՝ նախիք-  
յանին՝ փոքրիկ, արագ քայլերով դեպի Հեղինեի բնակած տան  
դուռը դիմելիս։ Հետո բնազդմամբ նայեց ընկերուհուն և զբեթե  
վախեցավ— ա՛յն աստիճան փոխված տեսավ Հեղինեի դեմքը։

— Ես կգնամ, — ասաց նա անհանգստացած:

Հեղինեն արագորեն բռնեց նրա ձեռքից:

— Ուր... Զէ՛, սպասիր Դու պետք է մնաս և ւշնես քո աշքով, որ ես երես չեմ տալիս նրան: Ես հիմա՞ եմ հասկանում, որ դու ինձ վրա այդ աստիճան զայրացած ես այդ սրբիկայի պատճառվ: Քո բարեկամությունն այնքան թանկ է ինձ համար, որ ո՛չ մի պայմանով չէի կամենալ, որ դու որևէ կասկած տանեիր ինձ վրա: Խնդրում եմ մնա:

— Ո՞ւ, աստված է վկա, լավ կլինի, որ...

— Միկնուն է, չեմ թողնիլ, — ընդհատեց Նրան Հեղինեն  
այսպիսի համառությամբ, որ Մանեն ավելորդ համբարեց պնդել  
իր հեռանալու վրա: — Ինչքան վատ գաղափար ուզում ես՝ կարող  
ես ունենալ իմ մասին, բայց որ կարծում ես, թե այդ սրիկայի ա-  
րարքների մեջ իմ մատը խառն է, այդ շատ ծանր է ինձ համար:

Կիստ հուզված, նա պենսնեն պոկեց քթից, թաշկինակով սրբեց ապակիները և նորից դրեց քթին։ Նա բոչորովին կերպարանափոխվել էր. սովորական շարաձճի, կենսուրախ աբտահայտության հետքն անգամ չէր մնացել նրա դեմքին, և այդ կլորիկ ու փափլիկ դեմքի վրա մսերը նկատելի կերպով ցնցվում էին չղաձնաբար։ Նա գունատվել էր և փոքրիկ, կարծես մանկական,

բերանի կաս-կարմիր շրթունքները կրծում էր փղոսկրի պես պը՛ պլող, պատիկ ու պինդ ատամներով, իսկ ձեռքերը հետեւ տարած՝ մասլի մատները բաց ու խուփ էր անում աարօրինակ կերպով. կարծես պատրաստվում էր կատվի պես հարձակվելու նաև սիրյանի վրա, հենց որ նա մտներ

III

Ներս մտավ Նասիբյանը — խորչումած փոքրիկ դեմքով, երկարաթիւ սպիտակ փողկապով, խիստ նիշար, ըստ երևույթին թոքախտավոր, ցածրիկ, մոտ երեսուն տարեկան մի երիտասարդ, որի մեջ, սակայն, երիտասարդական ոչինչ չկար, բացի զղային արագ քայլվածքից և խիստ սկ ու խոշոր աշխերից, որոնք լի էին խիղախ համարձակությամբ և ինչ-որ անզուսպ կրակով։ Նրա մի հոնքը, աշը, վերև էր թռել, կարծես աւզել էր ինչ-որ բանի վրա, և այդ կողմէից նրա կիսադիմն ավելի երիտասարդական էր, ավելի գրավիչ ու սիրուն, քան ծախ կողմէինը, որի վրա, հոնքի ու աշքի տակ, խորչուներն ավելի շատ էին, ավելի պառավական և ավելի մռայլ ու գաղտնապահ։

Մտնելուն պիս նա ուզում էր մոտենալ Մահճին, որ բարեկի նրան, բայց տեսնելով Հեղինեի բռնած տարօրինակ զիրքը, կանգ առաջ զարձացած, որի ժամանակ նրա ձախ ունքն էլ վերև թռափ

— Իւշը՞՞ ես եկիլ, — Հարցրեց Հեղինեն, պիտուսի պարունակած միջն գույքներով նրան վրա ցաւունալից աշքերը

Նասիրյանը ոկպում կարծես թե շնոթվեց ոչ այնքան այդ հարցից, որ Հեղինեն տվեց իրեն երրորդ մի անձի ներկայությամբ, որքան այն տարօրինակ փայլից, որ տնօսավ նրա աշքերի մեջ, և վերին առարկանի լարված-թշնամական այն առնից, որով Կա տվեց իրեն այդ հարցը:

— Ինչպես թե ինչու ևմ եկել. — ՀՀնջաց նա մեքենայաբար:

— Հա, ինչո՞ւ ես եկել, Հարցնում եմ քիզ, — կրկնեց Հովհաննեն, ձայնը բարձրացնելով, մի քայլ առաջ դրեց:

Նասիբյանը տարակուսանքով նայեց Մանկին, կարծես հարց-նում էր՝ «ի՞նչ է պատահել սրան», Հետո իր խոշոր աչքերը նորից դարձրեց Հեղինեի վրա և հանկարծ ծիծաղեց տարօրինակ իրու ծայնով, այնքան տարօրինակ, որ նրա ծիծաղը կարծես ուժից

Նախատակ չուներ, բացի միայն այն նպատակից, որ թոքից խուսափուի:

— Եկել եմ, որպեսզի թանկագին առողջությունդ հարցնեմ,— ասաց նա ու, արագորեն հանելով թաշկինակը, թքեց մեջ:

— Իսկ մորդ ու կնոշդ առողջությունը, իսկ զավակներիդ առողջությունը երբեցից հարցնում ես, պարոն,— աղաղակեց Հեղինեն:

Նասիրյանը մի րոպե լուս նայեց նրան զարմացած. Հետո, թաշկինակը կամաց կոխելով սյուրտուկի գրպանը, հարցրեց.

— Վաղո՞ւց է, որ հոգում ես մորս, կնոշս և զավակներիս առողջության համար:

— Այն ժամից, պարոն, երբ իմացա, որ դու նրանց հետ վարդում ես ամենանխիղճ կերպով, ամենավերջին կինտոյի պես:

Նասիրյանը հոնքերը սաստիկ կիտեց և կասկածանքով լի թռուցիկ մի հայացք ձգեց Մանեի կողմը:

— Այդ ո՞ր ժամից է, համարձակվում եմ հարցնել, օրիորդ.— ասաց նա իր մոխրագույն փափուկ կաստորի գլխարկը դնելով աթոռի վրա և շինծու հանգստությամբ երկու ձեռքով ուղղելով փողկապի թևերը:

— Հենց ա՞յս ժամից, պարոն: Այս րոպեիս միայն իմացա, որ դու ամենախայտառակ կերպով ծեծում ես կնոշդ, պառավ մորդ դռնելու ես գցել, զավակներիդ քաղցած ու տկլոր ես պահում: Եվ դու ինտելիգենտ մարդ ես անվանում քեզ, և դու հոգվածներ ես գրում բռնությունների, անարդարությունների դեմ, և դու պաշտպան ես ցույց տալիս քեզ ճնշվածներին, հալածվածներին, և քեզ արմատական հայացքների տեր հրապարակախոն ես անվանում, քեզ, քեզ...

— Ապասի՞ր,— աղաղակեց Նասիրյանը, իր ահագին աշքերը ոլորելով Հեղինեի վրա:— Այս դո՞ւք եք պատմել սրան, տիկին,— դարձավ նա Մանեին արագորեն:

Հեղինեն մի ոստյունով թռավ և կանգնեց նրա ու Մանեի մեջտեղ, ուղղակի նասիրյանի քթի տակ: Նա դողում էր կատադությունից և պենսնեն ցնցում էր նրա քթի վրա:

— Այս, այս տիկինն է պատմել, իսկ այս տիկնոջը պատմել է մայրդ,— աղաղակեց նա:— Ի՞նչ է, ուղում ես ուրանա՞լ: Այն խեղճ պառավը կարծել է և այս տիկնոջն էլ այնպես է

հասկացրել, թե ես եմ քեզ դրդում, որ այդ անպիտանությունները գործես, ուստի սրա միշնորդությունն է խնդրել, որ քեզ չգտվեցնեմ, կարծես թե խելքս զնում է քո այդ զվարելի դևմբի համար: Ահա՝ թե, պարո՞ն, որ աստիճան հանցավոր եմ հանդիսանում ես քո այդ գարշելի արարքների պատճառով: Եվ ինչո՞ւ համար, որ հենց սկզբից չեմ վոնդել քեզ իմ մոտից շան պե՞ս:

Մի ակնթարթում նասիրյանի ղեմքը սիրո՞նեց սպիտակ քաթանի պես: Վայրկենական կատաղության ուժովն թափով նա բռնեց Հեղինեի ուսերից, ըստ երկույթին պատրաստվելով գեն շպրտելու նրան կամ գորելու իր ոտների տակ, բայց իսկույն զսպեց իրեն և միայն սարսափելի համար ուժով կամաց հեռացրեց նրան իր առչելից, ամբողջ կատաղությունն արտահայտելով միմիայն ահարկու աշքերի և ձեռքերի խիստ լարված մկանների մեջ: Զնայելով իր պստիկ և նիշար կազմվածքին, նրա ոսկրացած ձեռքերն այնպիսի ուժ էին հավաքել իրենց մեջ, որ Հեղինեն իր մսեղ ուսերի վրա սաստիկ ցավեր զգաց և ճշալով դորս պրծավ նրա ձեռքերից, ճակնդեղի պես կարմրատակած:

— Ինչպես դու համարձակվում ես... ինչպես դու համարձակվում ես,— աղաղակեց Հեղինեն լացադին, քթից պոկելով պենսնեն, և նրա աշքերից անզոր վիրավորանքի և ծայրահեղ կատադության արցունքի կաթիլներ դուրս ցալտեցին:

Նասիրյանը լուս էր: Նա շնչում էր ծանր և իր ահարկու աշքերով խռով Հեղինեին:

Մանեն պինդ կպել էր լուսամուտի տախտակին և զարմանքից ու վախից ցամաքել տեղնուտեղը:

— Խնդրում եմ, ներեցեք ինձ, տիկին,— դարձավ նրան նասիրյանը, աշխատելով կարելույն շափ հանգիստ խոսել, և նրա շրթունքները ցնցում էին կատաղությունից:— Ես շատ ցավում եմ, որ այս օրիուղը ձեր ներկայությունն է բնարել իր լվացքը լվանալու համար, և եթե նույն կեղտաշուրը չեմ թափում իր գըլ-խին, դրա համար թող պարտական լինի ձեր ներկայությանը Բայց, երկի, մենք ուրիշ ժամանակ կգտնենք մեր հաշիվները տեսնելու, ինչպես հարկն է...

— Այդ ինչ սպառնալիք է,— կանչեց Հեղինեն, առաջ վազելով, բայց շամարձակվեց մոտենալ նրան, որովհետեւ նասիրյանը նորից ոլորեց նրա վրա շարությամբ լի իր ահարկու աշքերը և նրա շրթունքների զդային ցնցումը սաստկացավ:

— Երկի այս օրիորդն ինձ ձեր առջև ներկայացրել է իբրև մի փալաս, որի թիգ բռնած՝ կարող է ման ածել, ինչպիս ուզենաւ լիսալվում է, շատ է սխալվում և ձեզ էլ սխալեցրել է, տիկին, Այդ դուք հետո կտեսնեք, հետո կիմանաք...

— Դարձյա՞լ սպառնալիք. դարձյա՞լ, — աղաղակեց Հեղինեն, անզոր կատաղությունից ինքն իրեն ուտելով:

Սակայն Նասիրյանն այս անգամ նրան շնայեց նույնիսկ նրա արտաքինն ավելի հանգիստ ու հպարտ կերպարանք առավ և հայցքը լի հանգիստ արժանապատվությամբ նայում էր Մանեի փեշերին: Նա շարունակեց.

— Իսկ այժմ ես կամենում եմ մի երկու խոսք ասել ձեզ, տիկին, քանի որ դուք այսպես թե այնպիս խառնվել եք այս գործին: Որ մայրս պատմել է ձեզ իմ ընտանեկան վիճակը և ձեր միջնորդությունն է խնդրել, այդ բանին ես հավատում եմ, իհարկե, որովհետև տգետ կին է, անկիրթ կին է: Բայց որ դուք հանձն եք առել այդ միջնորդությունը, անշուշտ հավատացած լինելով, թե դրանով բարի գործ կլինիք կատարած, այդ բանը, — ներեցեք, տիկին, — ինձ մի փոքր... զարմացնում է, որովհետև դուք ինտելիգենտ կին եք, կրթված կին եք և պետք է հասկանալիք, որ ուրիշի ընտանեկան գործերին միջամտելն առհասարակ լավ բան չէ, թե կուզ այդ միջամտությունը լիներ նույնիսկ ամենալավ միտումներով, ամենաբարի զգացումների թելադրությամբ: Կնոյս ծեծում եմ թե պաշտում, մորս դռնեղուու եմ զցել թե պալատներում նրստեցրել, զավակներիս քաղցած եմ պահում թե շատ ուտեցնելուց տրաքեցնում, — այդ ոչ ձեզ է վերաբերում, ոչ այս օրիորդին և ոչ ուրիշ որևէ մարդու ծվ ես ոչ ոքի թուլլ շեմ տա, որ...

— Դուք ինձ վիրավորում եք, պարոն, — շնչաց Մանեն ապշած: — Ես այդ մասին ոչինչ շեմ ասել ձեզ:

— Ճիշտ է, շատ ճիշտ է, դուք ոչինչ շասացիք ինձ այս մասին, բայց այս րոպեին ես «միջնորդություն» բառը լսեցի... Հետո, ձեր ներկայությունը մեր այս ընդհարմանը... Եվ, բացի դրանից, թույլ տվեք ինձ մի քիչ ավելի սրատես լինելու: Ես տեսնում եմ, որ դուք հավատացել եք մորս ասածներին և ձեր սրտում մեղավոր եք համարում ինձ:

Մանեն այս անգամ շարժվեց տեղից, շկարղանալով զսպել իր զայրույթը:

— Պարո՞ն, Երկի չեք նկատում, որ ինքներդ ձեզ հակասում

եք, — նկատեց նա խստորեն: — Այս րոպեին տառացիք, թե ոչ չգիրավունք չունի խառնվելու ձեր ընտանեկան գործերին, մինչդեռ այժմ ձեր իրավունքն եք համարում մտնել ուրիշի սիրութ և ըըրբելու տյիտեղ, թե ինչ է մտածում ու զգում նա:

— Ներեցեք, տիկին, ես...

— Խնդրում եմ, թողե՞ք ինձ հանգիստ:

Եվ Մանեն, սաստիկ հուզված, դուրս գնաց արագ քայլերով նաև ասիրյանը մնաց սառած իր տեղում՝ բերանը բաց, աշքերը շուած:

— Օ՛, օձ... թույն... դուրիքի վիժմունք... Ե՞րբ պետք է ազատվեմ քո այդ գարշելի գիմքից, — անհուն ատելությամբ շշնչաց նրա քթի տակ Հեղինեն և դուրս վագեց ընկերուհու հետեւից:

Մանեին բռնեց նախասենյակում:

— Մանե շան, դու գնո՞ւմ ես:

— Ես սովոր չեմ այդպիսի տեսարանների և... զդային եմ, — տաց Մանեն, խուսափելով Հեղինեի աղերսող աշքերից և աշխատելով խլել հուզմունքից դողացող իր ձեռքերը նրա ձեռքերի միջից:

Հեղինեի աշքերը հանկարծ վառվեցին կատաղի վճռականությամբ:

— Ես դուրս կանեմ նրան... փողոցից մարդիկ կկանչեմ, ոստիկան կկանչեմ...

— Ի՞նչ ես ասում... ի սեր աստծո, — շշնչաց Մանեն վախեցած: — Թող գնամ, աղաշում եմ թող...

— Սպասիր, Մանե շան: Մի վախենար, ոչինչ չեմ անիլ Ես սաստիկ գրգռված եմ, չեմ իմանում ինչ եմ ասում... Օ՛, դժոխք, դժոխք, կատարյալ դժոխք... Այրվում եմ, խորովվում եմ, ուզում եմ մսերս կրծել, թե ինչո՞ւ ֆիզիկապես այսքան թույլ եմ, ինչո՞ւ ձեռքերս մեջ այնպիսի մի ուժ չունիմ, որ բռնեմ կոկորդից և խնդրեմ... խեղղեմ... Սպասիր, մի փախչիր: Ոչինչ չեմ անիլ... դժբախտաբար, ոչինչ չեմ կարող անել, ոչինչ... արյունս միայն իզուր այսպես կպղտորեմ: Սպասիր: Գոնե ասա, որ ինձնից նեղացած շես և շես մեղադրում ինձ:

Մանեն շատ լրջորեն նայեց Հեղինեի աշքերին, որոնց հուստհատական-կատաղի փայլը փոխվել էր գրեթե մանկական պաղտաղին արտահայտության:

— Թե՞ս... չչ ես Պամոզգեցի, որ մեղավորը նա է։ Եվ նրա սևամոթ սովհետությունն էր, որ ինձ այսքան գրգռեց։

— Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ, Մանե լան, — ասաց Հեղինեն, պինդ սեղմելով նրա երկու ձեռքը։ — Չես կարող երեւակայել, թե որքան սիրում եմ քեզ և որքան թանկ է ինձ համար քո կարծիքը։ Լեզվիս մի նայիր. սիրու շատ ավելի բարի է, քան լեզու։ Գիտե՞ս ինչն է ինձ ավելի կատաղեցնում։ — այն, որ ես կարծում էի, թե սպատ եմ, ինչպես երկնքի թուզում, ինչպես օդը, մինչդեռ տեսնում եմ, որ գլխիս պատրաստել եմ այնպիսի մի բռնակալ։ Որպիսին չի կարող լինել նույնիսկ մի գազան-ամուսին, մի հորտատեր։ Օ՛, հա՛խս է, հա՛խս է։ Ինչպես երեսում է, դեռ շատ փորձանքներից պիտի անցնեմ ինձ կատարելապես ազատ ու անկախ դգալու համար... Դե՛ գնա, ես քեզ չեմ ուզում պահել։ Ներիր, որ քեզ այսպիսի անհամ գրության մեջ դրի։ Նա ճիշտ էր ասում. քո ներկայությունը շպիտի ընտրեի լվացքս լվանալու համար։ Բայց ալլես չեմ կարող համբերել, ո՛չ չեմ կարող։ Դանակն արդեն ոսկորին է հասել։ Այս րոպեին այնպիսի լվացք լվանամ նրա գլխին, որ մեջը խեղդվի։ Դու գնա, իսկ ես հենց այս րոպեին կտեսնեմ այդ սրիկայի հետ իր սպառնացած հաշիվները։ Օ՛, նա դեռ չի ճանաշում ինձ... Գնա, ցտեսություն։

Երբ Մանեն շտապով դուրս եկավ փողոց, վերևից, բաց լուսամուտից, նրա ականջին դիպան Հեղինեի կատաղի ծկլթոցները։ Այդ ձայներն այնպիսի անհաճո գրգիռ պատճառեցին նրա զղերին, ինչպես խարտոցի կանչուոցը սղոց սրելու ժամանակ։ Եվ նա շտապեց հեռանալ ամոթահար այն բանից, որ այդ միջոցին իհիաղաղ փողոցով անցնող մի երկու մարդ կանգ առան տան դիմացի մայթի վրա և զարմացած ու հետաքրքրությամբ նայում էին դեպի լուսամուտը։

#### IV

Հետեւալ օրը, կեսօրից առաջ, Մանեն նամակ էր գրում ամուսնուն, երբ նախասենյակից նրա ականջին դիպան մի բամբ ձայն, որը հարցրեց գուրը բաց անող ծառային՝ «ո՞վ կա տանը»։ Նա իսկույն ճանաշեց եղբոր ձայնը և, գրիւը վայր ձգելով, դուրս վաղեց։

Նախասենյակում նրա դեմն ելավ Վահանը — հսկայամարմին և թիկնավետ մի երիտասարդ՝ կես-այրված մի հաստ սիգար բերանին։ Սղոտի լայնեղը գլխարկը ետ էր զցել ճակատից, որի բրտնքի առատ կաթիլներ էին դուրս ցայտել։ Հազար էր ուսիրը խոնացած գեղնագույն ամառվա վերարկու, որի ամենավերի կոճակն էր միայն գցված, իսկ փեշերը ետ էին քաշվել և երեսն կոճակն էր միայն գցված, իսկ փեշերը ետ էին քաշվել և երեսն կոճակն էր միայն գցված, որի վրա աղեղնաձև կախ էին հանում նրա անսովոր հաստ փորը, որի վրա աղեղնաձև կախ էր ընկած ժամացույցի հասարակ մետաղի շղթան սևացած։ Նա կլիներ 30—35 տարեկան, ասկայն երեսին մազ չկար ամենակին, որով շատ էր նմանում երեսը սափրած դերասանի։ Գևեցիկ ոչինչ շկար նրա արտաքինի մեջ, բացի միայն աշքերից, որոնք շարուշ կապում էին ամենքին և ամեն բանի ուրախ հեգնությամբ վերաբերվող բարեսիրտ մարդու քաղցր ժպիտով։

Քույրը փարեց եղբոր վզին և կարոտի բուռն զգացման զեղումից լաց եղավ։

Սակայն եղբայրն այդքան զգայուն չեղավ. նախ մեղմորեն բռնեց ձեռքերից հեռացրեց նրան իրենից, հետո բերանից հանեց սիգարը և հարցրեց։

— Հը՞ ի՞նչ է պատահել։ Մեռա՞ծ էի, ի՞նչ է, և հանկարծ հարություն առած ես տեսնում ի՞նձ, Ղազարոսի պես։

Մանեն ժրգտաց և մատներով սրբեց արտասուբբ։

— Գնա՞՛, ես քո քույրը չեմ, — ասաց նա խոռվածի պես, բայց զարձյալ ժրգտում էր։

— Այ՞ քեզ բան ինչո՞ւ։

— Ինչո՞ւ։ Որովհետև քանի օր է, որ եկել ես և նոր ես հիշում ինձ, ինչպես միշտ։

— Ինչպես միշտ։ Ուրեմն էլ ինչո՞ւ ես նեղանում։ Եվ խոհիշել եմ վերջապես։ Դու այդ ասա, Ղազարի քույր, թե չ' մնացածը դատարկ բան է։ Այսօր լինի, վաղը լինի, ի՞նչ վնաս։ Մերը «յավաշնչ» է, Ասիացի շենքի բայց ասովածդ սիրես, օգնիր, մի էս անտերը հանենք։

Վահանը սիգարը դրեց բերանը, բաց արեց վերարկուի կոճակը, շուր եկավ և ձեռքերը մեկնեց դեպի քույրը։

Մանեն բռնեց նրա վերարկուի թերքի ծայրերից, բաշեց, բաշեց և հազիկ կարողացավ հանել։

— Դե ասում ես. Եեր «յավաշը» որ լինի, այսքան կշաղանա՞ք, որ վերարկուն յհանվի։ Անտերը հուպ է տալիս, է՛, կոնենա՞ք,

րիս տակը ծրեւակայիր, վեց տարի է, որ հազնում եմ, բայց էլք ափսոսն զալիս է, որ գեն գցեմ իսկ ձեր այս շոգն էլ...

Վահանը գլխարկը կախեց վերարկուի վրա և թաշկինակով սկսեց սրբել բրտնած ճակատն ու շլինքը:

— Ես մի բանի վրա եմ զարմանում և նեղանում քեզնից, Վահան, — նկատեց քույրը լրջորեն:

— Այսինքն.

— Ինչո՞ւ մեր տանը չես իջնում, որ գալի՛ս ես Թիֆլիս:

— Կարծեցի նոր բան ես ուզում ասելի Մի վախենար, քույրիկ շան, թանկ հյուրանոցում չեմ իջած, վճարում եմ ընդամենը 73 կոպեկ:

— Ախր ինչո՞ւ, է՛:

— Որովհետեւ ես շատ եմ սիրում անկախություն ասված բանը ին գիտես իմ նշանաբանը, ոլ պարտավորվել, ոլ պարտավորեցնել Բացի դրանից, ես սարսափելի էգոխստ մարդ եմ, ուզում եմ աշքից կարելույն շափ հեռու լինել, որ ավելի շատ սիրես ինձ Բայց արի մի տեսնենք ոնց ես: Ուղիղ մի տարի է, որ չեմ տեսել քեզ — անցած գարունքից:

Եվ եղբայրը քրոջ ձեռքից բռնած ներս տարավ:

— Ազդի շան, շատ ես լզարել աշքումս, — ասաց Վահանը, արեի պայծառ շողերով լուսավորված սենյակի մեջ լավ դիտելով Մանեի զեմքը: — Իսկի չի երևում. թէ իմ քույրն ես: Ինչո՞ւ չես զալիս ինձ մոտ, որ շաղանաս Այս ամառ որ զաս, կտանեմ: Հավատաւ: Մի քիչ տաք է մեր կողմերը, բայց վնաս չունի, օդը առողջարար է, իսկ նոր գինեգործարանս արդեն պատրաստ է, այս տարի գինիները պատրաստելու եմ արդեն ամենանորագույն սիստեմով: Այժմ եկել եմ մի բանի գործիքներ տանելու և այս բանի օրս այդ բանի հնականից եմ ընկած:

— Լավ, ո՞ւմ համար ես աշխատում այդքան:

— Ազգի համար:

— Դու ծիծառում ես, բայց տես, մազերդ արդեն սպիտակում են, — լրջորեն նկատեց քույրը, շոշափելով եղբոր մի քիչ երկարացած և սպիտակախառն մազերը քունքերի վրա: — Ինչո՞ւ չես ամուսնանում:

— Որովհետեւ վախենում եմ լզարեմ: Բացի դրանից, չէ՞ որ կինս էլ պետք է ածդահա լինի ինձ պես, իսկ այժմյան աղջիկներն ինչ են ներկայացնում իրենցից: — Ինչպես գրում են ոռուե-

րեն մտածող մեր գրողները: — Երեքշահանոց վառիկներ, այն էլ աղբանոցում քջուզ արած վառիկներ, Բայց դու քոնն ասա: Ո՞նց ես, լա՞վ ես: Լսեցի մարդդ նոր հանքեր է գտել, Տիշտ է:

— Ճիշտ է: Այժմ այնտեղ է:

— Գիտե՞ս, ես նրան համ հավանում եմ, համ շեմ հավանում. հավանում եմ նրա եվրոպական ձեռնարկուի խիզախ ոգին, որը կարող է նրան շատ առաջ տանել. շեմ հավանում նրա լըրդությունը: Լուրջ մարդիկ իմ մահս են: Բայց ինձ մի բան է հետաքրքրում, ինչպե՞ս եք ապրում իրար հետ:

— Ինչպե՞ս թե...

— Ուզում եմ ասել սերից-մերից կա՞:

Մանեն սկզբում շփոթեց, հետո ստիպեց իրեն ծիծառել:

— Որովհետեւ, գիտե՞ս ինչու եմ հարցնում, — շարունակեց Վահանը, — նա սառը, դու տաք. Նա՝ այսպես ասած՝ ֆիեզմատիկ, դու սանգինիկ: Ինչպե՞ս են հաշտվում ձեր տեմպերամենտները:

— Շատ լավ են հաշտվում, շատախոս: Նախ նստիր, մի քիչ հանգստացիր, — ասաց քույրը և, եղբոր ձեռքից բռնելով, տարավ նստեցրեց գրասեղանի մոտ: — Կամաց, շկոտես, — բացազնեց նա ծիծառելով, երբ աթոռը ճոճուց վահանի ահագին մարմնի ծանրության տակի:

— Սրա համար չէի նստում, է՛, — ասաց Վահանը և թերվեց գրասեղանի վրա: — Այս ի՞նչ է, գրականությա՞մբ ես պարապում:

— Ամուսնուս նամակ եմ գրում:

Վահանը ձեռքով ծածկեց նամակը:

— Կուզե՞ս ասեմ ինչ ես գրում:

— Ասսա:

— «Սիրեցյալդ իմ Գրիշա, իմ անդինս, իմ պաշտելիս, իմ տե՛ր և թագավոր: Մի՞թե ինձ ուզեցիր նրա համար, որ բերես ձգես այս շորս պատերի մեջ և ինքո հեռանաս, թողնելով ինձ սիրատոշոր, ինչպես իր վարդի թիֆից զրկված սոխակը վանդակի մեջ: Մի՞թե այս գանձերը, որ որոնում ես մայր Հողի ծողում, ալելի թանկ են քեզ համար, քան ես: Ինչի՞ս են պետք աշխարհիս թեկուզ բոլոր գանձերը, երբ դու մոտս չես, երբ ես մենակ եմ, տիսուր, բու կարուր քաշելով շարունակ: Առավոտ է զալիս իր քաղցրանվագ թոշուներով, իր ճաճանչափայլ արևով՝ ամեն ինչ մութ է թվում ինձ. գիշեր է զալիս իր շողոզողուն աստամեն ինչ մութ է թվում ինչ մութ է թվում ինչ մութ է թվում աշխարհինքը թիւպուտ է երեսում աշղերով, իր հրաշափառ լուսնով: — Երկինքը թիւպուտ է երեսում աշ-

քիսւ եվ հեկեկում եմ ես սենյակիս մենության մեջ դառնագին ու վշտահար և տարածում եմ ձեռներս դատարկ օդի մեջ, շշնչալով՝ ռո՞ւր ես, ո՞ւր ես, արի, իմ սիրելի, արի, իմ պաշտելի, արի, իմ...» և այլն, և այլն, և այլն Զեռքս կկտրեմ, թե այս ոճով և այսպիսի բան չես գրել: Թույլ կտա՞ս կարդամ:

— Թույլ եմ տալիս:

Վահանը վերցրեց նամակը և սկսեց կարդալ:

— «Ուզում ես՝ կարգա, ուզում ես՝ չե, — ինձ համար էլ այդ միենույն է, — բայց ես քեզ չեմ ազատիլ իմ հաշիվներից...» Սա ի՞նչ բան է:

— Կարդա՛, կարդա՛, — բացագանցեց Մանեն, անկեղծ զվարճանալով այն խիստ կոմիկական արտահայտության վրա, որ ստացիլ էր եղբոր դեմքը զարմանքից:

Վահանը շարունակեց կարդալ.

— «Անցյալ օր բանկից հանեցի ընթացիկ հաշվով 200 ռ. Այդ գումարից 48 ռ. տվի մայբիկի համար նոր վերարկուի, որով հետև այս շաբաթ հաղորդվում է. 15 ռ. տվի ինձ համար ամառվագիսարկի. 12 ռ. տվի խոհարարին՝ անցյալ ամսվա համար. 53 ռ. տվի քոված Սարիբեկյաններին, որոնք այնքան թաց փայտ էին ուղարկել. որ միայն միում էր. 22 ռ. տվի...» Դե՛, սա բանի նման ուղարկել. որ միայն միում էր. 22 ռ. տվի...» Դե՛, սա բանի նման չէ, — բացագանցեց Վահանը, նամակը ձգելով գրասեղանի վրա: — Այս ի՞նչ հիմարություններ ես գրել:

Մանեն գլուխը ետ էր զցել և թուլանում էր ծիծաղից:

— Հը, ի՞նչ կասես, — ասաց նա, — ձեռքդ կտրո՞ւմ ես, թե չէ?

Վահանը ուսերը վեր քաշեց:

— Օին եմ ասում, Է: Ես քեզ միշտ պոետիկ արարած եմ ճանաշել, և հանկարծ... Վերարկու, խոհարար, թաց փայտ... Հիշանալու եմ հասկանում, իզուր չէ, ախր, որ մատերիալիստի կին ես դարձել:

— Բայց ի՞նչ կասես, որ այդ մատերիալիստը չի ուզում իմ հաշիվները կարդալ և սաստիկ նեղանում է, որ ամեն նամակիս հետ մի երկար հաշիվ եմ ուղարկում իմ ծախած փողերի մասին:

— Ի՞նչ կարող եմ ասել, բացի միայն այն, որ մարդ արարածը լի է հակասություններով: Բանաստեղծություններն ատելով ատում եմ, բայց թարսի պես մեկ էլ տեսար իրար հետմա՞ց շարատում են ուղեղիս մեջ շափաբերական շեշտերով՝ «Օ՛հ, ի՞նչ անուշ կ'ինչես զով առավոտուց վլես, հովիկ, ծաղկանց վրա դուրզու-

րալով և մազերուն կուախն փափկիկ», Եվ մինչև անգամ սկսում եմ երգել, երկային Եվ այս շանը միշտ պատահում է այն ժամանակ, — սա էլ շատ հետաքրքրական է, — երբ առավոտները հագում եմ կոշիկներս: Պա՛հ, էլի մոռացա, — հանկարծ բացագանչեց Վահանը, ձեռքը խփելով ճակատին:

— Ի՞նչը:

— Եկածս օրից ուզում եմ նոր կոշիկ առնել, միշտ էլ մոռանում եմ: Հոգուղ սատկեմ, այսօր որ գնալիս լինիմ, միտս զցիր, թե չէ խայտառակություն է, Տես, է, կասես խոզի զնշեր լինին, — ասաց Վահանը, ցույց տալով իր մաշված, ծոմված և փոշեծածկ ահագին կոշիկները: — Լավ, ի՞նչ ես ծիծաղում այդքան:

Մանեն հանկարծ դադարեց ծիծաղելուց, առաջ վաղեց և, սաստիկ հուզված, առավ եղբոր ձեռքը:

— Վահան զա՞ն... որ իմանաս որքա՞ն ուրախ եմ... որքա՞ն ուրախ եմ, որ եկել ես...

— Դե՛, հիմա էլ սկսեցիր արտասվել... Նստիր մի լավ նայեմ:

Վահանը առաջ քաշեց մոտակա աթոռը և քրոջը նստեցրեց իր դիմաց:

Մանեն շտապով սրբեց աշքերից դուրս ցայտած արտասութիւնի կաթիլները և նորից սկսեց ժպտալ:

Վահանը կարծ ժամանակ հետաքրքրությամբ նայում էր քրոջ աշքերին, հետո ուսերը վեր քաշեց տարակուսանքով:

— Կանաչյը... Անհասկանալի արարածներ եմ ասում, է, Սփինքսների: Մերթ ծիծաղ՝ մերթ լաց: Կատարյալ գարնանային եղանակ, մերթ արև, մերթ անձրև: Բայց Անին՝ թե «արև է՝ վայ է, անձրև է՝ վայ է»: Հը՞:

— Չեմ հասկանում ինչ ես ասում:

— Ուզում եմ ասել... Որտե՞ղ է սկսուրդ:

— Ժամումն է:

— Խո չե՞ք կովում իրար հետ, ինչպես ամեն հարս ու սկեսուր:

— Չէ, նա շափագանց բարի կին է, և ես շատ գոհ եմ նրանից:

— Է, փառք աստծու: Խսկ ամուսինդ... շատ ժամանակ է՝ հանքեռումն է:

Մանեն մի քիչ շփոթված, մի քիչ կասկածամտությամբ նայեց եղրոր աշքերին, և առ բռնի կերպով ծիծաղեց և կամաց խփեց նրա ձեռքին:

— Դու քո մասին պատմիր, քո. ի՞նչ ես շարունակ իմ մասին հարցնում, — ասաց նա:

— Իմ մասին ի՞նչ պատմեմ, քուրիկ ջանու Հացը բռլ, գինին բռլ, ուսում եմ, խմում, մթնում է՝ քնում. Քեզ էլ նամակ չեմ դրում: Դու էլ ջգրու ոչինչ չես գրում: Ու երկուսս էլ քվիթ ենք դուրս գալիս:

— Սպասիր ինչո՞ւ երեկ Հեղինեին խարել ես, թե ինձ մոտ ես եղել, մինչդեռ քո երեսն ես այսօր եմ միայն տեսնում:

— Որովհետև ազատամիտ օրիորդներին ես շատ եմ սիրում: Նա օրիորդ է, չէ: Խակ հայտնի է, որ ում սիրում ես, նրա հետ նա այսպէս անել: Նրա թխլիկ դեմքը որ տեսնում եմ, ուզում եմ այսպես հինգ մատներովս բռնել, կամաց... այսպես... շուր տալ ու հանկարծ— հո՛պ— նորից գետնի վրա զնել:

— Բայց գիտե՞ս, որ նա քեզ շատ է հավանում, — ասաց Մանեն ծիծաղելով:

— Դրուստ, — կանչեց Վահանը կոմիկական սարսափով:

— Նրա ահազին մարմնից որ շվախենամ, ասում է, անպատճառ կոմիկարվեմ:

Վահանն աշքերը ձգեց առաստաղին և ձեռքերը բարձրացրեց:

— Փա՛ռք քեզ, տե՛ր, — արտասանեց նա որպես թե թեթևացած: — Այ, չէի կարծում, թե շաղությունս, որից այսքան նեղց վում եմ ես, կարող է փրկել ինձ այդպիսի մի մեծ վտանգից: Մի հետաքրքրական բան են պատմում նրա կյանքից, չե՞ս լսել:

— Ի՞նչ բան:

— Պատմում են, որ իբր թե մի անգամ, իբր ազատամիտ կավալերներով շրջապատված անցնում է եղել մի գինետան առաջով: «Տղե՛րք, — ասում է. — ի՞նչ կտաք մտնեմ մի բաժակ արագ կոնցեմ»: — «Թե որ կմտնես, — ասում են կավալերները, — մի-մի պաշտանք»: — «Հա-ա», — ասում է, — դե հիմի թամաշ արեք»: Ու քո այդ ժամանակ ամառում կոնից բռնում ետ քաշում: Պես որ էլի կավալերներն են ամառում և կոնից բռնում ետ քաշում:

— Վահան, մի՞թե. չես խղճահարվում, որ նրա մասին այդպիսի... բաներ ես հնարում, — նկատեց Մանեն անկեղծ, մեզ

նախատինքով: — Զէ՞ս որ, ուրիշ տեղ որ պատմես, կարող են զբանքել մարդիկ, որ կհավատան:

— Հավատացնում եմ, քուրիկ ջան, այս պատմությունը ես չեմ հնարիլ: Ես միայն իմ լսածն եմ պատմում: Պատմողն էլ ո՛վ էր, — մի խավարամիտ: Ի դեպ, դու խավարամիտ ե՞ս, թե ազատամիտ:

Մանեն ծիծաղեց:

— Խավարամիտ եմ:

— Թյո՛ւ... Բայս ինքն արդեն հուսում է: Այս, ներողություն, քուրիկ ջան, դու չէ, դու հոտավետ ես վարդի պես: Բայց թունդ խավարամիտը քո մարդը պետք է լինի, այս, ի փառս Հայաստանյաց կաթողիկե և առաքելական սուրբ եկեղեցվու Ափսոս, որ լավ չեմ ճանաշում նրան: Չափից դուրս պեղանտ մարդ է երեւվում աշքում: Դրա համար սիրում չի կպչում, — չնեղանաս, խընդրում եմ: Բայց և այսպես պետք է մի անգամ զնամ տեսնեմ ինչ բանի է: Մեզնից հեռու կլինի մոտ մի հարյուր վերստ: Խոսքը մեր մեջ մնա: Բայց հանգարդյունաբերությունից, վաշխառությամբ էլ խո չի պարապում:

— Վահան, ի՞նչ լար լեզու ունիս, — նորից նախատեց նրան քուրքը, այս անգամ նկատելի կերպով նեղացած:

— Ես մեղա աստծու, ես մեղա աստծու... Բայց այս ի՞նչ տեսակ տուն ես պահում, ոչ մոխրաման կա, ոչ լուցկի:

Մանեն վեր կացավ, դուրս գնաց և երթ նորից ներս մտավ մոխրամանն ու լուցկու տուփը ձեռքին, Վահանը վերցրել էր գրասեղանի վրա զրուժ փառակազմ գրքերից մեկը և թերթում էր՝ հանգած սիգարն առամների մեջ բռնած:

— Այս զիրքը էւրդացել ես, իհարկե, — ասաց եղբայրը:

— Այդ ի՞նչ է:

— «Դոն Կարլոս»:

— Հա, անցյալ օրը վերջացրի:

— Այստեղ է ամէած, չէ՞ս ինչպէս է անունը:

— Ո՞ւմ անունը:

— Թագուհու:

— Ելիսաբեթ:

— Հա: «Ելիսաբեթ, Ելիսաբեթ», դու լուցիր ինձնից իմ դրախտը, որպեսզի Փիլիպոսի ծոցում փշացնեած Կարծեմ այսպիս է ասում, չէ՞ս, Դոն Կարլոսը:

Մանեն արաք մի հայացք ձգես եղբոշ վրա, հետո սկսեց ուզեղել բաղմոցի վրա դրված ձեռակար բարձիկները:

— Լավ չեմ հիշում... Հայ, կարծեմ այդպիսի մի բան կա, — ասաց նա շինուու անտարբերությամբ: — Բայց լսիր ինչ եմ ասում, — հանկարծ դարձավ եղբորը: — Երկա՞ր ես մնալու այստեղ:

Վահանը գիրքը ծածկեց ու դրեց գրասեղանի վրա:

— Ի՞նչ է, արդեն ձանձրացա՞ր ինձնից Խսկուն կգնամ:

— Է՛հ, — արտասանեց Մանեն զղայնորեն: — Ուզում եմ ասել զատկին մեզ մո՞տ կլինես:

— Այդ բանը գործերից է կախված, բույրիկ ջան. կարող է պատահել, որ հենց վաղը գնամ, և կարող է պատահել, որ մի ամիս էլ մնամ, որովհետեւ գյուղատնտեսական ընկերության մեջ էլ մի քանի գործեր ունիմ:

— Կարող է պատահելը մի կողմ թող, ես ուզում եմ, որ դու մնաս... Հասկանո՞ւմ ես:

— Ոչ, չեմ հասկանում: — Ասաց Վահանը սիկարը վառելով: — Այսինքն՝ չեմ հասկանում, թե ինչու ես ուզում, որ մնամ:

— Ախր մենակ ենք, մարդ չկա, հրիգորն էլ գրում է, թե գործերն այնքան խառն են, որ զատկին հազիվ թե կարողանա գալ: Էլ ի՞նչ զատիկ, որ ամեն օրվա պես տիտուր ու տաղտկալի պիտի անցկացնենք: Սա ի՞նչ կյանք է, մարդ չի իմանում ինչ անի, ուր գնա, ում հնատ խոսի: Այս գրքերն էլ որ Ալինին՝ ես կմեռնեմ ձանձրութից:

— Իե՞ղձ, խե՞ղճ քույրիկս: Ախր գիտեի, որ նամակիդ մեջ այն շպետք է գրեիր, ինչ որ գրել ես: Ես միշտ այն համոզումն ունեի, որ մատերիալիստի հետ ամուսնանալդ մի սիսալ քայլ էր Դու պետք է պոետի կին լինեիր, որ փեշը փեշիցդ կարած՝ չհեռանար մոտիցդ, թե չե... էլի՞ երեխա չես բերում...

— Ո՛հ, էլի սկսեցի՞ւ:

— Մի զայրանար, քույրիկ ջան, դավակ որ ունենաս, ախր, այդպես լացկան շես լինիլ: Բայց հանաքը մի կողմը մնա, շատ ես լզարել: Այդ ի՞նչ է վիզդ, կարապ ե՞ս: Իսկ ականջներիցդ լույսն այնպես է թափանցում, որ կարծես կարմիր լապտերներ ես կախել: Բայց մի վախենար, դու դարձյալ սիրուն ես, այնքան սիրուն ու նազելի, որքան... Ելիսաբեթը: «Ելիսաբեթ, Ելիսաբեթ, դու խեցիր ինձնից իմ դրախտը, որպեսզի...»

Վահանը վեր կացավ, մատով կամաց խփեց քրոջ կզակին, ծիծաղեց և մոտեցավ լուսամուտին:

Երկինքն երեկով պես մարուր էր ու բարձր, արևը նույնպես թափում էր ներքեւ իր տաք ու պայծառ շողերը: Դիմացը գտնված տան բաց պատուհաններից, վերին հարկում, դաշնամուրի ձայներ էին զալիս, սկզբալի կրծքային թափանակ հնչուններով հարուստ: Այդ պատուհաններից մեկի վրա դրված էր կլոր ու բարձր մի վանդակ, որի մեջ ճախրում էր մի գեղանիկ՝ առանց ձայն հանելու վահանը ձեռքով արավ քրոջը:

— Արի այստեղ:

Մանեն մոտեցավ նրան:

— Տեսնո՞ւմ ես այն գեղանիկը վանդակի մեջ: Ինչքա՞ն նման է քեզ... այն տարբերությամբ միայն, որ դու ինքդ ես լալիս, իսկ նրա տեղ լաց է լինում դաշնամուրի պեղալը:

Մանեն ոչինչ չասաց, միայն հարցրեց:

— Այսօր ճաշին մեր տանն ես, չէ:

— Թե որ ուզում ես, կմնամ:

— Մենք պաս ենք պահում այս շաբաթ, կուգե՞ս քեզ համար ուտիսվա բան պատրաստել տամ:

— Ոչինչ չի հարկավոր: Այս մի օրը լորի ուտելով քո շափ չեմ լզարիլ, մի վախենալ: Այս սկիսուրդ չէ, որ գալիս է: Այն ծերունին ո՞վ է հետք: Կասես Բաղամյանի հորեղբայրը լինի:

— Այս, նա է:

— Ժամիցն են գալի՞ս:

— Այս:

— Ի՞նչ գտել են իրար: Իե՞ղճ մարդ: Տես, է՛: Sic transit gloria mundi... Ի դեպ. այդ Բաղամյանները ի՞նչ ազգական են ամուսնուց:

— Ակեսուրս այդ ծերունու քրոջ տալի աղջիկն է:

— Է՛, այդ շատ հեռու գնաց: Այդպես որ գնանք, ես ու դու էլ դալայ-լամայի ազգական զուրս կզանք:

## V

Ներս մտան Օսանն ու Զաքարը: Զաքարը նախասենյակում հանել էր հնամաշ վերարկուն, որի տակ հագած էր աստված գիտե քանի տարվա երկարագիտ մի սյուրտուկ, խիստ կեղտոտ ու

**Ճմոված:** Անդրավարտիքի կարճ տոտերից մեկը, ինչպես միշտ, ներս էր պրծած կիսակողկի լայնացած ճիտի մեջ, որի ականջի մի ծայրը պոկվել և կախ էր ընկել երկարում եկի:

Օսանը խիստ ուրախացավ, որ Վահանին տեսավ, բայց և բավական հանդիմանեց նրան, որ քրոջը մոռացել է:

— Բաս ինչպիսի՞ եղբայր եմ, որ շմոռանամ,— նկատեց Վահանը կատակով:— Ո՞նց ես, ո՞նց, խնամի, զու ա՛յդ ասաւ: Պառավել ես:

— Հա՛, որդի զան, պառավել եմ: Գլխիս զերը թուլացել են: Ազերիցս էլ զուր է գնում:

— Ժամիցն ես գալիս, ողորմած կենա:

— Այն ժամը պահի քու արեք, որդի զան:

— Պարոն Զաքար: Դո՞ւ ոնց ես: Դու խո բոլորովին պառավել ես:

— Բաս ուզում էիր, որ զահելանա՞մ, հերդ լուս դառնաւ: Ես այն ցավն ու դարձն եմ տեսե՞լ...

— Հայ գիդի հա՞: Միտղ է, որ Գևորգ աղի քարվանսարում ապրանքի հակերի գլխին կանգնած, տեր-ողորմյան ձեռփեղ, մեկմեկ բաց անել էիր տալիս ու...

— Թո՞ղ, թո՞ղ, — շտապով ընդհատեց Վահանին ծերունին:— Այդ բաները մի՛, միտս մի՛ բերի:

— Ավա՞ղ, փառացն անցավորի, չէ՞ , պարոն Զաքար: Պառավներդ որ շիներ, մեր ժամերը խո փակվեցի՞ն: Հը՞ , ուարոն Զաքար:

— Է՛լի որ, է՛լի որ,— պնդեց ծերունին:— Թե որ աստվածապաշտություն մնացել է, էլի պառավներիս մեջ է մնացել: Զահելներդ եք, որ ոչ աստված եք ճանաշում, ոչ Քրիստոս:

— Բաս հոգին սո՞ւրբ:

— Ոչ էլ հոգին սուրբ:

— Դե ո՞նց անենք, պարոն Զաքար, ասում են աստված չկա:

— Իհարկե. որտեղ սատանա կա, այնտեղ աստված ի՞նչ ունի: Վահանը ծիծաղեց:

— Ասում են սատանա էլ չկա ախր:

— Ասո՞ւմ են, ասո՞ւմ են... Ո՞վ է ասում: Բաս զահելներդ ի՞նչ եք, որ սատանա չեք: Հիմիկվա ամեն մի զահելի փորում մի-մի սատանա կա պազած:

— Բաս իմ փորումը երկուան էլ կլինի, չէ՞ , պարոն Զաքար:

Օսանն ու Մանեն ծիծաղեցին, Զաքարը, որը խոսում էր ամենայն լրջությամբ, իր թավ հոնքերի առաջից նայեց Վահանի ահագին փորին և նույնպես սկսեց ծիծաղի զառամյալ ծերունու անձայն ու դողդող ծիծաղով:

— Երեքն էլ կլինի ու, — նկատեց նա:

— Կորթ, ինչ շաղացել ես, Վահան, աշքով շտամ, — ասաց Օսանը:— Քույրդ է՞ , քանի գնում՝ լղարում է:

— Թող մի-երկու սատանա կուլ տա, նա էլ կշաղանա: Զէ՞ պարոն Զաքար, — Զաքարեց Վահանը և նստեց ծերունու կողքին: Նա ձեռք առաջ Զաքարին և էլ բաց լթողեց նրան: Գիտեր ամենքին Հարմարվելու և ամենքի հետ խոսելու ձեր և խոսակցին դրավելու կախարդական մի ուժ ուներ:

Ճաշի սկիզբը, Վահանի շնորհիվ, անցավ ամենաուրախ տրամադրության մեջ: Մանեն սիրով նայում էր եղբոր մշտածիծաղ աշքերին, դիտում նրա հանգիստ, ինքնավստահ շարժումները և անդադար քրքում նրա կատակների վրա: Նույնիսկ Զաքարը, որ թե՛ ծերությունից և թե՛ վշտից, ըստ երևույթին, առմիշտ կորցրել էր ծիծաղելու ընդունակությունը, նա էլ ծիծաղի նման ինչ-որ անորոշ ձայներ էր արձակում անստամ բերանից: Խոկ Օսանն ուղղակի շէր կարողանում կարգին ճաշել շատ ծիծաղելուց և թաշ-կինակով անդադար սրբում էր աշքերից գլուխող զուրը:

Ճնայելով իր հոկա մարմնին, Վահանն ուտում և խմում էր համեմատաբար շափակոր կերպով: Պասվա կերակուրները չեխն դրա պատճառը և ոչ էլ այն, որ նա շատ ուտելու պահանջ չէր զգում, — ընդհակառակը, այլ այն, որ բժիշկները պատվիրել էին շատ շուտել: Մինչդեռ Զաքարը շտես մարդու ագահություն էր ցույց տալիս: Եվ իսկապես, երեսմն լավ ուտել-խմելուն սովոր, այժմ շատ հագիկ էր պատահում, որ նա կուշտ փորով հաց ուտերէ Այդ բանը գիտեր Մանեն. գիտեր, որ Զաքարը, ինչպես միշտ, այս անգամ ևս եկել էր իրենց տուն հատկապես իր քաղցած փորը կշտացնելու համար, ուստի նրա հոգացողության գլխավոր առարկան այն էր, որ առատ կերպով կերակուր ու գինի մատակարարի այդ գժրախտ ծերունուն, մանավանդ գինի, դեպի որը առանձին թուլություն ուներ ծերունին:

Զաքարի հետ կատակներ անելիս Վահանը խոսք բաց արեց նրա եղբոր որդու՝ Աշոտ Բագամյանի մասին: Մերունին բորբոքվեց: Գինին արդեն ընկել էր նրա գլխիսը: Նա ասաց, որ իր եղ-

բոր որդու անունը շտան, որ Աշոտը «փարմասիոն» է դառել. Ժամ շի գնում, չի հաղորդվում, ուշունց է տալիս կաթողիկոսին, հակառակ է Գրիգոր լուսավորչի հավատին, եկեղեցին ուզում է քանդել, պատկը հիմար բան է համարձիմ, մարդ ու կնոջ քարողում է, որ իրարից բաժանվին և ում հետ ուզում են՝ նրա հետ ապրեն և ուրիշ «այդ տեսակ բաներ»։ Օսանը լսում էր նրան զարմանքով, իսկ Վահանը զվարձանում էր ծերունու բորբոքման վրա, անդադար խթիթում նրան և ծածուկ աշբով անում բրոցը։ Մինչդեռ այդ անսպասելի միջադեպը հանկարծ փոխել էր Մանեի ուրախ տրամադրությունը։ Նրան այլևս դուր չէին գալիս եղբոր կատակները և ամեն անգամ, երբ Վահանը բորբոքում էր սկակասամիտ ծերունուն իր եղբոր որդու վրա ավելի խիստ բառերով հարձակվելու, Մանեն չէր կարողանում զսպել իրեն, որ հանդիմանական հայցքներ չգեր եղբոր վրա։

Երբ սեղանը հավաքեցին, Զաքարը պարզապես արրած էր. այնպես որ, երբ վեր կացավ, քիչ մնաց վայր ընկներ։ Վահանը բռնեց նրա թեկից և տարավ պառկեցրեց փոքրիկ թախտի վրա, իսկ Մանեն մի բարձ դրեց նրա գլխի տակ։ Մերունին միանգամայն թուլացած՝ ինչ-որ մրթմբաց, ըստ երևույթին օրհնեց քույր ու եղբոր ցույց տված հոգացողությունը և գրեթե խսկույն էլ քնեց, խաղաղ փսխսացնելով թթածակերից։ Օսանը նույնպես, իր սովորության համաձայն, հեռացավ իր սենյակը մի քիչ «հանգստանալու», որպեսզի երեկոյան դարձյալ ժամ զնար։ Իսկ քույր ու եղբայր առանձնացան հյուրասենյակը։

Վահանը թիկն էր տվել ասեղնագործ թափշյա բարձիկներով և մետաքսյա մութաքաներով զարդարված բազմոցի վրա և ծխում էր բերանից անպակաս սիգարը։ Ճաշից հետո մի տեսսկ ծովություն էր տիրել նրա բոլոր անդամներին, և նա ընկած էր բազմոցի վրա ծանր ու անշարժ, նեղվելով իր շաղությունից։ Ճաշասենյակի բաց դռնից լսվում էր պատի ժամացուցի լեզվակի թիթքաբը։ Այդ թիթ-թաքը, ճաշից ծանրացած ստամբար, շուրջը տիրող անդորրությունը և բավական տաք օդը քուն էին բերում նրա վրա։

Մանեն նստած էր լուսամուտի առաջ և մտախոհ նայում էր դեպի փողոց։ Փողոցում, ուղղակի լուսամուտի տակ, ցցված էր հեռախոսի այուներից մեկը, որի վրայով անցնող կարմրավոն երկաթալարերը մի տեղ շողշողում էին արևի տակ։ Փողոցը խա-

ղաղ էր. Ծեռվից միայն լսվում էր երբեմն-երբեմն տրամվայի ղանգակի ձայնը։ Այս սենյակից ևս երևում էր դիմացի տան պատուհանի վրա գրված վանդակը, որի մեջ դեղձանիկն առաջվապես լուս ճախրում էր թառերի վրա վերնից ներքև և ներքեւից վերև աստիճանական կարգով։ Մասեն հիշեց եղբոր համեմատությունը և զարմացավ, թե որքան ճիշտ կերպով ըմբռնել էր նա իր դրությունը։ Մի՞թե, հիրավի, ինքը նման չէ այդ խղճուկ թունիկին։ Փակված, միշտ փակված, ցմահ փակված, միշտ ձգտելով դեպի ազատություն և միշտ էլ անկարող լինելով իրագործել իր այդ ձգտումը։ Վանդակի ցանցերը չեն միայն, որ խանգարում են նրան, այլև սովորությունը, անվատահությունը, վախը և ցանցերից այն կողմը գտնված անհայտությունը խորհրդավոր ու ահավոր, ինչպես ամեն մի անհայտություն։ Բաց արա վանդակի դրունակը, և թունակը դեպի ազատությունն ունեցած իր բոլոր ձրգտումով հանդերձ թերես դուրս չգա այնտեղից և խցկի մի անկյուն՝ վախեցած այն ահավորությունից, որ ներկայացնում է դրւառ կից դուրս ազատության անհայտը...»

— Ճիշտ որ աննախանձելի պիտի լինի դրությունդ...

Մանեն ցնցվեց և արագորեն նայեց եղբորը զարմացած, թե միգուցե այն, ինչ-որ մտածում էր, արտահայտել էր խոսքերով։

Վահանն առաջվա պես թիկն էր տված հանգիստ, նայում էր ատամների մեջ բռնած սիգարի մոխրածածկ ծայրին և խաղացնում էր մի ոտը՝ մյուս ոտի ազդրին դրած։

— Այս է, Էլի, էն շրջանը, որի մեջ ապրում ես... այդ երկու պառավները, — շարունակեց նաւ։ — Բայց չէ, այնտեղ կան ուրիշներն էլ ուն de siècle կամ, ինչպես կասի պոլսեցին՝ դարավերջիկ օրիորդ Սոլիկյան, նրան սրտակից և, եթե չեմ սիսալվում, կենակից նասիրյանը, հետո... ամենամեծ ուսմիրաններից մեկն առաջադիմականների բանակում — Բագամյան... Երկու կողմից էլ քվինթ-էսենցիա։ Մրանք ա'յս են փշում մի ականջումդ, նրանք մի ուրիշ բան են զողոացնում մյուս ականջումդ։ Մի կողմից՝ ժամ ու պատարագ, աստված ու քրիստոս, պաս ու հաղորդ, դժոխք ու սատանա։ Մյուս կողմից՝ «փարմասիոնություն», եկեղեցու կործանում, լայն, հանրամարդկային զաղափարներ, ապահարզան՝ ազատ սեր, առաջադիմություն և ես ի՞նչ գիտեմ՝ ուրիշ ի՞նչ քար ու քացախ... Եվ եթե այս բոլորի վրա ավելացնենք քո վառ երեակա-

յությունը, որ երբեմն էկզալտասիոնի է հասնում, այն ժամանակ...

Վահանը բերանից հանեց սիգարը և նայեց բրոշը:

— Ճշմարիտ, ես շատ եմ հետաքրքրվում և կուզեի իմանալ, թւ ինչ է քո գերը այդ երկու հակառակ բնելուների մեջ:

Մանեն շկարողացավ դիմանալ եղբոր հետաքննին հայացքին և ակամա խոնարհեց աշքերը նա այժմ, չգիտեր ինչու, վախենում էր եղբոր հոտառությունից:

— Չգիտեմ, — արտասանեց նա կամաց:

Վահանն ուսերը թոթվեց և հորանջեց:

— Չգիտեմություն... Բավական նախանձելի դրություն: Մեր ժամանակ փիլիսոփաներն են միայն, որ տալիս են այդ պատասխանը կյանքի և մահվան առեղծվածի առաջ կանգնած: «Չգիտեմ»: Ողորմելի պատասխան, հավասարաշղությունը չգտնող հոգիների պատասխան, ինչպես ժամացույցի հարատեսականությունը միակերպ թիք-թաքը. — լսի՛ր (Վահանը մատով ցույց տվեց ճաշասենյակի դուռը), կարծես թե հարցնում է տարակուսանքով՝ ո՞ր կողմը, ա՞յս թե այն, ա՞յս թե այն, և ինքն էլ պատասխանում է իրեն բութ հուսահատությամբ՝ շգի՞-տեմ, շգի՞-տեմ... թիք-թաք, թիք-թաք, թիք-թաք... Անիծածը խոսում է կարծես: Իսկ ես գիտե՛մ. — ոչ այս և ոչ այն կողմը, այլ ուղղակի մեջտեղը, ուրեմն՝ ստո՛պ, կանգնիր:

— Բայց այն ժամանակ լեզվակն այլևս չի խոսիլ, և ժամացույցը կմեռնի...

Վահանը նայեց խորհրդավոր աշքերին, ըստ երկույթին հանկարծակի եկած նրա այդ անսպասելի պատասխանից, հետո հանկարծ ծիծաղեց:

— Մարդ լսի, կասի՛ քույր ու եղբայր այս ի՞նչ նրբաքնին խոսակցությամբ են զբաղված: Շատ մարդկանց ուղեղը զարգանում է երբեմն հիմարություններ դուրս աալու համար: Ով ճաշից հետո զվարճալի բաներով կը բաղադրի, որ կերածը լավ մարսի, մենք... փիլիսոփայություններով ենք զբաղվում: Լեզվակն այլևս չի խոսիլ, ժամացույցը կմեռնի... Խուսի շուրջն է խաբար— ինչե՞նք դուրս տալիս... լորի ուտելուց հետո:

Եղ Վահանը սիգարը նորից բերանը դրեց, երեք բարձիկ իրսր վրա հավաքած քաշեց զիսի տակ ու երկարումեկ ձգվեց բազմոցի վրա երեսն ի վեր: Նա աշքերը ձգեց առաստաղից կախված զա-

հին, որի ապակյա գինտերը տեղ-տեղ պլազում էին շողակնի երանդներով, և նորից սկսեց ականջ դնել ժամացույցի քնաբեր թիք-թաքին:

— Զարմանում եմ, որ դաշնամուր չես պահում,— ասաց նա, աշքերը հեռացնելով զահից և ման ածելով ընդարձակ հյուրասենյակի մեջ: — Այս րոպեիս ամենայն հաճությամբ կլսեի որեւ պոպպուրի կամ վալս, շքնելու համար: Բայց չէ, այնտեղ ննջում են երկու անտիկ պառավներ, նրանց քունը կիանգարվի: Իսկ ես... (Վահանը նորից հորանջեց առաջվանից ավելի երկարատև) ես էլ կընեմ, ինչպես երեսում է նշաններից: Իսկ դու... դու կմնաս արթուն... ժամացույցի լեզվակի պիս... Տես է, ինչ մյուսիկ է սարքել մեր sic transit-ը... Աստվածդ սիրես, փակիր այն դուռը:

Մանեն վեր կացավ և կամաց փակեց ճաշասենյակի դռուր, որտեղից լսում էր Զաքարի կերկերածայն խոմփոցը երբեմն այնքան տարօրինակ ու ընդհատվող, որ թվում էր, թե ծերունին խեղդվում է:

— Ապշում ես, թե այս ի՞նչ արարած է մարդ կոչված անսունը, — ասաց Վահանը: — Մի հարցնող լինի այդ ծերունուն՝ էլ ի՞նչ ունիս, որ ապրում ես, ինչո՞ւ ես ապրում, ո՞ւմ համար ես ապրում, ի՞նչ ես սպասում աշխարհից... Եվ դեռ գատում է, վիճում, բողոքում, զայրանում... Գես հասկանում, էլի, չես հասկանում... Բայց քո այդ պարոն Աշոտ Բադամյանին ասա՝ ինչ ուզում ես— գրիր, ինչ ուզում ես— քարոզիր, միայն թե քաղցած մի պահիր այդ ողորմելի ծերունուն, լավ չէ... Հա, քեզ շեմ պատմել: Սրանից վեց տարի առաջ, Մոնպելիեից որ վերադառնում էի հայրենիք, Պարիկում հանդիպեցինք իրար: Հարյուր ֆրանկ փողուղեց— տվի. բայց մինչեւ օրս էլ թե պետք է ստանամ: Մինչեւ այժմ չեմ հիշեցրել, բայց այս անգամ որ տեսնեմ— կասեմ: Էլ ձեր տուն չի գալիս, առաջվա պիս:

— Գալիս է:

Կասեմ, անպատճառ կասեմ,— կրկնեց Վահանը: — Վեց տարին կարծեմ բավական է: Ազատամտությամբ զբաղվելը լավ բան է, բայց պարտի զբարումն էլ խո պախարակելի բա՞ն չէ: Մեր գյուղում մի մանրունք ծախող ունինք. գավառից ոտք դուրս չի գրել, բայց այնքա՞ն թունդ ազատամիտ է, որ քարի վրա դնես, քարը կճաքի: Դլազստոնից ու Պառնելից է խոսում, իսկ Բիսմարկին որ ճանկը զցեն, չի խնայիլ նրա բաշալ գլխի երեք հատիկ

մագերից մեկն անգամ — այնքան թունդերիցն է։ Նրանից որևէ բան առնելիս, երբ կասկածում եմ ապրանքի որակության վրա, մինչև որ Բաղամյանի արևով չեմ երդվեցնում, չեմ հավատում, թեն Բաղամյանի երեսը չի էլ տեսել։ Մի անգամ ասացի նրան, որ Բաղամյանը հարյուր ֆրանկս ուտում է։ Ֆո՞ն, պետք է տեսնեիր ի՞նչ օիններ հանեց զլխիս։ Ուժը պատեր, հում-հում կուլ կտար։ Ասենք, Նաւիրյանն էլ պակաս հեղինակություն չի վայելում գավառում։ Նրա հոդվածները... Տեր իմ ամենահեշտ, այդ ի՞նչ հոդվածներ են։ Թանաքո՞վ է գրում, թե արյունով։ Որքան կրակ ու եռանդ, որպիսի՛ շանթ ու կայծակ։ Երբեք մտքիցս չի անցել Պառնելի մահվան առթիվ գրած նրա մի հոդվածը, Երեակայիր, մարդն իուլանդիայի «անթագ թագավոր» է կոչվում, և հանկարծ խավարամիւ Ալբիոնը նրան այն գրության է հասցնում, որ խեցը ստիպված է լինում անձնասպանովթյուն գործել։ Պատճա՞ռը։ Որովհետև սիրելիւ է լինում Օշի անունով ինչ-որ մի կապիտանի կնոջ — սարսափելի մի հանցանք, որ ո՛չ մի կերպ չի ուզում ներել նրան «չոպոր» անգլիացին, «բուրժուական մորալի այդ տիպար ներկայացուցիչը»... Օ՛, Բրիտանիա, Բրիտանիա, որ իմանաս ինչ-սիրի՛ քննում մկներ են կրծում քեզ... Է՛...

Այդ «է»-ն Վահանի բերանում փոխվեց երկարատև մի հորանչի, իսկ այդ հորանչի շարունակությունն եղավ ժողովրդական երգի մի երկտողյանը՝

Էս ինչ խարար դարու հասանք, հարալե,  
Էս ինչ խարար դարու հասանք, հարալե։

Երգը նորից փոխվեց հորանչի, առաջվաններից ավելի երկարատև և նյարդային։

— Առ այս սիգարը, քունս արդեն տանում է, — ասաց Վահանը։

Մանեն եղրոր ձեռքից առավ հանգած սիգարը, դրեց մոխրամանի մեջ և հարցրեց։

— Կուտքե՞ն բան ծածկեմ։

— Որ տապակվե՞մ։ Ոչինչ հարկավոր չէ։ Միայն շատ շթողնես, որ քննեմ։ Մի ժամանակ վեր կացրու։

Վահանը քննեց հենց այնպես, ինչպես որ պառկած էր, երեսն ի վեր, և չեղուն պես սկսեց խոմիացնել, սկզբում թեթև, հետո

ավելի ու ավելի ուժգին։ Առանց այն էլ նա կարծես թի վիզ շուներ, իսկ այժմ, պառկած դրության մեջ, նրա վիզը բոլորովին կորել էր և վզի տեղ դուրս էին պրծել նրա շաղ մսերը կրծքի և ուսերի վրա։

Մանեն նորից նստել էր լուսամուտի մոտ, նայում էր դիմացի տան պատուհանի վրա վանդակի մեջ փակված թոշնակին, ականջ էր զնում եղբոր խոմիացին և այնպիսի սաստիկ ձանձրույթ էր զգում, որ կարծում էր, թե սրտի վրա նստել է տղմի պես մի բան ծանր ու ճնշող...

#### IV

Վահանը մեկ-մեկ դիպչում էր քրոջ տուն։ Թիֆլիսում նա բազմաթիվ ծանոթներ և շատ բարեկամներ ուներ, ամեն օր մեկի կամ մյուսի տանն էր լինում հրավիրված և ամեն տեղ ցանկալի հյուր էր, ամենքը խլում էին նրան իրար ձեռքից։ Զատկի տոներին անգամ շաբաթացավ քրոջ տանը լինել և այդ բանի համար մեծ հանդիմանություն ստացավ թե Մանեից և թե, մանավանդ, նրա սկեսուրից։ Օսանն ընդունին շատ նեղացած էր նրանից, որ նա իր հաղորդվելու օրն էլ չէր եկել ճաշին իրենց տուն։

Տոները Մանեի համար անցան վերին աստիճանի տիսուր, մանավանդ ամուսնուց սիրո և կարոտի զգացումներով զեղուն շնորհավորական հեռագիր ստանալուց հետո։ Այդ հեռագրի ազգեցության տակ, նա հիվանդ ձեացավ և դուրս չեկավ Աշոտ Բաղամյանի մոտ, որը Զատիկը շնորհավորելու պատրվակով եկել էր նրան տեսնելու։

Բաղամյանը նստած էր հարեւան սենյակում և խոսում էր Օսանի հետ։ Օսանը հանդիմանում էր նրան իր քարոզած գաղափարների համար, իսկ Բաղամյանը ծիծաղելով ասում էր, որ իր հորեղբայրն այդ բոլորը հնարում է մասսմբ իրենից, մասսմբ իր հակառակորդների ասածները կրկնելով։ «Լավ, ինչի՞ շես մին-մին մտիկ անում, — ասաց Օսանը. — մեղք չի՞։ Հացափոր ընկած է սրա-նրա գուանը»։ Բաղամյանը զայրացավ։ Նա ասաց, թե ինքը միշտ առաջարկել է Զաքարին, որ իր տանն պարի, այն պայմանով միայն, որ արադից ձեռք վերցնի, շատ շխմի, մանավանդ ման շգա քելեխների (վերջինս Զաքարի համար պարզապես մի հիվանդություն էր դարձել), բայց ծերունին չի կամեցել ընդունել այդ

պայմանը և ինչպես որ անկարգ ապրել է հարուստ ժամանակ, նույն անկարգությամբ էլ ուզում է վերջացնել իր աղքատ ծերությունը Սակայն, չնայելով դրան, Բադամյանն այժմ էլ ամեն ամիս մի որոշ դումար ուզարկում է ծերունուն, որ նա հացափոր ժան չգա ուրիշի տները, բայց նա այնքան ապերախտ է, որ դեռ զրախոսում էլ է իր եղբոր որդու վրա:

Մանեն Բադամյանի խոսածը լսում էր կից սենյակից: Նա ակամա հիշեց եղբոր ասած հարյուր ֆրանկի պարտքը, որ Բադամյանը դեռ չէր վճարել նրան, եվ Մանեին թվաց, որ Վահանը թերեւս այնպես հեգնորեն լիսուեր Բադամյանի մասին, եթե այդ հարյուր ֆրանկի շատուցված պարաքը լիներ մեջտեղ: Քույրը շատ լավ ճանաշում էր եղբոր կծի բնավորությունը, և այդ բանն ամենաին գուր չէր գալիս Մանեին: Ամբողջ վեց տարի էր անցել այդ շնչին գումարը պարտք տալուց ի վեր, և Վահանը դեռ չէր մոռագել, իսկ նա աղքատ չէր, հարուստ էր, մինչդեռ Բադամյանը նրա համեմատությամբ իսկապես աղքատ էր, որովհետեւ գրական աշխատանքով էր միայն իր ապրուստը հայթալթում:

Զատկից հետո թատերասերների մի խումբ ներկայացում պիտի տար հայ կանանց բարեգործական ընկերության օգտին: Հեղինեն այդ ընկերության ամենանուանդուն անդամակիցներն ու մեկն էր, և Մանեն երկու տոմսակ էր ստացել նրանից— մեկն իր, մյուսը եղբոր համար: (Սկեսուրը իբրև հին կին, իր ամբողջ կյանքում թատրոն ասած բանը տեսած չէր և չէր ուզում տեսնել): Ներքում թատրոն ասած բանը տեսած չէր և չէր ուզում տեսնել: Ներկայացման երեկոյին Վահանը կառով եկավ, որ քրոջը թատրոն տանի: Նա մի քիչ ուզացել էր, այնպես, որ Մանեն նրան էր սպասում՝ արդեն հագնված-պատրաստ: Քրոջը տեսնելուն պես Վահանը լկարողացավ զապել իր հիացմունքը:

— Եի՞կ, — բացազնեց նա՝ աց ձեռքի բութ մատը շրխկացնելով միշամատի վրա: — Գու կատարյալ գեղեցկուհի ես եղել և մի քիչ էլ— խոսքը մեր մեջ մնա— կոկետ... ի՞նչ հասակ, ի՞նչ քնքշություն, ի՞նչ ճաշակ, ի՞նչ գրացիա... Լա՛վ, նազ մի անիր:

Եվ սկսեց երգել.

Նազ մի անիր, նազ մի անիր, նազ ազդի,  
Դեյրեղ բաշ, թող մի անիր...

Ու հանկարծ լոկց:

— Հետո՞... չվերջացրիր,— բավական սառն կերպով նկատեց քույրը, որը հայելու առաջ կանգնած ուզում էր մազերը: Պարզապես երեսում էր, որ նա դեռևս նեղացած է եղբորից:

— Զէ՛, վերջը լավ չէ, — ասաց Վահանը: — Առանց այն էլ ես արդեն մի հանցանք եմ գործել ծնողներիս հիշատակի դեմ: մտքում կար, որ մեռելոց օրը հորս ու մորս գերեզմանն օրհնել տամ և... մոռացա, այսինքն՝ մոռացնել տվին անհձվածները: Իսկի թողնում ե՞ն, որ մարդ հանգիստ մնա: մի օր մեկն է քարշ տալիս, մյուս օրը մի ուրիշը: Հենց հիմա էլ հազիկ կարողացա մեկի ձեռքից յախս թափել, թե չէ էլ ո՞վ կարծներ քեզնից: Երեսկայիր, որ մինչև օրս դեռ գործերս էլ չեմ վերջացրել: Զհանհամը, գոյն մի բանի նման լինիմ:

Նա կանգնեց Մանեի հետեւ և սկսեց քրոջ ուսի վրայից դիտել հայելու մեջ իր մազաղուրկ դեմքը:

— Հողուդ սատկեմ, քույրիկ զան, մի թամաշ արա քոխիս: Մոպսի շուն տեսնել ե՞ս բերանի կողդերից կախ ընկած լապոիներով: իսկը մոպսի շուն: Փու, խայտառակություն... եվ, շեմ հասկանում, ինչո՞ւ աստված զրկել է երեսս բուսականությունից:

Մանեն առավ փեղույրը, ծածկեց և սկսեց քորոցով ամրացնել մազերի վրա: Նա պինդ սեղմել էր շրթունքները: Երեսում էր, որ աշխատում էր զսպել ծիծաղի փոթկոցը:

— Գու գիտե՞ս, որ մենք ուշանում ենք, — ասաց նա:

— Վնաս չունի. մեծ մարդիկ միշտ ուշ են զնում թատրոն, — ասաց Վահանը, հայելով ծոցի արծաթյա շարդված ժամացույցին: — Տոմսակս տուր տեսնեմ:

Մանեն Հեղինեից ստացած երկու տոմսակներից մեկը տվեց Վահանին: Վահանը նայեց տոմսակին, անդրավարտիքի գրպանից հանեց պորտմոնեն, տոմսակը մեշը դրեց, հետո նույն պորտմոնեից հանեց երկու հատ մի-մի ուուրիխանոց ինչ-որ կոպեկների հետ և դրեց քրոջ առաջ:

— Այս ի՞նչ է, — հարցրեց քույրը զարմացած:

— Տոմսակիս արժեքը:

— Թե ի՞նչ:

— Թե այն, որ ձրի չեմ սիրում:

Քույրը երկար ժամանակ շատ լրջորեն նայում էր եղբոր ծիծաղուտ աշքերին:

— Ուզում ես ինձ վիրավորե՞լ, Վահան!  
— Զէ, քույրիկ շան. ես ուզում եմ միայն հակառակ չգնալ  
նշանաբանիս!

— Կատակ չե՞ս անում:

— Փողի գործերում կատակ անելը հավասար է հանցագոր-  
ծության:

— Եա՛տ լավ,— ասաց Մանեն, զղային արագ քայլերով հե-  
ռացավ նրանից, պահարանից հանեց վերարկուն, հազար և նույն  
քայլերով դիմեց դեպի դուռը: Այստեղ հանկարծ կանդ առավ և,  
գառնալով եղբորը, հարցրեց.

— Իսկ կառքի փո՞ղը ով պիտի վճարի:

— Կեսր ես, կեսր զու, — ծիծաղեց Վահանը: — Զէ, որովհե-  
տեւ ես քեզնից ավելի մեծ տեղ կրոնեմ, — ավելացրեց նա, — ուս-  
տի քեզնից ավելի կվճարեմ:

— Մեր տանը մի բանի անդամ հաց ես կերել, ուրեմն տո՛ւր  
կերածիդ փողը, — աղաղակեց Մանեն:

Վահանի ծիծաղը սաստկացավ:

— Բուպո՛, — բացագանձեց նա... — Կսիրեմ այդպիսի ապ-  
տակները:

Մանեն զայրացած դարձավ և դուրս գնաց:

— Եվ դո՛ւ ես ամուսնուս պեղանտ անվանողը, — ասաց նա  
կառքի մեջ:

Վահանը միայն շարունակում էր ծիծաղել, զվարճանալով  
քրոջ զայրութի վրա: Այդ ծիծաղն ավելի ես գրգռում էր Մանեին:

— Գնացել ես արտասահման, — շարունակեց Մանեն, — և  
հետդ, բացի գերմանական չոր հաշիվներից ուրիշ ոչինչ չեմ բերել

— Զո՞ր: Ինչո՞ւ չոր և ինչո՞ւ անպատճառ գերմանական, այլ  
ոչ իտալական կամ թե ֆրանսիական: Փողի հաշիվներից էլ  
փափուկ բան... Այդ մեկն երկրորդ՝ արտասահմանից ես ախր գի-  
տություն էլ եմ բերել, քույրիկ շան, ինչո՞ւ ես մոռանու՞:

Մանեն բորբոքեց:

— Գիտություն... ի՞նչ գիտություն: Որտե՞ղ է քո գիտությու-  
նը, Ո՞վ տեսավ: Ո՞ւմ օգուտ տվիր քո գիտությունով: Գնացել ես  
գյուղում նստել, այզիներ ես գտում, զինեգործարան ես շինում և,  
բացի քո փորի համար հոգալուց, ուրիշ ոչ մի բանի մասին չես  
մտածում, թեկուզ ամբողջ աշխարհը քանդվի էլ: Եվ դեռ ծաղրում

ես ուրիշներին... ծաղրում ես ձեր գյուղի մանրավաճառին, որ նա  
իր տգետ տեղովը հետաքրքրում է Գլազուռով... Պառնելով...

Վահանը թեքվել էր և գիշերային կիսախավարի մեջ իր սովո-  
րական հեզնող ժպիտով, բայց վորք-ինչ զարմացած, անթարթ  
նայում էր քրոջ զայրացած աշքերին:

— Մանե, այդ զու ե՞ս, — արտասանեց նա:

— Այո, ես եմ, չէիր սպասո՞ւմ:

— Բաս ասում էիր խավարամիտ ես:

— Թող, ի սեր աստծո, այդ հեզնություններդ: Դու անօգուտ  
մարդ ես, քեզնից և քո գիտությունից ոչ մի շահ չունի հասարա-  
կությունը:

— «Եթե ուսումեղ շահ չունի Հայաստան, թքել եմ քու ալ,  
ուսումիդ ալ վրան», — վրա բերեց Վահանը և բարձրածայն ծիծա-  
ղեց: Բայց մի բարկանալ, քույրիկ շան. մի բան եմ ուզամ  
հարցնել: Այն քո առաջադիմականների հետ շուտ-շուտ ես տես-  
նրվում:

Մանեն մեծ տհաճությամբ դեմքը շրջեց նրանից և ովհնչ  
շպատասխանեց: Որովհետեւ մի անգամ արդեն նեղացած էր եղ-  
բորից, այդ պատճառով Վահանի խոսակցության հեզնական տա-  
նը այժմ հանում էր նրան իրենից. և նա մեծ շանք էր գործ գնամ,  
որ զսպի իրեն:

— Պետք է ասած, որ դու բավական առաջադիմականացել և  
աղատամտականացել ես, — շարունակեց Վահանը: — Եվ իգուր ես  
կարծում, թե հետազեմ-խավարամիտների բանակին ես պատկա-  
նում: Բայց մի բան, որ շատ հավանեցի, այդ՝ զայրանալդ է: Զայրանում ես շատ սիրուն և շատ շնորհալիորեն, որովհետեւ մեծ  
եռանդ կա մեջդ և ինքդ էլ անկեղծ ես վերին աստիճանի: — Ան-  
կեղծ եմ ասում, քույրիկ շան, որ այս անգամ շեմ հեզնում: — Իսկ  
նրանք, քո այն առաջադիմական բարեկամներդ... Նրանց շատ էլ  
մի հավատա: Նրանք արդեն ոտով-գլխով կեղծ են, — ավելի կեղծ,  
բան այժմյան Կախեթու գինիները, — և, հավատացնում եմ քեզ,  
իրենց գիտությամբ շատ բիշ են տարբերվում մեր գյուղի մանրա-  
վաճառից:

— Ես կարծում եմ, որ հասարակական գործիներին քննա-  
դատելու իրավունք ունենալու համար, անհրաժեշտ է, որ քննա-  
դատողն ինքը հասարակական գործին լինի, — նկատեց Մանեն  
հանգիստ խստությամբ և յուրաքանչյուր բառը շեշտելով:

— Զնեղանաս, քույրիկ ջան, սկզբունքի տեսակետից ասուծ արսուրդ է, մինխստրի գործերը քննադատելու համար հարկ չկա անպատճառ մինխստր լինելու, այլապիս ի՞նչ պիտի ասեինք թիւմարկի մազերը փետրահան անող մեր գյուղի մանրավաճառին, Բայց այս դեպքում քո նկատողությունը լիովին արդարացի է: Ես, իհարկե, զրո եմ թադամյանի կամ նասիրյանի հետ համեմտած, այսինքն՝ հասարակական գործիշ շեմ և, իհարկե, շեմ, քսնի որ սիրային վեպեր ու բանաստեղծություններ շեմ թխում, կարմիր հողվածներ շեմ գրում, փախչում եմ հողաբարձական և եւհցիուական ընտրություններից, շեմ մասնակցում զանազան հայտնի անհայտ ժողովների, այլ միայն սուս ու փուս դրադված եմ սեփական որովայնս պարարտացնելով, հետեւար իրավունք չունիմ փախչուական մեր այդ նրենի հասարակական գործիշներին: Թեև քննադատելու մեր այդ նրենի հասարակական գործիշներին, թե այս էլ պետք է ասեմ, քույրիկ ջան, որ դու իզուր ես այդքան բարկանում ինձ վրա, ես խո շեմ քննադատում, ես միայն, այսպես ասած՝ բարեկամական զրուցատրության մեջ, իմ անհատական կարծիքներն եմ հայտնում:

— Դու կտրծիք հայտնել շգիտես, դու զիտես միայն հեգնել, ծւղրել և... բամբասել, պառավների պես:

— Հա՛, հա՛, հա՛,— պինդ ծիծաղեց Վահանիր: — Ի՞նչ գեղիցիկ կերպով ըմբռնել ես խարակտերիւտիկս... Կեցցե՛ս, բռա՛վու:

— Իսկ երբ բռնում են քեզ և հանդիմանում, — շարունակեց Մանեն, — զիտեւ կատակով ու ծիծաղով յախեղ թափեր:

Վահանի ծիծաղը սաստկացալ:

— Բռա՛վո, բռա՛վո... Ասում եմ, է՛, հիանալի՛ կերպով ըմբռնել եւ խարակտերիստիկս կամ նկարագիրս, ինչպես ասում են մեր հոսհոսները: Բայց հիմի թող պակասն ես լրացնեմ, — ավելացրեց Վահանը, դադարելով ծիծաղեւուց: — Ես ամենից առաջ, քույրիկ ջան, կոռիկտ մարդ եմ: Այսինքն՝ ես այն մարդկանցից քույրիկ ջան, կոռիկտ մարդ եմ: Այսինքն՝ ես այն մարդկանցից եմ: որոնք երկու կովողների միջամտած ժամանակ երկսի զիխին եմ: որոնք այս դիմումում են: Ուրիշ խոսքով՝ ես շեզոք մարդ եմ: Զորին խո զիտես ինչ է, — ու ձի է, ու էշ...

— Խոսք չկա, լա՛վ ածականներով ես կնքում ինքո քեզ...

— Օ՛, ներողություն, անսուններին ես շափազանց սիրում եմ հենց թեկուց միայն նրա՝ համար, որ նրանք շեն կծում իրար և աղատամիտ» և «խափարամիտ» բառերով: Ասելս այն է, որ ես աղատամիտ եմ, ու խափարամիտ, ու առաջադիմական եմ, ու աղատամիտ եմ, ու խափարամիտ, ու առաջադիմական եմ, ու

հետադիմական, ու արմատական եմ, ու պահպանողական — իհարկե, ա՛յն իմաստով, ինչ իմաստով որ այդ բառերը գործ են ածում մեր մայմունների աշխարհում: Տեղը զա՛ սրա՛ գիշին կիամփաշեմ, տեղը զա՛ նրա՛ զիխին, որովհետև երկուսն էլ ինձ համար միամույն հիմարներն են:

— Եվ ամենից խելոքը դու ես...

— Անշուշտու: Որովհետեւ արժե՛ միթե արյուն պղտորել մեր այս հիմարիունների աշխարհում:

— Իհարկե, շարժե, որովհետեւ արյան պղտորումն առհասարակ խանգարում է մարդկանց... ինորը հաստացնելուն:

— Բուավո՛, բռավի՛սիմո, — նորից բացազանեց Վահանը այնքան բարձրածայն, որ կառապանը ետ նայեց զարմացած:

— Ինչ որ սուր է՛ սուր է: Հավանում եմ: Կեցցե՛ս:

Ներկայացումն սկսվելու վրա էր, որ քույր ու եղբայր հասանթատրոն: Օրկեստրը արդեն նվագում էր: Ահագին ժողովուրդ էր խռնվում ֆոլենում և դահլիճում: Ժխորը կատարյալ էր: Օդը հաղցած էր օծանելիքների սուր հոտով: Մանեն ու վահանը հազիկ կարողացան գտնել իրենց տեղերը պարտերում: Աթոռների նեղմիշանցքից անցնելը կատարյալ պատիժ էր վահանի համար: Քրտնքակոխ եղած՝ նա հազիկ էր կարողանում անցկացնել իր ահազին փորը, զարդելով նստածների ծնկները կամ ստիպելով նրանց վեր կենալ:

Հասարակությունը համեմատաբար ընտիր էր, ինչպես սովորաբար լինում է բարեկործական նովատակով տրվող հայերեն ներկայացումներին: Սովորական ներկայացումներին հայոց թատրոնի ամենապատվավոր տեղը՝ առաջին կարգերում բազմած են լինում աստված գիտե ինչ միջոցներով ներս իցկված ամեն ահսակ երեխաներ: Բայց այժմ այդ կարգերում աթոռակալել էին ֆինանսական աշխարհի հաստ ու բարակ տուգեր, մի գեներալ՝ կլապա գանգով, մի քանի ուրիշ էպոլետներ՝ աստղերով և առանց աստղերի և գրական ու լրագրական աշխարհի ներկայացուցիչներ՝ երկար ժամանակ շխուզած մազերով և օսլայած շապիկի կեղտութերով:

— Պա՛հ, մի թամաշ արա, աստվածդ սիրես, — բռավից Վահանը քրոջ ականջի մոտ, որպեսզի ասածը լսելի անե օրկեստրի ծայների և ժողովրդի հանած ժխորի մեջ: — Համայն հայ աշխարհն այստեղ է: զինվորականներ, շինովնիկներ, վաճառականներ, մըտ-

քի մշակներ— դիփ զոռքա-զոռքա մարդիկ։ Այստե՛ղ նայիր, այնտե՛ղ. առաջադիմականը նստել է հետադիմականի կողքին և քիթը չի բռնել։ Տե՛ս այն քոստ բանաստեղծին, դեներալի աջ կողմը. ասես Ոլիմպոսի վրա և բազմած։ Մազերն էլ չի սանրել անհծածը։ Ասում են, որ սիրո մասին մի կոպեկանոց ոտանավոր երկնելու վրա տասը գրիշ է կրծում, որ առնվազն հինգ կոպեկ արժեւ Բայց էգուց չէ, էլօր բախտ կունենանք կարդալու նրա ռեցենզիան։ Հրե՛ն, Հրե՛ն, մեր Հրապարակախոս-կրիտիկոսը, որի առաջին արհեստը պարտքեր անելն է շվերադարձնելու պայմանով, իսկ երկրորդ արհեստն իդեալից և հավիտենական սուրբ ճշմարտություններից բարբառելլու Խնձ շափաղանց դուր է գալիս նրա դեմքը. կասես ինքը Հիսուսն է կանգնած առաջդ։ Խսկ նրա կողքին տե՛ս ինչքան համեստ նստած է մեր լրագրական կծոտողը։ Այս ում համար կարելի է ասել՝ ինքը շկար թիզուկես, արարմունքն է գազուկես։ Արժե, ճշմարիտ, կշռել՝ իմանալու համար, թե քանի փութ դուրս կգան նրա գործադրած բառերը— «զզկելի», «նողկալի», «գարշելի», «հրեշային», «ճիշդաղային», «դժոխային», մի խոսքով՝ բարձրացիր. աստիճանաբար մինչև սի ըստ եվրոպականի և մինչև փո ըստ հայկականի։ Դու նկատե՞լ ես, որ ամեն մի հոդվածում այն աստիճան վառվում է աղնիվ բարկությունից, որ սպառնում է գրիշը կոտրել, իսկ սև թանաքն էլ միշտ կարմրում է, երբ որևէ ամոթալի արարք է նկարագրում։

— Վահան, բավկան է, — շշնչաց քույրը, նրա թեր քաշելով: Մանեն այդ միջոցին աշքը լէր հեռացնում իրենց առջև նստած մի տիկնոջից ու պարոնից, որոնք պարզ երեսում էր, ականջ էին դնում Վահանին և գաղտագողի ժպտում կամ ծիծաղում էին անձայն, իրար նայելով:

— Սպասիր, քեզ մի ուրիշ երևելի է կզեմպլյար ցուց տամ, — շարունակնց Վահանը: — Տե՛ս, այն էլ մաշաղիների աշխարհի ուղիկալ-պուրլիցիստը, որ խմբագրատնից գողացել է խմբագրի յափրնին ու բոշերը և փախել է մեր կողմերը:

— Վահան, մի՞թե լսու զգում, որ համը տանում ես, — նկա-  
ւա առաջ հանդիմանողին:

Քույրը հասդրաասորսն է շամատառ ռուսիկ ջան, ուղիղ եմ ասում. լրագրի մեջ եմ

կարդացել յափնջու և քոշերի պատմությունը. գրողն էլ ինքը խըմ-  
բագիրն էր, յափնջու և քոշերի տերը: Աստված է վկա: Բայց սպա-  
սիր տեսնենք ուրիշ ովկ կա: Ըհը՛, այն էլ շուրոր-անգլիացիների  
բուրդը զգող նասիբյանը: Նրա գեմքը լա՞վ ես դիտել— կասես  
ճանշած ճանճուռ լինի, բայց աշքերը,— տե՛ս նայում է վերնահար-  
ճաշկած ճանճուռ լինի, բայց աշքերը,— ո՞ւմ եմ տեսնում, քուրիկ  
կիս, — փիալեք են վառվո՞ւմ... Օ՛, ո՞ւմ եմ տեսնում, քուրիկ  
չան, ո՞ւմ եմ տեսնում. Իմ սիմպատիան— օրիորդ Սոլիկյանը:  
Հրեն մոտեցավ այն երիտասարդ զինվորականին: Ի դեպ երեկ  
իմացա, որ նրա անունը «էժանագին օրիորդ» է եղել, որովհետեւ—  
վատ բան չկարծես— եռանդուն մասնակցություն ունի եղել էժա-  
նագին գրադարանի գործում... Պա՛հ, մեծ էշը նախորումն եմ թո-  
նագին գրադարանի գործում... Պա՛հ, մեծ էշը նախորումն եմ թո-  
նագին գրադարանի գործում... Պա՛հ, մեծ էշը նախորումն եմ թո-  
նագին գրադարանի գործում... Պա՛հ, մեծ էշը նախորումն եմ թո-

Մանեն քիչ էր մնում զեր թռչի և դուրս գալ, Համբերությունը հատակ եղբոր հեգնական նկատողություններից, որոնք այս անդամ, զվարճացնելու փոխարեն, պարզապես գըր- գրում էին նրա ջղայնությունը:

Բայց այդ միջոցին լոեց օրկեստրը, բասր վրա զարդարեց հետեւ հանդիսական գաղաքական պատմությունը՝ կանոնական կառավագական արձակությունը:

Վարագույրը բարձրացավ, և սերպայում  
Վահանը թեքվեց և շնչաց քրոջ ականջին

Դացողները՝ Փետր նոր է. ես էլ չգիտեմ, իսկ իս-

— Հա-ա՞ս! Ուրեմն լոենք և լսենք:

Հիրավի, առժամանակ Վահանը լուր էր և ուշը էր և  
տում էր ներկայացումը. Բայց երկար դիմանալ կշարողացափ. այ-  
անգամ սկսեց ծաղրել դերակատարներին, չնայելով քրոջ պարզա-  
պես արտահայտած դժգոհության նշաններին:

— Այս ի՞նչ երեկի հայերն են զարդում ամի լայնութեան տանիքների պատկանող տիկինները, օրիորդները, պարուները Մի լավ լսիր, թե աստվածդ կսիրես: «Եիս ձիեզ սիրյում իիմ». «Բարիերով շիեմ կարող արտահատիել»... «Ագալյում իիմ». «Ի՞նչ, ահես կովիիմ», ուզում է ասել երեխ. ի՞նչպես կովեմ...

— Մաս,— լսվեց նրա հետեւից:

Վահանը լոեց, ուզեց ետ նայել, բայց թե տեղը նեղ էր, և թե վիզ շուներ, որ գլուխը շրջեր:

Թատրոնի դահլիճում անտանելի շոգ էր, այնպես որ խաղամիջոցին ամենքը դուրս թափվեցին պարտեզ: Այստեղ քույր ու եղբայր նստեցին սպիտակ սիփոցով ծածկված սեղաններից մեկի մոտ, ճեմելիքի կողքին:

— Սարսափելի ծարավ եմ,— ասաց Վահանը.— մի շիշ գարեզուր բերել տամ, դու էլ կիմես, չ:

— Ես գարեցուր չեմ խմում:

— Լիմոնա՞ց:

Քույրը նայեց եղբոր աշքերին. նրա սառն հայացքի մեջ ինչոր անհաջող բան կար:

— Հետո չե՞ս վախենալ, որ պարտավորեցնես...

Վահանը ծիծաղեց և մոտիկ կանգնած սպասավորին պատվիրեց, որ մի շիշ սառն լիմոնադ բերի:

— Դու ինձ հանդիմանում ես, քույրիկ ջան,— ասաց նա մի սիգար վառելով,— բայց որ լավ մտածես, կտեսնես, որ ես ընտրել եմ մարդկային կյանքի բոլոր հշանաբաններից ամենախելացին: Դու քեզ համար, ես ինձ համար: Սա օբսուլյուտիստների «ամենքը մեկի համար» վարդապետությունը չէ և ոչ էլ կուեկտիվստների «մեկն ամենքի համար» վարդապետությունը, որ միենանույն մեղալի մյուս երեսն է, այլ ինդիվիդուալիստների ամենաարդար սահմանորոշումը մարդկային կյանքի փոխադարձ հարաբերությունների համար: Ես քեզնից ոչինչ չեմ պահանջիլ, դու էլ ինձնից ձեռք քաշիր: Ուզում եմ ստանալ— կտամ և կառնեմ, ուզում ես ստանալ— տուր և առ: Ու վերջացավ: Դու քեզ համար, ես ինձ համար: Կարծեմ շատ պարզ է, չ:

— Այս, շատ պարզ է, որ դա կուշտ և ժամատ մարդու վարդապետություն է,— նկատեց Մանեն սառն հանգստությամբ:

Վահանը բերանից բաց թողեց սիգարի ծուխը և նայեց բրոշը զարմացած:

— Կուշտ և ժամատ: Կուշտն էլի հասկանում եմ, բայց ժամատը սրբեղից կապեցիր պոշից:

— Զինի՞ թե հիմա էլ ուզում ես ուրիշ սովետություններ անել, որ ժամատ չես:

Վահանը բոլորովին զարմացավ:

— Ես ժլա՞տ:

— Այս, դո՞ւ,— շեշտեց քույրը նույն հանգստությամբ: Մի լավ նախատությունդ երեսում է մինչև անգամ հագուստիցդ: Մի լավ նախատությունդ երեսում է մինչև անգամ հագուստով այսպիսի տեղեր գալիքիր վրադ: Կարելի՞ է այդպիսի հազուստով այսպիսի տեղեր գալիքիր կարող, ինչ է, շապիկդ փոխել և, եթե շունիս, նորն առնել: Զէի՞ կարող, ինչ է, շապիկդ փոխել և, եթե շունիս, նորն առնել: Զէի՞ սուրբուկիդ ցերեկով նայել ես, թե ինչպես պլազում է կեղիսկ սուրբուկիդ ցերեկով նայել ես:

— Ա՛, իմացա, դու ամաշում ես ինձ հետ նստել:

— Է՛, թո՞ղ, ի սեր աստծու, — ջղայնորեն արտասանեց Մանեն և դմբքը շրջեց եղբորից:

— Սպասիր: Ուրեմն դու մի քիչ կեղտու շապիկս և հնացած այսուտուկս վերագրում ես այն բանին, որ ես ժլա՞տ եմ:

— Այս՝, չես ուզում մաքուր ու լավ հագնվել, որ փող ծախսած չլինես:

— Անկե՞ղծ:

Մանեն շպատասիանեց. Նա չեր նայում եղբորը:

— Լավ: Ընդունենք, թե ասածդ ճիշտ է, որ ճիշտ չէ, իհարկե, որովհետև ինչ կարիք ունիմ լավ հագնվելու, քանի որ գեռես մտագիր չեմ նշանվելու: Բայց ինչ կապ ունի ժլատությունս նշանաբանիս հետ:

— Այն կապն ունի, որ «գոր քեզ համար, ես ինձ համար» ասելով ուզում ես ապահովել քեզ, որ ոչ աշք շտնկի դրանիդ, իսկ դրանիդ քեզ համար...

— Լավ, մի շարունակիր, — ընդհատեց Վահանը, բաժակները լցնելով սպասավորի բերած լիմոնադից: — Դու վատ տրամաբան ես, քույրիկ ջան: Մի նեղանար, խնդրեմ: Գրպանիս որ այդքան նշանակություն տայի...

— Խոստովանիր, որ դու գյուղում վաշխառությամբ էլ ես պարապում, — հանկարծ դառնալով դեպի Վահանը, շպրտեց նրա երեսին Մանեն:

— Չէ, այդ էլ չեղավ, քույրիկ ջան,— նկատեց Վահանը դատարկեց իր բաժակը: — Դու ուզում ես— խմիր, քանի սառն է— դու ուզում ես ամուսնուդ ջիգրը հանել, որ այն օրը նրան կալիս անվանեցի: Բայց չէ՞ որ ես կատակ էի անում: Գրքաշխառու անվանեցի: Տայց չէ՞ որ ես կալիս: Գրպանիս որ (Վահանն աշքով արավ դեպի պարտեղի մուտքը), Գրպանիս որ (Վահանն աշքով արավ դեպի պարտեղի մուտքը), մինչև հիմա այդքան նշանակություն տայի և վաշխառու լինեի, մինչև հիմա

վաղուց բռնել էի քո այդ պարոն Զևսի յախից— ընեւ մազերից բռնելն ավելի հարմար կլիներ— և պահանջել էի հարյուր ֆրանկը... տոկոսով հանդերձ, իհարկեց:

Մանեն նայեց այն կողմը, որ կողմը աշքով արագ Վահանը, և տեսավ Բադամյանին: Բադամյանը մտավ պարտեզ: Նրա հետէին նեղ ու կարճ սյուրառուկների մեջ պինդ կոճկված երկու երիտասարդ, որոնք, մեկը նրա աջ, մյուսը ձախ կողմն անցած, ստըրկական-հարգական ակնածությամբ լսում էին նրա մի ինչ-որպեստմությունը:

— Տեսնում ես նրա հետ այն երիտասարդներին, — ասաց  
Վահանը քրոջը: — Դեմքերից, հազուստներից և շարժումներից  
տեսնում եմ, որ զավառացիներ են, — գալապացի աղատամիտ  
կծոտողներից, որոնք սակայն, կատու են դարձել այստեղ: Տես,  
ինչքան զգույշ են քայլում, որ շդիպչեն Զևսի թերին: Դա, տերը  
մի արասցե, սրբապղծություն կլինի, որովհետև գիտե՞ս ովէ Թա-  
դամյանը... Դու զավառում չես եղել, որ իմանաս, թե... Բայց  
Հարյուր ֆրանկս պահանջելու փոխարեն հրավիրելու եմ, որ մի  
բաժակ լիմոնադ անուշ անի մեզ հետ:

Եվ, երբ Բաղամյանն իր ուղեկիցների հետ մոտեցավ ու պիտի անցներ Վահանի ու Մանեի առաջով՝ առանց նրանց նկատելու, Վահանը կանչեց.

— Պարո՞ն Բադամ (ան:

Բաղդամյանը կանգ առավ, նայեց նրա կողմը, և, ըստ երեւակութին, իսկույն չկարողացավ ճանաչել, թե ով էր կանչողը, բայց Մանեին որ տեսավ նրա մոտ, շտապեց ներողություն խընդուելու իր թիկնապահ երիտասարդներից, թողեց նրանց և մոտեցավ քույր ու եղբորք:

— Այդ դուք եք, — բացազնէց նա, սեղմելով Վահանի ձեռքը: — Դուք այնքան ուշ-ուշ եք երկում մեր քաղաքում, որ, ներեցեք, իսկույն չկարողացա ճանաչել, մանավանդ, որ այդքան շաղացել եք: Բարեկ ձեզ, տիկին: Այդ ինչպես է, որ ձեզ չեմ նկատել թատրոնում:

— Որովհետև մենք հասարակական գործիչներ չենք և հետեւ ենք նստած, — թռուցիկ մի ակնարկ զցելով քրոջ կողմը, ասաց Վահանը և կողքի աթոռը մոտ քաշեց: — Չէի՞ք բարեհաճիւ մեզ ընկերանալ:

Բաղամյանը շնորհակալություն հայտնեց և նստեց. Վահանը սպասավորին պատվիրեց, որ մի բաժակ էլ բերի:

— Ուրիշ ինչպես եք, — զարձակ բագայակը զավարում է լուսավորին:

— Տիկլոն ասացեք, այլապես ո՞ր քամին կարող է տօնից  
շարժել այս ահազին մսագունդը: Եկել եմ բժիշկներից խորհուրդ  
հարցնելու, թե ի՞նչ անեմ, որ այսպես լաղանամ: Երեակայեցեք,  
տանը հատկապես մի կշեռք եմ պահում, ամեն օր կշռվում եմ և  
տեսնում, որ օրի վրա ծանրությունն ավելանում է մինչև մի  
փունտ: Դե հաշվեցեք՝ տարին քանի փութ դուրս կգա: Անցյալ  
օր մի ծանոթ բժիշկ մոտ էի, ասաց, որ այսպիսի ագրեսիվ շա-  
ղանալու դեմ շորս միջոց կա, մեկը մյուսից ավելի զորավոր:  
առաջինը՝ ամեն օր ներկա լինել մեր եկեղեցիներում մեծ պասի  
ժամերգությանը սկզբից մինչև վերջը. երկրորդ՝ ներկա լինել  
հայկական ժողովներին. երրորդ՝ հաճախել հայոց թատրոն և շոր-  
րորդ՝ կարելույն շափ շատ կարդալ հայ լրագիր:

— Այդ ի՞նչ սրամիտ բժիշկ եք ունեցել, — բացազանեց բազմամյանը ծիծաղելով, շատ լավ իմանալով, որ նա ոչ մի բժշկի հետ այդպիսի խոսակցություն չի ունեցել, այլ դա նրա հեգնության ձևերից մեկն է միայն:

— Հավատացեք, ես կատակ չեմ անում,— նկատեց Վահանը լրջորեն: — Բժիշկս ապացուցանում էր ինձ, թե սրանք այնպիսի միջոցներ են, որ ընդունակ են ինձ պես մի ճարպակողով մարդու թռփախտ անգամ պատճառելու, ու ուր մնաց լղարացնելու: Սկզբում ես էլ ձեզ պես կարծում էի, թե նա կատակ է անում, բայց առաջին իսկ պատահական փորձով տեսա, որ մարդը շատ երկելի գյուտ է արել: Ասեմ ինչպես: Նույն օրը, որ բժիշկս տվավ ինձ այդ խորհուրդը, ձեր լրագրի մեջ կարդացի պոլեմիկական մի հոդված, որի մեջ գրված էր, թե թքում եք ձեր հակառակորդի թերթի վրա: Հետևյալ օրը կարդացի ձեր հակառակորդի պատասխանը: Նա գրում էր՝ «Էն զիսից թքել ենք ձեր վրա էլ, ձեր թերթի վրա էլ և այդ թուքն էլ ափսոսացելու»: Այդ որ կարդացի, իսկույն վագեցի մեյզան, հինգ կոպեկ տվի, նստեցի կշեռքը և կշուռ տվի ինձ: Ի՞նչ եք կարծում: Երկու փունտի շափ արդեն պակասել էր ծանրությունս, մի փունտը լրագրի հաշվին երկի, մյուսը՝ ձեր հակառակորդի:

— Զլինի՞ թե այժմ էլ թատրոն եք եկել նույն փորձը կատարելու համար,— հարցրեց Բաղամյանը շարունակելով ծիծաղել:

— Գոտա՞ք: Սա երկրորդ փորձը կլինի, և ես համոզված եմ, որ մի-երկու փունտ էլ էգուց առավոտ կլինի պակասած ճարպի՞ն թըս — այնպիսի աննման մի հայերեն եմ լսում այս գիշեր:

— Որ այդպես է, եկող կիրակի էլ բարեգործական ընկերության ժողովն է լինելու հեթ, թերևս մի-երկու փունտ էլ այնտեղ կորցնեք:

— Կզամ, անպատճառ կգամ,— ասաց Վահանը, շիշը դատարկեց Բաղամյանի բաժակի մեջ և սպասավորին պատվիրեց, որ մի նոր շիշ բերի:

Վահանի հետ խոսելիս Բաղամյանն աշխատում էր հարմարվել նրա հեղանական տոնին ու վարմունքին: Վահանին նա դասում էր այն մարդկանց կարգը, որոնք միշտ ուրախ, միշտ անհոգ՝ անընդունակ են որևէ բան իրենց սրտին մոտ ընդունելու, խոսում են ամեն բանի մասին, բայց լուրջ կերպով չեն խոսում ոչ մի բանի մասին և սիրում են մի տեսակ ծաղրածուի դեր կատարել մասամբ իրենց չնշնությունը ծածկելու և մասամբ հասարակության մեջ սրամիտ ու սրախոս մարդու համբավը վայելողի անմեղ փառասիրությանը գոհացում տալու համար:

Մանեն նստած էր ծառի վրա կախված լապտերի տակ, այնպես որ նրա դեմքը կիսախավարի մեջ էր: Նա ետ էր ընկել աթոռի մեջքին, ամենեին չէր մասնակցում խոսակցությանը, և ըստ երեսությին չէր լսում, թե ինչ են խոսում եղբայրն ու Բաղամյանը: Նրա մտախոհ հայացքը կենտրոնացած էր Բաղամյանի դեմքին, որը նստած էր սեղանի մյուս ծայրին, նրան դեմ առ դեմ, լապտերի պայծառ լույսի տակ:

Բաղամյանը մոտ երեսուն տարեկան երիտասարդ էր, գեղեցիկ լիք դեմքով, որը նրան հասուն տղամարդի տեսք էր տալիս: Նրա լայն ուսերին շատ սազով նստած էր մոխրագույն բաճկոնը, որի տակից ամառվա սպիտակ ժիշետը փայլում էր ձյունի մաքրությամբ: Ըստ երեսությին, նա առանձին խնամք էր տանում իր փափուկ երկայն մազերի վրա, որոնք սիրուն գանգուրներով մինչև ուսերն էին հասնում՝ ականջների մոտ ցըված: Ամեն բանով՝ թե հայացքով, թե շարժումներով: և թե խոսելիս — աշխատում էր ծանր պահել իրեն և եթե շարունակական աշխատում էր վահանի ասածնե-

րի վրա, իսկ երբեմն և ծիծաղում, այդ բանում ևս աշխատում էր դուրս չգալ ժանրախոռն լրջության սահմանից:

— Դո՞ւք ինչպես եք, տիկին, լավ եք, — հարցրեց նա, ոեղանի վրայից թեթև առաջ խոնարհվելով դեպի Մանեն և ինչոր դարպավոր հայացքով նայելով նրա աշքերին:

Մանեն կամաց ցնցից, հայացքը թոցրեց նրա դեմքի վրայից և մերենայաբար վերցրեց իր բաժակը, որին դեռ ձեռք չէր տվել:

— Շնորհակալ եմ, — պատասխանեց նա հանգիստ:

— Դուք գիտե՞ք, պարոն Բաղամյան, որ ձեր դալուց առաջ ես ու քույր կովում էինք իրար հետ:

Բաղամյանն արագ նայեց Վահանին:

— Հաա՞... Ինչո՞ւ:

Վահանը նայեց քրոջը և կամաց ծիծաղեց:

— Ասենք, սա մասնավոր բան է, — ասաց նա: — Դուք ինձ ասացեք, այն երկու երիտասարդը, որ ձեզ հետ էին, գավառացիներ էին, չե՞:

— Այո:

— Էնոնցից, չէ, ես ու դուք որ գիտենք...

— Այո, — ճպտաց Բաղամյանը:

— Ես գրանց հոգում մեռնեմ. գիտե՞ք թե ի՞նչ հրաշքներ են գործում գավառում... Ճիշտ է, մինչև այժմ պրոպագանդը դուրս չի եկել քաղաքների մանրավաճառների խանութներից, բայց մի շինուասը տարուց հետո վերջին խոզարածին էլ կտեսնեք հեղափոխական կարմիր գրոշակի տակ կանգնած... ինչ վերաբերում է փոխական կարմիր գրոշակի տակ կանգնած... ինչ վերաբերում է գուտագուտության դասերին. հայ կինը վերցրել է քթակալը և այլես չի լվանում զոնադի ոտները. զյուքանչիները լոխ թղթակիցներ են դարձել: Հրեն մեր գյուղում մի զյուքանչի ունինք. թղթակիցներ են դարձել: Հրեն մեր զյուղում մի զյուքանչի ունինք. թղթակիցն է. շաբաթ չի անցնի, որ նամակ չգրի: Դուք էլ տպում եք, հա՞ տպում:

— Էհ, ո՞վ է մեղավոր, որ ձեզ պես ուսում-առածները ետ են քաշվել և սպարեզը մնացել է դյուքանչիներին:

— Համենայն դեպս, ոչ ես: Բանն այն է, որ ես փափագելով փափագում եմ թղթակացել ձեզ, բայց մի քանի շատ մոտիկ խափափում եմ թղթակամներ ունիմ. հենց որ իմանան, թե գրում եմ գարամիտ բարեկամներ ունիմ. Հենց որ իմանան, թե թերթի մեջ — պրժա՞վ, էլ բարեկ չեն տալ:

— Որ այդպես է, գրեցեք նրանց թերթի մեջ:

— Այն ժամանակ, ինքներդ ասացեք, կարող էի ձեզ հետ միւնույն սեղանի մոտ նստած այսպիսի բարեկամական խոսակցություն ունենալ:

— Դուք չեիք կարող, բայց ես կարող էի, — վրա բերեց Բագամյանը ծիծաղելով:

— Ցավն էլ հենց այն է, պարոն Բաղամյան, որ եթե ես համոզված լինեի, թե դուք այդ կարող էիք, հենց վաղն ևեթ կգրեի խավարամիտների օրգանում:

— Փորձեցեք և տեսեք:

— Ուզո՞ւմ եք, հենց այս ըոպեիս փորձեմ:

— Այդ ավելի լավ, որովհետև ո՞վ գիտե, թե էլ ե՛րբ առիթ կունենանք այսպես միւնույն սեղանի մոտ նստած լինելու:

— Ուրեմն աշխատեցեք պինդ նստել, որ չփախչեք: Ես խոսելու եմ ձեր վերջին վեպի մասին և խոսածս կլինի կմախքը մի կրիտիկայի, որ կցետեղեմ խավարամիտների օրգանում:

Բաղամյանն արմունկներով հենվեց սեղանին և քունքերն առավ ափերի մեջ: Այդ դիրքով և դեմքին խաղացող հեգնական ժպիտով նա կարծես թե ուզում էր ասել՝ «դուրս տուր, տեսնենք ինչ նոր խեղկատակություններ ես անում»:

— Ես լսում եմ, — ասաց նա:

— Ես էլ սկսում եմ, — ասաց Վահանը և սկսեց բաժակները, լցնել սպասավորի բերած նոր շղթա:

Այդ բոպեին նրանց առջեր բանեց Հեղինեն, հետեւ նասիբյանը: Ինչպես երկում էր, այդ տարօրինակ սիրուհին ու սիրահարը դարձյալ մի սուր խոսակցություն էին ունեցել իրար հետ. այդ երկում էր նրանից, որ Հեղինեի աշքերի մեջ զսպած բարկության հետքեր էին երկում, և նրանից, որ նասիբյանը զղայնորեն կրծում էր ներքին շրթունքը և բեղի ծայրը ոլորում:

— Ա՛, իմ ամենախորին հարգանքներն օրիորդին, — բացադաշտեց Վահանը և ոտի ելավ Հեղինեին բարեկելու համար: — Բայց... դուք բարկացած եք երկում, օրիորդ:

— Այո, բարկացած եմ և... շատ բարկացած, — ասաց Հեղինեն, նստելով Մանեի կողքին:

— Ո՞ւմ վրա, համարձակում եմ հարցնել:

— Զե՞զ վրա: Դուք խարեբա և ստախոս մարդ եք:

— Վա՛ճ... Այդ ի՞նչ ասացիք, օրիորդ:

— Ասացեք ինդրեմ, ինչո՞ւ այն օրն ինձ խարեցիք, թե ձեր քրոջ մոտից եք զալիս, մինչդեռ նրա երեսը դեռ չէիք էլ տեսած եղել:

— Սխալվում եք, օրիորդ: Քրոջս երեսն ես տեսել եմ նրա հենց ծնվելու օրից:

— Հետո, ինչպես իմացա, դուք օրինակելի եղբայր եք եղել: Մանեն զանգատվում էր, որ տարին հազիկ մի երկու անգամ թիֆ-լիս եք զալիս և եկած ժամանակն էլ ամենից վերջն եք հիշում իրեն: Ճիշտն ասած, ես ամենեին չէի կամենալ ձեզ նման մի եղբայր ունենալ:

— Իսկ ես, երեակայեցեք, օրիորդ, փափագելով կփափագեի ձեզ նման տասը քույր ունենալ:

— Ի՞նչո՞ւ:

— Որպեսզի որքան կարելի է հեռու փախչեի:

Հեղինեն տարակուսանքով նայեց Մանեին, Բաղամյանին, հետո Վահանին:

— Ինչպե՞ս ընդունեմ ձեր այդ խոսքերը, — կատա՞կ, թե վիրավորանք:

— Իհարկե, կատակ: Քույրս ինձ հանդիմանում էր, որ ես գիտեմ միայն կատակ անել, հեգնել, ծաղրել և բամբասել. խաբելն ու սուր խոսելն էլ խո դուք ասացիք: Այս ըոպեիս էլ իմ այդ բոլոր ընդունակություններս ի մի հավաքած՝ ուզում էի խոսել պարոն Բաղամյանի «Ալպահարզանի» մասին:

— Իհարկե, դուք չեք հավանիլ այդ վեպը, — նկատեց նասիբյանը, հարեւան սեղանի մոտից մի աթոռ քարշ տալով և նստելով Բաղամյանի կողքին:

— Ահ, այդ դո՞ւք եք, պարոն նասիբյան: Բարե ձեղ: Բայց նախ՝ ինչպե՞ս է ձեր թանկագին առողջությունը:

— Ծնորհակալ եմ:

— Հետո՝ ինչո՞ւ չպետք է... Ի՞նչ եք կամենում: Լուցկի՞՛: Համեցեք... ինչո՞ւ չպետք է հավանեի պարոն Բաղամյանի վեպը, համարձակվում եմ իմանալ:

Նասիբյանը վառեց պապիրոսը և լուցկու տուփը դրեց Վահանի առաջ:

— Որովհետև խավարամիտների բանակին եք պատկանում, — ասաց նա և ծխախոտի ծուխը կուլ տալուց սկսեց հազար:

— Օ՛, այդ ի՞նչ սոսկալի բառեր եք գործածում, պարոն նա-

սիրյան: Խղճացեք ինձ, խնդրում եմ: Ինչպե՞ս կարող էի Հավանել պարոն Բաղամյանի ռոմանը, քանի որ Պառնելի մասին ձեր գրած հոդվածը սարսափելի Հավանել եմ: Իսկ պարոն Բաղամյանի ռոմանի բովանդակությունն ու Պառնելի սիրահարության պատմությունն այնքան նման են իրար, որ եթե պարոն Բաղամյանն իր վեպն առաջ գրած լիներ, կմտածեի, թե իսկ և իսկ Պառնելի գլխին պատահած անցքն է իր ռոմանի նյութ շինել: Չեր հոդվածն այնքան Հավանել եմ, որ նույնիսկ Կտրել դրել եմ շրջանակի մեջ և պատից կախել, ինչպես մի ժամանակ անում էին մեր բարեպաշտ աղաները կաթողիկոսական կոնդակները: Բայց ի՞նչ եմ ասում, մենակ ե՞ս եմ Հավանել: Մեր գյուղում մի դյուքանչի ունինք: Լրադրի այն համարը, որի մեջ տպված էր ձեր հոդվածը, վազացրեց ինձ մոտ. «Եին տես է», մին տես է», — ասաց. — Ի՞նչ հիմնալի պյան ա կրել նյասիրյանը»: Պետք է ավելացնեմ, պարոն Նասիրյան, որ ձեռ հոդվածներն առհասարակ ձեռքից ձեռք են խլվում գավառում:

— Զի՞ կարելի արդյոք, որ հեգնությունները թողնեք և խոսեք եթե ոչ լրջորեն, գեթ անկեղծորեն, — նկատեց Նասիրյանը, բերանից արձակած առատ ծխի միջից ծուռ ու սառն մի հայացք ձգելով Վահանի վրա:

— Այդ ի՞նչ եք ասում, պարոն Նասիրյան. դուք ինձ վիրավորում եք: Անկեղծ չեմ խոսում միայն կանանց հետ, իսկ դուք, փառք աստծո, մորուր էլ ունիք, բեղեք էլ:

— Դուք երեկոի ճշմարտություն ասացիք, — բացազնեց Հեղինեն: — Օ՛, դուք տղամարդիկ կողմանը... Զեզ մեկ-մեկ պետք է կախել:

— Ի՞նչ խորամանկն եք, օրիորդ, — ասաց Վահանը աշքով անելով Հեղինեին: — Չեք ուզում բոլորիս միանգամից կախել, որպեսզի առանց պաշարի շմնաք:

Հեղինեն բարձրածայն քրքջաց:

— Դուք բավական ցինիկ էլ եք եղել, — ասաց նա:

— Ընդ, նոր էպիտես: Այդ էլ գրիր դավթարումդ, քույրիկ շան, — գարձավ Վահանը Մանեին: — Ցինիկների նախահայրը խոզիտեք ով էր, օրիորդ:

— Ես գործ չունեմ ձեր նախահոր հետ, բայց տեսնում եմ, որ դուք ինքներդ կարող եք մի լավ նախահայր լինել:

— Օ՛, որ գիտենաք, թե որքան մեծ պատիվ եք անում ինձ, օրիորդ: Գիտե՞ք Մակեղոնացին ի՞նչ ասաց, երբ այցելություն էր

տվել իմ նախահորը: «Եթե ես Ալեքսանդրը լինեի, — ասաց, — կկամենայի Դիոգինեսը լինել»: Այս էլ ասեմ, օրիորդ, որ դուք ուզում եք մեզ՝ տղամարդկանց, կախել, բայց իմ նախահայրն արժանի չեր համարում իր տակառի մեջ տեղ տալու ձեզ, ուզում եմ ասել՝ կանանցդ:

— Իսկ դուք ե՞րբ եք տակառ մտնելու:

— Երբ որ մի նոր Ալեքսանդր Մակեդոնացի երեան գա, իսկ մինչ այդ՝ տակառներս ես գործ եմ ածում զինիներին համար: Բայց թողնենք այս: Պարոն Բաղամյանին ես խոստացել եմ խորանի իր «Ապահարզանի» մասին: Դուք, իհարկե, կարդացել եք այդ վեպը: Հիմնալի է, չէ՞»:

— Դուք ծաղրում եք, — ասաց Հեղինեն լրջորեն, — բայց ես ձեզ կասեմ, որ «Ապահարզանը» ոչ միայն հիմնալի մի վեպ է այլուր կեղարվեստական գրվածք, այլև, որքան ես զիտեմ, ամենահրեկ գեղարվեստական գրվածքն է ամբողջ հայ գրականության մեջ, որ պատաշին գրվածքն է ամբողջ հայ գրականության մեջ, որ պուտ է կեղծ ամուսնությունների դիմակը և ցուց է տալիս, թե որքան ստրկացած վիճակի մեջ է գեռես հայ կինը տղամարդի և հապան ստրկացած վիճակի մեջ է խոսես հայ կինը տղամարդի և հապան ստրկացած վիճական նախապաշտումների բռնակալ լինի տակ:

— Օրիորդ, այդպես չի կարելի: Դուք մոռանում եք, որ Հեղինեկը ներկա է այստեղ: Խնայեցիք նրա համեստությունը: Մի՛թե զիտեք, որ Հեղինակն իր կրիտիկոսների առաջ մի դեր ունի միայն կատարելու — լուել եկ տեսնում եք, որ պարոն Բաղամյանը չի պաշտպանում իրեն ձեր խոսքերի դեմ:

— Ես նրան չպախարակեցի, որ նա ինքն իրեն պաշտպանելու պետքը զգա:

— Զարմանալի հասկացողություն ունիք ինքնապաշտպանության վրա: Մի՛թե զիտեք, որ լինում են գովասանքներ, որոնց նույնպես պետք է պաշտպանվել: Լինում են, չէ՞ պարոն Բաղամյան:

— Ես կատարում եմ Հեղինակի դերը և լուսմ, — ասաց Բաղամյանը ժպատակ:

— Կեցցե՞ք: Ուրեմն ես կարող եմ ավելի ևս համարձակ խոսել: Լսեցիք, պարոններ, սկսում եմ... Պարոն Նասիրյան, դեռ ձգեցիք այդ պապիրոսը: Տեսնում եք՝ Հազում եք... Ինչո՞ւ դուք, ձգեցիք անպատճառ կողմն եք բռնում, հետո ամուսնուն գիտիս նախ անպատճառ կողմն եք բռնում, դուք հրեշտ ու մի դուրս եք բերում իրեր կատարելագույն մի հրեշտ, որի հետ ոչ մի-

այն ձեր նկարագրած կանալք, որոնք սովորաբար հրեշտակներ են լինում, այս քառասուն պող ու պող ունեցող սատանան էլ չի կարող ապրել: Նախ՝ միշտ այդպես է լինում արդյոք: Հետո՝ դա ի՞նչ փոտած ձև է, որ շուն ու կատու դառած ամուսինների մեջ անպատճառ ներս եք խոթում մի երրորդ անձնավորություն, որին և հանձնում եք ծանրության կենտրոնը: Այդ միշանկյալ անձնավորությունն անպատճառ կնոշ սիրահարն է: Առանց սիրահարի ամուսնական խնդիր չի լուծվում, մինչեւ անդամ իսկի խնդիր էլ չի լինում, ձեր կարծիքով: Կինը հրեշտակ, մարդը հրեց, սիրահարն իդեալիստ, անարդարության և հասարակաց կարծիքի դեմ բողոքողի կնիքը ճակատին: Կինը մեռնում է թոքախտից, ամուսնու ճիրանների մեջ, սիրահարը վազում խելագարվում է սիրած կնոշ գերեզմանի վրա իսկ հրեշտամուսինը, երկուսի գլուխն ուտելուց հետո էլ, շարունակում է իր ուրախ, անհոգ կյանքը: Ահա՛, ձեր, գրողներիդ, շաբանը, որը պապիս պապի ժամանակից արդեն փաել է ժանգից: Զի՞ կարելի արդյոք, որ մի անդամ էլ շուր տաք այդ շաբանը և այդպես շափեք. ամուսինն անլեզու մի անասուն, կինը մի պոռնիկ, սիրահարը մի լովելաս-շառլատան: Այն ժամանակ կտեսնեք, թե ինչպես ամեն բան պրտիտյուս կլինի, ինչպես ասում է զարաքաղցին: Բայց չէ, դուք խորամանկ մարդիկ եք, ուզում եք կանանց սիրտը շահել— տեսա՞ք, օրիորդն ինչպես փառաբանում էր ձեղ— թե չէ՝ անլեզու անասուններից ի՞նչ շահ: Այնպիսի մի ռոման...

— Ներողությունն, ևս ուզում եմ ձեզ պատասխանել,— բացանշեց Հեղինեն, քթի վրա ուղղելով պենսնեն:

— Խնդրում եմ, մի քիչ համբերեցեք, օրիորդ, ևս իսկովն վերջացնում եմ: Այնպիսի մի ռոման, որպիսին ձեր «Ապահարզան» է, պարոն Բադամյան, ևս էլ կգրեմ, թեև գինեգործ եմ: Հավատացնում եմ ձեզ: Որովհետեւ շաբանը պատրաստ է, մըտքերը պատրաստ են. ամեն բան պատրաստ է: Հարկավոր է միայն պարապ ժամեր և համբերությունն: Ա՛յ, ձեզ զոշաղ կասեմ, եթե կարողանաք պապահարզանի խնդիրը լուծել առանց սիրահարի: Երեք հերոսի տեղ երկուսը գուրս բերեք — մարդ և կին: Բայց ոչ թե մեկը հրեց, մյուսը հրեշտակ, կամ մեկն անասուն, մյուսը պոռնիկ, այլ երկուն էլ կատարելապես օրինավոր անձեր, սակայն այնպիսի անձեր, որոնք ինչ-ինչ պատճառներով — բայց ոչ սիրահարի պատճառով, հա, լավ իմացեք — շեն կարող միասին ապրել,

անհնարին բան է, որ միասին ապրեն: Այդ պատճառները պետք է լինին հարկավ զուտ բարոյական պատճառներ, ինչպես, օրինակ, տարբեր զաղափարները, հակումները, հայացքները և այլն: Հը՝ ի՞նչ եք կարծում այս մասին, պարոն թաղամյան:

— Ներողությունն, նախ թույլ տվեք իմ ասելիքս ասեմ,— նորից մեջ ընկավ Հեղինեն:

— Հրամայեցեք խնդրեմ:

— Ամենից առաջ մի բան, դուք այսպես էլ եք խոսում, այնպես էլ, և ես չեմ հասկանում, թե իսկապես ի՞նչ եք դուք — հետապիմակա՞ն թե առաջադիմական, խավարամի՞տ թե աղատամիտ:

— Զարմանալի ըրիորդ եք, նոր չէր, որ պարոն նասիբյանն ասաց, թե ես խավարամիտ եմ:

Նասիբյանը պապիրոսը ձգեց գետնին և սկսեց ոտով տրորել:

— Դուք ոչ այս եք, ոչ այն. դուք կլոուն եք, — ասաց նա շատ հանգիստ կերպով:

Վահանը բարձրածայն ծիծաղեց:

— Դե, ասում եք, պարոն նասիբյանը կծել չի իմանում...

— Շունը դուք եք, — հանկարծ պայթեց նասիբյանը՝ ձեռքն ամուր խփելով սեղանին և վեր թռավ տեղից: Մի ակնթարթում նրա աշագին աշքերը կրակ կտրեցին:

Մեքենայաբար վեր թռան տեղներից նաև թաղամյանը, Հեղինեն և Մանեն, առաջինն ապշտ, վերցինները սաստիկ վախեցած, մանավանդ Մանեն, որը լավ շհասկացավ, թե ինչ պատահեց այդպես հանկարծ:

Վահանը մի բոպե կորցրեց իր սառնաստությունը. նա ոչ թե միայն հանկարծ դադաղելուց, այլև, նրա ամբողջ կյանքում թերևս առաջին անդամ, շքացավ նրա գեմքից մշտական հեգնական ժպիտը: Նա ծանրորեն վեր կացավ և հուժկու ձեռքերը տարածեց դեպի նասիբյանը, բայց քույրը հանկարծ վրա ընկավ նրա թեկին:

— Վահան... աղաշում եմ, — շշնջաց Մանեն:

Վահանը նայեց քրոջ աղերսական-սարսափահար աշքերին, հետո մի հայացք ձգեց շուրջը, ուր բավականաշափ կողմնակի հետաքրիր հայացքներ տեսավ, և երկաթի կարծրություն ստացած ձեռքերը վայր թողեց:

— Ափսո՞ս, — արտասանեց նա և նույն ծանրությամբ նստեց:

— Ի՞նչ ափսոս, — աղաղակեց նասիբյանը, անվախ կանգնած նրա առաջ և փայլեցնելով նրա վրա իր ահագին սկ աշբերը: — Կելքներդ ո՞ւմ վրա է գնում: Չլինի՞ կարծում եք կվախենամ ձեզ զանից: Տասն այդափ փոր ունեցեք, բայց ես թույլ չեմ տա, որին ինձ հետ կատակ անեք: Մասն այդափ փոր ունեցեք, բայց ես թույլ չեմ տա, որինձ հետ կատակ անեք: Գեղագին այդափ փոր ունեցեք, բայց ես թույլ չեմ տա, որինձ հետ կատակ անեք: Գեղագին այդափ փոր ունեցեք, բայց ես պահանջում եմ ձեզնից, որ մարդկանց հետ խոսեք մարդավարի:

— Դի գնա, հա՛, քոսոտ, — արտասանեց Վահանը ծաղրական արհամարհանքով:

Նասիբյանին այդ էր պակաս, արյունն աշբերն առած, ատամները սեղմած և ձեռքերը բուռնցք կաղմած՝ նա հարձակվեց Վահանի վրա, բայց Վահանն իր ձանրաշարժ մարմնից անսպասելի մի ճարպկությամբ բարձրացրեց իր ահագին ոտք և նստած տեղից այնպիսի մի հարված տվեց նրա նիհար փորին, որ նա ետու ետ գնաց և անսպատճառ պիտի փուլեր մեջքի վրա, եթե նույն բոպեին թագամյանը շրոներ նրան հնակից:

Սկանդալը կատարյալ էր: Շուրջն ահագին բազմություն էր հավաքվել: Նասիբյանը ձկան պես խլպտում էր թագամյանի ամուր ձեռքերի մեջ. բերնից սարսափելի հայնոյանքներ և փըրփուր թափելով, ուզում էր դուրս պրծնել և նորից հարձակվել Վահանի վրա:

— Թողեք, պարոն թագամյան, թողեք, — ասում էր Վահանը վստահ մարդու արհամարհական ժպիտով:

Թագամյանին և որիշ մի երկու ծանոթի հազիկ հաջողվեց հեռացնել կատաղած նասիբյանին: Սկանդալի սիրահար ամբոխն ես քրվեց գլխավորապես այն պատճառով, որ թատրոնի երրորդ դանգն էր արդեն հնչում: Վահանը նոր տեսավ, որ սեղանի մոտ շկան ոչ քույրը, ոչ Հեղինեն:

Քրոջը նա գտավ թատրոնում, իր տեղը նստած: Երկրորդ գործողությունն արդեն սկսված էր:

— Տեսա՞ր, ինչ օին հանեց այդ մայմոնը, — ասաց Վահանը՝ քրոջ կողքին նստելով: — Խո վվախեցա՞ր:

Թուիր ոչինչ շպատասխանեց:

Երկրորդ խաղամիջոցին Վահանին շրջապատել էին մի քանի ծանոթներ և հարցուփորձ էին անում նրան՝ նասիբյանի հետ ունեցած ընդհարման մասին: Նասիբյանն երկրորդ գործողության ժամանակ չէր մտել թատրոն: Նա նստած էր բուֆետի մոտ մի գերասանի հետ և զոռ էր տալիս գինուն այն մտադրությամբ, որ այդ գինը մի նոր և հսկայական սկանդալ սարքի Վահանի զլիին: Հեղինեն գիտեր այդ բանը և հայտնեց Վահանին, բայց Վահանը միայն ժպտաց և շարունակեց խոսուկցությունն իր ծանոթների հետ: Մանեն մենակ էր մնացել: Նա այնքան նեղացած էր եղբորից և առհասարակ այնքան վատ տրամադրության մեջ էր զգում իրեն, որ այլևս սիրու չուներ մնալու թատրոնում: Եվ երբ Հեղինեն նրան ևս հայտնէց նասիբյանի մտադրությունը, նա անմիջապես գտավ և զբար և խնդրեց, որ իսկուն տուն գտնան:

— Ինչի՞ց ես վախենում, — ասաց Վահանը: — Բունս մեջ կհավաքեմ և չերս կկոխեմ: Դու քեզ համար հանգիստ կաց:

Մանեն թողեց եղբորը և հեռացավ: Հանկարծ այնպիսի սրտի եկավ, որ ուզեց մենակ վերադառնալ տուն: Բայց այդ միջոցին նրա դեմն Եւակ թագամյանը:

— Ես ձեզ էի որոնում, և լավ է, որ մենակ եք, — ասաց նա: — Ի՞նչ եք կամենում, — հարցրեց Մանեն գրեթե թշնամաբար:

— Մի-երկու խոսք ունիմ ասելու: Խնդրում եմ, Մանե... անցնենք այսպես:

Թագամյանի հայացքն այն աստիճան լի էր կարոտով, ձայնը հնչում էր այն աստիճան աղերսագին, որ Մանեն բացություն չունեցավ մերժելու նրա խնդրքը:

Նրանք անցան ճեմելիքով և մտան պարտեզի խորքը: Այստեղ մարդ չկար և կիսախավար էր տիրում:

— Զեր եղբայրը շատ անտակտ մարդ է, — ասաց Թագամյանը: — Պիտի իմանա, թե ում հետ է կատակ անում: Ես ծանոթ եմ նրա բնավորությանը և շեմ նեղանում: Բայց նասիբյանը հիվանդ և տափարյուն մարդ է: Որ ասեմ, թե Վահանն այդ շգիտե, գիտե, բայց կարծես թե զոռով աշխատում է մարդկանց գրգռել իր գեմ: Օրիորդին էլ խո տեսաք ինչպես զիրավորեց, և ես զարմացա, որ նա համբերեց, թե չէ, խո գիտեք, նա էլ նասիբյանից ոչ պակաս

ընդունակ է սկանդալ սարքելու ես հավանում եմ ձեր եղբոր հումբը, բայց... համը տանում է: Իսկ նրա կրիտիկան... Այդ բանն ինձ շատ հետաքրքրեց: Այն ի՞նչ ակնարկներ էին, որ անում էր... Մի՞թե նրան հայտնի է...

— Ի՞նչը,— հանկարծ կանգ առնելով հարցրեց Մանեն գրգռված:

Բաղամյանը նայեց կիսախավարի մեջ նրա վառվող աշքերին և խորը հոգոց քաշեց:

— Այդպես, միշտ այդպես,— արտասանեց նա հուսահատութեն:— Միշտ լարված, միշտ գրգռված, միշտ անհաշտ... Եվ դուք կարծում եք, չհասկացա՞՛, թե ինչու զատկին, որ այցելության էի եկել ձեր տուն, սուստ հիվանդ ձեսցաք և դուրս չեկաք ինձ մոտ:

— Որ հասկացել եք, ուրեմն ավելորդ է այդ մասին խոսելը, — նկատեց Մանեն խստորեն:

Բաղամյանը աղերսալի անհամարձակությամբ առավ նրա ձեռշը:

— Ոչ, ավելորդ չէ, Մանե, ավելորդ չէ, — շշնչաց նա հուսահատական սիրով:— Դուք ամեն կերպ աշխատում եք խոսափել ինձնից, բայց ես տեսնում եմ, թե որքան թանկ է նստում այդ ձեզ: Այնտեղ լույսի մեջ ես լավ դիտեցի ձեր գեմքը, իսկ այժմ ահա շոշափում եմ ձեր ձեռքը: Այս ի՞նչ է, դուք ոսկոր եք դարձել Եվ ինչո՞ւ, Մանե, ինչո՞ւ...

Մանեն ձեռքը վճռաբար խլեց նրա ձեռքի միջից:

— Բաղամյան, զգուշացե՞ք: Այս երեկո ես այնպես գրգռված եմ, որ շեմ խնայիլ ոչ ձեզ, ոչ ինձ. աստված է վկա, շեմ խնայիլ եթե կշարունակեք խոսել այդ մասին...

Բաղամյանը տեսավ, որ Մանեն կատակ շի անում: Կարճ ժամանակ նա նայում էր Մանեին խոր տանջանքով, հետո զսպած կերպով հառաջեց և ասաց հարկից ստիպված մարդու հնազանդությամբ.

— Որ այդպես է, ավելի լավ է հեռանամ, որովհետե...

Նա շվերջացրեց, թեթև գլուխ տվեց և կամաց դարձավ ու հեռացավ:

Մանեն նայեց նրա հետեկից խիստ տատանման մեջ, և երբ Բաղամյանն արդեն բավական հեռացել էր՝ կանչեց.

— Սպասեցե՞ք:

Բաղամյանը կանգ առավ:

Մանեն հանգիստ քայլերով մոտեցավ նրան և միասին առաջ անցան:

— Խո չեք կարող ինձ բոլորովին մենակ թողնել այս հասարակության մեջ, — ասաց նա այս անգամ հանդարտ, բայց այնպիսի մի եղանակով, որից երկում էր, որ ուզում է շահած լինել թագամյանի կոտրած սիրտը:— Եղբայրս, տեսնում եք, ինձ մոռացել է: Եվ իսկապես նա է պատճառը, որ այս երեկո ես այսպես զլային եմ դարձել:

Բաղամյանը ոչինչ շասաց: Գլուխը կրծքին խոնարհած նա քայլում էր, իրեն փոքր-ինչ հեռու պահելով Մանեից և լուսն էր դժգոհ մարդու մտախոն հանգստությամբ:

Երբ մոտեցան պարտեզի պայծառ լուսավորված հրապարակին, Մանեն դարձավ:

— Ետ դառնանք, — ասաց:

Բաղամյանը նույն լուսնամբ հնազանդվեց նրան: Կարճ ժամանակ երկուսն էլ լուս քայլում էին կիսախավար ճեմելիքով: Փարթամ ծառերի արանքից, հրապարակի կողմից, լույսի երկար շերտեր էին ընկնում ճեմելիքը. այդ լուսավոր շերտերի մեջ, գետնի վրա, հանդարտ նստած էին տերեների ստվերները գեղանկար ցանցեր կազմած: Հրապարակում, պավիլիոնի մեջ նվազում էր զինվորական երաժշտակումքը, պղնձյա լայնաբերան շեփորը մերթ զռում, մերթ տնքում էր՝ կարծես ինչ-որ ծանր բեռան տակ տանջվելով, թեթև սրինգը կլկլացնում էր ուրախ ու զվարթ, իսկ փոքրիկ թլրուկը թափում էր իր մանրիկ կարկուտը, կարծես հավը կուտ էր ուտում:

— Իզուր եք կարծում, թե նա զիտե, — ասաց Մանեն, և Բաղամյանը հասկացավ, որ նա խոսում է եղբոր մասին:— Նա ոչինչ չգիտե: Եթե զիտենա էլ... Միթե վախենում եք:

Բաղամյանը զարմացած նայեց նրան:

— Վախենում... շատ տարօրինակ է, որ այդ հարցը դուք եք տալիս ինձ: Զեռքերս կապել եք և հարցնում՝ վախենո՞ւմ եմ: Շատ էլ շեմ վախենում, բայց ի՞նչ օգուտ դրանից, քանի որ այնպիսի դրության մեջ եք դրել ինձ, որ ուզեմ-շուզեմ պետք է զգույշ կենամ ամենից առաջ հենց ձե՛զ համար: Վստահեցրեք ինձ թե վճռական րոպեին ինձ հետ կլինիք և ոչ իմ դեմ, այն ժամանակ կտեսնեք վախենո՞ւմ եմ, թե ոչ:

Մանեն ոշինչ շասաց, թաղամյանի այդ պատճառաբանությունը նա միանգամայն արդարացի գտավ, բայց իրեն էլ մեղավոր էր համարում: Նա ուզում էր արդարացնել իրեն, բայց, ինչպես միշտ, երբ նրանց միջև խոսք էր բացվում իրենց հարաբերությունների մասին, չէր իմանում ինչպես արտահայտեր այն, ինչ որ կատարվում էր իր հոգու խորքում, ինչ որ մտածում էր ինքը շարունակ:

— Եթե մեր երկսից կա մեկը, որ վախենում է, այդ անշուշտ դուք եք, և ոչ թե ես,— ավելացրեց թաղամյանը սառն հանդիմանությամբ:

— Դուք ճիշտ եք ասում. ես վախենում եմ,— շշնչաց Մանեն:— Վախենում եմ... խղճիցս Օ՛, որ զիտենաք, թե որքա՞ն զարգացած է խիճ կոչված զզացումն իմ մեջ... Դուք պահանջում եք, որ ես թողնեմ ամուսնուս և... վախչեմ ձեզ հետ,— ավելացրեց նա նորից հուզվելով և կանց առավ:— Փախչում են միայն նաևնք, որոնք զգում են, որ հանցավոր են: Իսկ ես չեմ ուզում զգալ, որ հանցավոր եմ, հասկանո՞ւմ եք ինձ: Ես սոսկում եմ խրդիցս և հավատում, որ աստծո արդար զատաստան կա: Եթե դուք կարող եք լուցնել խղճիս ձայնը, լոեցրեք. Եթե կարող եք համոզնել ինձ, որ աստված շի պատճում հանցավորներին, համոզեցք, և ես կդամ ձեր հետեկից: Բայց դուք այդ շեք կարող, ուրովհետև դրա համար հարկավոր կլինի, որ ճղիք կուրծքս, սիրտս հանեք և կրակը նետեք, որ անզգա մոխիր դառնա. Հարկավոր կլինի, որ ջարդեք գանգս, ուղեղս հանեք և տրորեք ոտի տակ, որպեսզի շունենամ այն գիտակցությունը, թե այն օրից, երբ ձգեմ իմ ամուսնուն, անհուն տանջանքի դուռ չպիտի բանամ նրա և նրա հետ միասին ինձ համար: Դուք ինձ երջանկություն եք խոստանում, մինչդեռ ես համոզված եմ, որ այն օրից, երբ հեռանամ իմ օշախից, ամենաթշվար պիտի լինիմ աշխարհիս երեսին, և ոչ մի փրկություն այլ ևս չպիտի լինի ինձ համար:

Թաղամյանը նայում և լսում էր Մանեին պարզապես ապշած: Մանեն դեռևս երբեք այդպես կտրուկ ու կրքու շէր խոսել նրա հետ:

— Լավ, որ այդպես է,— ասաց նա,— էլ ինչո՞ւ եք ձեզ այդքան տանջում: Ակպեցեք ձեզ համար հանգիստ ձեր տանը, ձեր ամուսնու հետ, եթե համոզված եք, որ ինձ հետեւլով ամենաթշշամ պիտի լինիք, և ինձ էլ հրամայեցեք մի անդամ: առ միշտ,

որ այլիս շհամարձակվեմ վրդովել ձեր հանգստությունը: Դրանով էլ կվերչանա ամեն բան: Վայրենի խո չե՞մ, որ զոռով հափշտակեմ ձեզ: Ես էլ մարդ եմ, ես էլ ունիմ պատվասիրություն, դուք կապրեք ձեր տանը, ձեր ամուսնու հետ խաղաղ ու երջանիկ, ես էլ կընամ իմ ճանապարհով: Պրծավ գնաց: Թե չէ, ի՞նչ է նշանակում անդադար հուզվել, զայրանալ, բացատրովթյուններ տալ, արդարանալ... Ում առաջ եք արդարանում: Ձեր խղճի առաջ: Բայց դուք դեռևս չեք գործել այն, ինչ որ հանցանք եք համարում: Ի՞մ առաջ: Բայց ո՞վ եմ ես ձեզ համար:— պատահական մի մարդ, որի վերաբերմամբ ոչ մի պարտավորություն չունիք, որին երբ կամենաք՝ կարող եք հեռացնել ձեզնից:

Թաղամյանի շատ հանգիստ կերպով արտասանած այդ խոսքերն այնքան անակնկալ էին Մանեի համար, որ նա այս անգամ պարզապես բան չգտավ ասելու երկար ժամանակ նա լուս տանջանքով նայում էր թաղամյանի աշխերին, հետո հուսահատական մի հայացք ձգեց իր շուրջը և կամաց նստեց մոտը գտնված նըստարանի վրա:

Ճեմելիքի ծայրերից լսվեցին բարձրածայն ծիծաղի ծայիներ: Թաղամյանը նայեց այն կողմը և տեսավ ինչ-որ մութ ստվերներ, որոնք մոտենում էին արագորեն: Նա նստեց նույն նստարանի վրա, Մանեից այնքան հեռու, որ նրանց մեջտեղ կարող էր ուրիշ մարդ տեղավորվել: Ստվերները մոտեցան: Մանեի և թաղամյանի առաջով գրեթե վազելով անցան երկու աղջիկ թևանցուկ և կըշկըալով: Նրանց հետեւում էին երեք գիմնազիստ, որոնցից մեկը—խիստ բարձրահասակ ու լզար մի տղա—մի քիչ ետ էր մնացել ընկերներից և քայլում էր զինվորի լայն ու շափած քայլերով: Աղջիկներն ու զիմնազիստները կորան պարտեզի խորքում, մթության մեջ:

Թաղամյանը, ըստ երևույթին, գտած էր համարում այն միջոցը, որով, երկար մաքառելոց հետո, հույս ուներ այս անգամ ընկճելու իր սիրո մեջ համառող այդ զարմանալի և տարօրինակ կնոշը, ուստի շարունակեց նույն հանգիստ ու սառն հանդիմանական եղանակով:

— Չեմ հասկանում, այդ ի՞նչ սեր է, որ անդադար զատում է, անդադար երերվում, անդադար դողում, անդադար ինչ-որ հանցանքներ ու տանջանքներ է երևակայում: Ես միշտ այն համոզում եմ ունեցել, թե բնության մեջ սերն է ամենամեծ զորությունը,

որը ոչ մի խոշընդուռ չի ճանաշում և շեշտակի դիմում է ուղիղ իր նպատակին, հոգ չէ, թե ճանապարհին նույնիսկ զարդուիշուր կլինի Բայց երբ նայում եմ ձեզ, երբ լսում եմ ձեզ...

Բաղամյանը թոթվեց ուսերը տարակուսանքով, լոեց ու նայում էր դեպի պարտեզի հրապարակը, որտեղից ծառերի արանքով լուսի շերտեր էին թափանցում ճեմելիքը։ Լայնաբերան շեփորը տնքում էր դեռ և փոքրիկ թմբուկը դեռ շարունակում էր տեղալ իր մանրիկ կարկուտը։ Ճեմելիքում զգալի կերպով տող էր կանգնած և խոնավության հոտ էր փշում։

Բաղամյանը հանկարծ վեր կացավ և կանգնեց Մանեի առաջ։

— Երկսից մեկը, — ասաց նա գրգոված, այլևս անկարող լինելով զսպել իրեն։ — Դուք կամ շեք սիրում ինձ, կամ կարծում եք, թե սիրում եք և... պարզապես խաղում եք ինձ հետ, երկի կարծելով, թե ես այն հիմարներից եմ, որոնց քից բռնած՝ կանայք կարող են անել ամեն բան, ինչ որ կամենան...

— Բաղամյան... — շշնչաց Մանեն։

— Ո՛չ, խնդրում եմ, — ընդհատեց նրան Բաղամյանը իրստորեն։ — Ինձ խոսքեր հարկավոր չեն այլևս, ձեր վարմունքն արդեն ամեն ինչ պարզում է ինձ համար։ Այսքան ժամանակ շարուշարել, տանջել, մերթ հույս տալ, մերթ հուսահատեցնել և հետո վեր կենալ և խոսել խղճի մասին... Լսեցեք, Մանե, ինչ եմ ասում։ Ես չեմ կարող ստիպել ձեզ, որ սիրեք ինձ, բայց իրավունք ունիմ պահանջելու, որ գեթ փոքր-ինչ հարգեք ինձ և... շխաղաք ինձ հետ։

— Բաղամյան, — այս անգամ գրեթե ճշաց Մանեն, վեր թռավ, նորից նստեց, հետո շտապով հանեց թաշկինակը, սեղմեց աշքերին և խոլ կերպով հեկեկաց։

Այդ բանն այնքան անսպասելի էր Բաղամյանի համար, որ նա միանգամայն կարկամեց և շիմացավ ինչ անի։ Հետո արագորեն վախկոտ մի հայացք ձեց ճեմելիքի այս ու այն կողմը, նըստեց Մանեի կողքին և աշխատում էր ներողություն խնդրող անկապ խոսքերով հանգստացնել նրան։ Բայց իզուր. Մանեն հեծկլտում էր երեխայի պես, թաշկինակն աշքերին պինդ սեղմած։ Հետո հանկարծ դադարեց հեծկլտալուց, վեր թռավ և ասաց։

— Գտեք եղբորս, ուզում եմ տուն գնալ։

Այդ նոր անակնկալը նորից ապշեցրեց Բաղամյանին։ Նա հենց

այնպես էլ սառած մնաց նստած տեղը և կարողացավ միայն շշնչալ։

— Մանե...

Մանեն արագորեն սրբեց աշքերը, թաշկինակը պահեց, մազերը շտկեց և, առանց որևէ խոսք արտասանելու, դիմեց դեպի պարտեզի հրապարակը՝ վճռական քայլերով։

Բաղամյանը խելազարի պես վեր թռավ նստարանից և վագեց նրա հետեւից։

— Մանե... ի սեր աստծո... ի՞նչ եք ուզում անել։

— Ուզում եմ տուն գնալ։

— Ինչո՞ւ

— Որովհետև չեմ ուզում, որ ինձ վիրավորեք։

— Ես ձեզ վիրավորեմ... Մանե... սպասեցեք... Աղաչում եմ... Մանե... Մանե...

Եվ Բաղամյանը, բռնելով նրա ձեռքից, փորձեց պահել, բայց Մանեն ձեռքը վճռաբար խլեց նրա ձեռքերի միջից և արագաքայլ առաջ անցավ։

### VIII

Պարտեզի հրապարակում Վահանը որոնում էր քրոջը, երբ Մանեն դուրս եկավ մոլիք ճեմելիքից և մոտեցավ նրան։ Վահանը կանգ առաջ ակամա և զարմացած նայեց նրա հուզված դեմքին։

— Եկ գնանք, — շշնչաց Մանեն գրեթե շնչասպառ և, բռնելով եղբոր ձեռքից, կամեցավ առաջ տանել նրան իր հետ։

— Ո՞ւրի:

— Տուն։

— Դարձյալ տուն։ Ներկայացումը վերջանա, է՛տ

— Չեմ ուզում։ Եկ գնանք։

Վահանը պահեց քրոջը և փորձող հայացքով նայեց նրա տարօրինակորեն փայլող աշքերին։

— Սպասիր։ Ի՞նչ է պատահել։

— Ովինչ չի պատահել եմ, որ այս բռպեկս ինձ տուն տանեն։

— Զինի՞ թե նեղացել ես, որ քեզ մենակ թողեցի։

— Ա՞խ... Գնանք տուն, ասում եմ, — զղայնորեն արտասանեց, Մանեն և նորից փորձեց եղբորը շարժել տեղից։

— Աստվածդ սիրես, Մանե, սպասիր տեսնենք ինչ է պատահել Դու այնքան հուզված ես, որ... Կարծես լաց ես եղել... Զինի՞թե նասիրյանը...

— Ոչ, ո՛չ... Արի գնանք:

— Մանե, աղաշում եմ, ասա ճշմարիտը, եթե նա քեզ որևէ անախորժ բան է ասել իմ ջիգրը հանելու համար, այս բոպեիս կփշեմ նրա ոսկորները:

— Ախ, ի՞նչ անտանելի մարդ ես... Ես նասիրյանին չեմ ել տեսել:

— Բաս ո՞վ է նեղացրել քեզ! Ո՞ւմ հետ էիր:

— Բաղամյանի հետ.— ասաց Մանեն արդեն ճարահատյալ:

— Ա՛...

Մանեն սկզբում վախեցավ, հետո հանկարծ զսպեց իրեն և սուր-սուր նայեց եղբոր աշքերին:

— Ի՞նչ է նշանակում այդ ռա»-ն,— հարցրեց նա խուլ ձայնով:

— Ոչինչ... Այ, Բաղամյանը գալիս է:

— Ես գնում եմ տուն,— գրեթե աղաղակեց Մանեն և շտապով դիմեց դեպի պարտեզի մուտքը:

Բաղամյանը, հենց որ հեռվից տեսավ Մանեին ու Վահանին իրար հետ, ետ դարձավ և կորավ ճեմելիքի մթության մեջ:

Վահանն իր ծանր ու լայն բայլերով հետևեց քրոջը:

Մի հինգ րոպե հետո քույր ու եղբայր, կառք նստած, տուն էին գառնում: Մանեն կուշ էր եկել կառքի անկյունը և լեզուն փորն էր գցել: Խսկ Վահանը բավական զարմացած քրոջ տարօրինակ դրության վրա, վախենում էր բան հարցնել: Սակայն նա երկար շկարողացավ դիմանալ և հարցրեց:

— Նա քեզ վիրավորեց...

Քույրը ոչինչ շպատախանեց:

Վահանը խոստովանության նշան համարեց նրա լոռությունը և ասաց այս անգամ կես-խրատական, կես-անտարբեր, բայց լուրջ եղանակով:

— Ես գիտեմ, որ նա մաքուր մարդ չէ... և, առհասարակ, լավ կլինի, որ զգույշ կենաս նրանից:

Մանեն հանկարծ մի խիստ շարժում գործեց, ուզեց խոսել, բայց էլի բան շասաց և էլի կուշ եկավ կառքի անկյունը:

Տուն որ հասան, Վահանը շիշավ կառքից:

— Ինչո՞ւ չիս իջնում,— հարցրեց քույրը

— Ես պետք է վերադառնամ թատրոն: Բարի գիշեր՝ Մանեն վախեցած վրա ընկավ նրա ձեռքին:

— Վահան, ի՞նչ ես ուզում անել:

Վահանը սկզբում զարմացավ քրոջ այս բացականշության վրա, հետո, երբ կառքի լապտերի լույսի տակ տեսավ քրոջ վախեցած դեմքը, ծիծաղեց:

— Մի վախենար, քույրիկ զան, ես նրան ոչինչ չեմ անիլ, ուզում եմ վերադառնալ թատրոն միայն նրա՝ համար, որ... չեմ ուզում տված փողս կորչի:

— Ախ, դարձյալ փողը...

Վահանը նորից ծիծաղեց:

— Լսիր, Վահան, իշիր: Աղաշում եմ, իշիր: Բան ունեմ ասելու:

— Դե ասա էլի:

— Զէ՛, ներս արի:

Վահանն իշավ, կառքը ճանապարհ դրեց և քրոջ հետևից ներամտավ տուն:

Կապրիզներ եմ ասում, է՛,— ասաց նա սանդուղքով բարձրանալիս, որի ժամանակ աստիճանները ճոճում էին նրա ահապին ժանրոսթյան տակ:

Մի քանի րոպե հետո քույրը ու եղբայրը նստած էին հյուրանիշակում իրար գիմ:

Վահանը ճրագի լույսի տակ լավ նայեց քրոջ դեմքին:

— Երեսիդ գույն չկա, — նկատեց նա: — Սկեսուրդ որ տեսնի, սիրություն կմաքի:

— Սկեսուրս այժմ քնած է: Նա միշտ վաղ է քնում, — մեքենայաբար պատասխանեց Մանեն:

Կարճ ժամանակ լուսություն տիրեց: Վահանը հետաքրքրությամբ դիմում էր քրոջը և, արմունկով ճնկանը հնված, ծխում էր հանգիստ:

— Դե ասա տեսնենք ինչ ես ասում,— ասաց նա:

Մանեն կամ չէր վատահանում, կամ էլ չէր իմանում ինչպես սկսեր: Այժմ խիստ տարօրինակ անհանգստություն էր տիրել նրան: Նա չէր նայում եղբորը, նրա տենդային հայացքը թափառում էր մի առարկայից մյուսը: Նա զգում էր, որ դեմքը մերթայրում է սաստիկ, կարծես բոցերի ալիք է դիպշում հանկարծ:

մերթ սառում և ճակատին սառն քրտինքի կաթիլներ են գուրս ցայտում:

— Դու թադամյանի մասին ես ուզում խոսել, չէ,— հարցրեց Վահանը, երկար սպասելուց հետո:

— Այս,— շշնչաց Մանեն, աշխատելով այնպիսի դիրք տալ իրեն, որ Վահանը շտեսնի իր դեմքը: Հետո հանկարծ վեր կացավ, մոտեցավ լուսամուտներից մեկին և բաց արեց, կարծես նեղվելով օդի պակասությունից:

Վահանը, առանց դիրքը փոխելու, ծուռ հայացքով հետևեց նրան, հետո նայեց սիգարի ծայրին և, տեսնելով որ մոխիոց վայր ընկնելու վրա է, սիգարը զգուշորեն մոտեցրեց մոխրամանին, ճկույթով խփեց և մոխիրը վայր ընկավ մոխրամանի մեջ:

— Սիրո խոստովանություն,— հարցրեց նա:

Նրա ականջին դիպավ մի խուլ «այո»:

Զնայելով, որ Վահանը հենց սկզբից այդ պատասխանին էր սպասում, բայց և այնպիս կարծես թե ապշեց, որ այդ պատասխանը լսեց և ոչ թե ուրիշ պատասխան: Բայց այդ ապշությունը շատ շուտով անցավ: Նա սիգարը դրեց բերանը, վեր կացավ, ձեռքերով շոշափեց իր հաստ փորը և ժիլետի տակից վեր քաշեց անդրավարտիքը:

— Թե որ այդ էր ասելիքդ, իգուր ինձ ներս կանչեցիր,— ասաց նա առաջվա անտարեր ճայնով և աշքերը ման ածեց շորս կողմը:— Որտե՞ղ որի գիւմարկս:

Մանեն արագորեն ետ քաշվեց լուսամուտից և նայեց եղբորը միաժամանակ թե՛ վախեցած, թե՛ զարմացած:

Վահանը գտավ գլխարկը և ծածկեց:

— Բարի գիշեր:

Մանեն առաջ վագեց և հուսահատական անզորությամբ կախ ընկավ նրա ուսերից:

— Վահան... գու գնո՞ւմ ես:

— Բաս ի՞նչ անեմ:

— Եվ այդ եղբա՞յրս է ասում:

— Եղբայրդ ի՞նչ գործ ունի այստեղ: Այդ գու, այն էլ թադամյանը:

— Վահան... Վահան ջան... սպասիր... Մի՞թե չես ուզում ինձ այստեղ ևեթ սպանել...

— Որպեսզի հետո աքսո՞ր գնամ: Շատ շնորհակալ եմ:

Մանեն այս անգամ չոքեց եղբոր առաջ և պինդ գրկեց նրա ոտները:

— Վահան, Վահան,— աղաղակեց նա հուսահատական աղերսանքով,— ես մենակ եմ, ես անդունդն եմ գլորվում, ազատի՞ր ինձ... Մի՞թե եղբայրս չես, մի՞թե չես սիրում ինձ: Մի՞թի կուզես, որ քույրդ արատավորի իր ընտանիքը, թշվառացնի իր ամուսնուն, անառակ կնոջ անուն հանի: Մի՞թե առաջինը դու լայտի լինս ինձ հանդիմանողը, ինձ անարգողը, երեսիս թքողը: Մի՞թե իմ պատիվը քո պատիվը չէ, իմ անունը՝ քո անունը: Տեսնում ես, ես չոքած եմ քո առաջ, ես աղերսում եմ, պաշտում եմ քեզ իբրև իմ միակ ազատչին, ազատի՞ր ինձ, ազատի՞ր այս անտանելի տանջանքներից: Մինչև այժմ ես կարեվեր ուժ եմ գործ դրել մաքառելու և մաքառել եմ, որքան կարողացել եմ. բայց այժմ արդեն զզում եմ, որ ուժերս թուզանում են, և անդունդը, սոսկալի անդունդը պատրաստ է ինձ կլանելու... Վահան, լսո՞ւմ ես, ես կործանվելու վրա եմ... և կկործանվեմ, անպատճառ կկործանվեմ, եթե շփրկես ինձ... Ես ոչինչ չեմ ուզում քեզնից, միայն խորհուրդ տուր՝ ի՞նչ անեմ, ինչպե՞ս դուրս գամ այս անտանելի դրույթունից...

— Նախ վեր կաց. դա բանի նման չէ,— ասաց Վահանը:— Ոտներս այնպես հուպ ես տալիս, որ քիչ է մնում վայր զցես և տրաքոցս վեր հանես: Եվ այդ ի՞նչ անբնական լեզվով ես խոսում, բեմի վրա՞ ես, ինչ է: Իսկ խորհուրդս— ահավասիկ. դիմիր ամուսնուդ: Եթե թույլ կտա, որ սիրես Բաղամյանին— սիրիր, իսկ եթե ոչ, հանգիստ նստիր քեզ համար տանը և... «Դոն Կարլոսը» կարդա... չէ, ավելի լավ է այդպիսի գրեր ամեննեին շկարդաս: Վեր կաց:

Մանենի գլխին կարծես սառը ջուր մաղեցին: Նա կամաց թողեց եղբոր ոտները, որոնց մի բոպե առաջ սեղմում էր ձեռքերի մեջ խեղդվողի պես, վերին աստիճանի կոտրված, ամոթահար հայացքով նայեց ներքեմից վերև՝ եղբոր միշտ հեգնող, սակայն այս անգամ տարօրինակ սառն ու լուրջ աշքերին և վեր կացավ: Նրա դեմքն այժմ այնպես սառած, այնպես գունատ էր, որ կարծես մահամերձ հիվանդ լիներ: Նա այլքս ոչ մի խոսք շարտասանեց, երեսը զարձրեց եղբորից և հեռացավ այնպիսի բութ զգացման տակ, որ կարծես թե հանկարծ դագանակի ծանր մի հարված էին իշեցրել գլխին և շշմեցրել:

Վահանը նայեց Ժամացույցին: —489—

— Թարի գիշե՛ր. ես վերադառնում եմ թատրոն,— ասաց նա և դուրս գնաց:

Մանեն նստեց. Այնպիսի մի թմրություն էր զգում ամրող մարմնի մեջ, որ կարծես թե երկարատև ճանապարհորդություն էր կատարել սայլով, որից նոր իշել էր և ուժ չուներ ոտի վրա կանգնելու նա խոնարհվեց ծնկների վրա և երեսն առավ ձեռքերի մեջ Ամոթի նման ժանր ու սպանիլ մի զգացում վայրկյան առ վայրկյան արյունը նետում էր նրա զլուխը, շամփրում ուղեղը և բոցի պես այրում այտերը: Հանկարծ նա ցնցվեց և շտկվեց, նայեց դռանը:

Վահանը նորից ներս մտավ սիդարը բերանին, գլխարկը դրեց աթոռի վրա և նստեց իր առաջվա տեղը:

Մանեն նայեց նրան այնպիսի զարմացական-հարցական հայացքով, որ կարծես թե մի նոր մարդ է տեսնում իր առաջ. բոլորովին նոր ու անծանոթ մի մարդ, որ անսպասելի կերպով ներս մտավ և նստեց իր առաջ:

— Դու ախր ինձ իսկապես ոչինչ շասացիր,— ասաց Վահանը այնպիսի մի եղանակով, որից պարզ երևում էր, որ ուզում է մեղմել իր վարմունքի թողած ժանր տպավորությունը: — Թեպետ սիրո պատմությունը մեկ է, բայց և այնպես հետաքրքրական է իմանալ, թե ինչպես է եղել այդ, ինչպե՞ս են ձեր հարաբերությունները և այլն: Պատմիր տեսնենք:

— Ինչո՞ւ համար, — հարցրեց Մանեն:

— Որպեսզի իմանամ, թե ինչ խորհուրդ կարելի է տալ:

— Խորհուրդ տվիր վերջացավ, էլ ի՞նչ նոր խորհուրդ:

— Այն կատակ էր, իսկ այժմ ուզում եմ լուրջ խոսել:

— Իսկ ես այլևս չեմ ուզում խոսել և շատ զղջում եմ. որ սիրտս բաց արի քո առաջ:

— Ճիշտ:

— Այո:

— Ուրեմն գնա՞մ:

— Ես քեզ շխնդրեցի, որ ետ դառնաս:

Վահանը զարմացած նայեց քրոջը, հետո ծիծաղեց:

— Բավական խռովկան ես եղել, ա՛բ կավ, ի՞նչ ասացի, որ այդպես նեղացել ես:

— Ոչինչ, միայն խնդրում եմ ազատիր ինձ քո խորհուրդներից:

— Բաս մի քիչ առաջ ինքո էիր խնդրում, որ խորհուրդ տամ: Մանեն վեր կացավ տեղից:

— Ի սեր աստծո, վերադարձիր թատրոն,— ասաց նա, զդալով, որ զղայնությունը նորից բռնում է իրեն: Վահանը նորից ծիծաղեց և վեր կացավ:

— Այսինքն՝ ուզում ես ասել՝ կորիր գլխիցս: Շատ բարի Բայց ուրիշ անգամ որ գամ, էլ խո... թատրոն լե՞ս զրկիլ:

Մանեն նրեսը գարձրեց և ոչինչ շպատասխանեց: Զգում էր, որ զզկիլու շափ ատում է եղբոր շաղությունը, ձայնը, ծիծաղը, մանավանդ սիգարը, որ հոտում էր անտանելի կերպով: Վահանի հեռանալուց հետո, նա քաշվեց իր ննջարանը, նստեց անկողնակալի վրա և զգաց, որ ինչ-որ ծանր, անտանելի ծանր մի բան ճընշում է կուրծքը և հետզհետե բարձրանում է դեպի կոկորդը: Նա երեսը թաղեց մեջ և այլս չկարողացավ զսպել հուսախարության, դառնության, վիրավորանքի և ինքնանվաստացման հեկանքը: Ինքնանվաստացման զգացումը մանավանդ տանջում էր նրան խենթացնելու շափ, և սա զղաձգական դալարումների մեջ էծոտում էր իր ձեռքերը՝ այդ անտանելի տանջանքը մոռանալու համար:

## IX

«Երեկ գիշերվա դեպքից հետո ես ավելի, քան երբեք, տեսա, որ մեր դրությունն անտանելի լինելու շափ անորոշ է և այսպիս շարունակել այլս անկարելի է: Պետք է մի անգամ առ միշտ վերջ գնել այս դժոխիքն: Ուստի հատկապես խնդրում եմ հայտնեք ինձ, թե ո՞ր օրը, ո՞ր ժամին և ո՞րտեղ կարող եմ տեսնել ձեզ: Աղաչում եմ մի մերժեք. այդ տեսակցությունը թերեւ վերջինը լինի, որի ժամանակ վերջնականապես և անպատճառ կորոշվի թե իմ և ձեր վիճակը, մանավանդ իմը...»:

Այս նամակը գրելով Մանեն, Բաղամյանն այն զգուշությունն էր բանեցրել, որ ոչ գրել էր, թե ում է ուղղում նամակը և ոչ էլ իր ստորագրությունն էր գրել. ծառային էլ պատվիրել էր, որ նամակն անձամբ հանձնի Մանեի ձեռքը և սպասի պատասխանին:

Մանեն կարդաց, մի քիչ մտածեց և հետեւալ պատասխանը գրեց նամակի մյուս երեսին.

«Վաղը չէ, մյուս օրը, ժամը մեկին, մեր տանը: Սկեսուրս մեռելի վրա կլինի, ես էլ կգնամ, բայց այդ ժամին կվերադառնամ և կսպասեմ»:

Նշանակված օրը և նշանակված ժամին թաղամյան եկավ։ Դուռը բաց արեց ինքը Մանեն։ Նա շպատասխանեց թաղամյանի բարեկին և լուս ետ քաշվեց, որ մտնի Այնուհետև դուռը փակեց և նույն լուսիթյամբ առաջնորդեց նրան ընդունարան։

Թաղամյանը նստեց և նայում էր Մանեին ապշած։ Վերին աստիճանի տարօրինակ էր թվում նրան Մանեի սառնության շափհանդատ ընդունելությունը և մանավանդ խորհրդավոր լուսիթյունը։ Մանեն վարվում էր այնպես, որ կարծես թե թաղամյանը չէ՞ր որ խնդրել էր այդ տեսակցությունն իր որոշումը հայտնելու նրան, այլ Մանեն էր պահանջել նրանից, որ գա լսելու այն, ինչ որ ինքը կասի նրան։ Այդ պատճառով թաղամյանը նստած էր լուս և սպասում էր, թե ինչ էր ասելու նա։

Մանեն նստեց թաղամյանի դիմաց և առաջին անգամ իր հանգիստ հայցը նայեց նրան։ Նա սե էր հագած, և այդ սե հագուստի մեջ խիստ որոշակի աշխի էին ընկնում նրա սպիտակ ձեռքերն իրենց երկայն մատներով ու վարդագույն եղունգներով և ավելի ևս սպիտակ ու լզար վիզը, որի վրա ակոսում էին կապույտ երակներ։

— Ես ձեր նամակին չեի պատասխանիլ, — խոսեց նա վերջապես, — եթե ստորագծված բառերը շլինեին և եթե նամակն ինքն այնքան վճռական տոն չունենար, Բացի դրանից, ես ինքս ուզում էի մի անգամ առ միշտ վերջ տալ այս դրությանը։ Խսկապես որ անկարելի է այլևս շարունակել այսպես։ Ես այս բանը միշտ ասել եմ ձեզ և այժմ ուրախ եմ, որ դուք եւս նույն համոզմանն եք եկել վերջապես։ Պետք է վերջ տալ այս դրությանը, պետք է անպատճառ։ Մենք մենակ ենք. ոչ ոք չի խանդարիլ մեղ։ Հույս ունիմ, առաջիկ պես չենք գրգովիլ, չենք կռվիլ, չենք վիրավորիլ իրար։ Կիսունք հանգիստ և կիսուհրդակցենք միասին, թե ո՞րն է ամենալավ միշոցը, որով կարող կլինինք ճնշել այս հանցավոր կիրքը և վերստանալ մեր նախկին անդորրությունը։ Չէ՞ որ մենք մարդ ենք, խոհական արարած, և միայն բնազզը չէ, որ զեկավարում է մեր զգացումները։ Մենք ամեն բան կարող ենք անել, եթե միայն կամենանք և հաստատ վճռենք։ Այս բանն ասում եմ ոչ այնքան իմ, որքան ձեզ համար։ Ես պարզուեն պիտի իմ անգիստի խոսում եմ անգամ մասին։

Ճեր նամակի տոնը վախեցրեց ինձ, որովհետև ես ձեզ... սիրում եմ և ցանկանում, որ ապրեք և երջանիկ լինեք։

Թաղամյանը, որ մինչեւ այժմ լսում էր Մանեին պարզապես ապշած, նրա վերջին խոսքերի վրա շկարողացավ զապել իր զառն ժպիտը։

— Աղքատը ձեռքը դեմ է անում հարուստին։ «Աղա, ողործություն արա», Հարուստը պատասխանում է. «Ես կարեկցում եմ քո վիճակին և ցանկանում, որ փորդ կուշտ լինի։ Ու փոխանակ հաց տալու, որ քաղցից շմեռնի, խրատ է տալիս, թե՛ եթե կահանա և հաստատ վճռի, կարող է առանց հաց ուտելու էլ ապրել։

— Ի՞նչ եք ուզում դրանով ասել, — Հարցրեց Մանեն։

— Այն եմ ուզում ասել, որ դուք շարունակում եք ինձ կերպել բառերով։ Ինչի՞ս է պետք, որ ասում եք, թե սիրում եք ինձ։ Ինչի՞ս է պետք առվակի կարկաչը, երբ ես շղթայված եմ այդ առվակի ափին և շեմ կարող ծարավս հագեցնել։ Ավելի լավ չէ, որ խլանամ և լսեմ այդ ձայնը, այդ դատարկ ձայնը, որ ընդունակ է յիշյան ավելի ևս գրգռելու ծարավս, ավելի ևս սաստկացնելու տանջանքը։

— Այս, ինչո՞ւ դուք ինձ չեք հասկանում, Թաղամյան, — ասաց Մանեն մեղմ հանդիմանությամբ։

Թաղամյանն այլևս շկարողացավ զապել իրեն և վեր թռավ տեղից։

— Որովհետև ձեղ անկարելի է հասկանալ, — բացագնչեց նա հովզած։ — Ես ձեզ ոչ թե միայն չեմ հասկանում, այլև... խնդրում եմ չնեղանաք երեկով պես... այլև չեմ հավատում ձեր անկեղծությանը, ինչպես որ չէր կարող հավատալ իմ ասած պատճն իրեն կարեկցություն։ Հայտնող հարստի անկեղծությանը։ Դուք ինձ համար երջանկություն եք ցանկանում և շատ լավ էլ գիտեք, որ իմ երջանկությունը կախված է միմիայն ձեզնից, մինչդեռ այդ էլ տեսնում եք ձեր աշքերով։ Բացի տանջանքից ուրիշ բան չեք տալիս ինձ։

Մանեն նայեց նրան առաջվա պես հանգիստ, բայց այս անդամ խիստ տիրալի հայցքով։

— Ես ձեզ չեմ կարող ստիպել, որ հավատաք իմ անկեղծությանը, Թաղամյան, բայց որ չեք հասկանում ինձ, այդ մի փոքր զարմացնում է ինձ, որովհետև նոր չէ, որ ճանաշում եք ինձ, և նոր չէ, որ խոսում ենք այս մասին։ Այս, ես տեսնում եմ, շատ

լավ եմ տեսնում, որ դուք տանջվում եք. բայց մի՞թե շգիտեք, որ կան տանջանքներ, որոնք ավելի բարձր են, ավելի ազնիվ ու քաղցրը, բան ա՛յն, ինչ որ դուք երջանկություն եք անվանում:

— Ո՛չ, այդպիսի բան ես շգիտեմ և շեմ էլ ուզում իմաստ,— նկատեց Բաղամյանը զղայնությամբ: — Տանջանքը տանջանք է, որիշ անուն չունի: Եվ ևս միստիկ շեմ, որ տանջանքի մեջ քաղցրություն զգամ, այլապես կզնավոր կդառնայի: Ես մարդ եմ, արյունս գորտի արյուն չեմ ես դրական երջանկություն եմ պահանջում: Չեք ուզում տալ, այդպես էլ ասեք ուղղակի և զարգ: Այլապես կրկնում եմ, ես ձեզ չեմ հասկանում և երբեք էլ շեմ կարող հասկանալ: Բոնությունը զարշելի է ամեն բանում, բայց որ մարդ բոնություն գործի ինքն իր վրա, իր սեփական զդացումների վրա— այդ, ներկցեք, եթե խելագարություն չեմ, ապա այնպիսի մի բան է, որի անունը ես շգիտեմ: Հա՛, իհարկե, մարդ եթե կամենա և վճռի, կարող է ամեն բան անել, նույնիսկ թռել երկինք և խել հրեշտակների առաքինությունը: Դուք այդ արել եք և ստիպում եք, որ ես էլ նույնն անեմ: Ո՛չ, ես շեմ կարող անել այդպիսի բան, որովհետեւ անկարելի է անել ա՛յն, ինչ որ անկարելի է: Փախչել այն բանից, որը քո մեջն է, որ շրջում է բոլոր երակներից մեջ արյանդ յուրաքանչյուր բջիջի հետ— այդ բանը կարելի է միայն նրանով, որ վերցնես և գանգդ զարդես պատի վրա կամ ածելիով կտրես կոկորդդ: Ահա՝ այն միակ միջոցը, որը գտնելու համար ուզում եք ինձ հետ խորհրդակցել: Խորհրդակցել.... Միամտություն է այդ, թե ծիծաղ, եթե միամտություն է, դուք միամիտ շեք, եթե ծալը, դուք կին եք և շեք կարող այդքան անխիղճ լինել: Սերը հրտեհ է դառել, լափում է ամբողջ էությունս, և ես քիչ է մնում, որ գծվեմ հուսահատությունից, իսկ դուք ինձ առաջարկում եք, որ նստեմ և հանգիստ խորհրդակցեմ ձեզ հետ, թե ինչպես անենք, որ... Օ՛հ, ո՛չ, ո՛չ, բավակա՞ն է: Ես խսկապես որ կգծվեմ, կգծվեմ, կգծվեմ...

Բաղամյանը, շափաղանց հուզված, նորից նստեց և գլուխն առավ ձեռքերի մեջ: Ճակատն այրվում էր, և ձեռքերի ափերի վրա զգում էր քունքերի երակների ուժգին զարկը:

Մանեն նստած էր արտաքուստ բոլորովին հանգիստ և, ձեռքերը կրծքին ծալած, վշտահար կարեկցությամբ նայում էր նրա երկայն գանգուր մազերին:

— Բաղամյան, մի՛ դատապարտեք ինձ,— շշնջաց նա կա-

մաց, հանգստացնող ձայնով: — Ինձնից մի՛ պահանջեք այն, ինչ որ շեմ կարող անել, ինչ որ շահետք է անեմ: Մի բոպե մոռացեք այդ կիրքը, մտեք իմ գրությունը...

— Ո՛չ, ես ո՛չ մի գրություն շեմ ուզում ճանաչել,— բացանչեց Բաղամյանը նոր հուզումով և նորից վեր թուավ տեղից: — Բավական է, որքան տանջվեցի, այլևս ուժ շկա դիմանալու Այս տրագի-կոմեդիան պետք է վերջացնենք:

Նա հաստատուն քայլերով մոտեցավ Մանեին, կանգ առավ նրա առաջ և նայեց նրա աշքերին վերին աստիճանի վճռական հայացքով:

— Լսեցեք, Մանե: Հարցը ես տալիս եմ կտրուկ կերպով և խնդրում եմ, որ պատասխանն էլ կտրական լինի: Թողնո՞ւմ էք ձեր ամուսնուն և գալի՞ս եք ինձ հետ, թե ոչ:

Մանեն նախ ծանր-ծանր շարժեց գլուխը բացասաբար, հետո ուժեղ շեշտով պատասխանեց.

— Ո՛չ:

— Ո՛չ ասում եք:

— Ո՛չ:

Բաղամյանը կարճ ժամանակ լոեց, շարունակելով անթարթ նայել Մանեի աշքերին: Երկում էր, որ նա ահագին շանք է զործ դնում հանգիստ մնալու:

— Լա՛վ մտածեցեք, Մանե: Երրորդ անգամն եմ հարցնում: Ո՛չ:

Մանեն հանկարծ վեր կացավ տեղից:

— Դա ի՞նչ ինկվիպիցի է, շեմ հասկանում,— արտասանեց նա, շկարողանալով զսպել իր զայրույթը: — Ես, կարծեմ, երեխս շեմ և հասկանում եմ, թե ինչ եմ պատասխանում:

Բաղամյանը գունատվեց և, կարծես միանգամից զրկվեց խոսելու ընդունակությունից: Նրանք կանգնած էին իրար դեմ առ դեմ և նայում էին իրար աշքերի, Մանեն՝ անսասան հաստատակամությամբ և վիրավորված, Բաղամյանը՝ զարմացած, շփոթված և վախեցած: Այնուհետև Բաղամյանը կամաց դարձավ, անհաստատ քայլերով հեռացավ, որ զլամարկն առնի ու գնա, բայց զգաց, որ այդքան քաջություն չունի: Ծնկները ծալվում էին, մի բան խեղդում էր նրա բուկը, և նա անդիմադրելի մի ցանկություն էր զգում վայր ընկնելու ուղղակի հատակի վրա և լաց լինելու երեխայի պես: Նա նստեց, գլուխը նորից առավ ձեռքերի մեջ և զգաց,

որ ճակատն այս անգամ սառն է սառցի պես և քունքերի վլու երակներն այլևս չեն զարկում կարծես: «Այս ի՞նչ է, մեռնո՞ւմ եմ», — մտածեց նա, ձիգ տալով մազերը, և զարմացավ, որ ցավը չղգաց: Նա ինքն իրեն ցնցեց, նստեց ուղիղ, և նրա հայացքն ընկապ Մասեի վրա:

Մանեն կանգնած էր բաց լուսամուտի առաջ, բարձր ու բարեկազմ, և նայում էր դեպի դուրս։ Դրսից ներս թափանցող արևի շողերի տակ փայլում և կարծես մանրիկ կայձեր էր ցայտեցնում նրա սև ատլասի հագուստն ուսերի վրա, իսկ ականջի օղի մեջ վառվում, հուրճատում էր խոշոր աղամանդը ծիածանի բոլոր երանգներով։

«ՏԵՇ աստված, որքա՞ն գեղեցիկ է, որքա՞ն սիրում եմ», — ժառածեց թաղամյանը, աշբերը չկարողանալով հեռացնել նրանից: Նրան թվում էր, թե Մանեն առաջ երբեք այդքան գեղեցիկ չի եղել, և ինքն երբեք այդպես կաթողին չի սիրել այդ կնոջը: Իր վճռական հարցի վճռական պատասխանը ստացալուց հետո այնպիսի մի վհատություն էր տիրել նրան, որ կարծես հանկարծ կորցրել էր թանկագին, շափազանց թանկագին մի բան, որի ահազին արժեքը նոր էր հասկանում, և կորուստն անդառնալի էր: Մանեի մոտ գալիս նա կշռադատել էր իր անելիքն ու ասելիքը. կանխատեսել էր Մանեից ստանալիք պատասխանը, հենց այն պատասխանը, ինչ որ լսեց. բայց ամենեկին չէր կարծել, թե ինքն այդ աստիճան թուլամորթ կարող էր լինել: Նա նստած էր անզոր և հուսահատ, շփում էր ճակատը և, տանջվելով, աշխատում էր հիշել մի բան, որ Մանեի մոտ գալիս վճռել էր գործադրել իրոք վերջին միջոց այդ զարմանալի, այդ անհասկանալի կնոջ համառությունը կոտրելու համար: Հանկարծ հիշեց, ձեռքն արագորեն տարավ ծոցի գրպանը, շոշափեց այնտեղ ինչ-որ մի թուղթ և վեր թռավ տեղից:

Մանեն կամաց դարձավ և նայեց նրան զարմացած:

— ८०५ नव:

— Զեր ամուսինը:

Մանեն մեղքով հնավեց պատին, աշքերը փակեց և պատաս-  
էաբեց շատ հանրեստ ձախով:

— Ես ոչ մի զոհաբերություն չեմ անում։ Ես միայն իմ պարտք եմ կատարում։

— Մանե, աղաշում եմ, մի՛ խոսեք այդպես... Ես գծվում եմ... Ի՞նչ պարտք, ո՞վ է պարտավորեցրել ձեզ: Եկեղեցի՞ն, քահանա՞ն, խա՞յլ, ավետարա՞նը...

— Այս ոչ իմ խիղճը

— Դուք ճանալո՞ւմ եք ձեր ամուսնում, — Հանկարծ հարց-  
բեց նա:

## Մանեն բաց արեց

— Դա ի՞նչ խոսք է։  
— Իսկ ես ձեզ կասեմ, որ շեք ճանաշում... այո՛, շեք ճանա-  
մ... և, եթե ճանաշեիք, ինքներդ կփախչեիք նրանից, իբրև ան-  
ռոլական և հրեշ մի մարդուց...

Մանեն անգիտակցաբար առաջ նետվեց և հանկարծ կանգ առավ:

— Բաղամյան, ես համոզված էի, որ դուք օրինակոր սարկեք. — Հանգաց նա գունատվելով:

— եկ դարձյալ համոզված եղեք, որ ես օրինավոր մարդ եմ եղել, որովհետև մինչև այժմ չեմ հայտնել ձեզ այն, ինչ որ վաղուց գիտեի ձեր ամուսնու մասին։ Չեմ հայտնել, որովհետև չեմ կամեցել ձեզ վրա ազդել որևէ կողմնակի միջոցով, որովհետև համոզված եմ եղել, թե սերն ինքն արդեն բավարար հիմունք և դրդիչ պատճառ պիտի լինի ձեզ համար՝ ձեր անելիքը որոշելու։ Թայց այժմ դուք ինքներդ եք ստիպում ինձ դիմելու ծայրացեղության։ Եվ ես ասում եմ ձեզ, որ ձեր ամուսինն անբարոյական և հրեշ մարդ է... ասում եմ ո՛չ թե նրա համար, որ դրանով ստիպեմ ձեզ թողնելու նրան և գալու ինձ հետ— ո՛չ, ես արդեն հույսս կտրել եմ ձեզնից— և ոչ թե փոքրոգի վրեժինդրությունից— ես շափազանց հպարտ եմ այդ աստիճան ստորանալու հանից—

մար,— այլ ասուն եմ նրա՝ համար, որ բաց անեմ ձեր աշքերը, ցույց տամ ձեզ, թի ո՞ւմ համար եք կատարում ձեր ամուսնական պարտքը ձեր խղճի առաջ և որքան խարված եք եղել դուք...

Մանեն լսում էր Բաղամյանի խոսքերի տարափը՝ ավելի ու ավելի ապշելով։ Մինչև այժմ Բաղամյանի բերանից ոչ մի վատ խոսք չէր լսել իր ամուսնու մասին, և Բաղամյանը միշտ խոսափել էր վերցինիս մասին խոսելուց, իսկ այժմ...»

— Թաղամյան,— ասաց նա հանգիստ և խիստ լրջորեն,— դուք ինձ շատ ծանր դրության մեջ եք զնում։ Մի՞թե չգիտեք, որ ձեր այդ խոսքերից հետո ես ապացուց կարող եմ պահանջել ձեզ-նից։

— Եվ ես կտամ ձեզ այդ ապացուցքը:

Մանեն ցնցվեց և մի վայրկյան մնաց կարկամած։ Հետո հանկարծ շտկվեց և խատորեն մեկնեց ձեռքը։

— *Syke's* — Հրամայեց նա:

Բաղամյանն իսկույն ծոցից հանեց մի նամակ, բաց արձգ և տվյալներ նրան:

— Կարդացեք այստեղից:

### Մանեն սկսեց կարդալ

«... Սրանից մի քանի տարի առաջ մեր գյուղացիները զայտվելու էին տվել գյուղիս հողերի սահմաններում գտնված երկաթի հանգերի համար: Երկար շարչարվելուց և աշագին փողեր ժամանելուց հետո մեկ էլ տեսան, որ իրենց գտած հանգերին տեր է կանգնել ինժեներ ոմն Գ. Ս. (խմբագրության համար—Գրիգոր Սանթրոսյան): Թե որտեղից, ինչպես և ինչ իրավունքով էր այդ հարուստ ինժեները տեր դառնել գյուղական մի հասարակության պատկանող բնական հարստությանը— այդ բանը հայտնի է միայն իր համալսարանական խղճին և մեկ էլ իր տողած գրապանին... Էլ ինդրագրեր, էլ բողոքագրեր, էլ դատարան, էլ նոր ծախսեր— ոչի՞նչ չօգնեց, և խղճուկ գյուղացիները վերցի ի վերջո ստիպված էին իրենց եփած փլազի համբ շառած՝ ետ նստել և, ինչպես ասում են, բերներից ծլուլը թափելով դիտել, թե ինչպես ուրիշն անուշ է անում այդ համեղ փլազը: Ի՞նչ անուն կտաք դիպլոմավոր մեր պարոնի այս վարմութիւն:

Բայց այլ առակ լուսարուք։ Այս բանից արդեն փլավի հոտ չի փշում, այլ շատ գարշելի մի հոտ։

Մեր ասած ինժեների մոտ աղախնի պաշտռն էր կատարում այլի մի կին իր 13 տարեկան աղջկա հետ։ Այս օրերս այդ աղջկան գտան հանգեցրից երեք վերստ հեռավորության վրա մի ձորակի մեջ խեղդամահ։ Բժշկական քննությունը բացահայտեց, որ խեղճ աղջիկը, չարաշար մահից առաջ, բռնաբարված է եղել... Թեև դժվար չէր լինիլ իմանալ (թերեւ և իմացան), թե ով է եղել այս քստմնելի ոճրագործության հեղինակը, բայց ամենակարող մամոնան աւս գործում ևս տեսավ իր բանը, և զործը քննեց...»

Բաղամյանը նայում էր նրա աշադին թերթերունքներին, սերբ դունատ շրթունքներին, լսում էր, և նամակի խոսքերը, չնայելով որ անգիր գիտեր, Մանեի թերանից հնչում էին նրա ականջին այնքան անհավատալի, այնքան ահուի կերպով, որ սկզբում զարմացավ, թե ինչպես իրեն թույլ տվեց այդպիսի մի նամակ հանձնելու նրան, հետո այնքան սարսափեց, որ քիչ մնաց նամակը խլեր նրա ձեռքից, պատառ-պատառ աներ և ասեր ուղղակի, որ ինքն ևս չի հավատում այդ բանին, որ դա սուտ է, անխիզն զրպարտություն է հերյուրված է անպատճառ անձնական թշնամությունից: Բայց նա կանգնած էր անշարժ և սարսափահար, իբրև մի մարդ, որ ծայրահեղ կատաղության բովածին անգիտակցաբար հարված է իշեցնում հակառակորդի գլխին և, հանկարծ ուշքի գալով, կաշկանդվում, կարկամում է, երբ տեսնում է, որ հարվածը մահացու է եղել:

Բազամյանը կանգնած էր այդ դրության մեջ, կաշկանդված և կարկամած, երբ Մանեն վերջացրեց ընթերցումը, նամակը վերադարձեց, առանց նրան նայելու, և լուս հեռացավ: Մի վեմ հանգստովիյուն էր նկատվում նրա բոլոր շարժումների մեջ, և այդ բովեին շափազանց գեղեցիկ էր նա իր բարեկազմ հասակով, իր գունատ գեմքով, իր խոշոր աչքերի վերին աստիճանի լուրջ ու կենտրոնացած հայցքով: Բաղամյանը դիտում էր նրան զադտնի երկյուղով: Նրան թվում էր, թե ահա, որտեղ որ է, ինչ-որ արտաքո կարգի մի բան պիտի պայթի իր գլխին, սարսափելի մի բան, որից նուա ճակատը մերթ սառում, մերթ տաքանում էր առաջուց:

— Ո՞ւզէ տվել ձեզ այդ նամակը, — հարցրեց Մանեն տարօդի-  
490

նակ սառած ձայնով, որի մեջ, սակայն, ինչ-որ սպառնալից մի շետ կար:

— Այս նամակն ուղարկված է, ինչպես ինքներդ տեսաք, մեր նմբագրությանը լրագրի մեջ տպելու համար:

— Հետո՞ւ Տպեցի՞ք:

— Ոչ:

— Ինչո՞ւ

— Կարծեմ, ինքներդ հասկանալիս պիտի լինեք, թե ինչու

— Ոչ, ես չեմ հասկանում: Այդպիսի հրեշտակոր մի բան հրապարակ չհանել, համայնական մի սեփականություն հափշտակողի, մատաղ մի աղջկա լկողի և ապա գազանաբար սպանողի՝ հասարակաց դատաստանին չհանձնել— այդ ես չեմ կարող հասկանալ, որովհետև մամուլի մասին ես միշտ լավ գազափար եմ ունեցել և մամուլն եմ համարել միակ պաշտպանը ճշմարտության և հալածվածների:

— Մամուլը մեղք չունի այստեղ: Եթե այս բանում մեկը կամեղագոր, այդ ես եմ, որովհետև ես խնդրեցի, որ նամակը չտպվի:

— Դո՞ւք... Ինչո՞ւ:

— Մանե, ինչո՞ւ դուք տալիս եք ինձ այդ հարցը, — նկատեց Բաղամյանը մեղմ կշտամբանքով:

— Ոչ, ինդրում եմ բացատրեցեք. ինչո՞ւ դուք խնդրել եք, որ այդ նամակը չտպվի:

— Տեր իմ աստված, մի՞թե այդ բանը բացատրելու կարիք կա:

— Երեքի կա, որ պահանջում եմ,— վրա բերեց Մանեն անողոք խստությամբ:

Բաղամյանն աղերսալի հայացքով մոտեցավ նրան և ուզում էր առնել նրա ձեռքերը, բայց Մանեն խստորեն ետ ու ետ քաշվեց:

— Մանե, նամակը թույլ շտվի տպել ձեր պատվի և հանգստության համար,— ասաց նա գրեթե լացագին:

— Մի՞թե,— բացագանձեց Մանեն, և ինչ-որ իիստ կծու մի ժպիտ ծամածոեց նրա գեղեցիկ դեմքը:

— Երդվում եմ արևովս, Մանե, միմիայն ձեր պատվի և հանգըտության համար, որովհետև չէ՞ որ դուք նրա կինն եք, և ձեր անունն այսպես թե այնպես կապված է նրա անվան հետ: Մի ուրիշ պատճառ էլ կար. ես նրան իմ ախոյանն էի նկատում և չէի կամենալ նրա արարքների մերկացումը տեսնել այն լրագրի մազ,

որի ղեկավարներից մեկն էլ ես եմ: Դա շատ տգեղ վարմունք կլիներ իմ կողմից:

— Օ՛, անշուշտ,— բացագանձեց Մանեն, և հանկարծ ծիծառվի նման մի բան դուրս թռավ նրա բերանից.— դա այնքան տգեղ վարմունք կլիներ ձեր կողմից, որ մինչև անգամ կարելի էր կարծել, թե նամակը... դուք եք հորինել:

Բաղամյանը մեկ առաջ ընկապ և հանկարծ կանգ առավ ապշած:

— Ինչ ասացի՞ք,— հարցրեց նա:

— Ասացի այն, ինչ որ լսեցիք,— ասաց Մանեն սպանիչ հանգստությամբ:

— Ուրեմն...

— Ուրեմն ի՞նչ: Շատ պարզ է. այդ նամակը մի ֆանտազիա է, որի հեղինակը դուք եք:

— Մանե՛,— գրեթե ճշաց Բաղամյանը կարծես ֆիզիկական մի սուր ցավից և այլևս ոչ մի խոսք չկարողացավ արտասանել: Մանեի մեղադրանքը շշմեցրեց նրան կայծակի հարվածի պես, որովհետև ամեն բան կանխատեսել էր, բայց այդպիսի մի մեղադրանք— ամենին: Նա չէր իմանում ինչ է պատահում իրեն, միայն պարզորդ զգում էր, որ ինչ-որ մի բան, բողոքի զգացմունքի պես զորեց մի բան, արագաբար բարձրանում, ուուզում է իր կըրծքի մեջ և ուզում է պայթեցնել իր ամբողջ ներքինը հրախի լավացի պես: Եվ նախքան նա ուշքի կգար աղատություն տալու համար իր բողոքի զգացմանը, ուրիշ, առաջվանից ավելի անակնկալ ու սոսկալի մի հարված կարկամեցրեց նրան միանգամայն:

— Բավական է: Հեռացեք: Ես ձեզ խղճում եմ...

Բաղամյանն այլևս ոչինչ չլսեց. միայն, կարծես երազի մեջ, տեսալ Մանեի հուզումնալից աշքերը, ցնցվող շրթումքները, հետո նրա ստվերը, որ արագորեն չբացավ դռների մեջ...

## X

Բաղամյանը նոր էր հեռացել, որ Վահանը մտավ քրոջ մոտ սիգարը բերանին:

Խիստ հուզված, Մանեն անցուղարձ էր անում սենյակում արագ քայլերով, և մի զիդ նրա վզի վրա, մերթ ընդ մերթ ցընցվելով, ներքեն էր քաշում նրա ծնոտը:

Վահանը կարճ ժամանակ նայեց նրան զարմացած, հետո անփոյթ ու ծանրորեն նստեց ախոռի վրա:

— Այս րոպեին տեսա բարեկամիդ, — ասաց նա: — Հեռվից որ տեսավ ինձ, ճանապարհը ծոեց, կարծես պիտի բռնեի յախից և հարցնեի՝ ո՞րտեղից ես գալիս:

Նա բերնից բաց թողեց ծուխն ուսի վրա և ծուռ նայեց քրոջը:

— Էկի վիրավորե՞ց, — հարցրեց կամաց:

Մանեն հանկարծ դադարեց քայլելուց և արագորեն դարձավ եղբոր կողմը: Նրա աշքերը կարծես կայծեր էին ցայտեցնում:

— Ինչո՞ւ ես եկել, — հարցրեց նա այնքան խստորեն, որ այդ խոսքերը կարծես դուրս խլեց սրտի խորքից:

Վահանը ետ ընկավ աթոռի մեջքին, ծոնկը ծնկան վրա դրեց և ժպտաց:

— Որովհետև անցած գիշեր պատվիրեցիր, որ այլևս չգամ:

Մանեի ծնոտի տակ ջիղն սկսեց ցնցվել ավելի ուժգին: Նա նայում էր եղբոր ժպտուն ճարպալի աշքերին, և երկար ժամանակ հօգեկան խորին վրդովմանքը թույլ շէր տալիս նրան խոսելու:

— Վահան, — վերջապես արտասանեց նա հազիվհազ, — որ իմանառ որքա՞ն ատում եմ քեզ այս րոպեիս...

— Վնաւ չունի, քուրքիկ զան, հետո էլի կսիրես, — նկատեց Վահանը ծիծաղելով: — Հիմա ատում ես, որովհետև անցած գիշեր անգոյշություն ունեցա մի քիչ վատ խոսելու բարեկամիդ մասին: Նա որ լավ մարդ լիներ, հարյուր ֆրանկս չէր մոռանալ:

Մանեն զգանքով դարձեց երեսը և ավելի լավ համարեց դուրս գնաւ, քան մնալ եղբոր մոտ, որի հանգստությունը, ճայնը, ժպիտը, հեգնությունները տակնուվրա էին անում նրա ամբողջ ներքինը:

— Ինչ խոսեմ քեզ հետ, քանի որ քեզ համար հարյուր ֆրանկն ավելի մեծ արժեք ունի, քան թե... — ասաց նա տարօրին հանգիստ ձայնով և, խոսքը շվերջացրած, դիմեց դեպի դուռը:

— Քան թե... քրոշ պատի՞վը, — կանչեց նրա հետեւյց Վահանը:

Արյունը խփեց Մանեի գլխին. կարծես աներևոյթ ձեռքեր հանկարծ բռնեցին նրա ուսերից և ուժգին թափով դարձրին նրան դեպի Վահանը:

— Լռիք, օձ, — աղաղակեց նա անզուսպ կատաղությամբ: — Դու իրավունք չունես խոսելու իմ պատվի մասին: Անցած օրը

ոտներդ էի ընկել, որ ինձ մի ճանապարհ ցուց տառ այս դժուխային գրությունից դուրս գալու համար. ես ազաշում, պաղատում էի, որ մինչև անգամ պահանես ինձ: Բայց դու ի՞նչ արիր: Այդ ատելի սիգարը բերանիդ, զզվելի սովորությանդ համաձայն, միայն ծաղրեցիր, հեգնեցիր և խուս տվիր անտարքերությամբ: Դու այդպես ես եղել միշտ և այդպես ես նույնիսկ այս կրիտիկական վայրկյանին, երբ ես պատրաստ եմ պարզապես անձնասպանություն գործելու: Եվ դու համարձակվում ես խսել իմ պատվի մասին: Աշխարհին երեսին բացի քեզնից ուրիշ ոչ մի սրտակից չունեի, որի առաջ կարողանայի բանալ սրտս, որի հետ կարողանայի խոսել մտերմորեն, որի ցավակցության վրա կարողանայի վստահանալ: Եվ երբ իմացա, որ դու եկել ես և եկար ինձ մոտ, կարծեցի թե փրկիս է եկել: Բայց դու ի՞նչ արիր, ի՞նչ Դու այն արիր, որ ես այժմ այնքան զզվում և ատում եմ քեզ, որ չեմ ուզում տեսնել երեսդ, չեմ ուզում, չեմ ուզում: Հեռացիր, գնա՛, հանգիստ թող ինձ...

Եվ Մանեն հեծկլտալով գուստ գնաց ու գուստ պինդ շրբնկացրեց իր հետեւից:

Վահանն ականջ դրեց և լսեց, որ մի ուրիշ դուռ էլ նույնպիսի սաստկությամբ շրիսկաց այնտեղի: Նա վեր կացավ, սիգարը դրեց մոխրամանի մեջ, երկու ձեռքով վեր քաշեց անդրավարտիքը փորի վրա և գնաց քրոջ հետեւյց: Երկրորդ գուան շրիսկոցից իմացավ, որ Մանեն մտել էր ննջարանը: Նա բռնեց ննջարանի գուան փակնքը, առաջ հրեց, բայց դուռը շբացվեց: Ներսից փակված էր:

— Մանե, բաց արա:

— Հեռացիր, — լսվեց ներսից Մանեի ջղային, կատաղի աղաղակը:

— Խելագարվե՞լ ես, ինչ է:

— Այո, խելագարվել եմ, հեռացի՞ր:

— Բաց արա, ատում եմ:

— Չեմ բանալ, հեռացի՞ր:

— Բան եմ ուզում ասել:

— Չեմ ուզում, հեռացի՞ր:

— Դե, հիմարություն մի անիր, բաց արա:

— Ախ, չեմ ուզում քեզ տեսնել, լսո՞ւմ ես, չեմ ուզում, չեմ ուզում, չեմ ուզում...

— Խո չե՞ս ուզում գուստ կլուրեմ:

— Ես կապանեմ ինձ, իթե մտնեմ:

Վահանն իր ուժեղ ձեռքով բռնեց դուն փականքը, ահազին ուղը բարձրացրեց, որ հարված տա դունը, բայց այդ բանն արևց կարծես ձեր համար և ոտք նորից իջեցրեց:

— Դու հիմարացել ես և ստիպում ես, որ ես էլ հիմարանամ, — ասաց նա շրթունքները մոտեցրած դուն փեղկերի միացման արանքին: — Մանե, բաց արա խնդրում եմ:

Ներսից այլևս ոչ մի ձայն լսվեց:

— Մանե, լսո՞ւմ ես: Դու գծվել ես և տե՛ս, որ շզզաս: Մանե՝:

Դարձյալ ոչ մի ձայն:

— Լսիր, — կանչեց Վահանը, մի քիչ սպասելուց հետո: Էլի լուսիթյուն:

— Չես լսո՞ւմ:

Ներս այնպես խաղաղ էր, որ կարծես մարդ չկար այնտեղի մանե, քեզ հետ եմ:

— Ախ, տե՛ր իմ աստված, սա ի՞նչ պատիժ է, — վերջապես լսվեց Մանեի հուսահատական հառաջանքը:

— Այս երեկո գնում եմ գյուղ: Մի՞թե շես ուզում հրաժեշտ տալ:

— Աստված բարի ճանապարհ տա, գնա:

Վահանը մի բոցե կանգնած մնաց դուն առաջ մտախոհ դրության մեջ, հետո շրթունքները նորից մոտեցրեց երկու փեղկի դրության և որպեսզի ասածը պարզ լսվի ներսը, համ-հաս արանքին և որպեսզի ասածը պարզ լսվի ներսը, համ-հաս արտասանեց:

— Ուրեմն մնաս բարյավ: Մի մոռանար, որ եղբորդ դուրս ես անում, և այս բանից հետո ինձ մնում է միայն, որ այլևս երբեք ոտք չկոխեմ այս տունը: Քո ցանկությամբ մենք ալյուհետեւ մեռած ենք իրար համար: Բայց վկա է աստված — լսո՞ւմ հետեւ մեռած ենք իրար համար: Բայց վկա է աստված, երդվում եմ ես, Մանե, ես լուրջ եմ ասում, — վկա է աստված, երդվում եմ մեր ծնողների գերեզմանով, որ եղբայրդ, ինչ էլ որ կարծես նրա մասին, միշտ սիրել է քեզ և միշտ էլ քո բարին ցանկացել: Այժմ մասին, միշտ սիրել է քեզ և միշտ էլ քո բարին ցանկացել: Այժմ էլ ի սրտեւ ցանկանում եմ քեզ բարիք և... Մնաս բարյավ:

Վահանը հեռացավ դուն մոտից և դուրս գալու վրա էր, երբ հանկարծ բանալին շրխկաց ննջարանի դուն կողպեքի մեջ, գուն ուժգնորեն բացվեց և այնտեղից դուրս վագեց Մանեն:

— Կա՞ց, — աղաղակեց նա ծայրահեղ հուսահատությամբ և, ըստ երեսութին, ուզեց խոսել, բայց այլևս ոչինչ շկարողացավ

արտասանել: Նա ընկավ Գենց այնտեղ՝ դռան մոտ գրված աթոռի վրա, երեսը ծածկեց ձեռքերով և հեկեկաց դառնագին:

Քրոջ այդ նոր տարօրինակ վարմունքն եղբայրն ընդունեց բավական սառնասրտորեն: Առանց տեղից շարժվելու, Վահանը դիտում էր լուս, թե ինչպես ցնցվում են Մանեի նիհար ուսերն ուժգին հեկեկանքից, և սպասում էր, թե ինչով է վերջանալու այդ նոր տեսարանը:

— Լսիր... Բաղամյանն այստեղ էր, այսուհետեւ վերջապես արտասանեց Մանեն հեկեկանքի միջից, — բայց ես... դուրս արի նրան, որովհետեւ...

Մանեն հանկարծ դադարեց հեկեկալուց, վեր թռավ և սատիկ արագախոսությամբ, շնչառապատճենով, շարունակեց:

— Նա ինձ ցույց տվեց մի նամակ, որի մեջ գրում են, որ ամուսինս մի գաղան, մի հրեշ, մի, մի... շգիտեմ ինչ է: Գրում են, որ հանքերը նրանը չեն, գյուղացիներինն են, և նա, շգիտեմ ինչ միջոցով, զավթել է այդ հանքերը: Բայց այդ չէ սարսափելին: Սարսափելին այն է, որ նա բռնաբարել է մի խեղճ, մի այրի կնոջ տասներեք տարեկան աղջիկը, և բռնաբարելուց հետո, սպանել ու դիակը ձգել մի ձորակ, իր հանցանքի հետքերը ծածկելու համար երկի... Ես ասացի նրան, որ նամակը ինքն է հորինել և... վըրնդեցի նրան: Ասա՛, մի՞թե ճիշտ չեմ ասել, մի՞թե ամուսինս ընդունակ է այդպիսի բաներ անելու... ամուսինս չէ, այլ թեկուզ ամենագաղան մի մարդ: Ասա՛, եթե ընդունակ է, ես հենց այս բոպեիս կհեռանամ այս տնից և կզամ քեզ հետ գյուղը, որպեսզի այնու երբեք շտեսնեմ նրա երեսը, երբեք, երբեք...

Նա լրեց, որովհետև բռն հուզմունքից այլևս բան չկարողացավ արտասանել: Ծնչում էր ծանր, խիստ ծանր և նայում էր եղբորն այնպիսի սպասողական-աղերսական հայացքով, որ կարծես նրա պատասխանից էր կախված իր փրկությունը:

Վահանը մինչև անգամ արհեստական անտարբերությամբ մի սիգար հանեց, դրեց բերանը, ծանր ու բարակ վառեց, լուցկին հանգցրեց, դուրս շպրտեց լուսամուտից և ապա թե խոսեց հանգիստ ու լուրջ:

— Քո այդ պարոն վիպասանը երեխ կարծել է, թե վեպ է գրում: Զէ՞՞ որ վեպերի մեջ միայն կարելի է ամեն բան հնարել անպատճ կերպով: Խելքին փշեց, թե արի այսպիսի մի բան գրեմ, ու կգրի, էլլի. ո՞վ է ձեռքը բռնողը: Կյանքի մեջ էլ, ինչպես

Կրթում է, ուզում է վարփել իր հնարած վերջին շուրջուռով։  
սիրուհին դու ես, սիրահարն ինքն է. մնում է ամուսինդ, որին,  
իհարդիք, պիտք է գազանի կերպարանք տալ կոնտրաստը շեցտեղու  
համար։ Տարբերությունն այն է, միայն, որ ինքն, իբրև սիրահար,  
այնքան հեռու է իր վեպի իդեալիստ հերոսից, որքան նրան տված  
իմ հարցուր ֆրանկն իմ գրպանից։

— Վահան, Վահան... գոնե այժմ կատակ մի անդր, —  
աղերսեց Մանեն հուսահատության արցունքն աշքերին: — Մի՞թէ  
յս տեսնում ինչ դրության մեջ եմ ես:

— Ինչպես շեմ տեսնում է Տեսնում եմ, որ հուսահատության  
ժեղ ես և... զղջում ես, թե ինչո՞ւ ես նրան վիրավորել ու վոնդել  
եսկ ես կարծում էի, թե իմ վերջին խոսքերն եին քեզ ազդողը, որ  
վերջապես, զուրս եկար քո անառիկ բերդից և սկսեցիր լար Դու  
զղջում ես, թե ինչո՞ւ ես նրան միստիֆիկատոր անվանել, որովհե-  
տեւ կասկածում ես, թե միգուցե ճիշտ է այն նամակը, և, ինչպես  
տեսնում եմ, սրտիդ խորքում ցանկանում էլ ես, որ ճիշտ լինի,  
որպեսզի...

— Օ՛հ, քեզ հետ երբեք չի կարելի խոսել, — բացագանձեց  
Մանեն ծայրահեղ հուսահատովիյամբ:

— Սպասիր, մի տաքանար: Օրինակ առ ինձնից և լսիր ինչ  
եմ ասում: Եթե շես կասկածում, եթե համողված ես — և, իհարկե,  
համողված ես — որ այն նամակը նա է հորինել, էլ ինչո՞ւ ես ինձ  
հարցնում, թե մի՞թե ճիշտ շես ասել, մի՞թե ամուսինդ ընդունակ  
է այդպիսի բաներ անելու և ո՛չ թե միայն ամուսինդ — ավելաց-  
նում ես դու — այլ թեկուզ հենց ամենազագան մարդը: Եվ եթե  
ասեմ թե՝ այո, ընդունակ է, այն ժամանակ դու պատրաստ ես  
հենց այս րոպեին հեռանալու, քո ասելով՝ ինձ մոտ գյուղը, բայց  
իմ հասկանալով՝ թաղամյանի մոտ: Ահա՝ քո դրությունը կամ,  
ավելի ճիշտը, քո դրության հոգեբանությունը:

## Մանեն ձեռքերը զարդեց:

— Օ՛հ, ինչո՞ւ դուքս եկա, ինչո՞ւ խոսեցի քեզ հետ,— Հառա-  
շեն նաև:

— Եթե ճիշտ չեմ ասում, էլի դուրս արաւ:

թայց Մանեն այլևս ոչ սիրտ, ոչ ուժ ուներ խոսելու Խիստ  
Հոգինած մարդու նման, նա կամաց նստեց և, թուլացած ձեռքերը  
ծնենեղին ոռած, գուշիր կախեց կրծքին:

— ին, մերաբեսում է ամուսնուդ, — շարունակեց Վահանը

նույն հանգստությամբ,— ես թեպետ լավ շեմ ճանալում նրան և նույնիսկ պատրաստ եմ ընդունելու, որ նա բարոյական մի հրեշ է, բայց և այնպես, իմ կարծիքով, նա ավելի լավ մարդ է, քան թե քո այդ վիպասանը: Թե ինչու— չեմ կարող ասել:

— Որովհետեւ մոռացել է Հարյուր ֆրանկի, ահա թե իս-  
չու, — նկատեց Մանեն կծու Հանգստությամբ:

— Ծատ կարելի է, այդ էլ է պատճառը, որովհետև մարդ մարդու դատում է շատ անգամ մանր հաշիվներից դրդված։ Զեմ վիճում, թայց այս զեպքում չեմ կարծում, թե պատճառը միայն այդ լինի։ Իսկ թե ուրիշ ինչ պատճառներ կան, որ ես Բաղամյանի մասին լավ կարծիք չունիմ, չեմ կարող ասել, որովհետև չգիտեմ։ Գուցե նրա քիթը դուր չի գալիս ինձ կամ գուցե նրա մազերը, որ տեսնում եմ, սիրուս ասում է՝ մկրատն անեմ և տակից կտրեմ— ո՞վ գիտե։ Թայց, կրկնում եմ, ամուսինդ ինչ էլ որ լինի, չի կարող նրանից վատ լինել։ Այս բանն ասում եմ նրա՛ համար, որ իմ կարծիքը հարցըիր, թե չէ՞ ոչ մի խոսք էլ չի ասիլ այս մասին, որովհետև իմ ի՞նչ գործն է դատավոր լինելու, թե ով է լավ, ով է վատ։ Այդ գու ինձնից ավելի լավ պիտի իմանաս։ Ես միայն ցավում եմ, որ գու այդքան տանուլ ես տվել քեզ, և... զարմանում եմ։ Որովհետև ո՞վ է մեր ժամանակում այդպես գլուխը կորցնում սիրուց ես մինչև անգամ կասկածում եմ, թե այն, ինչ որ քեզ սիրուց ես միայն անգամ կասկածում եմ, թե այն, ինչ որ քեզ ալդքան գերել է, սեր լինի։ Դա մի պարզ հիվանդություն է ան- շուշտ, որ առաջացել է այն բանից, որ մենակ ես, մարդ չկա մոտդ, ձանձրանում ես, զբաղմունք չունիս, զավակ էլ չունիս։ Թայց այս ձանձրանում որ գաս գյուղը տանեմ քեզ, այնպես ձեռաց կրժշկւես, որ— և ի՞նչ ասեմ կզա՞մ։

- 82 -

— Դու գիտես: Իսկ ես այս երեկո, ինչպես ասացի, գնում  
մ: Ուրբեմն...

Վահանը մոտեցավ քրոջը

— Հսիր, Մահիք,— ասաց եա լրջորեն:— Հավատա, ես զատ  
եղբայր չեմ և, որ ուզենաս, կարող եմ շատ պիտանի լինել քեզ  
Արի զնանք զյուղ:

## Մանեն վեր թուավ տեղից

— ԱՌ, ո՛չ, — կրկնեց նա

=  $I_{\text{max}}$ ,  $\xi_1$ ,  $\mu^{\circ}\text{N}$ ,  $b_u$   $\psi_{\text{max}}$

քեզ համար եմ ասում, թե չէ... քո կամքն է, Դե՛հ, մնաս բարյավ։  
Զեռք էլ շես տա՞լ։

Մանեն ձեռքն ակամա պարզեց եղբորը դեմքի այնպիսի ար-  
տահայտությամբ, որ կարծես գորտ պիտի զնեին ձեռքի մեջ։

— Սկսուրդ ո՞ւր է, տանը չէ՞։

— Չէ։

— Ուրեմն այլևս չեմ տեսնիլ նրան։ Բարես կհիշես։ Դե՛հ,  
դարձյալ մնաս բարյավ։

Մանեն մինչև անգամ չնայեց եղբորը և, երբ Վահանը դուրս  
կամաց նստեց և ատամներով կծեց ներքին շրթունքը՝ հե-  
կեկանքը զապելու համար։ Երբեք նա այնպես մենակ, այնպես ան-  
օգնական ու որբացած չէր զացել իրեն, ինչպես այժմ։

## XI

Երեկոյան զնացքի մեկնումից մի կես ժամ առաջ Վահանը  
կառքով գնում էր երկաթուղու կայարանը, իր ջարդված ճամպ-  
րուկը ուների առջեր դրած։ Գնում էր և ինչ-որ ծանր մտածմունքի  
մեջ էր։ Երբ կառքը կանգ առավ կայարանի առաջ, նա չիշավ, այլ  
մի րոպե խիստ տատանվելուց հետո, կառապանին պատվիրեց, որ  
ետ դառնա, և կառքն ուղղակի քշել տվեց գեպի այն փողոցը, որ-  
տեղ գտնվում էր Բաղամյանի բնակարանը։

Մառայից իմանալով, որ Բաղամյանը տանն է, նա կառապա-  
նին պատվիրեց, որ սպասի և, ճամպրուկը թողնելով կառքի մեջ,  
ներս մտավ։

Այդ անժամանակ այցն այն աստիճան անակնկալ էր Բա-  
ղամյանի համար, որ նա մինչև անգամ չպատասխանեց Վահանի  
բարեկին։ Նա կամաց վեր կացավ գրասեղանի մոտից, որի մոտ  
պարապում էր, և նայեց հյուրին հայտնի չէ՝ զարմացած, թե վա-  
խեցած։

— Այս գիշեր գնում էի գյուղը, բայց երկաթուղու կայարա-  
նից ետ դարձա և ուղղակի եկա ձեզ մոտ, — ասաց Վահանը։  
Հույս ունիմ, գուշակում եք, թե ինչի համար եմ եկել։

Բաղամյանը գունատվեց։ Խսկույն հիշեց, որ այդօր, երբ ինքը  
դուրս եկավ Մանեի մոտից, փողոցում տեսավ Վահանին քրոջ  
տուն գնալիս։

— Ես պատրաստ եմ ձեզ գոհացում տալու, — ասաց նա

ահագին զանք գործ դնելով, որ իր հակառակորդի պես հանգիստ  
մնա և հանգիստ խոսի։

— Գոհացո՞ւմ, — զարմացավ Վահանը։ — Ի՞նչ բանի համար  
— Այն նամակի համար...»

— Ո՞ր նամակի... Այս, հա՛, քրոջ ցույց տված նամակի  
համար եք ասում, — բացազնչեց Վահանը բարձրածայն ծիծա-  
ղելով, բայց հանկարծ զատեց ծիծաղը և շարունակեց իր սովորա-  
կան հեղանական ժպիտով։ — Մի վախենաք, պարոն Բաղամյան,  
այդ նամակը մտքովս անգամ չի անցել, և ես չեմ եկել ձեզ մե-  
նամարտի հրավիրելու։ Բարեբախտաբար թե դժբախտաբար, շատ  
բան կյանքի մեջ կատարվում է ոչ այնպես, ինչպես զրում են ոռ-  
մանների մեջ։ Կյանքը, մանավանդ մեր կյանքը, շատ ավելի  
պարզ է և կոպիտ։ Մենք մենամարտել կարող ենք միայն հա-  
յավարի, այսինքն՝ հայոցյանքներով և, ծայրը որ համար, իրար  
թակելով։ Ուշունց կտանք իրար, կզարդենք իրար քիթ ու մոռթ և  
բանը դրանով էլ կվերջանա։ Հիշո՞ւմ եք իմ ու նասիբայնի միջև  
տեղի ունեցած ընդհարումը։ Բայց ես եկել եմ ձեզ մոտ ոչ իրար  
հայոցյալու և ոչ էլ նրա համար, որ տուրուղմիոց սարքենք։ Դա  
բանի նման չի լինիլ և բավական էլ տղեղ կլինի, կարծիմ, մա-  
նավանդ որ մենք երկուսս էլ թեև ասիհական բիրտ պազի զավակ-  
ներ, բայց և այնպես քիլ ու միշ քաղաքակրթության հոտն առած  
մարդիկ ենք։ Իմ գալու նպատակը միանգամայն խաղաղասիրա-  
կան է. ես եկել եմ խորհուրդ տալու ձեզ, որ ձեռք վերցնեք իմ  
քրոջից։

— Իսկ եթե ես ձեր խորհուրդը մերժեմ, — ասաց Բաղամ-  
յանը, զգալով, որ տարօրինակ մի դող բռնում է իր մարմինը։  
Ժայիտը շքացավ Վահանի գերիցից։

— Դա պարզ համառություն կլինի, — նկատեց նա, ձեռքերը  
կոխելով անդրավարտիքի զրապանները և նայելով Բաղամյանի  
ոտներին։

— Եվ դուք չե՞ք հասկանում, թե ինչի համար կլինի այդ հա-  
մառությունը։

— Ոչ, Դժբարանում եմ հասկանալ։  
Բաղամյանի աշքերը վառվեցին։  
— Նրա՛ համար կլինի, պարո՞ն, — ասաց նա զապած դայրույ-  
թի շեշտերով, — որ դուք խառնվում եք ձեզ շվերաբերող գործի։  
Վահանը հանկարծ նայեց նրա աշքերին։

— Պոչո՛, մի՞թե, — ասաց նա, ձեռքերը դանդաղորեն հանեւ, լով գրպաններից և զարսելով հետեւ: Իսկ ես կարծում էի, թե դուք գիտեք, որ ես իմ քրոջ եղբայրն եմ:

— Այդ ինձ համար ո՞չ մի նշանակություն չունի: Ձեր սրտ  
եղբայր լինելն իրավունք չի տալիս ձեզ նրա հետ միասին ի՞մ դա-  
տավորը լինելու:

— Բռաշվո, լավ ասացիք. կսիրեմ այդպիսի ազատափռությունը: Բայց, պարոն Բաղամյան, ես խո չեմ եկել իբրև գատավոր. ես եկել եմ միայն իբրև խորհրդատու:

— Այդպիսի գեպքում ե՞ս պիտի ինդրած լինեի, որ զաք ինձ մոտ, կամ ինքս պիտի գայի ձեզ մոտ: Խսկ ես ամենեին կարիք չեմ զգում ձեր խորհրդին դիմելու, — ասաց Բաղամյանը և հեռացավ Վաշանից:

— Դարձյալ բռավ՝ այդ ինքնավստահությունն էլ զորում Բայց ինձ բոլոր իրավունքներից զրկելուց հետո խո չե՞ք կարող զրկել այն իրավունքից էլ, որ կարծնմ ունիմ ես իմ քրոջ պատիվը պաշտպանելու համար:

Բաղամյանն արագորեն դարձավ գեպի Վահանը:

— Ի՞նչ... ինչ ասացի՞ք... պատի՞վը, — արտասանեց նա  
բուռն հուզումից ձայնը հետզհետեւ բարձրացնելով: — Պարո՞ն, ես  
կիսնդրեի, որ դուք մի քիչ զսպեիք ձեր լեզուն: Ինչի տե՞ղ եք դնում  
ինձ, որ կարծում եք թե պետք է պաշտպանեք իմ գիմ ձեր քըռչ  
ինձ, որ պատիվը ես պատվի գո՞ղ եմ, ինչ է: Հասկանո՞ւմ եք ի՞նչ եք  
ասում...»

— Հասկանում եմ, պարո՞ն Բաղդամյան, ասախով եղեք և այդպիսս մի բղավեք իզուր. բնակալանը ձերն է, ճիշտ է, բայց հարեվան կունենաք, կվախենա: Աշխատենք կարելույն շափ հանգիստ կերպով հասկացնել իրար մեր միտքը: Առհասարակ ընդունված է, կերպով հասկացնել իրար մեր միտքը: Առհասարակ ընդունված է, որ երբ մեկն աշք է տնկում ուրիշի կնոջ կամ քրոջ վրա, նա պատուի — ներեցեք, ձեր խոսքն եմ կրկնում — նա պատվի գող է հանդիսանում:

— կոեցե՞ք ձեզ ասում եմ,— աղաղակեց Բադայանը կատարության հանկարծական բռնկումով: — Ես ձեզ թույլ չեմ տալ ինձ վիրավորելու երկի գույք չդիմեք, որ շատ անգամ նա՛, ում պատվի գող են անվանում, կաբող է իր բարոյական հատկություններով ավելի բարձր, ավելի մաքուր ու առաքինի լինել, քան թե նա՛, ով հավակնություն ունի իր կնոջ կամ քրոջ պատվի պաշտե

պանի անկոշ դերը ստանձնելու։ Դուք այս լավ հասկացեք, պարոն։

— Այդ ես լավ եմ հասկանում, պարոն թաղամյան, — նկատեց Վահանն առաջվա պես հանգիստ: — Եվ իգուր եք կարծում, որ եթե այդպես չըդավեք, լավ չեմ հասկանալ, ես ոչ թե միայն լավ եմ հասկանում, այլև լիովին ընդունում եմ ձեր ասածը: Օրինակ՝ դուք կարող եք ձեր բարոյական հատկություններով շատ ավելի բարձր, շատ ավելի մաքուր ու առաքինի լինել, քան թե ես, որ քրոջս եղբայրն եմ, կամ թե Սանթրոսյանը, որ քրոջս ամուսինն է և որը, ի դեպ ասած, այստեղ չէ և այս բանից ամեննեխն տեղեկություն չունի: Թայց խնդիրն այդ չէ, իմ կարծիքով, այլ՝ այն, որ ինչպես դուք ունիք ձեր հայեցակետը, այնպես և եղբայրներն ու ամուսինները, որոնք, երևի, անկոչ շեն համարում իրենց դերը, որ հարկ են տեսնում հանդես գալ իրենց քրոջ կամ կնոջ պատիվը պաշտպանելու բարոյական շատ բարձր հատկություններով օժտված մարդկանց դեմ: Եվ ինչո՞վ կարող եք ապացուցել, թե ուղիղը ձեր հայեցակետն է և ոչ նրանցը:

— Նրանով, որ դուք այնքան անկիրթ եք ու անբարեխիղն, որ կարծում եք, թե իրավունք ունիք ուրիշի բարոյականության մասին դատավոր կանգնելու, և այնքան բռնակալ, այնպիսի վայրենի գաղափարների ու զգացումների տեր, որ կարծում եք, թե եղբայր կամ ամուսին լինելով իրավունք ունիք ճնշում գործ դնելու ձեր բրոջ կամ կնոջ խթճի վրա և թույլ շտալու, որ նա անի այն, ինչ որ իր սիրտը, ինչ որ բռնական-անխարդախ զգացումն է նրան թելադրում:

— Οωστού σημειώνεις: Ζωγράφησε μεταξύ των παραπάνω από την παλαιά του περίοδο, οι οποίες διατηρούνται στην Εθνική Βιβλιοθήκη της Αθήνας. Τα παραπάνω από την παλαιά του περίοδο, οι οποίες διατηρούνται στην Εθνική Βιβλιοθήκη της Αθήνας.

կրթության, անբարեխղճության և բռնակալության նշան չէ։ Զեր ասած բնական-անխարդախ զգացումը թելադրում է նրան հանցանք շգործել իր խղճի դեմ, հավատարիմ մնալ իր ամուսնուն, թե ինչպիսի ամուսնու— այդ ձեր գործը չէ, այդ ոչ ոքի գործը չէ, այդ իր գործն է միայն։ Նա այդպես է կամենում, և ինչո՞ւ դուք, որ այդքան զայրանում եք ուրիշի խղճը բռնացողների դեմ, ինքներդ բռնանում եք, որ այդպես չկամենա։

— Ոչ թե ինքն է այդպես կամենում, այլ դուք եք կամենում, որ այդպես կամենա,— նորից աղաղակեց Բաղամյանը, գրգոված ոչ այնքան Վահանի խոսքերից, որքան նրա հանգիստ, անձնավստահ տոնից։ — Եվ դուք այս գործի վերաբերմամբ կարող եք խոսել ամեն բանի մասին, բայց ո՛չ երբեք բնական-անխարդախ զգացման մասին, որովհետև հենց այդ զգացումն է, որ խարդախված է նրա մեջ և այդ զգացման հետ միասին խարդախված է նրա ամբողջ աշխարհայացքը։ Օ՛, ես շատ լավ ուսումնասիրել, տեսել եմ, թե ի՞նչ եք արել դուք։ Դուք կաշկանդել եք նրա միտքը հազար ու մի պառավական նախապաշարումների մեջ։ Ճեր ավանդական-շաբլոնական դաստիարակությամբ դուք այլանդակել եք նրա հոգեկան աշխարհը, ճգմել, հանել եք նրա միջից այն ամենը, ինչ որ հարազատ-բնական է, ինչ որ ազատ-մարդկային է, և ստրուկ եք դարձել նրան ինչ-որ ընտանեկան-պայմանական ողորմելի առաքինության, ինչ-որ բուրդուական տափակ բարոյականության, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի կեղծիք և կեղծիքներից ամենաանխղճն ու ոճրալին, որովհետև նա տանջվում է շարաշար և վերջ ի վերջո պիտի զոհվի այդ կեղծիքին։ Ասում եք սարսափում է։ Ինչո՞ւ պիտի սարսափի իր սրտի բնական աղատ ձգուումից, եթե այդ սարսափը չեք ներշնչել նրան մոր կաթի հետ և այնուհետև ամրապնդել դպրոցում և հասարակության մեջ։ Ինչո՞ւ թոշունը պիտի սարսափի աղատորեն թոշելուց, եթե նրա թկը չեր կոտրել։ Զեր ավանդական դաստիարակությամբ դուք ներշնչել եք նրան այնպիսի անխղճ պարտավորություններ, որոնք պարզապես բարբարոսություններ են, քստմնելի բարբարոսություններ։ Դուք հանել եք նրա կրծքից իր սեփական սիրտը, և տեղը ձեր սեփականն եք դրել. դուք հանել եք նրա գլխից իր սեփական ուղեղը և տեղը ձեր սեփականն եք դրել. դուք հիմն ի վեր այլանդակել և խարդախել եք նրա հոգեկան ու մտավոր աշխարհը. ո՛չ մի բան չեք թողել նրա մեջ, որ իրենը լինի, իր սեփականը։

Նը, իր ինքնուրույնը, իր անկապտելին։ Դուք նրան դարձրել եք մի մեքենա, որ յուրովին գործել անկարող է և պիտի գործի անպատճառ ձեր կամքով։ Նա պարտավոր է մտածել այնպես, ինչպես դուք եք մտածում, զգալ այնպես, ինչպես դուք եք զգում, անել այն, ինչ որ դուք եք թելադրում, համակրել ձեր համակրածը, հակակրել ձեր համակրածը։ Եվ դուք դեռ հացարձակվում եք պընդել, թե նրա խղճն ազատ է, թե նրա զգացումները խարդախված չեն։ Դուք ամենամեծ ոճրագործներն եք. դուք մեղքել եք ինքնուրույն մարդը, դուք սպանել եք անհատի բարոյական աղատությունը, որից ավելի բարձր ու նվիրական աղատություն չկա աշխարհիս երեսին...

Վահանը հաստ փորը դուրս ցցած՝ լսում էր Բաղամյանին իր սովորական բարեսիրտ-հեզնական ժպիտով և հանգիստ դիտում նրա աչքերը, որոնք այդ միջոցին վառվում էին անկեղծ բարկության կրակով։ «Պետք է խոստովանած, աչքերը վատ չեն, — մտածում էր նա, — ինքն էլ տղեղ չէ առհասարակ... Զէ, լավ է, լավ է... Սրա վրա անպատճառ կարելի է սիրահարվել... և լավ էլ ողկորվում է... Հիմար էլ չէ»։ Նա մի սիգար հանեց, լուցկին հանգցրեց և տարավ շպրտեց լուսամուտից դուրս։

Բաղամյանը լոեց, հինգ մատը կոխեց երկայն մագերի մեջ և, վերին աստիճանի հուզված, սկսեց անցուղարձ անել սենյակում զղային, արագ քայլվածքով։

— Վերջացրի՞ք, — հարցուց Վահանը։ — Այժմ հաճեցեք խնդրեմ մի վայրկյան ունկնդրություն շնորհել ինձ։ Օս կկամենայի ամենից առաջ ասել ձեզ, որ այն բոլորը, ինչ որ այս բոպեիս ասացիք, միանգամայն հիանալի էր և արծեր ուղղակի գրի առնել և դնել ուղղոնյորի բերանը մի զորեղ դրամայի մեջ։ Բայց ներեցեք խնդրում եմ. մի բան ես լավ հասկացա և կկամենայի, որ եթե կարելի է, բարեհաճեիք բացատրել։ Զհասկացած ա'յն է, որ ձեր ֆիլիպիկներն արտասանելիս դում բառը շատ գործածեցիք. այդ շգիտեմ և համարձակվում եմ հարցնել՝ այդ դումը հասկապես իմ անձին էր ուղղված, թե այդ հոգնակի դերանվան տակ պիտի հասկանայի հավաքական մի մարմին, որի անունն է խավարամիտների բանակ։ Զեր բացատրությունն ինձ համար կարենոր է, որովհետև կկամենայի իմ համեստ կարծիքը հայտնել ձեր ֆիլիպիկների դեմ, եթե միայն, իհարկե, կբարեհաճեիք թույլ տալ, որ ես էլ ունենամ իմ կարծիքը։

Բաղամյանը քայլելիս հանկարծ շեղեց ճանապարհը, ուղղակի մոտեցավ Վահանին և կանգ առավ նրա առաջ:

— Հսեցե՛ք, պարոն,— ասաց նա կատաղությունից հազիվ զսպած ձայնով.— Եթե դուք կշարունակեք դարձյալ այդ տոնիվ խոսել ինձ հետ, ես... ապտակ կտամ ձեզ:

Վահանն ամենայն հանգստությամբ սիգարը հանեց բերանից և, երեսը գեմ անելով, ասաց:

— Խնդրեմ:

Բաղամյանի ատամները պինդ սեղմվեցին իրար և ձեռքը կամաց ու ցնցողաբար սկսեց բարձրանալ երկաթի ծանրությամբ։ Վահանն ավելի մոտեցրեց իր շաղ թուշը։

Բայց Բաղամյանի ձեռքը միայն բռունցք սեղմվեց և նույն ծանրությամբ իշավ։

Վահանը նայեց նրան և ծիծաղեց։

— Բռավո՞—, բացագանչեց նա:— Եթե դուք այսպիսի կրիտիկական մի վայրկյանին կարողացաք զսպել ձեզ, ապա ուրեմն դուք տղամարդ եք։ Կեցցե՛ք, Դա ավելի մեծ քաջություն է, քան թե այն, եթե իրագործեիք ձեր սպառնալիքը։ Դա միենույն ժամանակ խոհեմություն էր ձեր կողմից, որովհետև լինում են հարցածներ, որոնք երբեմն ավելի զորեղ հականարկածներ են առաջացնում, մանավանդ որ ես վատ քրիստոնյա եմ և բոլորովին հակառակ դավանանք ունիմ ապտակին վերաբերյալ ավետարանական պատվիրանին։

Բաղամյանը խեղդվում էր զսպած կատաղությունից, նա մոտեցավ լուսամուտին, հուսալով, թե երեսին թարմ ու զովացուցիլ հով կդիպչի, բայց օդն այնքան ծանր էր ու տաք, որ ոչ մի թեթևություն չզգաց։ Նա զղչում էր, որ վճռահան րոպեն բաց թողեց, շապտակեց այդ «կլոունին», և այժմ խիստ նվաստացած էր զղում իրեն իր աշքում։

— Եվ այդպես, պարոն Բաղամյան,— ասաց Վահանը,— չէիք բարեհաճիլ արդյոք բացատրել, թե ում էին վերաբերում ձեր դուք-երը, հատկապես ի՞մ անձիս, թե՞ ամենամեծ ոճրագործներին — անհատի բարոյական ազատությունը սպանող խավարամիտներին ընդհանրապես։ Կրկնում եմ, ձեր բացատրությունների մեջ անմասնական ապատությունը սպանող խավարամիտներին ընդհանրապես։ Կարող եմ ձեզ հավատացնել, որ այդպիսի ապատությունը կատարված է մի ուրիշ անձի հետ, որին թշվառացնելն իր խղճի դիմ է համարում։ Իսկ դուք ինձ պատասխանում եք, թե մենք բռնակալներ ենք, բարբարոսներ ենք, ոճրագործներ ենք, մենք ճնշել ենք նրա անհատական ազատությունը, նախապաշարել ենք նրա միտքը, հանել ենք նրա ուղեղն ու սիրու և տեղը մերը դրել և այլն։ Զեր այդ մեղադրանքները ցույց են տալիս, որ դուք չեք հասկացել և չեք կարողանում հասկանալ նրան, որին սիրում եք, ինդրում եմ իմ այս նկատողությանը լուրջ ուշադրություն դարձեք, պարոն Բաղամյան, որովհետև այստեղից է, որ ժագում են ձեր բոլոր թյուրիմացությունները։ Կարող եմ ձեզ հավատացնել, որ հայերիս մեջ շատ շեք գտնիլ այնպիսի աղջիկներ, որոնք մեծացած լինեն այնքան ազատ, որքան քույր։ Ես տասնհինգ, քույր չորս թե հինգ տարեկան էր, որ զրկվեցինք ծնողներից։ Քույր մեծացավ մորաբերության էր, որին դուք էլ ճանաշում էիք. Նա լուրջ կին էր, քրոջ ձեռքի տակ, որին դուք էլ ճանաշում էիք.

Եվ նա սիգարի ծուխը բերնից բաց թողնելով ու աչ աշքը կիսախուփ, սպասեց Բաղամյանի պատասխանին։

Բայց Բաղամյանը լուրջ էր և զղային անհանգությամբ սեղմում էր մատներով լուսամուտի տախտակը։

— Դուք լայեղ չեք անում պատասխանել, — ասաց Վահանը: — Այնուամենայնիվ ես կասեմ իմ ասելիքը։ Իսկ ասելիքը ահա թե ինչ է, պարոն Բաղամյան։ Չեր մեղադրական ճառից ես այն տպագորությունը ստացա, որ դուք ձեր ֆիլիպիկները պետք է որ ուղղած լինեիք խավարամիտների դեմ ընդհանրապես։ Պահանջում էր լարակավական մի մարմին է, ձեր սեփական ազատ երկակաւության արտադրած յոթնգլխյան մի զե, որն իրականության մեջ գոյություն չունի, իհարկե, բայց որի դեմ կովում եք զուտ պրոմեթեուսյան կրակով։ Դուք տեսե՞լ եք ինչպես են վարժվում զինվորները թշնամուն սվինահարելու։ Հուկուփալասով լցված մի տոսուրակ են կախում և հրացանի սվինով ծակում հա՛ ծակում։ ահա՝ ձեր զումբ, ձեր թշնամին, ձեր յոթնգլխյան դրե։ Չեմ հիշում Գոնեքիշուտի հողմաղացները, որպեսզի շվիրավորվեք, թեև Գոն-Քիշուտը վերին աստիճանի անկեղծ և անպայման լավագույն ձգտումներով խելազարգած աղջիկ մի ասպետ էր։ Ես ձեզ ասում եմ, որ քույրս թեե, ճիշտ է, սիրում է ձեզ, բայց սարսափում է այդ սիրուց, որովհետև նրա կյանքը կապված է մի ուրիշ անձի հետ, որին թշվառացնելն իր խղճի դիմ է համարում։ Իսկ դուք ինձ պատասխանում եք, թե մենք բռնակալներ ենք, բարբարոսներ ենք, ոճրագործներ ենք, մենք ճնշել ենք նրա անհատական ազատությունը, նախապաշարել ենք նրա միտքը, հանել ենք նրա ուղեղն ու սիրու և տեղը մերը դրել և այլն։ Զեր այդ մեղադրանքները ցույց են տալիս, որ դուք չեք հասկացել և չեք կարողանում հասկանալ նրան, որին սիրում եք, ինդրում եմ իմ այս նկատողությանը լուրջ ուշադրություն դարձեք, պարոն Բաղամյան, որովհետև այստեղից է, որ ժագում են ձեր բոլոր թյուրիմացությունները։ Կարող եմ ձեզ հավատացնել, որ հայերիս մեջ շատ շեք գտնիլ այնպիսի աղջիկներ, որոնք մեծացած լինեն այնքան ազատ, որքան քույր։ Ես տասնհինգ, քույր չորս թե հինգ տարեկան էր, որին զրկվեցինք ծնողներից։ Քույր մեծացավ մորաբերության էր, որին դուք էլ ճանաշում էիք.

բավական կրթված և թեև մի քիչ խստաբարո, բայց վերին աստիւ-  
ճանի անկեղծ, արդար և արդարազատ: Գիտեք, որ նա անզավակի  
էր և քրոջ սիրում էր հարազատ մոր պես: Իսկ որտեղ սեր կա,  
այնտեղ չի կարող ճնշում լինել: Անշուշտ այն էլ գիտեք, որ քույրս  
ամուսնացավ իր ազատ կամքով, առանց որևէ կողմնակի ազդե-  
ցության. գոնք նրանից ես ոչ մի գանգատ չեմ լսել այդ մասին:  
Խսկ նրա ամուսնուն դուք, իհարկե, ավելի լավ եք ճանաշում, քան  
թե ես, որովհետև նրան ալզական եք՝ որքան իմացել եմ: Սան-  
թրույանին ես տեսել եմ մի քանի անգամ միայն, և նա ինձ վրա  
վատ տպավորություն չի թողել, թեև լուրջ մարդկանց ես առհա-  
սարակ չեմ սիրում: Միրում է նա իր կնոջը, թե չէ— այդ ես շգի-  
տեմ, բայց որ անպայման ազատություն է տվել նրան— դրա  
ապացույցը կարող է լինել այն, որ նա տարվա մեծ մասը զրեթե  
դուրսն է անցկացնում և ոչ մի խնամակալ չի կարգել կնոջ վրա,  
բացի իր պառավ մորից, որն իր բարությամբ ու միամտությամբ  
կարող է մրցել նույնիսկ հրեշտակների հետ: Եթե դուք, այս բո-  
լորից հետո, քրոջ մեղադրելու լինիք այն բանում, թե նա, այ-  
նուամենայնիվ, դաստիարակվել է միակողմանի ուղղությամբ,  
այդ սխալ կլինի, որովհետև նա սովորել է միւնույն դպրոցում,  
ինչ որ ձեր ազատամիտ օրիորդ Հեղինե Սոլիկյանը և նրանք միշնէ  
օրս էլ, կարծեմ, շատ մտերիմ ընկերութիւններ են: Ինչ վերաբե-  
րում է մեր հասարակությանը, որին դուք մեղադրեցիք, ինչ բան  
է մեր հասարակությունը: Մեր հասարակությունը— այդ ես եմ,  
այդ դուք եք, այդ նասիրյանն է, այդ օրիորդ Սոլիկյանն է, իսկ  
մենք ամենքս, կարծեմ, ինչ ուզում եք՝ ենք, նույնիսկ նիշիլիստ  
և անարիխիստ, բայց ոչ երշեք ավանդապահ, այնպես որ մեզ  
նմաններից կազմած մի հասարակություն, եթե որևէ աղդեցու-  
թյուն ունենար քրոջ վրա, այդ ազդեցությունը պետք է որ ձեր  
ցանկացած ուղղությամբը լիներ, բայց ոչ երշեք հակառակը:  
Ուրեմն, ինչպես տեսնում եք, պարուն Բաղամյան, այստեղ դաշտ-եր  
չեն եղել և չկան, ինչպես երևակայում եք դուք: Եթե մի դուք եղել  
է, այն էլ ազդեցություն ունենալու ամենազորեղ մի գրավակա-  
նով, այդ դուք եք եղել միայն, բայց դուք էլ ոչինչ չեք կարողացել  
անել: Ինչո՞ւ: Որովհետև, կրկնում եմ, դուք չեք կարողացել ճանա-  
շել նրան, որին սիրում եք, ուստի և կամ չեք նկատել, կամ ուշա-  
դրության չեք առել այն ահագին տարբերությունը, որ կա ձեր և  
քրոջ միջև: Քույրս իր բնավորությամբ և աշխարհայացքով քրիս-

տոնյա է, դուք հեթանոս նրա կուլտը հոգին է, ձերը՝ նյութը նա  
պատրաստ է զոհելու իր անձը մերձավորի համար, դուք մերձա-  
վորից զոհ եք պահանջում ձեր անձի: Համար: Եվ ահա այս երկու  
ծայրերի բախումից է առաջացել այն տրագեդիան, որի պատճառ-  
ները դուք ուզում եք որոնել դուք-երի մեջ: Գալով մասնավորապես  
ինձ, կարող եմ հավատացնել ձեզ, որ ես ոչ մի ազդեցություն չեմ  
ունեցել և չունիմ քրոջ վրա, որովհետև տարիներ են անցել, որ  
նրա երեսը չեմ տեսել, նույնիսկ, խոստովանում եմ հանցանքս,  
շատ անզամ ամեննին չեմ հետաքրքրվել նրանով, այլ կյանքիս  
մեծ մասն անց եմ կացրել ծննդավայրից հեռու, մենակ, անկախ,  
ուսման հետեւ ընկած, նախ մեր երկրում, հետո Եվրոպայում,  
ուր, ի դեպ, հիշո՞ւմ եք, եկել էիք դուք և հարյուր ֆրանկ փող  
առաք ինձնից:

Բաղամյանը ձեռքը խփեց ճակատին՝ հանկարծ անախորժ մի  
բան հիշողի նման և արագորեն դարձավ դեպի Վահանը:

— Մի՞թե դեռ ես չեմ վճարել իմ պարտքը, — հարցրեց նա:

— Հարկ չկա շտապելու, դեռևս վեց տարի է միայն անցել:  
Բաղամյանը շտապով մոտեցավ գրասեղանին, բաց արեց  
արկղիկներից մեկը, միջից հանեց մի կույտ թղթադրամներ և  
դողացող ձեռքերով սկսեց համարել:

— Ինչո՞ւ հինգ սկզբից չեք ասում, թե եկել եք ձեր հարյուր  
ֆրանկը պահանջելու և ոչ թե... Ահա՝ շնորհակալ եմ, վերցրեք և  
հեռացեք:

Նա սեղանի ծայրին դրեց երեսունհինգ ոուբլի, մնացած փողը  
շպրտեց իր տեղը, արկղիկն ուժգնորեն փակեց և լի արժանա-  
պատվությամբ հեռացավ նորից դեպի լուսամուտը: Այժմ, կար-  
ծես, միանգամից թեթևացած զգաց իրեն այն անզոր կատաղու-  
թյունից, որ միշնէ այժմ խեղում էր նրան:

Վահանը կծու-հեգնական ժամանակակից երկար նայեց նրա հետեւ-  
վից, հետո անվրդով մոտեցավ գրասեղանին, սիզարը դրեց բե-  
րանը, թղթադրամները վերցրեց և սկսեց համարել: Համարելուց  
հետո նայեց Բաղամյանին և հարցրեց:

— Դուք այս կուրսով՝ հաշվեցիք, թե հենց այնպես: Այսօրվա  
կուրսով... (նա վերցրեց գրասեղանի վրա դրված այդ օրվա մի  
լրագիր, նայեց բորսային, հետո առավ մատիտը և սկսեց հաշվել  
նույն լրագրի լուսանցքի վրա): Այսօրվա կուրսով հարյուր ֆրանկն

անում է ճիշտ երեսունհինգ ոռորի քառասունհինգ կոպեկ։ Զէ՞իք բարեհաճիլ արդյոք պակասը լրացնել։

Բաղամյանը երեք մատը մեքենայաբար կոխեց ժիլետի զըրպանը, հանեց մեջն եղած բոլոր փողերը— մի քանի հատ սպիտակ ու սև դրամներ— և շպրտեց Վահանի կողմը։ Դրամներն ընկան և գլորվելով ցրվեցին հատակի վրա։

Այս բանը կատարվեց այնքան արագ ու անակնկալ, որ Վահանը սկզբում չհասկացավ, թե ինչ պատահեց. Հետո զօաց, որ բոլոր սառնասրտությունը կորցնում է և ձեռքերի մկանունքները լարվում են սարսափելի ուժգնությամբ։ Նա վայր դուեց թղթագրամները, սիգարը զգուշորեն դրեց սեղանի ծայրին և դիմեց դեպի թաղամյանն այնպիսի ժանր ու հաստատուն քայլերով, որ կարծես բրոնզից ձուլված արձան էր քայլում։ Նույն վայրկյանին բնադրական վախով շուր եկավ դեպի նա թաղամյանը և ակամա պաշտպանողական դիրք բռնեց, պինդ կպելով լուսամուտի տախտակին։

Բայց Վահանը հանկարծ կանգ առավ, նայեց նրա սարսափահար աշերին և ժպտաց։

— Խոսք չկա, գեղարվեստական շատ ոիբուն ձերով եք արտահայտում ձեր արհամարհանքը, — ասաց նա։ — Դրամները շըհանձնել ուղղակի պարտատիրոջ ձեռքը, այլ... Ես ձեզ բարեկամաբար խորհուրդ եմ տալիս, որ այդպիսի ձեւը երբեք չգործադրեք ձեր լեպերի մեջ, որովհետև դրանք նույնքան հակագեղարվեստական կլինեն գեղեցիկ գրականության մեջ, որքան վտանգավոր են իյանքի մեջ։ Հավատացած եմ, որ այս րոպեին դուք լիովին զգում եք այդ, ուստի վերջացնենք այս տիտուր միշադեան այսպես...»

Նա մոտեցավ նախասենյակի դռանը, բաց արեց և սկսեց կանչել։

— Կիրակո՞ս, Մարտիրո՞ս, Սերո՞բ, Քերո՞բ։

Ներս վագեց ծառան ինչ-որ ծամելով և մտնելիս կուլ տվեց շտապով։

— Անունդ ի՞նչ է, — հարցրեց Վահանը։

— Խաչի։

— Խաչի, այս րոպեիս ջիրիցս մանր փող թափվեց. էգուց տունը որ սրբելու լինես, հավաքիր, քեզ լինի։

— Հըմի կը հրվաքեմ, — ասաց ծառան, աչքն ուրախությամբ՝ ման ածելով հատակի վրա։

— Զէ, էգուց, հիմա զնա։

Ծառան կամաց դուրս գնաց, աշքը չհեռացնելով հատակից Վահանը մոտեցավ գրասեղանին, ծոցից հանեց իր ահագին թղթապանակը, երեսունհինգ ոռորին մեջը դրեց, թղթապանակը նորից ծոցը կոխեց և վերցրեց սիգարը։

— Ես ձեզ չեմ մեղաղում, — ասաց նա։ — Պարտքի, մանավանդ հնացած պարտքի հատուցումը միշտ անախորժէ լինում։ Բայց կարող էիք և շվճարել. Ես ձեզ շտիպեցի։ Դուք կամեցաք ինձ վիրավորել և քիչ մնաց, որ հասնեիք ձեր նպատակին, թեև այդ բանը երեսունհինգ ոռորուց շատ ավելի թանկ կնսուեր ձեզ... Բայց ես ավելի լավ եմ համարում վիրավորելու տեղ շնորհակալ լինել ձեզնից, որ, վերջապես, վճարեցիք ինձ հասանելի գումարը, որից վաղուց արդին ձեռք էի վերցրել. Այս էլ պետք է խոստովանեմ, որ չնայելով քիչ մնաց ինքս ինձ կորցնեի, դուք ինձ վրա շատ լավ տպավորություն թողիք. Դուք լիովին ապացուցեցիք, թեև մի քիչ ոչ սիրուն ձեռվ, որ պատվասեր մարդ եք, իսկ պատվասեր մարդկանց չի կարելի շարգել։ Ես ձեզ հարցում եմ։

Բաղամյանը լսում էր նրան կատարելապես ապշած և չէր հասկանում, թե ինչ է ասում նա այդքան երկար և այդքան հանգիստ ու անվրդով ձայնով։ Նա միայն տեսնում էր իր առջև սարի պես կանգնած հսկայական մի մարմին, մի ժպտուն շաղ դեմք և հաստ մատների մեջ մի հաստ սիգար, որի ծուխը կամաց վերև էր բարձրանում և սենյակի օդն ապականում անտանձի ծանր հոտով։ Նրան թվաց, թե այդ անտանելի հոտն է պատճառը, որ ինքն այդպես ինեղդովում է։

— Պարոն, մի՞թե դուք մտադիր շեք այս գիշեր ինձ հանգիստ թողնելու, — հարցրեց նա զարմացած։

— Շատ ցավում եմ, պարոն Բաղամյան, որ իմ հեռանալուց հետո էլ շպիտի կարողանաք հանգստանալ։ Դուք հենց սկըզբից սիսալ տոն բռնեցիք. սկսեցիք բարձր նոտերից և հենց սկըզբումն էլ ձեր ձայնը խզվեց. իսկ այժմ, երբ դուետը դեռ շենք վերցրել, դուք արդեն հոգնել եք, նշանակում է ծանոթ շեք վիճականության ձայնագրությանը։

Բաղամյանն այլևս ոչ մի խոսք շարտասանեց և վճռական քայլերով դիմեց դեպի հարեւան սենյակի դուռը։

— Ո՞ւր եք զնում, — հարցրեց Վահանը և իր հսկայական մարմնով փակեց նրա ճանապարհը:

Բաղամյանը կանգ առավ և նայեց նրա փորին այնպիսի մի ատելությամբ, որ եթե ձեռքին դաշույն ունենար, կտար փորոտիքը կթափեր:

— Մի՞թե ես աղատ չեմ իմ տանը, — հարցրեց նա, զգալով, որ չըային դողը նորից բռնում է իր մարմինը:

— Դա ի՞նչ խոսք է, պարոն Բաղամյան. ձեր տան մեջ դուք ինքնակալ թագավոր եք: Բայց այս բանը պետք է վերջացնե՞նք թե ոչ:

— Մենք արդեն վերջացրինք:

— Փողի հաշի՞վը: Այո, վերջացրինք: Բայց ա՞յն, որի համար եկել եմ:

— Ես ձեղ ասացի, որ ձեր միջամտությունը չեմ բնդունում: Հեռ՝ մի եք, չեմ ընդունում: Իսկ եթե ուզում եք ֆիզիկական ուժ գործ դնել ինձ վրա այստեղ, իմ տան մեջ, կարող եք. ես ձեղ արգելք չեմ լինիլ:

— Է՛, պարոն Բաղամյան, այդ շեղավ. այդ բանը շպետք է ասեիք ինձ: Թո՞ւրք եմ, ինչ է, որ եկել եմ բռնելու ձեր կոկորդից, թե ուզեք-շուզեք՝ պետք է երկրպագություն տաք Մահմեդին: Ֆիզիկական ուժու որ ուզենայի գործ դնել, գործ կդնեի այն ժամանակ, երբ դուք կատարելապես իրավունք տվիք ինձ այդ բանի համար՝ դրամներն օդային ճանապարհով ուզղելով դեպի ինձ: Բայց տեսաք, որ ես զսպեցի ինձ, ուրեմն էլ ինչի՞ց եք վախենում:

— Շատ սխալում եք, որ կարծում եք, թե վախենում եմ: Ես միայն ուզում եմ հասկացնել ձեզ, որ դուք իրավունք շունիք խառնը վելու այս գործին:

— Պարոն Բաղամյան, մի՛ համառեք, թե չէ բանը որ համառությանը գա, ես ձեղ հավիտյան հանգիստ չեմ թողնիլ: Բայց ես չեմ ուզում ձեզ պես համառել և, իբրև բարեկամ, ասում եմ ձեզ, որ եթե քրոջիցս ձեռք շվերցնեք, մեծ աղետ կբերեք... ձեր գլխին:

— Այդ իմ գիտենալու բանն է:

— Հա, իհարկե: Բայց եթե այդ աղետը բերեք և նրա՞ գլխին:

— Այդ էլ թող ծանրանա իմ խղճի վրա:

— Բայց այդ շատ քիչ չի՞ լինիլ...

— Այդ այնքան շատ կլինի, որ դուք հասկանալ անգամ չեք

կարող...

— Դուք կարծո՞ւմ եք: Շատ բարի: Թող ձեր ասածը լինի: Այժմ ես հանգիստ կթողնեմ ձեզ: Բարի գիշեր: Ես կատարեցի իմ պարտքը:

— Եվ Վահանը լայն ու հաստատուն քայլերով դուրս գնաց: Միերկու րոպեից հետո Բաղամյանը լսեց նրա ձայնը ներքեց, փողոցից:

— Խաչի, փողերը հավաքես, հա՛, մոռանաս ու!

— Էսա հվաքելու եմ, աղա, — լսվեց ծառայի ձայնը:

Կառքը շարժվեց և անիվներն ահագին դղրդյուն բարձրացրին քարած փողոցում զիշերային անդորրության մեջ:

Սառան ներս պրծավ, բայց նույն րոպեին էլ քարացավ, դեմ առ դեմ հանդիպելով տիրոջ վառված աշքերին:

— Դո՞ւրս կորիր, — հրամայեց Բաղամյանը:

Սառան տեղից անգամ շշարժվեց. ապուշ էր կտրել:

Բաղամյանը բռնեց նրա ուսերից, շուր տվեց և ձեռքերի ամբողջ թափով դուրս շպրտեց նրան նախասենյակ:

— Եթե դու կհամարձակվես այս փողերից մի կոպեկ անգամ վերցնել, գլուխդ կջախչախեմ, — ասաց նա: — Էզուց հավաքիր և տար իրեն տուր. տեղը կասեմ: Ես քեզ ուրիշ փող կրախչեմ, — ավելացրեց նա ավելի հանգիստ ձայնով և դուրս վակեց:

## XII

Նա մոտեցավ լուսամուտին և նայեց վերեւ: Երկինքը մութն էր. ոչ մի ասւող չէր երեսում: Օդն առաջվա պես ծանր էր ու հեղձուցիչ: Փողոցը լուս էր: Հեռվից բավական որոշակի լսվեցին քաղաքային տան ժամացույցի հատու զարկերը: Բաղամյանը սկսեց համարել մեքենայաբար: Ժամը տասնմեկն էր:

Մի թեթև շրջուն գրավեց նրա ուշադրությունը, և նա շուր եկավ ակամա: Հարկան սենյակի դուրը բացվեց, և ներս մտավ մի կին ասեղնագործ մի սև շալ զլխին, որի մեջ երեսում էին աշքերն ու քիթը միայն: Կինը մտավ կամաց և շալը վերցրեց գլխից: Բաղամյանը հանկարծ ետ ընկավ, և ձեռքերով ամուր բռնեց լուսամուտի տախտակը: Նրա առջև կանգնած էր Մանեն բարձրահասակ և նիշար:

Մանեն նախ նայեց շուրջը, հետո նրան և հարցրեց.

— Գնա՞յ:

— Գհաց, — արձագանքեց թաղամյանը և մտածեց. «Իհարկե, սա երազ է...»

Մանեն երկու ձեռքով ուղղեց մազերը, նստեց և նորից նայեց թաղամյանին: Նրա բոլոր շարժումների և հայցքի մեջ տարօրինակ հանգստություն էր հակատվում:

— Այսօր ես նրան ասացի նույնը, ինչ որ այժմ դուք ասացիք, — խոսեց նա վերին աստիճանի խաղաղ ձայնով: — Ես նրան ասացի, որ նրա համար հարյուր ֆրանկն ավելի մեծ արժեք ունի, քան թե... Նա անտանելի մարդ է, անտանելի մանավանդ այն ժամանակ, երբ ինքող կատաղում ես, իսկ նա հանգիստ ժպտում է, ծխում իր զգվելի սիգարը և ոչ մի խոսքով չի ընդհատում քեզ. իսկ երբ որ վերջացնում ես, այնպիսի քան է ասում, որ կարծում ես, թե չձ խայթեց: Երբ նա պաշտպանում էր ինձ ձեր առաջ, քիչ էր մնում դուրս գայի և ասեի, որ ես ես չեմ ընդունում իր միջամտությունը:

«Սա երազ է... անպատճառ երազ է, — մտքում կրկնում էր թաղամյանը, կարծես լուսամուտի տախտակից գամկած: — Այսօրվա գեղքից հետո սա ինձ մո՞տ... Անկարելի քան է...»

— Կառքը որ տեսա, մտա բակի դոնից: — շարունակեց Մանեն: — Սառան ասաց, որ մարդ կա ձեղ մոտ և բերեց ինձ այն սենյակը: Զայնից իմացա, որ նու է: Ուզում էի հեռանալ, բայց... զգրու մնացի և, եթե մի քիչ էլ շարունակեր, դուրս կգայի անպատճառ:

«Անկարելի քան է, անկարելի քան է...», — մեքենայաբար կրկնում էր թաղամյանը մտքի մեջ, աշքը լկարողանալով հեռացնել նրա անվրդով դեմքից:

— Ինչո՞ւ եք ինձ այդպես նայում, — հարցրեց Մանեն կամաց:

— Որովհետեւ... չեմ հավատում, թե այդ դուք եք:

Մանեն աշքերը վայր թողեց և նկատելի կերպով կարմրեց:

— Իրավունք ունիքու ես էլ չեմ հավատում, թե այս ես եմ, — ասաց նա ավելի ևս կամաց և, կարճ լուսթյունից հետո, ավելացրեց: — Այսօր ես վիրավորեցի ձեզ... Եկել եմ ներողություն ինդրելու:

Թաղամյանը հանկարծ պոկ եկավ լուսամուտի տախտակից, կարծես մի քան ուժեղ թափով առաջ նետեց նրան, բայց նա

առաջ գնալու տեղ դարձավ և լուսամուտից նայեց վերև, մութ երկնքին:

— Ես հասկանում եմ ձեզ, — ասաց նա: — Ուզում եք հասկացնել, որ ես ներողություն խնդրեմ ձեղնից:

Մանեն նայեց նրան զարմացած:

— Ի՞նչ բանի համար:

— Այն նամակի...

— Բայց չէ՝ որ դուք չեք այն նամակի հորինողը: Թաղամյանը դարձավ դեպի Մանեն և նայեց նրան մոալ հայցքով:

— Մի՛թե դեռևս կարծում եք, թե ես եմ, — հարցրեց նա խուզ ձայնով:

Մանեն վեր թռավ տեղից. շախ ընկավ նրա ոտների տակ:

— Ոչ, աստված վկա, ո՛չ, թաղամյան, — կանչեց նա եռանդով: — Ճիշտ է, այսօր ես ձեզ ասացի այդ բանը, բայց այն բոպեին հաշիվ լէի տալիս ինձ, թե ինչ եմ ասում, թե որքան խոր վիրավորանք եմ հասցնում ձեղ այդպիսի մի մեղադրանքով: Ես շափաղանց զգայուն եմ, շատ շուտ եմ բորբոքվում, երբ տեսնում եմ, որ շոշափել են զգացումներս, թեեն շուտով էլ զգաստանում եմ, երբ տեսնում եմ, որ ես էլ շափն անցել եմ: Այն բոպեին, երբ վիրավորեցի ձեզ, գրեթե նույն բոպեին էլ զգացի, որ անարդար կերպով եմ վարվել ձեզ հետո: Եվ իմ ասած խոսքերի բոլոր ծանրությունն ավելի ու ավելի զգացի այն ժամանակ, երբ դուք արդեն գնացել էիք: Չեք կարող երեակայել, թե ամբողջ օրն ինչպես տանջվել եմ այդ գիտակցությունից: Վերջն այլևս չկարողաց դիմանալ և... ինչպես տեսնում եք եկել եմ ներողություն խնդրելու:

— Այդ մի՛ ասեք, Մանե, մի՛ ասեք այդ, — բացազնեց թաղամյանը: — Ես էլ, աստված միայն գիտե, թե ինչպես եմ անցկացրել ամբողջ օրը, բայց մի բոպե անգամ չեմ կասկածել, թե ես արժանի չեմ եղել ձեր խստությանը, իսկ այժմ առավել ևս զգում եմ, որ հանցավոր եմ ձեր առաջ: Նամակը գրված է այն ձեռով, որ խամ մարդը ոժվար թե չհավատա: Բայց բանն այն է, որ ես ճանաշում եմ ձեր ամուսնուն և գիտեմ, որ նա այդպիսի բաներ անող չէ և չի կարող անել: Այդ բանին ես հաստատ համոզված էի և այն էլ գիտեի փորձով, որ խմբագրությանն ուղղված նամակները մեծ մասամբ գրված են լինում անձնական հաշիվներից, հետևաբար սուտ ու շինծու են լինում: Բայց և այնպես այդ

բոլորը գիտենալով հանդերձ, ես թույլ տվի ինձ ձեր ամուսնուն ձեր  
առաջ անվանելու անբարոյական և հղեց և իբրև ապացուց ցուց  
տվի ձեզ մի նամակ, որի ստությանն առաջուց համոզված էի,  
կնշանակի՝ ես ուղղում էի ձեզ խաբել: Սա այնպիսի՞ մի գարշելի  
վարմունք էր իմ կողմից, որ եթե զուց ներեք, ես ինքս ներել շեմ  
կարող երբեք:

Բաղամյան ինքն իր ղեմ զդաշած զայրագին նողկանքով ղեմը շրջեց Մանեից, կարծես ամոթահար, և ավելացրեց.

— Ես վատ, անաղնիվ, ցած մարդ եմ...

### Մանեն արագորեն մոտեցավ նրան:

— Իզուր եք ձեզ այդքան նվաստացնում, — շնչաց նա զգացված: — Դուր վատ չեք, ո՛չ, չե՞ք: Եթե լինեիք, ես այդ վաղուց կզգայի: Լսո՞ւմ եք... լսո՞ւմ ես, Աշոտ, կզգայի, որովհետև անկարելի է, որ վատովթյունը շղգամ:

— Ինչպես զգացիք այսօր...

— Այսօր ուրիշ բան էր: Այսօր ես շափազանց վրդովկած էի, որովհետև նամակն այնքան անխիղճ գրպարտություն էր բովանդակում, որ անկարող էի չվրդովկել: Քո կարծեցյալ վատությունը չէ պատճառը, որ ցուց տվիր ինձ այն նամակը, այլ են իմ, ես, չէ պատճառը, որ ցուց տվիր ինձ այն նամակը, այլ են իմ, ես, որ այնքան սիրում եմ միենույն ժամանակ այսքան տանջում եմ քեզ իմ դժբախտ բնավորության պատճառով: Քո վարմունքն ես համարում եմ խելացնոր մի քայլ, որ դու արիր անշուշտ հուսահատական թյան եկա, որ դու այն նամակը դարձյալ ցուց չեմ տալ ինձ, եթե պատասխանն այնքան վճռական լիներ: Այդպես է, թե ոչ Ասա: Նայիր ինձ:

Բաղամյանը նայեց նրա աշբերին— թախծալի աշբերին,  
որոնք, սակայն, այդ րոպեին շոյում, փայփայում էին նրան այն-  
պիսի մի քնքանքով, որպիսին Բաղամյանն առաջին անգամն էր  
տեսնում Մանեի աշբերի մեջ; Նա ակամա ծունկ խոնարհեց այն-  
քան տարօրինակ և այնքան սիրելի այդ կնոջ առաջ, առավ նրա  
ձեռքը և շրթունքները հպեց այդ նիհար, քնքուշ ձեռքի վրա ան-  
հուն երանությամբ, սրբազն երկյուղածությամբ, այնպես՝ ինչ-  
պես հավատացյալ մարդը համբուրում է հրաշագործ մի սուրբ  
պատկեր:

Մանես նստեց, թեթևակի խոնարհվեց նրա գլխի վրա և ազատ

Ճեռքով, կարծես ինքնամոռացության մեջ, սկսեց շոշափել ու շոշափել նրա փափուկ երկայն մազերը:

Այդ լուս տեսարանը տևեց մի երկու րոպե։

Վերջապիս Բաղամյանը բարձրացրեց զլուխը և նայեց վեր-  
կից իրեն նայող նույն քնքշանքով լի թախտալի աշքերին:

— Մինչև այժմ ես քիզ չեի ճանաշում.— ասաց նա աղօթողի  
պես շշնչալով,— իսկ այժմ ինձ թվում է, թե ճանաշեցի միանգա-  
մից, եղբայրդ ասում էր, թե դու քրիստոնյա ես: Ոչ, դու ավելի  
ես, քան քրիստոնյա: դու սուրբ ես, դու հրաշագործ ես, դո՛ւ իմ կուռքն  
ես: Ես անհավատ մարդ եմ, բայց ոչ մի հավատացյալ մարդ չի  
կարող զգալ այն, ինչ որ ես եմ զգում այս րոպեին, այսպես, առա-  
ջը շոքած, աշքերիդ նայելիս, այս խորհրդավոր ժամին, այստեղ,  
մենակ, իմ տան մեջ, այսօրվա խոսակցությունից հետո... Ես ոչ թե  
սիրում, այլ պաշտում եմ քեզ... պաշտո՞ւմ... պաշտում... Տուր  
ինձ, տուր ինձ ուրիշ ավելի զորեղ մի բառ, որի մեջ զնեմ հոգիս  
և վերջին շնչիս հետ փշեմ ոտներիդ առաջ...

Բաղամյանը գրկեց Մանեի ոտները և սկսեց համբուրել նրա ծնկները չերմորեն և կրքոտությամբ...

Մանեն հանկարծ նայեց լուսամուտին և փորձեզ հեռացնել  
նրա ձեռքերը:

— Բավական է... վեր կաց, — շնչաց նա:

Բաղամանն ավելի պինդ կպավ նրա ծնկներին

— Ոչ, թող մնամ այսպես... Թող պաշտեմ քեզ... ևս ուզում  
եմ մեռնել ոտներիդ առաջ... այսպէս... այսպէս...

— Աղաշում եմ, վեր կաց: Լուսամուտը բաց է, մեզ նայող կարող է լինել:

— Թեկուզ ամբողջ աշխարհը նայի: Դու ի մն ես, ի՞մն ես,  
ի՞մն ես... Ես կճղեմ կուրծքս, կնստեցնեմ քեզ հոգուս մեզ և հո-  
գուս հետ էլ կարձակեմ...

Մասնեին թվաց, թե երկու օձ երկաթի օղակներով փաթաթվում են իր կռների տակ և սարսափելի ուժով ներքև են քաշում իրեն։ Միևնույն ժամանակ իր առաջ տեսավ տարօրինակորեն փայլող երկու աւշեր և զեմքի վրա զգաց մի տաք շնչառություն ծանր ու հատու։ Այդ բոլորը համ անհունորեն քաղցր, համ սարսափելի էր նրա համար…

Հանկարծ նա բռնեց Բաղամյանի ցնցողաբար սեղմող ձեռ-

քերից, աւաբօրինակ բուռն ուժով դեն հրեց նրան, վեր թոավ տեղից և արագորեն դիմեց գեպի այն դուռը, որտեղից մտավ:

Բաղամյանը մի ոստյոնով ցատկեց չոքած տեղից և վազեց գեպի նա:

— Մանե...

— Զամարձակլե՞ք մոտենալ ինձ,— հրամայեց Մանեն, արագորեն դառնալով:

Բաղամյանը կանդ առավ և կատարյալ հուսահատությամբ նայեց նրա հրացայտ աշքերին:

— Մանե... ի սեր աստծո... Խնդրում եմ, աղաչում եմ, մի գնաւ ես զպապեմ ինձ, ես կրաշիմ ահա այն անկյունը, կուշ կգամ ծեծված շան որիս և ամենախն չեմ մոտենալ քեզ, միայն մի գնաւ, կա ց...

Պաղատագին հաւացքով նա փորձեց առնել Մանեի ձեռքը, բայց Մանեն թուլ շտվեց, շալը թոցրեց հատակից, ծածկեց գլուխին և նորից դիմեց գեպի գուռը:

Բաղամյանին թվաց, թե խելքը կորցնում է: Ինքն էլ շասկացակ թե ինչպես՝ կորեց Մանեի առջեր և ամբողջ մարմնով կապեց գուռը:

Մանեն նայեց նրա խելակորուս աշքերին և ակամա ետ ընկավ սարսափահար:

— Ի՞նչ եք ուզում ինձնից,— շշնչաց նա:

— Ուզում եմ, որ մնաս. — ասաց Բաղամյանը ծանր շնչելով և մեղքի բոլոր ուժով սեղմվեց դուռնու:

— Չոռո՞վ եք ուզում պահել:

— Ալո՛,— շեշտեց Բաղամյանը, պղտորված աշքերը փայլեց-նելով նրա վրա և շրթունքները կծոտելով:

Մանեն նայում էր նրան համ սարսափած, համ ապշած: Նրան թվում էր, թե իր ճանաշած այնքան սիրելի, այնքան խոնարհ, այնքան բաղաքավարի Բաղամյանի տեղ իր առջի տեսնում է այժմ բոլորովին անծանոթ, կատարյալ վայրենի մի մարդ. որի լոկ տեսքը զարհուրանք էր ազդում նրան.

— Բաղամյան, հասկանո՞ւմ եք ինչ եք անում,— նորից շշնչաց նա:

— Լիովին, ես ուզում եմ որ զու մնաս եվ պետք է մնաս...

— Բոնություն եք ուզում գործ դնել:

— Գործ կդնեմ, եթե շմնաս... անպատճառ գործ կդնեմ, եթե շմնաս քո կամքով... եվ մեղավորը ես չեմ լինիլ, որ կինես, որովհետեւ... ինչո՞ւ ես եկել ինձ մոտ... ներողություն խընդրելու համար ուրիշ ճանապարհ կար. կարող էիր նամակ գել, եթե ինձ հասցրած վիրավորանքի համար հանցավոր էիր զգում քեզ... Բայց շպետք է գայիր ինձ մոտ... եկել ես, պետք է մնաս...

— Բաղամյան, ուշքի եկեք,— այս անգամ գրեթե ճշաց Մանեն:

— Անհոգ կաց, ուշքս գեռես ոլլիս է, բայց շուտով կկորցնեմ, եթե շմնաս քո կամքով... Կարծում ես, ևս չեմ հասկանում ինչ եմ անում: Շատ լավ հասկանում եմ, բայց ուրիշ հնար շունիմ, որովհետեւ... Կրկնում եմ, ինչո՞ւ ես եկել ինձ մոտ... այն էլ այս ժամին... Ի՞նչ գործ ունիս զու այստեղ... իմ տանը... մենակը... գիշերով... այս էլեկտրականացած օդի մեջ, որից, ահա, շնչառապ եմ լինում ես... Ինչո՞ւ թույլ տվիր, որ գրեթե քեզ՝ համբուրեմ ծնկներդ... Առաջ երբեք թույլ չես տվել... Այս առաջին անգամն էր... Իսկ ես ամբողջ երեք տարի է, որ ցանկանում եմ քեզ, միմիայն քեզ, աշխարհիս բոլոր կանանց մեջ քեզ... Ես մարդ եմ, քար չեմ... Դու բորբոքեցիր ինձ, վառեցիր իմ ամրողց արյունը և փախչում ես... Չեմ թողնիլ... Տեսնո՞ւմ ես, գերբնական ուժ եմ գործ զնում, որ զսպեմ ինձ, շապանանամ, որովհետեւ զու այստեղ ես և անմատչելի... Ես սիրում եմ քեզ, բայց ատում եմ քո առաքինությունը, որ ինձ այսքան չարչարելուց հետո, այժմ իսկ, այս վճռական ժամին ուզում է արգելք լինել իմ երջանկությանը... Ես կիսեմ քեզնից այդ առաքինությունը, կթավալեմ ցեխի մեջ, եթե կամովին շրամարվես նրանից... Ես կանեմ ամեն բան, կանգ չեմ առնիլ ոչ մի բանի առաջ, նույնիսկ սոսկալի մի ոճագործ կգառնամ, եթե շմնաս... Այժմ կամ այլևս երբեք... Լսո՞ւմ ես, այժմ կամ այլևս երբեք... Դու իմը պիտի լինիս, իմը, այժմ իսկ, այս բոսելն, իմը անպատճառ և ինչ զնով ուզում է լինի, նույնիսկ իմ մահու զնով, նույնիսկ քո մահու զնով... Իմացիր, որ եթե նույնիսկ մեռնես իմ ձեռքերի մեջ, ես կտիրապետեմ քո դիակին:

Մանեն, սարսափից իրեն կորցրած, նայեց շուրջը նրա աշքովն ընկավ նախասենյակի գուռը, և նա վազեց այն կողմը: Բայց Բաղամյանն այստեղ էլ փակեց նրա ճանապարհը: Նա կատարելապիս նման էր խելագարի, աշքերը լցվել էին արյունով և

նայում էին անախործ սղտոր փայլով. երկայն մազերը թափվել էին ճակատի և ականջների վրա ցան ու ցիր, դեմքը կարմրել և ժածկվել էր ճարպոտ բրտինքով: Նա գրիթե շնչառապատ էր լինում ծանր շնչելուց և դուռն ի վեր ցից կանգնած՝ ամբողջ մարմնով դողում էր ուժգին տենդով բռնված մարդու ակա:

— Զեմ թողնիլ, որ գնաս,— ասում էր հեալով: — Քեզ էս, ինձ էլ կորթեմ, և չեմ թողնիլ, որ գնաս... Վճռված բան է. ես պիտի կործանեմ քեզ քո առաքինության համար և քեզ հետ միասին պիտի կործանեմ ինձ...

Մանեն երկու ձեռքերի ափերը սեղմեց քունքերին, դեմքն առաջ տարավ դեպի Բաղամյանը և, շոած աշքերով նայելով նրան, շշնչաց այս անգամ ոչ այնքան սարսափած, որքան ծայրահեղորեն ապշած:

— Բաղամյան, մի՞թե այդ դուք եք... դո՞ւք...

Բաղամյանը ցնցվեց և ապա անշարժացավ: Երկար ժամանակ նա անմիտ հայացքով նայում էր Մանիի շոած աշքերին ծանր մղձավանշից արթնացողի պես, հետո դանդաղորեն ետ քաշեց երեսին ցրված մազերը, և երկարատև ծանր մի հառաշանք նկատի կերպով բարձրացրեց ու ցածրացրեց նրա կուրծքը: Նրա վերին աստիճանի լարված զղերն արագորեն թուլացան և գլուխը կախ ընկավ կրծքին: Առժամանակ նա կարծես ուժ շուներ այլևս ոչ խոսելու և ոչ տեղից շարժվելու: Հետո կամաց ետ քաշվեց, բաց արեց դուրս և, առանց գլուխը բարձրացնելու, շշնչաց ընկճված, ուժասպառ ձայնով:

— Գնացեք...

Մանեն ընազդաբար առաջ ընկավ և դուրս վազեց նախասենյակ: Սանդուղքից իջնելիս քիչ մնաց գլորվեր ներքեւ: Փողոցում տան բակից դուրս թուալ մի փոքրիկ շուն անախործ ծկլթոցով և բռնեց նրա փեշից: Բայց Մանեն գրիթե չզգաց այդ բանը և շանը երկար տեղ քարշ էր տալիս իր հետեւից: Շունը նրա փեշը բաց թողեց այն ժամանակ, երբ Մանեն մեքենայարար կանգ առավ, բռնեց փեշից և ձիգ տվեց: շունը գլորվեց և ետ փախավ ավելի անախործ ծկլթոցներով: Խսկ Մանեն շարունակեց վագել:

Գիշերը սաստիկ մութն էր, փողոցներն ամայի: Երկինքը ժածկված էր սև ամպերով և մերթ ընդ մերթ փայլատակում էր: Մանր, տաք, անշարժ օդը հագեցած էր էլեկտրականությամբ: Հեռվից ամպերի խուլ զոռոց էր լսվում:

—523—

Մանեն վազում էր առանց ետ նայելու նրան թվում էր մերթ թե փողոցները սաստիկ երկար են՝ թե տունը շատ հեռու է, թե ահա որտեղ որ է՝ պիտի ընկնի ճանապարհին վախից և հոգնությունից անշնչացած, և մերթ թե երազումն է կատարվում գիշերյային այդ ճանապարհորդությունը լապտերներով հազիվ լուսավորված ամայի փողոցներով, երկնքի վայրկենական փայլատափումների և սև ամպերի զարհուրելի որոտի տակ:

Հանկարծ նրան թվաց, թե մեկը վազում է հետեւից և կանչում է:

— Մանե՛, Մանե՛...

Նա սոսկումով կանգ առավ և ետ նայեց: Արագ քայլերով հասավ նրան Բաղամյանը:

— Մի վախենաք, ես եմ,— ասաց նա սաստիկ հեալով:

Մանեն ձայն անգամ չհանեց և նույն արագ քայլերով առաջ անցավ:

Բաղամյանը հետեւից նրան, նա լարել էր ոտների բոլոր ուժը, որ ետ շմնա Մանեից, բայց և այնպես Մանեն մի քանի քայլ միշտ առաջ էր վազում նրանից:

— Ինչո՞ւ եք վազում,— ասաց Բաղամյան: — Եթե այնտեղ ոչ շարեցի, կնշանակի այլևս ուշինչ շեմ անիլ: Ես ուզում եմ միայն անվտանգ տուն հասցնել ձեզ:

Մանեն դանդաղեցրեց քայլերը: Բաղամյանը հավասարվեց նրան, և այժմ նրանք առաջ անցան կողք-կողքի: Երկար տեղ նրանք քայլում էին լուս: Բաղամյանը վերցրել էր զինարկը և նրանք քայլում էր քրտնած ճակատն ու վիզը:

Երկինքը փայլատակում էր ավելի ու ավելի հաճախ և այն սաստիճան խիստ, որ փողոցի սալահատակն ու տների մութ զանգածածները լուսավորվում էին ցերեկի պես: Որոտն ևս մոտենում և վաճառք գույն հետեւ: Կարծես հսկայական մի գունդ հանսաստիկանում էր հետեւից: Կարծես հսկայական մի գունդ հանսաստիկանում էր հողոր ու մանր բեկորների վերածված՝ գոռզուկարծ պայթում և խոշոր ու մեծ տանիքի վրա:

— Երբ որ ձեռքս բարձրացրի և ուզում էի ապտակ տալ ձեր եղբորը, բայց լուսի, — խոսեց Բաղամյանը շունը ետ բերելուց հետո, — նա ասաց «բռավո՞» և ավելացրեց, որ եթե ես այդպիսի հետո, — նա ասաց «բռավո՞» և ավելացրեց, որ եթե ես աղամի վայրկյանին կարողացա զապել ինձ, կնշանակի, որ ես տղամի վայրկյանին կարողացա զապել ինձ, կնշանակի, որ որովհետեւ ուզում էր հասկացմարդ բառը շեշտեց, որովհետեւ ուզում էր հասկացմարդ եմ: Տղամարդ բառը շեշտեց, որովհետեւ ուզում էր հասկացմարդ եմ: Երավունք ուներ, որովհետեւ ես իսկանել, որ ես վախիկոտ եմ: Երավունք ուներ, որովհետեւ ես իսկանել,

—529—

պես վախկուտ եմ, Վախկուտ եմ վճռական վայրկյանին։ Մարդ նախ չպիտի գիմի վատ բանի, բայց որ զիմեց, պետք է մինչև վերջը գնաւ։ Թող անկումը կատարյալ լինի, այդ սունելի լավ կլինի։ Այլապես կիսաճանապարհին կանգ առնելով՝ բանը չի դժբառվի, վատությունը կմնա վատություն, և այլևս ոչ մի բանով, ոչ մի զջումով չես կարող վերականգնել քո նախկին բարի անունը։ Ամանը վայր ընկապ կոտրեց, և հաղար կոծկիր, այլևս չեմ կարող ամբողջացնել... Ես զեռ լավ չեմ ուշքի եկել. մտքերս ու զգացմունքներս խառնվում են իրար. շեմ իմանում ինչ եմ մտածում. ինչ եմ զգում։ Բայց մի բան այնպիս պարզ է ինձ համար, ինչպես երբեք. ես հրեշ եմ, սարսափելի մի հրեշ, որի մեջ ամենաքնքուշ, ամենանվիրական զգացումը լծորդվում է ամենակեղուոտ, ամենաբրիտ, ամենազգվելի բնազդի հետ... Սովորակը վարդի մեջ աղր է որոնում— սրանից էլ ավելի աննորմալ բա՞ն... Ես հիվանդ եմ, բարոյական հիվանդ, խիստ վատանգավոր հիվանդ... Այս ես չգիտեի, այս գիծը ես նոր գտա իմ մեջ... Եվ այս բանը առաջին անգամ զգացի այնտեղ... դռան մոտ... նույն այն վայրկյանին, երբ հարցրիք ապշար՝ «Մ'թե այդ գուք եք...»։ Դրժախտաբար, այդ ես էի... նոր հասկացա, որ ես էի... և այս բոպեին ի՞նչ չէի տալ, միայն թե այդ ես շինեի...»

Բաղամյանը լոեց և, խիստ հուզմունքի մեջ, ձեռքի ափով շփեց տաքացած ճակատը։

Մանեն բայլում էր նրա հետ կողք-կողքի, բայց նրանից մի քիչ հեռու պահելով իրեն։ Նա վայրկյան առ վայրկյան փակում էր աշքերը փայլատակումների ժամանակ և ուշի-ուշով ականջ դնում Բաղամյանի խոսքերին, որոնցից շատերը, սակայն, խանում էին որոտի ձայների մեջ։

— Այս, այսօրվա օրը, այս շարաբաստիկ օրը,— հառաշեց Բաղամյանը հողեկան ծանր տանջանքով!— Եթե՛ կարողանայի մոռանալ և մոռացնել տալ... Որ մտածում եմ, թե ինչքան բան և ի՞նչ կորցրի այս մի օրում նախ առավոտյան՝ ձեր տանը, հետո այժմ՝ իմ տանը... Այս ի՞նչ չար ոգի էր, որ եկավ փորձեց ինձ այսօր և խլելով ինձնից այն բոլորը, ինչ որ լավ էր և մաքուր, թողեց իմ մեջ միայն տիզմ և ապականություն... Ես ատում եմ ձեր եղբարը, բայց... չեմ կարող շարգել նրան, նա խելոք մարդ է, այնպես թափանցում է մարդու ներքինը... և շիտակ է, ամեն բան ասում է մարդու ճակատին։ Նա շատ բան ասաց ինձ, բայց

և շատ բան չասաց անշուշտ... Երեխ խնայում էր, ես այժմ կհամբուրեի նրա ձեռքն ու շրթունքները, եթե այս բոպեին մոտս լիներ, պինդ ապտակեր ինձ, այնպես պինդ, որ աշքերիցս կայծեր ցայտեին, և ասեր, որ ես... պի՛ զծ մարդ եմ, շո՛ն եմ... որ ես սրբությանը մոտեցել եմ անմաքուր ձեռքերով, պժգալի զգացումներով, գարշելի ցանկություններով... Մինչդեռ ես ա՛յդ չէի ուզում, երկինքը վկա, Մանե, ա՛յդ չէի ուզում։ Ես ուզում էի ձեզ դարձնել իմ կառւրան, իմ թեաթրիշեն, իմ Մադոննան... Օ՛, թո՛ղ կայծակ ընկնի զլիխս, եթե այսուհետեւ...

Նա հանկարծ լոեց զարհուրանքով, կանգ առավ և աշքերը փակեց ակամա։ Տեղնուտեղը քարացավ նաև Մանեն, բայց նա շիմացավ՝ աշքերը փակեց թե լոեց. միայն տեսավ, որ շրջակայշիմացավ՝ աշքերը լուսավորվեց արտասովոր կուրացուցիչ լույսով և այդ լույսն իսկույն էլ հանգավ, որից հետո փողոցն այնպես մըթնեց, որ Մանեին թվաց, թե ինքը հանկարծ կուրացամ։ Անշարժ օդի մեջ տիրեց սպասողական զարհուրելի անդորրություն, Մի օդի մեջ տիրեց սպասողական զարհուրելի հանկարծ այնպես ճայթեց, որ քանի վայրկյան հետո երկինքը հանկարծ այնպես ճայթեց, որ կարծես փուլ եկավ, և ամբողջ քաղաքը զրնզրնացաց ահաջնադղորդ ձայներով։ Ըստ երկությին, մոտիկ, շատ մոտիկ կայծակ ընկափ։ Մանեն մերենայաբար հայեց թաղամյանին, կարծես ստուգելու համար, թե կայծակն արդյոք նրա գլխին շընկա՞վ։ Բաղամյանը կանգնած էր գլուխը բաց, մազերը ցիրուցան և նայում էր երկընքին, զարհուրանքից կաշկանդված։ Եթեկտրականությամբ հաղեցած քին, զարհուրանքից կաշկանդված։ Եթեկտրականությամբ հաղեցած տաք օդի մի զով հոգ անցավ։ Անձրես մի խոշոր կաթիլ, սառն ու պինդ, դիպավ Մանեի ձեռքին, որով կղակի մոտ բռնած ու պիստի գույն շիտակ է մարդու ներքինը։ Նա ցնցվեց և հանկարծ առաջ նետվեց։

Բաղամյանն ուշքի եկավ այն ժամանակ, երբ Մանեն արդեն փախչում էր, նրանից բավական հեռացած։ Նա վագեց Մանեի հեռակեց։ Այժմ նա ոլինչ չէր մտածում և ոչինչ չէր ցանկանում։ Մտածում և ցանկանում էր միայն, որքան կարելի է՝ շուտ տուն հասցնի Մանեին, քանի հեղեղը չէր սկսվել։ Շուտով տուն հասնելու վրա էր մտածում նաև Մանեն, որ շնչառապան վաղում էր նրա առջեկից։ Տանից նա գուրս էր եկել այն ժամանակ, երբ սկսուր ու ժառաները քնած էին արդեն, գուրս էր եկել ժամանակ, դուրս փակել էր բանալիով և այդ բանալին այժմ շուտ-շուտ շոշափում էր

շրջագայեստի գրպանի մեջ, ստուգելու համար, թե խո չի՞ կորցրել:

Կարծես Հսկայական մի ձեռք ուժգին թափով կատրատված զեր էր քաշում սև ամպերի մեջ ըռպե առ ըռպե, և փողոցները, տները, ամեն բան՝ ինչ որ երեսում էր աշքին, լուսավորվում էին վայրկենական կուրացուցիչ լույսով: Երկիրը դողում և աճարկու արձագանք էր տալիս երկնքի սպառնագին որոտումներին: Անձրկի խոշոր կաթիլները հաճախացան և լսելի կտկացով զարկվում էին գետնին կենտ ու կունտ: Հեռվից լսվում էր ինչ-որ խոռվ շրջուն, երկի հեղեղն էր, որ մոտենում էր: Գետնից սկսեց բարձրանալ արեկից այրված փոշու ծանր հոտ, որից օդն ավելի ևս ծանրացավ:

Բաղամյանը նորից հավասարվեց Մանեին և աշքերը ման էր ածում չորս կոլմը, որ մի կառք գտնի, բայց ամայի փողոցներում շուն էլ չէր հաշում: Տների լուսամուտները փակված էին պինդ և շատ պատուհաններում ճրագ չէր երևում: Փողոցային լավտեր-ներն էին միայն, որ ցից-ցից կանգնած էին ազ ու ձախ մեկուսի և որբացած: Փողոցի անկյան մանրավաճառը շտապով փակում էր խանութը: Հարեւան փողոցից գոկուլով դուրս եկավ գլուխը ծածկած մի կառք և մտավ մյուս փողոցը: Բաղամյանը կանչեց, բայց կառապանը կամ լսեց, կամ լսելուն տվեց, կամ թե ուրիշ մարդ էր տանում: Նրանց կողքով արագաքայլ անցավ մի մարդ անձրեակալի տակ պատսպարված: Մի ուրիշ մարդ կանգնած էր տներից մեկի բակի դռան առաջ և ուժգին զարկում էր երկաթի մուրճը: Մուրճի հարվածները զորեղ արձագանք էին տալիս ներս՝ բակում և դուրս՝ փողոցում:

Իրենց փողոցի անկյանը Մանեն կանգ առավ:

— Ծնորհակալ եմ, ետ դարձեք. այժմս ես մենակ կղնամ, —  
ասաց նա արագ, շնչառապ և ուզում էր հեռանալ, բայց Բա-  
ղամյանը բոնեց նրա ձեռքից և պահեց:

Մի նոր ահագնադղորդ որոտ խլացրեց Բաղամյանի վերջին խոսքերը: Մանեն ձեռքը խլեց նրա ձեռքի միջից և շարունակեց վազել իրենց տան փողոցն ի վեր:

Բազմամյանը տեղնուածեղն արձանացավ և դիտում էր նրա հետից. Գիշերային խավարի մեջ Մանեփ մութ ստվերը տեսալ միայն մի-երկու անգամ երկնքի վայրկենական փայլատակումների ժամանակ, Այնուհետև այդ ստվերը հալվեց ձուլվեց խոլ խավարի հետ. Այլևս ոչինչ չէր երկում, երկում էր միայն փողոցի ծայրում վառված լապտերի պղտոր, թախծալի լուսը, որի մեջ կատաղի անձրևը միալար թեք գծեր էր թափում ներք շեշտակի:

XIII

Մի բան, որ սաստիկ դող զցեց Մանեի մարմինը, այդ այն էր, որ իրենց տան դիմացը գտնվող տան պատի և փողոցով անցնող հեռախոսի լարերի վրա լուսակի մի շերտ նկատեց: Այդ լուսան ընկնում էր իրենց տան հյուրասենյակի պատուհանից: Մի բոպե կանգ առավ ակամա և զգաց, որ ծնկները ծալվում են: Գողի՞՞ր են կանգ առավ ակամա և զգաց, որ ծնկները ծալվում են: Գողի՞՞ր են մտել արդյոք... ամուսի՞նն է վերադարձել անակնկալ... թե՛ պատահաբար իմացել են իր բացակայությունը և ոտի են կանգնել...

Մասն մայթից անցավ փողոցի մեջտեղը և սաստիկ թուլացած ստներով սկսեց առաջ գնալ խորդուբարդ սալահատակով, որի երեսն արգեն ծածկվել էր անձրևի գրերով: Երկուղով շուած աշքերը մի վայրկյան անգամ չէր հեռացնում լուսավորված պատուհանից, կարծես ուղում էր ստուգել, թե իր հնթագրություններից ո՞րն էր ճիշտ:

Մի տասը-քսան քայլ էր մնում, որ հավասարվեր իրենց տան  
դռանը, երբ լուսավորված պատուհանի առաջ, որի փեղկերը բո-  
լորովին բաց էին, մարզկային մի ուրվագիծ տեսավ. Ուրվագիծը  
կանգնած էր անշարժ և լուսի ֆոնի մեջ դրսից նմանում էր շի-  
նական ստվերի: Նա նայում էր դեպի գուրսու Կարմրավուն անփայլ  
մի կրակ վառվում և հանգչում էր նրա բերանին. ըստ երեսութիւն,  
մի կրակ վառվում: Մի քանի քայլ էլ առաջ գնալով, նա հան-  
ծխախոտ էր ծխում: Մի քանի քայլ էլ առաջ գնալով, նա հան-  
կարծ ճանաչեց պատուհանի մոտ կանգնած ուրվագիծը: Սկզբում  
շունչ առագ սաստիկ թեթևացած, հետո կատաղի մի զայրույթ լա-  
րեց նրա թուլացած մկանունքները: Նորից արագացրեց քայլերը և  
այն վայրկյանին, երբ դռան առաջ սալահատակից մայթն էր

բարձրանում, պատուհանի առաջ կանգնած ստվերը, ըստ երեսութին, տեսավ նրան և իր ամբողջ իրանով ներքև, դեպի փողոց խոնարհվեց:

— Մանե՞... այդ դու ե՞ս,— շշունչով կանչեց Վահանը երկարորդ հարկի բարձրությունից:

Մանեն շպատասխանեց, զղային արագությամբ գրպանից հանեց բանալին, դուռը բաց արեց, մտավ և բարձրացավ վերև միջանցքի իրեն ծանոթ մութ սանդուղքով:

Հյուրասենյակի դուռը նրա առաջ բաց արեց Վահանը՝ սիրալը բերանին:

Մանեն մտավ և գլխից թոցրեց անձրկից թրչված շալը:

Վահանը, շատ հանդիսաւ, դուռը փակեց և լավ նայեց բրոջը: Քրտինքը խոշոր կաթիլներով գլորվում էր Մանեի կարմրատակած այտերի վրայով. մազերը խճճվել և կուլ էին քրտնած ծակատին. նա հազիվ էր շունչ քաշում: Բաց պատուհանից սկսել էր սառը քամի փշել: Վահանը մոտեցավ և ծածկեց փեղկերը: Նրա բոլոր շարժումների մեջ նկատվում էր մի առանձին հանդարտ զգուշություն:

— Զգուշացիր, շմբսես,— ասաց նա:— Գնա շորերդ փոխիր:

Մանեն ատելությամբ լի աշքերը փայլեցրեց նրա վրա, ուզում էր հեռանալ դեպի իր սենյակը, բայց հանկարծ կանգ առավ և նայեց եղբորը:

— Թէ՛ այս գիշեր գնում էիր գյուղ, — ասաց նա:

— Գնում էի, բայց էլ շգնացի: Կայարանից ետ դարձաւ:

— Ինչո՞ւ:

— Բաղամյանի հետ խոսելու:

Վահանը նստեց և, գլուխը բարձրացնելով, ծուխը բաց թռեց բերնից դեպի առաստաղը:

Մանեն նայում էր նրա անվրդով դեմքին և զգում էր, որ ձեռքերն ու շրթունքները նորից սկսում են դողալ անզոր զայրույթից:

— Հետո՞—, հարցրեց նա:

— Հետո... գնացի և խոսեցի: Խոսելուց հետո գնացի հյուրանց, ճամպրուկս թողի և եկա քեզ մոտ, որովհետև առավոտյան գնացքով անպատճառ պիտի գնամ, այնպես որ այլևս ժամանակ չէի ունենա քեզ տեսնելու, իսկ քեզ տեսնել անպատճառ ուզում էի: Զանգակը մի-երկու անգամ բաշեցի, դուռը բաց շարին: Տեսա, որ

ոչ մի տեղ ճրագ շկա՝ մտածեցի, որ ամենքդ քնած եք արդեն: Մտա բակի դռնից, ծառային զարթեցրի, և նա ներս բերեց ինձ: Մտա ննջալանդ, որ զարթեցնեմ քեզ, շկայիր: Գրեթե երկու ժամ է, որ սպասում եմ քեզ: Այսպիսի պատիծ կանքում չեմ կրել թունս շան պես տանում էր, բայց զսպում էի ինձ: Տերը բարի տա Եղիա Մարգարեին: լուսամուտի առաջ կանգնած ականջ էի գնում նրա կտորի գոզողցին և մտածում՝ «բախտավոր» մարդ. դու այդտեղ վերել զբոսնում և ձիերիդ պայտերի տակից հուր ու կայծակ ես թափում, բայց իսկի մտածում ես, թե այստեղ՝ այս մդղուկ-ների աշխարհում ի՞նչ ահավոր դրամաներ են կատարվում...» Մի քիչ էլ որ ուշանայիր, պիտի գայի քո հետևից:

— Ո՞ւր, — հարցրեց Մանեն զարմանքով:

— Բաղամյանի տուն:

Մանեն ցնցվեց:

— Դու ի՞նչ դիտեիր, թե ես նրա մոտ էի:

Վահանը ուսերը թոթվեց:

— Ուրիշ ո՞րտեղ կարող էիր լինել: Երբ որ տեսա տանը չես, իսկույն հիշեցի այսօրվա մեր խոսակցությունը: Դու հրան վիրավորել էիր, այդ պատճառով չէիր կարող շղնալ ներողություն խնդրելու:

Մանեն ետուետ գնաց պաշարված մի տեսակ սնահավատ երկյուղով այն սրատեսության վերաբերմամբ, որ ցույց էր տալիս վահանը: Կարճ ժամանակ նա նայում էր եղրորը վիրին աստիճանի ապշած, հետո հանկարծ առաջ նետվեց և շշնչաց զայրույթից դողացող ձայնով.

— Լսիր... Ուրեմն դու լրտեսո՞ւմ էիր... Ուրեմն դու չէիր զնացել... թաքնվե՞լ էիր այնտեղ... լսո՞ւմ էիր մեր խոսակցությունը...

Վահանն ուղեց ծաղրել, բայց, տեսնելով քրոջ զսպած զայրույթից փայլող աշխերը, զսպեց իրեն և ասաց տարակուսանքով.

— Ի՞նչ ես ասում, չեմ հասկանում: Ես ի՞նչ գիտեի, թե դու այնտեղ ես, որ թաքնվեի և լրտեսեի:

— Հապա ո՞րտեղից գիտես, թե ես գնացել էի ներողություն խնդրելու: Այս րոպեիս դու կրկնեցիր ճիշտ նույն բառերը, ինչ որ

— Ասացի, որ մեր այսօրվա խոսակցությունից, — այս անգամ արդին ծիծաղեց Վահանը: — Եվ այդ բանը պետք է վերագրես

իմ հոգեբանական հոտառությանը, և ոչ թե լրտեսական ընդունակության, որ ես շումիմ: Եվ ի՞նչ կարիք կա լրտեսելու, քանի որ, ինքու ոչինչ չես ծածկում և ամեն բան խոստովանում ես ի՞նձ, շնայելով որ... խիստ շարացած ես ինձ վրա: Ասենք՝ ծածկելու ընդունակ էլ չես, որովհետև չափազանց անկեղծ ես: Բնավորությունդ այն մարդկանց բնավորությունից է, որոնք մարդ սպանելուց հետո, փոխանակ փախչելու, զնում են ոստիկանատուն և ասում ուղղակի՝ «Ես մարդ սպանեցի, բռնեցեք ինձ»: Այս գիշեր իմ այստեղ գալը և քո այնտեղ գնալը պատահական մի զուգադիպություն է, և ոչ թե ես առաջուց գտեի, թե դու այնտեղ պիտի լինիս, և երկաթուղու կայարանից ետ դարձա հատկապես քեզ լրտեսելու համար, ինչպես, երկի, կարծում ես դու: Լրտեսել... Ո՞րտեղից հնարեցիր, չեմ հասկանում: Փառք աստծու, դու տեսար և նույնիսկ հանդիմանում էիր ինձ, որ ես անտարբեր եմ և հենց սկզբից շեմ ուղղում խառնվել այս գործին: Եվ այդպես էլ պիտի հեռանայի և հեռանում էի, բայց կայարան գնալիս մտածեցի, որ այսքան անտարբերություն արգեն դատապարտելի է, մանավանդ այն բանից հետո, որ անցյալ օրն ինքու էիր խնդրում ինձ, որ ազատեմ քեզ այդ անդունից: Մասամբ խիղճս հանգստացնելու և մասամբ եղբայրական պարտքս կատարելու համար ետ դարձա և ուղղակի գնացի Բադամյանի մոտ: Առաջարկեցի, որ ձեռք վերցնի քեզնից: Ուրիշ ի՞նչ կարող էի անել: Նա վիրավորվեց և վիրավորեց ինձ: Ասաց, որ ես իրավունք չունիմ խառնվելու այս գործին: Շատ ճիշտ նկատողություն: Ես լինեի նրա տեղը, նույնը կպատասխանի: Այսպես թե այնպես, կյանքիս մեջ առաջին անգամ ուղեցի դեկավարվել զգացմանս թելադրանքով և... քիթս շարդեցի: Բայց մի անգամ որ խրվել եմ այս ցեխի մեջ, ուղում եմ մինչև վերջը խրվել և այնպես հեռանալ: Լսիր ինչ եմ ասում:

Վահանը վեր կացավ և մոտեցավ քրոջը:

— Ինչքան էլ որ դու բնավորությանդ համաձայն հետևողաբար ես վարվել, — ասաց նա լրջորեն, — նախ չհավատալով այն նամակին, հետո վռնդելով նրան, հետո զղալով, որ այդպես խիստ ես վարվել, այնուամենայնիվ շեմ կարծում, և շեմ կարող կարծել, թե այդպես շուտ և առանց գրությունդ կշռադատելու, առանց հետեւանքների մասին մտածելու, առանց նույնիսկ կասկածներս ստուգելու, վեր կկենաս և կզնաս նրա մոտ, այն էլ... գիշերով: Եթե այդ բանը վճռել ես անել և արդեն արել ես,

լնշանակի՝ այլևս այն Մանեն չես, որ անցյալ օր առաջս չոքած աղերսում էր, որ փրկեմ իր պատիվը... Այդպե՞ս է թե ոչ:

Մանեն սաստիկ գունատվեց և զգաց, որ լեզուն ցամաքում է բերանում:

— Ի՞նչ ես ուզում դրանով ասել, — շնչաց նա:

— Հասկացիր, էլի՛, ինչ որ ուզում եմ ասել...

Մանեն եղունգները ցցեց ձեռքերի ափերի մեջ, ուսերը սաստիկ վեր բաշեց, ներքին շրթունքը ձախ կողմից առավ ատամների մեջ, ընկավ բազկաթոռի վրա և սկսեց հեծկլտալ զղայնական ուժու գին ցնցումներով:

— Անիմի զճ... անառուվա՛ծ... մի՞թե կարելի է այդպիս վիրավորել, — արտասանեց նա հեծկլտանքի միջից:

Վահանը կարձ ժամանակ նայում էր նրան լուս, հետո հանգիստ տարակուսանքով թոթվեց ուսերը, սիգարը բերանը զրեց, ձեռքերը կոխեց գրպանները և հեռացավ գեպի լուսամուտը:

— Ես մերակոր շեմ, — ասաց նա ապակու միջից նայելով գեպի դուրս: — Ինքու ես առիթ տալիս այդպիսի կասկածների: Կեսպիշերին և ծածուկ գնալ...

— Լոի՛ր, — աղաղակեց Մանեն, վեր թռչելով տեղից: — Ինչպե՞ս դու համարձակվում ես... ինչպես ես համարձակվում... Եղբայրս ես, այո՛, դժբախտաբար. բայց մի որոշ սահման կա, որից գենն անցնելու իրավունք չունի՛ս... շեմ թույլ տա, թե կուզ եղբայրս շէ, աստված էլ լինես... լսո՞ւմ ես...

Վահանը վախեցած նայեց դռներին, ոտների ծայրերի վրա արագորեն մոտեցավ քրոջը և շնչաց.

— Անմի՛տ, ի՞նչ ես բղավում: Ուզում ես ամբողջ տունը ոտի՞ կանգնեցնել: Փառք աստծու, այնպես գնացել և եկել ես, որ ոչ շի իմացել. Գիմա... .

— Ես ոչ ոքից շեմ վախենում... հասկանո՞ւմ ես, ոչ ոքից, — շարունակեց աղաղակել Մանեն կատաղած: — Եթե մի բան կա, որից ես վախենում եմ, այդ իմ խիղճն է միայն, իսկ խիղճս այս րոպեին այնպես հանգիստ է, ինչպես, աստված տա, քոնը հանգիստ լինի...

— Մանե, ի սեր աստծու...

— Լոի՛ր, լոի՛ր... Ես իրավունք շեմ տալիս քեզ խոսելու... Ավելի լավ է, ինքս իմ բերանով հճայտնեմ բոլորին, ամբողջ աշխարհին, թե որտեղ էի, քան թե թույլ կտամ քեզ, որ այդ եղանակարհին,

կով խոսես ինձ հետ... օս ոչ ոքից չեմ վախենում... լսո՞ւմ ես,  
չեմ վախենում, չեմ վախենում...

— Ի՞նչ ես ուղարկ ինձնից, ինչո՞ւ ինձ այսպես տանջում, շարչարում ես, — շարունակեց Մահեն: — Մի ամիս չկա, որ այստեղ չարում ես, և բոլոր արյունս տակնուվրա ես անում գրեթե ամեն օր: Ես ես, և բոլոր արյունս տակնուվրա ես անում գրեթե ամեն օր: Ես ես կարոտ մնացի մի լուրջ, մի զերմ, մի սրտացավ խոսքի: Շարունակ ծաղր ու հեղինանք, երբ ես լուրջ խորհրդի էի կարոտ, շարունակ անտարերեսություն ու շեղոքություն, երբ ես կարոտ էի Եղայրական չերմ սիրո և հոգացողության, իսկ այժմ անտեղի և անտանելի միջամտություն, երբ ես ատում եմ քեզ և... ոզկում քեզնից: Այս՝ ատում և զզվում, որովհետեւ ապացուցեցիր, որ ուրիշ բանի արժանի չես: Պարզ մարդ ես, ինչո՞ւ պարզը չես ասում: Կայարանից վերադարձել ես ո՞չ թե նրա համար, որ եղայրական պարտք կատարեմ և խիզճդ հանգստացնես, այլ նրա համար, որ հարյուր, մի ողորմելի հարյուր ֆրանկի պարտքը ստղացնես...

— Այդ խո նա ասաց, — նկատեց Վահանը, դիմելով, թե ինչ-պես անձրկի կաթիլները ջրային ցանցեր են կազմում պատռւանի ապահովություն և արագորեն թորում նեղքն:

— Այդ ես էլ եմ ասում, որովհետև տեսա, թե ինչ մարդ ես  
դու Մինչև անդամ քիչ մնաց, որ նա... թքեր քո երեսին, և դու...  
ուին... որովհետև հարյուր ֆրանկդ նաղդացրիր: Ամո՞թ քեզ:

Վահանը հանդիսատ դարձավ և ժպտալով նայեց քրոջ հուզմունքից վազվող աչքերին:

— Իսկ խորդա-փարաների օդային ճանպարհորդություն էսք, —  
Հարցը նա: — Իսկ ապտա՞կը: Զէ՞ որ նա ինձ ապտակ էլ տվեց,  
իսկական ապտակ: Կամ, գուցի, մոռացե՞լ է քեզ իր այդ քաջու-  
թառն էլ հայտնել:

Մանեն զզվանքով ու ատելությամբ հայեց եղբոր ժրծադրց  
գոզգողացող կախ ընկած կզակին և, առանց այլևս մի խոսք ան-  
գամ արտասահելու, դիմեց դեպի իր սենյակը, բայց կիսաճանա-

սլարհին կանգ առավ հանկարծ և դառավ դեպի Վահանը

— Նպատակդ ի՞նչ է, որ այս կեսպիշերին եկել եմ ինձ  
մոտ — Հասորքունակամ հանդիսաւ խստությամբ:

Նովառա՞կս...

Վահանը նայեց սիզարի ծայրին, և նրա գեմքը լուրջ արտահայտություն ստացավ:

— Այս թե ինչ էր նպատակս: Կարող եմ ինձ ատել, զգել ինձնից, բայց խնդրում եմ, լսիր ինձ հանգիստ, որովհետեւ այս բռպերն ամենային տրամադրի շեմ կատակ անելու կայարան գնալիս ես լուրջ կերպով կը ուղարկած եցի դրությունդ և տեսա, որ հիրավի, շատ վտանգավոր ճանապարհի վրա ես: Եթե քո այդ տրահիկական սիրո մեջ կա մեկը, որ շարաշար պիտի տուժի — մտածում էի ես և այս րուպերն էլ նույնն եմ մտածում — այդ ոչ ամուսինդ կլինի և ոչ Բադայանը, այլ դու և միմիայն դու եվ ոչ ոք շի պատժիլ քեզ այնպես խիստ, ինչպես դու ինք քեզ, որովհետեւ, ինչպես առաջ էլ ասացի, դու այն բնավորություններիցն ես, որոնց դատավորն ամենից առաջ իր լուսք են լինում և ամենախիստ, ամենանողոք դատավորլ: Բադայանին չփրել չես կարող, քանի որ մի անգամ արդեն սիրել ես — այդպես է երկում — իսկ ամուսնուդ դավաճունել առավել ես չես կարող, քանի որ այդպես է քո տարօրինակ խառնուրդը: Եվ ահա ովատրասութ է այն տրագեդիան, որի ցավալի վախճանը պարզ է: Մի կողմից սեր, մյուս կողմից պարտփի ստոյիկյան գիտակցություն: Պայքարը հեշտ չէ: Եվ հաղթանակը ո՛ր կողմն էլ լինի, մեշտեղը ճիմվողը դու պիտի լինես: Փրկություն շկա քեզ համար ո՛չ մի դեպքում: Այս խորհրդածություններն էին անցնում դիխովս, երբ գնում էի կայարան: Եվ երբ պարզորեն պատկերացրի քեզ սպասող վախճանը, զգացի, որ իմ քույրն ես, իմ հարազատը և ահազին մեղք պիտի լինեմ բարձած խզճիս վրա, եթե քեզ թողնեմ մենակ և գործ շղնեմ ինձնից կախված ամեն միջոց այդ վախճանը քեզնից հեռացնելու համար: Այդ պատճառով ետ դարձա և հարկ համարեցի նախ գնալ Բադայանի մոտ: Դժբախտաբար, մենք շկարողացանք հասկացնել իրաւ: Իմ միջամտությունը նա բնդունեց իրեն անձնական վիրավորանք: Նրա մեջ խոսեց ավելի չիպասանը և հրապարակախոսը, քան թե կյանքի մարդը: Նա համառեց: Իսկ ես թեև բնավորությամբ ամենեին համառ շեմ, բայց երբ համառի եմ հանդիպում, նրանից ավելի համառ եմ դառնում: Ազնիվ խոսք եմ ասում քեզ: այդ մի-

շոցին Հարյուր ֆրանկի մասին այնքան էի մտածում, որքան աւտրոպեին դու մտածում ես, թե պապուասների մեջ կա՞ արդյոք գրամի գաղափարը, Հարյուր ֆրանկի պատմությունը մեջ ընկավ բոլորվին պատահական կերպով, Նա պինդ բռնեց այդ միջադեպից և իսկույն վճարեց իր պարտք Հոգեբանական այն պարզ հասկանալի պատճառով, որ կատարյալ անկախ և աղատ ախոյան հանդիսանա իմ դեմ և մասամբ էլ նվաստացրած լինի ինձ իր առաջ Այդպես է մարդկային բնավորությունը. պարտքը վճարելիս մարդ միշտ կարծում է, թե ինքն ավելի մեծահոգի և ազնիվ է, քան թե նա, ումից որ պարտք է վերցրել: Ես ինձ նվաստացած չզգացի, իհարկե: Իսկ երբ մտնր դրամները շպրտեց, քիչ մնաց, որ ինքս ինձ կորցնեի, և լավ է, որ չկորցրի, որովհետև այս բռպեկին նա հիվանդանոցումը կլիներ, իսկ ես ոստիկանատանը: Ինչ վերաբերում է այն բանին, որ ուզում էր անկախ և աղատ ախոյան հանդիսանալ, այդ էլ միտք շուներ. որովհետև ես նրա մոտ գնացել էի ամենաբարի մտադրություններով և ոչ մի առիթ չտվի, որ հակառակը կարծեր: Ինչնիցեւ: Նրա մոտ գնալս ապարդյուն անցավ: Մնում էր մի ուրիշ ելք:

— Դու շափազանց երկար ես խոսում և կրկնում ես միենունը, — ընդհատեց նրան Մանեն սառնորեն: — Կարճ կտրի՞ ի՞նչ ես ուզում:

— Այ, ասում եմ: Մնում էր մի ուրիշ ելք — այն, որ գայի քեզ մոտ, պարզեի քեզ քո դրությունը և նորից խնդրեի, որ գայիր այս ամառ գյուղը տանեի քեզ, որովհետև, ինչպես այսօր էլ ասացի, քո այդ սերը ժամանակավոր մի հիվանդություն է, որ առաջացել է, անշուշտ, մենակությունից, պարապությունից, ծանձրույթից, և այդ հիվանդությունից բժշկվելու ամենալավ դարձմանն այն կլինի, որ առժամանակ հեռու լինիս Բաղամյանից, նոր անձեր, նոր բաներ տեսնես, նոր տպավորություններ ստանաս: Մինչև անգամ ես կարող էի տանել քեզ արտասահման, եթե... Բայց, — իսկույն վրա բերեց Վահանը, տեսնելով, որ Մանեն անհամբեր զըժկամության նշաններ է ցույց տալիս, — այդպիսի բան այլևս չեմ առաջարկում քեզ, որովհետև այն բռպեից, որ եկա տեսա տանը չես, այդ բռպեից թողեցի մտադրությունս, որովհետև զգացի, իսկ այժմ համոզված եմ, որ արդեն ուշ է...

— Դարձյա՞լ... դարձյա՞լ ուզում ես ինձ վիրավորել, — բացագանչեց Մանեն նորից հուզվելով:

— Ներողություն, ներիր խնդրում եմ, — շտապով վրա բերեց Վահանը: — Ես այն չեի ուզում ասել, ինչ որ դու ես կարծում ես մովկին հավատում եմ, որ դու մաքուր ես մնացել...

— Լոիր, լոիր, անխի՛ղճ մարդ, — աղաղակեց Մանեն ձեռքերի մատները հյուսելով իրար մեջ, և նրա աշքերի մեջ ցոլացին հուսահատ անզորության արցունքի կաթիներ: — Ո՞վ է քեզ իրավունք տվել, որ խոսում ես իմ մաքրության մասին... Ուզում ես, որ ես հանգիստ լսեմ քեզ, մինչդեռ ամեն բռպե, ամեն վայրկյան գրգռում ես ինձ, կոպիտ կերպով շոշափում ես ամենանվիրական զգացումներս, խոսում ես այնպիսի բաների մասին, որոնց վերաբերմամբ չեի կամենալ հաշիվ տալ ո՛չ ոքի... Մի անգամ զլուխս քարոզը տվի և խնդրեցի, որ օգնես ինձ: Այժմ չե՛մ ուզում... Լսո՞ւմ ես, չեմ ուզում: Ազատիր ինձ քո հոգացողությունից... Խնդրում եմ ազատիր, աղալում եմ ազատիր և, եթե կարելի է, մոռացիր իմ գոյությունն անգամ...

— Զարմա՞ցք, զարմա՞ցք, — արտասանեց Վահանը ուսերը թոթվելով: Նա մոտեցավ սեղանին, հանգած սիգարը ձգեց մոխրամանի մեջ, նայեց ժամացույցին և առավ գլխարկը: — Ազատում եմ քեզ իմ հրացացողությունից և զնում եմ: Ինձ մնում է միայն ասել այն, ինչ որ ասացի Բաղամյանին, ես կատարեցի իմ պարտքը: Բարի գիշեր:

Նախասենյակում վերարկուն հագնելիս հարցրեց.

— Գուոր կազմեքով շե՞ք կողպում զիշերները:

Մանեն զուրս զնաց նախասենյակ և լուս սպասում էր, մինչև որ Վահանը տնկտնքալով հաջավ իր նեղ վերարկուն և հետեւից ձիգ տվեց ներքեն, որ մեջքի վրա գոյացած ծալքերը նստեն: Հետո եղարոր հետեւից իշավ մինչև փողոցի դուռը: Վահանը բաց արեց դուռը և կանգ առավ ակամա:

Փողոցի մեջտեղով, փշշալով ու վշշալով, մի ամբողջ գետ էր վազում հեղեղի ջրմբից գոյացած: Երկինքը սկսել էր պարզել արեմուտքում, որտեղ արդեն երկում էին աստղերը մաքուր ու շողշողուն: Քամին գորշագույն ամպերը քշում էր գետի արենելք, որտեղ երկինքը փայլատակում էր զեռ, սակայն որոտի ձայն այլևս չէր լսվում: Անձրեն այժմ մաղում էր միայն և, ըստ երկությին, կտրվելու վրա էր: Մաքրված օդի մեջ զգացվում էր մի հաճելի ցուրտ թարմություն:

— Այս ջրերից անցնելը խաթա է. կոշիկներս թուլուի պի-  
— 541 —

տի գառնան,— ասաց Վահանը, կուացավ, տնքտնքալով ետ ծալեց  
անդրավարտիքի տոտերը, վերարկուի օձիքը վեր քաշեց և ապա  
ցած թողեց ծղոտե գիմարկի շրջապատը հովանոցի ձևով— Դե՛է,  
մնաս բարյավ. առավոտվա գնացքով գնում եմ անպատճառ։  
— Գնաս բարյավ, —արտասանեց Մտնեն և ակամա առավ  
եղբոր պարզած ձեռքը։

Վահանը նայեց նրա սառն դիմքին և ժպտաց զառուրսությունը:  
— Շատ հիմար կերպով ենք բաժանվում, չէ՞ — ասաց նա:  
Քույրը ոչ մի խոսք շպատասխանեց:  
— Ափսո՞ս, — ակամա դուքս թուավ Վահանի բերանից: —  
Ինչպես ընդունեցիր և ինչպես ես ճանապարհ զնում... Այս թե  
որտեղ է առված՝ «Շատ մի սիրիր, ատել կա»: Բայց մի մոռանար  
մյուս զարձվածքը՝ «Շատ մի ատիր, սիրել կա»... ինչկեցի: Ասո-  
ված վերջը բարի անի: Այս անձրեւ լավ է: Ես վախենում էի, թե  
կարկուտ կզար: Անցած տարի խաղողիս կեսը փշացրեց անտերը:  
Դեռ մնաս բարյավի: Շուշ փակիր դուռը. օդը զով է, քրտնած էիր,  
կմրսես:

Եվ Վահանը դուրս գնաց։  
Մանեն դուռը փակեց։

XIV

Գիշերվա մի ժամին Բաղամյանը զարթնեց անկողնում և  
դղաց, որ մրսում է: Ամբողջ մարմնի մեջ ինչ-որ անհանգստաց-  
նող թմբիր էր զգում. բոլոր ոսկորները, մանավանդ սրունքների  
մեջ, մզմղում էին և կտրատվում: Հիշեց, որ այդ գիշեր Մանեին  
ճահապարհ զնելուց հետո տուն դառնալիս այն աստիճան թըրջ-  
վել էր անձրեից և քրանչել, որ հաղիվ էր կաբողացել շորերը հանել  
անկողին մտնելու համար. հետո վեր էր կացել և բաց արել լու-  
սամուտը, որովհետև ննջարանում սաստիկ տոթ էր կանգնած: Լու-  
սամուտն այդպես էլ բաց էր մնացել, և նրան թվում էր, թե այժմ  
վեր կենալ և լուսամուտը փակել: Նա կոլովէց վերմակի մեջ,  
ծնկները պինդ ծալեց սրունքների մեջ զգացած մզմիղը հանգըս-  
տացնելու համար և նորից քնեց:

Բայց այս անգամ շատ անհանգիստ էր նրա քունը Երան  
թվում էր, թե քնած չէ. վեր է կացել, ուզում է փակել լուսամու-  
տը, բայց չի կարողանում, փեղկերը կպել են պատին, իսկ դրսից

ցուրտ քամի է փյում, այն աստիճան ցուրտ, որ նրա առամները զարկվում են իրաբ նա դառնում է, որ գնա նորից պառկի, բայց հանկարծ կանգ է առնում. նրա առաջ կանգնած է Վահանն իր հրակայական մարմնով և ասում է՝ «Ո՞ւր եք զնում»: Արյունը խփում է նրա գլխին, և նրան թվում է, թե հանկարծ կրակի բոցեր են պատում իր մարմինը: Ցնցողաբար բարձրացնում է ձեռքը, որ ապտակ տա նրա շաղ թշին, բայց մեկ էլ տեսնում է, որ իր առաջ կանգնած է ոչ թե Վահանը, այլ Մանեն ձեռքերի ափերը քունքերին դրած և շնչում է սաստիկ շուած աշքերով՝ «Բադայան, միթե այդ դուք եք... դո՞ւք...»: Բադայանը ետուեա է զնում, զարկվում է լուսամուտի տախտակին, և ցուրտը սառուց է կտրում նրա մեջքը...

Բադամյանը շուր եկավ մյուս կողքի վրա և տնքաց ողնաշարի մեջ զգացած ցավից։ Նա բաց արեց աշքերը և տեսավ, որ արդեն լուսացել է։

Գիշերվա հեղեղից հետո առավոտը հյանալի էր: Ննջարանը ըղողված էր արկի զերմ ճառագալթներով: Բաց լուսամուտից երեխում էր մաքուր երկինքը փիրուզի պես բաց-կապույտ ու անփայլ Սեղանի վրա ճկճկում էր ծոցի ժամացույցը: Դուրսը, լուսամուտի տակ, մածուն ծախող վրացի գյուղացին բղավում էր՝ «Մածո՞նի, մածո՞նի...»:

Բաղամյանը վեր կացավ անկողնից շատ վատ տրամադրության մեջ։ Պարզապես զգում էր, որ հիվանդ է։ Մարմինը սարսռում էր. ծնկները ծալվում էին. գլուխը կապարի ծանրություն էր ստացել. աշքերի կապիճների և բունքերի մեջ երբեմնակի սուրցավ էր զգում՝ զիշեղը կիսաքոն անցկացրած արբած մարդուն ման. թվում էր, թե ողնաշարը կորացել ու փետացել է և լի կարողանում շտկել, երբեմն-երբեմն շոնչը կտրվում էր թիկու՞չի մեջ զգացած ծակոցներից։

Բայց և այնպես սովորական ժամին գնաց խմբագրատուն. Այս անգամ, որ խոնարհվում էր այս կամ այն Հողվածի կամ թղթակցության մեջ որևէ բառ կամ նախադասություն ջնջելու կամ փոփոխելու համար, նրան թվում էր, թե զանգի մեջ ուղեղի տեղ ընկած է արձճի մի զանգված, որ ծանրորեն դիմում է ճակատին և պուլսը քաշում է ներքին:

Մի կերպ վերջացնելով աշխատանքը, տուն դարձավ:  
Ախորժակն այնպես կապվել էր, որ հացի մի պատառ անգամ

շառակ բերանը: Նրա ամբողջ մարմինը ձգտում էր դեպի անկողին, բայց նա կարեվեր ջանք էր գործ դնում շպառկելու, որովհետև կանխագում էր, որ եթե պառկի, այլևս չպիտի կարողանա վեր կենալ:

Մինչդեռ նա ուզում էր գնալ Մանեի մոտ, ուզում էր ասոլ նրան, որ գիշերվա իր վարմունքի գիտակցությունը սպանում է իրեն, որ այդ գիտակցության պատճառած անտանելի տանջանքից իրեն աղատել կարող է միայն նրա ներումն ու մոռացումը: Ներել և մոռանալ— այդ է փափագում միայն, փափագում է իր ամբողջ էությամբ, իր հոգու ամբողջ զորությամբ:

Այդ մտադրությամբ երեկոյան դեմ դուրս եկավ տարից։ \* աղաքի փողոցները կամաց-կամաց լցվում էին ամառվա երեկոներին հատուկ ժխորով։ Ամեն մի սուր ձայն, կառքի ամեն մի դզրոցոց անտանելի ցավ էր պատճառում նրա հիվանդ ջղերին։ Նա կանգ առավ տրամվայի կայարանում, սպասելով վագոնին, երբ հանկարծ առաջովը սլացող կառքերից մեկը գրավեց նրա ուշադրությունը։ Այդ կառքի մեջ նստած էր Մանեկի ամուսինը— Սանդրոսյանը— ժոկեի գլխարկով և երկարածիտ կոշիկներով։ Բաղամյանը ձեռքը մեքենայաբար տարավ դեպի գլխարկը, բայց Սանթրոսյանն, ըստ երևույթին, չտեսավ նրան, և կառքը սլացավ անցավ։

Երկար ժամանակ Բաղամյանը նայում էր կառքի հսկաց  
տեղնուտեղը քարացած, մինչև որ կառքը չքացավ նրա աշքից.  
Հետո մեքենայաբար նստեց հենց այնտեղ դրված երկայն նստա-  
րանի վրա, մի հաստ կնոջ կողքին, և շտեսավ տրամվայի վագո-  
նը, որ եկավ մի-երկու րոպե կանգնեց կայարանում և, հաստ  
կնոցն ու մի քանի ուրիշ նստողներ լինգունելուց հետո, շարունա-  
կեց ճանապարհը զանգակը զրնգլունգացնելով:

Սանթրոսյանի հանդիպումն այն աստիճան անակնակալ էր սրա համար, որ նա հարց տվեց իրեն, թե ո՞ս մի պատրանք չէր արդյոք, կառքի մեջ նստած մարդն արդյոք Սանթրոսյա՞նն էր, թե սրա հման օտար մի մարդ, Երբ անակնկալի առաջին զորեղ տպանը վորությունն անցավ, նա տեսավ, որ այդտեղ զարմանալի ոչինչ շկար. մարդը կորած չէր, երկարատև բացակայությունից հետո՝ այսօրվաղը գալու էր, և ահա եկել է... Բայց հ՞րբ է եկել. երեկ գիշե՞ր, թե՞ այս առավոտ... թե՞ հենց նոր է գալիս: Բաղամյանը շտապով հանեց ժամացուցը և նայեց. ժամը վեցին մոտ էր:

Նորից նստեց նստարանի վրա և, բռլորովին ուշադրություն շղարձնելով, թե ինչ է կատարվում շուրջը, անձնատուր եղավ մի ժանր մտատանջության։ Արդյոք ե՞րբ է եկել Սանթրոսյանը— գիշեր, թե՝ այս առավոտ։ Արդյոք ի՞նչ կլինի պատահած, եթե եկած լինի գիշերը, այսինքն՝ այն ժամանակ, երբ Մանեն իր մոտ էր Արդյոք ինչո՞վ կլինի բացատրած կնոջ տարածամ բացակայությունը տնից և վերադարձը կեսպիշերին։ Ի՞արկե, հարցրած կլինի, թե որտեղ է, և արդյոք ի՞նչ կլինի պատասխանած Մանեն... Այս և այսպիսի բազմաթիվ հարցեր մեկը մյուսի հետեւ փոթորկի պես անցնում էին նրա զլխով, և նա չէր կարողանում կանգ առնել որևէ մեկի վրա, սառնորեն մտածել, դատել և հավանական պատասխանը գտնել։ Բայց միևնույն էր. ամեն մի պատասխան դարձլաւ կասկածելի պիտի լիներ նրա համար և շպիտի կարողանար հանգստացնել նրան, մինչև որ չիմանար, թե երբ էր եկել Սանթրոսյանը— գիշեր, թե այս առավոտ։ Այս էր զլխավոր հարցը, որ սաստիկ մտատանջում էր Բադամյանին, և այն միտքը, թե Սանթրոսյանը կարող է եկած լինել գիշերը և իմացած լինել ամեն բան, սառն քրտինք էր դուրս կորզում նրա ճակատից։ Իր համար չէր, որ զախենում էր նա, այլ Մանեի համար, որովհետեւ գիտեր, թե ո՞ր աստիճան անկեղծ էր իր պաշտած այդ կինը և որքան անընդունակ սուտ խոսելու, իր ուր եղածը ծածկելու, իսկ ամուսնու նախանձն ինչե՞ր ասես չի կարող անել...

Հանկարծ մի անմիտ բուռն ցանկություն տիրեց Բաղամյանին.— գնալ ուղղակի Մանթրոսյանի մոտ, խոստովանել նրան ամեն բան, ասել, որ Մանեն անմեղ է, առաքինի, հավատարիմ, մաքուր. ինչ որ պահանջելու է նրանից, թող պահանջի իրենից, ինչ որ անելու է նրան, թող անի իրեն. ինքն ամեն, ամեն բանի պատրաստ է, նույնիսկ իր կյանքն իր ձեռքով զոհաբերելու, միայն թե չվատացնի նրան, չվիրափորի նրան, ձեռք շտա նրան... իսկ եթե, այնուամենայնիվ, ձեռք կտա, կհամարձակվի ձեռք տալ— օ՛, այն

ժամանակ... Բաղամյանի ջղերը սաստիկ լարվեցին, և նա վեր կացավ ակամա, «Կոպանեմ... աստված է վկա կոպանեմ»,— յտածեց նա և այդ րոպեին լիովին զգում էր, որ ուրիշ կերպ վարվել չեր կարող այն մարդու հետ, որը պատահական տերն էր իր պաշտաճ կող— այն կող, որի մի կաթիլ արցունքը չեր փոխիլ ամբողջ աշխարհի հետ...

Բայց ամենից առաջ պետք էր իմանալ, թե երբ էր եկել Սանթրույանը: Ինչպես իմանար, ումից իմանարու նրա միտն ընկապ չեղինեն. որը թերեւ այդ օրը տեսած լիներ ընկերունքն, հետեւ բար կիմանար, թե երբ է եկել նրա ամուսինը: Բաղամյանն էլ երկար շմտածեց այդ մասին և անմիջապես դիմեց գեպի Հեղինեի տուն:

## XV

Հեղինեն տանը չեր: Սառան Բաղամյանին հրավիրեց սեղանտուն: Այստեղ Բաղամյանը, բացի Հեղինեի խոլ ու համր քրոշից՝ Սալոմեից, տեսավ և նասիբյանին: Սալոմեն նստած էր Հեղտահոի առաջ և գուպա էր գործում մատների զարմանալի արագ շարժումներով: Մայր մտնող արեկի կարմրավուն ճաճանչները բոցավառվում էին բաց լուսամուտների ապակիների մեջ և այդտեղից անդրադանում ոսկու պես պլատազող փոքրիկ մաքուր Հեղտահոի ուռուցիկ փորի մեջ: Սեղանի հակառակ ծայրին դրված էին մի հոգու ճաշի գեռես ձեռք շտված պարագաներ: Նասիբյանն արագ քայլերով անցուղարձ էր անում սենյակի երկարությամբ, անդադար կրծելով փոքրիկ բեղը շրթունքի մերթ ձախ, մերթ աջ կողմբ: Զաված հուզումից նրա խորշումած պստիկ դեմքի վրա, մկանունքները ցնցում էին ջղաձգաբար և խոշոր աշքերը փայլում ինչ-որ շարագուշակ կրակով: Ամեն բանից երեսում էր, որ անհամբեր սպասողական դրության մեջ էր: Սալոմեն շուտ-շուտ վախեցած հայացքներ էր ձգում նրա վրա և սաստիկ անհանգիստ էր երեսում: Բաղամյանի գալուստը խիստ ուրախացրեց նրան: Նա վեր թռավ տեղից և Բաղամյանին տարավ նստեցրեց իր մոտ:

— Օրիորդը ո՞րտեղ է, շո՞ւտ կգա, — հարցրեց Բաղամյանը բարձրածայն, մոռանալով, որ ինչքան էլ բարձր խոսի— մինուուն է, Սալոմեն չի լսիլ:

Սալոմեն նրա առաջը քաշեց մի կտոր թուղթ ու մատիտ, որ մշտապատրաստ պահում էր իր մոտ:

Բաղամյանը գրեց իր հարցմունքը:

Սալոմեն կարդաց, թուղթը շուր տվեց և մատով ցույց տվեց իր պատասխանը, որ գրել էր արդեն նասիբյանի գրած նույն հարցմունքի տակ. «Գգիտեմ: Այսօր շատ ուշացավ»:

Երբ Բաղամյանը կարդաց այդ պատասխանը, Սալոմեն մտահոգ հայացքով ծածուկ նրա ուշագրությունը հրավիրեց նասիբյանի վրա և գրեց հետևյալը. «Լավ է, որ եկա՞ք Ես սաստիկ վախենում եմ այդ պարունից: Մեկ հարցրեք՝ ի՞նչ է ուզում, ինչո՞ւ հանգիստ չի տալիս քրոջաս»: Երբ Բաղամյանն այդ էլ կարդաց, Սալոմեն վերցրեց թուղթը, ճմռեց և գրանը կոխեց երեկի վախենալով, թե միզուցեց նասիբյանը կարդա:

Բաղամյանը նայեց նասիբյանին: Նասիբյանը շարունակում էր զղային, արագ քայլերով անցուղարձ անել սենյակում, և ամեն մի անցուղարձի ժամանակ վայրկենաբար հանգում և նորից վառվում էին հեղտահոնի փորի մեջ լուսամուտի տպակիներից անդրադառը արեկի ճաճանչները:

— Նասիբյան, ի՞նչ է պատահել, — հարցրեց Բաղամյանը զարմացած, նոր նկատելով, որ նա շափազանց հուզված է:

— Ինչ որ պատահել է կտիսնես, — արտասանեց նասիբյանն ատամների միջից, քայլելիս մի պապիրոս հանեց, վառեց և լույսին շպրտեց բաց լուսամուտից դուրս:

«Էլի հին պատմությունը», — մտածեց Բաղամյանը, որին շատ լավ հայտնի էին նասիբյանի և Հեղինեի տարօրինակ հարաբերությունները: Նա այլևս շփոքձեց որևէ բան իմանալու նասիբյանից: Այդ միջոցին նրան ոչինչ չէր հետաքրքրում, նրան վրադեցնում էր միայն այն տաժանելի միտքը, որ է՛ր եկել Սանթրոսյանը և Հեղինեն կգիտենա՞ր արդյոք այդ:

Վերջապես նեկավ Հեղինեն: Նա մտավ իրեն հատուկ աղմկալի քայլերով, մանկաբարձական գործիքների անբաժան պայուսակը ձեռքին, շոգից և շտապ քայլելուց կարմրատակած ու քրտնած:

Նրան տեսնելուն պես նասիբյանը կանգ առավ և գաղարեց բեղը կրծելուց:

Հեղինեն ամենելին ուշագրություն շղարձրեց նրան կամ ցույց տվեց, թե ուշագրություն չի դարձնում, անցավ ուղղակի նրա թթի տակով, մի բառու շպրտեց Բաղամյանին, պայուսակն ու փեղուրը

դրեց լուսամուտի տախտակի վրա և գնաց նստեց սեղանի մոտ  
— Օ՛հ, մեռա,— ասաց նա, հոգնած ետ ընկավ աթուի մեջ-  
քին, պեսսնեն վերցրեց քթից և սկսեց թաշկինակով հով անել  
երեսին, Հետո, հանկարծ տեսնելով ճաշի պարագաները, դարձավ  
քրոջը.— այս ի՞նչ է, ես ճաշել եմ: Հավաքել տուր այս բաները:

Սալումեն հասկացավ նրան, երկու քույրերն առհասարակ  
այնքան վարժվել էին, որ հասկանում և հասկացնում էին իրար  
ամեն բան առանց որևէ զժվարության. իսկ դժվար դեպքերում, երբ  
զրելը սրտամաշ մի բան էր, մանավանդ Հեղինեի համար, հասկաց-  
նում էին իրար մատներով, որոնց ամեն մի շարժումը առանձին  
տառի նշանակություն ուներ նրանց համար, իսկ այդ պայմանա-  
կան տառերից նրանք ամբողջ բառեր և նախադասություններ էին  
կազմում: Բայց Սալումեն Հեղինեի ասածը հասկանում էր մեծ  
մասամբ նրա շրթունքների շարժումներից, այնպիս որ Հեղինեն  
շատ անգամ իր ասելիքն ասում էր առանց որևէ ձայն հանելու,  
այլ միայն շարժում էր շրթունքները որոշակի: Առհասարակ կա-  
նանց և երեխաների ասածը Սալումեն ավելի լավ էր հասկանում,  
քան տղամարդկանց ասածը, որոնց բեղերը խանգարում էին  
նրան, նրանց շրթունքների շարժումը որոշակի նկատելու:

Սալումեն վեր կացավ, գուլպան դրեց աթուի վրա և սկսեց  
իր ձեռքով հավաքել ճաշի պարագաները:

— Անտանելի պաշտոն է մեր այս պաշտոնը,— ասաց Հեղի-  
նեն, դառնալով Քաղամյանին:— Մի բոլք հանգստություն շու-  
նինք: Մի տնից քարշ են տալիս մյուսը էլի վնաս չունի, եթե ցե-  
րեկն է պատահում այդ. բայց որ կեսպիշերին են դալիս, երբ  
անկողնում քաղցր քնած ես լինում, ոե կարող եք, էլի՛, երևա-  
կայել... Արի տես, որ մեր այս օրհնված կանայք էլ մեծ մասամբ  
գիշերներն են ցավում: Առհասարակ ես նկատել եմ, որ մարդկա-  
յին արարածները աշխարհ են գալիս և աշխարհից հեռանում մեծ  
մասամբ գիշերներ... Բայց ի՞նչ է պատահել ձեզ, հիվանդ եք, —  
հարցրեց նա պեսսնեն դնելով և դիտելով Քաղամյանի գունատ  
դեմքը:

— Հա, մի քիչ մրսել եմ:

— Եվ ի՞նչ. եկել եք որ բժշկե՞մ, — հարցրեց Հեղինեն ծիծա-  
ղելով և հանկարծ վրա բերեց, — Հա՛, կարող եմ շնորհավորել  
ձեզ, Ըսնթրույանն եկել է:

— Դուք ո՞րտեղից գիտեք այդ, — հարցրեց Քաղամյան

ուրախացած, որ Հեղինեն ինքն սկսեց խոսել իրեն այնքան մտա-  
տանջող հարցի մասին:

— Այս առավոտ տեսա նրան, այն ժամանակ, երբ կառքով  
տուն էր գնում կայարանից: Վահանն էլ հետն էր:

Քաղամյանը սաստիկ թեթևացած շունչ քաշեց: Հարցը լուծ-  
ված էր. Սանթրույանն եկել էր առավոտյան: Ուրեմն Մանեն...  
«Ա՛ի, որքա՞ն սիրում եմ, որքա՞ն սիրում...», — մտածեց Քա-  
ղամյանը տանջող անձկությամբ:

Հեղինեն նայեց նրան խորամանկ ժպիտով:

— Եկեք մի բան ասեմ, Քաղամյան շնեղանաք:

— Ի՞նչ:

— Դուք վախենում եք:

— Ո՞ւմից:

— Ես ի՞նչ գիտեմ, — բացագանչեց Հեղինեն և այս անդամ  
ծիծաղեց նույնիսկ վիրավորական կերպով:

Չնայելով իր ինքնազմպումին, Քաղամյանն այնուամենայ-  
նիվ շփոթվեց և ակամա հարց տվեց ինքն իրեն՝ հիրավի արդյոք  
Մանեի համա՞ր էր իր մտահոգությունը, թե՞ իր անձի համար ևս...

— Ես դեռ շտեսա մի մարդ, — շարունակեց Հեղինեն, — որ  
սիրելիս լինի ուրիշի կնոջը և սարսափելիս լինի նրա ամուս-  
նուց... Խնդրեմ, մի փորձեք հակածառել. ես գիտեմ, ինչ որ ասում  
եմ... Բայց զարմանալի երեւոյթ. այդպիսի բան կանանց մեջ չի  
նկատվում, կինն ամուսնացած տղամարդուն սիրած ժամանակ  
իսկի բանի տեղ չի գնում նոյն կնոջը: Ինչո՞վ կրացատրեք այս:

— Որովհետեւ այդպիսի կանայք սովորաբար պոռնկական  
բնավորություն են ունենում, — լսվեց նրա հետեւից:

Հեղինեն, որ կարծես բոլորովին մոռացել էր նասիրյանի ներ-  
կայությունը, ուսի վրայից նայեց նրան և ոչինչ շասաց:

Ճաշի պարագաները հավաքելուց հետո, Սալումեն նստեց իր  
առաջիկ տեղը, հեշտաենի մոտ: Նա դարձավ քրոջը և ինչ-որ ան-  
խորժ ճայներ արձակեց:

Հեղինեն հասկացավ նրան և պատասխանեց վանկ-վանկ,  
աշխատելով որոշ արտահայտություն տալ շրթունքների շարժմանը.

— Ուշացած, ուրովհետեւ ճանապարհին բրո-նեցին  
տարան ուրիշ ծըն-նըդ-կա-նի մոտ:

— Սուտ ես ասում, — հանկարծ աղաղակեց նասիրյանը, և  
կանգ առավ գողալով:

Հեղինեն աթուրի վրա դարձավ դեպի նա:

— Պարոն, ես թեզ խորհուրդ եմ տալիս խելոք կաց, — ասաց  
նա սպառնալից հանգստությամբ: — Այսքան ժամանակ համբե-  
րեցի, բայց էլ մտադիր չեմ համբերելու. մեկ էլ տեսար ծառացին  
կանչեցի և վզակոթիղ տալով փողոց շպրտել տվի:

## Նասիբյանը փրփրաց:

— Ի՞նչ... ի՞նչ... զեռ խոսում էր և... զեռ սպառում էր և...  
Քշացրեց նա ատամները սեղմած, ձեռքերը բռունչք կազմած և  
ժերմէնիս մլոտենալով Հեղինեին սպառնագին:

Հեղինեն վեր թռավ տեղից և վերցրեց թելի դատարկ բաժակ-  
ներից մեկը:

— Զայտենաս, թե չէ տեսող և ու այս բարեկարգ կը պահանջի կամ կատարած է ու նույն սերը կատարած կը պահանջի:

թաղամյանին այստեղ ևս վիճակված էր սույն դուր կ-  
րել, ինչ որ թատրոնի պարտեզում Վահանի և Նասիբյանի միջև  
պատահած ընդհարման ժամանակ, նա վեր կացավ, գրկեց Նա-  
սիբյանի պստիկ մարմինը և հեռացրեց:

Բայց նասիբունն այդ բանից ավելի փրփրցի  
— թող, մի՛ բռնիր, — ազադակեց նա, անզուսպ կատաղու-  
թութեամանն եղութիւն:

թյամբ խփելով Քաղաքացիար գրությունը՝  
Քաղաքացիանը թողեց նրան, բայց ձեռքերով կապեց նրա ճա-  
նապարհը:

Այս ժամանակ Բաղամյանի ուսիր վրայց կառապէլ Հեղինեն, Նասիբյանը շարունակեց աղջակել.

— Դու սո՞ւտ ես ասում, քեզ ոչ մի նոր օսսկապա առաջ  
տարել, այլ գու եղել ես այն պարոնի մոտ և նրա մոտ էլ ճաշել...  
կարծում ես, ես այդ զգիտե՞մ... Ես ամեն բան գիտեմ, և ինձ չես  
կարող խաբել... Լսո՞ւմ ես, շես կարող...

— իե՞ղ իմ գլուխ: Հապա ի՞նչ ասես, որ շատիս, ուստի  
պողում են քեզնից, — ասաց Հեղինեն ծիծաղելով:

— Սաղրում էլ ես, հա՞... Սիծաղում էլ ես, հա ... ոս քակ...  
կմոռթեմ, — ճշաց նասիբանը:

— Թե աստվածդդ կսիրես,— ասաց Հեղինեն ավելի բարձրա-  
ձայն ծիծաղելով:— Այս քոսոտ, հավ որ մորթես, այն էլ մեծ քա-  
շություն կիրա քոզմից... Բագամյան, ի՞նչ եք բռնել: Թողեք,  
ի սեր աստծո, կկարժի թե իսկապես մի բան է, որ ձեռները բռ-  
նում են:

**Թադամյանն աղասի թողից նասիբյանին, «Փո՞ւ, ի՞նչ զգվեցի է...», — մտածեց նա:**

Նասիբյանը կատվի պես հավաքեց իրեն, ըստ երկույթին, պատրաստվելով հանեարձ ոստնել զեպի Հեղինեն:

Հեղինեն նորից վերցրեց թւյի դատարկ բաժակը:

— Համարձակվիր մոտենալ, համարձակվիր, — սպառնաց նա հաստատուն ձևինով:

Խուզ ու համբ Սալոմեն, որ մինչև այժմ սարսափահար նայում էր մերթ նասիբյանին, մերթ քրոջը, առաջ նետվեց նասիբյանի ճանապարհը փակելու համար, բայց քույրն իսկույն բռնեց նրաթելից, նստեցրեց և, նորից դառնալով նասիբյանին, կանչեց նույն հաստատուն ձայնով:

— Արքային բաց ես, մոտեցիր:

Հեղինեհ մարտակոչն այն աստիճան ազգու էր, որ նասիբ-  
յանը տեղից շարժվել չկարողացավ: Նա ուզում էր խոսել, ազա-  
ղակել առաջիւա պես, նույնիսկ ջարդել, փշրել, բայց այն գիտակ-  
ցությունը, որ ինքը ոչինչ չի կարող անել, կատում էր նրա ձեռքն  
ու ոտքը և խեղղում նրան: Կարճ ժամանուկ երկու ախոյան կանգ-  
նած էին իրար զեմ առ դեմ, երկուսն էլ լուս, բայց մեկն անզոր  
կատաղությունից ինքն իրեն ուտելով, մյուսը հանգիստ և անսա-  
սան, բայց խիստ վճռական-սպառնական դիրք բռնած:

— Ես հիմա ոչինչ չեմ անիլ... ոչինչ չեմ կարող անել, զբախտաբար,— ասաց, վերջապես Նասիբյանը ծանր շնչելով:

— მე ასთესადი კუჩები, — ძალები პეტრი.

= Բայց ուրիշ անգամ... կտեսնես...

— Եթե դու կհամարձակիլնս դարձյալ ոտ դնել այստեղ, ոտք  
կցարդիմ:

— Ծա՛տ բարի, շա՛տ բարի, շա՛տ բարի,— արտասանեց նա-  
սիբյանն ատամների միջից, գլխարկը թոցրեց աթոռի վրայից և  
արագ քայլերով դիմեց դեպի Հեղինեն:— Բայց այժմ զիտե՞ս ինչ  
կասեմ քեզ, ես կասեմ, որ դու... ծախու և արարած ես:

Եվ նախքան նա դուրս կվնար, ինչ-որ մի բան ուժգնորհն արաքեց նրա ականջի մոտ և ինչ-որ սուր-սուր բաներ մանրիկ սառույցների պես դիպան նրա երեսին: Դա թեյի բաժակն էր, որ Հեղինեն ձեռքի կատաղի թափով շպրտեց նրա հետեւից: Բաժակը թուավ սեղանի մոտ հստած Բաղամյանի զլիով, շեշտակի անցավ

Նասիրյանի ականջի մոտով և, դիպլոմ գուանը, տրաքեց ու փշուր-փշուր ցանուցիր եղավ հատակի վրա:

Նասիրյանը չքացավ սենյակից:

Տեսարանն այնքան տպեղ էր, որ Բաղամյանն ակամա դարձրեց երեսը, որպեսզի չնայի Հեղինեին: Նա իր մեջ վիրավորված էր տեսնում այն նուրբ զգացումը, որ տածում էր առհասարակ դեպի կին-արարածը, իսկ այդ բռպեին իր առաջ տեսնում էր ոչ թե մի կին, մի քնքուշ արարած, որի բոլոր գրավչությունն իր քնքության մեջն է, այլ մի կոպիտ տղամարդ, որը հարկավոր դեպքում պատրաստ է դիմելու բունցքի:

Իսկ խեղճ Սալոմեն, մեռելի պես գունատված, նայում էր քրոջ դեմքին սարսափահար և, առանց այն էլ լեզու չունենալով, բոլորովին զրկվել էր ձայն հանելու ընդունակությունից:

Հեղինեն կանգնած էր սեղանի մոտ և, գունատ, ամբողջ մարմնով գողում էր կատաղությունից: Բաժակը շպրտելիս պենսնեն ընկել էր նրա քթից և դայթանի վրա կախ ընկել նրա կրծքին:

— Այս, թե մի կդիպչեր... այս, թե մի կդիպչեր,— ասում էր նա գոհացում շտեսած վրիժառության անզորությամբ: — Գրծվում եմ, գծվում, որ մտածում եմ, թե ինչպես նա համարձակվում է այդպիսի իրավունքներ բանեցնել ինձ վրա, զոռալ, հոխորտաւ, այդպիսի անամոթ խոսքեր առել երեսիս... ինչպե՞ս է համարձակվում... Այսպիսի բան տեսնված կա՞ աշխարհիս երեսին: Երեկվա քննուա, բոսուա շունը, որի առաջ խղճահարությունից մի քիչ հացի փշրանք եմ նետել, այսօր տեր ու տիրական է դառել զիխիս, հաշիվներ է պահանջում ինձնից, վիրավորում է ինձ ամենալիրը կերպով... Եվ այս բանն ես ստիպված եմ տանել ամե՞ն օր, շարունա՞կ... Սա ի՞նչ դրություն է, սա ի՞նչ դրություն է...

Հեղինեն ոտով գեն հրեց աթոռը, պենսնեն քթին դրեց, և խիստ հուզված սկսեց անցուղարձ անել սենյակում:

— Ո՛չ, բավական է, — աղաղակեց նա: — այսկա շեմ կարող դիմանալ: Մինչև այժմ ես միայն սպառնում էի, բայց չեի կատարում սպառնալիքս, իսկ այժմ... Ես կդնամ ոստիկանատուն և ատահովություն կտահանջեմ... Այսպես չի կարելի... Մարդ հանգստություն շունենա անգամ իր սեփական տանը... Սա ի՞նչ դրություն է... Գոնե մի խոսքով, մի ամենահասարակ խոսքով կապված լինիմ նրա հետ, էլի կասեմ՝ քարն իմ զլուխը, իրավունք պատկան է իմ համար և ամենի համար է, իսկ ամեն մեջ մեջ... Սի

իան, մի փաշա, մի սուլթան այն իրավունքները չի բանացնիլ իր հարճի վրա, ինչ իրավունքներ որ նա է բանեցնում ինձ վրա... Սա զժվելու բան չէ...

Հատակի վրա ցրիվ եկած բաժակի փշուրներն ընկնում էին նրա ոտների տակ և տրխկալով ավելի ևս փշրվում. այզպիսի դեպքերում նա կանգ էր առնում, ոտով շպրտում էր փշուրները պատի կողմը և նորից շարունակում իր զդային քայլվածքը:

Հանկարծ նա կանգ առավ Բաղամյանի առաջ, որը բոլորովին անտարեր ու անդգա, նայում էր լուսամուտի ապակիներին, որոնց մեջ հետզետե հանգում էին արևի ճաճանչները:

— Վիպասան մարդ եք, տհա՞ ձեղ մի տիպ, հայոց ազգի ազտամիտի մի տիպ: Անաշառ եղեք, գուրս բերեք այդ տիպը: Ինչո՞ւ չեք դուրս բերում: Երեկի կասեք, որ դա տիպ չէ, որ դա պարողիա է: Բայց ո՞ր տղամարդը մեզնում պարողիա չէ, ասացեք ինդիքմ, ո՞ր ազատամիտը...

Բաղամյանն արմունկները դրեց սեղանի վրա, աչքերը փակեց և ճակատն ու բունքերը սեղմեց մատների մեջ: Նա սիրո շուներ խոսելու: Հաղիվ թե լսում էր Հեղինեի ասածները. զգում էր միայն, որ նրա ծկլթոցները սաստիկ գրղոռում են իր զղերը: Այժմ նա բոլորովին հիվանդ էր զգում իրեն: զլուխը սաստիկ ցավում էր: Ճակատը մերթ սառում էր, մերթ վառվում: Բերանի մեջ անհամություն էր զգում, կարծես դառն բան լիներ կերած, մեջքը և սրունքները կոտրատվում էին առավոտվանից ավելի սաստիկ: ահուն փափագ էր զգում պառկելու և պինդ, սաստիկ պինդ ժամկելու ծնկները:

— Դուք լսում եք, հա՞,— շարունակեց Հեղինեն: — Լսո՞ւմ եք, որովհետե հաշիվների շի զալիս որ խոսեք, չէ՞: Դուք ստիպված եք շտեսնելու տալ այս զաղբելի տիպը, որովհետե ձեր կուսակցությանն է պատկանում, չէ՞... Բայց իմացե՞ք, այսուհետե ես թքել եմ ձեր բոլոր կուսակցությունների վրա, որովհետե ձեր այդ կուսակցությունների անունը կա միայն, իսկ ամանումը... ցեխ կա միայն: Ես այժմ հասկանում եմ Վահանին, նա բոլորովին իրավունք ուներ արհամարհելու և ծաղրելու ձեղ բոլորի էլ, որովհետե ի՞նչ եք դուք: Փրազյորներ և կապիկներ: Զեղ որ փետրահան անենք, տակներիցդ մի-մի մզգսի դուրս կգա: Բայց ափսոս չէ մզգսին: Նա գոնե համբերատար է, իսկ ձեր հոգու խորքում մի-մի սուլթան կա նստած: Դուք աղատամիտ, մինչև անգամ շափա-

զանց ազատամիտ եք, երբ գործը չի վերաբերում ձեր անձնականին, բայց հենց որ բանը գալիս է ձեր կաշուն, դուք ամենաթունդ խավարամիտից էլ խավարամիտ և, որ ամենագարշելին է, պարզապես ըռնակալ եք դառնում: Ձեր այս անտանելի օդում խեղղվել կարելի է...

Բաղամյանը վեր կացավ:  
— Ներեցիք, ես գնում եմ,  
Հեղինեն հանկարծ լոեց և զարմացած նալեց նրան:  
— Գնո՞ւմ եք?  
— Այու։ Վատ եմ զգում ինձ։  
— Թե՞՛ նեղացաք իմ խոսքերից։  
— Չէ, Զեր խոսքերը, համենայն դեպս, ավելորդ էին, և դուք  
էլ իզուր եք այդքան տաքանում, մի՞թե շեք տեսնում, որ նա շատ  
էլ նորմալ վիճակի մեջ չե...  
— Որ այդպես է, թող գնա գժատուն, ինչո՞ւ է ինձ մոտ  
գալիս։  
— Վերջ ի վերջո կգնա, ապահով եղեք։

XVI

Տուն հասնելուն պես թաղամյանը պառկեց։ Մարմնի մեջ  
սաստիկ ցուրտ էր զգում. այնուհետև ջերմեց։ Թիկունքի մեջ ծա-  
կոցները սաստկացել էին։ Գիշերն անցկացրեց խիստ անհանգիստ։  
Սաստիկ տաքության մեջ նրան թվում էր, թե պտտվում է վեզի-  
պես և այդպես պտտվելով գլխիվայր ուլանում է շեշտակի մի մութ-  
անդունդ լի ինչ-որ աղոտ-փայլուն բժերով։ Նման մանրիկ աստ-  
ղերի։

Առավոտյան ծառային ուղարկեց ծանօթ թժշկի հետևից:  
Թժիշկը հանգստացրեց նրան, ասելով, որ ոչինչ չկա, հարկավոր  
է միայն տաք մնալ և բրտնել, և դեղ գրեց: Սակայն օրվա ըն-  
թացքում թաղամյանը նորից դողացրեց և չերմեց: Երրորդ օրը  
նկատեց, որ չոր կիրապով հաղում է: Այդ բանը վախեցրեց նրան:  
Թժիշկը նորից եկավ, այս անզամ ուշի-ուշով քննեց հիվանդի թո-  
քերը և ասաց, որ հարկավոր է շատ զգույշ կենալ, և նոր գեղ  
գրեց:

Սակայն այլևս ոչ մի զգուշություն և ոչ մի դեղ չօգնեց։ Թուրքական բողոքությունը գնալով սաստկանում էր. օր-օրի վրա բարձրացրի բողոքությունը

նում էր տաքության աստիճանը. հիվանդը չէր կարողանում ամոքել ծարավը կաթի և սելթերյան զրի խառնուրդով, որ թժիշկը պատվիրել էր իմել զրի տեղ: Խսկ հազը հետզհետե շորանում էր և ուժեղանում: Հինգերորդ օրվանից գիշերները, երբ տաքության աստիճանը խիստ բարձրանում էր, նա կորցում էր ուշքը և զառանցում, Սակայն առավոտները համեմատաբար լավ էր լինում և կարողանում էր մտածել իր դրության մասին: Խսկ այդ դրությունը նրան հանաք բան չէր երևում: Նրան վախեցնում էր մասվանդ այդ չոր հազը, որ ուժգնության ռոպեներին կարծես ուզում էր պոկել նրա թոքերը և դուրս շպրտել բերանից:

Ուշքը գլխին եկած ժամանակ նրա միտքը շարունակ պտղում էր Մանեի շուրջը, և մի տարօրինակ եսական-վրեժինդրական զգացում թելադրում էր նրան մեռնել։ Նրա չերմոտ երևակայությունը ստեղծում էր զանազան սանտիմենտալ տեսարաններ, և նա առանձին հաճությամբ կանգ էր առնում այն տեսարանի վրա, թե ինչպես ինքը պառկած է դագաղի մեջ, ձեռքերը կրծքին ծալած, գլուխն ուսին ծուած, վարդերի ու ծաղիկների մեջ թաղված, և թե ինչպես Մանեն չոքած է դագաղի առաջ սև հագուստով և, դեմքը ձեռքերով ծածկած, հեկեկում է անմիխթար արցունքներով։ Իսկ Սանթրույանը... Սակայն Սանթրույանի մասին թագամյանի երևակայությունը ոչինչ չէր կարողանում ստեղծել. տեսնում էր միայն նրա ժոկեի գլխարկը և երկարածիտ կողիկները։

Ութերորդ օրը հիվանդի վիճակը բոլորովին վատացավ! Այդ օրը, երեկոյան դեմ, նրան առաջին անգամ այցելեց Հեղինեն:

— Բաղամյան, ի՞նչ է պատահել ձեզ, — Հարցրեց նա, խո-  
նարհվելով հիվանդի բոլորովին փոխված գեմքի վրա:

Բաղմայնը, սաստիկ տարության մեջ, շաղված աշխերով նայեց նրան, ինչոր շշնչաց և սպիտակած, կարծես կաթնոտ լեզվով սկսեց լսատել չորացած և տեղ-տեղ ճաքած շրթունքները:

Հեղինեն ձեռքի ափը դրեց նրա ճակատի վրա, ճակատը չոր  
էր մազաղաթի պես և այրվում էր վառարանի նման:

— Այս ե՞րբ եք այսպես մըսիլ։ Անցած շաբաթ օր մեր տասն  
էիք, այն օրվանի՞ց եք պառկած։

Հիվանդը տեսնդից վառվող աշքերով նայում էր Հեղիներն  
և, ըստ Երևոյթին, չէր հասկանում, թե ինչ էր ասում նա:

- Հեղինեն ավելի խոնարհվեց նրա դեմքի վրա:
- Բաղամյան... Բժիշկ գալի՞ս է:

Հիվանդը զիխով դրական շարժում արագ:

- Ո՞վ է նայում ձեզ:
  - Ի՞նչ...
  - Ո՞վ է նայում, ասում եմ, ձեզ:
  - Մառան:
  - Բժիշկն այսօր եկե՞լ է:
  - Զգիտեմ:

Սաստիկ զերմը մթագնել էր հիվանդի հիշողությունը: Խոսելիս նրա ձայնը հազիվ էր լսվում: Նա չէր դադարում շրթունքները լսատելուց, շնչում էր խիստ արագ և լսելի հեթեթոցով և վառվող, անմիտ, կարծես սարսափահար աշքերը չէր հեռացնում Հեղինեի դեմքից:

- Դուք գիտե՞ք, որ դրությունը շատ վասակալո՞ւ՞ն:
  - Դա պարզ է, — նկատեց Հեղինեն:
  - Այս գիշեր անպատճառ կրիզիս կիխնի: Վատն այն է, որ մարդ չկա մոտը: Մառայի խնամքին թողնել անկարելի է: Դեղեմարդ գրեթե ամեննեին չեն դորժածվում, ես շատ սխալվեցի, որ Հենց սկզբից շփոխադրեցի Հիվանդանոց: Այժմ մնում է, որ մի ֆելդշեր կամ գթության մի քույր կանչենք:
  - Ի՞նչ եք կարծում, եթե մեր տուն փոխադրենք...
  - Ի՞նչ եք ասում... այս դրության մե՞ջ... Անկարելի է:
  - Իսկ եթե ես մնա՞մ:
  - Դո՞ւք... Դրանով, իհարկե, մեծ բարություն արած կլինիք:
  - Շատ բարի, կմնամ: Այսօր մի առանձին գործ էլ շունիմ: Իսկ Հեղինեն մնաց:

Սկ Հօղոսս առաջ.  
Բժիշկը նոր էր հեռացել, որ հիվանդի սենյակը մտավ Զա-  
քարը: Հայտնի չէր որտեղից էր իմացել նա իր եղբորորդու հի-  
վանդությունը և թեպետ չէր սիրում նրան և երկար ժամանակ չէր  
պահպատճենում և այսպիս արենակցական զգացումը ստի-  
եղել նրա մոտ, բայց և այնպիս արենակցական զգացումը ստի-  
պել էր ծերունուն այցելելու հիվանդին: Մերունին անձամբ ծանոթ  
էր Հեղինեին, լավ կարծիք շուներ նրա բարոյականի մասին, մա-  
սն Նավանդ Նասիրյանի մոր պատմությունը լսելուց հետո, և այժմ  
կասկածանքով վերաբերվեց այն բանին, որ նրան տեսավ հիվան-

զի մոտ Զաքարը նստեց հիվանդի մոտ, փորձեց խռոబցնել նրան, բայց թաղամյանը շճանաշեց ծերունուն։ Հեղինեն էնդրեց Զաքարին, որ հիվանդին շանհանգտացնի, և դուրս տարակ նրան կից սենյակը։ Եղբօրորդու դրույթյունը, ըստ երեսույթին, ծանր տպագործյուն էր Յողել Զաքարի վրա, բայց նա չէր կորցրել ծերունիներին հատուկ սառնասրտույթյունը։ Կից սենյակում նա ծանրություն էր բարձրակ նստեց աթոռի վրա և հարցրեց.

- Էս ո՞նց եղավ, որ մեռնում է:  
 Հեղինեն նայեց նրա թափ հոնքերին, և նրան ապշեցրեց  
 ն անսասան խաղաղությունը, որ արտահայտում էին նրա աշքե-  
 նրա գեմքի ամեն մի խորշը: Այդ զառամյալ ծերունին կարծես  
 հարցնում էր մի շատ հասարակ բան:

— Ո՞րտեղից հնարեցիք, թե մեռնում է, — սկատեց Հեղինեն դժկամությամբ:

— Աչքերը... աշքերը լավ չէին, — շնչաց ծերունին կարծես ինքն իրեն։ Մի քիչ լոելուց հետո, նորից իր թավ հոնքերի տակից նայեց Հեղինեի աշքերին և հարցրեց նույն խաղաղ ձայնով։ — Տերսունին իմաց տվե՞լ եք։

Հեղինեն այս անդամ չկարողացավ զսպել իր զայրությը

— Ինչե՞ր եք ասում, չեմ հասկանում, — բացաղահեց նա, — Եկաք-շեկաք, մեռնելու և տերտերի մասին եք խոսում... Զոռո՞վ եք ուղղում, ինչ է, որ մեռնի:

Վերջին խոսքերը Հեղինեի բերանից գուրս թռան ինքսաբերաբար, և նա մտածեց, թե մի՞՞ն այդ փոտած ծերունին պիտի հանդիսանար Բաղամյանի ժառանգը, քանի որ Բաղամյանն ուրիշ ոչ մի ավելի մոտիկ ազգական չուներ: Այդ միտքը բոլորովին վերռովեց նրան, և նա ավելացրեց ավելի ևս զայրագին:

— Հենց թեկուզ մեռնելիս էլ լինի, մի՞թե ձեր տերտերը պիտի փրկի:

— Տերտերը չի փրկիլ, որդի, բայց տերտերի տված հաղորդք  
կփրկի:

— Ո՞նց չէ, որ հաղորդես, ի՛, իսկույն ոտի կպանզնի:  
— Հաղորդը գեղ խո չի, որդի, որ առողջացնի: Հաղորդը հո-  
գու համար է, որ սրբի մեղքերից: Մարմինը չի փրկիլ, բայց հոգին  
կփրկի:

— Ζηηκή... ήντι ζηηκή, — ρωγμακινές, — Ζηηκήνεν ηρηκούσα οι  
ωγήνεκαν έρωα ίπουρεκής, ορρωαν έρωα ζωνηκίστ, ηρηκίστηκακιαν

տոնից! — Մարմինն ինքը հոգի է՝ քանի կենդանի է. իսկ երբոր մեռնի, հոգի էլ ո՞րտեղից կլինի, որ փրկես...

Զաքարը լսում էր Հեղինեի խոսքերի տարափը վերին աստիճանի ապշած: Մինչև անգամ նրան տիրել էր սրբազան մի սարսափ, որ այստեղ, կից սենյակում, մարդը պատրաստվում էր ավանդելու իր հոգին, իսկ այստեղ ուրանում էին այդ հոգու գործիունը, հետեաբար և այն ահեղ դատաստանը, որի առաջ պատախանատու պիտի լիներ այդ հոգին իր երկրավոր մեղսալից կյանքի համար...

— Բաս հոգի չկա, էլի՞,— հարցրեց նա: — Ու երբոր հոգի չկա, բաս աստծու ահեղ դատաստան էլ չկա, է՞լի...

— Չիս, բաս կա:

— Բաս ավետարանը սուտ է ասում է՞լի:

— Է՛ս, թողեք, թե աստված կսիրեք, — զրդոված արտասանեց Հեղինեն և, որպեսզի ծերունին երկար չխոսի, զուրս զնայ հիվանդի սենյակը: Այնուհետև, երբ նորից զուրս եկավ այնտեղից, ծերունին արդեն պատրաստվում էր գնալու:

— Ես ուրիշ բան չեմ ասիլ. որդի, — ասոց Զաքարը: — Մենակ կասեմ՝ վա՛յ քո հոգուն... վա՛յ, վա՛յ, հազար վայ... Դու, որ աղջիկ ես, այդպիս ես խոսում, բաս տղերքն ինչպիս կլինեն խոսելիս... Ես զարժանում եմ, որ աշխարհս դեռ դիմանում է, չի կործանվում, ինչդեմս որ կործանվեց Սողոմ-Գոմորը...

— Ուրեմն, երեխ շատ էլ մեղավոր չենք, որ չի կործանվում, — կծու կերպով նկատեց Հեղինեն:

— Հը՛մ, սպասիր հայա, աստծու համբերությունն էլ վերջ ունի:

## XVII

Զաքարը հիվանդի բնակւրանից դիմեց գեղի Սանթրոսյանների տուն: Նա վերին աստիճանի վրդովված էր Հեղինեի վարձունքից և ուղում էր իր սրտի մեջ ամբարված մաղձը թափել այստեղ, ուր իրեն հասկանում և համակրանքով էին վերաբերվում:

Արեք նոր էր մայր մտել և սենյակում գեռես բավական լույս էր: Մանեն և սկսուրը նստած էին ճաշասենյակում: Մանեն հազարը լսում էր թեյի պառադաները: Թեյր խմելուց հետո Սանթրոսյանը

նը և Վահանը առանձնացել էին հյուրասենյակը, որ գտնվում էր ճաշասենյակին կից և որի զուրը բաց էր նրանք գործնական խոսակցության մեջ էին, և նրանց ձայները պարզորոշ լսվում էին ճաշասենյակում:

Սանթրոսյանը հանքային գործին կպած էր ֆանատիկոսի եռանդով: Նա կազմել էր հսկայական ծրագրիներ ապագայի համար, բայց առաջմ թիֆլիս էր եկել մի քանի զրամատերերի հետ բանակցելու և կնոջն ու մորն ամառանոց փոխադրելու նպատակով: Թիֆլիս հասած օրը երկաթուղու կայարանում հանդիպելով Վահանին, թուցիկի կերպով պատմել էր նրան իր գործերի դրությունը և այդ գործերն ընդարձակելու մտադրությունը. Հետո հիշելով, որ Վահանը փող ունի, սկզբում կատակով, ապա լրջորեն առաջարկել էր նրան, որ միանա իր հետ և միասին աշխատեն ապագա ընկերության հիմքը դնելու Այդ բանը նստել էր Վահանի խելքում, և նա թողել էր այգօր զյուղ վերաբառնալու մտադրությունը, որպեսզի մանրամասնորեն ծանոթանա գործերին և լրջորեն խորհրդակցի փեսայի հետ: Սանթրոսյանն իր հետ բերել էր հանքերի զանազան նմուշներ, որոնք թափված էին սեղանի վրա, և այդ բոլորը մի առ մի ցույց էր տալիս Վահանին ու բացարում:

Մանեն ճաշասենյակից ականջ էր դնում ամուսնու և եղբար խոսակցությանը և շատ ուրախ էր, որ նրանք ամեն օր զբաղված են իրենց զործերով և մի առանձին ուշագրություն չեն դարձնում իր վրա: Ամուսնու անակնկալ վերադարձից հետո նա այն դրության մեջ էր զգում իրեն, ինչ դրության մեջ որ, անշուշտ, զգում է իրեն հանկարծ ծուղակն ընկած թոշունը: Սկզբում նա սարսափեց, երբ եղբորն ամուսնու հետ տեսավ, բայց Վահանը փեսայի ներկայության ժամանակ քրոջ հետ վարվում էր այնպես, որ կարծես ոչինչ չգիտեր Մանեի գաղտնիքից և նրա հետ ոլ մի ընդհարում չեր ունեցել: Վահանի գործադրած այդ տակտը բավական ճաշեցրեց Մանեին եղբոր հետ: Ինչ վերաբերում է Սանթրոսյանին, նա մի առանձին բան չնկատեց կնոջ մեջ, բացի միայն այն բանից, որ Մանեն բավական նիհարել էր:

Զաքարը շգիտեր, որ Սանթրոսյանն եկել է, և, երբ Օսանն ավելուց նրան որդու գալուստը, նա ուրախությունից մոռացավ Հեղինեի հետ ունեցած վրդովեցուցիչ խոսակցությունը և ճաշ-

սենյակից անմիջապես անցավ Հյուրասենյակ։ Օսանը հետեւց նրան, իսկ Մանեն մնաց ճաշասենյակում։

Սանթրոսյանը ծերունուն ընդունեց շատ սիրալիր կերպով և կատակով հանդիմանեց նրան, որ այդպես ուշ է գալիս իր գալուստը ողջունելու Զաքարն երդում-կրակ ընկավ, թե չեր իմանում, որ նա եկել է, թե չէ, որ իմանար... Ծերունին սկսեց հավատացնել, թե ո՞ր աստիճան սիրում ու հարգում է Սանթրոսյանին, թե որքան երախտապարտ է նրան...

— Լավ, այդ թողնենք, — շտապեց ընդհատել նրան Սանթրոսյանը։ — Դուք ինձ այս ասացեք՝ ինչպես եք, ինչպես չեք։ Ել՛ խոռվ եք ձեր եղբոր որդու հետ։

Ծերունին նոր հիշեց, թե որտեղից էր եկել, և նրա ակներկ ուրախությունը հանկարծ փոխվեց տիրության։ Նա զլուխը խոնարհեց կրծքին և խորը հառաջեց։

— Եղբորս որդին մեռնում է, — ասաց նա։  
— Քա՛, ի՞նչ ես ասում, Աշո՞ւմը, — գրեթե ճշաց Օսանը շանթահար։

Նույն վայրկյանին ճաշասենյակից լսվեց ինչ-որ մի շրխկոց, որից հետո Հյուրասենյակում տիրեց խորհրդավոր լուսիթյուն։

— Բան կոտրվե՞ց, — հարցրեց Զաքարը, զլուխը կամաց բարձրացնելով։

Վահանը վեր կացալ, արագ քայլերով անցավ, նայեց դռան շեմքից դեսի ճաշասենյակ և տեսավ Մանեին, որ նստած էր սեղմբից դեսի ճաշասենյակ և մեռելի պես զունատ։ Նրանց հայացքները զանդիպեցին իրար։ Մանեն ձեռքերով պինդ բռնել էր սեղանի հանդիպեցին իրար։ Նայում էր նրան անմիտ, չուծ աշքերով և կարծես թե ծայրից, նայում էր նրան անմիտ, չուծ աշքերով և կարծես թե հարցնում էր. «Այս ի՞նչ է, տունը շարժվո՞ւմ է...»

— Ի՞նչ պատահեց, — հարցրեց Սանթրոսյանը իր հանդիսաժայնով։

Վահանը ետ դարձավ։

— Ոչինչ, Մանեն էր։ Բաժակն ընկավ ձեռքից կուարվեց, Զաքարը ժանրորեն երերեց զլուխը։  
— Վատ նշան է... շատ վատ նշան է, — արտասանեց նա։  
— Սպասիր, պարոն Զաքար, ինչպես թե մեռնում է, — Հարցրեց Վահանը, խիստ հետաքրքրված ծերունու հաղորդած անակնկալ նորությունից։

— Դե մեռնելն ինչպես կլինի, որդի. մեռնում է, է՛լի Այս րոպեին նրա մոտիցն եմ գալիս, Ոչ ուշք կա զիսին, ոչ բան։ Հանգել զնացել է։ Հետը խոսեցի, չճանաշեց։

— Քա՛, ինչի՞, ի՞նչ է պատահել, — սկսեց Հարցուփորձ անել Օսանը կանանց հատուկ ցավակցական հետաքրքրությամբ։

— Չեմ իմանում, Օսան զան։ Ես էլ պատահմունքով իմացա։ Նա ինձ ե՞րբ էր բանի տեղ զնում, որ ժամանակին իմաց տար։ Որ իմաց տար, երկի մի բան կանեի, որ անտեր շմարություն է, հիմի ո՞վ է նրան մտիկ անողը։ Մի ծառա ունի, մեկ էլ հրեն էն թուրքն է զնացել կողքին նստել։

— Ի՞նչ թուրք։

— Սոլիկենց Ստեփանի աղջիկը, աննամուսների աննամուսը, Թուրքը, թուրքից էլ վատթար... Ասում եմ մեռնում է, տերտեր կանչենք, զա հաղորդի։ Տերտերս ո՞րն է, հաղորդս ո՞րն է, ասում է. Բայ ասում եմ, հոգին Ուզում ես, որ մեղավոր հոգով զնա աստծու ահեղ դատաստանի առաջը կանգնի։ Ի՞նչ դատաստան, ի՞նչ հոգի, ասում է։ Հոգին մարմինն է, մարմինը մեռավ, ասում է, հոգին էլ մեռավ։ Պրժա՞վ զնաց։

Բաղամյանի ծանր հիշանդության լուրը մի առանձին տպավորություն չգործեց Սանթրոսյանի վրա։ Թեև Բաղամյանը, իբրև հեռու-մոտիկ ազգական, նրա տուն զնում-գալիս էր հաճախ, բայց հանդիպեցին իրար։ Մանեն ձեռքերով պինդ բռնել էր սեղանի հանդիպեցին իրարից, նայում էր նրան անմիտ, չուծ աշքերով և կարծես թե հարցնում էր. «Այս ի՞նչ է, տունը շարժվո՞ւմ է...»

— Ի՞նչ պատահեց, — հարցրեց Սանթրոսյանը իր հանդիսաժայնով։  
Վահանը թեև աշխատում էր արտաքուստ անտարբեր ձեահանդիպեցին այն ժամանակ, երբ Զաքարը խոսում էր Հեղինեի նալ և նույնիսկ այն ժամանակ, երբ Զաքարը խոսում էր Հեղինեի աշխատում էր անում Սանթրոսյանին և աշխատում էր Ժըպամասին, աշքով էր անում Սանթրոսյանին զրության մեջ տալ, բայց և այնպես մի տարօրինակ անհանգիստ զրության մեջ տալ, մերթ նստում էր, մերթ վեր էր կենում, ման գալիս սեղանի էր. մերթ նստում էր, մերթ վեր էր կենում, ման գալիս սեղանի վրայից խոնարհվելով դեպի քույրը շշնչաց։

— Աստվածդ սիրես, Մանե, ուշքդ հավաքիր։ Այդպես չի կարուի երեսիդ գույն չկա։ Ծերունին երեկի շափականցնում է։ Այն պես արա, որ բան չնկատվուի։

Մանեն նստած էր արձանացած, մեծ-մեծ աշքերով նայում էր

— 561 —

եղբորք, և նրա անմիտ հայացքից երկում էր, որ չէր հասկանում, թե ինչ է ասում Վահանը:

Վահանն իր ձեռքով մի բաժակ թեյ լցրեց դուրս տարավ և գրեց Զաքարի առաջ:

— Այն թուրքի զատաստանը որ քեզ տան, պարոն Զաքար, ի՞նչ կանես,— հարցրեց նա, նստելով ծերունու մոտ:

— Ես ի՞նչ զատաստան անող եմ, որդի, ասածուն հայոյուղի դատաստանն աստված պետք է անի: Եվ կանի, կտեսնես, որ կանի:

Օսանը վեր կացավ և դուրս գնաց հարսի մոտ:

— Քա, իմացա՞ր ինչ ասաց Զաքարը:

Մանեն գլխով դրական պատասխան տվեց, կարծես զրկված խոսելու ընդունակությունից:

Օսանն այն աստիճան ապդված էր ծերունու հաղորդած անսպասելի նորությունից, որ չնկատեց հարսի տարօրինակ զրությունը: Նա շարունակ ախ ու վաշ էր քաշում, և նրա ջրակալած աշքերն արտասուրի առատ կաթիլներ էին թափում ներքև:

Մանեն նստած էր հանգիստ, անմիտ հայացքով նայում էր սկիսրոշ այտերի վրայով գլորվող արտասուրի կաթիլներին, լսում էր նրա երկար ու բարակ վշտահար խոնքերը և ամեննեին ձայն չէր հանում, նրան թվում էր, թե վերացել է աշխարհից, կորցրել է մտածելու և զգալու ընդունակությունը և ամեն բան, ինչ որ տեսնում է ու լսում, կատարվում է մի ծանր մղձավանշի մեջ:

Զաքարը շկարողացավ երկար մնալ Սանթրոսյանի մոտ. մինչև անգամ ձեռք շտվեց թեյի բաժակին և վեր կացավ:

— Գնում եմ տերտեր տանեմ, շեմ թողնիլ, որ չահել հոգին կորչի: Եվ դուրս կանեմ այն թուրքին, դուրս կանեմ: Ի՞նչ բան ունի, որ ներս է խցկվել:

Սերունին ամբողջապես դողում էր հուզումից, և դուրս գնալիս տարօրինակ կերպով առաջ էր ընկել նրա սպիտակ գլուխը: Ճաշասենյակում նրան բռնեց Օսանը:

— Ո՞ւր ես գնում:

— Գնում եմ տերտեր տանեմ, այն թուրքին էլ դուրս անեմ:

— Սպասիր, ես էլ եմ գալիս:

Օսանը շտապով դուրս գնաց հագնվելու, իսկ ծերունին նըստեց սեղանի մոտ, Մանեի դիմաց, և սպասում էր նրան:

— Նո չահել էր, մեղքեր շատ էր գործել, շատու Ռվ ջահել ծամունեւից մեղքեր չի գործում: Բայց որ հայ-քրիստոնյան մեռնելու շնորհվի, էլ ի՞նչ երեսով պետք է գնա կանգնի աստծու դատաստանի առաջ: Մեր աշխարհային դատաստանը չէ, է, ոք խաբես, աստծու դատաստանն է, վերջին դատաստանը, ահեղ դատաստանը...

Մանեն նայում էր ծերունուն, լուս էր նրան և անհուն ցանկություն էր զգում գլուխը դնելու սեղանի վրա և լալու, լալու, հավիտյան լալու:

Օսանը վերադարձավ քիշմիրի սկ շալը ծածկելով ուսերին Շտապելուց նշա ձեռքերը դողում էին, իսկ գլուխը սովորականից ովկելի խիստ կերպով էր շարժվում:

— Մանեն զան, — ասաց նա, — բան է, որ տեսնեմ շատ վատ է, կմնամ, չեմ գալ այս զիշերի:

Մանեն քիլ էր մնում վեր թոշեր տեղից և աղաղակեր՝ «Ես էլ եմ գալիս...», բայց նա տեղնուտեղը քարացավ, որովհետեւ այդ միջոցին հյուրասենյակից դուրս եկավ ամուսինը Վահանի հետ:

— Մայրիկ, զու էլ ես գնո՞ւմ, — հարցրեց Սանթրոսյանը:

— Բաս ի՞նչ անեմ, որդի: Ես էլ որ չգնամ, ո՞վ պետք է մտիկ ասա այն անտեր-անտիրական որբին: Չորանան նրա մոր սկորները, ոնց որ շորացել են...

— Օրիորդ Սոլիկյանը նրա մոտ է, ասում է:

— Ի՞չ, հողեմ նրա լպստած գլուխը: Զաքարը խո սուս չի ասում: Էսով աղջիկը ի՞նչ գործ ունի չահել տղի մոտ: Նա ո՞վ, նա ո՞վ...

— Ես՝ զամայրիկ, — ասաց Սանթրոսյանը, երբ մայրն ու Զաքարը դուրս գնացին, — մի հեռավոր ազգականի համար որ ալյբան վշտանում է, հապա ի՞նչ պիտի անի, որ ես լինեմ մեռնելիս: Այն ո՞ր բանաստեղծն է, Մանե, որ ասում է. «Ես մի արցունք միայն տեսա իսկական, — այն մոր արցունքն էր անզուգական»... Բայց ի՞նչ է պատահել քեզ. երեսիդ դույն չկա: Հիշանդ ես:

Մանեն ցնցվեց և ձեռքով շիեց ճակատը:

— Զգիւռկմ... Բաժակը... Կարծեմ վախեցա, — արտասանեց նա կամաց:

— Զարմանալի արարածներ են այս կանայք, — բացագանչեց Վահանն ուրախացած, որ Մանեն կարողացավ պատրիչակ դանել

իր գրության իսկական պատճառը ծածկելու ամուսնուց:— Բաժակը կոտրվի՝ կվախենան, մուկ վազի՝ կվախենան: Բան չկա, սիրելիս, վեր կաց մի թիշ ջուր խմիր, կանցնի: Վեր կաց:

Մանեն տեղից անգամ շշարժվեց:

— Դե վեր կաց, մի համարիր,— խնդրեց Սանթրոսյանը:

Մանեն կամաց վեր կացավ և անհաստատուն քալիբրով դուրս գնաց:

Վահանն այժմ մտածում էր, թե ինչպես անի, որ Սանթրոսյանին հեռացնի տնից: Սակայն Սանթրոսյանն ինքը հայտնեց, որ այդ երեկո ժամը 8-ին ժամադիր է եղել մի դրամատերի հետ և զնալու է նրա մոտ:

— Կի՞մ արդեն ութին մոտ է, — ասաց նա նայելով ժամանակիցին: — Խնդրում եմ մնացեք Մանեի մոտ, իսկ ես կաշխատեմ շուտ գալ:

Վահանը մնաց: Սակայն շուտով տեսավ, որ իր ներկայությունն ավելորդ էր, որովհետև հենց այս րոպեին, երբ ուզում էր հրուսել քրոջը, որ զգույշ մնա, Մանեն վճռականորեն խնդրեց, որ իրեն հանգիստ թողնի:

Եվ Վահանը հանգիստ թողեց Մանեին, առաջվա փորձերից խրատված:

### XVIII

Գիշերը կամաց-կամաց մոտենում էր: Մութ սովերներն աննկատելի կերպով դուրս էին սողում սենյակների անկյուններից. սեղանների, աթոռների տակից, իշնում էին առաստաղից, թանձրանում էին հատակից, միախառնվում էին իրար հետ, թանձրանում և կլանում առարկաները: Եվ որքան ժամանակն անցնում էր և մութը թանձրանում, այնքան Մանեն զգում էր, որ ուղեղի մեջ ցցված է ինչ-որ մի բան և դուրս չի գալիս այնտեղից: Հետո մի-այն իմացավ, որ այդ բանը սկեսրոջ խոսքերն էին՝ «որ տեսնեմ շատ վատ է, կմնամ, շեմ գալ այս գիշեր»: «Կամ՝ արդյոք, թե ոչ», մտածում էր Մանեն և սպասում: Ժամանակն անցնում էր սպանիշ մտածում էր Մանեն և սպասում: Գիշերային անդորրության զանդաղությամբ: Ամայի սենյակներում, գիշերային անդորրության մեջ ականջները թշում էին: Քաբացած օդը լցված էր ինչ-որ մրմունչով անըմբռնելի, խորհրդավոր և ահավոր, մեռնողի վերը չին շունչի պես:

Մանեն դուրս գնաց պատշգամբ:

Նսկայական տների հետեւից քաղաքի գլխավոր փողոցն ուղարկում էր իր դեռևս եռուն կյանքի խուզ աղմուկը, որ գալիս էր մեռնելու այսաեղ, այս խաղաղ փողոցում: Դիմացի տան պատուհանները լուսավորված էին պայծառությամբ: Ներսը ասուեգործ վարագույններից ցանցի հետեւ կանանց և տղամարդկանց ստվերներ էին շարժվում և երբեմն-երբեմն շատ պարզորոշ լսվում էին նրանց խոսակցության և ծիծաղի ձայները: Դաշնամուրի և զութակի ներդաշնակ ձայների մի ամբողջ հեղեղ էր դուրս հոսում այդ պատուհաններից, մերթ ուրախ ու բուռն՝ զորահանդեսի ելած զինվորների աղաղակի պես, մերթ տիսուր ու թափակալի, ինչպես թաղման նվազածություն: Զութակը լեզու էր կտրվել: խոսում էր, աղերսում, լալիս էր հուսահատ հեկեկանքով— թվում էր, թե մեռնում էր և փրկություն հայցում: իսկ դաշնամուրը, անհուն վիշտը սեղմած կրծքի մեջ կարծես թե աղոթք էր մրմնչում մեռնողի վրա իր պեղալի խուզ ձայներով...

Մանեն զգաց, որ ինչ-որ մի բան կամաց-կամաց բարձրանում է իր սրտի խորքից և բռնում է բռնկը: Նա նստեց և տաքացած ճակատը սեղմեց պատշգամբի երկաթյա սառն վանդակի վրա: «Մեռնում է, — մտածում էր նա: — Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել... Կարելի բա՞ն է այդ... Ո՞ւմ պատճառով... Մի՞թե իմ... Մի՞թե ինձ համար...»

Մի բարձրածայն խմբական քրքիչ ուշքի բերեց նրան: Նա գլուխը բարձրացրեց և մեքենայաբար նայեց դիմացի տան ճրագավառ պատուհաններին: Դաշնամուրը լռել էր, իսկ զութակը նախկին վշտահար հեծկլտանքի տեղ այժմ ինչ-որ անասնական ձայներ էր հանում: մերթ խոփացնում էր խոզի պես, մերթ մլավում կատվի պես, մերթ ծվծվում մկան պես...

Մանեն վեր կացավ, ներս մտավ և անցավ ներքին սենյակ-ները, որպեսզի լսի այդ անտանելի ձայները:

Սկեսուրը վերադաշտվ: Այդ բանը, ուրախացնելու տեղ, զարմացրեց Մանեին: Նա կարծես թե վճռել էր, որ այդ գիշեր Բադամյանը սիտի մեռներ անպատճառ, հետեւաբար Օսանը սիտի մնար նրա մոտ նրա աշքերը կ'ակելու:

Սկեսուրը սաստիկ բարկացած էր, Հեղինեն չէր թողել, որ նա մնա հիվանդի մոտ, ասելով, որ պառավի ներկայությունն ավելորդ է և խանգարել միայն կարող է, ուստի նրան էլ, Զաքարին էլ

պարզապես դուրս էր արել: Տերտերին անգամ ուզում էր ներս շթողնել, բայց քաշվեց: Խսկ հիվանդի դրությունը շատ վատ էր. հազորդությունն ընդունելիս ամեններն ուշք չկար գլխին: «Ֆէ, չի լուսացնիլ այս գիշեր», — վերջացրեց իր պատմությունն Օսանը:

«Չի լուսացնիլ այս գիշեր», — այս խոսքերն ընկան Մանեի ուղեղը և այնուհետեւ երկար ժամանակ պտտվում էին այնտեղ, լարված մեքենայի անիվի պես: Խիստ անհանգիստ դրության մեջ, նա չէր իմանում ինչ անի, ինչ մտածի, մերթ նստում էր, մերթ վեր կենում, նորից նստում, բաց էր անում որևէ գիրք, բայց, առանց մի բառ անգամ կարդալ կարողանալու, նորից վեր էր կենում, ման գալիս, և ամբողջ ժամանակ նրա միտքը կրկնում էր մեքենայուրեն՝ «Ճի լուսացնիլ այս գիշեր...»: Այդ միջոցին նա ոչինչ չէր զգում, զգում էր միայն, որ սպասում է ինչ-որ մի բանի և այդ սպասողությունը հետպէս փոխվում է զղային անհամբերության: Հետո պարզապես տեսավ, որ սպասում է, թե երբ պիտի քնի սկեսուրը:

Երբ, վերջապես սկեսուրն առանձնացավ իր ննջարանը, մի տարօրինակ երկյուղ պաշարեց Մանեին: Անշարժ կանգնած, նա կարճ ժամանակ ուշի-ուշով ականջ էր դնում դեպի նախասենյակը, և ամեն մի շրջյուն արագ զարկել էր տալիս նրա սկրտը: Հետո կամաց հանեց գլխի ամառվա թեթև ծածկոցը, ծածկեց այնպիս, որ միայն աշքերն էին երևում և զգուշորեն, կարծես մի բան գողացած, դուրս եկավ:

Առաջին երկու փողոցն անցավ գրեթե վակելով, հետո զգալով, որ ծնկները ծալվում են և շունչը հապիվ է ետ բերում, կառք նստեց:

Մի տասը բոպեից կառքը կանգ առավ Բաղամյանի բնակարանի առաջ:

Դուռը ներսից փակ էր: Նա ուշագրություն շդարձրեց այդ բանի վրա, արագորեն բարձրացավ սանդուղքով, որի ժամանակ ուսներն ամեն քայլափոխին խճճվում էին շրջազգեստի փեշերի մեջ, և մտավ առաջին սենյակը: Այստեղ, դրասեղանի վրա, կանաչ լուսամփոփի տակ վառվում էր լամպը և մի մոմ բրոնզյա մոմկալի մեջ: Պատուհանի տախտակի վրա դրված էր կանացի մի փեղյուր: Վենյակում ոչ ոք չկար: Հարեան սենյակի դուռը կիսաբաց էր: Այնտեղից ոչ մի շշուկ չէր լսվում:

Մանեն կամացուկ բաց արագ այդ դուռը, ներս մտավ և

կանգ առավ ակամա զարհուրած սենյակում լսվող մի տարօրինակ շնչառությունից և մանավանդ կիսախավարից, որպիսին լինում է սովորաբար մեռնողի սենյակում գիշեր ժամանակ:

Սենյակի մի անկյունում դրված էր հիվանդի մահճակալը: Գլխավերեր, մահճակալի հետեւ, կլոր սեղանի վրա վառվում էր մի ցածրիկ մոմկալ սև մարմարի պատվանդանով: Ճրագը լուսավորում էր միայն մահճակալի հետեւ և մեռած փայլ էր տալիս պատի պատառի ոսկեզօծ նկարներին: Մահճակալի կողքին, բարձի մոտ, դրված էր եռոտանի կլորիկ սեղան, որի վրա դարսված էին դեղերի սրվակներ և ճկներում էր Բաղամյանի ծոցի ժամացույցը:

Զգալով, որ արյունը սառում է երակների մեջ, Մանեն ուսների մատների վրա մոտեցավ հիվանդին և խոնարհվեց նրա դեմքի վրա: Բայց այդ դեմքը պարզ նշմարել չկարողացավ սենյակում տիրող կիսախավարի մեջ: Այն ժամանակ առավ մոմկալը և, գլխից բարձր բռնած, սկսեց դիտել Բաղամյանի դեմքը:

Հիվանդի աշքերը փակ էին. երեսն էլ կարմիր էր կտրվել. շնչում էր ծանր ու հատու, և երբեմն չոր հազի շատ թույլ ծայներ էին դուրս թույլ նրա բաց բերանով, և այդ շունչը դիպչում էր Մանեի երեսին բաղնիքի գոլորշու պես խոնավ ու տաք:

— Բաղամյան, — շշնջաց նա: Հիվանդը լսեց: Նա պառկած էր անշարժ. շնչում էր ոչ թե քթով, այլ բաց բերանով, և այդ շունչը դիպչում էր Մանեի երեսին բաղնիքի գոլորշու պես խոնավ ու տաք: — Բաղամյան, — կրկնեց Մանեն, ավելի ևս խոնարհվելով հիվանդի դեմքի վրա: — Բաղամյան... Զե՞ս լսում:

Հիվանդի աշքերն այս անգամ բացվեցին ծանրորեն, ավտոմատի աշքերի պես, և, փոխանակ Մանեին նայելու, նայեցին ճրագի լուսին ու նորից փակվեցի նույն ծանրությամբ:

Մանեն սոսկաց: Այդ աշքերը... այդ հայացքը... անգիտակից, զգայազուրկ, փոսֆորային հայացքը... Միթե արգեն մեռնում էր... Մանեն մեքենայաբար նայեց շորս կողմը, կարծես ուզում էր օգնություն աղաղակել, բայց սենյակում, բացի իրենից և հիվանդից, ուրիշ ոչ ոք չկար: Նոր հիշեց, որ Հեղինեն այդտեղ պիտի լիներ, բայց նա չկար: Մառան ևս չէր երևում: Մանեն նորից խոնարհվեց հիվանդի դեմքի վրա, նորից սկսեց կանչել նրան, բայց

Բաղամյանի աշքերն այլևս չբացվեցին։ Հիվանդը պառկած էր առաջվա պես անշարժ և առաջվա պես շնչում էր կիսաբաց բերանով ժանր ու հատու։ Հիվանդությունը միանգամայն փոխել էր նրա դեմքը. զա կարծես Բաղամյանը չէր, այլ բոլորովին անծանոթ մի մարդ խոր ընկած աշքերով, դուրս ցցված այտուսկրներով և սուր քթով, որը պլալում էր մահվան դեղնությամբ։

Մանեն մոմկալը դրեց առաջվա տեղը և նստեց մահճակալի մոտ դրված աթոռի վրա։ «Սա երազ է... անշուշտ երազ է,— մտածում էր նա մեքենայաբար։— Մեռնել... ինչի՞ց... ինչո՞ւ համար... այսպես հանկարծ... այսպես անակնկալ...»։ Նա հայացքը հառել էր հիվանդի փակ աշքերին, որոնք կիսախավարի մեջ թվում էր թե փակ չեն, այլ բաց են և խոռոչները, ամբողջովին սև ու դատարկ, նայում են առաստաղին ինչ-որ ահարկու խորհրդավորությամբ։

Հիվանդը տնքաց, շարժվեց, ձեռքերով ետ քաշեց վերմակը կրծքից, և, խիստ տաքության մեջ, սկսեց զառանցել։ Մանեն ցնցվեց և լարեց իր ամբողջ լսողությունը, բայց հիվանդի զառանցանքից ոչինչ չհասկացավ։ Անկապ խոսքեր էին միայն, որ դուրս էին գալիս հիվանդի բերանից կիսատ կամ աղավաղված, ինչպես լեզուն կապված անդամալույծի արտասանած բառեր։ Մեջ ընդ մեջ նա լեզվի ծայրով լպսուում էր շրթունքները և բերանը շարժում տարօրինակ կերպով, կարծես բերանում ատամներ շուներ և այդ անատամ բերանով ինչ-որ փափուկ բան էր ծամում։ Այնուհետև հիվանդը հանգստացավ և նորից առաջվա դրության մեջ ընկավ։

Մանեն գամլել էր աթոռի վրա։ Նա պարզ հաշիվ չէր կարողանում տալ իրեն, թե ինչո՞ւ եկավ, ի՞նչ պիտի շինի այդտեղ, ի՞նչ է իր դերը։ Բնազմամբ միայն հասկանում էր, որ այդտեղ, իր կողքին պատրաստվում է ինչ-որ խիստ կարեոր մի բան, որին ինքը ներկա պիտի լինի, չի կարող ներկա լինել, որովհետեւ այդ բանը որ կատարվի, դրանով վճռված կլինի իր համար ահագին նշանակություն ունեցող մի խնդիր՝ կյանքի և մահու շափ ահագին ու կարեոր։

Այժմ նա հանգիստ էր։ Կամաց-կամաց նրան պատում էր միտքը թմբեցնող, զգացումները բթացնող այն անդորրությունը, որ պատում է մահապարտին իր անխուսափելի վախճանին սպասելիս։ Նա ետ էր ընկել աթոռի մեջքին և անմիտ հայացքով դի-

տում էր իր սեփական ստվերը, որ խաղում էր դիմացի պատի վրա՝ հետեւ լուսավորող մոմի երերուն լույսից։ Սոցի ժամացուցը ճկճկում էր սեղանի վրա անդուլ ու անտարբեր։

Հարեան սենյակից ինչ-որ շտապ քայլերի ձայներ լսվեցին, և նույն րոպեին ներս մտավ Հեղինեն արագ ու զգուշորեն։ Որովհետեւ մոմը լուսավորում էր Մանեի հետեւ, այդ պատճառով Հեղինեն իսկույն չկարողացավ որոշել, թե ով է նստած հիվանդի մոտ։ բայց երբ մոտեցավ և տեսավ, որ Մանեն է, զարմանքից մի զսպած ճիշ արձակեց ակամա։

— Մանե... Ի՞նչ ես շինում այստեղ, — շշնչաց նա։

Մանեն իր մեծ-մեծ, սառած աշքերով նայեց նրան և ոչինչ շպատասխանեց։

Հեղինեն հանկարծ դարձավ դեպի հիվանդը, խոնարհվեց նրա դեմքի վրա և սկսեց ականջ դնել նրա շնչառությանը։ Հետո բըռնեց Մանեի ձեռքից, նշանացի հասկացրեց նրան, որ վեր կենա, և դուրս տարավ հարեան սենյակը։

— Ինչո՞ւ ես եկել, ո՞վ ասաց, որ գաս, — շշնչաց նա, դուրս դգուշորեն դնելով։

Մանեն շարունակում էր նայել նրան իր սառած աշքերով, պարզ երևում էր, որ նրան բոլորովին այլ միտք էր զբաղեցնում, և նա չէր լսում, թե ինչ է հարցնում ընկերուհին։

— Մեռնում է, չէ, — հարցրեց նա տարօրինակ հանգիստ ձայնով։

— Ո՞վ ասաց քեզ, թե մեռնում է, — բացահանչեց Հեղինեն զայրացած։ — Այն հիմար պառավնե՞րը։ Եվ դու գլուխդ կորցրած վազել ես այս կեսգիշերին։ Եվ, երկի, թաքուն... Հա՞։

Մանեն ոչինչ շպատասխանեց։

— Լսիր, քեզ հետ եմ, ի՞նչ ես լուսւմ... Ամուսինդ գիտե՞մ, որ այստեղ ես։

— Ու։

— Բայց որ իմանա՞։

— Ի՞նչ անեմ, — ասաց Մանեն, անփութորեն թոթվելով ուսերը։ — Զիմանա էլ, ես ինք կհայտնեմ, — ալելացրեց նա։

Հեղինեն, վերին աստիճանի ապշած, ձեռքերը զարկեց իրար։

— Մանե, գժվե՞լ ես... Հասկանո՞ւմ ես ինչ ես ասում...։

Մանեն նստեց։ Զարմանալի անդորրություն էր տիրում նրա բոլոր շարժումների և հայացքի մեջ։

— Այժմ ինձ համար ողջ մեկ է, — ասաց նա, շարունակ տարված իր ներքին մտքերով: — Հիմարություն է... Բոլորը հիմարություն է...

Հեղինեին թվաց, թե երազի մեջ է լսում այդ խոսքերը Մանեի բերանից: Ինքը, որ թեորիայով այնքան համարձակ մտքեր էր հայտնում ամուսնական կապի և ազատ սիրո մասին և այնքան ծաղրում էր Մանեի հայացքները, այժմ մնացել էր ապշած և շփռված նույն այդ Մանեի առաջ, որովհետեւ այստեղ թեորիա չկար, այլ կանգնած էր ինքը մերկ իրականությունը, սոսկալի իր ողարգությամբ, անհոգությամբ, և արհամարժանքով:

— Մունե, լսիր ինչ եմ ասում, — ասաց նա առնելով ընկերուհու ձեռքերը: — Աղաշում եմ, վեր կաց գնաւ: Աստված է վկա, դու քեզ կկործանես: Գնաւ: Դեռևս վաղ է: Եթե հարցնեն, ասա ինձ մոտ էիր, մեր տանը: Չէ, չէ. ձերո՞ք գիտեն, որ այստեղ եմ: Ասա որ... մի խոսքով — հնարին՝ ինչ ուզում ես, միայն մի ասիր, որ այստեղ էիր... Լսո՞ւմ ես, լսո՞ւմ ես, Մանե շան: Խսկույն ծառային կասեմ, որ կառք կանչի:

Եվ, առանց սպասելու Մանեի պատասխանին, նա շտապով դուրս գնաց: Բայց խսկույն էլ վերադարձավ:

— Զարմանալի է, միթե ծառան դեռևս չի վերադարձել. ես նրան մեր տուն դրկեցի, որ...

— Ավելորդ է, — ընդհատեց նրան Մանեն նույն հանգիստ ձայնով: — այս զիշեր ես պետք է մնամ այստեղ:

— Ինչո՞ւ հաւարձ:

— Հենց այնպես:

— Ինչպե՞ս թե՝ այնպես:

— Որովհետեւ ես այսպես եմ ուղում:

— Մանե, մի՛ համարիր: Աղաշում եմ, մի՛ համարիր: Դա քաջություն չէ, դա խելացնորություն է: Ճիշտ է, թադամյանի քաջությունը լավ չէ, բայց հավատացնում եմ քեզ, ոչինչ չի պատահի: Բժիշկն այս երեկո այստեղ էր, ասաց, որ նրա առողջ կազմվածքը հճաղթել Վերջաւկես, ես էլ մի բան հասկանո՞ւմ եմ, թե որ: Թոքերի պարզ բորբոքում է, որ առաջացել է մրսելուց և անզգույշ մնալուց: ուրիշ բան չկա: Չես հավատո՞ւմ ինձ:

— Երեխա՞ եմ, ինչ է, որ ուզում ես խարել ես տեսա նրա աշքերը. նա արդեն մեռած է... ես կանչեմ նրան, և նա չլոի՞ ինձ... նա նայի ինձ, և շճանաշի՞...

Մանեի ձախնը դողաց: Նա շրթումքները պինդ սեղմեց իրար և կու տվեց հեծկլտանքը: Աշքերն առատորեն լցվեցին արցունքով:

— Այսքան ժամանակ ես շարշարեցի, տանջեցի նրան... շարշարեցի, տանջեցի և ինձ, — շարունակեց նա դողգոչուն ձայնով: — Ինչո՞ւ համար, մեկ հարցնող լինի, ինչո՞ւ համար: Որ նրան և նրա հետ ինձ ա՞յս օրին հասցնեմ... ես կարծում էի, թե միայն ինձ եմ գոհաբերում, մինչդեռ... Պարտականություն՝ ասում էի ինձ, սրբազն ուխտ՝ ասում էի ինձ: Բայց ահա՛, թող գան և ազատեն ինձ այս հուսահատությունից այդ պարտականությունն ու սրբազն ուխտը: Ո՞ւր են, թող գան, թող գան և համոզեն ինձ այժմ, որ նրա մահը ուշնչ է ինձ համար, որ վաղը, մյուս օրը նրան գերեզման կդնեն, իսկ ես, այնուամենայնիվ, կարող եմ հանգիստ շարունակել իմ կյանքը... Օ՛, եթե գիտենայի, թե այսքան սիրում եմ նրան...

Մանեն թաշկինակը սեղմեց աշքերին և այլևս չկարողացավ զսպել ծանր, խեղդող հեկեկանքը:

Հեղինեն փորձեց նրան հանգստացնել, բայց իզուր. Մանեի հեկեկանքը գնալով սաստկանում էր: Հեղինեն, վերջ ի վերջու, դուրս եկավ համբերությունից:

— Այդպես չի կարելի, վերջապես, — բացագանձեց նա բարկացած: — Հաղիվագ կարողացա հեռացնել սկեսուրիդ և այն ծերունուն, որ շահանգարեն, հիմա դու ես եկել և ստիպում ես, որ հիվանդին թողած, քեզնով զրազվեմ: Գլուխս քարովը տվի, որ մնացի: Չե՞ք թողնիլ, որ տեսնեմ ինչ եմ անում: Ամբողջ վեց ժամ է, որ այստեղ եմ, և մի բոպե հանգստություն չեմ ունեցել, հիմա էլ մոտակա գեղատնից հեռախոսով խոսեցի բժշկի հետ, խընդրեցի, որ խսկույն գա և մի երկու էլ ուրիշ բժիշկ հրավիրի կոնսիլիում անելու համար: Վազելով գնացել և վազելով էլ եկել եմ, որովհետեւ մի բոպեն թանձ է: Մարդն այնտեղ կովում է մահվան հետ, և իմ ներկայությունն անհրաժեշտ է այստեղ, իսկ դու ստիպում ես, որ քեզ հետ շանա թակեմ: Սա ինչի՞ նման է, ասա խընդրեմ: Եվ զեր ասում ես, թե սիրում ես նրան...

Այս խոսքերն ազգեցին Մանեին. նա դադարեց հեկեկալուց և նայեց ընկերունուն շատ խեղճացած:

— Ես քեզ ի՞նչ եմ անում որ, — նկատեց նա:

— Սրանից էլ ավելի բան պետք է անե՞ս. չես թողնում, որ մի բոպե մտնեմ հիվանդի մոտ:

— Մտիր. ես քեզ ե՞րբ եմ բռնում:

— Ա՛խ... ինչպես անեմ, որ քեզ բան հասկացնեմ: Մանե շան, հոգի շան, հասկացիր ինձ. ես չեմ կարող հանդիստ իմ բանս տեսնել, քանի որ դու այստեղ ես:

— Ես քեզ չեմ խանգարիլ, աստված է վկա, էլեն, չեմ խանգարիլ. ուզում ես, կրարանամ նստած տեղս...

— Փո՛ւ, ի՞նչ համառ և անհասկացող կին ես եղել, — դայրացած նկատեց Հեղինեն և, պեսսնեն քթի վրա ուղղելով, դուրս գնաց հիվանդի սենյակը:

Բժիշկները շատ շուշացան: Ամենից առաջ եկավ Բաղամյանի անձնական բարեկամ բժիշկը: Նա այն աստիճան մտահոգ էր հիվանդի գրության համար, որ զրեթե ոչ մի ուշադրություն շդարձրեց Մանեին: Շուտով հավաքվեցին և մյուս բժիշկները՝ երեք հոգի: Դրանցից մեկը հայ էր, մյուսը հրեա, երրորդը ուսւ զինվորական— բոլորն էլ շտապող և վերին աստիճանի անտարբեր: Հիվանդի վիճակը մի առ մի քննելուց հետո շորս բժիշկները նստած էին սեղանի շուրջը և խորհրդակցում էին, որի ժամանակ երկուսը ծխում էին, մեկը մատիտով զանազան նկարներ էր գծում սեղանի վրա ընկած լրագրի լուսանցքների վրա և շուտ-շուտ հորանջում էր, մյուսը, զինվորականը, երկու ձեռքով ոլորում էր քեզի ծայրերը, ներքին շրթունքով բարձրացնում էր վերին շրթունքը և ցած նայելով աշխատում էր ինքն իր աշքով տեսնել իր բեղու նրանք խոսում էին կես-ոռուսերեն, կես-գերմաներեն կիսատպություններով՝ համեմված լատինական տերմիններով: Հաճախ դիմում էին Հեղինեին զանազան հարցումներով, որոնց նապատասխանում էր գերմաներեն, երեկի նրան համար, որ Մանեն ոչինչ շհասկանա:

Եվ Մանեն, հիրավի, բոլորովին ոչինչ չէր հասկանում բժըշկական այդ խոսակցությունից, շնայելով որ լարել էր իր ամբողջ լսողությունը և աշխատում էր ոչ մի բառ բաց շթոցնել ականջից: Հեռու նստած, նա միանգամայն ապշած էր մնացել, թե ինչպես այդ մարդիկ կարողանքում էին այդ աստիճան անտարբեր լինել, նույնիսկ ծխել և հորանջել այն միջոցին, երբ զրադված էին իրենց նման մի մարդու կյանքի և մահվան խնդիրը որոշելով: Եվ այդ մարդը հեռու չէր. նա այնտեղ էր, նրանց կողքին, հարեան սենյակում, որի կիսաբաց դռնից լսվում էին նրա շարագուշակ հաղի ձայներին, որը մահացած էին անդունքին մեջ:

Խորհրդակցությունը երկար շտկեց, և երբ բժիշկները գնացին, Մանեն վրա ընկալ ընկերունու ձեռքերին և հարցրեց տենդային անհամբերությամբ:

— Ի՞նչ որոշեցին...

Հեղինեն շփոթված, աշխատեց խել իր ձեռքերը, բայց Մանեն ավելի պինդ բռնեց:

— Ասա՛, մի՛ թաքցնիր:

— Նրանք ոչինչ շեն հասկանում,— զայրացած բացադաշեց Հեղինեն: — Որոշեցին, թե... ես կհաստատեմ, որ նրանք ոչինչ շեն հասկանում, ոչինչ...

Մանեի ձեռքերը հանկարծ թուլացան. Նա ինքն ամբողջապես կարծես փալաս կտրվեց և կամաց, երերուն քայլերով գնաց նըստեց աթոռի վրա: Նա այլևս ոչինչ չարցրեց: Եվ ի՞նչ հարկ կարև Ամեն ինչ այժմ պարզ էր: Այլևս ոչ մի կասկած, ոչ մի տարակուսանք, հետեւաբար և ոչ մի հույս: Վարագույրն այժմ բաց էր, և այն, ինչ որ նա մինչև այժմ տեսնում էր այդ վարագույրի հետեւ միայն անորոշ գծերով, այժմ միանգամից ներկայացավ նրան իք ամբողջ պարզությամբ:

Հեղինեն հուղված անցուղարձ էր անում սենյակում փոքրիկ արագ քայլերով և բերնից դուրս թռած կցկոտուր բառերով կըրկնում էր, թե բժիշկները ոչինչ շհասկացան, թե բոլորի քունն էլ տանում էր, թե ամենքն էլ շտապում էին, որ շուտով գնան քնեն:

Մանեն բարացած, խոշոր աչքերով նայում էր ընկերունուն, մտածում էր, թե ինչպես է, որ այնքան ժանր պենսնեն չի ընկնում նրա փոքրիկ թթից և, նրան լսելու տեղ, ականջ էր զնում հիվանդի սենյակից լսվող չոր հաղի ձայներին, որոնք խուլ արձագանք էին տալիս մեջ-գիշերային անդունքության մեջ: Այժմ ավելի պարզ ու որոշակի, քան այնտեղ, հիվանդի սենյակում, նրա առջև պատկերանում էին Բաղամյանի փակ աշքերը, որոնք կիսախավարի մեջ թվում էին փակ շեն, այլ բաց ու գատարկ՝ անդունքի նման մութ ու խոր խոռոշներով, որոնց միջից այժմ նայում էր իեթք մահը:

Օդը ծանր էր և խաղաղ: Ժամանակն անցնում էր Մանեի համար ինչ-որ սարսափելի սպասողության մեջ, բայց նա հանգիստ էր և ոչ մի բանից չէր վախենում: Նրան նորից տիրել էր միտքն ու զգացումները թմրեցնող այն անդունքությունը, որի մեջ մարդ

ապրում է մի տեսակ վերասլաց կյանքով, առանց զգալու իր ֆիզիկական գոյության ծանրությունը:

Մի կառք, զղրդացնելով խաղաղ փողոցը, մոտեցավ և կանգ առաջ պատուհանի տակ: Հեղինեն մոտեցավ պատուհանին և նայեց ներքեւ: Մանեն անտարբեր հետաքրքրությամբ նայեց նրա հաստ մեջքին:

— Կարծեն եղբայրդ է, Մանե, — խիստ անհանգստացած շնչաց Հեղինեն, շտապով հեռանալով պատուհանից:

Մանեն նստած էր արձանի պես: Նրա դեմքի վրա ոչ մի գիծ շնորժվեց:

Վահանը մտավ իր լայն և հուժկու քայլերով: Սանդուղքներից բարձրանալուց քրտնել և հեթեթում էր սաստիկ: Քրոջը տեսնելուն պես կանդ առավ ակամա: Պարզ երնում էր, որ եկել էր քրոջ հետից, բայց Մանեի դեմքը լավ դիտելուց հետո ոչ մի խոսք չառաց այդ մասին և դառավ Հեղինեին.

— Անցնում էի այսպես. ասացի մեկ մտնեմ տեսնեմ ինչպիս է Բադամյանը, — ասաց նա, ինքն էլ զգալով, որ շատ անշնորհք պատրվակ է առաջ բերում իր անժամանակ այցելության իսկական նպատակը քրոջից ծածկելու համար: — Կարո՞ղ եմ տեսնել նրան:

Հեղինեն իսկույն հասկացավ նրա մաները և նրան ներս տարավ հիվանդի սենյակը:

— Դուք Մանեի համար եք եկել, չէ՞ — հարցրեց նա:

— Այո:

— Գիտե՞ք, որ այստեղ է:

— Համողված էի, որ այստեղ կլինի:

— Իսկ Մանթրոսյանը:

— Ես քնած էի, որ նա եկավ ինձ մոտ հյուրանոց, զարթեցրեց և ասաց, որ Մանեն տանը չէ և չի հայտնել, թե ուր է գնացել: Կարծում էր, թե ինձ մոտ կլինի: Զծածկեցի, ասացի, որ այստեղ կլինի:

— Ինչ եք ասում, — շնչաց Հեղինեն սարսափած:

— Վնաս չունի: Խաբելն ավելի վատ կլիներ: Բադամյանը նրա ազգականն է և մի տեսակ տանու մարդ էր, այնպես որ Մանթրոսյանը ուրիշ բան կասկածել չի կարող: Եվ տեսա, որ չկասկածեց և նույնիսկ չզարմացավ, որ ասացի, թե Մանեն այստեղ կարող է լինել: Ընկում էր մինչև անդամ ինձ հետ հալ ի դեպ հիվանդին էլ

տեսնելու, բայց շխողեցի: Որ նա երբեք էլ ոչինչ չի կասկածել — զրան ես համոզված եմ, թավն այս է, որ Մանեն ինքը շմատնի իրեն: Այս բոպեին որ նայեցի նրա աշքերին, վախեցա: Նա ընդունակ է ամեն բան անելու:

— Ես էլ այդ սարսափի մեջ եմ և մինչև այժմ չկարողացա համոզել, որ գնա: Գիտե՞ք ինչ ասաց ինձ. ասաց, որ ամեն բան ինքը կհայտնի ամուսնուն:

— Ես հավատում եմ, որ այդպես էլ կանի:

— Բայց դա սարսափելի բան կլինի: Ի սեր աստծո, այնպես արեք, որ այդ հիմարությունը չանի, և տարեք, տարեք նրան շուտով: Մի քիչ առաջ շորս բժիշկ կար այստեղ: Կոնսիլյում ունեին Միաձայն վճռեցին, որ ոչ մի հույս չկա:

— Մեզ չի լսում արդյոք, — կամաց հարցրեց Վահանը, ակնարկելով հիվանդի կողմը:

— Սա՞... Սրա բանն արդեն վերջացած է: Թժիշկներն ասացին, որ այս գիշեր հազիվ թե լուսացնի: Եվ Մանեն ալդ շատ լավ գիտե, թեն ես աշխատեցի ծածկել նրանից բժիշկների ասածը:

Վահանը ոտների ծայրերի վրա մոտեցավ հոգեվարքի մահճակալին, կարծ ժամանակ դիտեց Բադամյանի արդեն մահվան դեղնությամբ պատած դեմքը և, ճնշված մոտալուս մահվան պատճառած ծանր զգացման տակ, կամաց դուրս գնաց քրոջ մոտ:

Հեղինեն հետևեց նրան:

Մանեն նստած էր նույն դրության մեջ, ինչպես որ թողել էին նրան Վահանն ու Հեղինեն հիվանդի սենյակը մտնելիս:

— Մանե, ես գնում եմ, — ասաց Վահանը: — Կզա՞ս տանեմ քեզ ձեր տուն:

Մանեն նայեց եղբորն այնպիսի հայացքով, որից երեսում էր, որ շասկացավ, թե ինչ ասաց Վահանը: Էստ երկությին, նա տարված էր մի շափականց խոր մտքով, որը դեռևս զբաղեցնում էր նրան:

— Վեր կաց, սիրելիս, վեր կաց գնա, — ասաց Հեղինեն այնպես, ինչպես խոսում են երեխայի հետ: — Վաղն առավոտյան ես քեզ տեղեկություն կտամ: Այս գիշեր կրիզիս է, և ես հաստատ համոզված եմ, որ վաղը լավ կլինի: Վեր կաց, արդեն շատ ուշ է:

Մանեն վեր կացավ և, առանց մի խոսք անգամ արտասանելու, լուսնոտի պես հետևեց եղբորը: Նրա հայացքը շարունակ

հառած էր իր առաջ մի անորոշ կետի, ուր կարծես հոգի ու մարմին էր առել նրան զրաղեցնող միտքը և հիպնոսացրած՝ գերեվարում էր նրան զեպի մի խորհրդավոր աշխարհ, որը, սակայն, իր խորհրդավորությամբ ամենեին չէր վախսցնում, այլ նույնիսկ գրավում էր նրան...

Մանթրոսյանը, ըստ երեսլիթին, հանգիստ, պարապում էր իր առանձնասենյակում, երբ կին ու նրա եղբայրը ներս մտան: Ամուսինը գլուխը բարձրացրեց գրասեղանի վրայի՛, նայեց կնոջը և իսկոյն վեր կացավ վախեցած:

Մանեն կանգնած էր նրա առաջ շափագանց գունատ և աշքեր վայր թողած: Գրասեղանի վրա դրված լամպի կապույտ լուսամփոփը մեռելային փայլ էր տալիս նրա դեմքին:

— Ի՞նչ է պատահել քեզ. հիվա՞նդ ես,— հարցրեց ամուսինը:

— Բան չկա,— մեջ ընկավ Վահանը: — Բաղամյանի դրույունը մի քիչ ազդել է, կանցնի: Գնա, սիրելիս, գնա հանգստացիր, — ասաց նա քրոջը:

Մանեն կամաց հեռացրեց եղբոր ձեռքը և տեղից շարժվեց:

— Մանե՛, դու ինձ վախսցնում ես, — բացագանցեց Մանթրոսյանը:

— Կարու, — ասաց Մանեն կարծես գերեզմանի միջից: — Նա մեռնում է... թերևս արդեն մեռած է... իսկ ես... սիրում եմ նրան... սիրում էի նրան...

## XIX

Գիշերվա ժամը երեքին մոտ էր:

Մանթրոսյանը դեռևս նստած էր մենակ իր առանձնասենյակում և իղուր աշխատում էր խելքը զլուխը ժողովել: Նա լավ չէր հիշում, թե ինչ պատահեց կնոջ խոստովանությունից հետո. կարծես հանկարծ շշմեցրել էին նրան գլխին իշեցրած դագանակի այնպիսի մի զորեղ հարվածով, որից մինչև այժմ էլ չէր կարողանում ուշըի գալ: Մութ կերպով միայն հիշում էր, որ Վահանը քրոջը ներս տարավ ննջարան, որը գտնվում էր հենց առանձնասենյակին կից, հետո դուրս եկավ այնտեղից և ինչ-որ բաներ էր ասում, իսկ ինքը կանգնած էր ապուշի պես և ոչինչ չէր հասկա-

նում նրա ասածներից: Հետո մտավ մայրը գիշերվա զգեստով և քնաթաթախ և նույնպես ինչ-որ բաներ ասաց, որից նույնպես ոչինչ շհասկացավ: Վերջը տեսավ, որ մենակ է և շուրջն այնպիսի անդորրություն է տիրում, որ կարծես աշխարհը քարացել էր: Ոչ մի ձայն, ոչ մի շշուկ չէր լսվում նույնիսկ դրսից: Լսվում էր մի-այն ծղրիդի մի խիստ համառ ճոհնչ, որի մեջ գիշերվա անդորրությունն ավելի ևս քարացած էր թվում:

Մանթրոսյանին թվում էր, թե հանկարծ, մոգական մի գավազնի զորությամբ, ինքն ենթարկվել է հոգեփոխության, որ ինքն այլևս առաջարկված մարդը չէ, այլ մի բոլորովին այլ արարած, որի մեջ ամեն ինչ օտար է, անձանոթ, զարմանալի և սարսափելի: Նույն օտարը, նույն անձանոթը, նույն զարմանալին ու սարսափելին նա տեսավ և զգաց Մանեի մեջ, որի շափազանց լուրջ, գունատ դեմքն իր վայր թողած աշքերով երևաց նրա առաջ և չքացավ ննջարանի դռան հետեւ գերեզմանից ելած ուրվականի պես...

Մանթրոսյանը նստած էր արմունկները հենած ծնկներին և գլուխն առած ձեռքերի մեջ: Կնոջ ուրվականը չէր հեռանում նրա աշքի առջևից, և նա չէր իմանում ինչ է մտածում, ինչ է զգում. մտքերն ու զգացմունքները մի սարսափելի քառու էին կազմում նրա մեջ: Նա նեղվում էր ծանր, տաք օդից, գիշերվա անդորրությունից ու մենակությունից և զգում էր, որ եթե պատուհանից մի քիչ հով փշեր, եթե ցերեկ լիներ, ինքն այդպես չէր նողվիլ: Ծղրիդի ճոհնչը մանավանդ ֆիզիկական ցավ զգացնելու շափ գրգռում էր նրա զղերը, և նա չէր իմանում ո՛ւր փախչի, որ ազատվի այդ անտառնելի համառ ճոհնչը լսելուց:

Նա վեր կացավ, որ դուրս գնա պատշգամբ: Մութ հյուսա-սենյակով անցնելիս հարեւան ճաշասենյակից խոպոտ հազի ձայներ լսվեցին: Նա ցնցվեց, կանգ առավ և ականջ զրեց: Վահանն էր հազողը: «Մի՞թե այստեղ է մնացել», — մտածեց Մանթրոսյանը և դուրս գնաց պատշգամբ:

Գիշերը զարմանալի խաղաղ էր: Բաց երկնքի տակ օդի մեջ թեւ փոքր-ինչ զով թարմություն էր զգացվում, բայց և այնպես Մանթրոսյանը դարձալ նեղվում էր, և այստեղ ևս լսվում էր ծըղրիդի ճոհնչը՝ քաղցած մանկան լացի պես համառ և լսողի զղերը քայքայող: Որքան նա աշխատում էր շմելուն տալ, այնքան այդ ճոհնչը հրամայաբար տիրում էր նրա ուշադրությանը: Վերջը տեսավ, որ այլևս ոչ մի բանի մասին չի մտածում, մտածում է մի-

այն այն մասին, թե որտեղից է գալիս այդ ճռինչը— աչից թե ձախից, վերևից թե ներքնից, դրսից թե ներսից, ինչպես չի հոգնում և ի՞նչ է ուզում ասել այդ փոքրիկ, աներևութ միշտը գիշերվա անդորրությունն այդքան աղմկելով:

Բայց ահա կնոջ ուրվականը նորից եկավ կանգնեց նրա առաջիր մեռելատիպ դեմքով։ Այդ ուրվականը ինչ-որ բան ասաց-շատ խորհրդավոր և շատ զարմանալի մի բան— և անցավ չքացավ ննշարանի դռան հետեւ...

Պատշգամբի կողքին երկրորդ թե երրորդ բաց պատուհանից նորից լսվեց Վահանի հազի ձայնը։ «Մի՞թե այստեղ է մնացել», նորից մտածեց Սանթրոսյանը և ականջը լարեց դեպի այդ պատուհանը։ Հազի ձայնը կրկնվեց։ Սանթրոսյանը կամաց ներս գնաց, մթության մեջ խարխափելով անցավ հյուրասենյակով, շոշափելով գտավ ճաշասենյակի դուռը, զգուշորեն բաց արեց և կանգ առավ շեմքում։ Ճաշասենյակում ևս ճրագ շաբար վառված։

Նույն բոպեին ինչ-որ ճոճուաց և լսվեց բոբիկ ոտների մի դրսմբոց հատակի վրա։

- Ո՞վ է,— կանչեց Վահանը իր բամբ ձայնով։
- Դուք քնած չե՞ք,— կամաց հարցրեց Սանթրոսյանը։
- Փեսա՞։
- Ես եմ։
- Զէ, քնած չեմ։
- Կարո՞ղ եմ ձեզ մի փոքր անհանգստացնել։
- Կարող եք։

Սանթրոսյանը ներս մտավ և նույն զգուշությամբ դուռը փակեց իր հետեւից։

Սենյակում այնքան մութն էր, որ կատարելապես ոչինչ չէր երեսում. երեսում էր միայն պատուհաններից մեկը, որի փեղկերը բաց էին, և այդ պատուհանից դուրս— դիմացի տան պատը, որ լուսավորված էր փողոցի լապտերի աղոտ լույսով։ Նա կամաց առաջ անցավ՝ ձեռքերը տարածած իր առջե, որ մթության մեջ մի աթոռ գտնի, և հանկարծ դիպավ ճաշասեղանին։

- Սպասեցեք, ճրագ վառեմ,— ասաց Վահանը։
- Զէ՞— արագ վրա բերեց Սանթրոսյանը շշունչով։
- Ես աթոռ եմ որոնում... Ահա, գտա... Ճրագ հարկավոր չէ, շվառեք։

Աթոռը տարավ դրեց բաց պատուհանի առաջ և նստեց։

- Կարծում էի, թե գնացել եք,— ասաց նա։
- Ուզում էի գնալ, բայց մայրիկը շթողեց։
- Տիրեց երկարատեկ լուսթյուն։
- Դուք դեռ չե՞ք պառկել, — հարցրեց Վահանը։
- Պառկեցի, բայց քնել չկարողացա, — շատ հանգիստ կերպով պատասխանեց Սանթրոսյանը։ — Ամբողջ կյանքիս մեջ այս առաջին անգամն է, որ այսքան անհանգիստ գիշեր եմ անցկացնում, — ավելացրեց նա կարճ լուսթյունից հետո։ — Զգիտեմ, իսկապես տոթ է, թե ես եմ, որ շնչելու օդ չեմ գտնում։ Իսկ այն ծղրիդն էլ... լսո՞ւմ եք։

— Ի՞նչ ծղրիդ։

— Չե՞ք լսում։

— Հա։ Ի՞նչ է որ։

— Եթե չեմ սխալվում, ծղրիդներն երեսում են օգոստոսին, իսկ այժմ մենք դեռևս հունիս ամսումն ենք։ Այնքան վատ է ազդում ինձ այդ ձայնը, որ կարծես քերթում են զղերս բութ դանակով։

Սանթրոսյանը նորից լոեց մի կարճ ժամանակ և ապա սենյակի մթության մեջ նորից լսվեց նրա հանգիստ ձայնը։

— Հարավային Ռուսաստանում եղած ժամանակս մի անգամ մի շատ սուր ընդհարում ունեցաց պաշտոնակիցներիցս մեկի հետ։ Խնդիրը վերաբերում էր անձնական պատվի, և ինձ հասցրած վիրավորանքը պիտի սրբվեր արյունով միայն։ Հետեւյալ օրը կամ ես պիտի սպանեի ինձ վիրավորողին, կամ նա ինձ եվ այնուամենայնիվ այդ օրվա նախընթաց գիշերն անգամ ես այնքան անհանգիստ չեի... Ի՞նչ է պատահում ինձ այս գիշեր— շեմ հասկանում։ Խոհականությունս շեմ կորցրել, սառնասրտությունս— նույնպես, բայց և այնպես... ինձ թվում է թե... ամեն բան կորցրել եմ... ամեն բան, ամեն բան...»

Նրա ձայնը նկատելի կերպով դողաց, և նա իսկույն լոեց։

Վահանը անկողնակալի վրա նստած, տեսնում էր Սանթրոսյանի մութ ուրվագիծը պատուհանի քառանկյունի ֆոնի վրա և ուշի-ուշով ականջ էր դնում նրան։

— Իսկ Սանեն... քնա՞ծ է,— հարցրեց նա։

— Երկի... Զգիտեմ... Ես նրա մոտ շեմ մտել։

— Ինչպե՞ս թե...

— Մի՞թե ես այլևս իրավունք ունեմ նրա մոտ մտնելու...

Վահանը պարզ որոշել չկարողացավ, թե Սանթրոսյանն այդ խոսքերն արտասանեց մինչև հոգու խորքը վիրավորված մարդու հեգնությամբ արդյոք, թե ներփին խիստ զսպած կատաղությամբ:

— Մեր միջև հանկարծ այնպիսի՞ մի վիճ է բացվել, որ...— ավելացրեց Սանթրոսյանը և դարձյալ լոեց:

Վահանի շատախոս լեզուն կարծես փորն էր ընկել: Նա չէր իմանում ինչ ասի, ինչպես հանգստացնի իր քրոջ մարդուն: Սանթրոսյանի երերուն ձայնից, արտասանած կցկուր խոսքերից նա հասկանում էր, թե որքան տանջվում էր հոգեպես այդ մարդը, և նրան թվում էր, թե ինքն էլ մասնակից է իր քրոջ հանցանքին այդ դժբախտ մարդու առաջ, որ այդպես շարաշար տանջվում էր բոլորովին անարդար կերպով:

— Վիճ, ահա՛ զոր մի վիճ,— կրկնեց Սանթրոսյանը, կարծես ինքն իրեն:— Մինչդեռ երեկ էր, այսօր էր, սրանից մի-երկու ժամ առաջ էր, որ ես ոչինչ չգիտեի, ոչինչ չէի կասկածում, ոչինչ... Եվ հոգիս այնքան խաղաղ էր... իսկ այժմ... իսկ աշխամ: Ինձ թվում է, թե երազումս եմ, մի սարսափելի երազի մեջ, որից ուզում եմ դուրս գալ— չեմ կարողանում... Մանեն և... Եթե ինձ ասեին, թե գառը հանկարծ գայլ է դարձել, աղավնին՝ օծ, հրեշտակը՝ սատանա, եթե ինձ ասեին, թե երկինքը պիտի փուլ գա, աշխարհս պիտի կործանվի այս բոպեին,— կհավատայի: Բայց այս բանին... Բայց այն բանին, ինչ որ նա ասաց... այդ բանին չեմ ուզում հավատալ— չեմ ուզում, որովհետեւ հավատալու բան չէ և չի կարող լինել... Մանեն և... Երկուսից մեկը. կամ ես մինչև այս հասակս միամիտ եմ եղել երեխայի պես և կամ թե մեր ժամանակումն իսկ կարող են այսպիսի հրաշքներ կատարվել: Մի՞թե դուք ևս հրաշք չեք համարում այս բանը, հրաշք, ամենազարմանալի հրաշքն աշխարհիս երեսին: Ահա մի ժամ է, երկու ժամ է, շգիտեմ որքան ժամանակ, կարծես թե աշխարհ գալուս օրից ի վեր, մտածում եմ, մտածում եմ... ի՞նչ եմ մտածում— չգիտեմ: Ինձ թվում է թե ուղեղս ցնդում է... զգում եմ, թե մեզս հետզհետեւ զարթնում է մի բան, սոսկալի մի բան, որ կարծես թե բռնում է ինձ պինդ, երկաթի ճանկերով և ստիպում է անել մի բան, զարհուրելի, ան-

երևակայելի մի բան, որի մասին մտածելիս քարանում է ուղեղը, արյունս սառում է երակներիս մեջ... Եվ ինձ թվում է երեխմ, թե արդեն կատարել եմ այդ բանը, և քիչ է մնում ճշամ խելազար զարհուրանքով... ես հասկանում եմ, թե ինչ է այս, և զսպում եմ ինձ, կարեվեր զանք եմ գործ դնում զսպելու ինձ. ես ուզում եմ փախչել ինքս ինձնից, իմ մտածմունքներից, որոնք մրցյունների պես ղծվում են ուղեղիս մեջ, բայց... այս գիշերը, այս մութ գիշերը, այն ծղրիդը... Օ՛հ, ե՛րբ պիտի լուսանա վերջապես...

Սանթրոսյանին ուզքի բերեց մի ճիղոց և ֆուֆորային մի լույս, որ վառվեց և հանգստ Վահանի անկողնակալի վրա:

— Ի՞նչ եք անում,— հարցրեց նա:

— Ուզում եմ ծխել:

Մի ուրիշ լուցկի ճիղաց և վառվեց:

Լուցկու կարճատե լույսի տակ Սանթրոսյանը տեսավ Վահանին ներքնաշշորով անկողնակալի վրա նստած, մերկ ոտները կախ արած և հաստ սիկարն ատամների մեջ բռնած:

Լուցկին հանգավ, և այժմ սենյակի մթության մեջ լուսատիտիկի պես առկայժում էր սիկարի կարմրավուն կրակը, վայրկենաբար լուսավորելով Վահանի մազագործ դեմքը: Սանթրոսյանի քթին դիպավ իրեն անսովոր և անախործ ծխախոտի ծանր հոտը: Հեռու-մոտիկ հարեւանի բակից լսվեց աքաղաղի քնաթաթախ մի կանչ, որն այնուհետև մոտ հինգ րոպե կրկնվում էր ընդմիջում-ներով, սկզբում խոպոտ, հետո հետզհետեւ զլվելով:

— Կկանչի, կկանչի և նորից կընի հանգիստ,— ասաց Սանթրոսյանը:— Իսկ ես...

Նա լոեց և խոնարհվեց ծնկների վրա:

Պատի ժամացույցի լեզվակը, հարատե շարժուն, հնչեցնում էր մութ սենյակի լուսիլան մեջ իր շափաբերական զարկերը խոր-շըրդավոր անտարբերությամբ:

— Զարմանալի բան,— խոսեց Սանթրոսյանը երկար լուս-թյունից հետո,— մարդ սկսում է խորը մտածել և խորը զգալ աշխամանակ միայն, երբ հանկարծ դժբախտության մեջ է ընկնում: Ասում են, թե ուսումը, կրթությունը մարդուն կամքի ուժ և իրավունքի գիտակցություն են ներշնչում. բայց այս գիշերվա դեպքն ինձ բոլորովին հակառակն է համոզում: Ես տգետ մարդ չեմ, նույնիսկ մի ժամանակ պատրաստվում էի գիտական ասպարեզի

Համար, բայց և հազիվ թե որևէ մարդ այնպես թույլ և իրավագուրկ զգա իրեն, որքան ես եմ զգում ինձ այժմ: Ժողովրդի հասարակ մարդը, մի գուհիկ գյուղացի, մի տգետ արհեստավոր, մի բիրտ բանվոր, եթե իմ տեղս լիներ այս րոպեին, կդիտենար թե ինչ պիտի անի, և կաներ առանց տատանվելու, առանց երկմտելու, կաներ իսկույն, անձնատուր իր ամբողջ էությունը լափող անմիջական զգացմանը. իսկ ես... Ահավասիկ ես նստած եմ ձեր առաջ թույլ, կամացուրկ, տատանվող, անվճռական, նույնիսկ վախկոտ, ինչպես մի Համլետ, որ ընդունակ է միայն մտածելու, մտածելու և սարսափելու իր մտածմունքներից: Ինչքան էլ որ խնդիրը շուր եմ տալիս դեսուդեն, ինչ տեսակետից էլ որ մոտենում եմ նրան,— իրավական թե բարոյական, փիլիսոփայական թե առօրյա կենցաղավարական,— այնուամենայնիվ վերջ ի վերջո գալիս կանգ եմ առնում դարձյալ այն անողոք, անջնջելի կետի վրա, որ կինս, այսպես թե այնպես, իմս չէ այլևս, որովհետև սիրտն իմս չէ: Սա այնքան պարզ է, այնքան տրամաբանական, որ ավելորդ է անգամ այս մասին խոսել: Եվ այստեղ է, ահա, որ կտրվում են թեվերս, և ես այնքան թույլ եմ զգում ինձ, այնքան իրավազուրկ, որքան նորածին մի մանուկ: Ի՞նչ կարող եմ անել: Իրավո՞ւնք ունիմ որևէ բան ասելու, նույնիսկ հանդիմանական մի թիթե խոսք ասելու: Իբրև մարդ, նա ազատ է, նա անձեռնմխելի է: Նա իրավունք ունի, իսկ ես չունիմ: Այդպես է պահանջում լոգիկան: Եվ երբ մի քիշ էլ առաջ եմ անցնում, տեսնում եմ, որ նույնիսկ ներելու իրավունք չունիմ, այո՛, նույնիսկ ներելու իրավունք, որովհետև ներելու իրավունք ունի միայն նա՛, ով ամենից առաջ պատժելու իրավունք ունի, իսկ ես հենց պատժելու իրավունքից է, որ զրկված եմ համարում ինձ: Ահա՛ թե մինչև ո՛ւր կարող է տանել այս անողոք, այս պողպատյա լոգիկան: Շատ-շատ, ես իրավունք ունիմ միայն ասելու «մնաս բարե» և գնալու իմ ճանապարհով, բայց... հետո՞... Ահա՛ թե որտեղ է թաքնված Համլետը... Ապշելու բան է, թե ինչպես ձեռաց կարելի է փշրել մարդու ապագան, նրա ամբողջ կյանքը, այն բոլորը, ինչի համար նա երկար տարիներ տըքնել, շարշարվել, տանջվել է... Ա՛խ, Մանե, Մանե, այս ի՞նչ արիր դու, այս ի՞նչ արիր...»

Նրա հանգիստ ձայնը նորից դողաց, և նա ավելի կախեց գլուխը ծնկների վրա:

Աքաղաղը լուել էր, և մութ գիշերն առաջվա պես ննջում էր անդորր: Վահանի սիգարը մերթ վառվում էր, մերթ հանգչում, նրա անմազ դեմքը լուսավորելով իր վայրկենական անփայլ կրակով:

Հանկարծ ինչ-որ տարօրինակ խուլ ձայներ, քթի փսփսոցի նման, դիպան Վահանի ականջին: «Էա՞ց է լինում», — մտածեց նա, նայելով Սանթրոսյանի կողմը: Սակայն այդ ձայներն իսկույն լուցին:

— Ես նրան սիրում էի, շափազանց սիրում, — շարունակեց Սանթրոսյանը երերուն ձայնով, որից սակայն երևում էր, որ նա աշխատում է սրտապնդել իրեն: — Սիրում էի այն աստիճան, որ ամեն անգամ, երբ երկարատև բացակայությունից հետո, գալիս էի տուն, նայում էի նրա աշքերին, գրկում էի նրան, ինձ թվում էր, թե պիտի մեռնեմ երջանկությունից... Եվ այս բոլորն այլևս չկա, չքացավ հանկարծ, միանգամից, միրածի պես, անդարձ... Ի՞նչը ստիպեց նրան իր խոստովանությունն անելու ինձ և այդ էլ այն ժամանակ, երբ ինքն իր աշքով տեսել և համոզվել էր, որ նա, ում որ սիրում է, մեռնում է: Զէ՞ որ ես երբեք, երբեք շեմ կասկածել, չէի կասկածում և մինչև մահս էլ չէի կասկածիլ նրա հավատարմության և առաքինության մասին: Ուրեմն ինչո՞ւ արագ այդ բանը, ինչո՞ւ Մի՞թե ինձ պատժելու համար... մի՞թե նրա համար, որ սրտիս մեջ գցեր այս թունավոր կասկածը, մի կասկած, որ վերաբերում է ոչ այնքան իրեն և նրան, ում որ սիրում է եղել: Որքան ինձ, այո՛, ինձ, որովհետև ես այժմ մտածում եմ, — և այս մտածմունքն ուղղակի մահ է ինձ համար, — թե այն ժամանակ: Երբ ես գրկում էի նրան և իմ ամուսնական իրավունքները բանեցնում, դրանով թերեւս վայրենի մի բռնություն էի գործ զնում նրա զգացմունքների վրա, և նա չէր բողոքում այդ բանի դեմ կար վախենալով ինձնից, կամ խղճահարվելով ինձ վրա... Եվ ես այժմ շգիտեմ, թե ո՛րն ավելի անտանելի, ավելի հուսահատական է ինձ համար— այն գիտակցությունն արդյոք, որ նա այլևս իմս չէ, թե՝ այն կասկածը, որ նա իմս չէ եղել երբեք, հենց սկզբից... Բայց մի ուրիշ բախ կա, որ միանգամայն զինաթափ է անում ինձ: Այդ այն է, որ մտածում եմ, թե միգուցե ես եմ պատճառը: Ապահով իմ ընտանեկան երջանկության վրա, վերին աստիճանի եսասեր և անհեռատես. կնոջս վրա նայելով իբրև մի առարկայի վրա, որով մարդիկ զվարձանում են հոգնատանց աշխատանքից հետո, ես ընկել եմ մամոնայի հետեւից, ամբողջ ամիսներ բացակայել եմ

տնից, և մեկ տարի չէ, երկու տարի չէ... իսկ նա— դեռատի կին տաք արյունվ, եռուն զգացումներով, գգվանքների կարոտ... մենակ... մոռացված կամ գրեթե մոռացված... Հետո, իմ այս հասակը... Չէ՞ որ ես մեծ եմ նրանից, կրկնակի մեծ... իսկ նա... այն պարոննը...

Սանթրոսյանը հանկարծ ոտի կանգնից, և Վահանը տեսավ նրա մութ ուրվագիծը պատուհանի կիսախավար ֆոնի վրա ձեռքերը տարօրինակորեն շարժելիս:

— Ո՛չ, ո՛չ, զգվելի, քստմնելի, զարհուրելի միտք է այս,— շնչաց Սանթրոսյանն ատամները պինդ սեղմած իրար:— Այս ե՛ս չեմ մտածում այսպես. սա նախանձի դեն է, որ մտել է գանգըս և շամփրում է ուղեղս... Չեմ հավատում, չեմ ուզում հավատալ, չպետք է հավատամ դեի ներշնչումներին, այլապես իմ ֆլեգմատիկ բնափորությունն անգամ ընդունակ է կրակ դառնալու և լափելու մեկին էլ, մյուսին էլ և ինձ էլ նրանց հետ միասին...

Նա մի լոպե լոեց, ինչ-որ տարօրինակ հեռցներ արձակելով, կարծես խեղդվելով օդի պակասությունից, հետո արագորեն առաջացավ դեպի այն կողմը, որտեղ երեսում էր սիգարի կրակը, և կանգ առավ կիսաճանապարհին:

— Խոսեցե՞ք, խոսեցե՞ք, ի սեր աստծո, — գրեթե ճշաց նա, բայց հանկարծ կարծես ինքն իր ձայնից վախենալով, ձայնը խեղդեց կոկորդի մեջ:— Խոսեցեք, մի բան ասացեք, հանգստացրեք ինձ: Մի՛ լոեք, մի՛ խղճաք ինձ: Ասացեք ամեն բան, ինչ որ ճշշմարիտ է: Փարատեցեք կասկածներս, միմիայն կասկածներս և երդվում եմ, որ ես ձեր քրոջ մի մազին անգամ չեմ դիպէիլ...

Վահանը ձեռքով շոշափեց, գտավ կողքին աթոռի վրա դրած հագուստը, ձեռաց հագնվեց, վառեց ճաշասեղանի վրա առաստաղից կախված լամպը, սիգարը պատուհանից շպրտեց փողոց և գնաց կանգնեց ուղղակի Սանթրոսյանի առաջ:

Սանթրոսյանը կանգնած էր սաստիկ գումատ, հոգեկան սուր տանշանքից ծամածոված դեմքով:

— Լսեցեք, փեսա, — ասաց Վահանը շատ լրջորեն:— Եթե դուք կարծում եք, թե ես լուսում եմ նրա համար, որ ոչինչ չունիմ ասելու կամ, այլ խոսքերով, հանցավոր եմ համարում քրոջս և չեմ ուզում ճշմարտությունն ասել ձեզ, որպեսզի դուք ձեռք շբարձ-

րացնեք քրոջս վրա— շատ սխալվում եք: Ես լուսում եմ՝ նրա համար միայն, որ միջամտությունովս ցավին դարման շիմ անիլ: Եվ, վերջապես, չէ՞ որ դուք ինքներդ ասացիք, թե մի անգամ որ նրա սիրտը ձերը չէ, ուրեմն ավելորդ է այս մասին խոսել: Այստեղ էլ պետք է վերջակետ դնեիք և մտածեիք միայն այն մասին, թե այսուհետև ինչ պիտի անեք: Բայց դուք գեռես ուզում եք իմանալ ինչ-որ ճշմարտություն: Ես հասկանում եմ ձեր հոգեբանությունը: Որքան էլ դուք սառն դատողությամբ խնդիրը պարզ և վերջացած եք համարում հենց միայն այն իրողությամբ, որ ձեր կնոջ սիրտը, ուրեմն և ինքը ձեզ չի պատկանում, այլ պատկանում է նրան, որին սիրում է, այնուամենայնիվ ձեր մեջ նստած կենդանաբանական արուն իր բողոքի ձայնն է բարձրացնում ձեր սառն դատողության դեմ և իր հրամայական պահանջներն է դնում ձեր առաջ ձեր էզի վերաբերմամբ, որին տիրելու բոլոր իրավունքները միմիայն ձեզ են տվել պետական և եկեղեցական օրենքները, ավանդական սովորություններն ու հասարակաց կարծիքը: Այդպէս է թե ոչ:

— Այդպէս է արդյոք, — շնչաց Սանթրոսյանը տարակուսանքով:

— Այդպէս է, այդպէս: Երբոր փոքր-ինչ հանգստանաք և լավ մտածեք, կտեսնեք որ ես ճշմարիտ եմ ասում: Այլապես ի՞նչն է դրդում ձեզ այդպես հուղվելու: Ինչո՞ւ ես, որ նրա եղբայրն եմ միայն, ձեր շափ չեմ հուզվում, կամ մի օտար մարդ, որի համար ողջ մեկ կիխնի ձեր կիխն ձեզ է սիրում թե մի ուրիշի: Ինչ վերաբերում է ձեր ցանկացած ճշմարտությանը, ես կարող եմ հավատացնել ձեզ, որ քույրս հավատարիմ է մնացել իր ամուսնավատացնել ձեզ, որ կան ուխտին և շարաշար կոիվ է մղել ինքն իր դեմ և նրա դեմ, որ մեռնում է այնտեղ, եթե արդեն չի մեռել... Հավատո՞ւմ եք:

— Ուզում եմ հավատալ... Ա՛խ, որ իմանաք ինչպէս ուզում եմ հավատալ, — հառաչեց Սանթրոսյանը:— Կյանքիս կեսը կտայի, եթե այդ ճիշտ լիներ...

— Ես գիտեի, ախր, որ չեք հավատալ, դրա համար չէի ուզում խոսել, — նկատեց Վահանը սառնությամբ և ուզում էր հեռանալ, բայց Սանթրոսյանը հանկարծ բռնեց նրա ձեռքից:

— Սպասեցեք: Մի նեղանաք: Ինդրում եմ, պարոն Վահան, մի նեղանաք, եթե ես դժվարանում եմ ձեզ հավատալ, որովհետև

շէ՞ որ դուք նրա եղբայրն եք... չէ՞ որ այսպիսի բաներում առհաս-  
սարակ ճշմարտությունը շեն ասում... և, վերջապես, չէ՞ որ դուք  
ինքներդ կարող եք ոչինչ շիմանալ...

— Դե որ այդպես է, էլ ի՞նչ ճշմարտություն եք ուզում ինձ-  
նից: Այդպիսի դեպքում ավելի լավ չէ՞ ինձ դիմելու փոխարեն,  
դիմեիք ուղղակի Մանեին և փարատեիք ձեր կասկածները: Եթե նա  
այնքան ազնիվ գտնվեց, որ շծածկեց ձեզնից ճշմարտության մի  
մասը, ես կարծում եմ՝ չի ծածկիլ և մյուս մասը, որ ձեզ այդքան  
մտատանջում է: Ուզում եք, հենց այս րոպեին գնացեք նրա մոտ:

— Նրա մո՞տ... այս րոպեի՞ն... ի՞նչ եք ասում,— շշնջաց  
Սանթրոսյանը և մեքենայորեն ետուետ գնաց:

— Ի՞նչ կա որ,— զարմացավ Վահանը: — Ավելի լավ չէ՞  
ամեն բան վերջացնեք իսկույն:

— Հետո:

— Հետո ի՞նչ. դուք էլ, նա էլ միանգամից կհանգստանաք:  
Եթե չհանգստանաք էլ, գոնե կիմանաք ձեր անելիքը: Թե չէ, ինչի՞  
նման է, որ դուք այս կեսպիշերին, քունը կտրած, թափառում եք  
սենյակներում, տանջում եք ձեզ կասկածներով և շեք իմանում,  
թե ինչ կրերի ձեզ վաղվան օրը: Երբ որ փտած ատամը ցավում է,  
պետք է հանել դեն շպրտել իսկույն, թե չէ պահել և այսօր-վաղը  
գցել— կնշանակի ավելորդ տեղը տանջվել: Գնացեք, գնացեք խո-  
սեցեք իսկույն, ես ձեզ խորհուրդ եմ տալիս:

— Ոչ, ոչ... ես, ճիշտ է, անհանգիստ եմ, քնել շկարողա-  
ցա... և ձեզ էլ անհանգստացրի, որի համար ներողություն եմ  
ինդրում, բայց... ի՞նչ հարկ կա շտապելու... գիշերը խո հավիտ-  
յան շի տեսելու... կլուսանա, չէ...

Վահանը կանգնած էր Սանթրոսյանի առաջ, նայում էր նրա  
շփոթված աշքերին և մնացել էր զարմացած, թե մի՞թե դա այն  
մարդն էր, որ մի րոպե առաջ սպառնում էր կրակ դառնալ և լա-  
փել իր դժբախտության պատճառ եղողներին և իրեն էլ նրանց հետ  
միասին:

— Դուք խոսում եք այնպես, որ կարծես թե... վախենում եք:  
Հա՞ վախենո՞ւմ եք,— հարցրեց նա:

Սանթրոսյանն իր հերթին նայեց նրան զարմացած:  
— Վախենո՞ւմ: Ինչի՞ց: Ի՞նչ բանի համար:

— Հապա ինչո՞վ բացատրեմ ձեր այդ վարանումը:  
— Ինչպի՞ս ասեմ, որ ինձ հասկանաք,— ասաց Սանթրոս-  
յանն արագորեն տիրապետելով իրեն: — Զեզ ասացի, թե ինչ  
հայացքով եմ նայում այս խնդրի վրա: Ես չեմ կարող և բարո-  
յական ոչ մի իրավունք չունիմ դատավորի դեր ստանձնելու, հար-  
ցուիործ անելու, ստիպելու, սպառնալու: Դա դեմ է իմ խղճին, իմ  
համոզմունքին, իմ հասկացողությանը: Հենց միայն այն գիտակ-  
ցությունը, որ տեսակցությունն ինձ հետ վերին աստիճանի ծանր  
պետք է լինի նրա համար, այս գիտակցությունն արդեն բավական  
է, որ ես միանգամայն խուսափեմ նրա հետ երես առ երես հան-  
դիպելուց: Ես չեմ կարող տեսնել, թե ինչպես նա ճնշվում է իմ  
ներկայությունից, տանջվում է, չի ուզում պատասխանել և, այնու-  
ամենայնիվ, ստիպված է պատասխանել:

— Բայց չէ՞ որ դուք կոպիտ միջոցների լեռ դիմելու: Զեզ  
դիմելու, չէ?

— Այդ ավելի վատ:

— Ուրեմն ի՞նչ պիտի անեք, ձեր կարծիքով: Հիմա շեք ուզում  
նրա հետ երես առ երես հանդիպել, որպեսզի ձեր ներկայու-  
թյամբ ճնշում շպատճառեք նրան, վաղն էլ, երկի, շեք ուզիլ, մյուս  
օրն էլ, երկի... բայց մինչև ե՞րբ: Չէ՞ որ մի օր, ուզեք-շուզեք,  
պետք է վերջ տալ այդ անորոշ դրությանը: Եվ վերջապես, ես չեմ  
հասկանում, թե ինչպես պիտի անեք, որ, մարդ ու կին երես առ  
երես չհանդիպեք իրար երբեք: Հնարավոր բա՞ն է այդ:

— Դուք ճշմարիտ եք ասում,— ասաց Սանթրոսյանը Վահա-  
նի խելացի նկատողություններից ընկճված: — Իհարկե, այս բա-  
նը, այսպես թե այնպես, պետք է վերջացնել մի օր, բայց... Դուք  
ասացեք, ի՞նչ անեմ և ինչպե՞ս անեմ, քանի որ...

Նա շվերջացրեց և, նորից շփոթված հայացքը, լի հոգեկան  
տանջանքի արտահայտությամբ, ման ածելով շորս կողմը, ձեռքե-  
րի մատները շփեց իրար այնքան ամուր, որ լսվեց խաղերի ճըրթ-  
ճըրթոցը:

— Եկեք այսպես անենք,— ասաց Վահանը: — Գնանք նրա  
մոտ միասին: Ես կարծում եմ, որ թե դուք և թե նա այնքան շեք  
ճնշվել իրարից մի երրորդ անձի ներկայությամբ, որքան եթե մեն-  
մենակ հանդիպեք իրար: Համաձա՞յն եք:

Այս բանը, բատ երևութին, նստեց Սանթրոսյանի խելքում: Կարճ ժամանակ նա լայն բացած մտառու աշքերով նայում էր Վահանի աշքերին, հետո նրա դեմքը փոքր-ինչ պայծառացավ, և նա շշնչաց գրեթե ուրախացած:

— Այդ լավ ասացիք... Այո՛, այո՛, շատ լավ ասացիք: Այդպես անենք, այդպես ավելի լավ կլինի: Ոչ ես կճնշվեմ, ոչ նա: Ես այդ եմ ուզում միայն, ուրիշ ոչինչ: Հիանալի միտք է: Հիանալի:

— Դե որ այդպես է, եկեք:

Վահանն առաջ ընկավ, Սանթրոսյանը հետեւց նրան: Նրանք անցան մութ հյուրասենյակով, որտեղ լուսու մի շերտ էր ընկնում առանձնասենյակի կիսարաց դռնից: Առանձնասենյակից լսվում էր ծղրիդի ճռինչը, որը, սակայն, իսկույն լոեց, երբ նրանք ներս մտան այնտեղ:

Առանձնասենյակում Սանթրոսյանը կանգ առավ:

— Ես կմնամ այստեղ. երբ կանչեք, կգամ,— շշնչաց նա, զգալով, որ վարանումը նորից բռնում է իրեն ավելի ուժգին, քան մինչև այժմ:

— Շատ բարի,— ասաց Վահանը:— Ես դուռը բաց կըթող նեմ:

Սանթրոսյանը նստեց աթոռի վրա և թաշկինակը մեքենայար տարավ դեպի ճակատը, որի վրա հանկարծ ինչ-որ սառն թացություն զգաց. իսկ Վահանը մոտեցավ ննջարանի դռանը:

Մտնելուց առաջ նա կամաց ծեծեց դուռը մատով և ականջ դրեց: Ներսից ոչ մի ճայն լսվեց: Հետո նա զգուշորեն բաց արավ դուռը և ներս մտավ:

Ննջարանը լուսավորված էր արդուզարդի սեղանի վրա վառվող երկու մոմով, որոնց լույսերն անդիադառնում էին հայելու մեջ: Այդ լույսերը մերթ դողդողում, երկարում էին, կարծես տքնում էին բարձրանալ ավելի ու ավելի վեր, մերթ իշնում էին և անշարժանում: Մոմերը պարզ լուսավորում էին միայն իրենց շուրջը, իսկ սենյակի պատերի մոտ և անկյուններում, ուր նրանց լույսն անկարող էր փարատել կիսախավարը, կարծես թե ծուխ էր կանգնած:

Մանեն պառկած էր իր մահճակի վրա շորերը հագին: Պառկած էր երեսն ի վեր, պառկած էր տարօրինակ կերպով. գլուխը

բարձերի վրա չէր, այլ ընկած էր ներքեւ սաստիկ երկարացած վզով,— կարծես պառկած տեղից ինչ-որ բան էր դիտում հետեւ. մի ոտք ծալված՝ գտնվում էր մահճի վրա և խճճվել էր շրջազգեստի փեշերի մեջ, մյուսը ձգված էր հատակի վրա, երկան հանելով նրա սև փայլուն կիսակոշիկը բարձր կրոնկով և երկայն, սև գովապան՝ մինչև սրունքը: Մոմերը լուսավորում էին նրան ոտների կողմից, և նրա դեմքը գտնվում էր կրծքից թռած ստվերի մեջ:

Վահանը կամաց խոնարհվեց նրա դեմքի վրա, հետո հանկարծ ավելի կոացավ և սկսեց լավ դիտել այդ դեմքը: Մանեի մի աշքը կիսարաց էր, մյուսը՝ խոսի. ծնոտը ծոված էր, բերանը բացված էր լայն և նրա մեջ երկում էին փղոսկրի պես սպիտակ երշար տատամները և ինչ-որ ուրիշ սպիտակ մի բան, փրփուրի նման... Այդ բոլորը այնպիսի արտահայտություն էին տվել նրա դեմքին, որ Վահանին սկզբում թվաց, թե նա լուր ծիծաղում է: Մի ձեռքը կախ էր ընկած մահճակալից, մյուսավոր բաց էր արել կըդքի կոճակները և պոկել էր շապկի նուրբ անկվածից մի կտոր. այդ կտորը տեղ-տեղ փաթաթվել էր նրա երկայն մատներին, որոնց վրա երկու մատանի— մեկը պարզ՝ նշանի, մյուսը թանկագին շողակնյա— պլազում էին մոմերի լույսերից:

— Մանե՛,— կանչեց Վահանը, և նրան թվաց, թե այդ իր ճայնը չէր, այլ ուրիշի ճայն, ոչ-մարդկային մի ճայն, որից ինքն էլ սարսափեց:

Մանեն պառկած էր նույն դրության մեջ, անշարժ, և նրա ահարկու դեմքը ծիծաղում էր առաջվա պես լուր ու բարացած:

— Մանե՛,— կրկնեց Վահանը, մեքենայարար առնելով քրոշ կախ ընկած ձեռքը:

Այդ ձեռքը թույլ էր փալասի պես:

Այնուհետև, այլևս շիմանալով թե ինչ է անում, Վահանը երկու ձեռքով վրա ընկած քրոշ ուսերին և բարձրացրեց նրան: Մանեի գլուխն իր ծիծաղող դեմքով ետ ընկած թուլացած և կախ ընկած, ավելի ևս երկարացնելով նրա սպիտակ, նիհար վիզը:

Վահանը դիակը բաց թողեց թուլացած ձեռքերից: Դիակը վայր ընկած, և գլուխը քարի ծանրությամբ խրվեց փափուկ բարձի մեջ, կզակը դեմ տալով կրծքին:

Մի բոպե Վահանին թվաց, թե սենյակը հանկարծ մթնեց և հատակը փախչում է ոտների տակից: Նա պինդ բռնեց մահճակալի գլխից, որ վայր ընկնի:

Նույն րոպեին, կարծես երազի մեջ, տեսավ Սանթրոսյանի դեմքը դիակի վրա խոնարհված և այդ դեմքի վրա երկու ահագին աշքեր, որոնք կարծես դուրս էին պրծել խոռոշներից և խոշորացած բիբերով նայում էին խելագար զարհուրանքով... Հետո նրա ականջին դիպան վայրենի մի ճիշ և ապա մի խուզ ձայն,— կարծես ինչ-որ ժանր ու փափուկ մի մարմին վայր ընկավ գորգի վրա...

Իսկ ծղրիդն այնտեղ շարունակում էր իր անվերջ միապաղադ ճոխնչը՝ միանգամայն անտարբեր դեպի մարդկային կլանքը, որ, անգոր ու անօգ, կարծես հավիտենական մի անեծքով, փոթորկում էր ցավատանջ գալարումներով և կործանվում կրքերի ողբերգական պայքարի մեջ...

1911

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Իմ կենսագրությանը</b>	3
<b>Պատմվածքներ</b>	
Մեր բաղր	
Խշպես բժշկեցին	13
Սաքուն ովատ գնաց	33
Հոգուն վրա հասավ	50
Հոպուպ	59
Թե ի՞նչ եղավ հետո, երբ շաքարամանից երկու կտոր շաքար պակասեց	67
Սկ փողերի տոկոսը	77
Աղամամութին	87
<b>Զանազան պատմվածքներ</b>	
Ես և նա	96
Նոր հավ	109
Աղա Մարտինի պարիկը	118
Ավետիս	129
Նեղ օրերից մեկը	137
Կմբագիրը	151
Վերջին մոհիկաններ	161
Վիպակներ	
Տանտիրոջս աղջիկը	181
Աննա Սարոյան	236
Սպանված աղավնին	292
Պայֆար	409

**НАР-ДОС. СОЧИНЕНИЯ** (однотомник) на армянском языке Նար-Դոս  
Երկեր (միհատորյակ) Կազմող՝ Մ. Ս. Թերզյան, Խմբագիր՝ Ա. Ա. Քիշոյան,  
Նկարիչ և գեղ. Խմբագիր՝ Ան. Վ. Գևառացյան, տեխ. Խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան,  
վերստուգող սրբագրիչ՝ Գ. Գ. Սիմոնյան: Հանձնված է շարվածքի 11/XI 1976թ.:  
Ստորագրված է տպագրության 4/III 1977թ.: Թուղթ № 1, 60×84<sup>1</sup>/<sub>16</sub>, տպագ.  
17,25 մամ.=32,08 պայմ. տպ. մամ., հրատ. 29,15 մամ.: Պատվեր 1898: Տպա-  
քանակ 50000, գինը 2 լ. 73 կ.: «Սովետական գրող» Հրատարակություն, Երևան-9,  
Տերյան-91: Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի Հրատարակությունների, պո-  
լիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան,  
Ալավերդյան փ. № 65: Типография № 1, Госкомитета Совета Министров  
Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли Ере-  
ван, ул. Алавердяна, 65.